Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ԵՐԿԵՐ

Երևան
«Սովետական գրող»
1987

ԳՄԴ 84 Հ7—4
Փ 311

Կազմեց՝ Ռ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Առաջաբան՝ Ա. Կ. ՕՀԱՆՅԱՆ

Փափազյան, Վ.

Փ 311 Երկեր։ (Զրույցներ, պատմվածքներ, դրամա)
(Վրթանես Փափազյան [Կազմ.՝ Ռ. Գ. Սարգսյան, Առաջաբանը՝ Ա. Կ. Օհանյան].— Եր.։ Սովետ. գրող, 1987.— 696 էջ.— (Հայ. դաս. գ-րան։

Հերթական հատորը ներկայացնում է հայ գրականության դասականի զրույցները, պատմվածքները և «Ժայռը» դրաման։

4702080100 (180)
Փ ——— (14.87 «Տ») *ԳՄԴ 84 Հ7—4*
705 (01) 87

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, առաջաբանի և ձևավորման համար, 1987 թ.

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

Մի հայացք նետելով Վրթանես Փափազյանի կյանքի պատմության վրա, հեշտ է համոզվել, որ այն իր մեջ խտացնում է ընդհանրապես հայ գրողի տիպական ճակատագիրը. ճիշտ է՝ ծայրահեղացված արտահայտությամբ։

Ծնվել է Փափազյանը մեր ժողովրդի վաղնջական բնօրրանում՝ Վան քաղաքում՝ 1864 թվականի ապրիլին։ Բազմանդամ և ծայրը ծայրին հազիվ հասցնող մի ընտանիքի գլուխ էր նրա մտավորական հայրը, որին անողորմ կարիքի մտրակն ստիպում էր պատկառելի գերդաստանը քարշ տալ բնակավայրից բնակավայր, երկրից երկիր, և որն, այդուհանդերձ, ամենուրեք նպաստիչ հետք էր թողնում տեղի մշակութային կյանքի վրա, խիզախ պայքար մղում ֆեոդալական նախապաշարումների ու քարացածության դեմ՝ այդ պայքարի մեջ ներքաշելով նաև իր ուստերին ու դուստրերին։ Մեսրոպ Փափազյանը ժամանակի հայկական մի շարք պարբերականների գործուն թղթակից էր, հրապարակագիր, բանաստեղծ, դրամատուրգ, իր հեղինակություններում արծարծում էր լուսավորական գաղափարներ, ջատագովում հայ ժողովրդի ոուսական կողնորոշումը։ Նրա անմիջական նախաձեռնությամբ ստեղծվեցին հայկական դպրոցներ, այդ թվում օրիորդաց՝ Արևմտյան և Արևելյան Հայաստանի, ինչպես նաև Պարսկաստանի մի քանի հայաշատ գյուղերում ու քաղաքներում։ Նա հիմնադիրը դարձավ նաև պարսկահայ թատրոնի, որի խաղացանկում տեղ էին զբաղեցնում ազգային ու համաշխարհային դրամատուրգիայի ակնառու երկեր։ Ազգանպաստ այդ գործունեության ճանապարհին էլ նա խավարամոլների ձեռքով ընկավ իբրև նահատակ՝ հրավիրելով միջազգային մամուլի ու դիվանագիտական աշխարհի ուշադրությունը։ Մեսրոպ Փափազյանի որդիներից մի քանիսը զոհվեցին ազատագրական կռիվների բարիկադների վրա, իսկ նրա աղջիկներից երկուսը նշանավորեցին իրենց անունը հայ թատրոնի պատմության մեջ՝ առաջին անգամ բեմ բարձրանալով Թավրիզում և Ալեքսանդրապոլում։ Կնոջ վերաբերմամբ շրջապատում թագավորող բարոյական թանձրացյալ նախապաշարմունքի պայմաններում նման քայլը լուրջ վտանգներով հղի էր, և, ուրեմն, հասկանալի պետք է լինի հասարակական խոտելի կարծիքին դեմընթաց գնալու Փափազյան դուստրերի վճռականության արժեքը։ Հասարակական գործունեության ակնհայտ ջիղով օժտված էր նաև Մեսրոպ Փափազյանի կինը՝ Անթառամը, որի անվան հետ կապվում են պարսկահայ մշակութային կյանքի որոշ իրադարձություններ։

Ահա այսպիսի ընտանիքում ծնվեց ու դաստիարակվեց Վրթանես Փափազյանը։ Ժառանգելով ծնողների հատկանիշները՝ ազնվություն, շիտակություն, խիզախություն, նվիրաբերում ժողովրդի շահերին, ինքնուրույնություն, նպատակայնություն, աշխարհաճանաչողության ու ինքնակատարելագործման բուռն

մղումներ և այլն, նա ժառանգեց նաև հարազատ օջախի կարիքավորության բեռը, հպարտ արհամարհանքը բարեկեցիկ կյանքի նկատմամբ։

Փափազյանի նախնական կրթությունն ավարտվում է, երբ նա ընդամենը 15 տարեկան էր։ Մի քանի տարի սովորելով Ագուլիսի և Թավրիզի դպրոցներում և, որպես արտակարգ գիտելիքներով աչքի ընկած աշակերտ, բացառության կարգով ընդունվելով Էջմիածնի Գևորգյան ճեմարան ու այստեղ էլ սովորելով մեկ տարի, նա նյութական ծանր վիճակի և հիվանդության պատճառով հրաժարվում է հետագա ուսումից և կյանք մտնում։ Հասուն տարիներին գրած նամակ-ինքնակենսագրականում Փափազյանը դառնությամբ վերհիշում է. «15 տարեկանից հետո ինձ թողել են իմ բախտին, և որքա՜ն արկածալից է եղել իմ կյանքը, որպիսի՜ երերուն դրություն, որպիսի՜ վշտեր ու տանջանքներ. անոթությունն ինձ հետևում էր մինչև վերջ, իմ կյանքի ամբողջ ընթացքում»։ Հիրավի, հենց այդ հասակից ճակատագիրը նրա ձեռքն է տալիս աղքատ թափառականի ցուպը։ Վաղ պատանեկության այդ տարիներին նրան կարելի էր հանդիպել մերթ Պարսկաստանի մայրաքաղաքում, մերթ Թիֆլիսում ու ծննդավայրում, մերթ էլ Բաքվում ու Կոստանդնուպոլսում։ Պետությունների ու աշխարհամասերի սահմանները նա հատում էր առավելապես ոտքով ու միայնակ։ Քաղցը, հույսը և կյանքը ճանաչելու մոլեգին մղումը այս զարմանալի և տարաբնույթ ուղևորին անդադար տեղից տեղ են նետում, հակում իր խառնվածքին անհարիր ամենատարբեր աշխատանքների, մերձավոր շփումների տանում այլևայլ ազգերի ու ցեղերի հետ։ Նա գիշերներ է լուսացնում ամայի տարածություններում, մեծ քաղաքների պուրակներում, անծանոթ ու հյուրընկալ գյուղական խրճիթներում, թափառիկ ցեղախմբերի սայլերում։ Դրանք նրա առաջին համալսարաններն էին, ուր նա աշխարհանանաչողության և իմաստնության դասեր էր առնում։

Ցավոք, ժամանակները ջնջել են Փափազյանի հասարակական-քաղաքական գործունեության շատ էջեր՝ դրանք դարձնելով առայժմ անվերծանելի։ Լոկ կողմնակի սուղ վկայություններն ու ժլատ ակնարկներն ի մի հավաքելով հնարավոր է դառնում վերականգնել նրա երևելի կյանքի առավել նշանակալից դրվագներից մի քանիսը։

Վաղ տարիներից Փափազյանն իրեն նետեց հայրենի երկրում ծավալված ճակատագրական իրադարձությունների հորձանուտը։ Դրանք այն ժամանակներն էին, երբ մի կողմից գլուխ բարձրացնող կապիտալիստական հարաբերությունները բերում էին նահապետական բազմադարյան հոգեբանության անողորմ ու անդարձ փլուզումներ, իսկ մյուս կողմից պատերազմների ու ցեղասպանության հրդեհներում հայտնված Արևմտյան Հայաստանի տոհմիկ բնակչությունը եղերական արագությամբ դատարկվում էր հազարամյակների իր բնօրրանից։ Երկրում ալիք տվող ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումները հայոց աշխարհի կենսագրության մատյանում հոչակում էին նոր դարագլուխ, դրսևորում ազատ ապրելու ժողովրդի վճռականությունը։ Այդ իրադարձությունների բովում կոփվեցին Փափազյանի կյանքն ու գործը։ Հայ գրողը մարտիկ եղավ, արժանի՝ իր ժամանակի բարձր պահանջներին։

1885-ին, 21 տարին չբոլորած, Փափազյանը հայտնվում է Կոստանդնուպոլսում, ուր մնում է մոտ մեկ տարի։ Վերջին հինգ տարիներին Երևանի, Թիֆլիսի և Պոլսի թերթերում ու ամսագրերում մի շարք հեղինակություններ տպագրած և արդեն որոշակի ճանաչման արժանացած գրող-հրապարակագիրն այստեղ՝ Բյուզանդիայի երբեմնի մայրաքաղաքում, մի խումբ հայ ուսանող երիտասարդների հետ, որոնց մեջ էին Արշակ Ֆեթվաճյանն ու Կարապետ Փաշայանը, ստեղծում է մի ընկերություն, որը, իր իսկ խոստովանությամբ, «ծածկաբար հեղափոխական էր, բայց երևույթով՝ գրական»։

Առավել լուրջ էր Փափազյանի մասնակցությունը Կարինի (Էրզրում) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ընդհատակյա գործունեությանը, որն, ինչպես հայտնի է, նպատակադրվել էր զինված ապստամբությամբ Արևմտյան Հայաստանն ազատագրել թուրքական լծից։ Մոտ երեք տարի ուսուցչություն անելով հնագույն հայկական այս քաղաքում (1887-ի հունվար—1889-ի աշուն), Փափազյանը կապեր է հաստատում 1882-ի վերջերին ջախջախված «Պաշտպան հայրենյաց»-ի այն ղեկավարների հետ, որոնք, 1886-ին ազատվելով բանտից, հավաքում էին կազմակերպության բեկորները՝ պայքարը շարունակելու համար։ Հիմքեր կան ենթադրելու, որ Փափազյանը լուրջ հանձնարարություններ է ստանում գավառների հետ կապեր ստեղծելու համար, այդ նպատակով ուղևորություններ կատարում Մանազկերտ-Արճեշ-Վան-Ոստան-Խիզան-Բաղեշ-Մուշ երթուղով։ Ինչևէ, վերակազմյալ կազմակերպության հետ կապված հետագա դրամատիկ իրադարձություններն ստիպում են Փափազյանին հատել ռուսական կայսրության սահմանը, ապաստան գտնել նախ Բաքվում, ապա Թիֆլիսում։ Այստեղից էլ 1891-ի վերջերին նա ուղևորվում է Ժնև՝ բարձրագույն կրթության։

Ծվեյցարիայում Փափազյանն ապրում է մոտ երեք տարի։ Ավարտելով Ժնևի համալսարանի գրականության և հասարակական գիտությունների բաժանմունքը, նա 1894-ի ամռանը վերադառնում է Թիֆլիս։ Օրջոնիկիձե քաղաքում ապրող Փափազյանի դստեր՝ Անահիտ Փափազյանի մոտ պահպանվում են գրողի ինքնակենսագրական անտիպ գրառումները, ուր, ի թիվս այլ ուշագրավ փաստերի, հիշատակություններ կան նաև Ժնևյան միջոցում Փափազյանի քաղաքական կապերի վերաբերյալ։ Դրանք գումարվելով հայտնի այլ փաստերին, երևան են հանում մեր գրողի համալսարանական լիարյուն կյանքը։

Վտարանդի քաղաքական անձերի, կուսակցությունների ու խմբավորումների յուրատեսակ կենտրոն էր այդ տարիների Ժնևը, ուր իրար էին բախվում

մարդու իրավունքի պաշտպանության և ճնշված ժողովուրդների ազատագրության տարաբնույթ ուսմունքներ: Այն նաև մշակութային խոշոր օջախ էր: 1892 թվականի տվյալներով Ժնևի երեք համալսարաններում սովորող 736 ուսանողների կեսից ավելին եկվորներ էին այլ երկրներից՝ ռուսներ, գերմանացիներ, հրեաներ, բուլղարներ, սերբեր, լեհեր, իտալացիներ, ֆրանսիացիներ, ամերիկացիներ և այլն, որոնք ունեին իրենց միությունները, ակումբները, գրադարանները: Հայ ուսանողների թիվը հասնում էր 16-ի: Ասիական իրականությունից հայտնվելով նման եռուզեռի մեջ, Փափազյանը բուռն թափով սկսում է յուրացնել քաղաքակրթության հին ու նոր արժեքները, խորամուխ լինում հասարակագիտական ուսմունքների մեջ, մասնակցում քաղաքական բանավեճերին: Այդ տարիներին գրած նամակները ցուցադրում են նրա կենդանի հետաքրքրությունը մասնավորապես սոցիալիստական գաղափարների նկատմամբ, որոնց տարընթաց արտահայտությունների մեջ հստակ կողմնորոշում ուներ հայ գրողը: Հակոբ Հակոբյանին ուղղված մի նամակում, օրինակ, կան այսպիսի տողեր. «Մի ընդհանուր շարժում տիրել է ամբողջ Եվրոպայի վրա. սոցիալիզմն սկսում է բարձրանալ...»: Ակնհայտորեն «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» առաջին նախադասությունը հիշեցնող այս խոսքին հետևում են դատողություններն այն մասին, թե կրոնավորությունը, բուրժուազիան, արիստոկրատիան «զգալով, որ իրենց բանը բուրդ է լինելու», սկսել են առերևույթ կերպարանափոխվել, «հարմարվել» սոցիալիստական վարակիչ գաղափարներին՝ «սարսափելի կերպով ծոմելով սոցիալիզմի մտքերը»: Փափազյանը հատկապես զայրույթով է խոսում անարխիստների մասին, որոնք «ավազակի պես... մասնավոր մարդկանց տները դինամիտներով օդն են հանում և փողի համար մարդիկ են սպանում» և, «որոնց դեմ այժմ ընդհանուր հալածանք է սկսվել ամբողջ Եվրոպայում», քանի որ սրանք «փչացնում են» մեծ «գործը»: «Ուրիշ անգամ քեզ ընդարձակ կգրեմ սոցիալիզմի, նրա զարգացման ճյուղերի, զանազան կուսակցությունների և յուրաքանչյուր կուսակցության առաջարկությունների մասին»— խոստանում է նա Հակոբյանին: Այս տարիներին Փափազյանը հիմնավորապես ուսումնասիրում է Մարքսի և Էնգելսի աշխատությունները:

1894-ի կեսերին ավարտելով Ժնևի համալսարանը, Փափազյանը վերադառնում է Անդրկովկաս: Այստեղ առաջին քայլը նրա մասնակցությունն է «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիա» ընդհատակյա կազմակերպության աշխատանքներին: Անդրկովկասի այդ առաջին բանվորական կազմակերպություններից մեկը, որ հիմնադրվել էր Թիֆլիսում՝ 1892 թվականին, իր տպագիր օրգանների՝ «Ազատ Հայաստան» և «Կռիվ» պարբերականների միջոցով պրոպագանդում էր ազատագրական գաղափարներ, ընթերցողներին ծանոթացնում մարքսիստական-հեղափոխական գաղափարների հետ: Ամեն ինչից երևում է, որ Փափազյանը «Ասոցիացիայի» և նրա օրգան «Ազատ Հայաստանի» գոյությանը տեղյակ էր դեռևս Ժնևից և սեփական նկատառումներն ուներ սրանց ծրագրի ու գործունեության վերաբերյալ: Շվեյցարիայից վերադառնալուց անմիջապես հետո նա ստանձնում է «Ազատ Հայաստանի» խմբագրի պարտականությունը: Կարճ ժամանակ անց, պատմագիտության կողմից տակավին վերջնականապես չպարզաբանված պատճառներով, «Ասոցիացիայի» մեջ տեղի է ունենում պառակտում. Փափազյանը, հիմնադիր անդամներից մի քանիսի, այդ թվում՝ Սարգիս Խանոյանի հետ առանձին ֆրակցիա է ստեղծում և հրատարակում «Կռիվ» լրագիրը: Հիմքեր կան ենթադրելու, որ տարվա երկրորդ կեսին Փափազյանի ուղևորությունը Անգլիա կապվում է «Ասոցիացիայի» կազմում սկիզբ առած վերոհիշյալ տարաձայնությունների հետ, և Փափազյանը առաջարկներ անելու է գնացել հնչակյանների լոնդոնյան կենտրոնին: Հավանաբար այստեղ էլ կարծիքների համերաշխություն ձեռք չի բերվել, և Փափազյանը 1894-ի հոկտեմբերի 31-ից արդեն Պարսկաստանի մայրաքաղաքում է, ուր նա խմբագրում է տարվա սկզբին Հովհաննես խան-Մասեհյանի հիմնադրած «Շավիղ» շաբաթաթերթը: Նա կտրուկ կերպով փոխում է շաբաթաթերթի ուղղությունը, դարձնում այն արմատական գաղափարների դրոշակակիր, բուռն շարժումներ առաջացնում պարսկահայ իրականության մեջ: «Շավիղի» էջերում, առաջիններից մեկը հայ իրականության մեջ, Փափազյանը անդրադարձավ Ֆրիդրիխ Էնգելսի մահվանը՝ համարելով այն մարդկության մեծագույն կորուստներից մեկը:

1890-ական թվականների կեսերից Փափազյանը ցարական ժանդարմերիայի ուշադրության կենտրոնում է: 1898-ի սկզբներին ռոտմիստր Բրունը զեկուցագիր է գրում իր վերադասին, թե Փափազյանի վրա սահմանված գաղտնի հսկողությունը շարունակվում է: 1903-ի նոյեմբերի 13 թվակիր մի այլ գրությամբ Թիֆլիսի պահնորդական բաժնի պետը զեկուցում է ժանդարմական դեպարտամենտի դիրեկտորին, որ նշանավոր հեղափոխական Աշոտ Խումարյանը «մերձավոր կապերի մեջ է հայ գրող Վրթանես Մեսրոպի Փափազյանի հետ», և որ Փափազյանի հեղափոխական մականունն է Писарь: Այս առթիվ Փափազյանի տանը խուզարկություն է կատարվում: Դրանից առաջ մի այլ խուզարկություն կատարվել էր նրա աստրախանյան բնակարանում, ուր նա ապրում էր 1902-ի օգոստոսից մինչև 1903-ի սեպտեմբերը:

1912-ի հունվարի 30-ի նիստով Սանկտ-Պետերբուրգի Դատաստանական պալատը որոշում է «դատական հետապնդում հարուցել» Փափազյանի նկատմամբ, և վերջինս ուրիշի փաստաթղթով հեռանում է արտասահման՝ խույս տալով բանտարկությունից: 1914-ին Փափազյանը Կոստանդնուպոլսում է: Եղեռնի օրերին Երիտթուրքերի կառավարությունը նրա նկատմամբ մահվան վճիռ էր արձակել, բայց նա արդեն հեռացել էր Ռուսաստան:

Փափազյանը վախճանվեց 1920-ի ապրիլի 26-ին: Դա առեղծվածային մահ

էր. այն վրա հասավ թունավորումից: Եվ թունավորվեց ու մահացավ նա ոչ այլ տեղ, քան հենց Հայաստանի հանրապետության մայրաքաղաքի առաջնակարգ հիվանդանոցում՝ բժիշկների աչքի առաջ: Հայրենի գրականության մեծագույն դեմքերից մեկի անյունը հողին հանձնվեց բավականին անշուք: Գրողի արխիվն ու հարուստ գրադարանը թալանվեց, թեև պաղլամենտի շենքում գտնված էր նրա հարազատ եղբայրը՝ դաշնակցության ականավոր գործիչ Վահան Փափազյան-Կոմսը:

* * *

Վրթանես Փափազյանի ստեղծագործությունը նրա կյանքի երկվորյակն էր՝ գրչի խիզախ պայքար ընդդեմ ազգային ու սոցիալական կեղեքումների, պայքար՝ հանուն ժողովրդի գոյատևման ու երջանիկ ապագայի: Նրա գրական ժառանգությունը մեծապես ընդլայնեց մեր գրականության գաղափարագեղարվեստական հայտնությունների շրջանակները:

Իր գրչի նկատմամբ բացառիկ խստապահանջ— Փափազյանը մշտական որոնումների մեջ էր, և նրա ստեղծագործության դինամիկան կարելի է որակել որպես վերընթացի ու կատարելագործման անընդմեջ երևույթ: Երկու հանգամանք հատկապես նպաստում էին այդ առաջընթացքին: Առաջինը գրողի արտակարգ զգացողությունն էր իրականության ներքին պրոցեսների, դրանց միտումների ու հեռանկարների հանդեպ: Երկրորդը՝ նրա քաջատեղյակությունը այն ամենին, ինչին հասել էր մարդկային գեղարվեստական ու հասարակագիտական միտքը իր զարգացման ողջ ընթացքում: Ազատորեն տիրապետելով 14 լեզուների և մի ներքին մղումով խորամուխ լինելով ժողովուրդների պատմական ու արդիական օրինաչափությունների մեջ, Փափազյանը հայոց կյանքն ու մշակույթն ընկալում էր ոչ այլ կերպ, քան այդ օրինաչափությունների լույսի ներքո՝ լայնախոհ չափանիշներ կիրառելով ազգային իրողությունների նկատմամբ: Վկայակոչենք նրա ինտելեկտուալ մտահորիզոնը բնութագրող մի փաստ, որ հայտնել է սովետական նշանավոր արևելագետ Վիկտոր Իոսիֆովիչ Ֆիլոնենկոն: Արևելագիտական հետազոտությունների նպատակով 1914-ին անցնելով Կոստանդնուպոլիս, նա բարեկամների խորհրդով ծանոթանում է Փափազյանի հետ, մտերմանում և օգնություն խնդրում իրեն հետաքրքրող հարցերի վերաբերյալ: Ռուս մտավորականին ցնցել է հայ գրողի գիտելիքների պաշարը, որը չէր ճանաչում աշխարհագրական սահմաններ ու նեղ մասնագիտական պարփակում: Խոսքը գնար Պարսկաստանի, Թուրքիայի թե Եգիպտոսի ազգագրական-լեզվաբանական-մշակութային ֆենոմենների մասին, կամ էլ ծավալվելով հասներ Ռուսաստան ու Արևմտյան Եվրոպայի հոգևոր իրողություններին,— վերհիշում է պրոֆեսոր Ֆիլոնենկոն,— Փափազյանը ցուցաբերում էր փաստական ու աղբյուրագիտական այնպիսի քաջատեղյակություն, ասես ողջ կյանքում զբաղվել էր հենց տվյալ հարցով՝ չթողնելով ոչ մի մութ կետ:

Հետաքրքրությունների այդ համապարփակ լայնության արդյունք էր Փափազյանի բեղուն գործունեությունը մտավոր աշխատանքի բազմաբնույթ մարզերում՝ արձակ, դրամատուրգիա, պոեզիա, գրաքննադատություն, հրապարակախոսություն, գրականության պատմություն ու տեսություն, ռեժիսուրա, երաժշտություն, ազգագրություն, պատմագրություն, մանկավարժություն, լեզվաբանություն, թարգմանություն, տրամաբանություն, հոգեբանություն և այլն:

1904-ին անդրադառնալով սեփական ստեղծագործությանը, Փափազյանը իրեն բնորոշ խստապահանջությամբ 1883—1889 թվականների նախնական փուլը որակում է որպես գրական դպրոցների միջև դեգերումի շրջան: Մասամբ միայն ճշմարտացի այս բնորոշումը կարելի է վիճարկել՝ վկայակոչելով սկսնակ գրողի բերած ինչ-ինչ նորություններ, սակայն մի հարցում նա աներկբայելիորեն իրավացի է. 1889 թվականն իրոք բեկումնային տարի եղավ նրա համար: Նախ «Նամակներ Թուրքաց Հայաստանէն» հոդվածաշարը, որն այդ թվականից սկսեց տպագրվել «Մշակ» լրագրում մոտ մեկ տարի, և ապա դրան զուգահեռ հրատարակած պատմվածքներն ու պատկերները, որոնք դարձյալ վերարերում էին արևմտահայ իրականության այլևայլ կողմերին, անմիջապես Փափազյանի անունը հոչակեցին հայոց մտավոր շրջաններում: Գեղարվեստական երկերի հավաքածուն հետագայում հրատարակվեց երկու գրքով: Առաջին հատորը կոչվում էր «Պատկերներ Թուրքահայոց կյանքից»: Լույս տեսավ Մոսկվայում՝ 1891-ին: Երկրորդի խորագիրն էր «Պատմվածքներ թուրքահայերի կյանքից» (Թիֆլիս, 1904): Այս թեմայով Փափազյանի գործերից հիշատակենք նաև «Արշալույս» դրաման, որը հրապարակ իջավ Բոստոնում՝ 1902-ին և ապա ծրագրված վիպաշարի առաջին գիրքը՝ «Հաջի-բեկը», որը նախ հրատարակվեց մամուլում՝ 1906-ին, իսկ ապա՝ առանձին գրքով՝ 1909-ին, Կոստանդնուպոլսում:

Հիշատակված գործերի մեջ Փափազյանի առաջնահերթ նպատակը Արևմտյան Հայաստանի մղձավանջային իրականության պատկերումն է: Չէր կարելի լիակատար պատկերացում կազմել հայրենի երկրի այդ խոշորագույն հատվածում տիրող կամայականությունների ու արհավիրքների մասին՝ իրատեսական հիմքերի վրա չդնելով նրա ազատագրության քաղաքական իդեալը: Փափազյանի գեղագիտական անխախտ սկզբունքն էր՝ ոչինչ չհորինել, չքողարկել ու չխնայել, ինչպես որ հմուտ բժիշկը չի խնայում՝ գործի դնելով վիրահատական դանակը: Հետաքրքրական է, որ Փափազյանը երբեք ընդդիմախոսներից չի պաշտպանել իր երկերի գեղարվեստական արժանիքները՝ դրանց կենսունակությունը համեստորեն հանձնելով ժամանակի դատաստանին, սակայն երբ կասկածի տակ էր առնվում դրանց ճշմարտացիությունը, վավերական հիմքը, նա հրա-

պարակ էր իջնում ու ապացուցում այդ մարդկանց սակավատեղյակությունը՝ դիմելով նույնիսկ վավերագրերին և գտնելով, որ ընդհանրապես գոյություն չունի գեղարվեստական չափազանցումի այն տեսակը, որը գերազանցեր արևմտահայ իրականության ողբերգության սահմաններն ու խորքը: Կարելի էր շրջանցել անարդարացիությունը և զսպել վիրավորվածության զգացումը, երբ խոսքը վերաբերում էր սեփական վաստակի գնահատությանը, սակայն իսկական գրողը կարո՞ղ է լռել՝ հասարակության և ժողովրդի ճակատագրական խնդիրներում թեթևամիտ ու խոտելի, զարհուրելի հետևանքներով ճի հայացքների հանդիպելիս: Փափազյանի գրական ժառանգությանը մերձեցող յուրաքանչյուր ոք պետք է նկատի ունենա. բացահայտ թե գեղարվեստական կեղևի տակ քողարկված՝ այդ ժառանգությունը պարփակում է իր մեջ հետևողական ու անողորմ բանավեճ ամեն տեսակ արատավոր տեսակետների դեմ: Կենսական նոր ընդգրկումներով ընդլայնելով իր նախորդների կողմից արդեն ստեղծված պատկերացումները հայոց աշխարհում թուրք-քրդական բարբարոսությունների նկատմամբ, Փափազյանը նախ մեր ազգային իրականությանը մոտեցավ դասակարգային խստագույն չափանիշներով: Նրա թափանցող հայացքը ռեալիստական անողորմ դաժանությամբ ձևակերպեց ակնհայտ ճշմարտությունը. Հայաստանում ընդհանուր առմամբ դեռևս չի գործում համաշխարհային պատմության այն օրինաչափությունը, երբ օտար լծի դեմ ծավալվող ընդվզումի տարերքը մի դրոշի տակ է հավաքում երկրի բոլոր ուժերին: Արտաքին բընտունության բազմադարյան հողմնահարության ներքո իրենց ազգային մարնավորները: Սրանց ապիկարությունը մերթ պատկերելով մեկուսի, մերթ էլ ենիչերիական սանձարձակությունների հետ բաղդատությամբ, Փափազյանը ոչ միայն բացառում է սրանց մասնակցությունը ազատագրական կռիվներին, այլև համարում այդ կռիվների հակառակորդը: Մյուս կողմից՝ գրողը դարձյալ իրատեսական մեթոդի դիտակետից վերլուծում է այսպես կոչված «ազգային բնավորության» բաղադրիչները, ցույց տալիս, որ պատմական երկարատև վայրագությունները օքսիդացրել են ժողովրդի ազատասիրական զգացողությունը և որ տևական ջանքեր են անհրաժեշտ այդ օքսիդը քայքայելու և միջուկի փայլը երևան հանելու համար:

Արդեն «Էմմա» վեպում կան իրավիճակներ, ուր գրողը խիստ քննադատության է ենթարկում այն կուսակցություններին, որոնք իրենց հռչակել են բռնակալության դեմ ծավալված պայքարի առաջնորդներ, մինչդեռ հիմնավորվել են եվրոպական խոշոր կենտրոններում՝ հայրենիքից տասնյակ հազարավոր մղոն հեռավորության վրա և միմյանց դեմ սկսել են «ամոթալի կռիվ», իրենց ապահով ու տաքուկ տեղերից են միջամտում մորթոտվող ժողովրդի ճակատագրին: Վտարանդի խոսքը չի կարող կողմնացույց դառնալ մահացու փոթորիկների վրա տարուբերվող հայրենական անդեկ նավի համար,— եզրակացնում է գրողը: Տեսական այդ հարցադրումը «գործնական» հողի վրա է դրված «Հաջի-բեկ» վեպում, ուր Փափազյանը ցույց է տալիս այսպես կոչված պրոպագանդիստների կործանարար «գործունեությունը» Արևմտյան Հայաստանում: Ցանկալին ներկայացնելով իրականության տեղ, ծպտյալ այդ պրոպագանդիստները շրջում են լլկված երկրի գավառներում ու քաղաքներում, գոյություն չունեցող զենքի ահռելի պաշարների ու ամեն վայրկյան ոտքի ելնելու պատրաստ ազատագրական ընդհատակյա բանակների վերաբերյալ հեքիաթներ տարածում ժողովրդի մեջ: Չեն հասկանում, որ դա մահվան խաղ է կրակի հետ: Ոտնահարված արժանապատվության դարավոր կուտակումները հատուցման քաղցի ողջ ուժգնությամբ փարվում են այդ պատրանքներին, մղում տարերային, անկազմակերպ, մեկուսի, անժամանակ ըմբոստության, և հաշվեհարդարի յաթաղանն իջնում է անպատրաստ, խաբված գավառների գլխին ամենայն կատաղությամբ: Դա կործանարար ուղի է, հարկավոր է մեծ, տևական, անձնուրաց նախապատրաստական աշխատանք, որպեսզի ի վերջո երկիրը դառնա մի հզոր ու շեշտակի բռունցք,— եզրակացնում է Փափազյանը:

Հսկայական է Փափազյանի նպաստը տարբեր պետությունների գերիշխանության տակ գտնվող, տնտեսական ու քաղաքական տարբեր պայմաններում ապրող և պետական սահմանների ուժով միմյանցից անջատված հայ ժողովրդի հատվածների միջև մերձեցման, մշակութային կապերի ամրապնդման ասպարեզում: Իր հեղինակությունները նա տպագրում էր և՛ արևմտահայ, և՛ արևելահայ մամուլում ու տպարաններում, ընթացիկ կյանքի, լեզվի, գրականության, պատմության հրատապ խնդիրներին նվիրված բազմաթիվ հոդվածներով ու ելույթներով ճանաչել տալիս միմյանց, հոգևոր կամուրջներ նետում նրանց միջև: Հիշենք՝ Փափազյանն առաջինն ստեղծեց հայ գրականության պատմությունը՝ սկզբից մինչև իր օրերը, ուր հավասար չափով տեղ էր հատկացված նաև արևմտահայ գրականությանը: Բացառապես նրա ջանքերի շնորհիվ էր, որ հրապարակ իջավ «Հայ գրողներ» ընդարձակածավալ երկհատոր ժողովածուի երկրորդ հատորը, ուր ամփոփված էին ընտիր նմուշներ արևմտահայ բոլոր հայտնի գրողներից՝ այդ գրողների համառոտ կենսագրությամբ:

Իր գեղարվեստական գործերով նույնպես Փափազյանը մեծապես նպաստել է հիշյալ կապերի ամրապնդմանը՝ հավասար չափով արտացոլելով հայության հատվածների կյանքը:

Այժմ տեսնենք, թե ինչ խնդիրներ է նա արծարծում արևելահայությանը նվիրված իր երկերում:

Այսպիսի տարբերակումն անհրաժեշտ է՝ փարատելու համար հնարավոր երկմտանքը: Հայաստանի ընթացիկ կյանքն արտացոլող Փափազյանի երկերում քաղաքական մթնոլորտի ենթադրելի նույնության փոխարեն ուշադիր քն-

թերցողը կնկատի միջավայրի, հարաբերությունների այնպիսի պատկերներ, որոնք խորքի մեջ հակադիր են, միմյանց բացասող: Արևելյան Հայաստան աշխարհագրական հասկացողությունը հայ բնօրրանի այն հատվածն էր, որ գտնվում էր Ռուսաստանի տիրապետության տակ: Այստեղ էլ գործում էին կապիտալիզմի ոգեկոչած սոցիալական կեղեքումների ու հոգեբանական այլասերման պրոցեսները: Սակայն հայոց աշխարհի մեծագույն մասի՝ թուրքական լծի տակ գտնվող Արևմտյան Հայաստանի համեմատությամբ Արևելյան Հայաստանը, այդուհանդերձ, շատ կողմերով ցուցաբերում էր իր պատմական առավելությունները: Թուրքիան, որ, Մարքսի արտահայտությամբ, գտնվում էր «ֆեոդալիզմի ամենաստորին և բարբարոսական փուլում»՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով, հայ ժողովրդի ազատասիրական ձգտումներին ու բացահայտ ռուսական կողմնորոշմանը պատասխանում էր պետականորեն ծրագրված ցեղասպանության հետևողական իրագործմամբ՝ այդ նպատակի համար օգտագործելով ոչ միայն սեփական զորքը, այլև կայսրության տարածքներում բնակվող վանդալական ժամանակների բարոյականությանը հավատարիմ ցեղախմբերի վայրենի բնազդները: Արևմտահայ գյուղերի ու քաղաքների համար նվազ մղձավանջային չէին թուրք խուժանի ֆանատիկ-թալանչիական արշավանքները, «խուժան, որի հետ համեմատած հռոմեական կայսրության ժամանակների խուժանը իմաստունների ու հերոսների հավաքածու էր» (Մարքս): Այսպիսի համատարած սարսափներ Արևելյան Հայաստանում չկային: Կար ռուսական առաջավոր միտքը և ռուս մեծ մշակույթը, որոնց հետ անխզելիորեն կապված էր հայ ժողովուրդը՝ դրանց առնչելով իր քաղաքական իդեալների կենսագործումը: Վերոթանես Փափազյանի երկերի վերոհիշյալ պրոբլեմատիկ զանազանությունը թելադրված էր ահա այս ճշմարտությամբ: Հայ գրողը ռուս գրականությունը հասմարում էր գեղարվեստական յուրատեսակ չափանիշ, արտակարգ բարձր գնահատում դրա մարդասիրական-ազատասիրական ոգին: Իր թարգմանություններով, ինչպես նաև գրական բազմաթիվ տեսություններով Փափազյանը հայ հասարակայնությանը ծանոթացնում էր այդ գրականության ականավոր դեմքերի՝ Պուշկինի, Բելինսկու, Չերնիշևսկու, Լև Տոլստոյի, Սալտիկով-Շչեդրինի, Նեկրասովի, Դոստոևսկու, Մաքսիմ Գորկու, Լեոնիդ Անդրեևի և այլոց երկերին: Փափազյանն ուներ երկու Ռուսաստանի հստակ ըմբռնումը:

Կարելի է վստահորեն ասել, որ Փափազյանի առավել կատարյալ գործերը քաղված են հենց Արևելյան Հայաստանի կյանքից: Եվ դա հասկանալի է: Ծնունդով արևմտահայ, նա կյանքի մեծագույն մասն անցկացրեց այստեղ ռուսական կայսրության սահմաններում, գրում էր արևելահայ լեզվով, մոտիկից շփվում և հասուն գրողի թափանցող հայացքով իմաստավորում գյուղացու, բանվորի, մտավորականի, արհեստավորի կյանքի հանգամանքները, խոհերը, դասային փոխհարաբերությունները: Ըստ որում հասունացել էր ոչ միայն նրա

գրողական վարպետությունը, այլև աշխարհայացքը: Սակայն մինչ այդ նրա ստեղծագործական օրգանիզմում սկսում է տրոփել ևս մի գլխավոր երակ, որը, եթե կարելի է այսպես արտահայտվել, առանձնահատուկ ավյուն է մատակարարում Փափազյանի հետագա ողջ ստեղծագործությանը, բազմազան և բացառիկ լայնահայաց դարձնում նրա գեղարվեստական երկերը:

Համալսարանն ավարտելու տարին՝ 1894 թվականը, Փափազյանը բենիմնային է համարում իր ստեղծագործության համար և հետևյալ կերպ բնութագրում իր երկերի ոգին՝ Գևորգ Խատիսյանին գրած մի նամակում. «Այդ թվականից հետո սկսվում է գրական գործունեությանս երկրորդ շրջանը... Այժմ հս ճնշումներ, զրկանք, վիշտ ու տառապանք գնում եմ որոնելու թուրքահայերից դուրս և գտնում եմ նրան ամեն քայլափոխում... Այստեղ ընդհանուր, հանրամարդկային վշտերն են, որոնք գրչիս նյութ են դառնում, լալկանությունը վրդնդվում է, նրան հաջորդում է հետզհետե մեծացող մի ուղղություն, որ կոիվ, քրքիջ, կատաղություն, ըմբոստություն է քարոզում: Իմ վեպերի հերոսները այլևս չեն սպանվում կամ մեռնում անօգնական ու տանջված, այլ, զսպանակի նման շատ ճնշվելուց, ավելի են ոստնում և... բողոքում են եղած անիրավությունների դեմ, ձգտելով բարձրի, ձգտելով լավին ոչ թե արտասուքի միջոցով, այլ բռունցքի և ճիրանների»: Ինքնաբնութագրական այս խոսքերով գրողը նկատի ուներ առաջին հերթին իր այլաբանական գրույցները:

Հիրավի, սկսած 90-ական թվականներից, նա ստեղծում է ավելի քան 50 այդպիսի գրույցներ, որոնք և՛ գեղարվեստական, և՛ գաղափարական հայտնություններ էին հայ գրականության համար: Դրանց արժեքը ակնառու է նաև ժամանակի համաշխարհային գրականության զարգացման միտումների ընդհանուր ֆոնի վրա: Փոքր ժանրի այդ գործերը լրացնելով իրար, մի կողմից սիմվոլիկ պատկերներով ընդհանրացնում էին դասային փոխհարաբերությունների բազմադարյան ընթացքը, իսկ մյուս կողմից նորագույն իրադարձությունների հրաբուխներից արտածում մարդկության հասարակական ներդաշնակության ուղիները: Գիտական կոմունիզմի ուսմունքն այդ գրույցների լավագույն մասով խորհրդանշական ձևի մեջ իրացվում էր որպես աշխարհայացք, որպես պատմական լավատեսության գեղարվեստական վավերագիր: Տնտեսապես հետամնաց արևելյան երկրի գրողը, հասնելով հասարակագիտական ամենաարմատական ուսմունքի բարձունքը, գեղարվեստական խոսքը ծառայեցնում էր նորագույն պատմության խորքային երևույթների բացահայտումներին՝ Արևելքի իմաստուն գրույցների մասնակի այլափոխությամբ հայտնագործելով պատկերավոր մտածողության մի նոր ու հեռանկարային աշխարհ:

Ուսանելի են փափազյանական գրույցների գաղափարական դինամիկան և կառուցվածքային համակցումները: 1891 թվականին ստեղծված «Մարդագայլ» գրույցում գրողը գեղարվեստական փայլուն գյուտով նախ խաթարում է դասա-

կարգային առկա փոխհարաբերությունների նկատմամբ ընթերցողի վարժվածությունն իներցիան՝ Մարդագայլի աննախապաշար ու արդար դատաստանի առաջ կանգնեցնելով սոցիալական անարդարությունը: Այս ի՞նչ անհեթեթություն է,— մտորում է ճակատագրի կամքով գազանների մեջ մեծացած և ապա բռնությամբ կալվածատիրոջ ագարակում բանվորության դատապարտված մարդը,— ո՞վ է սահմանել, որ բարիքներ ստեղծողը զուրկ մնա, իսկ նրա աշխատանքի պտուղները վայելի մակաբույծ սեփականատերը: Պատումի ողբերգական ընթացքն ավարտելուց հետո Փափազյանը երազանքի ճանապարհով թռիչք է կատարում դեպի ապագա անդասակարգ հասարակարգը, ուր «թշվառության ու զրկանքի» վերհուշը ներկայանում է իբրև «մի վատ երազ, մի կոշմար», և ստեղծարար աշխատանքը երջանկություն է պարգևում մարդկանց ու շենացնում աշխարհը:

«Կլոր աստվածներ» զրույցով Փափազյանն ի ցույց է դնում բոլոր չարիքների հիմքը. դժբախտությունն սկսվեց ունեցվածքի անհավասար բաշխումից՝ տարից ինը զուրկ մնացին: «Դիտակ» զրույցն արծարծում է բազմադարյան անարդարությունների հոգեբանական գործոնը՝ հանդուրժողականությունը:

«Անհագը» զրույցով գրողը հոչակում է նորագույն պատմության գլխավոր ճշմարտությունը. ժողովուրդների ճակատագիրն ի բարին տնօրինելու կոչված բոլոր հասարակաքաղաքական ուսմունքները վաղուց ապացուցել են իրենց անճարակությունը: Մարդկային ալեծուփ թշվառությունը վերացնելու միակ ճանապարհը կեղեքիչների ոչնչացումն է: Իսկ արդեն «Կորսված արդարության» մեջ խոսք է գնում այն ժամանակների մասին, երբ կեցության ճգնաժամային դարը մարդկանց մեջ կարթնացնի հասարակական հեղաբեկումների վճռականությունը: Հասարակության ծով արցունքների միջից ծնված **Բողոքն** է, որ կսերադարձնի մարդկանց երկրից հեռացած **Արդարությունը**: «Գնա՛ քայլի՛ր,— **Բողոքին** է դիմում **Արդարությունը**,— կուտակի՛ր արցունք, կուտակի՛ր վշտեր, մեծացի՛ր որպես օվկիան, կատաղի՛ր որպես հեղեղատ, և այն ժամանակ ես կգամ իմ սրով և իմ կշեռքով...»:

Նույն 90-ական թվականների կեսերից Փափազյանն ստեղծում է նաև պայքարի մարտիկների սիմվոլիկ կերպարները: Նրա ստեղծագործության նախնական աստիճանում դրանք միայնակ ըմբոստներն են, որոնց ողբերգական վախճանը գրողը հանձնում է բանաստեղծական պանծացման ոլորտներին: Մահը անազատ կյանքից գերադասող այդ ըմբոստ հերոսներն իրենց անձնազոհությամբ հաղթում են վեհերտ հոգիների ստրկական սարսափը՝ հաստատելով հեղափոխական գաղափարների վարակիչ ուժը: Ահա «Առյուծի մահը» զրույցի ավարտը: Վանդակի մեջ նետված առյուծը կատաղել է: Գազանապահները շիկացած երկաթներով փորձում են զսպել ու խաղաղեցնել նրան, սակայն առյուծի վճիռն անդարձ է: «Առյուծը ժողովեց իրեն, հետո ոստնեց.

— Մեռնե՞լ ազա՞տ...,— գոչեց նա:

Եվ երկաթը վժժալով՝ նրա կուրծքը մղվեց: Առյուծը գալարվեց, երկնքին նայեց, անապատն երազեց, անտառին հառաչեց և հրաշեկ երկաթը կրծքին, աչքերն ազատության, մեռավ քաջի պես, բայց ազա՞տ օդում, ազա՞տ երկնքի տակ...»: Համանման ավարտ ունի նաև «Ըմբոստի մահը»:

Հիշատակված գործերը դարավերջի հայ պրոլետարական գրականության նախակարապետներն են: Հետագա պատմական իրադարձությունները արմատապես փոխում են Փափազյանի զրույցների ոգին ու տրամադրությունը: Սոցիալական պայքարի վերելքին ակնդետ հետևող գրողը այլախոսական նոր հարակցումներով անցում է կատարում արդեն դեպի մասսաների դասակարգային մարտերի արտացոլումը, հեղափոխական ռոմանտիկայի դիրքերից պատկերում այդ մարտերի հաղթանակը: «Առվակը» (1903), «Վիշապ» (1903), «Անտառը շարժվում է» (1905), «Զարթնել է առյուծը» (1905), «Զոհակ» (1906) զրույցները, «Ծով» (1909) այլաբանական խոհը և այլ երկեր ասվածի ապացույցներն են: Ըստ որում՝ ամենաուշագրավն այն է, որ բանահյուսական կամ գրական հայտնի սիմվոլ-կերպարներն ընդունելով իբրև նախատիպեր, Փափազյանը դրանք անցկացնում է իր աշխարհայացքի բովով, ընդհանուր առմամբ պահպանելով նախատիպերի մթնոլորտը, կատարում առաջին հայացքից անշնչանալ թվացող այնպիսի «սրբագրումներ», որոնք փոքր ծավալի այդ գործերում բեկում են դասակարգային մաքառումների բազմադարյան վերուվարումները, առավել բնորոշ օրինաչափությունները և ապա դրանց վերջնական հաղթանակը կապում բանվոր դասակարգի առաջապահ դերի հետ:

«Վիշապ» զրույցը նախնական նյութ է ունեցել աղբյուրի ակունքում նստած, ժողովրդին ծարավի դատապարտած և երկրի գեղեցիկ մատաղահաս աղջիկներին կլանող վիշապի վերաբերյալ թափառիկ այուժեն: Այստեղ էլ վիշապի դեմ պայքարը պատկերված է հազարամյակների պատմական կտրվածքով, մինչև որ դարձյալ ասպարեզ է գալիս հրեշին սպանողը. «Հուժկու մի մարդ էր,— պատմում է Փափազյանի զրույցը,— կաշվե գոգնոցով, կոշտացած խոշոր ձեռքերով և ձեռքին մի մեծ կռան բռնած...»: Շահագրգիռ մի խորաթափանցությամբ զրույցի իմաստը ճիշտ կռահեց Սանկտ-Պետերբուրգի մամուլի գործերոց կոմիտեն, որը Դատաստանական պալատի դատախազին հղած գրությամբ հետևյալ կերպ էր մեկնաբանում «Վիշապի» ենթատեքստը. «Այդ հեքիաթի միտքն այն է, որ վիշապը՝ ժամանակակից պետական և հասարակական կարգը, կործանարար է ժողովրդի համար, և որ սրա ազատարարը հանդիսանում է բանվորական պրոլետարիատը»:

Փափազյանի այս գործերն օժտված են գաղափարագեղարվեստական հրսկայական ուժով, ընդլայնում են հայ պրոլետարական գրականության շրջանակները:

Այժմ վերադառնանք արևելահայ գյուղաշխարհի կյանքը պատկերող Փափազյանի երկերին: Գրականության մեջ լայնորեն հայտնի են «գյուղափրկիչ» մտավորականների կերպարները, որոնք զսպում են ամեն տեսակ տգրուկներին և հայ շինականին առաջնորդում դեպի երջանկության հանգրվաններ: Գյուղագրական այդ հոսանքի միամտությունը և նոր ու զգաստ հասարակահայեցության անխուսափելի հաղթանակն անսխալ է բնութագրել Փափազյանը: Հոդվածներից մեկում նա գրում է. «Ժողովրդասիրական (նարոդնիչեստվո) զգացմունքներն ու ուղղությունը այն ժամանակվա տիրապետող ջիղն էր հայ մտավորականության մեջ: Ամենքը գյուղով էին հետաքրքրվում, գյուղում իդիլիաներ էին երազում... Դրախտ կար այնտեղ ոտնակոխ արված, և արժեր, պետք էր նրա համար զոհել ամեն լավ ուժ, լավ շարժում, որովհետև քաղաքը դարձել էր ապականության, խաբեության, հարստահարության և աղքատության կենտրոն միայն:

Եվ ռուսահայ հեղինակներն իրենց գրիչը նվիրում էին գյուղին, ուր նրանք գտնում էին սիրուն, պարզ, հովվականորեն մաքուր կյանք և ժողովուրդ, ուր նրանք տանում էին առաքյալներին՝ գյուղի խավարը ցրելու, գյուղացուն վաշխառուներից ազատելու, պաշտոնյաների անիրավություններից փրկելու համար: Գյուղ չվերադարձող գյուղացի ուսանողը հոչակվում էր թուլամորթ, դավանանք, «նոյան ագռավ», որ դիակներ է գտնում քաղաքներում և այլևս չի վերադառնում իր հոր տունը, իր հայրենիքը շենացնելու...

Անցան տարիներ: Հաջորդեցին փոթորկոտ ժամանակներ: Ամեն ինչ ենթարկվել սկսեց վերագնահատության...

Գյուղը, գյուղական կյանքն ու գյուղացին էլ ենթարկվեցին ՆՈՐ, ԱՎԵԼԻ ՍԱՌՆԱՍԻՐՏ, ԱՆԱՁԱՌ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ: Այդ ուսումնասիրությունները կատարվեցին բազմակողմանի կերպով և մանավանդ՝ իդեալիզմի վարդագույն ակնոցները հանած հայացքներով...»:

Հայ դասական դրամատուրգիայի գլուխգործոցներից մեկում՝ «Ժայռ» դրամայում, Փափազյանը կանխամտածված կրկնում է այսպես կոչված «առաքելական» գրականության գեղարվեստական հայտնի կառույցների էքսպոզիցիոն կաղապարը, որպեսզի տիպական կոլիզիայով ու հանգուցալուծմամբ հակադրվի իր նախորդների գաղափարական առաջադրություններին:

«Ժայռը» ամենից առաջ դարասկզբի հայ գյուղի անափ թշվառության, այնտեղ կատարվող սանձարձակ ապօրինությունների գեղարվեստական ցնցող պատկեր է: Վաշխառուական կապիտալի ու սրան ծառայագրված իրավաբանների կամայականությունները, իսկ ապա՝ այդ կամայականությունների զոհը դարձած ընչազուրկ գյուղացիության անհնարին կացությունը դրամայում ստեղծում են ողբերգական իրավիճակ, որի պայմաններում անհեթեթ է երևում

իրավահարաբերությունների վերակառուցման ամենայն խաղաղաբարո փրկագիր:

Մոսկվայի համալսարանի իրավաբանական բաժնի շրջանավարտ Ալեքսանդր Մանուկյանը վերադառնում է հայրենի գյուղաքաղաք և երդվում օրենքի անունով ու թելադրությամբ «պաշտպանել անմեղներին, թիկունք դառնալ հարստահարվածներին»: Նվիրյալ ու անհողդողդ «առաքյալը», որ սկզբնապես հայտարարում էր, թե «Օրենքը որ կա, ամենքի համար է», այնուհետև, բախվելով իրականության հետ, հայտնաբերում է ուրիշ ճշմարտություն՝ օրենքը զորեղի օգտին է: Այս եզրակացությանը «Ժայռի» հերոսը հանգում է աստիճանաբար ու անխուսափելիորեն: Գրողը հոգեբանական նման շրջադարձի համար ստեղծում է տիպական նախադրյալներ, որոնք միաժամանակ պարունակում են ներքին բանավեճի զորեղ լիցքեր՝ «առաքելական» գրականության գաղափարա-գեղարվեստական սկզբունքների դեմ: Վերջիններիս մեջ, նախ, «գյուղափրկիչ» երիտասարդ մտավորականի գլխավոր հակառակորդը՝ վաշխառուն, հողից ու արմատներից կտրված ոմն չարիք էր: Ժողովրդի թշնամի լինելով հանդերձ, նա նաև պետության թշնամին էր, հետևաբար, կամա թե ակամա, շահերի նույնության պատրանք էր ստեղծվում իշխանության և սոցիալական ներքնախավարի միջև, իսկ առաքյալը վերջին հաշվով դառնում էր թե մեկի և թե մյուսի նույնացված ձգտումների արտահայտիչն ու կենսագործողը: Ահա թե ինչու Փափազյանի առաքյալ հերոսի նախորդները չափազանց հեշտությամբ էին հաղթանակ տանում ներքին կեղեքիչների դեմ: Որպես կանոն այդ հերոսներին անծանոթ էին անելանելի հանգամանքները, ողբերգական իրավիճակները: Երբեմն, ճիշտ է, պատահում էր, որ «առաքյալները» ձախողվում էին, սակայն ձախողման պատճառը զուտ հոգեբանական էր՝ թուլամորթություն, փափկասիրություն և այլն: Փափազյանը նկատում է գաղափարական վրիպանքի այդ վճռորոշ կետերը և դրանցից էլ սկսում իր բանավեճը: Ազնիվ մղումների կես ճանապարհին, մեղադրվելով «հեղափոխական» գործունեության մեջ, Ալեքսանդրը ձերբակալվում է: Ցրվում են բոլոր պատրանքները՝ իրենց տեղը զիջելով պատմականորեն հավաստի և ժամանակի հասարակական մտայնությանը հոգեհարազատ մտայնությանը:

Փափազյանը հավելումներ է բերում նաև կեղեքիչի ավանդական կերպարի մեջ: Գրիգոր աղայի մեջ գրողը ամենից առաջ ցուցադրում է նրա դասակարգային արմատները, շահերի այն նույնությունը, որ գոյություն ունի նրա և պետական սիստեմի միջև: Ապա, ստեղծելով վաշխառուի դստեր՝ Թերեզայի հրմայիչ կերպարը, Փափազյանը ապացուցում է, որ երբ հրապարակի վրա է դրվում ընտրությունը հարստության և հարազատի ճակատագրի միջև, բուրժուայի բնազդները նրան մղում են դեպի դասակարգային շահը:

Գյուղացիության կերպարները կերտելիս նա Փափազյանը հարազատ է

մնացել ժամանակի ոգուն։ Նրա գյուղացիները առավել չափով վեհերոտ են, ուիամիտ, տատանվող, պայքարից հեռու կանգնած։ Նահապետական գյուղացու, Էնգինի մատնանշած, «անողնաշարությունն» ու «կարծրացած երկչոտությունը» Փափազյանը պատկերել է հատոզիչ իրավիճակներում։ Գրողը պատկերել է նաև նոր բարձրացող երիտասարդ ըմբոստ գյուղացու կերպարը (Սեբոբ), որն արդեն թիկունքում զգում է նոր տրամադրությունների աջակից շունչը։ Այս կերպարի, ինչպես և դրամայի տարածքով մեկ ստեղված ակնարկումների ու թափանցիկ հուշումների միջոցով գրողն առաջադրում է արդեն սեփական դեղատոմսը՝ կործանել ամենայն գեղեցիկն ու արդարը ճզմող ժայռը՝ միապետականությունը։ Ալեքսանդրը, չնայած իր անձնուրաց վճռականությանը, ոչ միայն որևէ արդյունքի չի հասնում գյուղաշխարհի թանձր խավարը ցրելու և վաշխառուներին զսպելու ուղղությամբ, այլև ինքն է դառնում իր իսկ ձեռնարկումի զոհը։ «Գյուղափրկիչ առաքյալների» առջև կանգնած է ամրակուռ մի ժայռ՝ ժամանակակից հասարակական կարգը,— հուշում է Փափազյանը,— որը հնարավոր չէ տապալել խանդավառ անհատների ջանքերով։ Միակ ելքը հավաքականությունն է՝ աշխատավորական մասսաների մարտական դաշինքը։

Առաքյալների պսակազերծման այս ջիղը շարունակվում է նաև «Գյուղից» շարքում, որը վստահ կարելի է համարել 20-րդ դարասկզբի արևելահայ գյուղի նորոգված ցավն ու ընդվզումը պատկերող ամենաականառու գրքերից մեկը։ Ութ պատմվածքներից բաղկացած այդ շարքը, որ ստեղծվեց 1904—1905-ի ընթացքում, «Ժայռի» և այլ գործերի հետ հեղինակային միևնույն մտահղացման արդյունք է՝ գյուղաշխարհի սոցիալական վիճակի ու տրամադրությունների պատկերումը ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին։ Դա ազատ ու կամայական, հարբեցող ու վրիժառու, մանրախնդիր ու բութ ցածրաստիճան իշխանավորների հաղթարշավի թագավորություն է, որտեղ հնօրյա բարոյականության հետքն անգամ չի մնացել, հանցանքի ու պատժի հատկացողությունը ձևակերպման ենթակա չէ։ Մեկուսի այդ տերության մթնոլորտը հագեցված է անմխիթար հառաչանքների աղաղակներով, բայց և տարերային անվեհեր ըմբոստացումներով։ Դանակը ռոկորին է հասել, տեղի է ունենում մտքերի հեղափոխական խմորումը։ Հաջորդային սյուժեով և փոխանցվող կերպարներով Փափազյանը «Գյուղից» պատմվածքաշարում պատկերում է արևելահայ գյուղի սոցիալական ու բարոյական կյանքի ընդերքային գրգիռները։ Բնորոշ է այդ իմաստով շարքի ամենազորեղ պատմվածքներից մեկը՝ «Հոչո-քարը»։

Կորած-մոլորած հայկական խուլ գավառի ստիպողական անդորրը պայթում է սովորական անիրավություններից մեկի ժամանակ՝ լայն ու տևական արձագանքներ թողնելով լեռնաշխարհի բոլոր անկյուններում։ Շրջակա բոլոր գյուղերն իր վաշխառուական ցանցի մեջ առած Հաբեթ աղան օրերից մի օր, պարտքերը հավաքելու աղմկոտ մի պահի, հերթական ապտակն է իջեցնում պարտապանների մեկի՝ Հասարցի Սողոմոնի երեսին, լպիրշ հայհոյանքներով վիրավորում սրա մարդկային արժանապատվությունը։ Եվ տեղի է ունենում անակնկալը. ապշահար գյուղացիների աչքի առաջ զայրացած լեռնականը գետին է փռում լկտի վաշխառուին։ Հաբեթ աղան, իհարկե, չպիտի կուլ տար այդ խայտառակությունը։ «Այդ ձմեռ Սողոմոնն ու ընտանիքը, բոլոր եղբայրները մնում են համարյա անոթի։ Աղան ամեն կերպ աշխատում է և փողի ուժով հաջողվում է հասցնել նրանց այդ դրության։ Խլում է տավարը, խոտը, կալի արդյունքը։ Սողոմոնի կինը կրած տանջանքներից մեռնում է»։ Պատկերելով իրադարձությունների ողբերգական ընթացքը, Փափազյանը ցույց է տալիս, որ համատարած հակօրինություններն սպառում են գյուղացիության հանդուրժողականության պաշարները, նրանց մղում ըմբոստության ու վրիժառության։ «...Մի խորունկ զայրույթ, վառվող կատաղություն» համակում է Սողոմոնին ու նրա երեք եղբայրներին։ «Հարկավոր էր քանդված օջախի վրեժն առնել, գավառն ամբողջ ազատել կլանող հրեշի ձեռքից, վիշապի անկուանները խլել...»։ Մի գիշեր նրանք խուժում են Հաբեթ աղայի տուն, վառում բոլոր մուրհակները, պաշտպանվելիս սպանում վաշխառուին ու հեռանում հայրենի լեռները։ Ապա՝ կառավարական զինված ջոկատներից հալածական, մի քանի ամսվա թափառիկ-խուսափողական կյանքից հետո պաշարվում։ Եղբայրներից մեկը գնդակահար է լինում փոխհրաձգության ժամանակ, երկրորդը, վիրավորված, գլորվում-ջախջախվում ժայռերի վրա, երրորդը իր մահկանացուն կնքում է բանտում, իսկ Սողոմոնը, տասնամյա որդու հետ իրեն նետում է Հոչո-քարից և պաշարման մեջ մեռնում արյունաքամությունից։ Ժողովուրդը, պատմում է Փափազյանը, խոր համակրանքով էր վերաբերվում ըմբոստ եղբայրներին, օգնում նրանց, իսկ հետագայում լեգենդներ հյուսում նրանց մասին։

Սոցիալական աղաղակող անարդարությունների դեմ Փափազյանի հերոսներն իրենց որոշարկված տեսակետներն ունեն։ «Մարդու պես չի ապրվում ...մարդու պես ապրելու տեղը չի»,— ասում է «Կույրը» պատմվածքի հերոսը։ Ուրեմն ինչպե՞ս վարվել։ «Աշխարհումս մարդիկ երկու են լինում՝ գայլ ու ոչխար. դեհ, իհարկե գայլը ոչխարին կուտի».— բարձրաձայն մտորում է «Սերմնացան» պատմվածքի հերոսը։ «Դուք էլ ոչխար մի լինեք. մարդուս իրան ձեռքին է այդ»,— խորհուրդ է տալիս զրուցակիցը։ «Բայց ինձ լսիր։ Ասենք ես ուզում եմ ճանապարհ գնալ. փուշ է, ջարդում եմ, քար է՝ դեն եմ շպրտում, բաս որ սարը գա, ո՞նց անեմ. կարա՞մ քանդել...»։ «Ոչ մենակ, բայց միասին և համառ աշխատանքով կարող եք նրա տակը փորել...»։ «Գրի՛ր, արյունո՛վ գրիր» պատմվածքի հերոսը գեղագիտական դասեր է տալիս շինականի կյանքով զբաղվող գրողին. «Գրի՛ր, ահա այդ ամե՛նը գրիր։ Բայց թանաքով մի՛ գրիր, այլ գյուղացու կարմիր արյունո՛վը— տանջվո՛ղ հոգու, ծվատվո՛ղ սրտի բոսոր հյութովը... Արտասուք շարժելու համար չգրես։ Լա՞ց... ինչո՞ւ... Անմտություն

է լացը: Գրի՛ր, որ կատաղեցնե՛ս ամենքին. գրի՛ր, որ զայրո՛ւյթը մոնչա, ծովի ալիքների պես ելնե ու իջնե, լեռնե՛ր դղրդացնե... Այդպե՛ս, միայն այդպե՛ս գրիր»:

1905-ի հեղափոխությանը նախորդող տարիներին և մանավանդ հեղափոխության ընթացքում Փափազյանը գեղարվեստական երկերով, հրապարակախոսական ու գրաքննադատական հոդվածներով բորբոքում է մասսաների հակակառավարական տրամադրությունները և տոգորում նրանց հեղափոխական լավատեսությամբ: Նկարագրելով կայսրության տարածքն ընդգրկած դասակարգային հուժկու մարտերի դրվագները, մասնավորապես Մոսկվայի փողոցների բարիկադային կռիվները, հայ գրողն արծարծում է կենսական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ զորքի մեջ ծայր առած հակակառավարական տրամադրությունները, փոքր ազգերի, հատկապես հայ ժողովրդի մասնակցության անհրաժեշտությունը հեղափոխական պայքարին, գրողի սրբազան պարտքը՝ ամենագործուն մասնակցություն ունենալ ծավալված իրադարձություններին և ապա, իբրև եզրակացություն, ցարիզմի անխուսափելի կործանման համոզմունքը: Իսկ երբ գալիս են պատմական փորձության տարիները, երբ պարտված հեղափոխության ավերակների վրա իր գիշատչական խրախճանքն էր սկսել միապետությունը, Փափազյանը հետևողականորեն ու աննահանջ դատապարտում է հուսալքությունը, մտավոր այլասերումը, քաղքենիական նվնվոցը և հընչեցնում հրե օրերի մոտալուտ գալստյան հավատը: «Խավարը մշտատև չի կարող լինել,— մտորում է Փափազյանի հերոսներից մեկը,— և արշալույսը վաղ թե ուշ անշուշտ պիտի ծագեր... Չպետք է երբեք հույսը կտրել: Չէ՞ որ կային բարձրություններ. մարդիկ կարող են ցրվել, մանրանալ, բայց գաղափարը խո չէ՞ մեռնում...»:

Փափազյանի՝ իբրև գրողի ու մտածողի կերպարը լիարժեք չի լինի, եթե շրջանցվի հսկայական այն տեղեկությունները, որ նա հայ իրականություն բերեց աշխարհի բազմաթիվ ժողովուրդների գրականության, պատմության, մշակույթի, հասարակական-քաղաքական կարգերի, գիտական նորագույն հայտնագործությունների վերաբերյալ և այլն: Հենց միայն նրա մշակած սյուժեներն ընդգրկում են աշխարհագրական վիթխարի շրջագիծ, ուր տեղ են գտնում տասնյակ ու տասնյակ ժողովուրդներ՝ Մերձավոր ու Միջին Արևելքից մինչև Եվրոպա, Հարավային Ամերիկայից մինչև Հնդկաստան ու Չինաստան:

Վրթանես Փափազյանի ստեղծագործության լավագույն էջերը չեն հնանում ժամանակների հոլովույթում: Գրողի արվեստն այսօր էլ հմայում է ազգային կյանքի ու հոգեբանության, դարաշրջանի բարձր գաղափարների արտացոլման կենսունակ տարերքով:

ԱՇՈՏ ՕՀԱՆՅԱՆ

ԶՐՈՒՑՑՆԵՐ

ՄԱՐԴԱԳԱՅԼ

(Homo homini lupus)

1

Ագարակում բնակվող մանուկը՝ պարտեզի մեջ թողված, վազվզեց թիթեռների ետևից, անցավ ցանկապատից, անգիտակցաբար առաջ գնալով մտավ անտառ... և մոլորվեց։

Թփից թուփ, ծաղկից ծաղիկ հեռացան թիթեռները, մտան խորքերը։ Մանուկն էլ նրանց ետևից։ Սիրուն ծաղիկներ այնքա՜ն կային, որ չնկատեց էլ, թե ինչպե՞ս անցել էր մեծ տարածություն և մտել մի անծանոթ տեղ։

Արևը մայր էր մտնում, երբ իրեն գտավ խիտ մացառներով ծածկված մի քարայրի կողքին։ Մեծ ժայռ էր, մեջը փորված, իսկ մուտքը ծառերով հովանավորված։

2

Քարայրում բնակություն էր հաստատել գայլի մի ընտանիք։ Մի հայր, մի մայր և երկու ձագուկներ։

Ձագուկները ընտանիքի ուրախությունն էին կազմում։ Ինչե՞ր ասես, որ չսարքեին չարաճճիները։ Գլորտվում էին հողերի մեջ, կնձկնձում, իրար խածնում, ծիծաղելի ոստյուններ անում ժամերով։ Հայրն ու մայրը, լավ ընթրիքից հետո, նստում էին քարայրի առաջ և դիտում լակոտների խաղը։

— Հապա՛, Սա՛մ, ցատկի՛ր, բարձր...— ձայնում էր հայրը իր որդուն,— և շո՛ւտ...

Սամը ցատկում էր։ Երկու ոտները գետնից կտրում, մարմնին ծուռ գիրք էր տալիս ու մկանունքները ձգում։ Բայց որովհետև շա՜տ գեր էր, իսկույն ցած էր գլորվում, կնձկնձում և դե՛հ... ծիծաղիր որքան կուզես։

Իսկ Սիդը՝ Սամի նիհար քույրը, երբ եղբայրն ընկնում էր, վազվզում էր նրա շուրջը և շարացնում նրան։

Առավոտներն առհասարակ, մի օր մայր-գայլը, իսկ մյուս օր հայրը, հերթով, գնում էին կերակուր որոնելու։ Փառք աստծո, շատ էլ դժվար չէր լինում աշխատանքը։ Ով գիտենա աշխատել, կարող է ուտելիք գտնել։ Գայլերի հասարակության մեջ, ի վնաս ուրիշների, հարստությունը դիզող և ոտները պարզած պորտաբուծություն անողներ չկային. այնպես որ զբրկվող չէր լինում։ Շրջակայքում ագարակներ, անտառում որսեր շա՜տ։ Հո՜փ... մի ուլ կամ մի գառ, մի ճագար կամ մի նապաստակ, և այդպես, մի քանի հատը բավական էր լինում ընտանիքի ամբողջ օրվա ապրուստի համար։ Ավելորդն ի՞նչ էին անելու. մի՞թե բավ չէր կուշտ լինել և պահանջներին գոհացում տալը։

Հայր-գայլը, ասենք, մի քիչ մեծ ստամոքս ուներ, բայց ավելի ուժեղ էլ էր ու ճարպիկ։ Կեսօրիներից հետո, երբ քաղցում էր, մի քանի ժամ դուրս էր գնում և թփերի տակ գտնում էր ուտելու բան։

Ձմեռը մոտ չէր դեռ. այնպես որ գայլի ընտանիքը երջանիկ օրեր էր անցկացնում խիտ անտառի խոր քարայրի մեջ։

Բայց այդօր, երբ ագարակի մանուկը մոտենում էր քարայրին, տանտեր Սարհոնը դեռ չէր վերադարձել կեսօրվա պտույտից, չնայելով, որ մութն իջնում էր անտառի մեջ։ Տիրուհին՝ Զեբը, անհանգիստ էր. շատ էլ ախորժակով չէր, որ դիտում էր փոքրիկների խաղերը։ Անհանգիստ, սպասող ակնարկներ էր ձգում քարայրի դռանը։

— Դե՛հ, քիչ հանդարտ, երեխայք,— ձայնեց նա վերջապես,— լռեցեք, տեսնենք հայրիկը չի՞ գալիս։

Սիդն ու Սամը վազեցին դեպի դուռը։

— Տեսնենք հայրիկը չի՞ գալիս,— ասաց Սիդը։

— Տեսնենք,— կրկնեց Սամը։

Ինչ ասել կուզի, որ վազելու մեջ Սամը ետ մնաց։ Ոչ միայն ետ մընաց, այլև երկու անգամ գլորվեց ու թողեց, որ քույրն առաջ անցնի։

Նրանք դուրս եկան քարայրից։

Սիդը թփերը դեն տվավ, վազեց մի մացառի միջից և դեմառդեմ գալով մանուկին, վախեցած կանգ առավ։

— Վա՛յ,— գոչեց նա,— մի գազան...

— Մի գազա՞ն,— կանչեց նրա ետևից Սամը,— մի ճշմարի՞տ գազան։

— Նայի՛ր։

Ծաղկեփունջը ձեռքին, կանգնել՝ գայլուկներին էր դիտում մանուկը։ Գայլ երբեք չէր տեսել. շուն կարծեց նրանց։

Բայց Սիդը, երբ զարմանքից ուշքի եկավ, մի ճիչ արձակեց և ետ փախավ. Սամը գլորվելով հետևեց նրան։ Երկուսն էլ հևալով ներս ընկան քարայրը։

— Մայրի՜կ... գազա՜ն,— աղաղակեցին նրանք։

Մայր-գայլը սկզբում չհասկացավ. հետո, երկու ոստյունով կտրեց տարածությունը, ցնցեց մացառներն ու զարմացած մնաց։

— Ա՜,— ասաց նա՝ տեսնելով մանուկին,— մի փոքրիկ Օձ է։

— Օ՜, ի՜նչ մեծ շուն,— մտածեց մանուկը և վախեցավ։

Սիդը հասել էր մորը։

— Տեսա՞ր, մայրիկ, ի՜նչ մեծ գազան է։

— Սա դեռ ձագուկն է, աղջիկս,— ասաց մայրը,— պիտի սպանել սրան, քանի չի մեծացել։ Սա աշխարհիս ամենախորամանկ ու գծուծ անասուններից մեկն է. ինչքան լավություն անես, այնքան վնաս կտա քեզ։

— Չսպանենք, մայրիկ— գոչեց Սիդը,— տուր մեզ խաղանք։

— Ինչե՞ր ես խոսում, աղջիկս,— վախեցավ մայրը.— սա քեզ, իրավ է, առաջ կգգվի, խաբեությամբ մոտ կգա, բայց հենց որ առիթը գտնի, կխեղդի և վրադ էլ կծիծաղի. սա մեր թշնամին է. պիտի ուտել սրան...

—Չէ՛, մայրիկ,— խնդրեց Սամն էլ, որ այդ միջոցին հասնում էր.— քաղցած չենք, պահենք սրան, հետը կխաղանք։

Տիրուհի Զեբը շատ անգութ կին չէր, այդ օրն էլ քաղցած չէր, կուշտ կերել էր։ Ամեն մարդ գիտե, որ երբ գայլը կուշտ է լինում, նա այլևս ոչ ոքի չի վնասում։ Մարդի պես խո չէ՞, որ ուտելուց եթե տրաքվելիս անգամ լինի, իր նմանին էլ դեռ կպատառոտի։

Մանուկը սիրտ էր առնում, տեսնելով, որ իրեն վնաս չեն հասցնում։ Մոտեցավ, կռացավ դեպի Սիդը և սկսեց փայփայել։ Զեբի սիրտը շարժվեց։

«Աստվածները վկա,— մտածեց նա,— այս Օձուկը դեռ մանուկ է և չար չի երևում»։

Սիդն էլ սիրեց Օձուկին։ Լիզում էր նրա ձեռքերն ու երեսը։ Քիչ-քիչ Սամն էլ մոտ եկավ։ Օձուկը նստեց խոտերի վրա, Սամը մի քանի ոստյունով ուզեց նրա ծնկներին ելնել, հետո գլորվեց, Սիդին ծիծաղեցրեց, և Զեբը մոռացավ, որ մի վտանգավոր թշնամի շոյում էր իր զավակներին։

Օձուկն էլ տեսավ, որ մեծ շունը՝ Զեբը, իրեն չէր վնասում։ Ժպտաց վախախառն քծնող մի ժպիտով.— դա մարդկային ոգու նշանն էր— սիրտ առավ և սկսեց խաղացնել գայլուկներին։

«Ի՞նչ կա,— մտածեց բարի գայլուհին.— մանուկներս սիրեցին Օձուկին. կպահեմ ինձ մոտ և կսովորեցնեմ, որ մեծանա էլ, մեզ հետ բարեկամ մնա...»։

Բայց ի՞նչ պետք էր անել տանտեր Սարհոնին, որ նա Օձուկին իր ստամոքսը չմտցներ...

3

Այդպես էր մտածում բարի Զեբը, երբ քարայրը ծածկող մացառները շարժվեցին, և հսկա Սարհոնը փոշոտ, հևալով՝ ներս ընկավ։

Գզգզված էր նա. այնքան հոգնած, որ ոչինչ չնկատեց։

Գնաց մի անկյուն և ընկավ ցած։

Վախեցավ Զեբը, վազեց դեպի նա։

— Ի՞նչ է եղել քեզ, սիրելիս,— հարցրեց սարսափած։— Այդ ի՞նչ փոշի է վրադ. հագուստդ ինչո՞ւ է բզիկ-բզիկ եղել... վա՜յ ինձ, արյուն կա ոտներիդ վրա. ո՞ւր էիր, ի՞նչ պատահեց։

— Թող քիչ շունչ առնեմ, կին դու,— մռմռաց Սարհոնը հոգնած ձայնով.— մահվանից ազատվեցի. քիչ մնաց, որ ինձ այլևս չտեսնեիք։

Սամն ու Սիդը հորից վախենում էին և դրա համար էր, որ երբ Սարհոնը ներս ընկավ, նրանք թողին Օձուկին ու մի կողմ քաշվեցին։ Իսկ Օձուկը մի տեսակ սարսափ զգաց տանտիրոջ մեծ հասակից և արյունով լիքը աչքերից, ետ-ետ քաշվելով գնաց մի մութ խորշ ու կծկվեց այնտեղ։

— Խոսի՛ր, մա՛րդ,— ճչաց գայլուհին,— ասա՛ տեսնենք որտե՞ղ էիր, ի՞նչ է այդ վիճակդ։

Այն ժամանակ Սարհոնը, որ աչքերը քիչ փակել էր և մեջքի վրա գետին փռվել, բարձրացավ, կոթնեց պատին ու ասաց դողդոջուն ձայնով.

— Պատմեմ, թե ինչո՞ւ այսպես եղա։ Քիչ մնաց ինձ սպանեին այսօր։ Գնացի անտառի խորքերը, թփի տակից մի չաղ նապաստակ գտա և քնթրիքս արի նրանով. հետո, որովհետև կշտացել էի, ընտրեցի մի զով տեղ ջրի եզերքում և քիչ թեք ընկա։ Սքանչելի էր եղանակը, փչում էր մեղմ քամին, կչկչալով վազում էր ջուրը, մարգերի ախորժելի կանաչությունը զմայլեցնում էր։ Ես վայելում էի բնության գեղեցկությունը և հանգիստ սրտով պատրաստվում էի մրափելու... երբ հանկարծ, ինձնից ոչ շատ հեռու լսվեց մեր սոսկալի թշնամու ձայնը. մեր այն ցեղակիցներից

մեկի, որոնց Օձերը զինեցին մեր դեմ. մեր այն ցեղակիցները, որոնք այնքան ստորացան, այնքան ընկան, որ ոչ միայն սողոսկում են Օձերի ոտքերի տակ, ոչ միայն լիզում են նրանց զարնող ձեռքը, այլև մեզ, իրենց եղբայրներին, ամեն րոպե մատնում են օտարին... Պնակալեզ-շան ձայնն էր, որ լսվեց։ Վեր թռա. հարկավոր էր պաշտպանվել։ Բայց լավ գիտես, կի՛ն դու, որ հազար անգամ ավելի դժվար է ազատություն հուսալ, երբ մատնվում ես եղբորդ ձեռքով։ Պնակալեզը գտել էր իմ տեղը և գալիս էր։ Աշխատեցի փախչել. ինձ նկատեցին, ետևիցս ընկան խմբով, կծեցին, պատառոտեցին... Հազիվ դուրս պրծա, և ահա տեսնում ես վիճակս...

Ասաց Սարհոնը և նորից աչքերը փակեց։ Իսկ Զեբը զայրույթից դողում էր։

Մի րոպե խորին լռություն էր, որ թագավորեց քարայրում։ Հետո գայլը նորից բաց արավ աչքերը և մրմնջաց բողոքող ձայնով։

— Օ՜, այդ մարդի՜կ, այդ Օձե՜րը... Ի՞նչ էի արել ես նրանց։ Մի՞թե իրավունք չունենք մենք էլ վայելելու բնությունը. մի՞թե ամեն բան միայն նրանց է պատկանում և ուրիշ ոչ ոքի։

— Մարդկանց անգթությունը,— ասաց Զեբը,— հայտնի է, պարզ է. այդ ոչի՜նչ. բայց ի՞նչ ասել մեր պնակալեզ եղբայրների մատնության մասին։

— Է՜հ, կին դու, չէ՞ որ նրանց էլ մարդն է, որ զինել է մեր դեմ. այդ մարդ-օձի պես անգութ, անսիրտ և գազան արարած չկա աշխարհում... Ո՜չ, չկա... և նրանց պիտի ոչնչացնե՛լ...

Այդ ժամանակ միայն գայլուհին հիշեց փոքրիկ մանուկին. հիշեց և սարսափեց։ Ի՞նչ պիտի աներ, եթե ամուսինը զգար նրան. չէ՞ որ պիտի բզկտեր։ Օձուկին նա սկսել էր սիրել և չէր կամենա նրա մահը. Սիդն ու Սամը կմեռնեին, եթե Օձուկին մի վնաս հասնելու լիներ։

— Չէ՜, մա՜րդ,— ասաց նա ամուսնուն.— մարդը այնքան մեղավոր չի դրանում. ոչնչացնելու արժանի մեր այն պնակալեզ եղբայրներն են, որոնք մատնում են մեզ։ Առանց նրանց մատնության Օձը ե՞րբ կարող է մեր տեղը գտնել, մեզ հասնել, մեզ վնասել։ Նա ի՞նչ է որ... քանի՜-քանի՜ օձերի դու ինքդ պատառոտել ես։

— Իրավ է,— մռմռաց Սարհոնը.— մարդը, չնայելով իր խորամանկության և չարասրտության, շատ թույլ է և վախկոտ. մի գայլ նրանց հինգ-վեցին կպատառոտի, եթե այն անիծյալ Կարմիր-հրեշը (կրակը) չունենան իբր զենք։

Զեբը քիչ շունչ առավ. ամուսինը մեղմանում էր. այժմ ժամանակ էր մանուկի գոյությունը հայտնելու։

Եվ որովհետև ինչ ուզենա կինը՝ կարող է անել, և որովհետև տղամարդը վայրկյաններ կան, երբ պատրաստ է կնոջ ասած հիմարություններին անգամ հպատակվել— մի ժամից հետո այնպես եղավ, որ Օձուկը ներկայացավ քարայրի տիրոջ։

Սա նախ մի խոժոռ ակնարկով զննեց նրան, հետո դարձավ կնոջն ու ասաց.

— Քիչ ավելի մեղմ դեմք ունի։ Բայց մեծանա թե չէ, նույն գազանը կդառնա։ Ինչ որ է. թող մնա մեզ հետ, տեսնենք ինչ կլինի։

Եվ փոքրիկ մանուկը մնաց անտառում, գայլի ընտանիքի մեջ ու մեծացավ այնտեղ։

4

Մնաց մանուկն անտառում շատ և շատ տարիներ, գայլի ընտանիքի մի անդամը, Սիդի և Սամի եղբայրը եղավ և մեծանում էր նրանց հետ։

Գայլուկները չէին վախենում նրանից։ Պատահում էր մեկ-մեկ, որ բնազդաբար, սարսափով ետ էին քաշվում, երբ նա երևում էր, բայց քիչ-քիչ այդ խորթությունն էլ վերացավ. գոնե երկու կողմից էլ չզարգանալով, անգործ վիճակի մեջ մնաց. իսկ մանուկն սկսեց գայլերի լեզուն սովորել։

Ջեբը նրա հետ լավ էր վարվում. մինչև իսկ սիրում էր նրան, որովհետև Օձուկը ճարպիկ էր, մագլցում էր ծառերի վրա, անուշահամ ձվեր գտնում, փափկամիս թռչուններ որսում և նրանցից գայլուկներին համեղ կերակուր պատրաստում։

Տանտեր Սարհոնն էլ սկսեց քիչ-քիչ սիրել նրան։

— Սա Օձուկ չէ,— ասում էր նա հաճախ,— Օձուկը այսպես քաղցր ու բարի չի կարող լինել։

Այդպես, գայլի ընտանիքը իր նոր անդամի հետ շարունակեց երջանիկ կյանք վարել երկար տարիներ։ Ոչինչ չէր վրդովում նրանց երջանկությունը. մի քանի թեթև դեպքեր շուտով մոռացվում էին, և մանուկն էլ մոռանում էր, որ ինքը օտար է ընտանիքի համար։

Եկավ աշունը։

Անտառը սկսում էր մերկանալ, լռել ու գույնը փոխել։ Անձրևային օրերին հաջորդում էին մթին գիշերները, բայց լավ օրերն էլ պակաս չէին, մանավանդ, դեռ սկզբի ամիսներում։

Գայլի ընտանիքն ավելի շատ և ավելի հեշտությամբ էր որս գտնում, դրա համար էլ գիշերները դուրս գալու պետք չուներ։ Մնում էր նա քարայրի խորքում, և եթե լուսին կար նրա առջև, հայրն ու մայրը մի կողմ

էին նստում, իսկ մանուկները խաղեր էին սարքում և օդը ուրախ աղմուկով լցնում։

Մի երեկո էլ, երբ մթնել էր, և բոլորը ընթրիքի նոր էին նստել, հանկարծ քարայրի դռան առաջ փայլեցին երկու աչքեր, և լսվեց մացառների խշրտոց։

— Ո՞վ է այդ,— ոռնաց Ջեբը։

— Բարեկամ է,— լսվեց մի խռպոտ, անախորժ ձայն, հետո առաջ եկավ մի մեծ դեմք։

— Մեծ Խորհրդի Կարմիրն է,— ավելացրեց ձայնը մոտից։

Սարհոնի դեմքը խոժոռվեց։ Այդ քսու գայլի գալը լավ բան չէր գուշակում։ Բայց ոչինչ անել չէր կարելի, որովհետև Կարմիրը գայլերի Մեծ Խորհրդի մեծափառ գզիրն էր, նրա սուրհանդակը։

— Համեցե՛ք, ներս մտիր, Կարմի՛ր,— ասաց Սարհոնը,— համեցեք ընթրիքի։

— Ո՛չ, շնորհակալ եմ,— ասաց Կարմիրը դռան մոտից,— ես նոր եմ ընթրել...Բայց ինչ-որ Օձի հոտ է գալիս այստեղից։

— Այդ ոչինչ, Կարմի՛ր,— խոսեց Սարհոնը,— երևի շատ կուշտ չես ընթրել այսօր... ներս եկ, տեսնենք, Կարմի՛ր, ի՞նչ լուր ես բերում մեզ։

Կարմիրը ներս եկավ։ Բորենու նման ցից ու գզգզված մազերով, խորամանկ, գողի պես նայող աչքերով փոքրիկ գայլ էր նա։

— Գիտե՞ս, Սարհոն,— ասաց մտնելիս,— ես Մեծ Խորհրդից եմ ուղարկված. ժամանակ չկա կորցնելու։ Մեծ Խորհուրդը գումարվել է Կլոր բլրի վրա և քեզ իր ատյանն է կոչում։

— Ի՞նձ, իր ատյա՞նը... ինչո՞ւ,— հարցրեց Սարհոնը այլայլված,— ես ոչինչ չեմ գործել հասարակաց օրենքների դեմ։

— Ես իրավունք չունեմ քեզ պատճառը հայտնելու,— ասաց Կարմիրը լուրջ և խորհրդավոր դեմքով.— հանուն օրինաց՝ քեզ կոչում են Մեծ Խորհրդի ատյանը և...

Եվ ստացավ նա մի խրոխտ կերպարանք։

— Եվ ի՞նչ,— ընդհատեց նրան Ջեբը ծաղրական դեմքով,— չլինի՞ ինձ էլ են կոչում այդ Մեծ Խորհրդի վսեմաշուք ատյանը։

Մեծաշուք պատգամավորը վիրավորվեց մի կնոջ այդպիսի ծաղրական ձևերից։

— Ո՛չ,— ասաց նա կծու ձայնով,— այդպիսի տեղերում կանայք գործ չունեն... կանայք ձայն չունեն...

— Հողը գլխներիդ,— գոչեց գայլուհին,— առանց մեզ դուք ձայն կարո՞ղ եք ունենալ։

Կարմիրը, երևի մտածելով, որ կնոջ հետ գլուխ դնել պետք չէ, մա-

նավանդ իր պես մի մեծանձն պաշտոնյայի համար, աշխատեց հեգնող ժպիտ կազմել դեմքի վրա, նայեց Զեբին, ապա Սարհոնին դարձավ և ասաց.

— Հը՛... Մեծ Խորհրդի հրամա՛նը.. մի՞թե չես ուզում գալ։

— Գնա՛նք,— պատասխանեց գայլը ոտքի ելնելով,— ամեն գայլ պարտավոր է հպատակվել իր դրած օրենքներին... Առա՛ջ ընկիր...

Կարմիրն առաջ անցավ, քայլեց մինչև դուռը, ապա կանգ առավ, դարձավ և ասաց.

— Գիտե՞ս ինչ, Սարհոն եղբայր, գործից երևում է, որ Օձուկին էլ հարկավոր է հետներս վերցնել. ի՞նչ հարկավոր է ինձ նեղություն տալ նորից գալու։

— Օձո՞ւկ,— զարմացավեց Սարհոնը, —ո՞վ է այդ։

Կարմիրը գլխով մանուկին ցույց տվավ։

— Ի՞նչ,— բացականչեց Զեբը.— Խորհուրդը գիտե՞ նրա մասին։

Կարմիրը պատկառանք ազդող կերպարանք կազմեց և գլուխը ցցելով ասաց.

— Սարհոն եղբայր և դու, տիկի՛ն, մի անգամ ընդմիշտ պիտի գիտենալ, որ Մեծ Խորհրդից ծածուկ ոչինչ չի մնում։

Ապա թողնելով խոսելու այդ ձևը, ավելացրեց.

— Դեհ, կանչիր Օձուկին, և գնանք։

— Վա՛յ ձեր գլխին,— ոռնաց Զեբը առաջ գալով,— կորսվիր դու էլ ու Մեծ խորհուրդդ էլ...

— Տիկի՛ն...— մռնչաց բարկությամբ Խորհրդի ներկայացուցիչը,— Սարհոն եղբա՛յր, կնոջդ լռեցրու և գործված անարգանքը դադարեցրու... հանուն օրինաց...

— Շո՛ւտ, դուրս կորիր, քսու,— որոտաց նրա վրա գայլուհին և մոտ վազեց։

Կարմիրը, որ ետ-ետ էր քաշվել, դուրս ցատկեց։ Առյուծի լեղի՞ էր կերել, որ մի կնոջից չվախենար։

— Աստված իմ, տիկին,— ասաց նա,— ինչո՞ւ ես բարկանում, ես իմ պաշտոնս եմ կատարում։

— Կորիր... էլ ստվերդ թող չերևա այստեղ։

— Գնանք, եղբա՛յր, գնա՛նք,— գոչեց Կարմիրը Սարհոնին և շտապով առաջ ոստնեց։

Ու երկու գայլերը շուտով անհետացան մթության մեջ։

5

Կլոր բլուրը, որ գտնվում էր անտառի մեջտեղը, մի լերկ տափարակ ուներ իր գագաթի վրա։ Այդտեղ էր, որ հավաքվել էր գայլերի Մեծ Խորհուրդը։

Մոտ հարյուր գայլ էին։ Ետևի ոտների վրա, դունչները ցցած, շրջանակաձև նստել էին, մեջտեղը մի մեծ կրկես բաց թողել և խորհում էին։

Մեկը միայն, որ նախագահ էր, մտել էր շրջանի մեջ, գնում էր, գալիս, երբեմն կանգ առնում, դունչը բարձրացնում ու մի երկար ոռնոց արձակում։ Հազիվ նա այդ վերջացնում էր, բոլորը միասին արձագանք էին տալիս նրան։

Ահա թե ինչումն էր բանը։ Նախագահը ճառախոսում էր գնալով-գալով և որովհետև, ըստ գայլերի, երևի շատ լավ էր խոսում, անդադար ծափահարում էին նրան, այսինքն՝ ոռնում էին։

— Քաջ գայլե՛ր, քաղաքացինե՛ր...

— Բրավո՛, բրավո՛..

— Այսօր մենք ժողովվել ենք մի մեծ, շատ մեծ գործի առիթով, որ մեր ընդհանուրիս շահերին է պատկանում...

— Ո՛ւ, ո՛ւ ո՛ւ...

—... Թշնամին մեր մեջն է, նա օձի պես սպրդել է, շան պես հաճելի լինելով, գրավել է մեր եղբայրներից մեկի, մանավանդ մի թույլ, ողորմելի կնոջ սիրտը...

— Ա օ՛ օ՛ օ՛...

—... Ցավալի է, որ մեր եղբայրները այսքան երկար ժամանակ նենգ օձին տաքացնում են իրենց ծոցում. մի օձի, որին արժե ուտել միայն. ուտե՛լ, այո՛... կտրտել և ուտել...

Այստեղ, անշուշտ, պատկառելի նախագահը ուզեց մի կատակաբանությամբ համեմել իր լուրջ ճառը, ուստի մի ժպիտ կազմեց դեմքի վրա և ավելացրեց.

—... Ուտե՛լ... իհարկե. այդպիսի՞ համեղ պատա՞ռ. այդ անիծածների միսը շատ համով է լինում։

— Ա՜ռ, առ՜, առ՜...

Բոլորի բերնի ջրերը ծորալ սկսեց. ոչ ոք ծիծաղեց։ Ուտե՛լ, ա՜հ... Եվ ո՞ր գայլը այնուհետև կհակառակեր պատկառելի նախագահի այդպիսի համոզիչ ճարտարախոսությանը։

Երկար, բավական երկար խոսեց մի ճառ, որում նա գործադրեց ճարտարախոսության և հռետորության բոլոր ձևերը, տրամաբանական բոլոր օրենքները։ Օրինակ, երբ կամենում էր շեշտել մի խոսք, առջևի

ոտների վրա ցատկում էր, երբ ուզում էր ազդու անել, պոչն էր ցցում ղեպի լուսինը, իսկ երբ կամենում էր մի լավ ոճ գործածել, ասում էր. «Ուտել,կտոր-կտոր անել, մսերը ծամել» և կամ՝ «Հանուն ընկերական ապահովության, կոտորել նրան և բաժանել խորհրդի անդամների մեջ...»։

Իսկ եթե բան է, ասում էր, թե՝

«...Իհարկե, մեծ մասը թողնելով նախագահին, որ նեղություն է կրում...»,— իսկույն մի խուլ շշուկ էր բարձրանում։ Ճառախոսության այդ ոճը վաղուց հնացել էր. ինչպե՞ս էր թույլատրում իրեն նախագահը գործածելու նրան։

— Առ՜ւ, առ՜ւ...

Ահա այդպես զբաղված էր Մեծ խորհուրդը, երբ Կարմիրն ու Սարհոնը հասան բլրին։

Կարմիրն առաջ անցավ, երկու ոստյուն գործեց, խոնարհվեց նախագահի առաջ և ասաց.

— Ժողովի հրամանը կատարեցի, ահա Սարհոնը։

— Թող գա, թող գա,— ձայնեցին բոլորը։

Եվ Սարհոնը մտավ շրջանի մեջտեղը։ Երկար ժամանակ էր, որ նա ոչ միայն Մեծ խորհրդին չէր ներկայացել, այլև շատ գայլերի հետ կտրել էր իր հարաբերությունը։ Դրա համար էլ մի բոպե բոլորը լռությամբ դիտեցին նրան։ Այնուհետև նախագահը նստեց ետևի ոտների վրա և ասաց մեծափառորեն.

— Սարհոն եղբայր, Մեծ խորհուրդը գումարվել է այսօր և քեզ իր ատյանը կոչել։ Գայլ եղբայրները քո անձիդ դեմ ոչինչ չունեն, եթե անհանգիստ աչքով չդիտեին այն անիծյալ, մեր ցեղին թշնամի գազանին, որ մտել է մեր մեջ։ Դու նրան պահում ես, կերակրում. նա արդեն մեծացել է, շուտով կսկսի Կարմիր-հրեշը գործածել, և այն ժամանակ գիտե՞ս, թե ինչ է նշանակում այն թշնամին, որ մեր տունն ու տեղն է ճանաչում, որ մեր լեզվին ու օրենքներին է ծանոթ... Խոսի՛ր, ի՞նչ ես մտադիր անել։

— Այո, խոսի՛ր,— ձայնեցին բոլորը։

Սարհոնը զգաց, որ Օձուկի բանը բուրդ է։ Գայլերը ուտելու փափագ ունեին, և մանուկի փափուկ մորթը գրգռել էր նրանց ախորժակը։

Նա ստիպվեց նախ համառոտապես պատմել մանուկի մուտքը իրենց մեջ, հետո պարզեց նրա մեղմությունը, նրա՝ իր մանուկների բարեկամ դառնալը...

— Գայլ եղբայրներ,— վերջացրեց նա,— ես չեմ կարծում, որ դուք այնքան անգութ լինեք՝ զարնելու համար մի անզեն անձի. չէ՞ որ այդ

Օձուկը այնքան վարժվել է մեր մեջ, որ այլևս մոռացել է, թե ուրիշ հասարակության է պատկանում, մոռացել է, որ մեզ թշնամի է։

Հազիվ թե վերջացրել էր, երբ մի երիտասարդ անդամ վեր թռավ, խոսք ուզեց և սկսեց ճառել ժառանգականության մասին, որով և հաստատեց, թե Օձուկը իր պապերից ժառանգած լինելով դեպի գայլերը թշնամություն, վաղ թե ուշ նրա մեջ վերարտադրվելու էր եղած բնազդը։

Նրա ճառը ազդեցություն թողեց. բայց այդ միջոցին գայլերի մեջ հեղինակություն ունեցող մի հին պատերազմիկ առաջ եկավ և ասաց.

— Զինենք այդ Օձուկին իր եղբայրների դեմ մեր օգտին, ինչպես որ մարդիկ զինել են մեր եղբայրներին՝ շներին, մեր դեմ և մատնիչներ դարձրել նրանց։

— Կեցցե՜, կեցցե՜, առ՜ւ...,— ոռնացին ամեն կողմից։

— Բայց, գա՛յլ եղբայրներ,— խոսեց նորից Սարհոնը,— դա մի այնպիսի ցածություն կլիներ, որին միայն մարդիկ են ընդունակ, իսկ մեզ, գայլերիս, դա պատիվ չի բերի։ Ի՞նչ կասե մեր ապագա սերունդը, եթե իմանա մեր այն աստիճան թուլությունը, որ ստիպված ենք եղել այդպիսի ստորությունների դիմել... Ո՛չ, եղբայրներ, թող միշտ մեր անունը անաղարտ մնա մեր սերունդների համար։ Մենք անոթի չենք մնա երբեք և ոչ էլ կոչնչանանք. մեր ձեռքերը և ուժը մեզ միշտ կերակրել են ու պաշտպանել. չլինենք մարդկանց պես...

— Այո՛, այո՛,— ձայնեցին շատ երիտասարդ գայլեր,— Սարհոնը ազնիվ գաղափարներ է հայտնում. մենք համամիտ ենք նրան։

Բայց որովհետև ինչ երիտասարդությունը լավ է գտնում, ծերությունը՝ վատ, որովհետև հնի և նորի, ծերության և երիտասարդության կռիվը գոյություն ունի բոլոր արարածների մեջ, դրա համար էլ իսկույն ծեր գայլերը հնամյա պատերազմիկի կողմը բռնեցին Սարհոնի դեմ, և ահա հասարակությունը բաժանվեց երկու կուսակցության։

Ծերերը պնդում էին, որ հանուն խոհեմության, զգուշության և ընկերության հարատևության պետք է լռեցնել «ձվից նոր դուրս եկածներին» և փոքրին էլ, քաղաքականորեն, իբր զենք գործածել թշնամիների դեմ։

Երիտասարդները, ընդհակառակը, գոռում էին և անտառն էին թընդացնում իրենց աղմուկով, որ հանուն ճշմարտության, որ ազգություն չունի երաժշտության և սիրո պես, հանուն ազնվության, որ համամարդկային է, պետք չէ այդպես անել։

Համենայն դեպս Օձուկը վտանգից ազատվել էր։ Նրան էլ չէին ուտելու, և այդ շատ ցավ ազդեց Մեծ խորհրդի նախագահին, գզիրին և մյուս պաշտոնյաներին, որոնք միշտ լավ ախորժակ ունեին։

Բարկությունից նախագահը ատամները կրճտացրեց Օձուկի ապահովությունը կամեցող երիտասարդների դեմ և գոռաց.

— Ուտենք Օձուկին, ոչնչացնենք նրան. ահա խռովություն սկսեց ներմանել մեր մեջ։

— Ո՛չ, ո՛չ,— ձայնեցին քաղաքագետները,— կենդանի թողնենք և իրը զենք գործածենք մեր թշնամիների դեմ։

— Ո՛չ, ո՛չ,— մեջ մտան երիտասարդները,— կենդանի թողնենք և ազնվությամբ վարվենք նրա հետ։

— Գետինն անցնեք ձեր ազնվությամբ,— ոռնաց նախագահը և անցավ ծերունիների կողմը։ Պաշտոնյաներն էլ նույնն արին իրենց պաշտոնի բերմամբ. բացի դրանից, չնայելով, որ երիտասարդ էին, բայց ավելի լավ ախորժակ ունեին, քան լավ գաղափարներ։

Բարձրացավ դժոխային աղմուկ անտառի մեջ. կարգ չմնաց. ամեն ոք խոսում էր։ Վիճում էին, իրար դեմ քայլելով՝ պոչները թափ տալիս, ապա ետ դառնում և իրենց կողքինի ականջը խլացնում։

— Խո՛սք կուզեմ...

— Արձանագրե՛լ բողոքս...

— Ի կա՛րգ, պարոննե՛ր...

Ո՞վ էր լսողը. մարդիկ կարգ-կանոն գիտե՞ն, որ գայլերը գիտենան։

Կամաց-կամաց, որովհետև կուսակցական, մանավանդ ուժեղ ձայնարկությունների զորությունը երիտասարդների կողմն էր, ծերունիները սկսեցին ետ քաշվել։

— Գնանք, գնանք, իզուր ժամանակ ենք կորցնում,— նշան տվավ հին պատերազմիկը։— Ժողով հո չէ՞. ամեն մի երեխայի խոսելու են թաղնում։

— Այնպես չէ՞,— մոտեցավ նրան մի ուրիշ ծեր,— ժամանակս խիստ փչացել է. ո՞վ էր տեսել, որ այդպիսի կաթնակերները ծերերի դեմ խոսեն։

— Է՛հ, իհարկե, այլևս գայլությունը կսկսի վատասերվել,— դիտեց մի երրորդ ծեր։

— Զարմանալի է,— դիտել էր տալիս մի ուրիշը,— ինչո՞ւ է նախագահը լռել և վնդել չի տալիս ժողովից բոլոր այդ աղմկարար երեխաներին. էլ ոչ ծերերի պատիվ մնաց, ոչ կարգ-կանոն... թե ես կլինեի նախագահ...

Եվ այդպես, կամաց-կամաց ծերերը հեռացան։ Բլրի վրա մնացող երիտասարդներն էլ կես ժամի չափ գոռգոռացին, աղմկեցին, սպառնացին և նրանք էլ գնացին։

Բլուրն ամայացավ։

Այդ միջոցին էր, որ թփի տակից դուրս եկան Զեբը և Օձուկը, որոնք ժողովի կեսին հասել և պահվել էին թփի ետևում և այնտեղից լսել էին ամեն բան։

— Տեսա՞ր,— ասաց Զեբը՝ դառնալով Օձուկին.— ես քեզ չասացի՞, որ նրանք, բացի դատարկ խոսելուց, ոչ մի հավաքական վճռի ընդունակ չեն. չասացի՞, որ պիտի կռվեն և առանց վճիռ տալու ցրվեն... Հողեմ ես դրանց գլուխը...

Մանուկը չպատասխանեց։ Խորունկ մի մտածություն համակել էր նրան։ Այդ օրը շատ նոր բաներ էր լսել։ Բառեր, մանավանդ, որոնք հանկարծակիի էին բերել նրա միտքը։

Ի՞նչ բան էր այդ «մարդ» կոչված արարածը, որի եղբայրն էին համարում իրեն։ Ուրեմն ինքը գայլերի հասարակությանը չէ՞ր պատկանում. ուրեմն ուրիշ եղբայրնե՞ր ուներ...

Այսպես աղոտ, շատ աղոտ ու շփոթ կերպով սկսեցին վերարտադրվել նրա մեջ խառնակ պատկերներ։ Սկսում էր հիշել ծառեր, շենքեր, տարօրինակ, ոչ-գայլային դեմքեր... և, այլևս ոչինչ... Օ՜, որքա՜ն վաղուց էին դրանք։

Գրթե չէր լսում Զեբին։

— Մայրիկ,— ասաց նա հանկարծ,— ի՞նչ բան է այդ մարդ կոչվող արարածը, որին ինձ եղբայր էին համարում և որոնց դեմ էին ուզում զինել ինձ։

Զեբը այլայլվեց։ Պահ մի պատասխանել չկարողացավ. հետո բռնեց նրա թևից և ասաց.

— Գնանք, որդիս, գնանք այստեղից. մի մտածի այդ տխմարների խոսքերի վրա... դու ուրիշ եղբայրներ չունես... Ոչ, այդ ասածդ արարածները քո եղբայրները չեն... Նրանք չար, խորամանկ, իրար անգամ պատառող հրեշներ են... քո մայրը ես եմ...

— Գիտեմ, գիտեմ, բայց...

Եվ Օձուկը հառաչեց։ Ոչինչ չէր հասկանում։ Դառնությունը սեղմում էր կոկորդը, զգում էր, որ սրտից մի լար կտրվեց, և որ ինքը այդ հասարակության անդամը չէր այլևս, որ ինքը մարդ էր...

Բայց ի՞նչ էր ուրեմն «մարդը»...?

6

Եվ թողեց մանուկը անտառն ու քարայրը, մի օր հեռացավ գայլերի հասարակությունից ու գնաց փնտրելու իր եղբայրներին, իրեն նման մարդկանց։

Չգիտեր ուր էին նրանք, որ անտառի կամ որ քարայրի մեջ։ Գնում էր փնտրելու։ Սիրտն ասում էր, որ կարողանալու էր գտնել։

Քայլեց երկար։ Երկու օր անընդհատ անցավ անտառներ, կտրեց դաշտեր. երրորդ օր, գիշերը հասավ մի մեծ գետի մոտ և հանգստանալու նստեց մի ծառի տակ։ Որովհետև հոգնած էր, պառկեց, քնեց և երազեց։

Երազեց, որպես թե մի մեծ այգու մեջ էր գտնվում, ուր ման էին գալիս իր նման երկու ոտքերի վրա քայլող արարածներ... Մի մեծ տուն, սպիտակ պատերով, երևում էր այգու մեջ. գետնի վրա վառվում էր խարույկը, որից ծխի ծուռումուռ սյունակը խտորեն բարձրանալով, նոսրանում-հալվում էր օդի կապտության մեջ... Նա ուրախ էր, որ գտնվում էր վերջապես յուրայիններ մեջ, ապրում էր նրանց հետ։ Վաղուց անցած-գնացած պատկերներ խառն ու աղոտ կերպով, իրար խճողված, հրեշային կերպարանքներ ստացած, գալիս, մշտաշարժ հյուլեների պես, պտտվում և ոչնչանում էին նրա առջև...

Հանկարծ զարթնեց ու վեր թռավ։ Մի քանի ձայներ ընդհատել էին նրա քունը։ Երբ քնատ աչքերը տրորեց, քիչ մնաց ուրախությունից ու զարմանքից գժվեր։ Վայրենի ուրախության մի ճիչ դուրս թռավ կրծքից... Մարդիկ էին այնտեղ կանգնած, իր կողքին, իր առաջ։

Այո՛, մարդիկ։ Տխուր, խորշոմուտ երեսով երեք դեմքեր, որոնք խոշոր փայտերով զինված՝ շրջապատել էին նրան, իսկ հեռվում կանգնած մի ավելի հաստափոր ու կաթնլիկը հրամաններ էր արձակում։ Սկսեց ագահությամբ, խորին հետաքրքրությամբ դիտել։ Եվ ամեն հիշողություն վերանորոգվեց իր մեջ։

Նրան շրջապատողները կալվածքի բանվորներն էին, իսկ հաստափորը՝ կալվածատերը։

Առավոտյան շուտով, երբ վերջինս, բահերով զինված երեք բանվորների հետ, այցելում էր իր արտերը, ծառի տակ տեսել էր այդ մերկանգամ, բքդռա, խառնիխուռն մազերով ու տոսկալի դեմքով արարածին։

Մարդ էր իհարկե. մարդ, բայց վայրենի։ Եվ որովհետև այդ դեպքը պատահում է աշխարհիս այնպիսի անկյունում, ուր այդ տեսակ թշվառ արարածներ հազվադեպ չէին— աղան մտածեց զարթեցնել նրան և տեսնել, թե ի՞նչ պետք էր անել հետը։

Բանվորները ետ քաշվեցին, երբ «վայրենին» բարձրացավ։ Շատ էր նմանում գազանի։ Նրա տեսքը վախ պատճառեց բոլորին։ Բայց երբ աղան հեռվից տեսավ, որ «գազանը» չարություն չուներ դեմքի վրա, հարձակման նշաններ չէր ցույց տալիս, ինքը ստացավ զորեղի հոգեր և գոչեց.

— Ո՞վ ես դու և ի՞նչ իրավունքով ես մտել իմ հողերի մեջ։

Մանուկը ոչինչ չհասկացավ, բայց հուզվեց։ Մարդկային ձայները, նկատելով, որ դուր չեկավ, սրտին խփեց։ Չէ՞ որ իր եղբայրն էր իրեն խոսք ուղղում։ Փորձեց խոսել, ճիգ գործեց և կոկորդից միայն խուլ, ընդհատ ճիչեր ու ոռնոցներ արտադրեց։

— Համր է,— վճռեց աղան։

— Համր է,— արձագանք տվին բանվորները։

Զգաց մանուկը, որ իրեն չհասկացան, որ ինքը նրանց պես խոսել չէր կարողանում։ Հասկացավ, որ օտարացել էր նրանց համար, և որ իրենից վախենում էին իր նմանները։ Ըմբռնեց այդ, սիրտը սեղմվեց, և արտասուք իջան արյունով լի աչքերից։

Աղան հասկացավ, որ վայրենին խեղճ, համր մի արարած պիտի լիներ, ո՞վ գիտե, որ կողմից եկած, ինչ արկածների ենթարկված։

Եվ ուշադրությամբ զննելուց հետո նրա կազմվածքն ու մկանունքները, մտածեց. «Ուժեղ է. լավ բանվոր կարող է լինել և քիչով էլ գոհ կլինի. երեք մարդու գործ կարող է կատարել»։

Հետո հրամայեց գործավորներին՝ տանել նրան կալված ու կերակրել։

Այդպես էր, որ մանուկն ընկավ իր նմանների մեջ։ Ուրախ էր, խիստ ուրախ։ Տեսավ նորից տուն ու այգի, կրակ ու ծուխ, որոնց նա երազի պես էր հիշում. տեսավ, թե ինչպես էին ապրում մարդիկ և ինքն էլ աշխատեց «մարդ» դառնալ։

Մյուս օրը տարան նրան արտ և ձեռքը տվին բահն ու բրիչը։ Չգիտեր ինչ էին ուզում անել տալ իրեն։ Սովորեցրին, որ պետք էր գործել, բահ զարնել, հողը հերկել, վարել, բուսցնել և նրա արդյունքովը լցնել աղայի մեծ ամբարները։

Սկսեց աշխատել ուրիշ երեք բանվորների հետ։ Դեռ ոչինչ չէր հասկանում։ Ուրախ էր, որ իր նմանների մեջն էր։ Անում էր, ինչ ուզում էին, ուտում էր, ինչ տալիս էին, իսկ եթե տվածովը չէր կշտանում, գիշերները դուրս էր գնում, որս գտնում և անոթությունը հագեցնում։

Դեռ չգիտեին նրա որսերի մասին. աղան չէր իմացել, ուստի և մանուկը կարողանում էր ստամոքսին գոհացում տալ։

7

Ապրեց նա այդպես բավական ժամանակ։ Մոռացավ հետզհետե Սարհոնին ու Զերին, Սիդին ու Սամին, քարայրն ու անտառը, մոռացավ ազատ օդն ու կյանքը։ Աշխատում, գործում էր մինչև երեկո։ Սկսեց քիչ-քիչ խոսել մարդկանց պես և որովհետև ոչ մի տեղ չէր գնում, համոզ-

վեց, որ մարդը այդպես է ծնվել, այդ է նրա կյանքը, և որ իրեն նման մարդիկ ստեղծված են գործելու միշտ աղայի համար։

Բայց մի օր ամեն բան փոխվեց։ Մի երեկո, երբ տուն էր եկել և ուզում էր քնել, հանկարծ հրաշալի ձայներ հասան ականջին. ձայներ, որոնք դուրս էին գալիս աղայի բնակարանից։

Նա չէր մոտեցել երբեք այդ սենյակներին. մի տեսակ պատկառանքով էր նայել նրանց վրա. արգելել էին մոտ գնալու, և այժմ չէր հասկանում ոչինչ։ Բայց գիշերը մութ էր, և սենյակների բաց լուսամուտներից դուրս ժայթքող լույսը գրավեց նրան։

Ծածուկ, սողոսկելով մոտ գնաց, բարձրացավ, ներս նայեց ու շլացավ։ Մի՞թե այնտեղ եղած արարածները մարդիկ էին։ Եվ եթե նրանք էին մարդիկ, ապա իրե՞նք ինչ էին, ի՞նքն ինչ էր...

Այս միտքը տակնուվրա արավ նրան։ Ուրեմն դեռևս իր եղբայրների մեջ չէր գտնվում, նրանց մեջ չէր, որ ընկել էր։ Զգում էր, որ այնտեղ, սրահում եղած սպիտակամորթ, լույսով ողողված արարածները պիտի լինեին իր եղբայրները և ոչ թե այն թշվառները, որոնք ամբողջ օրը արևի տակ սևանալուց, քրտնելուց, տանջվելուց հետո երեկոյան մի կտոր չոր հաց էին կրծում և քնելու գալիս մի բուռ հարդի վրա։

Մտախոհ՝ հեռացավ նա սենյակներից և երկար թափառեց աննպատակ։ Չէր կարողանում որոշել՝ ի՞նքն էր անասուն, թե՞ այդ սրահի արարածները մարդիկ չէին, այլ ավելի բարձր արարածներ։ Այդ անհավասարությունը նա չէր ըմբռնում։

Եվ երբ քնելու էր գնում, հարցրեց բանվորներից մեկին.

— Ովքե՞ր են սրահում. մարդի՞կ են...

Բանվորը ծիծաղեց դառնությամբ։

Իհարկե մարդիկ էին, խո գայլեր չէին։

Մարդի՞կ... ուրեմն ինքը որո՞նց մեջ էր ընկել, ուրեմն բանվորներն ի՞նչ էին։ Խաբվե՞լ էր արդյոք։ Եվ իսկապես, մի՞թե այդ թշվառ արարածները նման էին այն վերևի առողջ, զվարթ, ժպտուն դեմքերով և շքեղ հագուստներով անձերին, որոնք նստել էին անուշ կերակուրներով սեղանի առաջ, վայելում էին երկնային երաժշտություն...

Երկա՜ր, շատ երկար մտածեց, և դառնությունը համակեց նրան։

Երկրորդ օրը այդ միտքը չհեռացավ նրանից։ Գործում էր, բայց մտածում։ Կեսօրվա մոտ նորից մոտ գնաց իր ընկերներից մեկին և հարցրեց.

— Իսկ դո՞ւք, մե՞նք... մի՞թե մենք էլ մարդիկ ենք։

— Իհարկե,— պատասխանեցին նրան։

— Ինչո՞ւ ուրեմն նրանց նման չենք, նրանց կերածը չենք ուտում,

նրանց պես զվարթ չենք, մաքուր չենք, հանգիստ չենք և չենք զվարճանում... միմիայն գործում ենք...

Ընկերները չպատասխանեցին իսկույն։ Նրանցից մեկը քիչ մտածեց, հետո գլուխը շարժեց և մռմռաց.

— Նրանք աղաներ են... Աստված այդպես է արել։

Նրանց խոսակցությունը լսեց մի ծերունի բանվոր ևս, դադարեց գործելուց, բահը ցցեց հողի մեջ և տխրությամբ ասաց.

— Դու ասում էիր, բարեկամ, թե ինչո՞ւ մենք նրանց նման չենք անում... Շատ պարզ է. որովհետև նրանք չեն գործում, իսկ մենք գործում ենք. և այն էլ այսպես գործում...

— Բայց ինչո՞ւ նրանք չեն գործում...— հարց տվավ մանուկը։

— Որպեսզի մեզ նման չլինեն,— մեջ մտավ մի ուրիշը։

— Որովհետև,— պատասխանեց ծերունին,— անդադար մենք գործում ենք նրանց փոխարեն և ապրեցնում նրանց...

Եվ լռեցին։ Մանուկն էլ լռեց։ Նրա մեջ մտածողություններն ավելի խոր վերլուծող բնավորություն ստացան, և նա հարցից հարց մոլորվում էր եզրակացությունների մեջ։

Ինչո՞ւ ուրեմն իրենք գործում էին նրանց փոխարեն. մի՞թե այդպես պետք է լիներ։ Չէ՞ որ ինքն էլ կուզենար նրանց պես սպիտակ լինել, փափկամորթ, մաքուր հագնված, լավ սենյակների մեջ ապրել, լավ կերակուրներ ուտել, զվարճանալ, երաժշտություն լսել...

Այո՜, եթե մարդ էր, ուրեմն իրեն էլ հարկավոր էր այդ բոլորը. իսկ եթե մարդ չէր և իրավունք չուներ դրանց, ինչո՞ւ ուրեմն ազատ կյանքը թողել, եկել էր նորից անասունի կյանք վարում. ավելի վատ, քան գայլերի կյանքը...

Երկրորդ երեկոյան, երբ վերադառնում էր գործից, էլի մոտ գնաց սրահներին, էլի խոսակցության, ծիծաղների, երաժշտության ձայներ վրդովեցին նրան։

Ներս նայեց։ Սրահը լիքն էր։ Նստել էին մի մեծ սեղանի շուրջ, ուտում էին և խմում, իսկ լույսն ու երաժշտությունը լցրել էին սրահը թրթռումներով։

Այո՜, մարդիկ այնտեղ էին և ոչ թե ցածրում։ Սխալվել էր. պետք էր իր նմանների մոտ գնալ։

Եվ վճռական քայլերով բարձրացավ նա սանդուղքը, դեն շպրտեց դռան մոտ իր առաջը կտրող ծառաներին ու համարձակ սրահ մտավ։

Նրա փոշոտ, սև ու կոպիտ դեմքը, նրա հագուստն ու հանկարծակի մուտքը սարսափահար արին հյուրերին։ Բարձրացան բոլորը սեղանից և իրար խառնվեցին։

Մանուկը մի քիչ մոտից դիտեց թռչունների պես վախեցող այդ արարածներին, հետո երկու քայլ էլ առաջ գնաց և ասաց.

— Հանդարտեցե՛ք. ես վնաս չեմ տալ ոչ ոքի. չէ՞ որ ես էլ մարդ եմ, ձեր եղբայրն եմ... Այո՛, ձեր եղբայրն եմ, այդ ինձ գայլերն ասացին. մա՛րդ եմ ես էլ...

Կալվածատերը, որ ճանաչել էր իր «վայրենուն», մոտ գնաց նրան սպառնալից դեմքով և գոչեց.

— Ինչպե՞ս համարձակվեցիր դու, անպիտան գործավոր, մտնել աղայիդ սենյակը... Դո՜ւրս կորիր... Ծառաներ, դուրս ձգեք այս անկիրթին...

— Սպասեցեք,— ասաց մեղմությամբ մանուկը,— մի երկու խոսք ունեմ, ասեմ և հետո ես ինքս կերթամ։

Բոլոր հյուրերը, որոնք այլևս չէին վախենում, որովհետև մի գործավոր էր մտնողը, մոտեցան և ականջ դրին։

— Խոսքը,— ասաց խստությամբ տանտերը։

— Ասացեք խնդրեմ,— հարցրեց մանուկը,— դուք մարդիկ եք, այնպես չէ՞։

Բոլորը ծիծաղեցին. այդպես տրված բնական հարցը կամ զարմանք և կամ ծիծաղ է առաջացնում։

— Մարդիկ եք, այդ ես տեսնում եմ,— շարունակեց մանուկը,— բայց նկատում եմ հետևապես, որ ցածում, ինձ հետ բնակվող արարածները, ինձ հետ գետնի վրա քնող, չոր հաց ծամող և անդադար տանջվող մյուս էակները մարդիկ չպիտի լինեն, այլ՝ անասուններ... Այդ այդպես է, որովհետև նրանք երբեք, ոչնչով նման չեն ձեզ։ Նրանք տխուր են, դուք զվարթ. նրանք լալիս են, դուք ծիծաղում եք. նրանք աղտոտ են, դուք մաքուր. նրանք՝ մերկ, դուք՝ շքեղ հագնված. վերջապես նրանք ուտում են չոր հաց և տանջվում են ամբողջ օրը, իսկ դուք վայելում եք այդպիսի կերակուրներ և երբեք չեք գործում... Մի՞թե մենք էլ մարդ չենք։

— Դուք էլ մարդ եք, խելառ,— գոչեց մի երիտասարդ.— բայց ո՛չ մեզ նման։

— Ո՛չ ձեզ նման... Այո՛, այդ ճիշտ է։ Ես այդ տեսնում եմ։ Բայց որովհետև մարդ ենք, ուստի և հարկավոր է ձեզ նման լինել։ Ինձ ասացին, որ մենք պիտի աշխատենք՝ ձեզ ուտեցնելու համար։ Համաձայն եմ, աշխատենք, բայց միասին ուտենք. ինձ էլ տվեք իմ աշխատածը. ես էլ եմ ուզում ձեզ պես խնդալ, զվարճանալ, լավ ուտել, հագնվել...

— Խենթ է,— ձայնեցին մի քանի երիտասարդներ։

— Վտանգավոր մարդ է...— դիտել տվին քիչ ավելի հասակավորները։

— Ոչ խենթ է և ոչ էլ վտանգավոր,— մեջ մտավ տանտերը,— դեռ անկիրթ է. իր անտառներն է հիշում... ծառանե՛ր, տարեք սրան և կրթեցեք...

Եվ բռնեցին մանուկին, իջեցրին ցած, կապեցին մի ծառի... ու կրթեցին...

8

Պառկել էր նա արյունաշաղախ՝ մի մութ սենյակում, խոնավ գետնի վրա։

Եվ տխուր էր ու մռայլ։ Ա՜խ, որքա՜ն երջանիկ էր նա, երբ գայլերի մեջ էր, ուր նրան ոչ ոք չէր նախատում, ոչ ոք նրանից առավելություն չուներ, ոչ ոք նրանից չէր խլում իր աշխատածը և կամ նրան այդպես արյունաշաղախ դրության մեջ չէր նետում։

Ու լաց էր լինում, ոռնում գայլի պես։

Ո՜չ, ավելի լավ է դարձյալ գայլերի մեջ գնալ. վերադառնալ այնտեղ, իր բարի Զեբին, իր Սիդին ու Սամին տեսնել, նրանց հետ ապրել։ Այստեղ նրան սիրող չկար. այստեղ միայն տեր ու ծառա, զրկող ու զրկվող, բռնացող ու ստրուկ էին բոլորը... Բոլորն էլ թշվառներ էին, որոնք սիրել չգիտեին, չէին էլ կարող սիրել։

Այո՛, թողնել պետք էր մարդկանց և գնալ դարձյալ գայլերի մեջ։

Բայց մանուկին բանտարկել էին, ուզում էին կրթել, նեղ մթնոլորտի, ծառայականության և հնազանդության վարժեցնել, մոռացնել տալ ազատ օդն ու «վտանգավոր» փափագները։

Եվ մանուկը բարձրացավ, ցնցեց իր վրա փակած դուռը, ոռնաց, գոռաց, օգնության կանչեց և բաց անել խնդրեց...

Դրսից լսողները ցավելով ասում էին.

— Խենթացել է խեղճը։

Իսկ նա ազատությո՞ւն էր ուզում, իր անտա՛ռը փափագում։

Ու մի ուժգին հարվածով տապալեց դուռը, դուրս թռավ ուրախության աղաղակը բերանին և սկսեց հեռանալ բնակությունից։

Բայց նրա ետևից պնդում էին։ Շուտով թափվեցին վրան ամեն կողմից։ Նա պաշտպանվեց ձեռքերով, խփեց շատերին. արյունն աչքն էր կոխել, հարվածեց իր բռնողներին։

Եվ ընկնում էին նրա հարվածների տակ... Ինչո՞ւ էին արգելում ազատ ման գալու և գնալու՝ ուր կուզեր. ինչո՞ւ էին ուզում բանտարկել իրեն։

Այլևս չէր ուզում իր չար եղբայրներին, որոնք միմիայն ցավ ու վիշտ

էին պատճառում, միմիայն տանջում էին նրան։ Ո՜չ, ավելի լավ էր գնալ գտնել գայլերի հասարակությո՛ւնը դարձյալ...

Բայց շուտով շրջապատեցին նրան շատ խմբեր՝ բրերը ձեռքերին. բռնեցին, տեղացին հարվածներ նրա վրա, հետո շղթա զարկին ու նորից տարան մի խոր և մութ ծակի մեջ փակեցին։

Հոգնել էր կռվի մեջ, մենակ էր բռնության, ստրուկների, խուժանի դեմ և ընկճվում էր։

Եվ լսում էր, որ մարդկային ամբոխը դրսից ոռնում էր քաղցած գայլերից ավելի վատ.

— Սպանեցե՛ք վայրենուն, մա՜հ մարդասպանին...

Գիշերն անցկացրեց մանուկը գրեթե ուշագնացության մեջ։ Ոչինչ չէր հիշում։ Չէր կարողանում շարժվել իսկ... Կցանկանար մեռնել, ազատվել. չէր ուզում այդպիսի կյանքը...

Զիմացավ, թե ինչպես մյուս օրը զարթնեցրին իրեն, ձեռքերը շղթայեցին ու դուրս տարան։

Մեծ ամբոխ էր հավաքվել նրա ճանապարհի վրա։ Խուժանը ձեռքերն էր բարձրացնում, ոռնում..., և նրա ակնարկը միմիայն զզվելի, ստրկական կամ շար դեմքերի էր հանդիպում։

«Ա՞յս է մարդկությունը...»,— մտածեց նա ու ցնցվեց։ Մի՞թե ինքը դրանց եղբայրն էր. դրանց նմա՜նը...

Երկար չխոսեցին սրահի մեջ։ Շուտով բռնեցին նրան, ձեռքերը ետևից կապեցին և տարան մի լայն հրապարակի վրա, ուր կար կեռ ցիցը կանգնեցրած։

Հանդիսավոր կերպով, շրջանաձև պատեցին այդ ցիցը, հետո մի սև հագած անձ փսփսաց խոսքեր նրա ականջին՝ մի ինչ-որ նոր կյանքի մասին խոսելով, և մեկը ձեռքի բռնած չվանը անցկացրեց նրա վզից, ստիպեց բարձրանալ աթոռի վրա, մի ուրիշն էլ չվանը տարավ ու կապեց բարձր ցցին։

Եվ լուռ էին։ Միայն ա՛յդ ժամանակ լռել էր խուժանը։

Մանուկը տեսավ նրանց գազանային շար արտահայտությունը, եղբոր տանջանքներով զվարճացող, գազանից ավելի չնչին արարածների ցանկությունը։

Նրանց արյունարբու, նախճիրային ոգին նկարված էր տեսնում դեմքերի վրա...

Ու հանկարծ զգաց, որ գետինը խուսափում էր ոտքերի տակից, որ մի բան խիստ կերպով սեղմում էր կոկորդը։ Խեղդվում էր, շունչը կտրվում...

Ուզեց գոռալ... և նրան թվաց, որ մի հսկա ձեռք վայրկենապես կորզում էր իրեն, սլացումով բարձրացնում, գնում էր մի բոպեաչափ և, ճղելով ամպերը, տանում էր հեռու, շա՜տ հեռու...

1891

ԶԳԱՅՆԱՉԱՓ

Փոխադրություն

Մի ծեր բրահմին մի երեկո տուն էր վերադառնում։ Վերջալույսի ժամանակ էր, երբ նա մոտեցավ քաղաքին։

Հանկարծ նկատեց երկու մանուկների, որոնք կուչ էին եկել մի վրանաձև շորի տակ։ Մոտ գնաց ու առանց տեսնելու, աշխատեց լսել նրանց խոսակցությունը։

Մանուկներից մեկը՝ մի փոքրիկ աղջիկ, լաց էր լինում ու հաց ուզում. քաղցած էր։ Մյուսը՝ մի տղա, որ քիչ ավելի հասակավոր էր քրոջից, մխիթարում էր աղջկան, առարկելով, որ մայրիկը շուտով կգար ու հաց կբերեր։

Եվ իսկապես, քիչ հետո մայրիկը եկավ հոգնած ու դժգույն։ Գալուն պես հանեց զամբյուղից մի հաց ու դրեց մանուկների առջև։

Աղջիկը իսկույն հացի վրա ընկավ ագահությամբ, իսկ տղան իր հացը երկու կտոր արեց. մի կտորը ծածկաբար թաքցրեց մի անկյունում, իսկ մյուս կտորը ուզում էր բաժանել իր մոր հետ, և որովհետև մայրը մերժեց ուտել, այն ժամանակ ինքը կերավ ամբողջը։

Տղայի այդ վարմունքը հետաքրքրեց բրահմինին, և նա վճռեց մյուս օրը գալ և տեսնել, թե տղան արդյոք պակա՞ս քաղցած էր աղջկանից։

Մյուս օրը կեսօրից հետո նա քաղաքից դուրս եկավ և գնաց դեպի վրանը։ Առանց աղմուկ հանելու մոտեցավ։ Միևնույն բանը տեսավ. փոքրիկ աղջիկը լաց էր լինում ու հաց ուզում, իսկ տղան աշխատում էր նրան մխիթարել։ Վերջապես, երբ տղան տեսավ, որ աղջիկը ձայնը չի կտրում, հանեց երեկվա պահած հացը ու տվավ քրոջը։ Քույրն առավ, ուզեց բերանը տանել, բայց իսկույն էլի գետին ձգեց ու ասաց.

— Բայց չէ՞ որ քո հացն է։

— Ես քաղցած չեմ, ի՞նչ եմ անելու։

— Ես էլ չեմ ուզում։

— Ինձ էլ պետք չէ։

Եվ հացը մնաց գետնի վերա։ Մանուկներից ոչ մեկը չէր ուզում դիպչել հացին։

— Այդ լավ է,— մտածեց Բրահմինը,— հացի այդ կտորի շնորհիվ աղջիկն այլևս մինչև երեկո հանդարտ կմնա և չի լալ։

Ու երբ Բրահմինը տուն էր վերադառնում, մտածեց առաքինության մասին։ Մտածեց ու գտավ, որ առաքինությունը ծնում է զգացմունքներից։

Հետո էլ մտածեց, թե արդյոք չէ՞ր կարելի կշռել մարդկային զգացմունքների աստիճանը մի գործիքով, ինչպես որ չափվում է տաքության աստիճանը։

Եվ որոշեց շինել մի զգայնաչափ։

Վերցրեց որբի արտասուքից մի քանի կաթիլ, լցրեց մի ապակյա բարակ խողովակի մեջ ու գնաց դեպի վրանը։ Այնտեղ նա խողովակը գրեց տղայի սրտի վրա, և երբ արտասուքը սկսեց եռ գալ, նա նշանակեց խողովակի վերա եռման կետը 100 թվով։ Հետո նա գտավ, մի խորթ մայր և նրա՝ դեպի իր խորթ որդին ունեցած զգացմունքը չափելով նշանակեց 0։

Եվ այդպես դեպի վեր ու վար բաժանումներ անելով, զգայնաչափը պատրաստ էր։

Բայց պետք էր գտնել արտասուքի տաքելու կետը որպես ջերմաչափի մեջ սնդիկի՝ իրեն սառեցման կետը կա։

Դրա համար էլ Բրահմինը ամբողջ քաղաքում, հետո էլ ամբողջ աշխարհում սկսեց ման գալ իր գործիքով և փնտրեց ամենախիստ չարագործներ։ Ոչ մի դեպքում արտասուքը չէր սառում։

Բրահմինը դրանից հետո եզրակացրեց, որ բնության մեջ արտասուքի սառեցման աստիճանը երևի չէր գտնվում։

Ու դադարեցրեց իր հետախուզությունը։

Հանճարեղ գյուտի հուշակը տարածվում էր ամեն կողմ։ Հարուստ և աղքատ, խելոք կամ հիմար գալիս էին Բրահմինի մոտ։ Ամեն ոք կամենում էր իմանալ իր զգացմունքների աստիճանը։ Մի հարց, որ առանց գործիքի դժվար է լուծվում։

Վերջապես եկավ և մի կին։

Այդ կինը իր ամբողջ կյանքը անց էր կացրել եկեղեցուն ծառայելով։ Հայտնի էր որպես մի խիստ ջերմեռանդ անձ և ոչ ոք չէր կասկածում նրա առաքինության վերա։

Եկավ նա, թեև գիտեր, որ իր կյանքովը, որը նա աստծուն էր նվիրել, իր զգացմունքները այնքան վսեմացրել էր, որ բոլորի սխալներն արհամարհելով, ինքը միայն արժանի էր մեն-մենակ տիրապետելու երկնային բոլոր վարձատրություններին։

Այդպիսի բացարձակ բարոյականի տեր անձը ուրեմն և պետք չէր ունենալ իր զգացմունքների քանակությունը գիտենալու։

Բայց նրա ուզածն այն էր, որ մի անգամ ևս կարողանար ակներև կերպով փայլեցնել իր բարձր առաքինությունը ամբոխի առջև։

Եվ նա հպարտությամբ մոտեցավ գործիքին... արտասուքը վայրկենապես ցած իջավ և... սառեց։

Բրահմինը հիացած, ուրախ, վեր թռավ ու օրհնում էր կնոջը։ Նա իսկույն նշանակեց սառեցման կետը և նրա կողքին էլ արձանագրեց սույն խոսքերը.

«Առաքինությունը վատթարության աստիճանի»։

Կինը կատաղեց։ Տաճարի շեմքի վերա բարձրացավ ու այնտեղից մեծ ձայնով գրգռեց ամբոխին, սատանայական գյուտերի դեմ և խորհուրդ տվավ, հանուն ամենամեծ փառացն աստուծո, ոչնչացնել զգայնաչափը։

Բարեպաշտները գրգռվեցին, «սուրբ» կրակով վառված հարձակում գործեցին Բրահմինի տան վրա և փշրեցին գործիքը։

Զգայնաչափը այլևս չկար։

Եվ հենց այդ օրվանից է, որ այլևս չկա մի կշիռ մարդկային առաքինությունների և զգացմունքների համար...

ՄԵԾ ՓԱԿԱՆՔ

Դիլիջանից մինչև Ալեքսանդրապոլ տրոյկայով գնացի. ընկեր վերցրի Պարսկաստանից եկող մի պարսիկ, և որովհետև լավ էի վարվում հետը և քաղաքավարությամբ, նա իրան երախտապարտ էր զգում, իր հովանոցով ինձ արևից պաշտպանում կամ իր խոսակցություններով ինձ զբաղեցնում։ Ինչպես երևում է, պատմիչ էր. լիքը բերնով էր արտասանում նախադասություններ կամ բառեր և պատմածի մտքի համեմատ էլ շեշտված միմիկաներ ուներ։

Չգիտեմ ինչպես եղավ, որ նա ինձ պատմեց այդ զրույցը. կարծեմ այդ այն ժամանակն էր, երբ ես ցանկություն հայտնեցի իջնել. ճանապարհից դուրս գտնվող մի հանքային ջրի մոտ գնալ, և երբ գնացինք, գտա, որ իզուր ժամանակ էինք կորցրել, որովհետև ջուրը ոչինչ բան էր։

Այդ բանից հետո մենք կառք նստեցինք, և պարսիկը, մորուքը շոնելուց հետո, վարդապետական ձայնով ու շեշտելով արտասանեց.

«Ցանկալի առարկան նման է շիրմի բաց՝ բայց դռան վրա մեծ փականք...»։

Հետո քիչ լռեց և ավելացրեց երազողի պես.

— Ով Մանի, քո մտքերդ էլ քո քսան կանգունաչափ ձեռքովդ գծած գծերի պես ուղիղ են...

Ու լռեց։ Ես, իհարկե, ոչինչ չհասկացա։ Մանի առասպելական նկարչի մասին գիտեի. գիտեի նաև, որ նա կարողանում էր ձեռքով քսան կանգուն երկարության և մի թափով գիծ քաշել այնքան ուղիղ, որքան կլինի քանոնով գծվածը։

Բայց աֆորի՞զմը։

Խնդրեցի բացատրել։ Ամենայն սիրով ընդունեց խնդիրս պարսիկը և պատմեց ինձ սույն զրույցը։

* * *

— Նկարիչ Մանին,— պատմեց նա,— մեռնելուց առաջ մտքումը դրեց մի լավ բան նկարել և հետո մեռնել։

Այդ մտքով էլ նա սկսեց ման գալ և նկարի նյութ որոնել։ Ուզածն էր մի նոր, ցանկալի, տարօրինակ նյութ։

Մտավ խոր ձորեր, պրպտեց յուրաքանչյուր խուլ անկյուն, մագլցեց լեռներն ի վեր, աչքի տակ տվավ շատ տեսարաններ։ Բայց որովհետև շատ տեսել էր, շատ էլ զննել և ոչինչ չէր խուսափել նրա աչքերից, ուստի և չէր կարողանում գտնել մի առարկա, որ լիներ նոր օրինակ և որ զրգռեր նրա ցանկությունը։

Եվ նա տխրում էր։ Անտառի ոգին, լեռների հյուրիներն ու ծովի ձուկանայք, նույնիսկ անկարող եղան նկարչին մի նյութ տալ, մի նյութ թելադրել։ Իզուր նա ոտքի տակ էր տալիս ամբողջ աշխարհը. ոչինչ նոր բան, ոչինչ ցանկալի, ոչինչ հմայող։

Եվ նա տխրում էր ու հուսահատվում։

* * *

Այդպես սրտաբեկ թափառում էր նա Շիրազի դաշտերի ու լեռների մեջ, երբ հասավ մի գերեզմանատան, մտավ այնտեղ, մի շիրիմ նկատեց և կանգ առավ։

Մեծ շենք էր այն՝ բարձր պատերով։ Բայց ինչ-որ զարմացրեց նկարչին, դա այն ահագին խոշորությամբ կողպեքն էր, որ դրված կար շիրմի փակված դռան վրա։

Դռան ճակատին էլ արաբական տառերով գրված էր՝ «Մտիր այստեղ, և կգտնես՝ ինչ որ փնտրում ես»։

Մեծ նկարիչը զայրացած բացականչեց.

— Ո՞ր տխմարն է արդյոք գրել այս տողերը. մի՞թե գերեզմանի մեջը է միայն, որ մարդ կարող է գտնել իր որոնածը։

Հետո ծիծաղեց և ավելացրեց.

— Դա անշուշտ մի մեռնողի խոսք է. չկարողանալով ապրել, կամեցել է մահը ցանկալի դարձնել։

Ասաց ու մեջքը դարձրեց հեռանալու։ Բայց ակամայից միտքը միշտ այն տողերին էր, այն վերտառությանը։

Մի քանի րոպե մտածելուց հետո մի քանի քայլ մոտեցավ դեպի մեծ կողպեքը, նայեց նրան ու ասաց.

— Զարմանալի է. ինչո՞ւ են փակել շիրմի դուռը, և հետո ի՞նչ մտքով են դրել դռան վրա այնպիսի մեծ կողպեք, որ միայն դնում են բանտերի կամ գանձարանների վրա։

Եվ նա նորից վեր նայեց ու կարդաց.

«Մտիր այստեղ և կգտնես ինչ որ ուզում ես»։

— Մտնենք,— մտածեց նա,— գուցե, իրավի, մի նոր բան կա թաքնված այդ մեծ կողպեքի ետևում. թշվառություն կամ գերությո՞ւն արդյոք, թե՞ գանձ կամ իշխանություն...

Շարժեց կողպեքը, շատ ծանր էր, վերցրեց մի մեծ քար և նրանով սկսեց ծեծել փականքը։

Հետաքրքրությունը հետզհետե համակում էր նկարչին, նա ցանկությունից դողում էր։

Երկար շարշարվեց և երեկոյան դեմ վերջապես շարժվեց փականքը, հանկարծ փշրվեց մեծ կողպեքն ու շիրմի դուռը կրնգան վրա դառնալով՝ լայնությամբ բացվեց։

* * *

Ցած ձգեց քարը, մի քայլ արավ. ներս մտավ նկարիչը և զարմանքի մի մեծ աղաղակ արձակեց։

Դեմուդեմի պատը բաց էր լիովին, և այդ բացվածքից երևում էին Շիրազի տներն ու այգիները։

Շիրիմը միայն երեք պատ ուներ. ետևի պատը չէր փակ շինված։ Իսկ շիրմի ներքին տեսքը ապացուցանում էր, որ այդտեղ առաջին ոտ կոխողը նկարիչը չէր։

— Ինչպե՞ս... ինչո՞ւ այդ այլանդակ գործողությունը։

Շինել մի ջենք միայն երեք պատով, ետևի պատի տեղը բաց թողնել և ապա դռան վրա էլ մի մեծ փականք դնել. ինչո՞ւ։

— Լավ ծաղրվեցի,— ճակատը կնճռեց արտիստը,— և սակայն դռան ճակատին գրվածքը չկատարվեց, որովհետև փնտրածս ահա չեմ գտնում։

Հազիվ թե ասել էր այդ, երբ աչքն ընկավ պատի վրա քանդակված սույն երեք տողերին, և նա կարդաց.

«Ամեն ինչ նոր է աշխարհիս վրա, սակայն ոչինչ նոր չէ։
Ձեռք բերելու դժվարությունը առարկան ցանկալի է դարձնում։
Մի անգամ ձեռք բերված՝ նա դառնում է սովորական»։

Մանին ընկղմվեց մտածության մեջ. այդ տողերը խիստ ազդեցին նրա վրա։

Գտել էր փնտրածը, բայց և չէր գտել, որովհետև, եթե գտներ, փնտրածն այդ չէր լինիլ։ Ուրեմն փնտրում էր մի այնպիսի բան, որ չկիտի գտնվեր։

Հասկանում էր այժմ։

Դուրս եկավ շիրմից, գնաց տուն, ձեռքն առավ վրձինը և նստավ կտավի առաջ։

Նկարեց շիրիմը երեք պատով, ետևի բացվածքովը, նկարեց դուռը և դրեց նրա վրա խոշոր երկաթյա փականքը։

Հետո փոխանակ գրելու շիրմի վրայի խոսքերը, գրեց սույն տողերը.

«Ցանկալի առարկան նմանում է այս շիրմին. բաց, սակայն դռան վրա մեծ փականք»։

ԼՈՒՐ-ԴԱ-ԼՈՒՐ

(Քրդական պոեմ)

Այնտեղ, Սև-ջրի չքնաղ եզերքներին էր, որ ապրում էր Հասոն։

Երկրի սիրուն և քաջ պատանին էր նա։ Ոչ մի մարդ նրան չէր կարող զինաթափ անել։ Ավազակը սիրտ չուներ նրա հոտի շուրջը ման գալ, և ոչ իսկ „գայլը՝ ոչխարի կողքին քարշ գալ։ Հասոն որքան բարի էր գեղի լավը, այնքան էլ անգութ էր դեպի չարը։

Սիրուն էր Հասոն, նոր ծագող արևի պես չքնաղ։ Երկրի աղջիկների խելքը գնում էր նրան տեսնելիս։ Հապա նրա նվագե՞լը։ Նրա սրնգից հանած ձայները կարելի՞ էր, որ հրեշտակներն ունենային՝ այնքա՞ն գրավիչ, այնքան սիրահույզ։ Ձայներ, որոնք հոսում էին մելամաղձիկ, քնքքշում էին որպես հեզիկ վտակ։ դայլայլում՝ որպես սիրահար սոխակ։

Մարդ թե անասուն, այդ ձայնը լսելիս, ակամա մոտ էր գալիս, քարանում և աշխատում էր չկորցնել ո՛չ մի խազը, ո՛չ մի գեղգեղանքը։

Նստում էր Հասոն ժայռերի գլխին, աչքերը ուղղած լա՛յն հորիզոնին, Սև- ջուրը գալարապտույտ՝ ոտքերի տակին, զզզուն զեփյուռը խաղում ճակատին։

Եվ նա նվագում էր։

Պետք էր տեսնել, թե ինչպե՞ս ոչխարներն այն անմիտ՝ մոռացել էին ուտելը, մոտ էին գալիս։

Հասոն քարերին էր դողացնում, Սև-ջրի ալիքները հուզում, բնությունն էր քարացնում, զեփյուռին ողբացնում, ամեն ինչ շարժում, հրեշտակների նախանձը գրգռում։

Այդպես էր Հասոն։

Էլ ինչպե՞ս ոչխարները չհնազանդեին նրա երգի ձայնին։

Ինքը չէր շարժվում, ոչխարներին նվագով կանչում էր մոտը։

Արածացնելու համար՝ «Բերիկը», ջրելու համար՝ «Խոզաթը» և հեզ անասուններին շուրջը ժողովելու համար՝ ածում էր «Ոչխարի կոչը»։

Ոչխարները լսելուն պես թողնում էին ամեն ինչ, անցնում ամեն բան, գալիս Հասոյի շուրջը հավաքվում։

Ապրում էր Հասոն այդպես երջանիկ, հեռու մարդկանցից, բնության գրկում, լեռների կրծքին։ Երջանիկ էր նա որպես մի իշխան՝ սիրված իր հոտից, նվիրված իր երգերին։

* * *

Բայց մի օր Հասոն տեսավ աղայի միակ աղջկան։ Տեսավ ու սիրեց։

Սիրուն էր Զալխեն։ Կախարդիչ՝ աչքերը, սալվի էր բոյը, կամար՝ ունքերը, գողտրիկ՝ թշերը։

Զալխեն էլ տեսավ Հասոյին։ Զալխեն էլ սիրեց Հասոյին։ Տխրեց խիստ Հասոն։ Կորցրեց աշխուժությունը, կորցրեց զվարթությունը։ Օրերով պտույտ էր գործում պալատի շուրջը, մինչև իսկ եթե ոչխարն այնտեղ ուտելու խոտ չգտներ։ Աչքը աշտարակին, նվագում էր տխրագին. սիրտը սրնգի մեջ դնում ու արտասվում։

Զալխեն էլ տանջվում էր։ Թաքնված վարագույրի ետևում, աչքը Հասոյից չէր հեռացնում, ոչ էլ ականջը՝ նրա նվագից։ Ո՛չ ուտում էր և ոչ էլ խմում. տանջվում էր միայն։

Երկուսն էլ գիտեին, որ շատ հեռու են միմյանցից, որ աղայի աղջիկը հովվի կին չի լինի։

Բայց սերը աստծո կրակն է, շա՛տ զորեղ կրակ։ Նա կտրում, անցնում է ամեն հեռավորություն, թափանցում է ամե՛ն խորություն։

Սերը ո՛չ հեռավորություն է ճանաչում, ո՛չ էլ խորություն։

* * *

Հեռատես էր աղան ու խի՛ստ խորամանկ։ Շուտով նկատեց Հասոյի սերը։ Բարկացավ, կատաղեց, ուզեց սպանել հանդուգն հովվին. բայց խոհեմ էր, չուզեց իր տան անունը կոտրել հավիտյան և մի հովվի արյունը մտնել ընդունայն։

Բայց ի՞նչ կասեին, եթե իմանային, որ մի չոբան նրա աղջկա ետեվիցն է ընկել։ Պե՛տք էր Հասոյին հեռացնել. հեռացնել ինքնակամ, զոհ խորամանկության։ Պետք էր այնպե՛ս մի խաղ սարքել, որ Հասոն ի՛նքը թողներ հեռանար և մեկ էլ այդ կողմերը չվերադառնար։

Մտածեց աղան երկար, մտածեց ու գտավ հնարք։

Մարդ ուղարկեց, կանչեց Հասոյին և ասաց նրան.

— Գիտեմ, Հասո,— ասաց չար աղան,— գիտեմ, որ սիրում ես դու իմ աղջկան։ Քաջ տղա ես ինքդ, լսել եմ, լավ էլ ածում ես սրինգ։ Աղջիկս քեզ կտամ, միայն կդնեմ մի պայման։

Լսել եմ, որ ոչխարները քեզ հնազանդում են և սրինգիդ ձայնից գրավված՝ քեզ մոտ գալիս են։

Գետնից մինչև այդ բարձր աշտարակը,— տեսնո՞ւմ ես նրան,— դնել կտամ փայտյա սանդուղքը. դու կնստես այնտեղ՝ բարձրում, ոչխարները կժողովվեն ցածրում։ Ահա պայմանը։ Եթե դու բարձրից, սրինգդ հնչեցնելով, կարողացար ոչխարներին սանդուղքի վրայով քեզ մոտ վեր հանել, այն ժամանակ աղջիկս քեզ հալալ, ա՛ռ ու վայելիր։

Ապա թե ոչ՝ խայտառակ եղիր, ինչ ունես-չունես հավաքիր և քանի շուտ է՝ այս կողմերից հեռացիր։ Մի հովիվ աղայի փեսա չի լինի, այդ էլ խելքիցդ հանիր...

Հասոն ժպտաց, խոր գլուխ տվեց.

— Տե՛ր ես, աղա,— ասաց.— ասածիդ համաձայն եմ։

Եվ շինել տվեց աղան փայտյա սանդուղքը։ Ինչսունևհինն աստիճան ուներ նա։ Հասոյից ծածուկ կոտրեց նրա մեջտեղի մի աստիճանը, կոտրածը նույն կերպով դրեց իր տեղը այնպես, որ ոչինչ չէր երևում, բայց մի թույլ սեղմումն հերիք կլիներ փայտը ձգելու և մի աստիճանից դեպի մյուսը՝ մի գազաչափ տեղ բաց թողնելու։ Այսպիսով էլ ոչխարների անցնելը անհնար դարձնելու։

— Օ՛, չա՛ր էր աղան. հպարտ էր, հպա՛րտ։

Այդ խայտառակությունն արեց չար աղան։ Հասոյին աշտարակի ծայրը հանեց, Զալխեին՝ պատշգամբի վրա, ու ասաց հովվին.

— Ահա Զալխեն, խրախուսվի՛ր. հալալ է քեզ նա, թե ասածս արիր։

Զալխեն տեսավ Հասոյին, ժպտաց նրան, կարմրեց և նշան արավ։ Իմացավ հովիվը, որ Զալխեն էլ սիրում էր իրեն։ Սիրտն ուրախությունով լցվեց։ Առավ սրինգը, բերնին դրեց, քոլոզը ծռեց, նվագն սկսեց։

Թնդաց սար ու ձոր, շարժվեցին ծառեր, դողացին քարեր։ Հուզվեց չար աղան, խելահեղ՝ Զալխեն. քիչ մնաց թռներ ու ցած գնար, ոչխարի պես ընկներ Հասոյի ոտքերը։

Շարժվեցին ոչխարները, մոտեցան սանդուղքին ու սկսեցին միմյանց ետևից բարձրանալ աշտարակն ի վեր։

* * *

— Լո՛, լո՛, լո՛, Սև-ջրի չոբան, սար ու ձոր մղկտացնող ջիվան, գազան մեղմացնող, քար ու ծառ հուզող չոբան։ Ինչո՞ւ հիմարի պես հավատացիր աղային, ինչո՞ւ բարձրացար ծայրն աշտարակի։ Ջո՛ւր դառնայիր մորդ փորում, Հասո՛։ Երանի չմտնեիր այս աշխարհը, որ լի է աղաներով։ Երանի չտեսնեիր արևի փայլը, որ քեզ այրեց, խորովեց, Սև-ջրի ալիքները, որ քեզ տրորեց, շամբի օրորվելը, որ քեզ կախարդեց։

Լո՛, լո՛, լո՛... Մի՞թե քուրդն այնքա՛ն անազնիվ եղավ, որ սերը ծաղրեց։ Մի՞թե նրա խիղճը կորավ, աստվածը մոռցավ։ Խեղճ Հասոյին ինչո՞ւ շեյթանի բաժին արավ, աշխարհը լաց ու սուգի մեջ դրավ... Լո՛, լո՛...

* * *

Հա՛ բարձրանում էին ոչխարները, հրում միմյանց. սրնգի ձայնից դյուրված՝ մոռանում էին տակի անդունդը։ Աչքերը Հասոյին ուղղած՝ բարձրանում էին։

Աշխարհը զմայլած՝ դիտում էր։ Չար աղան քար էր կտրել, Զալխեն մինչև կես մեջքը կռացել, ձեռները Հասոյին պարզել՝ գոչում էր.

— Ես քոնն եմ, Հասո՛, քոնը հավիտյան։ Ես քեզ սիրում եմ. այնքա՛ն եմ սիրում, որքան չէր սիրում Լեյլան Մեջլունին։ Ես քեզ սիրում եմ,

այնքա՜ն եմ սիրում, որքան չի սիրում թիթեռը ճրագին, սոխակը վարդին, աշխարհն արևին և բույսը հողին։

Դո՛ւ ես իմ ճրագը, դո՛ւ ես իմ վարդը, դո՛ւ իմ արևն ու դո՛ւ իմ հողը...

Լսում էր Հասոն, սիրտը խշխշում։ Ածում էր, ածում, նվագն ուժովցնում։

* * *

Հասավ ների[1] այծը կոտրած աստիճանին, զգաց, որ մահը աչքի առաջն է, բայց դյութված էր, ոտքը դրեց փայտի վրա։

Շարժվեց փայտը, լսվեց մի մայուն, և սիրուն ներին, պտույտ գործելով օդի մեջ, գնաց ջախջախվելու անդունդի քարերի վրա։

Մղկտաց Հասոն։— Հեյ վա՜խ, իմ սիրո՛ւն ների,— կանչեց սրտաբուխ։ Բայց աչքը երբ Զալխեին ընկավ, մոռցավ ներին։ Սրինգը դրեց բերնին և սկսեց ածել։

Ոչխարները տեսան ների վիճակը. կանգ առան, մտածեցին ետ գնալ, բայց դյութված էին, առաջ գնացին։

Փորձեց առաջին ոչխարը, ետ-ետ քաշվեց, առջևի ոտքերը բարձրացրեց և ուզեց թռնել։ Մի մայուն արձակեց և գնաց այծի ետևից։

— Վա՜խ, վա՜խ, իմ անմե՛ղ ոչխար,— մղկտաց Հասոն։

Նայեց Զալխեին, մոռցավ ոչխարին, ուժ տվավ նվագին։

Փորձեց երկրորդ ոչխարը. մինչև իսկ թռավ, բայց կպավ աստիճանին, մի պտույտ գործեց, խղճուկ կերպով մայեց և գնաց դեպի խոր անդունդը։

— Թռե՛ք, անցե՛ք, իմ սիրո՛ւն ոչխարներ,— երգում էր Հասոն.— Թռե՛ք, իմ թավամա՛զ գառնուկներ, եկե՛ք ձեր տիրոջ մոտ։

Ոչխարները է՛լ չէին շարժվում, ետ-ետ էին գնում։

Կատաղեց Հասոն՝ բացվածքը չէր տեսնում։ Որքան սեր ուներ ու զգացմունք, ներշնչեց սրնգին, գեղգեղանքներով քարացրեց բնությունը... բայց ոչխարները ետ-ետ էին գնում։

Ամաչեց աղան իր գործից, կիսամեռ եղավ Զալխեն հուսահատությունից։

Փոխեց Հասոն եղանակը։

Այժմ ինքն էլ չգիտեր՝ ինչ էր նվագածը։

Դադրել էր քամին, կանգնել էր ջուրը, լռել ամեն ինչ։

Ո՞վ չի լսել «Լուր-դա-լուր»-ը, որին չի դիմանա ոչ մի քար սիրտ։

[1] Առաջնորդ այծ

Որին լսելով՝ կթրթռա սիրող սիրտը, կմարի։ Որին լսելով՝ կգժվի սիրող աղջիկը. կգժվի և դեպի սիրածը կսլանա։

Սքանչելի է նա, երգերի փառքն է նա։

Հրեշտակների մրմունջը, Հասոյի հոգին է նա։

* * *

Շարժվեցին ոչխարները, գլորվեցին շատերը։

Շարժվեց և Հասոն, կռացավ, տեսավ բացվածքը։

Հասկացավ ամեն ինչ, նայեց աղային։

Զգաց, որ Զալխեն կորած էր իր համար, ինքն էլ աշխարհի համար։

Շարժվեց Զալխեն էլ, նայեց աղային, նայեց Հասոյին։

Զգաց, որ Հասոն կորել էր իր համար, ինքն էլ աշխարհի համար։

Եվ լռեց ամեն ինչ...

«Լուր-դա-լուր»-ը դադարեց, նրա խաղի վերջին թրթռումը գնաց մեռնելու օդի մեջ...

Հետո... լսվեց մի ճիչ։

Ու երկու մաքմիններ արագ պտույտ գործելով օդի մեջ, գնացին միասին ջախջախվելու անդունդի խորքում... և միմյանց գրկում։

Հասոն ու Զալխեն էին դրանք...

ԱՅԻԾԱ

(Պարսկական պոեմա)

Լսում են պատմիչին։ Կկզած, նստոտած զանազան անկյուններում ականջ են դնում։ Պատմիչը հուզված է։ Նստում է նա, կանգնում, բարձրացնում է ձեռքի փայտը։ Եվ նրա ձայնը դողդողում է, կերկերում։

Նա պատմում է.

«Պետք է որ գեղեցիկ լինի Մարգարեի դրախտը,— ասում է նա.— բայց գեղեցիկ է նաև Շիրազի հովիտը։

Որքա՜ն առատ են այնտեղ վարդի թփերը, նրանց շուրջը պտույտ գործող սոխակները. որքա՜ն քաղցր՝ նրանց դայլայլիկները։ Որքա՜ն սողոսկող վճիտ առվակներ կան այնտեղ. հովիտն ակոսող և խորհրդավոր միայնության մեջ ընկղմած բլրակները քանի՜-քանի շքեղ անկյուններ ունին...

Պարզվում է ահա լայն հովիտը, զարդարված երփներանգ ծաղիկնե-

բով, բծավորված վարդի թփիկներով։ Հողային բլրակների մի խումբ դեպի դաշտն է խոնարհվել, մեջքը ցից լեռներին տվել, կուրծքը կաթնահամ ջրերի մեջ թաթախել և ստորոտի շքեղ անտառներով զարդարել։

Վարդի և սոխակի երկիր, սիրելու և երազելու անկյուններ, ծաղիկների հոտով բացվող վայրեր, արդյոք քո ծոցումը չէ՞ր, որ առաջին մարդը սիրեց... և տանջվեց...»։

* * *

Այդ սքանչելի բլրակների մեջ էր, որ տարիներից ի վեր վտակների հոսելուց կազմվել էր Թոքնաբաղ գետը և Թոքնաբաղը, երկար գնալ, հոգնելուց հետո՝ ձևացրել էր մի շքեղ ավազան։

Տարիներից ի վեր ջրերը մի ծոց էին գտել, գումարվել ու կուտակվել, հրավիրել ընկերներին, իրենց մեղմ կարկաչյունով գրավել ու մեծացրել էին շրջանը և կանչել ավազանի մոտ սոխակներին, որոնք հովտի վարդերի սիրուց տոգորված, նրանց փշերից ծակծկված, սովորել էին գալ և հովանալ այդ ջրերի մեջ։

Դաշտի թռչունները, սուլացող քամին բերին իրենց թևերով վարդի սերմեր, փռեցին ավազանի շուրջը. վտակները կշտացրին նրանց իրենց ցատկոտող կաթիլներով և քիչ հետո վարդե մի պսակ էր, որ կազմվել էր ավազանի շուրջը. պսակ, ուր հավաքվում էին սիրահար սոխակները, ուր սիրում էին և տանջվում սիրուց։

Լցվում էր ավազանը, կյանք տալիս շրջակայքին։ Գետը սահում գնում էր նրա երեսի վրայից. սոխակները երգում, թևերով բախում նրա ջրերի մակերևույթը և խաղում նրա վետ-վետ ալիքների հետ։

Դեռ ոչ մի մարդ չէր խանգարել այդ լռիկ անկյունը իր պիղծ ոգով, կործանիչ շնչով։

* * *

Բնակվում էին հովտում լեռանց ոգիներ։ Զքնաղ հյուրիներ էին նրանք։ Մի աննման էլ թագուհի ունեին։

Նայեցեք գիշերով լեցուն լուսնին, ցերեկով՝ շքեղ արևին։ Մտեք Մարգարեի դրախտը խուզարկեք, Քրիստոսի արքայությունը տակնուվրա արեք. բնության գեղեցկությունները ի մի ձուլեցեք, բայց բոլորի մեջ ոչինչ չեք գտնիլ նման Այիշայի վառ գեղեցկության։

Նրա աշխույժի առջև սառցակույտ էր հալվում, և սոխակները հա-

ճախ նրան մի աննման վարդ կարծելով, պար էին բռնում նրա շուրջը, օդը լցնում իրենց բոցավառ սրտից բխած խանդոտ դայլայլով։

Ամեն ինչ խոնարհվում, հալվում էր Այիշայի գեղի առջև. բնությունը ողջ ապուշ կտրած արձանանում էր, երբ Այիշան նրա միջովն անցնում էր...

Այդպես էր նա, որ սիրում էր երբեմն դուրս գնալ, իր գեղի առջև խոնարհված սրտեր տեսնել և զվարճանալ։ Հաճախ միայնակ պտույտ էր գործում Շիրազի հովտում, թափանցում մինչև ամենախուլ անկյունը։

Եվ ահա մի օր դեմ առ դեմ եկավ ավազանին։ Կանգ առավ։ Զմայլելի ոչինչ չկար շատ, բայց որքան խոր էր նրա հատակը և արդյոք որքան հետաքրքիր կլիներ թափանցել նրա մեջ, տեսնել ջրակույտի մի առատ հոսանք։

Երկար ժամանակ էր, որ նա վառ ու բուռն հոսանքներ չէր տեսել։ Բայց նա սիրում էր այլ վառ գույներ, արտահայտություններ...

Տեսնել օրինակ մի կրակ, որ մի քանի բոպեի մեջ բուռն կերպով լափում է մի մեծ շենք։ Բոցը սուր լեզվակներ կազմած սուրում է դեսուդեն, վառվում են քարեր, փլում պատերը, հալվում, դղրդում է գետինը, փոշին ու կրակը խառն, փոթորիկի պես կործանում են ամեն ինչ և, ապա, մի բոպեից հետո... էլ ոչինչ։ Վերջանում է ամեն ինչ։ Կրակից մնում է միայն մի կույտ, որ թեև պլպլում է, թեև դեռ փայլում, բայց հանգիստ է, հոգնած և կիսամեռ... շուտով կմեռնի, այլևս ոչինչ հետաքրքիր բան չունի իր մեջ։

Գեղեցիկ հյուրին մտածում էր այդ բոլորը։ Ավազանի միակերպ ալիքներն էր դիտում. ձանձրալի դառավ հոսանքը, այդ միակերպ շարժումը։

Չփորձե՞լ արդյոք մի ծակ բանալ ներքևից, լցնացնել նրան, հետո թողնել, որ թումբը տակից մաշվի, փլչի. ջուրը հոսի, գետինը բռնչա, փրփրի, ցատկոտի, փոշու սենյակներ կազմի, անհամար շատրվաններ ձևացնի, ողողի ամեն ինչ, վշվշա, ոռնա, սուլի ու գոռա...

Որքան մեծ տեսարան կլիներ այդ։

* * *

Եվ փնտրեց նա մի անկյուն, ուր փուխր լիներ հողը։ Իջավ և փորեց։ Տենդային հուզումով պեղում էր նա։ Սոխակները զգալով կործանումը, ճչում էին, վարդի թփիկները արմատներով դողում։

Քանի փորում էր, այնքան հանդարտում էր նա։ Բոպեներ եղան, որ նա կանգ առավ։ Այն միտքը, որ գուցե հետևանքը վատ լիներ, եր-

բեմն դասեցնում էր նրան։ Արդյոք արածը չէ՞ր կործանիչ, չէ՞ր ոչնչացնիչ ամբողջ ավազանը։

Բայց ո՛չ,— մտածեց նա,— ի՞նչ պիտի լինի։ Մի քանի ժամ բուռն հոսանք, հետո ամեն ինչ կվերջանա. հոսող վտակները էլի կլցնեին նրան։ Կփակեր նորից անցքը, ջրերը էլի մի անգամ կլցվեին և կսարսեր նրա պատերը նորանոր հուզմունքներից։ Իսկ ավազանը շատ լիքն էր. ինչ որ լիքն է, նա դատարկվելու էլ պատրաստ է։ Վաղուց նա արդեն կրծում էր իր հատակը և մի անցք փնտրում ժողոված խանդը դուրս տալու։

Պատերը կակղել էին. հեղուկը հոսել էր ուզում. կաշկանդված ուժը ազատություն էր փնտրում։ Կուզենար նա հոսել, հոսել, գգվելով ու ցողելով ամեն ինչ, ժպտելով արեգին, խնդալով կյանքին։

Պեղում էր Այիշան։ Ճչում էին սոխակները, ցնցվում վարդերը։

* * *

Ահա հուզվեցին ջրերը, ահա կազմվեց հորձանք, դողաց ավազանը, սարսեցին պատերը։ Լսվում էր մի խուլ մռմռոց, որ հետզհետե աղմուկի էր փոխվում։

Այիշան գունատվում էր. աղմուկի փոխվող մռմռոցը նրան վախ պատճառեց։ Ջրերի շարժումը, որ դղրդեցնում էր իր շրջանակը, պահ մի կասեցրեց նրան։ Նա կանգ առավ՝ ետ քաշվեց։

... Բայց որքան հրաշալի կլիներ տեսարանը, եթե հոսանքը մեկենիմեկ դուրս ցայտեր։ Հսկայական մի շատրվան, որ հովհարաձև կտրածվեր դեպի առաջ, կիրջեր-կողողեր ամեն ինչ, և խուլ մռնչյունը դաշտը կթնդացներ։

Որքան սիրուն տեսարան կլիներ այդ։

Տեսնել, թե ինչպես ավազանի մեջտեղը գոգանում է, ջրերը միմյանց ծեծելով կենտրոնանում են մի շրջանի մեջ, արագությամբ պտույտ գործում, գնում են, վիժում, ոստոստում, ցայտում...

Եվ հուզվում էր նրա կուրծքը. բուռն ցանկությունը դողացնում նրան։ Պեղելու էլ պետք չկար. ջրերը միմյանց հրելով լայնացնում էին բացվածքը, պեղում ու վիժում։

Մի հարված ևս... և նա ետ ցատկեց։

Մի ահեղ մռնչյուն ու մի մեծ շատրվան այնքան արագությամբ հաջորդեցին միմյանց, որ կարող էին մի բերդ կործանել։

Դղրդում էին լեռներ, ողողվում էր դաշտը։ Հորձանք էր կազմվել, խառոն էր սկսում, մի կաթիլ անգամ հանդարտ չէր մնում։ Ամենքը

միմյանց բախում, իրար հրմշտկում և ճեղքված անցքից դուրս էին թռչում։

Այիշան սառեց։ Հզոր տեսարանը քարացրեց նրան։ Իսկ ջրերը մռնչում էին, վիժում ու վիժում, դաշտն էլ նրանց ծծում-անհետացնում էր, թշվառ ավազանը կաթ-կաթ դատարկվում։

Մի քանի րոպե— էլ ոչինչ չմնաց, եթե ոչ մի սառն ու տխուր, անգույն թացություն։

Այիշայի առջև կանգնած էր նրա հաճույքի զոհը, որի վերջին կաթիլներն էր քամում... միշտ ցատկրտող, միշտ էլ հուզված վճիտ կաթիլներ։

Ու փուլ եկան ավազանի պատերը. թոքնաբաղը ետ քաշվեց, վարդերը տխրագին կռացան և արտասվաթաթախ մեռան փլատակների վրա...

Այն օրից Շիրազը կորցրեց իր ջուրը, գետը չոքացավ, հովիտը մերկացավ, սոխակները լռեցին, վարդերն էլ նրանց սոր չգրգռեցին։

* * *

Այս էր, որ պատմեց պարսիկ պատմիչը, երբ ես մոտեցած լսում էի նրան։

Եվ երբ վերջացրեց, խոնարհեց գլուխը։ Եվ խիստ տխուր էր նա, գունաթափ, նկուն...

Պատմիչ, թշվառ պատմիչ, դու չէի՞ր արդյոք հաճույքի այդ զոհը, քո սիրտը չէ՞ր արդյոք Շիրազի հովտի փլած ավազանը...

ԵՐԿՈՒ ԹՌՉՈՒՆ

Պատշգամբի վրա էր կախված նրանց վանդակը։ Երկու հատ էին. արու և էգ։ Երկուսին էլ բնից հանել, վանդակի մեջ էին մեծացրել։

Խնամում էին, շատ լավ կերակրում, ամեն օր տեղը մաքրում։ Իսկ վանդակը զարդարում էին կանաչ ծղոտներով, հացաբույսի փնջերով։

Երբ մեծացան, սկսեցին երգել։ Իհարկե՝ ո՛չ լավ, ո՛չ զվարթ, բայց երգում էին։ Եվ գիտակից չէին, որ իրենց երգը վշտալից շեշտերի մի մեղեդի էր, ստրկական կրծքերից բխող ողբի համերգ։

Եվ նրանց լսողները հուզվում էին, տխրությամբ համակվում ու ասում.

— Օ՛, խեղճ թռչուններ, սիրո՛ւն դեղձանիկներ...

Այդ կերպով էին գգվում նրանց, գովասանում համերգը։

Եվ եղավ, որ մի օր վանդակի դուռը բաց մնաց. մի ամբողջ օր բաց։

Զարմացան թռչունները, երբ տեսան այդ. զարմացան և իրար նայեցին։ Երկուսի մտքի մեջ էլ ծնել էր, որ այդ լայն բացվածքից կարող էին դուրս գնալ և այլևս գերի չմնալ։

Դո՛ւրս գնալ։ Բայց ո՞ւր. ի՞նչ կար արդյոք այդ անհուն տարածության մեջ, այդ պսպղուն, շողշողուն աստղերի կողմը, այդ արծաթագույծ լույսի տակ։

Շարժվեցին, թառից ցած իջան միմյանց ետևից և մոտ գնացին դռնակին։ Բայց չհամարձակվեցին դուրս ելնել. գլուխնին միայն քիչ դուրս հանեցին և վեր նայեցին։

Որքա՜ն աստղեր... Իսկ լուսի՜նը, նրա սփռած լույսի մեջ երևցող տների ցից-ցից տանիքնե՜րը, քամուց շարժվող ծառերի կատարնե՜րը...

Դուրս չելնե՞լ արդյոք։

— Գնա՜նք,— շշնջաց էգը։

Բայց չշարժվեցին տեղից. վախենում էին։ Երկուսն էլ հիշեցին վանդակի կողքից սուրալով անցնող մեծ հրեշ թռչուններին ու նրանց անհագ, վայրենի հայացքները։ Հիշեցին մանավանդ խորամանկ կատվին։

Եվ սակայն բաց դուռը գրավում էր, ազատ օդը, շողշողուն երկինքը փորձում էր նրանց...

* * *

— Պիո՛ւ, պիո՛ւ, կի՛վի, կի՛վի...

Ճնճղուկ էր. երբե՛ք վանդակ չտեսած, պապերով ու նախնիքներով գերության չենթարկված ճնճղուկ։

Կանգնել էր պատշգամբի ձողին և վանդակի ներսն էր նայում։

Այդ ի՞նչ էր — երկու թռչուններ էին այնտեղ, և այն էլ ազնվականներ, դեղին մեծություններ։

Եվ տես մեկ ինչպե՜ս կծկվել-կպել էին իրար՝ երկաթե վանդակի մեջ պարփակված։ Կերակուր էլ ունեին։ Ապա մեկ տեսնենք ի՞նչ են ուտում այդ գերի մեծությունները։

— Կի՛վի, կի՛վի...

Եվ նա թռավ վանդակի գլխին ու նստեց երկաթե ցանցավոր տանիքի վրա։

— Բարև, ձե՛րդ ազնվություններ. ինչո՞ւ եք կծկվել այդ շրջանակի մեջ։

Դեղձանիկները վեր նայեցին։ Ոչինչ. ճնճղուկ էր միայն. ստոր տեսակի լեռնական մի թռչուն։

— Ա՜հ, ա՜հ,— շարունակեց ճնճղուկը,— այդ ի՞նչ ազնիվ կերակուրներ էլ ունիք. վանդակի մե՞ջ այդպիսի կերակուրներ...

Այն ժամանակ դեղձանիկ-արուն վեր նայեց և ասաց.

— Մենք կուշտ ենք. այս կերակուրը զզվեցրել է մեզ. կուզե՞ս, եկ կեր։

— Շնորհակալ եմ,— ծիծաղեց ճնճղուկը,— երբեք չէի ցանկանա վանդակ մտնել, նույնիսկ եթե ինձ թագավորություն տային այնտեղ... Մի՞թե դուք հանգիստ եք դրա մեջ... Ես իմ ազատ օդն ու լեռները չեմ փոխի ձեր ամբողջ հանգստության հետ։

— Մի՞թե այդքան լավ է լեռներում և դրսում, ճնճղո՛ւկ,— հարցրեց էգը ներսից։

— Լա՜վ...— ծիծաղեց զվարթությամբ ճնճղուկը,— ո՛չ միայն լավ է, այլ հրաշալի, տիկին։ Մեկ նայեցեք է՜է՜... Բարձրում, երկնքի կապտության մեջ այդ սևին տվող արտույտները տեսեք ինչպե՜ս են ճախրում, ինչպե՜ս ճլվլում, պարում... Ձե՞ք զգում ծաղիկներից՝ զեփյուռի ժողոված ու բերած բուրմունքը։ Իսկ արևը, տեսեք ինչպե՜ս պայծառ ու տաք՝ լուսավորում է, ամեն բանի կյանք ներշնչում...

— Իսկ եթե հանկարծ զեփյուռը փոթորկի փոխվի՞, արևը ծածկվի և անձրև տեղա՞...

— Բա՜հ... երևի ձեր փայլուն հագուստների մասին եք հոգում։ Մի՞թե ծառի խոռոչ, ժայռի ստորոտ և կամ այլ թաքստոց քիչ կա։ Ապա ծխնելույզների գագաթնե՞րը, ապա բույնե՞րը— այնքան տաքուկ, այնքան փափուկ ու ապահով...

Էգը թոթվեց իրեն և մոտեցավ դռնակին։

Այն ժամանակ ճնճղուկը նկատեց, որ վանդակը բաց էր։

— Տե՜ր աստված,— աղաղակեց նա,— հիմա՞ր եք դուք, ահա դուռն էլ բաց է, ինչո՞ւ եք ուրեմն կծկված մնացել, դո՛ւրս եկեք, գնանք ինձ հետ ընկերներիս մոտ, այնտեղ՝ ձորում, սիրուն առվակների եզերքին, թփիկների տակ լողացեք, զովացեք, ազատ օ՛դ շնչեք...

— Ուրեմն այդքան լավ է, հա՞, այնտեղ՝ ձորում,— հարցրեց ներսից էգը։

— Բայց այո՛, տիկին։ Մի՞թե չէիք կամենա, օրինակ, մեկ բարձրանալ մի ծառի վրա, նստել տերևների շուքի տակ, ապա թափահարել թևերը, սլանալ վեր, օդը ճղել, օրորվել-ճախրել, իջնել արտը, մտնել հացահատիկների մեջ, կտցահարել-կշտանալ և երբ հոգնած ես, գնալ-

լվացվել ցատկռտող ջրվեժի փրփուրներով և հետո անցնել-մտնել ծաղիկների տակ ու ննջել ստվերներում...

Արու դեղձանիկը, որ կծկված իր տեղում, լսում էր լեռնական ճընճղուկի բանաստեղծական ոգևորությունը, ասաց հեգնորեն.

— Իսկ եթե հանկարծ ուրուրը պնդե ետևիդդ, և դու սոսկումը կրծքումդ, խելքդ կորցրած, ընկնես ամեն կողմ և պահվելու տեղ չգտնե՞ս...

— Երևի վանդակի մեջ շատ մնալով՝ կորցրել եք տեսողությունը,— գոչեց ճնճղուկը.— մի՞թե աչք չունեք տեսնելու, որ թշնամին հեռվից գալիս է. մժղուկ խո չէ՞, որ չնկատվի, հրեշային մեծությամբ մի բան է... Տեսար թե չէ, կծիկդ ծալիր և լեռներդ քաշվիր. քի՞չ թաքստոցի տեղ կա ամեն կողմ, ամեն ծառի խոռոչի մեջ, ամեն ժայռի խորքում։ Մի բրոպե— և վտանգն անցել է. այնուհետև դուրս կգաս, մի լավ կծիծաղես և կսկսես ուտել, պարել, ազատ օդ ծծել ու ճախրել...

— Այո, այդ բոլորը լավ,— խոսեց նորից հոռետես արուն,— միայն մոռանում ես, ռամի՛կ կարճամիտ, որ կարող են արտերը քաղված լինել և դու օրերով տաք արևի տակ կթափառես՝ առանց ոչինչ գտնելու, ծարավից կպապակվես՝ առանց ջուր տեսնելու...

— Օ՜հ, ձերդ ազնվություն,— ծաղրեց ռամիկ ճնճղուկը,— չէի՞ կամենա, որ այդպես ժամանակ ռամիկներս գնայինք և մարդկանց դիզած կալերից ձեզ համար հացահատիկներ բերեինք և հազարավոր ագրյուրներից էլ ջուր...

* * *

... Եվ էգ դեղձանիկը, որ մինչև այդ ժամանակ անհոգությամբ լսում էր, հանկարծ մի ոստյունով դուրս թռավ վանդակից ու նստեց ճնճղուկի կողքին։

Ինչպե՞ս բաբախում էր սիրտը, ինչպե՞ս դողում էր նա։

— Օ՜, օ՜...— գոչեց ներսից սարսափած արուն։ Ճնճղուկն էլ մի վայրկյան խոսել չկարողացավ։

— Թշվա՜ռ,— աղաղակեց արուն իր ընկերոջը,— այդ ի՞նչ արիր, շո՛ւտ, նե՞րս եկ, քանի կատուն չի հասել։

Էգը բնազդմամբ կծկվեց, շուրջը նայեց և կպավ ճնճղուկին։

— Մի՛ վախենա, տիկին,— ծիծաղեց ճնճղուկը,— կատուն այստեղ չի հասնի. և հասնի էլ, ի՞նչ կարող է անել։

— Ինչպե՞ս թե ինչ...

— Այո՛, բավական է քիչ զգույշ լինել և շրջահայաց. տեսար կատվին, թռիր դեպի վեր, և ամեն ինչ վերջացել է։ Գազանները դեպի վեր թռնել չգիտեն. նրանք միշտ գետնի վրա են սողում... մենք ի՞նչ գործ ունենք գետնի երեսին։

— Իրավ է,— ասաց տիկինը,— և ի՞նչ լավ էլ է այստեղ. ազա՜տ... ո՞ր կողմ ուզենաս կթռչես... Ե՛կ այստեղ, ընկեր, դո՛ւրս եկ մեզ մոտ։

— Աստված ո՛չ անի,— գոչեց արուն ներսից,— ասել են, որ կնոջ խելքն էլ ռամիկի խելքի պե՛ս կարճ կլինի —այժմ ճիշտ դուրս եկավ։ Գիտի տուժես հիմարությունդ, կի՛ն դու, բայց ուշ կլինի։

— Օ՜, ձերդ վախկոտություն,— քրքջաց ճնճղուկը,— մնացեք ուրեմն ձեր երկար խելքով՝ վանդակի մեջ, իսկ մենք մեր կարճ խելքով՝ կերթանք ազատ ապրելու... Այնպես չէ՞, տիկի՛ն, կգա՞ս։

— Գնա՛նք։

Ու թռան։

— Պիո՛ւ... պիո՛ւ,— կանչեց բարձրից ճնճղուկը,— ե՛կ, ե՛կ մեզ հետ...

Բայց արու դեղձանիկը վանդակի մեջ կծկված նայում էր դեպի վեր սլացողներին և սարսափից դողում։

Քիչ հետո մի վերջին «կի՛վի, կի՛վի» ևս լսվեց, և ապա երկու թռչուններն անհետացան երկնային կապտության խորքում։

Եվ մնաց արուն վանդակի անկյունում կծկված, աչքերն ազատ անհունության դարձրած, դեպի անծանոթ, աներկաթ և անվանդակ հայրենիքը։ Եվ այդպես անշարժ, կերակրի ու ջրի մոտ կուչ եկած՝ երազում էր, տրամաբանում... միմիայն երազում, տրամաբանում...

Երեկոյան դեմ տանտիկինը տեսավ բաց դռնակը, տեսավ, որ էգը խուսափել էր, ազատություն ստացել։

— Ջա՛ր,— գոչեց նրա հասցեին։

Հետո զննեց փիլիսոփայաբանող, տրամաբանող ու հանգստություն սիրող արուին՝ կծկված վանդակի անկյունում։

— Տխմա՜ր...— ասաց արհամարհանքով և վանդակի դուռը փակեց։

* * *

Այս զրույցը մի տիկին պատմեց ինձ։

1896

ԱՌՅՈՒԾԻ ՄԱՀԸ

Անապատի մեջ արշավող, անտառը թունդ հանող և ազատության մեջ մեծացած խրոխտ առյուծը թակարդի մեջ ընկավ։

Անտառից ելած՝ որս էր որոնում, շուրջն ահ սփռելուն համար մտովին հրճվում, երբ հանկարծ գլորվեց-ընկավ ու մի ցանցի մեջ իրեն բռնված գտավ։ Մի ցանց ահռելի, համարաբար շարժվող, կծկվող-գալարուն, որ մի բոպեի մեջ կաշկանդեց նրան, քաշեց, հավաքեց ու կծիկ դարձրեց։ Ոչ մի շարժում իսկ գործել չէր կարող. մի խումբ կոշտ կապեր, սարդի ճանկերով, պարզվեցին դեպ նա, և առյուծն ընկավ խճճված ու կապված...

Մռնչաց, կատաղեց, բուռն ճիգեր գործեց, ոստոստեց, կապերը կծոտեց, որչափ ուժ ուներ՝ գալարվեց, տանջվեց, բայց ո՛չ շղթան փշրեց, ո՛չ էլ ցանցը պատռեց...

* * *

Անտառի քաջը, կենդանիների արքան գերի էր այլևս։ Իր կյանքում երբեք կապեր չէր տեսել, արգելքի առաջ գլուխ չէր ծռել, կտրել էր նա դաշտ, ձոր, անապատ անհուն, անցել էր անտառ, գետեր սրընթաց, մագլցել լեռներ... աշխարհն ամբողջ ոտնատակ տվել, ազատ օդի մեջ ապրել անկաշկանդ, ազատ էր ծնվել, ազատ էր սնվել և ահա այժմ կծկած, գալարած, ցանցով խճճած, գետնին պինդ գամած, անհասկանալի կապերով սեղմված, չէ՛ր էլ ըմբռնում, թե ի՞նչ էր եղել, ինչո՞ւ բանտարկվել և կամ ո՞վ էր նրան այդպես խղճուկ, դառն դրության մեջ ձգել։

Մռնչաց, ոստնեց, ժամերով ճգնեց, ապա հուսահատ, աչքերը փակած, գլուխը կրծքին, բաշն իջեցրած՝ սկսեց խորհել։

Ի՞նչ էր այդ ուժը — իր ուժից շատ բարձր, այդքան խորամանկ և այդքա՜ն ճարպիկ. ո՞ւմն էր ահռելի այդ շանթող ձեռքը, որ աներևույթ՝ պարզված դեպի նա, անտառի հերոսից կծիկ էր շինել ու անշարժ, գերի՝ դաշտի մեջ գամել։

Եվ նա վեր նայեց։ Մի թեթև ու թույլ խշրտուք լսեց, ապա իր ցանցից մի քայլ հեռվում մի մարդ նշմարեց։ Մարդն էր այն. շնչին արարածը, որից տասնյակներ նա պատառոտել, բզկտել էր հաճախ և որն այժմ այնտեղ, ցանցի կապը ձեռքին, նայում էր խրոխտ որսին, նայում հրճվանքով, ծաղրում արքային, ծաղրում հսկային։

Ելավ, ուզեց ոստնել, հանդուգն ծաղրողին մի պատառ շինել, փշրել

տրորել... բայց մարդը կապը ձգեց, և ցանցը կուչ եկավ, ավելի սեղմվեց ու առյուծի ջանքերն ի դերև հանեց։

Օհ, ի՞նչ անկում, ինչպիսի՞ վիճակ։ Խաղալի՞ք լինել մարդու ձեռքի մեջ, ենթարկվել ծաղրի, հեռու անտառից, խլված անապատից, ազատ վայրերից, ստորացուցիչ կապերի մատնված, անհո՞ւյս ու գերի՞...

Եվ առյուծը դառնացած լացավ աղիողորմ։ Ու նրա լացից անտառը դողաց, ժայռերը հնչեցին, դաշտը թունդ ելավ...

* * *

Օրերո՛վ մնաց առյուծը ցանցի մեջ. նրան կեր տվին, բայց ոչինչ բերանը չառավ. նրան շրջապատեցին, բայց նա լուռ մնաց. լուռ, հուսահատ և մահվան ցանկացող...

Մի օր էլ մի մեծ վանդակ բերին դավաճան ցանցի կողքին, առյուծին ստիպեցին ելնել, շիկացած երկաթներով առաջ մղեցին և նկուն դարձրած՝ վանդակի մեջ առին։

Այժմ կապ չկար, բայց երկաթե ամուր ձողերով կազմած չորս բարձր պատեր կային։

Առյուծը փորձեց բացվածքների միջով նեղնալ՝ դուրս սահել. գլուխը դեմ տվավ, հսկա ոստյուններով ձողն ի վեր թռավ, կատաղի քայլերով վանդակի մեջ վազվզեց, հնարք որոնեց, դրսում երևացող ազատ երկնքին կանչեց, ազատ տարածությունը տենչաց, ապա ամբողջ վանդակը ցնցեց, դղրդացրեց... բայց տեսավ, որ զուր էր, ամեն ջանք ունայն, և որ գերի էր, բռնված, կաշկանդված...

Տխուր ու տրտում՝ նստեց վանդակի ձողերի առաջ, ոտները ծալեց, պոչը հավաքեց, գլուխը թաթերի վրա առավ և աչքերն անհագ տենչանքով լիքը, սևեռեց հեռու՝ իր անապատին, իր գոռ անտառին, ուր երեկ դեռևս հպարտ ու խրոխտ՝ անցնում էր ազատ, ուր երեկ դեռևս իր լայն թոքերով շնչում էր, փռնչում։

Ահա այն ժայռը, այն մեծ լերկ քարը, որի կատարին կանգնել էր ժամերով, արևի տակ հանգչել, հեռուները դիտել, իր սուր աչքերով որսեր որոնել և արհամարհոտ՝ ոտքերի մոտից սահող մողեսները զննել, զեռունների փոքրությունը ծաղրել...

Ա՜հ, որքա՜ն կուզենար այժմ այդ մողեսների պես փոքր լինել, սահել վանդակի ձողերի միջով, գնալ-ապրել միշտ խուլ խոռոչներում, ավազանների մեջ, չնչին բան դառնալ, առյուծ չլինել, միայն թե ազատ, ազա՜տ կապերից, վանդակից, բնության ծոցում ուզած տեղն ապրել, ուզած տեղը մեռնել...

* * *

Վերջապես վանդակը շարժեցին, շատ օրեր գլորեցին առաջ, ապա ինչ-որ երերուն տախտակի վրա ամրացրին և մեծ ջրի վրա լողացնելով՝ տարան քազմամարդ մի երկիր հանեցին։

Առյուծն այդ բոլորը տեսավ զարմացած։ Ծովի ալիքների, կապույտ տարածության առաջ զմայլած մնաց, իր անապատը կարծեց։ Հետո, վանդակի շուրջը ժողովվող ժխորին նայեց քամահրանքով, իմացավ, որ մտցրել էին իրեն մի անծանոթ տեղ, ուր ոչ անտառ կար և ոչ անապատ, ուր հորիզոնն իսկ վանդակի էր նմանում. փակված, կարճ սեղմված, և օդը ճնշող, թանձր, հեղձուցիչ։

Շշմած, մեքենայաբար կերավ՝ ինչ տվին, արեց՝ ինչ ուզեցին։ Է՛լ չմռնչաց, էլ չկատաղեց, միայն կծկված վանդակի մի անկյունում՝ ժամերով անշարժ, միտքն իր անապատին, երազը՝ անտառին և լայնարձակ օդին, դառն հեկեկանքով լացավ ու մեռնել ուզեց։

Այդպես էր, որ նրան տարան, շրջեցրին քաղաքներ, նորից ջրեր անցկացրին, նորից մռայլ, խեղդիչ երկիրներ և վերջիվերջո մի անտառանման այգու մեջ մտցրին, վանդակը բարձրացրին, ստիպեցին նրան անցնել մի ուրիշ, ավելի մեծ ու կլոր շրջանի մեջ, դուռը փակեցին, մի կտոր միս էլ ներս ձգեցին, թողին ու հեռացան։

Առյուծն այժմ գազանանոցում էր։

* * *

Ի ցույց էր դրված մի մեծ ու կլոր բարձր վանդակում, ուր մինչև իսկ, կարծես նրան ծաղրելու համար, փոքրիկ քարերից չնչին, խաղալիքի նմանող ժայռ էին կազմել մոտը սյունի պես կերտված, ցանցառ տերևներով, մանրիկ ճյուղերով ճղճիմ ծառ տնկել, ծառի տակը՝ ջրի ավազան, վանդակի հատակի վրա՝ ծովի շոր ավազ...

Առյուծը շուրջը նայեց, զզվանքով տեսավ իր ազատ հայրենիքը ծաղրող այդ ծառն ու ժայռը, պոչով փշրեց առաջինը, ոտքով կոտրեց երկրորդը և դուրս նայեց։ Դիմացը՝ պատեր, հեռուն՝ ուրիշ վանդակներ էր. ապա մռայլ ծառեր և նրանց տակը պտտող նայողներ, որոնք երբեմն մոտ էին գալիս բերանները բաց, դիտում և կամ ահաբեկ՝ ետ-ետ էին քաշվում...

Եվ հանկարծ այդ բոլորի մեջ լսվեց մի ծանոթ և խոպոտ մռնչյուն, որ լոտանքով գոչում էր.

— Ողջո՜ւյն անկյալ վեհափառության...

Դարձավ։ Տասը քայլ հեռու, նո՛ւյնպես վանդակում, ձողերի ետևից գլուխն երերցնելով, չարամիտ վագրն աչքերը հեգնությամբ լի՝ իրեն էր նայում։ Երբ նրանց ակնարկները միմյանց հանդիպեցին, արյունարբու գազանը ոռնաց ու ասաց.

— Ողջո՛ւյն, անապատի հզոր դու արքա, գոռ անտառների, ազատ ժայռերի մեծ հսկա. եկել ես մեզ ընկե՞ր. մեզ՝ ընչիններիս, մեզ՝ ստորներիս բախտակից եղել... Ողջո՛ւյն, անկյալդ վեհափառություն...

Ապա մի մեծ շարախնդաց, դիվային ծիծաղ լսվեց նրա վանդակից, հետո քրքիջն անցավ մի երրորդ վանդակի, որտեղից ինձք ատամները բացած, փայլուն աչքերով նայում էր հեգնությամբ... Եվ այդպես, քրքիջը քայլեց, վանդակից վանդակ մտավ, և մի բոպեի մեջ առյուծն իրեն գտավ շրջապատված չնչին անասունների, գերի գազանների, գայլերի, նույնիսկ կապիկների ծաղրով ու հեգնություններով։

— Ահ, արքա՛, խոնարհ մեր ողջույնը,— կանչում էր ինձը։

— Ողորմած եղիր, հզո՛ր թագավոր, որ համարձակվում ենք քեզ ընկեր լինել,— ոռնում էր գայլը։

— Մենք կապիկներս քեզնից հզոր ենք,— ճչում էին անճոռնիները,— որովհետև ուրախ ենք և կատակում ենք...

Ու ծաղր, հեգնություն, քրքիջ, աղաղակ ամեն կողմից տեղացին բռնված հզորի անպաշտպան գլխին։

Առյուծը մռնչաց, ոստնեց դեպի ձողերը, ուզեց դուրս ելնել, տրորել-ջարդել այդ հեգնողներին... բայց բախվեց ձողերի, գազանապահի հրաշեկ երկաթն այրեց նրա թաթը, և նա նկուն, կատաղի, գլուխը թաթերի մեջն առավ և ուզեց մեռնել։

* * *

Դառն էր այդ բոլորը. դառն, անտանելի։ Մեռնելը խի՛ստ լավ էր։ Կուզենար տեսնել իր արյան կաթիլ առ կաթիլ քամվելը, իր անդամների կտոր առ կտոր բզկտվելը, կուզենար թաթերը փշրել ձողերի վրա, սիրտը հոշոտել, կորզել, դուրս ձգել։

Գիշերն էլ եկավ մռայլ ու խոնավ։ Ծաղրն ու քրքիջը սաստկացավ, մեծացավ։

— Ա՛հ, մեռնելուց վախենո՞ւմ ես,— գոչում էր վագրը,— վանդակի մե՞ջ ես, փառավոր արքա՛...

— Ա՛հ, դու թշվա՞ռ ես, առյո՛ւծ ահալից,— մլավում էր ինձը...

— Թքե՛լ, թքել առյուծի վրա,— ճչում էին կապիկները...

Առյուծը գլուխը կռացրեց, քաշվեց քարերի ետևը, աշխատեց մթության մեջ ընկղմվել և այդ ծաղրող ձայները չլսել։

Ո՛չ, պետք էր դուրս գնալ. ինչ որ էլ լիներ, մեռներ կամ ապրեր— պետք էր դուրս ելնել, ոտքի տակ տալ, տրորել ամեն բան, ամեն արարած, միայն մի բոպե, մի վայրկյան ազատության մեջ լինել, այնտեղ էլ մեռնել...

Եվ նա մոտեցավ վանդակի դռան, խուլ մռնչյուններով քաշեց ձողերը, ցնցեց ամեն բան ու գերբնական մի ուժով, հուսահատ ճիգով փշրեց դռան շղթան և դուրս թռավ իր դիմացը բռնված հրաշեկ երկաթի վրա...

Գազանապահն էր այն, մի սպառնալից, կրակած ձողակով, որ մոտենում էր նրան և հնչեղ ձայնով ներս հրավիրում...

Առյուծը ժողովեց իրեն, հետո ոստնեց։

— Մեռնե՞լ ազատ... — գոչեց նա։

Եվ երկաթը վժժալով՝ նրա կուրծքը մղվեց։

Առյուծը գալարվեց, երկնքին նայեց, անապատն երազեց, անտառին հառաչեց և հրաշեկ երկաթը կրծքին, աչքերն ազատության, մեռավ քաջի պես, բայց ազա՞տ օդում, ազա՞տ երկնքի տակ...

1896

ԱՆՀԱԳԸ

(Փիլիսոփայական զրույց)

«...Եվ տեսա, որ մարդկությունը խորին կեղծության մեջ է սնանվում և նրանով երջանիկ համարվում.

Եվ տեսա, որ այդ ահավոր կեղծությունը անկեղծության դիմակով է ապականություն ստեղծում.

Եվ մահու չափ վշտացա...»։

Մի հին գրքից։

1

Այնտեղ հեռու, Արաբիայի մի անդորր անկյունում, սրանից շատ ժամանակ առաջ, ապրում էր մի իմաստուն։ Երիտասարդության տարիները անցկացնելով նա կյանքի մեջ, փորձել էր նրա քաղցրությունը, նրա

թույնը և երկար ուսումնասիրել-հետախուզելուց հետո եկել էր այն եզրակացության, թե քանի մարդուս գոյության վերջնական նպատակը անհայտ մնա, խուսափի մեր հասկացողությունից, այնքան կյանքը մնալու է միշտ այսպես դառն ու տանջալից։

Ինչո՞ւ ապրել, ինչո՞ւ ծնվել և ինչո՞ւ մեռնել. ի՞նչ էր այդ բոլորի նպատակը։ Ինչո՞ւ աշխարհի, տիեզերքի գոյությունը. դեպի ի՞նչ նպատակի էր ձգտում տիեզերային այն հորձանքը (tourbillon), որի յուրաքանչյուր հյուլեն ճախրում է, շարժվում անընդհատ, անհանդարտ և հավիտյան...

Ինչո՞ւ մարդուս — իրեն գոյությունը, մահն ու ձևափոխությունը։ Այդ բոլորը ի՞նչ վերջնական նպատակի է ծառայում։ Դեպի ո՞ւր է գնում՝ գոյության հորձանքը —այդ բազմակնճիռ, միմյանց արտադրող, միմյանց ոտնատակ անող ու կլանող, միմյանց ծնող ու մեռցնող օրգանական էությունը...

Այդ և այդպիսի այլ հարցեր տանջում էին իմաստունին, որովհետև ոչինչ չէր գտնում, ոչինչ չէր թափանցում։ Որքա՜ն աշխատում էր ինքնախաբեությամբ մտածել, որ այդ բոլորը այսինչ կամ այնինչ նպատակի համար էր, բայց երբ վերլուծում էր «այդինչ» կամ «այնինչ» նպատակը, գտնում էր, որ դրանք ոչ թե նպատակներ էին, այլ միջոցներ միայն՝ հասնելու դեպի մի անհայտ, խորհրդավոր ու անհասկանալի նպատակի. միջոցներ, որոնք երկար քննելուց հետո և ո՞չ իսկ գլխավոր էին թվում, այլ չնչին, հաճախ ստորացուցիչ և բուսական...

Ի՞նչ անել ուրեմն. չապրե՞լ։ Բայց մի՞թե եթե մեռներ՝ պիտի հասկանար։ Ո՞վ կարող էր երաշխավորել, որ մեռնելուց հետո պիտի ունենար փնտրելու, խուզարկելու տենչանք կամ հոգեկան գոյություն. և կամ եթե նյութական մարմնից դուրս գնար, հոգեկան էությամբը, կարո՞ղ պիտի լիներ հասկանալ մեծ ու խորհրդավոր նպատակը։

Որ այդպիսի մի վերջնական նպատակ պետք է լիներ— դրա մեջ նա համոզված էր. որովհետև չէր կարող ըմբռնել, թե ինչպե՞ս կարելի էր, որ այդ ներդաշնակավոր, որոշ օրենքների ենթարկված հորձանքը չունենար մի կետ նպատակ, և որ այդ բոլորը գոյություն ունենար անանպատակ, դիպվածով միայն...

Եվ երբ մտավ իմաստունը այդպիսի բնազանցական խնդիրների մեջ, պահ մի կասկածեց, թե գուցե ոչ մի նպատակ գոյություն չուներ։ Բայց դա մի ակնթարթ միայն տևեց, որովհետև համոզված էր, որ այդ այդպես չպետք է լիներ, որ կար մի վերջնական, ծայրագույն նպատակ, և որ այս բոլորը ձգտում էր դեպի նա, գործում էր՝ նրան հասնելու համար...

Բայց ո՞րն էր այդ նպատակը. ինչո՞ւ ուրեմն թաքնվում էր նա, եթե կար. ինչո՞ւ ո՛չ իսկ հասկացողության համար մատչելի էր լինում, ո՛չ իսկ մտովին հնարավոր էր լինում երևակայել։

Եվ երբ խորապես գիտակից եղավ դրան, մահացու տանջանք զգաց։

Մոլորված, ընկճված, այդ ծանր հարցերի տակ ծյուրում էր, երբ նրան խորհուրդ տվին գնալ պտտել, օդ ծծել և իր տանջանքը մեղմացնելու համար ճանապարհորդել։

Լսեց իմաստունը։ Ո՞վ գիտե, մտածեց նա, գուցե հիվանդ եմ և դրանից է, որ այսպիսի փիլիսոփայական հուսահատեցուցիչ մտքերով ճնշվում եմ։ Փորձեմ զվարճանալու. գուցե, ստամոքսս հափրացնելով, տրամաբանական այդպիսի թռիչքներ չանեմ այլևս և բավականանամ անտրամաբանության մեջ բույսի պես աճելու։

Ու գնաց։ Մի կողմից էլ մտադրեց ճանապարհին հանդիպած այնպիսի անձերից, որոնք նրա ուշադրությունը կհրավիրեն իրենց վրա, հարցնել այն բանի մասին, որն իրեն հուսահատեցնում էր։

Քայլեց նա շա՜տ երկար ու մի ամսից հետո հասավ մի սուրբ երկիր, ուր կանաչ, կապույտ ու սպիտակ փաթթոցավոր գլուխներ վխտում էին քաղաքների փողոցներում, ուր միեարեների ծայրերը համբուրում էին երկնքի վրայից սահող ամպերը և ուր վանքեր և ուխտատեղիներ ավելի շատ էին, քան աղոթողներ և ուխտավորներ։

Երբ քաղաք էր մտնում, կամուրջի վրա մի մեծ իրարանցում տեսավ և ձիավորների հանդիպեց, որոնք երկար գավազաններ ձեռքերին՝ սրարշավ գալիս էին և գոչում.

— Ճանապա՜րհ, ճանապա՜րհ...

Քիչ մնաց ոտքի տակ գնար։ Ետ թռավ ու կպավ կամուրջի թմբին։ Մի րոպեից հետո, երբ 10—15 ձիավորներ անցել էին, անցավ նաև ոսկեզօծ ու շքեղ մի կառք, որի մեջ բազմել էր երկար մորուքով պատկառելի սպիտակազգեստ ծերունի՝ մի ձեռքին ոսկեձույլ կոթով գավազան, մյուսում՝ սաթե վարդարան։ Եվ ծերունու վարդագույն նուրբ շրթունքները շարժվում էին, աչքերը կարծես մոռացել էին այս աշխարհը...

— Ահա մի սուրբ կրոնավոր,— մտածեց իմաստունը և հարցրեց, թե ով էր անցնողը։

— Մի՞թե չգիտես, դա հավատացյալների մեծ կրոնապետն է, մի իմաստուն մարդ։

— Իմաստո՞ւն։

— Այո՛, չկա մի բան, որ չիմանա։

Իմաստունը մտածեց, թե արդյոք չդիմե՞ր այդ կրոնավորին հարցնելու այն բանի մասին, որն իրեն տանջում էր։

Իմացավ, թե որտեղ էր ապրում մեծ կրոնապետը և ընտրելով երեկոյան ժամանակ, որ-կարողանար ավելի երկար խոսել ծերունու հետ, գնաց նրա պալատը։

Ամբողջ փողոցը լիքն էր ամեն կարգի ու տեսակի կրոնավորներով, որոնք կկղած ապարանքի այս-այն պատի տակ, սենյակի մեջ, ուտում էին, խմում և զվարճանում։ Նրան չարգելեցին, և նա հասավ այն բակը, ուր շինված էր իմաստուն կրոնավորի առանձնարանը։

Ներս մտավ։ Կրոնապետը, մի քանի ուրիշ խնդրարկուների հետ մեծ քաղցրությամբ խոսելուց հետո, դարձավ իմաստունին և հարցրեց սիրալիր.

— Իսկ դո՞ւ, որդի, դո՞ւ ինչ ունես հարցնելու։

Իմաստունին դուր եկավ այդ համեստությունն ու սիրալիրությունը. սիրտ առավ, մի վայրկյան ամփոփեց միտքը և ապա այսպես խոսեց.

— Ո՛վ պետ հավատացյալների,— ասաց նա,— ես գալիս եմ հեռու տեղից։ Կյանքս ամբողջ անցուցի կյանքն ու մարդիկ, բնությունն ու իր գաղտնիքները, իր օրենքներն ու ներդաշնակությունը ուսումնասիրելու մեջ և այսօր, երբ գրեթե գիտեմ ինչ որ կաբելի էր գիտենալ, գտնում եմ, որ դեռ ոչինչ չեմ հասկացել։ Սա հուսահատական չէ՞...

Կրոնապետը թափանցող ակնարկով նրան նայեց երկար ու ապա շփելով մորուքն ասաց.

— Դու իրավունք ունես. այդ հարցը տանջել է նաև ինձ. դրանից հուսահատական բան չկա, երբ մարդ գիտե, որ ինքը ոչինչ չգիտե. երբ երկար հոգնելուց, իր ամբողջ կյանքը զոհելուց հետո տեսնում է, որ ուսել է միայն սովորելը և դեռ նոր պիտի սկսի հասկանալ. այն ժամանակ միայն, երբ այլևս հոգնել է, մաշվել...

— Այդպես չէ, հայր իմ,— միջահատեց նրան իմաստունը,— այնքան սպանիչ չէ, երբ տեսնում է, որ՝ դեռ նոր պիտի հասկանա, այլ երբ տեսնում է, որ չպիտի հասկանա, երբ իր ամբողջ էությամբ ուսանելու նվիրվելուց հետո գալիս է այն եզրակացությանն, թե իզուր էին այդ բոլորը, որովհետև ոչինչ չէր կարողանալու հասկանալ և թե իր բոլոր տանջանքը միայն նրա համար էր, որ համոզվի, թե ոչինչ չգիտե, և, որն ավելի սպանիչ է, ոչինչ էլ չի կարողանալու գիտենալ։

— Այդ էլ ճիշտ է, որդիս,— ասաց կրոնապետը,— մարդս ինչ-որ կուզի, թող անի, չէ կարողանալու ըմբռնել աստվածային գաղտնիքները...

— Ներեցեք, հայր,— միջահատեց նորից իմաստունը,— իմ ամբողջ վիշտը նրանումն է, թե ինչո՞ւ չեմ կարողանում կամ ինչո՞ւ մարդս

չէ հաջողում ըմբռնել, զորեղ երևակայությամբ անգամ ենթադրել գաղտնիքը, թե ի՞նչն է արգելք լինում այդ կարելիությանը, ինչո՞ւ է, որ կարելի չէ լինում թափանցել, հասկանալ...

Կրոնապետը գլուխը խոնարհեցրեց, երկար և լռությամբ դարձրեց վարդարանի հատերը, օրորվեց ու մտածեց, հետո գլուխը նորից բարձրացրեց ու ասաց խուլ ձայնով.

— Միայն մի խրատ կա քեզ տալու, որդյակ, միայն այդ խրատը...

Ու աջ ձեռքը դեպի երկինք բարձրացնելով, ասաց.

— Դիմիր բարձրյալին, և նա թող կամ լուսավորե քո միտքը և կամ խավարեցնե, որ կա՛մ գտնես ինչ որ փնտրում ես, կամ թե չունենաս փնտրելու այդ փափագը... Դիմիր աստծուն, նվիրիր քեզ նրան, և՝ տեր քեզ...

2

Նվիրվել աստծուն...

Արդյոք այդ նվիրվելը պիտի հասկացնե՞ր նրան, ավելի՞ գիտակցական ու ավելի՞ բարձր մտային մթնոլորտի պիտի հասցներ և արդյոք դա՞ պիտի լիներ փնտրածը գտնելու միջոցը։

Եվ ինչպե՞ս նվիրվել։ Հագնել քուրձ, քաշվել մի խղիկ, ծոմ պահել, տանջել իր անձը, զրկվել ամեն բանից և ինքն իր մեջ ամփոփելով խորհել միայն երկնային մտացածին բաների վրա՞։

Ու երբ երկար մտածեց իմաստունը, գտավ, որ աստծուն նվիրվել՝ նշանակում էր ձգտել դեպի նա, այսինքն դեպի ամենակատարյալ մի նպատակի։

Բայց չէ՞ որ հենց դա էր փնտրածը։

Ուրեմն հարկավոր էր փորձել. բայց ո՞չ թե մենակեցությամբ ու ճգնությամբ, այլ ձգտելով դեպի նա, տանել իր հետ իր ամբողջ շրջապատողներին էլ։ Հավատալ և հավատքի բերելով բոլորին, գործել միահամուռ ուժով՝ հասնելու այդ նպատակին։

Ու տխուր էր նա, երբ իջավ այդպես դեպի աստծուն նվիրվելու նպատակը և սկսեց խորհել դեպի նրան հասնելու միջոցների վրա։

Այնուամենայնիվ գնաց նա ժողովրդյան մեջ ու սովորցրեց աստվածը։ Սովորցրեց գիտենալ և գիտենալու համար էլ ուսանել՝ այսինքն կասկածել, զննել, վերլուծել ու բաղադրել։ Սովորցրեց լինել անկեղծ ու համեստ, սովորցրեց ո՛չ թե վախենալ աստծուց, այլ սիրել նրան, ո՛չ թե նրան ստրուկ համարվել, այլ որդի, ոչ թե պատիժ մտածել, այլ վարձատրություն և ձգտել նմանվելու այն երևակայական մարդ-տիպարին,

որ հրեշտակ է կոչվում և որին իսկապես գուցե նման դառնա ապագա մարդը նույնիսկ ֆիզիկապես, այսինքն մի գլուխ և մի զույգ թևեր՝ նրանցով սրանալ-կտրել թափանցելու համար անհասկանալի, հեռավոր և ծայրագույն նպատակը։ Սովորցրեց հրեշտակ լինել այդպես։

Եվ քարոզեց նա ա՛յդ կրոնը։ Մի կրոն, որի միջից դուրս նետեց կեղծիքն ու ստրկությունը, վախն ու պատիժը, չարիքն ու լրբությունը, պատվարն ու մտավախությունը։ Մի կրոն, որի տաճարը բնությունն էր, Ս. գիրքը՝ բնության օրենքները, սեղանը՝ գիտակցությունը և պատարագը՝ գործունեությունը...

Ու մարդիկ լսում էին նրան ապշած, սրտի խորքից վրդովված ճշմարտության զուտ խոսքերով, անկեղծ ցուցմունքներով։

Եվ երբ անցնում էր նա երկիրներից, ուսուցանում էր փարիսեցիների դեմ, սովորեցնում պարզություն ու սեր, գիտակցություն և քննադատություն... հանկարծ, մոլլայական ամբողջ դասակարգը, կատաղած այդ «հերետիկոսի», հերձվածողի, խռովարարի և աղանդավորի դեմ, մի օր, երբ նա ոգևորված սրաթռիչ երազներով, ապագա մաքուր և երջանիկ կյանքի մասին էր խոսում, բռնեցին ու տարան բանտ։

Բանտի մեջ իմաստունը բավական երազեց. բայց երբ դուրս եկավ իր էքստազային վիճակից և հանգստացավ, սկսեց խորհրդածել իր դրության մասին։ Ինչո՞ւ էին բռնել իրեն, ինչո՞ւ բանտարկել։ Որովհետև նա գործել էր կեղծության դեմ և գործել էր համարձակ ու անվախ, համոզված լինելով, որ այդ էր միակ ճանապարհը դեպի կատարյալը ելնելու, դեպի բարձր ձգտելու... Ա՜խ, որքան խոր կերպով վարժ էր կեղծիքի՝ աշխարհն ու մարդկությունը, մինչև իսկ վարժ՝ կեղծիքն իբր անկեղծություն ընդունելու և ապշել էր, հուզվել, երբ լսել էր նրա քարոզած որոշ անգույն ու անդիմակ ճշմարտությունները։

Եվ այն դասակարգը, որ դարերից ի վեր հեղաշրջել էր անկեղծությունը՝ կեղծության, պարզ ճշմարտությունը խեղդել էր բարդ ստությունների մեջ — այդ դասակարգը, զգալով վերանորոգչին՝ ուզեցել էր ազատվել նրանից։

Անշուշտ այդպես էր, որ բռնել էին Նազովրեցուն, դրա համար էր, որ խաչել էին նրան — ստության ու կեղծիքի դեմ քարոզող և անկեղծության ու ճշմարտության մեծ զոհին։ Եվ անշուշտ, Նազովրեցին, երբ գնում էր դեպի խաչը, նույնն էր մտածել. խորհել էր, որ խաչվում էր հանուն ճշմարտության, հանուն ամենակատարյալի...

Անցել էին դարեր, շա՛տ շատերը նույն կերպով խաչվել էին ու տանջվել, որովհետև ցեխի կույտի միջից համարձակվել էին դեմ ելնել այն

յոթնագլխյան հիդրային, որ կեղծության կրակի մեջ սպանում է ամբողջ մարդկությունը...

Այդպես էր խորհում իմաստունը՝ նստած իր բանտի խոնավ հատակի վրա, երբ դուռը ճռճռաց, երևաց մի աղոտ լույս. և մի ծերունի առաջ եկավ դեպի նա։

Հավատացյալների մեծ կրոնապետն էր՝ լապտերը ձեռին, տխուր, դժգույն և դողդոջուն։

Երբ մոտեցավ, երկուսն էլ իրար նայեցին։ Երկար ժամանակ էր անցել միմյանց տեսնելուց ի վեր, և կրոնապետը խիստ ծերացել էր, գրեթե զառամել։

— Ողջույն, ծերունի,— խոսեց իմաստունը,— քեզ երկրորդ անգամն է տեսնում եմ. տարիքիցդ առաջ ծերացել ես։

Նստեց ծերունին գետնի վրա, իմաստունի կողքին ու դողդոջուն ձայնով ասաց.

— Ես ծերացել եմ, այո, ով իմաստուն. իսկ դո՞ւ... դու երիտասարդացել ես։ Տեսնում եմ աչքերիդ մեջ այն կրակը, որը չի՛ մարում բանտի խավարի մեջ իսկ և որ լույս է սփռում այնտեղի խորշերում. այն կրակը, որ գոյանում է խորին համոզմունքով և անկեղծությամբ հավատացած իդեալի գոյությունից։ Դու հավատացել ես. անկեղծությամբ հավատացել նպատակին, քո բոլոր կյանքի մեջ կեղծություն չես դրել, գործունեությանդ մեջ ստություն չես ամփոփել և դա քեզ կյանք է տվել... Չգիտես, իմաստուն, թե որքա՞ն է մաշում մարդուս՝ գիտակցական կեղծիքն ու ստությունը, երբ մարդ գիտե, որ կեղծում է, գիտե, որ ստում է և այնուամենայնիվ ստիպված է կեղծել ու ստել։ Գիտես, որ խաբեբայություն է այսինչը կամ այնինչը, և ստիպված ես կյանքիդ ընթացքում կատարել նրան ու մինչև իսկ զգույշ լինել չսխալվելու, կատարել ու պնդել նրան, պնդել ու քեզ համոզված ձևացնել նրա ճշմարիտ լինելու մեջ... Չգիտեմ, որդի, դու իմ հասկանո՞ւմ ես, թե ոչ...

Իմաստունը ծնոտը ձեռքերի մեջ առավ, նայեց դժգույն ալևորին և պատասխանեց.

— Քեզ ես հասկանում եմ... Չե՞ս եկել արդյոք իմ տեղը խնդրելու, իմ շղթաներին ընկերակցելու...

— Այո՛, հասկացար ինձ... օրհնյալ լինես... այո՛, շատ ապրեցի մաշող ստության փառքի մեջ, երանի թե կարողանայի մեռնել գոնե մաքուր ճշմարտության շղթաների տակ...

Ու երկուսն էլ լուռ, երկուսն էլ վշտալից էին։ Մեկն իր վշտով մյուսն իր նմանի տանջանքով։

Վերջապես իմաստունը ոտքի ելավ, դարձավ կուչ եկած ծերունուն և ասաց տխրությամբ.

— Ե՛տ առ ուրեմն խրատդ, հավատացյալների պետ, որովհետև նրան ինձ տալու ժամանակ իսկ՝ դու լավ գիտեիր, որ կամ հարկավոր էր շղթա վաստակել և կամ կեղծել... Ես չկեղծեցի. նվիրեցի ինձ ամենակատարյալի, պատվար դրի անհունության մեջ մոլորվող իմ խորհրդածության, կասկածի և վարանման առաջ, ծառայեցի ո՛չ թե իմ մարմնի գոհացման, այլ հոգեկան բարձրության՝ հասկանալու համար, և տեսա, որ հոգեկան անգոհությունը խենթություն, հիվանդություն է համարվում... «Կեր, խմիր, զվարճացիր միշտ,— ասում էին ինձ,— և ո՛չ կխորհես, ո՛չ մտային խորհրդածական տանջանք կունենաս, ո՛չ կկասկածես և ո՛չ էլ մտային սլացումների կձգտես»... Դու ինձ սխալ ճանապարհի վրա դրիր, ծերունի։

Ու թոթափեց իրեն իմաստունը. և նորից փնտրողության անհատակ վիհ գոյացավ նրա մտածողության մեջ։ Նորից ձգտումն դեպի ծայրագույն նպատակի ըմբռնողությունը, նորից հարցական մեծ նշան, էնիգմա, նորից կասկած...

Ու մի րոպեի մեջ մարեց նրա աչքերի կայծը, կնճռոտվեց նրա ճակատը։ Եվ նա տխուր էր, հուսահատ։ Ինչո՞ւ այդ բոլորը, դեպի ո՞ւր և դեպի ի՞նչ նպատակի էր ձգտում տիեզերային հորձանքը, այդ բոլոր թե՛ կեղծ, թե՛ անկեղծ, թե՛ սուտ և թե՛ ճշմարիտ մոլեգին շարժումը, առաջադիմությունը, եռանդագին պտույտը...

Եվ թե ինչո՞ւ էր թաքնվում նա՝ որին ձգտում էր ամեն ինչ. ի՞նչն էր նրան ծածկում, անհասկանալի դարձնում...

3

Նրան ազատեցին բանտից։ Մեծ կրոնապետը հազիվ կարողացավ հանել կրոնավորության ճիրաններից՝ խենթ հռչակելով միայն։

Ու գնաց իմաստունը գլխիկոր, շվարած։ Ամեն ինչ այլևս կեղծ էր թվում նրան։ Նա ականատես էր եղել ավազակների, որոնք տաճարների դռներն էին համբուրում և բարեպաշտ հռչակվում. հարստահարողների, որոնք աստուծո սեղանի կանթեղի մեջ յուղ էին լցնում, և մոլլաների, որոնք այդ բոլոր խաբեբաներին ու կեղեքիչներին օրհնում էին, նրանց բարեպաշտությունը հռչակելով և աստուծո պաշտամունքը նրանց ծառայեցնելով...

Եվ տեսել էր նա, որ ժողովուրդն ամբողջ գոհ էր այդ փոխադարձ, սիստեմատիկական կեղծիքով, գոհ՝ խաբեության մեջ, սովոր նրան,

շնչում էր նրանով, մեծացել էր ու սնվել նրա մեջ, ու ճշմարտությունը մարսափեցնում էր նրանց, անկեղծությունը մահացնում...

— Այս ժողովուրդը ո՛չ թե օդ է շնչում, այլ կեղծիք և սուտ,— ասաց իմաստունը և գնաց դեպի անապատ, հեռու ամբոխից, զզված նրա կեղտերից։

Երկար նա քայլեց, շատ երկար. վայելեց անապատի միայնությունը, որոնեց, խորհեց, օրերով իրեն նվիրեց խնդրի լուծումը գտնելուն, բայց քանի խորհրդածում էր, քանի վերլուծում, քանի որոնում էր, քանի հարցը քրքրում, այն էր զգում, որ ոչինչ չէ գտնում ու ոչինչ չէր գտնելու...

Եվ մի օր, երբ աննպատակ քայլում էր ամայի տեղերում, դեմառդեմ եկավ մի քարավանի, որ իջել արմավենիների տակ՝ հանգչում էր։ Երկու աղաներ էին, 5—6 ծառաներ։ Տերերից մեկը, որ մի պատկառելի ծերունի էր, հրավիրեց իմաստունին մոտ գնալ, նստել իրենց սեղանի մոտ և հանգստանալ զովացուցիչ ըմպելիներով։

Ու երբ զովացրել ու կշտացրել էր նրան, այսպես ասաց.

— Ներիր, դերվիշ, եթե հարց տամ քեզ, թե ինչո՞ւ համար ժամանակդ անց ես կացնում՝ թափառելով այս անապատի մեջ. արդյոք կարծում ես, թե աստված ամայի տեղերի մե՞ջն է, և դու նրան կգտնես աղոթքներով ու ճգնությա՞մբ. կամ արդյոք կյանքը քեզ համար այլևս ոչինչ չարժե, և դու կյանքի համար ոչ մի օգուտ չունես. թե՞ արդյոք դու մի հուսահատ մարդ ես, որ ոչ մի նպատակ չունի և ապրում է մինչև մեռնելը՝ աննպատակ ու անտարբեր...

Իմաստունը, որ լսում էր ծերունուն, դառն ժպիտ դեմքին՝ թողեց, որ նա վերջացներ և ապա պատասխանեց.

— Իսկ դու, ծերունի,— ասաց նա,— դու, որ կյանքը տեսել ես և երկար վայելել, ասա ինձ, ունե՞ս նպատակ և եթե ունես, ո՞րն է այդ վերջնականապես ինչի՞ ես ձգտում, ի՞նչ է քո ապրելու, գոյության նպատակը...

Ու նրա աչքերի մեջ փայլեց գիտենալու և իմանալու փափագի մի այնպիսի բուռն կրակ, որ նրան լսողները վախեցան։ Վախեցան այդ ահավոր և խորին փափագից, այն անհագ ու անվերջ ցանկության անշեջ կրակից։

— Ասա ինձ,— շարունակեց իմաստունը,— դու, որ կարծում ես, թե միայնության ու ինքնամոռացության մեջ չէ նաև երջանիկ անցիտության ապավենը, դու, որ մղում ես ինձ նետվելու կյանքի մեջ, կարծո՞ւմ ես, թե կարող ես ցույց տալ ինձ ծայրագույն նպատակը և նրան դնալու ուղիղ ճանապարհը... խոսի՛ր։

Բայց ծերունին շփեց մորուքը և փոխանակ ոգևորվելու, փոխանակ քաջությամբ պատասխանելու և վառված գիտակցության կրակով՝ անհույս իմաստունին ուսուցանելու — կորացրեց գլուխը և մեղմ, խուլ ձայնով ասաց.

— Մեծ և խոր, անհուն է և անսահմանափակ քո փափագը, դերվիշ, և իմ գիտցած, իմ գտած նպատակը շա՜տ փոքրիկ է, շա՜տ չնչին դրա համեմատությամբ...

— Ա՜հ, այդպե՞ս,— բացականչեց իմաստունը,— ուրեմն դո՞ւ էլ բավականացել ես միջոցներից մեկը ընտրելով իբր նպատակ. քեզ խաբել ես և նրանով ոգևորվել, մտածությանդ անհունությունը պատվարել ու փոքրիկով գոհ եղել։ Ասա տեսնենք բայց, ո՞րն է գոնե ա՛յդ միջոցը, որին դու նպատակ ես անվանել։ Աստծուն նվիրե՞ն արդյոք. գնալ կեղծիքի մեջ փառքի, կամ ճշմարտությունով խենթության անվան և շղթայի՞ արժանանալ. հանուն Մեծ-անհայտի խաբե՞լ, ստե՞լ և ստության մեջ ընկղմելով շրջապատդ՝ օգտվե՞լ նրա կուրությունից և մարմինդ պարարել ու ճարպացնե՞լ և կամ այնքան խաբել, որ խաբեությունը նվիրագործելով իբր ճշմարտությո՞ւն համարել... Օ՜, դրանք ես տեսա, փորձեցի և գտա, որ մեծ նպատակը, վերջին, ծայրագույն նպատակը խուսափում է, թաքնվում մեզնից, որովհետև մի բան արգելք է դառնում մեզ հասկանալու, գիտենալու նրան...

Երկրորդ տերը, որ մի երիտասարդ էր, սակայն բովված ու փորձված դիմագծերով և որ լռությամբ լսում էր իմաստունին, հանկարծ մի թեթև շարժում գործեց, ընդհատեց նրան և ասաց.

— Մի խո՛սք, դերվի՛շ։

Նրա ձայնը մեղմ էր, բայց խոր և թափանցող. իմաստունը կանգ առավ և լսեց։ Այն ժամանակ երիտասարդը, ճակատն ակոսած մտախոհական կնճիռներով, խոսեց ծանրությամբ.

— Իսկ այժմ,— ասաց նա,— ասա՛ ինձ, ով իմաստուն, որոնող ու անհագ դերվիշ, ասա՛, դու, որ տանջվում ես այդքան՝ չգտնելով, թե ո՞ւր է գնում այս բոլորը, կարո՞ղ ես ասել գոնե, թե որտեղի՞ց է եկել նա, ինչից գոյացել և թե վերջապես ինչպե՞ս, ինչո՞ւ և որտեղից է էություն ստացել առաջին հյուլեն...

Իմաստունը մի քիչ լռությամբ նայեց երիտասարդին, հետո ձեռքը նրա ուսին դրավ և ասաց.

— Տանջվի՛ր, երիտասարդ ընկեր, տանջվիր դու էլ. երկուսիս հարցը նույնն է, երկուսս էլ դեպի նույն անըմբռնելի նպատակն ենք գնում, չնայելով, որ դու փնտրում ես ծագումը, իսկ ես՝ վերջը։ Բայց երկու ծայրերը մոտենում են իրար. ամեն ինչ ինձ թվում է, որ կլոր է բնու-

թյան մեջ, նյութ կամ մտածություն. եթե վերջը փնտրես՝ ծայրին ես հասնելու, ծայր ու վերջ՝ միևնույն կետից են բաժանվում և միմյանց հասնելու, ծայր ու վերջ՝ միևնույն կետից են բաժանվում և միմյանց հակառակ գնում։ Ամեն ինչ պտույտ է գործում, մի անհուն, անըմբռնելի պտույտ, որի մեջ ո՛չ ծայր է երևում, ո՛չ վերջ, ո՛չ սկիզբ, ո՛չ վախճան, այլ միայն անսկիզբ ծագում, անվախճան տևողություն... Բայց ինչո՞ւ այդ, ի՞նչ մի վերջնական նպատակի համար— ահա այդ է գլխավոր առեղծվածը, մի՛ փնտրիր սկիզբ— չես գտնելու —այլ փնտրենք քեզ հետ, թե այդ պտույտը ինչո՞ւ է գործվում, ի՞նչ մի ծայրագույն նպատակի համար...

— Դու բնազանցագետ (մետաֆիզիկ) ես,— ասաց երիտասարդը բարձրանալով,— և քանի փնտրես, այնքան պիտի խորասուզվես առեղծվածների, անհասկանալի ու բնազանցական եթերի մեջ և ոչինչ չես գտնելու, ոչինչ իմանալու... որովհետև բնությունից դուրս ես գնում։

— Իսկ դո՞ւ,— ժպտաց իմաստունը,— դու, որ բնագետ ես, կարծում ես քանի փնտրես, այնքա՞ն պիտի լուծես բնության գաղտնիքները և հասկանալի եթերի մեջ մի բան գտնե՞ս, մի բան իմանա՞ս։ Դու կարծում ես, որ պիտի հասկանաս, որովհետև բնությունից դուրս չե՞ս գնում...

— Ինձ թվում է, որ,— ասաց երիտասարդը,— բնությունը դեռ շատ և շատ գաղտնիքներ ունի իր մեջ՝ զբաղեցնելու արարածներին հավիտենապես և ժամանակ չտալու, որ նոքա դուրս գան անհունության մեջ՝ մտացածին բաներով զբաղվելու։ Ճանաչե՞լ ես, օրինակ, հենց այն աշխարհը, որի վրա կյանք ես վարում, այն օրենքները, որոնք այդ աշխարհն են կառավարում, փոփոխության ենթարկում, նրա արարածների վրա ազդում, աճեցնում, մեռցնում, ձևափոխում և կերպարանափոխում... Ճանաչե՞լ ես այն հողը, որի ծնունդն ենք մենք, առանց որի չենք կարող ապրել մենք և որի մեջ ենք վերադառնալու մենք. այն բազմաթիվ տարրերը, որոնցից բաղկացել ենք մենք և որոնցից առնված լինելով, պիտի էլի լուծվենք ու նրանց խառնվենք. ճանաչե՞լ ես այն վերի պսպղուն աշխարհները, այն արևը, որոնք փոխադարձ ազդեցությունով երաշխավորել են տալիս մեր անհունապես միմյանցից կատարելագործված մոլորակների և նրանց վրա գտնվող միմյանցից կատարյալ օրգանական կյանքի մասին... ճանաչե՞լ ես նույնիսկ այն նյութը, որից առաջացել են տարրերը՝ քիմիական դեռևս շատ խորհրդավոր պրոցեսներով, և որը իր անընդհատ շարժողությամբ, անընդհատ կերպարանափոխությամբ, ով գիտե, ապագայում քանի՞ հարյուրավոր տարրեր, քանի՞ հազարավոր քիմիական բաղադրություններ և հետևապես քանի՞ միլիոնավոր տեսակ էակներ կլեցնի բնության մեջ. այն նյութը, որ մայր է ամեն ինչի... ճանաչե՞լ ես այդ բոլորը, որ թողած դրանք, որոնում ես, թե ինչո՞ւ է թաքնվում այդ նպատակը։ Այդպես չէ, իմաստուն։ Արարչին կամ արարչագործության նպատակը ճանաչելու համար ամենից առաջ հարկավոր է լավ ճանաչել արարածը. հենց որ լավ և կատարելապես ճանաչեցինք արարածին, նպատակը, ինչ որ էլ լիներ նա, ճանաչելի է դառնալու։ Եթե լավ ճանաչենք նյութը և նրա բոլոր հատկությունները, պիտի կարողանանք ուրեմն ճանաչել և նրա ուժը... Արդ, չե՞ս գտնում, ով իմաստուն, որ մի անգամ նյութը և ուժը գտնված ու ճանաչված, կարող է իսկույն ճանաչվել նաև նրա ձգտման, շարժման նպատակը...

Ճանաչել նյութը, այսինքն մեզ շրապատող իրերը, ճանաչել նրանց էությունը և կազմությունը, ապա նրանց էության ու կազմության ուժը —ահա միակ միջոցը՝ ըմբռնելու համար այն նպատակը, որ մնում է անըմբռնելի... բայց թե ե՞րբ կլինի այդ, էակների ո՞ր երջանիկ տեսակի ժամանակ, քանի՞ միլիոն դարեր հետո —չգիտեմ։ Ես փնտրում եմ, տանջվելով փնտրում, հաճախ հուսահատվում եմ, սակայն փնտրում եմ ու միշտ փնտրում. ես հետևում եմ այն արհեստին, որի գործը փնտրելն է, ես հետևում եմ գիտության, աշխատում եմ իմ շրջապատողներիս էլ նրան հետևողներ դարձնել և հավատում եմ, որ դա՛ է՛ այն միակ ճանապարհը, որ մարդկությանը պիտի հասցնե հասկանալու կետին...

Ու լռեց։ Նրա տանջված դեմքը պարզվել էր, և ոգևորությունը գծվել ճակատի վրա, չնայելով, որ գիտեր, թե ինքը իր համար ոչինչ չէր փնտրում, որ ինքն իր համար չէր ոգևորվում և որ իր բոլոր ուժն ու միտքը ծառայեցնում էր միմիայն ապագային, երբ իրենից ոչինչ չէր մնալու այլևս, եթե ոչ մի աննյութ էություն —մտային արտադրության մի հյուլե...

Իմաստունը, որ նայում էր երիտասարդ իդեալիստին և լսում նրա ոգևորված խոսքերը, թողեց, որ մի քանի րոպե խոր լռության մեջ միայն ծառերի տերևները սոսափեն, թռչունները ճլվլան, հետո մտախոհ գլուխը բարձրացրեց ու ասաց.

— Այո, երիտասարդ գիտուն, որ բնությունն ես ուզում ուսումնասիրել և գիտությունն ես համարում ծայրագույն նպատակը ըմբռնելու միակ միջոցը, այո, դու շատ կետերում իրավունք ունես. բայց իրավունք չունես արհամարհելու այն բուռն փափագը, որ ձգտում է որոնելու արարածի գոյության իրավունքը՝ մտածության ճանապարհով, և որ գիտության մեջ չէ գտնում ծայրագույն նպատակը ճանաչելու ճանապարհը...

— Ծայրագույն նպատա՞կ,— միջահատեց նրան երիտասարդ բնագետը,— ո՛չ, ես չեմ արհամարհում այդպիսի որոնողների ջանքը, այլ

անհետևանք աշխատություն միայն համարում... Ծայրագույն նպատակը, «վերջնական» կետը գտնելու համար նախ պիտի համոզվել, որ կա նա... Կա՞ նա. և եթե չկա, կարելի՞ է, որ չլինի։ Հասկանալի՞ է այդ ոչ-էությունը... Օ՜, դրա համար հսկայավոր կլինի ապրել այնքան, որքան գոյություն կունենա նյութը, այսինքն ապրել անվերջ, զննել ու դիտել անվերջ, տենչալ, սովորել և... տանջվել...

— Գիտենալով, որ միշտ տգետ ես, միշտ ոչինչ չգիտես և չես կարող գիտենալ...— ավելացրեց իմաստունը տխրության խոր շեշտով և ծանրացած գլուխը խոնարհեցրեց կրծքի վրա։

Ծերունի ճանապարհորդը այն ժամանակ շարժվեց և խոսեց այսպես.

— Լսեցեք այժմ, թե ինչ կխրատե երկուսիդ էլ մի ծերունի, որ ավելի երկար է ապրել, քան դուք, ավելի երկար է տանջվել, քան երկուսդ... Լինելով երկրի ծնունդ, մնացեք երկրի վրա, ու թող ձեր մտածությունն ու որոնելու տենչանքը թափառեն այնտեղ, ուր դեռ շատ և շատ բան կա ուսումնասիրելու, զննելու... Բոլոր երևույթները գոյանում են որոշ օրենքների մի շղթայից, որի միայն մի քանի օղակն է մեզ ծանոթ. օրենքների մի շղթայից, որի մի ծայրը երկրիս վրա է և մյուսը կորսվում է անհունության մեջ։ Եթե ուզում եք տեսնել նրա վերջին կետը, ցատկել անհնար է, գնացեք օղակ առ օղակ. թող ձեր միտքը որոնե օղակների հաջորդական շարքը և նրանց վրայից, որպես աստիճաններով՝ թող բարձրանա դեպի կատարյալը։ Մի ոստնեք. ուսումնասիրեցեք երկիրը, որի ծնունդն ենք մենք, ուսումնասիրեցեք մարդկությունը։ Մաքրեցեք նրա ուղին, նվիրվեցեք միմյանց օգնելու, միմյանց բարձրացնելու գործին և այդպես միահամուռ ուժով որոնեցեք իմաստությունն ու ճշմարտությունը... Նվիրվեցեք ձեր նմանների բարելավության, բարձրանալու գործին— ահա այն միակ միջոցը, որ պիտի տանի ձեզ հասկանալու կետին... Եվ օրհնյալ լինեք դուք ձեր անհագ, որոնող ձգտումներով, օրհնյալ լինի նաև նա, որ այդպես կորհնի ձեզ...

Ասաց պատկառելի ծերը ու, թիկն տալով բարձերին, ակնարկը սևեռեց անապատի անհունության։

Ամեն ինչ լուռ էր շրջակայքում. տերևներն իսկ չէին սոսափում, քամին հեռվում, հորիզոնի վրա ավազի ծուռումռռ սյունակներ էր հորինում և դեպի օդը տարածում. իսկ արևը կռացած՝ արնագույն շողք էր սփռում ավազի անծայրածիր տարածության վրա...

Այդ միջոցին էր, այդպիսի խոր լռության մեջ, որ հանկարծ մի ահեղ մռնչյուն թնդացրեց օազիսն ու անապատը։ Ձիերը խրխնջացին, ծառերի տերևների տակ թառած թռչունները ճչացին, և օազիսի խորքերից հասնող այդ կատաղի մռնչյունին հետևեց մի մարդկային երկար սրտապատառ աղաղակ, ապա մի քանի հրացանաձգություն։

— Մի դժբախտություն... —գոչեց երիտասարդը, վազելով ձայնի կողմը,— առյուծի մռնչյուն էր դա։

Եվ աշխույժով դեմ գնաց դեպի նրան եկող ծառան։

Օազիսի խորքում, ծառերի հովանու տակ, կար մի խոր ընկած աղբյուր։ Անապատի բնակիչները գիտեն, որ այդպիսի աղբյուրների մոտ հավաքվում են երբեմն անապատի գազանները, իրենց ծարավը հագեցնելու կամ պարզապես զովություն ունենալու համար. և երբ երեք ծառաներ լավ զինված՝ իջել էին ջուր վերցնելու, աղբյուրի մեջ գտնվող մի վիթխարի առյուծ հարձակվել էր նրանց վրա, տապալել մեկին, ճանկերը մղել նրա մեջքի մեջ և անշուշտ պիտի պատառոտեր, եթե մյուսները չաղաղակեին և գնդակ չտեղային նրա վրա։ Մի քանի գնդակ թիկունքում՝ առյուծը դուրս էր ցատկել և անհետացել՝ թողնելով իր զոհին գետնի վրա արյունաշաղախ։

Հազիվ թե ծառան պատմել էր այդ, որ երիտասարդ բնագետը արագությամբ դարձավ իրենց նստած տեղը, կորզեց մի փոքրիկ արկղ և գոչեց ծառային.

— Շուտ առաջնորդիր ինձ դեպի վիրավորը։

Եվ երեք ճանապարհորդները գրեթե վազելով իջան աղբյուրի խորքը։ Այնտեղ, գետնի վրա տարածել էին վիրավորին և մի քանի ծառաներ, հանած նրա շորերը, վերքն էին լվանում։

— Շատ լավ եք արել,— ասաց երիտասարդը,— մնացածը թողեք ինձ։

Հետո չոքեց վիրավորի մոտ, ափով ջուր հանեց աղբյուրից, շարունակեց խնամքով լվալ, արկղիկից դուրս բերեց դեղեր, դադարեցրեց արյունհոսությունը, կապեց-փաթաթեց վերքը, և երբ վերցրին վիրավորին վրանը տանելու, գնաց նրա ետևից ու նստեց սնարի մոտ։

Ու մոռացավ այնուհետև հորը, իմաստունին և ուշադրությունը կենտրոնացրեց միմիայն վիրավորի վրա։ Եվ նրա դեմքը արտահայտում էր խնամքոտ հոգատարություն. ճակատի վրա ակոս կազմեցին արգահատական խորշոմներ, և նա, բժշկական մի գիրք բաց արած, կարդում էր, նորից կրկնում այդպիսի վերքեր դարմանելու խրատները։

Միայն երբ ծերունի հայրը հարցրեց, թե ինչպես կլիներ հիվանդը, պատասխանեց.

— Վտանգավոր է, եթե տաքությունը բարձրանա...

Եվ այլևս չնայեց նրանց. մոռացավ նրանց գոյությունը։

Այն ժամանակ ծերունին դարձավ իմաստունին և ասաց.

— Գնանք այլևս, մենք ավելորդ ենք այստեղ, քանի որ ոչնչով չենք կարող օգնել վիրավորին։

— Իսկ երիտասա՞րդը։

— Այլևս նրան ոչ ոք չի կարող պոկ տալ հիվանդի սնարից, մինչև որ ապահով չլինի, թե կամ պիտի ազատի նրան, կամ ձեռք քաշի։ Դա է նրա պարտքը...

Ու դուրս գնացին։ Իմաստունը հուզված էր, սրտի մինչև խորքը հուզված։ Չխոսեց նա այլևս ո՛չ մի բառ։ Գիշերը անցկացրեց մի արմավենու տակ՝ փռված մեջքի վրա և անհունության մեջ պլպլացող աստղերը դիտելով ու երիտասարդ բժշկի արածի վրա մտածելով։

Երկու անգամ, կեսգիշերից անց, գնաց նա վիրավորի վրանը և գտավ երիտասարդին միշտ նստած, արթուն, հոգատար և ուշադրությամբ հեռուստող վիրավորի քնելուն, շարժումներին և հիվանդության ընթացքին։

Չհամարձակվեց խոսել և ո՛չ մի բառ։ Երկրորդ անգամին բժիշկը գլուխը բարձրացրեց, նայեց իմաստունին մի վայրկյան, ժպտաց և ասաց.

— Պիտի ազատեմ սրան...

Եվ ազատեց։ Մյուս առավոտ դուրս եկավ նա վիրավորի վրանից զվարթ դեմքով, բայց հոգնած և, երբ տեսավ ընկերներին, ասաց ուրախությամբ.

— Ազատված է...

Ապա ժպտաց երջանկությամբ, ընկավ անկողնի վրա և քնեց։

Այն ժամանակ ելավ իմաստունը, երկար զննեց երիտասարդ իդեալիստի երանավետ դեմքը, մի նշանավոր գործ տեսնելուց հետո հանգիստ ու երջանիկ քնողի դիմագծերը, բարևեց ծերունուն և առավ իր գավազանը։

— Գնո՞ւմ ես, իմաստո՛ւն,— հարցրեց նրան ծերունին,— ի՞նչ անելու ես գնում, նորի՞ց թափառելու և միայնության, անապատի և կամ գլխի մեջ ճշմարտություն ու նպատակ որոնելու...

Իմաստունը դարձավ, մի բոպե կանգ առավ և ասաց.

— Ո՛չ, ծերունի, գնում եմ մարդկանց մեջ և պիտի փորձեմ իմ նմանների վշտերը ամոքելու միջոցը գործադրել. գուցե ա՛յդ է այն ճանապարհը, որ ես որոնում եմ. գուցե դրա մեջ գտնեմ մխիթարություն, գոհացումն և կամ գուցե այդպիսի վսեմ շրջափակով կարողանամ փակել նպատակախույզ խորհրդածության անդունդը։

— Օրհնյալ լինես,— բարձրացրեց ձեռքը նրա վրա ծերունին,— իմաստությունը քեզ հետ, գնա՛, նվիրվիր քո նմաններին, սփոփի՛ր նրանց վշտերը, և թող քո իսկ տանջանքը թեթևանա դրանով։

Նվիրվել իր նմանին...

Արդյոք այդ նվիրվելը պիտի հասկացնե՞ր նրան, ավելի գիտակցական ու ավելի՞ բարձր մտային մթնոլորտի հասցներ և արդյոք դա՞ պիտի լիներ փնտրածը գտնելու ճանապարհը։

Եվ ինչպե՞ս նվիրվել։

— Չգնա՞լ-գտնել թշվառին, հասկանալ նրա թշվառության պատճառը, կռվել այդ պատճառի դեմ, վերացնել նրան։

Չգնա՞լ-գտնել զրկվածին, փնտրել-ճանաչել զրկողին և ոչնչացնել նրա զենքը։

Չգնա՞լ-տեսնել հարստահարվածին, մարտ մղել հարստահարողների դեմ, թիկունք դառնալ ընկճվածին, բարձրացնել ընկածին, գիտուն դարձնել տգետին, լույս տալ խավարամտին, հանել ցեխի մեջ ապրողին, բուժել վիրավորվածին...

Եվ կամ չկռվե՞լ արդյոք զրկողի, մարտնչել բռնավորի, ճակատ տալ մահվան դեմ և ազատել մանուկին տգիտությունից ու կեղտից, խլվողին՝ խլողից, վիրավորվածներին՝ վիրավորողների ճիրաններից...

Եվ գնաց նա, շատ տարիներ զոհեց գիտություն ուսանելու, հետո մտավ թշվառների, ցավագարների մեջ։ Մեկին մխիթարեց, քաջալերեց, բողոքելու հորդորեց, մյուսին դարմանեց, վերքերն սփոփեց...

Այնքա՛ն էր զբաղմունքը և այնքա՛ն էին մարդկային վշտերը, որ մոռացավ ամեն բան, նվիրվեց միայն դրան։

Բայց ցավերն ու զրկանքները ավելանում էին, աճում ու բազմանում. շատանում էր թշվառների թիվը, կուտակվում էին զրկվածներն ու անտիրությունից, կեղտի, տգիտության մեջ վիրալից՝ մեռնում էին. և իմաստունի ջանքերը, այդ բոլորից գոնե մի՛ հյուլեի դեմն առնելու՝ ապարդյուն էին անցնում։ Հարստահարությունն ու անիրավությունը հեղեղ էր դառնում և մարդկությունը կլանում։

Եվ նա տեսավ, որ մարդկության մի փոքրիկ մասը ապրում էր մյուս մեծ մասին կլանելով, գոփել-գչլելով. գտավ, որ այդ մեծ մասը այնքա՛ն հարվածված, այնքա՛ն ստրկացած է, որ ոչխարի պես տանում է թշվառությունը, ճանճերի պես կոտորվում, իր վաստակը ուրիշին տալիս և չի տրտնջում, չի բողոքում, այլ իր որդիներին իսկ հանձնում է որպես նրանց գործակից...

Եվ զայրացավ իմաստունը արդար բարկությամբ, աստվածային կրակով վառված դեն ձգեց իր ամոքիչ, շատ չնչին օգուտ տվող բոլոր դարմանները, պարզեց իր երկար հասակը, առաջ անցավ, ճշմարիտ

գիտությունն ու անկեղծությունը որպես դևիզ գրեց իր դրոշակի վրա ու մտավ հալածված ու հարստահարված ամբոխի մեջ։ Հարվածեց աջ ու ահյակ թառած անգղերի, որոնք կրծում են մարդկության սիրտը, սարդերի, որոնք ծծում են ընկերության հյութը, գործողի վաստակը և որոնք ճարպացած՝ պաշարել են ընկերության առաջադիմության ճանապարհը։

Հարվածեց նա մարդուս ցավեր հասցնող, մահացնող պարազիտների, մատը դրեց այն վշտերի և վերքերի վրա, որոնք ավելի շատ գոյանում են եղբոր կողմից, քան օտարի, և նա զայրույթով գոռաց որ ո՛չ թե ուրիշ արարած է մարդուն թշվառացնում, այլ մարդն է մարդուն ուտում, հոշոտում, պատառոտում և հարստահարում, և որ, եթե այդ չլիներ, մարդկությունը վաղուց ի վեր ազատված կլիներ գազանների կամ այլ արարածների հարվածներից, տիրապետած կլիներ բնության երևույթներին, ըմբռնած կլիներ նրա շատ գաղտնիքները և իր ճակատագրի տերը եղած։

Գոռաց ու գոչեց նա համարձակ, որ տգիտությունն ու խավարը, վիշտն ու թշվառությունը մարդուս համար գոյացնում է ի՛ր ընկերը, ի՛ր դրացին, ի՛ր եղբայրը, և որ այդ եղբայրասպան, եղբայրադավ վարմունքն է միակ պատճառը բոլոր կեղտերի, անիրավությունների և թշվառությունների...

Բայց նրան ծաղրեցին, նրա «միամտության» վրա ծիծաղեցին, անձնանվիրությանն էլ «խենթություն» անունը դրին։

— Ինչի՞ դեմ ես կռվում,— ասացին նրան,— չէ՞ որ գոյության կռիվը անհրաժեշտ պայման է առաջադիմության, կատարելագործության, իսկ գոյության կռիվը ունի այդպիսի հետևանքներ. ուրեմն և այդ բոլորը բնական է։

— Մի՞թե այդ բոլորը բնական է,— աղաղակեց նա,— մի՞թե աշխատանքը կեղծության ու անիրավության պետք ունի, մարդկությունը ստության ու միմյանց պատառոտելու պահանջ՝ որպեսզի գոյություն ունենա, առաջադիմի...

— Այո՛,— պատասխանեցին նրան,— արարածները միմյանց ուտելով գոյություն ունեն, եղբայրները միմյանց զրկելով են աճում, իսկ այդ անելու համար հարկավոր է կեղծություն, սուտ և անիրավություն...

— Մի՞թե ես մոլորված եմ,— մտածեց նա հուսահատաբար,— մի՞թե դարձյալ խաբվեցի...

Եվ այդպես, իմաստունը իր ոգևորության մեջ հանկարծակիի գալով շփոթվեց և չգիտեր ինչ անել։ Գիտեր, զգում էր, որ մարդկանց ասածը ճիշտ չէր և որ այդ՝ այդպես չպիտի լիներ։ Նա լավ գիտեր, որ նյութական հավասարությունը կարող էր վերջ տալ բոլոր անիրավու-

թյուններին և անօգուտ գործիքի փոխել կեղծությունն ու ստությունը, բայց նրա հուսահատ շվարմունքը գոյանում էր այն հանգամանքից, որ եղած դրության արդար անվանողը, բնական գտնողը նույնիսկ իրենք— զրկվածներն էին, իրենք— հարստահարվողներն ու թշվառները։

— Չգիտեն, թե ինչ են անում...— ցոլաց հանկարծ Նազովրեցու խոսքերը նրա մտքում,— հարկավոր է ուրեմն հասկացնել իրենց դրությունը, հարկավոր է ապացուցել, որ հնարավոր է ավելի լավ դրության հասնել, ապրել որպես մարդ։

Եվ ահա այդ միջոցին էր, որ մի ոչ իմաստուն մոտեցավ նրան ու ասաց.

— Իզուր ես կռիվ մղում դանակների դեմ, պետք է դանակ բռնող ձեռքերը գոսացնել։

Ասաց և անհետացավ, թողնելով իմաստունին ապշության մեջ։

— Ով անհատակ իմաստություն,— աղաղակեց նա,— որքան անսպա՞ռ ես դու։

Հետո քայլեց, կանգնեց հրապարակի վրա, հավաքեց իր շուրջը բոլոր վիրավորներին և ասաց.

— Դարմանեցի ես ձեր վերքերը, բայց վաղը էլի դուք վերք կստանաք։ Փշրեցի ես շատ դանակներ, բայց նրանց բռնող ձեռքերն էլի կշինեն դանակներ. փշրենք այդ ձեռքերը։

— Փշրենք ձեռքերը,— ոռնաց ամբոխը, թնդացրեց հրապարակը, փառաբանեց իմաստունին։ Բայց երբ դանակ բռնող ձեռքերը մոտ եկան և կամենալով մի անգամ ընդմիշտ ազատվել «խենթից», բռնեցին իմաստունին— ամբոխը ցրվեց ու նրա խոսքերով ոգևորվողները թողին նրան ու փախան։

Ու գնաց իմաստունը շղթայի մեջ կապկպված ու մտածեց Հիսուսի վրա։

Անշուշտ այդպես էր, որ բռնել էին նրան՝ անհավասարության ու կեղծիքի դեմ քարոզողին։ Եվ անշուշտ, երբ բռնում էին նրան, «օվսաննա» կանչող ամբոխը նույնպես ցրվեց, մոռացավ մեծ մխիթարչին։

Միայն մոռացա՞վ... Բայց ոչ. ահա ներկայանում է նրա առաջ Գողգոթան, խաչը, նրա ստորոտում շարժվող այն ամբոխը, որ քիչ առաջ «օվսաննա» էր գոչել, իսկ այժմ նույնքան ոգևորությամբ ոռնում էր. «Ի խաչ, ի խաչ հան զդա»։

. . . . . .

— Ի՞ զուր, ի՞ զուր խենթին։

Ոռնում էր ամբոխը իմաստունի ետևից և քարեր ու ցեխ շպրտում նրա վրա։ Չէին սպանել, այլ դուրս էին վռնդում քաղաքից։

Եվ այժմ գնում էր նա գավազանը ձեռքին, վերարկուի մեջ փաթաթված. վազում-փախչում էր իր ետևից արձակվող քարերից, որոնք ջարդում էին նրա թիկունքը, վիրավորում գլուխը. փախչում էր քիչ առաջ փառաբանող և այժմ ծաղրող ու հայհոյող ամբոխից։

— Հի՛վ, հի՛վ... քարկոծեցեք խռովարարին, ցեխ նետեցեք խելագարին։

Ու գնաց նա տխուր, հոգնած, դուրս փախավ քաղաքից, վազեց հեվալով, խուսափեց քարերից և ծաղրից. և այդպես խոր խոցված դառնությամբ լցված, ուշաթափ՝ ընկավ մի ծառի տակ։

Իսկ երբ ուշքի եկավ, գտավ, որ իրեն դրել էին մի պատմուճանի վրա, և երկու հոգի նստել գլխի վերևը։ Մեկը երիտասարդ, մյուսը՝ ծերունի։ Երկուսն էլ վշտացած, թախծալից դեմքերով, երկուսն էլ լուռ և մտախոհ։

Ճանաչեց նրանց. ծերունի փիլիսոփան էր և բնագետ որդին։ Երեքի հայացքներն էլ մի բոպե լուռ մնացին միմյանց վրա. երեքն էլ երկար ժամանակ չէին տեսնվել և շատ փոխվել էին։ Ծերունին զառամել էր, երիտասարդը ալեխառն դարձել և իմաստունը՝ արևակեզ ու մաշված։

— Այդ դուք եք,— ասաց վերջապես իմաստունը,— ճանաչեցի ձեզ. այդ դուք եք, որ ինձ դրիք սխալ շավղի վրա և ինձ ըմբռնել տվիք, թե իզուր է նվիրվել իմ նմաններին, որովհետև նրանք սիրում են ապրել ցեխի և կեղծության մեջ, և այդպիսի կյանքի դեմ խոսողներին հալածում են, ծաղրում ու քարկոծում... Նայեցե՛ք ինձ։ Կյանքիս շատ տարիները նվիրեցի օգտակար դառնալու իմ նմաններին, ուսումնասիրեցի նրանց ցավերը, գտա վերքերը, մատս դրի նրանց վրա, բարձրաձայն քարոզեցի հարստահարողների, զրկողների, խլողների և մանավանդ կեղծողների դեմ. ոչինչ չծածկեցի, մերկ ճշմարտությունը հրապարակի վրա դրի և... վիրալիցներն ու զրկվածները, հալածվածներն ու խաբվողներն էին, որոնք ծաղրուծանակ դարձրին ինձ, քարեր նետեցին իմ անկեղծության վրա, պղծեցին մերկ ճշմարտությունը, թքեցին նրա վրա, նրա մերկությունը անբարոյականության հետևանք հռչակեցին և գոչեցին ինձ.

— Կորիր քո անկեղծությամբ ու ազատախոսությամբ. մենք ավելի լավ ենք զգում մեզ կեղծության և ստության մեջ, կորի՛ր...

Ու վռնդեցին... Դուք մոլորեցրիք ինձ. այդ չէր իմ փնտրածը։

Լուռ էին ծերունին և երիտասարդը և ոչինչ չէին կարողանում ասել

— Նվիրվել իմ նմաններին... — շարունակեց վշտացած ձայնով իմաստունը,— ես այդ արի, բայց տեսա, որ այդտեղ հարկավոր էր կեղծություն, ստորություն. հարկավոր էր խաբել անկեղծաբար ու լրբաբար կեղծել, նույնիսկ հանուն իդեալների, հանուն ճշմարտության՝ անամոթաբար կեղծել. տասին կեղեքել, մեկին օգնել. մարդկանց կողոպտել և աստծուն նվեր տալով բարեպաշտ հռչակվել. հասարակական մի ինչին գործ կատարել և բարեգործ անունով հռչակվել. տասով գզլել, մեկով խլվողների աչքը շլացնել... խաբել, խաբել ու խաբել...

Ո՛չ, այդ չէ իմ որոնած ճանապարհը։ Մի՞թե մեծ նպատակին հասնելու համար այդ է միջոցը, ինչ որ մարդկությունն է բռնել — այսինքն միմյանց պատառոտելու, միմյանց խաբելու, միմյանցով կերակրվելու այդ մոլեգին ուղղությունը։

Ի՞նչ է ուրեմն այդ մեծ նպատակը, որին գնում են այդպիսի կեղտոտ շավղով։

Եվ չնայելով, որ հոգնած էր, այդ ասելուց հետո ոտքի ելավ, առավ գավազանը, պնդեց կոշկի կապերը, պահ մի կռթնած ծառին՝ նայեց երկու անձերի վրա և պատրաստվեց գնալու։

Այն ժամանակ ծերունին ասաց մեղմ ու թախծալից ձայնով։

— Գնա, որդիս, ճշմարտության ճանապարհը փշոտ է, խիստ փշոտ, և այդ փշերը աճում են ու ոռոգվում նրանց վրայից քայլողների կարմիր արյունով, բեղմնավորվում նրանց մեջ ընկնող նահատակների աճյունով։

— Իսկ այդ ճշմարտությունը,— աղաղակեց իմաստունը,— այնքա՞ն վսեմ է, որ կարելի լինի առանց հուզվելու դիտել դեպի նրան գնալու աղտոտ ճանապարհները, որ կարելի լինի այդ նախճիրները արդարացնել, բնական համարել, առանց զզվանքի ու սոսկումի ականատես լինել և նրա դեմ խոսողներին խենթ, անոր՛մալ համարել... Ոչ, հազար անգամ ոչ. այդ չէ այն ճանապարհը, որ ինձ հարկավոր է՝ գտնելու համար բարձրը, մաքուրը և ճշմարիտը։

Եվ երբ ասաց, ողջունեց ու հեռացավ։

Ու մի վայրկյանում մարեց նորից նրա խանդը, ավելի և ավելի կնճռվեց ճակատը, կորացավ մեջքը։ Նորից անհուսության, փնտրողության անհատակ վիհը բացվեց նրա մտքի մեջ, նորից հարցական մեծ նշանը, սոսկալի փափագը։

5

Հալածված, հուսահատ, մտային կրկնապատկված տանջանքով, ավելի քան երբեք՝ որոնողության փափագով տոչորված, թողեց իմաստունը բնակությունները և հեռացավ նորից ամայությունների մեջ։

Գնում էր նա առանց կանգ առնելու, առանց հոգնելու։ Չէր ուզում կանգնել այնտեղ, ուր նշմարում էր մի նշույլ իսկ սոցունության, քա-

ակուսի մտային պատվարների մեջ ամփոփված զեռունների և ուր նա տեսնում էր միշտ նույն կեղծության մեջ բովված ու նրանով միայն սընվող, միմիայն լափող արարածների...

Քայլում էր միշտ առաջ, և նրա մտածությունը մոլորվում էր միակ մեծ հարցի անհասկանալիության շուրջը։

Ինչո՞ւ այդ բոլոր սոսկալի ստեղծագործությունը, այդ զզվելի, եղբայրասպան, եղբայրակեր մրրիկը, այդ խառսը. ինչպե՞ս էր պարզվելու նա ապագայում, ինչի՞ն հանգելու, ի՞նչ կերպարանքներ գոյացնելու և ավելի հեռուն— դեպի ո՞ւր գնալու։

Այսպես տանջված ու մոլորված մտային բարձրությունների վրա, կտրեց նա դաշտ ու հովիտ, անտառ ու ծովեզր, գնաց ու գնաց, պատմությունը չի հայտնում, թե որքա՛ն ժամանակ գնաց, բայց երկար քայլելուց հետո հեռվից, վերջալույսի կարմրորակ լույսի տակ, մի բարձրության վրա նկատեց մի ամրոց՝ շրջապատված գեղածիծաղ ծառաստանով։

— Դարձյալ սողունների բնակարան,— մտածեց նա զզվանոք և ուզեց ծռել ճանապարհը. բայց ներքին մի անբացատրելի ուժ մղեց նրան դեպի ամրոցը, և իմաստունը, երբ մթնում էր, իրեն գտավ ամրոցի դռան առաջ։

Ոչ մի մարդկային էակ չէր երևում. ոչ էլ ծառաստանում, ուր վճիտ առվակները մի զովություն էին սփռում, ուր ծաղկանոցները օդն էին լցնում՝ իրենց անուշահոտությամբ, և շքեղ ծառերի տակից երևում էին երբեմն սիրուն եղնիկներ, նայում իմաստունին և անհետանում։

Մտավ իմաստունը այնտեղ, քայլեց սաղարթախիտ բարձր ծառերով հովանավորված լուռ և խորհրդավոր ծառուղիների միջով և ոչինչ չլսեց՝ եթե ոչ, միայն բազմազան թռչունների ճռվողյուն և ջրի մեղմիկ, անուշ կարկաչ։

Ոչ մի մարդկային էակ. միայն բնությունն էր իր խուլ, անորոշ շշուկով, թռչուններն իրենց գողտրիկ դայլայլներով, ջուրն իր մեղմիկ, հանգստացնող ու ջղերը հանդարտեցնող շշուկով ծառուղիներն իրենց խորհրդավոր լռությամբ և մթնաշաղախ լույսով, օդն իր զովությամբ, միայնությունն իր այդ բոլոր զարդերով, որ իջեցրեց իմաստունի վրա մի երանավետ սփոփանք, ամոքիչ անդորրություն։ Ընկավ նա կանաչ խոտերի վրա, ավազանի կողքին, ուռենու տակ ու երջանիկ՝ որ մի վայրկյան գոնե կարող պիտի լիներ ազատ մնալ հոգեկան տանջանքից —լայն թոքերով ծծեց բնության մեջ սփռված բուրմունքն ու թարմությունը...

Եվ ահա ուռավ նրա սիրտը. և երգեցին թռչունները, մրմնջաց ջուրը, սոսափեցին տերևները, ու իմաստունի այտերն ի վար գլորվեց նրա

անհուն տանջանքի, ահավոր փափագի, անհատակ անգոհության և ըմբոստացող ոգու ու գիտակցության արտահայտությունը՝ ամփոփված արցունքի խոշոր ու վճիտ կալժակների մեջ...

Որքան դա՜ռն էին այդ կաթիլները, որքան կիզի՜չ։ Ավանդությունը ասում է, որ իմաստունի տենչալից որոնողության այդ հեղուկ արտահայտությունները գլորված լինելով խոտի վրա, վայրկենապես այրել, մոխիր էին դարձրել նույնիսկ հողը, գետինը։

Այդպես մնաց նա երկար, տարածված ավազանի եզրի վրա, երջանիկ՝ վայրկենական թուլությամբ, որով հանգստություն, անդորրություն էր գտնում։ Եվ երբ դադարել էին թռչունների երգերն, ու զով քամին սաստկանում էր, սթափվեց, մոտ գնաց ջրին ու լվաց երեսը։

Գնդեցիկ էր գիշերը, լողում էր լուսինը երկնակամարի կապտության մեջ, պահվում սպիտակ ամպակույտերի տակ, նորից առաջ սրանում և անդրադառնում էր ավազանի ջրերի խորքերում։ Իմաստունը նայեց այդ խորքերին՝ կռացած ջրի վրա դիտեց երկնքի անհունությունը, որ ավելի խոր ու անհատակ էր թվում ջրի մեջ... և ահա նորից գոյացավ նրանում այն բոլոր տանջանքն ու տենչանքը, որ ծնում էր անբավական ոգուց, գիտենալու անհուն փափագից...

Այդ միջոցին էր, որ հեռու, մեծ ավազանի դիմացի ափին, նկատեց նա մի երիտասարդի՝ ընկողմանած խոտերի վրա։ Լուսնի լույսը թույլատրում էր տեսնելու, թե որպիսի հանդարտ դառնությամբ արտասվում էր թշվառը, աչքը երկնքին հառած, անշարժ ու մարմնացած հուսահատության նման։

— Ահա մի ուրիշ տանջվող,— մտածեց իմաստունը,— արդյոք նա՞ էլ է որոնում գիտենալ այն, ինչ որ իմ թշվառությունն է կազմում, ինչ որ խոր է որպես անդունդ, անըմբռնելի՝ որպես գոյություն չունեցող մի բան...

Ու առաջ գնաց դեպի նա։ Երիտասարդը լսեց իմաստունի ոտնաձայնը, դարձավ, սրբեց արտասուքը և կիսովին բարձրացավ։

Ողջունեց նրան իմաստունը։ Երիտասարդը զարմացած՝ ընդունեց նրա ողջույնը, հրավիրեց նստել իր կողքին և ասաց.

— Բարի լինի գալուստդ իմ ամրոցի մեջ, ով դերվիշ. տեսնում եմ, որ մի խոր տանջանք ակոսել է քո ճակատն էլ այնպես, որպես ոչ մի վիշտ չէ կարող անել. տեսնում եմ, որ կյանքից ու մարդկությունից զզված, դժգոհ՝ ծնված լինելուց, դժգոհ՝ բնության գոյությունից, դժգոհ՝ եղած ցեխային կյանքից, ինքնամոռացության միայն ապավինած մի իմաստուն ես, որ գնում ես այնտեղ, որտեղ ոտներդ են տանում, տեսնում ես այն, ինչ որ աչքերդ են ցույց տալիս, և քո մեջ կամքն ու փա-

փագը գոյություն չունեն որպես անօգուտ, ավելի տանջանք ու ավելի ցավ պատճառող ավելորդություններ...

Նստեց իմաստունը նրա կողքին, նայեց երկար այդ սիրուն և վշտալից երիտասարդին, ժպտաց ու ասաց.

— Քո հոգու դրությունը նկարագրեցիր, երիտասարդ, բայց ոչ իմը։ Որոշ չափով վշտակից ենք, որից հետո դու ուրիշ ճանապարհով ես գնում, ես՝ ուրիշ։ Դու զզվել ես կյանքից ու մարդկությունից, դժգոհ ծնված լինելուցդ, բնության գոյությունից, եղած ցեխից ու ինքնամոռացության ես ապավինել. գնում ես այնտեղ, որտեղ ոտներդ են տանում, և փափագն ու կամքը գոյություն չունեն քեզ համար... Բայց ե՞ս... ես ավելի թշվառ եմ, քան դու, որովհետև, եթե ես զզվել եմ կյանքից, այդ չի՛ նշանակում, որ մահ եմ փնտրում. եթե զզվել եմ մարդկությունից, այդ չի՛ նշանակում, որ խուսափում եմ նրա կեղծ, ցեխային դրությունից, բայց ես փնտրում եմ լավը... Եթե դու ինքնամոռացության ես տվել քեզ, ես ավելի ցավակցության արժանի եմ, որովհետև չեմ կարող ինքզինքս տալ ինքնամոռացության։ Ընդհակառակն, ես տանջվում եմ հենց նրանով, որ իմ մեջ, քանի գնում է, գիտակցության փափագն ու տենչանքը, փնտրողության ցանկությունը մեծանում է, խոշորանում, ամբողջ էությունս կլանում... Ես ուզում եմ գնացած տեղս գիտենալ, ապա գնալ ավելի հեռուն և այսպես ճանաչել անհունությունը. ուզում եմ գտնել այս բոլորի, այս շարժման, այս գոյության վերջնական նպատակը, այս բոլոր մրրկի հանգրվանը... Իմ մեջ ոչ միայն կամքն ու փափագը գոյություն ունեն, այլ հենց դրանք են, որ կազմում են իմ բոլոր տանջանքը. ես կամենում եմ և փափագում — և ահա թե ինչու եմ տանջվում, ինչու տառապվում...

Երիտասարդի աչքերը ցամաքեցին։

— Ո՛վ թշվառ իմաստուն,— գոչեց նա,— դու քո վշտով մխիթարեցիր ինձ։ Ես կարծում էի, թե չկա աշխարհիս վրա տանջանք, որ իմինիս հավասարվի և որ կարողանա գերազանցել սրտի տանջանքին. բայց սխալված եմ եղել. կա մտային տանջանքը և դա, օ՜հ, սոսկալի է։ Դա նմանում է հետզհետե արծարծվող, միշտ բորբոքվող և երբեք չմարող կրակին, որ դրված է ուղեղի վրա, և ո՛չ ուղեղն է սպառվում ու ո՛չ կրակը։ Մտային տանջանքի մարմնացումը Կովկասյան լեռների վրա կապված հսկան է, որ գիտակցության կրակն է գողացել երկնքից և որ տանջվում է, որովհետև կամեցել է, փափագել...

— Դու հասկացար ինձ,— ասաց իմաստունը,— բայց անիծյալ լինես, որովհետև զգում եմ, որ դու մի նոր խստություն ես տալու իմ այս տանջանքին, որպես կրոնապետն ու այն երիտասարդ բնագետը մեկն իր հավատքով, մյուսն իր հույսով...

Ու վեր կացավ՝ խուսափելու այնտեղից, գուշակելով, որ այդ երիտասարդը մի նոր կծու սլաք է մղելու իր վերքի մեջ, մի նոր վիշտ ազդելու և կուտակված դառնությունը ավելի ծխացնելու։

— Կա՛նգ առ,— կանչեց նրան երիտասարդը,— կա՛նգ առ, իմաստուն, փոքրոգի մի՛ լինի. եկ և քամի՛ր բաժակդ մինչև մրուրը, և թող վերքդ բոլորովին խստանա, մտային տանջանքդ խորանա, լայնություն ստանա, պարփակի ամբողջ մարդկությունը, և թող դառնությունդ լուտա ավելի կատաղաբար, խանձե ամեն բան։ Ինչի՞ց գիտես, որ այդպիսի խորացած դառնությունները չեն, որոնք պիտի պատռեն գիտակցության վրա պարզած քողը. ինչի՞ց գիտես, որ այդպիսի զորեղացող մտային տանջանքը, ըմբոստացող ոգիները չեն, որոնք ոստնելու-անցնելու են խոչընդոտները, որոնք իրենց գլուխների փշրվելու գնով, ոտնատակ տալով մարդկությունը փտեցնող ճահիճը, իրենց տանջանքով չորացնելու են նրանց և գիտության դրոշը կանգնեցնելու ապագա դալարագեղ, լույսով ողողված ասպարեզի վրա...

Իմաստունը կանգ առավ։ Ո՞վ էր ուրեմն այդ երիտասարդը, որ այդպես համարձակորեն հարձակվում էր նրա փոքրոգության վրա, որ հորդորում էր նրան տանջվելու, որոնելու, ըմբոստանալու և հետևաբար՝ միշտ թշվառ, միշտ ապերջանիկ մնալու...

Չկարողացավ տեղից շարժվել։

— Ո՞վ ես դու, երիտասարդ,— ասաց նա,— արդյոք դու ինձնից ավելի շա՞տ ես ապրել, ավելի շա՞տ ուսել և ավելի՞ հասկացել. և ի՞նչ ես ապրել, որ հասել ես այդ բարձրության. տանջանքի ի՞նչ մեծ բովից ես անցել, որ համարձակվում ես ինձ փոքրոգի անվանել։ Խոսի՛ր, ի՞նչ ես կրել դու, որ ավելի փորձառու ես գարձել, ավելի իմաստուն՝ քան ես։

Երիտասարդը դառնությամբ լի աչքերով նայեց իմաստունին և ասաց.

— Սիրել եմ. ահա թե ինչ։

6

Իմաստունը զգետնած էր։

Երբեք չէր մտածել կրքերի այդ ամենամեծի վրա, որ տանջանքների ամենամեծ աղբյուրն է փորձառության ամենամեծ բովը։

Երբեք նա չէր սիրել, և երբեք չէր ճաշակել սիրո քաղցրահամ դառնու-

թյունը, անուշ տանջանքը։ Եվ այժմ, մի վայրկենում, երիտասարդի մի խոսքը բաց էր անում նրա առաջ մի նոր աշխարհ։

Արդյոք դա՞ էր ուրեմն տիեզերային շարժման, մարդկային ամբողջ պատույտի վերջնական նպատակը. ա՞յդ, թե՞ գուցե նրա գոյության պատճառն էր միայն, նյութի ձևափոխության, բեղմնավորության, ուժի կուտակման և արդյունքների միակ արտադրիչը։

Արդյոք այդ խանդալից կի՞րքն էր, որ ստեղծել էր ու ստեղծում էր, որ քանդել էր և որ քանդում է ամեն ինչ, որ շինում է և ավերում, ստեղծում է և ոչնչացնում և փոխնիփոխ արարչին կործանիչի դեր կատարում բնության մեջ...

Եվ երբ մտածում էր այդ բոլորը, նայեց երիտասարդին և տեսավ նրա վշտակոծ դեմքը, նրա քայքայվող հոգու դրությունը։ Եվ իմացավ, որ սերը իր ստեղծիչ բազուկը փոխել է կործանիչի այդ մատաղ սրտում, և որ խարխլվում է նյութը, որովհետև կաթ առ կաթ դուրս է գնում նրա միջից նրան կապակցող ուժը, նրան կենդանի, շարժուն պահող խանդը...

— Խոսիր,— ասաց նա վշտալից,— պատմիր, բարեկամ, քո պատմությունը, և թող ինձ տեսնել, թե արդյոք սե՞րն է այն մեծ նպատակը, որին փնտրում է իմ անհանգիստ միտքը, և որը միշտ խուսափում է իմ հասկացողությունից. արդյոք դա՞ է, որին ես անկարելի էի համարում գտնել, թե՞ դա ոչ թե նպատակն է, այլ ճանապարհ դեպի նրան գնալու... Պատմիր, թե ինչո՞ւ ես մնացել մեն-մենակ այս ամրոցի մեջ, արտասվալից, վշտակոծ ու քայքայված...

Եվ երիտասարդը սկսեց պատմել։

— Հարուստ հոր զավակ եմ,— ասաց նա,— և այս ամրոցն ու ծառաստանը, այլև շրջակա շատ հասույթավոր հողեր իմն են։ Ոչինչ չի պակասում ինձ. ո՛չ շքեղություն և ո՛չ զվարճություն։ Երիտասարդ եմ, որպես տեսնում ես. հիվանդ էլ չեմ, և կար ժամանակ, որ իմ զվարթ և ուրախ տրամադրությունը պարզում էր ամեն մռայլ ճակատ, գեղածիծաղ դարձնում այս ամրոցն ու պարտեզը և զվարթություն սփռում բոլոր ինձ շրջապատողների մեջ։

Այսպես միշտ զվարթ ապրում էի ես այն ժամանակ իմ ամրոցում, և ոչինչ չէր պակասում, երբ մի օր, որսի ժամանակ անտառի մեջ հանդիպեցի դրացի իշխանի աղջկան, և մենք երկուսս էլ սիրահարվեցինք միմյանց։

Երևակայել այնպես սեր, որպիսով մենք կապվեցինք միմյանց, դու չես կարող, իմաստուն։ Այդ տեսակ սեր երևակայելու համար հարկավոր է լինել տաք կլիմայի բուռն զավակ, երբեք սիրած չլինել. հարկավոր է ունենալ բնությունն ամբողջ սրտի մեջ, էությունն ամբողջ իր կրքերի դերի...

Սիրել այդպես՝ ես չեմ երազում նորից, որովհետև երկրորդ անգամ անհնար է. նույն խորությունը, նույն բուռն, գրեթե խենթային թռիչքը չի ունենա։ Մենք սիրում էինք միմյանց— ի՞նչ հարկ մի ածականով նկարագրել այդ բառի սաստկությունը. սիրել —դա նշանակում է ապրել ու շնչել միմիայն սիրո առարկայով, նրա ազդած տանջանքով հալվել ու հալվելովն երջանիկ լինել, աստվածանալ։ Սիրել —դա նշանակում է անձնապես գոյություն չունենալ, այլ ի մի ձուլվել սիրած առարկայի հետ և հավիտենապես սավառնած երազային աշխարհի մեջ, աստղալից և երջանիկ երկնքի խորհրդավոր միայնության տակ՝ օրորվել այնտեղ, հեռու բոլոր շշուկներից, ինքն իր մեջ, ինքը նրա մեջ ամփոփվել և այդպես շոգիանալ, ցնդել...

Ու լռեց պահ մի, և հայացքը երկնքի կապտության մեջ մոլորվելու սլացավ. դեմքը փայլում էր գերաշխարհային էքստազով ողողված, կարծես մարմնից դուրս ցայտող ֆոսֆորային մի լույսով, որ պարզ կերպով գծագրում էր նրա շքեղ գլուխը ուռենիների ձգած մութ ստվերի վրա։

Իմաստունը ապշել էր. կարծում էր, թե սուրբի առաջ էր գտնվում։ Երիտասարդի գլխի շուրջը փայլող նուրբ լույսը մի տեսակ խորհրդավոր երկյուղածություն ազդեց նրան, և նա պատկառանոք մի քայլ ետ քաշվեց։

— Սիրել... —շարունակեց երիտասարդը,— դա նշանակում է ամեն բան. նշանակում է նաև ոչինչ։ Դա նշանակում է ապրել մեռնելով, տանջվել հաճույքով, թունավորվել նեկտարով. դա նշանակում է և՛ բարձրանալ մինչև աստված, մինչև անհունություն, և՛ իջնել մինչև ցեխի մրուրը, մինչև ապականություն. դա մի խառնուրդ է երկու հակասությունների, որ մարդուս միակ մեծությունն է կազմում, նրա կյանքի միակ ձգտումը, միակ նպատակը...

— Միակ նպատա՞կը... —բացականչեց իմաստունը։

Երիտասարդը սթափվեց, ցնցեց գլուխը, նայեց իմաստունին և ասաց.

— Ահ, ներիր, իմաստուն. ես մոռացա, որ այստեղ ես երազում էի։ Ինձ թվում էր, թե ետ էի գնացել երկու ամսով առաջ, երբ ես ու նա, այս ուռենիների տակ, կանաչ խոտերի վրա, միմյանց գրկում հալվում էինք. երբ մենք լուռ էինք, և մեր շրթունքները միմյանց հոգին էին ծծում ու մեր սրտերն լռելյայն ասում էին միմյանց ամեն բան. այնպիսի զգացումների մասին խոսելով, որ բերանը անզոր կլինի արտահայ-

տել։ Սիրողները, երբ լուռ են, նրանց սրտերը լռելյայն խոսում են միմյանց հետ. նրանք իրար հասկանում են առանց բերան բաց անելու։ Եվ մենք լուռ էինք, ժպտուն՝ երկնքի պես, զվարթ՝ արեգի նման, վճիտ՝ որպես առվակ ու կենսախնդությամբ լի, ամեն ինչ մոռացած, ամեն ինչ մեր մեջ առած, միայն մեր մեջ և մեզ համար... Հիշում եմ. մենք սիրում էինք միմյանց այնպես, որպես սիրել կարող են միմիայն թիթեռները լույսին, մի բոպեից հետո գոյացող՝ մահվան գիտակից և նրան արհամարհող...

Բայց... ասա ինձ ուրեմն, իմաստուն, մի՞թե ճիշտ է, որ բնության մեջ ամեն ինչ վերջ ունի, որ ամեն ինչ փոփոխական է, որ ոչինչ հարատև չկա։ Ճի՞շտ է ուրեմն, որ այդքան զզվելի է բնությունը, և մենք իզուր նրան բանաստեղծացնում ենք, նրանով ոգևորվում։

Իմաստունը լուռ էր. ոչ մի բառ չարտասանեց։ Երիտասարդը մի վայրկյան նայեց նրան, հետո թափահարեց ձեռքը.

— Բայց ես էլ գիտեմ այդ,— ասաց նա,— ինչո՞ւ եմ հարցնում։ Այո, չկա մի ճշմարտություն, որ դրա պես ճիշտ լինի, որ դրա պես անխախտ ու հավիտյան լինի։ Ոչինչ հարատև չկա բնության մեջ, ամեն ինչ փոփոխվում է, և այդ օրենքն է միայն, որ անփոփոխ է... Ամեն ինչ վերջ ունի. խորությունները լցվում են՝ լեռ դառնում, խենթային թռիչքների թևերը կտրտվում, կրքերը նվազում ու կոշտանում, և սերն էլ, որպես ամեն ինչ՝ դադարում է, փոխվում, ոչնչանում...

— Չեմ կարծում,— խոսեց իմաստունը,— ոչինչ չի ոչնչանում աշխարհի վրա։

— Ես այդ էլ գիտեմ... Բայց չգիտեմ, թե ի՞նչ դարձավ ուրեմն մեր սերը. ի՞նչ դարձավ այն զգացմունքը, որ նրա մեջ ավելի բուռն էր, քան իմ մեջ. ավելի կրքոտ, ավելի պահանջող և կրակոտ...

— Բուռն, կրքոտ, պահանջող ու կրակոտ լինելու համար էր, որ նա դադարեց,— ասաց իմաստունը,— կրակը լափեց յուղը, սպառեց։

Երիտասարդը ոտքի ելավ այն ժամանակ, և երկու տանջվողները սկսեցին քայլել լճափն ի վար։

— Պատմեմ քեզ ամեն ինչ, իմաստուն,— ասաց սիրահարը, երբ հասել էին մի մթին ծառուղու մեջ,— պատմեմ քեզ այդ և գուցե դու մեկնես ինձ այն, ինչ որ խուսափում է իմ հասկացողությունից... Ես գիտեմ, թե նա ինչո՞ւ է դադարել ինձ սիրելուց, բայց չգիտեմ, թե ի՞նչ հարկավոր էր անել, որպեսզի նա չդադարեր և այնքան սիրեր ինձ, որպես սկզբում էր, սրանից երկու ամիս առաջ։

— Նա այստե՞ղ է,— հարցրեց իմաստունը։

Երիտասարդը գլուխը ցնցեց։ Որքան որ նա քիչ առաջ գտնվում էր

ոգևորված դրության մեջ, այնքան այժմ ընկճված էր, թույլ, գունատ, և այլևս լույսի ո՛չ մի նշույլ չէր ողողում դեմքը. ընդհակառակն, լույսի աղոտ մի ճառագայթ մեռյալի կերպարանք էր տվել նրան։

Կոթնած իմաստունի թևին, քայլում էր հիվանդի պես։

— Գնաց... —խոսեց նա,— երբեմն միայն երևում է այստեղ, որպես այցելու մի հիվանդի, որին խղճում են, որպես մի զոհի, դեպի որը մի անդիմադրելի խղճահարություն են զգում. գնաց, գուցե էլի գա։ Օ՛, ես նրան ամեն անգամ ընդունում եմ ոգևորված, նորից կենդանացած. բայց երբ ներս մտնելով առողջությունս է հարցնում, գթալից աչքերով ինձ նայում, երբ ձեռքս բռնած՝ խնամոտ համակրանք է ցույց տալիս, և երբ մտածում եմ, որ նրան ինձ մոտ պահելու համար պետք ունեմ չափավորել զգացումներս, ծածկել տանջվող ուղեղիս դրությունը, երբ տեսնում եմ, որ իմ վիճակը նրան ավելի է տանջում, և նա խղճում է ինձ —զգում եմ, որ նա ավելի է խուսափելու ինձնից... Ես հասկանում եմ, շատ լավ հասկանում նրա հոգու դրությունը։ Ինքն իրեն հանցավոր է զգում իմ վերաբերությամբ, զգում է, որ ես իր զոհն եմ և քանի ավելի շեշտվում է նրա մեջ այդ գիտակցությունը, այնքան մեծանում է նաև ինձնից խուսափելու պահանջը... Հարկավոր է ուրեմն ծածկել նրանից ամեն ինչ —դրությունս, զգացածներս —և ահա այդ է, որ չեմ կարողանում անել. այդ անընդունակությունն է իմ թշվառության միակ պատճառը...

— Կեղծել չգիտես ուրեմն։

— Կեղծե՞լ... Մի՞թե կարելի է սիրո մեջ կեղծություն դնել. սիրել կեղծելո՞վ. և ինչո՞ւ համար։ Ինչո՞ւ այդ միակ տեղում, այդ միակ հանգամանքում գոնե անկեղծ չլինել, ինչո՞ւ գիտակցաբար կեղծել։ Որպեսզի չընդհատվի։ Ինչո՞ւ ուրեմն խայծեր սարքել, խաղեր ստեղծել։ Ո՛չ, ես կեղծել չեմ կարող։ Եթե երջանիկ եմ —դա երևում է իմ դեմքից, իմ վարմունքից, իմ խոսքերից։ Ես հոգիս բաց եմ անում իր բոլոր մութ խորշերով և լուսավորում նրանց իմ խոսքերով, նրա ամենաթաքուն անկյունը պարզում իմ վարմունքով. ես թաքցնել չեմ կարող զգացածներս նրա առաջ, որին սիրում եմ, որի համար եմ միայն շնչում... Ես անդադար և անընդհատ արտահայտում եմ իմ սերը, իմ զգացումները, որովհետև հոգուս մեջ այդպես է, որովհետև թաքցնել, ծածկել և սակավ առ սակավ տալ չեմ կարող։ Նրանով լիքն է սիրտս, գուրս է հոսում, և ես մինչև հատակը ցույց եմ դնում նրա առաջ ինչ որ ունեմ, ինչ որ շնչում եմ, ինչի համար որ ապրում եմ. ես անդադար և անընդհատ ցույց եմ տալիս նրան, որ սիրում եմ և որ առանց նրան շնչել

չեմ կարող... Այդպես եմ անում, այդպես խոսում՝ որովհետև այդպես էլ զգում եմ...

Իմաստունը, որ գլուխը կախած լսում էր, բարձրացրեց հայացքը և մռայլ որպես մարմնացած թախիծ՝ դարձավ դեպի թշվառը։

— Երիտասարդ,— ասաց նա,— դու թշվառ ես, որովհետև անկեղծ ես եղել, զգացումներիդ անկեղծ արտահայտությունը նրանց խանդոտություն հետ միասին, սառեցրել են կնոջ կեղծությամբ սնված զգացումները, կեղծության կարոտ, կեղծությամբ միայն շարժվող սիրտը։ Եթե ուզում ես ապրել, պարտավոր ես կեղծել, խայծի խաղ սարքել այդ կնոջ հետ, ցույց տալ, որ այլևս չես սիրում նրան. քանի խուսափես կնոջից —այնքան կինը կվազե քո ետևից. քանի պնդես նրա ետևից, այնքան նա կխուսափի... այսպես եմ եզրակացնում ես այդ բոլորից, և թող անիծյալ լինի սերն էլ... Սերն էլ չէ այն ճանապարհը, որ կարող է տանել դեպի իմ որոնած նպատակը. դու փշրեցիր մի լար էլ իմ սրտից —մի վերջին լարը. ես գիտեի, դու մի նոր ուժգնություն տվիր վերքիս. անիծյալ եղիր դու էլ... թո՛ղ ինձ. ես դեռ ոչինչ չեմ գտել, ոչինչ չեմ հասկացել, եթե ոչ՝ որ ամեն ինչ կեղծ է և անտանելի։

Ու ետ քաշվեց, փաթաթվեց վերարկուով, նայեց երկնքին և ուզեց հեռանալ։

Երիտասարդը տխրությամբ պարզեց նրան իր ձեռքերը։

— Կանգ առ, խնդրում եմ,— գոչեց նա,— կանգ առ, դու բոլորովին սպանում ես ինձ քո վշտով։

— Կամենո՞ւմ ես,— շարունակեց իմաստունը մի նոր ուժգին դառնությամբ,— կամենո՞ւմ ես ապրել այսպիսի աղտոտ կազմակերպության մեջ, երջանիկ լինել այնտեղ, երջանիկ համարվել, այդ տեսակ սիրուհու վերագտնել, այսպիսի մարդկության մեջ անուն հանել... կամենո՞ւմ ես. այն ժամանակ մի ճար է միայն մնում քեզ —կեղծի՛ր...

Ասաց արհամարհությամբ արաբացի իմաստունը և արագ քայլերով, առանց ետ նայելու՝ դուրս գնաց ծառաստանից ու հեռացավ ամրոցից...

7

Քայլեց նա և քանի առաջ էր գնում, այնքան ավելի թանձրացած կերպով վերարտադրվում էր նրա մտային տանջանքը, վիհը և անըմբռնելի պպագան. այնքան է՛լ ավելի ուժգնանում էր նրա դառնությունը։

Քայլեց նա ավելի քան երբեք՝ ընկճված, Տանտալոսի պես պապակած շրթունքը՝ մտովին երևակայած առվակին ուղղած —առվակ, որ միշտ խուսափում էր. ցանկացող ձեռքերը մտովին երազած պտուղների տարածած —պտուղներ, որոնք միշտ ետ էին քաշվում, բարձրանում, կախ ընկած անհունության մեջ, փայլուն որպես ո՛չ մի աստղ, ցանկալի՝ որպես ո՛չ մի բան...

Եվ այդ մտային ցանկալի երազները քանի գնում՝ հեռու, շատ հեռու էին թվում նրան։

Եվ ահա տեսավ ու համոզվեց նա, որ ահավոր հրեշկեղծությունը մտել է աստծուն պաշտելու, իր նմանին նվիրվելու և սիրո զգացմունքների մեջ, որ նա փակում է դեպի բարձրն ու վսեմը գնալու ուղին, որ նա մտել է ամեն, բացարձակապես ամեն բանի մեջ. ամենաչնչին թաքուն խորշերից սկսած մինչև ամենալայն տեղերը գրավել, որ սպրդել է նա մարդկանց՝ միմյանց հետ ունեցած հարաբերությունների, մտերիմ ընկերների, միմյանց ջերմ սիրողների, միմյանց մեռնելու չափ նվիրվածների, ինքն իր մեջ, երկու նոր հանդիպածների, երկու ամենահին բարեկամների, հայր ու որդու, ամուսինների... ամենքի մեջ այնպես, որ նա բնություն դառնալով, մեծ մասամբ աննշմարելի եղած պահանջ է դառնում. և որ չկա բացարձակ անկեղծություն, որ բացարձակ անկեղծ լինել կամեցողը ոչ միայն դժբախտ կլինի, կատվի, կհալածվի, մենակ կմնա, քաղցած կմեռնի, խենթ կնկատվի, կքարկոծվի և կդառնանա, այլ որ նա շուտով կհամոզվի, թե կեղծություն է մարդկային այսպիսի փչացած ընկերության մեջ կապ պահող շղթան, որ կեղծություն է թաքնված այդ առերևույթ երջանկությունների, մարդասիրության, բարության, ազնվության, ոգևորության, իդեալականության և բոլոր այլ «վսեմ» անվանված հատկությունների, նույնիսկ «անկեղծության» տակ...

Եվ եկավ Իմաստունը այն եզրակացության, որ մարդկությունը երջանիկ կլինի և կհասնի վսեմ ու բարձր ապագային այն ժամանակ միայն, երբ հիմնովին տապալվի կեղծության վրա կանգնեցրած այս կազմակերպությունը, և երբ բացարձակ անկեղծությունը լինի ամենասովորական, տիրող բարոյականը...

Այն ժամանակ ահա մարդս կարող պիտի լինի հասնել այն խորհրդավոր նպատակին, որը նա այժմ չի տեսնում, որի մասին նա ոչինչ չգիտի և— քանի այդպես կեղծ է— չպիտի գիտենա, չպիտի հասնի...

Ու խոնարհեց գլուխն Իմաստունը՝ ավելի քան երբեք ճնշված սրտով, վշտացած հոգով, ու նման Տանտալոսի, որ կամեցել էր անմահության գաղտնիքը խլել աստվածներից և դատապարտվել էր մշտական ծարավի, հավիտենական քաղցի տանջանքին— նրա մտքի մեջ բացվեց նորից անհատակ փնտրողության անդունդը, և գոյացավ տոչորող ծարավ, անհագ քաղց...

Հավատի, անձնվիրության և սիրո ազդեցությունը խախտվել էին նրանում. գտել էր, որ դրանք չեն դեպի փայլուն ու բարձր ապագան տանող շավիղները, որովհետև բոլորն էլ թանձրապես փակված են կեղծության զզվելի տիղմով —բայց և զգում էր, որ այդպես չպիտի լիներ, որ դա բուռն կերպով անբնական, բռնությամբ ուղղությունը ծռած, ճապարհները տիղմով լցրած, խայտառակ ու խոզային դրություն էր, և որ մեծ ապագան այնտեղ հեռու, չնայելով դեռ երազային աշխարհների մեջ՝ բայց կար, բայց պիտի մոտենար, և որ նրան տանող ճանապարհները մաքրող միակ զենքը անկեղծությունը կարող էր լինել, բացարձակ անկեղծություն, ամեն բանի մեջ անկեղծություն, պարզություն և ուղղամտություն...

* * *

...Եվ ահա հանկարծ, անապատի և ամայության մեջ շարժվել սկսեց ամեն ինչ. բնությունն ամբողջ շքեղ, վարդագույն լույսի ողողումով համակվեց և սքանչելի շշուկով միացած կարծես՝ խոնարհվեց դեպի իմաստունը։

Ու մի քնքուշ ձայն, եկած երազային, ապագա աշխարհներից, կանչեց նրան.

— Եկել են օրերը. քայլիր և սովորեցրու...

— Մինչև ե՞րբ... —բացականչեց նա։

Եվ ապագայի ձայնը կրկնեց նրան.

— Քայլիր, դու անմահ ես...

Այն ժամանակ փաթաթվեց իմաստունը իր վերարկուով, մի նոր ուժով ոգևորված՝ պնդեց կոշկի կապերը, մտավ մարդկանց մեջ ու խոսեց բարձրաձայն՝ անկեղծության և գիտակցության մասին։

Եվ մարդիկ, որոնք լսում էին նրան, ավելի խորապես հուզվեցին իմաստունի համոզման ձայնից և ապագայի վարդագույն փայլով։

Այդպես անմահ՝ քայլում է նա մինչև այժմ, միշտ պապակած, միշտ լի մեծ ապագայի հասնելու բուռն ձգտումով, անկեղծ ու մաքուր գալիքի համար տենդային սպասողությամբ համակված և որոնողության բուռն ցանկություններով տոգորված։

Քայլում է նա և հավատում, որ պիտի գան այն մեծ օրերը, երբ ո՞չ հավատքն է կեղծության շնորհիվ իբր եղբայրասպանության ահռելի զենք գործածվելու, ո՞չ իր նմանին նվիրվելու գործը և ո՞չ էլ սերը...

Եվ երբ մարդիկ տեսան այդ, իմացան, որ Կովկասյան լեռների վրա շղթայած— երկնքից գիտակցության կրակ գողացող Պրոմեթեոսը, հունական Տանտալոսն ու արաբական իմաստունը սիմբոլներ են այնպիսի նահատակների, որոնք ձգտում են միևույն բարձր նպատակին, ըմբոստանալով եղած ապականության դեմ. որոնք քայլում են փշերի վրայով, տանջանքների միջով, որոնք երբե՛ք գոհ, երջանիկ չեն ներկայով, այլ ապրում են ապագայով և որոնց դիակների վրա է, որ իբր պատվանգանի՝ կանգնելու է երջանիկ օրերի և բացարձակ անկեղծության թագավորությունը...

1897

ԻՆՉՈ՞ՒՄՆ ԷՐ ՈՒԺԸ

Հեռու Հնդկաստանում կար մի թագավոր, որ շատ էր սիրում մեծ շենքեր կանգնեցնել, պալատ ու մզկիթ, պարտեզ, մադրասա, աշտարակ ու բուրգ... Ո՛չ միայն սիրում էր կառուցել, այլև գնալ դիտելու գործավորների աշխատանքը և քաջալերել, նվերներ ցրել, ժամերով կանգնել ու գործը զննել։

Մի օր էլ, երբ վեզիրների հետ մի կողմը կանգնած, դիտում էր, թե ինչպես գործավորները քար էին շալակում ու կքված, քրտնաթոր վերև բարձրանում, նկատեց, որ նրանցից մեկը առանց օգնության խոշոր քարերը մենակ շալակում, ուրախ ու զվարթ, երգը բերանին, հա՛ բարձրանում էր, անդադար կրում։

Հուժկու չէր այդ աշխատավորը և ոչ լայնալանջ, բայց մինչ մյուսները տնքում էին ծանրությունների տակ, մինչ հուժկուները հազիվ շարժվում էին և տխուր ու մռայլ, դանդաղ քայլեր անում, նա արագությամբ ու մեծ դյուրությամբ քարն էր շալակում, զվարթ մի երգ հնչեցնում և ժպիտը դեմքին՝ դեպի վեր ելնում։

Թագավորը զարմացավ. ապշեցին նաև մեծ վեզիրները։ Ո՞վ էր այդ մարդը, որ տանում է ամենամեծ աշխատանքը՝ ժպիտն երեսին, զվարթ երգ բերնին և որ ո՛չ մի գանգատ ու կամ մի հառաչ՝ չէր հանում կրծքից։ Ինչո՞ւմն էր նրա ուժը, զվարթությունը, դիմացկունությունը։ Ի՞նչն էր նրան ուժ տվող, այդ տկար մարմնին տոկուն դարձնող և շատ քաջերից, լայնալանջերից ավելի գործունյա, ավելի աշխույժ ու կորիճ անող։

— Խոսի՛ր, ո՛վ վեզիր,— դարձավ թագավորն իր փոխանորդին,— քաջատրեր տեսնենք. ինչո՞ւմն է այդ գործավորի ուժի, զվարթության և տոկունության խորին գաղտնիքը. ինչի՞ց է, որ մյուս, այդ բոլոր հուժկու մարդիկ տնքում են, հառաչում ավելի թեթև, մանր գործերից, իսկ դա

այդքա՞ն թուլակազմ, այդքա՞ն ողորմելի, սակայն միշտ զվարթ և միշտ արագաշան...

Վեզիրը լռեց, շատ խոր մտածեց և չկարողացավ ոչինչ պատասխանել։

— Խոսեցեք և դուք, իմ խորհրդականե՛ր,— դարձավ թագավորը մյուս վեզիրներին,— ձեզնից ով ասի այդ գաղտնիքը, կլինի իմ սիրելին և իմ մտերիմը։

Բայց ո՞վ կարող է ասել այն, ինչ որ միայն աստված գիտեր և ինքը՝ գործավորը։

— Տե՛ր իմ,— խոսեց մի վեզիր,— հրամայիր նրան ավելի ծանր գործ տալ, տեսնենք նա նույնպես կերգե՞ գործելիս և այդպես ուրա՞խ քարեր կկրե։ Գուցե նա ավելի և շատ ուժով է, քան երևում է։

Ու թագավորը հրամայեց, որ քարյա սյունի մի պատվանդանը գործավորը կանգնեցնե։

Սա մոտ եկավ, նայեց խոշոր քարին, կանչեց աստուծո մեծ, հզոր անունը, ժպտաց, կռացավ և մի շարժումով գլորեց նրան սյունի ստորոտը։ Հետո սրբեց քրտնաթոր դեմքը և միշտ երգը բերնին՝ քարձրացրեց և դրեց սյունի տակ։

Բոլորն ապշել էին։ Այդտեղ մի բան կար, մի գաղտնի ուժ անշուշտ, որով օժտվում էր չնչին գործավորը և որից, ըստ երևույթին, ոչ արքան ուներ և ոչ վեզիրները։

Մոտ կանչեց արքան քաջ գործավորին, փող տվավ, գովեց և ապա հարցրեց.

— Ինչո՞ւմն է ուժդ, կտրի՛ճ գործավոր։

— Չգիտեմ, արքա,— ժպտաց կտրիճը,— ես այսքան գիտեմ, որ երջանիկ եմ, ո՛չ մի վիշտ չունեմ. գործում եմ ուրախ, ապրում եմ ուրախ...

Արքան այդ խոսքերից ոչինչ չհասկացավ ու հրամայեց իր վեզիրներին խորհրդի ժողովվել, մտածել, փնտրել և գործավորի ուժի գաղտնիքը գտնել։ Եվ դրա համար հինգ օր ժամանակ տվավ։

Մինչ խորհում էին ամբողջ տերության այդ խելոք մարդիկ, վեզիրներից ալևորը, որ լսել էր գործավորի ասած խոսքերը, հրաման խնդրեց հեռանալ, մինչև երեկո Հասանի (այդ է գործավորի անունը) գործը գտնելուց հետո, մոտեցավ նրան, ապա ընկերացավ և կամեցավ հյուր լինել նրա տանը։

— Տեր իմ,— ասաց Հասանը,— ես մի աղքատ մարդ եմ, մի խրճիթ ունեմ. վայե՞լ է, որ դու այնտեղ մտնես և իմ չոր, խղճուկ ընթրիքին մասնակցես։

— Հոգ չէ, իմ որդի. ես ուզում եմ տեսնել խրճիթդ ու կինդ, զավակդ ու կյանքդ. ուզում եմ տեսնել, թե իրա՞վ միշտ չունես և երջանիկ ես, իրա՞վ միշտ էլ զվարթ ես, միշտ երգը բերնիդ։

Եվ ծերունի վեզիրին Հասանը տուն տարավ։ Երբ ներս էին մտնում, դռան առաջ երևաց մի չքնաղ երիտասարդ կին, որ միրալիր ժպիտը դեմքին, մի հրեշտականման մանուկ էլ գրկին, ընդառաջ եկավ, գրկեց ամուսնուն, անկեղծ ու սիրով համբուրեց նրան, գիրկը տվավ մանուկը, հետո միշտ զվարթ՝ ներս տարավ նրանց, ընթրիքը բերեց և այնպես խնամքով, այնպես մեծ սիրով կերակրեց, գգվեց իր ամուսնուն, որ ծերունի վեզիրը երբե՛ք իր կյանքում այդքան չէր հուզվել։

Եվ երբ ընթրեցին մեծ զվարճությամբ, հայրը վերցրեց մանուկին, նրա հետ խաղաց, նրան զվարճացրեց. մանուկն՝ իր անմեղ, զվարթ ծիծաղով խրճիթը լցրեց, վեզիրին դյութեց, իսկ կինը, այդ սիրող, պաշտող, չքնաղ ամուսինը այնքա՛ն գորովով, այնքան ջերմ սիրով զբաղեցնում էր հոգնած ամուսնուն, որ մեծ վեզիրը գոչեց զմայլած.

— Վկա է աստված, վկա մարգարեն, որ այսքան պատվական ու սիրող կին երբե՛ք չեմ տեսել։

— Եվ այսքան իր կինը պաշտող ամուսին էլ,— ավելացրեց կինը՝ գլուխն ամուսնու կրծքի վրա դրած.— ամուսինս ինձ սիրում է. մենք երջանիկ ենք, գոհ և անտրտունջ. աշխարհի անիրավությունները մեր դռնից ներս չեն մտնում, վախենալով սիրուց, համերաշխությունից. ցավերը խուսափում են, վշտերը հալածվում. մեր բժիշկը սերն է, մեր փրկիչը սերն է...

— Վկա է աստված, կին դու,— խոսեց վեզիրը,— վկա նրա մարգարեն, որ դու իրավունք ունես. չկա ավելի մեծ բժիշկ, չկա մեծ քաջալերիչ, քան սերը, անկեղծ ու վառ, մշտատև սերը, որ իր ժպիտով հերոս է շինում, քարեր է փշրում, արգելքներ ջարդում և որի առաջ աշխարհն անզոր է, ցավը մի թզուկ... Իրավունք ունես, կին դու. ես ա՛յժմ հասկացա, թե մարդուդ ուժը ո՛րտեղից էր։ Ուժը սիրո՛ ծնունդ է, և սերն է միակ այն մեծ ուժը, որ կարող է լեռները շարժել, աշխարհը փոխել, բոլոր անիրավություններն անզոր դարձնել և ամեն մի փուշ՝ վարդի փոխանակել...

Ասաց, հիացած ելավ, գնաց և ամեն բան պատմեց հզոր արքային։

Արքան զարմացավ և չհավատաց։ Չէր տեսել երբեք անկեղծ սեր, որովհետև երբեք չէ՛ր սիրվել, այլ միշտ վախ ազդել. չէր իմանում նրա ուժը, որովհետև նրան չէին սիրել, այլ շողոքորթել։

— Խելքդ կորցրել ես, տխմա՛ր ծերունի,— գոչեց նա,— մի՞թե կարծում ես, որ Հասանի ուժը հենց դրանումն է։ Ո՞վ է ավելի սիրված, քան

ես. չէ՞ որ այս բոլորը խոնարհվում են ակնարկիս առաջ, չէ՞ որ ես կանայք ունեմ և շատ որդիներ. մի՞թե պիտի ասես, որ նրանցից ոչ մեկն ինձ չի սիրում...

Ներսինին խոնարհվեց, կյանքիցը վախեցավ և խոհեմությամբ՝ լուռ կացավ։

— Գնա՛, գնա՛,— արհամարհանքով հեռացրեց նրան արքան,— դու երազող ես, դու ծերացել ես... և կտեսնես, որ սխալվում ես։ Ահա ես երազող ես, դու ծերացել ես... և կտեսնես, որ սխալվում ես։ Ահա ես կհրամայեմ, որ այդ կնոջն ու որդուն հարեմս քաշեն. կինը եթե ասածիդ պես գեղեցիկ է, ինձ կպահեմ, և պիտի տեսնես, որ դրանով ոչինչ չի պակասիլ Հասանի ուժից։

Ու հրամայեց։

Հինգ ձիավորներ իսկույն Հասանի տունը շրջապատեցին, դուռը կոտրեցին, ներս մտան գիշերով, ամեն բան տակնուվրա արին և Հասանի կնոջն ու որդուն հարեմ քարշ տվին։

Մյուս օր առավոտ արքան կանգնած էր նույն շենքի վրա, երբ Հասանը տխուր ու արտասվաթոր՝ գործելու եկավ։

Ամենքը ժողովված նրան էին սպասում։ Կռացավ Հասանը, ուզեց էլի մի մեծ քար շարժել տեղից և չկարողացավ. փորձեց ավելի փոքրը, բայց թևերը կարկամել էին, ծնկները ծալվեցին, փոքր քարն անգամ տեղից շարժել չհաջողվեց։

Ու բարձրացավ նա, հուսահատաբար ձեռքերը ցած թողեց, հետ կծկվեց գետին և ազիողորմ ու սրտապատառ՝ հառաչեց, ասաց.

— Ա՛հ, էլ ուժ չմնաց...

1897

ԿԼՈՐ ԱՍՏՎԱԾՆԵՐ

„Le veau d'or est toujours debout
On ensence sa puissance"[1].

«Ֆաուստ» (օպերայից)

Երկրագնդի խորքերում, այնտեղ, ուր գտնվում է դժոխքի թագավորությունը, սատանայապետ Բեհեղզեբուղի ահավոր պալատի առաջ, մեծ իրարանցում կար։

[1] «Ոսկյա հորթը միշտ կանգուն է, և խնկում են նրա զորությանը»։

Ամբողջ դժոխքն այդօր տակնուվրա էր։ Հազարավոր մեծ ու փոքր սատանաներ, ճչալով ու աղմկելով, հրապարակ էին խուժում ամեն կողմից։ Պետք էր տեսնել, թե ինչպե՞ս հանկարծ բացվում էին բոցավառ անդունդներ, նրանցից դուրս վիժում ամեն տեսակի այլանդակ հրեշներ՝ կատաղի գժերի պես ոռնալով։

Այդ բավական չէր. դժոխքն ամբողջ հիմունքներով ցնցվում էր և դուրս նետում իր խորշերից բոլոր դևերին, դևիկներին, բոլոր քսու, նենգավոր ոգիներին, որոնք սարսափահար, միմյանց կոխոտելով՝ լցվում էին պալատի առաջ։

Իսկ ի՞նչ դրության մեջ էին սատանայապետը, նրա պալատականները, այլև խորհրդականները, որոնք վախից լեղապատառ՝ միմյանց գլխի վրայից ցատկելով, միմյանց տապալելով՝ շտապում էին ապաստանել գահի տակ։

Հուզումն սկսել էր վաղուց։ Լրաբերներն ամեն կողմից հասնելով՝ հետզհետե սպառնալից համբավներ էին բերում դժոխքի արքային, և սա, գունատ ու շվարած, ժողովել էր շուրջը ստորերկրյա թագավորության իմաստուններին ու գիտուններին և խորհրդի նստել։

Մինչ այդ, սատանաների ամբոխը պալատի առաջ ավելի ստվարանում էր և բարձրաձայն պահանջում, որ թագավորը դուրս գար, երևար և շտապեր փրկելու ստորերկրյա աշխարհը վերահաս վտանգից։

Բայց ի՞նչ էր եղել ուրեմն։ Երկրաշա՞րժ էր, ջրհեղե՞ղ, թե՞ գուցե հեղափոխություն։

* * *

Ահա թե բանն ինչումն էր։

Վերևում, մարդկանց մեջ, հայտնվել էին ինչ-որ նոր մտքեր, որոնք մեծացել՝ ուգնությամբ կործանում էին ոսկյա և արծաթյա բոլոր կուռքերը, մեծ ջանասիրությամբ փշրտում էին նրանց, ոտնատակ տալիս, տրորում և արհամարհում։

Կուռքերի փշրվելու հետ՝ մարդիկ հալածում էին իրենց միջից չարության ոգիներին էլ և դյուրությամբ ազատվում ո՛չ միայն սատանաների լարած թակարդներից, այլև հավասարության և արդարության սուրբ ձեռքներին՝ ոչնչացնում էին ստորերկրյա իշխանության բոլո՛ր գործակալներին։

Փոքր մի ևս— և չարությունը պիտի մնար անզեն ու անզոր...

Դե՛հ, դո՛ւք ասացեք, էլ ինչպե՞ս դժոխքն ու նրա բնակիչները կարողանային հանգիստ մնալ։

Սատանայությունն ամբողջ՝ ջանք էր գործ դրել վերականգնելու ոսկ-

յա հորթն ու նրա երկրպագությունը։ Հնարքներ էր մտածել՝ անհավասարության ուժը պահպանելու։ Մինչև իսկ մարդկության կեսը զինել էր մյուսի դեմ, սակայն ամեն տեղ պարտություն էր կրել։ Հե՛նց որ ընկնում էր ոսկյա հորթը— սատանաները ջարդված, գլխիկոր, հուսաբեկ և ահալից՝ փախչում էին և այժմ ահա հուսահատ՝ համոզված էին, թե հասել էր այլևս դժոխքի վերջին օրը։

Սատանայապետը պարզ տեսնում էր, որ գահը երերում էր, որ իր բանն էլ բուրդ էր և որ ոսկյա հորթի անկմանը հետևելու էր շարության իսպա՛ռ ոչնչացումը։ Դրա համար նա մեծ ժողով էր գումարել դժոխքի խելոք ոգիներից և հարցը նրանց վիճաբանության ենթարկել։

Բայց օրերն անցնում էին, վերևում ոսկյա հորթերը միմյանց ետևից փշրվում, շար ոգիները բազմությամբ լեղապատառ խուսափում էին, և սակայն ներքևում, արքայական մեծ խորհուրդը ո՛չ մի հետևանքի չէր հասել։ Մյուս կողմից էլ պալատի առաջ մեծանում էր ամբոխը և աղմուկով դղրդացնում դժոխքը։

* * *

Վերջապես Բեհեղզեբուղը գունատ, կատաղի, ելավ ժողովից, հրամայեց բանալ պալատի դռները և դուրս եկավ ժողովրդի հետ խոսելու։

Դժոխքը թնդաց սատանաների հուսալից աղաղակներից, երբ սատանայապետի ահեղ դեմքը երևաց։

Պահ մի խոր, անշշուկ լռություն տիրեց, որից հետո Բեհեղզեբուղը ցցեց հասակը և դառնալով սպասող ամբոխին, սկսեց խոսել այսպես.

— Սիրելի՛ սատանաներ...— ասաց նա,— այսօր մեզ համար կյանքի և մահվան խնդիր կա, այսօր վճռվում է մեր թագավորության և ձեր բոլորիդ վիճակը. եթե մի հնարք չգտնենք, չի՛ անցնի մի քանի օր, և կոչընչանան վերևում բոլո՛ր ոսկյա կուռքերը, իսկ դա կոչնչացնի և մեզ։ Այնտեղ, երկրագնդի երեսին, շնորհիվ ոսկյա հորթին, մեր իշխանությունն ապահովված էր և մեր եկամուտն առատ։ Բայց ահա հայտնվել է այժմ արհամարհանք ու անարգանք դեպի այդ հորթերը. նրանց առաջ այլևս չեն խոնարհվում, նրանց այլևս չե՛ն ուզում զոհ տալ իրենց ամբողջ զգացմունքները, միտքն ու հոգին։ Դա սոսկալի է մեզ համար։ Այժմ ոտների տա՛կ են առնում ոսկյա հորթերին, թքում ու ցեխոտում են նրանց... և դողո՛ւմ է մեր գահը, խարխլվում մեր թագավորությունը, թուլանո՛ւմ է մեր ազդեցությունը։ Իմ խորհրդականներն ու գիտունները չկարողացան հնարք գտնել այդ ավերածության դեմ. այժմ հույսս այն է, որ գուցե ձեր մե՛ջ գտնվի մի հանճարեղ գլուխ և մեզ մի միջոց առաջարկի։

— Լա՛վ իմացեք,— շարունակեց նա ներշնչող ձայնով,— որ ձեզնից նա, ով հնարը գտնի ոսկյա հորթի պատիվն ու հարգանքը վերականգնելու մարդկանց մեջ, ո՛չ միայն կդառնա անմահ բարերար ամբողջ սատանայության, այլև կլինի իմ փոխանորդն ու սիրելին, անունն էլ կրակե տառերով կգրվի սատանայական տարեգրության մեջ... Դե՛հ, մտածեցեք, իմ ճարպի՛կ հպատակներ. պեղե՛ք ձեր ուղեղը, և թող խոսի հնարք գտնողը։ Բայց շտապեցեք. մի քանի օր ևս, և արդեն ուշ կլինի...

Ասաց Բեհեղզեբուղը և շատ քիչ հույս դրած իր հպատակների ուղեղի վրա, իր նախաճաշը պահանջեց։

Ամեն սատանա, փոքր թե մեծ, արու թե էգ, քիթը կախած, մատը ճակատի վրա, սկսեց հնարք որոնել։ Տիրել էր խորին լռություն։ Սատանայական միտքը երկունքի մեջ էր։

* * *

Հազի՛վ Բեհեղզեբուղը նախաճաշը վերջացրել էր, որ մութ անկյունից դուրս պրծավ ամենափոքրիկ մի սատանա, ճարպիկ ոստյունով թռավ բոլորի գլխի վրայից և եկավ ցցվելու գահի առաջ։

— Ձերդ խավա՛ր մեծություն,— ասաց նա,— ես մի միջոց ունեմ առաջարկելու։

— Դո՞ւ, ճղճի՛մ սատանա,— ծիծաղեց սատանայապետը,— խոսի՛ տեսնե՛նք։ Բայց զգուշացիր. եթե հիմար բան ասես, այնպես կշպրտեմ քեզ, որ մարդկանց լավ հատկությունների պես կտափակես և աննշմարելի կմնաս հավիտենականության մեջ...

Ճղճիմ սատանան դողաց այդ սպառնալիքի առաջ և կակազելով ասաց.

— Ձերդ խավա՛ր մեծություն, ես մտածեցի, որ ոսկյա հորթի անկման պատճառը մի մարդ է, որ այժմ հայտնվել է վերևում և որ... որ...

— Ահ, այդպե՞ս...— քրքջաց սատանայապետը հեգնությամբ,— դու այդպե՞ս կարծեցիր, անմիտ... Դու հիմար ես և չգիտես դեռ, որ մի միակ մարդը չի՛ կարող կախարդական գավազանի ազդեցության տակ՝ փոխել մտքերը... Դու այդ չգիտես, ուրեմն գնա՛ և սովորիր...

Հետո պոչը շարժեց և ճղճիմ սատանային այնպես շպրտեց, որ նա մինչև այսօր էլ աննշմարելի՝ սլանում է հավիտենականության մեջ։

Նրա դառը վիճակը կասեցրեց շատերին, որոնք պատրաստվում էին խոսելու։ Եվ այդպիսով, երկա՛ր, ոչ ոք ձայն չէր հանում։

— Այս ի՞նչ է,— գոչեց Բեհեղզեբուղը կրակ կտրած,— մի՞թե բթացել են սատանայական մտքերը...

* * *

Եվ ահա հանկարծ, որտեղից որ էր, մի էգ սատանա դուրս սպրդեց ամբոխի միջից, եկավ կանգնելու արքայի առաջ, խոր գլուխ տվավ ու ասաց.

— Ողջ լինի նորին խավար մեծությունը...

— Ի՞նչ, ա՛յ կին,— գոչեց արքան,— հնա՞րք ունիս առաջարկելու խոսիր ուրեմն. բայց աշխատիր հիմար բան չասել։

Կին-սատանան ժպտաց և այսպես խոսեց.

— Թող դատապարտվեմ ես մա՛րդ դառնալու, եթե առաջարկս անմիտ լինի։ Իմ ցույց տված միջոցի շնորհիվ մարդկությունը ոչ միայն կսկսի նորից երկրպագել ոսկյա հորթին, այլև կավելացնի իր մեջ չարությունը և ուժ կտա մեր շահագործության։

— Իրա՞վ... խոսի՛ր ուրեմն։ Ի՞նչ պիտի անել։

— Երկու բան միայն։ Նախ՝ ոսկյա հորթը պիտի մանրացնել և երկրորդ՝ նրան ձևափոխության ենթարկել։

— Պարզ խոսիր, կի՛ն դու,— դեմքը կնճռեց արքան,— բացատրի՛ր միտքդ։

— Այս րոպեիս, ձերդ խավար մեծություն... մինչև այժմ ոսկյա հորթը խոշոր բան էր. ոչ ոք չէր կարող նրան սեփականացնել. այժմ պիտի մանրացնել նրան. հալել և նրանցից ձուլել այնպիսի՛ կլոր, փոքրիկ աստվածներ, որ մարդիկ կարող լինեն իրենց գրպանների մեջն ունենալ, դիզել արկղերի մեջ, նրանով էլ գնահատել և գնել ամեն բան... զգացմունք, միտք, կյանք... Փորձեցեք, օրինակ, այդ կլոր աստվածներից մի քուռ դնել մարդկանց տասից մեկի գրպանը, և պիտի տեսնեք, որ մյուսին իսկույն պատկառանքով և գետնի փոշիները լիզելով՝ կերկրպագեն ունեցողին... այդպիսով ոսկյա հորթը նորից կկանգնի, և նրա պաշտամունքն այնքան մեծ կլինի, մարդիկ այնպե՛ս գազանաբար կպատառոտեն իրար՝ այդ կլոր աստվածներն ունենալու համար, որ մեզ կմնա միմիայն զոհե՛րը հավաքել և հրճվել...

Կեցցե՛ն սանդարամետք,— որոտաց Բեհեղզեբուղն ուրախությամբ,— կեցցես և դու, կի՛ն։ Ե՛կ մոտս. դու իմ թագուհին կլինես և արժանավոր փոխանորդս...

Եվ անմիջապես փուռերը սկսեցին մեծ ջանասիրությամբ ու ահագին քանակությամբ կլոր աստվածներ պատրաստել։ Հետո, սատանաները դուրս խուժեցին մարդկանց մեջ և տասից մեկի գրպանը լցրին այդ աստվածներով։

Կլոր, դեղին աստվածների ազդեցությունը չուշացավ հայտնվելու

Ունեցողները, մի խորհրդավոր մղումով, կանգ էին առնում, երբ անցնում էր ունեցողը, և գետնի փոշին ու կեղտը լիզելով, երկրպագում էին խոնարհությամբ։

Իսկ դժոխքն ու նրա ոգիները ցնծում էին, որովհետև շուտով վերածվում մարդիկ սկսեցին գազանների պես իրար պատառոտել, չարությունն ավելի մեծացավ ու տարածվեց և ստորերկրյա աշխարհի համար անհամար զոհեր պատրաստեց...

Այդ օրվանի՛ց ահա, ոսկյա հորթը կլոր փոքրիկ աստվածների փոխված, շա՛տ ավելի պատկառանքով է խնկվում մարդկության կողմից. իսկ չարության ոգին, շնորհիվ դրան ավելի ուժ ստացած՝ ապականում է ինչ օրլա՛վ է, ինչ որ բարի՛ է...

1898

ԸՄԲՈՍՏԻ ՄԱՀԸ

Անտառը հուզված էր, հուզվա՛ծ մեծապես։

Խուլ, աճեցուն, զայրագին մի շշուկ գրավել էր նրան։ Հսկա կաղնիները բուռն շարժումով կռանում էին դեպի հացիներ, թեղին ու լորին վրդովված՝ շշնջում էին։ Թփերն անգամ, անճոռնի բաղեղներով գալարված, ոտները ճահճի մեջ, գաղջ հողի վրա պառկած՝ անհանգիստ էին... Անտառն ամբողջ հուզված էր։ Անսովոր մի դեպք էր տեղի ունենում այդ բազմադարյան ճահճային աշխարհում, ուր ծառերը մինչև այդ՝ աճում էին, մեռնում, ուտում էին, ապրում, գիշերության մեջ բորբոսնում, պարազիտներով լցվում, բաղեղներով կաշկանդվում և ուր բոլորը գոհ էին, ոչնչի չէին ձգտում։

Բայց ահա մի օր ծառերից մի քանիսը պատռել էին ամեն պատուտակ, անցել ամեն ճահիճ, և արմատները, փոխանակ ըստ վաղեմի ավանդության դեպի ձորն ի վար իջեցնելու, սկսել էին դեպի լեռն ի վեր պարզել։ Այդ անսովոր էր, խիստ անբնական, և անտառն ամբողջ իզուր չէր հուզվել։

Ի՞նչ... արհամարհել պապենական սովորությունը, թողնել ճահիճն ու ձորերը, ճգնել ազատվելու պատուտակներից և որ գլխավորն է՝ դեպի լե՞ռը մագլցել։ Ինչի՞ նման էր այդ։

Նոր ծառերը սակայն, անվրդով, անզգա կարծես այդ բոլոր հուզման՝ անցել էին դիջությունը, անցել գծված սահմանը, գնում էին դեպի վեր՝ ոստնելով ժայռերի վրայից, արհամարհելով արգելքները, պատռե-

լով հողի կուրծքը։ Եվ որը առավելն է, այդ ամբողջ նոր ճյուղավորության ծայրում սկսել էր ծնվել մի առողջ, առույգ և հպարտ ոստերով ծառ, որ վեհությամբ նայում էր արևին, իր ոտների մոտ փռված հին անտառին և իր հպարտ շարժումով կարծես ծաղրում էր ճահճի մեջ ապրող հին ընկերներին։

— Դարձե՛ք, խելահեղնե՛ր,— գոչում էին հները։

— Խենթացել են,— գոռում էին կաղնիները։

— Կոչնչանան,— շշնջում էին թփերը։

Իսկ նոր ծառը բարձրանում էր, անհագ բարձրանում և բոլոր այդ աղմուկի վրա ժպտում ու զվարճանում։

— Բայց այդ ո՞ւր ես գնում, մոլորվա՛ծ,— կանչեց վերջապես մի հսկա կաղնի.— ի՞նչ գործ ունես այդ բարձրությունների վրա, ուր տիրում է սառնամանիք, ուր քամին սոսկալի է, ուր ջուր չկա և ուր ժայռերը կոշտ են, ճանապարհը դժվար...

— Բարձրանում եմ,— ժպտաց նոր ծառը։

— Բարձրանո՛ւմ ես,— ապշեց մեծ կաղնին,— խե՛նթ, ի՞նչ կա բարձրանալու մեջ, եթե ոչ՝ միմիայն կորուստ։ Ավելի լավ չէ՞, որ իջնես դեպի ձորը, գետակի ափին, ուր ստվեր կա, առատ ջուր, սննդարար հող և ուր քամին անզոր է, կայծակն՝ անհասանելի...

— Բարձրանում եմ,— համառեց ծառը և մի րոպե իսկ կանգ չառավ։

— Դու կոչնչանաս,— կանչեցին ծառերը։

— Բարձրության վրա...

— Կայծակին զո՛հ կլինես։

— Լեռների ծայրին...

— Դու անոթի՛ կմնաս, ծարա՛վ, պապակվա՛ծ։

— Բայց բարձր կլինեմ...

Ու բարձրանում էր, անհագ բարձրանում։

Անտառն ամբողջ այժմ լուռ, դողդոջուն, դարձած դեպի բարձրացող ծառը, սրտատրոփ դիտում էր նրա քայլերը, ուրախանում նրա հաճախ ապարդյուն ճիգերի վրա, շարամտորեն ժպտում, երբ նա մի խոշոր ժայռի դեմ էր առնում, և նենգամիտ, կծու խոսքեր նետում, երբ ծառը պապակված ու հոգնած՝ կանգնում էր շունչ առնելու և կամ, երբ քամին զորեղ տարուբերում էր նրան այս-այն կողմ, ծռում-գետնին էր քսում, կամ տերևներն ու ճյուղերը միմյանց խառնելով՝ գլխին դիզացնում...

Փչում էր քամին, այրում էր արևը, անձրևն ու հեղեղները թրջում էին նրան, ամպերը գլխին որոտում, փոթորիկը նրան ժայռեժայռ խփում, կայծակը նրա շուրջը շանթիչ գծեր պարզում... և սակայն ծառը համառ, անդրդվելի ելնում էր, ելնում և մշուշոտ, բարձր կատարների ձգտում...

* * *

Եվ երկար, երկա՛ր տանջվելուց հետո կես ճղակոտոր, տերևները կորցրած, հոգնած, ուժասպառ, խաղալիք քամիների, որոտումների տակ, կայծակի գծերի մեջ, անձրևներով թրջված՝ հասնում էր բարձր կատարին։ Այժմ նա մշուշին ցած էր թողել իր՝ ճահիճների մեջ մնացած ընկերներին ծածկելու. այժմ նա արևին էր տարածում իր թևերը, բայց այժմ ~~քան~~ երբեք նա մենակ էր, անընկեր, հեռու գետակից, հեռու ձորակից։

Եվ չէր ափսոսում։ Այստեղ, բարձրության վրա հանգչած, զմայլվում էր նա հեռավոր հորիզոնով, փայլուն արևի տակ ողողված լեռների կատարներով։ Անձրևը նրան ջուր էր տալիս, լեռան հողը՝ սնունդ։ Այնտեղ նա երազում էր իրենից մի նոր, բարձր կանգնած սերունդ ստեղծել, բրոնել կատարը, արևի լույսի մոտ լինել, ամպերի խոնավությունից հեռու կենալ և ճահճային պատվանդանից միշտ ազատ մնալ։

Իսկ ցածի անտառը նայում էր դեռ նրան ծիծաղելով, նայում էր մենավորին, խենթուկին ու ասում.

— Կոչնչանա. կայծակը կփշրի նրան, քամիները կկործանեն հանդուգնին...

Գալիս էին քամիները, փշրում նրա ճյուղերը, ցրիվ տալիս տերևները. գալիս էր անձրևը, մերկացնում էր նրա ոտը, ճկուն արմատները հեղեղների տակ ողողում. գալիս էր և կայծակը, աղմկում, վժժում, շրջակա ժայռերը ցնցում, այս-այն թփիկն այրում-սևացնում և գոչում ծառին.

— Հանդո՛ւգն, ո՞ւր ես եկել ինձ մոտ, կայրեմ քեզ։

— Այրի՛ր,— ասում էր ծառը,— կայրվեմ այստեղ, բայց կայրվեմ բարձրության վրա...

Այդպես էլ եղավ։

Մի շարագուշակ փոթորկալից գիշեր քամիները ճղակոտոր արին ծառին, հեղեղը մերկացրեց արմատները, և այրող, նախանձոտ կայծակն եկավ վժժալով ու նրա կրծքին խփեց...

Ծառը բռնկվեց, սկսեց այրվել։

— Այրվո՛ւմ է...— քրքջաց ներքևից ճահճային անտառը։

— Նրա վերջն այդ էր,— ասում էին թփիկները։

— Տեսա՞ր, հանդո՛ւգն արարած,— կանչեց մեծ կաղնին,— մեռնում ես այժմ ահա...

— Բարձրության վրա՛...— մրմնջաց ծառը։

Եվ խոր ու խավար գիշերվա մեջ նրա բոցը փայլում էր հեռվից՝ մի կրակոտ աստղի նման։ Ճարճատում էր նա, ծուխ-մուխ արձակում, իր

մահը խնկում. մահ այդքա՜ն շքեղ, այդքա՜ն բարձր. և հողը նրա շուրջը կարծես տեղ էր բաց անում, ընդունելու իր ծոցի մեջ նրան, որ բարձրի՜ ձգտեց և բարձրության վրա՜ էլ մեռավ...

1900

ԱՐՁԱՆԸ

Հրապարակի վրա, այնտեղ, ուր մարդիկ միշտ ժողովվում են, կաղնի ծառի տակ, մերկ կնոջ մի պղնձյա արձան կար կանգնած։

Մերկ կնոջ... բոլորովին մերկ մի գայթակղություն այն պատկառելի մարդկանց, որոնք մերկ ոչինչ տեսնել չեն սիրում։

Թե որտեղից էր այդ արձանը և որի կերտած, կամ թե ինչ միտք ուներ և ինչու թողած— ոչ ոք չգիտեր։

Ոչ ոք չէր հիշում նրան այդտեղ դնելու օրը։ Վաղուց էր, շատ վաղուց։ Պատկառելի մարդիկ, երկար ժամանակ և գրեթե միշտ, նրա մոտովն անցնելիս երեսը դարձնում էին, որ «անամոթ» արձանը չտեսնեն. կանայք երբեք չէին անցնում նրա կողքից. անցնողն էլ «անբարոյական» տիտղոսն էր ստանում։ Երբեմն միայն հետաքրքրության համար, հեռվից և այն էլ գաղտագողի էին դիտում արձանը։

Եղան տարիներ, որ հասարակությունը քանիցս կամեցավ փշրել արձանը, անամոթությունը մեջտեղից վերացնել։ Վեճ ու կռիվ, անեծք կրոնավորներից, բողոք պառավներից,— ոչինչ չազդեց արձանին։ Միշտ այնտեղ, իր համարձակ մերկությամբ պատվանդանի վրա անդրդվելի կանգնած, ակնարկն անհունության, կարծես հեգնորեն ժպտելով, թողնում էր, որ մարդիկ կատաղեն, բռունցք ցույց տան, դավեր լարեն և սակայն անզոր նրա դեմ՝ նորից գան և շուրջը ժողովվեն։

Բայց ի՞նչ էր ուրեմն այդ մերկ արձանը, ո՞վ էր նրան մեջտեղ բերել, այդպես բաց տեղ դրել և ինչո՞ւ ամեն ջանք նրան ոչնչացնելու՝ մնում էր ապարդյուն։

Արձանը պաշտպաններ ուներ։ Թե ո՞վ էր նրան այնտեղ կանգնեցրել— այդ հայտնի չէր. բայց թե ո՞վ էր նրա պաշտպանը— դա ակներև էր։

Կաղնին պատկանում էր ժողովրդին։ Վաղուց ի վեր, նվիրական դարձած, սերունդից սերունդ ավանդաբար մնացել էր մի համոզմունք, որ եթե ծառը կտրվի կամ մերկ կնոջ արձանը տեղից շարժվի, կռիվն ընտանիքների մեջ պիտի մանի և հետզհետե ամենքին անբախտացնի։

Այդ ավանդությունը հաստատված էր մանավանդ նրանով, որ, ինչպես հներն էին պատմում, մի անգամ մի ազդեցիկ մարդ կամեցել էր արձանը ոչնչացնել, բայց երբ շարժել էր նրան իր տեղից, նույն գիշերն իսկ երկու սիրելի որդիները կռվի էին բռնվել և իրար սպանել։

Դրանից հետո էլ ո՞վ կհամարձակվեր ձեռք տալ արձանին։ Ոչ միայն ձեռք տալ չէին կարող, այլև , ով հրապարակի շուրջն էր, նվիրական պարտք էր համարում հսկելու, որ արձանը չանհետանար։

Եվ այդպես, մերկ կինը բարձր ի գլուխ, հաստատ իր պատվանդանին, մազերը թիկունքի վրա շքեղապես փռած, ակնարկն երկնքին, այդտեղ էր տարիներից ի վեր, անվրդով՝ լուտանքների դեմ, տնդրդվելի՝ ապառնալիքների առաջ։

Գայլերը շատ ոռնացին նրա դեմ, բարոյագետներն անդադար պընդեցին, որ գոնե պետք էր հագցնել նրան, եզվիտներն առաջարկում էին մի տաճար շինել և արձանին մեջը ծածկել— բայց ժողովուրդը չթողեց։ Ասված էր, թե պետք էր թողնել արձանին այն դրության մեջ, ինչպես կար. ժանդը միայն պետք էր սրբել և այդպես մերկ՝ հրապարակի վրա պահել...

* * *

Մի գիշեր, չգիտեմ ինչպես եղավ, անհայտ չարագործներ— ասում են, որ գայլեր ու բարոյագետներ էին դրանք— անգթաբար կորզեցին արձանն իր պատվանդանից և, առանց այլևայլության, մոտակա ջրհորը նետեցին։

Պետք էր տեսնել սոսկումը, երբ ժողովուրդն առավոտյան զարթնելով, տեսավ, որ արձանը չկար։

Քաղաքն ամբողջ տակնուվրա եղավ։ Գայլերը հրճվում էին, մինչ երիտասարդները կատաղած ամեն կողմ ընկան՝ չարագործներին փտրելու։ Սոսկումն ընտանիքների մեջ էլ մտավ։ Ամենքը բոպե առ բոպե, սրտատրոփ սպասում էին դժբախտությունների, ժանտախտի կամ այլ պղծի։

Արձանին խիստ մոտ ապրում էր նախապետական մի մեծ ընտանիք։ Տան նահապետը ողջ-առողջ էր, երբ արձանն անհետացավ։ Նույն օրն իսկ սակայն անկողին ընկավ, ապագա աղետների սոսկումը կաթվածահար արավ նրան և նա գիշերը մեռավ։

Տան մեծ որդին կատաղած՝ բարոյագետներից մեկի հետ կռվի բռնվեց և արյունաշաղախ՝ նրան տուն բերին։ Եղբայրները վրեժի ելան. բարոյագետի բարեկամները պաշտպանվեցին... Եվ չէր անցել մի ամբողջ օր արձանի ջրհորն ընկնելուց, որ հրապարակի շուրջը գտնվող տան

ընտանիքից չորսի մեջ վեց-յոթ սպանված, չոր-հինգ վիրավորներ էին հաշվում։

Մինչ այդ մի խումբ երիտասարդներ, ժողովված ջրհորի եզերքին, մտածեցին արձանը դուրս հանել և նորից իր տեղը կանգնեցնել։

— Ո՞վ կարող է այդ ծանր բանը ջրհորից վեր հանել առանց փրշրելու,— գոչեց մեկը։

Փորձեցին նախ կառչող ունելիքներ նետել, բայց արձանն իր ծանրությամբ իջել էր ջրհորի տակ և դեռ կիսովին էլ խրվել հողի մեջ։

Մնում էր մի մարդ ներս կախել, արձանը գտնել, չվաններով կապել և ապա փորձել վեր հանելու։

Երկար խորհելուց հետո՝ մեկին իջեցրին։ Ջրհորը խոր էր, ջրով լի։ Երիտասարդը ջրի մեջ ընկղմեց, բայց հազիվ խեղդվելուց ազատված՝ խնդրեց, որ իրեն վեր քաշեն։

Ջուրը սառն էր, գորտերով լի, և արձանը շատ խոր, անմատչելի։

Մտավ մի ուրիշը, ավելի հանդուգնը։ Գնաց ջրի մեջ, հասավ հատակին. շոշափեց, բայց արձանի նշույլ անգամ չտեսնելով՝ ետ եկավ։

— Կորսված է, արձանը չկա։

— Կորսվա՞ծ է...

Ինչպիսի՞ սոսկում էր, որ պատճառեց այդ լուրը քաղաքին։ Բանն այն է, որ մերկ կնոջ անհետանալով գժտություն սկսեց ժողովուրդյան մեջ ևս։ Ամբողջ քաղաքը սկսեց իրար անցնել։ Մարդիկ միմյանց վրա քայլեցին, իրար հարվածեցին, հայհոյեցին, կռիվ, արյուն և չարիք...

— Արձանը պիտի գտնել, երևան պիտի հանել...— մտածեցին խելոքները։ Երիտասարդները նորից փորձեցին։ Վիճեցին, վիճեցին, հանելու կերպի վրա երկվացան, կուսակցություններ կազմեցին, ապա արձանի հանելու նպատակն երկրորդ պլանի վրա անցավ և տեղի տվավ անձնական հաշիվների...

Վերջապես բոլորը ձանձրացան և մի առ մի հեռացան ոչ միայն ջրրհորից, այլև թողին արձանի մասին մտածելը։

Եվ մնաց թաղված արձանը ջրհորի հատակում, չարիքներն էլ մարդկանց սրտերում։ Քաղաքը դարձավ ապականության մի վայր, ուր մարդիկ վարժվում էին միմյանց դեմ դավեր լարելու, միմյանց ոչնչացնելու։ Եղբայրն եղբոր դեմ էր ելնում, որդին իր հորը, կինն իր ամուսնու և ճգնում էին իրար դավել, խարդախել։ Ամեն ոք, բնականաբար սաստիկ եսասեր, ինքնամոլ, սաստիկ աղտոտ հոգով և աղտոտ սրտով՝ իր շուրջն ավեր էր սփռում անձը պահպանելու համար, թշվառություն էր սերմանում՝ ինքը միայն երջանիկ լինելու համար. սակայն ամեն ոք անապահով էր այլևս, ավազի վրա էր կանգնեցրած նրա հանգստությունը։

Արձանի մասին վաղուց արդեն շատերը մոռացել էին. նրանից մընացել էր միայն ժանգոտ պատվանդանը։ Ջրհորն էլ, թողած անխնամ, համարվելով փչացած, թունավոր ճահիճ էր դարձել նախ, գորտերով լցվել, ապա չորացել էր և հուսկ ուրեմն աղբակույտ եղել։

Մնում էր միայն կաղնին, այդ հին կաղնին՝ այժմ ծերացած և ճղակոտոր...

Այդպես անցել էր երկար ու երկար տարիներ, երբ մի օր հանկարծ մի տարօրինակ բան կատարվեց քաղաքում։

Հեռու, քաղաքի վերջին ծայրում, ամենքից ատված, ամենքից կասկածավոր նկատված մի ընտանիք կար։ Մի ծերունի, որի անցյալը ոչ ոք չգիտեր, մի լռիկ պառավ և երեք որդիք, կտրիճ տղամարդիկ, որոնք հայտնի էին քաղաքին որպես գաղտնի որսորդներ, տարօրինակ նիստուկացով, գրեթե անտառների մեջ մեծացած, դաժան ու լուռ, կոպիտ ու վայրենի։

Ոչ ոք նրանց հետ հարաբերություն չուներ։ Ճանապարհին նրանց հանդիպողը վախեցած կամ երես էր դարձնում և կամ շտապում էր հեռանալ։

Ահա այդ նույն ընտանիքը մի օր հանկարծ խմբովին քաղաք մտավ, եկավ վարձելու հրապարակին մոտ գտնվող մի խրճիթ և բնակություն հաստատեց այնտեղ։

Երեք որսորդներն անտառից իջան և, նոր բնակարանում հայտնվելուց հետո այլևս որսի չէին գնում։ Ընդհակառակն, իրենց ծնողների հետ կաղնու մոտ էին ժողովվում, խոսում էին մեղմ ձայնով, երկար ու տաք, ապա արձանի պատվանդանն էին զննում, ջրհորի շուրջը պտտում և նորից լուռ՝ տուն մտնում, դուռն ետևից պինդ փակում։

Քաղաքացիք սկսեցին սաստիկ հետաքրքրվել այդ տարօրինակ երևույթով։ Նախ հեռվից, ապա գաղտագողի գիշերները, մոտենալով խրճիթի փակված լուսամուտին, աշխատում էին տեսնել, թե ինչով էին զբաղված նրանք։ Երբեմն այդ լրտեսները տեսնում էին խրճիթի մեջ մեծ կրակ վառված, լսում էին մուրճի ու սալի ձայն... և բոլորն այդ էր։

* * *

Բայց մի առավոտ, արշալույսը բացվելուն պես, հրապարակի շուրջը եղողները խորին ապշությամբ տեսան, թե ինչպես խրճիթի դուռը բացվեց, նախ դուրս եկան իրար ետևից երեք եղբայրները՝ բահերն ուսերին, կացինը ձեռքերին, իսկ հետո մայրը, ուտելիք առած և հայրը՝ մուրճ և ունելիքներով...

Եվ այդ թափորը լուռ դիմեց դեպի ջրհորը։

Քաղաքն իրար անցավ։ Ի՞նչ, մի՞թե այդ խենթերն ուզում էին արձանը վեր հանել։

Գայլերը նորից սկսան ոռնալ. բարոյագետները, որոնք այժմ հաստափոր, կուշտ և ազդեցիկ անձեր էին դարձել— աղմուկ հանեցին, պառավները սկսեցին անեծք տեղալ, եղվիտները՝ բանադրանք...

— Մի՛ թողնեք,— գոռում էին գայլերը,— մի՛ թողնեք արձանը հանելու։

— Սպանեցեք այդ անբարոյականներին,— ասում էին բարոյագետները,— դրանք ուզում են նորից այն մերկ կնոջը անամոթաբար հրապարակի վրա դնել։

Բայց եղբայրներն անվրդով՝ ջրհորի մոտ կանգ առան և սկսեցին փորել։ Հայրը բահերն էր սրում, մայրը՝ քաջալերում։

Մինչև երեկո, առանց կանգ առնելու, դուրս տվին քաղաքացոց կուտած աղբն ու ցեխը, ջրհորը երևան հանեցին, ապա սկսեցին պեղել։

Երեկոյան մթնելուն պես, նույն կարգով տուն մտան։ Գիշերը նորից լսվեցին մուրճի ձայներ, և քաղաքացիք մյուս օրը նորից տեսան նրանց ջրհորի մոտ։

Եվ այդ տևեց շատ օր.— շաբաթներ, ամիսներ, մինչև որ եղբայրները բոլորովին դուրս տվին ջրհորից ամեն ապականություն և հատակին հասան։

Սակայն արձանը դեռ չէր երևում։ Տիղմը կոշտացել էր, գետինն ամրացել, արձանին իր մեջ շատ պինդ էր պահել։

Այդ բոլորը ոչինչ, եթե դրսից էլ արգելքներ չլինեին։ Գայլեր, բարոյագետներ և կեղտի մեջ իրենց ավելի հանգիստ զգացող անձեր գիշերով աղբ էին լեցնում երիտասարդների փորած տեղը, երբեմն էլ դրսից քարեր էին շպրտել տալիս նրանց վրա և միշտ ծաղր կարկտում նրանց գլխին։

Եղբայրներից մեծը սկսում էր ընկճվել այդ բոլորից։ Բազուկները թուլանում էին, բահը ձեռքի մեջ դողում։ Միջնակը, դյուրաբորբոք էր, սկսել էր զայրանալ. հալածողների մշտատև լուտանքներից գրգռված՝ կռվի էր ելնում նրանց դեմ, քարերին քարով պատասխանում, ժամանակ կորցնում, գործին վնասում։

Մնում էր կրտսերը։ Սա էր միայն, որ հանդարտ, գլուխը կախ ձգած՝ բահում էր միշտ։ Ո՞չ տիղմի ամրության դեմ էր հուսահատվում, ո՛չ լուտանքները լսելու դնում և ոչ իսկ տեղացող քարերի կամ ծաղրի գեմ պաշտպանվում։

Փորում էր, պեղում անընդհատ և տոկունությամբ։ Եվ այնքան փորեց

այնքան սառնարյուն իր գործին նայեց, որ վերջապես արձանը երևան հանեց կարծը տիղմի տակից, շուրջը լավ մաքրեց ու ջանաց տեղիցը շարժել։

Արձանն այժմ գտնված էր. մնում էր վեր հանել, տանել պատվանդանի մոտ և այնտեղ կանգնեցնել իր բոլոր մերկությամբ։

Մեծ եղբայրը հաշմվված, գործին անընդունակ էր դարձել, միջնակը հալածողների դեմ կռվի մեջ՝ ընկել էր. հայրը ծերացած՝ բահն իսկ սրել չէր կարողանում, իսկ մայրը հոգնած, ձայնը սպառած. այլևս խրախուսական խոսքեր չէր անում...

Մենակ, այժմ բոլորովին մենակ էր մնացել կրտսեր եղբայրը։ Մի՞թե պիտի հաջողվեր նրան միակ իր ուժով արձանը վեր հանել։

Եվ նա չկասեց։ Շարժվեց, հողիցն ազատեց, մեջքը դեմ տվավ, մրկանունքը ձգեց, արձանը շալակեց ու սկսեց ջրհորն ի վեր ելնել։

Քաղաքն ամբողջ ժողովված նայում էր նրան։ Ամենքը սառել էին, ապշել. գայլերն իրենց ոռնոցը կտրել էին, բարոյագետները չէին համարձակվում ձայն հանել։ Կամքի մեծ ուժը եթե չէր հաղթել, գոնե լռեցնում էր, հալածողներին պատկառելի հեռավորության վրա պահում։

Ահա շալակեց... բարձրանում է...— հետևում էին երիտասարդի արածին.— ոտն առաջին աստիճանի վրա դրեց... բերում է...

Լուռ, ամբողջապես ուժը կենտրոնացրած, քրտնաթոր, արձանը մեջքին, ոտները հաստատուն և ծանր դնելով, գլուխը կախ և առանց ոչ ոքի նայելու, երիտասարդը բարձրանում էր համրաբար։

Ահա այժմ նա չորս աստիճանի վրա է։ Քիչ կանգ է առնում շունչ քաշելու, քրտինքն է սրբում, հևում է և նորից ոտքը բարձրացնում։

Լուռ է ամբոխը, սոսկումով լեցված։ Լուռ է քաղաքը, լուռ՝ բնությունն իսկ. և այդ խորունկ լռության մեջ լսվում է միայն բարձրացողի շնչառության ձայնը. խռպոտ, ուժեղ մի ձայն, որ թանձրացած շնչառության հետ՝ դուրս է գալիս ջրհորի խորքից։

Եվ նա ելնում է։ Ամբոխն այժմ տեսնում է նրան՝ դրսից ներս լցվող աղոտ լույսի մեջ, հին հսկաների նման մկանունքներն ու երակներն ուռցրած, կարմիր, շքեղ գլուխը ողողված լույսով, հանդարտ ելնում է ու ելնում։ Եվ մեջքի վրա արձանը՝ փողփողեցնում է մաքրված թևերն ու մարմինը։

Արձանն երևալու հետ՝ ետ-ետ են քաշվում ամենքը դողդոջուն ու սրտատրոփ։

Եվ սպասում են։ Ահա երևաց ելնողի գլուխն արձանի մեծ գլխի հետ։

Հետո, երկու գլուխները միմյանց կպած, ծանր, համրաբար, գետնի տակից, ոգու պես բարձրանում են։ Ամբոխը հեռվից նայում է սոսկումով։

Այժմ արձանը լույս աշխարհումն է։ Բայց նրան իր ուսերի վրա կրողը հոգնած է, աչքերը մթագնել են, երակները պայթելու չափ ուռել, ծնկները դողում են, մեջքը ջարդվում է։ Այնուամենայնիվ չի կամենում նա բաց թողնել վեր հանած գանձը...

Բայց երբ վերջին աստիճանին հասած՝ ոտքը դնում է գետնի վրա, ծալվում են այլևս ծնկները, երերում է հերոսը, արձանը բաց թողնում և ինքն էլ երեսի վրա՝ փռվում նրա կողքին...

Վազում է ամբոխը սոսկման ճիչը բերնին, վազում են ամենքը, հերոսին բարձրացնել են աշխատում...

Բայց նա մեռել է։ Արձանը լույս աշխարհ է հանել, տիղմից ազատել, դրել է իր պատվանդանի վրա և մեռել նրա կողքին...

ԿՈՐՍՎԱԾ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Մի անգամ Արդարությունն անհետացավ հանկարծ։

Ասենք, նա հաճախ էր կորսվում։

Խուսափելով իրեն ծյուրող, պատնիպատ խփող, լլկող անձերից, հաճախ նա փախչում էր լեռները, պահվում աշխարհիս հեռավոր անկյուններում։ Բայց ամեն անգամ, այսպես կամ այնպես, հաջողվում էր նրան գտնել, բռնել, վանդակի կամ սնդուկի մեջ դնել, ուզածին պես գործածել... շարչարել։

Այս անգամ սակայն, չգիտեմ ի՞նչ հնարքով, Արդարությանը հաջողվեց լավ անհետանալ. այնպես լավ թաքնվեց, որ մարդիկ աղոթքով, եզվիտությամբ, ուժով կամ ոսկո՛վ իսկ անկարող եղան նրան գտնելու։

Սկսվեց մեծ իրարանցում։ Առանց Արդարության դժվար էր ապրել, մանավանդ որ նրա անհետանալվը բազմանում էին մարդկության «օգտակար» շա՛տ հաստատություններ և շատ աղտոտություններ, որպիսիք են՝ կեղծավորություն, անիրավություն, խաբեություն, արյունահեղություն և այդպիսի շատ այլ թույներ, որոնց այնքան լավ դիմակավորում էր Արդարությունը։

Եվ ահա Արդարությանը փնտրելու ելավ նախ մի պատերազմիկ-ազնվական։ Շատ զորք ժողովեց, վաշտ ու գունդ կազմեց և երդվեց, որ Արդարությունը ո՛ր ծակը մտած լիներ, պիտի հաներ, ձեռքն ու ոտը կապած պիտի մեջտեղ բերեր։

Այդ պատճառով իսկ, ոտնակոխ տալով նա գյուղ ու քաղաք, արյուն

սփռելով դաշտ ու ձոր, ջարդեց, սրամաշ արավ ամեն ինչ, տակնուվրա դարձրեց ամեն բնակություն, և այդպես առաջ էր գնում՝ հուսալով բռնել Արդարությանը։

Նրանից հետո ճանապարհ ընկավ Արդարությանը որոնելու մի շատ հարուստ մեծատուն։ Ոսկի ու արծաթ, զարդ ու զարդարանք բարձեց ուղտերի և, վստահ իր ոսկու վրա, տնից դուրս եկավ։ Ասում են, որ մի քանի հատ էլ սիրուն կանայք վերցրեց, որ ոսկու փայլի վրա գեղեցկության հրապույրն էլ ավելացներ։

— Կտեսնեք,— պնդում էր նա,— Արդարությանը ոսկովս պիտի գնեմ, կանանցով պիտի գրավեմ և, սնդուկիս մեջ դրած՝ պիտի մեջտեղ բերեմ։

Այդպես էր ահա, որ բռունցքն ու ոսկին գնացին Արդարությանը որոնելու... Եվ դեռ գնում են։

Թո՞ղ գնան։

* * *

Տեսնենք այժմ, թե ո՞վ էր այն երրորդ անձը, որ խեղճ ու կրակ, ցնցոտիք հագին, ճակատը վշտերով խոր-խոր ակոսած, մտածեց ելնել Արդարությանը որոնելու։

Ասենք ազնվականը սուր ուներ, հարուստը՝ ոսկի. իսկ սա ի՞նչ ուներ, ինչո՞վ պիտի գտներ Արդարությանը։

Թշվառն էր դա։ Բոլոր ընծաների փոխարեն էլ տարածն էր մի չնչին սրվակ, որ ամուր կերպով սեղմել էր կրծքին և համառությամբ ճանապարհ ընկել։ Բանն այն է, որ սրվակը լցրել էր մի շլված հեղուկով։ Որբից մի արցունք, ընկածից մի հառաչ, գործավորից մի դառը քրտինք... Մի խոսքով, վշտերի արցունքներից մի-մի կաթիլ ժողոված, լցրել էր շիշը, պինդ փակել և կարծում էր, թե տարածն անշո՛ւշտ պիտի գրավեր Արդարությանը։

Ու քայլում էր։ Անցնելով մեծ-մեծ քաղաքներից, խուլ, հեռավոր գյուղերից, քայլում էր անխոնջ, ձորեր ցած իջնում, լեռներն ի վեր ելնում, ամեն քայլափոխին էլ կանգ առնելով՝ գոչում.

— Ո՞ւր ես, Արդարությո՛ւն։

Արդարությունը չկար։ Ո՛չ երևում էր, ո՛չ էլ ձայն տալիս։

* * *

Անոթի, ծարավ, հոգնած, վշտալից, երկար թափառեց Թշվառն ամեն ուզությամբ, սրտի վրա սեղմած ունենալով սրվակը, որի հեղուկը սկսել

էր եռալ ու տաքանալ։ Արդարությունը սակայն չխղճաց նրան էլ. ո՛չ երեվաց, ո՛չ էլ գոյությունը հայտնեց։

Վերջապես, երբ հուսաբեկ և ուժասպառ հասել էր լեռան կատարին, նստեց մի ժայռի վրա և սկսեց մտածել, թե իզուր էր Արդարություն որոնելը, քանի որ խուսափում էր նա թշվառից անգամ։

Եվ երբ այդպես մտածեց, բարկացած հանեց ծոցից սրվակն ու խըփեց ժայռին։

— Գնա՛, ոչնչացի՛ր,— գոչեց նա,— իզուր են բոլոր վշտերն ու արցունքները. Արդարությունը թշվառին չի՛ սիրում...

Բայց հազիվ թե սրվակը փշրվել էր, լսվեց մի ահեղ որոտում. հոսած արցունքներից թանձր ծուխ բարձրացավ, փրփրեց, ոլորվեց, և նրա միջից, ահարեկ թշվառի առաջ, դուրս ցցվեց մի ահեղ հսկա։

Սարսափած թշվառն ընկավ երեսի վրա։

— Ելի՛ր— կանչեց հսկան մեծաձայն,— ելի՛ր և մի՛ վախենա։

— Ո՞վ ես դու, ահե՛ղ ոգի,— հարցրեց թշվառը։

— Ե՞ս,— գոչեց հսկան,— ես Բողոքն եմ, որ ծնա այդ թափած արցունքներից և որ պիտի աշխարհ բերեմ անհետացած Արդարությանը... Նայի՛ր...

Ապա արշալույսի կարմրորակ լույսի մեջ ցցվեց հսկայի վեհ հասակը, դարձած դեպի բարձրությունները, ուր սկսել էր մի փոթորիկ և ուր գետինն ամբողջ դողում էր դղրդյունով։

Եվ հեռուն, հսկայի պարզած ձեռքի կողմը, մի կույտ մաքուր ամպերի բացվածքից, երևան եկավ թաքնված Արդարությունը՝ խորունկ, տխուր հայացքով, առանց կշեռքի, առանց մեծ սրի[1]։

— Ե՛կ, Արդարություն,— կանչեց Բողոքը,— ես ծնվել եմ, և իմ ձայնը թող քեզ համար կշեռք ու սուր դառնա. ե՛կ, Արդարություն...

Բայց Արդարությունն անշարժ ու տխուր՝ նայեց նրան, նայեց թշվառին և ասաց.

— Դեռ ո՞չ... դեռ դու փոքր ես. գնա, քայլի՛ր, կուտակի՛ր արցունք, կուտակի՛ր վշտեր, մեծացիր, որպես օվկիան, կատաղի՛ր որպես հեղեղատ, և այն ժամանա՛կ միայն ես կգամ իմ սրով և իմ կշիռով...

Ապա ամպը սահեց, և Արդարությունը նորից անհետացավ իր անմատչելի բարձրության մեջ...

---

[1] Հնում Արդարությունը նկարվում էր որպես մի դիցուհի, աչքերը կապած, մի ձեռքին սուր և մյուսին՝ կշեռք։

* * *

Այդ օրվանից ահա՝ պատերազմիկ զորեղն արյունի մեջն է որոնում Արդարությունը, հարուստը՝ ոսկու, և թշվառը, նստած իր վշտերի մոտ, արցունքներով մեծացնում է Բողոքին, որ նա՝ վերակոչե աշխարհում կորսված Արդարությունը...

1902

ԱՌՎԱԿԸ

Հեռու Արևելքում, կարծեմ Հնդկաստանում (զրույցն այդ մասին որոշ ոչինչ չի ասում)— կար մի հզոր, հարուստ թագավոր։ Ապրում էր նա, ինչպես ամեն արևելյան իշխան, ճոխ ու փառավոր և թողնում էր, որ շուրջը թշվառությունը հպատակներին մաշեր, միայն թե իրեն պատ ու կանայք չպակսեր, հեռևորդն ու իշխանն ապրեր առատության մեջ, կյանք վարեր շռայլ, միշտ հաճույալից։

Ուներ նա պալատներ՝ միմյանցից ընդարձակ, շքեղ պարտեզներ՝ միմյանցից գեղածիծաղ, սակայն և միշտ շինում էր, տնկում էր նորը և նրանց համար՝ իր հպատակների ո՛չ քրտինքն էր խնայում, ո՛չ էլ ջանքն և ուժը։

Ասում են, որ արքան սիրում էր անընդհատ շինել. և շինել միմիայն պալատներ՝ իր բնակության, պարտեզներ՝ իր վայելչության համար։

Ու շինում էր։ Ի՞նչը կարող էր նրան արգելք լինել։ Հո՞ղն էր պակաս։ Մի՞թե տերության հողի կեսն իրենը չէր— իր որսի, պալատների, կանանց ու պալատականների համար, բնակարանի և պարտեզների ընդմիշտ հատկացրած։

Շինող ձեռքե՞ր էին պակաս։ Մի՞թե իր հպատակների ուժն ու քրտինքը նա չէր գործածել։ Եթե ուզենար, չէ՞ր կարող նույնիսկ նրանց դիակներից պատեր կանգնեցնել կամ նրանց արյունը շաղախի գործադրել։

Կաներ։ Արևելյան արքաները ինչե՞ր ընդունակ չեն անելու։

Եվ ահա նա մի օր մտածեց այնպիսի մեծ ու շքեղ պարտեզ շինել, որի մի ծայրից մյուսը գնալու համար օրեր պետք լիներ. մեջը՝ բույս, ծառ, պտուղ կամ բանջար, թռչուն ու գազան այնքան շատ լիներ, պահվեր-պահպանվեր, որ իր հաճույքի համար, ուզած ժամանակ, ձեռքի տակ գտնվեր։

Մտածեց ու արավ։ Առաջ քշել տվավ հպատակներին դեպի ընտրած հողը, տնկեց ու շինեց, հեռու տեղերից ծառեր բերել հրամայեց, կազմեց

բաժանմունքներ, կանգնեցրեց շենքեր... Այդպես, տարիներով, երկրի ամբողջ ուժը գործադրեց իր հաճույքի համար միայն։

Ու պարտեզը շինվեց մե՛ծ շքեղությամբ, անծայր մեծությամբ։ Հրամանովը պեղված ու բերված ջրերը ոռոգում էին նրան, ջրվեժները զովացնում օդը, բազմաթիվ շատրվաններ՝ անուշ խոխոջով, մեծ-մեծ լճակներ՝ սիրուն փայլփլումով հիացնում էին ամենքին։

Եվ արքան հպարտ՝ շրջում էր նրանց մեջ, հրճվում իր գործով։

* * *

Բայց եղավ մի օր, որ շատ հեռավոր, անհայտ լեռներից եկավ մի առվակ, ով գիտե ինչպե՛ս, որտեղից, ներս սպրդեց, գտավ հզոր արքայի հողերն ու մտավ նրա կառուցած մեծ պարտեզի մեջ։

Իմաց տվին արքային նոր հյուրի գալստյան մասին։

Թագավորը ծիծաղեց հրճվանքից։

— Ինչ կա,— ասաց նա,— բարի լինի գալուստը. իմ գործե՛րն են գրավում այդպես. թող գա վտակն ու ջրի պարտեզը։

Տեղ տվին առվակին. ճանապարհը հարդարեցին, թողին, որ հոսեր նա, ծորար պարտեզի միջով, մտներ-ոռոգեր ծառերը դալար, շշնջար բուսերի հետ, գգվեր ծաղիկներին...

Բայց տե՛ս, թե ի՞նչ եղավ հետո։

Բանն այն է, որ անկոչ հյուրը սկսեց քիչ-քիչ մեծանալ։

Աննշմարելի նախ՝ առատացավ, գետակի փոխվեց, և ապշած արքան ու պալատականները մի օր էլ տեսան, որ աննշան, հեռու տեղերից եկող այդ հյուրը սկսել էր ի՛նքը միայն ողողել ամբողջ պարտեզը, ծածկել ջրվեժ, շատրվան, հետո մինչև իսկ դուրս սողալ պարտեզից և գնալ հպատակների արտերին ջուր տալ։

— Վա՛յ,— գոչեց թագավորը,— հյուրին շա՛տ երես տվինք, այժմ մեծանում է և սահմանն անցնում։

Եվ իրավ, նոր հյուրը խոշորանում էր միշտ, վազքն արագացնում, շշուկը մեծացնում, հոսում էր արագընթաց՝ պարտեզի միջով, ապա կամաց-կամաց ամեն ինչ ողողում, տակովը տալիս, շենք ու ծառի շուրջ լճեր գոյացնում, խեղդում-տապալում և գնում էր խաղաղությամբ ջրելու հպատակների արտերն ու պարտեզ։

Եվ մինչ արքայի պալատ ու այգի այդ ջրի տակ թաղվում փլում էին, դրսում հպատակների կյանքն այդ միևնույն ջրով աճում էր, բարվոքվում։

Արքան սկսեց բարկանալ։ Բայց քա՛նի բարկանում էր, առվակն այնքան աճում էր, խոշորանում և գետի փոխվում։

— Վռնդե՛լ այդ անկոչ հյուրին, դո՛ւրս նետել նրան իմ հողից, իմ տերությունից...

Հրաման տալը հեշտ էր իհարկե, միայն թե ինչպե՛ս կտրել մի գետի առաջ, որ հոսում էր արագավազ, մեծանում անընդհատ, իր համար հող գրավում և տիրապետությունը տանում-տարածում։

Արքան հրամայեց ամեն միջոց գործ դնել, միայն թե գետ դարձած առվակին հողից վռնդել, պալատն ու կայքը նրա ողողումներից ազատ պահել։

Հավաքվեցին իշխան- պալատական, զորք ու զորավար փորձեցին գետի հեղեղատը փոխել, հսկա ամբարտակներ դեմ տալ նրա ընթացքին, հեռուներում ցրել նրա ուժը, գոնե կտոր-կտոր անել։ Բայց առվակը գալիս էր սահմանի այն կողմից, և երբ այս կողմն ամբարտակներ դրին, հոսող ջուրն ուռավ, անցավ ամեն բանի գլխով, փլեցրեց նրանց ու ավելի կատաղի, ավելի ուժով հոսեց՝ ողողեց պալատ ու պարտեզ, շենք ու ամրություն...

Այն ժամանակ արդեն արքան լուր ուղարկեց դրացի երկրին։

— Երկրիցդ,— հրամայեց ասել նա այն երկրի արքային,— մի անամոթ հյուր է եկել ինձ, որ նախ փոքր էր, հետո մեծացավ և այժմ ողողել է ամեն ինչ, քանդել պալատներս։ Կամ նրա դեմը փակի՛ր և կամ ճանապարհը փոխիր, դեպի անապա՛տը դարձրու։

Դրացի թագավորը երբ լսեց այդ, ծիծաղեց, տարավ եկողներին իր հողերը ցույց տվավ և ասաց.

— Ինքներդ տեսեք այժմ. իմ պալատներն էլ այդ միևնույն հյուրը ողողել է, քանդել. փորձեցի և ես փոխել նրա հեղեղատը, ամբարտակ դնել, բայց նա ամեն արգելք տապալեց և այժմ լիճ է շինել պալատներս, իր սեփականությունը դարձրել երկիրս։ Նա չէ բխում հողերիս միջից, որ աղբյուրը փակեմ և երկրիցս դուրս վռնդեմ. գալիս է նա ուրի՛շ երկրից, իմ սահմանի այն կողմի լեռներից։

Այն ժամանակ հզոր արքան մարդիկ ուղարկեց մյուս տերությունն մեջ, ապա ավելի հեռուն, և այդպես չկարողացան հասնել առվակի ակունքին, որ բխում էր շա՛տ հեռու, անհայտ լեռներից, մեծանում էր անցած տեղերում, ողողում ամեն երկիր, պալատնե՛ր քանդում, դաշտեր ծաղկեցնում։

Զրույցը չէ պատմում, թե վերջն ինչ եղավ։ Միայն ավանդությունն ասում է, հզոր թագավորը շինեց մեծ-մեծ ամբարտակներ և թումբեր գետի դեմ, բայց բոլորին էլ առվակը ջարդեց ու անցավ։

Եվ քանի նրա դեմ թումբ էին դնում, նա այնքա՛ն ավելի ուժ էր կու-

ակում, ապա փլեցնում, ջրի տակը ծածկում ամեն պալատ ու պարտեզ։

Եվ այսօր, եթե այն հզոր արքայի պալատի ու պարտեզի տեղը լճեր են կանգնած և կամ ճահիճներ— դրանց անողն ա՛յն փոքրիկ առվակն է, որ անհայտ աշխարհներից գալով՝ հոդ է միշտ գտնում իր ճանապարհի համար, մեծանում է, գետի է փոխվում և երկրի մեջ իր թագավորությունը կանգնեցնում։

Թումբ կամ ամբարտակ, փոխանակ կասեցնելու նրան, ավելի կատաղեցնում են, ավելի ուժ տալիս։ Եվ նա քայլում է միշտ, ո՛չ միայն պալատների գլխովն անցնում, այլև մտնում-սպրդում է ամեն մի պարտեզ, ամեն ծառաստան և իր ջրերի տակ թողնում ա՛յն ամենը, ի՛նչ արքայական է կամ իշխանական...

1903

ՎԻՇԱՊ

1

Վաղուց, երևի շա՜տ դարերից ի վեր, այն մաքուր և հորդառատ ջուրը, որ բխում էր լեռներից, գնում էր ոռոգելու ստորոտի դաշտերը և դարձնում նրանց հարուստ անտառներ, պարարտ, արդյունավետ արտեր ու գեղաձիծաղ մարգագետիններ։

Քաղաքի նմանող մի գյուղ ծաղկում էր ջրի ափերին։ Ծառաստան և այգի զարդարում էին նրան. երկիրը, լի ցնծությամբ, արտադրում էր շատ բարիք. մարդիկ երջանի՛կ էին այնտեղ. հավասարապես վայելում էին ջրի բաշխած հարստությունը, ճաշակում նրա արդյունքը։

Վաղո՜ւց, գուցե դարերից ի վեր էր, որ այդ մաքուր ու հորդառատ ջուրը ո՛չ ցամաքում էր, ո՛չ դադարում, ո՛չ էլ պակասում։ Գարնանը հորդանում էր, քիչ պղտորվում, սակայն տարվա ամեն եղանակին կար նա, հոսում էր անընդհատ, խաղում ափերի հետ, ոռոգում նրանց։

Բայց երկար չտևեց այդ։

Մի օր հանկարծ խուլ հուզումն առաջացավ նրա ափերի վրա։ Մարդիկ իրար անցան, խմբվեցին, գետը զննելու իջան և վճռեցին, որ ջուրն սկսել էր նվազել։

Թեև սակավ առ սակավ, բայց արագ կերպով նվազում էր նա, ափերը թողնում և բոլոր պտուղներն ու մարգերին ոռոգելու չէր բավականացնում։ Այդպես եթե գնար, մի քանի տարուց հետո ջուրը ո՛չ միայն կես կարող էր լինել, այլև գուցե բոլորովին դադարեր։

Այն ժամանակ ի՞նչ պիտի լիներ գյուղացիների դրությունը։ Չէ՞ որ արդեն սկսում էին չորանալ արտերը, բերքը նվազում էր, այգիները, ջուր չունենալուց, ծարավից խամրում էին, ծառաստանները կորցնում էին աճելու ուժը, և մարգագետիններն այլևս չէին ժպտում առաջվա պես՝ իրենց թավշանման շքեղ կանաչով։

Ամբողջ երկիրը կարող էր ոչնչանալ։ Պետք էր մի ճար մտածել, ջրի սպառվելու դեմն առնել։

Բայց դրա համար, ամենից առաջ, հարկավոր էր նոր փորձանքի պատճառը որոնել ու գտնել։

Եվ ահա հավաքվեցին գյուղացիները խորհրդի. ապա բաժանվեցին, լեռներն ելան ջրի ակունքը գտնելու, այլև հետազոտելու ա՛յն ամեն ճյուղերը, որոնցից գետը հորդանում էր և մեծանում։

Մեծ գետ էր այն։ Բուն ակունքը սկիզբ էին առնում մի մութ և ժայռոտ սարի կրծքից. ճանապարհին, մոտ 4—5 տեղ էլ, զանազան լեռներից գալով խառնվում էին նրան՝ խոշոր ուրիշ վտակներ, իսկ լեռնաշղթայի ստորոտում, խոր ձորակի մեջ, այդ ամենը միացած՝ ձևանում էր մի շրաշատ գետ։

Այդ բոլորը գիտեին գյուղացիների այն խմբերը, որոնք հետազոտության ելան։

Առաջին խումբը բռնեց բուն ակունքի ճանապարհը. մյուսը ձորը մտավ, մտածելով, որ գուցե լեռներից խոշոր ժայռեր էին գլորվել, փակել ջրի ընթացքը և փոխել հեղեղատը։

Երրորդ խումբը քայլեց գլխավոր ճյուղն ի վեր, դեպի լեռնաշղթայի ծործորները, իսկ երկու մյուսները, բահերով ու թիերով զինված, գնացին մաքրելու մյուս ճյուղերի ակունքը, ենթադրելով, որ լցվել էին նրանք ավազով և կամ փուխր բլուրներ փլած՝ նրանց ընթացքն էին շուռ տվել։

Մինչ այդ, դաշտի բնակիչները լուրերի սպասելով նկատում էին, որ ո՛չ միայն ջուրը չէր մեծանում, այլ ավելի և ավելի էր պակասում։

Խմբերից շատերն այդ միջոցին, հոգնեցուցիչ, տաժանելի ճանապարհներով քայլեցին վտակներն ի վեր։ Ո՛չ մի հողաթումբ չէր փլվել, ո՛չ մի ժայռ չէր գլորվել, և ջրերի հեղեղատները չէին փոխվել։ Նկատեցին միայն, որ նույնիսկ վտակները փոքրացել էին, իսկ թե ո՞րտեղ էին անհետանում ջրերը կամ ի՞նչպես, ի՞նչ ճանապարհով— ոչ ոք իմանալ չկարողացավ։

Տասնհինգօրյա երկար շրջագայությունից հետո բոլոր խմբերը կենտրոնացան ակունքի մոտ և խորհրդի նստան։

— Ակներև է,— խոսեց մեկը,— գետի ջրերը պակասում են. բայց թե ինչպես կամ ո՞ւր են գնում, մենք այդ իմանալ չկարողացանք։

— Ինձ թվում է,— խոսեց մի ուրիշը,— որ վտակների տակ անդունդներ են գոյացել և կլանում են ջրերին։

— Պտույտներ պիտի լինեին և կամ մի այլ նշան,— առարկեց մի երկրորդը,— մինչդեռ ո՛չ մի այդպիսի նշան չկա։

— Այո՛, չկա. բայց կա ա՛յն փաստը, որ ջրերը կլանվում են և մի ամբողջ հասարակության ծարավ թողնում։

— Գուցե անհայտ չարագործներ, ստորերկրյա, վարպետության շինված ճանապարհներով գողանում են ջրերը,— հայտարարեց մի փորձառու գյուղացի։

— Այդպես բանի նշա՛ն էլ չկա։

Ու երկար վիճում էին նրանք, թեր ու դեմ կարծիքներ, զան սզան են. թաղրություններ առաջադրում։ Առաջարկում էին ցնորական, երեխայական, ուժամանակյա շատ միջոցներ, սակայն իսկույն էլ գտնում էին, որ դրանցից ո՛չ մեկը երկարատև լինել չէր կարող, եթե նույնիսկ հաջողվեին մի տարի, հսկայական ուժ գործ դնելով, ամբարել ջրերը, դաշտերին բավականացնել։ Այնուամենայնիվ գետն անընդհատ պակասում էր և կարող էր լիովին չորանալ։

Երբ այդպես տաք վեճի մեջ էին, հանկարծ մի երիտասարդ, որ հայտնի էր հայրենակիցների մեջ որպես այլանդակ մտքեր արտահայտող ու երևակայող մի «խենթ», գոչեց այն կողմից.

— Լսեցեք ինչ կասեմ ձեզ, եղբայրնե՛ր։ Մեր ջրերը կլանողը ո՛չ այս է, ո՛չ այն։ Դա մի վիշապ է, որ բույն է դրել լեռներում և հետզհետե ցամաքեցնում է մեզ կյանք տվող աղբյուրները. մի վիշապ է դա— ահա ճշմարտությունը։

Բարձրացավ ընդհանուր քրքիջ, հետո ծաղրի կարկուտ թափվեց խենթ գլխին։

Բայց սա անվրդով, հետզհետե ավելի հաստատուն ու վճռական, ասում էր.

— Կրկնում եմ ձեզ, եղբայրնե՛ր. մի վիշապ է այն, որ մտել է մեր լեռների մեջ։ Շուտով եղած ջուրն էլ կցամաքեցնի. պիտի տեսնեք։ Կլանելով ջրերը՝ ինքը կմեծանա, նրա ծարավը կաճի, խմելու փափագը կավելանա և այլևս ջուր չգտնելով, կգա մեր արյունը խմելու...

Այդպես խոսեց «խենթ մարդը», և նրա եղբայրները ո՛չ միայն ծաղրեցին, այլև նախատեցին, ջանացին լռեցնել, հետո ծեծեցին ու ստիպեցին, որ դադարեր հիմարություններ ասելուց։

Բայց նա գոչում էր համառությամբ.

— Վիշա՛պ է այն, եղբայրնե՛ր, ասում եմ ձեզ։ Քանդեցեք ակունքը և կտեսնեք. հետազոտեցեք, խորքերը մտեք և պիտի հասկանաք... Ծնվել է նա, կարճամի՛տ եղբայրնե՛ր, և ծնվել է մե՛ր միջից, մեզնի՛ց է ծնվել...

— Մեզնի՞ց է ծնվել,— գոչեց գյուղի իշխանը բարկացած,— ասում ես մեզնի՞ց։ Խե՛նթ, ասա տեսնե՞նք, մի հիմարություն էլ ասա և հայտնիր մեզ, թե ի՞նչ կին է այն, որ վիշապ է ծնում. կամ որտեղի՞ց, ինչո՞վ ծնավ նա։

Ու ծիծաղում էին, որովհետև ո՛չ ոք չէր լսել, որ մարդկանցից կարող էր վիշապ ծնվել և այդ վիշապը, մի ամբողջ գետ կլանելուց հետո, կարող էր ելնել ու մարդկանց արյունը խմելու գալ։

— Խոսի՛ր,— գոչեցին գյուղացիք խենթին,— տեսնե՞նք, գուցե քո՛ մայրն է ծնել այդ երևակայական վիշապին, եթե միայն նրան ծնողը քո հիվանդ ուղեղը չէ։ Խոսի՛ր, ի՞նչից է ծնվել նա։

— Ձեր քրտինքից...— ասաց խենթը և այնուհետև այլևս չխոսեց։

Եվ ինչո՞ւ խոսեր։ Միմյանց ետևից միայն այլանդակություններ էր ասում, «Քրտինքից ծնված վիշա՛պ»։ Դա մի այնպիսի խենթ միտք էր, որ հավերի՛ ծիծաղն անգամ կշարժեր, ի՞նչ մնաց խելքը գլխին, փորձառու, շատ բան տեսած գյուղացիների և պատկառելի իշխանների։

2

Ահա այդպես էր, որ վիշապի գոյության միտքը ծագեց մարդկանց մեջ։

Թեև գետն արդեն կես էր եղել և սպառնում էր շուտով մի առվակ դառնալու, սակայն գյուղացիք շարունակեցին ծիծաղել երևակայական վիշապի վրա և ջրի նվազելը համարում էին որևէ բնական պատճառի արդյունք։

Բայց «խենթը մի քար գլորեց, հազար խելոք չկարողացան հանել»։ Այդպես էլ եղավ։ Վիշապի գոյության գաղափարը, որքան և խելոք մարդիկ ծաղրեցին նրան, համակեց ժողովրդի «պակասամիտ» դասի միտքը։ Տարիներ հետո, երբ մեծ գետն այլևս չնչին առվակ էր դարձել, երբ ծաղկած քաղաքի նմանող գյուղը կես էր դարձել և գեղածիծաղ այգիները, դաշտերն ու մարգերը չորացել էին, գտնվում էին դեռ «խենթանման մարդիկ», որոնք ջրի պակասելու և ոչնչանալու մեջ հանցավորը համարում էին վիշապին։

Քիչ էր գտնվում, իրավ է, բայց կար։ Որևէ գաղափար շուտ չի մրտնում ամբոխի մեջ. բայց երբ մտնում է, շուտ չի դուրս գալիս։

Գտնվեցին մարդիկ, որոնք վերջիվերջո վճռեցին գնալ դեպի ակունքը։

փորել, խորը մտնել, ստուգել վիշապի գոյությունը և եթե կար՝ սպանել ու մեռնող երկիրը կենդանացնել, նրա անցյալ եռուն կյանքը վերականգնել։ Իսկ խենթը, որը դեռ կենդանի է, որ դեռ պնդում է վիշապի գոյության մասին, հանձն առավ նրանց գլուխն անցնել և հարստահարողի դեմ կռվի գնալ։

Ամբողջ գյուղը հետևեց նրան։ Ոմանք՝ որովհետև գնացողների հայրերը կամ եղբայրներն էին, և շատերը՝ որովհետև այդ հետազոտությունը հետաքրքիր էր։

Եվ գնացին որոնողները, քայլեցին երկար, օրերով ու շաբաթներով, հասան ջրի գլխավոր ակունքին՝ այն խոժոռ լեռների և մեծ ժայռերի ստորոտը։ Հետո բահերն ու բրիչները ցած դրին, նստեցին ծրագիր կազմելու...

Երբ խենթը տեսավ, որ մարդիկ նստում են ծրագիր կազմելու, կանգնեց նրանց մեջ և ասաց.

— Օ՛, ո՛չ, եղբայրնե՛ր, մի նստեք հանգստանալու, քանի դեռ վիշապը կենդանի է. մի՛ ժողովվեք երկար՝ ծրագիրներ կազմելու համար։ Հարցը շա՛տ պարզ է։ Ծնվել է վիշապը, որ կլանում է մեր ջուրը և մեզ թողնում է ծարավ։ Պիտի պեղե՛լ նրա եղած տեղը և նրա գլուխը պիտի ջախջախել։ Սրանից պարզ ու կտրուկ միջոց չկա։ Ոտքի՛ ելեք և գործը սկսենք։

— Բայց չէ՞ որ,— ասաց մեկը,— հարկավոր է հաշվի առնել նաև մեր ուժերը, տեսնել, թե կարո՞ղ ենք ջախջախել վիշապին։ Գուցե նա շա՛տ մեծ է և զորեղ և կարող է մեզ բոլորիս կլանել։

— Այո՛,— ասաց խենթը,— երբ նա նո՛ր էր ծնվել, սպանելը շա՛տ ավելի հեշտ էր։ Բայց ահա երկա՛ր ապրեց և գիրացավ մեր ջրով։ Այժմ նրա ստամոքսն ավելի մեծ, կլանող բերանն ավելի լայն է դարձել. շա՛տ դժվար է ոչնչացնել նրան՝ առանց զոհեր տալու, առանց արյուն թափելու։

— Տեսնո՞ւմ ես,— խոսեց մի գյուղացի,— ուրեմն մեզ ավելի երկար պետք է խորհել, ծրագիրներ կազմել և կռվելու պատրաստվել այդ հրեշի դեմ։

— Այո, բայց մինչ դուք կխորհեք ու ծրագիրներ կկազմեք, նա կզորեղանա, ամբողջ ջուրը կկլանի և մեզ բոլորիս ծարավ կթողնի։ Նա աճում և զորեղանում է ժամ առ ժամ, նույնիսկ րոպե առ րոպե։

— Ի՞նչ արած,— առարկեցին շատերը,— պիտի խորհել, մտածել...

Ու շարունակեցին խորհել, մտածել։

Խենթը մնաց մենակ։ Նրան լսեցին, նրա շտապեցնելը ծիծաղելի գտան։

Բայց նա մենակ առավ բրիչն ու բահը, իջավ լեռների խորքերը և որոնեց։

Գյուղացիք հեռու նստած՝ խորհում էին ու ժպիտը դեմքերին դիտում խենթի արածը։

— Եթե իսկապես հրեշ կա,— ասում էր մեկը,— անպատճառ, իր շնչովն անգամ լինի, վայրկենապես կոչնչացնի այդ խենթին։

— Ծիծաղելի կլինի տեսնել, թե ի՞նչ այլանդակ դեմք պիտ ստանա խենթը՝ դեմառդեմ գալով վիշապին։

Իսկ խենթը փորում էր, աշխույժով փորում։ Նրա բրչի հարվածից դղրդում էր լեռը, թնդում էր գետինը։ Եվ ժայռերի խորքում լսվում էր խուլ մռնչյուն, որ, քանի խենթի հարվածներն արագանում էին, այնքա՛ն մեծանում էր։

— Հրե՛շն է...— գունատ և դողդոջուն գոչեցին գյուղացիք, ետ-ետ գնալով։

— Զգո՛ւյշ լինենք,— խրատեց մեկը,— ավելի լավ է հեռու կանգնենք և նախ տեսնենք, թե ինչպե՞ս կվարվի խենթի հետ...

— Մի պատառ կանի նրան,— ասաց երկրորդը։

— Մի վայրկյանում կհոշոտի. չե՞ք լսում, թե ինչպիսի ձայներ են լսվում խորքերից։

Եվ իրավ, մռնչյունը սաստկանում էր, զ·այրալից դառնում։

Հրեշը բարկանում էր, որ համարձակվել էին այդպես խորերը մտնել և իրեն անհանգիստ անելու գալ։

Բայց խենթը պեղում էր։ Նրա բրիչը ժայռեր էր դեսուդեն նետում, քարեր գլորում և սուր ծայրով մտնում մինչև հրեշի բնակարանը։

Եվ այդպես, մինչև երեկո, առանց դադար առնելու, փորեց խենթը, պեղեց, բրչի հարվածներ տվավ։

Եվ երբ երեկո էր դարձել ու վերջին կարծր քարն էր ջարդում նա, ականջները գրեթե խլացել էին վիշապի զայրագին աղաղակներից։

Գյուղացիք սարսափած, գունատ և սրտատրոփ՝ հեռվից նայում էին այդ բոլորին. ոչ ոք սիրտ չարավ մի քայլ անելու, խենթին օգնության ձեռք տալու։ Ամեն ոք իր կաշվիցն էր վախենում, ամեն ոք կամենում էր վտանգից հեռու լինել՝ թեկուզ ծարավ, թշվառ ու կիսամերկ մնալ միշտ։

Եվ երբ բրչի մի ուժգին ու ծանր հարվածի տակ գլորվեց վերջին ժայռը, ահաբեկ գյուղացիների առաջ երևան եկավ հրեշի այլանդակ, սոսկալի գլուխը, որ բերանը դեմ էր տվել բոլոր ջրերին և անկշտում կլանելով ուռում էր, հաստանում։

Իսկ եթե դեռ հոսում էր քիչ ջուր, դա էլ նրա շրթունքների անկյուններից դուրս ելնող թափցուկն էր միայն՝ հրեշային գարշ լորձունքի հետ խառնված։

Վիշապը երբ տեսավ բրիչը ձեռքին և իր գլխի վերևը կանգնած խենթին, մռնչաց, կովային աչքերը ոլորեց զայրալիր և դոչեց որոտաձայն.

— Հեռո՛ւ, հանդո՛ւգն, թե չէ՝ կոչնչացնեմ... Քեզ նման խենթերի ես շատ եմ կուլ տվել ա՛յն ժամանակվանից ի վեր, երբ առաջին մարդը ճնշեց իր եղբորը, խլեց նրա ունեցածը, երբ Կայենը սպանեց Աբելին... Գնա՛, քանի չեմ փոշիացրել քեզ, անմի՛տ։ Քեզ նման խենթերը թեև գտնում են ինձ, բայց չե՛ն կարող ոչնչացնել։ Ինձ վնասել կարող է միմիայն այդ ամբոխը ահա, որ այժմ ահաբեկ՝ դողում է ոտքերիս առաջ...

Եվ շարունակեց կլանել ջուրը։

Խենթը բարձրացրեց բրիչը, ուժգնությամբ օրորեց և բուռն թափով նետեց դեպի հրեշի գլուխը։

Բրիչը սուլեց, գնաց քերթելու գաղանի գլխի կաշին, բայց ուժգնությամբ կպավ կողքի ժայռերին, ջարդոտեց նրանց և հեռվում դիտող գյուղացիներից շատերին վիրավորեց։

Այդ որ տեսան գյուղացիք, զայրացան, հուզվեցին, հետո խմբվեցին, քարեր վերցրին և քարկոծեցին խենթին։

Իսկ հրեշը մի մեծ քրքիջ արձակեց և ասաց.

— Տեսա՞ք, մարդիկ. տեսա՞ք, որ այդ խենթերն ինձ դեմ կռվելով՝ միմիայն ձե՛զ են վնասում։ Քարկոծեցե՛ք այդ տխմարներին. ձեր թշնամիներն են, ձեզ մոլորեցնողներն են դրանք... Մինչդեռ ե՛ս եմ ձեզ կերակրողը, ձեր բարերարը... Եվ որովհետև եկել եք այժմ ինձ խնդրելու, ահա խոստանում եմ, որ է՛լ ավելի բարի կլինեմ դեպի ձեզ, ծարավ չեմ թողնիլ, որովհետև շրթունքներս անկյուն ունեն և անկյուններից ձեզ բավականացնելու, ձեզ ծարավությունից չմեռցնելու չափ ջուր թափվում է...

Եվ գյուղացիք դողալով՝ լսեցին հրեշի այդ բարեսիրական խոսքերը։

Քարկոծեցին, լեռների բարձունքները քշեցին խենթին, հետո ծունկի եկած՝ շնորհակալ եղան վիշապից և ուրախ՝ վերադարձան գյուղ։

— Խոստանում եմ,— ավելացրել էր հրեշը,— ձեզ ծարավ չպիտի թողնեմ. շրթունքներիս անկյունները քիչ ավելի կբանամ, երբ դուք չափազանց ծարավություն կզգաք։

Ու այդ խոստումը, պիտի խոստովանել, մե՛ծ ազնվությամբ կատարում է նա մինչև այսօր։ Շրթունքները երբեմն քիչ ավելի է բաց անում՝ մեղմացնելու համար ա՛յն ծարավներին, որոնք տառապանքներից պատրաստ են խենթանալու։

Այդ օրվանի՛ց ահա, ամբոխը պաշտում է հրեշին որպես բարերարի, շինում է նրա համար տաճարներ, իսկ նրա դեմ խոսող խենթերին քշո՛ւմ է դեպի լեռների բարձունքները...

* * *

Այստեղ կվերջանար արդեն զրույցը, եթե պետք չլիներ մի դեպք ևս պատմել։

Այդ ա՛յն է, որ մի օր հայտնվեցին մարդիկ, որոնք երազ էին տեսել, որ մոտ է, իբրև թե, հրեշի ոչնչանալու օրը և որ նրանք երազի մեջ տեսել էին հրեշն սպանողին անգամ։

Ու նկարագրում էին այդ սպանողին. որ իբր թե հուժկու մի մարդ էր կաշվե գոգնոցով, կոշտացած խոշոր ձեռքերով և ձեռքին մի մեծ կռան բռնած...

Պատմում էին այդ երազատեսները նույնպես, որ իբր թե կաշվե գոգնոցով հսկան մեծ քայլերով գնում էր դեպի հրեշը. և վիշապը լսելով նրա քայլերը, կծկվում էր ու ճգնում ավելի՛ խորը մտնելու... Կարծես վախենում էր։

1903

ՍՏԱՄՈՔԻՍ ՀԱՄԱՐ

Սև, բարդ կույտերով լեռների գագաթին, հեռու, ամպերի սպիտակ քողի տակ, ծերպ-ծերպ քարերի, ժայռոտ բարձրությունների խոր լռության և խաղաղության ծայրագույն կետին, խորշանման ծործորի կողին՝ բույն էր դրել մի սրաթռիչ արծիվ։

Այնտեղ էր նա դարերից ի վեր կատարների ժառանգական տեր, անդունդների վրայից թևերի մի թափահարումով անցնող, լերկ ու մեծ ապառաժների վրա կանգուն ու երբեք, սերնդից-սերունդ չէր իջել դեպի ցած և տեղերի գոյության մասին չգիտեր անգամ։

Ապրում էր անվրդով, զերծ որսորդներից, թշնամիներից։

Ներքևի որսորդները գիտեին նրա մասին։ Երբեմն, երբ անոսրացած օդի մեջ պսպղում էին լեռների կատարները, և երկնային մաքուր կապույտությունը մանիշակագույն ստվեր էր տալիս խոր հովիտներին, տեսնում էին նրանք այն սև լայն բիծը, որ, երերուն ու սավառնող, լողում էր արևի դեմ, ամպերի քողը ծակում սլանում, հետո անշարժ դիտում անդունդների խորքը և դարձյալ սլանում դեպի բարձրերը։

Եվ մտածեցին որսորդները լեռների բարձր կատարների այդ արծվին որսալ, խորհեցին բարձրությունների այդ մենակյացին վար՝ դաշտն իջեցնել, զրկել կատարներից, անդունդի խորքը հասցնել, ապառաժների ստորոտը լզել տալ։

Արծիվը չիմացավ այդ, ինչպես ամեն լեռ չի տեսնում անդունդ. մեծությունը չի իմանում, թե ի՞նչ է նյութում իր դեմ չնչինությունը, աղավնին չի հավատում օձի գոյությանը։

Ու փորձեցին որսորդները վերելքներ սարքել, կատար առ կատարներին մագլցել. փորձեցին նետ ու հրացանով արծվին հարվածել, սակայն ո՛չ կարողացան նրա բույնը ելնել, ո՛չ էլ նետն ու հրացանը. հաջողվեց արծվին հասցնել։

Փորձեցին որսորդները կատարը պաշարել, արծվի ելումուտին հսկել, հանկարծական հարձակումներով նրան կաշկանդել, սակայն նա, գոռոզ ու վսեմ, սավառնում էր նրանց գլխից ու գնդակներից շատ բարձր, և կարծես այնտեղից, գլուխը ծռած արհամարհանոք՝ սողունների ջանքն էր ծաղրում, ճիգը քամահրում։

Եվ այն ժամանակ կատարվեց այն, ինչ որ գործադրվում է այս աշխարհում՝ արծվի իջեցնելու, առյուծի կաշկանդելու, ինչ որ հաջողվում է մտային թռիչքների թևերը կտրտելու, ըմբոստ ու մեծ ոգիների ընկնելու, ոչնչացնելու։

Որսորդները թարմ դիակներ գտան, նրանցից կտորներ նախ մի ժայռի վրա դրին, ուրիշ կտորներ ավելի ցածր և այսպես դիակների աստիճաններ շինեցին, որի մի ծայրը ցած՝ տիղմի մեջ էր հանգչում։

Արծիվն այդ տեսավ, երկար վարանեց, չուզեց ցած իջնել, բայց անոթի էր, առաջին կտորի վրա ընկավ, ճիրանները մղեց ու հրճվանոք կերավ։

Եվ այդ իսկ առաջին քայլն էր, որ մղեց նրան երկրորդ քայլն էլ իջնելու, հետո երրորդը, ապա չորրորդը...

Ու որսորդները ծիծաղեցին գոհությամբ։ Մեծությունը իջնում էր ստամոքսին պաշտելու, վսեմությունը ստամոքսի սանդուղքն առած գլորվում էր դիակների վրայով...

Եվ իջավ արծիվը օրեցօր. այլևս չէր սավառնում նա ամպամած բարձրությունների վրա, այլևս բարձր կետ չէր նա ցածրերի համար։ Հեշտությամբ կշտանալը սկսեց մարել նրա մեջ բարձրերը թռնելու պահանջը, և նա թևերը քիչ-քիչ ավելի սակավ բաց արավ, հետո թռնելն էլ մոռացավ— ցատկել սովորեց։

Եվ այժմ, թևատարած մեծ վսեմությունից սկսում էր ձևանալ մի անճոռնի հսկա, որ դիակների ճարպով վիզն էր հաստացնում, փորը մեծացնում, աչքերը հափրացնում։

Ու որովհետև հաստանում էր— կորցնում էր նաև թռնելու ցանկությունը։ Ու որովհետև իջնում էր և իջած տեղում ավելի առատ կեր գտնում— արդարացնում էր իր փոխվելը, բնական գտնում իջնելը, մոռանում, մինչև իսկ արհամարհում էր կատարներն ու սիրել սկսում ցած տեղերը, ծանր օդը, հարթ տարածությունը...

Եվ որսորդները ծիծաղեցին։ Մեծությունը իջնում էր ստամոքսին երկրպագելով, վսեմությունը ստամոքսի սանդուղքներով՝ գլորվում էր դիակների կողքին...

* * *

Եվ այն աչքերը, որ վարժ էին երբեմն անոսր օդի բարձրությունների մեջ պպզացող հսկա լեռների կատարների վրա սավառնած հպարտ թռչունը տեսնել, այն հայացքը, որ հիանում էր երկնային մաքուր կապույտի մեջ այդ երերուն մեծությունը դիտելով— մի օր էլ տիղմի մեջ գտան արծվին ճարպացած, արծվին լեշացած...

Ծռած որսորդների ոչ թե գնդակները, այլ ստոր գավազանները ջարդել էին փորը կշտացնելու համար բարձրությունից իջած մեծությանը և լեշ դարձրել նրանից։

Հետո, երբ օրեր անցան, նրանից խրտվիլակ շինեցին և մի հեշտակյաց խոզի պալատը զարդարեցին...

Այսպես էր, որ ընկավ արծիվը բարձր կատարներից և այդ այն օրը, երբ մտածեց ստամոքսը կշտացնելու համար թևերը ծալել և իջնելու առաջին քայլն անել...

1904

ԱՆՏԱՌԸ ՇԱՐԺՎՈՒՄ Է...

1

...Եվ այդ սքանչելի հովիտում, առատաբուխ ջրերի, կապուտակ վեհ ծովակների, ծաղկավետ բլրակների կողերին, հին, անհիշատակ ժամանակներից ի վեր, աճել-սփռվել էր մի շքեղ, խիտ անտառ։

Կաղնին ու թեղին, լորին ու բոխին ճյուղ ճյուղի միացրած, արմատներով հողը պինդ գրկած, անհամար ճյուղավորությամբ, բյուրավոր թնճյուղներով՝ տարածվել էին հեռուները, երկիրը բեղմնավորել, սև-պարարտ հողով պարուրվել և ապրում էին գոռոզ ու ազատ՝ մեծ երկնքի տակ, ջերմացնող արևի մեջ, սնուցանող անձրևով ուռճացած, զովացած։

Դեռ այդ քի՛չ էր։ Գնում էր, շարժվում անտառը, մագլցում բնակա-

բանը շրջապատող քարաժայռերի վրա, ճեղքում նրա կուրծքը, անցնում, պտույտ գործում խոժոռ ու կնճռոտ կույտերի միջոցով, իր սերնդյան նոր շառավիղներով ճգնում էր մի թիզ հող իսկ չթողնել անբնակ, մի քայլ իսկ չձգել անմշակ։

Ու անտառը շրջապատող կույտերը ճակատնին կնճռած՝ դիտում էին այդ, ատամ կրճտացնում նրա շարժուն, կենսունակ գոյության վրա։

Չոր, լերկ ապառաժներ էին դրանք։ Ոչինչ չէր բուսնում այնտեղ՝ բացի մամուռից. ո՛չ մի թռչուն, ո՛չ մի արարած, բացի անարգ մողեսներից։ Անձրևն ու արևը խանձում-մրկում էին նրա կողերը, քամին անարգել ծեծում-ջարդում գլուխները, և նրանց գոյությունը միմիայն անտառին էր օգտակար լինում՝ ստվերում էր, պահպանում դժնդակ ցրտից։

Այդպե՛ս էր բնության մեջ՝ երկրի այդ անկյունը։

Ժայռը զայրանում էր անտառի վրա, անշարժությունը ատամ էր կրճտացնում քայլող կյանքի դեմ. իսկ անտառը, այն հովասուն, շքեղ, սաղարթալից ծառերով անտառը աճում էր, ժպտում արևին, հրճվում իր կյանքով, մեծանում, խտանում, գնո՛ւմ էր գնո՛ւմ և ապառաժների դեմ կաղնիներ ցցում, նրանց ճեղքերում վարդ, ծաղիկ սփռում։

* * *

— Ծաղրո՛ւմ են մեզ դրանք...— մռնչաց վերջապես վիթխարի կատարը,— ծաղրում են. նրանց յուրաքանչյուր ժպիտը մեզ է հայհոյում։

— Ջարդե՛նք հանդուգնիներին,— գոռաց ժանգոտ ապառաժը,— ուզում են մեր սրտերը պատռելու ելնել։

— Գրավե՛նք հովիտը,— խորհուրդ տվին մամռոտ քարերը,— այնտեղ հողը փափուկ է, օդն ավելի մեղմ, ջրերն առատ...

Երկար վիճեցին, երկար սպառնացին, ճահճին՝ անտառը ողողելու հրավերը կարդացին, գազաններին՝ ծառերը ոչնչացնելու խորհուրդը ներշնչեցին։

Բայց անտառն այն շքեղ, ամեն առավոտ զարթնում էր մի նո՛ր, ավելցած ուժով, աճում էր-գնում բեղմնավորության հսկա քայլերով։

Այնտե՛ղ էր թռչունն իր երգը հնչեցնում, սոխակը լուսադեմին դալլայլով ողջունում, կենսապարար զովությունը՝ մեծ սաղարթների տակ անուշ, քաղցր բուրում, թավիշ մարգագետինը արևի տակ պսպղում։

Նո՛ւյնիսկ այնտեղ է՛ր, որ վտակները ժայռերից խուսափելով՝ հանգիստ էին որոնում, ուրախ-զվարթ խոխոջում, յուրաքանչյուր ծառի, ընձյուղի արմատը գգվում...

Այդ արդեն անտանելի էր քարաժայռերի դաժան կույտի համար։ Ամեն ինչ՝ ծաղիկ, ջուր, նույնիսկ մողեսն ու մամուռ, կռանում էին դեպի անտառը. կարծես խուսափում էին ժայռերից, ուզում էին գնալ ապրելու թարմ կանաչներում, զով ստվերների, դալար ճյուղավորության տակ։

Վիթխարի կատարը դողում էր զայրույթից, ճահիճը մի կողմից ճրգնում էր իր զազիր բորբոսը անտառին հասցնել, գազանները մի այլ կողմից փորձեցին նոր ընձյուղները տրորել, ջարդել...

Ու ամեն ինչ, ամեն անարգ ուժ ի մի գումարված՝ մտածեցին վերջապես կասեցնել շարժվող կյանքի ընթացքը։

Ու հաջողվեցան։

Ինքը անտառը, իրերի բերմամբ, գուցեև իր չարաբախտ դիրքի պատճառով, և կամ, ո՞վ գիտե, տնավեր ներքին դավաճան երկպառակությամբ՝ թուլացավ, ջլատվեց և ժայռ ու գազանի, ճահիճ, զեռունի կերակուր եղավ։

Եկավ աշնանային ժանգ սփռող եղանակը. բարձրացան խորշակներ, ժայռերը իրենց մեջ կուտակած ջրերը բաց թողին, գազանները կատաղի ուժով բանակ կազմեցին, ճահիճը մեծացավ, բորբոս-զեռունով մոտեցավ կյանքին...

Հետո, հովերը ծառերին միմյանց դեմ հանեցին, զարկին, ծեծեցին, ճյուղը ճյուղով ջարդեցին, արմատները բացին, թուլացրին, կաղնուն լոբենու վրա տապալեցին, բոխին՝ հացենու տակը ճզմեցին...

Եվ երբ քարաժայռերը չար քրքիջներով այդ ավերը ողջունեցին, վիթխարի կամարը ցնցվեց, դարձավ լերկ ապառաժներին ու գոչեց ահեղ.

— Հառա՛ջ, ժամանակն է այժմ վերջ տալու այդ ատելի, շարժվող կյանքին...

Եվ ահա մեկե՛ն դղրդաց գետինը, լեռ ու ապառաժ ցնցվեց-օրորվեց, քար ու քարաժայռ շարժվեց-տատանվեց, մեծ որոտումով ոսանեց, կատարը ծուխ-բոց արձակեց, մոխիր, խանձող ու այրող կրակ դուրս ժայթքեց և այդ բոլորը, ահավոր դանդաղությամբ, թանձր խավարի մեջ իջավ, անտառի վրա ընկավ, տակովն արավ ծառ ու ճյուղ, ծաղիկ և ընձյուղ։ Ջարդեց, տրորեց, մրկեց ու ծածկեց նրան քարի կույտերի, փոշու, հողի, տիղմ ու ավազի մեջ...

Թռչունները ահաբեկ՝ փախան, հեռացան, ուրախ կարկաչով հոսող ջրերը կամ ցամաքեցման և կամ ճապաղ փախուստով՝ շտապեցին գետնի խորքը ապաստանել։

Այլևս ո՛չ մի ստվեր. զովությանը հաջորդեց չոր անապատը. քարոտ, ամայի, արևի տակ տառապող ամլությունը գրավեց ամբողջ հովիտը։

Լճակները հուզված՝ ջանացին կռիվ մղել, ծեծել հեռացնել գլորվող

ժայռերը, մարե՛լ կատարի հոսանուտ կրակը, և, մինչև այդ խաղաղ ժպտող ջրերը, անընդհատ կռվի ելան ապառաժների դեմ, ճգնեցին փշրել նրանց կողերը, ուժ տվին՝ լցելով մաշելու նրանց կոշտ ներկայությունը, բայց չարադեմ ժայռերը ավելի խոր մղվելով՝ իրենց տակ մեռցրին, ոչնչացրին ամեն դալարիք, ամեն կյանք կամ շարժողություն...

Այդպես էր ահա, որ անտառն այն շքեղ՝ տրորվեց ժայռերի ուժի տակ։ Այդպես էր ահա, որ այն սքանչելի հովիտը սև ու ահավոր քարերի անապատ դարձավ, ծովակների շուրջը քարերի շղթաներով կաշկանդվեցավ, և շրջակա ծաղկավետ բլուրների վրա չոր ամայությունը եկավ, բնակվեցավ...

Եվ այդ դեռ բավ չէր. ճահիճն էլ մյուս կողմից մոտեցավ, դիմադրելու ուժ չունեցող անտառի կուրծքը մտավ, եղած ծառերին իր գարշ բորբոսով պատեց, զեռունների և գորտերի ձայներով ամեն թռչուն ու սոխակ հանեց, դուրս նետեց։

Վարդը մեռավ բորբոսից, ընձյուղները արմատախիլ, տխուր շարքերով, քարերի ճեղքերում իրենց գերեզմանը գտան, և մշտադալար թարմ կանաչությանը հաջորդեց տիղմով ու բորբոսով կանաչած՝ հոտած մի ճահիճ։

Եկա՛ն նաև գազանները։ Խմբովին եկան։ Ջարդեցին, փշրեցին, ոտնատակ արին, ամեն ինչ տրորեցին և հովասուն վայրերը չոր խոյունների ասպարեզ շինեցին, ուր այնուհետև գայլերն էին միայն ոռնում, բորենիներ թափառում և խոզերը՝ հողը քրքրում...

Անտառը հաղթվել էր, ընկճվել-ոչնչացել, և գեղեցիկ հովիտը լերկ անապատի փոխվել...

2

Երկա՛ր, անհաշիվ երկար տարիներ տոնեցին ժայռերն իրենց հաղթությունը, վայելեց ճահիճը՝ իր տիրապետությունը, տրորեցին գազաններն՝ իրենց անկյունը։

Երկա՛ր, անհաշիվ տարիներ սուրաց ավազախառն քամին հովի վրայով, ծովակները ալեկոծեցին իրենց ափերը, մռնչացին, լացին, փշրվեցին քարերի շրջանակի դեմ։

Երկա՛ր, անհաշիվ տարիներ մողեսներ ու օձեր աղտոտեցին հովիտը իրենց զզվելի երգերով։

Արևը խանձեց, անձրևը ծեծեց, ավազը շերտեր կազմեց, ճգնեց անցյալից ոչ մի հետք չթողնել, և ամեն ոք կարծում էր, որ անտառը վերջնականապես մեռել-ոչնչացել էր ու այլևս չպիտի կարողանար շարժվել։

Սակայն այդպես չեղավ։

Լեռնային երկրներում, նույնիսկ ամենակարծր գրանիտային աշխարհներում, հաճախ տեղի են ունենում այնպիսի դեպքեր, որ նույնիսկ բնության՝ տարօրեն երևույթների վարժ անձը մնում է ապշած։

Ջրերից, բուսականությունից հեռու, միապաղաղ խոշոր ժայռերի մի ամենաչնչին ճեղքը մտնելով, անձրևի կաթիլներից սնունդ ստացած, տարիներով խուլ աշխատանքից հետո, սակավ առ սակավ կուրծքը ճեղքում և վեր են պարզվում այնպիսի ուժով մեծամեծ ծառեր, որ կատարելապես անհասկանալի է մնում, թե ո՞ր աստիճան հսկա ուժ էր պետք այդ բոլորն անել կարողանալու համար։

Բուսական աճեցողության ուժը, հիրավի, եթե նա գոյություն ունի նույնիսկ փոքրիկ սաղմերով, ո՛չ միայն չի մեռնում, այլ ոչինչ, բացարձակ ոչինչ չի կարող ճնշել նրան, ժամանակի ընթացքում փշրել-ծակելու ամեն արգելք, բարձր պարզելու իր ճյուղավորությունը և իր բեղմնավոր սերնդյան պատվանդան շինելու լեռ ու ապառաժ...

Սակայն հաղթողներից ո՛չ մեկը չգիտեր այդ։ Ո՛չ այն վիթխարի կատարը, որ ծուխ ու կրակով մրկեց ամեն ինչ և կարծեց մեռցնել անտառը, որ քար-ապառաժով փշրեց ամեն ընձյուղ և մտածեց ոչնչացնել շարժումը. ո՛չ ճահիճը գիտեր, որ բորբոս-զեռունով պատեց անտառը և ջանաց փտությունով կանգնեցնել կյանքը, և ո՛չ էլ գազանները գիտեին, որոնք տրորեցին ամեն ծառ և հուսացին անապատ շինել կյանքի փոխարեն։

Բայց հենց վիթխարի կատարի մոխիրն ու կրակը, միացած ճահճի սփռած փտության, գազանների տրորած, խոիվ դարձրած տերևների հետ, խնամեցին, ամեն վտանգներից ազատ պահեցին մեռնող անտառի աճողության ուժը և երկար, շա՜տ երկար ժամանակներից հետո ապշությամբ զգացին, որ այնտեղ՝ խորքերում, քարերի տակ, ժայռերի թողած փոքրիկ ճեղքերի մեջ, ճահճի կուտած փտության խավերում՝ կատարվում էր մի նոր բան։

Ջնչին, վտիտ և փոքրիկ արարածներ այս-այն կողմից գլուխ էին դուրս պարզում, ամենափոքր կաթիլից սնանվում, ստվերից զովանում և նուրբ կանաչությամբ անապատը կենդանացնում...

— Ի՞նչ է այն,— գոչեց ապշությամբ լերկ ապառաժը,— կարծես կանաչ բաներ են լույս ընկնում։

— Ոչինչ բան,— քրքջաց կատարը.— ճզմեցե՛ք կամ անուշադի՛ր թողեք։

— Թող աճեն, ի՞նչ կա,— ասացին քարերը.— մեզ հովանավորում

են, զարդարում միայն։ Ինչ են այդ չնչին արարածները, որ մեզ ուշադրության առարկա դառնան...

Ու թողին։ Ժպիտը դեմքերին՝ ժայռերը դիտում էին փոքրիկ արարածների բազմանալը. ճահիճը մինչև իսկ ուրախացավ, որ ինքն էլ բուսնելու ընդունակ է. իսկ գազանները արհամարհությամբ անցնում էին նրանց կողքով։

— Հիմար բաներ են, թողեք աճեն՝ որքան կուզեն...

Եվ աճեցին, բարձրացան, արմատները խորը մղեցին, լուռ, առանց աղմուկի պարզվեցան ամեն ուղղությամբ, ժայռերի տակ մտան, ճեղքերից, խորշերից գլուխ դուրս պարզեցին, հետո մեկե՛ն, բուռն մղումով այնպես առաջ գնացին, որ ինչքան քար կար՝ ճեղքվեց, ինչքան ապառաժ՝ երկու կտոր եղավ...

Անտառը շարժվում էր։

Գարնանային անձրևներից հետո եկան հյութալից, աճեցնող օրերը. մանր ճյուղավորությունները դուրս պարզվեցին ուժգնությամբ, արմատները հսկա ուժով դեն գլորեցին իրենց ճնշող քարերը, ապա ուռելով՝ փշրտեցին, գրեթե հող չինեցին ապառաժները, ճահիճը տեղի տվավ ահաբեկ, գազանները սոսկումով ետ քաշվեցին նոր ծառերի դուրս պարզած փշերի առաջ, հովիտը մեկեն կենդանացավ, առուները հոսեցին, ծովակները՝ ժայռերին ծեծելով, տակը փորելով՝ փլեցրին ու ջրով ծածկեցին...

Ու այս ամենը այնքան արագությամբ կատարվեց ու մեծացավ այնուհետև, որ վիթխարի կատարը սոսկումից կծկվեց. ժայռեր ջարդված՝ շտապեցին թաքնվելու աճող խոտերի տակ, գազանները առանց ետ նայելու՝ դուրս թռան հովիտից, ճահիճը սմքած՝ իր վերջին բորբոսը տարավ կծկծելու հեռավոր ժայռերի ստորոտում։

Այնուհետև այլևս անհնար դարձավ շարժվող անտառի առաջն առնել։

Ցուրաքանչյուր ծառ, յուրաքանչյուր թուփ և ծաղիկ բյուրավոր ընձյուղներ արձակեց ամեն ուղղությամբ. կաղնին, լորին, բոխին, հացենին դեն շպրտեցին իրենց նեղող քարերը, ծակեցին-անցան ժայռերը. ոտնատակ առին, իրենց արմատների յուրաքանչյուր թելով փշրտեցին, հող շինեցին նրանց, և այնտեղ, ուր շատ տարիներ առաջ գազաններ էին ոռնում, գորտն էր կռկռում, մողեսը թափառում, այժմ բազմաթիվ վտակներ, ավելի առատ քան առաջ, եկան ոռոգելու ծառ ու ծառաստան, վարդ ու ծաղիկներ։

Այնտե՛ղ, ուր շոր անապատը ավազն էր ոլորտում օդի մեջ, այժմ ծառերի տերևներն էին սոսափում, և ճյուղերի միջից թռչուններ էին դայլայլում։

Այնտե՛ղ, ուր քամին սուրալով խանձում էր ամեն բույս, այժմ թարմ զովության մեջ աճում էին շուշանն ու նարգիզը, պուտն ու մանուշակը։

Այնտե՛ղ, ուր ժայռերն իրենց հաղթանակն էին տոնում, ճահիճն իր զազիր բորբոսը հոտեցնում, գազանն իր ատամներով կտրտում, անցնում, այժմ սև հող էր գոյանում, խիտ, կենդանի, շարժուն անտառի մեծ տարածություն էր պարզվում, և կյանքը ժպտում էր, ժպտում խնդագին, աճելով ավելի բարձր, ավելի ուժեղ, քան ամեն ժայռ կամ կրակ ցայտող կատար...

Անտառը դարձյալ շարժվում էր. աճողության ուժը հաղթել էր. ոչինչ չէր կարողացել անհետացնել նրան. ո՛չ ժայռ, ո՛չ ճահիճ և ո՛չ գազաններ...

Եվ այժմ, այդ սքանչելի հովիտում, առատաբուխ ջրերի, կապուտակ, վեհ ծովակների, ծաղկավետ բլրակների կողերին, հին, անհիշատակ ժամանակներից ի վեր աճող անտառը դարձյալ իր հողն է բռնել, դարձյա՛լ ճյուղ ճյուղի միացրած, արմատներով հողը պինդ գրկած, անհամար ճյուղավորությամբ տարածվում է հեռուները և ճգնում է մի թիզ իսկ չթողնել անբնակ, մի քայլ իսկ՝ անմշակ։

Այսպես է լինում։ Լեռնային երկրներում, նույնիսկ գրանիտային աշխարհներում հաճախ տեղի է ունենում այնպիսի դեպքեր, որ նույնիսկ բնության՝ տարօրեն երևույթների վարժ անձը մնում է ապշած...

1905

ԶԱՐԹՆԵԼ Է ԱՌՅՈՒԾԸ

1

Վանդակի մեջ կաշկանդած առյուծը զարթնել էր։ Զարթնել ու կատաղել։

Ազատության տենչից, կապանքներից, երկարատև տանջանքներից ու անվերջ ճնշումներից՝ մռնչում էր զայրալից, ամեն ինչ փշրել սպառնում, վանդակ ու շղթա, պատնեշ, գազանապահ՝ խորտակել պատրաստվում։

Գազանապահներն իրար էին անցել։ Ո՛չ զայրացկոտ նրանց աղաղակները ընդունակ եղան առյուծի մռնչյունից բարձր հնչել, ո՛չ սպառնական շարժումները, ո՛չ էլ գլխավոր գազանապահի շիկացած, կայծեր արձակող ձողը։

Կատաղել էր առյուծը, արյունն աչքը կոխել. վանդակը ցնցում էր

Բաթերով, պահապաններին զարհուրեցնում որոտման աղաղակներով...

Մրկո՛ւմ էին, այրում վանդակի մի ձողը խորտակել ճգնող նրա թաթերը՝ ոստնում էր դեպի ուրիշ ձող. այրում էին նրա մարմինը շիկացրած երկաթով՝ մոնչում էր ավելի բարձր. ակռաներով փշրելու հարձակվում ամեն ղենք, գազանապահների մոտ բերած ամեն զսպող միջոց...

Եվ պահապանները շվարած, գունատ ու այլայլված՝ չգիտեին ինչ անել այլևս, ինչպես զսպել զարթնած հսկային։

— Բերեք շատ ձողեր, շիկացրե՛ք, մարմինն այրեցեք, նուրբ մասերը մրկեցեք, զսպե՛ք վայրենուն...— աղաղակում էր գլխավոր գազանապահը,— մի՛ խնայեք ոչինչ, միայն լռեցրեք...

— Շիկացրած երկաթով կուրացնենք աչքերը,— առաջարկեց մի լավ պահապան,— ապա թե ոչ՝ նա դուրս կնետվի, մեզնից ոչ ոք այլևս նրա ճանկերիցը չի ազատվի...

Բայց այնքան էլ դյուրին չէ կուրացնել առյուծին, զարթնած առյուծին։

Քանի շիկացրած ձողը մոտենում էր, այնքան առյուծը մեծ ոստումներ էր գործում, պատերը ցնցում, վանդակն ամբողջ կործանել սպառնում։

Քանի գոռում էին նրա վրա, ներս պարզված գավազաններով ծեծում, ջարդոտում՝ այնքան հսկան ավելի էր զայրանում, կծկվում էր մի վայրկյան, ուժերը կուտակում, ապա այնպիսի թռիչք գործում, որ պահապան ու գազանապահ՝ լեղապատառ փախչում էին, ծակուծուկ թաքնվում...

— Պետք է վերջապես մի ճար մտածել,— ասաց գլխավոր գազանապահը։

— Փորձենք քաղցրությունով...— խոսեց օգնականը,— համոզենք, խրատենք....

Պահապաններից մեկը լուռ՝ ծիծաղեց այդ լսելիս. բայց ոչ ոք նրան չտեսավ։

Եվ գազանապահները միահամուռ՝ եկան վանդակի առաջ, սկսեցին քաղցր խոսքեր, համոզողական, խրատական ձևեր...

— Լա՛վ, քնքո՛ւշ, խելոք առյուծս,— սկսեց մի պահապան,— ի՞նչ է եղել քեզ, վանդակդ՝ բավական լայն, կերակուրդ՝ իր ժամանակին. եթե հլու մնաս՝ պետք չունես պատժի.... Հանդարտիր, սիրուն գազանս. չէ՞ որ խելոք էիր դու, հնազանդ, հլու... և երախտագետ ու շնորհակալ...

— Լսի՛ր դու, առյո՛ւծ,— առաջ եկավ գազանապահը,— այս վարմունքդ վշտացնում է ինձ՝ քո խնամակալին, քեզ պահպանողին... Ամո՛թ է, ամո՛թ... ի՞նչն է պակաս քեզ. կերակուրդ՝ արյունոտ լավ միս, ջուրդ

թեև քիչ լեղի, բայց խո չէ՞իր հրամայի, որ մեր խմած ջրից քեզ բաժին հասներ... ո՛չ, լավ մտածիր, քաղցր ջուրը անասունների համար չէ... Եվ, վերջապես պիտի խելքի գաս, այսպես չի՛ կարելի. քնել չես թողնում մեզ, ո՛չ էլ՝ անվրդով...

— Է՛յ, աղմկող անասուն,— կանչեց իր կողմից գլխավոր գազանապահը ու մի քայլ մոտ գնաց,— պիտի ձայնդ կտրե՞ս թե ոչ. հանդարտի՛ր, թե չէ, աստված էլ գիտե, վանդակդ սեղմել կտամ, շղթաներով ոտներդ կապել... Ապա՞, քիչ լռիր տեսնե՞նք... Ի՞նչ է ուզածդ։ Չլինի՞ մեզ նման ազատ ապրել ցանկացար հանկարծ... Ինչպե՞ս չէ... անասուն ես և անասուն էլ պիտի մնաս՝ պահապանը գլխիդ, ձողը միշտ կողքիդ... Ա՛, դու ինձ չե՞ս լսում. այս խոսքերը, որով պատվեցի քեզ, գեռ չհամոզեցի՞ն, որ անիրավ ես դու... Շղթանե՞ր ես ուզում, ձո՞զ, գավազանե՞ր...

Առյուծը, սակայն, ո՛չ միայն չէր համոզվում, հանդարտվում, ո՛չ միայն չէր լսում, այլ շրջապատող ճառախոս բռնավորների շարժումները նրան ավելի կատաղեցնում էին, ու նա ցնցում էր, ցնցում, վանդակի ձողերը ծռմռում, տեղահան անելու շատ քիչ էր մնում...

Ու գազանապետները գունատ, վախով ետ փախան, իրենց խոր մառանն իջան և խորհրդի, մտածելու նստան։

Ի՞նչ անել։ Առյուծը հանդարտելու ո՛չ մի միտք չուներ, ո՛չ խրատն էր ազդում, ո՛չ սպառնալիք։ Վայրկյան առ վայրկյան կարող էր ձողերը փշրել, կատաղի՝ դուրս նետվել ու նրանց մի առ մի հոշոտել, ջարդել։

Կյանքի և մահվան խնդիր էր գոյացել։ Սպանել գազանին՝ նշանակում էր զրկվել ռոճիկներից, զրկվել եկամուտից, վայելքից, ընդմիշտ կորցնել հարստությունն, անաշխատ կյանք, գազանապահական, տիրելու հաճույք, իշխելու իրավունք։

— Պետք է ուզածները տալ, միջոցը դա է,— ասաց գազանապահի խելոք օգնականը,— տալ եթե ոչ բոլորը, գոնե մի քանիսը. վանդակն օրինակ՝ լայնացնել, կերակուրը շատացնել, ձողը թաքցնել, շղթաները հեռացնել... Այո՛, միմիայն լայնացնել, թաքցնել, հեռացնել... Ո՛չ ավելի և ո՛չ էլ պակաս։ Հարկավոր է այդ ամենը իսկույն կատարել առայժմ։ Առայժմ՝ այդ է իմ խորհուրդը...

Գլխավոր գազանապահը մտածեց, երկար մտածեց. սակայն պահապանները լեղապատառ ներս ընկան, ձողերից մեկի փշրվելը ազդարարեցին, և նա ստիպվեց հրամայել, որ առյուծի ուզածները տան՝ վանդակը լայնացնեն, կերակուրը շատացնեն, ձողերը թաքցնեն, շղթաները մառան իջեցնեն...

Եվ ահա այդպես էր, որ պահապանները զիջան ու ահեղ գազանի ուզածները արին։

2

Տվին ուզածները։

Վանդակը բաց արին, առյուծին բակը հանեցին, շղթաները դղրդյունով տարան՝ մառանն ածեցին. վերացրին ծեծը, թաքցրին պատժող ձողը, առատ միս առաջը նետեցին, այլև հայտարարեցին, որ նա կարող էր այնուհետև գոռալ ու երգել՝ ինչքան կամենար։

Դա արդեն «շնորհների» մեծագույնն էր։ Ճշմարիտ է, վանդակից հետո քարե պարսպով լայն բակը կար դեռ, փշրելու անհնար վանդակ. սակայն առյուծն առայժմ գոհ էր. կարող էր վազել, ոստնել, մռնչալ, երգել...

Որքա՜ն ուրախությամբ էր, որ նա դուրս նետվեց, թավալեց գետին, ուրախ կանչեր արձակեց, ախորժակով կերավ կերակուրը, խմեց առվակի ջուրը, երկնքին ժպտաց, արևին ողջունեց և խրոխտ ձայնով ամբողջ օրը երգեց...

Գազանապահներն ու պահապանները, նախ հեռու բռնեցին իրենց, հետո զգուշաբար, վախախառն ժպիտներով փորձեցին դուրս ելնել, առյուծին երևալ, նրան պահպանելու հոգսը իրենց վրա առնել։

Առյուծը մի կողմ կծկված՝ նայեց նրանց խիստ կասկածվոր, հարձակման դիրք ընդունեց... Բայց երբ տեսավ, որ իրեն չեն դիպչում, արգելք չեն լինում ուզածն անելու՝ միամտվեց ու թողեց, որ իրենց պարտքը կատարեն. սրբեն բակը, մաքրեն առվակը, թփերը զննեն, բակի տերը գառնան այնպես, որպես առաջ էր։

Գազանապահ-պահապան, ամենքը այլևս այն չէին, ինչ որ առաջ էր. խրոխտ չէր հնչում նրանց ձայնն այլևս, ոչ էլ զայրալից, հրամայողական։ Ժպտում էին շողոմաբար, ներողամտական դիրք ընդունում... Մի խոսքով, մեղրի նման քաղցր էին դարձել, սպասավորների դերի մեջ մտել։

Այդպես էր ահա, որ առյուծը սեղմ վանդակից պարսպապատ բակն ելավ, ուտելու ազատություն ստացավ, կանչելու և մռնչալու իրավունք։

Այդպես էր ահա, որ խարանող ձողն այլևս չերևաց, գավազանները թաքնվելու գնացին, շղթաները մառանն իջան։

Մյուս օրն արդեն գազանապահ ու պահապան ավելի վստահություն առած՝ մի քանի քայլ մոտ եկան առյուծին, ու նրանցից յուրաքանչյուրը պարտք համարեց մի ճառ խոսել հսկային։

— Ահա վերջապես, առյուծ, ուզածդ ունեցար։ Վանդակդ՝ լայնածավալ, բաց երկինքը՝ վրադ, հողն ու բույսը, թուփն ու ծառը, քաղցր ջուրը էլ կողքիդ, շղթաներդ՝ մառանում, շիկացող ձողը, գավազանները՝ հեռացրած... Հույս ունենք, որ այսուհետև կհանգստանաս, խելոք կմնաս և քեզ պահպանողներին չես վշտացնի...

Գլխավոր գազանապահն այնուամենայնիվ, պաշտոնի բերմամբ, անհրաժեշտ համարեց քիչ ավելի ներշնչող դարձնել քարոզը. քարոզ՝ խառն հանդիմանություններով, զգուշության հրավերով։

— Լսի՛ր, գազա՛ն դու,— ասաց նա խրոխտ,— տվի՝ ինչ ուզում էիր։ Մենք գտանք, որ քո բարելավության համար՝ տալն անհրաժեշտ էր... Գիշեր և ցերեկ քո երջանկության համար հոգս անելով, խորհեցինք, թե հարկավոր էր քեզ առատ կերակուր և վանդակի լայնություն... Ջանա ուրեմն այդ շնորհներին արժանի լինել և մեր հայրական սիրտը չվշտացնել... Ջանա, որ պետք չունենաս այլևս վանդակ ու ձողի, շղթա-գավազանի... աշխատիր արդարացնել քեզ վրա դրած հույսերս...

Առյուծը լսում էր։ Լսում ու խորհում։ Կծկված պատի տակ, լուռ, զգուշավոր... Եվ երբ գլխավոր գազանապահն ու իր քարոզները հեռացան՝ ժպտաց, բաշը թափ տվեց ու ասաց.

— Այդ պարոնը երևի չգիտե դեռ, որ առյուծի ճանկն ընկածն այլևս ետ խլել չի կարելի...

Միամիտ են լինում առյուծները, ինչպես ամեն զորեղ արարած։ Ո՛չ խորամանկության մասին գաղափար ունեն, ո՛չ ճարպիկության, ո՛չ էլ թակարդների։

Եվ դա է պատճառը, որ առյուծին շատ ավելի հեշտ է թակարդ ձգելը, քան աղվեսների։

Սակայն հսկան, տարիներով չունեցածը ձեռք բերելուց արբշիռ՝ թոթվեց իրեն, վազվզեց, մռնչաց, երգեց...

Անցան շատ օրեր։ Գազանապահ ու պահապան՝ բակի մեջ եղած ազատ առյուծից այլևս չէին վախենում։ Մտածում էին. «Բարկացել էր՝ անցավ»...

Ու մոտենում էին։ Մինչև իսկ մի օր էլ պահապաններից մեկը մոտ եկավ գավազանը ձեռքին, որպես թե հենց այնպես, հենվելու, ձեռքում խաղացնելու էր վերցրել։

Առյուծը ցնցվեց, տեսնելով փայտը, նայեց պահապանին. սակայն սա ժպտում էր սիրալիր և սկի էլ զենքը գործածելու մտադրություն չէր ցույց տալիս։

Մի ուրիշ օր էլ, առյուծը, երբ քնից զարթնած՝ հորանջում էր, լուսածագը ողջունում զվարթագին՝ աչքն ընկավ բակի մի կողմում փայլող սոսկալի առարկային... և կարկամեց։

Ի՞նչ էր այն, ձողը չէ՞ր... Այո՛, ձողն էր. փայլուն երկաթը, որ կարմրած՝ հազարավոր վերքեր էր թողել իր առյուծային մարմնի վրա՝ մուրճն էր այրել, թաթերը հոշոտել...

Ձողն էր։ Գատին կոթնեցրած, փայլուն, սպառնագին...

Գազանապահը մաքրում էր նրան... Այդպես, գործածելու կերպարանք չուներ, կրակ էլ չկար, կարմիր չէր երկաթը, կայծեր չէր արձակում։

Զգույշ՝ ելավ առյուծը թփերի միջից, մի քանի քայլ առաջ գնաց, կանգնեց, նայել սկսեց։

Ձողի ներկայությունը, թեկուզ ոչ շիկացրած՝ նրան անհանգստացնում էր։ Չէ՞ որ թաքցրած էր, ընդմիշտ հեռացրած։

Գազանապահներն իսկույն նկատեցին, որ առյուծը կես սպառնագին, շատ զգուշավոր՝ զննում էր ձողը։

Ու սիրալիր ժպիտ դեմքերին՝ գլխավորը խոսեց.

— Զո՞ղն է քեզ անհանգստացնում... Ինչո՞ւ սակայն. եթե շարություն չանես՝ նա քեզ վնաս չի տա... Հանգի՛ստ եղիր դու...

Առյուծն ըստ երևույթին՝ քիչ միամտվեց ու գնաց ճաշելու։

Այստեղ մի երկրորդ փոփոխություն նրան խոր ազդեց։

Կերավ, ճշմարիտ է, դուրս բերած միսը... սակայն ինչ-որ հոտ էր բուրում, խիստ գարշելի հոտ. եղածն էլ՝ շատ քիչ։

Մոնչաց, թաթերով նետեց այս-այն կողմ... սակայն գազանապահ ու պահապան, ձողը բակի մեջ թողած՝ շտապել էին հեռանալ, այլևս չերևալ։

Առյուծը զայրացավ, դես ու դեն վազեց, կանչեց, բողոքեց... բայց մնաց անոթի։ Գնաց ջրի կողմը՝ գտավ առվակը պղտորած, ցեխախառն, աղտոտ... և լեղի։

Ու խորապես հուզված՝ մտածել սկսեց։

3

Այդպես, մի առ մի, անզգալի դարձնելու հոգատարությամբ՝ խլում էին նրանից այն բոլորը, ինչ որ զիջել էին՝ հսկայի կատաղությունից սարսափած։

Նախ՝ զավազաններն երևան եկան. հետո՝ ձողը, ապա՝ կերակուրը նախկինը դարձավ, հոտած արյունոտ... ջուրն էլ մի՛ կողմից. լեղի էր կարել, հին խմած ջրից, ցեխոտ ու աղտոտ...

Եվ ի լրումն ամենայնի, մի օր էլ հանկարծ զարթնելով, տեսավ, որ բակից հեռացրած վանդակը իր տեղն էր եկել դարձյալ։

Սարսափահար մոտ գնաց, զննեց զգուշավոր, տեսավ, որ ձողերը փոխել էին, հաստակուռ դարձրել, վանդակն էլ հաստատուն՝ քարե հիմքի վրա դրել։

Այդ նույն օրը նա ախորժակ չունեցավ ուտելու, զվարճանալու և կամ երգելու։

Կծկված մի անկյուն՝ խորհում էր եղածների վրա, նայում վանդակին, պատին կոթնեցրած ձողին, նայում անցուդարձ անող գավազանակիր պահապաններին...

Ամենքը կարծես նրան էին նայում մի տեսակ հեգնող ժպիտով, շարագուշակ, լիրբ արտահայտությունով։

Կարծես ամենքն ուզում էին ասել.

— Սպասի՛ր մեկ... քեզ ցո՛ւյց կտանք, թե ո՞րն է ազատությունը։

Խորհում էր առյուծը դառնությամբ, կծկված հեռավոր իր խուլ անկյունում։ Սիրտը ճնշվում էր։

Ցխուր, գրեթե լաց լինելու չափ կոկորդը դառնացած՝ մնաց նա մինչև երեկո անշարժ, թաց աչքերը երկնքին ու արևին, ներքին դողով բռնված, զվարթությամբ մռնչալու սիրտ և ուտելու ախորժակը կորցրած։

Մի ագամ միայն փորձեց ջուր խմել։ Պապակում էր։ Թեև առվակը պղտոր էր, լեղի, սակայն նա խմեց երկար և գնաց կծկվելու իր թփերի մեջ։

Գիշերը քնել չկարողացավ։ Վատ երազներ ու մղձավանջը տանջեցին նրան։ Քանի՞ անգամ վեր թռավ՝ կարծելով, թե ճնշում են ականջը, ոտքերը շղթայում, շիկացած երկաթը աչքերի մեջ կոխում...

Ու երբ արևի առաջին ճառագայթներն երևացին՝ զարթնեց, վեր թռավ, այսպես մտածեց.

— Ո՜ւհ, որքա՜ն վախկոտն եմ. կարծես առյուծ չլինեմ...

Եվ դեմքը կնճռած՝ ողջունեց բացվող արշալույսին, մինչ միտքը գործում էր հետզհետե արագ, տագնապալից վճռականությամբ...

Չկերավ միսը։ Բարկությամբ նետեց դեպի գազանապահի տունը. մոտ եկող պահապաններին սպառնագին մռմռոցներով դիմավորեց և ստիպեց նրանց ետ քաշվելու։ Գլխավոր գազանապահին էլ այնպես կատաղի ակնարկ նետեց, որ սա շտապեց թաքնվել...

Հետո, հետզհետե վճռական, կարծես իր որոշումն արած, թեև քիչ վարանոտ, քիչ էլ դողդոջուն՝ մոտ գնաց վանդակին, պտտեց շուրջը արհամարհաբար՝ պոչով ծեծեց նրա պատերը և երբ շիկացնելու սահմանված ձողի մոտով անցավ՝ թաթով խփեց նրան ու դղրդյունով գետին տապալեց...

Գազանապահներն ու պահապանները հեռվից, գազտագողի դիտում էին այդ ամենը, գունատվում, վախենում։

Առյուծը հասկացել էր նրանց չար միտքը։

— Չէ՛,— ասաց գազանապահի օգնականը,— հարկավոր է կարուկ

և անմիջական, զսպող միջոցներ. այս գիշեր իսկ, առանց հետաձգելու... Առյուծը զարթնել է...

Եվ նույն գիշեր գործը սկսեցին։

Բոլոր գազանապահները զինված գավազաններով, պահապանները՝ ծանր- անքակտելի շղթաներով, գլխավոր գազանապահը՝ շիկացրած ձողով, խիստ զգուշությամբ՝ քնած առյուծին մոտ գնացին։

Հարկավոր էր անշուշտ առյուծին նորից իր վանդակի մեջ սեղմել և այս անգամ շղթաներով ընդմիշտ կապոտել։

Առյուծը քնել էր։ Այլևս չէր վախենում, որովհետև վճռել էր անելիքը։

Քնել էր հանգիստ, որովհետև իմացել էր, թե ինչ էին պատրաստում իր համար։ Ազատությունների տրված օրից իսկ նա միշտ կասկածել էր և այժմ պարզ տեսնում էր, թե ինչպես մի առ մի ետ էին խլում վարպետորեն, գծուծ ձևերով...

Գազանապահների համար գոյության հարց էր առյուծի՝ վանդակի մեջ լինելը։ Առյուծը ազատ վանդակից՝ պիտի ձգտեր ազատվել նաև շրջափակից։ Իսկ դա՝ նշանակում էր ոչնչացումն ամեն պահապանի։

Ու քնել էր՝ վստահ իր ուժի, վստահ՝ ձգտումների արդարության, բնական լինելու վրա...

Ահա, մոտ են գնում գազանապահներն ու պահապանները քայլ առ քայլ, զգույշ, սողալով... Շղթան նրանց հետ շարժվում էր առաջ, շիկացած ձողը փայլում էր կայծարձակ ու սպառնագին։

Բայց, կա մի խոշոր սխալ, որից զուրկ չէ ոչ մի գազանապահ և կամ առյուծի պահապան։

Առյուծը քնում է, իրավ է, սակայն քնում է այնքա՜ն հսկող քնով ու այնքա՜ն թեթև, ինչպես այն ամեն առյուծ, որի ազատությանը սպառնալ կարող են յուրաքանչյուր րոպե...

Թեթև շշուկ, նույնիսկ իրեն ամեն կողմից շրջապատող սև ոգիների մղած օդը՝ զարթնեցրեց նրան։

Չշարժվեց. աչքը կիսովին բաց արավ, նայեց շուրջը, տեսավ բրոնավորներին...

Ու ոստնեց...

Դղրդաց գետինը, ցնցվեց ամեն ինչ ու տապալվեց, մոնչյունով օդը լցվեց, ճիչ ու աղմուկ, հաղթվողի ողբը հաղթականի աղաղակների հետ՝ իր կծվությամբ օդը քեղրտեց... ապա լսվեց դռների փշրտվելն, ու մի հսկա բան դուրս թռավ շրջափակից և մոնչյուն սփռելով ամեն կողմ՝ սլացավ դեպի արձակ տարածությունը...

Շրջափակի մեջ ո՛չ մի գազանապահ, ո՛չ մի պահապան ողջ չէր մնացել, գլխավոր գազանապահի սիրտը հոշոտած, օգնականի գլուխը՝ ջախջախած... արյուն ու դիակ...

Եվ այնտեղ, արձակ տարածության մեջ սլացող առյուծի դիմաց, անամպ երկնքի վրա լուսածագն էր ելնում կարմրորակ, շքեղ...

Կանգ առավ հսկան մի ժայռի գլխին, բաշերը հովին, ազատության վսեմ մաղթանքն ուղղած բացվող արշալույսին։

Ու նրա խրոխտ ձայնը թնդացնում էր լեռ ու դաշտ, ավետելով ջրնջումն շրջափակների, անկումն գազանապահների, ձող, շղթաների...

1905

ԶՈՀԱԿ

(Պարսկական լեգենդ)

1

Վաղո՛ւց, շա՜տ վաղուց— պատմում է պարսկական շատ հին զրույց— դարեր ու դարեր առաջ, Իրանի երկրին եկավ ու տիրեց մի աշխարհակալ։ Բռնակալ էր նա՝ անգութ, չտեսնված, որ, լավ հայտնի չէ, անապատի՞ էր ծնունդ, թե՞ Ասորիքի բորբոսնած ճահճի։

Եկավ ու տիրեց։ Գահընկեց արավ Ջումշուդ արքային, ճնշեց բմբոստների, արյան մեջ խեղդեց ձայնը բողոքների և գահը հաստատեց՝ օգնությամբ մի խումբ պնակալեզների։

Իրանն այնուհետև՝ դարձավ սոսկումների հսկա մի դժոխք։ Ծայրից ծայր՝ արյուն ու դիակ, ծովից ծով՝ ողբ ու աղաղակ։

Բռնակալն այլևս տեր երկրին, նրա ժողովրդին բացարձակ իշխան հռչակվեց կյանքի և մահվան։ Սահման չկար այլևս ո՛չ քմահաճույքի, ո՛չ էլ նախճիրային գարշ բնազդների։ Իրանն անտեր արտի պես տնկվեց ու կոխվեց, ավերակների կույտի փոխարկվեց։

Բայց ահա հետո ինչեր կատարվեց։

2

Չէր անցել դեռևս տիրապետության առաջին տարին, որ բռնակալը հանկարծ հղիացավ, երկունքով բռնվեց և ուսագլխերից երկու վիշապ ծնեց։ Զզվելի օձեր էին դրանք, որոնք մեծանում էին բոպե առ բոպե՝ բու-

ած բռնակալի թևերի վրա։ Մեծանում էին, հրեշների կերպարանք ստանում, ֆշշում էին, սուլում, ահ-սարսափ սփռում։

Բռնակալն այնուհետև դարձավ անձեռնմխելի։ Ուսագլխերին կանգուն երկու թիկնապահները հսկում էին միշտ նրա մեծ անձը։

Այլևս ո՛չ ոքից նա վախ չունեցավ. ո՛չ էլ կասկածեց, որ երբևիցե կարող են նրան տապալել և կամ հրամանը ոտնակոխ անել։

Եվ այդպես էլ էր։ Եթե կային դեռ ըմբոստ ոգիներ, վիշապների ծնունդը համբացրեց նրանց։ Եթե կար դեռ հույս՝ անարգ լուծը թոթափելու, թիկնապահների ահը ջնջեց նրան էլ։ Թշվառ ժողովուրդը կծկվեց, գալարվեց, սկսեց վարժվել ու հնազանդվել...

Բռնակալի անունը— զրույցը չէ ասում ինչո՞ւ— Զոհակ կնքեցին. Աժդահա Զոհակ։

3

Ժամ առ ժամ, բոպե առ բոպե վիշապները մեծացան, ժայռանման գլխի տեր դարձան, բերան՝ անդնդաշափ, ժանիքները՝ սուր, երկար ու կորիչ. մարմինը՝ գալարուն, ճկուն և, որը սոսկալին է, խոշոր, շա՜տ խոշոր, անհագ ստամոքս։

Եվ ահա պետք եղավ նրանց կերակրել, որովհետև սպառնում էին բռնակալին հոշոտել, ողջ արքունիքն ու դրանիկներին պատռել-կլանել։

Փորձեցին ամեն կերակուր՝ թե բուսեղեն, թե կենդանական։ Վիշապները բոլորը մերժեցին և միմիայն ուղեղ, ուղե՛ղ պահանջեցին։

Ուղեղներ՝ մարդկային թարմ, դեռևս բաբախուն ուղեղներ էր պետք նրանց։ Առանց այդ սննդի ապրել չէին կարող։ Ուրիշ ոչինչ չէին ուտում, միմիայն ուղեղներ։

Եվ եթե մի օր նրանք ուղեղ չուտեին, պիտի դառնային՝ իրար հոշոտեին, բռնակալության գահը կործանեին։

Դրա համար էր ահա, որ Զոհակն ու դրանիկները ամեն օր ուղեղ գտնելու հոգսի մեջ էին։

Դժվար ոչինչ չկար։ Երկիրը բազմամարդ էր, երիտասարդներով, թարմ ուղեղներով առատ։ Բռնել էին տալիս տասնով, հարյուրով, վիշապների առաջ գլուխները ջարդում, ուղեղները հանում և անհագ ստամոքսները լցնում— կշտացնում։

Այդպես էին իշխում ահա երկրին՝ Զոհակ բռնակալը և գահը ամրապնդող երկու թիկունքները՝ ահեղ օձերը։

Ժողովուրդը վիշապներին էլ անուններ տվավ։ Աջ թևի վրա բուսածին Բյուր կոչեց, ձախին Բուր։ Թե ի՞նչ լեզվով է այդ— զե՞նտ կամ փեհլևի— չգնա ու գիտցիր...

Եղավ՝ ինչ որ լինում է անխուսափելի։ Շուտով հրեշների շուրջը կազմվեց մի ամբողջ բանակ դրանիկների. ստվար արքունիք, մատակարարներ, գլուխ ջարդողներ, դժգոհ անձերի լացն արգելակողներ, բողոքողների լեզուն կտրողներ, թարմ ուղեղների վարպետ որսողներ։

Ապա, երկրի խորքերում հայտնվեցին կամ ուղարկվեցին ճարպիկ գործակալներ, որոնք օր ու գիշեր մտածում էին ուղեղ հասցնել ամենակարող Բյուրին, հաստափոր Բուրին։ Մտածում էին նրանց կերցնել-կշտացնել, քծնել- շողոքորթել, երկիրը տանջել և հրեշների շնորհիվ՝ իրենց ստամոքսն էլ լցնել-հափրացնել։

Այդպես է լինում միշտ։ Որտեղ ճահիճ կա, այնտեղ էլ՝ գորտեր, անթիվ զեռուններ։

Ուղեղ ուտելն այնուհետև վարակիչ դարձավ. ուղեղը՝ համով կերակուր, միակ գիրացնող։ Ուղեղ գտնելը՝ երկրի թարմ գլուխներ ջարդելը— միակ իդեալ, միակ զբաղմունք ողջ արքունիքի, պաշտոնեության, սպասավորների, արբանյակների...

Ոչ մի երիտասարդ այլևս այն լայնատարած, շքեղ Իրանում՝ ազատ չէր մնում։ Վաղ թե ուշ՝ պիտի վրա հասնեին, մեկ-մեկ բռնոտեին, գանգերից պիտի լեռներ կազմեին, իսկ ուղեղներից համովը՝ երկու վիշապին, փոքր պատառները՝ իրենց վիշապացած ստամոքսներին կերակուր տային... Ու դարձյալ գային, դարձյալ տանեին, անվերջ սպառեին...

Իրավ է, եղան հանդուգներ,— ասում է զրույցը,— եղան, որ փորձեցին Բյուրին կամ Բուրին անոթի թողնել, այդպիսով նրանց ուժը ջլատել։ Ջարկին գործակալներին, զարկին, սպանեցին. սրան ոչնչացրին, նրան անհետացրին, բայց ո՛չ գործակալը պակսեց, ո՛չ էլ արբանյակներ։ Սպանվածների տեղ նորերը ուղարկեցին՝ ավելի անգութ, շատ ավելի անհագ։

Հետո,— ասում է դարձյալ այդ նույն լեգենդը,— մեծ-մեծ ջանքերով, դավադրությունով՝ Բյուրին հարվածներ հասցրին, Բուրին գանակոծեցին։ Բայց Բյուրը կատաղեց, կերած ուղեղների թիվը շատացրեց։ Իսկ Բուրի՝ ծեծից ախորժակը գրգռվեց, և նա շատ ավելի թարմ ուղեղներ փնտրեց...

5

Այդպես, երկա՜ր տանջվեց անբախտ Իրանը, անունդ գտնելով երկու օձերին, քմահաճույքի զոհ՝ հրեշ Զոհակին։

Աղի անապատից մինչև եզերքները Սպիտակ ծովի (պարսիկ անունն

էր դա Կասպից ծովի) տուն չկար, որ ազատ լիներ բռնակալների արնոտ ձեռքերից կամ վիշապների անարգ գործակալներից։

Իրանցու որդին ծնվելու օրից գիտություն օղ ուներ վզին։ Գիտեին արդեն, որ վաղը-մյուս օրը՝ նրա ուղեղը կեր պիտի դառնար Բյուրին կամ մեծավոր Բուրին։

Բայց ահա մի օր— հայտնի չէ, թե ե՞րբ, ինչպե՞ս— Ծայրագույն տանջանքը թեև խուլ, գաղտուկ, բայց հղիացած՝ Բողոքը ծնեցրեց։

Ոչխարը՝ առյուծ էր դառնում, ճիրաններ հանում, մռնչում ու երկիրը ցնցում։ Բռնակալության ծնած երկու վիշապների դեմ՝ տանջանքի ծընած Բողոքն էր գլուխ բարձրացնում։

Երկու ոսոխներ, որոնք անշուշտ շուտով միմյանց պիտի բախվեին։

Իրավ է, երկրի մի մասը լուռ, եղածն իբր ճակատագիր էր կարծել ու համակերպվել. մի մասն էլ, կինն ու որդին առած, փախել, թաքնվել, բայց լեռ ու անտառի մեջ կայծեր ցոլացին, միմյանց մոտենալու ձգտում ցույց տվին։

Եվ խուլ ու աճեցուն, վարակիչ թափով, կայծերն այն ցոլում՝ ծայրից ծայր անցան, երկիրը գրավեցին։

Այստեղ՝ մի աղաղակ, այնտեղ՝ դառն գանգատ, բուռն դժգոհություն, ազատ լինելու վախկոտ գիտակցություն... և այդ բոլորը միմյանց ուժ տալով՝ սլանում էին այս-այն ուղղությամբ, զոհերի առաջ նոր հորիզոն գծում, տանջվող սրտերի մեջ հույզեր առաջ բերում, հույսեր զարթնեցնում։

Բայց ի՞նչ կարող են անել հատ ու կտոր կայծերը անկարգ, խառն ներված և այն էլ՝ տարիներով արմատ բռնած, հաստ ու սուր փշերի դաշտին։

Խանձել սրա-նրա ծայրը, նույնիսկ հատ-հատ փուշ խլել ու վառել, դա փրկություն չէ։ Պետք է բոլոր կայծերը ի մի հավաքել, շանթող, մեկեն հարվածող մեծ խուրձեր կազմել, բուռն ու կատաղի, վսեմ թափերով՝ փշի մեծ դաշտը կրակի առնել, խանձել-տոչորել ու մոխիր դարձնել։ Պետք է մեծ չարիքը արմատով պոկել, անհետ ոչնչացնել։

Բորբոսնած ճահիճը այդպես են չորցնում, գարշ զեռուններից ընդմշուշտ ջուրը մաքրում։

Տատասկոտ արտը այդպես են այրում, բուսած փուշերը արմատների հետ՝ խլում-դեն ձգում։

Ստրկացած ժողովրդի շնորհիվ հղփացած բռնակալության այդպես են ջնջում, այդպես հարված հասցնում։

Մինչ այդպես Իրանն ամբողջ տանջվում էր, հուզվում, մինչ մի կողմից արյունն էր հոսում, մյուս կողմից Բողոքը մեծանում, հեռու, ծովեզրյա անտառի խորքում, Զոհակի և երկու օձերի լուրը նոր էր դեռ հասնում։

Այնտեղ, այդ թավուտ, ծանր անտառի մեջ կար աշխատավորների փոքր մի ժողովուրդ։

Պղնձագործների, երկաթագործների, ածխագործների և դարբինների մի խումբ էր այդ, որոնց մեջ էր ապրում վաղուց ի վեր հռչակ ստացած դարբին Ֆրեյդունը։

Վարպետ Ֆրեյդունին Իրանի երկրի աշխատավորները լավ էին ճանաչում։ Թեև ծեր, վաղուցվա դարբին, բայց դեռևս առույգ էր նա, ուժեղ, ջլապինդ։

Նրա կռանի տակ սալն էր դղրդում, զորեղ հարվածներից անտառը թունդ ելնում։ Ե՛վ ճարպիկ վարպետ, և՛ ծեր-փորձառու, և՛ հսկա՜, ուժե՜ղ։

Վարպետ Ֆրեյդո՛ւնն էր աշխատավորների սիրած խորհրդատուն, նրանց առաջնորդը որևէ գործում։ Վարպետ Ֆրեյդունը պատգա՛մն էր նրանց, սիրված՝ իբրև հայր։

Իր դարբնոցի մեջ միշտ թևերը սոթտած, յոթ որդիներին շուրջը բոլորած, կռում-կոփում էր զվարթ երգը բերնին։ Երկրագործների՝ բահ էր մատակարարում, փայտահատների՝ հատու կացիններ և որսորդների՝ ծանրը տապարներ, շամփրող սուր տեգեր։

Եվ երջանիկ էր նա իր հնոցի առաջ, կռանը ձեռքին, կտրիճ զավակների հետ։ Կտրիճներ, որոնք հոր պես՝ մի-մի հսկաներ, ջլապինդ բազուկներով պողպատն էին գալարում, երկաթը ծռում, աշխատավորների համար արոր, խոփ կռում ու կյանքին ժպտում։

Զոհակի ճանկը դեռ անտառ չէր մտել, աշխատավորների հանգիստը վրդովել։ Բյուրն ու Բուրը կարծես նրանց մասին ոչինչ չէին լսել։ Գոնե նրանց արբանյակներն ու գործակալները մինչ այդ՝ չէին երևացել՝ ուղեղներ տարել։

Վարպետ Ֆրեյդունը լսել էր օձերի մասին։ Գիտեր նա նույնպես, որ Իրանը բռնակալի ձեռքին էր, և որ նրա ուսագլխերին բուսած երկու վիշապները երկրի մեջ եղած թարմ ուղեղների որսի էին ելել։

Լսել էր, գիտեր, բայց չէր հավատում, հեքիաթ էր կարծում, տգեղ ու վախկոտ դաշտեցիների շինած մի զրույց, անմիտ ու անհամ։

Չէր կարծում երբեք, մտքովն իսկ չէր կարող անցնել, որ երբևիցե ինքը՝ վարպետը և կամ իրեն շրջապատող կտրիճ աշխատավորները մի

օր չէ՝ մի օր կարող էին լինել երկու օձերի և մի հրեշի ստրուկ-հպատակ։

Չէր իսկ մտածում, որ այսօր-վաղը հերթը իրենց էլ պիտի գար, սիրած զավակներին երկու վիշապների կեր պիտի տար, անտառը պիտի ողջ ամայանար, դարբնոցում կռանի ձայնը դադարեր, աշխատավորների զվարթ երգը լռեր և շուրջը ամբողջ՝ ավեր, հրդեհ, աղեխարշ հառաչ սրփրովեր, ստրկությունը գար-տիրապետեր։

Չէր իսկ մտածում, բայց Բյուր ու Բուրի գործակալների աչքից ոչինչ չէր վրիպում։ Հերթը անտառին էլ հասավ։

Ամառվա մի օր ուղեղ որոնողների զինված մի մեծ խումբ անտառը մտավ և ամենից առաջ հենց Ֆրեյդունի դարբնոցի դիմաց կանգ առավ։

7

Ապշեց ծերունին, կռանը ցած նետեց, երբ Բյուրի և Բուրի պահանջը ասվեց, ահեղ Զոհակի հրամանը լսեց։

Հրամանը խիստ էր. խիստ էր և կտրուկ։ Աշխատավորներն ևս խիստ քսան մարդկային թարմ ուղեղ ունեցող գլուխ պիտի հանձնեին և ամենից առաջ իր՝ Ֆրեյդունի, անդրանիկ որդու գլուխը պիտի լիներ։

Կռանը ցած թողեց, գործակալների երեսին նայեց։

Ի՞նչ, ուրեմն ճի՞շտ էր։ Օձերն այն հրեշավոր՝ գոյությո՞ւն ունեին. երկիրն ուրեմն ամբողջ՝ Զոհակ բռնակալի ճիրանի մե՞ջն էր և իր ու մյուսների որդիները պիտի տանեի՞ն, վիշապների առա՞ջ նետեին, գանգե՞ր փշրեին, ուղեղներով նրանց ստամո՞քսը պարարտացնեին։

Գործակալները սակայն երկար չսպասեցին։ Ֆրեյդունի ավագ որդուն գետին տապալեցին ու շղթա զարկին։ Ապա դեսուդեն ընկան, ամենակտրիճ երիտասարդներից քսանը ընտրեցին, կապկպեցին. հետո, սուգ ու շիվանը հետքերի վրա՝ առին-գնացին...

Առին-գնացին, բայց անտառի մեջ թե ի՞նչ թողեցին— դժվար չէ անշուշտ երևակայել։ Լաց, ողբ, աղաղակ, հուսահատություն՝հաջորդեց միմյանց։ Այլևս չլսվեց մի զվարթ երգ. այլևս ո՛չ մի կռանի հարվածին անտառը արձագանք չտվեց, կյանքը կանգ առավ։ Մարդիկ միմյանց կորուստները նախ լացին, հետո Ֆրեյդունի շուրջը հավաքվեցին, խորհուրդներ հարցրին։

Բայց դարբինը վշտաբեկ, գլուխը խոնարհ, ապուշ հայացքով, բազուկները թույլ, ծնկները կթոտած՝ լուռ նստել էր իր հնոցի առաջ, մեծ սալի վրա։ Վեց որդիները ուժ չունեին ո՛չ արտասվելու, ո՛չ էլ կոծելու։

Փուքսը թոշնել էր. հնոցի մեջ կրակը հանգում, շեկ երկաթները սառում-սևանում, այլևս ո՛չ մի կայծ այնտեղ չէր ցոլում, և մոխիրը սառնորակ ելնում էր, ելնում, կրակը ծածկում...

Մինչ այդպես էր ահա անտառի մեջ, այնտեղ՝ Զոհակի պալատում տեղի էր ունենում հրճվալից խնջույք։ Անտառի խորքից բերած երիտասարդներին միմյանց հետևից գետին էին փռում, գանգերը ջարդում և ուղեղները Բյուր ու Բուրին կերակուր տալիս։

Թարմ ուղեղներ էին, բաբախուն, արնոտ։ Երկու հրեշները սաստիկ գոհ էին։ Վաղուց էր, որ նրանք այդպես անուշ ուղեղ ո՛չ տեսել էին և ո՛չ էլ կերել։ Գործակալները վարձատրվում էին, արբանյակները՝ շքանշաններով կուրծքը զարդարում։

Բյուրը նոր ուղեղների համը այնքան հավանեց, որ հայտարարեց, թե այնուհետև իրեն պետք է միայն այդպես կերակուր։

Բուրը Ֆրեյդունի որդու ուղեղը այնքան սննդարար գտավ, որ կտրուկ հայտարարեց, թե ապրել կարող է միմիայն այդպիսի— աշխատավորներից հանած՝ անուշ պատառներով։

Եվ մյուս օրն իսկ, ուղեղ որոնողների խումբը դարձյալ անտառ մրտավ և Ֆրեյդունի դարբնոցի առաջ կանգ առավ։

Երկար չխոսեցին։ Թշվառ ծերունու երկրորդ որդուն ևս գետին տապալեցին ու շղթա զարկին։ Ապա դեսուդեն ընկան, քսան երիտասարդներ ընտրեցին, առան և սուգն ու շիվանը հետքերի վրա՝ շուտով հեռացան...

Առին-գնացին, բայց անտառի մեջ թե ի՞նչ թողեցին— դժվար չէ անշուշտ երևակայել։ Ճիչ ու աղաղակ, փախուստի միտք, ամայի տներ, ավեր գործարաններ...

Ծեր Ֆրեյդունը բեկված սրտով՝ դառնապես լացավ, բայց երբ որդեկորույս աշխատավորները նրան շուրջն առին ու խորհուրդ հարցրին, նա այսպես խոսեց.

— Իմ խե՜ղճ եղբայրներ, մենք մտածում էինք, որ մեր ծնածը մերն էր, վաստակածը՝ մերը։ Բայց ահա անարգ բռնակալությունը և նրա թիկունք երկու վիշապները խլեցին մեզնից մեր որդիները ու տեղը թողին ավեր, կոծ, վշտացած սրտեր, անզավակ մայրեր... Արդյոք այդքան զոհեր նրանց գոհացրի՞ն, թե՞ վաղն էլ գուցե դեռ գան, իմ երրորդ որդուն— ապա չորրորդին, ձեր որդիներից մինչև ետին՝ տանեն այնտեղ գլուխները ջարդեն, ուղեղներով իրենք գերանան, մեզ՝ զավակներից մշտապե՛ս զրկեն...

Ոչ ոք չգիտեր այդ։ Ամենքը պահ մի հուսացին իրավ, որ գուցե հրեշներին այդքանը հերիք լիներ, որ գուցե այլևս ազատ մնային, զոհեր չտային։

Այնպես չէ՞, որքա՜ն միամիտ էին։ Երևի Բյուրի, մանավանդ Բուրի ստամոքսների մասին թեթև գաղափար անգամ չունեին...

8

Երրորդ որդուն ծեր Ֆրեյդունը երրորդ օրն իսկ ստիպվեց հանձնել։

Անխնա կերպով նրան նույնպես գետին տապալեցին, առան-գնացին։

Դարբինը փորձեց բողոքել, կանչեց աղաղակեց— բայց իբր պատասխան՝ հափշտակողների ծիծաղը միայն շարժեց։

Ծիծաղ, հայհոյանք, մտրակի հարված... և վիշապների գործակալները, հետքերի վրա ճիչ ու աղաղակ, երիտասարդներին առան ու տարան։

Հետևյալ օրը հերթը հասավ նաև չորրորդին։ Ֆրեյդունը հուսահատորեն լացավ, փորձեց աղաչել, նրանց գութը շարժել... բայց գործակալները նրան ծեծեցին, ուշաթափ արած՝ վայր գլորեցին և հետզհետե, այնուհետև, ամեն օր գալով, տարան հինգերորդ, վեցերորդ որդուն։

Ֆրեյդունը գիտցավ, որ այլևս գութ չկար, ոչ էլ Բյուր և Բուրի ստամոքսներին՝ չափ։ Անտառի մեջ թարմ ուժերը սպառվում էին. կամ զոհ էին գնում, կամ փախնում-թաքնվում։ Արհեստանոցները փլատակ դարձան, մուրճերը կանգ առան, երգերը լռեցին, հնոցների կրակները՝ հանգան-մարեցին...

Այդ սոսկումների մեջն էր ահա, որ Ծայրագույն Տանջանքը նորից հղիացավ և ծնեց այն ահեղ որդին, որին վիճակված էր մեծ հարվածը տալ, բռնակալության գահը տապալել։

Երկրում ցոլացող կայծերը իրար գտան մեկեն, ի մի ձուլվեցին, խուրձեր կազմեցին ու սպառնագին անտառը դղրդացրին...

Այդ սոսկումների մեջն էր ահա, որ ծեր Ֆրեյդունի աչքերը ցամաքեցին, բոցեր արձակեցին։ Դարբնոցում նորից հնոցը վառվեց, վաղեմի վարպետը կաշվե գոգնոցը կապեց, կռանը ձեռքն առավ և սպառնագին՝ նոր երգ հնչեցրեց։

Ու խոր գիշերվա մեջ թունդ ելավ անտառը նրա գոռ կոչից.

— Ելե՜ք, դուք, բոլոր աշխատավորներ,— կանչեց նա ուժգին,— ճնշված— տանջվողներ, ելե՜ք, հասել է ժամը, կամ ամենքս մեռնենք և կամ բռնակալության գահը տապալենք...

Ասաց ծեր բանվորը, բուռն շարժումով կորզեց իր գոգնոցը, փայտի ծայրը գցեց, դրոշակ շինեց, կռանը ձեռքն առավ ու առաջ ընկավ։

Ծայրից ծայր, ծովից ծով հնչեց իսկույն պատերազմական մեծ աղաղակը, կայծերը ժողովվեցին, աշխատավորները ելան թաքստոցներից, կաշվե գոգնոցի մոտ գումարվեցին, խրոխտ— սպառնագին մեծ խումբ կազմեցին, առաջին թափով իսկ՝ եկող գործակալներից մինչև ետինը կոտորեցին ու առաջ անցան։

Ու ստվարացավ ստրկության խայտառակ օղը փշրող աշխատավորների կովող բանակը ու մեծացավ հազար հազարներով...

Մի հեղեղ էր դա. հեղեղ սասնական, որ ամեն կողմից փլած ի մի հավաքվեց, թումբեր տապալեց, իր անցքի վրա՝ ամեն շղթա փշրեց-ոչընչացրեց, քայլեց ու գնաց հսկա քայլերով, բախեց բռնակալության արյունոտ կուրծքը, փոթորկի նման մռնչաց, ձյան հյուսի պես գլորվելով խոշորացավ, ոստնեց...

Կաշվե գոգնոցը եղավ այնուհետև երկրում, ծայրից ծայր ծածանվող դրոշը։ Նրա տակը հավաքվեցին բոլոր աշխատավորները, ճնշվողտանջվողները...

Ու հարձակվեցին այն գերագույն և անդիմադրելի ահավոր ուժով, որ ունենում է ազատության շնչով տոգորված ամեն ժողովուրդ։ Ուժ, որին ոչինչ, ոչ մի բան արգելք չէ այլևս, որին ո՛չ մի զսպում, ո՛չ մի պատվար խոչընդոտ չէ այլևս։

Ընկավ Զոհակը. բռնակալության խայտառակ գահը երերաց, իսպառ ոչնչացավ։ Ընկան Բյուրն ու Բուրը, և այնուհետև, ծագող լույսի մեջ, Իրանը նորից կյանք առավ, գլուխ բարձրացրեց, նորից ազատության երգը հնչեցրեց։

Երգ, որ դարեր ու դարեր ապրում է, երգվում, կապրի ու կերգվի։

9

Սակայն զրույցն այստեղ դեռ չի վերջանում։ Ֆրեյդունը,— ասում է լեգենդը,— կաշվե գոգնոցը դրոշակ դարձրած, մի մեծ բանակի գլուխ անցած՝ մաքրեց երկիրը ավազակներից, հարստահարողներից, հալածեց Զոհակին և երկու օձին, քշեց ու տարավ, Դեմավենդ լեռը հանեց։

Այնտեղ նա բռնեց հրեշներին, շղթայի առավ և փակեց նրանց մի խոր քարայրի մեջ։

Զոհակն ու վիշապները,— ասում է զրույցը,— շատ կատաղեցին, լեռը դղրդացրին, կամեցան ելնել, նորից՝ նոր Իրանը մրկել ու վառել, բայց քարայրի բերանում տնկած կաշվե գոգնոցը և այնտեղ ցցված դարբին Ֆրեյդունի տեսքը՝ նրանց այնքա՜ն զսպեց, մինչև որ այլևս նրանց մի օր բռնեցին և եռուն ծծմբային հորի մեջ ձգելով՝ իսպառ անհետացրին...

Կաշվե գոգնոցի շուրջը ակներ շարեցին և նվիրական՝ որպես մի գրոշ, թանգարան դրին, հաջորդ սերունդներին ավանդ կտակեցին...

1906

ԾՈՎ

(Պատկերներ)

1

Միալար ու անդուլ շշուկով լի համերգը դեպի ափերը օրորելով, վեռվետ ալիքների կայտառ ոստումները միմյանց վրա հանած, անհոգ ծալքերի և շերտավորումների պչրանքներ քմահաճորեն վերջալույսի տակ գունավորելով— փռվում է ծովը անծայրածիր ու ծիծաղախիտ, ծովը ծավալուն ու վաստակաբեկ, խոնջացած ծերունի հսկայի նման պատկառելի։

Լուռ և խաղաղ է նա, շնչառումը կանոնավոր— քնացողի պես, շարժումները դանդաղ— հոգնածի նման։ Ո՛չ կոհակներն են ծառանում սպիտակ փրփուրներով, ո՛չ ակոսացող ծալքեր են գլորվում և միմյանց վրա նետում ճերմակ բաշերի աճեցուն շարքեր, ո՛չ էլ անհամար ալիքներն իջնում-ելնում սողոսկուն՝ ջրերի խորքերն իջեցնելու համար հուզմունք ու վրդովումներ։

Հանգիստ է ծովը, լուրջ և խոհուն։ Եթե երբեմն մեղմիկ շշուկով, պարբերաբար ափերն են լիզում նրա ջրերը և ճապաղ տարածումով ավազը լվանում— հսկայի կենսունակության անվերջ խանդն է այն, որ ապրում է միշտ մեն մի կաթիլի մեջ։

Ու սպասողական խոհեր կազմած իր լայն դեմքի վրա, ինքնամփոփումի և լուռ մտածումների խորշումները ճակատին, աչքերը հառած, անդորր է ծովը։ Անդորր՝ բնության այն լռիկ վայրկենի պես, երբ տերևի և ցողունի արձանացումը սոսկում է ազդում, երբ օդի մեջ սավառնում է մրրկի զարհուրելի ուրվականը անշշուկ ստվերի նման, և երբ մթնոլորտի խեղդիչ անշարժությունը գալիք փոթորիկի պայթումն է զգացնել տալիս։

Անշարժ պառկած է և ակնարկը ժայռերին է։ Հոգնել է հսկան, շունչ է առնում իր լայն կուրծքի ելևէջներով և մեծ թոքերի խուլ շշնկոցով...

Այդպես է հանգչում ծովը և այդպես նա սպասում է ներքին ուժերի վերստին կուտակմանը, որպեսզի նորից ելնե ապառաժների դեմ, փոթորիկ հարուցանե պատվարների հանդեպ։

Այդպես է նույնպես պահ մի լիովին կարծես մնջում, սակայն իրապես՝ ուժերն է կազդուրում և դիզացնում այն ժողովուրդը, որ շղթաների նշման և բռնակալության գարշանքների գիտակցություն ունի, այլև զարթնումի անզուսպ տենչանքը...

2

Եվ ահա հեռուն, հորիզոնի վրա երևան են գալիս մանրիկ, շնչին կոհակները վետ-վետ։ Ջրերը, տարածության հեռավոր ծայրերից սկսած, նոր հովերի դրդումից հուզված, կաթիլներին են ներշչում զարթումի ազդանշանը։ Երերվում են, ցնցվում, անհամար թմբիկների փոխված՝ իրար ընկերանում, խուճապալից վազքով միմյանց ետևը շարվում, յուրաքանչյուր կաթիլի շարժումն են ժողովում, ամեն մի շարժման շշուկն ու շփումը ի մի ձուլում և առաջ նետվում...

Ու զանազան կողմերից գալիս են ահա արագ հավաքված, ահեղ շառաչյունի որոտ գոյացրած, հսկա մեծության հասած սպառնալից, մթին զանգվածներ, գալիս են անդիմադրելի, հաստատ ընթացքով, փրփրագեղ ու կատաղի...

Զարթնել է հսկան, կնճռել է դեմքը, խոր ակոսներով ճակատն է խորշոմել և զայրագին շարժումներով կռիվը վերսկսել։ Մշտական, համառ մի կռիվ, որ անպատվար աճեցումի փափագն է խանդալից, անկաշկանդ ազատության ձգտումը անսպառելի։

3

Գալի՜ս են... գալի՜ս են ծալքերը միմյանց մղող աճապարումով։ Ծովի խրոխտ և մարտակոչ դեմքի կնճիռներն են դրանք։

Վազում են ջրերը՝ իրար զորեղացնող շառաչյուններով. շուրջը համակ՝ պատերազմական աճեցուն որոտ է հնչում. որոտ, որ նետվում է դեպի ժայռերը, թնդացնում է ապառաժները։

Ու դողում է շրջապատում ամեն ինչ. ափերը կարծես կծկվում են, որպես չափազանց շնչին, չափազանց արհամարհելի շրջափակեր։ Ծովային բույսերն էլ ոգևորությամբ, հովին տված իրենց դիմակները, հեռուն կարմիր, մոտիկից կանաչ— հանկարծակի պարզվող դրոշների պես ծփում են եռանդագին, ողջունում հսկայի զարթնումը, վերսկսած պատերազմը։

Ծովը ոտքի է ելել։ Մարտնչողի անհողդողդ համառությամբ գնում են նրա շղթայազերծ ջրերը, մռնչում են ահեղագոչ, մեն մի կաթիլն այնտեղ շարժման մեջ է, շերտավոր փրփրումներով երախներ են բացվել ամեն կողմից, և նրանց ետադարձ շարժումը՝ թափը ուժգնացնելու համար բնական քայլն է, խոյացումը մեծացնելու զորեղ շեշտը...

Երբ շարժվում է ծովը, երբ զարթնում է նա և զայրանում— ոչինչ չկա, որ նրա ընթացքին ընդդիմանալ հանդգնի։ Համակ ըմբոստացումն

է նա. ամենազոր, ամեն բան տապալող, աղաղակովը վսեմ և ուժովը անկուն ըմբոստացում։

Եթե պահ մի ետ է քաշվում նա ափերից, խոր դեպի ներս է գնում խոնարհ ու գետնաքարշ, կծկված և անաղմուկ— այդ պահը նրա ուժերն ամփոփելու և հանգստության ժամն է։

Ու քանի դեպի խոր ու ներս են քաշվում ջրերը անմռունչ, այնքան մեծ ուժգնությամբ, այնքան բարձր դիզացած ու կատաղի՝ գալու են նրանք քանդիչ ու ավերիչ զորությամբ, շղթաներ փոշիացնող հարվածները ջախջախիչ դարձած։

Այդպես է ծովը։ Տեղատվություն մեծություն՝ մակընթացություն վիթխարիություն է առաջացնում։

Այդպես է նաև պահ մի տեղի տվող, հաղթահարված և ուժասպառ այն ժողովուրդը, որ խոյացման ուժգնության համար պետք ունի կազդուրվելու, պետք՝ հանգչելու, ուժերը ժողովելու...

* * *

Ծովը հմայիչ, ծովը ծփուն և գեղածիծաղ, լուսնի շողքերի տակ դողահար ննջող մանուկի գեղեցկության, կույսի երեսին ժպտող, ծովը շողշողուն՝ պատկերն է կենսուրախ, եռանդուն և հրապուրիչ այն ժողովուրդի, որ ազատ է իր ձգտումների մեջ, ազատ՝ իր մտածությունների և ազատ՝ իր թռիչքների մեջ։

Ծովը՝ մի մեծ լաթի պես դողահար ու անկենդան, ցրտի մեջ սրթսրթացողի ողորմելիությամբ և քնածի ապշությամբ— պատկերն է ստրկության, տգիտության և արատների մեջ սնված ու ծվեններով փոխված հասարակության, որ ճահիճների մեջ է որոնում իր կյանքը և շղթաների մեջ ծյուրվելն է իր հեռանկարը. ժողովուրդ անգետ, անճաշակ, բիրտ և ստրկահոգի։

Բայց ծովը կնճռոտ, հարձակման համար ետ գալարվող, ծովը՝ այնուհետև կատաղի և փրփրալից երախներից մռնչյուն արձակող, ծովը՝ զարհուրելի զանգվածով ժայռերի վրա նետվող— պատկերն է այն ազնիվ ժողովրդի, որ գիտակցության բոպեների շնչով ծառանում է և իր իրավունքները, արդարությունն ու ազատությունը կորզում, հափշտակում...

Նստիր ծովի մոտ և ուսիր նրանից այն ամենը, ինչ նրա ջրերն են պատմում, ինչ ալիքներն են մռնչում։

Ծով և ժողովուրդ— երկուսն էլ միևնույն շարժումներն ունեն, միևնույն թափը... և միևնույն ապշությունը։

1909

ԽԵԼՈՔ ԱՔԱՂԱՂՆԵՐ

Ա

Գգիտեմ ինչպես— և չծիծաղեք, դա մի մեծ հարց է— կոպիտ, հասատափոր, կլանող աղան ձեռք բերեց բազմաթիվ հավեր ու աքաղաղներ, մեծ բակի մեջ ցանկապատ քաշեց, հավային խոշոր մի գաղութ հիմնեց և բազմացնելով շահագործում էր նրանց։

Մարդիկ լավ գիտեն, թե հավն ու աքաղաղը ինչի են գործածում։ Պահում են, բազմացնում, կերակրում, գիրացնում ու մի գեղեցիկ օր մորթելով՝ եփում են, ուտում։

Սրանից սովորական բա՞ն։

Բայց մտեք մի քիչ էլ հավի դրության մեջ։ Երևակայեցեք, որ ձեր ընկերների հետ միասին հավաքել-լցրել են ձեզ մի մեծ շրջափակում, ցանցաձև պատերով պարփակել, երբեմն միայն թույլ են տալիս վազվզելու, խաղալու— այն էլ միայն գիրացնելու մտքով— և հետո, հանկարծ, ձեր աչքի առջև գալիս բռնում են ձեզնից մեկին,— ձեր մորը կամ քրոջը, սիրելուն կամ ընկերներին, քիչ հեռու, հենց ձեր քթի տակ՝ գետնովն տալիս, ոտները հավաքում, թևերը ծալում և փայլուն դանակը վզին շողացնում...

Եվ նա ճչում է, օգնություն կանչում, ձեզ է ձայն տալիս... իսկ արյունը շատրվանի պես դուրս է ցայտում նրա կտրած վզից, գետինը կարմրացնում. և գլուխը մարմնից բաժանված, շարժուն, հուսահատ արտահայտությամբ, փոշիների մեջ գլորվելով՝ գալիս ընկնում է առաջդ. մինչ նրա սիրելի մարմինը տապլտկում է իր արյան մեջ, ոստոստում, թփրտում, գալարվում է, կծկվում...

Այդ բոլորը տեսնում ես դու բակի մեջ կանգնած, վշտից քարացած, վախից դողալով, անկարող՝ նրան օգնելու, ճիչ արձակելու և գիտակից, որ մի օր էլ մյուս սիրելուդ, քրոջդ, բարեկամիդ են այդպես անելու, քեզ իսկ մորթելու...

Էլ ի՞նչ սիրտ կմնա քեզ մոտ, ի՞նչ քաղցր բոպե, ի՞նչ սեր, զգացմունք, եթե ոչ՝ միայն անեծք բնության դեմ, լուտանք ու կսկիծ, վիշտ բյուրեղացած, կիզիչ տառապանք։

Կարծում եք հավը կամ աքաղաղն այդպես չե՞ն զգում։ Իրավ է, գուցե լինեն հավեր— և շատ էլ կլինեն— որ սերնդից սերունդ տեսած լինելով այդ բոլորը՝ վարժվել են, մորթելն ու տանջանքը կյանքի մի պայմանը համարել և գուցե, երբ հերթը գա իրենց, գնան դանակի առաջ անմռունչ, խոնարհ, հպատակ ճակատագրին։

Բայց ի՞նչ... նայիր մեկ, երբ մորթողը դանակը ձեռքին, թևերը քշշած՝ մտնում է հավերի մեջ. նրանցից ո՞ր մեկը չի ճչում կամ չի խուսափում. ո՞ր մեկը հուսահատաբար չի զարնվում կոճղերի, քարերի, սուր-սուր փշերի և ո՞ր մեկն արդյոք իր աղաղակներով, աղեխարշ ձայնով օդը չի լցնում. և երբ բռնվում է, երբ դանակը վզի կեսը կտրել է— ի՞նչ կա ավելի հուզիչ, ավելի ճնշիչ, քան նրա աղաղակը, լացն ու գանգատը...

Կարծում եք մյուսները, որոնք այդքան անշարժ կանգնած են և աչքերը պայթելու չափ բացած, քարացած հայացքով կծկված նայում են— չե՞ն զգում... Մոտից նայեցեք. ինչպես են դողում սարսափահար. յուրաքանչյուր անդամն ու մասը դողում է արագ, սոսկալի կերպով, և նրանց աչքերը չեն կարողանում հեռանալ մորթվողի տանջանքից, հոսող արյունից։

Զգում են, գիտեն։ Գիտեն, որ ազատվելիք չունեն, որ իրենք ծնված են ուտելու համար։ Բայց, ինչպես մարդկանցից շատերը, նույնպես և հավերը, ճակատագրական են համարում դա. անխուսափելի, բոլորովին բնական։

Եվ ծնվում են, մեծանում, ապրում ու մորթվում. մորթվելիս՝ ճչում, աղաղակում, իսկ մինչև մորթվելը՝ ոչ ոքի մտքովը չի անցնում ազատվել մի ճար մտածել։

Եվ ինչպե՞ս անել, երբ վաղուց կորցրել են բարձր թռնելու ընդունակությունը, երբ նրանց տերն ունի միջոց ճնշելու, հուպ տալու, բանտարկել պահելու, իսկ իրենք, վաղուց-չգիտեմ ե՞րբ, որ ժամանակից— պաշտպանվելու ամեն ընդունակությունից զրկվել՝ դառել են ստրուկներ խրոնիկական մտքով, գծուծ զգացմունքով, վախկոտ սրտերով և ազատության ցանկությունը ընդմիշտ կորցնելով։

Բ

Բայց ահա մի օր հեռավոր երկրներից մի տարօրինակ աքաղաղ հայտնվեց աղայի հավային մեծ գաղութում։

Այդ այսպես եղավ։

Մի առավոտ, երբ բոլոր հավերն ու աքաղաղներն ագահաբար կլլտահարում էին բակի մեջ սփռված հատիկները, հանկարծ լսվեց թևերի ուժգին թափահարություն, և ցանկորմից ներս ընկավ մի երկարահասակ թռչուն։ Հավերը ճչալով ետ փախան ու, շրջան կազմելով, հեռվից սկսեցին դիտել նորեկին, որ մեջտեղ կանգնած, ուշադրությամբ զննում էր բոլորին։

Կարմիր, փայլուն փետուրներով, երկար վզով և երկար ոտներով երիտասարդ աքաղաղ էր։ Այնպիսի խոշոր ճանկեր ուներ, որ աքաղաղները զարմանքով էին դիտում։ Սոսկալի էր մանավանդ բութ մատի ժանիքը։

Հավերն այլևս չէին համարձակվում մոտ գնալ հատիկներին, իսկ աքաղաղները մի վայրկյան շփոթությունից հետո սկսեցին կամաց-կամաց առաջ քայլել։

Նորեկը զննում էր նրանց, և նրա դեմքի վրա գծվում էր խղճացող արտահայտություն։ Բայց այդ երկար չտևեց. հանկարծ լարվեց նա ոտների վրա, մի զորեղ կուկուրիկու արձակեց և այսպես խոսեց.

— Բարև, բարեկամներ, չեմ եկել ձեր կուտը կամ կանայքը խլելու, մի՛ զգուշացիր չեմ ձեզ հետ կռվելու։ Ինձ այստեղ բերողն այն միտքն է, որ ձեզ հետ բարեկամանամ։ Վաղուց է, որ իմ հայրենիքում, մեր մեջ, լսում ենք ձեր տառապանքի, ձեր գերության և թշվառության մասին։ Մենք եղբայրներ ենք և ինձ դժվար է տեսնել, որ դուք այդ աստիճան ստրկացած, անմռունչ զոհ եք գնում անկուշտ աղային... Ես եկել եմ ձեր մեջ՝ ձեզ հետ խոսելու. և պիտի տեսնեք, որ ինձնից ոչ մի վնաս չեք ստանալ. ու եթե լսեք ինձ, ձեզ կպատմեմ շատ հետաքրքիր բաներ մեր այն հայրենիքի մասին, ուր ո՛չ շրջանակ կա, ո՛չ աղա և ո՛չ էլ մորթող...

Այդ խոսքերը մի տեսակ ապշության մեջ ձգեցին բոլորին։ Աքաղաղները թշնամաբար էին նայում նրա վրա, բայց նորեկը ոչ նրանց կուտին ձեռք տվավ և ոչ էլ՝ կանանց։ Սկզբում ոչ ոք չէր մոտենում նրան. դա մի քանի օր տևեց. բայց չորս օրից հետո նա բարեկամացավ բոլորի հետ։ Այնքան բարի էր, որքան որ զորեղ էր։ Հավերը բոլորն սկսեցին սիրահարվել նրա վրա. իսկ աքաղաղները քծնախաղ վախով էին մոտ գալիս նրան։ Այդպես է. ստրուկ մեծացածը՝ առանց վախի, հարգանք չգիտե. եթե մեկին հարգանք է ցույց տալիս— դա վախենալուց է։ Չէ՞ որ կան մարդիկ, որոնք պաշտում են ժայռեր, որովհետև վախենում են նրանցից. կենդանիներ, որովհետև սոսկում են նրանց հարձակումներից։

Սակայն հավերը քիչ-քիչ սկսեցին զգացած վախն էլ փարատել և այժմ պտտվում էին նորեկի շուրջը։ Նորեկը նրանցից ոչ ոքի չդիպավ, և դա զարմացրեց աքաղաղներին։ Բանն այն է, որ նորեկը ոչ միայն ձեռք չէր տալիս կանանց, թողնում էր կուտն ուտելու, այլ մինչև իսկ ինքն էր հրավիրում նրանց՝ մասնակցելու իր գտած որսին և մեծ բաժինն էլ նրանց էր թողնում։

— Այդքա՞ն բարություն։

Ամբողջ գաղութն ապշության մեջ էր։ Ո՞վ էր ուրեմն այդ վեհանձն ու զորեղ նորեկը, որ ոչ բռնանում էր, ոչ օգտվում իր ուժից, այլ մինչև իսկ որսում էր նրանց համար, պաշտպանում նրանց, խորհուրդներ տա-

լիս։ Մի քանի անգամ նույնիսկ միայնակ կռիվ տվավ ուրուրի դեմ և արյունաթաթախ անելով՝ քշեց նրան։

Աղան իհարկե տեսավ նորեկին, զարմացավ, թե որտեղից էր ընկել նա իր գաղութի մեջ, բայց չհալածեց, այլ թողեց, որ մնար և իր հպատակների մեջ լավ ու զորեղ սերունդ առաջացներ։

Բայց նորեկի տարօրինակությունն այդ չէր միայն։ Երբ գիշերվա մութը պատելու պես բոլորը կծկվում էին թառի վրա, նա սկսում էր պատմել հրաշալի բաներ օտար, անծանոթ, սիրուն աշխարհներից։ Պատմում էր, թե որտեղից էր ինքը, թե ինչ երկրի, ինչ ժողովրդի զավակ էր և թե ինչպես կային հավեր և աքաղաղներ, որոնք ապրում էին առանց ցանկապատի, առանց աղայի և որոնց ոչ մորթում էին և ոչ էլ չարչարում։

— Այնտեղ, հեռու,— պատմեց նա մի երեկո էլ,— շատ և շատ հեռու, կա մի շքեղ երկիր, բարձրաբերձ լեռներ, մեծ-մեծ անտառներ, ուր ապրում են մեզ նման հավեր ու աքաղաղներ՝ անվանդակ, ազատ շրջավայրերում։ Ծնվում են նրանք, մեռնում առանց մորթվելու և ուրիշների կերակուր դառնալու։ Այդ երկիրը հափշտակիչներին անմատչելի է...

Եվ ստրուկ հավերն ու աքաղաղները լսում էին նորեկին զմայլմամբ ու չէին հավատում։

— Քաղցր է այնտեղի կյանքը,— շարունակեց նա,— առանց շրջափակի, առանց աղայի, ուտում ես՝ ինչ աշխատում ես. ծնում ես զավակներ, տալիս ես նրանց ծծելու ազատ օդ՝ թողնում ես մեծանալու և բազմանալու։ Ամեն ոք իր կյանքի տերն է. ամբողջ բնությունը քոնն է, դու՝ բնության մի մասը. ուրուրը չի համարձակվում իջնել նրանց մեջ, ձագերը խլել, կանանց վախեցնել։ Կոշտ-կոպիտ աղան այսպես չի գալիս դանակը ձեռքին, բռնում-մորթոտում յուրաքանչյուրին։

— Իսկ ինչպե՞ս գնալ այդ երկիրը,— հարցրեց մի աքաղաղ։

— Դրանից հեշտ բան չկա,— պատասխանեց նորեկը,— ահա, տեսնո՞ւմ եք այդ գետակը. ես ձեզ կառաջնորդեմ. կընկնենք դրա ջրերի մեջ։ Հոսանքը մեզ կտանի մի տեղ կհասցնի, և եթե այն երկրներին չենք հասնել, գոնե ազատ կապրենք և շրջափակից ու մորթվելուց հեռու կլինենք։

— Իսկ եթե խեղդվե՞նք։

— Ի՞նչ կա. չէ՞ որ մի օր այստեղ անպատճառ պիտի մորթեն մեզ. ավելի լավ չէ՞ փորձել ազատվելու և մեռնել ազատ։ Բայց գուցե հոսանքը մեզ տակովը չանի, գուցե մի ցամաք տեղ հասնենք. թող լինի օտար տեղ, բայց հեռու այս գերությունից...

Ասաց, լռեց և նայեց բոլորին։

Հավերը ամենքը լուռ էին։ Նրանցում զարթնում էր երազելու, լավ օրեր ցանկալու ընդունակությունը։ Իրավ, ինչ լավ կլիներ դուրս գնալ հեռու, շատ հեռու, ազատ լինել, ազա՜տ ապրել...

Ողջ գիշերը քնել չկարողացան. ջղային դրության մեջ էին. գետակին էին նայում, միմյանց հետ խորհում ու վիճում։

Բայց աղան գիշերը լսել էր նրանց կչկչոցը, անհանգստությամբ եկել էր դիտելու։

— Այս ի՞նչ է,— զարմանում էր նա,— հավերս անհանգիստ են. այդ օտար, վայրենի աքաղաղը փորձանք է բերելու գլխիս. շատ են ժողովվում նրա շուրջը... Չէ՛, վաղն ևեթ նրան պիտի հեռացնել այստեղից։

Լուսադեմի մոտ՝ օտար աքաղաղը հանկարծ վեր թռավ, կուկուրիկու ձայնեց, հավերին շուրջը ժողովեց և գոչեց.

— Գնա՛նք, ուրեմն, եղբայրներ, ժամանակն է, հետևեցեք ինձ, և ազատվենք գերությունից...

Ապա ոստնեց ցանկորմի վրա, ցած նետեց իրեն, վազեց համարձակ, գետակը մտավ, խրախուսեց հետևողներին, կանչեց և հոսանքի մեջ ընկավ։

Մի քանի հավեր և աքաղաղներ հետևեցին նրան ու ջուրը մտան։ Երկուսը, տեսնելով հոսանքի պտույտը. ահաբեկ ետ դարձան, մեկը քարացավ վախից և կանգնած մնաց ջրի եզերքին, մի ուրիշն էլ չկարողանալով սրտապինդ մնալ— խեղդվեց, իսկ օտար աքաղաղն ու տասնի չափ գերիներից՝ քաջաբար տվին իրենց հոսանքի ընթացքին և շուտով անհետացան մյուսների աչքերից...

Գ

Անցան շատ օրեր։ Աղան գուշակեց բանն ինչումն էր. բարկացավ, կատաղեց ցանկապատից դուրս եկող, բայց վարանողներին իսկույն մորթոտեց, ուշադրությամբ զննելով՝ կասկածավորներին գաղութից զատեց՝ սպանեց, մի քանիսին էլ առանձին փակեց։ Ապստամբությունն այդպիսով խեղդել մտածեց։ Մյուս կողմից էլ մնացողների կուտը ավելացրեց և եթե նրանցից մեկին մորթել էր կամենում, այլևս մյուսների առաջ չէր գործում, այլ առանձին, որ տեսնողների մեջ հուզում չառաջացներ։

Մի խոսքով, ամեն ջանք ի գործ դրեց և օտար աքաղաղի թողած ազդեցությունը ոչնչացնել աշխատեց։

Գաղութը քիչ-քիչ սկսեց հանդարտել։ Այլևս վախվխելով և անկյուններում էին խոսում հավերը օտար աքաղաղի և նրա հետ խուսափած ընկերների մասին։ Եղան շատերն էլ, որոնք հաստատում էին, թե ազատ-

վաղները անշո՞ւշտ խեղդված կամ կորսված պիտի լինեին և կամ եթե հասած լինեին որևէ տեղ՝ անօթությունից պիտի կորսվեին։

Բայց մի օր ահա թե ինչ պատահեց։ Երեկոյան դեմ էր... գաղութի մեջ բոլորը խումբ առ խումբ հավաքված՝ կուտ էին ուտում և զվարթորեն խոսակցում, երբ օդի մեջ լսվեց մի շշուկ, հետո հանկարծ երևաց մի մեծ ուրուր, համարձակ սլացավ, հափշտակեց մի գեր վառեկ, չնայելով հավերի ու աքաղաղների ճիչերին, նրանց վազվզելուն, կանգ առավ մի թառի վրա և հեգնորեն սկսեց նայել նրանց։

— Հը՞, ի՞նչ է...— ձայնեց նա սարսափած թռչուններին,— վաղուց է, որ ինձ չէիք տեսել, չէ՞ և կարծում էիք, թե այլևս ազատվել էիք իմ ձեռքից... Երևի զարմացաք, որ հանդգնեցի ցած իջնել, ձեր որդիներից մեկին հափշտակել և այժմ էլ այստեղ, ձեր մեջ կանգնած, ծիծաղում եմ ձեզ վրա։ Ողորմելիներ։ Մի՞թե կարծում եք, թե չգիտեմ՝ ինչեր են անցել այստեղ։ Չէ՞ որ այլևս չկան՝ ոչ այն օտար քաջ աղաքաղը և ոչ էլ ձեր, եթե ոչ քաջ, գոնե սրտոտ ընկերները...

Միամիտ եղեք, ես նրանց տեսա։ Եվ այդ էր պատճառը, որ իջա ձեզ մոտ և այսուհետև ամեն օր կտեսնեք ինձ։ Այսուհետև օրը մի վառեկ, իսկ երբեմն էլ, եթե շատ քաղցած լինեմ, երկու վառեկ իմն է։ Ձեր աղան ձեզ լավ է չաղացրել, որ լավ էլ ուտի։ Ես ընկերանում եմ նրան վերջինի մեջ. միասին կուտենք ձեզ... Ապա՞ թե մեկն ու մեկդ սիրտ անեք ինձ վրա հարձակվելու, հա՞, հա՞, հա՞,— քրքջաց նա չարությամբ,— չէ՞ որ բոլորդ էլ ողորմելի վախկոտներ եք։ Այ, ինչպես դողում եք. չէ՞ որ ձեր քաջերն ու այն օտար հանդուգնը այնտեղ, հեռու են այժմ, ազատ, և այլևս չեք տեսնիլ դուք նրանց։

Այո, պարոններ, տեսա ես. մի սքանչելի լեռան վրա են, ազատ օդի մեջ բույն են դրել և ապրում են. ոչ ուրուր կարող է մոտ գնալ և ոչ էլ՝ աղա. մինչդեռ դուք, որ այդքան «խելոք» գտնվեցիք, այսուհետև երկու ուտող կունենաք,— ես և աղան... Դեհ, մնաք բարև, էլի խելոք եղեք, միշտ այդպես խելոք...

Ասաց, մեկ էլ ծիծաղեց, բաց արավ թևերը և սարսափից սառած գաղութի միջից բարձրանալով՝ հեռացավ իր որսի հետ։

Նույն գիշեր ոչ քո չքնեց։ Ոչ ոք կուտ չկերավ. ամենքը խոսում էին ուրուրի պատմածների մասին։ Մի քանի աքաղաղներ ու հավեր իսկույն միացան և ողջ գիշեր դատելուց, մտածելուց ու վիճելուց հետո մյուս առավոտ տասը հոգի դուրս ոստնեցին և մյուսների աչքի առաջ ջրի մեջ ընկնելով՝ անհետացան...

Աղան սարսափեց, տեսավ, որ տասը հոգի էլ խուսափել էին։

— Անիծյալ օտար աքաղաղ,— գոչեց նա։ Եվ վճռեց մորթոտել կամ

հեռացնել գաղութից բոլոր նրանց, որոնք բռնվելիս կամ իր ներկայությամբ՝ ավելի հանդուգն էին երևում։

Բայց թե՛ այդ սարսափի միջոցը և թե՛ ուրուրի ամենօրյա այցելությունը, փոխանակ մեռցնելու վտանգավոր մտքերը, ավելի գրգռեց և քիչ օրից հետո հինգ հոգի ևս փախան։

Մնացածներն էլ գրգռված, խումբ առ խումբ հավաքվում էին ամեն կողմ, հաճախ աղայի դեմ ցույցեր էին անում, և աղան ստիպված էր ամեն անգամ մեկին կամ մյուսին զատել, ոտները կապած հեռացնել գաղութից, մորթոտել, աքսորել։

Այդ դրությունն աղային մշտատև մտատանջության պատճառ դարձավ այնուհետև։ Ի՞նչ անել. օտար աքաղաղի թողած ազդեցությունն ի՞նչպես ոչնչացնել, արմատախիլ անել։

Եվ գիտե՞ք ինչ արավ։

Մի օր նրան այցելության եկավ հավերի բնավորությունը լավ հասկացող մի ուրիշ աղա և երբ լսեց իր պաշտոնակցի գանգատը, ծիծաղեց ու ասաց.

— Երևում է, ընկեր, որ հավերին լավ չես ճանաչում։ Իմ գաղութն էլ, չգիտեմ ինչպես, ենթարկվեց վտանգավոր մտքերի ազդեցությանը, բայց ես շուտով կարողացա առաջն առնել... Հավերդ կարդալ գիտե՞ն։

— Կան գիտցողներ էլ։

— Շատ լավ. բայց շատ չկարդան. հաճախ գրքերն են ներս բերում այդպիսի մտքերը... Նախ, նրանցից, այդ քո հավերից, մի քանի ամենաազդեցիկներին և հանդուգններին շնորհիր առանձին արտոնություններ. օրինակ, պաշտոններ հիմնիր, մեկի վզից մի ժապավեն կախիր, մյուսի ոտքիցը՝ բոժոժ, երրորդի կատարը ոսկեզօծիր.. Այս այսպես։ Հետո նրանց վերակացու նշանակիր մյուսների վրա. ամենաազդեցիկին՝ ընդհանուր կառավարիչ, նրանից պակասներին՝ ոստիկաններ, ավելի պակաս ազդեցիկներին՝ տիտղոսներ շնորհիր, իսկ ամենաճարպիկներից հիմնիր մի գաղտնի, վերահսկող մասնախումբ և մի մոռանալ, այդ բոլորին էլ զանազան նշաններով պատվիր, որոշիր մյուսներից ու մանավանդ ավելի լավ կերակրիր. եթե տեսնես, որ սկսեն հափշտակել հպատակներից՝ մատների միջով նայիր, աչք խփիր...

Դու երևի ինձ հասկանում ես։

Աղան սքանչացումով սեղմեց իր ընկերոջ ձեռքը և մյուս օրն ևեթ գործադրեց նրա խորհուրդը։

Պիտի ասել, որ ճարպիկությամբ ձեռնարկեց գործի։

Նախ, բռնվածներից ամենահանդուգնի վզից կապեց մի փայլուն, դյուցազուն ժապավեն, ոտներից էլ՝ մի-մի հնչեղ բոժոժ. հետո լավ կուտ

ավավ, խոստացավ միշտ այդպես կերակրել և կառավարիչ կարգեց նրան մյուսների վրա։

Ապա սահմանեց աստիճանավորներ՝ առանձին արտոնություններով. և այդպես, լիովին հետևեց ստացած խորհրդին։

Սկզբում ամբողջ գաղութը զարմացած էր. նոր պաշտոնյաները չէին հասկանում։ Հետո իշխելու, ընկերներից հարգանք ու հնազանդություն ստանալու փափագը զարթնեց նրանց մեջ և, հուսկ ուրեմն, նրանք սկսեցին իրենց սեփականացնել բաշխվող կուտի ամենալավ մասը, պատժել՝ ում կամենալ, սաստել, խլել՝ ում փափագել. և չէր անցել մի քանի ամիս, որ գաղութը ոչ միայն լիովին հանդարտվեց, այլև ամենից ազատ ու հանդուգն մտածողները դարձան ամենից բռնավոր իշխողներ, գրողին տվին ազատ մտքերն ու իդեալները և մինչև իսկ սկսեցին ծաղրով հիշատակել օտար աքաղաղի և փախած ընկերների մասին...

Դրա վրա ավելացրեք և այն, որ մի օր, աղայի հրամանով և նոր պաշտոնյաների համաձայնությամբ, մի թուղթ կախվեց գաղութի մեջ, որի վրա գրված էր այսպես.

«Չհամարձակվե՞լ ազատության մասին մտածելու. այդպիսին մյուսներից ավելի շուտ կմորթվի...»։

— Չհամարձակվե՞լ...— ճչացին պաշտոնյա աքաղաղները,— թե չէ՝ մյուսներից ավելի շուտ կմորթվեք։

Եվ խելոք աքաղաղները, երբ կարդացին այդ, բարվոք համարեցին ավելի ուշ մորթվելը՝ ազատության փոխարեն, որպես իդեալ ընդունել, և այնուհետև էլ ոչ ոք չհամարձակվեց ազատության մասին երազել...

Ախ, դուք խելո՞ք, խելո՞ք աքաղաղներ...

ՊԱՅՏԱՐԻ ՀՈԳԻՆ

Հիսուսն էշի վրա նստած Երուսաղեմ էր իջնում։

Հանդեսը փառավոր էր, բայց էշը կաղում էր։ Պատճառն այն էր, որ խեղճ անասունը քարոտ տեղերից անցնելու ժամանակ՝ մի պայտը կորցրել էր։

Եվ ժողովուրդը պատմում է, թե Հիսուսը բավական շփոթված էր, տեսնելով, որ գրաստը գայթելով ու կաղալով էր գնում, տեղ-տեղ էլ սպառնում էր նրան ցած նետելու։

Բայց հանկարծ, որտեղից որ էր, ժողովրդի մեջից դուրս թռավ մի պայտար, կանգնեցրեց Հիսուսին, կռացավ արագությամբ, բարձրացրեց

գրաստի ոտը և մի քանի բոպեի մեջ այնպե՛ս լավ պայտեց նրան, որ Քրիստոսը ժպտաց գոհունակությամբ ու ասաց պայտարին.

— Ապա՛, պայտար, խնդրիր ինչ կամենաս, և ցանկությունդ կկատարվի։

Ասում են, որ Հիսուսին աներևութապես ընկերակցող հրեշտակներից մեկը կռացավ պայտարի ականջին և փսփսաց, որ նա երկնային արքայությունը խնդրեր։ Սակայն մարդը շատ էլ իդեալիստ չէր. բացասական կերպով գլուխը շարժեց և ասաց Քրիստոսին.

— Տեր, ես մի խեղճ պայտար եմ. մի տոպրակ, մի աթոռ ունիմ և տանս կողքին էլ՝ մի ընկուզենի։ Ցանկանում եմ, որ աթոռիս վրա նստողը՝ տոպրակիս մեջ մտնողը և ընկուզենու վրա ելնողը՝ չկարողանան պոկ գալ, դուրս գալ և իջնել, մինչև որ անունովդ չհրամայեմ ես նրանց։

Հիսուսը ժպտաց, օրհնեց նրան և ասաց.

— Թող կատարվի քո ցանկությունը։

Եվ անցավ գնաց։

* * *

Ապրեց պայտարն երկար տարիներ իր խրճիթի մեջ, ընկուզենու ստվերի տակ, հանգիստ ու առատ։ Մենակ էր թեև, ունեցածն էր մի աթոռ, մի խղճուկ տոպրակ և գործիքներ, բայց եկամուտը լավ էր, և նա շատ էր սիրում կյանքը։

Հենց այդ էր պատճառը, որ մի օր խրճիթի դռանը նստած, երեկոյան հովը վայելելիս, երբ տեսավ հեռվից դեպի իրեն եկող հոգեառ հրեշտակին. սիրտը թունդ ելավ, սկսեց դողալ և մտածում էր, թե ինչպե՞ս ազատվի այդ անկոչ հյուրից։

Բայց հրեշտակը մոտ եկավ, ողջունեց, ժպտաց ու ասաց.

— Դե՞հ, պայտա՛ր, բավական ապրեցիր. այժմ ելիր, վերջին աղոթքդ կատարիր, որովհետև հոգիդ տանելու եմ։

— Օ՜հ, իմ հրեշտա՛կ,— հառաչեց պայտարը,— մի՞թե այդպես շուտով հարկ է կյանքը թողնել. ես դեռ ապրել եմ ուզում. նայիր մե՛կ, ինչպես լավ է այս բոլորը— բնությունն ու հովը, լեռներն ու դաշտերը...

— Այո՛, խոսք չունիմ, լավ է. բայց ի՞նչ արած, պայտար, ճակատագիրդ այդ է, հարկ է հոգիդ տալ։

Չէ՛, տեսավ պայտարը. որ ո՛չ խնդիրքը և ո՛չ էլ բանաստեղծությունը օգնեց իրեն։ Պահ մի տխուր մտածեց, հետո մեկե՛ն, մտքի ծայրահեղ լարումի շնորհիվ, մտաբերեց օգտվել Հիսուսի տված շնորհներից։

— Լավ ուրեմն, հրեշտա՜կ,— ասաց նա քաղաքավարությամբ,— հրամմե՛, նստիր քիչ այս աթոռի վրա, մինչև ես աղոթքս կատարեմ։

Եվ չոքեց աղոթելու։ Հրեշտակը հոգնած էր։ Նստավ աթոռի վրա։

Նստավ-չնստավ, զգաց, որ բռնվել էր։ Ճիգ գործեց ելնելու, թևերը թափահարեց, բայց զարմացած տեսավ, որ ջանքերն իզուր էին, և որ նա լավ բռնված էր։

— Այս ի՞նչ է, պայտար, ի սեր աստծո,— գոչեց նա սարսափած,— ես մեխված եմ կարծես. ազատի՛ր ինձ...

— Էհե՛, պարո՛ն հրեշտակ, ազատե՞մ քեզ,— ծիծաղեց պայտարը,— ի՞նչ արած, որ այդպես եղավ, ճակատագիրդ այդ էր...

Հրեշտակն աղաչեց, խնդրեց, պաղատեց և վերջ ի վերջո հոգին պայտարին թողնելու գնով ազատվեց ու սոսկումով շտապեց երկինք։

Պայտարն ազատված էր այս առաջին անգամը։ Ազատ շունչ առավ և օրհնեց այն բոպեն, երբ մտածել էր Հիսուսի էշին պայտել։

* * *

Մինչև այդ, հոգեառ հրեշտակը ճանապարհին գունավորվելով, սոսկման թելադրության տակ խնդիրը մեծացնելով, պատմեց ամենքին պայտարի արածը. և երկինք հասած, գունաթափ՝ կանգնեց աստծո առաջ։

Աստված ծիծաղեց, խիստ զվարճացավ,— ասում է ժողովուրդը,— բայց իրավունք չտվավ ուժ գործադրելու։

— Եթե կարող եք,— ասաց նա,— խորամանկությամբ հոգին առեք. գործ դրեք հնարքներ, բայց երբե՛ք ուժ։

Եվ այն ժամանակ դժոխքի չար ոգիների մի խումբ, մի խորամանկ խումբ, հրաման խնդրեց պայտարին գնալ և նրա հոգին առնել, պայմանով միայն, որ այդ հոգին դժոխքը տարվեր։

— Շատ լավ,— հրամայեց աստված,— եթե կարողանաք՝ առանց ուժի նրա հոգին հանել, թող ձե՛ր բաժինը լինի։

Եվ ահա տեսավ պայտարը, որ մի խումբ սև, այլանդակ ոգիներ, միմյանց գլխի վրայից ոստնելով, միմյանց առաջը կտրելով՝ գալիս էին գեպի իր կողմը։

— Հո՛, հո՛...— մտածեց նա,— այժմ դևերն են գալիս։ Հիսուսի պայտարը չլինեմ ես, եթե հրեշտակին խաբելուց հետո սրանց գլխին էլ մի խաղ չխաղամ։

Ու կեղծավոր, խոնարհ, աղերսալից կերպարանք ստանալով՝ շտապեց դիմավորել սև ոգիներին։

— Ա՛յ դու անամոթ, աներե՛ս պայտար,— ձայնեց հեռվից խմբապետը,— ինչպե՞ս ես համարձակվում հոգիդ ամուր բռնել և հոգևոր հրեշտակին խաբել... Դեհ, այժմ հրաման է աստծուց, որ այդ խորամանկ հոգիդ մեր ձեռքը հանձնես... Տղերք,— դարձավ նա իր հետևորդներին,— հեռու կացեք այդ աթոռից և տեսնենք ինչպե՞ս սա իր հոգին չի տալ։

Այդ ճառից հետո սև ոգիները խրճիթ լցվեցին, պայտարին շրջապատեցին, ճիչ ու աղմուկով ականջ խլացրին և հոգին պահանջեցին։

Պայտարը թեև սկզբում շատ վախեցավ, բայց երբ գևերի ճիչն երկար տևեց, սրտապինդ դարձավ և գոչեց.

— Փոքր-ինչ ցա՛ծ խոսեցեք, պարո՛ն դևեր, ականջս խլացավ... ի՞նչ է ձեր ասածը. հոգի՞ս եք ուզում։ Շատ լավ, խոսք չունիմ. սակայն դուք ինչո՞վ կարող եք հաստատել, որ աստծուց եք ուղարկված և ոչ թե ինքնագլուխ եկողներ եք։

— Սրա՛ն նայեցեք,— աղաղակեց մեկը,— համարձակվում է կասկածել. ուզում է մե՛զ էլ խաբած լինել։

— Բոլորովին ոչ,— ասաց պայտարը,— եթե դուք հաստատեք, որ աստված է ձեզ ուղարկել, համեցեք, հոգիս ձեզ տամ։

— Ինչպե՞ս հաստատենք, անմի՛տ,— հարցրեց խմբապետը,— գրնանք վկայակա՞ն բերենք քեզ։

— Բայց ո՛չ, շատ հեշտությամբ կարող եք հաստատել։ Ես մի տոպրակ ունիմ. ահա, տեսե՛ք. եթե բոլորդ կարողացաք այնքան փոքրանալ, որ առանց ձեռք, ոտք կամ գլուխ դուրս թողնելու տեղավորվեք նրա մեջ, դա ինձ համար ապացույց կլինի, որ աստված է ձեզ ուղարկել. ապա թե ոչ՝ կորեք գնացեք և աստծու անունը թող ոչնչացնե ձեզ...

Ասաց, ձեռքերը մեջքին դրավ և հպարտ սպասեց։

— Տղե՛րք, սա տխմար է,— ճչաց խմբապետը,— ինչ կա դյուրին մեզ համար, քան փոքրանալը։ Մենք չե՞նք միթե, որ տասնյակներով տեղավորվում ենք մարդկանց սրտերի մեջ և ապրում այնտեղ... Դե՛հ, եկեք այս տխմարին ցույց տանք մեր ուժը...

Ու մտավ տոպրակը։ Մյուսներն էլ՝ ետևից։ Այլևս ո՛չ մի ձեռք, ոտք կամ գլուխ դուրս չմնաց։

— Հը, տեսա՞ր,— ձայնեց ներսից խմբապետը։

— Տեսա,— քրքջաց պայտարը։ Հետո մեծ մուրճն առավ և փառավոր կերպով սկսեց ջարդել նրանց կողերը։

Դևերը ճչացին, ճիգ գործեցին դուրս թռնելու տոպրակից, բայց իզո՛ւր. բռնված էին և լա՛վ բռնված։

Աղաչեցին, լացին, հառաչեցին և խնդրեցին. բայց պայտարը այնքա՛ն ծեծեց նրանց, մինչև որ թևերը թուլացան.

— Թո՛ղ մեզ,— գոչում էին դևերը,— թո՛ղ գնանք, հոգիդ քեզ մնա,

չե՞նք ուզում այդ անիծած հոգիդ. տանենք, որ դժոխքը տակնուվրա՞ անի...

Այն ժամանակ պայտարը հանուն Հիսուսի՝ արձակեց նրանց, և դեվերը լեղապատառ, ճիչ ու աղմուկով, այնպե՛ս շուտով կծիկը դրին, որ պայտարի քրքի՛չն անգամ չլսեցին։

Պայտարն ազատված էր այս երկրորդ անգամն էլ։ Ազատ շունչ առավ և նորից օրհնեց ա՛յն րոպեն, երբ մտածել էր Հիսուսի էշը պայտել։

Եվ երկար ժամանակ ո՛չ երկնքի և ո՛չ էլ դժոխքի պատգամավորներից մեկը սիրտ արավ մի երրորդ փորձ անել և պայտարի հոգին տանելու գալ։

Ժողովուրդը պատմում է սակայն, որ բավական ժամանակ անցած, դժոխքի մի ամենախորամանկ զավակ, լավ խորհելուց հետո, հրաման խնդրեց աստծուց մի փորձ ևս անել և պայտարի հոգին առնելու գնալ։

Հրամանը ստացավ։ Կեղծության դիմեց, հրեշտակի կերպարանք առավ և իջավ պայտարի մոտ։

Պայտարը հասկացավ, որ այս անգամ մի շատ խորամանկ և հանդուգն ոգու հետ գործ ունի, որովհետև եկվորը ո՛չ աթոռին էր մոտ գընում, ո՛չ տոպրակին և ո՛չ էլ խրճիթն էր ուզում մտնել։

— Հոգիդ տուր,— կրկնում էր նա և համառությամբ մնացել էր դրսումը կանգնած։

Հրավիրեց նրան պայտարը նստելու, խրճիթ մտնելու, բայց ոգին ժպտալով գլուխը թոթվեց։

— Ո՛չ,— ասաց նա,— ինձ խաբել չես կարող. հոգիդ տուր և վերջակետ դնենք բոլոր խորամանկություններիդ։

Պայտարը խորհեց քիչ, հետո ցույց տալով, որ այլևս ճար չունի, ջլատվածի և հուսաբեկի նման ասաց.

— Էլ ի՛նչ արած, պարո՛ն հրեշտակ, քեզ խաբել չի լինում. հոգիս առ տար։ Բայց թո՛ւյլ տուր ինձ մի վերջին անգամ աղոթել։ Հետո, գիտե՞ս, ես շատ վախկոտ եմ. թո՛ւյլ տուր ինձ շոքել այս ընկուզենու տակ և երբ ես վերջին խոսքն էլ ասեմ, ելիր ծառի վրա և այնտեղից հոգիս առ ու տար։

Ու սկսեց այնպես լալ և հեկեկալ, որ խորամանկ ոգին ուրախացավ, թե հաղթել էր։ Ելավ ընկուզենու վրա, նստեց ու սպասեց։

Բայց հազիվ թե նստել էր, զգաց, որ խաբվել էր։ Քիչ մնաց ուշքից գնար։ Որքան աշխատեց պոկ գալ, անհնար եղավ։

Զաղաչեց այլևս։ Կռացավ դեպի պայտարը և ասաց.

— Խաբեցիր ինձ ևս, պայտար, հոգիդ քեզ մնա թող. միևնույնն է, դու ինձ ընդմիշտ ոչնչացրիր, որովհետև կյանքումս ես չէի խաբվել այդպես. թող տուր ինձ գնալ...

— Ահա այդպե՛ս...— հպարտացավ պայտարը,— հանուն Հիսուսի գնա և պատմիր ընկերներիդ, որ հեշտ բան չէ Քրիստոսի պայտարի հոգին հանելը...

Եվ ելավ ոգին ու հուսահատ, կաղնիկաղ հեռացավ։ Իսկ պայտարը հպարտ, ապահով այլևս, սկսեց կյանք վարել և բոլոր հոգեառների վրա ծիծաղել...

Այստեղ կանգ է առնում ժողովրդի զրույցը և այստեղ էլ սկսում է գրողի հանդգնությունը։ Նրան թվում է, թե զրույցը լրացած չէ, քանի որ պայտարը վերջ ի վերջո անշուշտ հոգին տվավ, մեռավ։

Բայց ինչպե՞ս, ո՞վ էր ուրեմն հոգեառը, ո՞ր հանդուգնը և ո՞ր խորամանկը, որ արավ այն, ինչ չէին արել երկնքի և դժոխքի ոգիները։

Ահա թե բանն ինչումն էր։

Մի օր պայտարը մտածեց այլևս մենակ չմնալ, տուն ու տեղ լինել և կին ունենալ։

Ու գտավ այդ կինը։ Գեղեցիկ, գրավիչ, կոկիկ մի կին էր, որ խրճիթ մտնելուն պես, ըստ կանացի սովորության, սկսեց ամեն ինչ տակնուվրա անել։ Նախ հնացած աթոռը փշրեց ու վառեց, հետո տոպրակից թոնիրի սրբիչ կտրտեց շինեց, իսկ ընկուզենուն, գտնելով շատ հնացած ու տգեղ, կտրտեց-ձգեց...

Խեղճ պայարը առյուծի լեղի՞ էր կերել, որ կարողանար դիմադրել կնոջ։

Եվ կինն այնպիսի՛ դրության մեջ դրեց այնուհետև թշվառ պայտարին, որ սա սրտնեղած, տանջված, դառնությունով լցված՝ ինքը խնդրեց աստծուն՝ իր հոգին առնել...

Եվ աստված նրա հոգին առավ։ Իսկական հոգեառը, այսպիսով, միայն կինը եղավ...

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԵՆԻՉԵՐԻ

(Թուրքահայերի կյանքից)

Ա

Օսմանյան պատմությունը փոքր-ինչ ուսումնասիրողին անգամ հայտնի է Սուլթան-Մահմուդի այն ահարկու զորքի գունդը, որը կոչվում է ենիչերիների գունդ։

Այնչափ արհավիրք ձգեց իր ժամանակին այս գունդը, նրա յուրաքանչյուր զինվոր այնպիսի սոսկալի բարբարոսություններ արավ, ժողովուրդը նրա ձեռքից այնչափ տաժանելի չարչարանքներ կրեց, որ մինչև այսօր էլ, երբ կամենում են նկարագրել մի արյունարբու, անօրեն, բարբարոս, կատաղի հրեշ՝ ասում են՝ «ենիչերի»։

Ամենքին հայտնի կլինի նաև նրանց կատարածը, որը տեղի ունեցավ Կ. Պոլսի Աթ—մեյդան կոչվող հրապարակում, ուր և այժմ գտնվում է ենիչերիների մյուզեն։ Այդ մյուզեում կարելի է տեսնել նրանց մոմեղեն արձանները իրանց բնական հագուստներով, զենքերով, իրանց վայրենի և սոսկում ազդող դեմքերով, շրջապատած իրանց ներգիլե ծխող աղային։

Երբ մարդ մտնում է այդ սրահը, երբ մտնելուն պես դռան դեմուդեմը տեսնում է ենիչերաղասիի խոժոռ դեմքը և կարծես թե կատաղությունից դողդողացող շրթունքները, որոնցից դուրս եկած բառերը թափել են գետի չափ անմեղ արյուն, երբ տեսնում է նրան նստած հպարտությամբ օթոցի վրա, մեջքը տված մետաքսյա բարձերին, մի ձեռքին ներգիլեի փողը, մյուս ձեռքը մեջքի լայն գոտում խրած դաշույնի կոթին, երբ տեսնում է նրան շրջապատող այդ կատաղի դեմքերով ենիչերները, կարծես լսում է աղայի հրամանը «վ ու ր ու ն...» (զարկեք) և ենիչերիների ականջ խլացնող աղաղակը... սոսկում է և վախենում, կարծելով թե ահա նրանցից մեկը զվարճության համար իր դաշույնի սուր լինելը կփորձե իր վերա...

Այդպես էին ենիչերիները. ժողովուրդը նրանց վրա, նրանց բարբարոսական կյանքից բազմաթիվ մանր և սոսկալի պատմություններ է պատմում, և պատմությունը լավ նկարագրում է, թե նրանք ինչպես օրը ցերեկով և Կ. Պոլսի փողոցների մեջ կողոպտում, անպատվում ու սպանում էին։

Գավառների մեջ անգամ, շատ տաճիկներ օրինակ առնելով ենիչերիներից, որոնց երբեք չէին տեսել, մի-մի լայն գոտի էին կապում մեջքից, մի քանի զենք էին առնում, գլխին փաթաթում էին ծվեններից ենիչերական փաթոթը, ձեռքին մի գավազան, գիշերները դուրս էին գալիս փողոցը, ահագին աղաղակներ արձակելով դռներ էին փշրում, կողոպտում էին, առևանգում, սպանում և անպատիժ մնում։

Այդպիսիներն էլ կոչվում էին ենիչերի։

Բ

1860 թվականներում, երբ Կ. Պոլսի ենիչերիներից արդեն մի հատ անգամ չէր մնացել և սակայն գավառական ենիչերիները դեռևս շարունակում էին դռներ փշրել և կողոպտել համարձակությամբ տները և առևանգել հայ աղջիկներին՝ Էրզրումի, Կարսի դռան կողմերում, այժմյան քաղաքի միջի մեծ զինվորանոցի փողոցներից մեկում կար մի խոր և մեծ տուն։

Այս տունը պատկանում էր Էրզրումի նշանավոր հարուստ Գրիգոր աղային, որը մի շաբաթ առաջ մեռնելով, թողել էր իր բոլոր ունեցածը իրան երկու որդոց, Սեդրակին և Խաչատուրին։

Սեդրակը և Խաչատուրը կամ ավելի ճիշտ է ասելը՝ Խաչատուրը և Սեդրակը, երկուսն էլ ամուսնացած էին, միայն թե Խաչատուրը, որը մեծն էր, արդեն հինգ տարի էր, որ ամուսնացել էր և մի սիրուն որդի էլ ուներ, իսկ Սեդրակի ամուսնությունը դեռևս երեք ամիս էր և նա ուներ կին, Էրզրումի գեղեցկուհիներից մեկը։

Տան մեջ այնչափ խաղաղ էին անցրում հարսները իրանց սկեսուրի հետ, և այդ սկեսուրը իր որդիներով այնչափ աղքատասեր, բարեսիրտ հարուստներ էին, որ ամբողջ թաղեցիք սիրում և հարգում էին նրանց, բոլոր ծխատեր քահանաները նախանձում էին տեր-Մարտիրոսին, որը

նրանց ծխատեր քահանան էր... Բոլոր աղքատները օրհնում էին նրանց, որոնց տունը երբեք մի պարեն չէր մտնում, որից իսկույն բաժին չուներ։ Տան տիրուհին, Խաչատուրը և նույնիսկ Սեդրակը, ամեն այն ժամանակվա հայի պես, շատ բարեպաշտ մարդիկ էին. ամեն օր գործի գնալուց առաջ, երկու որդիք իրանց կանանց և մոր հետ եկեղեցի էին գնում, աղոթում էին ջերմեռանդությամբ, առատությամբ նվերներ էին տալիս եկեղեցուն և զատկական լուսագնի ժողովելու ժամանակ, շատ լուսագին տվողների մեջ էին գտնվում նաև Գրիգոր աղայի որդոց անունները, որոնք կարդացվում էին եկեղեցու մեջ Հաջի խալֆայի կամ Ղազարոս տիրացուի բարձր ձայներով։

Կանայք եկեղեցուց ետ դառնալուն պես զբաղվում էին տան գործերով, և երբ երեկոյան տղամարդիկ տուն էին գալիս, նրանք ժողովվում էին միասին մի սեղանի շուրջը, զվարթ խոսակցություններով ընթրում էին, հետո փոքր-ինչ միմյանց հետ կատակներ էին անում փոքրիկ Գրիգորի հետ (որը իր պապի անունն էր կրում) փոքր-ինչ էլ խաղում, ապա միասին ոտքի կանգնած բարձրաձայն աղոթում էին, և յուրաքանչյուր ոք իր սենյակն էր գնում քնելու։

Նրանց կյանքը միշտ այսպես էր, և դեռևս ոչ մի դժբախտություն չէր եկել կոտրելու նրանց երջանիկ կյանքը, և նրանց հարստությունն օրից օր ավելանում էր։

Մի երեկո, երբ տղամարդիկ ներս էին մտել, և երբ ճրագները վառվել էին արդեն, հանկարծ մի խուլ աղաչական լսվեց փողոցի մեջ։

Սեդրակը իսկույն կամեցավ դեպի փողոցը վազել, տեսնելու համար, թե այդ ինչ աղաղակ էր, սակայն Խաչատուրը՝

— Սեդրակ,— ասեց,— փոխանակ փողոցը ելնելու, շուտով ծառայի հետ փողոցի դռան մոտ գնացեք և նիգերը ամրացրեք...

— Հա,— ասաց Սեդրակը գունաթափվելով,— ենիչերիի աղաղակ էր...

— Այո՛,— դիտեց մայրը,— այդ անիծածները էրզրումը քանդեցին, աստված էլ թող քաղաքը պաշտպանելու պարտք ունեցողներին քանդե..

Սեդրակը ծառայի հետ գնացին և փողոցի դռան նիգերը ամրացրին։ Ընթրիքը շուտով պատրաստվեցավ, և ընտանիքի անդամները նստեցին ընթրելու, երբ հանկարծ նորից լսվեց նույն աղաղակը և այս անգամ ավելի մոտից... դռան ետևից մի ուրիշ ավելի մեծ աղաղակ և հանկարծ փողոցի դուռը մի բուռն հարվածից այնպես դղրդաց, որ քիչ մնաց փշրվեր։

Բոլորը գունաթափված ոտքի թռան։

— Մեր դո՞ւռն էր,— հարցրեց կակազելով Խաչատուրը։

Մայրը ձեռքով պատին կոթնեց և գլխով դրական պատասխան արվավ։ Հարվածը կրկնվեց և այս անգամ լսվեց մի խռպոտ ձայն, որը գոչում էր թուրքերեն։

— Բացե՛ք, թե չէ դուռը կփշրեմ... բացե՛ք, վնաս չպիտի տամ, մի կտոր հաց պիտի ուտեմ ու հեռանամ։

— Ինչպե՞ս դրացիներից ձայն հանող չկա,— մռմռաց Սեդրակը բարկությունից գունաթափվելով։

Խաչատուրը վախեցած նրան նայեց։

— Որդիք,— հազիվ կարողացավ խոսել մայրը արտասվախառն ձայնով,— անիրավը դուռը կփշրի և այն ժամանակ վա՜յ մեզ... գնացեք բացեք, գուցե իր ասածի նման միայն մի կտոր հացով բավականանա...

Սեդրակը կատաղությամբ բռունցքները սեղմած չորս կողմն էր նայում։

— Անիծյալ կյանք,— մռմռաց նա,— մի հատ զենք չկարողանա ունենալ մարդ իրան պաշտպանելու համար։

Ընտանիքի մեջ ամենքը գիտեին Սեդրակի դյուրագրգռությունը, ուստի ավելի դրա համար էր, որ վախենում էին դուռը բանալու. եթե հանկարծ հանդուգն երիտասարդը մի անխոհեմություն աներ, ենիչերին իսկույն պիտի կատաղեր, կռվի պիտի բռնվեին և այն ժամանակ միշտ վնաս կարող էր առաջանալ. կամ ենիչերին կոտորածներ անելով կհեռանար, և կամ Սեդրակը նրան կսպաներ... ահա միայն այդ ժամանակ կառավարությունը մեջ կմտներ, և Սեդրակը հավիտյան կկորսվեր իրրև մարդասպան... ո՞վ էր նայողը, թե հանցավորն ով է, մի՞թե իրավունք ուներ մի գյավուր ձեռք բարձրացնել մի մյուսուլմանի վրա...

Գ

Ենիչերին, որը մի ավազակային վայրենի դեմքով տաճիկ էր և հայտնի չէ, թե որտեղից ձեռք ձգել, խմել էր մի քանի գավաթ օղի, շարունակ աքացիներ էր տեղում դռան վրա և կոկորդը պատռելու չափ բարձր ձայնով անասելի հայհոյանքներ էր տեղում և սպառնում էր ամեն ինչ քարուքանդ անելու և ամենքին հավի պես մորթելու։

Նա զինավորված էր պաղ զենքերով, այսինքն ուներ միայն մի երկար սուր կողքից կախած և մի կեռ դաշույն մեջքի լայն գոտիի մեջ խրած, իսկ ձեռքումը կրում էր մի ահագին գլխով կարճ ցուպ, որով նա ամենայն ուժով խփում էր դռան։

Վերջապես Խաչատուրը դողդոջուն քայլերով մոտեցավ դռան և դուռը բաց արավ։

— Ներեցեք, աղա,— իսկույն ասաց նա,— քնել էինք և չէինք լսում։

— Հըմ,— փոքր-ինչ հանդարտվեց ենիչերին,— քնել էիք, շներ, մի՞թե ես այնպես ցած ձայն ունեմ, որ բոլոր թաղեցիներին, եթե սատկած իսկ լինեն, ես իմ ձայնովս չկարողանամ նրանց վեր թռցնել։

— Ի՞նչ ասել է, աղա,— վրա տվավ խաչատուրը,— այնպես ձայն ունիս, որ քիչ մնաց մեր տունը քանդվեր քո ձայնից... բայց համեցեք ներս, աղա, տունը քոնն է, հրամանդ ի՞նչ է, իսկույն ծառաներդ պատրաստ են կատարելու։

Խաչատուրի այդ ստրկական ձայնը, խոսքերը և շարժումները փոքր-ինչ մեղմացրին բարբարոսին. նա ներս մտավ, ուղղակի սենյակն անցավ և, նստելով ամենավերին գլուխը, բարձերի վրա, հրամայեց, որ իրան հաց բերեն ուտելու։ Իսկույն Խաչատուրը դուրս եկավ, և Սեդրակի հետ ներս բերին արդեն պատրաստ սեղանը. ենիչերին սկսեց ագահությամբ ուտել և երբ լավ կշտացել էր, դառնալով Խաչատուրին ասեց.

— Գյավո՛ւր, ձեր կանայքը համով կերակուր են եփել, ուզում եմ տեսնել ձեր կանանցը...

Սեդրակը գունաթափվեց, բայց զսպեց իրան։

— Կանչե մորս,— ասեց Խաչատուրը նրան։

Խեղճ կինը դողդողալով ներս մտավ և չոքեց ենիչերիի առջև։

— Գյավուր կնի՛կ,— ասեց նրան ենիչերին հպարտությամբ,— համով կերակուր ես եփել, բայց դու արդեն շատ պառավել ես, իհարկե, հարսներդ եփած կլիենն։

— Այո՛, աղա՛, իմ հարսներս են եփել։

— Հարսներդ եմ ուզում տեսնել,— ասաց ենիչերին և աչքերը փայլեցին անզուսպ կրքերից...

Սեդրակն իրեն կտրտում էր բարկությունից։

— Սեդրակ,— ասեց Խաչատուրը,— ներս բեր հարսներին, թող անօրենը տեսնե, հոգ չէ, ինչը կպակսի հարսներից, թող տեսնե և գոլի կորսվի երթա։

—Անկարելի է,— մռմռաց Սեդրակը տեղից չշարժվելով,— ես հարսներին չեմ բերի այս պիղծի առջև։

— Մարդու լեզու խոսեցե՛ք,— գոռաց ենիչերին,— շուտով հարսներին բերեք տեսնեմ և նա տեղից շարժվեց։

Այն ժամանակ Խաչատուրը ոտքի ելավ և դուրս գնաց. Սեդրակն էլ նրա ետևից և երբ երկուսն էլ մտել էին մյուս սենյակը.

— Խաչատուր ախբար, —գոչեց Սեդրակը,— եթե ուզում ես, քո կնոջը տար, իսկ իմ կնոջ ես չեմ թողնի։

— Հիմար մի լինի, Սեդրա՛կ,— ասաց Խաչատուրը,— ենիչերին

խնացավ, որ երկու հարս է, ի՞նչ կլինի կնոջդ երեսը տեսնելով, բայց գուցե այլևս պատճառ չունենա ու կորսվի երթա...

Հարսները որչափ կարողացան երեսները ծածկեցին, բայց ներս մտնելուն պես ենիչերին նկատեց Սեդրակի կնոջ գեղեցկությունը և այնպես գրավվեցավ, որ այլևս չկարողանալով համբերել, հարցրեց.

— Ո՞ւմն է այս կինը։

— Իմն է,— ասաց Սեդրակը։

— Քոնն է, շատ լավ, ես այս գիշեր այստեղ ձեզ հետ կմնամ և երբ մի մյուսլման կա տան մեջ, տան ամենից գեղեցիկն պիտի ծառայե նրան զվարճացնելու... դե, ելեք, գյավուրներ, դուրս գնացեք և այս սիրուն կինը թող իմ անկողինս փռե.... Սեդրակը և նույնիսկ բոլորը այնպես քարացած մնացին, որ այլևս խոսել չկարողացան, իսկ հարսը վախեցած սեղմվեցավ սկեսուրի կողքին.

— Լսեցի՞ք, գյավուրնե՛ր,— գոչեց որոտաձայն բարբարոսը,— շուտ դուրս գնացեք և թողեք ինձ մոտ այդ կնոջ։

— Բայց աղա...— կմկմաց Խաչատուրը։

— Սուս...— որոտաց ենիչերին,— դուրս, թե չէ բոլորիդ հավի պես կմորթեմ։

Եվ նա այնպես կատաղությամբ սուրը քաշելով օդի մեջ տատանեց, որ նախ տան տիկինը, ապա մեծ հարսը, հետո Խաչատուրը դուրս փախան սենյակից։

Սեդրակը միայն մնաց, որ վճռականությամբ մոտեցավ իր մեռնելու պատրաստ սաստիկ դողացող և գետին ընկած կնոջ։

— Հը՛,— ժպտաց ենիչերին նրանց մոտենալով,— ի՞նչ է, կի՞նդ է այս, հոգ չէ, շատ սիրուն է, և դու կարող ես պարծենալ, որ մի կին ունեիր, որը բոլորովին գրավեց Մեհմեդ չավուշին... Ես արդեն ցերեկով տեսել էի կնոջդ և երեք օր է քուն չունեմ... այժմ կթողնես ինձ, էգուց նորեն միշտ թող քոնը լինի, ի՞նչ կա, որդիս, ի՞նչդ կպակսի... մի վախենա. դեհ գնա..

Այս բոլորը նա այնպիսի բնական ձայնով ասաց, որ կարծես սովորական մի բան էր անելիքը։

— Ա՛յ... մի ուրիշ բան, տղա,— շարունակեց ենիչերին,— եթե ուզենա կինդ իր անօրեն հավատը թողնել և ճիշտ կրոնն ընդունել... ես համաձայն եմ նրան իմ հարեմս տանելու և քեզ էլ մի լավ քսակի ոսկի տալու...

Սեդրակը խեղդվում էր, եթե ուժը հաղթեր, անպատճառ կխեղդեր նրան, բայց ենիչերիի հսկա հասակը, ջլապինդ բազուկները և զենքերն

արդեն դողացնում էին նրան, որը երբեք արյուն չէր տեսել, կռիվ չէր արել և զենք չէր գործածել։

— Բայց այդ մասին առավոտյան կխոսենք...— շարունակեց Ենիչերին,— ա՛յժմ ահա քեզ...— և նա առաջարկեց նրան մի ոսկի,— այժմ դնա քնիր, հոգ չէ, այսօր էլ մենակ քնիր...

Սեդրակն անշարժ, կնոջ ձեռքը բռնած, իր մարմնով նրան ծածկած, Ենիչերիին էր նայում...

— Ի՞նչ,— գոչեց Ենիչերին դեմքը խոժոռելով,— տվածս փողը չե՞ս առնում, չե՞ս էլ ուզում դուրս գնալ... չէ որ փորդ կը թափեմ... հա՛յդե, անհավատ,... կորսվիր դուրս...

Սեդրակն անշարժ մնաց։

Ենիչերին կատաղեց, բռնեց Սեդրակի ոտքերից և գլխից, արագությամբ և առանց ուշադրություն դարձնելու նրա հուսահատ աղաղակներին, տարավ նրան դեպի դուռը և շպրտելով դուրս՝ գոչեց.

— Գնա՛, երիտասարդ ես, խղճում եմ քեզ...

Սեդրակը պահ մի ցավից ընկած մնաց, ապա ոտքի ելավ և մռնչեց.

— Ո՛չ, ավելի լավ է մեռնել, քան այսպես ապրել։

Պահ մի մտածեց, ծոծրակը քորեց։

Այդ միջոցին ներսից լսվեցավ իր կնոջ ճիչը...

Արյունը գլխին զարկավ, մի ոստյունով թռավ դեպի խոհանոցը, հափշտակեց այնտեղից փայտ կտրտելու կացինը և սլացավ դեպի սենյակը... բայց այնտեղ կանգ առավ գունաթափ.... դողդողում էր, խեղճը երբեք զենք չէր բռնել ձեռքը....

Հանկարծ ներսից լսեցավ մի սուր և աղիողորմ ճիչ...

— Նա է,— մռնչեց Սեդրակը,— և մինչդեռ խաչատուրը, որը ամեն բան տեսնելով գունաթափ դեպի նա էր վազում, երիտասարդը ներս սլացավ...

Ենիչերին գիրկն էր առել սարսափահար կնոջը և քակում էր նրա հագուստները... նրա կեղտոտ շրթունքները հպել էին մարած կնոջ այտերին...

Սեդրակի աչքերը մթնեցին, առյուծի պես մռնչելով մի ոստյուն գործեց դեպի Ենիչերին և բարձրացրած տապարը կատաղությամբ իջեցրեց նրա գլխին...

Սրահը թնդաց Ենիչերիի ձայնից, որը բաց թողեց կնոջ, մի քայլ արավ և փռվեցավ գետին...

Սեդրակը կատաղությամբ ցատկեց դեպի նա, խոպոտ մռնչյուններ արձակելով սկսեց արագությամբ և ամենայն ուժով տապարով հարվածներ տեղալ Ենիչերիի գլխին և մեջքին։

Այդ միջոցին սենյակն էին թափվել խաչատուրը, մայրը, հարսը և ծառան, որոնք որքան աշխատում էին Սեդրակին ետ քաշել՝ անկարելի էր լինում։

— Սեդրակ, մեր տունն ես քանդում...— գոչում էր խեղճ մայրը...

— Սեդրակ, սպանեցիր...— գոչում էր եղբայրը։

— Սեդրակ, հերիք է...— ասում էր մեծ հարսը...

Իսկ Սեդրակը, աչքերը մեծ-մեծ բացած և արյունոտ, մազերը ցից, ձեռքերը և դեմքը արյունով ողողված, կատաղի մռնչյուններ արձակելով տապարի հարվածներ էր տեղում արդեն ամեն կողմից ջախջախված Ենիչերիի դիակի վրա և մռնչում էր...

— Թողեք... Թողեք զարնեմ...

Վերջապես բռնեցին նրան և երբ կամենում էին տապարը ձեռքից առնել՝ հանկարծ նա տապարը վերջին անգամ ուժգնությամբ նետեց դիակի վրա, մի անգամ ևս կատաղի և արյունոտ աչքերով նրան նայեց, հետո իր չորս կողմը... և մի այնպիսի դառն, այնպիսի սոսկալի ծիծաղ արձակեց, որ ամենքը վախեցած թողին նրան և ետ քաշվեցան...

Սեդրակը խենթացել էր...

Դ

Հազիվ թե գալիս է ավագ հինգշաբթին, և ահա քահանաները այլևս հանգստություն չեն ունենում, որովհետև ամեն կողմից նրանց մոտ են թափվում խոստովանողները... նրանք պետք է իսկույն հաղորդություն տան մանուկներին, հետո մեկ-մեկ խոստովանեցնեն իրանց մոտ եկող մարդկանց և, որը տաժանելի է նրանց համար, մյուս օրն էլ առավոտյան շուտով պիտի շարունակ երկու օր խոստովանեցնեն կանանց և աղջիկներին, որոնք արդեն տեղ են գրավել եկեղեցու մեջը և շուրջը, միմյանց հրմշտում են, իրանց խոսակցություններով ականջ են խլացնում և շատ անգամ այնպես կռիվներ սարքում եկեղեցու մեջ, որ քահանաները թողնելով իրանց խոստովանանքը, ստիպվում են միջամտել, կոկորդ պատռելու չափ գոռգոռալ և կռիվը աշխատել հանդարտեցնելու։

Եթե չլինեին զատկական երեք օրվա առատ եկամուտները և ոչ մի քահանա հանձն կառներ այդ տաժանելի աշխատությունը, որը տարին երկու անգամ կրկնվում է էրզրումում։

Ավագ հինգշաբթի օրվա առավոտը, ժամերգությունը վերջացնելուց հետո, երբ քահանաները կամենում էին նախ տուն երթալ հաց ուտելու, որ հետո և սկսեն խոստովանությունները... փիլոնը ցած առնելու ժամանակ աշակոշմյան դռանում լսվեց մի կռվի ձայն։

Կռվում էին երկու քահանաներ, և իրանց կռիվը հետզհետե հրավիրեց այդտեղ բոլոր մյուս քահանաներին և կռիվը ընդհանուր դարձավ։

— Իհարկե,— գոչում էր տեր-Մեսրովբը տեր-Պետրոսին,— հարուստ ծուխերը բոլորը քոնն են, էլ ցա՞վդ ինչ է... ասում ես քիչ ծուխ ունես, հը, թե քաջ ես, արի ծուխներս փոփոխենք, ես իմ ծուխերից երեքը կըտամ, դու քոներիցը մեկը տուր...

— Ինչո՞ւ չէ,— ասեց տեր-Պետրոսը ժպտելով,— ո՞րն ես կամենում։

— Այ, ես քեզ կտամ Ծատուրենց, Փիլանենց, տեր-Կարապետենց, դու ինձ տուր Տիարպեքիրցենց...

— Ինչպես չէ,— ծիծաղեց բարձրաձայն,— ձեռքերդ բաց մեջը դընեմ... ծուխներիցդ տասը տաս, ես Տիարպեքիրցենց չեմ տալ...

—Տեսա՞ր... լավ, ուրեմն տեր-Ազարենց տուր...

— Ինչե՞ր ես խոսում,— գոչեց տեր-Պետրոսը,— թե՞ խենթացել ես, ասա, ո՞ր հիմար քահանան տեր-Ազատենց պես ծուխ ունենա և ձեռքիցը բաց թողնե... ա՛յ եթե կուզես քո ծուխերիցդ հինգ ծուխ տուր, ես քեզ կտամ Մարդաքանենց...

— Հը,— ծիծաղելով մեջ մտավ այդ միջոցին տեր-Մկրտիչը,— լսել ես, որ նրանց գործերը վատ են գնում նրա՞ համար....

— Այն չէ, բայց սա Հաջի Կարապետենց լսել եմ, որ ծախում ես, քանիի՞ կտաս,— ասեց տեր-Գրիգորը։

— Ծախո՞ւմ է, հա՛, ծախո՞ւմ ես,— գոչեցին բոլորը,— քանի՞, քանի՞։

— 200 ղուրուշ կանխիկ։

— Շատ թանգ է,— գոչեց տեր-Մարտիրոսը,— 150-ի կտա՞ս...

— Ես 180 կտամ,— մեջ մտավ տեր-Անդրեասը...

— Ես 190...— գոչեց տեր-Գրիգորը...

— 200 ես տվի գնաց,— ասաց տեր-Մկրտիչը և, բռնելով տեր-Պետրոսի ձեռքը, թոթվեց։

— Փո՞ղը,— հարցրեց վերջինս։

— Հիմա տնից գալուն կբերեմ։

Այդ միջոցին եկեղեցին մտավ մի միջահասակ քառասնամյա մարդ, գունաթափ դեմքով և կոր քամակով... Մոտեցավ սեղանին, աղոթեց մի քանի բոպե արտասվելով և ապա դառնալով քահանաներից տեր-Մարտիրոսին, ասեց դողդոջուն ձայնով.

— Տեր-հայր, կարո՞ղ ես ինձ խոստովանեցնել...

— Ինչո՞ւ չէ, Խաչատուր աղաս,— ժպտաց քահանան,— բայց պատրա՞ստ ես։

— Այո,— մրմնջաց Խաչատուր աղան։

— Սաղմոս կարդացե՞լ ես։

— Ամբողջ գիշերը...

— Շատ լավ... Հը՞մ, եթե կուզես...— և նա դեմքը ծռմռեց,— ինձ կընկերե՞ս, որ տուն երթամ և հաց ուտեմ գամ... շուտ կգամ, դու աղոթիր...

— Շատ լավ,— ասեց մեղմությամբ Խաչատուր աղան և գնաց սեղանի առջև, չոքեց այնտեղ և գլուխը ձեռքերի մեջ առավ։

Տեր-Մարտիրոսը շտապով մեկնեցավ։

— Ինչո՞ւ չշտապի,— ասեց տեր-Պետրոսը ցած ձայնով մյուսներին,— այնպիսի ծուխ է, որ եթե բոլորին ծախե, սա միայն իրան կապրեցնե։

Եվ քահանաները ցրվեցին։

Եկեղեցու մեջ մնաց միայն Խաչատուր աղան, որը գլուխը միշտ ձեռքերի մեջ առած, անշարժ, գլուխը խոնարհեցրած, աղոթում էր, և նրա թափած արցունքի կաթիլները մատների միջից գլորվում էին սեղանի առջևի պաղ քարերի վրա...

Ի՞նչ աներ խեղճ մարդը, որ աղոթելու և արտասվելու պետք էր զգում՝ եկել չոքել աստուծո առջև, կատարում էր իր խոստովանությունը... Ամբողջ կես ժամ նա այդ դրության մեջ մնաց և միայն իր արտասվաթաթախ երեսը այն ժամանակ բարձրացրեց, երբ քահանան հաց ուտելուց վերադառնալով, մոտեցել էր նրան և ասում էր.

— Ելի՛ր, Խաչատուր աղա, գնանք խոստովանեցնեմ։

Եկեղեցու մի սնի տակ նստեց քահանան, Խաչատուրը չոքեց նրա առջև, կարդաց «մեղան» և մի խոր հառաչանք արձակեց, երբ քահանան ասեց.

— Որդի, գործած մեղքերդ ասա...

Խաչատուրը դողդոջուն ձայնով ասեց մի քանի մեղքեր և հանկարծ կանգ առավ։

— Էլ չկա՞...— հարցրեց քահանան։

— Ո՛չ,— ասեց Խաչատուրը հազիվ լսելի ձայնով։

— Ուրեմն արձակում տամ,— և նա ձեռները պարզեց...

Հանկարծ Խաչատուրը մի շարժում գործեց, ուզեց խոսելու՝ չկարողացավ, ուստի ուժգնությամբ բռնեց քահանայի ձեռքերը։

Քահանան ակամա մի ճիչ արձակեց. Խաչատուրը մեռյալի պես գունաթափ, դողդողում էր և քիչ էր մնում ցած ընկներ.

— Տեր-հայր...— գոչեց նա վերջապես մի բուռն ճիգ գործելով։

— Հիվա՞նդ ես, որդի...

— Ո՛չ, ո՛չ,— ընդհատեց Խաչատուրը,— դեռևս մի բան պիտի խոս-

տովանվեմ քեզ, բայց տես, խոստացիր որ ինչպես վայել է քահանայի, խոստովանանքս քեզ մոտ գաղտնի պիտի մնա մինչև հավիտյան...

— Այդ ի՞նչ խոսք է, որդի,— ասեց քահանան,— իզուր ես այդպիսի խոսքեր ասում. արդեն քահանայի պարտքն է ամեն խոստովանանք մինչև հավիտյան գաղտնի պահել... մեր օրենքի մեջ սաղ-սաղ վառում են այն քահանային, որը խոստովանանքը դուրս է տալու...

— Աստված կարգիդ միշտ հաստատ պահի,— ասեց Խաչատուրը փոքր-ինչ միամտելով,— այժմ լսիր... սրանից տասը օր առաջ, մի գիշեր մեր տուն մտավ մի ենիչերի... կերավ, խմեց...,— բայց դրանով չբավականացավ և ուզեց, որ մեր Սեդրակի կինը իրեն հանձնենք...

— Վայ անօրեն, վայ,— գոչեց քահանան սոսկում հայտնելով։

— Լսիր... սուրը քաշեց, խլեց, Սեդրակին տենյակից դուրս շպրտեց և առավ կինը իր գիրկը... մենք փախանք բոլորս. բայց Սեդրակը, որը, ինչպես գիտես, փոքր-ինչ գյուրագրգիռ է, լսելով իր կնոջ ճիչերը... խլեց տապարը և ներս վազեց... Ախ, տեր հայր, մինչև որ ես հասա... Սեդրակն արդեն ջարդել էր ենիչերիի գլուխը...

Եվ լռելով գլուխը կուրծքին կախեց ու սկսեց արտասվել։

Քահանան պահ մը քարացած մնաց այդ սոսկալի խոստովանության վրա, բայց իսկույն ամփոփեց իրան և ասեց...

— Վատ բան... ուրեմն Սեդրակը այսօրվանից խենթացավ։

— Ա՛խ— այո, տեր հայր,— ասեց Խաչատուրը,— խենթացավ... կինն էլ այժմ մեռնելու մոտ հիվանդ է... Աստված մեզ այցելե...

— Իսկ ենիչերիի դիակը ի՞նչ արիք,— հարցրեց քահանան։

— Դիակը... մեր բակի մեջ թաղեցինք...

Տիրեց պահ մի լռություն, որից հետո քահանան ասեց ծանրությամբ.

—Թեև վատ բան է այդ, Խաչատուր, բայց եղածը եղած է, լավ արիր, որ երկար խոստովանեցար... Աստված գուցե ձեր տան մեղքը ջնջի... ոչ ոքի չխոսեք, զգուշ կացեք, ապա թե ոչ, տնով-տեղով կկորսվիք... Այժմ արձակում տամ քեզ... դու ձեռքերդ արյունի մեջ չես թաթախել, դու այդտեղ անմեղ ես...

Եվ քահանան մտազբաղ տվավ արձակումը.

Ե

Տեր-Մարտիրոսը խիստ մտազբաղ էր։

Ո՞վ գիտե ինչ էր մտածում նա, մինչև իսկ նրա պաշտոնակիցները նկատեցին, որ նա մի քանի օր էր, շարունակ աղոթքները սխալ էր

կարդում, մեկը մյուսի փոխարեն... հեռու էր քաշվում խմբից և շատ անգամ գնում էր Ղավազից դուրս— դաշտերում թափառելու...

— Խեղճը հիվանդ է...— ասում էին պաշտոնակիցները։

Բայց հանկարծ տեր-Մարտիրոսը փոխվեցավ, նրա տխրությունը բոլորովին անցավ, նա այժմ զվարթ էր, նրա դեմքն այժմ փայլում էր, նա սկսեց նորից խոսել, կատակներ անել, մինչև իսկ խմել։

Սակայն իր այս զվարթության մեջ իսկ նա տարօրինակ էր։ Որովհետև զվարթությունից թեթևացել էր, դեմքը փայլում էր այնպես ուրախ, որ կարծես մի մեծ գանձ էր գտել, կատակներ անում էր սովորականից ավելի, ծիծաղում էր իր սովորության հակառակ ավելի բարձրաձայն և տեղական ու խմում էր ավելի և ավելի շատ, այնպես որ մի օր սրբազան առաջնորդը հանդիմանեց նրան ասելով.

— Տեր-Մարտիրոս, թեթևացել ես, ի՞նչ ես գտել, որ այդպես զվարթացել ես... եթե գանձ ես գտել, ինչո՞ւ ես մոռանում քո առաջնորդին։

Սակայն տեր-Մարտիրոսը և ոչ իսկ ուշադրություն էր դարձնում նրան։ Իր պաշտոնակիցները մի օր սոսկացին, տեսնելով, որ տեր-Մարտիրոսը այլևս հավատում է իրանց և հասույթը կիսելու ժամանակ, փողը առանց համրելու գրպանն է լցնում։

— Խենթացել է... բոլորովին խենթացել...— ասում էին նրանք։ Մի օր տեր-Մարտիրոսը հանկարծ Գեոլբաշին գնաց և վարձեց քսան հատ մշակներ և որմնադիրներ. տարավ տուն, հրամայեց իր կնոջ և որդվոցը, որ քաշվեն դրացիի տունը և տունը սկսեց քանդել տալ... հետո կանչեց մի ճարտարապետ-որմնադիր և սկսեց նրա հետ մի պլան կազմել մի երկհարկանի փառավոր տուն շինել տալու համար...

Երբ պաշտոնակիցները այդ լսեցին, ապշած նախ իրարու նայեցին, և ապա տեր-Պետրոսը ասեց.

— Տեսնո՞ւմ եք անիծյալին... կամ գանձ է գտել և կամ փողերը պահում էր և այժմ երևան է հանում...

Որչափ կուզեին թող զանազան կարծիքներ տանեին, իրողությունն այն է, որ տեր-Մարտիրոսը իսկապես մի մեծ գանձ էր գտել... իսկ թե ո՞րտեղից, այդ կպարզի հետևյալ նամակը, որ նա երեկոյան, քաշվելով իր սենյակը, գրեց...

Ահա այդ հետաքրքիր նամակը.

«Սիրելի Խաչատուր աղաս...

«Տուն եմ շինում և առայժմ 100 ոսկու պետք ունիմ, հույս ունեմ, որ կվճարես այդ՝ շնչին գումարը. միամիտ կաց. խոստովանանքդ միշտ գաղտնի պիտի պահեմ, փողը պիտի ուղարկես կարծեմ։ Խոստովանահայրդ Մարտիրոս քահանա»։

Երբ այս նամակը խանութում ստացավ Խաչատուրը, նախ ապշած բերողին նայեց, որ քահանայի որդին էր, հետո մի անգամ ևս կարդաց, գունաթափվեց, պահ մի մտածեց, ապա մի խոր ախ քաշեց և քահանայի որդու տոպրակի մեջ լցրեց լռությամբ 100 ոսկին...

Եթե Խաչատուրը այն սոսկալի դեպքերից հետո գունաթափվել էր բոլորովին, մյուս առավոտյան, երբ հայելիի մեջ նայեց, տեսավ, որ մազերի կեսը սպիտակել են... մի խոր ախ ևս քաշեց, առավ վերարկուն և տանից դուրս գնաց մռմռալով...

Մինչև քահանայի նոր տան շենքը վերջանալը, տեր-Մարտիրոսը իր նոր գանձարանից շուրջ 500 ոսկի էր առել...

— Հըմ,— ծիծաղեց նա,— ինչին գումար... կաթիլ ծովից... այժմ սկսենք բուն գործին...

Եվ նա այս անգամ մի անգամից 1000 ոսկու մի նամակ գրեց իր գանձատան... Գանձատունը այս անգամ ապստամբեց, բայց խորամանկ տեր-Մարտիրոսը առավոտյան շուկայից արդեն թուղթ և թանաք գնել էր առատորեն, ուստի ժպտալով նստեց և գրեց.

«Սիրելի Խաչատուր աղաս.

Մինչև չորս օր ժամանակ եմ տալիս քեզ, որ 1000 ոսկին ուղարկես. խոստովանքի՞ցդ ես վախենում, մի վախենա, ոչ ոքի չեմ ասի, այդ արդեն քեզ խոստացել եմ, բայց 1000 ոսկին էլ չպիտի մերժես գաղտնիքդ պահողից։ Հա, լավ միտս ընկավ. Երթևում մի նոր հողի մոտ մի մեծ և սիրուն արտ ունես, լսեցի, այդ արտն էլ, իբր նվեր չե՞ս տա քեզ շատ սիրող խոստովանահորդ...»։

Չորս օրից հետո 1000 ոսկին տեր-Մարտիրոսին եկավ արտի թղթերի հետ և ահա իսկույն շուկայում տարածվեց, որ Գրիգոր աղայի որդին, Խաչատուր աղան ծախել է իր բոլոր հողերը և այժմ գործերը շատ վատ դրության մեջ են... Իհարկե վատ դրության մեջ կլինեին. հե՞շտ է մի վաճառականին և այն էլ Էրզրումի պես մի փոքրիկ քաղաքի վաճառականին, մի քանի ամսվա մեջ կորցնել 1500 լիրա...

Եթե նամակը կրկնվեր, Խաչատուրն այս անգամ ստիպված էր տունը և խանութը ծախել...

Մի շաբաթից հետո, մի օր, երբ Խաչատուրը եկեղեցու սեղանի առջև աղոթում էր լալագին, մոտեցավ նրան տեր-Մարտիրոսը և կոպտությամբ նրա երեսն ի վեր.

— Խաչատուր, պարտատերերս ինձ շատ են նեղացնում, չե՞ս կարող մի հազար ոսկի էլ ճարել ինձ համար...— և մոտենալով ականջին,— մի վախենա, ասեց,— խոստովանանքդ միշտ գաղտնի է մնացել...

Զ

Այս դեպքերից մի ամիս հետո, մի շաբաթ օր, երբ սրբազան առաջնորդը եկեղեցուց վերադարձել և օթոցի մեջ ընկղմած սուրճ էր խմում, ծառան ներս մտնելով հայտնեց, որ մի ծերունի թախանձագին խնդրում է տեսնել սրբազանին։

— Ինչպես է հագնված,— հարցրեց սրբազանը։

— Գրիգոր աղայի տղան է, Խաչատուր աղան։

— Հա՞,— ժպտաց սրբազանը,— թող ներս գա։

Մի քանի րոպեից հետո սենյակն է մտնում մի շատ խեղճ հագնված, կորաքամակ, խորշոմոտ ճակատով, գունաթափ և բոլորովին սպիտակ մազերով ծերունի...

Որչափ փոփոխություն... առույգ, սև մազերով և զվարթ դեմքով Խաչատուրը այժմ եղել էր մի խղճալի ծերուկ, հենված փայտի վրա, փայտ, որը նա դրեց մի անկյունում, արտասվագին մոտեցավ սրբազանին, չոքեց, համբուրեց նրա աջը և գոչեց դողդոջուն ձայնով.

— Սրբազան, եկել եմ քեզ մի հարցմունք անելու, քեզ նեղություն չպիտի տամ, շուտով պիտի երթամ...

— Խոսիր, որդի,— ասաց սրբազանը,— խասիր, ի՞նչ է ցավդ։

— Ցա՞վ,— ժպտաց դառնությամբ ծերունին,— ես ցավ չունեմ այլևս, ի՞նչ մնաց ինձ ցավելու... ցավ չունեմ, սրբազան. այլ մի հարցմունք...

— Ասա՛։

— Հարցնում եմ. մեր եկեղեցու մեջ օրենք կա՞, որ քահանան իրան խոստովանածը ասե ուրիշի. եթե կա— ես իմ հավատս ուրանամ, եթե չկա— նորեն կուրանամ... պատասխանիր, սրբազան, ասա ինձ, օրենք կա՞, թե չկա... կերթամ կփորձեմ պաշտել մահմեդականների աստվածը... կերթամ մահմեդական կլինեմ, մի փաթոթ կփաթաթեմ գլխիս, ենիչերիի հագուստ կհագնեմ, դոնե-դուռ կընկնեմ, կզարնեմ, կփշրեմ, կառևանգեմ, կսպանեմ և ապա կերթամ կաղոթեմ նրանց աստծուն... հարցել մեր եկեղեցական օրենքները և ծեսերը... ո՞վ է այդ հանգուցը... սրբազան... ասա ինձ մեր եկեղեցու մեջ կա՞ օրենք, որ քահանան իրան խոստովանածը հայտնե. եթե կա— այս րոպեիս կերթամ մահմեդական կլինեմ. եթե չկա— նորեն կերթամ...

Նա լռեց, արտասուքը առատորեն հոսում էին նրա աչքերից, և սրբազանը ապշած, չգիտեր ինչ պատասխանել։

— Այո,— շարունակեց ծերունին,— մենք գանգատվում ենք թուրք ենիչերիներից, որ նրանք կողոպտում են, անպատվում են, սպանում

են... մինչդեռ խեղճ հիմարներս չգիտենք, որ մեր ենիչերիներն ավելի սոսկալի են. եթե ենիչերին պիտի անպատվեր իմ հարսին զոռով, այժմ մեր ենիչերիի շնորհիվ հարսս պիտի գնա իր պատիվը ծախելու իր կամքով... հա՜, հա՜, հա՜... ապրելու համար, որովհետև Գրիգոր աղայի որդիները այլևս օրվա հացի կարոտ են և եթե չեն մուրում, դրա պատճառը դեռևս մեզ մնացող ամոթն է, որին ոչ ոք կարող է խլել մեզնից...

Սրբազանը շփոթվել էր. չգիտեր ինչ ասեր. շարժվեցավ տեղից և կմկմալով ասեց.

— Որդի, ասածներիցդ ոչինչ չեմ հասկանում... պարզ խոսիր, եղածը պատմիր ինձ, ցավերդ ասա ինձ...

Ծերունին լռեց, պահ մի առաջնորդին նայեց, սրբեց արտասուքը, ստացավ մի հուսահատ լրջություն և ասեց.

— Ուզում ես իմանալ, սրբազան... շատ լավ, ուրեմն լսիր

. . . . . .

Մեր տուն մտավ մի օր մի թուրք ենիչերի, կերավ, խմեց, հետո եղբորս կնոջն ուզեց... եղբայրս էլ չդիմացավ իր կնոջ ճիչերին, զարկավ, սպանեց ենիչերիին և ինքն էլ խենթեցավ... այս է բոլորը... սրբազան, մի մարդ սպանվեց մեր տան մեջ, մի խեղճ, շատ խեղճ ենիչերի... այս է թուրք ենիչերիի պատմությունը... Այժմ լսիր, ես քեզ կպատմեմ մի ուրիշ ավելի սոսկալի, ավելի կատաղի արարածի մասին, որ մի հայ է, սրբազան, մի քահանա է, սրբազան, մի քահանա, լսո՞ւմ ես, մի քահանա։

Եվ նա այնպես որոտում էր կատաղությամբ, որ նրա աչքերը կարծես պատրաստ էին դուրս թռչելու ակնակապիչներից. նրա քամակն ուղղվել էր, նրա գունաթափ դեմքը կապտել և նրա շրթունքները ամառային տերևի պես դողդողում էին...

Սրբազանը վախենում էր, բայց զսպեց իրեն։

— Այո՜, մի քահանա,— մռնչեց ծերունին,— որը լսեց իմ խոստովանությունը, սրբազան, և օգուտ քաղելով դրանից, կողոպտեց ինձ ոտից մինչև գլուխ...։ Խաչատուր աղայից շինեց ինձ մուրացկան Խաչատուր և ստիպեց իմ հարսներին, իմ մորը այսօր տան մեջ անոթի անցկացնել... էգուց հարսներս պոռնկության կերթան և մայրս՝ գերեզման... խե՜ղճ ենիչերի, ի՞նչ էիր դու տեր-Մարտիրոսի առջև... թող գայիր և նրանից սովորեիր ենիչերություն...

Հանկարծ լռեց, ոտքի ելավ, առավ իր գավազանը, պահ մի լռությամբ նրա վրա հենած սրբազանին նայեց և շարունակեց.

— Սրբազան, պատմությունս իմացա՞ր... ահա ասում եմ քեզ, որ

վաղը պիտի գամ իմ հարցերիս պատասխանի համար։ Կրկնում եմ, եթե մի եկեղեցու մեջ օրենք կա, որ քահանան իրան խոստովանածը ուրիշին պատմե... ես թողնում եմ այդպիսի հավատը և գնում եմ այնպիսի հավատ ընդունելու, որ չունի խոստովանանք, որ նրա միջոցով մի ամբողջ տուն քանդե... Իսկ եթե չկա... նորեն գնում եմ ուրիշ հավատ ընդունելու...

Եվ գլուխ տալով դեպի դուռը գնաց. բայց այնտեղ հանկարծ կանգ առավ, դարձավ, նայեց սրբազանին և ասաց դառն ժպիտով.

— Հա՜, եթե ուզում ես իմանալ, թե ի՞նչ եղավ խենթացած եղբայրս, հարցրու տեր-Գրիգորին, որը այսօր թաղեց նրան...

Եվ դուրս գնաց, հանդարտ քայլերով իջավ սանդուղքներից ու մըտավ գերեզմանոց...

Երբ անցնում էր բակից, ամեն ոք լսեց, թե ինչպես այդ ծերունին գոռաց կատաղի ձայնով.

— Թե կա, կուրանամ, թե չկա —նորեն կուրանամ։

Եվ մի դառն քրքիջ արձակելով մտավ գերեզմանատուն...

Այն միջոցին, երբ ծերունին դուրս էր գնում, սրբազանի մոտ մըտավ տեր-Մարտիրոսը, մի քսակ ձեռքը բռնած։

— Համարձակ,— ասեց նրա ականջին սրբազանի ծառան, համարձակ եղիր և տուր ոսկիները, թե չէ բանդ բուրդ է։

Սրբազանը դեռևս գտնվում էր մի տեսակ ապշության մեջ։

Այդ ապշությունից նրան հանեց տեր-Մարտիրոսը, որը դողդողալով մոտեցավ նրան, բռնեց նրա աջը և համբուրեց։

Սրբազանը սթափեցավ։

— Ո՞վ է,— գոչեց և ապա տեսնելով տեր-Մարտիրոսին, դեմքը խոժոռելով վեր թռավ և գոչեց.

— Դո՞ւ, և դեռ համարձակվում ես...

— Ի՞նչ անեմ, սրբազան,— ասեց քահանան կեղծավոր ձայնով,— ես շատ ժամանակ է եկել եմ, բայց ինձ ներս չթողին, հարեց նա և սրբազանի մոտ դրավ տոպրակը...

— Ի՞նչ է այս,— հարցրեց խստությամբ սրբազանը։

— Ձեր խոնարհ որդուց մի 500 ոսկի նվեր իր սրբազանին...

Սրբազանը շոշափեց տոպրակը... նա թոթափեց իրան, և դեմքը պարզվեց։

— Իրա՞վ է, տեր-Մարտիրոս,— ասեց նա,— իրա՞վ է, որ դու այդ խեղճերի հետ այդպես ես վարվել...

— Ի՞նչ մեղքս պահեմ, սրբազան,— ասեց քահանան հանցավորի ձայնով,— որդիներս հաց էին ուզում...

— Խոստովանանքը որի՞ն ես հայտնել...

— Ծ՞ս, սրբազան, քավչիցի, ես հարգել եմ մեր սուրբ եկեղեցու օրենքը, իմ բերնից երբեք խոստովանանքը դուրս չի ելել... կայրվեր իմ լեզուն, եթե այդպես մի բան անեի...

— Հըմ,— ծիծաղեց սրբազանը,— բավական խորամանկ ես եղել, տեր-Մարտիրոս, բայց գիտե՞ս, ծերունին վաղը պիտի գա պատասխան ստանալու... աղմուկ պիտի հանե...

— Դրա ճարը ես մտածել եմ, սրբազան. Սարգսին հրամայեք, որ երբ ծերունին գա, վոնդե և ներս չթողնե, թող ասե, թե ծերուկը խենթ է և կարող է սրբազանին վնասել...

— Լավ ասացիր,— դիտեց սրբազանը,— դրանով կազատվինք աղմուկից... և դառնալով դեպի դուռը ծառային կանչեց։

Սարգիսն իսկույն ներս վազեց։

Սրբազանը կրկնեց նրան տեր-Մարտիրոսի խոսքերը։

— Այլևս պետք չկա, սրբազան,— դիտեց ծառան։

— Ինչո՞ւ,— գոչեցին երկուսն էլ։

— Ծերուկը խենթացավ. նրան գերեզմանատունից, ուր նա կամենում էր եղբոր գերեզմանը քանդել, տուն տարին...

Երկու կրոնավորները մի խոր և ազատ շունչ առին...

— Ազատվեցանք...— ասեց տեր-Մարտիրոսը։

— Խիղճս էլ ազատվեց...— մռմռաց սրբազանը...

Է

Մի օր մի գերեզման փորեցին և Գրիգոր աղայի կնոջ, Խաչատուրի մոր դագաղը մի քանի մշակներ նրա մեջ դրին...

Ասում են, թե Սեդրակի կինն է այն նշանավոր պոռնիկը, որին Հեղլյուկ Թաղի բնակիչները քիչ մնաց քարկոծեին և, որը Պոլիս գնաց դրանից հետո...

Արդյոք տեսնող եղել է նրան Ղալաթիո պոռնկատների մեջ... Իսկ մինչև 1868 թվականը դեռևս Դ. Պոլսի ս. Փրկիչ հիվանդանոցի խենթանոցում կարելի էր տեսնել մի սպիտակ հագած ծերուկ խենթի, որն իրեն հանձնված աղբի տակառը շալակելով Հանդերձ, գոչում էր միշտ կատաղի ձայնով.

— Թե կա՛, կուրանամ, թե չկա՛— նորեն կուրանամ...

Խաչատուրն էր, որին մի օր հանկարծ հիվանդանոցը բարձրացրին, վերցնելով պատի տակից, ուր նա ընկել էր, մի քանի օրից հետո պատանքով փաթաթեցին, դրին նաշի մեջ... Չորս խենթեր շալակելով գացին վազեվազ դեպի գերեզմանատուն տարան, ուր քահանան մի քանի աղոթք կարդաց նրա վրա, և խենթերը իրենք խենթական երգերը երգելով, հողով ծածկեցին նրան...։

1889 թ.

ՇԱՀՆԱ

Ա

Բացի զինվորական, հողային, կալվածական, անասնական և այլ բոլոր տուրքերը առնելուց՝ Թուրքահայաստանում, օսմանյան կառավարությունը առնում է նաև տուրք խոտից, ցորենից և առհասարակ բոլոր այն արմտիքներից և բանջարեղենից, որոնց արտադրում կամ ժողովում է հայ գյուղացին։

Դրա համար կառավարությունը չունի հատուկ պաշտոնյաներ. մի խումբ որոշյալ գյուղերի տասանորդը աճուրդով նա ծախում է տաճիկ կամ հայ աղաների, որոնք առանց մոռանալու, որ իրենց ապրեցնողը այդ գործն է, օրենքին ականջ չեն դնում, կամայական տասանորդներ, քսանորդներ և շատ անգամ երեսնորդներ են նշանակում բերքի վրա, հունձերի ժամանակ գյուղերն են լցվում և ցորենի բեռներ ու խոտերի դեզեր են սաքում, որը հետո զուտ ոսկիի են փոխում և կազմում են իրենց վաշխառուական ապագա արհեստի սկզբնական դրամագլուխը...

Այդ տեսակ տասանորդահավաքները կոչվում են «շահնա»։

Շահնաներից շատերը՝ գնելով տերությունից այդ տուրքերը, իրենք ավելի թանկ գնով ծախում են մի ուրիշի, այդ ուրիշն էլ՝ մի ուրիշի և այդպիսով գյուղացիների տուրքերից օգտվում են շատ շատերը, որոնց համար տերությունն իսկապես պետք է մի հրապարակ շիներ, այնտեղ կախաղաններ տնկեր և կախել տար նրանց. հրապարակին էլ «շահնայական հրապարակ անունը տար, այնպես, ինչպես որ հայ գյուղացիք շահնայական ռայեաներ (հպատակներ) են անվանվում...

Շահնայական առևտրով զբաղվում են նահանգական քաղաքի մեջ բնակվող մի քանի որոշյալ աղաներ։ Գնում են, ծախում, աճուրդի դնում իրենց գնած իրավունքները և դրանից կազմում են փառավոր գումարներ, որոնց շնորհիվ նրանք օրը մինչև երեկո թափառում են սրճատներում և փողոցներում առանց մի գործի, առանց մի աշխատության...

Ով որ մտել է թուրքահայկական մի որևիցե քաղաք, նա անշուշտ

հանդիպած կլինի բազմաթիվ թուրք աղաների, որոնք սրճատնից սրճատուն են մաս գալիս և ծխելով, խաղալով, զբոսնելով են անցկացնում իրենց օրերը։ Ջիմացողին զարմանք է պատճառում այդ անգործ աղաների խումբը. հարց է ծնում, թե ինչո՞վ են ապրում նրանք, ինչո՞վ են կարողանում այդպիսի շքեղ պալատներ, կնիկներով լիքը հարեմներ, համադամներով լիքը սեղան ունենալ, ինչո՞վ են նրանք կարողանում անդադար ապրել, գնչու կանանց հրավիրել պարելու, խնջույքներ տալ, ձիեր ու կառքեր ունենալ, շքեղ կյանք վարել և, սակայն, տարվա մեջ ամեն օր միշտ անգործ և անաշխատ զբոսնել...

Բայց գիտցողը իսկույն իմանում է, որ դրանք սկզբնական-ուղղակի կառավարության հետ հարաբերության մեջ մտնող շահնաներ են, որոնցից գնում են երկրորդական շահնաները—գյուղացի աղաները և ծախում են երրորդականներին— գավառի արյուն ծծող վաշխառուներին և անդադար գյուղից գյուղ վազող արյունկզակ տաճիկներին և հայերին...

Նահանգական քաղաքների շրջականերում գտնվող գյուղերի շահնայությունը ունի յուր դժվարությունները։ Պետք է գիտենալ շողոքորթել, ժպտելով ու ժպտեցնելով կողոպտել, խորամանկությամբ գործը սկսելով՝ մեկին տասը առնել, գանգատելու արգելք լինել և ըստ ժամանակին կարողանալ սկզբնական շահնաներին կաշառել, որպեսզի ըմբոստ գյուղացոց գանգատները (որը շատ հազիվ է լինում) չհասնեն Բարձրագույն Դռան...

Հենց դրա համար է, որ քաղաքներին մոտ գտնվող գյուղերի շահնայությունը գտնվում է միայն մի քանի հայտնի անձանց ձեռքում. ոչ ոք չէ համարձակվում խլել նրանց ձեռքից այդ առևտուրը, եթե չէ կամենում յուր ամբողջ ունեցածը կորցնել։

Իսկ քաղաքից միայն 20 ժամ հեռու գտնվող գյուղերի շահնայությունը կարող է ունենալ ամեն անձ, եթե ունի փոքր-ինչ փող և ընդունակություն լզելու սկզբնական շահնաների ոտքերը։ Մի անգամ այդ գործը ձեռք ձգելուց հետո այդ տեսակ շահնան կարող է անել այն բոլորը, ինչ որ կթելադրի իրեն իր խելքը... Կողոպտել, եռապատկել տուրքերը... ընծաներ առնել, տուրքերը ժողովելու պատճառանոք անդադար գյուղերը մտնել խմբերով, խնջույքներ սարքել նրա հովասուն ծառերի տակ, գյուղացոց կանանց յուր կրքերին ծառայեցնել և ապա ծիծաղել գյուղացոց արած անօգուտ գանգատների և բողոքների վրա...

Հայ գյուղացին շատ լավ է ճանաչում այդպիսի շահնաների, գիտե, որ անօգուտ գանգատը շահնայի կատաղությունը և թշնամությունը գրգռելու միայն ընդունակ են, գիտե, որ յուր ձայնը ոչ միայն փաշային և Բարձրագույն Դռան, այլև տուրքերի մի հասարակ պաշտոնեի ականջին

անգամ չի հասնի, գիտե, որ դատապարտված է կողոպտվելու, անպատվվելու, ունեցածը տալու...

Եվ նա ստիպված է շահնայի ոտքերի տակ սողալ, յուր ամոթխած կնոջը նրա առջևը պարել տալ, նրա հետ գյուղը թափած տաճիկ պարապորդների և պոռնիկների առջև գլուխ ծռել ու կերակրել... Ստիպված է համբերել, երբ շահնան յուր կամեցած տուրքը նշանակում-առնում է, նրա տան մեջ ուտում-խմում, օրերով մնում է և ընծաներ առնելուց հետո մի կեղտոտ հայհոյանքով և նրա խեղճ դրության վրա ծիծաղելով է վարձատրում... զվարճանում է նրա չարչարանքներով, գոհացնում է յուր հետի պոռնիկներին և բեռներ կապած՝ հեռանում է գյուղից...

Հայ գյուղացին կրում է այս բոլորը, որը դեռևս կազմում է իրեն հասնող բազմազան թշվառությունների միայն մի մասը...

Այդպիսի շահնաներից էր նաև Հյուսեյն էֆենդին, որ յուր ձեռքի տակն ուներ ամբողջ Խնուս գավառի հայաբնակ Քաղքիկ, Աղջամերք, Մարուֆ, Բուռնազ և Յահյա գյուղերի տասանորդները թե՛ արմտի՝ թե և թե՛ «կորնգեան» կոչվող խոտից։

Հյուսեյն էֆենդին բնակվում էր Խնուսի մեջ։

Բ

Բերդաքաղաքի միջից անցնող Արածանի գետափին էր գտնվում Հյուսեյն էֆենդիի երկհարկ բնակարանը։

Գայմագամն անգամ բարեկամ էր նրա հետ, որովհետև Հյուսեյն էֆենդին Կարինի նշանավոր շահնա Մահմուդ աղայի պաշտպանյալն էր. Մահմուդ աղան էլ՝ Մուստաֆա փաշայինը և սա էլ՝ եպարքոս Սայիդ փաշայի։

Հյուսեյն էֆենդին ևս սիրում էր գայմագամին, որովհետև երկուսն էլ երիտասարդներ էին և համարյա թե ամեն երեկո տների մեջ մեծամեծ խնջույքներ էին սարքում ի ձայն գնչու կանանց «սրնգի և թմբկի»... ամեն երեկո գավառի միջից իրենց մոտ պարել տալու էին հավաքում թուրք պոռնիկներին, միասին էին առևանգում մի որևիցե հայ աղջիկ և Հյուսեյն էֆենդին շատ անգամ ինքը գայմագամին շաբաթական քեֆերի տեղ և առիթ էր մատակարարում հայ գյուղերի մեջ։

Դեռ քսանևհինգ տարեկան էր. բավական առողջ կազմվածքով, սպիտակ դեմքով, սև խոժոռ աչքերով և ավելի հայկական, քան թե թրքական մի խոշոր քթով։ Հագնում էր երկնագույն մահուդից մի լայն շալվար, մեջքին ուներ փաթաթած թիրմայի շալից մի լայն գոտի ևս, որի մեջ ցցված ուներ արծաթյա կոթով կեռ դաշույնը. գոտիից վեր փողփողում էր

նրա ոսկեթելով ասեղնագործած թավշյա բոճկոնը և այդ բոլորի վրա նա կրում էր երկնագույն մահուդից լայն վերարկու։ Գլխին կրում էր երկայն ֆես, որի վրա փաթաթել էր երկու հատ մետաքսյա թաշկինակներ։

Հյուսեյն էֆենդին սիրում էր լավ հագնվել և այնպես կեղտոտ ու ժլատ չէր, ինչպես էին Խնուսի յուր մյուս պաշտոնակիցները։

Կարծեմ սրանից չորս տարի առաջ, մի ամառնավերջի օր էր, երբ Խնուսի փոստան եկել էր, և ծառան Հյուսեյն էֆենդիի ձեռքը տվեց Էրզրումից եկած մի նամակ։

Շահնան (ինչպես վայել է կոչել նրան) դեռ նոր զարթնած յուր լիթե գիշերազգեստով նստած սուրճ էր խմում, երբ նամակը ստացավ, ուստի և առանց բանալու կողքին դրեց, եկող ծառային հրամայեց մի ժամից հետո ձին թամբել և առանց շտապելու, մեծ շառաչյուն գործելով՝ շարունակեց թանձր սուրճի խմելը։

— Մահմուդ աղայից կլինի,— մռմռաց նա խորամանկ ժպիտով, երևի մի քանի ուրիշ գյուղեր ևս ունի ծախելու...

Եվ փակեց Ղուրանը, որ բաց դրված էր մյուս կողքին։

Երբ գավաթի մեջ մնացորդ թանձր սուրճը միայն մնաց, Հյուսեյն էֆենդին նամակը ծանրությամբ բաց արեց և կարդաց։

Մահմուդ աղան էր գրողը։ Գրում էր, որ Էրզրումը հետզհետե ձանձրալի էր լինում իրեն, որ կամենում էր փոքր-ինչ գավառական քաղաքներում և գյուղերում պտույտ գործել, խնդրում էր, որ Հյուսեյն էֆենդին իրեն համար քեֆի տեղ որոշեր, որպեսզի գոնե մի շաբաթ կարողանար փոքր-ինչ զվարճանալ Խնուսի ծառաղարդ և խոտավետ գյուղերից մեկում։

«Սիրելիդ իմ,— ավելացնում էր Մահմուդ աղան,— ես հետս բերում եմ Էրզրումի քանոն ածող Հաջիին, նույնպես և քլարինեթ ածող և լավ երգող Աղաբաբին, իսկ դու այդտեղ ունեցիր գնչու կանայք, որպեսզի ամեն ինչ կատարյալ լինի. իհարկե, չես մոռանա նաև մի քանի հատ լավ կանայք ունենալ... Մի խոսքով, օղին և գինին և քեֆը անպակաս լինի, որովհետև հետս ունիմ նաև Պոլսից նոր եկած բարեկամներից մեկը...»։

— Հ՛ըմ,— ժպտեց Հյուսեյն էֆենդին նամակը փակելով,— Մահմուդ աղան զվարճանալ է ուզում... Նայե՛նք, աստված տա, որ թանկ չնստի իրեն իր քաշելիք քեֆը...

Փոքր-ինչ ծխելով մտածեց, հետո դանդաղությամբ հագավ հագուստը և դուրս գնաց բակը, ուր ծառան սանձից բռնած առաջ բերեց մի նժույգ։

— Ո՞վ պիտի գա հետս,— հարցրեց Հյուսեյնը ձի հեծնելով։

— Մուստաֆա չավուշը, էֆենդի՛...

— Պատրաստ է։

— Դրսումը սպասում է ձերդ բարձրության (ղաթը ալինիզե)։

Էֆենդին շարժեց սանձը, դուրս եկավ բակից, ընկերացավ դռան մոտ սպասող մի սևադեմ ղինյալ ծառայի և արշավակի մեկնելով գոչեց.

— Մուստաֆա չավո՛ւշ։

— Հրամայիր, էֆենդի։

— Յահյա գյուղի ճանապարհը գիտե՞ս։

— Գիտեմ, էֆենդի,— պատասխանեց չավուշը, որը իր ձին մոտեցրել, ոտքերը ետևից արշավում էր, պահելով մի պատկառելի հեռավորություն։

— Գիտե՞ս ինչ կա, Մուստաֆա չավուշ,— ասաց էֆենդին առանց գլուխը դարձնելու և շարունակելով արշավել,— Էրզրումից մի քանի լավ բարեկամներս ինձ մոտ հյուր են գալիս. պիտի նրանց համար լավ քեֆ և քեֆի տեղ պատրաստել։

— Հրամանք ես, էֆենդի։

— Լա՛վ... ի՞նչ ես կարծում, Յահյա գյուղը հարմար չէ՞։

— Այդ 28 տնով գյո՞ւղը։

— Այո՛, քեհյայի պարտեզի մեջ, եկեղեցու կողքին։

— Հը՛մ... հյուրերդ չձանձրանան։

— Ինչո՞ւ կձանձրանան... օղին և գինին շատ կլինի, գնչու կանայք էլ դու կպատրաստես, հասկացա՞ր։

— Հրամանք ես, էֆենդի։

— Ածողներ պետք չեն, բարեկամներս իրենք բերում են, իսկ դու չմոռանաս քաղաքից բերել ամեն պարագաները։

— Հաց և մի՞ս էլ։

— Հիմար ես, չավո՛ւշ,— ծիծաղեց էֆենդին,— 28 տուն չէ՞ կայ, որ մի քանի հոգու համար մի շաբաթ հաց և միս մատակարարել։

— Իրավունք ունիս, էֆենդի, ես հիմար եմ...

Էֆենդին լռությամբ պահ մի ևս արշավեց և ապա նորեն խոսեց.

— Մուստաֆա չավո՛ւշ։

— Հրամայիր, էֆենդի։

— Գիտե՞ս, որ կալերի ժամանակն է։

— Գիտեմ, էֆենդի։

— Ուրեմն Ալիին, Օմարին, Ֆերրաջին և Հասանին գյուղերը կուղարկես, որ հսկեն գյուղացոց վրա... Շատ անհավատ (քաֆիր) են այդ հայերը, եթե հսկող չլինի, ցորենի կեսը կգողանան...

— Ճիշտ է, էֆենդի։

— Կասես նրանց, որ շատ աղմուկ չհանեն. իսկ դու մի քանի ուրիշ

ծառաներ հետդ առած՝ մի երկու հատ վրան կկանգնեցնես Յահյա գյուղի քեհյայի պարտիզում. լսեցի՞ր։

— Լսեցի, էֆենդի։

Հյուսեյն էֆենդին և ծառան քաղաքից ելած, մի նեղ ճանապարհով արշավում էին։

— Այժմ մենք Քաղքիկ ենք գնում... այնտեղ է մեր ցորենից շատը... այս տարի այնտեղի բերքը ինչպե՞ս է։

— Շատ լավ է, էֆենդի։

— Ավելի լավ, բայց պետք է իմ երթալս, որովհետև այդ գյուղացիք շատ գող են, շատ էլ դոդոգացող, հետո, երբ արդյունք քիչ լինի, գուցե Օմարին ոչինչ չտան... քեհյայի տունը երթանք։

— Հրամանք ես, էֆենդի։

Էֆենդին մի շինված պապիրոս հանեց արծաթյա տուփի միջից և՝

— Կրակ տո՛ւր,— ասաց ծառային։

Ծառան կայծքարով վառեց աբեթը՝ տալով էֆենդիին՝

— Էֆենդի,— ասաց լրբենի մի ժպիտ դեմքին,— եթե ձերդ բարձրությունը կամենա... հը՛մ... քաղաքում մի գյավուր կին կա...

— Իրա՞վ,— ժպտեց էֆենդին,— ո՞րն է, որ ես չգիտեմ։

— Նոր է եկել, էֆենդի, առաջ Էրզրում էր։

— Գեղեցի՞կ է։

— Շատ գեղեցիկ։

— Ինչպե՞ս է եղել, որ նա եկել է Խնուս։

— Երկար պատմություն է, էֆենդի։

— Կարճ պատմիր։

— Ա՛յ, այսպես է եղել, էֆենդի. սրանից տասը տարի առաջ, դեռևս Ալմաստը մի սիրուն աղջիկ էր, բայց մի օր նրանց տունը իջավ մի պոլսեցի հայ փաստաբան, վեց ամիս այնտեղ բնակվելու միջոցին խաբեց աղջկան, թե ինքը կամենում էր նրան իրեն կին անել. իսկ երբ գոհ եղավ, թողեց Էրզրումից փախավ... Նա արդեն Կ. Պոլսում կին էլ ուներ, ու չորս էլ որդի...

— Այ քեզ ծիծաղելի բան,— ծիծաղեց էֆենդին,— հետո՞։

— Ամենքը իմացան այդ դեպքը, էֆենդի, որովհետև Ալմաստը աշխարհք բերեց մի սիրուն աղջիկ... այնուհետև, իհարկե, ոչ ոք չուզեց նրան առնել... մայրն էր դայակ է, ամեն կող ման է գալիս։ Ալմաստը իբր աղախին մտավ անգլիացոց ամուրի հյուպատոսի մոտ։ Դեռևս երեք ամիս առաջ նրա սենյակի լուսամուտից ցածում հավաքվող ժողովրդյան էր լայում, որ եկել էր կոնսուլի աճուրդի դրված իրեղենները գնելու... մեկն էլ գնեց Ալմաստին. կոնսուլի ծառան էր այդ... գնեց և այժմ բանեցնում է. ասում են, բավական փող է շահում այդ ծերունին... այժմ Խնուս են...

— Ա՛յ լավ բան,— ծիծաղեց էֆենդին,— անպատճառ այդ ծերունին հայ է։

— Հրամանք ես, էֆենդի։

— Գիտեի,— ժպտեց էֆենդին,— մյուսուլմանը այդպես բան չի անի։ Գյավուրները միայն գիտեն այդպիսի բաներով առևտուր անել... լմռանաս այդ Ալմաստին, բայց ծերունին թող աչքիս չերևա...

— Անհոդ կաց, էֆենդի... իսկ պզտիկ աղջի՞կը։

— Շա՞տ փոքր է։

— Ինը տարեկան է։

— Է՛հ, դեռ փոքր է, մի երկու տարուց հետո...

Պահ մի լռությամբ արշավեցին։ Ձավուշը ետ քաշվել ծխում էր, իսկ էֆենդին յուր երկու կողքում փռվող արտերն էր դիտում։

Գ

Խնուս գավառի հարավային մասի կարևոր գյուղերից մեկն էր Քաղքիկ գյուղը, շինված ապառաժների միջավայրում— բնության վայրենությունների մեջտեղը, կողքին ունենալով Ս. Դանիել գետակը, որը ոռոգում էր Ախրզեման դրախտանման ընդարձակ մարգագետինը, բարեբեր դաշտերը և հաճախ հորդելով, շատ անգամ լրացնում է շահնաների կատարած անգթությունները՝ սրբելով և յուր հետը տանելով կալերի կեսը...

Բայց դաշտերը այնչափ ընդարձակ, այնչափ արգավանդ են, որ գյուղացիք շատ տարի չգիտեին ինչ անել իրենց ցորենը... Տալիս էին շահնային տասնապատիկ, մի կողմ էին գնում իրենց ձմեռվա պաշարը, աշնանային և գարնանային սերմացուն, իսկ մնացյալը բեռներ կազմած՝ քաղաք էին իջեցնում ծախելու, տալիս էին տուրքերը, տալիս էին մասնավոր պարտքերը... Ունենում էին նրանք այդչափ բերք, մանավանդ այդ տարին, որովհետև մինչև իրենց սահմանն այլևս մի թիզ անմշակ չէին թողել— մինչև իսկ ցանել էին Ախրզեման մարգագետնի մի մասը, պոկելով այնտեղի այլազան անուշահոտ ծաղիկները և աչք առնելով կրելու Հյուսեյն էֆենդիի հայհոյանքները, որովհետև այդ էֆենդին սիրում էր մարգագետինը, նրա միջի ծաղիկների հոտը և համարյա սեփականացրել էր նրա միջից արտադրված խոտը և բանջարները...

Այս տարի քաղքիկցիք ունեցան շատ առատ բերք. հնձեցին, կալսեցին, ցորենը դիզեցին, հարդը ժողովեցին և ուրախությամբ սպասում

էին շահնային, որ գար ցորենի տասանորդը առներ և թողներ իրենց մնացյալ բերքը մեծ քանակությամբ քաղաք տանել։

Առաջին երեք օրում գյուղացիք ուրախ էին. նստան հաշիվ տեսան, որ կունենան ավելորդ փող իրենց ընտանիքի համար հագուստ գնելու համար և իջան քաղաք, նրանցից յուրաքանչյուրը գտավ յուր ծանոթ վաճառականը, պատմեց նրան յուր հողի առատ բերքի մասին, գնեց հագուստ և խոստացավ փողը վճարել տասն օրից հետո։

Որովհետև ամենաշատը տասն օրից հետո շահնան կգար, յուր տասանորդը կառներ և թույլ կտար գյուղացիներին իրենց բերքը քաղաք տանելու, հոգ անգամ չէին անում, երբ տեսան, որ շահնայի ծառան մի փայտե դաշ (կնիք) ձեռքին եկավ, դիզել տվավ ցորենը և հարդը և ամեն կողմից դաշեց (կնքեց)։

Անցավ մի շաբաթ, շահնայի ծառան թեև գյուղի քեհյայի տանը ընկած ուտում-խմում էր, բայց դեռևս ոչ շահնայական մասն էր վերցնում և ոչ էլ թույլ էր տալիս դեզերը շարժելու։

— Օմար չավուշ,— ասում էին գյուղացիք,— ախր ժամանակն է ցորենը ժողովելու... Աստված մի արասցե, եթե անձրև դա, մենք էլ, աղան էլ կվնասվենք...

— Ես ի՞նչ անեմ,— պատասխանում էր ծառան,— աղային պիտի սպասենք, այդպես է հրամանը...

Գյուղացիք կարեցին իրենց ապառիկ հագուստները, հագան (գուցե շուտով էլ մաշեցին), պարեցին, երգեցին, ամեն անգամ, երբ խոշոր դեզերի շուրջը պար բռնեցին՝ շնորհակալ եղան աստուծուց և համբերությամբ սպասեցին շահնային։

Չէ՞ որ անպատճառ պիտի գար աղան. ոչ ոք կասկած չէր տանում։

— Երևի աղան զբաղված է,— ասում էին մի քանիսը։

— Երևի էրզրում է գնացել,— ասում էին ուրիշները։

— Երևի հիվանդ է,— ասում էր քահանան։

— Զբոսնում է,— ժպտում էր վարժապետը։

Ճշտությունն այն էր, որ Հյուսեյն էֆենդիի բարեկամները նվագածուներով հանդերձ էրզրումից ելել իջել էին Յահյա գյուղի վրանների առակը և լեռները թնդացնել էին տալիս Աղաբաբի քլարինեթով և իրենց ազմուկներով։

Քանոնչի Հաջին ածում էր մեղկ եղանակներ, թուրք կանայք և Ալմաստը պար էին բռնել եկեղեցու կողքի այդ շքեղ պարտիզի մեջ. Աղաբաբը կլկլացնում էր յուր նշանավոր «աղամ-աղամ»-ով սկսող և Ուֆֆա կոչվող եղանակը, Մահմուդ աղան թիկն տված բարձերի վրա, շրջապատված ներգիլեի ծուխով, ձեռքում թանձր սուրճը, գտնվում էր մի տեսակ

պագշոտ արբեցության մեջ. պոլսեցի էֆենդին տաքացած՝ «շարքի»-ներ էր երգում յուր սիրամարգի ձայնով, քանոնչի Հաջին «մելախանե» եղանակով և իր զիլ ձայնով պարտեզի պատերի մոտն էր հավաքում գյուղացիներին, որոնք պատկառանքով և գաղտագողի զվարճանում էին աղաղաղ

— Շատ դժվար է, աղա,— ասաց լրջությամբ։

— Հենց դրա համար շատ քաղցր կլինի,— ծիծաղեց աղան։

— Տեսնենք,— մոմռաց էֆենդին մտազբաղ։

— Բայց տե՛ս,— սպառնաց մատով աղան,— սիրունը պիտի լինի...

— Տեսնենք։

— Տեսնելու բան չկա,— նորեն ժպտեց աղան հուզմամբ,— այսօր պետք է գտնես... քեհյային հրամայիր...

— Վախենում եմ աղմուկ հանեն, և ձայնը փաշային հասնի։

Մահմուդ աղան ուղղվեց, նստեց, ձեռքը գրեց Հյուսեյն էֆենդիի բևին և ասաց խրոխտ ձայնով.

— Մի անգամ ընդմիշտ գիտցիր, Հյուսեյն, որ Մահմուդ աղան, եթե ցանկանա, Մուստաֆա փաշան «չէ» չի ասի...

— Գիտեմ, գիտեմ, աղա՛,— շտապեց ասել էֆենդին,— բայց...

— Ի՞նչ բայց է այդ,— դեմքը խոժոռեց աղան,— մերժո՞ւմ ես ինձ, որ այնքան լավություն եմ արել քեզ։

— Շնորհակալ եմ, աղա՛... քավ լիցի, որ մերժեմ. բայց հետո ինձ կնեղացնեն։

— Քո նեղությունդ կվարձատրեմ... կուզե՞ս, որ ամբողջ Խնուսի շահնայությունը, նույնն է թե Խնուսը, լիովին քեզ տամ...

Հյուսեյն էֆենդին ուրախությունից դողաց։

— Աղա՛,— գոչեց դողդոջուն ձայնով,— ինչո՞վ եմ արժանի։

— Կամքս կատարիր,— ասաց մեծանձնությամբ աղան,— և ամբողջ Խնուսը քոնն է...

Այդ միջոցին պոլսեցի էֆենդին, որը սեղանից ելած պարտիզից դուրս էր գնացել, մի բարձրաձայն քրքիջով ներս մտավ պարտեզը՝ քարշ տալով յուր հետ գյուղական ծերունի քահանային, որն աղաչում և արտասվում էր։

— Լռի՛ր, գյավուր փափա՛զ...— որոտաց նրա վրա էֆենդին,— խո քեզ չե՞ն մորթելու... մի գավաթ օղի խմիր և գնա։

Եվ քարշ տալով նրան՝ մոտեցրեց բազմողներին։

— Էֆենդինե՛ր,— ծիծաղեց նա,— ձեզ մի ջենեվեր եմ բերել...

Հրեց քահանային առաջ, հետո հրամայեց Աղաբաբին մի լավ պարերգ ածել և գոչեց.

— Պարի՛ր, փափա՛զ, թե լավ պարես, մի ղուրուշ և մի գավաթ օղի էլ կտամ քեզ...

— Աստծու սիրուն,— աղաչեց քահանան արտասվալից ձայնով,— խնայեք իմ հասակիս, ես պարել չգիտեմ...— և հեկեկաց։

— Զայնդ, գյավո՛ւր... սուտ ես ասում, ինչո՞ւ ձեր եկեղեցու մեջ այն մեծ շորը վրադ ձգած պար ես գալիս միշտ... դե՛հ, շո՛ւտ, պարի՛ր, ապա թե ոչ, մորուքդ ածիլել կտամ...

— Պարի՛ր, պարի՛ր, քահանա՛,— ծիծաղեց Հյուսեյն էֆենդին,— պարիր, որ փող ստանաս։

— Էֆե՛նդի, գլխիդ ղուրբան,— գոչեց քահանան, ես պար գալ չեմ իմանում...

Պոլսեցի էֆենդու համբերությունը հատավ, նա բռնեց քահանայի մորուքից, ոտքի կանգնեցրեց, հետո «ա՛յ , ա՛յսպես» գոչելով սկսեց կատաղի շրջաններ գործել տալ նրան և երբ խեղճ ծերունին ուժասպառ գետինն էր ընկնում, էֆենդիի ձեռքում թողնելով յուր մորուքի մազերից մի մեծ փունջ.

— Տեսա՞ր...— գոչեց էֆենդին մի ճիչ արձակելով դեպի նա,— այդպես կպարեն, ախմախ... դե՛հ, վեր կաց, այս գավաթը դատարկիր և կորսվիր այստեղից...

Եվ այս ասելով, տվեց նրան մի գավաթ մաստիկա...

Դ

Հյուսեյն էֆենդիի խնջույքը, որը տևեց ամբողջ տասն օր, վերջացավ։ Քանոնչի Հաջին, քլարինեթ ածող Աղաբաբը, որոնք երկուսն էլ հայեր էին, լավ ընծաներ ստանալով՝ էրզրում մեկնեցան, Մահմուդ աղան մեծամեծ խոստումներ անելով Հյուսեյն էֆենդիին, չնայելով յահյացոց գործած աղմուկին, գյուղը թողեց իրեն մի գիշեր զվարճացնող «գյավուր աղջիկը» և հեռացավ, խոստանալով մյուս տարի նորից գալ այդ կողմերը։

Հյուսեյն էֆենդին շատ ուրախ տրամադրության մեջ էր գտնվում, սակայն մի քանի օր հանգիստ առավ և ապա թե մտածեց Քաղքիկ գնալ՝ տասանորդները հավաքելու։

Դեղերը կնքելուց ուղիղ մի ամիս հետո Հյուսեյն էֆենդին յուր Մուստաֆա չավուշի հետ Քաղքիկ մտավ։

Անձրևային եղանակները սկսվել էին, և գյուղացիք, որոնք արդեն սկսել էին տխրել և վախենալ, թե ահա Խնուսի սովորական հեղեղման անձրևները և գյուղի կողքի ս. Դանիել գետակը ամեն ինչ մի քանի ժամվա մեջ կոչնչացնեն, քիչ հույս առան, երբ շահնան եկավ։ Իրար անցան, քեհյայի սենյակը պատրաստեցին և ուրախանում էին, որ շուտով պիտի կարողանային իրենց բերքը կալերից վերցնել։

Հյուսեյն ֆենդին քեհյային հրամայեց, որ սայլերը և ձի կամ եզ պատրաստեն. հետո չափեց, մի կողմ դարսել տվավ յուր մասը և ամբողջ գյուղի

մեջ որքան սայլ, ձի, եզ կամ էշ կար՝ բեռնելով, իր չավուշի հետ քաղաք ուղարկեց։

Գյուղացիք սպասում էին, որպեսզի իրենց սայլերը և տավարները վերադառնան, ուստի և իսկույն իրենց տոպրակների ծակերը կարեցին և գիշերը հանգիստ քնեցին։ Մյուս առավոտ տոպրակները կլցնեին ցորենով։

Կես-գիշեր էր արդեն, երբ հանկարծ մի աղմուկ բարձրացավ գյուղում. ամենքը դուրս թափվեցին. լաց, կոծ տիրեց ամեն կողմ, գյուղացիք իրենց կորցրել էին։

Երկինքը սև ամպերով ծածկվել, որոտում էր, անձրևի մի հեղեղ ծեծում էր և լցնում կալերը, իսկ ս. Դանիել գետակը բարձրացել՝ դեպի կալերն էր գալիս...

Ցորենի դեզերը հետզհետե ցածանում էին և հացահատիկներ ու հարդ խառն՝ լողում էին կալերի մեջ կազմված լճակների երեսին...

Հուսահատություն տիրեց ամենքին, թիակներ բերին, տոպրակները լցնել աշխատեցին... Եվ գետը շոշափում էր դեզերը...

Հյուսեյն էֆենդին հանգիստ քնել էր քեհյայի սենյակում...

Երբ լուսացավ, գետը արդեն ծածկել էր կալերը։ Գյուղացիք ձեռները ծոցերին շրջապատել էին մռնչող գետակը... ոմանք իրենց մազերն էին փետում. մյուսները չոքել աղոթում էին արտասվալից, և տղամարդիկ տխրությամբ դիտում էին գետի երեսին լողացող հացահատիկները և խոտի խուրձերը, որոնց տակից ջուրը հազիվ էր երևում...

Եվ տղայք կիսամերկ ճչում և շներն անգամ միաձայն այնպես ոռնում էին, որ սարսուռ էր ազդում...

Հյուսեյն էֆենդին այդ բոլորը տեսնելով՝ իսկույն ձի նստավ և քանի կարող էր շտապով հեռացավ գյուղից։

Իսկ երբ սայլերը և տավարները վերադարձան, գյուղացիք բեռնելու այլևս ոչինչ չունեին...

Ուտելու պաշար իսկ շատերին չէր մնացել, և եթե այդ դրությունը շարունակվեր, եղած տավարներն էլ կսատկեին ձմեռը, որովհետև գետը խոտերի դեզերից շատերն էլ տարել էր...

* * *

Մյուս տարի եթե մտնեիք Քաղքիկ, նրա հարյուր տան փոխարեն միայն 43-ը կգտնեիք ողջ... մյուսների ավերակների մեջ թափառում են ցերեկը շները, իսկ գիշերը՝ բուերը...

Իսկ իրենք՝ քաղքիկցիք, պանդխտության գավազանը ձեռք առել՝ Կ. Պոլիս էին անցել...

«ՄՇԱԿ-ԱՂԱ»

(Հիշողություններ Թուրքահայաստանից)

Քյոփրի-քյոյի մեջ քարավանը կանգ առավ. մալականները արձակեցին ֆուրգոնի ձիերը[1]. ես, ճանապարհին մոտ գտնվող այդ սրճատան առջևում, բաց օդի մեջ կարպետս պարզեցի և խնդրեցի, որ ինձ թեյ տան։

Քյոփրի-քյոյը գտնվում է Հասան-Ղալայից մի քանի ժամ հեռու, մի սիրուն ձորակի մեջ. իսկ Հասան-Ղալան, ինչպես գիտեք, Թուրքահայաստանի Բասեն գավառումն է, Էրզրումից վեց ժամ հեռավորությամբ։

Թեյից հետո բարձին կոթնեցի և ծոցիցս հանեցի առաջին հանդիպած թուղթը՝ նրանով փոքր-ինչ ժամանակ անցկացնելու համար։

Այդ թուղթը «Մշակ» լրագրի մի հին համարն էր. բացի և նորեն կարդում էի քսան անգամ կարդացածներս։

Նկատելով իմ մորուքը, կանոնավոր հագուստս, սրճատան կողքին գտնվող դարբնոցում նստած վեց գյուղացիք հետզհետե մոտեցան, կարպետից դուրս կանգնած մի քանի բոպե լռությամբ դիտեցին ինձ, և վերջապես նրանցից մեկը վախկոտությամբ հարցրեց։

— Հրամանքդ, էրզրումցի՞ ես, տիրացու։

Վեր նայեցի, խոսողը մի բավական կոկիկ հագնված միջահասակ անձ էր, թավ կլոր մորուքով և բասենցու հագուստով։

— Այո,— ավելի լավ համարեցի ես այդպես պատասխանել։

— Ռուսե՞թ կերթաս կը։

— Այո՛...

Եվ շարունակեցի կարդալ։ Գյուղացին շարուխը հանեց կարպետից դուրս, ներս եկավ և ծնկան վրա չոքեց մի քայլ ինձանից հեռու, նրա օրինակին հետևեցին և մյուսները. այլևս ավելորդ համարելով կարդալս, նստեցի և կամենալով գյուղացիների հետ փոքր-ինչ խոսել, թերթն ոչնչեցի ծալել։

— Ատիկ ռուգնամե՞[2] է, տիրացու,— հարցրեց գյուղացին հետաքրքրությամբ։

— Այո... իսկ դու կարդալ գիտե՞ս։

— Հայ-հո՛յ...— գոչեց մի ուրիշը,— մեր տիրացուն է, Աստվածաշունչը ջրի պես կարդա կը...

— Հայերեն է, կուզե՞ս կարդալ,— հարցրի տիրացվին։

---

1 Երբեմն Կարսից մալականները ֆուրգոնը բերում են Էրզրում. ճանապարհ կա։

2 Լրագիր. տանկերեն բառ է։

— Աշեմ,— ասաց նա,— կարմրեց և թերթը ձեռք առավ, պահ մի նրա գլխին երևեցող սև տառերով «Մշակ» բառը հեգեց, հետո հանկարծ մի աղաղակ արձակեց և բոթելով իր մոտ նստող գյուղացու կողքը՝ գոչեց.

— Աշե, քավոր Սարգիս, աշե, ասիկ ալ անկից է, աշե, «Մշակ» է գրած...

— Հա՜, տո,— գոչեցին բոլորը և միմյանց մոտ սեղմվեցան։— Մշակ-աղայի գրա՞ծն է ատիկ...

Ես զարմացա. այդ գյուղացիք որտեղի՞ց գիտեին «Մշակը»։

— Ջանիդ ղուրբան, տիրացու,— գոչեց գյուղացիներից մեկը,— ասիկ Մշակ-աղա՞ն է տվեր քեզի։

— Հատ մ'ալ Մկլոն ունի, անոր Մշակ-աղան է տվեր,— ասաց մի ուրիշը,— ո՞ւր է, Մկլո, հանե սա հայու բուզնամեն... անանկ ոնդիկ-ոնդիկ[1] բաներ կան մեջն օր[2]։

Մկլոն ծանրությամբ ձեռքը ծոցը կոխեց, հանեց այնտեղից մի կարմիր կապոց, բաց արավ և պատկառանոք ինձ պարզեց մի չորս ծալած, 79 թվականի դեղնած «Մշակ»։

— Կարդա՛, տիրացո՛ւ,— խոսեց նա լուրջ դեմքով,— Մշակ-աղան է տվեր ինձի... քեզի ալ ան է տվեր ա՛...

— Արծրունի՞ն է տվեր քեզ.

— Արծրունի՞ ով է. Մշակ-աղա, ըսի. կարճ բոյով, սանկ երկար մորուքով մարդ է, աչքերուն գյոզլյուկ... սանկ խոշոր-խոշոր աչքեր... ես անոր ղուրբա՞ն...

— Գրիգոր Արծրունին է այդ.

— «Չէ» ըսի ա՞... Մշակ-աղան է կըսեմ... այ, պատմեմ լսե՞, տիրացո՛ւ...

— Պատմիր. ե՞րբ էր այդ.

— Ռուսի երթալեն ետքը... ռուսը երթալեն ետքը, աս անիրավը ալ զուլում[3] չթողուց, որ չթափեր մեր գլխուն. կըսեին «դուք բերիք Մոսկոֆին» ու կըթալնեին, կսպանեին, կվառեին, կըփախցունեին... ո՞ր մեկն ասեմ... մեր գյուղն ալ եկան, մի՞տդ է, քավոր Սարգիս, չէ՞ որ քու դեզերն ալ կրակի տվին... էհ... օրվա հացի կարոտ մնացինք, ալ ո՛չ արտ, ոչ անասուն, ա՛լ մայր, հայր, կնիկ յա զավակ չէր մնացեր...

Նա ձեռքի կարմիր թաշկինակով սրբեց թրջվող աչքերը։

— Հա՛...— շարունակեց փոքր-ինչ հետո,— ելա, ըսի Ռուսեթ երթամ

1 Լավ-լավ։
2 Որ։
3 Նեղություն, ուժ, բռնություն։

աշխատելու... գացինք Թիֆլիզ, ի՞նչ երկնցնեմ, հալալ հաց մը չկերա, կուշտ մը քուն չեղա. օր մը չտեսա... օ՛ր եղավ, տիրացու, որ փորս անոթի, ես ալ հիվանդ ընկած էի... Աստված խղճաց ինձի, քիչ մը աղեկցա, ոտքի ելա... ըսին Մշակ-աղային գնա... գացի. ղուրբան ըլլամ ես անոր, ինձի փարա տվավ, ինձի... Աստված տվավ որ ողջ հասա. շինդիլիք[1] աղեկ ենք... Աստված Մշակ-աղան իր մուրազին հասցնե...

— Է,— հարցրի ես,— այդ թերթը ի՞նչ օգուտ տվավ քեզ, ինչո՞ւ ես պահել։

— Ասի՞կ... կարդամ կը, անանկ ոնդիկ-ոնդիկ բաներ կան մեջն օր... մեզ վրա խոսի կը, մեզի սիրտ կուտա կը... մեռնիմ ես ասոր սըրտին... Բասենի մեջ ո՞վ չի ճանչնար Մշակ-աղային։

— Իսկ ուրիշ լրագիրներ էլ տեսե՞լ եք.

— Թուրքերե՞ն։

— Ոչ, հայերեն։

— Ըշտե ասիկ ի՞նչ է, ասիկ հայերեն չէ՞...

— Բայց չէ՞ որ ուրիշ հայերեն թերթեր էլ կան։

— Հա՞,— գոչեցին բոլորը զարմացած,— մենք գիտեինք, թե ասիկ է հայու բուզնամեն.

— Ադամ[2]...— գոչեց մեկը մյուս կողմից,— տիրացուն հանաք կընե կը... Մշակ աղային դայրի[3] ալ ի՞նչ պիտի ըլլա...

Ես նրանց հետ փոքր-ինչ սկսեցի խոսել «Մշակի» մասին, հետո հանեցի պայուսակիցս պատկերների ալբոմս և ցույց տվի նրանց Գրիգոր Արծրունու պատկերը, բոլորը շրջապատեցին ինձ, այժմ շուրջ քսան հոգի էին, մինչև իսկ դարբինն իր գործը թողել՝ մոտեցել էր Մշակ աղայի պատկերը տեսնելու։

— Հա՛...— ըշտե ասիկ է Մշակ-աղան,— գոչեց հուզմամբ գյուղացին, հափշտակեց պատկերը, նայեց, երկար նայեց և զգուշությամբ ետ տալով ինձ, ասաց.

— Ըշտե ադիկ է որ կա...

— Տո՛,— գոչեց դարբինը գլուխը մի գյուղացիի թևի տակից ներս մտցնելով,— ատիկ սրբազանի նմանի կը...

— Հապա՞,— գոռաց տիրացուն,— ես լսել եմ, Հայրիկի աղբոր մանչն է...

1 Առայժմ։
2 Մարդ։
3 Բացի։

— Ի՞նչ կըսես, տո,— մեջ մտավ մի ուրիշը,— ասիկ սրբազան է... աշե, ինչ մորուք ունի, ինչ աչքեր...

— Կըսես խոսի կը,— ասաց չորրորդը։

Էս պատկերը երկար ժամանակ ձեռքե-ձեռք պտտեց, հետո ինձանից խնդրեցին թույլ տալ, որ տանեն գյուղը։

— Մեկ սհաթից ետ դարձնենք կը,— աղաչեց գյուղացին։

— Լավ,— ասացի,— տարեք, բայց չփչացնեք։

— Խարա՞բ ընենք,— գոռաց նա,— որո՞ւ, Մշակ աղայի՞ պատկերը... տո, հեռու կացեք... Մկլո, ձեռքդ ետ քաշե... ոչ ոք ձեռք չտա, ես սանկ բռնեմ կը, բոլորդ աղաչեցեք...

Պատկերը մի ժամից հազիվ վերադարձրին և պիտի ասեմ, շատ մաքուր, մինչև իսկ փաթաթել էին սաղմոսի մի թերթի մեջ։

Երբ ձիերին կերակուր տվին, և փչում էր երեկոյան զով քամին, լծեցին, և մենք ճանապարհ ընկանք. ես ֆուրգոնից բավական հեռավորությամբ ոտքով գնում էի և չորս կողմից պարարտ արտերը դիտում։

Բավական տեղ քայլել էի, երբ ետևիցս մի ձայն լսվեց, որ հեռվից կանչում էր.

— Տիրացո՜ւ, հե՛յ, տիրացո՜ւ...

Կանգ առի. գյուղից դեպի ինձ էր վազում մի երիտասարդ և թևովը սրբում էր ճակատից հոսող քրտինքը։ Երբ մոտեցավ, փոքր-ինչ կանգ առավ, շունչ քաշեց և ապա՝

— Ներե, տիրացո՜ւ,— ասաց աղաչավոր ձայնով,— գյուղի մեջ ըսին, որ դուն Մշակ-աղային քովը կերթաս կը... ղուրբան քեզի, Մշակ-աղային ըսե, որ մենք շատ խեղճ ենք, մեզի շատ նեղություն կուտան, մեր հոգին հանեն կը... ղուրբան քեզի, ըսե, որ սաղ ունեցածնիս կուտանք, չենք խալըսի[1], ըսե որ, մեր հավատը կը ֆիրեն[2]... մեզի... ախ, ի՞նչ ըսեմ, տիրացու, ըսե-ինչ որ կտեսնաս...

Ես շվարել էի։

— Ըսին ինձ, որ դուն Մշակ-աղային տեսեր ես,— ավելացրեց նա հուզմամբ,— ի՞նչ կըսե Մշակ-աղան, ե՞րբ պիտի խալսինք աս նեղություններեն, ե՞րբ հալալ հաց ուտենք...

Ճշմարիտ... մինչև այժմ փնտրում եմ, թե արդյոք ի՞նչ պետք է պատասխանեմ նրան...

1890 թ.

---

1 Ազատվիլ։

2 Հայհոյում են։

ԳՐԻ՛Ր, ԱՐՅՈՒՆՈ՛Վ ԳՐԻՐ...

1

Կառքը տափարակի վրա իջել՝ գնում էր մխրճվելու ծառազարդ գյուղերի շարքի մեջ։ Խճուղին փոշոտ, բարդիներով հովանավորված, պարզվում էր այգիների միջով։ Երկու կողմում խիտ տնկած ծառեր էին, լայն առվակներ և միմյանց միացած անծայր ցանկապատեր։ Աջ ու ձախ՝ խաղողի այգիները տարածվում էին անվերջ ու անընդհատ. ո՛չ մի բաց տարածություն. ամեն կողմ թփեր, կարճլիկ դեղձիներ, ապա՝ առու և ջուր, ուռենի և բարդի, կաթնագույն կանաչ տերևներով փշատենիներ, այլև ցանկապատերից դուրս կռացած խոշոր թթենիներ։

Ցուրտ էր։ Աշնանային պաղ քամի էր փչում ձյունոտ լեռներից։ Ծառերի տերևները թրատված կարծես՝ հուսահատ պտույտներ էին գործում օդի մեջ, ապա իրար վրա ընկնում՝ դեղնած ու թոշնած։ Ամայությունն էր սկսում. ծառուլից հարթության այնքան ահռելի և տխուր ամայություն։ Արագիլների բներն արդեն դատարկ, ցնցոտիների նման, կախ էին ընկել բարդիներից. միայն ագռավներն ու ճնճղուկները մնացել թոշուններից, կռնչում էին ու ծլվլում մերկ պուրակների մեջ։

Փոշի էր սակայն, անտանելի փոշի։ Ճանապարհի վրա դիզված կար կե՛ս թզաչափ. ձիերի ոտների տակից ամպեր էին ելնում ու մեր կառքը շրջապատում։ Ո՛չ բերան կարելի էր բանալ, ո՛չ աչք։ Սպիտակո՛ւմ էինք պիսովին։

Օձիքս բարձրացրել, աչքերս գոցել, գլուխս ոզնու նման ներս էի քաշել ու տրտնջում էի.— զզվելի է այս, խայտառակ բան է...

Ճանապարհորդակիցներիցս այն, որ կողքիս էր նստել, մշեցի «խրմբապետը», գանգատս իրավացի էր գտնում, բայց անօգուտ։ Փոշու դեմը առնել չէր կարելի։ Ուր ճանապարհ կա, այնտեղ փոշի կլինի։

Գիմացս նստող գյուղացին ծիծաղում էր վրաս։

— Փոշին ի՞նչ կանի որ... հող ա, է՛լի... հողը ի՞նչ մնաս կտա։ Հոդիցը լավ բան կա՞ աշխարհումս։ Հողն ա մեզ կերակրողը. թող մի քիչ էլ բերաններս լցվի. ի՞նչ կա որ...

Ու բերանը բաց, փոշու մեջ թաղված, դեռ ծխո՛ւմ էլ էր։

Կես ժամ այդպես, փոշու ամպերի մեջ. գնում էինք, մինչև որ մոտեցանք Գետաշենին։

Գյուղի մոտ փոշին դադարեց։ Բաց դաշտ կար քիչ. ցեխ էլ էր. մի առվակ էր ճապաղվել, փոսերը լցրել և խճուղին փչացրել։

Անցանք մի հին կամուրջից, որ գողաց մեր կառքի տակ։ Ապա բամ-

բակի արտերի միջով սլացանք և, վերջապես, ջրի խշխշոցի ձայնը ավելացավ, որ միայն մի պտույտ էր մնում գյուղի ջրաղացին և գյուղին հասնելու համար։ Առաջին խանութների առաջ կառքը կանգ առավ։ Ձիերին պետք էր քիչ հանգստություն տալ։ Կես ճանապարհն արել էինք։

2

Ձիջա։

«Խմբապետն» իսկույն վար ցատկեց և խանութ մտավ։ Գյուղացին հետևեց նրան։ Դռան առաջ կանգնածներն, անշուշտ, ճանաչում էին մշեցուն։ Անցնելիս՝ բարևեցին բավական ակնածու շարժումներով։ Մի քանիսները մոտեցան, ձեռք տվին ու միացան նրան։

Թվաց ինձ, որ «խմբապետի» անցյալ գործունեության հմայքը մնացել էր դեռ այդ տեղերում։ Ինչ որ էլ լիներ, մարդը նրանց համար կռվել էր հարձակվող թուրքերի դեմ, պաշտպանել էր գյուղերը։ Փաստն այն էր, որ հարգանք էր վայելում դեռևս ու որոշ դիրք ուներ։

Մենակ մնացի կառքի մեջ։

Խանութպանը եկավ և թեյ առաջարկեց։ Մերժեցի։ Դարձա հակառակ կողմը և այգիներն ու ջրաղացը դիտել սկսեցի։

Առվակն էր նախ, մեջը փնչացող մի գոմեշ նստած, այլև լողացող բադերի մի փոքրիկ խումբ։ Մյուս եզերքին գյուղացիներ կային։ Ջրաղացը գործում էր եռանդագին։ Ել և մուտ կար այնտեղ։ Գնում-գալիս էին ալյուրոտ մարդիկ. տոպրակները դռան մոտ՝ բառնալու էին սպասում՝ ցցերի կապած մի քանի էշերի վրա։

Այգիներումն էլ շարժում կար։ Խաղողի թփերն էին հողով ծածկում՝ ձմեռվա սառնամանիքից պատսպարելու համար։

Դեպի վեր գյուղի մեծ փողոցն էր. խճուղու մի մասը, որ երկու կողմերում խանութներ ուներ և տներ։ Անցնում էին ճռնչող սայլեր, փոշի հանող եզներ, ձիավորներ... Միմյանց հետևից շարված՝ ընթանում էին խոշոր կիսասայլեր ու տանում էին իրենց վրա երերացող թաց, ծորուն տակառները։ Խաղող էին կրում դեպի քաղաք՝ կոնյակի գործարանի համար։

Ու ճանապարհի վրա փոշին սավառնում էր գորշ թանձրությամբ հեռու և ծածկում, քողավորում ամեն ինչ...

Քիչ դիտելուց հետո այդ ամենը, սկսեցի սրտնեղվել։ Վրդովվում էի, որ կառապանն ու ընկերներս հանգիստ նստել էին ներսը և ճանապարհը շարունակելու մասին դեռ չէին մտածում։

Դարձա խանութի կողմը։ Դուռը փակ էր։ Աղմկալից խոսակցության

շփոթ ձայներ էին միայն ականջիս հասնում։ Վճռեցի քիչ էլ համբերել, ապա բարկանալ և ձայն տալ։

Այդ միջոցին էր, որ կառքի ձախ կողմից մոտ եկավ ալեխառն մազերով մի գյուղացի, պատկառուն ձևերով բարևեց ինձ ու հարցրեց.

— Կառքի մեջ տեղ չի՞ լինիլ ինձ համար ևս։

Ջննեցի մարդուն։ Կնճռոտ և արևակեզ դեմքով անձ էր, համեմատաբար լավ և մաքուր հագված։ Կարճահասակ էր, մաշված, թախծոտ և զգուշավոր հայացքի տեր։

— Որտե՞ղ ես գնալու,— հարցրի։

Առաջնոց կոչված գյուղիցն էր։ Այնտեղ էր գնում։

— Միայն մի տեղ կա, բայց պետք է նախ կառապանի հետ խոսիլ։

Ժպտեց։ Եթե միայն այդ էր, ուրեմն կարող էր նստել։ Կառապանը ուրախ կլիներ. միայն թե փող տային նրան։ Պիտի տար։

Ետ քաշվեցի և թողի, որ ելներ։ Կողքիս չնստեց։ Ջանաց տեղ բռնել դիմացի նեղ նստարանի վրա։ Ջառարկեցի։ Դիտեի, որ վերջ ի վերջո այնտեղ պիտի նստեր։ Դժվա՜ր թե «խմբապետը» զիջել կամենար իր տեղը։

Տեղավորվելուց հետո հանեց ծխատուփը, գլուխը խոնարհ՝ մի գլանակ շինեց և, երբ վառում էր, հարցրեց մեղմությամբ.

— Ընկերներդ գյուղացինե՞ր են։

— Միայն մեկը։

Իսկ ե՞ս. ո՞ր գյուղի ուսուցիչն էի արդյոք։ Չէր հիշում, որ տեսած լիներ ինձ, թեև շրջակա բոլոր գյուղերին լավ ծանոթ էր։ Արդյոք նո՞ր նշանակված էի։— Վարժապետ չե՞մ ես։

Վարժապետ չէի։ Ապա ի՞նչ...

Վախեցած և հուզված ինձ նայեց։ Հետո մեկե՛ն, կարծես հասկանալով ինչ-որ խորհրդավոր մի բան, սկսեց կծկվել և ավելի՛ պատկառուն դիրք ստանալ։ Մի տեսակ երկյուղ համակեց նրան։ Այլևս չէր նայում ինձ։ Վարժապետ չէի. հաճույքի համար զբոսանքի ելնելու օրեր չէին, վաճառականի նմանություն չունեի, ո՛չ էլ պաշտոնյայի... Ուրեմն...

Կռահեցի։ Անշուշտ ինձ ներկայացուցիչ կամ նույնիսկ անդամ համարեց մի զորեղ մարմնի։ Դեմքս ու հագուստս բավակա՛ն նպաստավոր էին։ Երևի «կազմակերպության» լիազորն էի, «կոմիտետի անդամ» գուցեև, ով գիտե, ինչպիսի լուրջ հանձնարարության համար էի գնում իրենց կողմերը։ Կարող էի նույնիսկ ընդհանուր քննիչ լինել։ Ինչո՞ւ ոչ։

Ու չէ՞ր հանդգնում այլևս խոսակցության մեջ մտնել։ Կպել էր կառքի թիկունքին, կծկվում էր նեղլիկ տեղում, ուզում էր կարծես փոքրանալ, ջնջվե՛լ... ծնկները ծնկներիս կպչելու ժամանա՛կ անգամ դողում էր և

ես քաշվում։ Վա՜տ էր դրությունը։ Չգիտեր ինչ անել ապացուցանելու համար, որ մեծապես պատկառում էր իմ մեծությունից, իմ անհայտ ամենազորությունից։ Խղճալի բան էր։ Պետք էր խոսել. սիրտ տալ, համարձակություն ազդել։ Եվ, վերջապես, չէ՞ որ հասկացնել պետք էր, թե ես ո՛չ որևէ «կազմակերպության» շանթիչ առաքյալն էի, ո՛չ քննիչը և ո՛չ էլ ամենազոր ներկայացուցիչը։ Խոստովանում եմ, հաճույք զգացի փոքր-ինչ, որ ինձ այդպիսի «մեծություններ» էին վերագրում, և դիմացս սարկային գալարվող ցույցեր էին տեղի ունենում։ Ափսոսո՛ւմ էի, որ գյուղացու կարծած մարդը չէի։ Դրա համար էր, որ թողի հմայքը շարունակվեր պահ մի։

— Քաղաքի՞ցն ես գալիս, թե՞ այստեղ էիր.— հարցրի քիչ հետո։

— Ո՛չ, աղա, ա՛յստեղ էի եկել. քիչ գործեր ունեի։

— Ի՞նչ կա, չկա ձեր կողմերում։

— Ի՞նչ պիտի լինի, աղա՛, հրամանքդ մեզնից ավելի լավ գիտես եղածը։

Երկու անգամ էր, որ «աղա» էր կոչում ինձ։ Պետք էր վե՛րջ դնել դրան։ Ժամանակ էր քիչ-քիչ հասկացնել, որ իր ենթադրած մարդը չեմ։

— Աղա չեմ ես,— ասացի ժպտուն։

Գյուղացին էլ ժպտեց։ Երեսիս նայեց խոնարհ, հպատակային ակնարկով ու ասավ.— Աղան ձեզնից ինչո՞վ է ավելի։ Մեր աղան դուք եք։ Աստված անպակաս պահի։ Դուք որ չլինեք...

Ապա քիչ լռեց և ավելի մեղմ, անհամարձակ՝ հարցրեց.

— Հրամանքդ խանաբադ չե՞ս իջնելու։

— Ո՛չ,— ասացի ես,— ուղղակի խորշիդլու եմ գնում։

— Բայց ընկերդ այժմ խանաբադ է. երե՛կ եկավ այնտեղ։

— Ընկե՞րս,— զարմացա ես, ի՞նչ ընկեր։

— Լիազորը։

— Լիազո՞րը...

Եվ այլևս ստիպված եղա լիովին փարատել հմայքը, հայտնել, որ ես «կազմակերպության» մարդ չէի, ո՛չ նրանից ուղարկված և ո՛չ էլ որևէ «լիազոր» ընկեր ունեի այդ կողմերում։

Սկսեցի պարզել գյուղերը գնալու նպատակս։ Բանահավաք էի և ուսումնասիրող։ Օգտվում էի տոն օրերից և այդպիսի պտույտներ հաճախանում՝ գյուղացիների կյանքը ուսումնասիրելու համար։ Մտադիր էի քիչ ավելի խորապե՛ս, ավելի լա՛վ ծանոթանալ գյուղի հետ։ Եղած ուսումնասիրությունները ինձ չէին գոհացնում։ Պիտի ջանայի ծանոթանալ գյուղացոց ցավերի, ցանկությունների և մանավանդ նրանց հոգու և զգացմունքների հետ։ Պիտի այդ ամենը հավաքեի ու գրեի. գրեի ու հրա-

պարակեի, որպեսզի մարդիկ իմանային։ Իմանային ու խորհեին։ Ըմբռնեին, թե գյուղումն էր այն դժոխքը, որ նկարագրում են մեր ծերերն ու պառավները։ Ըմբռնեին, որ գեհենն ամբողջ՝ գյուղերումն էր։ Մազե կամուրջը, կպրե կարասը. բոլորն էլ ահա այդ ծառերի տակը. տանջող սատանաներն էլ այդտեղ էին, ու նրանց ո՛չ թիվը կար, ո՛չ համարը...

Այդ ամենը ինձ ասել տվավ գյուղացին իր հարցերով. հետախուզող, պատճառները գիտնա՛լ ցանկացող հետաքրքրությունով։

Ու երբ խոսում էի, լսում էր լարված ուշադրությամբ։ Դեմքը պարզվեց, ծառայական սիրալիրության ժպտին փոխարինեց կնճռոտ, բայց վառ հետաքրքրությունով բորբոքված արտահայտությունն։ Կռացած դեպի ինձ, անձկությունով լի համարձակ ակնարկը վրաս, լափո՛ւմ էր կարծես բերանից ելած խոսքերը։

Եվ երբեմն շուրջն էր նայում։ Լսող չկա՞ր արդյոք։ Վախենում էր։ Ամենքից և ամեն բանից վախենում, վախեցնում էր նրան նո՛ւյնիսկ «հասկացող մարդու» հագուստը... Ու ի՞նքն էլ խոսեց այնուհետև։

Այո, դժոխքը գյուղերումն էր գերազանցորե՛ն։ Դժոխքը՝ իր մազե կամուրջներով, կպրե կարասներով ու տանջող դևերի բանակներով... Թող գա՛ն, ապրին, մոտի՛ց շոշափեն այն «սրտացավ մտածողները». թող գյուղացու հետ կյանք վարեն, որպեսզի տեսնեն, զգան ու չմոռանան...

Կեղտ, տգիտություն, ծայրահեղ թշվառություն, այլև արատների անվերջ, ահավոր շարքեր, ապա կեղեքումներ և անպատմելի վշտեր— ահա գյուղերին վիճակված ու անընդհատ հաջորդող բարիքները ի վերուստ, աջից ու ձախից, ամեն կողմից, նո՛ւյնիսկ բնությունից...

Շունչ առնել չեն տալիս, ո՛չ։ Դադար է՛լ չկա։ Վաղ արշալույսից մինչև ուշ գիշեր տանջանքի ու վշտի սև ամպերն են ծանրանում գյուղի երկնքի վրա։ Գարնան սկզբից մինչև ձմեռվա վերջը աճեցուն կեղեքումներն են գյուղի, գյուղացու հասույթները, ժառանգաբար, սերունդնե՛ր մաշող և բթացնող հասույթներ...

Ու ամբողջ բանակներ են կազմված՝ գյուղի հյութը ծծելու համար։ Աշխարհն ամբողջ, կարծես խոսքը մեկ տրած, գյուղերի վրա է նետվել։ Անգղներ են, լեշ են համարում գյուղացուն, գիշատում են, բզկտում։ Ագռավներ էլ կան. սև ագռավներ. իրե՛նց բաժինն են կոցահարում։ Բայց, նախ, աչքերն են ուտում, որ գյուղացին չտեսնի։ Ու չի տեսնում գյուղացին։ Նայում է, բայց չի՛ տեսնում...

Գրի՛ր, ահա այդ ամենը գրի՛ր։ Բայց թանաքով մի՛ գրիր, այլ գյուղացու կարմիր արյունով.— տանջվող հոգու, ծվատվող սրտի բասրբ հյութովը... Արտասուք շարժելու համար չգրես։ Լա՛ց... ինչո՞ւ.... Ան-

մտություն է լացը։ Գրի՛ր, որ կատաղեցնես ամենքին. գրիր, որ զայրույթը մոնչա, ծովի ալիքի պես ելնե ու իջնե, լեռնե՛ր դղրդեցնե...

Այդպե՛ս, միայն այդպե՛ս գրիր...

3

Այս ամենը գյուղացին խոսեց ի՛ր լեզվով, իր արտահայտություններով և պատկերացումներով, կցկտուր, դողդոջ բորբոքումով։ Ու խոսելու հետ՝ մոռացվում էր դեմքը, ակոսվում ճակատը։ Պապիրոսներ էր, որ ծխում էր։ Չէ՛ր էլ նայում ինձ։ Ակնարկը երբեմն շինած պապիրոսին էր, երբեմն հեռուն։

Այդ միջոցին խանութի դուռը աղմուկով բացվեց, և դեպի կառքը եկան «խմբապետը», Բարեղամը (այդպես էր գյուղացու անունը), հետևներից էլ՝ կառապանը։

Վերջացրել էին ուրեմն։ Գնալու էինք։

«Խմբապետը» կամուրջի վրայից էլ մի քանի բառ նետեց խանութի առաջն ելնող խանութպանին, հետո, երբ մոտեցավ, նկատեց մեր նոր ընկերին և կանգ առավ.

— Վա՛յ,— ասաց զարմացած,— այդ դո՞ւ ես... էս ո՞րտեղից։ Այստե՞ղ էիր։

Հետո զգայի կերպով զսպեց իրեն, սառը կերպարանք ստացավ և տեղ բռնեց կողքիս։

— Գևորգն է,— ձայնեց Բարեղամը,— ասին, որ ըստեղ ես, բայց չհավատացի. հմի գե՞ղն ես գնում։

Կառապանը նրան նայեց, ժպտեց, իր տեղը բարձրացավ և բավականացավ միայն ասել։

— Հիսուն կոպեկ կառնեմ։

— Լա՛վ, քշի՛ր,— պատասխանեց նրան Գևորգը,— հետո Բարեղամին էլ մի բան ասաց և տեղ տվավ։

Փոշի հանելով մեկնեցինք։

Մինչև գյուղից դուրս գալը կառքը սաստիկ աղմկեց քարերի վրա։ Նորդուբորդը ցնցում էր անվերջ։ Ճանապարհը փչացած էր։

Ոչ ոք չխոսեց։ «Խմբապետը» ծխում էր, փողոցում եղած գյուղացիներին էր նայում և մեկ-մեկ ողջունում։ Գևորգը այգիներն էր դիտում։ Բարեղամն էր այդ միջոցին ուշադրության արժանի։ Տարորեն շարժումներ էր գործում։ Մեկ «խմբապետին» էր նայում՝ ժպիտը դեմքին, մե՛կ Գևորգին և կարծես սպասում էր, որ նրանք մի բան պիտի սկսեին։ Արդյոք վե՞ճ, կռի՞վ։

Ըստ երևույթին, մշեցին ու մեր նոր ընկերը իրար հետ շփումներ էին ունեցել։ Գուցեև թշնամիներ էին։ Բայց գյուղացին աննշան մարդ չէր երևում։ Անշուշտ, որոշ դիրք ուներ շրջանում, և «խմբապետը» իր ատելությունը դեպի նա կոպիտ ձևերով ուղղակի արտահայտել չէր հանդգնում։ Հասարակ գյուղացի խո չէր, որ գոռար վրան անպատիժ, հայհոյեր, սպառնար կամ նույնիսկ ծեծեր։

Զսպում էր իրեն առայժմ և օրինականության սահմանից չէր դուրս գալիս։

Այդ բոլորը եզրակացրի ես՝ զննելով թե՛ նրանց դիրքն ու միմյանց նետած հայացքները և թե՛, մանավանդ, Բարեղամի շափազանց պերճախոս դիմագծերը։

Այդ մարդը կարծես կրկեսի անհամբեր հանդիսական լիներ, որ բուռն շարժումներով բողոք էր արտահայտում, թե ինչո՞ւ էին ուշացնում ըմբշամարտությունը, ինչո՞ւ իրար վրա չէին նետվում կռվողները, գոնե կծու խոսքերով չէին նետահարում հեռվից, մինչև որ մոտենային ու միմյանց բռնահարեին...

Եվ երբ գյուղից դուրս ելած՝ կառքը սկսեց փափուկ հողի վրա թավալել, երբ մշեցին դարձավ դեպի Գևորգը, պետք էր տեսնել Բարեղամի գոհունակության լայն ժպիտը...

Ձեռքերը շփելով, տեղավորվեց նա իր անկյունում և պատրաստվեց լսելու։ Վարագույրը բացվել էր. վերջապես...

— Լա՛վ որ պատահեցինք, Գևորգ,— խոսեց «խմբապետը»,— ուզում էի վաղը հենց քեզ տեսնելու գալ։

Գևորգը նրան նայեց սառը դեմքով, քիչ լռեց, հետո ասաց.

— Համեցեք գնանք։

— Չէ՛, այսօր չեմ կարող... Գուցե մի քանի օրից։

Ապա փոքր-ինչ լուռ մնաց, կուլ տվավ թուքը, որ հուզմունքից կոկորդն էր լցվել, և ասաց թեևակի դողացող ձայնով.

— Գամ, որ վերջացնենք էն գործը։

— Ո՞ր գործը...

Նայեցի Բարեղամին։ Ժպիտն ավելի էր լայնանում։ Գոհ էր։ Անշուշտ, հենց այդպես էր սկսվելու։

Ու կռացած դեպի նրանց՝ սպասեց։ Այդ բոպեին շատ նման էր նա այն մոլի մարդուն, որ երկու աքաղաղներ միմյանց դեմ հանել՝ անհամբեր սպասում է կռվին։

Ոչինչ չէի հասկանում։ Սպասում էի ես էլ։

Սակայն լարվող տրամադրությունը սառում էր։ Բարեղամը երևի

զգաց այդ։ Պետք էր գրգռել։ Վարագույրը, իրավ է, բացվել էր, բայց ներկայացումը կարծես պիտի հետաձգվեր։

— Գիտե՞ս բանը ինչումն է, պարո՛ն,— դարձավ նա ինձ՝ ժպիտը դեմքին,— ահա 3—4 ամիս է, որ էս երկուսը կռիվ են տալիս մի կտոր հողի վրա։ Շատ-շատ որ լինի՝ մի արշին լայնությամբ տեղ հազիվ լինի։

— Մի արշին հողի համա՞ր...— զարմացա ես։

— Բանը նրանումն է,— շարունակեց ծիծաղել Բարեղամը,— որ կրովապատճառ այդ հողը ո՛չ սրանն է, ո՛չ էլ նրանը։

Գևորգը, որ չէր նայում խոսողին, բայց, անշուշտ, ուշադրությամբ ականջ էր դնում, դարձավ ինձ և ասաց զսպված ձայնով.

— Այո՛. ո՛չ իմն է և ո՛չ էլ դրանը։ Հասարակությանն է...

— Հա՛...— շարունակեց Բարեղամը մի՛շտ գրգռիչ շեշտով ու ժպիտով,— էս մարդը, մեր «խմբապետը», պսակվել է Ավազնոցումը մի որբևայրի կնոջ վրա, հետն էլ մի տղա։ Հիմի, ինչպես ամե՛նքն են անում, նա էլ ուզեցել է իրա հողը շատացնի, հասարակության հողիցը մի քիչ «և այլն անի»... բայց արի տես, որ Գևորգը արդեն մի առու է քաշած լինում, էդ հողի լավ մասը ինքն է «և այլն» արած լինում վաղուց...

— Այո՛,— հաստատեց Գևորգը անվրդով,— տասը տարի կլինի. ծառեր էլ ունեմ վրան տնկած։

«Խմբապետը», գլուխը կռացրել էր՝ կռվի մեջ նետվելու պատրաստվող այծի պես, նայում էր Բարեղամին և սպասում։ Սոսկալի էին նրա աչքերը, որոնց նա տակեվանց ոլորում էր մե՛կ Բարեղամի, մե՛կ Գևորգի վրա ու բեղերի ծայրերին էր պտտեցնում բթամատով և միջամատով մեկ աջ ծայրը, մեկ՝ ձախը։

Բարեղամը նկատում էր այդ, բայց դեռ բավական տաքացրած չէր համարում։ Եվ շարունակեց.

— Հա՛...— ասաց նա,— է՛ն էի ասում... է՛սպես, մեր «խմբապետը» թոկը գնում է և ուզում հողի այդ կողմից— Գևորգի բռնած կողմից— ուղիղ գծով մի քիչ տեղ «զավթել»։ Դրա համար հարկավոր էր անցնել Գևորգի կտրած առուն ու բավական երկարությունով հեռուն՝ պատը դնել։ Շատ չեմ ասում— մի 5—6 լարաչափ լավ հող, դուշազ Արամս ուզում է Գևորգիցը թոցնի...

— Հողը Գևորգի՞նն է...— զսպված բարկությամբ ասաց Արամը։

— Իմը չի,— խոսեց Գևորգը,— ճշմարիտ է։ Բայց առաջ ե՛ս եմ գողացել-վերցրել։ Ուրիշ շատերն են ինձ պես արել։ Ինչպես ես չեմ խլել նրդ շատերից, այնպես էլ թույլ չեմ տալ, որ խլեն ինձնից։

— Ինչպե՞ս...— պոռթկաց «խմբապետը».— դու չե՞ս թոցնիլ... Կտեսնենք, կտեսնենք...

— Հողը ո՛չ իմն է, ո՛չ էլ քոնը,— շարունակեց Գևորգը,— հասարակությանն է, Սհակենց Գաբրիելին ու Մկրտչենց Ասլանին մի նայիլ դու. նրանցն էլ պրծավ, ի՛մն էլ... Ինչ որ խլել ենք հասարակությունից, պիտի ետ տանք... Քեզ ես չե՛մ տալ, պատդ քաշել չե՛մ թողնիլ, բայց եթե հասարակությունն ուզի, ետ կտամ ամբողջը ու վրան տնկածս ծառերն էլ կնվիրեմ ուսումնարանին...

— Փի՛ե...— արեց զարմացած Բարեղամը,— էնքան ծա՛ռը...

Մոռացել էր գրգռելու միտումը։ Գյուղական կծծիությունն էր զարթնել մեջը։

— Գիտե՞ս,— դարձավ նա ինձ,— մոտ 300 բարդի ծառ է, ամեն մեկը մի հաստ գերան, ամենապակասը 10 մանեթ կաժենա հատը...

Ու հիացումով համակված՝ ասաց Գևորգին.

— Ես իմ աստվածը, Գևորգ, թե ճիշտ այդպես ես վճռել՝ իշխան մարդ ես... Չէ՛, Արամ, էլ պրծար, պրծար։ Էլ ավելորդ է խոսելդ, ձեռք քաշիր հողիցն էլ, ու, թե խելք ունիս, էսպես իշխան մարդու հետ մի թշնամանալ...

Բայց «խմբապետը», հակառակ Բարեղամի առաջարկության, նրա վերջին հորդորիցը շատ ավելի գրգռվեց։ Դույն առավ-տվավ, կարմրեց, կատաղությունից փնչացրեց, ջանաց զսպել իրեն պահ մի, բայց հանկարծ գոռաց կատաղությամբ.

— Ե՛ս... ես մա՛րդ չեմ լինիլ, եթե հենց վաղվանից... վաղվանից պատ քաշել չտամ ու արգելողի էլ քիթն ու պռունկը չարնոտեմ...

Գևորգը, որ սկզբում քիչ ետ էր քաշվել, «խմբապետի» ձայնիցը վախեցած, ժպիտը դեմքին ուղղվեց նորից իր տեղում և ասաց.

— Վա՞ղն ես ուզում... համեցե՛ք, ինչ կլինի որ... լավ էլ կանես... Հենց վաղը կենտրոնի լիազորը Խանաբադից մեր գյուղն է գալու՝ կտեսնի արածդ...

Կարծես մի դույլ սառը, շատ սառը ջուր էր այն, որ հանկարծ շռաքվեցավ «խմբապետի» գլխին։

Հանկարծ կանգ առավ, իր բուռն թափի մեջ սառեց և արձանացավ։ Հետո սաստիկ գունատվեց, շրթունքները անձայն դողացին պահ մի, ապա ողորմելիորեն կմկմաց.

— Ի՞նչ... ինչպե՞ս... ի՞նչ լիազոր, ո՞վ...

— Ինքը հենց կենտրոնի անդամը...— շարունակեց Գևորգը, —հրեն Խանաբադում քննություն են անում ձեր գործի մասին... էգուց էլ Ավազնոց են գալու... Դու էլ համեցի ու էն պատը քաշի հասարակության հողի վրա, իմ քիթն ու պռունկն էլ արնոտի...

Բայց մշեցին այլևս չէր լսում, անշուշտ չլսեց այդ հեգնանքն ու ծաղրը։

Հանկարծակիի էր եկել. ու սոսկում էր միայն նկարված դեմքի վրա։

Ինչպե՞ս, կենտրոնի լիազո՞րը, քննություն իր գործի և առանց իր գիտնալո՞ւն։

Այդ ինչպե՞ս էր եղել, որ ինքը չէր իմացել։ Չէ՞ որ քաղաքիցն էր գալիս, տեսնվել էր այնտեղ կենտրոնի մարդկանց հետ ու նրան ոչինչ չէին ասել գնացող քննիչի մասին։

Եվ, իհարկե, մտովին անիծում էր իր անփութությունը, քաղաքում այնքան երկար մնալը։

Ինչո՞ւ դոնե չէր լրտեսել և իմացել։ Մի՞թե կենտրոնին հաջողվել էր անգամ այնպե՞ս ուղարկել քննիչ, որ չորս-հինգ օր առաջ չէր իմացվել։

Այն էլ ինքը, «խմբապետ» Արամն անգամ չէր իմացել. ինքը, որ այնքան բարեկամներ ու կապեր ուներ, որի համար ոչինչ ծածուկ չէր մնում կազմակերպության արածներից։

Այդ բոպեին այդպիսի փոթորիկներ էին հուզվում անշուշտ մշեցու գլխի մեջ։

Եվ, երևի, այդ փոթորկալից մտածությունների արդյունքն էր, որ նա մի բոպե էլ կասկածեց, թե չլինի ես ևս քննիչ լինեի, մի երկրորդ քննիչ, որ հատուկ իր համար էի գնում, իր հետ ճանապարհորդում և խորամանկությունով թաքնվում էի ինչոր «բանահավաքի» դիմակի տակ...

Այդ սոսկալի միտքը մի երկրորդ հարված էր, որ ուժգնապես կծկեց նրան։

Սմքեց մեկեն, նայեց իմ ժպտուն դեմքին՝ հարվածի սպասող վախախառն ակնածությամբ, հետո, կմկմալով, խոսքն ուղղեց ինձ.

— Ի՞նչ կա որ... ես չեմ վախենում... Ամենքը, ամենքն էլ գիտեն, որ ես մաքուր մարդ եմ... Ա՛յ, Բարեղամն էլ գիտե։

— Ե՞ս,— հախուռն կերպով վրա բերեց իր կողմից ևս սաստիկ վախեցած Բարեղամը,— ես ոչինչ չգիտեմ... Ես ի՞նչ գիտեմ որ... Ես ոչնչի չեմ խառնվել ու չեմ էլ խառնվում... Չգիտեմ, ես առհասարակ ոչինչ չգիտեմ... Ձեռք քաշեք ինձնից...

Եվ երեսը դարձրեց։ Եթե հնարք ունենար, պատրաստ էր երդվելու անգամ, որ «խմբապետին» ո՛չ ճանաչել է և ո՛չ էլ ճանաչել է ուզում։

— Ինչի,— խոսեց արդարացողի ժպիտով «խմբապետը»,— կենտրոնը չգիտի՞, որ դրանք սուտ են, որ ես ո՛չ ոչխար եմ փախցրել և ո՛չ էլ... Դրանք բոլորը իմ թշնամիների, Գալուստի ու Կարապետի տարածած ստերն են, որ ինձ դուրս հանել տան շրջանիցը...

Բայց ոչ ոք չպատասխանեց նրան այլևս։ Լուռ մնաց Բարեղամն անգամ։ Մտախոհ էր դարձել։ Չէր ժպտում։ Դեմքը կնճռած՝ անհանգիստ շարժումներ էր գործում նստած տեղումը։

Ըստ երևույթին, լիազորի գյուղերը գալը նրան էլ էր հանկարծակիի բերել և վրդովել։

4

Խանաբադում, փողոցի մեջտեղը, մի խանութի առաջ կառքը նորից կանգ առավ։

Արամը, որ գյուղին մոտենալիս անհամբեր էր դառնում, դեռ կառքը բոլորովին չկանգնած՝ ցած նետվեց և ասաց Բարեղամին.

— Դու չե՞ս գալիս։

— Չէ՛, ես գյուղն եմ գնում, գործ ունեմ։

Ապա դարձավ կառապանին.

— Հը՞, Սահակ, այստեղ խո չե՞ս կանգնելու։

— Հինգ բոպե. էս կապոցը տամ Արտեմին։

Հետո քաշեց, ոտերի տակից մի տոպրակ հանեց և մտավ խանութ։

Բարեղամն ու Գևորգն էլ իջան։ Մնացի կառքում մենակ ու նայում եմ։

«Խմբապետն» էր ինձ հետաքրքրում։

Աչքերովս հետևեցի նրան։

Արագ քայլերով գնաց նա դեպի մի այլ խանութ և այնտեղ, դռան առաջ կանգնած գյուղացիներին ձեռք տալուց հետո, մի երկու խոսք փոխանակեց։

Այնուհետև թողեց նրանց, մեծ քայլերով անցավ փողոցը, մտավ մի նեղ կիրճի մեջ և անհետացավ։

Երևի լիազորի տեղն էր հարցրել և շտապում էր գնալ տեսնելու։

Ուրեմն, ճիշտ էր, լիազորը գյուղումն էր և քննում էր ինչ-որ աղտոտ գործ, որի մեջ խառն էր ոչ միայն «խմբապետ» Արամը, այլև, ըստ երևույթին, Բարեղամը։

Այդպես էի մտածում և մեքենայաբար դիտում էի փողոցի մեջ անցած-դարձածը, երբ հանկարծ նկատեցի, որ դիմացից դեպի խանութներն էին գալիս երեք քաղաքացիներ։

Այո՛, քաղաքացիներ էին, և այն երկուսը օրիորդներ, մեկը պարոն։

Սխալվել անկարելի էր։ Հագուստն ու շարժվածքները որոշ էին։

Ու ո՛չ միայն պարզ էր այդ, այլև այն որոշվեց, որ կարծես դրանք ծանոթներ լինեին ինձ։

Դեռ հեռու էին։ Մոտենում էին, և ես, կառքից դուրս կռացած, աշխատում էի ճանաչել։

Եվ, այո, երեքն էլ ծանոթներ էին։ Բայց ի՞նչ գործ ունեին այդտեղ։ Պտույտի՞ էին ելել արդյոք։

Օրիորդները՝ Սաթենիկն ու Վարդուհին էին, պարոնը՝ մի ուսանող, որ միջոցներ չունենալու համար, այդ տարի չէր կարողացել շարունակելու գնալ և սպասում էր որևիցե տեղից օգնության, փողի...

Առայժմ նա ասպետություն էր անում մեր քաղաքի չափազանց ասպետասեր օրիորդներին։ Ընկերակցում էր, վերարկունին էր բռնում, ծիծաղելի բաներ պատմում, որ չձանձրանան... Մի խոսքով, անում էր այն ամենը, ինչ կարող է ստեղծագործել գավառական կնախնդիր ասպետը՝ թե՛ հաճոյանալու համար և թե՛ ժամանակն անխնա սպանելու։

Մի խոսքով, Լևոնն էր դա, օրիորդներն էլ՝ Սաթենիկը և Վարդուհին։ Երեքն էլ ծանոթ, երևելի, երեքն էլ նոր ոսկի երիտասարդության ծաղիկներից— հնչեղ, համարձակ ծիծաղով, ազատ կյանքով ու ամեն «կապ» արհամարհող սկզբունքներով։

Զզարմացա։ Սովորական բան էր գյուղերը պտույտի ելնել այդ խմբի համար։ Տարօրինակն այն էր, որ չէին երևում մյուս ընկերները՝ օրիորդ Արուսյակը, պարոններ Սարգիսը, Մկրտիչը, Մուշեղը։ Չկար մանավանդ խմբի համն ու հոտը, այն սոսկալի, խոշոր ատամներ, բայց քաղցր ձայն ու քաղցր բնավորություն ունեցող «Ախպեր մարդը»— սրամիտ Սուրենը։

Ինչո՞ւ էին այդպես ջլատված ու բաժանված։ Ի՞նչ էին անում այդտեղ մենակ։

Մոտենում էին խոսակցելով։ Սաթենիկը քրքջում էր։ Լևոնը, որ նեղ շավղի պատճառով հետևից էր քայլում, օրիորդների վերարկուներն ուներ աջ կռանը և շարունակում էր, անշուշտ, ծիծաղելի մի բան պատմել նրանց։

Կառքից քիչ հեռու Վարդուհին էր առաջինը, որ կանգ առավ և նայեց իմ կողմը։ Նայեց, փոքրիկ ձեռքերն իրար խփեց ու բացականչեց.

— Բայց սա խո պ. Երվանդն է... Սաթո, Լևոն, պ. Երվա՞նդը...

Երեքն էլ վազեցին դեպի ինձ։

— Օ՜յ, օ՜յ, պ. Երվանդն է...

— Հա՜, հա՜, պ. Երվանդը. այս ո՞ւր է գնում փոշուցը ջաղացպան դարձած պարոն Երվանդը։

Պետք եղավ իջնել։ Թոթվեցի ինձ, երկու ձեռքերովս եռանդագին թափ տվեցի կիտված փոշին շորերիցս ու մազերիցս և սեղմեցի շարաճքճիների ձեռքերը։

ԱՆԱՊԱՏԻ ՄԵՋ

(Պատմական զիրույց)

1

Ցամաքի այն մասը, որ կորակտուց հրվանդանի ձևով պարզվում էր դեպի լիճը, իր աջ կողմի վրա ուներ կիսակլոր մի խորշ։ Ջրերը այդ խորշի մեջ սահում էին հանդարտ և հալիվ լսելի մրմունջով ողողում էին ուռիների ստորոտները։ 10—15 ծառ է ընդամենը. գյուղի ամբողջ բուսականությունը այդ էր։ Եվ, անշուշտ, դրա համար է, որ Սահակ հայր-սուրբը միշտ այդտեղ էր իր ճաշն անում։ Հեռու, ջրից քիչ ավելի հեռու, փռել էր տալիս կարպետը, ներքնակը և, գլուխը բարձին դրած, պառկում էր քնելու։ Ամենահանգիստ անկյունն էր հիրավի. ո՛չ կալ անողների աղմուկն էր հասնում այդտեղ, ո՛չ էլ փոթորկող լճի շառաչյունը։ Մեկ-մեկ՝ շների հաչոց, երբեմն էլ զիլ աղաղակ, պառկելուն պես էլ՝ գետնի տակից կարծես հնչող հեռավոր և խուլ մռնչյունը ծովի· և ահա բոլորը։ Քնելը չէր խանգարվում. վարժվել էր։

Այդ շաբաթ օրը, սակայն, գյուղացիք մի քիչ ավելի տանջեցին հայր սուրբին։ Կալի ժամանակներ էր. վանքի պտղին ժողովելու համար պետք էր եռանդուն գործունեություն։ Փոքր-ինչ անհոգություն ու հապաղում և կղզիի միաբանությունը կարող էր սովի մատնվել ձմեռը։ Սահակ վարդապետը, ասենք սկզբից, վարպետ էր այդ գործի մեջ։ Սևանա վանքը նրանից լավը ո՛չ գտնել կարող էր, ո՛չ էլ տեսել էր։ Թող վանահայրն ու միաբանները մնային կղզիի վրա, աղոթեին ու քնեին ուզածնին չափ, հոգ չէր։ Նա հենց որ Ցամաքաբերդ կամ Գոմաձոր էր ելնում, նավակ նավակի ետևից, պաշարով լի՝ հասնում էին կղզիի ափը, և բեռնավորվածների շարքը մտնում էր Դրսի տունը։ Վարդապետը իր գործը լավ գիտեր, գյուղացիներին էլ լավ էր ճանաչում. ու մասնագետի հաճույքով էր, որ սկսում էր վիճել, համոզել, գոռգոռալ և սպառնալ։ Երկնքի ամբողջ օրհնությունները տրամադիր ուներ առատ տվողների համար, դժոխքի անեծքների կարկուտը՝ ժլատների։— Այսպես էր, որ այդօր էլ կալից կալ, տնից տուն էր պտտվել, ժողովել էր, բեռնել, ուղարկել, նավակներ լցրել և վերջապես հոգնած՝ պետք էր զգացել հանգստանալու։ Ճաշը, կղզիից դուրս ելնելու օրիցը սկսած՝ վատ չէր. վառեկ, ձվածեղ, Աշտարակի ընտիր գինի։ Կերած-խմած՝ նա հաճույքով մեկնել էր ոտները, երեսը դեպի լեռները գարձրել և պատրաստվում էր քնելու։ Վաղը կիրակի էր. ո՛չ կալ ուրեմն և ո՛չ պտղի։ Փառք աստծո, ազատ էր այժմ եկեղեցի գնալուց,

աղոթքներից, մանավանդ գիշերային այն անտանելի ժամերգություններից, որոնք այնքան անգթորեն թրատում են մարդու քունը, ո՛չ ուժ խնայելով, ո՛չ էլ՝ հանգստություն։ Ազատ էր ոչ միայն դրանցից, այլև երեք ամիս, գուցե ամեն էլ այդ տարի, շնորհիվ նոր վանահոր թույլությանը՝ կարող էր մնալ դուրս՝ չստիպվել օրը միայն մեկ անգամ ճաշելու, այն էլ լոբի, սիսեռ ու ոսպ։ Դեհ, այդպես ուտելուց հետո գնա և օրը 5—6 ժամ աղոթիր, 20 անգամ հորանջիր, 2 անգամ խոստովանիր չեղած մեղքերդ ու ձանձրացիր մահու չափ։ Վարժվել էին մարդիկ, չաղոթեին, ի՞նչ անեին, էլ ուրիշ ի՞նչ կար անելու։ Վանահայրը հաճախ բացակայում էր և՛ հսկումներից, և՛ գիշերային ժամերգություններից։ Աշտարակի գինին էր մեղավորը։

Ինչ որ էլ լիներ, նույնիսկ հոգու փրկության համար— մեղա աստծո— սակայն Սահակ հայր-սուրբը սրտի խորքիցը անկեղծորեն կուզենար դուրսը մնալ, մանավանդ երբ գարունը սկսում էր այդպես անուշ ժպտել լեռներին և ձորերին, երբ նրա տեսքն ու բուրումը գինովցնում էր մարդու, մոռացնել էր տալիս հոգի և թևեր տալով՝ պտտացնում էր հեռու։ Եվ որքան ձանձրալի էին թվում այդ բոլորի առաջ՝ այն լերկ ժայռերը կղզիի, այն հնացած եկեղեցիներն ու մութ խուցերը, որքան անտանելի մռայլ դեմքերը, անշարժությունն ու մեռելությունը. մինչ այդտեղ, գյուղի մեջ, գարնան հետ բացվում էր ամեն ինչ, ամեն օր նոր շարժում, վեճ, կռիվ, կյանք... Գնա մտիր տները, խառնվիր մարդկանց, խոսի՛ր, խնդա, նայիր այն ծիծղուն կանանց զվարթ դեմքերին՝ առանց քաշվելու, խոսակցիր, ժպտա, մի վախենար. ինչ կա, մարդ չե՞ս դու էլ։ Ի՞նչ անենք, որ վարդապետ ես. միշտ աղոթել կարելի՞ է. ի՞նչ օգուտ ախր, եթե բերանովդ աղոթում ես, իսկ միտքդ ոստնում է կղզիից ու տաճարից, ծովից ու ճրագնարանից հեռու, սրանում է... հենց, օրինակ, դեպի այն լեռան կողերը, որոնք այդքան շքեղորեն զարդարվել են կարմիր խիլայով և ոտներն են լվանում ծովի մեջ։ Ի՞նչ ծաղիկներ են, հիրավի. պուտ չէ՞ր, այո, պուտ էր, խոշոր ու թխլիկ՝ սիրուն կանանց գիրուկ այտերի նման։ Ավելի հեռուն այն դաշտերը դեղնորակ, մեջտեղը լայն ճամփան՝ ճերմակ շեղտով, որ օձապտույտ սրանում է կանաչ տարածությունների կուրծքի վրայից։ Ավելի վար, դեպի Մասիսը՝ սևին են տալիս գյուղախմբերը, ժպտում են շքեղ հովիտները, որոնց դալարիների ծայրին պարում է սյուզը ծփումներով. ծաղիկներն էլ միահամուռ չափով ծափահարում են վայելչությամբ։ Ո՛չ, թող թույլ տրվեր իրեն վայելելու այդ ամենը, իր սիրած ծովախորշի մոտ գալ, պառկել ուռենիների զով ստվերի տակ, և հայացքը սևեռած արոտներին, ծաղիկներին, կյանքին, լեռներին՝ ննջել անուշ վայելքով։

Երևի, սակայն, վիճակված չէր այդ վայելքը Սևանա անապատի կենսալից վարդապետին։ Հազիվ փոքր-ինչ գոցել էր աչքերը, որ ստիպված եղավ վեր թռնել ու նստել։ Ճիշտ ուռենիի տակ էին ժողովվել 5—6 գյուղացիներ և նրանցից մեկն էլ ձեռքի մտրակի կոթովը բոթում էր վարդապետի կողմն ու գոչում. «Հայր-սուրբ, վեր կաց»։ Վեր կացավ, հիրավի, և տրորեց աչքերը· ի՞նչ էին ուզում, նավակնե՞րն էին արդյոք ընկղմել, թե՞ կղզիի մեջ մի աղետ էր պատահել։ Անծանոթը գլխարկը հանեց, կռացավ, հայր-սուրբի ձեռքը համբուրեց և ասաց. «Ծառա եմ... Ախտայից եմ գալիս ձիով. տեր-հայրը ուղարկեց... Վեհափառը այս երեկո Ախտա կհասնի, վաղն էլ այստեղ»։

Սահակ Վ. գունատվեց և մի վայրկյան կարծեց, թե գետինը շարժվում էր։ «Ի՞նչ ես ասում, այ տղա, ի՞նչ Վեհափառ»։ «Վեհափառը քանի՞ հատ է որ,— ժպտեց գյուղացին.— մեր հոգևոր տերը 2 օր է՝ Էջմիածնից դուրս է եկել. Սևան ուխտի է գալիս»։

Գյուղի մեջ արդեն տարածվել էր կաթողիկոսի գալը, և հետզհետե վարդապետի մոտ էին հասնում քահանան, հետո գյուղի իշխանները։ Գար ի՞նչ տեսներ ծերունին. կղզիին ավերակներն ու «խուց» կոչվող որջե՞ր, թե՞ անմաքուր մնացած և ժանգի մեջ կանաչած ջահերն ու աշտանակները, մոմերից այրված և ծուխից փչացած պատկերները, կեղտի մեջ սևացած գրքերը։ Ինչ որ լիներ, անհրաժեշտ էր իսկույն գործի ձեռնարկել։ Ամենից առաջ, պետք էր լուր հասցնել կղզին. հետո Դրսի տունը, գյուղի եկեղեցին պատրաստել, հյուրասիրության համար պետք եղածները գտնել, 1—2 ձիավոր ժողովել և Վեհափառի դեմը գնալ։ Այդ բոլորը մտովին ծրագրելը մի վայրկյանի գործ եղավ վարդապետի համար։ Հետևյալ վայրկյանին նա շուրջը նայելով՝ ստուգեց, թե այնտե՞ղ էին ծառան, գյուղի կառավարիչը, քահանան և նույնիսկ մեկ-երկու նավավարներ էլ։ Մի կողմից պատվերներ տալով, մյուս կողմից էլ չմոռանալով ոչ մի մանրամասնություն, սիրտը ճնշված մտածում էր, թե արդյոք ի՞նչ պիտի անեին կղզիում. պիտի կարողանայի՞ն այն ապուշները մաքրել տալ ամեն ինչ, գոնե թաքցնել աղտոտությունները, ջնջել ավերածությունների հետքերը, մի կերպով աննշմարելի դարձնել անհոգության և անխնամության հետևանքները։ Երևի, վանահայրն էլ պիտի որևէ լուր, հրաման, կարգադրություն ուղարկեր իրեն։ Եվ հրամանը եկավ. «Թող Սահակ հայր-սուրբը ժողովի մարդիկ, առնի իր հետ քահանան և Ախտա երթա՝ դիմավորելու Վեհափառին։ Կղզիում ամեն ինչ պատրաստ կլինի, միայն թե թող գյուղից մի ձեռք մաքուր և լավ անկողին ուղարկեն կղզի, հետո մի ոչխար՝

հետևյալ օրվա ճաշի համար. թող հայր սուրբը մտածի և վաղը հասցնի իշխան ձուկ էլ...»։

Վարդապետը մտածեց մի վայրկյան, հետո կտրուկ շարժումով կանչեց գյուղապետին, և 10 վայրկյան չէր անցել, որ 10 կտրիճներ լցվեցին նավակների մեջ և եռանդուն աղաղակներով սահեցին դեպի կղզին՝ աշխատությանց օգնելու համար։ Բերկրությամբ դիտեց նրանց մեկնիքը, մի քանի րոպե նայեց նավակների ետևից և գլուխը տխրությամբ շարժելով՝ մտավ եկեղեցին, որ մի վերջին ակնարկով զննե արդեն մաքրած ու պատրաստած սեղանը և սպասները։ Այսպես էր, որ այդ 1770 թվականներին, Սևանում պատրաստություն սկսեցին տեսնել ընդունելու համար Սիմեոն կաթողիկոսին։

Վանահայր Հովհաննես վարդապետն էլ իր կարգին շարունակում էր հրամանները իր շուրջիններին. «էլ աղոթք բան չեմ իմանում. թող մինչև Վեհափառի գալը ամեն աղոթք դադարի։ Դուրս տվեք ինչ որ կա։ Խուցերից դուրս քշիր ամենքին. լվացեք, սրբեցեք. կեղտ չմնա ոչ մի խալի, ոչ մի գրքակալի ու սփոռոցի վրա։ Իմ ունեցած-չունեցածը Սահակ վարդապետի խուցը տարեք հենց այժմյանից. իմ խուցը՝ Վեհափառին։ Բաղ և ճաշարան, արտաքնոց ու շտեմարան ո՛չ մի կեղտ, ո՛չ մի անկարգություն, հասկացա՞ք։ Վեհափառը ամեն տեղ մտնելու է, ես գիտեմ նրան։ Կղզիի վրա ամեն կողմ միայն ավերակ էր տեսնվում, աղբակույտեր, տակնուվրայություն և անփութություն. և այն տարիներից ի վեր. ինչո՞ւ մաքրել և ո՞վ մաքրեր. նոր վանահայրերը սկզբում մի քիչ խիստ էին լինում, հետո իրենք էլ ենթարկվում էին ընդհանուր դանդաղկոտության։ Այժմ բացվել էին դռներ ու ճռնչում, խուցերից մութ նրբանցքի մեջ սկսել էին երևալ գունատ ու մազոտ դեմքեր, որոնք վախեցած ոչխարների պես երբեմն կիտվում էին մի տեղ, ակնապիշ մնում, հետո իսկույն ցրիվ էին գալիս։ Վանահայրը մի խոշոր գավաթ գինի էր պարպել և դուրս սլացել. այլևս նրա ձայնն էր, որ մինչև արևի մտնելը լսվում էր զանազան կողմերից. մեկ՝ նրբանցքի խորքին, մեկ՝ տաճարի կամարների տակ, հաճախ հայրենական հայհոյանքներով համեմած անունների հեղեղ ժայթքելով։

Մութ էր, երբ հասան գյուղի երիտասարդները։ Հայր-սուրբը ավելի աշխուժացավ, իրենց խուցերը քշեց միաբաններին և գործը հանձնեց գյուղացոց։ Ու փոշի, աղմուկ, ծիծաղ, վազք, իրարանցում, կարպետ թափ տալու ճայթյուն։ Ծովի փոթորիկն էլ մեկ կողմից շառաչում էր և կատաղի ալիքները պայթեցնում ժայռերի կողերին։ Մութը ծանրորեն իջնում էր կղզիի վրա, ջրերը լերդ-կանաչ գույն էին ստանում և թաղվում խավարի մեջ։ Ցուրտ քամի էր բարձրացել Մաշտոց լեռներից։

Գիշերը բավական հառաջացել էր, երբ վանահայրը մի վերջին

պատյան արավ՝ տեսնելու, թե ի՞նչ էր կատարված։ Որոնում էր մտովին. թե արդյոք ոչինչ չէ՞ր մոռացված. ուռենիների տակի աղբակույտերը թափել էին ծով. իսկ վե՞րը, ս. Առաքելոցի տաճա՞րը, նրա շո՞ւրջը, ապա ճգնավոր Ղուկասի ո՞ջը։ Չէ՛, վաղը առավոտ շուտով մեկ ելնել պետք էր վերը, ճգնավորին իմացնել կաթողիկոսի գալը և պատվիրել, որ նա էլ մաքրեր իր խուցը։

3

Տասնյակ տարիներից ի վեր, բլուրի գագաթին, Առաքելոց ավերակ եկեղեցին կից՝ քայքայված խուցերից մեկի մեջ— ուղղակի գետնափոր մի որջ— ապրում էր դեռ Սևանի հնամյա մի միաբան։ Վարդապետ չէր. մի որջ— ապրում էր դեռ Սևանի հնամյա մի միաբան։ Վարդապետ չէր. պարզ ճգնող, որ ոչ մի կերպ չէր համաձայնում վար իջնել։ Պարթևաստակ, նիհար մի ծերունի էր՝ երկար, ալեխառն մորուքով, գլխի մազերը խոիվ դիզացած, հագուստը ճգնավորական պարզ պարեգոտ, որ արդեն բոլորովին գույնը կետել էր, ոտքերն էլ բոբիկ։ Ղուկաս ճգնավորն էր այն. միշտ նույնն էր և իր որջին մեջ։ Ի՞նչ էր անում, երբ մինակ էր. ոչ ոք չգիտեր։ Հաճախ որջում չէր լինում, այլ կղզիի ժայռերի մեջ։ Բայց բոլոր ժամերգություններին գալիս էր, ցերեկ կամ գիշեր, գիտեր ժամանակները, և տաճարի դուռը բացվելուն պես ներս էր մտնում, կանգնում էր մի սյունի տակ, չոքած աղոթում էր, ապա լուռ համբուրում էր սեղանը, խորունկ խոնարհություններ անում նախ վանահոր, հետո յուրաքանչյուր միաբանի և գնում։ Ճաշը նրան տանում էին վեր. այդ՝ նրա միակ առանձնաշնորհությունն էր, որ երբեք չէր խախտվում։ Չէր խոսում և կամ շատ քիչ էր խոսում, կցկտուր բառերով, երբեմն անկապ։

Ահա այդ մարդուն էր, որ հիշեց վանահայրը։ Հիշելով ճգնավորին, պատկերացրեց նրա որջի ներսը։ Մաքո՞ւր էր արդյոք։ Տախտակյա մի թախտ, վրան հնամաշ կարպետ. կողքին՝ սեղանի նման ցածկեկ մի բան, վրան միշտ բաց մնացած մի գիրք, կարծես թե աստվածաշունչ պիտի լիներ. հետո հողե ջրածիկ, հողե գավաթ, ուրիշ ոչինչ։ Մաքուր էր։ Գիրքն էր մի քիչ աղտոտ, դեղնած ու սևացած։ Մտածելով այսպես, վանահոր աչքն ընկավ խուցի պատուհանին, որի մեջ երևում էին սև կազմով խոշոր 2—3 գրքեր. նույնպես աղտոտ էին և սև։ Շատ էր տեսել այդպես գրքեր, ճգնավորի մոտինն էլ այդպես էր։ Մի՞թե Սահակ հայր-սուրբը կարդում էր։ Ո՛չ։ Ո՞վ գիտե երբվանից մնացել էր ու մնում էր այդտեղ. չէ՞ որ վանքի մեջ գրքեր կային։

Հանկարծ մի կայծակ կարծես փայլատակեց մտքի մեջ և ցնցեց վարդապետին։ Գրքե՞ր, վանքի գրքե՞րը... իրավ, ո՞ւր էին։ Հիշեց... Ինչպիսի՞

միամիտ մոռացություն... Քիչ էր մնում, որ վաղը կարգալույծ լինելու պատանալիքի տակ գտնվեր. ճանաչում էր Սիմեոն կաթողիկոսին, գիտեր, թե ինչեր ընդունակ էր անել՝ ինչ-որ հին, անպետք գրքերի համար։ Օրհ. նվիս դու, Սահակ վարդապետ, որ խորշի մեջ պահել ես այդ գրքերը։

Չէր անցել տասը վայրկյան, որ տաճարի դռան առաջ ժողովվեցին լուսարարը, գիշերապահը, Խորեն աբեղան և վանահայրը։ Ծառան դողդոջուն՝ ձեռքի ջահովը լուսավորում էր փոքրիկ մի տարածություն։ Ծանր դուռը ճռնչաց լռության մեջ, և լուսարարի ետևից ներս մտան։ «Փակեք դռները և աղմուկ մի հանեք»,— հրամայեց վանահայրը և ուղղվեց դեպի խորանը։ Քիչ հետո ամենքը կանգ էին առել փոշոտ և այլանդակ խառնուրդով դիզացած մի կույտի առաջ։

Վանքի հին ձեռագիրներն էին, ո՞վ գիտե, ո՞ր տարվանից լցրած այդ անկյունը՝ կազմած, առանց կազմի, կտրտված ու քրքրված, մոմոտ և յուղոտ, աղտոտ՝ սևացած կողերով, դեղնած էջերը բաց, պոկոտած, ծալծլած ու ճմրտկած։ Կոտորածի դաշտ լիներ կարծես։ Գրքե՞ր... ո՞վ էր բանի տեղ դնողը Սևանի մեջ, ո՞վ էր հետաքրքրվողը։ Ուտելու բա՞ն էր, արծա՞թ էր, թե՞ ոսկի. ոչ մեկը։ Հին գրքեր էին, անպետք ու անօգուտ ընկած, կարդացո՞ղը ով էր։ Ժամերգության համար կային նոր գրքեր. էլ այդ աղտոտ բաներին ի՞նչ պետք կար։ Միաբաններից էլ եթե կարդացող գտնվեր, ունենում էր իր աստվածաշունչը, ավետարանը կամ Նարեկը... Ու լցրել էին, վաղուց լցրել էին այդ ամենը խորանի մի անկյունը, հին աշտանակների, պատռված շապիկների, նույնիսկ պատից թափված ծեփի կտորների հետ խառնիխուռն։ Խորանի աղբանոցն էր. այնտեղ էին կիտվում մոմի կտորները։ Ծույլ լուսարարն էր՝ խորանը ավլելով՝ հողն ու փոշին հաճախ այդ մութ կողմն էր ժողովում։ Պատահում էր, որ երիտասարդ և նորեկ միաբաններից մեկը հետաքրքրվում էր, թե ինչ կար դիզացած հոն. զգուշությամբ առնում էր առաջին գիրքը, բաց էր անում և ճգնում էր կարդալ։ Հայերեն տառերի էին նման, բայց շատ այլանդակ, խոշոր, բառերը իրար կպած և գիրերն էլ քառակուսի, կարծես իրար մոտ շարված աղյուսներ լինեին... չէին կարդացվում... Եվ նետում էր վար, ոտքով մութ կողմը մղում և անցնում։ Իբր թե կաշի վրա գրած գրքեր լինեին.ավանդություն, անշուշտ առասպել. այդպես էին համոզված։ Փորձել էին մինչև անգամ, պատռել էին կտորներ ու տրորել։ գրքի ծայրերը վառել էին՝ որ հասկանան, ապա նետել բոլորը խառնուրդի մեջ և անցել...

Ահա այդ կույտի առաջ էր, որ կանգ էր առել վանահայրը և մտահոգության մեջ էր, թե ի՞նչ պետք էր անել։ Էջմիածնումն էլ կար դրանցից. կաթողիկոսը ծերունական տղայամտությամբ, անշուշտ, ժողովել

էր տվել և իր սենյակումն էր պահում։ Եթե ավետարաններ էին, ի՞նչ պետք կար հնացածների, քանի որ նորերը տվել էին։ Հիշում էր, թե մի անգամ նա պատժել էր Կարապետ վարդապետին, որովհետև սա Մողնիում ինչ գիրք որ գտել էր՝ միջի գունավոր պատկերները պատռել էր և իր խուցի պատերը զարդարել, իսկ մյուս թերթերը օջախ ձգել ու վառել։ «Գիտես դու, անիծյալ,— կանչել էր Հայրապետը,— գիտե՞ս, որ այդ գրքերի ամեն տողը քեզի պես 10 վարդապետի հետ չէին փոխիլ. ինչպե՞ս ձեռքերդ չդողացան՝ այդ սրբապղծությունը անելու ժամանակ։ Անիծյալ լինիս դու...»։ Եվ թշվառը սոսկալով հոգևոր պետի անեծքից՝ լռել ու թողություն էր խնդրում։ «Կորսվի՛ր,— ձայնել էր նրան,— գնա վերարկուդ հանիր և տնտեսատուն իջիր կովերի մոտ. դուն վարդապետ չես, այլ նախրապան, շոբան...»։ Ահա ուրեմն այդ նույն անձն էր՝ գրամոլ, հին գրքերը երեխայի պես սիրող ծերունին, որ պիտի գար, տասնաբ մտներ, խորան անցներ, դեզը նկատեր...

— «Գրքեր կա՞ վանքում,— պիտի հարցներ, անշուշտ»։— «Չեմ տեսել, Վեհափառ»։ «Բայց պետք է լինի, շատ պետք է լինի. կարելի՞ բան է, որ այսքան տարվա վանք...»։ «Չի մնացել, Հոգևոր տեր. ինձնից առաջ եղած վանահայրերը... միաբանների տգիտությունը...»։ Այսպես կասեր, բայց այդպես ասելու համար՝ դեզը գոյություն չպետք է ունենար։ Այդ միջոցին էր, որ Խորեն աբեղան կռացավ դեպի նա և մրմնջաց. «Ծովը նետենք, հայր-սուրբ, լավը այդ է...»։ Վանահայրը դարձավ և նրան նայեց։ Երիտասարդ, կոշտ կրոնավորը հասկացել էր իր մտահոգության պատճառը և ահա դարմանն էր առաջադրում։ Այլևս մտածելու ժամանակ չկար։ Դարձավ դեպի գիշերապահը և հրամայեց երթալ և երկու մեծ տոպրակ բերել...

Կեսգիշերը մոտ էր, երբ տաճարից ելնելով, դեպի կղզու արևելյան սուր ծայրն ուղղվեցավ մի տարօրինակ գիշերային թափոր։ Առջևից ծանրաքայլ գնում էր Խորենը, երերուն ջահը ձեռքին։ Լույսի նեղ շրջանի միջից՝ քայլում էին սև տոպրակների տակ կքված գիշերապահն ու Միսաքը, իսկ նրանց ետևից՝ թափորը փակում է վանահայրը, որի կնճռոտ դեմքին կիսաստվերը միայն երևում էր աղոտ շամանդաղի տակ։ Համրաքայլ և լուռ՝ թափորը անցավ ծովափն ի վեր և մտավ ծառաստանի մեջ։ Կատաղի էր դեռ ծովը. ալիքները մեծ շառաչով երբեմն լիզելու էին գալիս մինչև ծառերի արմատները։ Գիշերը խավար էր, ջրերը սև ու ծփուն, և ֆոսֆորային կապտավուն բաշերը խորության մեջ իրար էին մղում հապճեպով։

Ծառաստանից դուրս ելնելով՝ թափորը սկսեց մագլցել մի նեղ շավիղ և բավական բարձրացավ։ Վերը, մի խոշոր ապառաժ կիսովին դեպի ծովն էր կռացել. աբեղան կանգ առավ։ «Թափե՛ք...»,— հրամայեց վանահայրը։

Ծառաները տոպրակները պառկեցրին ապառաժի ծայրին, տակից բռնեցին ու մեջի եղածը շուռ տվին դեպի ծովը։ Աղոտ լույսի մեջ երևացին սեախառն թրթռուն կտորներ, որոնք պահ մի երերացին օդի մեջ, հետո զարնվեցին ժայռերի և թավալգլոր գնալով՝ ճղփացրին ջուրը։ Լսվում էր մետաղի ձայն էլ, երևի կոտրված պղնձյա աշտանակներ էին։ Եվ ալիքների շառաչյունն ու քամիի սուլոցը խլացրին ամեն ինչ... Ու թափորը սկսեց համրաքայլ դառնալ հուղարկավորությունից լուռ վերադարձող գերեզմանափորերի նման։

Երբ ջահի լույսը անհետացել էր ծառաստանի մեջ, ժայռերի վերևից լսվեց հանկարծ մի թեթև խշրտոց. խիճեր ու քարեր գլորվեցին դեպի շավիղը. հետո երևաց մի սև ստվեր, որ արագությամբ մոտ գնաց ապառաժին, պառկեց նրա վրա ու մինչև կես մեջքը կռացավ դեպի ջրերը։ Մի քանի լուռ բոպեներից հետո ելավ և շուրջը նայեց։ Երկար, լայն մորուքն ու խռիվ մազերը ծփացին. պարեգոտի քղանցները ճայթեցին ու մտրակեցին օդը։ Ճգնավորն էր։

4

Ընդունելությունը բավական հաջող եղավ։ Ցամաքաբերդից գնացող ձիավորները մեծ շուքով գյուղ մտցրին կաթողիկոսին։ Թեթև նախաճաշը սպասում էր ուռիների տակ։ Ներսինին կերավ ախորժակով և նավ նստեց։ Կեսօրվա մոտ էր. ծովը հանդարտ էր ու գեղաժիծաղ. անապակ ջրերի խորքում քարերն անգամ տեսնվում էին ու համրվում։ Եվ ինչպիսի անդորր խաղաղություն՝ շքեղ լեռների մեջ պսպղացող, ծաղկավետ բլուրների լանջքին պառկած այդ կապույտ տարածության վրա։ Կղզիի և գյուղի զանգակները մերթ մեղմ ու մերթ սուր խաղեր էին նետում աջ ու ձախ և հովիտների մեջ սփռում հայոց կաթողիկոսի այցելության ավետիսը։ Երկու միաբան-նավավարները թիավարում էին մեծ աշխույժով։ Նույն շուքով ընդունեցին Հայրապետին՝ կղզիին վրա։ Երեք նավակներն էլ դատարկվեցին։ Ընկերացել էին ախտեցիք և ցամաքաբերդցիք։ Ափ հանեցին 3 ոչխար և առատ պաշար։

Մեծ հետաքրքրությամբ էր, որ կաթողիկոսը, տաճարից ելնելուց հետո, երբ նստել էր խուցում, թողեց իր աջը, որ համբուրելու գար յուրաքանչյուր միաբան։ Քանի զննում էր այդ դեմքերը, կնճռոտվում էր ճակատը։ Նույն դեմքերն էին, ինչ որ տեսնում էր ամեն տեղ, սկսած էջմիածնից մինչև հետին վանքը. կոշտ, տգիտությամբ փայլող ողորմելիներ վերարկուի մեջ։ Ոչ մի նշույլ աստվածային այն կայծի, որ խելամտությունն ու հոգու բարձրությունն է վառում որոշ հայացքների մեջ։ Խամրած,

ապակյա աչքեր՝ ոչխարային վախով լի։ Այստեղ էլ ուրեմն ուտում էին միայն, խմում և քնում, թութակների պես էլ կրկնում աղոթքներ, որոնց միաբը գուցեև չէին ըմբռնում։ Ոչ իսկ ծովի շշուկի, ջրի ալիքների, հովի շնչյունի և ծառերի սոսավյունի չափ կարողանում էին պատմել այն աստծու փառքը, որի անունով լցվել էին վանքերի մեջ։ Ուտում էին աշխարհը, բթացնում էին զգացմունքներ, շահագործում էին և՛ հավատք, և՛ մխիթարություն։ Դառնանում էր ծերունին. էջմիածնից մինչև այդտեղ ոչ մի լավ դեմք չէր նշմարել, այն դեմքերից, որոնք հույս են ծագեցնում սրտերի մեջ և մտածել տալիս նոր-նոր արշալույսի մասին։

Երեկոյան դեմ բարձրացավ դեպի բլուրը և այցելեց Առաքելոցի ավերակ տաճարին։ Ընկերանում էին վանահայրը և մի քանի ախտեցիներ։ Ղուկաս ճգնավորի որջի մոտ կանգ իսկ չառավ։ Ճգնավոր... Այդ էր պակաս։ Մի խոտակեր ապուշ, անշուշտ, որ սպասում էր մահվան, աշխարհը իրանից ազատելու համար։ Բարեպաշտ... և ով բարեպաշտ չէր վանքերի մեջ։ Ահա օրինակ Մակար վարդապետը էջմիածնում. հացով ու ջրով բավականանում էր և օրնիբուն աղոթում. սահմանել է, որ օրական հազար ծունր պիտի կրկներ. ուրեմն ամբողջ օրը աղոթք և ծնրադրություն։ Աստծո ամբողջ արքայությունը նրան, նույնպես և այս ճգնավորին։ Իսկ ազգի՞ն ինչ, եթե անոնք երթային բազմելու արքայության մեջ, շահած լինելով այդ երջանկությունը գյուղացիների քրտինքով, նրանց հացովն ու նվերներովը։

Տաճարի մեջ կանգ առավ սյուների տակ և երկար մնաց ավերակների առաջ. խարխուլ, ամայի, քարուքանդ՝ աղվեսների բույն, թռչունների ապաստան, մողեսների և օձերի ասպարեզ։ Քամին սուլում էր կիսաքանդ կամարներից ներս, պտույտ էր գործում մինչև խավար խորշերը և դուրս նետվում բաց դռներից։ Մնացել էր հրաշալի քանդակներով դուռը։ Երկար նստեց նրա առաջ և ջանաց կարդալ արձանագրությունները։ Հանկարծ դարձավ դեպի վանահայրը. «Ո՞րտեղ են պահված կղզիի ձեռագիրները»,— հարցրեց խստությամբ։ «Ձեռագիր չի մնացել, Վեհափառ»։ «Չի մնացել. իսկ ի՞նչ են եղել. չէ՞ որ կային. այդ ես լավ գիտեմ»։ «Չկան, Վեհափառ, շատ եմ փնտրել. ինձնից առաջ եղած վանահայրերը... միաբանների տգիտությունը....»։

Կաթողիկոսը ավելի կնճռեց դեմքը և դարձավ Ցամաքաբերդից եկած մի ծերունիի, որ քիչ հեռու կանգնել՝ լսում էր նրանց։ «Ասա, ծերուկ,— հարցրեց նա,— վանքի մեջ ձեռագիրներ չե՞ն եղել»։ «Եղել են, շա՜տ...»։ «Լավ քննել եմ, Վեհափառ»։ Կաթողիկոսը դեմքը շուռ տվավ, պահ մի նայեց հորիզոնին և դարձավ վար իջնելու։ Ժամերգությունից հետո հրամայեց մի կարպետ տանել ուռիների տակ, պատվիրեց, որ ամեն ոք իր

գործին երթար և երկար մնաց։ Ընթրիքը բերին. հազիվ քանի մը կտոր խորոված կերավ, օրհնեց և ոտքի ելավ։ Հետո, երբ մենակ էր մնացել, առավ գավազանը և քայլեց դեպի կղզու այն ծայրը, ուր ալիքները պայթում էին ժայռերի դեմ և փրփուրով ծածկում ափը։

Բայց այդ ի՞նչ էր. ո՞վ էր այն այլանդակ արարածը, որ ապառաժի տակ կծկվել էր, ի՞նչ ուներ ծնկներին և ափերին մեջ, որ զննում էր ակնապիշ։ Միաբանների՞ց էր արդյոք։ Կանգ առավ ու դիտեց. աչքերն էլ լավ չէին տեսնում. մանավանդ որ մթնշաղը վրա էր իջնում։— «Ո՞վ է այնտեղ»,— ձայնեց վերջապես։ Մարդը գլուխը բարձրացրեց, նայեց Հայրապետին և, ոտքի ելնելով, ասաց. «Զեռդ ինձ տուր, Սիմեոն վարդապետ, եթե ուզում ես այստեղ գալ...»

Սիմեոն վարդապետ... այդ ինչ խորունկ և հեռավոր ձայն էր, որ հնչեց ականջին։ Կենդանի արարա՞ծ էր, թե անդրաշխարհային մի ստվեր, մի հին հիշողության մարմնացումը գուցե։ Մեքենաբար պարզեց ձեռքը, ասաց փոքրիկ տարածությունը և նստեց նրա կողքին։ «Մոռացե՞լ ես ինձ, վարդապետ,— ասաց մարդը.— ես Ղուկասն եմ, ճգնավոր Սևանի, զանգակահարը էջմիածնի»։ «Կաց, մի՞թե դու դեռ կենդանի ես, ո՞ւր էիր, որ զքեզ չտեսա»։ «Վերը»։ «Ահ, այն քո ո՞րջն է. ինչո՞ւ վարը չես բնակվում»։ «Պետք չէ՛... գազան են... պետք չէ՛. այնտեղ լավ է, մենակ»։ «Իսկ այդ ի՞նչ է ձեռքիդ մեջ»։ «Գրքի կտոր... շատ գտա... նստել եմ և որսում... ջուրն եմ մտնում և հանում քարերի արանքից... ուզո՞ւմ ես՝ այս կտորն էլ քեզ տամ»։ «Ինչպե՞ս թե որսում ես,— սոսկաց ծերունին.— ջրի՞ց ես որսում. բայց ի՞նչ գործ ունին ջրի մեջ որ»։ Ճգնավորը ծովը ցույց տվավ։ «Ծո՞վը, ինչո՞ւ ծովը, ո՞վ ձգեց»։— Ու սարսափահար, դողդոջուն՝ ոտքի ելավ։ «Նրա՛նք ձգեցին... տվին, որ ծովը պահի... շատ էր... երկու մեծ տոպրակ... լողացին, գնացին հեռու... պիտի որսամ ամեն օր... կարդամ, լավ բան է...»։

Կաթողիկոսը խորապես վրդովված՝ սկսում էր հասկանալ այլևս. և քանի հասկանում էր, այնքան մեծանում էր կատաղի մի զայրույթ սրտի մեջ։ Ու մեքենաբար թրջված, կակղած մագաղաթի թերթերը մոտեցրեց աչքերին ու կարդաց.

«Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանեայց, խրթնացեալ՛ի բարեզարթութենե բեմբին, ի քաջէն զրկեալ հովուէ...»։

— «Խորենացի...— մռնչաց նա,— ահ, Խորենացին, մագաղաթ... անիծյալնե՛ր, անիծյալնե՛ր...»։ Ապա բռնեց ճգնավորի ուսից, ցնցեց ուժգնությամբ և բացականչեց. «Ո՞վ էր այս անողը, ասա, ո՞ր ապիրատը...»։— «Ամե՛նքը, ամե՛նքը...— խոսեց ճգնավորը։— Դու մի՛ բարկանալ. ամե՛նքը... բավական որսացի ես, վերն է, տար էջմիածին...

դրանց էլ տար, քշիր այստեղից... գազաններ են... ես կզարնեմ կոչնակը, ժամը կասեմ մենակ... մենակ լավ է...»։— Ու լռեց։

Ահ, ավազակները, ավերող անպիտանները, որոնք ստեղծել չգիտնալուց զատ՝ գիտե՞ն ոչնչացնել ամեն ստեղծագործություն, որոնք ոչ իսկ պահապան շների ազնիվ հատկությունը ունեին, պահպանել ավանդ ստացած առարկաները։ Ահա ուրեմն, թե ինչ էին եղել վանքի գրքերը, հնամյա այն ձեռագիրները, որոնք ո՞վ գիտե ինչպիսի թանկագին կտորներ ունեին իրենց մեջ, ինչպիսի՞ հիշատակարաններ. ահա թե ինչպես էին ծիծաղում ազգի անցյալի և ցեղի ստեղծագործության արդյունքների վրա. օտար ավերածությունը ի՞նչ արժեք ուներ՝ դրանց տգիտության հետ համեմատելով։ Եվ մագաղաթը իր ձեռքին մեջ ճմրտկելով, մյուսովը գավազանը սեղմած ջղաձգորեն, ակնարկը մթնացող հորիզոնին, ակամայից հիշեց Խորենացու ողբի կտորները. «Վարդապետք տխմարք... Կրօնաւորք կեղծաւորք... Աշակերտք հեղգ առ ուսումն...»։ Ոչ իսկ պահպանել գիտեին հայ միտքը։ Ի՞նչ անել, ի՞նչ կարելի էր անել, ո՞ր մեկին անել. ամենքը այդպես էին, ամեն տեղ նույն բանն էր։ Պատիժը չէր օգնում, ավելի էր խստացնում այդ բիրտ մարդկանց. հորդորը չէր ազդում, չէին ըմբռնում։ Օտարը ավերում էր, քանդում. հարազատը լրացնում էր պակասը։ «...Եղէ ես որպէս բո՛ի վերայ աւերակաց»։ Ո՞րտեղ էր կարդացել, ի՞նչ կտոր էր այդ։

— «Նստինք»,— մրմնջաց նա։ Եվ նստեցին իրար կողքի, ժայռի վրա։ «Դու մի՛ բարկանալ,— շշնջաց ճգնավորը։— Իզուր ինչո՞ւ ես նեղանում։ Կթափեն. չթափեն՝ ի՞նչ անեն։ Կիտված էր ավանդատունը, շատ վաղուց կիտված. որ պետք չունին՝ ինչո՞ւ պահեն...»։

Ու լռեց. կաթողիկոսն էլ չխոսեց։ Եվ քով քովի՝ մնացին իրենց մտքերի հետ, իջնող մթնության և մշուշի մեջ։ Նրանց ստվերները դեռ երկար գծվում էին ժայռերի գլխին։ Ծովը փոթորկում էր միշտ. ալիքները ուժգին թափով պայթում էին ժայռերի կողին. մութը իջնում էր ու իջնում...

Բերա, 1914, օգոստոս

ՃԳՆԱՎՈՐ ԵՂՈ

Ա

— Չէ՛, այսպես չի լինիլ... Վարենք մենք, հնձե Հասան բեգը. ժողվենք մենք, շարշարվենք մենք, «կոռի-բեգիրի» դիմանանք մենք, Հասան բեգը հանգիստ՝ մեջքը բարձին տա ու մեր քրտինքը ուտե, մեր կանանց քաշե ու ելնե մեր ամեն բանը ծաղրե...

— Մեզ ասե՞ թե՝ «Քրիստոս էլ ինձ նման ավազակ էր՝ խաչեցին»...

— Գոռա թե՝ «Հայը գյավուր է, գյավուրն ո՞վ է, որ սիրուն կին ունենա, տավար ու եզ ունենա»...

— Հանգիստ ապրի...

— Գյավուրը ստեղծված է, որ մյուսուլմանին ծառայե...

Այս խոսքերը տեղի էին ունենում սրանից մի քանի տարի առաջ՝ Մուշի Զուխուրա կողմի գյուղերից մեկում գտնվող՝ մի մեծ տան սենյակում, ուր հավաքված նստել էին 30—40 ծերեր և լսում էին երիտասարդների այդ կատաղի խոսքերը։

— Զո՛,— գոռաց մի ուրիշ երիտասարդ,— օրը ցերեկով գա ձեռքիցը կովս խլե ու ինձ էլ ապտա՞կ խփե... ա՛խ, թե որ հայրս չազալեր լռելու, տես ես ինչպես նրա մեծ փրդուլը ականջը կթողնեի...

— Զո՛, ձո՛, ձո՛,— գոչեց ծանրությամբ ծերունիներից մեկը՝ երիտասարդին դառնալով,— լեզուդ քեզ քաշե, դո՞ւ ով, այդպես մեծ խոսքերն ով. դու էշ նահատակ լինելդ ես մեջտեղ բերում, էլ չես մտածում, որ եթե մի շարժում գործես քեզ պաշտպանելու, առաջ քեզ և ապա ամբողջ ընտանիքդ կտոր-կտոր կանե անօրենը. գիտե՞ս, թե՝ որտեղ ես, ի՞նչ ես կորցրել, ի՞նչ ես որոնում... ո՞ւր է իրավունք, արդարություն. բոլորը Հաջի Թայիբի[1] փեշերի տակ են թաքնվել. քանի-քանի հրաշքով մարդու նմանող մյութեսերիֆներ[2] փորձեցին իրավունքը և օրենքը այդ փեշերից ազատել, բայց Հաջի-Թայիբը հեռագիր տվավ յուր գիտցած տեղը, մաշալով Մշո երկրից թոցրեց այդ «երեխաներին» և օրենքը այս անգամ բարձ շինելով՝ գլխի տակը դրավ ու այս ու այն բեգի ձեռքը մի-մի սուր տվավ։ Զենդ կտրի ու մեզ, փորձվածներիս լսիր. հալա, քանի կարող ենք- քար-ճար կանենք, որ մեր կրոնն ու ունեցածը պահենք, երբ չկարողացանք... էհ, հալբաթ հային էլ աստված կա...

— Լավ է ասում Ատոմը,— դիտեց մի ուրիշ ծերունի,— երթանք այդ անիծածի մոտ, նորեն աղաչենք, ոտքերն ընկնենք, իր մարգարեն իրեն հիշեցնենք, բալքի մեզ ողորմա։

— Տեր, ողորմյա,— գոչեց մի ուրիշ ծերունի,— դեռ երեկ էր, որ անէծվածի ոտքն էլ լիզելու իջանք. էլի՞ գնանք։

— Իզուր է,— մեջ մտավ չորրորդ ծերունին,— Հասան բեգը զզվել է մեր աղաչանքներից. նա երեկ ինձ ասում էր. «Գյավուրներ, ձեր աղաչանքները զզվեցրին ինձ, ձեր գյուղն էլ ձանձրացրեց ինձ, բերեք 500 ոսկի տվեք, ես ելնեմ երթամ գյուղիցը»...

[1] Մուշի մեջ մի հայտնի շեյխ ավազակապետ, որ շատ ազդեցիկ մարդ է. հայտնի Մուսա-բեգի աներն է, մինչև այժմ կենդանի և երկիրը տակնուվրա է անում։

[2] Գավառապետ։

— Հա՞,— գոչեցին բոլորը ուրախացած,— փա՜ռք աստուծո, մեռնեմ զորությանդ, աստվա՛ծ։

— Ոտացդ հողն եմ, Մշու Սուլթան ս. Կարապետ։

— Քզի ղուրբան, Առաքելոց վանք։

Եվ ընդհանուր գոհաբանական աղոթքները սենյակը լցրին այնպես, որ աստված, եթե խուլ էլ լիներ, կլսեր այդ ջերմ աղոթքը...

Երիտասարդների վայրկենական կատաղությունը իջավ. ամեն մարդ այժմ սկսեց յուր հողի և արտի մասին մտածել։

Իսկ վճարվելիք փո՞ղը։

— Հե՛յ, մարդիկ,— բացականչեց հանկարծ մի ծերունի,— ամենքս էլ ուրախացանք՝ լսելով, որ Հասան բեգը վերջապես հաճում է այլևս մեր կովերը չխլել, մեր ցորենի դեզերը չայրել, մեր գեղեցիկներին չառևանգել. բայց այդ բոլորը անելու համար պիտի նա բարեհաճում է 500 ոսկի վարձ էլ ուզել... Մեր գյուղը սաղ ծախես, դրա կեսը չի արժիլ. մեզնից ո՞ր մեկը ունի մեկ ոսկի պատրաստ փող. 500 ոսկին ո՞րտեղից պիտի գըտնենք, որ Հասան բեգի ավազակությունը գնենք, տանք նրան, խնդրենք, որ բարեհաճի այլևս ավազակություններ չանել և հեռանալ գյուղից։

Ուրախության մեջ ոչ ոք չէր մտածել դրա վրա և այժմ, երբ ծերունին հիշեցրեց, ամենքի զվարթ դեմքերը իսկույն տխուր փոխվեցին։

Պարզ էր այս անգամ, որ ավազակի ձեռքից ազատվել անկարելի էր. հի՞նգ հարյուր ոսկի և մի ընչին, աղքատ գյուղի՞ց։ Մի քաղաք էլ չի կարող տալ Թուրքահայաստանում այդ գումարը յուր փաշային, բան է, եթե հանկարծ նա կամենա այդ փրկանքով ազատել յուր ձեռքից քաղաքը։

Երկար խոսեցին խառնիխուռն՝ նախ մեղմ, ապա գոռգոռալով, հետո կռվելով. մի քանի խումբ մինչև անգամ բռունցքներով սկսեցին խոսել... Վերջապես երիտասարդները կամաց-կամաց սկսեցին սենյակից դուրս գնալ՝ թողնելով այնտեղ միայն ծերունիներին։

Սրանք նախ փոքր-ինչ լռությամբ ու մորուքները շփելով՝ մտածեցին, հետո սկսեցին միմյանց հետ ցած ձայնով խոսակցել.

— Ծղբայրնե՛ր,— վերջ ի վերջո ասաց մեկը,— ուրիշ ճար չկա. կամ պետք է լռել ու դիմանալ և կամ այդ գումարը ճարել, տալ։ Շուտը թեև մեկ հատ է, բայց աստված մի արասցե, որ մեր ջահիլներից մեկը մտածի հանկարծ նրա վրա քար գցել, մեկ էլ տեսար իսկույն՝ մի փոքրիկ պատճառի սպասող՝ մյուս շները գյուղը կթափվեն ու քար քարի վրա չեն թողնիլ, մեր գյուղի թոզը կբարձրացնեն։

— Այդ այդպես է,— դիտեց երկրորդը,— բայց դիմանալ անկարելի է. պիտի մի կերպով փողը մեջներս հավաքենք և տանք անօրենին ու

ազատվենք նրա ձեռքից, մինչև որ տեսնենք՝ մի ուրիշ ավազակ էլ երբ կգա կնստի մեր գլխին։

— Ես էլ այդպես եմ ասում,— մեջ մտավ քահանան՝ վճռական կերպով,— հարյուր տուն ենք. ամեն մեկիս 5 ոսկի կընկնի. ճարենք ու տանք։

Հետո երկար խոսեցին. վերջապես վճռեցին 5-ական ոսկի ճարել ու ավազակին տալ։

Փոքր-ինչ իրենց դրության մասին խոսեցին, փոքր-ինչ աստծուն գանգատեցին, փոքր-ինչ ախուվախ քաշեցին, թրջեցին իրենց մորուքները, հետո ոտքի ելան, բարևի փոխարեն տխրությամբ միմյանց նայեցին, գլուխները թափահարեցին և վշտից հարբածների պես հեռացան։

Բ

Գյուղի մի հեռավոր անկյունում, մի խումբ ծառերի մոտ, կար մի անշուք խրճիթ, ուր բնակվում էր ծերունի Վրթնոն յուր ընտանիքի մի քանի անդամների հետ։

Ինքը շատ ծեր էր, ուստի և՝ եկեղեցի գնալուց ու արտում յուր Եղո որդու աշխատանքի վրա հսկելուց բացի՝ ուրիշ գործ չէր կարողանում կատարել։ Յուր կինն էլ այդպես. միմիա՛յն եկեղեցի էր գնում և տուն դառնալով՝ հսկում էր յուր հարսի տանու գործերին և կամ թե փոքրիկ թոռը գիրկը առած՝ անդադար խաղացնում էր, նրա առջև մոռանալով յուր հասակը, երեխայի պես ծիծաղում, խաղեր էր սարքում և զվարճացնում էր թոռնիկին։

Բավական հանգիստ ապրում էին. մի լուծ եզ ունեին, որով իրենց հողից կարողանում էին օրական պարենը ձեռք գցել. մի կով ունեին և ուրիշ ոչինչ. էլ ի՞նչ պետք է սակավապետ գյուղացու համար։

Վրթնոն երջանիկ էր, որովհետև գոհ էր յուր վիճակից և ուրիշի ունեցածին չէր նախանձում. բարեպաշտ էր մոլեռանդի չափ. այդպես էլ նա կրթել էր յուր որդուն. մի այդպես էլ հարս էր գտել նրա համար, և տան մեջ Նարեկի «Ի խորոց սրտի խոսք ընդ աստուծոյ» վերնագիր կրող գլուխները անդադար անգիր կերպով կրկնվում էին։ Շարականները նրանց երգերն էին, վարք սրբոցը՝ ձմեռնային երկար երեկոների զբաղմունքը. երբեք եկեղեցուց ետ չէին ընկնում ժամերգության ժամանակ. քահանան նրանց տնիցը անպակաս էր. օրհնում էր հացը, երբ սկսում էին թխել. կարասը՝ եթե մեջը մուկ էր ընկել և թասը՝ եթե կատուն ջուր էր խմել մեջիցը։

Եղոն, երբ փոքր էր, մի քիչ ծառայել էր քաղաքի մի աղայի տանը, ուր և սովորել էր կարդալ. այնտեղից յուր հետ նա գյուղն էր բերել Վարք

սրբոց, ժամագիրք, ավետարան և սաղմոս։ Եթե նրա արտը վարող լիներ, և ինքը՝ վարժված, նրան անպատճառ գյուղի վարժապետ կանեին, բայց Եղոն շատ համեստ էր, գիտեր, որ ինքը վարժապետ չէր կարող լինել։ Չէր հպարտանում իսկ, որ կարդալ-գրել գիտեր։

Այնչափ բարեպաշտ էր, այն աստիճան կատաղի կերպով հալածում էր խմողներին, խաղացողներին, անբարոյականներին, այնչա՛փ պարսավում էր կյուրակի օրը գործողներին, պաս չպահողներին, որ արժանապես նրա անունը դրել էին ճգնավոր Եղո։

Եվ իսկապես որ Եղոն ճգնավոր էր։ Նա մի կաթիլ գինի կամ օղի բերանը չէր դնիլ. զզվում էր ծխախոտից. աչքերը խոնարհեցնում էր, երբ անցնում էր օտար կնոջ առջևից, փախչում էր, երբ մի տեղ կյուրակի օրերը գյուղացիք նստած՝ նոր մոդա ընկած խաղի թղթերով «սկանբիլ»[1] էին խաղում։ Կասկածանքով էր նայում այն մարդուն, որին քիչ էր տեսնում եկեղեցում... բացարձակ ճշմարտախոս էր և արդար։

Ամենքը սիրում էին նրան. ամենքի հետ վարվել գիտեր. ամենքին խրատներ էր տալիս, որովհետև խելոք էլ էր։

Իսկ առողջությո՞ւնը.— նա հիշեցնում էր Մուշից դեպի Ռուսաստան կամ Կ. Պոլսի նոր պանդխտության գնացող երիտասարդների՝ իրենց երկար հասակներով, ջլապինդ բազուկներով, լայն թիկունքներով և դուրս ցցված առողջ կուրծքերով։

Եղոն այդպես էր։ Նրա ձեռքից վախենում էր գործը. նրա համար դժվարության չկար։ Յուր ջլապինդ բազուկներով նա եզին՝ կոտոշներիցը բռնած՝ ուղղության էր բերում և տանում լծի տակ. երբ շունչ էր առնում, կարծես փոնչում էր. խրճիթը մտնելիս պետք է սաստիկ ծռվեր, որ սև մազերով ծածկված գլուխը առաստաղին չխփեր։

Գեղեցիկ էլ էր. սև, համարյա միացած, խիտ հոնքերի տակ փայլում էին նրա՝ բարությամբ լցված՝ մեծ, սև աչքերը. կոր, մեծ քիթը չէր տգեղացնում նրա լիքը ու թուխ դեմքը, որ ավելի թխանում էր խիտ մորուքից և սրածայր հաստ ընչացքից։

Եղոն օրը մինչև երեկո գործում էր առանց հոգնելու, ամբարում էր ձմեռվա համար և երեկոյան գնում էր տուն, ուր նա զվարճանում էր երեխայի հետ, կատակում էր յուր սիրուն կնոջ հետ, որին նա անհուն սիրով սիրում էր և որից նույն կերպով էլ սիրվում էր։ Զբաղեցնում էր յուր ծերունի ծնողներին, որոնք կաթոգին սիրում էին իրենց մի հատիկ թոռուն[2]

---

[1] Մի տեսակ տաճկական թղթախաղ է։

[2] Երկարահասակ և սիրուն։

մանչին... և երջանիկ էր նա այդպես՝ յուր արդար գործի և խաղաղ ու սիրելի ընտանիքի մեջ։

Սակայն նրանք ցավ էլ ունեին, և այդ ցավերից ամենաանտանելին էին հարկահանները և գյուղի ավազակ բեգը։

Հարկահանը «զափթիե»-ներով գյուղն էր մտնում, ուտում էր, խըմում, թափում, կոտրում, հետո հավաքում էր հարկը թե՛կուզ այդ տարի գյուղացին և ո՛չ մի իսկ տավար ունեցած կամ ցորեն քաղած լիներ, թեկուզ սաղ տավարը կոտորված և արտերը այրված լիներ։ Վերջին ունեցածները առնում էր. եթե հակառակում էին՝ ծեծել էր տալիս ժողովում՝ քաղաք տանում, բանտի մեջ օրերով փտեցնում, և կամ տանում՝ ձգում էր վաշխառուների ճանկը, ուր խեղճ գյուղացին գրավ էր դնում հողերը և գոհացնելով հարկահանին՝ տրտում, տխուր վերադառնում էր գյուղ։

Այստեղ նրան սպասում էր ավազակը, որը գալիս խլում էր կովը և կինը— միայն այդ էր մնացել գյուղացուն...

Որչա՜փ ուրախ կլիներ, եթե յուր կյանքն էլ խլեին հետը։ Ցավեր էին դրանք, ցավեր, որից ազատ չէ ո՛չ մի թուրքահայ գյուղացի, ո՛ւր մնաց խեղճ ճգնավոր Եղոն։

Եվ երբ մյուս օրը Եղոն եկեղեցի գնաց աղոթելու, երբ նա աղոթում էր աստծուն, որ աստված խղճա իրենց, վերցնե նեղությունները, խնայե փոքրերին. երբ նա բավական աղոթած՝ կարծես ուզում էր հավատալ, որ աստված պիտի լսեր իրեն, հանկարծ քահանայի ձայնը գիպավ ականջին, որը ասում էր.

— Ավազակը ուզում է հեռանալ գյուղից, որդի՛ք...

— Շնորհակալ ենք,— աղաղակեց Եղոն,— շնորհակալ ենք, որ դու լսեցի՛ր...

— Բայց— ընդհատեց նրան քահանան՝ շարունակելով,— հեռանալու համար նա 500 ոսկի է պահանջում գյուղից...

— Ա՜խ, աստված...— մրմնջեց Եղոն գլուխը խոնարհեցնելով։

— Ուստի,— շարունակեց քահանան,— ամեն տան վրա 5 ոսկի նըշանակվեց, որ մի շաբաթվա մեջ այդ տանեն գյուղապետին տան. 500 ոսկին պետք է ժողովվի, ավազակի բերանը ձգվի, որ երթա...

— Որտեղի՞ց տանք...— գոչեցին գյուղացիներն ամեն կողմից։

— Այո՛, ո՞րտեղից...— մրմնջեց Եղոն և նրա՝ դեպի գետին դարձրած՝ աչքերից երկու կաթիլ արցունք գլորվեցին այտերի վրա։

— Ես գիտե՞մ, որդի՛ք,— մեջ մտավ քահանան,— ես էլ պիտի տամ. էլ ի՞նչ անենք, կամ պիտի լռենք և դիմանանք, որն անկարելի է և կամ պիտի ամեն ունեցածներս ծախենք և ճարենք 5 ոսկին։

Եվ լռեց։

Եղոն ուրքի ելավ, առավ շարուխները, ձեռքը բարձրացրեց, որ եկեղեցուց ելնելիս վերջին անգամ խաչակնքե, բայց բարձրացրած ձեռքը ցած ընկավ... մի քանի երերուն քայլեր արեց, երեսը սեղանին դարձրեց, փորձեց աղոթել.

— Տե՛ր,— ուզեց ասել, բայց ձայնը կտրեց և դուրս թռավ եկեղեցուց, հուսահատությամբ նստեց մի քարի վրա և մտածեց.

— Ո՞ւմ աղոթեմ, էլ ո՞վ պիտի լսե մեզ...

Սոսկմամբ ընդհատեց մտածությունը վախենալով հետևող խոսքերից. ընկավ ծնկան վրա և դառնապես արտասվելով ասաց.

— Ների՛ր, աստված իմ, քիչ մնաց մոռանայի քեզ... ա՛խր, աստվա՛ծ, դու էլ շա՜տ լռեցիր, է՜, շա՜տ անգութ մնացիր. չէ՞ որ մենք էլ մարդ ենք, մե՛զ է՛լ դու ստեղծեցիր, մենք էլ հավատացինք քո որդի Հիսուսին, մենք էլ անդադար աղոթում ենք քեզ և սկզբից շնորհակալ լինում մեզ անելիք բարությունների համար։ Դե՛հ, բարի՛ աստված, խըղճա՛ մեզ, գթա՛ մեզ, ողորմի՛ր մեզ։ Էլի՞ երթանք վաշխառուին, էլի՞ հողերնիս գրավ դնենք. այս անգամ էլ ե՞րբ կարող եմ այդ անօրենի պարտքը յուր կրկնակի տոկոսներով վճարել, հողս ու ընտանիքս նրա կեղտոտ ձեռքերից ազատել...

Գլուխը ձեռքերի մեջ առավ. արտասուքը խեղդում էր նրան։

Էլ չգիտեր խե՞ղճ Եղոն, որ իրեն պես շատե՞րը չոքել էին եկեղեցու շուրջը և իրեն պես և իրենից ավելի արտասվելով խոսում էին իրենց բոլորովին չլսող աստծու հետ...

Գ.

Ամեն վաճառական մի տեղ ունի շուկայում, ուր նա առևտուր է անում, բայց վաշխառուն ամեն տեղ է և սակայն մի որոշ տեղ չունի։

Այդպես էր և Մարտիրոս աղան—Մուշի հարուստներից մեկը, որ միշտ շուկայումն էր լինում, սրա-նրա խանութում նստում ժամերով, խեղճ գյուղացիներ էր գտնում, փող էր տալիս և մուրհակ առնում։

Նա լավ գիտեր մուրհակ գրել. այդչափը տաճկերեն գրել գիտեր։ Մուրհակը Տաճկաստանում գրվում է ամեն թղթի վրա, միայն պետք է տաճկերեն գրել (թեև հայերեն էլ կարելի է, բայց այդ ավելի լավ է) և տակը մի մարկա կպցնել, որի վրա պետք է ստորագրի պարտք առնողը։

Նոտար չկա, որ կարդալ չգիտցող պարտք առնողը կարողանա իմանալ, թե պարտք տվողը ճիշտ գումա՞րն է գրել, թե՞ ավելի։

Գրանից այնպես լավ օգուտ են քաղում վաշխառուները, որ մեծամեծ հարստություններ են դիզում և բազմաթիվ գյուղեր ավերակ դարձնում։

Վաշխառությունից լավ բանուկ առևտուր չկա այժմ Թուրքահայաստանում, որովհետև հարկերը միշտ շատանում են, և գյուղացին փող չունի վճարելու համար զինվորական, հողային և այլն հազար ու մեկ տուրքերը... տուրքե՛ր ու տուրքեր...

Ո՞ւր տանի ծախելու յուր ապրանքը գյուղացին, եթե ավազակները չթալանեն ու թողնեն, որ ծախի։

Ահա նա ունենում է մի ոչխար քաղաք տանելու համար։ Ծախում է ոչխարը և ստանում է մի քանի ղուրուշ։ Սակայն յուր կնոջ մերկ մարմինը ծածկելու համար նոր շոր պետք է առնի։ Գյուղացին մոռանում է ոչխար ծախելու բուն նպատակը այդ պետքի առաջ և առնում է շորերը։ Երբ հագվում են, գյուղացին վճարում է ունեցածը, բայց բանից դուրս է գալիս, որ 100 ղուրուշ պարտք է մնում վաճառականին։

— Կտորները ե՛տ առ,— ասում է գյուղացին,— ես էլ փող չունիմ։

— Հոգ չէ,— ժպտում է վաճառականը,— ես քեզ հավատում եմ, դու մեր Կիրակոսի տղան չե՞ս, քեզ մինչև 5—600 ղուրուշ ղուրբան լինի... առ է՛լ տամ... բայց շատ կլինի, մեղք ես, հետո դժվար կվճարես...

Հրե՜շը... ձգել է թակարդը և այժմ բարեհաճում է խղճալ նրա վրա։ Գրում են պարտամուրհակ, գյուղացին ստորագրում է ո՛չ թե 100, այլ 150 ղուրուշ մուրհակ, և այդ նկատում է այնտեղ նստած մեկը...

— Այդ ի՛նչ ես արել,— ասում է նա։

— Լռի՛ր,— փսփսում է նրան վաճառականը,— ես քեզ կշահեցնեմ։

Գյուղացին վեր է կենում գնալու և, հանկարծ հիշելով, թե ինչու համար էր քաղաք եկել, հուսահատաբար կանգնած է մնում։

— Ի՞նչ կա, բարեկամ,— ասում է վաճառականը,— չլինի՞ թե եկել էիր «վերգի»[1] համար փող գտնելու...

Խորամանկն այժմ է հիշեցնում։

— Ա՜խ,— գոչում է գյուղացին,— էլ ի՞նչ անեմ, առանց փողի մնացի։

— Հոգ չէ,— ասում է նրան վաճառականի մոտ նստած «մեկը»,— ես քեզ կտամ ինչքան կուզես։

Գյուղացին հրեշտակ տեսնել է կարծում։

Մի ժամից հետո նա գյուղ է դառնում հարկի համար 2 ոսկի ճարած, բայց յուր հողը վաշխառուի մոտ 5 ոսկիի համար գրավ դրած...

Այսպես ուրեմն վաճառականը և վաշխառուն՝ միացած հարկահանի հետ՝ տալիս են գյուղացուն առաջին կործանիչ հարվածը... Այսպես է լինում, երբ գյուղացին մի բան ունի ծախելու։ Իսկ երբ չունի, դատարկ ձեռքով քաղաք է մտնում մի գառ իբր նվեր առած յուր հետ՝ տալու համար այն հրեշ վաշխառուին, որը պիտի կործաներ իրեն...

Այդպիսի վաշխառուներից մեկն է Մարտիրոս աղան, բայց նա շատ անգամ էլ տանն է գտնվում, որովհետև հաճախորդ շատ ունի և պետք է նրանց գոհացնել։

Առավոտ էր, և Մարտիրոս աղան նստել գրում էր մուրհակներ՝ մի քանի գյուղացոց համար, երբ սենյակի շեմքի վրա երևեցավ մի սիրուն դեմք։

— Վա՛յ,— գոչեց Մարտիրոս աղան,— այդ դո՞ւ ես, ճգնավոր Եղո՛ն, մտի՛ր, մտիր, աչքիս վրա եկար, այդ ի՞նչ է ձեռքինդ։

— Մի գառ է, աղա. քեզ ընծա եմ բերել։

— Շատ շնորհակալ եմ... Դե՛հ, գառը տար ծառային և ներս արի տեսնենք, անպատճառ մի փորի ցավ կունենաս։

— Իհարկե,— մռմռաց Եղոն չարուխները արձակելով,— գյուղացին մինչև փորի ցավ չունենա կգա՞ քեզ մոտ։

— Վա՛յ,— գոչեց նեղացած վաշխառուն,— ուրեմն ես վա՞տ մարդ եմ, որ ինձ մոտ միայն փորի ցավի համար գան... հը՞, վա՞տ մարդ եմ։

— Ինչո՞ւ ես հարցնում, Մարտիրոս աղա,— ասաց Եղոն,— դու գիտես, որ ես ճիշտ խոսող մարդ եմ։

Վաշխառուն գունաթափվեց, լռեց, սակայն և մռմռաց շարունակելով մուրհակ գրել։

— Կեցի՛ր,— մռմռաց նա անլսելի ձայնով,— հիմա քեզ ճշմարտախոս կշինեմ...

Մուրհակը գրեց, ստորագրել տվեց, հետո փող տվեց գյուղացուն և դառնալով Եղոյին.

— Ճգնավո՛ր,— ասաց, —ի՞նչ հրաման ունիս։

— Հրաման չունիմ, աղա,— խոսեց Եղոն,— այլ խնդիր... մեր գյուղի ավազակը գյուղից հեռանալու համար փող է ուզում 500 ոսկի. ամեն մեկիս 5 ոսկի է ընկել վճարելու...

— Գիտեմ այդ,— ընդհատեց վաշխառուն նրա խոսքը,— է՛, ի՞նձ ինչ։

— Չեմ ասում թե՝ այդ քեզ ցավ է պատճառում,— ժպտեց դառնությամբ Եղոն,— ոչ, ես եկել եմ, որ 5 ոսկի փող ուզեմ պարտք։

Վաշխառուն բարձր քրքիջ արձակեց։

— Հա՜, հա՜, հա՜,— գոչեց նա,— վատ մարդն էլ փող կունենա՞... ես վատ մարդ եմ, եղբայր,— ավելացրեց նա լրջությամբ— վատ մարդը փող չի ունենալ։

1 Տուրք։

— Սխալ ես, աղա,— ժպտեց Եղոն,— մեր երկրի մեջ այժմ միայն ավազակները փող ունեն։

— Ուրեմն ես ավազա՞կ եմ,— բարկացավ վաշխառուն,— հա՞, ես ավազա՞կ եմ... դե՛հ, էլ ո՞ւր ես նստել, ելիր գնա ավազակի մոտից, հայդե՛... սորան նայեք, ճշմարիտ է խոսում ճգնավորս, ինձ ավազակ է ասում... ելիր նայի՛ նք...

Այդ միջոցին սենյակը մտավ քահանան, Եղոյի գյուղական քահանան, որ մինչև մեջքը ծռվելով, մի ստորաքարշ ծիծաղ դեմքին, բարևեց տեղիցը անգամ չշարժվող վաշխառուին և գնաց նստելու վերի անկյունում վաշխառուից փոքր-ինչ հեռու։

— Բարի եկար, տեր հա՛յր,— դարձավ նրան աղան,— տեսնո՞ւմ ես ձեր ճգնավորին. ճշմարտախոս է, ինձ ավազակ է ասում։

— Վա՛յ, վա՛յ,— գոչեց քահանան Եղոյին դառնալով,— մեղա ասա՛, որդի... Մարտիրոս աղան՝ ավազակ... որի՞ն կողոպտեց, փառք աստուծո, բոլորիս բարերարություն է արել և միշտ անում է... Ջահիլ է, աղա,— դարձավ նա աղային,— նշանակություն մի տալ խոսքերին։ Եղոն վատ տղա չէ, նա արդար տղա է, նորեն քո հովանիդ պտկաս մի անիլ վրայից։

— Հոգ չէ, ես կներեմ,— խոսեց վաշխառուն,— և կտամ քեզ, Եղո, հինգ ոսկի մեկ տարի ժամանակով, հինգ ոսկիի համար էլ մեկ ոսկի տոկոս կառնեմ։

— Շատ չէ՞, աղա,— հարցրեց Եղոն,— առաջին անգամ 4 ոսկիի համար միայն կես ոսկի տոկոս առիր... սակայն հոգ չէ, գրիր մուրհակը։

— Դու կարծեմ հայերեն կարդալ գիտես, այնպես չէ՞։

— Գիտե, գիտե,— մեջ մտավ քահանան,— ինձնից լավ գիտե։

Եվ վաշխառուն գրիչն առավ ու տաճկերեն գրեց մուրհակը, հողերն էլ «իսթիքալ»-ի[1] տակ առավ, ստորագրել տվեց և հինգ հատ լիրա տվեց Եղոյին։

Հետո, շատ հետո, երբ արդեն 5 ոսկին 30 ոսկի էր դարձել, Եղոն իմացավ, որ մուրհակի մեջ 10 ոսկի է գրված։

Եղոն միամտվեց, սակայն հոգին խիստ տրտում էր և երբե՛ք աղոթքը չէր գալիս մխիթը։

Երբ դուրս էր գալիս տնից, քահանան նրա ետևից հասավ և միասին գնացին դեպի գյուղը՝ խոսակցելով։

[1] Իսթիքալը մի պայման է, որով պարտատերը գրավում է պարտապանի կալը, եթե վերջինս փողը չտա ժամանակին. համաձայնությունից է կախված իսթիքալ անելը։

Այդ խոսակցություններից մի քանի խոսք էր միայն միտը պահել Եղոն, երբ տուն մտավ։

— Ի՞նչպես վճարեմ այս փողերը, տեր հայր,— հարցրել էր Եղոն քահանայից։

— Ո՛րդի,— ասել էր քահանան,— երկիր վարելով դու հազիվ կարող ես վաշխառուիդ ընծան մատակարարել, որովհետև ամեն մի բերքիցդ եթե ընծա չտանես նորան, այն ժամանակ աղան զանգատ կտա, և կերթաս բանտի մեջ կփտես և կամ թե հողը ձեռքիցդ կերթա։

— Ի՞նչպես,— գոչեց զարմացած Եղոն,— իսկ մի տարի ժամանակը...

— Այդպես բան աղան սովորություն չունի գրելու յուր մուրհակի մեջ։

Եղոն թակարդն էր ընկել. գլուխը ծռեց և մոմռաց.

— Ապա ի՞նչ անեմ։

— Գնա Կ. Պոլիս. ասում են, այնտեղ աշխատանք կա. աշխատիր և ուղարկիր, իսկ երբ բացակա լինես, վաշխառուդ իրավունք չունի ձեռք դպցնելու հողիդ մինչև որ ետ դառնաս։

Դ

Կ. Պոլսի Պահճե-կափու կոչվող մի եվրոպական ափի նավահանգստում փովող թաղի մեջ՝ մաքսատունից ոչ շատ հեռու գտնվում է Ջեֆեր-բեյ խան անունով հինգհարկանի գեղեցիկ հյուրանոցը, որի ներքին հարկը կազմում են փառավոր մթերանոցներ և խանութներ։

Ցերեկները այդ մթերանոցներից՝ մի կողմից ելնում են ապրանքների մեծամեծ հակեր և մյուս կողմից՝ մաքսատունից գալով լցնում են պակասած տեղը։ Ամեն կողմից գալիս են մշակները, որոնք ուսերի վրա առած ճոճող ամուր կլոր փայտը անց են կացնում նրա վրա հակը և, չափավոր ու կանոնավոր քայլերով, ճոճեցնելով փայտը բեռի հետ՝ տանում են ապրանքներ այս ու այն կողմ։

Հուժկու են այդ մշակները իրենց փափուկ կոշիկ հագած և սրունքները լերկ ոտներով, բաց, ջլապինդ բազուկներով. երկարահասակ են, մեծ քթերով, գեր դեմքով և վառվռուն սև աչքերով, սակայն միօրինակ ծանր աշխատությունը մաշել է նրանց. միայն մի քանի տարի են կարողանում այդ ծանր ճոճանակները կրել իրենց լայն ուսերի վրա, որոնք, լինելով սկզբում այնչափ ուժով, հետզհետե թուլանում են և թուլացնում իրենց հետ ամբողջ ձեռքը։

Մշեցիք են դրանք։

Դեռ այդ պատվավոր մշակությունն է... պիտի տեսնել նրանց մաքսատան մեջ հակերը մեջքներին, կորաքամակ, կեղտոտ հագուստով, հետզհետե մաշվող կերպարանքով։

Պիտի տեսնել Ղալաթիայի կողմը խաների մեջ ընկած մշակներին իրենց կրելիքներով (մի տեսակ բարձի նման շինվածք է այդ, որը միշտ մեջքի վրա ունին և որին են հենեցնում բեռը), պիտի տեսնել Պալըգ բազարում, Թախտե-Կալեում, ուր նրանք ընկած են ամենակեղտոտ անկյուններում. սրճատունների մեջ— Սիրքեջիում, խաների մեջ— ամեն կողմ և գինետունների անկյուններում— Ղալաթիա և Սամաթիա և Ենի-կափու և Կում-կափու...

Պիտի տեսնել նրանց՝ ոտաբոբիկ, երբեմն գլխաբաց, ջրհան գործիքը ուսերի վրա դրած՝ փողոցում վազելիս և որոտաձայն գոռալիս, երբ մի որևիցե տեղ հրդեհ է լինում։ Եվ ո՞վ է այն ջրհանակիրը, որ կարողանա մշեցու պես ջուր խփել, կրակը մտնել, ազատել ամենայն պարզությամբ անձեր, անգնահատելի մնալ և նորից երթալ կրծելու յուր մի կտոր ցամաք հացը՝ ընկած մի խանի կամ մի սրճատան անկյունում։ Այդտեղ նա, եթե դեռ նոր է Կ. Պոլիս մտել, մտածում է յուր հայրենիքի վրա... ժամերով զբաղված է յուր հիշողություններով և չէ կարողանում քնել, չոր անկողնի— գետնի վրա ընկած և գլխին բարձ արած յուր կոշտ ու անհարթ «կրելիքը»... կամ կարդում է տնից ստացած նամակը հազարերորդ անգամ, գուցեև արտասվում է...

Այդ այդպես է լինում, երբ պանդուխտը մենակ է և դեռ նոր է. իսկ հինը գտնում է ընկերներ և գիշերը անցկացնելու համար առաջ գնում է մի գինետուն, ուր նա՝ մոռանալու համար իրեն տնից լուր բերող տխուր-տխուր նամակները՝ խմում է անհագաբար և հետո գնում է յուր օրական աշխատանքի վերջին մնացորդն էլ պոռնկատան տալու...

Այդպես է լինում պանդուխտը այդ անդունդի տիղմերի մեջ և, եթե հաշիվ բռնվի, չկա 100-ից 10-ը, որը ծանոթ չլինի գինետունների ու պոռնկատունների հետ, որ մտաբերելիս լինի անցյալ պարզ կյանքը և զբաղվի յուր հիշողություններով...

Աշունը յուր վերջին էր մոտենում. մի գեղեցիկ օր էր դեռևս, երբ «Խայրիե» ընկերության Վոսֆորի վրա պտտող շոգենավակներից մեկը՝ Պոյուք-դերե գնալու ժամանակ՝ անցավ նեղուցի մեջ մտնող մի շոգենավի կողքից, շոգենավի, որի ափերի վրա հենած ապշորեն ամեն կողմ էին նայում գզգված, այլանդակ ու կեղտոտ հագուստներով բազմաթիվ առողջ, գեր և երկարահասակ մարդիկ։

Պանդուխտների վերջին շոգենավն էր, որը կես ժամից հետո կանգ առավ մաքսատնից փոքր-ինչ հեռու, խարիսխ ձգեց և սպասեց, որ մաքսատան պաշտոնյաների ներս մտնելուց հետո ազատվի այդ վիտացող բազմությունից։

Հազիվ թե շչակի ձայնը կարվեց, որ չորս կողմից շոգենավի մոտ հասան բազմաթիվ նավակներ, որոնցից շոգենավ ցատկեցին նավաստիներ և, շատ անգամ ուժով, նավակների մեջ լցրին ճանապարհորդներին՝ ափը տանելու համար։ Կեղտոտ անկոշիներ, ծվեններ կտորներից փաթաթած կապոցներ և մի քանի հատ կտավե շապիկներ էին, որ պատիվ ունեցան նայելու մաքսատան նավամատույցի վրա Օսմանյան մաքսային պաշտոնյաները, որոնք այդ անելուց հետո մեկ-մեկ նրանց թողնում էին, որ անցնեն, և մշեցիների, վանեցիների ու շատախցիների այդ ահագին բազմությունը միմյանց ետևից շարված սկսեց դուրս գալ մաքսատան մյուս դռնից՝ Պահճե-կափուի լայն փողոցի վրա։

Ոչ որ նրանց վրա ուշք չէր դարձնում. ամենքը սովորել էին ամեն տարի և տարին հինգ-վեց անգամ կրկնվող այդ խղճալի տեսարանը տեսնել։

Կային, որոնք չգիտեին, թե ուր գնան և շվարած կանգնել, մնացել էին դռան առջև. կային, որ հենց մաքսատան բակի մեջ էին ցած դրել իրենց թեթև կապոցը և նստել՝ իրենց բարեկամներին էին սպասում, և կային, որոնք փողոցեփողոց ընկած փնտրում էին իրենց ծանոթների բնակած խաները ու մթերանոցների դռները. իսկ շատերը արդեն՝ իրենց դիմավորող հայրենակիցների հետ համբուրվելուց հետո՝ իրար տգեղացած, նիհարած, երկարացած կամ ծերացած էին գտնում և իրենց տան մասին միմյանց բարձրաձայն հարցմունք անելով գնում էին զանազան կողմեր։

Ամենքը քաշվեցին։ Նավամատույցի վրա մնում էր միայն մի երկարահասակ մշեցի, որ շվարած կանգնել և յուր չորս կողմն էր նայում. չգիտեր՝ ո՞ւր գնար, ի՞նչ աներ, որի՞ն դիմեր. նրան միայն ասել էին՝ «Գնա Կ. Պոլիս, այնտեղ քեզ համար գործ կգտնես»՝ և ահա նա եկել էր հազար ու մեկ նեղություններ քաշելով, տասնևվեց օրվա ճանապարհը ուտով մի ամսվա մեջ գալով... եկել մտել էր Կ. Պոլիս... Տեսնում էր նա յուր տեղից Ղալաթիայի երկաթե կամուրջը, որի վրա ման էին գալիս հազարավոր մարդիկ, տեսնում էր ջրի վրա ամեն կողմ նավեր, շոգենավեր, այս-այն կողմ սլացող նավակներ... տեսնում էր դիմացը հետզհետե բարձր դիրք ստացող Ղալաթիան յուր հոկայական շենքերով... ամեն կողմ՝ խառնուրդ, անցուդարձ. ամեն կողմից զանգակների, շչակների, մարդկանց, կառքերի և այլն խլացնող ձայներ, անտանելի աղմուկ։

Եվ այդ քաոսի մեջ ո՞ւր գնար նա, ինչպե՞ս գործ գտներ, որի՞ն դիմեր. գիշերն էլ մոտենում էր,— որտե՞ղ պիտ քներ...

— Ի՞նչ ես կանգնել այստեղ, կորսվի՛ր,— լսեց նա յուր ականջ ետևից և տեսավ յուր առջև մաքսատան ծառայողներից մեկի դաժան կերպարանքը։

Վախեցավ ու քայլեց։ Գնում էր, առանց իմանալու, դեպի դուռը և երբ դռնից դուրս եկավ, հանկարծ շլացած կանգ առավ, որովհետև մի. տել էր Պահճե-կափուի ամենաբանուկ գլխավոր փողոցը, որտեղից անցնում-դառնում էին բազմաթիվ կառքեր և սլացող ձիաքարշ երկաթուղու երիհարկանի կառքը։

Այդ հրեշային բանը ի՞նչ էր, որի մեջ այդչափ բազմություն էր մտել և որ միայն մի ձի կարողանում էր քաշել ու արագությամբ տանել։

Մեծամե՛ծ մթերանոցներ, որոնց դրսի կողմում ապակյա դարանների մեջ շարված էին զենքեր, զանազան տեսակ շլացնող փայլուն բաներ, որոնք որչա՞փ գեղեցիկ էին և որ երբեք չէր տեսել նա։

Հանկարծ զգաց, որ մեկը բռնում է թևից. նայեց. կողքին կանգնած էր յուր նման հագնված մի ժպտող մշեցի, որը, քաշելով նրա թևը, ասում էր.

— Գնանք, ճգնավոր, այստեղ մի՛ կանգնիլ։

— Կարապե՞տ...— գոչեց նա, ճանաչելով յուր հայրենակցին և ջերմագին համբուրվելով նրա հետ,— այդ դո՞ւ ես, ա՞խ, ի՞նչ լավ եղավ... չէի իմանում ինչ անեմ... Տեսնո՞ւմ ես, այս բոլոր փայլուն բաները, ապրանքը, կառքերը, փառահեղությունները, Կարապետ, այդ բոլորը վախենում են ինձ։

— Վախենալու ոչինչ չկա, գնանք մեր խանը, սրան Ստամբուլ կասեն, դեռ ինչե՞ր պիտի տեսնես։

Նրանք քայլեցին դեպի վեր՝ Ենի-Ջամիի կողմը։

— Ստամբուլի պես քաղաք կա՞,— խոսեց Կարապետը,— բայց թող մնա դեռ դրանք... այս ինչպե՞ս եղավ, որ դու էլ եկար մեր կողմերը... կամաց, մի՛ քիչ ետ քաշվիր, թրամվան քեզ կկոխե...

— Թրամվան ո՞րն է։

— Ա՛յ, այդ երկու հարկանի կառքն է, որ գալիս է։

Եկավ ձիաքարշ կառքը և սլանալով անցավ ճիշտ մեր երկու հայաստանցիների կողքից՝ սաստիկ վախեցնելով Նորեկին։

— Վախեցա՞ր,— ծիծաղեց Կարապետը, երբ կառքը անցել էր,— վախենալու ոչինչ չկա, նա այդ երկաթի գծերից դուրս չի գալ երբեք։

Ճղելով բազմությունը, հրվելով և հրելով՝ հազիվ կարողացան հասնել Ջաֆար-բեյ խանի մոտ, ուր տանում էր Կարապետը Նորեկին։ Մոտենալով դռան մոտ եղող մի մեծ ու դատարկ սենյակի՝ նրանք ներս մտան։

Այդ սենյակի պատերի տակ զանազան տեղերում դրված էին Նորեկի ձեռքումը բռնածի նման 5—6 կապոցներ, որոնցից մեկի վրա նստեց Կարապետը, պատվիրեց Նորեկին, որ իրեն կապոցն էլ դնե գետին ու նստե, և ասաց ծիծաղելով.

— Վա՛յ, ճգնավոր եղո՛ր, վա՛յ, դո՞ւ էլ Ստամբուլ է՛, բարի եկար, լավ առաջ ես, տեսնում եմ, մաշալլահ, բոյդ ու կուրծքդ ասլանի բոյի ու կուրծքի են նմանում, իսկ ե՞ս...

— Դու էլ ինձ նման էիր, Կարապետ,— ասաց տխրությամբ Եղոն,— բայց այժմ փչեմ՝ ցած կընկնես, այդ ինչո՞ւ ես այդպես եղել...

— Կացիր, մի քանի ամիս թող անցնի, քեզ էլ կտեսնենք. սրան Ստամբուլ կասեն, այս քաղաքը առողջ մարմին, լայն թիկունք, հուժկու բազուկներ չի պիրում. այդ ի՞նչ է, կոպիտ խրմբըլ[1]... պետք է լինել նուրբ, բարա՛կ, սիրուն, մեջքը բարա՛կ... բարակ... վիզը բարա՛կ... այ, թոզ նայեիր, քեզ նման սկի մարդ կա՞ր, չէի՞ր տեսնում, թե ինչպես շաթոզ նայեիր, քեզ նման սկի մարդ կա՞ր, չէի՞ր տեսնում, թե ինչպես շաթերը քեզ էին նայում. ախր անառվոր բան է այստեղ քեզ նման մի մարդ տեսնել... «տուտու»[2]-ները, «հանըմ»[3]-ները այդպես «չենեվեր խրմբըլի»[4] չեն սիրում... ա՛յ էֆենդի՛ն, եթե այդպես մնաս, քեզ տուն չի ուրախիլ, միա կամ հաց տանելու՝ «տղայքը կվախենան կոր, հանըմ էֆենդին կմարի կոր վախեն»...

Եղոն ապշությամբ լսում էր այս տարօրինակ ճառը և ոչինչ չեր հասկանում. միայն այն հասկացավ, որ Ստամբոլում չէր կարելի առողջ ու հուժկու լինել։

— Վա՛յ, —գոչեց նա,— ապա ի՞նչ անեմ։

— Հե՛շտ է, ծիծաղեց Կարապետը,— մի երկու ամիս ճոճանակավոր բեռ կկրես և այնուհետև «նազիք խրմբըլ»[5] երբ լինես— սիրուն ես բավական— քեզ «հանըմ էֆենդին» միշտ կհրամայե, որ տուն երթաս, տան համար բան-ման առնես, «տղայքը խաղացունես, քիչ մ'ալ իրեն խնդացնես քու խոսքերովդ»... այն ժամանակ ահա փող կաշխատես, մանավանդ եթե միշտ զվարթ եղար, էֆենդիի դժոխային հայհոյանքներին պատասխանելու փոխարեն նրա զարնող ձեռքը լիզեցիր և «հանըմ էֆենդի»-ի քմահաճույքներին գոհություն տվիր։ Ես երաշխավորում եմ, որ

---

1. Գոլսեցիք գավառացիներին նախատելու համար նրանց կոչում են խրմբըլ, որ նշանակում է «անճար, անշնորհք, հիմար, կոպիտ»։
2. Տիկին, մորաքույր։
3. Տիկին (պատվավոր)։
4. Ձեռսուն խրմբըլ, հնկա խրմբըլ։
5. Բարակ (нежный)։

եթե այդպես լինես, պարտքդ էլ կտաս ու քո վաշխառուիդ էլ մի քանի լիրա կկարողանաս տոկոսով պարտք տալ։

— Ախր ես դրանց ոչ մեկին էլ չեմ իմանում։

— Կսովորես կամաց-կամաց։ Էգուց ես էֆենդուն կասեմ, դու էլ մեր մեջ կմտնես և «համբալ» կլինես. հետո կամաց-կամաց երբ ծանոթանաս շատերի և ամեն բանի հետ, կհասկանաս—դու խելոք ես—կիմանաս, թե ինչ պիտի անես... աշխատիր դա լեզուդ էլ փոքր-ինչ փոխելու, «զիմ հաց», «լե», «հմլա»՝ այպիսի խոսքերը թող և «կոր, նէ, ասանկ, ատանկ գործածիր, քո աղայիդ էլ միշտ «էֆենդի» ասա, գրագրին «պարոն»։ Վերջապես «նազիք» եղիր, բարակցի՛ր, բարակցի՛ր...

Եղոն, որ տխրությամբ գլուխը կախել էր, ընդհատեց նրան, նայեց տխուր աչքերով և ասաց դառնությամբ ու վախկոտ ձայնով.

— Կարապե՛տ, սոսկալի է, ես վախենում եմ այդ բոլորից...

— Հիմար ես, բարեկա՛մ,— ծիծաղեց Կարապետը,— վաշխառուդ պարտքը, հայրենիքում կինդ, ծնողքդ ու որդիքդ՝ հաց և այստեղ փորդ՝ կշտանալ են ուզում... ո՛չ ոք քեզ հաց չի տալ... լսի՛ր ինձ, քանի կարող ես բարակցիր, որչափ բարակես՝ այնչափ շատ փող կաշխատես։

Երբ Եղոն մենակ մնաց, գլուխը ձեռքերի մեջ առավ և դառնությամբ արտասվեց. հետո ծունկ չոքեց, աղոթեց և ասաց.

— Աստված ի՛մ, ինձ սիրտ տուր և օգնիր, առանց քեզ կորսվելու եմ...

Սրբեց արտասուքը և մրմնջեց.

— Դու արտասուք, մի՛ պակսիլ աչքիցս, առանց քեզ՝ մոռանալու եմ։

Ե՜ղ ճգնավոր Եղո... վերջին աղոթքն էր այդ և վերջին արցունքները, որ նա թափում էր հիշելով յուր հայրենիքը և ծնողքը, որդին ու կինը։

Ե

— Յա՛ Մշու Սուլթա՛ն սուրբ Կարապետ,— գոչեց առաջին անգամ Եղոն, երբ բեռան փայտի մի ծայրը ուսի վրա առավ։

Եվ դրանից հետո նա օրը մինչև երեկո բեռ էր կրում։

Որչա՜փ ուրախացավ նա, երբ առաջին անգամ ստացավ յուր մի շաբաթվա աշխատանքը, երբ այդ փողը նա կապեց, կապկապեց յուր թաշկինակի մեջ՝ դրեց ծոցը և երբ զգաց, որ վաշխառուին հասանելիք հինգ ոսկիից աշխատեց ու տվեց մի քանի «մեջիդ» (նրա համար՝ ոսկեանալ նշանակում էր վճարել պարտքը)։ Որչափ տրտում էր, երբ պետք էր լինում այդ փողից ուտելիքի տալ։ Եվ ինչ էր այդ ուտելիքը— մի կտոր հաց ու պանիր։

— Աստված ի՛մ,— գոչում էր,— այս ուտելը չլիներ։

Եվ հետո, երբ մտածում էր, որ առանց ուտելու չէր կարելի.

— Հոգ չէ՛,— ասում էր,— միայն հաց ու պանիր կուտեմ...

Այլևս կյուրակին, տոնը և պաս օրը նրա միտքը չէր ընկնում, չկար նրա համար, նա միշտ վաշխառուի մասին էր մտածում։

Եվ ընկերները միշտ ծիծաղում էին նրա վրա։

— Ճգնավոր Եղոն փող է ժողովում,— ասում էին նրանք։

Անցավ երեք ամիս։ Տոն էր այն օրը, երբ Եղոն դեպի «երկիր»— հայրենիք ուղարկեց վեց ոսկի, մեկը՝ ծնողներին ծախսելու և մյուսը 5-ը՝ պարտքը տալու։

Այժմ հանգիստ էր և այլևս վաշխառուի վրա չէր մտածում։ Ընկերները ամեն երեկո զբոսնելու էին գնում, իսկ նա պառկած, մտքով յուր հայրենիքը— յուրայինների մոտ էր թռչում. աղոթում էր և աղոթելով քնում։ Սակայն այսպես չմնաց միշտ. մի օր, երբ ընկերները գնում էին զբոսնելու և երբ, ամեն անգամվա պես, փորձեցին Եղոյին էլ իրենց հետ տանել, նա չընդդիմացավ և գնաց նրանց հետ։

Ընկերները զարմացան։

Մտան մի գինետուն և օղի ուզեցին. խմեցին և Եղոյին առաջարկեցին։

— Ինչո՞ւ եք խմում այդ անպիտան բանը,— հարցրեց Եղոն։

— Խմի՛ր, Եղո,— գոչեց Կարապետը,— մեր քեֆը այս է, պանդուխտը Կ. Պոլսում քեֆ անելու միայն այս միջոցն ունի... խմիր ու մոռացիր...

— Մոռանա՞լ, ի՞նչը, տո՞ւնը, տե՞ղը, ծնո՞ղքը...

Հանկարծ մեկը կռացավ դեպի նա և ասաց.

— Ցավերը...

— Այո՛, ցավերը,— մռմռաց Եղոն և մի ումպով դատարկեց օղին, հետո շանթահարի պես գավաթը ձգեց և ընկավ գետին։

Նրա ծոցից մի թուղթ դուրս թռավ.— նամակ էր։

Նամակը բացին.

«Սիրելի որդիս,

Վեց ոսկին ստացանք, հինգը վաշխառուին տվինք, բայց վաշխառուն 5 ոսկի ևս ուզում է տաս ոսկիի տոկոսի հետ. ասում է, թե քեզ 10 ոսկի է տվել։ Մեր կովը քաշեց տարավ, այլևս ցամաք հաց միայն ունինք ուտելու, սակայն հոգ չէ այդ մեզ համար։ Դարձի՛ր, որդի, մայրդ մեռնելու մոտ է և քեզ տեսնել է ուզում, կինդ լաց լինելուց չի դադարում. դարձի՛ր, որդի...»։

Այս էր գրում հայրը Եղոյին։

Կարդացին, օդիի գավաթները ցած դրին լռությամբ՝ ընկած Եղոյին շալկեցին և դուրս գնացին գինետունից։

Այլևս Եղոն նույն Եղոն չէր. նիհարցել էր և բարակցե՛լ... դեղնել էր և թուլացել. միշտ տխուր էր. երեկոյան արտասուքով բարձն էր թրջում և այլևս չէր կարողանում աղոթել. միայն հուսահատաբար վեր էր նայում և մռմռում.

Աստված մոռացել է հային...

Նոր իմացավ, որ բոլորը, որոնք իրեն շրջապատել էին— իրեն հայրենակիցները, առաջ մի-մի Եղո էին եղել և ունեցել էին մի-մի հոգեառ հրեշտակ հայրենիքի մեջ։

Եղոն սկսեց խմել և խմել անհագաբար...

Աշխատածը օդիի էր տալիս...

Եղոն և յուր թշվառ ընկերները գինետան մեջ ձեռք-ձեռքի տված հայրենական պարեր էին պարում, տխուր երգեր երգում, հետո նորից խմում և մի-մի նստարանի տակ ընկնում՝ քնում...

Ցերեկը աշխատում էր՝ մոռանալու համար, գիշերն էլ խմում՝ նույն նպատակի համար։

Մի քայլ էր մնացել, և ընկերները այդ քայլն էլ անել տվին Եղոյին։

Մի գիշեր Ղալաթիա տարան, մի տան մեջ շրջապատված մի քանի հասարակաց կնիկներով՝ խմեցին, գինովցան և Եղոյին ձգեցին մի կնոջ գիրկը...

Այս բոլորը քաշեց Եղոն։

Ուղիղ մի տարի էր, որ նա Կ. Պոլիս էր, այժմ նրան այլևս «կոպիտ խրմբրը» չէին ասում, այլ «նազիք խրմբրը»... Էֆենդին նրան էր տալիս տուն տանելու իրեղենները և Եղոյի հետ, որ մի տարի առաջ մի կնոջ երես իսկ չէր նայում, այժմ «հանրմ էֆենդին» կատակներ էր անում, պատմել էր տալիս Մշո սովորությունների մասին, նրա կնոջ վերաբերմամբ հետաքրքրվում էր և «մարելու չափ» ծիծաղում։

— «Խնդալես կճաթիմ կոր...»— ասում էր։

Խղճալի Եղոն ծիծաղում էր «հանրմի» հետ և նրան յուր կնոջից ավելի սիրուն էր գտնում...

Եվ մի օր Եղոն մի երազ տեսավ, մի սոսկալի երազ... Քնել էր մի գինետան անկյունում, և ահա «հանրմ»-ի նկարագրած «փերի»-ներից մեկը մոտեցավ նրան, առավ յուր գիրկը, գգվեց, համբուրեց, հետո բարձրացրեց նրան օդի մեջ, տարա՛վ, սլացա՛վ դեպի հեռու, հետո կանգ առավ, բաց թողեց նրան ահագին բարձրությունից և նրա ետևից մի այնպիսի դիվական քրքիջ արձակեց, որ նա սոսկաց... բայց չզարթնեց, որովհետև ընկել էր մի փափուկ, խիստ փափո՛ւկ հողի վրա... և այդ հողը թեև պահպանել էր նրան ջարդվելուց, սակայն այրում էր նրան, այրում էր կրակի պես... վեր է թռչում, թափ է տալիս վրայից հողը, սակայն միշտ այրվում է... և այրվում է սիրտը...

Նայում է նա յուր շորս կողմը.. Երևում են տներ, իսկ յուր ընկած տեղում ոչինչ չկա, միմիայն մի կտոր քանդված պատ, որի վրա նստած մի ալեխառն ծերունի արտասվում է դառնապես։

Սոսկալով ճանաչում է Եղոն յուր դյուղը... և այդ տաք հողը, որի վրա նրան ձգել էր դիվային «փերին», յուր տան մոխիրն էր...

Եվ արտասվող ծերունին՝ յուր հայրն էր։

Վազեց դեպի նա, շտեսավ նրա մոտ յուր մորը, կնոջը և որդուն։

— Հա՛յր, գոչեց նա,— ո՞ւր են նրանք։

Ծերունին նրան նայեց տխրությամբ և մատով մյուս կողմը ցույց տվեց։ Եղոն նայում է՝

Ընկած է գետնին կնոջ դիակը մոր դիակի վրա, և որդին նստած խաղում է յուր մոր մազերի հետ...

Ճչաց և վեր թռավ։

Այս անգամ նա զարթնեց, վեր կացավ ու նստեց։

— Ո՜հ, ինչ սոսկալի երազ,— մռմռաց նա,— արդյոք «երկրում» ինչ է եղել, երկա՛ր ժամանակ է, որ ոչ նամակ եմ գրում, ոչ էլ ստանում...

Դուրս եկավ գինետունից. մի զով գիշեր էր. մոտեցավ ջրին, լվացվեց, հետո դեպի բնակարանը գնաց, մտավ սենյակը և նստեց անկողնու վրա։

— Սոռացա հորս, մորս, կնոջս և որդուս... մոռացել էի... ո՞վ գիտե, ինչե՞ր է եղել այնտեղ։

Մի գավաթ ջուր խմեց, բերանը շատ դառն էր խմած օդիից։

— Թո՛ւ, —թքեց նա,— անիծյալ օդի, որ Եղոյին շուն շինեցիր, որ Եղոյին մեռցրիր, որ Եղոյին ծնողասպան, աստվածուրաց, ազգուրաց դարձրիր, որ Եղոյին հրեշտակից դևի փոխեցիր...

Սկսեց հուզված ճեմել սենյակի մեջ։

— Ի՞նչ է այս, ո՞վ արավ ինձ այսպես... Ես այն Եղո՞ն եմ, որին հարգում, սիրում էին յուր մաքրության, ճշմարտախոսության, ծնողասիրության համար... ես այն Եղո՞ն եմ, որ կնոջիցս բացի ուրիշ կին չգիտեի,... թողել մաքուր օդով երկիրս... թողել սիրուն կինս, թողել հայրս ու մայրս... պատճառ եղող, թող աստված քո տունը քանդե։

Նստեց, անկողինը փռեց և շորերով ընկավ անկողնի վրա ու աչքերը փակեց։ Կես ժամի չափ նա այդ դրության մեջ լուռ ընկած մնաց...

Հանկարծ կատաղությամբ վեր թռավ, սեղմած բռունցքները բարձրացրեց և՝

— Այո՛,— գոչեց,— երթա՛լ պետք է... երթա՛լ և... վրեժ առնել...

Զ

Երկու օր հետո Եղոն Տրապիզոն գնացող մի շոգենավ նստեց։

Նավը նստելուց առաջ նա երկա՛ր, շատ երկա՛ր տեսակցություն ունեցավ մի վառվռուն երիտասարդի հետ, որը մաքսատան մեջ հանդիպել էր նրան, հարցրել էր, թե ո՞ւր է գնում, իմացել էր նրա ցավերը, և, քաշելով նրան մի կողմ, ժամերով խոսել էր նրա հետ, հետո նրանք համբուրվել էին, երիտասարդը շտապմամբ մատիտով մի թղթի կտորի վրա մի քանի տող գրելով տվել էր նրան և ճանապարհ էր ձգել՝ ասելով.

— Թուղթը Մուշ կտաս տիրոջը...

Եվ երբ Եղոն շոգենավ մտավ, հետաքրքրվեց, երիտասարդի տված թղթի կտորը բաց արեց և կարդաց.

«Սիրելի Հրանտ

Հետաքրքրվիր գրաբերովս, ցավերը իմացիր և խրատ տուր։

Արշավիր»։

— Այո՛,— մռմռաց նա՝ թուղթը ծալելով և կողքից կախված հասարակ պայուսակի մեջ դնելով,— այո՛, քիչ մնաց հուսահատվեի, և այդ երիտասարդը կյանք տվեց ինձ... Ղուրբան քեզի, սիրուն տղա, սուրբ Կարապետը թող քեզ քո մուրազիդ հասցնե...

Երեք օրից հետո Տրապիզոն իջավ, խառնվեց Կարին ոտքով գնացող մարդկանց կարավանի հետ և, քսաներորդ օրը ս. Կարապետի գերեզմանը համբուրելուց հետո, քսանմեկերորդ օրը Մուշ հասավ։

Այնտեղ նրա ականջին դիպան սոսկալի լուրեր։

Ամեն կողմ քուրդերը սկսել էին կոտորել և թալանել. էլ մի կտոր «հալալ» հաց ուտել անկարելի էր։ Բայց քուրդերից ավելի սոսկալի էին հայ վաշխառուները, որոնք իրենց՝ սուրից ավելի մահարկու՝ մուրհակները ձեռքներին, խլում, կողոպտում էին և մուրացիկ մնացողների վրա էլ կուշտ-կուշտ ծիծաղում։ Նրանք լրբությունը մինչև այն աստիճանի էին հասցրել, որ տոկոսի փոխարեն համարձակվում էին գյուղացիներից նրանց գեղեցիկ կնիկներին կամ հարսներին պահանջել մի քանի օրվա համար...

Նա ինքը, Եղոն, Մշո շուկայի մեջ, յուր ականջներովը լսեց, թե ինչպես մի վաշխառու գոռում էր իրեն աղաչող մի գյուղացու վրա։

— Եթե փող չունես, կնոջդ շալվարը ծախիր...

— Լի՛ր վաշխառուներ... քուրդերից լիրբ...— մռնչում էր Եղոն։

Կ. Գոլսից առած տոմսակի տիրոջ— Հրանտին գտավ և տվեց նրա տոմսակը։

Հրանտը կարդաց, նստեցրեց յուր մոտ Եղոյին, երկա՛ր խոսեցրեց նրան, գիշերը յուր տունը հյուր տարավ, մինչև կես-գիշեր էլ ինքը խոսեց և մյուս առավոտ շուտով դեպի գյուղը ճանապարհ դրեց մտախոհ Եղոյին։

Կեսօր էր, երբ Եղոն գյուղը մտավ և վազեց դեպի տուն։

Բակը ներս մտնելուն պես ապշած մնաց։

Տունը բոլորովին դատարկ էր, և նրա շեմքի վրա նստած երևում էին միայն ծերունի հայրը, որը գրկեց նրան, լաց եղավ նրա կուրծքի վրա, և որդին, որը եկավ ընկնելու նրա գիրկը և գոչեց.

— Ո՞ւր է մայրիկը...

— Այո՛, հայր,— գոչեց Եղոն,— ո՞ւր է մայրս, ո՞ւր է կինս, վերջապես խոսի՛ր, ինչու այսպես թորշոմել և սաստիկ ծերացել ես, ինչո՞ւ որդիս այսպես նիհար և կեղտոտ է... խոսի՛ր, հայր...

Ծերունին սրբեց դեմքը և ալեխառն մորուքը, կամեցավ շարտասվել, սակայն նորից արտասվեց և ասաց.

— Ա՜խ, որդի՛, մայրդ մեռավ քեզ օրհնելով... իսկ կինդ մեռավ քեզ անիծելով, որ թողիր իրեն մենակ, որ ձգեցիր իրեն գազանի ճանկը, որ գնացել ու մոռացել էիր մեզ... կինդ անիծեց քեզ, որովհետև նա արատեց յուր պատիվը... չկարողացավ քեզ հավատարիմ մնալ... և դրա պատճառը դու էիր...

Եղոյի աչքերը մթնեց, քիչ մնաց ընկներ, երերաց և հարցրեց դողդոջուն ձայնով.

— Այդ ի՞նչ ասացիր, հա՛յր...

— Ասացի, ինչ որ եղել է, ո՛րդի... Լսիր, պատմեմ քեզ ամեն ինչ։ Երբ հինգ ոսկիդ տվինք վաշխառուին, նա արդեն մեր կովը քաշել տարել էր և, երբ ետ պահանջեցինք, ասաց, որ դեռ հինգ ոսկի և տասը ոսկու տոկոսն ևս պարտ ես իրեն... Անցան ամիսներ, չոր հաց ուտելով ծերունի մայրդ մեռավ, իսկ կինդ գնում դրացիներից կաթ և մածուն էր խնդրում, որ չլինի թե ես էլ մորդ պես լինեմ, և ինքը անօգնական մնա.... Բայց մի օր կինդ դուրս գնաց և գիշերը տուն չեկավ։ Երկրորդ օրը նրան տուն բերին ջախջախված։ Գիտես մեր աղբյուրի մոտի ձորը... Նրա գլխից նա իրեն ձորն էր ձգել և իմ գրկիս մեջ մեռավ, անիծելով քեզ և պատ-

մելով, թե ինչպես վաշխառուն բռնաբարեց իրեն.. Կինդ մի սուրբ կին էր, չուզեց ապրել ակամա քեզ անհավատարիմ գտնվելուց հետո և իրեն սպանեց։

Եղոն ձեռքերով մազերը բռնեց և գոչեց կատաղի ձայնով.

— Մինչդեռ ես, ե՛ս լիրբս, ե՛ս կեղտոտս, ամեն օր անհավատարիմ էի գտնվում իմ պաշտելի կնոջս... և այստեղ մի վաշխառու, մի գծուծ, ստորաքարշ կենդանի գա պղծելու... աստված իմ, ինչու այս բոլոր դժբախտությունները միասին ուղարկեցիր... խենթանա՞մ... արյո՞ւն թափեմ, հետո երթամ բա՞նտ պառկեմ.. Իսկ հայրս, որդիս...

Եվ վեր թռավ տեղից, արագությամբ դուրս եկավ տնից, հետո գյուղից ու վազեվազ դեպի քաղաք գնաց։

Երեկոյան հասավ քաղաք, գտավ Հրանտին, շնչասպառ ներս ընկավ, ամեն բան նրան պատմեց ու փովեց գետին...

Հրանտը ժպտում էր։

— Ես արդեն դրանք գիտեի,— ասաց նա,— վե՛ր կաց, Եղո՛, եկավ ժամանակը, որ դու վրեժդ առնես...

Ու վեր կացրեց Եղոյին ու խոսեց նրան։

Է

Մի կյուրակի օր էր. Եղոն եկեղեցի մտավ, աղոթեց սրտագին, խոստովանվեց, ջերմեռանդությամբ հաղորդություն առավ, պաշեց, պաշպշեց բոլոր պատկերները, եկեղեցու ամեն մի քարը և զվարթ դեմքով գնաց եկեղեցուց։

Հագել էր յուր մորթապատ «քեզախիկը»[1], յուր «տրեխները», գլխին մի նոր «քոլոզ»[2] էր դրել՝ «յազմա[3]»-ներով փաթաթված, մեջքին փաթաթել էր Կ. Պոլսից բերած լայն ու մեծ շալը և ձեռքին բռնած ուներ մի բարակ փայտ։

Արագությամբ անցավ մի քանի փողոց, կանգ առավ մի գեղեցիկ շինության առաջ և դուռը ծեծեց։

Բաց արեցին։ Երբ որ իմացավ, թե Մարտիրոս աղան վերևը «օդան» նստած էր, առանց տրեխները հանելու վեր գնաց և ուղղակի ներս մտավ։

Մարտիրոս աղան դեռևս գիշերազգեստով (եկեղեցի իսկ չէր գնացել) նստած էր օթոցի վրա։ Մի կողմից «ներզիլեն» էր քաշում և մյուս կողմից յուր կողքին դրված մի արկղիկից մուրհակներ էր հանում, կարդում էր և գրչով թվեր էր գրում մի թղթի վրա։

[1] Կարճ վերարկու, բանկոնաձև։
[2] Սրածայր թաղյա գլխարկ։
[3] Մետաքսյա թաշկինակ։

Ոտքի ձայնը լսելով, նա ընդհատեց զբաղմունքը և վեր նայեց։ Երբ տեսավ Եղոյին, սարսռաց, գունաթափվեց և հազիվհազ կարողանալով զսպել իրեն՝ ասաց.

— Ա՛յ բարով եկա՛ր, հազա՛ր բարով, ճգնավոր Եղո՛, համեցե՛ք, համե՛ցեք, արի նստիր այստեղ... ինչպե՞ս ես, ո՞ղջ ես...

— Աստված կյանք տա, աղա՛,— ասաց Եղոն նստելով։

— Է՛, ե՞րբ ես եկել։

— Երեկ եկա, աղա՛,— խոսեց Եղոն ժպտելով։

— Հա՞, շա՛տ լավ, շատ ուրախ եմ, որ ինձ չես մոռացել, չլինի՞ թե մտածում ես, որ ինձ պարտք ունիս, ո՛չ, ո՛չ, թեև մուրհակդ ետ չեմ տվել, սակայն...

— Հոգ չէ, աղա,— ընդհատեց նրան Եղոն, այդ մուրհակը, եթե պարտք չունիմ, հիմա կարող ես տալ... տուր տեսնենք...

— Հա՞, ուզո՞ւմ ես, այս բոպեիս, տղա՛ս,— գոչեց աղան և արկղիկի միջից՝ փնտրելով հանեց մի մուրհակ և պարզեց Եղոյին։

Բայց Եղոն չառավ մուրհակը, այլ ժպտելով ասաց.

— Լա՛վ, աղա՛, կարելի՞ է կարդաս... ուզում եմ իմանալ թե՝ այդ մուրհակի մեջ իմ պարտքս որքա՞ն է...

— Ինչպե՞ս,— գոչեց զարմացած և գունաթափ աղան,— ինչպե՞ս թե որքան է... վեց ոսկի էլի... չե՞ս հիշում։

— Ինչպե՞ս չէ, աղա,— ասաց Եղոն՝ միշտ յուր հեգնական ժպիտը դեմքին,— բայց ախր հայրս գրում էր, թե՝ դու ասել ես, որ քեզ 10 ոսկի եմ պարտական...

— Ե՞ս, ե՞ս եմ ասել, քա՛վ լիցի. եղբա՛յր, ինչե՞ր ես ասում... ա՛ռ, առ մուրհակդ, երեխայական բաներ մի խոսիլ։

— Լա՛վ լա՛վ, աղա, մուրհակը կառնեմ, բայց...

— Լա՛վ լա՛վ, աղա, մուրհակը կառնեմ, բայց...

Ասաց Եղոն և, արագությամբ սենյակի դռան կողմը ցատկելով, դուռը փակեց, հետո դառնալով ապշած վաշխառուին, երկու քայլ արեց դեպի նա և ասաց դառն ձայնով.

— Աղա՛, հինգ ոսկին առնելուց հետո, կովն էլ քաշեցիր տարար և ծնողացս ցամաք հացով միայն թողիր... այդ բավական չէր... կնոջս էլ բռնաբարեցիր...

Վաշխառուն՝ գունաթափ՝ մուրհակները թողեց և տեղիցը վեր թռավ։

— Ի՞նչ է այդ,— ասաց Եղոն,— ո՞ւր ես շարժվում տեղիցդ. նստի՛ր և լսիր ինձ... Նստի՛ր,— ավելացրեց նա և, յուր հուժկու ձեռքով բռնելով նրա ուսիցը, մղեց նրան օթոցի վրա,— այժմ, կրկնում եմ, կինս բռնաբարեցիր և նա ինքն իրեն սպանեց... ազատվեցար էլի՞... խոսք չունիմ... խոստովանվո՞ւմ ես, որ այդ արել ես...

Վաշխառուն նորից ոտքի կանգնեց և շվարած ու բարկացած պատասխանեց.

— Ինչե՞ր ես ասում, եղբա՛յր, կյուրակի օր եկել, ի՞նչ զրպարտություններ ես անում... հիմա՛ ես կերթամ մյութեսերիֆի մոտ...

— Ձա՛յնդ...— գոչեց Եղոն, «քեզախիկի» տակից դաշույնի ծայրը ցույց տալով,— եթե նորեն բարձր խոսե՛ս, շանսատակ կանեմ... նստիր և պատասխանի՛ր... նստի՛ր։

Վաշխառուն՝ դաշույնը տեսնելով՝ լռեց և դողդողալով նստեց։

— Այժմ,— շարունակեց Եղոն,— ամենքի հետ երևի այդպես ես վարվում, փողը տալիս ես մեկ, առնում ես երկու, այդ բավական չէ, խլում ես նրա ուտելիքը և պատիվը... ինչո՞վ պակաս ես անում քուրդերից. ինչո՞վ ես զանազանվում Միրզա բեգից, Հաջի Թայիբից, Հասան բեգից... տե՛ս, լսիր ինձ, ես որ քեզնից անպատված մի զոհ եմ, եկել եմ քեզնից ազատելու իմ մյուս ընկեր լինելիք անձերին... այս բոպիս կտաս ինձ բոլոր մուրհակները...

— Բա՛յց,— թոթովեց աղան։

— Ձա՛յնդ... մի խոսք չեմ ուզում,— գոռաց Եղոն և դաշույնը բոլորովին հանելով՝ փայլեցրեց նրա աչքի առջև,— շո՛ւտ, մուրհակները... բոլորը այս արկղիկի մե՞ջն են, ուրիշ որտե՞ղ կա...

— Ուրիշ ոչ մի տեղ չկա...

— Իսկ այս պահարանի մե՞ջ... դոշեկիդ տակը... ելի՛ր և շուտով հավաքիր բոլորը և լից այս արկղի մեջ... ելի՛ր...

Դաշույնը ստիպեց վաշխառուին կատարել Եղոյի բոլոր հրամանները։ Մուրհակները բոլորը ժողովեցին արկղիկի մեջ, որ առնելով Եղոն՝ դրեց վաշխառուի առջև, արագությամբ հանեց գրպանից մի լուցկի, կրակ տվեց թղթերն և գոչեց...

— Վայելե մուրհակներիդ ծուխը...

Վաշխառուն ուզեց գոռալ, բայց դաշույնը մոտեցավ կոկորդին. նա լռեց և սկսեց արտասվել։

— Հրեշային արցունքնե՞ր...— ասաց Եղոն դառն ծիծաղով։

Երբ այրվեց վերջին մուրհակը, և ծուխը քուլա-քուլա դուրս գնաց երդիկից՝ Եղոն մոտեցավ դեռևս արտասվող վաշխառուին և՝ բռնելով նրա թևից՝ ասաց.

— Մուրհակները ոչնչացան, սակայն դրանց գրողը նորեն կարող է գրել դրանց նմանները. պետք է ոչնչացնել ո՛չ թե դանակը, այլ դանակ բռնող ձեռքը... այդպես էր ասում Արշավիրը... դե՛հ, Մարտիրոս աղա, եթե հավատում ես մի բանի, եթե ունես աստված և այդ աստծուն կաբող ես դիմել՝ չոքիր և զղջալով խոստովանվիր նրան, թե քանի՞ մարդ

ես ոչնչացրել, քանի՞ ազգակիցներիդ արյունաքամ և անպատիվ ես արել, քանիսներին պատճառ ես եղել պանդխտության մեջ կամ մեռնել կամ հրեշանալ... չոքի՛ր և աղոթիր, եթե կարող ես, որովհետև էլ կյանքդ վերջանում է... դևերը ուզում են իրենց ընկերին իրենց մոտ...

Վաշխառուն քարացել էր համարյա, մեքենայաբար չոքեց ու մեքենայաբար ասաց «Հայր մեր»-ը և երբ տեսավ, որ դաշույնը կոկորդին է մոտենում, ձեռքերը պարզեց և գոչեց...

— Խղճա՛...

— Որի՞ն խղճացիր։

— Որդիներ ունիմ։

— Քանի՞ որդի որբ թողիր։

— Կին ունիմ։

— Քանի՞ կին անպատվեցիր։

Եվ բռնեց Եղոն կատաղությամբ վաշխառուի կոկորդից, սեղմեց, հեծ զգուշությամբ հեռու կացավ, որ չարյունոտվի, և կեռ դաշույնը այնպես կատաղությամբ մխեց նրա կուրծքի մեջ, այնպես հուպ տվեց կոկորդը... որ ժայթքեց արյունը դեպի ցած և մի խռոցով միայն վերջացավ ամեն ինչ...

Այդ անելուց հետո Եղոն թևով ճակատի քրտինքը սրբեց, կռանալով՝ ստուգեց, որ վաշխառուն դիակ է դարձել և հանդարտությամբ դուրս գընաց նախ սենյակից, որի դուռը փակեց, և ապա բակից...

Փողոցում նրան սպասում էր մի երիտասարդ, որը հարցրեց.

— Եղա՞վ։

— Այո՛,— ասաց Եղոն։

— Շնորհակալ եմ. ինձ հետ պարտավոր են քեզ շատ հայեր.... գընանք....

Փոքր ինչ քայլեցին։

— Այժմ...— ասաց երիտասարդը կանգ առնելով,— հորդ և որդուդ կնայվի... կառավարությունը պիտի փնտրե քեզ այնպիսի ժրաջանությամբ, ինչ անհոգությամբ որ չէ տեսնում քուրդերի արածները... Քաղաքից դուրս գնա, Սեպ քարի տակ կգտնես մի ձիավոր, կտաս նրան այս թուղթը... կհեծնես ձին և, այդ հեռվի լեռները տեսնո՞ւմ ես...

— Սասնո լեռնե՞րը։

— Այո՛... Կգնաս այն կողմը... կհարցնես անկախն հայ ավազակ Հովհաննես քեհյային և կտաս նրան այս մյուս թուղթը... Քեհյան 500 ձիավոր ունի, 501-երորդն էլ դու եղիր... գնա... աստված քեզ հետ... երբ պետք լինի, թե ինձ և թե որդուդ կտեսնես... ապահով գնա...

Գրկեց, համբուրեց նրան և տվեց թղթերը...

Եղոն արագությամբ հեռացավ և քաղաքից դուրս՝ կես ժամ հեռավորությամբ գտնվող Սեպ քարի մոտ գնաց, ուր տեսավ մի ձիավոր։ Մոտեցավ, բարևեց և տվեց նրան թղթերից մեկը... Ձիավորը կարդաց, իջավ ձիուց, տվեց նրան յուր ձեռքի հրացանը, համբուրեց նրան և ասաց.

— Տեր ընդ քեզ...

Եղոն աշտանակեց, ձիու գլուխը սուրբ Կարապետի կողմը դարձրեց, գլուխը բանալով աղոթեց, աչքերից երկու կաթիլ արցունք էլ յուր հայրենիքի հողի վրա կաթեցրեց, խաչակնքեց և

— Ցա Մշո սուրբ Կարապետ,— գոչեց։

Եվ մտրակելով ձիուն՝ անհետացավ բլուրների մեջ։

Արևը, որ մինչև այդ ժամանակ ծածկված էր ամպերի տակ, դուրս ելավ և Մշո դաշտը լուսավորեց յուր պայծառ ճառագայթներով...

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆ

Ա

«Կ. Պոլսո Ադլիեի[1] ատյան ամսույս 25-ին, ժամը 10-ին հրամայում է ձեզ ներկայանալ յուր դատարանը և վկայել Ա...ֆ...յանի գործի մասին...»։

Այսպես էր գրված այն թղթի վրա, որ ներկայացրեց ինձ մի հնամաշ հագուստով «զափթիե» և կոպտությամբ հրամայեց, որ ստորագրեի։ Ի՞նչ արած, ստորագրեցի և որովհետև հենց այդ օրն իսկ ամսի 25-ն էր, կես ժամից հետո Ադլիեի դատարանը մտա։

Սա մի մեծ շենք է Այա-Սոֆիա մզկիթի մոտ կառուցած և բովանդակում է յուր մեջ օսմանյան օրենքի տրամադրած բոլոր ատյանները— սկսած հաշտարարից (բիդայեթ) մինչև վճռաջինջ վերջնական ատյանը (թեմիզ)։

Մի երկայն նրբանցքի երկու պատերի վրա երևում էին բազմաթիվ թանձր վարագույրներով ծածկած դռներ, որոնց յուրաքանչյուրի վրա միմի բան էր գրված. նրանցից մեկը արտաքնոցն էր, ուր մտնում-ելնում էին ջրի ամանով և թևերը սոթտած, ֆեսը ծոծրակի վրա դրած, ոտները բոբիկ ու կուրծքը բաց էֆենդիներ, վսեմաշուք բեյեր... Արտաքնոցի կողքին քննիչների սենյակն էր, որտ մեջ տեղ-տեղ նստած էին մի քանի այլ տաճիկներ, մի ծունկը ծալել, փայլուն թուղթը ոլորած նրա վրան

[1] Արդարադատություն։

դրել, առջևում նստեցրած զանազան անձերի հարցեր էին առաջարկում և գրում, չմոռանալով երբեմն ճաշակել մոտը դրված սուրճից, հաց ու պանրից, խմել ահագին ամանից ջուր, թքել մոտը դրված հողե ամանի մեջ, ծխել ոտների տակը դրված պապիրոսներից, կատակներ անել փոքր-ինչ հեռու տեղ նստած այլ քննիչների հետ, և որովհետև այդ անընդհատ քննություններից ձանձրանում էին, այնչափ դյուրագրգիռ էին եղել, որ շատ անգամ իրենք առիթ տալով քննվողին մի անհանգիստ շարժում գործելու՝ բարկանում և սկսում էին փողոցային խոսքերով հայհոյել։

Քննիչների այդ սենյակը, ուր մտա ես տեսնելու, թե ինչ կար այնտեղ, ամենակեղտոտ սենյակն էր. մի անկյունում ընկած է ցեխոտ ավելը, մի ուրիշ անկյունում քննիչների արտաքնոց տանելիք կեղտոտ հողի ամանը, մի այլ կողմ սրճամաններ, հացի կտորներ, հատակի վրա ամենամեծության թղթի կտորներ, պապիրոսի մնացորդներ, կոտրտած աթոռներ, մինտերներ, բարձեր, հնությունից բոլորովին զզզված կապույտ օթոցներ և այդ բոլորի վրա ավելացրեք պատուհանների աղոտ լույսը խափանող փոշիապատ, կարմիր, կտրտված վարագույրները, որոնցից մի քանիսը ընկել էին նստած քննիչների մեջքի վրա և փոշիով ծածկել նրանց վերարկուները։ Քննիչներից միայն մեկը կար, որ փոքր-ինչ կանոնավոր էր հագնված— ծխում էր և մի կողմից ձևակերպական հարցեր էր առաջարկում յուր առջևը նստած վախից դողացող մի հայի. իսկ մյուսները կուրծքը բաց, մազերը չսանրված և դիզացած գլխի վրա, երեսին կեղտոտ, կոշիկները գետնի վրա ընկած, գույնզգույն գուլպաները ծակ-ծակ և այդ ծակերից երևեցող ոտքերի մատները այնպես կեղտոտ էին, որ մարդ կարծում էր, թե այդ քննիչները սև ոտներ պիտի ունենային։

Ի լրումն ամենայնի, մի վառարանի երկայն խողովակ դիմացի պատից իջնելով՝ պարզվում էր մինչև մեջտեղ և այնտեղից իջնում ուղղակի քննիչների գլխի վրա. որովհետև գարունը եկել էր, ուստի վառարանը վերցրել էին և որպեսզի հետագա ձմռան նորից նեղություն չկրեին խողովակները տեղավորելու՝ նրանց տեղնուտեղը թողել էին առանց մտածելու, որ ծովային քամին լուսամուտից երբեմն ներս մտնելով՝ շարժում էր նրանց և թափթփում էր միջի մրուրը կամ գրասեղանների, կամ քննիչների մեջքի և կամ հատակի վրա։

Սենյակում կային չորս քննիչներ, չորսի առջևն էլ՝ պատկառանքով նստել էին քննվողներ և վախվխելով պատասխանում էին քննիչի ձևակերպական հարցերին և վերջինս էլ առանց նրանց երեսին նայելու՝ կամ ուտում էր, կամ խմում էր, կամ ծխում և կամ մի քանի խոսք գրում յուր ծնկան վրա դրված փայլուն թղթի վրա և ճզճզացող եղեգնյա գրչով, որով երբեմն էլ խառնում էր քիթը կամ ականջը....

Բ

Եվ որովհետև նրբանցքի մեջ պատերի տակ բազմած, լուսամուտների մեջ պպզած կամ ման եկող մարդիկ ազատությամբ երբեմն ելումուտ էին անում այդ սենյակների մեջ, ես էլ հետաքրքրություն ստացա և քննիչների սենյակից դուրս գալուս պես մտա նրա կողքի սենյակը, որի վրա ոչինչ չէր գրված, սակայն ներսից ձայներ էին գալիս։

— Դատաստանի սրահն է այս անպատճառ,— մտածեցի ես։

Ի՞նչպես չէ. ներս մտնելուս պես ապշած կանգ առա։ Սենյակի մի կողմում կապված մի կեղտոտ թախտի վրա ընկողմանել, նստել, պպզել և պառկել էին ծառաներ, զափթիեներ, չավուշներ, մի տեսակ ծիծաղելի զարդերով «լիվռե»-ներ հագած դատաստանական ծառաներ և թախտի մի կողմում նստել էր սև սավանով ծածկված մի սպիտակ դեմքով թրքուհի, որ խռպոտ ձայնով մի բան էր պատմում, և այդ բոլոր մարդիկ քրքիջներով ծիծաղում էին։

Երբ ինձ տեսան, թրքուհին աշխատեց սավանի ծայրով դեմքը ծածկել, սակայն ժպտելը չմոռացավ, ծառաները առանց տեղերից շարժվելու՝ կողքից ինձ նայեցին, և Օսման չավուշը, որ ընկողմանել էր մի կեղտոտ բարձի վրա՝ գոռաց ինձ.

— Այդ դո՞ւ ես, էֆենդի՛, համեցե՛ք, համեցե՛ք...

Օսման չավուշը ծանոթ էր ինձ, երբ բիթայիթի բեհսի[1] աղջկան դաս տալու էի գնում, չավուշն էր միշտ, որ բաց էր անում բեհսի դուռը և սենյակն էր բերում փոքրիկ դաշնամուրը, որի վրա բեհսի տասներեք տարեկան աղջիկը հինգ օրվա մեջ անպատճառ կամենում էր «թաքսիմ բայաթի» եղանակը կատարելապես ածելով զմայլեցնել յուր ընկերուհիներին։

— Ներողություն— ասացի ես Օսման չավուշին,— ես սխալվեցա, կարծեցի, թե դատարանն եմ մտել։

— Չես էլ սխալվել,— ծիծաղեց չավուշը,— իսկական դատարանը այստեղ է... արի նստիր և տես, թե Նազանի էբեն[2] ինչպես է ճիշտ պատմում այն գործը, որ քննվեց կես ժամ առաջ և վճիռ տրվեց։

— Ի՞նչ գործ է այդ,— հարցրի ես։

— Ի՞նչ,— գոչեց մի զափթիե,— չե՞ս լսել Սաղբք էֆենդիի կնոջ գործի մասին։

— Որ ամբողջ Պոլիսը դղրդեցրեց,— ծիծաղեց մի ուրիշը։

— Չեմ լսել,— ասացի ես։

---

1 Հաշտարար ատյանի նախագահ։

2 Դայակ, տատմայր։

— Դե՛հ, Նազանի էբե՛,— դիմեց Օսման չավուշը թրքուհուն,— պատմիր ծայրից. թող էֆենդին իմանա. մեր բեհսի աղջկա խոջան[1] է...

— Մեր Քյուչյուք հանըմի խոջա՞ն է,— գոչեց Նազանի էբեն և դեմքը բաց արեց ու ժպտեց. զազրելի դեմք ուներ այդ տաճիկ կինը, թեև մեծ-մեծ սև աչքերը փայլում էին խիտ ներկով սևացրած հոնքերի տակ. մայտերը ներկով սպիտակացրած էր, բերանը լայն և առջևի բոլոր ատամները կոտրած ու սև. վերին շրթունքի վրայից երևում էին նույնիսկ բեղը, իսկ ծնոտի վրա մի քանի հատ սև, երկայն մազեր, ձեռքերը, որով բռնել էր ետ քաշած սավանի ծայրերը, երկայն պուդրայով սպիտակացրած և կմախքի նմանող մատներով ճանկերի էր նմանում... այնուամենայնիվ ուներ երկայն սև մազեր, որոնցից մի հյուսը բաց՝ կիսովին բերել սփռել էր կրծքի վրա։

— Նա է,— ասաց Օսման չավուշը։

— Բարի եկար, էֆենդի,— խոսեց էբեն «թեմենդե» անելով։

— Շնորհակալ եմ,— ասացի,— դու ո՞րտեղից ես ճանաչում բեհսի աղջկան։

— Բա՛հ,— ծիծաղեց ծառաներից մեկը,— քաղաքում կին և աղջի՞կ է մնացել, որ Նազանի էբեն չճանաչի... Որքան ապօրինի ծնունդներ լինում են, Նազանի էբեն գիտե...

— Այն էլ գիտե,— մեջ մտավ ուրիշը,— թե որ պալատից, ո՛ր կինը յուր ապօրինի զավակը ջուրը ձգեց կամ խեղդեց և կամ ուղարկեց ձգելու Սուլթան Բայազիդի մզկիթի առջև։

— Ուրեմն շա՞տ են լինում այդպիսիները,— հարցրի ես։

— Ուզածիդ չափ,— ծիծաղեց էբեն,— դեռ երեկ էր, որ մի չերքեզի կնոջ տղան Սուլթան մեհմետի ջամիի մոտ դրի...

— Լա՛վ, լա՛վ,— գոչեց Օսման չավուշը,— սա Սաղբք էֆենդիի կնոջ գործը պատմիր մեզ։

— Պատմեմ,— ասաց էբեն հանգստությամբ, տեղավորվելով թախտի վրա և դառնալով ինձ.— էֆենդիմ, սրանից հինգ օր առաջ Պոյուքդերեից ետ դառնալով տունս էի մտնում, երբ մի երեսը ծածկած կնիկ, որ կանգնել էր դռանս մոտ, դեմս փակեց և հարցրեց.— Նազանի էբեն դո՞ւ ես...— Ես եմ,— ասացի,— ի՞նչ ես ուզում, դու ո՞վ ես...— և ձեռքս պարզեցի, որ երեսի «բուրքենը» բարձրացնեմ, բայց նա ձեռքս ետ մղեց և ասաց.— Ներս մտնենք, ես կասեմ, թե ով եմ։ Ծիծաղեցի, ինձ հետ այդպիսի դեպքեր շատ է պատահում, կամ մի որևիցե փաշայի կնիկ կլիներ և կամ մի պալատի աղախին, որ հրավիրում կլիներ ինձ մի

---

1 Վարժապետ։

ապարանի զավակի ջուրը ձգելու, շամիի դուռը տանելու և կամ խեղճի աղբանոցը ձգելու...

Սարսռացի ես, երբեք հավատալս չէր գալիս, կարծում էի, թե այդ տարօրինակ կինը «Հազար և մեկ գիշերներ»-ից մի հեքիաթ է պատմում ինձ։

— Ներս մտանք,— շարունակեց էրեն ժպտելով,— կինը դեմքը բաց արեց, և ես տեսա, որ Սադրք էֆենդիի կնոջ աղախինն է... Բոլորին ճանաչում եմ ես...— Հը՞, ի՞նչ կա,— հարցրի ես,— խանումդ չլինի՞ ճորից ուզում է այստեղ գալ...— Ո՛չ,— ասաց աղախինը,— խանումը փվանդ է և քեզ է կանչում։— Հենց հիմա՞։— Հենց հիմա։ Ճարն ի՞նչ, Ֆրամս ծածկեցի և աղախնի հետ Սադրք էֆենդիի տունը գնացինք... խանումը հիվանդ էր. մի սիրուն աղջիկ էր ծնել. տվեց ձեռքս և հրամայեց, որ Սուլթան Բայազիդի դուռը տանեմ ձգեմ. ես խղճացի,— ախր խանո՛ւմ,— ասացի,— ի՞նչ կլինի, թող այս աղջիկը քեզ մոտ մնա, մարդ կկարծի, թե իրենն է...— Տա՛ր,— գոռաց խանումը,— ի՞նչ մուրտաբան է որդի ունենալ, ոտքդ կկապվի, էլ չես կարող ման գալու գնալ... Ես ի՞նչ գիտեմ էլ ինչե՞ր չասաց։ Երկու ոսկի էլ փող տվեց, ես էլ փաթաթեցի մանկան հերամիս մեջ և մութ էր, երբ որ անցնում էի շահզադեբաշիի կողմը... տեսնեմ մի գյավուր մշակ կոտրտած փայտ է շալակեցած է իջնում Բեզեստանի կողմը։ Այդ միջոցին էլ ետ նայելով, տեսա, թե ինչպես մեկ փոլիս ետևիցս գալիս էր... հըմ,—ծիծաղեցի ես,— կարծում է, թե մի փաշայի ծպտած կնիկ եմ ու սիրականիս տունն եմ գնում. լավ, այդ հեշտ էր, փոլիսը ինձ մոտենալուն պես կճանաչեր և կթողներ, բաս մանուկը... Թարսի պես պզտիկն էլ սկսում էր ճչալ. հենց պատի տակից անցնելով մանկան գյավուրի շալակի վրա դրի ու սկսեցի ետ դառնալ... Փոլիսը դեմս եկավ, ճանաչեց ինձ, ես ասացի, որ դայակության եմ գնում. փոլիսը անցավ և լավ տեսա, թե ինչպես շփոթված գյավուր մշակին բռնեց ու մանկան հետ մոտիցս անցավ... Բայց փոլիսը ատանա էր. տեսել էր, թե ինչպես ես էի դրել մանուկին գյավուրի շալակի վրա, ուստի և ասաց,— Նազանի էբե, այս տղան դրի՞նն է։— Սադրք էֆենդիինն է,— ասացի ու ծիծաղելով մեկ ոսկի տվի նրան։— Լավ,— ասաց փոլիսը, հետո գյավուր մշակին դարձավ ու գոռաց.

— Անհավատ շուն, այս տղան որտեղի՞ց ես բերում։

Խեղճ մշակը շփոթվել էր.— վալլա՛հ, աղա՛...— կմկմաց...— Փոլիսը նրա վզակոթին մի քանի հատ խփեց, հետո հրեց նրան, մանկան գիրկը առավ և գոչեց.— հա՛յդե, «փոլիս իդարեսին»[1] երթանք... էրե՛,—

[1] Ոստիկանության տուն։

ասաց ինձ մոտենալով,— Սադրք էֆենդիի հանքումն ասա, որ Ալի չավուշի համար հինգ ոսկի պիտի ուղարկել... և հեռացավ մշակի ու մանկան հետ... Մնացածը գիտեք բոլորդ էք[1]։

— Ո՛չ,— գոռաց Օսման չավուշը,— էֆենդին չի իմանում, ասա բոլորը։

— Էլ ի՞նչ ասեմ. գյավուր մշակին բանտարկեցին, բայց նա էլ լսել էր փոլիսի վերջին խոսքերը և Սադրք էֆենդիի անունը... Կադին հրամայեց գյավուր մշակի դատաստանը խստությամբ կատարել և հինգ տարի բանտ վճռեց նրան ու շուտով բանտարկել տվեց, որ Սադրք էֆենդիի անունը չվնասի... ամենքը գիտեն, սակայն պաշտոնապես ոչ ոք չի իմանում...

— Այսինքն չի ցանկանում իմանալ— ավելացրի ես։

— Ես ի՞նչ գիտեմ,— ծիծաղեց էրեն,— ինձ էլ կանչեցին, որ ասեմ թե ծնածը քանի օրվան էր, ես էլ խոսլավ գիտեի... բայց կադին էլ գիտեր, փոլիս մյուդիրն էլ... ամենքն էլ գիտեին...

— Ուրեմն մշակին դատապարտեցի՞ն,— հարցրի ես։

— Նոր ներսումը հինգ տարվա բանտարկություն վճռեցին նրան, ասելով, թե մշակը մանկան տանում էր ծովը ձգելու։

— Իսկ քեզ ի՞նչ արին։

— Ի՞նձ, ոչի՛նչ, կադին մի կողմ քաշեց և ասաց, որ ձայնս կտրեմ. ես իմ գործը լավ գիտեմ, որ ամենքին ասեմ, էլ ո՞վ ինձ կվստահի։

— Բաս ինչո՞ւ մեզ ասացիր,— հարցրեցի ես։

— Դու Քյուչյուք հանրմի խոջան ես, նրա համար, իսկ սրանք ոչ ոքի բան չեն ասիլ, որովհետև իրենց գործին էլ վնաս կլինի... պաշտոնից կզրկի կադին... այսպես է մեզանում. դատարաններում գաղտնիքը պահել պիտի գիտենալ...

— Իսկ Սադրք էֆենդիի կի՞նը,— հարցրի ես։

— Երեկ տեսա, նավակի մեջ Քեհաթխանե էր գնում, ուր վրան էր զարկել տվել և նվագածուներ էր բերել մի քանի օր քեֆ անելու համար...

Գ.

Սառաների այդ սենյակից դուրս գալուց հետո փոքր-ինչ դանդաղությամբ դիտեցի ամեն կողմ սրդդած հայերին ու տաճիկներին և երբ կամենում էի մի ուրիշ սենյակ մտնել, բաց լուսամուտից երևցող բակի մեջ մի տեսարան կանգ առնել տվավ ինձ։ Դեպի մեր կողմն էր գալիս մի բազմություն, բաղկացած ամեն տեսակ հագուստներ հագած հայերից,

[1] Այս դեպքը պատահել է 1884 թվականին։

տաճիկներից, հույներից, պարսիկներից, ալբանացիներից և հրեաներից։ Այդտեղ կարելի էր տեսնել ֆեսը ծուռ դրած՝ լրբենի հեգնական ժպիտը դեմքին տաճիկներ, վախից գունաթափ դեմքով գլուխը ծռած հայեր, վիզը բարձր բռնող և վճռական հայացքով, հպարտությամբ քայլող հույներ, կատաղի աչքերը չորս կողմ հածող՝ կոնաձև մեծ-ֆեսերով ալբանացիներ, կարմիր ներկած մատներով և ձեռքերով միմյանց հետ բարձրաձայն վիճող պարսիկներ և վերջապես գծուծ հյուգուստներով հրեաներ, որոնք քծնում էին այդ բազմության առջևից և ետևից գնացող երկու հետևակ սուվարիների շուրջը։

Իսկույն հասկացա, որ «փոլիս իդարեսիից» դատարան էին բերում բոլոր հրավիրվածները՝ լինեին նոքա վկաներ, ամենաչնչին պատճառներով դատի հրավիրվածներ և կամ նույնիսկ հետաքրքրության համար «փոլիս իդարեսին» մտնող անձեր։ Բոլորին առաջնորդում էր մի զինվոր, որը ներս մտավ, հետո դռան մոտ կանգնելով համրեց ետևից մտնողներին և առաջնորդեց նրանց դեպի մի խարխուլ խրճիթ, որ երևում էր բակի աջ կողքում յուր վանդակապատ, քարուքանդ և հնությունից սևացած լուսամուտով և հնադարյան կաղնյա դռներով։

Երբ հասան այդ խրճիթի դռան մոտ, կանգ առին և զինվորը ձեռքի բանալիքով դուռը բաց արեց. ես հետաքրքրությամբ ետ գնացի և որովհետև այդ բազմության մեջ երևում էին նաև երկու եվրոպական գլխարկներով շատ մաքուր հագնված անձեր, կամացուկ մոտեցա նրանց և հարցրի տաճկերեն.

— Դուք հա՞յ եք։

— Հայ ենք...

— Դո՞ւք ինչ գործ ունիք այստեղ։

— Մենք...

Բայց չկարողացան վերջացնել, որովհետև զինվորը կոպտությամբ բռնեց նրանց թևիցը և գոչեց.

— Մտեք ներս, խոսելու ժամանակ չէ։

Հետո, երբ նրանց ներս կոխեց, նայեց ինձ և ասաց.

— Դո՞ւ ինչու չես ներս մտնում, պե՞տք է, որ քեզ էլ հրեմ։

— Ե՞ս,— գոչեցի զարմացած,— ես սրանց հետ չէի։

— Այդ ո՞րին ես խաբում, հա՛յդե, ներս մտիր...

— Բայց...

— Չոք սեղե՛մե...— որոտաց զինվորը, հետո բռնեց թևիցս և այնպես հրեց ինձ ներս, որ գնացի ընկա մի հրեայի վրա, որը մի վայ արձակեց. դուռը ետևիցս փակվեց, ես գտնվում էի այդ բազմության հետ մի մութ, կեղտոտ, աղբով լիքը սենյակում։ Փոքր-ինչ հեռու կանգնած էին երկու հայերը, իսկ մյուսները ծիծաղում էին։ Կատաղեցի, ուշքի եկա և վազեցի դեպի դուռը, բայց դուռը արդեն փակված էր, և զինվորը դրսից կողպեք էր դնում նրա վրա։

— Բա՛ց,— գոչեցի ես,— ես սրանց հետ չէի։

— Չա՛յնդ,— գոռաց դրսից զինվորը,— ինձ Մահմեդ աղա կասեն, քանի քեզ պես հոպոպներին եմ կոխել այդ «կափու ալթիսին...»[1]։

— Թանկ կնստի քեզ այդ,— ասացի,— բեիսին կասեմ, հոգիդ կհանեն։

— Օհո՛,— քրքջաց զինվորը,— բեիսի՞ն էլ ես ճանաչում։

— Բա՛ց, ասում եմ,— գոչեցի ես,— ես նրա բարեկամն եմ...

— Իրա՞վ... երբվանի՞ց ես բարեկամ... էֆենդի՛մ Մահմեդ աղան հիմար չէ, գիտե, որ բեիսը բարեկամի ինչ լինելը չի իմանում... ափսոս առաջ չիմացա, որ դու բեիսի բարեկամն ես, թե չէ կտանեի ուրիշ բանտ...

Ստիպվեցա լռել, թեև բարկությունից դողում էի։

— Ոսկոր ձգիր առջևը,— այդ միջոցին փսփսաց մեկը ականջիս։

Ետ նայեցի, հայերից մեկն էր։

— Ահա՛,— ասաց նա,— հինգ ղուրուշ մենք կտանք, հինգն էլ դու տուր, և թող երեքիս էլ թողնե դուրսը կանգնենք...

— Բայց դո՞ւք ինչ գործ ունեիք սրանց մեջ,— հարցրի ես նրան։

— Մենք վկա ենք կանչված մի դատի համար։

— Վկա՞... և սրանք վկաների՞ն էլ են բանտարկում։

— Իհարկե,— ծիծաղեց հայը,— այ պատմեմ քեզ սրանց օրե՞նքը, թե սովորությունը։ Բերում են մի թուղթ, ստորագրել տալիս և քեզ էլ քարշ տալիս «փոլիս իդարեսին»։ Այնտեղ կոշիկներդ հանում ես բակում կանգնած մի զինվորի մոտ և կոշիկներդ պահելու համար էլ 1 ղուրուշ փող ես տալիս (և եթե ետ դառնալու ժամանակ կոշիկներդ թռած լինին՝ չզարմանաս). բոբիկ ոտներով քեզ տանում են փոլիսի մյուդիրի մոտ մի մեծ սենյակ, ուր պատերի տակ մի-մի արկղիկների և փռված անկողինների մոտ պպզել են գրագիրներ և ճզճզացնում են, իսկ ինքը մյուդիրը նստել է մի խարխուլ սնդուկի վրա— ամենաբարձր տեղը, ֆեսը ծոծրակի վրա դրել, քեզ է նայում դաժանությամբ, հետո զինվորին է դառնում և հարցնում, թե ո՞վ էի ես... Զինվորը ասում է, իսկ մյուդիրը այդ միջոցին քեզ չափում է ոտքիցդ մինչև գլուխը...

— Երևի առաջին անգամն էր, որ մտաք այստեղ,— միջահատեցի ես նրան։

---

[1] Այդ տեսակ «դռան ետևս» բանտեր տաճկական ամեն դատարաններում կան և կոչվում են «դռան ետևս»։

— Այո՛, առաջին անգամն էր... Նրա համար լավ էլ նկատեցի ամեն ինչ։

— Շարունակեք, շատ հետաքրքիր եք պատմում։

— Լա՛վ... երբ զինվորը բացատրում է քո ով լինելդ, մյուդիրը գրի կոթով ականջն է խառնում և հանկարծ դառնալով քեզ ը՞ոչում է.

— Ի՞նչպես համարձակվեցիր կոշիկներով ներս մտնել։

— Բայց...— թոթովում ես,— ախր կրկնակոշիկներս հանել եմ...

— Լռի՛ր,— որոտում է քեզ վրա նա,— ի՞նչպես ես համարձակվում պատասխանել...

— Ախր... ասում ես, հատակը փռված էլ չէ...

— Անհավա՛տ, խնդրը, թերե՛ս,— որոտում է նա,— այդ անհավատին կափու ալթիսին ձգիր, մինչև կանչենք...

Աշխատում ես պատասխանել, բայց մյուդիրը աչքերը ոլորում և գոչում է.

— Հա՛յդե, սիքտի՛ր[1], ասքյար, դրա վզակոթին...

Եվ զինվորը մի հարված է տալիս վզակոթիդ, հետո քեզ դուրս հրում և հրելով տանում մինչև կոշիկների տեղը և երբ այնտեղ կոշիկներդ հանում ես, հրելով քեզ տանում է մի փոքրիկ խրճիթ, դուռը բաց անում, կոխում է ներս և փակում այնտեղ... այժմ էլ գտնվում ես մի ցած առաստաղով երկու մարդու կանգնելու չափ մի տեղ, որը մի կոտրտրտած ապակիներով ցած լուսամուտից է միայն լուսավորվում. այդ սենյակում բացի մաքրությունից, ամեն ինչ կա... դեռ այս մեր կանգնած տեղը ողորմություն է նրա առջևում... հատակը հող և վրան դեզդեզ սենյակի ավլած աղբերը և ավելցուկները, ամեն կողմ թացություն և նույնիսկ մարդկային աղբեր... ինչ ասած, այնտեղ բանտարկվածներին չեն էլ թողնում բնական պիտույքների համար դուրս գնալու, ստիպված ես կանգնած տեղդ լցնե լև թրջել... Նստարան իսկ չկա... հոտը անտանելի է. մի անկյունում կծկվել նստել է մի ինչ-որ սևադեմ դերվիշ, որին ընկերացրին քեզ։ Դերվիշը յուր փայլուն աչքերով այդ մութ անկյունից քեզ է նայում, հետո վեր է կենում և միզով նկարներ է գծում հատակի վրա, հետո կրծում է յուր ձեռքին բռնած սեխի կճեպը, մոտենում լուսամուտին, դարձնում է յուր հնությունից կեղտոտած շապկի օձիքը, բաց է անում կուրծքը և սկսում է միջատներ կտվել... Զզվում ես, աշխատում ես մի մաքուր անկյուն հռռանալ, բայց ոտքերդ ընկնում են մարդկային աղբերի կույտերի մեջ... և բոբիկ ես... ձեռք քաշիր գուլպաներիցդ... Հոգնում ես, ուզում ես նստել՝ չես կարող—տեղ չկա... կոթնում ես պատին...

1 Կորիր։

պատը թաց, կեղտոտ, կարծես աղբով ծեփած լինի... Եվ այդ բոլորը կըրում ես երբեմն ժամերով, մինչև որ մյուդիր էֆենդին հիշե քեզ և հրամայե ներս տանել սենյակը... Գալիս է զինվորը, բաց է անում դուռը, քեզ դուրս է քաշում և ներս մտցնում մյուդիրի մոտ... և ահա քո ոտքերդ գարշելի հետքեր են ձգում անցածդ ճանապարհի վրա... Մյուդիրը չէ նկատում, սակայն դրագիրները նկատում են, քիթերնին են պահում, հայհոյում են. մյուդիրը կատաղում է, ինքը յուր ձեռքո՞ւ մի քանի հատ հացնում է վզակոթիդ, եվրոպական գլխարկովդ սրբում ոտներդ, հետո թիթը բռնելով մի քանի հարցեր է առաջարկում և գոռում[1].

— Հա՛յդե, սիքտիր, մուրտա՛ռ...

Եվ զինվորը քեզ տանում խառնում է բակի մի անկյունում մի ուրիշ ավելի կեղտոտ, բայց մեծ սենյակում միմյանց վրա լցված բազմության մեջ... Այս այսպես է... Հետո քեզ բերում են այստեղ... նայիր ինքդ, հավանո՞ւմ ես այս նախագավիթը, ուր սպասում են բոլոր վկաները, հրավիրվածները և շատ անգամ հանդիսատեսները՝ դատարան մտնելուց առաջ...

Ես չորս կողմս նայեցի։

Մի բավական մեծ խրճիթ էր այդ և, ինչպես ասացի, հնադարյան կաղնյա դռնով և վանդակապատ անփեղկ միակ լուսամուտով։ Պատերը և առաստաղը այնպես սև էին, որ դժվարանում էի որոշել, թե ինչո՞վ է ծեփված. խոնավությունից ցեխ էր կազմվել սենյակի վերին կողմը, իսկ մի անկյունում դիզված էր զանազան իրերից կազմված աղբի կույտը, որի վրա կռացած՝ քրքրում էին երկու հրեաներ, հետաքրքրությամբ դիտում էին կտրտված թղթերը, ժողովում էին ամեն երկաթի կտոր, շորի մնացորդ և նույնիսկ կոտրտած տաճկական գրիչներ՝ ու գրպաններն էին կոխում։ Հույները տաքությամբ վիճում էին մի անկյունում, ալբանացիք կիսատաղի աչքերով մյուսներին էին նայում, իսկ պարսիկները պպզել պատի տակ՝ գետնի ցեխից բուրգեր, պատեր և տներ էին շինում և ցեխոտ ձեռքերնին հագուստի փեշերով սրբում. իսկ մի արաբացի աշխատում էր օդի միջից անցնող ճանճերը բռնել և երբ հաջողվում էր՝ կտրատում էր խեղճ կենդանիների թևերը և ապա դնելով պատի վրա՝ ժպիտը երեսին դիտում էր նրանց օրորվելով բայլերը...

Օդը այնպես ապականվել էր այդ բազմության արտաշնչությունից, որ ինքդինքս ձգեցի լուսամուտի մոտ, ուր և ինձ միացան խոսակիցներս։

1 Անձամբ ստուգել ցանկացողները թող բարեհաճեն մի գործ ունենալ տաճկաց դատաստանատներում և այն ժամանակ կտեսնեն, որ մեր նկարագրածը դեռևս շատ մեղմ է։

— Իսկ այստեղից մեզ ո՞ւր կտանեն,— հարցրի ես նրանց։

— Չգիտեմ,— ասաց մեկը,— կարծում եմ, որ դատաստանի սրահը կմտցնեն։

Այդ միջոցին զինվորը մոտեցավ լուսամուտին և իմ անունս տվեց։

Երբ դուռը բացվեց, և ես դուրս գնացի, մի ուրիշ զինվոր բռնեց թևիցս և գոչեց.

— Հա՛յդե, վեր գնանք, քեզ ուզում են։

Սանդուխների մոտ կրկնակոշիկներս հանեցի և պահ տվի կոշկապահին՝ վարձը կանխիկ վճարելով, իսկ սրահի դռան առջև հասնելուս պես՝ զինվորը կանգնեցրեց ինձ և պահանջեց, որ կոշիկներս էլ հանեմ...

— Գուլպայո՞վ մնամ։

— Իհարկե, այդպես չի կարելի ներս մտնել։

Այստեղ ևս մի կոշկապահ կար, կոշիկներս էլ նրան պահ տվի. հետո ինձ մտցրին մի փոքրիկ խուց, անունս գրեցին, և երբ ես շվարած կանգնել էի՝ մի գրագիր բռնեց թևիցս, բաց արեց մի դուռ և ինձ ներս մղեց այնտեղ։

Ես գտնվում էի դատաստանի սրահում։

Դ

Քառակուսի մեծ սենյակ էր մեջտեղից երկուսի բաժանված փայտե ցանկով. մի կողմում պայտաձև սեղանի շուրջը նստել էին վեց անձինք. գլխի կողմի նստողը կոշտ գծագրությամբ, սպիտակ փաթոցով, երկայն վերարկուով՝ նախագահն էր, որը մի ձեռքը դրել էր յուր աջ կողմում գրված օրինաց գրքերի վրա՝ ձախովը դարձնում էր համրիչի հատերը ու շրթունքները շարժում լռությամբ,— աղոթում էր նստած տեղը։ Նրա աջ կողքին բազկաթոռի վրա նստել էր արբեցողի աչքերով և մուշտակ հագած մի նիհար ու գունաթափ էֆենդի՝ մի ծունկը բարձրացրել, նրա վրա էլ դրել էր թուղթը և գրում, իսկ մյուսները մի-մի թղթի կտոր ձեռքներնին կամ կարդում էին և կամ բարձրաձայն հորանջում ու բերաններն այնչափ մեծ բանում, որ խռչափողի ծակերը տեսնվում էին։ Այդ սրահումն ևս պատից դուրս պարզված կար մի վառարանի խողովակ, որը եկել կռանում էր դեպի նախագահի գլուխը։ Պատերի վրա ամեն կողմից կախված կային տոպրակներով թղթեր, իսկ հատակի վրա թափված թղթի կտորները եթե հավաքեին՝ մի կողով կլցներ, որի կեսը կլիներ պանրի կտորներ, պապիրոսի մնացորդներ, թուրքաց եղեգնյա գրչի կտրվածքներ և այս-այն կողմ լուսամուտից փչող քամիից թռչկոտող՝ եղեգնի միջից դուրս եկած օձանման միջուկներ... Մի անկյունում ընկած էր մի

ոտը կոտրած հնամաշ բազկաթոռ, իսկ մյուս անկյունում ցցած էր եղեգնյա գրչի կողերի 5—6 տրցակներ։

Երկրորդ մասը, ուր տարան մեզ և մեր ետևից փակեցին ցանկի վանդակը, սենյակի ամբարն էր, այո, ամբարն էր, որովհետև այստեղ սկսած կոտրտած փայտերից, ավելից, վառարաններից, չայնիկներից մինչև հրնամաշ գորգեր, կարպետներ, թղթեր, արձանի կտորներ՝ դարսված և խառնիխուռն ձգված էին ամեն կողմ, այնպես որ մեզ մնում էր կամ կանգնած մնալ կպած ցանկին և կամ նստել այդ կույտերի վրա։

Եվ ես նստեցի մի գորգի վրա ու այնտեղից սկսեցի դիտել դատաստանի երկճյուղյան այդ սրահը և վեց դատավորներին։

Ցանկի դռան, սեղանի մոտ և սենյակի դռանը կանգնել սպասում էին գծուծ հագուստներով և ոտաբոբիկ զինվորներ։

Միծաղելի էր, ճշմարիտ, տեսնել այդ թեք ընկած, դերձակի նման չոքած, հորանջող, քնելու պատրաստ դատավորներին, տոպրակազարդ պատերը, դարևոր կեղտից սևացած առաստաղը, աղբով ծածկված հատակը, անկյուններում դիզված տրցակները ու կոտրտած աթոռները և ի լրումն ամենայնի մեզ՝ ցանկի ետևից նայող հանցավորներիս, մեզ, որ տեղ էինք բռնել փայտերի, գորգերի և զանազան իրեղենների կույտերի ծայրին, ու այնտեղից սպասում էինք, որ մեզ հերթով սեղանի մոտ կանչեն...

Այդ միջոցին հանկարծ դատարանի լուսամուտից երևացող Այա-Սոֆիայի մինարեից լսվեցավ մի զիլ ձայն, որ գոռում էր.

— Ալլահ աքպե՞ր...

Կեսօրվա աղանն էր այդ, մահմեդականաց երկրորդ աղոթքի ժամանակը։

Սրահի դատավորները իսկույն դադարեցին հորանջելուց, նախագահը ծանրությամբ վեր կացավ աթոռի վրայից, քայլեց դեպի դուռը և անցավ զինվորի բաց արած դռնից դեպի մի ուրիշ փոքրիկ սենյակ, որի դուռը չկողպեց զինվորը, և մենք տեսանք, թե նախագահը ինչ արեց այնտեղ։

Նա ձեռքը երեսին քսեց ծանրությամբ, հորանջեց, հետո դռան մոտ պպզեց, այնտեղ դրված ջրով լվաց երեսը, երկու մատներով թրջեց սևփրած գգաթը, թևերը վեր քշտելով մինչև արմունկը, թաթախեց ջրի մեջ, հետո ոտների գուլպաները հանեց, ջուր քսեց բթամատի և ցուցամատի միջանցքին և այդ բոլորը անելուց հետո՝ նա չոքեց սենյակի մեջտեղում փռված մի կարպետի վրա և սկսեց աղոթել։

Սրահի միջի անդամներն ևս դուրս գնացին, և սրահը դատարկվեց. զինվորը վար քաշեց ցանկի դուռը, կողպեք դրեց վրան, փակեց կաղին

անյակի դուռը, հետո սրահից դուրս եկավ, նրա դուռն էլ կողպեց, և մենք մնացինք բանտարկված դատաստանի սրահում։

Պիտի ասեմ, որ ցանկի եռանում կայինք ավելի քան քսան անձինք և նույնիսկ երկու կանայք, որոնք սավանի մեջ փաթաթվել՝ կծկվել էին մի անկյունում։

Բոլորը սկսեցին խոսակցել, հետո մի-մի նստելու տեղ գտան, իսկ ես ոտներս նախ պարզեցի, հետո մեջքս էլ, ապա թևս գլխիս տակ դրի... կամաց-կամաց աչքերիս կոպերը փակվեցան և քնեցի...

Չգիտեմ որքան ժամանակ էր, որ քնել էի, երբ մի խռպոտ ձայն դիպավ ականջիս. ես վեր թռա, շարժեցի թմրած թևս և ուզեցի տեսնել, թե ո՞վ էր այդ խոզի ձայն հանողը։

Պարոն նախագահն էր, որովհետև դատավորները արդեն եկել իրենց տեղն էին բռնել, դատավարությունը արդեն սկսել էր, և նախագահը փաթոթը ծռած, դեմքը կատաղի, հայհոյանքի լուտանք էր, որ թափում էր սեղանի մոտ կանգնած երկու անձերից մեկի գլխին.

— Գյավո՛ւր, խնզրը, թերե՛ս...— գոռում էր նա,— ի՞նչպես ես համարձակվում քո արած հանցանքը այս մյուսուլմանի, «հաղկ դինը» պաշտող մարդու վրա բարդել և նրան դատի էլ ենթարկել...

— Վալլա՛հ, աղա՛...— ասում էր խեղճը գլուխը քորելով,— սիր նա գլուխս պատռեց, ահա, տեսեք....— և նա ցույց էր տալիս ճակատի վրա բացված լայն վերքը, որի վրա արյունը թանձրացած մի կարմիր թաղանթ էր կապել։

Դեպքը այս էր, ինչպես որ հետո հասկացա։

Բալրք բազարում մի թուրք մտնում է մի հայ կերակուր եփողի խանութ և «շքեմբե չորբասի»[1] է ուզում 40 փարայի. հայը լցնում է մի ամաս և դնում է նրա առջև, սակայն միտքը ուրիշ տեղ եղած լինելով՝ մոռանում է հաց բերել մեջը. թուրքը բարկանում է և ամանը կերակուրով շպրտում է հայի գլխին. բարեբախտաբար կերակուրը ողողում է հայի միայն հագուստը, իսկ ամանը մի մեծ վերք է բաց անում նրա ճակատի վրա։ Թուրքը այդ քաջագործությունը անելուց հետո ուզում է փախչել, սակայն հայը մի ոստիկան է կանչում և թուրքին բռնել տալիս։ Ոստիկանական վարչությունը բարվոք է համարում հային էլ թուրքի հետ բանտարկել մինչև դատի օրը, և ահա նրանց բանտարկվելուց մի ամիս հետո գործը սկսում էր... Այդ դատն էր, որին մենք ներկա լինելու պատիվը ունեցանք։

Թուրքը հայտնել էր, թե հայը իրեն ապտակել էր, ուստի և ինքն էլ կերակուրի ամանը շպրտել էր նրա գլխին, որովհետև բարկությունից

1 Փորտիքից շինած սուպ։

իրեն չէր կարողացել զսպել. բացի դրանից սեպուհ պարտավորություն էր համարում հայտնել, որ «անիծյալ գյավուրը վերքը ստանալուն պես համարձակվել էր մոռանալ իրեն և հայհոյել մարգարեին ու «հախկ դինը»...

Այս վերջին հայտնությունը սատիկ զայրացրել էր դատավորներին, և նախագահը պարտք էր համարել դատարկել հայի գլխին յուր հայհոյանաց տոպրակը...

— Լռի՛ր,— որոտաց հայի վրա նախագահը,— գիտե՞ս ինչ մեծ հանցանք ես գործել— «քյուրեգի»[1] արժանի հանցանք... Ես զարմանում եմ, թե մեծն աստվածը, փառավորյալ մարգարեն ինչպես իսկույն չի արմատահան արել այդ պիղծ լեզուդ... Բայց աստված անիմանալի է, և նրա մարգարեն՝ իմաստուն, նա թողնում է յուր չերմ հավատացյալներին՝ պատժելու իրենց հայհոյողին... Ի՞նչ եք ասում, տյարք դատավորք,— դարձավ նա անդամներին,— մի՞թե արժանի չէ այս գյավուրը հավիտենական բանտարկության...

Խեղճ հայը աշնան տերևի պես գունաթափ՝ դողում էր. նա երերաց և կմկմաց.

— Ախր սուտ է ասում, ես չեմ հայհոյել, վկա ունիմ ..

— Ո՞վ են վկաներդ,— հարցրեց դատավորներից մեկը։

— Երկու վկա ունիմ...

— Երկու չի կարելի,— գոռաց նախագահը,— երեք պիտի լինին, և նրանցից երկուքը՝ մյուսուլման... ունի՞ս այդպիսի վկաներ....

— Ո՞չ, բոլորն էլ հայ են... խանութումս տաճիկ չկար այն ժամանակ։

Դատավորներից մեկը ժպտեց, ես էլ ժպտեցի, որովհետև միամիտ հայը չգիտեր, որ տաճիկ վկա գտնելու համար պիտի նախ ոչնչացնել տաճիկ դատավորները, որոնք ամեն ջանք գործ են դնում, որ տաճիկ վկաները ատյան չհանեն, երբ վկայությունը հօգուտ մի հայի է։

Խեղճ հայի բանը բուրդ էր, որովհետև օր չէր լինում, որ տաճիկները մեղապարտությունից ազատվելու համար հայհոյանաց հանցանք չբարդեին հայերի վրա. և միշտ այդ կերպով հաջողվում են թե դատապարտությունից ազատվել և թե հային միշտ հանցավոր հանել ու բանտարկության և տուգանքների ենթարկել...

Այս այսպես է. հետաքրքրվողը կարող է ստուգել։

Քիչ հետո հային վեց ամսվա բանտարկություն վճռեցին. խղճում էին...

1 Թիապարտություն։

Ե

— Գնա՛,— ասացին ինձ, երբ վկայությունս տվի, և ես դուրս գնացի սրահից. կոշիկներս հագա ու ցած իջա սանդուխներից։

Երկայն նրբանցքից անցնում էի, երբ այնտեղի լությունը, դռներից մեկի առջև ժողովված բազմությունը ինձ դրդեց մոտենալու։

Այդ դռան վրա գրված էր «Եղեռնադատ նախնական ատյան»։

Դռան վարագույրը ետ էր քաշված, և մի հոծ բազմություն՝ միմյանց վրա խռնված դիտում էր ներսը։ Կարողացա թևերի տակով ներս մտնել և այս անգամ ես գտնվում էի փոքր-ինչ ավելի մեծ, մաքուր, մեծ լուսամուտներով մի սրահի մեջ։ Կարմիր վարագույրները ծածկված լինելով մի խորհրդավոր լույսի մեջ տեսա բարձր ամբիոնի վրա եռանկյունի կանաչ սեղանը, որի գլխին նստել էր նորից մի սպիտակ փաթաթոցավոր «կադի», և նրան շրջապատել էին հինգ-վեց շատ կոկիկ հագնված պաշտոնյաներ։

Կանոնավոր մի սրահ էր, ատյանի առջևում մի վանդակ կապած, սրահի մեջ նստարաններ, դռան ճակատին սուլթանի «թուրան», ատյանի երկու կողքին փաստաբանների համար բարձր սեղաններ և վերը՝ ամբիոնի մի անկյունում, զանազան դեսպանների համար աթոռներ, որոնց մեկի վրա նստել էր պարսկական գլխարկով պարսից դեսպանի հայ թարգմանը։

Խոր լություն էր տիրում սրահում, և «քաթիպ-էֆենդին»[1] ոտքի կանգնած կարդում էր ձեռքին բռնած թուղթը, իսկ դատավորները կամ խազխազում էին իրենց առջևը դրված թղթերի վրա և կամ ժողովուրդն էին դիտում։

Ես տեղ բռնեցի մի նստարանի վրա և դիտում եմ։

Տասնհինգ րոպե տևեց այդ «լահիհեն»[2], որից հետո նախագահը գոչեց.

— Հյուսեյն խալիլ օղլին և Ահմեդ Նազիմ էֆենդին թող առաջ գան։

Ատյան մտան մի հասակավոր, պերճ հագնված տաճիկ և նրա ետևից՝ մի կեղտոտ դեմքով կտրտած հագուստով պարսիկ, որի մի թևը վզից անցկացրած թաշկինակի մեջ էր դրված. այդ պարսիկը նմանում էր մի մշակի, իսկ թուրքը՝ մի հարուստ բեյի։

Եվ այդպես էլ էր. թուրքը Հիսար-Բուրնիի կաշիի գործարանատերն էր, իսկ պարսիկը՝ նրա ամենահասարակ գործավորներից մեկը։

---

[1] Գրագիր։

[2] Տեղեկագիր։

Բոլորիս հետաքրքրում էր այն, թե ի՞նչ դատ ուներ այդ ցնկոտա պարսիկը նշանավոր գործարանատեր Ահմեդ Նազիմ էֆենդիի դեմ։

Բանից դուրս եկավ, որ պարսիկի թևը մի մեքենայի տակ էր ընկել և մինչև արմունկը ջախջախվել էր, և այդ այսպես էր եղել։

Ամսի 2-ին Ահմեդ Նազիմ էֆենդին յուր գործարանին այցելության էր գնացել. մոտենալով շոգեշարժ մեքենային, տեսել էր, որ ռեգուլատորը լավ չէր բանում (այնչափ տեսել էր, որ փոքր-ինչ հասկանում էր)։ Հրամայում է յուր մոտ կանչել գերմանացի մեքենագործին, սակայն մինչև նրա գալը նա դառնում է մեքենայի մոտից այդ ժամանակ անցնող պարսիկ մշակին և հրամայում է, որ մեքենան յուղեն։ Պարսիկը տեսած լինելով, թե ի՞նչպես են յուղում, առնում է եղամանը և մոտենում է մեծ անիվին...

— Այդտեղ չէ՛, հիմար,— գոչում է էֆենդին և հրում է պարսիկին դեպի ռեգուլատորը, բայց պարսիկը այդ բուռն հրելուց քիչ է մնում ընկնի, ուստի կոթնում է մեծ անիվի առանցքին. առանցքը վայրկենապես ետ է մղում նրա թևը և ձգում դեպի մեքենայի թևը, որը և դառնալու ժամանակ այնպես խփում է նրա թևին, որ մինչև արմունկը ջախջախվում է։

Պարսիկին տանում են հիվանդանոց, ուր նրա թևը կազդուրվում է, բայց մնում է հաշմանդամ։ Հիվանդանոցից դուրս գալուց հետո նա դիմում է էֆենդիին և խնդրում է նրան գոնե ճանապարհածախս տա Պարսկաստան դառնալու, բայց (պարսիկի ասելով) էֆենդին հրամայում է, որ նրան վռնդեն, ծառաները գլորում են նրան յալը-ի պատշգամբից[1] դեպի ծովը, ուր նա հազիվ կարողանում է խեղդվելուց ազատվել՝ կառչելով ափումը ցցված նավակը կապելու ցցին։

— Եվ, — ավելացրեց պարսիկը,— պատշգամում էֆենդին ու յուր խանումը կանգնել՝ քրքիջներով ծիծաղում էին ինձ վրա...

Պատմեց պարսիկը ու լռեց։

— Վկաներ ունի՞ս,— հարցրեց նախագահը պարսիկին։

— Այո, ունիմ...

— Շատ լա՛վ, գնա դուրս մինչև կանչեմ։

Պարսիկին դուրս արին, նախագահը ծառային հրամայեց ներս բերել վկաներից մեկին։ Ներս եկավ մի ուրիշ պարսիկ, որ նույն կեղտոտ և կտրտված հագուստն ուներ, սակայն դեռևս կոտրած թև չուներ, թեև նույն գործարանի գործավորներից էր։ Դատավորը հարցրեց նրա անու-

---

[1] Բոսֆորի վրա դեպի ծովը պարզված պատշգամներով շենքեր են ամառվա բնակությունների համար։

նք, արհեստը, հայրենիքը, տարիքը, և մի բոպե լռելուց հետո հանկարծ հարցրեց.

— Դու ո՞ր դեպքի վկան ես, թեը կոտրելո՞ւ, թե յալբի տեսարանի...

— Յալբի տեսարանի, ահա այսպես եղավ. մենք երկուսս...

— Լռի՛ր,— գոռաց նրա վրա կադին,— դեռևս քեզ չհարցրի դրա մասին, երբ հարցնեմ, այն ժամանակ պատասխանիր։

Պարսիկը լռեց և գլուխը խոնարհեցրեց։

— Ինչպե՞ս եղավ,— հարցրեց կադին փոքր-ինչ լռությունից հետո։

Լսողների ծիծաղը շարժեց կադիի այդ ընթացքը. պարսիկն իսկ ապշությամբ նրան նայեց և կմկմաց.

— Աղա, հարցնո՞ւմ եք։

— Իհարկե, հիմա՛ր, չե՞ս լսում, որ հարցնում եմ։

— Կարո՞ղ եմ պատասխանել։— բարձրացավ ընդհանուր ծիծաղ, իսկ պարսիկը ապուշ աչքերով բոլորին էր նայում։

— Պատասխանի՛ր,— գոռաց դատավորը։

— Այսպես եղավ. երբ Հյուսեյնին հիվանդանոցից բաց թողին, և մենք նրա թեը մի թաշկինակով կապեցինք վզին, ելանք գնացինք Ահմեդ էֆենդիի տունը, որ փող ուզենք Հյուսեյնի համար, երթա իրեն, այնտեղ հայր ունի, մայր ունի, երկու էլ տղա ունի. իմ հարևանս է. ես տեսել եմ և ճանաչում էի նրան...

— Դեպքը պատմիր,— միջահատեց նրան դատավորը։

— Պատմում եմ, էֆենդի...

— Որ գնացիք էֆենդիի մոտ, ի՞նչ եղավ։

— Էֆենդին գոռաց ու մեզ վռնդեց. ես փախա մտա նավակը, իսկ Հյուսեյնին ծառաները շուռ տվին ծովի մեջ. հազիվ...

— Լա՛վ,— միջահատեց նորեն կադին,— ե՞րբ էր այդ։

— Մի երկու շաբաթ առաջ։

Կադին գրագրին դարձավ և հրամայեց գրել։

— Երեկո՞ էր, թե՞ առավոտ։

— Երեկո էր։

— Ժամը քանիսի՞ն։

— 10-ը կլիներ. ո՞վ գիտե. կարելի է 11-ն էր։

— Մո՞ւթն էր։

— Երբ տուն էի վերադառնում՝ մթնում էր։

Տիրեց փոքր-ինչ լռություն, որո ընթացքում կադին ժպտելով մի քանի խոսք փսփսաց յուր կողքի գատավորի ականջին և ապա նույն ժպիտով Ահմեդ Նազիմ էֆենդիին— նստարանի վրա փառավորապես բազմած և հեգնորեն ժպտող գործարանապետին նայեց և դառնալով նորին պարսիկին՝ հարցրեց.

— Յալբի պատշգամը շա՞տ բարձր էր ջրից։

— Շատ բարձր չէր։

— Քանի՞ արշին կար։

Պարսիկը փոքր-ինչ մտածեց և հետո ասաց.

— Երկու-երեք արշին կար։

— Նավակը ձե՞ռն էր։

— Այո, բայց նավակը հեռու էր կապած, և նավավարը պիտի մոտ բերեր, երբ կանչեինք։

— Ինչո՞ւ ցամաքային դռնով չգնացիք։

— Ուզեցինք ծովի կողմով գնալ։

— Էֆենդիի կինը ի՞նչպես էր, բարձրահասա՞կ էր։

— Ոչ շատ,— ասաց պարսիկը,— բայց գեղեցիկ էր և...

— Լռի՛ր,— գոռաց նրա վրա կադին,— այդ մասին երբ չեմ հարցնում, մի պատասխանիր... Գնա, լավ...

Մի ժամից հետո վճիռ տրվեց այսպես.

«Նկատելով, որ վկա Մուրատը ասում է, թե երեկո էր, և ինքը խալիլը քննության ժամանակ ասել էր կեսօրից հետո.

Նկատելով՝ որ վկան ասում է, թե ժամը 10-ից 11-ը կլիներ, իսկ խալիլը՝ 9-ից 10-ը.

Նկատելով՝ որ յալբի բարձրության մասին վկան երկու-երեք, խալիլը 4 արշին էր ասել և կառավարության կողմից չափված լինելով 1½ արշին է երևացել.

Նկատելով՝ որ Ահմեդ Նազիմ էֆենդիի կնոջ համար վկան ոչ շատ բարձրահասակ, ինքը խալիլը բարձրահասակ է ասել, իսկ ստուգված է, որ միջահասակ է.

Նկատելով՝ որ և այլն...»։

Այնքան «նկատելով», որ սկսեցի սոսկալ, թե այդչափ «նկատելովներն» ո՞րտեղից գոյացան հանկարծ։

Ի վերջո վճռվեց. Ահմեդ Նազիմ էֆենդին բոլորովին արդար, իսկ վկան՝ Մուրատը յուր սուտ վկայության համար մի ամսվա բանտարկության։

Հանկարծ ուռածափոր գործարանատերը ոտքի ելավ, փոքր-ինչ փընչաց և ասաց զորեղ ու բարձրաձայն շեշտով.

— Էֆենդինե՛ր, արդարադատություն եմ խնդրում ցնկոոտ պարսիկի դեմ, որ համարձակվեց ինձ— Ահմեդ Նազիմ էֆենդիիս դատաստան քարշ տալ և ժամերով նստեցնել այս տախտակյա նստարանի վրա... Ամեն

ինչ մեր մեջ քանդվել է. ոչ տերն է յուր ծառան ճանաչում և ո՛չ էլ ծառան յուր տիրոջ. ոչ մշակն է աղային ճանապարհ տալիս և ոչ հասարակ գործավորը՝ բեյին. ընչին անարգ ծառան համարձակվում է տրտնջալ էֆենդիների և բեյերի դեմ... Կադի՛ էֆենդի, հանուն արդարության պահանջում եմ խիստ պատժել այս ցած պարսիկին, որ համարձակվում է «զաթը փադիշահան» էֆենդիներին դատարան քարշ տալ... Իսկ եթե դուք չեք անիլ այդ, ես կդիմեմ ավելի բարձր տեղեր, և այնուհետև թող բոլորը հասկանան, որ հեշտ չէ մեզ նման մարդոց բերել և այսպիսի լերկ տախտակյա նստարանների վրա ստիպել նստելու...

Լռեց, ֆեսը ծռեց, ժողովրդի վրա մի հպարտ ակնարկ ձգեց և մի ոտը հառաջ ձգելով՝ սպասեց։

Կադին յուր կողքի դատավորների հետ փոքր-ինչ խոսեց և ապա ասաց գրագրին.

— Նկատելով, որ Խալիլը նախատել է Ահմեդ Նազիմ էֆենդիին՝ ավելացուր, գրագիր, որ արդարության ատյանը վճռում է Խալիլի որդի Հյուսեյնի համար մի ամսվա բանտարկություն և 1 ոսկի տուգանք... ատյանը փակված է...

Այս ասելուց հետո կադին ոտքի ելավ, ձեռքը քսեց մորուքին, ծիծաղեց և մեզ լսելի լինելու չափ բարձր ձայնով ասաց յուր ընկերներին. բայց այնպես, որ կիսովին էլ դեպի ժողովուրդն էր դարձել.

— Փառք աստուծո և նորա փառավորյալ մարգարեին, աշխարհը կարող է վկայել, որ այս դատը բոլորովին արդար կերպով վճռվեց...

ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ

1

Արևը սաստիկ կիզիչ էր, մանավանդ Նավահանգստի վրա, ուր նրա տաքությունը պատերի մեջ մթերված՝ անդրադառնում-այրում էր վրայի աշխատավորներին։

Նրանք կրում էին։ Սև քրտինքը աղբյուրի պես ծորում էր սևացած դեմքերի վրայից։ Վագոնի մեջ մտած Մկոն ու Ակոն կարճ բահերով վերցնում էին մարգանեցի կույտից, լցնում կողովների մեջ, դրսի կողմից մի առ մի առաջ էին գալիս ուրիշները, շալակում կողովները, ու տախտակյա կամուրջից շոգենավ վազելով, դատարկում էին այնտեղ։

Այդ բոլորը կատարվում էր սև, թանձր փոշու մի ամպի մեջ։ Կուլ էին տալիս նոքա ածխային փոշի։ Ոմանք տապից կիսովին մերկացել, մերկ մասն էլ լավ սևացած, ուրիշները մուր թքելով... աշխատում էին, արագ աշխատում...

Քսան հոգի էին. մի թուրք կապալառուի մշակները։ Բոլորն էլ թուրքահայեր։ Թողած տունուտեղ, կին ու որդի, վաղուց էր, որ նրանք այնտեղ էին և մարգանեցի փոշի էին կուլ տալիս։

Մկոն էլ նրանց հետ էր, իր հորեղբորորդի Ակոյի հետ։ Մեծ շոգենավը կաթսան վառել, շոգի էր ճնշում. բեռնվել էր. մի ժամ ևս և մտադիր էր դուրս գնալ դեպի ծովը։ Պատյանը սարսռում էր շոգու ճնշումից, իսկ լայն ծխնելույզը թանձր ծուխ էր ժայթքում։ Նավի կամուրջի վրա կանգնած էր անգլիացի գեր նավապետը, ծխամորճը բերանի անկյունին, հափբացած աչքերով դիտում էր մշակների աշխատանքը և հազիվ, ուրեմն, շարժում էր գործում՝ տեսնելու համար, թե շա՞տ էր մնում ամբարի լցվելուն։

Նավահանգստի ներսում ջրերը խաղաղ էին. քարե նավամատույցի վրա կենդանություն կար։ Դեմ առ դեմ, ավազոտ ափին ձկնորսները վահանաձկեր էին փռել արևի դեմ, իսկ նոցա գլխի վրա թռչունները խուլ ճիչեր արձակելով՝ իջնում-բարձրանում էին։

Թուրքահայերն աշխատում էին. պարբերական արագ և միակերպ աշխատություն։ Չէին խոսում։ Հազիվ երբեմն լսվում էր ընդհատ բառեր, կարճ, կտրուկ հրամաններ, որոնք ուղղվում էին մշակներին՝ քիչ հեռու կանգնած վերակացուի կողմից։

Այդ բոլորը կատարվում էր պատի այն մասում, ուր երկաթուղու գիծը հասնելով, շոգենավի համար վագոններով մարգանեց էր բերել կանգնեցրել։ Պատի վերևի մասը դատարկ էր։

Երբ բավական կրել էին, Ակոն կանգ առավ և դառնալով հորեղբորորդուն ասաց.

— Կարծեմ կեսօրը մոտ է։

— Հա՞,— արեց միայն Մկոն և գործը շարունակեց։

Շոգենավից քիչ հեռու խարսխել էր հունական մի առագաստանավ. նրա մեջ նավապետի ընտանիքը այժմ բազմել էր հովանոցի տակ և ճաշում էր. կերակուրի հոտը բուրում-հասնում էր մինչև աշխատավորները։ Իսկ մարգանեցի սև փոշին հոսում էր դեպի մշակների բերանը, քթածակերը։ Երբեմն թքում էին, սևացած թևերով սև ճակատի սև քրտինքը սրբում, որ ծորում էր մինչև մարմնի խորքերը։

— Պարտքիցդ շա՞տ է մնացել,— հարցնում էր այդ միջոցին Ակոն Մկոյին, կամենալով մի բան խոսել։

Ակոն տրամադիր չէր, բայց ցուցամատը աղեղնաձև ծալեց և նորա-

նով աչից ձախ ցած հոսեցրեց քրտինքը, և երբ ճակատը քիչ սպիտակել էր, ասաց.

— Դեռ կա... քսան մանեթ էլ կա։

Ակոն լռեց և բահը մղեց մարգանեցի մեջ։

Խե՜ղճ Մկո. մինչև երբ պիտի կարողանար այդ գումարը վճարել։ Չէ՞ որ քսան ռուբլի վճարելու ընթացքում նրան ապրել էր պետք, տուն փող ուղարկել... Ուրեմն էլի պարտք պիտի աներ, էլի պիտի հաշիվներ ունենար։ Խե՜ղճ Մկո։

Այդ մտածելով, Ակոն նայեց Մկոյի սև դեմքին։

— Կուզես իմ օրականից քիչ վերցրու,— խոսեց նա պահ մի հետո։

— Դու քի՞չ պետք ունես,— մռմռաց Ակոն,— Սրապիոն աղայի անհատնում պարտքդ մոռացե՞լ ես։

Եվ երկուսն էլ միաժամանակ բահերը խրեցին մարգանեցի կույտի մեջ։

Այդ միջոցին հեռվում կանգնած մի շոգենավի վրայից լսվեց նախ զանգակի և իսկույն հետո սուլումի ձայն։

— Կեսո՛ր,— գոչեց մեկը ցածից։

— Կեսո՛ր...— ասացին միմյանց ետևից ամենքը և տեղնուտեղը ցած գցեցին կողովները։

Հոգնել էին, սաստիկ հոգնել։ Ցած դրին կողովները և նրանց կողքին էլ նստան։

— Հաց ուտենք,— ասաց Ակոն։

— Անոթի չեմ,— առարկեց Մկոն,— բայց գնանք, նավամատույցի վերին ծայրը ելնենք. սիրում եմ ծովին նայել, դիտել հեռու. շատ սիրուն է տեսարանը, ծայր չունի...

Աչքերը տրորեց, թևով մի այտը սրբեց ու դուրս թռավ վագոնից՝ վերի պատի վրա։ Ակոն հետևեց նրան։ Ամեն կողմ, իրենց կողովների մոտ նստոտել էին և հանգստանում սև թշվառները։ Մեկը ընկողմանած մարգանեցի կույտի վրա, մյուսը՝ մեջքի վրա փռված այրող արևի մեջ ոտք քարերի վրա, մի ուրիշը թիկն տված վագոնին... Ջուր չկար լվացվելու. ծովը խոր էր, ջուրն էլ աղի։ Ստիպված էին սև մնալ ու իրենց մի կտոր ցամաք հացը սև ակռաներով խածնել ու փոշու հետ կուլ տալ։

Վագոնի մի անկյունից Ակոն հանեց թաշկինակով կապած հացը. երկու եզբորորդիները հեռացան դեպի նավամատույցի ծայրը. հով տեղ չկար. արևի տակ, կիզիչ քարերի վրա նստեցին և պահ մի լուռ՝ սկսեցին ուտել։

Ալիքները գալիս ռումբի պես պայթում էին՝ խփվելով կարծր պատին։ Հեռվում մի քանի փոքրիկ առագաստանավեր բուռն կերպով օրորվում էին և կայմի ծայրով ջուրը համբուրում։ Ալիքներից կազմվող փրփրալին գծերը միմյանց հրում, միմյանց վրա ելնում, փոքրերին կլանում, մեծից կլանվում, ի մի էին ձուլվում և գալիս ծեծում էին ամբարտակը։

Այդ մռնչյունի միջոցներում լսվում էին ծիծառների ձայներ և շոգենավի ճնշված շոգու նուրբ սուլումը։

— Ցած չի գնում,— ասաց Մկոն կուլ տալով հացի մի կտոր.— բազուս անապատի պես շոր է։

— Փոշին է արել. իմն էլ այդպես է. կուզե՞ս, ջուր բերեմ։

— Ո՛չ, նստիր, ջուրը շատ տաք է։

Եվ շարունակեցին ուտել։

— Որքա՞ն շքեղ է ծովը,— խոսեց դարձյալ Մկոն քիչ հետո՝ աչքը ծովի հորիզոնին ուղղած։

— Այո՛... բայց ալեկոծություն կա։

— Այդ ոչինչ. շոգենավը դրանից չի վախենա։

Ակոն քիչ լռեց, հետո խորունկ շեշտով ասաց.

— Ի՞նչ լավ կլիներ, եթե մեզ էլ տաներ շոգենավը։

Մկոն ծիծաղեց։

— Ո՞ւր տաներ,— ասաց նա.— Եվրոպա՞, Պոլի՞ս։

— Տրապիզոնի մոտից է անցնելու։

— Կանգ չի առնի այնտեղ։

— Կկանգնի. առավոտյան ես ղեկավարին հարցրի. թուրքերեն գիտեր։

— Է՛, ինչո՞ւ հարցրիր, միտքդ ի՞նչ էր։

— Հենց այնպես,— ժպտաց Ակոն,— ուրախացա, որ Տրապիզոն կանգ է առնելու։

Մկոն կտրեց մի շերտ հաց, հետո տխրությամբ և մեղմ ասաց.

— Երեխա ես, Ակո։

— Ի՞նչ անեմ... Չէ՞ որ Տրապիզոնից են երկիր գնում։ Երկրի ձայնը խոսեց իմ մեջ... Ի՞նչ լավ կլիներ, եթե այդ շոգենավը մեզ վերցներ, իր ամբարների մեջ կոխեր, այդ մարգանեցի հետ թեկուզ ներս լցներ, միայն երկիր տաներ մեզ...

— Լավ կլիներ. այո... շատ լավ... բայց պարտքե՞ր... բացի դրանից, երթայինք երկիր, ի՞նչ անեինք...

— Է՛հ,— ասաց հուզմամբ Ակոն,— ասված է վկա, որ այստեղ

ավելի վատ ենք ապրում... Որ մեզ նեղացնող չլինի այնտեղ, որ հարկերը, պարտքերը չլինեն, մեր երկրի բանջարեղենը միայն կկերակրի մեզ ողջ տարին...

— Այո, բայց հարկերն էլ կան, պարտքերն էլ և ապա՝ կոտորած, արյուն, թալան...

Լռեցին գլխիկոր երկուսն էլ։

Ցածրում մյուսները ճաշել էին և պարզվել վագոնների հովանու տակ։ Ամեն ինչ համարյա լռել էր։ Մկոն սրբեց բերանն ու ելավ։

— Ժողովի՛ր հացը. ուզում եմ քիչ քնել. չարդված եմ։

Ասաց ու պարզվեց պատի վրա։ Լայն պատ էր, մեջքը դարձրեց արևին, երեսը՝ ծովին։

Ակոն հացը հավաքեց, քիչ հեռու գնաց և նույնպես պարզվեց գետնին։

Լսվում էին միմիայն ծովի շշուկը, շոգենավի դողալը և հեռուն, անտառոտ լեռներից ու ձորերից, ճահիճների մեջ կռկռացող գորտերի ձայներից կազմված խուլ աղմուկների համերգը, որ գալիս շշնջալով ընկղմվում էր ծովի շշուկի մեջ։ Բնության մրմունջն էր. անորոշ, բայց օրը լցնող մրմունջ։

Մկոն ծովն էր դիտում։ Աչքը կապուտակ անհունության, մտքով գնում էր ավելի հեռու, անցնում էր ծովի հորիզոնը և դեռ ավելի հեռու, շա՜տ հեռու...

Եվ նա տեսնում էր։

Տեսնում էր այնտեղ, ծովի, սարերի և ձորերի ետևում, շա՜տ, շա՜տ հեռու, մի սքանչելի դաշտի վրա իր գյուղը, որի հորիզոնն էր Տավրոսի լեռը, շրջապատն էր՝ Մշո ծաղկավետ ու գեղածիծաղ դաշտը իր անուշ զեփյուռով, ճվլվան թռչուններով, պարզ, ականակիտ վտակներով։ Սողոսկում էին այնտեղ զզզուն ջրեր ամեն կողմից, փայլում արծաթի պես, շողշողում արևի տակ, միմյանց գալարվում օձերի նման, համբուրում, գգվում գիներբուկների և շուշանների, կյանք տալիս բազմազան բանջարեղենների։ Սխտորուկն ու սպիտակ-բանջար, եղինջն ու մանդակ, բողիկըն ու ավելուկ, կովու-ճակտեկն ու սիբեխ՝ բուսած էին շուշանի, կակաչի ու մեղրածծուկի, մեռոնածաղկի և գետնի վարդի անուշահոտության մեջ...

Եվ ծածանվում, օրորվում էր, կանաչ արտերի ամբողջ տարածությունը, քամին սուրում-կռացնում էր նրանց պարարտ գլուխները... Մարգագետնի, մարդահասակ խոտերի մեջ արածում էին պարարտ կովեր, դմակալից ոչխարներ, թռչկոտում էին կայտառ այծեր, միմյանց գլուխ բռնում ուլեր և գառնուկներ... Հովիվն իր թաղիքի հետ փռվել էր խոտերի

մեջ, հոտը շներին պահ տվել, ինքը գլուխը անուշահոտ ծաղիկների վրա դրել, քթածակերը օդի բուրմանը տվել, զեփյուռից հովհարած՝ քնել էր բարձրահասակ խոտերի հովանու մեջ...

Այնտեղ էլ կեսօր էր, արևը տաք։ Հոտաղները վերադառնում էին, մանուկները ոտաբոբիկ վազվզում են աղբյուրիցը տուն. կանայք գույնզգույն հագուստներով տներից ել ու մուտ են անում. խրճիթների երդիկներից անոսր, համարյա աննշմարելի ծուխ է բարձրանում. կերակուրների հոտը սփռվել էր ամեն կողմ...

Պարտեզի մի ծառի տակ ահա Մարիամը փռել է սփռոցը կանաչ խոտերի վրա, անուշահոտ ծաղիկների կողքին. վճիտ առվակը հոսում-անցնում է նրանց մոտից, եզերքների շուշանն ու նարգիզը օրորվում են փոքրիկ քամուց, որ շարժում է նաև ծառի ճյուղերը և նստողների գլխին սփռում ծաղիկների վերջին թերթերունքները։

Ամառնամուտ է, Մշո սքանչելի, դրախտային ամառնամուտը։ Որպե՞ս երգում են արտույտն ու դեղձանիկը, սարեկն ու ծիծառը. ինչպե՞ս տաղրում խոտ ու ծառ, նույնիսկ ջուրն ու հողը. ամեն ինչ բուրում է, անո՜ւշ բուրում...

Եվ այդ բոլորի մեջ նստել է նա մեջքը ծառին տված։ Գաբոն ու Ռկոն՝ որդիները, ցեխոտ ձեռքերով ու երեսներով, հողաթաթախ ոտներով ու մազերով, բայց ուրախ-զվարթ ճիչերով, մոտ են վազում, հայրիկի մորուքի հետ խաղում, ծնկների վրա նստում։ Գաբոն իր ցեխից շինած տունն է ուզում ցույց տալ հայրիկին, Ռկոն ուզում է իր փոքրիկ մարգի մասին խոսել... Իսկ Մարիամը՝ իր կինը, առողջ կարմիր թշերով, անկեղծ ժպիտը դեմքին՝ մոտենում է նրան, համբուրում է, դնում է նրա առաջ տախտակյա մեծ կուշի մեջ լցրած թանապուրը, երեսին նարգիզի և կապույտ ծաղիկի թերթերունքներով խառն անուշ սոխառածը փռած.... Վանա ձուկը իր անուշ հոտով լայնացնում է նրա ռնգունքը, սոխ ու գինձ, սամիթ ու կոտեմ, բողկ ու նանա՝ դիզացած են սփռոցի վրա՝ մի մեծ կտոր բանջարով պանիրի կողքին։

Եվ նա կտրում է հացը, երեսը խաչակնքում, ուտում է թանապուրից, ճաշակում ձկնից, ձեռքի ափովը առվակից ջուր է վերցնում, պապակած կոկորդը թրջում...

Որպիսի՜ անուշահամ ջուր. օ՜հ, որքան քաղցր է նա։ Եվ խմում է անհագությամբ։ Ծարավ է, շա՜տ ծարավ...

...Զարթնեց ու բարձրացավ։ Սև ձեռքով քնաթաթախ՝ սրբեց ճակատը, անորոշ հայացքով ծովի անհունությանը նայեց, ապա պառկեց նորից ու փակեց աչքերը։

Նորից երկրում է, նորից իր գյուղում, պարտեզի մեջ, կնոջ, որդիների մեջտեղ։

...Հանկարծ աղմուկը ընկնում է գյուղը։ Ցած է ձգում գդալը։ Մարքամը գունատ՝ վեր է թռչում, երեխայքը կպչում են մորը։ Ի՞նչ կա, ի՞նչ է եղել։

Ոչինչ. հարկահանն էր, գյուղ էր մտել, տուրք էր ժողովում և մրտրակներով, սվիններով ժողովում...

Է՜հ, այնուհետև էլ ի՞նչ կյանք, էլ ի՞նչ նշանակություն ունի այդ սիրուն երկրի տեսքը, կկլացող առվակները. էլ ինչո՞ւ այդքան սքանչելի, անուշաբույր ծաղիկներ, էլ ինչո՞ւ զով քամին, պարարտ արտեր, գեր տավար... էլ ինչո՞ւ կին, որդիք... Չէ՞ որ այդ բոլորը վերցնում, ապականում, կոխոտում, պղծում, քանդում են հարկահանները, վաշխառուները, քրդերը, աղաները...

Էլ ինչո՞ւ այդ բնությունը, երբ նրա վայելողները իրենք չեն, այլ այնպիսիները, որոնք ո՛չ աշխատում են, ո՛չ գործում, ո՛չ նրա հարգը գիտեն և գալիս հափշտակում են, պղծում ու ավերում...

Էլ ինչո՞ւ պարտեզ մշակել, երբ նրա արդյունքը հարկահանի կոկորդն է անցնում. ինչո՞ւ արտ ցանել, երբ նրա ցորենը շահնայի գրպանն է ուռեցնում. ինչո՞ւ մարգագետինը խնամել, երբ նրա խոտը տուրքի է գնում, իսկ կովն ու տավարը քրդի խնջույքին ծառայում։ Ինչո՞ւ ուրեմն առնուտեղ շինել, երբ նրանք մի խումբ կանոնավոր կամ անկանոն հաճույքները լուսավորելու համար այրվելու էին։ Ինչո՞ւ, մի խոսքով, աշխատել ու տքնել, երբ ոչ աշխատանքիցդ մասն ունիս և ոչ էլ քրտինքիդ տերն ես... Ինչո՞ւ ուրեմն աշխատել, ինչո՞ւ...

Էլ ի՞նչն է կապում իրեն այդ բնության, այդ երկրի հետ։ Հո՞ղը. չէ՞ որ չեն թողնում նրան առանց պղծելու. օջա՞խը. չէ՞ որ բոլորի կրակը մարեցին՝ տավա՞րը. չէ՞ որ նրա կաթն էր իր բերանը մտնում և ոչ էլ կարողանում էր խնամքների փոխարենը ստանալ. եկեղեցի՞ն. մնա՞ց մի եկեղեցի, որ չքանդվեր։ Ի՞նչը ուրեմն. կի՞նը, որդի՞քը... Ի՞նչպես իմանար, որ մինչև այժմ իր կնոջը չեն բռնաբարել, չեն առևանգել և որդոց գլուխները չախչախել՝ քարերի խփելով...

Ի՞նչն էր կապում նրան ուրեմն այդ երկրի հետ... Ինքն էլ չգիտեր։ Մի բան քաշում էր նրան այնտեղ. թեկուզ ոչ մի սեփականություն չունենար, թեկուզ իր գլխին կանգնած՝ խփեին ու ձեռքիցն առնեին իր յուրաքանչյուր բոպեի վաստակը...

Բայց նա կուզեր իր հայրենի երկրի մեջ գտնվել, իր գաշտի ջուրը խմել, իր պարտեզի ծաղիկները հոտոտել, իր լեռների խոտերով կերակրվել, իր կնոջ ու որդիների հետ տանջվել...

Մի ձայն, մի խոր, հոգու լարերը հնչեցնող, աղիքները գալարող, սիրտը արյունոտող ձայն կանչում էր նրան։ Երկիրը կանչում էր. երկրի ձայնը անընդհատ հնչում էր ականջին. ծովը, քամին, ծառը, բույսը, նույնիսկ սև փոշին բերում էր այդ ձայնը, մղում նրա հոգու ջղերի մեջ...

Այո, գնալ, գնալ այնտեղ, գնալ իր հողի վրա տանջվել, իր երկրի մեջ շնչել, այնտեղ մեռնել, միայն այնտեղ...

Վեր կացավ նորից։ Քնել չէր հաջողվում նրան. քրտինքը ծորում էր, ծորում, և նա, աչքը ծովին, ականջը ձայնին պարզում, երկրի քաղցր գրավող, կոչող ձայնին...

Տանջվե՞լ... Այո՛, իհարկե, այնտեղ տանջանք կա։ Բայց մի՞թե այստեղ սակավ էր տանջվում։ Սև փոշու մեջ կրում է, կրում. կեսօրին տաք արևի տակ մի կտոր ցամաք հաց ուժով մղում-անց է կացնում չորացած կոկորդը, երեկոյան մի աման կեղտոտ ու անհամ կերակուր ուտում սև և մութ սրճատանը, մենակ, տխուր՝ պառկում է հոտած օդի մեջ, հիվանդություն և ախտ շնչում...

Աշխատածը ի՞նչ է. մի քիչ փող. դրանով ոչ միայն վեց ամիս կրած հիվանդության ժամանակվա պարտքը պիտի վճարել, այլև ուղարկել երկիր՝ վաշխառուին մեղմացնելու, ընտանիքին հաց տալու...

Տանջվել, այո՛, կնոջ ու որդոց կարոտը քաշել... Ի՞նչ էր շահել այստեղ. չէ՞ որ երկու տարի շարունակ տանջվել էր, ուրիշների գրպանը լցրել, իսկ ինքը մաշվել էր, տքնել, ոչ կանոնավոր կերել և ոչ էլ խմել։

Ինչո՞ւ այս բոլորը. ինչո՞ւ դատապարտված լինել միշտ տանջվելու. մի՞թե իրենց վիճակված է այդ. բայց ինչո՞ւ, ի՞նչ մեղք են գործել, որի՞ն զրկել, որի հացը կտրել, ո՞ւմ կողոպտել...

Ա՜հ, կողոպտե՞լ, գողանա՞լ... Չէ՞ որ միմիայն կողոպտող, զրկող և գողացողներն են, որ կարողանում են ապրել, հարստանալ, առանց տանջանքի կյանք վարել և իրենց պես հարյուրավոր թշվառների բանեցնել փոշիների մեջ...

Չլինե՞լ արդյոք այդպես. կողոպտել, զրկել, զոհերի ճիչը երկինք հասցնել, չարագործության սյուների վրա պալատներ կանգնեցնել։

Ո՞չ, ամեն մարդու բանը չէ այդ. դա մի առանձին արհեստ է, կաթի հետ ծծվող ու հոգու հետ ելնող արհեստ... Իսկ իրենք՝ նա և իր նմանները, դատապարտված են նրանց զոհը դառնալու, նրանց երջանկության հիմքը կազմելու...

Պառկեց նորից։ Աչքերը փակվում էին. ա՜խ, եթե կարողանար մի բոպե քնել, մոռանալ բոլորը։ Բայց արևը տաքացնում էր նրա գլուխը և քնելը անհնար դարձնում։ Նեղվում էր, անախորժ քրտինքով ծածկվում...

թը աղեղ շինեց, շարժեց անդամները, գլուխը թևերի մեջ առավ և էլի սկսեց մտածել։

...Ուրեմն, այնտեղ անհնար էր ապրել, այստեղ էլ... էլի, երբեմն թվում է, որ այնտեղ լավ է։ Գիտես, որ երբ այնինչը մոտ է գալիս, խրփելու է. պատրաստվում ես՝ կամ մեջքդ ես դեմ անում կամ բռունցքդ... Իսկ այստեղ։ Սողոսկում են քրտինքիդ մոտ և երբ կարծում ես, թե աշխատել ես մի բան, մեկ էլ տեսար՝ չկա, ոչինչ չմնաց... Եվ շատ ավելի տանջվում ես, քան այնտեղ... էլ ինչո՞ւ ապրել ուրեմն. արդյոք աստված նրանց ավելորդ չէ՞ր ստեղծել...

Հանկարծ ցատկեց, նստեց և կռացավ դեպի ջուրը։ Անդունդը, երերուն անդունդը քաշում, կարծես կանչում էր նրան։

Բայց շուտով սթափվեց. մի մեծ ալիք բարձրացավ և ջրի բուռն հոսանքով լվաց նրա գլուխը։

— Ինչե՞ր էի մտածում,— ժպտաց նա.— մի՞թե ուզում էի ինձ ջուրը ձգել։ Ինչո՞ւ. ձկներին կերակո՞ւր... Ի՞նչ ծիծաղելի ճակատագիր. որ կողմդ դառնաս, մեռած կամ կենդանի՝ կերակուր ես ուրիշների...

Ջուրը քիչ զովացրած լինելով նրա գլուխը, այս անգամ նա քիչ մնաց ննջեր, բայց էլի՛ միտքը գնաց երկրին, էլի՛ ալիքները հնչեցին և երկրի ձայնը ականջին հասցրին...

Հիշեց, որ երկրից վատ լուրեր էին գալիս, սոսկալի բաներ էին պատմում։ Արդյոք ի՞նչ դրության մեջ էր այժմ իր գյուղը։ Ամեն ինչ անշուշտ ավելի քան երբեք՝ տակնուվրա. ո՛չ մշակություն կլիներ, ո՛չ տավար մնացած, ո՛չ արտ, ո՛չ կայք... Խլում են, թալանում, այրում և սպանում... Կենդանի՞ է արդյոք Մարիամը և ո՞ր քրդի հարեմում, իսկ Ռկո՞ն, Գաբո՞ն, ո՞ր թփի տակ արդյոք իրենց վերջին շունչն են արձակում... Իսկ ծերունի մա՞յրը...

Եվ այդ բոլորի հետ, իրենք այս կողմը, տանջվում են, պակաս արյունոտ հաց չեն ուտում, պակաս չեն թալանվում, մեռնում...

Ուժգնությամբ ելավ նստեց և արյունոտ աչքերը պտտացրեց չորս կողմը։

— Ինչո՞ւ ուրեմն,— մտածեց նա ուժգնությամբ,— ինչո՞ւ այս բոլորը չվրել գոնե այնտեղ, երկրում, յուրայինների մոտ... Ինչո՞ւ այնտեղ, նոցա հետ չտանջվել. ինչո՞ւ չգնալ իրենց հողի վրա տքնել, երկրի օդը ջնչել և այնտեղ էլ մեռնել...

1894

ԱՆՆԱ

(Ուսանողի հիշատակարանից)

1

Եվ որովհետև խոստացել եմ քեզ, ահա պատմում եմ։

Գուցե պատմածս քեզ այլանդակ թվի, սակայն, պատմում եմ այն, ինչ որ եղել է և, աստված է վկա, որ շատ էլ մի մեծ հաճույք չեմ զգում դրանով. անցյալը, մանավանդ, հին վերքերը քրքրող անցյալը, պեղել՝ կես վիրավորվել է նշանակում։

...Փարիզ էի գնում. այն ժամանակ ես իրավաբանության ուսանող էի։ Ամառը մեզ մոտ՝ Կովկասում, անցկացնելուց հետո հոկտեմբեր ամսին վերադառնում էի. դասախոսությունները շուտով սկսվելու էին և դրա համար էլ հազիվ Վիեննայի մի կայարանը հասած, իսկույն կառք բռնեցի դեպի մյուս կայարանը գնալու. այդպես անելու ստիպեցի նաև մի մայրուս ընկերուհուս, որ նոր էր գնում Եվրոպա և Օդեսայում խնդրել էր ինձ օգնել իրան։

Հասնելով Վեստբահնը[1], մի անկյունում ցած դրի բեռս, խնդրեցի ընկերուհուս սպասել և վազեցի տոմսավաճառի մոտ երկուսիս համար էլ տոմսակ առնելու։

Ահա այստեղ էր, որ ծանոթացա Աննայի հետ։

Կոթնած տոմսավաճառի առջևի կայանքին սպասում էի իմ հերթին և մտքով Փարիզ էի. ոչ ոքի ուշադրություն չէի դարձնում, երբ տեսա, որ մեկը ինձ հարցնում էր.

— Ներեցեք, պարոն, Փա՞րիզ եք գնում դուք։

Դառնում եմ. մի ռուս օրիորդ էր, թևով հենած կայանքին։

Երկարահասակ էր, սիրուն. կապտագույն աչքերը խիստ արտահայտիչ էին, մի ամբողջ խոր աշխարհ կար նրանց մեջ... դեմքի վրա խաղում էր մանկական խիստ քաղցր, դրավիչ ժպիտ. թշերը կարմիր էին, գողտրիկ։ Մազերը կարճ և բաց թողած. երկու քունքերից դեմքի վրա իջել՝ ծածանվում էին երկու խոպոպներ. գլխին ուներ մեջտեղից ակոսացրած՝ տղամարդի մի փափուկ գլխարկ, որ սքանչելապես սազում էր նրան։

Շարժվածքների մեջ թեև կար ռուս ինտելիգենտ կնոջ, մանավանդ ուսանողուհու ազատություն, բայց այդ այն հախուռն, անբնական շար-

[1] Վիեննայից դեպի արևմուտք տանող երկաթուղիների կայարանը։

ժուձևերից չէր, որոնք իրանց այլանդակությամբ ինձ միշտ անտանելի են եղել։

Նա պարզ էր և բնական. ոչ մի կապկային վարմունք, ձեռքերով օդ սղոցել, բարձրաձայն կեղծ քրքիջ, բոնազբոսիկ միմիկաներ, բոլորը՝ «ազատամիտ կին» ձևանալու համար... Նա դրանցից չուներ. ինչպես հետո էլ նկատեցի, մինչև իսկ ոչ ֆրազյոր էր և ոչ էլ ամենագետ։

Հենվել էր կայանքին, ժպտում էր և պատասխանիս սպասում։

Նայեցի նրան մի վայրկյան. չեմ հիշում ինչեր անցան իմ մեջ, բայց զգացի, որ այդ արարածը ձգում էր ինձ դեպի իրեն, հմայել էր ինձ։

— Այո՛, օրիորդ,— ասացի ես աղջկա պես կարմրելով,— Փարիզ եմ գնում։

— Դուք ուսանող եք, ինչպես տեսնում եմ,— խոսեց նա,— իսկույն գուշակեցի... մեր երկրիցն էլ եք, քանի որ ռուսերեն եք խոսում... ասացեք խնդրեմ, քանի՞ արժե արդյոք տոմսակը այստեղից մինչև Ժնև, գիտե՞ք արդյոք։

— Ժնե՞... այո... 38 ֆրանկ արժե, բայց դուք Փարի՞զ եք ուզում գնալ, թե Ժնև։

Մանուկի պես գլուխը շարժեց, խոպոպիքը ետ ձգեց և իր դյութիչ ձայնովը պատասխանեց.

— Ըմ... այսինքն... գիտե՞ք ինչ, իսկն ասած ես ինքս էլ դեռ չգիտեմ ուր գնալ։

Ինչ եզոպոսություն էր այդ. ահագին ճանապարհից մինչև Վիեննա էր եկել և չգիտեր ուր գնալ։

Մոտեցա նրան, և խոսակցություն սկսվեց մեր մեջ. սկսեցինք զբոսնել սրահի մեջ։

— Այսպես ուրեմն,— ասացի ես,— չգիտե՞ք դեռ, թե ուր եք գնալու։

— Ո՛չ այդպես,— պատասխանեց,— գիտեմ, որ գնալու եմ բժշկություն սովորելու. բայց ահա հարցը... դուք ի՞նչ եք կարծում, որտե՞ղ է լավ դրված համալսարանը, Ժնև՞, թե Փարիզ։

Չգիտեի ինչ պատասխանել. մի բոպե լուռ կեցա. բժշկական ուսանող չէի և Ժնևի մասին էլ, համարյա թե, ոչինչ գիտեի։

— Գիտե՞ք ինչ,— պատասխանեցի վերջապես,— դուք մի դժվար հարց տվիք. իմ կարծիքով միշտ Փարիզումն է, ուր ամեն ինչ լավն է... բայց ես ոչինչ չգիտեմ բժշկական ֆակուլտետի մասին... գիտեմ միայն, որ ունենք աշխարհռչակ պրոֆեսորներ, որպիսիք են Շարկո, Բիբո, Պիեր Ժանե...

Կարծես թե ուզում էի համոզել, որ ինձ հետ գար։ Այդպես էլ էր.

չէի ուզում, որ հեռանար ինձանից։ Իմ առարկությանս վրա օրիորդը սկսեց մտածել, իսկ ես զգալով հանկարծ, որ կարող է նա գուշակած լինել իմ «ետին միտքը», ուզեցի սխալ ուղղության վրա դնել նրան և մի քիչ էլ ինքս ինձ մոտ արդարացնել։

— Սակայն, օրիորդ,— ավելացրի քիչ հետո,— դուք գիտեք էլի, ես չեմ ուզում պատճառ դառնալ, որովհետև... ասում են, որ Ժնևի համալսարանն էլ լավ է... բայց Փարիզը, գիտե՞ք... Փարիզը ուրիշ բան է...

Աշխատում էի որչափ կարելի էր անտարբեր ձևանալ։

— Իսկ եթե,— շարունակեց սառնությամբ,— ես ուզում եմ ուսանել, ես տուրիստ չեմ։

— Ուրեմն Փարիզ եկեք,— վրա տվի իսկույն,— չմոռանամ ասելու նաև, որ Փարիզումն էլ էժան կարելի է ապրել... այո՛, բավական էժան։

— Օրինակ, քանիսո՞վ կարելի է ապրել,— հարցրեց Աննան։

Անունը Աննա էր. այդ ես իմացա, երբ սկսեցինք զբոսնել. նա անվանեց իրեն և իմ անունս էլ ինքը հարցրեց։

— Այսպես,— պատասխանեցի նրա հարցին,— ամսական ամենաքիչը 50 ռուբլի պետք է, մոտ 125 ֆրանկ։

— Օ՜, մի՞թե,— բացականչեց նա և կանգ առավ։

Կարծեցի, թե ուրախացավ էժանության վրա. ես էլ ուրախացա, մտածելով, որ ահա համոզվեց ինձ հետ գալու։

— Ես կարծում էի,— ավելացրեց նա,— որ ամսական 30 ռուբլիով կարելի էր ապրել, այդպես էին ասել։

— Օ՜,— գոչեցի ես— 30 ռուբլի՞, այսինքն՝ 75 ֆրա՞նկ և ոչ իսկ 100, դա անկարելի է։

— Եվ սակայն ինձ այդպես ասացին,— վերջացրեց նա տխուր շեշտով,— ինձ ասացին, որ Փարիզումն իսկ այդքանով կարելի էր ապրել։

— Շատ կարելի է,— մռմռացի ես,— եթե նեղ ապրվի։

— Ուրեմն կարելի՞ է,— ժպտեց նա երեսիս նայելով,— ես շռայլ չեմ, շատակեր էլ չեմ. ես միայն սովորել եմ ուզում։

Լռեցի։ Վճռողապես ասված այդ խոսքերը նրա կամքի ուժի չափն էին ցույց տալիս, և ես հիացել էի։

Նա էլ լռեց և մտածության մեջ ընկավ։ Սկսեցի աչքիս տակով քիչ զննել նրան։ Սիրուն գողտրիկ դեմքի վրա, ունքերի մեջտեղում, գոյացել էին երկու ուղղահայաց ակոսներ, իսկ կապտագույն բիբերը բարձրացել։ Այդպես էր մտածում Աննան։

Նայում էի և զննում նրա մետաքսանման գորշ մազերը, սիրուն վալելուշ հասակը, վարդագույն անմման շրթունքները, որոնք վարդի թեր-

թերունքների պես բացվել՝ երկու շարք առողջ ատամներ էին ցույց տալիս։

Լիովին գրավվում էի նրանով, զգում էի, որ այլևս նրանից բաժանվել չէի կարողանալու և, ո՞վ գիտեր, պատրաստ էի ինքս ծնև գնալ, եթե Փարիզ գալու չլիներ։

Մի քանի րոպե մտածությունից հետո, հանկարծ կանգ առավ նա, արագությամբ հանեց գրպանից դրամապանակը, որ լիքն էր դրամով, տվեց ինձ և ասաց.

— Խնդրեմ՝ երկու տոմսակ գնեցեք մեզ համար։

— Փարիզի՞։

— Այո, Փարիզի. մեկն էլ ընկերուհուս համար, որ ահա ցածում սպասում է. առեք և բերեք ինձ, ես այնտեղ կլինեմ։

Ընկերուհին Վարշավայի մի կաղ ուսուհի էր (ավելի շուտով հրեուհու էր նման). դժգույն, հիվանդոտ, ձկան պես լռակյաց. բացի պետք եղած, բուսական կյանքի վերաբերյալ բառերից, նա ոչ մի խոսք չէր արտասանում. ամբողջ օրը վագոնի լուսամուտի մոտ նստած, լուռ լսում էր մեզ, դուրսն անգամ չէր նայում մեզ հետ, երբ մենք հաճախ հիանում էինք լեռնային տեսարաններովը։ Խելոք աչքեր ուներ, որոնք անգույն և անփայլ՝ ծածկվում էին սպիտակ ակնոցի տակ։ Սկզբում պատկառում էի այդ աղջկանից. ինձ թվում էր գիտուն, որովհետև ես հաճախ մտածել եմ, որ ճշմարիտ գիտունները նրանք են, որոնք ամենից ավելի լռել գիտեն. բայց այդպիսի դեպքում չէ՞ որ համրերը գիտուններ են դուրս գալիս։

Մենք, ես ու Աննան, ոչ համրեր էինք, և ոչ էլ գիտուններ, այնպես որ ամբողջ ճանապարհի ընթացքում խոսակցում էինք։ Ինչի մասին ասես, որ չխոսեցինք։ Սկսած սոցիոլոգիականից մինչև գիտական հոգեբանության ամենախոր հարցերը, մանավանդ, սպիրիտիզմի մասին։ Բավական վիճեցինք այն հարցի մասին, թե ինչ դեր են խաղում բնական գիտությունները սոցիոլոգիական հարցերի մեջ։ Աննան նրանց դերը ըմբռնել չէր կարողանում (ես չէի զարմանում, որովհետև համալսարանի մեջ այդպիսի պրոֆեսորներ անգամ կային)։ Ես աշխատում էի նրան ըմբռնել տալ, խոսելով էվոլյուցիայի, դարվինիզմի, լամարկիզմի և այլնի մասին։

Աննան շատ կարդացել էր, բայց հարցերից՝ ընդհանրացումն գոյացնելու դեռ չէր հասել. մի քիչ էլ սխալ ուղղությամբ էր քայլել։ Ճշտությունը նա նշմարում էր. բավական էր նրան մի քանի կտրուկ հարցեր տալ, բերել նրան ճանապարհի վրա, մի մղում (impulsion) և ահա այդ հրաշալի սրամտությամբ աղջիկը այնպիսի խորաթափանց եզրակացություններ, այնպիսի առողջ վճիռների՞ էր հասնում, որ ինձ զմայլեցնում էր։

նրա պակասությունը միայն այն էր, որ հեշտությամբ էր կորցնում մտածության թելը, եթե մի դիպված խախտեր նրան։ Այդ իսկ պատճառով նա սաստիկ նեղանում էր, եթե ես միջահատում էի նրա դատողությունը կամ չէի կարողանում իսկույն ըմբռնել, թե ի՞նչ է ուզում ասել։

— Խնդրեմ,— ասում էր նա նեղացած,— գերմանացոց պես եղեք, մի միջամտեք ինձ և սպասեցեք մինչև որ ես կատարելապես վերջացնեմ ասելիքս։

Բայց ինքն իսկ չէր պահպանում իր խրատը, երբ ես էի խոսում. անդադար ստիպում էր ինձ՝ ներողամիտ լինել իր վերաբերությամբ։

Մեր խոսած լեզվի հատկությունն էր դրա պատճառը. իսկույն հասկանում էինք միմյանց, դեռ նախադասության կեսը չհասած։ Գերմանացիք սպասում են մինչև վերջացնելը, որովհետև ուրիշ կերպ անել չեն կարող. նրանց լեզվում նախադասությունը կարող է լիովին հակառակ մտքի փոխվել՝ վերջումը մի խոսք միայն դնելով. մի nicht կամ gehabt բավական է, որ ամբողջ նախադասության դրական միտքը բացասականի կամ ներկա ժամանակը անցյալի փոխվի։

Այսպես, Աննայի հետ ամբողջ օրը խոսում էինք։ Ավելի շատ խոսում էր նա՝ քան թե ես. պատմում էր ամեն բան. իր երկրի մասին, իր մտադրությունների մասին. հետո հարցնում էր ինձ Փարիզի ռուս ուսանողների կյանքը և՝ երբ իմացավ, որ ես հրեա չեմ, այլ հայ, ծիծաղելով ասաց.

— Ես մի քանի հայ ուսանողների եմ ճանաչում Մոսկվայում. նրանք լավ մարդիկ չէին. ինձ ասել են, որ հայերը առհասարակ սաստիկ վաճառական, գծուծ մարդիկ... աշխարհիս երկրորդ տեսակ հրեաները... խնդրեմ չնեղանաք, ես իմ լսածս եմ միայն ասում... բայց ես տեսնում եմ, որ դուք լավ մարդ եք... չեմ շողոքորթում։

Երևի որ իսկապես ես նրան լավ էի թվում, որովհետև ոչ միայն ճանապարհին չբաժանվեց ինձնից, այլև Փարիզ հասնելիս, երբ նրան առաջարկեցի իմ տան մեջ գտնվող սենյակը վարձել, ընդունեց։

Տեղավորվելուց հետո ամբողջ օրը այդպիսով կամ ես նրա սենյակումն էի և կամ նա իմ. խոսում էինք, հետզհետե ավելի և ավելի մտերմանում. կարդում էինք միասին, վիճում, Ժողովների և երեկույթների միասին գնում, համալսարանում նա իմ դասերիս հաճախում էր ու կողքիս նստում, ես նրա դասերին էի հաճախում և կողքին նստում։

Մի խոսքով՝ սիրում էինք միմյանց, բայց դեռ ոչինչ չէինք խոստովանվել։

Եվ երբ հիշում եմ, թե որպիսի այլանդակ եղավ մեր խոստովանությունը...

Ես հրաժարվում եմ այսօր այլևս գրել։ Ինչ օգուտ քրքրել հին վեր-

քերը. ինձ պետք է մոռանալ նրանց և ես ավելի պեղում եմ հիշատակներս։

Մի երազ էր, որ տեսա. այժմ զարթո՞ւն եմ արդյոք... չգիտեմ այդ... տանջվում եմ... հիշում եմ Աննային, հիշում այդ հրաշալի հրեշտականման ազնիվ աղջկան, հիշում եմ նրա և իմ տանջանքները և... ներիր ինձ, բարեկամս, որ գրիչս ցած գնեմ... գոնե այսօրվա համար։

2

Ցուրտ է. ձմեռային մի երես կտրող քամի է բարձրացել. ֆրանսերեն գրան կոչում են bise. իսկապես, որ բիզ է, ծակծկում է մարմինը. երբեմն թվում է, թե սառույցի կտորներով ապտակում են քեզ։

Վառել եմ վառարանս և դուրս չեմ գալիս. կարդում եմ, երազում եմ կրակի բոցի առաջ, բազկաթոռիս մեջ ընկղմած։

Աննային եմ մտածում... չշարունակե՞լ արդյոք գրելը։

Որքան դժվար բան է եղել խոստում կատարելը. եթե խոստացած լինեի, մի կարծիլ, թե կուզենայի խոսել-գրել։

Բայց ահա հիշում եմ այսօրվա պես այն երեկոն, երբ կատարվեց խոստովանությունը։

Ժամը 7-ն էր, այսօրվա պես մի սառը քամի էր փչում դրսում. ես նստել էի վառարանիս մոտ, աչքերս կրակին հառած մնացել էի, երբ դուռը մեղմությամբ բացվեց։

Աննան էր. մտավ, գլխարկը չհանած մոտեցավ վառարանին ու ասաց.

— Լավ տաք է այստեղ, սակայն, գնանք ինձ մոտ, տանտիկինը անշուշտ վառած կլինի իմ վառարանն էլ։

Հետո դուրս եկավ. ես էլ ետևից։ Երբ իր սենյակը մտանք, գլխարկը հանեց, վառարանի մեջ փայտ դրեց, հետո գրպանից դուրս քաշելով սեղանի վրա ձգեց Մոսկվայից ստացած 10-րդ նամակը։ Մի ամիս էր, որ Փարիզ էր և 10-րդ նամակն էր, որ ստանում էր նա միևնույն անձից... և պարբերաբար, շաբաթը երկու անգամ, ամեն անգամ երկու կամ երեք թերթերից բաղկացած։

Մինչև այդ օր չէի համարձակվել հետաքրքրվելու, թեև մի խուլ կասկած կրծում էր ուղեղս. երբ 10-րդ նամակը ձգեց սեղանի վրա, այլևս չդիմացա և հարցրի դողդոջուն ձայնով.

— Լավ շուտ-շուտ նամակներ եք ստանում. ումնի՞ց է արդյոք, հորի՞ց։

Մեջքը դարձրած, պահարանի վրա մի գիրք էր փնտրում իմ այդ

հարցը տված ժամանակ. երբ լսեց, ուժգնությամբ դարձավ, թափանցիկ հայացքով զննեց ինձ և ասաց.

— Իմ մի բարեկամից է։

— Բարեկա՞մ,— ասացի ես աշխատելով անվրդով մնալ,— տարօրինակ բարեկամ... բարեկամները այդքան ջանասեր չեն լինում... ինչո՞ւ սիրո հոտ է գալիս դրանցից։

Ծիծաղում էի այդ ասելու ժամանակ, իր սխալը հասկացող մարդու մի բռնազբոսիկ ծիծաղով։ Նա մրսած մատներով խոպոպիկը ետ տավ, մոտեցավ սեղանի մոտ, կռթնեց նրա վրա, նայեց դեմքիս և յուրաքանչյուր բառը շեշտելով ասաց.

— Իսկ եթե այդպես լինե՞ր. մի՞թե դա հանցանք կլիներ։

— Ինչո՞ւ հանցանք,— ժպտեցի ես բռնազբոսիկ կերպով,— երբեք... բայց ո՞վ է այդ պարոնը, ձեր նշանածն է, չէ՞։

Չպատասխանեց իսկույն, վարանում էր. նամակները ժողովելով պահարանի վրա, հետո աչքը վառարանի վրա հառեց և ասաց կոպիտ ձայնով.

— Ամուսինս է... բայց ձեզ ի՞նչ... այդ ձեր գործը չէ։

Վեր թռա տեղիցս, սկի չէի սպասում մի այդպիսի պատասխանի և լեփեռի հավատալ, թե ոչ։ Այդ միջոցին նա մեկենիմեկ դարձավ ու աչքերը սևեռեց վրաս։

— Ուրեմն դուք ամուսնացա՞ծ եք,— թոթովեցի ես։

— Գրեթե,— ասաց խուլ ձայնով,— հետո լամպը մոտ քաշեց, բուռն մի ճիգ գործեց, թոթվեց իրեն, կնճռեց ճակատը և հարեց վճռապես.

— Լսեցեք ինձ... ինձ թվում է, որ դուք ինձ սիրում եք... արդյոք ճի՞շտ է նկատածս։

Չէի սպասում այս անակնկալ հարցին և կարկամեցի. չկարողացա մի բառ իսկ արտասանել։

— Ես այդ տեսնում եմ,— շարունակեց նա,— և չեմ ուզում ձեզ տանջել. քանի շուտ է պիտի մեռցնել ձեր մեջ ծնող այդ զգացումը. ես կարող եմ ձեզ հետ բարեկամ, շատ մոտ և լավ բարեկամ լինել, բայց սիրել... ո՜չ, ես ամուսնացած եմ, ես... մի խոսքով ձեզ չեմ կարող և չեմ ուզում սիրել։

Ասաց, բարձրացավ տեղիցը, հեռացավ դեպի մի մութ անկյուն և այնտեղից սկսեց դիտել ինձ կիսովին գլուխը թաքցրած իր ուսի վրա ծածկված շալում։

Այդ հայտնությունը այնպես խիստ ներգործեց վրաս, որ վեր կացա երերալով, կռթնեցի դարանին, ցած էին ընկնում, դուռը բացի և չգիտեմ ինչպես հասա սենյակս և ինձ ձգեցի բազկաթոռիս մեջ։

Ոչ մտածել էի կարողանում և ոչ էլ շարժվել. ցավ անգամ չէի զգում, հարվածը շատ խիստ էր եղել և մի առժամանակվա համար թմրեցրել էր ջղերս։

Բայց երբ կես ժամ անցավ և քիչ-քիչ զգալ սկսեցի, սարսափելով տեսա, որ պաշտում էի Աննային, որ առանց նրան այլևս ինձ ապրել անհնար էր և որ... ես մի թշվառ էի, մի դժբախտ... զգացածս ցավը այնքան խիստ էր, դառնությունը՝ առատ և հուսահատությունը՝ կատարյալ...

Մթան մեջ նստած, չէի ապրում այլևս, կսկիծ էի զգում, լալ չէի կարող, լալ՝ մի քիչ մխիթարվելու համար։

Հանկարծ զգացի, որ ճրագս վառվեց, հետո երկու թևեր գրկեցին ինձ և մի ջերմ, շատ ջերմ համբույր սթափեցրեց ինձ։

Աննան էր։ Գրկել էր վիզս, գլուխը ետ ձգած և աղաչավոր կերպարանքով շոքել էր առջևս...

— Աննա՛,— գոչեցի ես վայրենի ձայնով,— այդ դո՞ւ ես... մի՞թե ինձ սիրում ես ուրեմն։

Ինձ էր նայում դառնությամբ, մի հանցանք գործողի ակնարկով. կրճտացնում էր ատամները, մոտենում էր ինձ ջղաձգորեն։

— Ո՛չ, ո՛չ,— մռմռաց նա,— քեզ էլ չեմ սիրում, բայց չեմ ուզում, որ քեզ չարչարես և ինձ էլ տանջես... Օ՜, դու ինձ շա՛տ, շատ ես տանջում...

— Ինձ չե՞ս սիրում,— բացականչեցի,— ուրեմն ի՞նչ գործ ունիս այստեղ. հեռացիր, գնա և թող ինձ կրեմ իմ վիշտը։

Գրկեց ինձ, ընկավ կրծքիս վրա և համբուրեց։ Համբուրում էր ու կրկնում.

— Չկարծես, սակայն, որ քեզ սիրում եմ, ո՛չ... ոչ քեզ և ոչ էլ նրան. ես ոչ ոքի սիրել չեմ ուզում։

Չէր էլ լաց լինում, բայց տանջվում էր ամբողջ էությամբը։ Դեմքը փոփոխվում էր, աչքերը պտտվում, ջղաձգությամբ գալարվում էր գրկիս մեջ, քաշում էր ինձ դեպի իրեն, մոտենում շրթունքներիս, կատաղի համբույրներ էր դրոշմում նրա վրա... եթե չէի հարցնում, թե սիրում էր ինձ, թողնում էր, որ իրեն գգվեի, իսկ եթե հարցնում էի, իսկույն ետ էր մղում ինձ և գոչում, որ չէր սիրում ինձ, չէր ուզում և չէր կարող։

Եվ սակայն տանջվում էր ծնկներիս մոտ, գալարվում գրկիս մեջ։ Երբեք մի կին դրանից ավելի հայտնի նշաններ չէր կարող արտահայտել ջերմ, տոփոտ կրքի— սիրո։

Իսկ ես մի ծայրահեղությունից մյուսն էի ընկնում, հույս էի ստանում, հուսահատ լինում։ Իր երկու փոքրիկ ձեռքերով բռնում էր թշերս,

երկար, երկար նայում աչքերիս, սիրալի կերպով զննում դեմքիս բոլոր մասերը, հետո հանկարծ կատաղի կերպով ընկնում գիրկս և... այնպիսի կրքոտ համբույրներ էր տալիս ինձ, որ սարսուռ էր ազդում ամբողջ մարմնիս... Այդ բոլորի միջոցում հանկարծ թողնում էր կիսատ համբույրը, ետ էր քաշվում, խլվում-հեռանում գրկիցս, ճակատը շփում, ունքերը կիտում, նայում էր շուրջը նոր զարթնողի աչքերով, հետո դառնում ինձ և գոչում.

— Հեռացի՛ր, գնա՛... կարծում ես, թե սիրո՞ւմ եմ քեզ, սխալվում ես... այո՛, ես քեզ չեմ ուզում։

Ընդհատում էր, ձեռքը կոկորդին տանում, օձիքը քաշում խեղդվողի պես, ինձ նայում մի վայրկյան, հետո հանկարծ հարձակվում վրաս, բռնում թևերիցս, մի բոպե դեմքս զննում և նորից համբույրներ, նորից... Ախ, աստված իմ, որպիսի նյարդային հիվանդոտ տեսարաններ էին այդ բոլորը։

Մի ժամ ամբողջ Աննան տանջվեց այդպես, տանջեց ինձ իր հետ և միշտ կրկնեց, որ չէր սիրում ինձ, որ չէր ուզում սիրել։

Վերջապես քիչ հանդարտվեց, հոգնածի պես ընկավ դիվանի վրա, քաշեց ինձ յուր կողքին, բռնեց ձեռքս և ասաց մեղմ, դադարածի ձայնով.

— Լսիր, ճշմարիտ եմ ասում, գիտե՞ս. ես քեզ սիրել չեմ կարող։

— Որովհետև ուրիշի ես սիրում, այնպես չէ՞,— դիտեցի ես կծու կերպով։

Ցնցվեց, դարձավ և այնպես նայեց ինձ, որ քիչ մնաց շոքեի և նեղրողություն խնդրեի կասկածիս համար։ Մոտեցա, խանդաղատանոք գրկեցի և քաշեցի դեպի ինձ։

Ետ մղեց, տանջվողի պես կնճռեց դեմքը, բարձրացավ տեղից և մոտ գնաց լուսամուտին, այնտեղ դեմքը կպցրեց լուսամուտի ապակուն և մնաց պահ մի։

Սկսել էր ձյունել դրսում, քամին նրանից խոշոր հատեր բերում շպրտում էր ապակիների դեմ։

— Այո՛,— մռմռաց նա առանց ինձ նայելու,— չեմ ուզում...

Հետո թողեց լուսամուտը, մոտ եկավ սեղանին և շարունակեց.

— Եթե քեզ սիրեմ, նա կմեռնի, անշուշտ կմեռնի... ապրել չէ կարող այլևս, այդպես է նա, հասկանո՞ւմ ես։

— Հասկանում եմ,— պատասխանեցի ես— ահա թե բանը ինչումն է. նրան խոսք ես տվել և չես ուզում խախտել խոստումդ. ապա թե ոչ, սիրո մեջ իրեն զոհել իր չսիրածին...

— Ո՞վ ասաց, որ ես նրան չեմ սիրում,— միջահատեց Աննան բար-

կությամբ,— նախ թող այդ կծու հեգնության վիշտը, զզվելի է... և երկրորդ՝ ես չեմ ասել, որ նրան ատում եմ. ճշմարիտ է, ես նրան չեմ սիրում այնպես, որպես... բայց չեմ ատում, չէի ուզիլ, մանավանդ, որ նա մեռներ... իսկ նա կմեռնի, եթե ես ուրիշին սիրեմ. արդեն տանջվում եմ երբ նկատում է, որ ես այլևս չեմ ուզում նրան։

Նստեց, շալովը փաթաթեց մի թևը, առավ մի գիրք ու սկսեց ջղայնությամբ թղթատել նրան. հետո կանգ առավ ու շարունակեց կցկտուր կերպով ու հետզհետե հուզվող ձայնով։

— Երկու տարի է,— ասաց նա— երկու տարի, որ պաշտում է ինձ... այո՛, այդպես սիրել անհնար է, մի երազիլ, որ այդքան դու կարող ես ինձ սիրել. առանց ինձ ապրիլ չէ կարող, շնչել չէ կարող... Կազան էր գնացել մի վեց ամիս և շաբաթը երկու անգամ երկար նամակներ էր գրում... այդքան ջերմությունը սառեցնում է ինձ... քանի սառն եմ վարվում, նա այնքան ավելի պաշտում է ինձ... կմեռնի, անշուշտ, կմեռնի, եթե իմանա, որ ուրիշի եմ սիրում... հպատակվում է ճակատագրին, եթե իրենից սառում եմ, բայց կսպանեմ նրան, եթե սիրեմ ուրիշի.. այդ նա չի կարող տանել, լավ գիտեմ։

— Ուրեմն իրեն չես ասիլ,— միջահատեցի ես,— չէ՞ որ այլևս չես սիրում իրեն. այդ հայտարարությունը գոնե նրա անձնասիրությունը գրգռելով կարող կլիներ մոռացնել տալ սերը, այդ հայտարարությունը նույնպես քեզ ազատ կկացուցաներ...

— Ա՛խ, ինչե՛ր ես ասում... ասե՞լ նրան. ինքը լավ է զգում, տանջվում է, խիստ տանջվում... ամեն նամակի մեջ գանգատվում է, որ սառն եմ գեպի իրեն, որ սպանում եմ իրեն իմ բացակայությամբ, իմ սառնությամբ... «Առանց քեզ,— ասում է նա,— ամեն ինչ շոր է, շոր և դատարկ». գանգատվում է, որ չգիտե, թե ի՞նչ հանցանք է գործել իմ դեմ... հանցա՞նք... ի՞նչ հանցանք, հրեշտակի պես տղա է, ազնիվ, մաքուր... չգիտեմ, ես էլ չգիտեմ, թե ինչո՞ւ այլևս չեմ սիրում նրան։

Ասաց Աննան և գլուխը խոնարհեցրեց տխրությամբ ձախ թևով լայն բաց արած շալի մեջ։ Այդպես նա մնաց լուռ մի քանի րոպե, հետո գլուխը հանեց և շարունակեց.

— Գուցե միմյանց հետ շատ ենք եղել՝ նրա համար...— ասաց այբը ճրագին հառած,— գուցե սովորական է եղել... անազնվություն է արածը, գիտեմ, բայց ուղղակի նրան ասել, որ ուրիշին եմ սիրում—այդ չեմ կարող, գիտեմ, որ կսպանեմ նրան։ Երկու հույսով այդ չեմ անում. մտածում եմ, որ գուցե ապագայում ես կարող լինեմ էլի սիրել նրան, երբ բավական ժամանակ հեռու մնամ նրանից... մյուս հույսս այն է, որ նա ինքը գուցե ինձ հեռու ունենալով՝ մոռանա, վարժվի ինձ կորցնելու մտքի հետ և հաշտվի ճակատագրի հետ... այո՛, երկուսից մեկը։ Երբեմն ուզում եմ, կամենում եմ նորից սիրել նրան, բայց չեմ կարողանում, ատելություն եմ զգում դեպի նա... կարծես կշտացել եմ նրանից ու չգիտեմ, գուցե մի տարի այստեղ մնալուց հետո սկսեմ սիրել նրան. սիրելու տղա, սիրուն, ազնիվ, զարգացած... միայն թե շատ հաճախ է խոսում իր զգացմունքների մասին... ձանձրացնում է. վախենում եմ, որ այդպիսով լիովին արգելք լինի ինձ վերստին սիրելու իրեն։ Մնում է շատ սակավ գրել նրան և սառը գրել... այո՛, այդպես պիտի անել։

— Իսկ եթե ուղղակի, կտրուկ կերպով մերժեք նրան,— դիտեցի ես,— դա չի սպանիլ նրան. սպանում է անորոշությունը, իմ կարծիքով։

— Է՛հ,— պատասխանեց Աննան արհամարհանքով,— այդ ճիշտ չէ. մարդս գերադասում է ավելի անորոշության մեջ մնալ այդպիսի դեպքերում։ Ճիշտ է, որ քանի անորոշության մեջ է, ձգտում է որոշության մեջ մտնելու և տանջվում է առաջին դրությունից, բայց երբ ամեն ինչ որոշվում է և այդ որոշությունը նրա համար աննպաստ է լինում, այն ժամանակ նա հազար անգամ երանի է տալիս իր նախկին անորոշ դրությանը, որ նա գոնե հույս կարող էր տածել... նույնիսկ եթե այդ հույսը հավատնապես միմիայն հույս մնար... այո՛, հույսն է, հույսը միայն, որ այս կյանքը մեզ փոքր-ինչ տանելի է անում։

Գահ մի լռեցինք երկուսս էլ. նա դիտողությամբ գլուխը ձեռքին կրթնեցրած, նայում էր ճրագին։

Քիչ լռությունից հետո վստահությամբ և մեղմ ձայնով հարեցի. իմ կարծիքով երբ այլևս չես սիրում մեկին, պիտի հայտնել։ Ինչո՞վ մեղավոր ես, եթե այլևս չես սիրում նրան...

— Դու ինձ չես հասկանում,— գոչեց Աննան նեղացած ձայնով,— Կոլյան գիտե, որ ես իրան չեմ ատում, որ ես կուզեի սիրել իրան, բայց ես ինքս տեսնում եմ, որ նրան սիրելու զգացմունք չկա իմ մեջ այլևս... ապագայում՝ չգիտեմ. գիտեմ միայն, որ նա ինձ գժի պես է սիրում... մի քայլ չէ ուզում անել առանց ինձ... նրան ասել, որ ոչ միայն հույսը կորել, որ իրան սիրելու եմ, այլև, որ ուրիշին եմ սիրում... ո՛չ, հազար անգամ ոչ, նա չի դիմանալ դրան, իսկույն կմեռնի... թոքախտը վաղուց է, որ պակասեցնում է նրա օրերը...

3

— Թոքախտը վաղուց է, որ կրծում է նրա օրերը,— ասաց Աննան տխուր, խորապես մելամաղձոտ շեշտով։

Հուզվեցի։ Թոքախտավորը մի այնպիսի պատկառելի դժբախտ է, որին պարտավոր են խնայել բոլորը։ Ընկածին այլևս չեն զարնում։

— Այո՛,— շարունակեց Աննան,— առանց այն էլ նա զգում է, որ էլ չեմ սիրում իրան, և մաշվում է, մաշվում։

Ասաց, մեքենայորեն բարձրանալով մոտեցավ ինձ, կանգնեց առջև, ժպտեց գունաթափ ժպտով, հետո բռնեց ձեռքս և սկսեց սեղմել։ Թուղ տվի, ես էլ սկսեցի ժպտել։

— Ի՞նչու ես ժպտում,— ասաց նա ջղաձգությամբ ձեռքս սղմելով,— չե՞ս հավատում, կարծում ես, թե դիտմամբ եմ այդպես ասում։

Թողեց ձեռքս և նստեց կողքիս։

— Աստված իմ,— գոչեց նա— դու ինձ չես էլ հավատում...

Որպիսի հուսահատ կերպով արտասանեց նա այդ բառերը, հետո հանդարտ կերպով ընկավ առջևս և դեմքը թաքցրեց թևերիս վրա։

Կռացա, բռնեցի գլուխը. շրթունքներս կպցրի մազերին և ասացի.

— Իմ խեղճ Աննա։

Ցնցվեց, վեր թռավ։

— Ինչպես,— գոչեց նա— խե՞ղճ... ուրեմն դու ինձ խղճո՞ւմ ես այժմ էլ. դու ինձ չես հասկանում, ո՛չ, դու այն չես, ինչ որ կարծում էի։

Ես ժպտացի հեգնորեն, ընդհակառակն, հասկանում էի իրեն իմ կարծիքով և կարծում էի այն ժամանակ, թե այդ ջղային աղջկա արածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ կոկետություն։

Բայց նա դողում էր. ջղային մի տենդ պաշարում էր ամբողջ օրգանիզմը։ Մոտեցավ նա վառարանին. քանի տաքանում էր, այնքան ավելի ակներև կերպով դողում էր. ատամներն անգամ մեծահնչոն կերպով կափկափում էին։

Փաթաթվում էր շալով, մոտենում էր կրակին։

— Ցուրտ է...— մռմռաց նա,— ցուրտ... զարմանալի է, այո՛, որքան դողում եմ... և սակայն դու դեռ չես հասկանում... աստված իմ։

Մի պտույտ գործեց վառարանի շուրջը. հետո կանգ առավ. դողում էր սաստիկ։ Վերջ ի վերջո մի քանի անգամ ձեռները կրակին տարավ ու երբ մի քանի անգամ ունելիքով խառնել էր կրակը, դարձավ կիսովին ինձ ու ասաց.

— Ժամը քանի՞սն է։

— Տասներկուսը... թեյ կուզե՞ս։

— Ո՛չ, գնամ պառկեմ։ Թեդ տուր ինձ, դողում եմ. դու ինձ պիտի հավատաս, չէ՞ որ ես քո մոտ երբեք չեմ ստել... թեդ տուր, այդպես. այժմ գնանք ինձ մոտ, բայց շուտով վերադարձիր, ես ուզում եմ պառկել... իսկ դու ինձ անպատճառ պիտի հավատաս։

Թևս տվի նրան և տարա իր սենյակը. այնտեղ նա, փոխանակ թևս թողնելու, սեղմեց և ասաց մրմնջելով.

— Մնա՛, դեռ մի՛ գնալ... նստիր ինձ մոտ, ահա այստեղ... մոտ նստիր. տուր ձեռքդ... Օ՛, տաք ես դու, իսկ ճակա՞տդ... էլի տաք է, ուղեղդ շատ է գործում։

Նստեց դիվանի վրա, նստեցրեց ինձ կողքին, բռնեց ձեռքս, շոշափեց ճակատս, հետո երկար նայեց դեմքիս, կաթոգին ժպտեց և կամաց մոտ եկավ. գլուխը իջեցրեց թևիս վրա ու մռմռաց հազիվ լսելի ձայնով.

— Օ՛...— մռմռաց նա,— աստված իմ, որպես լավ է, այո՛... էլ չեմ դողում. դու շատ լավ, շատ լավ տղա ես... խելոք... ես կուզեի քեզ համբուրել, քեզ սիրել...

Կռացա դեպի նա և ուզեցի համբուրել։

Հանկարծ ցատկեց, ետ մղեց ինձ ու գոչեց.

— Օ՛, ո՛չ, ետ գնա... ես չեմ կարող։

Սկսեց հրել ինձ ուժգնությամբ և կատաղությամբ շարունակեց.

— Դո՛ւրս գնա... դուրս գնա այժմ, թող ինձ, գնա՛։

Դուրս գնացի, չգիտեմ ինչու։ Աննան հիվանդ էր, պետք էր նրան թողնել, այդպես դատեցի այն րոպեին, գուցե սխալ գործեցի, բայց դուրս եկա և տանտիկնոջը ուղարկեցի նրա մոտ։

Տանտիկինը հանվեցրեց նրան ու պառկեցրեց, և երբ դուռն ետևից նրան հարցնում էի Աննայի մասին, լսեցի, որ Աննան անկողնի միջից ասում էր գրեթե զառանցելով.

— Անպիտանություն է այս... ուզում է Կոլյային սպանել, չի հավատում ինձ... աստված իմ...

Բարեբախտաբար տանտիկինը չէր հասկանում նրա խոսած լեզուն։

4

Աննան հիվանդ մնաց մի ամբողջ շաբաթ։ Ներս մտնել նրա մոտ, չէի կարող, անկողնի մեջ էր։ Իմաց տվի իր ընկերուհուն և մի քանի ուրիշ ուսանողուհիների, որոնք գալիս և խնամում էին նրան։

Ջղային ցնցող տենդ ուներ։

Երբ առողջացավ, մի առավոտ, իր սովորության համեմատ, առանց բախելու դուռս բաց արավ և մեղմությամբ ժպիտը դեմքի վրա.

— Բարև,— ասաց նա,— որքան ժամանակ է չեմ տեսել քեզ, ինչպե՞ս ես։

Եվ աթոռն առնելով նստավ դիմացս։

— Լավ եմ,— պատասխանեցի,— իսկ դո՞ւք. հույս ունիմ, որ այժմ լավ եք։

— Հոգնակի խոսելը թող,— ասաց նա ձեռքս բռնելով,— տուր ինձ ձեռքդ, մի՞թե, ասա ինձ, մենք չենք կարող բարեկամ իսկ մնալ։

Չպատասխանեցի և ակնարկս մի ուրիշ կողմ դարձրի։

— Խոսիր,— պնդեց նա,— մեզ հնարավոր չէ՞ բարեկամ լինել միթե։

— Ո՛չ, Աննա,— պատասխանեցի ես վերջապես,— ես մի տարօրինակ մարդ եմ. երբ սիրում եմ մեկին, այդ սերը հետո բարեկամության թշնեցնել անհնար է լինում ինձ... կամ ամեն ինչ, կամ ոչինչ։

Վեր կացավ և քիչ հեռու գնաց։

— Այդ լավ չէ,— դիտեց նա,— ես կուզեի քեզ հետ բարեկամ մնալ... հա, գիտեմ, ես մի բան պիտի հայտնեի քեզ, մի նորություն։

Կանգ առավ, վարանում էր։

— Օլգան,— շարունակեց նա դժվարությամբ,— ընկերուհիս, գիտե՞ս... մի ուրիշ սենյակ էր վարձել իր կողքին ինձ համար, այնտեղ լավ կլինի ինձ համար, միշտ մի ընկերուհի կունենամ կողքիս, որ կխնամի ինձ, եթե նորից հիվանդանամ։

— Ի՞նչ,— ասացի ես զունաթափ,— ուրեմն ուզում ես հեռանա՞լ տրդեն։

— Հեռանա՞լ,— ժպտեց նա,— ինչո՞ւ, բարեկամս, սենյակս հեռու չէ, կարող ես հաճախ գալ ինձ մոտ։

— Ո՛չ,— ասացի ես,— այնտեղ շատ հեռու է և այստեղի պես լի լինիլ. հեռանալով այստեղից, զգում եմ, որ ուզում ես ընդմիշտ թողնել ինձ։

Հուզվեց, մոտեցավ ու մեղմությամբ գրկեց վիզս։

— Լսիր, բարեկամ, իմ շատ սիրելի բարեկամ,— ասաց սիրալիր,— ես քեզնից հեռանալ չէի ուզիլ, բայց չեմ կարող քեզ սիրել և խնդրում եմ, աղաչում եմ, մեռցրու դեպի ինձ ունեցած այդ զգացմունքդ, այդպես պետք է։

Պահեց մի րոպե ձեռքս իրենի մեջ, հետո հանկարծ թողեց նրան և մի քանի քայլ արավ դեպի դուռը. այնտեղ նա կանգ առավ մի քիչ։

— Ախ, մոռացա,— ասաց նա շփոթված և առանց երեսիս նայելու.— մոռացա, որ դասախոսության պիտի գնամ... ցտեսություն, վաղը կարող ես գալ ինձ մոտ։

Շտապով դուրս գնաց, դուռը ուժգնությամբ փակեց, հետո գահավիժմամբ մտավ իր սենյակը և մի րոպեից հետո արդեն փողոցումն էր։

Աշխատել էր այնպես արագ հեռանալ, որ գալոշները չէր հագել և երբ մի քանի ժամից հետո հեռվից տեսա նրան փողոցում, ցեխոտվել էր, բայց գնում էր առանց ուշադրություն դարձնելու դրան, ցուրտը կապտեցրել էր նրա ձեռքերը, և նա մոռանում էր ձեռնոցն անգամ հագնել։

Եվ այսպես Աննան հեռացավ ինձանից։ Բնական է, որ նախ սակավ, և հետո, մանավանդ ավելի սակավ սկսեցի գնալ նրա մոտ, որովհետև երբեք մենակ չէի գտնում նրան։ Գիտեր գնալու ժամերս ու աշխատում էր մենակ չլինել։ Դուրս էլ չէր գնում, որովհետև ուզում էր, զգալի կերպով ցանկանում էր տեսնել ինձ, խոսել ինձ հետ։

Եվ դեռ տանջվում էր ամեն անգամ, երբ տեսնում էր ինձ, երբ ես սիրո վրա խոսք էի բաց անում։

Այդ միջոցին էր, որ, չնայելով ձմռան մոտենալուն, խոլերան կոտորածներ էր անում Ռուսաստանի ներքին գավառներում։ Ռուսաց կառավարությունը հրավերներ էր կարդում բոլոր ռուսահպատակ բժիշկ ուսանողներին, գնալ օգնելու առողջապահական կամ օգնող խմբերին։ Ամեն կողմից գնում էին։ Փարիզից էլ գնացին ուսանողներ և ուսանողուհիներ։

Աննայի ընկերուհին էլ չէր դիմանում կլիմային և բժշկի խորհրդով պատրաստվում էր վերադառնալ հայրենիք։

Եվ ահա մի օր, երբ ես Աննայի մոտ մտա, գտա այնտեղ մի տակնուվրայություն։ Աննան կապկպում էր իր գրքերն և շորերը. մի քանի ուսանողուհիներ օգնում էին նրան։

Զարմացած կանգ առի շեմքի վրա։

— Ի՞նչ է եղել,— հարցրի,— էլի՞ սենյակ եք փոխում։

Աննան գլուխը բարձրացրեց, թողեց գրքերն ու մոտեցավ ձեռքը պարզեց ինձ։

— Ո՛չ,— ասաց հուզմամբ,— Ռուսաստան եմ գնում։

Արյունս մի բուռն հոսանքով վազեց դեպի սիրտս. զունաթափվելս զգացի։

— Գնո՞ւմ եք,— ասացի,— և ինչո՞ւ համար։

— Խոլերայի,— ասաց նա,— ուզում եմ մտնել նրա դեմ կռվող բանակի մեջ։

— Բայց,— գոչեցի ես անձկանոք,— կռվելու համար պատրաստ չեք դուք, դուք ոչինչ չգիտեք դեռ։

— Սխալվում եք,— միջահատեց նա,— ես այստեղ գալուցս առաջ բավական բան գիտեի։

Հետո լռեց և նստեց. ինքն էլ զունաթափ էր։

— Ե՞րբ եք գնում,— հարցրի ես դողդոջուն ձայնով։

— Կես-գիշերին, այսօր... երեկոյան ուզում եմ գալ ձեզ մոտ. տանջ կլինե՞ք։

— Վեցից սկսած։

— Ժամը տասին կգամ, ոչ ավելի շուտ։

Թոթափեց իրեն, բարձրացավ, սիրալիր ժպիտով ձեռքը ինձ պարզեց և ավելացրեց.

— Նո՛ւ, ցտեսություն, երեկոյան, իսկ այժմ թողեք մեզ կապկպել։

Դուրս գնացի. ամբողջ օրը գժի պես էի, գլուխս տեղը չէր. փողոցներում ման էի գալիս առանց նպատակի, դասախոսություններ լսեցի առանց մի բառ հասկանալու. շատերը ինձ հիվանդ կարծելով՝ առողջություն էին հարցնում։

Ժամը տասին եկավ Աննան։

— Ներիր, բարեկամ, որ չեմ կարող երկար կանգ առնել այդ ետին ժամերի վրա, ուժ չկա։

Խոսեց Աննան, թեյ խմեց. շատ սիրալիր էր, գորովանոք էր դիտում ինձ. զգալի կերպով ճիգ էր գործում անվրդով մնալու. թույլ չտվեց անգամ համբուրելու իրեն, և եթե ես մոտենում էի, նա մեղմությամբ ետ էր հրում ինձ և քիչ նեղացած, բայց մեղմությամբ ասում.

— Նո՛ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ, բարեկամս, երբ ասացի, որ չեմ ուզում, որ ինձ սիրես.... ո՛չ, մոռացիր ինձ, մոռացիր...

Ժամը 11-ին գնաց։ Հեռանալուց առաջ բռնեց ձեռքս, սեղմեց ջղաձգությամբ, երկար նայեց աչքերիս, հետո արտասվալից աչքերով կպավ կրծքիս, թույլ տվեց, որ համբուրեմ իրեն, ինքն էլ ինձ համբուրեց և ասաց մրմնջալով.

— Եթե ապրեմ, բարեկամս, գիտցիր, որ միշտ մի անկյուն կունենաս այստեղ։

Ցույց տվեց սիրտը, խլվեց գրկիցս և արագությամբ դուրս փախավ։

Խնդրել էր, որ կայարան չգնամ, բայց գնացել էի։

Աչքին չերևացի, հեռվից տեսա, թե ինչպես բազմաթիվ ուսանողներ և ուսանողուհիներ սեղմեցին նրա ձեռքն ու բարի ճանապարհ մաղթեցին։

Նա ժպտում էր տխուր, գունաթափ ժպիտով. նայեց բոլորին, աչքերով փնտրեց մեկին՝ ինձ էր փնտրում, հետո ախ քաշեց և մտավ վագոն։

Երրորդ զանգն էր հնչում։

Լուսամուտից էլի նայեց. փնտրում էր. քիչ մնաց երևան գայի, վազեի դեպի նա, բայց գնացքը շարժվեց և տարավ իր հետ իմ Աննային, իմ պաշտելի Աննային...

Ամիսները անցան. ոչ մեռած էի, ոչ կենդանի. ստվերի պես պտտում էի. ամեն մի կին տեսնելուն պես հեռվից, կարծում էի, թե Աննան էր։

Ոչ մի լուր չկար նրանից։ Խնդրել էի, որ մի նամակ գրեր, բայց ասել էր, որ չի գրի և չգրեց։

Եվ ահա մի օր եկավ մի լրագիր, որի մեջ տպված էր խոլերայի դեմ կռվող նահատակված զինվորների, ուսանողների և ուսանողուհիների անունները։

Սրտատրոփ կարդացի. ախ, շատերն էին մեռել. բավական շատերը զոհ գնացել։

Եվ իմ Աննան, իմ Աննան էլ դրանց թվումը։

Հեռու, մի գավառի հեռու անկյունում մեռել էր նա իր գործի մեջ, նահատակվելով յուրայինների համար։

Եվ այն օրից, բարեկամ, հաճախ տեսնում եմ ես այդ նահատակին, որ սիրում էր ինձ. այդ չքնաղ ոգուն, որին պաշտում էի ես. տեսնում եմ հաճախ, հեռու... ամպերի վրա թառած, Ռաֆայելի նկարած հրեշտակներից մեկի պես գլուխը թևերի վրա, ոսկեզօծ լուսով թաթախուն. և իր երկնային դյութիչ ժպիտը՝ գողտրիկ, սիրուն դեմքի վրա։

ՉԻ՞ՍՏԻ

Կայարանի մայթի վրա էլ են շարվում ամեն առավոտ, այդ աղտոտ հագուստով թշվառ կոշկաջինջները։ Սանդուղքների գլխից սկսած, նրանք բռնում են մայթի մի մասը։ Առաջին տեղը բռնում է լայն դեմքով մի հայ. նրանից քիչ հեռու՝ 5—6 հույն պատանիներ, որոնցից երկուսը անդադար կռվում կամ վիճում են. մեկը համր է և «չիստի» բառը կանչելու փոխարեն «ա՛, ա՛, ա՛» է անում, իսկ չորրորդը, որի գծագրությունները ժամանակից առաջ չափահաս եղած մանուկի գծեր են, անցորդներին է զննում ուշադրությամբ, մանավանդ՝ կանանց։

Մենակ այնտեղ չէ կոշկաջինջների տեղը։ Նրանք Բաթումի անցուդարձ ունեցող բոլոր փողոցների անկյուններում կան. անցնելիս նայում են կոշիկիդ և, եթե նրան մաքուր չտեսնեն, խլացնում են ականջդ իրենց կանչերով. հաճախ իսկ իրենց արկղիկը ուսի վրա, խոզանակով ծեծում են նրան և ետևիդ են գալիս՝ անդադար «չիստի» կանչելով։

— Չի՞ստի...— լսվեց կողքիցս, երբ բարեկամիս հետ կայարանի մայթի վրա էինք։

— Կողքիդ նայիր,— ասաց բարեկամս— կոշկաջինջը հայրենակիցդ է։

Նայում եմ և այդ գեր դեմքով հայի մեջ տեսնում եմ վաղուցվա ծանոթ փիլիսոփա Մանուկին։ Տասը տարի առաջ, ուսին մի մեծ սակառ, քարշ էր գալիս նա Թիֆլիսի փողոցներով և «Գարյաչի բո՛ւլկի» էր աղաղակում. իսկ այժմ կայարանի մայթի վրա և Բաթումի փողոցներում ման գալով, խոզանակով արկղիկն է ծեծում ու «չի՞ստի» ձայնում։

Երևի փիլիսոփա Մանուկին վիճակված էր միշտ քարշ գալ և միշտ ազազակել. ապրել էր պետք։ Անցյալ օր էլ մի Մարտիրոսի ցույց տվին ինձ, որ նավամատույցի վրա նստած, չճանաչվելու համար գլխարկը մինչև աչքերը իջեցրել, ակնարկը միշտ գետի ցած, կոշիկներ էր սրբում, «չիստի» գոչում։ Վենետիկի դպրոցից էր այդ Մարտիրոսը, և ով ինձ նրան ցույց տվավ, պատկառանքով էր խոսում նրա մասին։

Ապրել է պետք. ստամոքսը ոչ փիլիսոփա է ճանաչում և ոչ էլ Վենետիկի դպրոց. նա միայն ուտել է ուզում։

Նայեցի Մանուկին։ Նա էլ ինձ տեսավ, ճանաչեց. հայացքը ուրիշ կողմ դարձրեց և դադարեց «չիստի» կանչելուց։

Մոտեցա ու ոտքս դրի նրա արկղիկի վրա։ Հանեց լռությամբ խոզանակները, երեսիս չէր նայում, վարտիքիս ծայրերը դարձրեց ու սկսեց սրբել։

— Որտե՞ղ էիր այսքան ժամանակ,— հարցրի մեղմությամբ։

Ցնցվեց, բայց առանց վեր նայելու կմկմաց.

— Կոշիկ եմ սրբում։

Երկուսս էլ լռեցինք։ Հույն պատանին, որ մի լավ զննել էր ինձ, այժմ վիզը երկարացրել, աշխատում էր գրպանիս եղած գիրքը զննել։

— Գիտե՞ս,— խոսեցի քիչ հետո,— Թիֆլիսից եմ գալիս, այնտեղ էյնաթենց Տիգրանին տեսա...

— Է,— արեց նա։

— Բուլկի էր ծախում... Ի՞նչ է եղել նրանց. սնանկացե՞լ են։

— Ծզբոր փողերը հատա՞վ արդյոք,— ավելացրեց նա,— ոտքդ քիչ պինդ կոխիր... աստված արդյոք իր գատաստանը կատարե՞ց վերջապես. խո գիտես նրա եղբոր արածները։

— Լսել եմ։

— Լսածդ ի՞նչ կլինի որ... պիտի տեսնել, իր վրա փորձելս նրա արածները երկնքին սյուն եղան, սյո՜ն...

— Քո փողե՞րն էլ է կերել։

— Իհարկե... բայց քիչ. ինձ շատ խաբել չկարողացավ. դրա համար էլ ինձ մատնեց, քիչ մնաց բռնել տար երկրում։

— Ես շատ եմ լսել նրա մասին,— ասացի ես,— բայց զարմանում եմ, թե ինչպես կարող է մարդ այսպես ժամանակ և իր գառն քրտինքը աչքերը բաց ուրիշի ձեռքը տալ։

— Զտվիր՝ ի՞նչ կանես. մոտն ես գործում, փողը իրեն չես տա, կասի՝ «ինձ չե՞ս հավատում. դեհ, որ չես հավատում, գնա, ինձ մոտ էլ մի ծառայի»։ Ի՞նչ կարող ես անել։ Զափում ես, կշռում և մտածում ես։

«Զատամ, ինձ դուրս կանի. թե որ տամ, դուցե խղճա ու չուտի... ուրեմն տամ, գուցե չուտի...» և տալիս ես։

— Առանց ստորագրությա՞ն։

— Ստորագրությո՞ւնը որն է. «նրան չե՞ս հավատում. գո՞ղ ես համարում, որ ստորագրություն էլ ես ուզում. քանի՞ քեզպեսների փող կա նրա մոտ. 10—15 տարի է սաղ վանեցոց ու աշխարհին էլ հայտնի է, որ էյնաթենց Կարապետը փող ուտող մարդ չէ, որ...»։ Ահա թե ինչ կասի քեզ։ Բացի դրանից, շատ էլ ստորագրություն եղավ, ի՞նչ կարող ես անել։ Դատ բանալը հե՞շտ բան է. չէ՞ որ եթե հարյուր մանեթ առնելիք ունենաս, երկու հարյուր էլ դատի ծախս պետք է քեզ... Երկիր փող ուղարկելու համար ստորագրությո՞ւնը որն է։

— Քե՞զ ինչ է արել նա։

— Ինձ շատ բան չի արել... կոշիկներդ, գիտե՞ս, հալից ընկել են, կրունկները փոխել տուր... Ուզեց շան պես դատածս, մի քիչ ունեցածս ձեռքիցս խլել՝ չկարողացավ, չտվի, վարպետ եղա. մոտիցն էլ շուտ դուրս եկա։ Ինձ և մյուսներին, օրինակ, ասել էր, որ իր տված բուլկիներից քանի հատ որ մնաց ամեն երեկո, պիտի ետ առներ։ 3—4 օր լավ էր... մեկ օր էլ բարկացավ. «Շան որդիներ,— ասաց,— ձեր քարթու հացերը ե՞ս պիտի սաղացնեմ. հոգիներդ դուրս գա՝ ման եկեք ու ծախեք»։ Ասում էր. «ման եկեք»... Առավոտյան ժամը վեցից, երբեմն հինգից մինչև 11, կեսօրից հետո 4-ից մինչև 9-ը էլ տեղ չէր մնում. առանց կանգնելու ման էինք գալիս. ձայներս կտրվում էր գոռալուց. թափառական հրեայի պես և մի բոպե մի դռան շեմքի վրա նստել չէինք կարող... «քալե, քալե»,— գոչում էր մեզ մեր ստամոքսը. «քալե»,— ձայնում էր աղան... և մենք քայլում էինք, անդադար քայլում... ըշտե այսպես ենք ապրում մենք... Մյուս ոտքդ բեր, աս լմնցավ։

Պահ մի մեզնից ոչ ոք չխոսեց. ես տվի մյուս ոտքս, նա ներկը քսեց և երբ խոզանակով սկսեց շփել, շարունակեց.

— Ըշտե ասանկ, աղաս... օրը մինչև երեկո, վեց ամիս անդադար քալեցի ու քալեցի, գոռացի ու կանչեցի, հացպանրից ու երբեմն էլ ասորի կամ պարսիկ խոհարարների աղտոտ կերակուրներից զատ բան չկերա... քիչ փող ետ ձգեցի։

— Որքա՞ն։

— Հիսուն մանեթ.... լավ փող էր, կարող էի երկիր վերադառնալ, մի թեթև գործ բռնել։

— Է, ինչո՞ւ չվերադարձար։

— Հիվանդացա, ունեցածս էլ կերա ու մի քիչ էլ պարտք արի. շատ էի «քայլել»...

ժպտաց դառնությամբ ու լռեց։ Պատկերացան մտքիս մեջ այդ խոկապես թափառող թշվառ հայրենակիցները, որոնցից հաճախ կարելի է տեսնել Թիֆլիսի փողոցներում քարշ գալիս։ Փոշոտ, հոգնած խուպոտ ձայնով գոչում են նրան՝ «Գարյաչի բուլկի» և ոչ ոք չի գթում նրանց, ոչ ոք...

— Կլոր-դայիի խաչոյին ճանաչո՞ւմ ես,— հարցրեց հանկարծ Մանուկը առանց ինձ նայելու և շարունակելով սրբել։

— Չէ, այդ ի՞նչ խաչո է։

— Էն, որին ռուս խաչո էլ էին ասում։ Ռուսեթ շատ էր մնացել. մի տղա ուներ, միասին էին Թիֆլիս։ Որդին աշչի[1] էր, հայրն էլ բուլոչնիկ՝ էյնաթի Կարապետի մոտ։

— Լավ, հետո՞։

— Կարապետը խաչոյին սկսեց համոզել, որ իր աշխատածից որդուն չտար և տուն էլ չուղարկեր։ «Տնավեր,— ասում էր նրան,— որդիդ էլ է աշխատում, թող նա տունը պահի, իսկ դու փող ետ ձգիր, որ էգուց մեկել օր թե տղադ քեզ չուզի պահել, դու խեղճ չմնաս...»։ Խաչոն համոզվեց, ամսական մինչև 10—15 մանեթ ետ էր ձգում, շան պես էլ կյանք վարում։ Փողերը թողնում էր Կարապետի մոտ։ Տարի մ'երկու, մոտ 300 մանեթ աշխատեց. էլ նրա քեֆին քեֆ չէր հասնի. ուզեց փարեն առնել ու երկիր վերադառնալ։ 30—35 ոսկի էր. բոլ փող էր, ուզեց Կարապետից։

— Ստացա՞վ։

— Համբերիր... Կարապետը, աղիս ասեմ, նրան համոզեց, որ փող հետը տանելը վտանգավոր է, քուրդերը կխլեին և այլն, որ թող Խաչոն երկիր երթա, ու Կարապետը հեռագրով նրան փող կհասցնի՝ «փողը տիրոջ առջև դուրս կգա»... Հավատաց Խաչոն, ուրիշ ճար էլ չուներ, թե որ չհավատար։ Հասավ երկիր՝ «փողը տիրոջ առջև» չելավ։ Նամակ գրեց, պատասխան չկա։ Ետ դարձավ Թիֆլիս եկավ։ Կարապետը վռնդեց իր խանութից. «Շա՞ռ ես ձգում վրաս,— ասաց,— ի՞նչ փող, ի՞նչ բան, թուղթդ ո՞ւր է»... Հուսահատ Խաչոն այս դուռ, այն դուռ ընկավ ու... այս մեկ կոշիկդ էլ հալից ընկել է, գիտե՞ս...

— Հետո՞, հետո՞,— գոչեցի ես նեղացած,— Խաչոն ի՞նչ եղավ։

— Ի՞նչ պիտի լիներ. մառախից[2], ցավից մեռավ։ Տարանք թաղեցինք Վերայի գերեզմանատուն։ Որդին էլ երկիր երթալու ժամանակ

1 Խոհարար։
2 Վիշտ։

սպանվեց։ Տասը՝ կին ու տղա, հոգի ունեն. ասված նրանց ումուդին հասնի, ով գիտե այժմ քանիսը քաղցածությունից մեռել են...

Վերջացավ սրբելուց։ Վճարեցի. ոչ ես խոսեցի և ոչ նա, այլ հեռացա։

Երբ իջնում էի սանդուղքներից և հեռանում կայարանից, դեռ բավական հեռու լսում էի Մանուկի տխուր ձայնը, որ գոչում էր.

— Չի՜ստի...

1894

ՔԱՐ ՁԱՐԴՈՂՆԵՐ

(Տուրիստի հիշողություններ)

Իմ բարեկամը սիրում է լավ ապրել, երբ կարող է։ Ամեն հարմարություններ ունի և ոչինչ չէ խնայում լավ բնակարան ունենալու համար։ Դրա համար էլ նա իր տունը վարձած ուներ քաղաքի ամենալավ տեղում, խճուղու վրա։ Բնակարանի ամենալավ մասը պատշգամն էր, որ կիսովին դուրս էր պարզվում դեպի խճուղին և ուներ իբր տեսարան՝ գետը, այգին, լեռներն ու բերդը մի կողմից, իսկ դեմուդեմից էլ մի քանի հարուստների պերճ տներ։

Պատշգամը զարդարված էր վարագույրներով, որոնք ես իջեցրի մի օր ժամը 12-ին և, սպասելով ճաշի, առի մի գիրք, նստա բազկաթոռի մեջ ու այդպես հանգիստ և հովանու մեջ՝ սկսեցի կարդալ։

Կարդում էի, բայց գլուխս բան չէր մտնում. ուղեղս դեռ չէր տաքացել, ուշադրությունս չէր կենտրոնանում. մի նախադասությունից հետո աչքերս գրքից հեռացնում էի և ուրիշ բանի ուղղում։ Օրինակ, հենց նայում էի դեպի ցած խճուղու վրա քար փշրողներին ու նրանց գործողությունը դիտում։ Սկզբում չէի էլ զգում, հետո էր միայն, որ տեսա նրանց պարսիկ լինելը, իսկ ավելի հետո էլ կենտրոնացնել հաջողվեց ուշադրությունս և սկսեցի հետազոտել այդ տեսարանն ու նրան բաղկացնող մասերը։

Երկու պարսիկներ էին Պարսկաստանից՝ երևի Թավրիզից կամ Խոյից։ Թաղյա թասաձև գլխարկ էին կրում. կապույտ կտավի արխալուղ էին հագել և այն էլ այնպես կտրտված, խունացած ու նոր կտորներով կարկտնած արխալուղ, որի պես պարսիկները միայն կարող են հագնել։ Կտրտվածներ ու ծակեր անպակաս էին, թե թևերի և թե կրծքի վրա։ Սպիտակ շալվարը կեղտոտ ու կտրտված՝ ձգելու աստիճանի, իսկ նը-

բանք ձգելու անգամ չէին մտածիլ, որովհետև տնտեսագետ էին երևում. չէ՞ որ միշտ քարերի վրա էին նստում։

Ոտքերի կոշիկները՝ տրեխներ, պատած էին հաստ կաշու կտորներով, որովհետև քարերին շատ էին շփում ոտքերը։ Նստել էին ոտները պարզած դեպի առաջ. դնում էին քարի մեծ կտորը, ոտքերով բռնում, իսկ կռանով ջարդում. ջարդելուց հետո ոտներով հրում և ետ տալիս, ահա նրանց պարբերական ամբողջ գործողությունը։

Կիզիչ արևը այրում էր նրանց մեջքը ետևից. երևի միշտ էլ այդ դիրքով էին նստում նրանք, որովհետև նրանց լերկ վիզը ետևից հասել էր նեգրային սևության։ Սև էր դեմքերն ու ձեռքերը. դեմքը թշվառներին հատուկ խոր կնճիռներով լիքը, աչքերն արյունով լցված, քթերի կաշին պոգոճկված, այտերը այրված, ձեռները հողոտ ու կոշտ, ոտների ոլոկներն աղտոտ ու թուխ։

Երբ ես զննում էի այդ բոլորը, իմ մեջ հարց ծագեց, թե արդյոք որքանո՞վ են վճարվում նրանք այն փոքրիկ ջարդված քարից պիրամիդի համար, որոնցից ամեն ոք կարող է տեսնել խճուղիների կողքին։ Հետո էլի մի հարց գոյացավ այդ հարցից, այն է, թե օրական արդյոք քանի՞ պիրամիդ կարող էին ջարդել երկուսը միասին։ Մտաբերեցի, որ մի քանի տարի առաջ էլ այդ հարցը հետաքրքրել էր ինձ, հարցրել էի, գիտեի, աշխատեցի հիշել, բայց մոռացել էի։

Նայում էի անընդհատ։ Նկատեցի իսկույն, որ կտրտվող քարերը լավ կարծր էին. պետք է, որ որձաքար լինեին, բայց կային և գրանիտի կտորներ, որովհետև դեսուդեն էին ցայտում հաճախ կրիստալային կազմվածքներ, որոնց մուշճի 5—6 հարվածներ հազիվ էին կտոր-կտոր անում։

Ո՛ւֆ, ի՞նչ դժվար գործ էր։ Արևի տակ, այդպես անհարմար կերպով նստած և անդադար միևնույն տաղտկացուցիչ գործը։ Ինձ եթե մի պիրամիդի համար 10 ռուբլի իսկ տային՝ չէի անիլ։

Այստեղ հիշեցի, որ բարեկամիս ծառան խմելու սառը ջուր մատակարարելու համար, պահ մ'առաջ երկու վեդրոներ կախ էր արել մի կոր ճկուն փայտից, լցրել էր նրանց ջրով և վերադառնում էր մի վերստ հեռու աղբյուրից։ Հևում էր քրտնաթոր, ծնկները կքվում էին և ես մտածում էի, թե որքան սոսկալի բան կլիներ, եթե ինձ ստիպեին այդ գործը կատարել։ Բարեկամս ասում էր, որ 100 ռուբլի էլ տային, ինքը չէր անիլ այդ։ Կուզենայի, որ նա գուրս գար, և ես նրա ուշադրությունը հրավիրեի քար փշրողների վրա։ Անշուշտ, նա այդպիսիների հարյուր անգամ տեսած կլինեն շատերը, միշտ էլ տեսնում ենք. բայց ոչ մի ժամանակ առանձնապես կանգնած, գոնե ես, չէի գիտել այդ տեսարանը։

Հետաքրքիր մի տեսարան էլ չէ, ոչ էլ գեղարվեստական. սարսափելի է միայն. արևը մի ճեղքից քիչ խփելու ժամանակ իսկույն ամեն հնարք գործ դրի, որ վարագույրները գնդասեղով և այլն միացնեմ ու ճառագայթի մուտքն արգելեմ. իսկ ինձնից քիչ հեռու, առավոտյանից ի վեր, 7 ժամ անընդհատ կատարյալ արևի մեջ քար են փշրում երկու խղճալի արարածներ։

Արդյոք ի՞նչ պիտի ստանային ամբողջ օրվա այդ տանջանքի համար։ Խոսում էին. սկսեցի լսել, որ գուցե հարցիս պատասխանը իմանալ հաջողվեր ինձ։

Լսելու համար քիչ ծովեցի դեպի փողոցը։

Այդ միջոցին էր, որ մի սուր ձայն լսվեց։

— Բուլկի,— աղաղակում էր մեկը, որ մի մեծ սակառ աջ ուսին, կքված նրա ծանրության տակ, ձեռքի փայտը իբր հենարան գործ ածելով, բարձրանում էր փողոցն ի վեր, անցնելով ճիշտ քար փշրողների կողքից։

— Բուլկի՛,— կրկնեց նա ակնարկը մեքենայորեն քար փշրողներին գարձրած։

— Ի՞նչ.— հարցրեց պարսիկներից մեկը և մուրճը ցած դրեց,— բուլկի... դա ի՞նչ բան է։

Հաց ծախողը կանգ առավ նրանց կողքին։

— Հաց է,— ասաց։

— Բաս հացը այդպե՞ս կծախեն։

Մյուս պարսիկն էլ դադարեց, մուրճը գետին դրեց ու դառնալով ընկերին նկատեց անհամբերությամբ.

— Չես հասկանում, Մահմեդ, դա չայի հաց է։

— Ցույց տուր, նայենք,— ասաց Մահմեդը հաց ծախողին։

Վերջինս երևի հոգնել էր և մի փոքրիկ առիթի էր սպասում, որ սակառը ցած դնի։ Ցած էլ դրեց, բայց երեսի ծածկոցը չհանեց։

— Բաց, տեսնենք,— հարեց Մահմեդը պարսկական հատուկ համարձակությամբ,— տեսնենք ինչ տեսակ հաց է։

— Ես չեք առնելու, էլ ինչո՞ւ բանամ։

Մյուս պարսիկը վիրավորվեց։

— Ինչից գիտես, որ չենք առնելու, ա՛յ, հա՛յ։

Հայ էր ծախողը. կռացավ և սակառի ծածկոցը ետ քաշեց.

— Ահա տեսեք,— ասաց,— բուլկի է էլի։

Սակառը լիքն էր բուլկիներով, նոր էին եփված ու մի շատ անուշ հոտ փչեցին պարսիկի քթածակերի մեջ. շատերի երեսի կարմրության վրա մարգարիտների պես փայլփլում էին շաքարավազի հատիկներ։

— Էս ի՞նչ տեսակ հաց է,— մատը դրեց մեկի վրա Մահմեդը,— և ինչ փափուկն էլ է. սա ուտո՞ւմ են։

— Իհարկե,— ծիծաղեց ընկերը։

— Չայի հետ են ուտում,— ավելացրեց ծախողը,— շատ համովն է։

— Մեկ նայիր այստեղ, է, Շիրին,— դրդեց ընկերոջը Մահմեդը և ուզեց ձեռքն առնել մի բուլկի։

— Չեռք մի տալ, կփշրես,— արգելեց ծախողը։

Պարսիկը ձեռքը ետ քաշեց, հետո ուզեց մուրճը ձեռքը առնել, բայց էլի թողեց և մի տենչալի հայացք ձգելուց հետո սակառի վրա ասաց.

— Փա՛հ, փա՛հ, ինչ լավ հացեր են է՛է՛։

Ծախողը ծանրությամբ սկսեց ծածկել բուլկիների երեսը։

Մահմեդը ցուցամատի վրա բութով մի եղնկաչափ ցույց տալով.

— Մի այսքան կտրի տուր,— ասաց,— տեսնեմ ինչ համ ունի։

Մյուս ընկերը ժպիտը դեմքին լսում էր. չէր էլ ջարդում. երբեմն միայն կռանը տափակեցրած հեռվից մոտ էր քաշում քարի թռչկոտած կտորները։

— Ինչպե՞ս կարելի է,— պատասխանեց ծախողը և սակառն ուսի վրա ձգեց,— չէ՞ որ կփչանա։

— Մի այսքան, էլի՛,— պնդեց Մահմեդը,— խո ավելի չեմ ուզում. գուցե եթե լավն է՝ առնեմ։

— Շատ լավն է, չե՞ս տեսնում, որ շաքարով է շինված։

— Շաքարը երեսն է, խո մեջն էլ չէ։

— Մեջն էլ է շաքարով։

— Բույ...— զարմացավ Մահմեդը,— մե՞ջն էլ։

— Իհարկե,— ասաց ծախողը,— յուղով էլ։

— Բույ... իսկ ի՞նչն է կարմրեցնողը։

— Յուղն է և ձուն։

— Զո՞ւ էլ կա մեջը։

— Կաթ էլ։

Մահմեդը ընկերոջը նայեց, նրա աչքերը մեծացան փափագից, քթի ծակերը լայնացան ու վերի շրթունքը բաժանվեց ցածրինից. ախորժակը խիստ գրգռվել էր։

Ծախողը մի քայլ արավ գնալու։ Մահմեդը անձկանոք նրան նայեց և սակառին։ Շիրինը տեսավ այդ, մի վայրկյան կնճռեց ճակատը, հետո դարձավ ծախողին ու ասաց կտրուկ ձայնով.

— Մեկը քանի՞։

— Հինգ կոպեկ,— պատասխանեց ծախողը և կանգ առնելով կիսովին դարձավ։ Կարծես, որ առնելու էին։

— Թո՛,— բացականչեց Մահմեդը իսկույն. անհետացավ դեմքի անձկալի արտահայտությունը,— այդքան թա՞նկ,— կրկնեց նա, հետո մուրճը ձեռքն առավ և մեղմ ձայնով ավելացրեց։

— Չեմ ուզում, գնա. դեհ, գնա, էլի՛։

Հաց ծախողը նրան նայեց մի քիչ, հետո.

— Գնում եմ էլի,— ասաց,— ինչո՞ւ ես բարկանում։

Հեռանալ սկսեց։

— Երեք կոպեկով չե՞ս տալ,— գոռաց նրա ետևից Շիրինը։

— Ո՛չ, չեմ ուզում, թող գնա,— վրա տվեց Մահմեդը, կատաղությամբ մուրճը քարին խփելով։

— Ո՛չ, պակաս չի լինիլ,— գոռաց հաց ծախողը, որ հեռանում էր։

Նա գնում էր դեպի դիմացի տունը, երևի այնտեղ նստող աստիճանավորին սուրճի համար հաց տալու։

Շիրինն էլ էր տաքացել և բարկությամբ յուր մուրճը քարի կտորներին էր խփում։ Քիչ հետո դարձավ և նայեց Մահմեդին, հետո հաց ծախողի ետևից գոռաց.

— Երկուսին յոթ կոպեկ տամ, բեր։

Այս անգամ Մահմեդը ձայն չհանեց։ Հաց ծախողը հեռացավ և մբտավ մեծ տան մեջ։

— Արդյոք ովքե՞ր են ուտում այդ տեսակ հացը,— խոսեց Մահմեդը։

— Ովքե՞ր,— պատասխանեց Շիրինը,— շատ պարզ է, աստիճանավորներ և հարուստներ։

— Մոռացավ կրոնավորները,— մտածեցի ես։

— Իսկ մեզ պես աղքատները,— շարունակեց Շիրինը,— դրա համն էլ առնելու իրավունք չունին։

— Հինգ կոպեկ.— մռմռաց Մահմեդը,— ինչքան էլ փոքր էր, մի բրուտ կարելի էր անել միայն։

Սկսեցին պահ մի լռությամբ քար ջարդել, որից հետո Մահմեդը նորից խզեց լռությունը.

— Քաղցած չե՞ս,— հարցրեց նա Շիրինին։

— Ուտենք։

Մուրճերը ցած դրին. Շիրինը վերցրեց կարմիր թաշկինակով կապած հացը, բաց արավ, տարածեց քարերի վրա և սկսեցին հաց ուտել։

Միայն ցամաք հաց էր, Մահմեդը ախորժակով էր ուտում և հաճախ նայում էր դեպի աստիճանավորի տունը, ուր մտել էր բուլկի ծախողը։

— Տեսնես ինչ յուղով կլինի շինած,— ասաց նա մեկեն,— կարագո՞վ։

— Գժվե՞լ ես,— պատասխանեց Շիրինը,— կարագ յուղով էլ հա՞ կթխեն... դմակ յուղով կլինի։

Եվ լռեցին։ Շոգը սաստիկ էր. անցուդարձը դադարել էր. երբեմն միայն ցածի փողոցից երևում էին եզան սայլեր։

— Մեր երկրում այդպես բաներ չեն թխում,— ասաց նորից Մահմեդը։

— Այո՛, բայց ուրիշ ավելի լավ քաղցրեղեններ կան. միտդ չէ՞, թե Նովրուզի օրը ինչեր չեն լցնում խանութներում. փախլավանե՞ր, ինչ լոխումնե՞ր։

— Բայց մենք, գյուղացիներս, խո այդպես բաների համը չենք առնում. դրանք քաղաքացոց համար են։

Շիրինը քիչ լռեց, հետո մեկենիմեկ ասաց.

— Իսկապես, Մահմեդ,— կուզե՞ս մի հատ առնենք։

— Չէ, չէ— շտապեց պատասխանել Մահմեդը,— օրական 45 կոպեկ աշխատանք անենք, գիժ խո չե՞մ, որ 5 կոպեկ փողը մի բրտում հացի տամ... բաս պարտքե՞րս ով տա, որդիների՞ս ով կերակրի։

Լռեցին։ Մահմեդի տրամաբանությունը էլ առարկություն վերցնել չէր կարող ըստ երևույթին։

Կերան ինչ որ կար։ Շիրինը թաշկինակն թոթափեց, կոխեց ծոցը, կռանն առավ ու ասաց.

— Դե՛հ, վերջացնենք, քիչ մնաց։

Հաց ծախողը երևի ուրիշ կողմով էր դուրս գնացել աստիճանավորի տնից և կամ թե հենց նրա տակի մառանումն էր բնակվում։ Երեկ ես նկատել էի, որ այդ մառանում կանայք և մանուկներ կային։

— Երևի լավ առևտուր ունի... հը՞, Շիրին,— հարցրեց դարձյալ Մահմեդը։

— Իհարկե. հատը 5 կոպեկով, որ օրական 20 հատ ծախե, այդ քիչ մի ռուբլի. քի՞չ փող է։

— Լավ աշխատանք է, աստված վկա... մեր մի երկու օրվա աշխատանքը։

Այդ միջոցին բարեկամիս ծառան դուրս եկավ պատշգամբ և ասաց ինձ.

— Աղա, խորովածը պատրաստվեց, համեցեք։

— Երանի այդ հարուստներին,— ասում էր ցածում Մահմեդը,— այդպես լավ հացեր են ուտում միշտ...

— Ու այսպես էլ արևի տակ չեն այրվում...— ավելացրեց դառնությամբ Շիրինը և սրբեց ճակատի ծորող քրտինքը։

Վեր կացա ներս մտնելու։

Վերջին խոսքը, որ լսեցի, դա Մահմեդի խոսքերն էին, միացած մի խոր հառաչի հետ։

— Էհ...— ասում էր նա խորին տխրության շեշտով,— երևի մեր ճակատագիրն այդ է... տեսնել և չկարողանալ վայելել։

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Տրլը՛նգ, տրլը՛նգ, տրլը՛նգ...

Զարթնում եմ։ Ձյունի սպիտակությունն ու աղոթարանի լույսը լուսընկայի պես հում լույսով ողողել են սենյակս։ Մոտ եմ գնում լուսամուտին և փողոց նայում։ Աստղերից շատերը դեռ պսպղում են երկնակամարի վրա. խոր լռություն է տիրում. ձյունի սպիտակությունը լուսավորել է Վան քաղաքի խաչ-փողանի այդ մեծ ծառուղին. ծառերը ծանրաբեռնված ձյունով՝ ճյուղերը խոնարհել են գետին, և փողոցի ձախ կողմի կածանով քայլող միակ անձն այդ միջոցին Հայնկուլսներ եկեղեցվո ժամկոչ Սահակն է։

Քայլելով սերտ ձյունի վրա, թևից քաշ արած տանձենու տախտակին ուժգին հարվածներ է հասցնում նա փայտյա մուրճով, հետո գլուխը ցցում և զիլ ձայնով երգում.

— Ո՛վ բարեպաշտ ժողովուրդ, ժամ հրամմեցեք...

Ու... տրլը՛նգ, տրլը՛նգ, տրլը՛նգ...

Որքա՛ն քաղցր ձայն ունի անպիտանը և որքա՛ն ոգևորությամբ է երգում։ Երբ վերջացնում է, կանգ է առնում յուրաքանչյուր դռան առաջ, բարձրացնում է կռանը և երեք ուժգին հարվածներով բախում։

Այդ նույն պահին լսվում են հեռավոր թաղերից խուլ, այլևայլ շեշտերով հրավերներ, կոչնակի ձայներ և դռների բախումն։

Տրլը՛նգ, տրլը՛նգ, տրլը՛նգ...

Հագնվում եմ։ Ջնայելով, որ ցուրտ է, իջնում եմ փողոց և առվի վրա կացած՝ սկսում եմ լվացվել։ Ամայի, մշուշային լույսով փողոցի մեջ մեկ-մեկ երևում են մարդիկ, ճանչում են դռներ, նրանցից դուրս են գալիս մանուկներ, որոնք խշրտացնում են ձյունը, քայլում ձյունից սրբթսրբթացող ծառերի տակից և իջնում դեպի ձորակի եկեղեցին. ժամկոչը վերջացնում է և կամ հոգնել է դռներ ծեծելուց և իր ծանր կոշիկները քարշ տալով անցնում է մեր դռան առջևից։

— Բարի լույս, Սահակ ախպեր,— ձայնում եմ նրան՝ կկզած առվակի եզրին։

— Աստծու բարին... արդեն զարթնե՞լ ես։

— Կոչնակիդ ձայնը թողնո՞ւմ է քնել,— ժպտում եմ ես.— բայց ես շատ եմ սիրում դրա ձայնը. այնպե՞ս քաղցր է հնչում քնի մեջ։

— Աղեն զարթնե՞լ է,— հարցնում է նա՝ կամենալով անցնել հետո, առանց պատասխանի սպասելու, վերսկսում է.

— Ո՛վ բարեպա՞շտ ժողովո՞ւրդ...

Որքան գեղգեղ գիտե՝ հնչեցնում է։

— Ձայնդ խռոտվել է, հա՞...

— Իհարկե կխռոտվի. ցուրտը չե՞ս զգում։

— Մտիր մեկ տաքացիր, թոնիրը վառված է կարծեմ։

Եվ ժամկոչը, ցրտից զլված ձայնն իր վերին աստիճանին հասնելուց հետո, կանգ է առնում։

— Աղեն զարթնել է,— ավելացնում եմ ես,— վերից լսում էի, թե ինչպես Նարեկ էր քաղում։

— Աստված օրհնի աղին, շա՞տ ջերմեռանդ է. սաղ Նարեկը անգիր գիտի...

Ու մտնում է ինձ հետ։ Մի քանի դուռ էր մնացել բախելու դեպի վեր, շատ էլ կարևորներիցը չէին։

Տանտունի դռան առաջ ոտները թափ է տալիս Սահակը և հետևում ինձ։ Թոնիրը ներսում վառվում է և մի մեծ բոց գալարում դեպի երդիկը։ Կողքին, մի դոշակի վրա նստել, բարձին թիկն է տվել իմ հյուրընկալ Մկրտիչ աղան ու մեծահնչուն ձայնով սուրճ է խմում կում առ կում։ Ամեն կումից հետո երկար փողով պապիրոսը բերնին է դնում, մեծ քանակությամբ ծուխ ներս քաշում, գլուխը բարձրացնում, վիզը երկարացնում և քթածակերից ու բերնից դուրս է վիժում ծխային մի ամպ։ Ծանր, պաշտոնական և խիստ մտախոհ կերպարանք ունի Մկրտիչ աղան։ Խորշոմուտ ճակատ, արևակեզ ոսկրոտ այտեր և փաթոթավոր մեծ ֆես, երկար ֆարաջա ու ծալապատիկ նստած դիրք։ Նրանից քիչ հեռու, մի աղջիկ ավլում է հատակի կարպետն ու աշխատում, որչափ կարելի է, քիչ ձայն հանել։ Տանտիկինը հեռու անկյունում մի քանի մանր-մունր մանուկների է հագցնում, մանուկներ, որոնք տկլոր նստած կամ կանգնած՝ կիսամթան միջից շողացնում են աչքերը։ Սենյակի մի կողմից լույս է տալիս ձեթի կանթեղը, որ դրված է պատին խփած փոքրիկ պատվանդանի վրա՝ բարձրում։ Եթե թոնրի բոցը չլիներ, այդ լույսը միայն մի փոքրիկ շրջան հազիվ կարող էր լուսավորել։ Սենյակը մեծ է և բարձր։ Վերից մի երդիկ միայն կա, այն էլ ծածկված գմբեթաձև վանդակով և ապակու փոխարեն՝ պատած յուղոտ թղթերով. բակի վրա նայող պատը շատ բարձրից ունի երկու միջնադարյան, յուղոտ թղթով պատած լուսամուտներ։ Եվ դրանք են տանտունի լույս տվողները։ Դրա համար էլ հեռավոր անկյունները մնացել են կատարյալ խավարի մեջ։ Ինչե՞ր ասես, որ այդ անկյուններում դարսված չլինեն. կործած կաթսաներ, բարձր դիզված անկողիններ, հետո կարասներ, կուժեր...

Թոնրի շուրջն է միայն, որ քիչ կանոնավոր է։ Բարձր սաքու՝ կարպետներով պատած, մի քանի ներքնակ, մի քանի բարձ և մի աթոռակ։ որի վրա են դրել աղայի ֆինջանի ափսեն և պապիրոսի մոխրամանը։ Խարույկի լույսը թոնրից ելած՝ կիսովին լուսավորում է այդ բոլորը, սուր լույսի և սուր ստվերի կոնտրաստներ գծում աղայի դեմքի վրա. կրակը ֆշֆշում է, լսվում է ավելի շոր-ռիթմային հարվածները, աղայի սուրճ խմելու երկար շառաչյունը...

Դրսում կատարյալ լռություն է. երբեմն միայն, մի աքաղաղ կանչում է հավաքնի խորքից, նրան հեռվից արձագանք է տալիս մի ուրիշը՝ ժանգոտ ձայնով, ապա հեռավոր տըլընգոցներ և այդ բոլորից հետո, ներսից, մթան մեջ ստվերի պես երևցող տանտիկնոջ խոր հազը...

Սահակը դռան կողքին է թողնում կոչնակը, կոշիկները հանում և ինձ հետ թոնրին մոտենում։

— Բարի լույս, Մկրտիչ աղա։

— Ա՛յ, աստծու բարին... այդ ո՞վ է հետինդ։

— Ժամկոչն է։

— Հա՞... դե լավ. այս կողմ հրամմե, որդիս, եկո կողքիս նստե։ Դու էլ, Սահակ, եկո քիչ մը տաքցիր, մրսած կլնես։ Ցուրտ է, հա՞։

— Հա՛, հրամանք ես, լավ ցուրտ է։ Արարք գնացող սխկայեցիք մեկ-մեկ հոխա[1] սառցի քուլաներ ունեին իրենց բեղ ու մորուսի վրա։

— Դաշտում, իհարկե, ավելի ցուրտ կլինի,— ասում եմ ես։

Ավելածությունը դադարում է. սիլուետների պես, կիսամթան մեջ, շարժվում են մանուկները։

— Մանավանդ Սխկայի կողմը,— դիտել է տալիս ժամկոչը, հետո ձեռքերը պարզում կրակին և՝ «Օ՞ֆ, ինչ լավ կրակ է...»։

— Կնի՞կ,— դառնում է աղան տանտիկնոջ,— ժամկոչ ախպոր մեկ օղի, թող ներսի կրակն էլ վառվի...

Ծիծաղում ենք։ Տանտիկին-խաթունը մոտ է գնում պատի միջի պահարանին, հանում օղու շիշը, մի փոքրիկ պնակով էլ շամիչ, լցնում է բաժակը օղիով և պարզում ժամկոչին։ Սա առնում է, բարեմաղթում, խմում, շամչից երկու հատ վերցնում, սրբում է բեղերն ու ասում.

— Ուխա՛յ... աստված շեն պահի. լա՞վ տաքացա։

---

1 Ջափի միավոր (մոտ 400 գրամ)։

— Մեկ էլ տուր, կնի՛կ,— հրամայում է աղան։

Ժամկոչը այդ երկրորդը առանց բարեմաղթելու է կոնծում, թևովը սրբում է բերանը և որպես թե սկզբում մի բան էր ասել և կիսատ թողել, շարունակում է.

— Հա՛, է՛ն էի ասում... էդ տնավեր սխկայեցիք... այնքա՞ն տեղից, էս ցուրտ-դիամաթին, ծանր-ծանր, իրենց էշերի քայլքով քաղաք են գալիս թե ի՞նչ... մեկ իշու բեռ փթիր[1] կամ երկու ջվալ պտրտուր[2] պիտի ծախեն... Տնավերներ, 5—6 ղուրուշի համար այդքան տանջվել կլինի՞։ Հալա մեկ-երկու ժամ էլ այս ցրտին, ոտները վեր-վեր անելով, Արարուց մեյդանի վրա պիտի սպասեն, մինչև որ ժամավորն ելնի և պտրտուրն առնի...

— Թե որ ծախվի էն էլ,— մեջ եմ մտնում ես,— չե՞ս տեսել, որ շատերը չեն կարողանում ծախել մեյդանի մեջ և էշն առաջ արած՝ մինչև երեկո փողոցներն են շափում և գոռում...

— Խա՛, խա՛, քե մեռնեմ... շան կյանք է, ողջ օր ու գիշեր տանջվեն, ցուրտ ուտեն, հիվանդանան, մի երկու ղուրուշ վաստակեն, էն էլ տանեն կամ պարտատիրոջ տան, կամ նյուֆուս առնողի բերան լցնեն։

— Թե որ մենակ նյուֆուս լինի...,— ասում է աղան մռայլ դեմքով,— ապա ուրիշ հարկե՞րը, ապա կաշառքնե՞րը...

Բոլորս լռում ենք։ Կրակը ճարճատում է, բոցը իջնում և արնեգույն լույսի մի շրջանով ներկում մեր դեմքերն ու թոնրի եզերքները։

«Զայն հառաչանաց, հեծութեան սրտի, ողբոց աղաղակի.. քեզ վերընծայեմ... ստեղծողդ ամենի...»,— լսվում է այդ լռության միջից աղայի մեղամաղձոտ, սրտի խորքերից դուրս եկող վշտալից խուլ ձայնը։ Հետո, երբ մի բոպե ամենքս լուռ մնացած, ակնապիշ՝ կրակն ենք դիտում, նա դառնում է ժամկոչին և հարցնում.

— Պատարագիչն ո՞վ է այսօր, Սախակ։

— Տեր Եղիշեն։

— Ամբիծք էլ ունի՞ք։

— Հրամանք ես, երկու հատ։

Նորից լռություն։ Կայծեր են դուրս սլանում թոնրի խորքից, մխյանց ետևից պնդում կարծես և սենյակի վերին, մութ տարածության մեջ, ճաթոտում, կորչում։

Աղջիկը դեռ ավելում է, բայց շատ հեռու. հազիվ երբեմն լսվում է ավելածության շոր ձայնը։

[1] Կովի աղբից շինած վառելիք։

[2] Ոչխարի աղբը, որ չորացնում են և վառում։

— Տեր Հովսեփին կասես,— խոսում է աղան,— որ ժամից հետո դա մեզ մոտ ճաշի. թող ամբիծքը ուրիշներին թողնի։

— Հազրը որ էսօր ամբիծքն ուտի և էգուց էլ ձեր ճա՞շը...— ասում է ժամկոչը.— ինչո՞ւ իզուր կորցնի ամբիծքները։

Բոլորս ժպտում ենք։ Նա նկատում է այդ։

— Խաչը՛, ապա...— շարունակում է նա,— դուք չե՞ք իմանում, թե որքա՞ն ծանր է տերտերների համար, կորցնել մի ամբիծք, թեկուզ թագավորի ճաշին անգամ հրավիրված լինի։ Կտեսնեք, ա՛յ...

— Չէ՛, ժամկոչ,— պնդում է աղան,— տեր Հովսեփը կգա. ի՞նչ կա, իր բաժին ամբիծքը թող տուն ուղարկի։ Ասա, որ մի լավ քյալապոշ ենք եփել չորթանով։

— Քյալագյո՞շ...

Եվ ժամկոչի բերանի ջրերը շատանում են։

— Հը՛մ...— մռմռում է նա,— ինչ լավ բան որ լինի, իսկույն տերտերին են կանչում... ժամկոչը չոռ ու ցավ ուտի...

— Լա՛վ, լավ,— ժպտում է աղան,— քո բաժինն էլ կտա խաթունը։

— Աստված շե՛ն պահի... Դե՛հ, տաքացա. գնամ. ժամ օրհնելու ժամանակ է. հիմա տերտերները եկած կլինին, մանավանդ ծուռ տեր Ստեփանը, որ հոգիս մինչև այստեղս է հասցրել։

Կոկորդն է ցույց տալիս և սկսում կոշիկները հագնել։

— Խա՛ գեռ...— շարունակում է նա,— մինչև այստեղս է հասցրել։ Ամենից շուտ է գալիս, դուռը շխկոցով բաց է անում, կոշիկները հանելով՝ թևի տակ է դնում, գժի պես վը՛զզ.. վազում դասը։ Վա՛յն եկել է ինձ, եթե ժամ օրհնելու զանգը իսկույն չխփեցի։

— Չէ՞ որ նրան դադարեցրել են քահանայագործությունից։

— Ըմ... ո՞վ կարող է նրա վրա։ Ամեն օր կռվում է տեր Հովսեփի, տեր Եղիշեի հետ... տեր Վարդանի հե՞տ իսկ... աստված ազատի— շուն ու կատու են։ Ժամի կես տեղում, մեկ էլ տեսար, սա նրան, նա սրան. էլ բան չի մնալ, որ չասեն. է՛հ էհ, ո՞րն ասեմ... դե՛հ, մնաք բարին, սա՛ղ լինիք...

Եվ բաց է անում դուռը։

— Զմոռանաս, Սախակ,— կանչում է աղան։

— Չե՛մ մոռանալ. մնաք բարին։

— Բարի եկար։

Ժամկոչը բաց արած դռնից երկնքին է նայում։

— Հո՛, հո՛,— ասում է նա,— հիմա լույսը բոլորովին կբացվի. տեր Ստեփանը կրակ դրել՝ եկեղեցին վառում է ով գիտե, թե որ տեր Վարդանն էլ եկել է, է՛լ աստված ազատի...

Եվ ծանր քայլերով հեռանում է։

Դուրս եմ գնում ես էլ։ Փողոցում սկսում են երևալ դեպի եկեղեցին իջնող կանանց, տղամարդկանց և մանուկների խմբեր, որոնք միմյանց ետևից, շարքով անցնում են նեղ կածանով՝ կծկված ու քչփչալով։ Մանուկներն իրար ձյուն են նետում, սահում են, վազվզում, գոռգոռում... Ու նրանց ստվերները կարճ գծվում է զառիվայրի շողշողուն ձյունի վրա։

Եվ ժամկոչ Սախակի կոշնակի ձայնը իր վերջին տըլընգ-տըլընգն արձակելով իջնում է դեպի Հունկույսների ձորակը, ուր գնում են ձորագլխի վրա միմյանց միացող ժամկոչները։

Ձորի խորքից խո՜ւլ կերպով լսվում է այժմ եկեղեցու տանիքի վրա դրված երկրորդ մեծ կոշնակի ձայնը, որ իր կողմից արձագանք է սըփռում ձորակի մեջ և դղրդեցնում Ջըմփ-ջըմփ մաղարայի լեռը...

* * *

Այդ բոլորը հիշում եմ մի առ մի, ամենափոքր մանրամասնությամբ։

Հիշում եմ ապա փոքրիկ կամուրջը, որ ձգված է ձորակի գետի վրա, հետո՝ եկեղեցու բարդիները, պուրակը, կից պարտեզները, Ջըմփ-ջըմփ մաղարայի քարոտ լեռը՝ ճիշտ շենքի ետևում ցցված, եկեղեցու և դպրոցի պարսպապատ շենքը, վերի առուն՝ իր ուռենիների շարքերով...

Հիշում եմ եկեղեցու քարե դռնից սրթսրթալով ներս մտնող ժամվորներին, որոնք շրթունքները շարժելով աղոթք են մրմնջում և մտնելուց առաջ քարե շրջանակը համբուրում, հիշում եմ դռան առջևի առվից լվացվողներին, որոնք տանը չեն լվացվել և եկել են եկեղեցվո առվից լվացվելու և որոնք կարմիր թաշկինակներով երեսները սրբելուց հետո խաչակնքում են, ձեռքերի մեջ փչում և եկեղեցի մտնում...

* * *

Ահա և եկեղեցին։

Մի մեծ շենք է. ցած ու մութ։ Լուսամուտները փոքր. ջահերը վառված չեն, սեղանի վրա և տեղ-տեղ՝ պատկերների առաջ վառվող բարակ մոմերի լույսերը շատ նեղ շրջաններ են լուսավորում։ Դռնից նայողին ներկայանում է դեմ առ դեմ, հեռվում, մի մեծ բաց դռան ներսի կողմում՝ մատուռի լուսավորած ոսկեզօծ սեղանը։ Նրա դրսի կողքերում՝ երկու փոքրիկ սեղաններ, նույնպես սակավ լուսավորված։ Երկու մեծ սյուներ կազմում են դասը, որոնք և փայտյա վանդակորմով զատված են։ Սյուների կողքին են կանգնել քահանաները։ Դասերից սկսած դեպի

ցած պարզվում են երկու անոճ, փայտյա սյուների շարքեր և ժողովրդի կանգնելու տեղը՝ մինչև դուռը։ Շենքի հատակը քարյա է, բայց ծածկված ամեն տեսակ հին ու նոր կարպետներով ու գորգերով։ Պատերը զարդարված են հնամաշ, սևացած, մոմի կաթվածքներով բծավորված, բոցերովը խանձված, երբեմն շատ տգեղ, հազիվ ուրեմն գեղեցիկ՝ զանազան պատկերներով։

Հատակից հետո, դռան գլխին է գտնվում կանանց բաժինը՝ երկհարկ լայն օթյակ, որ թառմա է կոչվում։ Եվ որպեսզի ցածում աղոթող տղամարդիկ կանանց դեմքերը չտեսնեն, թառման ունի առջևից մանր ծակերով տախտակորմ։ Թառմայի տակն է աղքատների կանգնելու տեղը, երեսփոխի մոմի սեղանը և կոշիկներ հանելու տեղը։

Ներս եմ մտնում այն ժամանակ, երբ դասից լսվում է

— Օրհնյալ տեր մեր Հիսուս...

Բայց հազիվ թե նա կմկմալով ուզում է շարունակել, որ եկեղեցու դռան մոտ մի խլրտում է առաջանում։ Տեր Ստեփանն է։ Ներս է ընկնում, կոշիկները թևի տակից դուրս թողնում դեպի գետին, սլանում է դեպի մյուս դասը առանց փիլոնի, խլում է տեր Վարդանի բերանից աղոթքը և գոռում.

— Օրհնյա՛լ տեր մեր...

Եվ ահա հանդիսատես եմ մի տեսարանի, որի հիշողությունն իսկ ինձ ծիծաղեցնում է։

Տեսնում եմ կուզ տեր Վարդանին, որ հանկարծակիի եկած այդ հարձակումից, քարանում է։ Ստիպված էր լռել, որովհետև ձայնը շատ ցածր էր, արտասանությունը ծանր։ Սերացել է տեր հայրը. խիստ ծեր է, և այլայլվում։ Տեր Հովսեփ ավագերեցից հետո ժամ օրհնելու իրավունքն իրենն էր. ոչինչ չէր կարող այնքա՜ն վիրավորել նրան, որքան գիժ տեր Ստեփանի այդ վարմունքը։

Տեր Ստեփանը գիժ է, մի խենթացած քահանա, որի հետ չգիտեն ինչպես վարվել. որտեղ ուղարկում են՝ փախչում է։ Մոլեգին սիրահար է ժամերգության. որ թողնեն, ամբողջ առավոտյան ժամերգությունը՝ քահանայի, դպիրների, փոխասացների բաժինները միմյանց ետևից կասի և դեռ էլի կուզենա ասել։ Ամբողջ օրը իր տան կտուրի վրա ճեմում է և դիլ ձայնովն ու ստեղի շարականներով ողողում փողոցը։

Բայց ահա տեսնում եմ տեր Վարդանին, որ ցցվում է, կարմրում և գոռում.

— Ադաբսըզ (անամոթ), չե՞ս ամաչում... էլի՞...

—Եվ թող մեզ զպարտիս մեր...— շարունակում է տեր Ստեփանը արագությամբ, գլուխը ցցած, հաղթական ժպիտը դեմքին։ Տեսնելով, որ

հաղթողն էր, ձեռքերն է շփում, փիլոնը վրան առնում և անընդհատ, երգելու պես, կարդում է աղոթքները։

— Ո՜ւռ...— շարունակում է նախատել տեր Վարդանը ավելի բորբոքված։

— ... Եվ մի տանիր զմեզ ի փորձություն... — գոչում է տեր Ստեփանը շեշտելով և թշվառ ծերունուն դարձած։

Տեր Վարդանը, վերջնականապես հույսը կտրած, դողում է բարկությունից. լռել է, բայց քթի տակից փնփնթում է. և բավական բարձր ձայնով փնփնթում.

— Այսպես գժերի մորուքը չեն ածիլում... հերիֆ, հերիք չեզա՞վ արածդ. քո ի՞նչ բանն է աղոթել, հայվան Մարկոս— ծուռ Փիլիպո՜ս...

— ... Չի՞ քո՜ է արքայություն և զորություն...— նետում է դեպի նա տեր Ստեփանը զորեղ ձայնով։

— Ջոռ ու ցա՜վ...

— ... Եվ փառ հավիտյանս...

— Գետին անցնիս...

— Ամմեն։

Թառմայում այդ միջոցին քչփչոցը սկսել է։ Կանայք բավական հավաքվել են. տղամարդիկ էլ հետզհետե հասնում են, կոշիկները թողնում դռան մոտ՝ ժամհարի կողքին, գլխարկները կամ հանում և կամ հենց ֆեսով՝ ցրվում են կիսախավար եկեղեցվո զանազան կողմերում։

Ահա և ավագերեցը. կարճահասակ, բարեհույս դեմքով ծերունի, որ դռան շեմքի առաջ կանգ է առնում և դիտում է դասի մեջ կատարվող տեսարանը։ Ասպարեզի տերը դեռ տեր Ստեփանն է. անցել է այժմ մատուռի առաջ և շարունակում ջրվեժի պես բերնից գուրս տալ անհասկանալի արագությամբ աղոթքներ՝ մոնոտոն, արագ ու զիլ արտասանությունով։ Պարզել է վիզը և ամբողջ մարմնով տարուբերվում է։ Ոչ մի տեղ չի նայում, բացի օճորքից. կատարյալ էքստազի մեջ է։

Այդ միջոցին վրա է հասնում չորրորդ քահանան՝ տեր Եղիշեն։ Հաղթանդամ ու հսկա երիտասարդը ցածում կանգ առնելով, հասկանում է ամեն ինչ. հետո, ձեռքի հաստ ցուպը ցած դնում մոմավաճառի մոտ և մի քանի հսկայական քայլերով կտրում տարածությունը։ Հասնում է ատյան, բռնում խանթի թևից և այնպես ցնցում, որ թշվառ երգիչը գալարվում է, դառնում, տեսնում է իր թշնամուն, նրա դեմքը և բոլորովին լռում։

Այդ ժամանակ միայն ամեն ինչ կարգի է ընկնում։ Տեր Հովսեփը շարունակում է աղոթքը, վրա հասնող տիրացուները, աշակերտները շարականներ են սկսում, իսկ տեր Ստեփանի ձայնն այլևս չի լսվում։

Խե՜ղճ տեր Ստեփան։

Եվ ահա լույսն այդ պահուն դրսում բացված, կիսովին դռնից ու բարձրադիր լուսամուտների ապակիներից աղոտ կերպով ներս է թափանցում։

Եկեղեցին լցվում է հետզհետե։ Հասնում են ծերեր, պատանիներ, մանուկներ։ Ամեն կողմ ծնրադնողներ, կրծահարներ, պատկերապաշտներ ու մոմ վառող-խաչակնքողներ։ Հաճախ լսվում են խուլ մռմռոցներ։

Ոմանք մեղմ ձայնով երգում են տիրացուների հետ կամ անգիր կարդում քահանայի հետ։ Երբեմն, մի հեռավոր անկյունից, տարածվում է հորանջելու ձգված ձայն և երբեմն էլ որևէ բարեպաշտ, երկար աղոթք փսփսալուց հետո, հանկարծ բերանը բաց է անում և հորանջելու միջից ձայնում.

— Տե՛ր-ողորմյա, տեր-ողորմյա՛...

Դրսում՝ դռան առաջ երևում են կազմվող և ապա քանդվող խմբեր։ Եկողներ են, որոնք պահ մի կանգ են առնում, միմյանց բարևում, մի քանի խոսք փոխանակում, ապա դռան քարե շրջանակը համբուրում և խաչակնքելով ներս գալիս։ Վանդակորմից երևում են կանայք, որոնք ծալում են նախ սպիտակ սավանները, թևի տակ դնում, ապա կարմիր երկար շապիկով կանգնած՝ սկսում են մի քչփչոց, որ ընդհատվում է կրծահար պառավների աղիողորմ աղոթքներով.

— Մեղա՛ ամենայնի, տե՛ր...

— ... Արարի՛չ աստված, թող զմեղս իմ...

— Հա՛յր երկնավոր, մեղուցյալ եմ առաջի քո...

— Հա՛յր երկնավոր, մեղուցյալ եմ առաջի քո...

Միշտ մեղավոր են ճանաչում իրենց և համոզված են այդ բանում. ուրեմն և զարնվելու, պատժվելու, պատուհասի արժանի...

Այդպես էին աղոթում կանայք վերևում, այդպես էլ տղամարդիկ՝ ներքևում...

Ի՞նչ են եղել արդյոք այժմ այդ բոլորը՝ եկեղեցին ու ձորը. արդյոք ո՞վ է կենդանի մնացել այդ ծանոթ, վշտերով լի, բայց չերմեռանդ ծերունի դեմքերից, այդ կորիճ երիտասարդներից, այդ առողջ, բարեպաշտությամբ աղոթքի կանգնած կանանցից...

Արդյոք հունիսյան այն սև-սև օրերից հետո ձեզնից մեկնումեկը ազատվե՞ց ձեր բազմադարյան չերմեռանդության, կրծահարության և «մեղավորության» շնորհիվ...

1896

ԱՐՏԸ

Անիից էի վերադառնում և անցնում էի հայկական մի գյուղի միջով։

Գիշերը սաստիկ անձրև էր եկել. այնքա՛ն սաստիկ, որ շատ պատեր ու խրճիթներ փլցրել էր։ Փողոցներից հեղեղներ էին վազում քչքչալով։

Երկինքը միաձույլ կապարագույն ամպերով ծածկված էր. դեռ էլի մեկ-մեկ անձրևում էր։

Լույսը նոր էր բացվել։ Կանչում էին մի քանի ուշ մնացած աքաղաղներ, զողանջում էին եկեղեցու զանգակները։ Խրճիթների երդիկներից սկսել էին ծխի սյունակներ խիստ ծանրությամբ բարձրանալ և տարածվել տանիքների վրա։

Ձիուս սանձը քաշեցի. և ո՛չ իսկ արագ քայլել էր հնարավոր. փողոցներում առվակներ էին գոյացել։

Գյուղի վերջին խրճիթին էի հասել, երբ նրա դուռը ճռնչաց, դռի ներսում կովի բառաչը լսվեց, մի քանի մանուկների ճիչեր ականջիս հասան և առաջս դուրս եկավ մի ալեզարդ ծերունի, բահն ուսին։

Մի վայրկան ինձ նայեց, հետո պատերի տակով անցք փնտրեց քայլելու։

Քիչ հետո գյուղից դուրս էինք եկել։ Ես էլ նրա քայլերով սկսեցի գնալ։

Դեմուդեմ, ալիքաձև բարձրանալով, մինչև մշուշալից հորիզոնն էր տարածվում սև լեռնաշղթան։ Նրա կուտակված տարածությունը վերևից թաքնվում էր մառախուղի մեջ և ցածի կողմից ճզփում թացությունով։ Ձյուն էլ, թվում էր որ կար, բայց շա՛տ հեռու. ամպի սպիտակ շերտեր լինեին կարծես։ Թանձր, սևագույն-սպիտակախառն մշուշը ծանրացել էր նաև ձորերի և հովիտների, լեռների և բլուրների շուրջը։ Տեղ-տեղ ցանցաձև, երկնքից գետին իջնող շեշտակի գծերը ցույց էին տալիս, որ խիստ անձրև էր տեղում զանազան կողմերում։ Երևում էր, որ ամպերը դեռ շատ ջուր ունեին և այդ գծերը պիտի քայլեին։ Մշուշի քուլաները թավալվում էին բլրակներն ի վար, քարշ գալիս, ցրվում դեպի դաշտերը... և արոտների կանաչ խոտերը, արտերի ցորենի հասկերը կռացրել էին գլուխները՝ կաթիլների ծանրության տակ։

Ծերունին սկսել էր ավելի հանդարտ քայլել։ Նրա հնամաշ տրեխներից ջուրը հոսում էր գուլպաների մեջ, ոտը թրջում։ Խոնավությունը թափանցում էր բաց կուրծքը և վերարկվի վրա մշուշից կաթիլներ էին դիզվում։

Անցնելով, մի առ մի դիտում էի երկու կողքի արտերը։ Շատերի միայն մի քանի ակոսներն էին ավերվել և մեջտեղում լճակներ գոյացել։

Մի քանիսները լիովին ողողվել էին։ Ջրի հոսանքները արմատախիլ

էին արել, քշել, տարել ցորենի դալար ծիլերը և հավաքել ակոսների մեջ։ Ցեխ էր գոյացել ամեն մի փոքր շավիղի վրա. ամեն մի փոսի մեջ պղտոր կարմրագույն ջուր էր կիտվել և շատ հասկեր լողում էին նրանց երեսների վրա, որպես խեղդվածներ։

— Վա՛խ, վա՛խ,— ասեց ծերունին։

Ու առաջ գնաց։

Բայց վնասն ընդհանրապես շատ մեծ չէր երևում։ Հողը դիմացել էր. երևում էին բոլորովին չփչացած արտեր անգամ. ծիլերը դիմացել էին և այժմ զվարթությամբ ցցել էին սկսում իրենց գլուխները. միայն թե կալին այնպիսիները, որոնք ոտաբոբիկ էին դարձել,— արմատը մերկացրել։ Ջուրն էր այդպես շինել նրանց։

— Է՛հ, փառք աստծո,— խոսեց ծերունին՝ տեսնելով դրանք,— շատ էլ վնաս չի եղել։

— Քո արտն էլ այդպես կլինի, ծերուկ,— սրտապնդեցի նրան։

Անխոս՝ գլուխն երերցուց։ Կասկածում էր. հայացքը միշտ դեպի հեռուներն էին։ Այդպես քայլելով մենք հեռացանք գյուղից և հետո ծռվեցինք դեպի լեռները։

Ծռվելիս՝ ծերունին մի րոպե կանգ առավ և աշխատեց հեռվից նշմարել իր արտի դրությունը։

— Ո՞րն է արտդ։

— Այն բարձրինը։

Ինչ-որ ջրի հեղեղատներ էին հոսում այնտեղ, ջրակույտեր փայլփլում։ Միգուցե այդ ջրերը նրա արտի միջովն են անցել, ամեն ինչ սրբել, տարել։

Ծերունին գոմատվեց։

— Տունս քանդվել է...— մրմնջաց նա։

— Մի՞թե վնասվել է։

— Չգիտեմ դեռ,— ասաց նա խեղդված ձայնով,— կուցե աչքերս չեն տեսնում... ծերացել եմ...

Առաջ գնացինք։ Մոտենում էինք։ Քայլելն ավելի դժվարանում էր. վերևից գրեթե ցեխի հեղեղ էր, որ իջնում էր ցած, խառն՝ ծիլերով, ցողուններով...

Ծերունին հևում էր. շունչը կտրվել էր։ Քիչ էլ քայլեցինք։ Է՛լ կանաչ չէր երևում, է՛լ ոչինչ. ցեխի հեղեղ և ջուր էր, որ տեսնում էինք. ավերիչ, ապականիչ հեղեղ...

Մի քանի քայլ անելուց հետո կանգ առավ ծերունին և բահը ուսից ցած թողեց։

Իր արտի կողքին էր։ Թշվառ արտ...

Վերևից, փոսերի մեջ կոյացած ջրերը պատռել էին իրենց թումբերը, ուժգնությամբ ցած հոսել և գրեթե սրբել էին արտը։ Տեղ-տեղ օազիսների պես մնացել, իրենց մերկ արմատներն էին ցույց տալիս՝ ցորենի ծիլի կղզյակներ։ Երկար, կանաչ երկար շերտեր միմյանց վրա, արմատախիլ, ջարդված, հոգեվարք, սահել էին ամեն ուղղությամբ և թաթախվել ցեխով։ Ոմանք մինչև վիզը խրվել, ուրիշները հազիվ էին երևում։

Հողն ամբողջ կանաչել էր նրանց դիակներով...

Եվ անձրևը տեղում էր, տեղում ու իր խոշոր կաթիլներով ճզմփացնում լճացած ջրերը։

Ընկավ բահը ծերունու ձեռքից. աչքերը մթնեցին, ծնկները կթոտեց և նա տեղնուտեղը, իր ընտանիքին կերակրող ցորենի դիակների կողքին նստեց ու գլուխը ձեռքերի մեջ ծածկեց...

Ձիս քշեցի և հեռացա։ Մխիթարական ո՛չ մի խոսք ասելու սիրտը չունեցա։

Եվ երբ հեռվից ետ նայեցի, տեսա թշվառ ծերունուն միշտ նույն դիրքի մեջ, նստած իր ավերված արտի կողքին, գլուխը ձեռքերին և ալեզարդ մազերը տեղացող անձրևի տակ...

ՁՎԱՐՃԱՑԱՆՔ...

1

Լուսնկա գիշեր էր այդ օրը։ Ընթրել վերջացրել էինք, հորս աչքերը փակվում էին, ես ու Կարապետը օդան էինք ուզում ելնել, երբ գրսում գամփռը սկսեց կատաղի կերպով հաչել։

Հայրս վերցրեց պատին դեմ տված ցուպը և դուրս թռավ. մենք էլ հետևեցինք նրան։

— Աս ո՞ւր եք...— լսվում էր շան ձայնի հետ,— սա քյոփեկին ձայնը չկտրե՞ք... աս ի՞նչ կատաղած գազան է, ծո՛...

Քյուրյուկչին էր, այն պոլսեցի երիտասարդը, որ մեր գյուղն էր եկել, ընկույզի կոճղեր գտնելու համար։

Հայրս ազատեց նրան Բառոյի ձեռքից և ներս բերեց։

— Ո՛ւֆ...— արավ երիտասարդը ներս ընկնելով,— ինչ ալ խոշո՛ռն է, քիչ մնաց բզկտեր ինձի։

Ապա մեզ դարձավ ու բարևեց։ Հորս հետ դեռ ծանոթ չէր։ Ծանոթացրի։

— Հա՞, հա՞յրդ է, բարիկուն, աղաս, ինտո՞ր ես, աղեկ ես... դե՛հ, վեր երթանք։

Եվ ելանք։ Հոսոսը միշտ ետ էր նայում՝ շան հարձակման ազդեցության տակ լինելով դեռ։

— Միամիտ եղիր,— ասաց հայրս,— Բառոն խելոք շուն է։

— Խելո՞ք... ամա՜ խելոք. ըսիր ու ընցար. քիչ մնաց ուտեր պիտի ինձի։ Դե՛հ, ըսեք նայինք, ինտո՞ր եք։ Գիտնաք՝ որքա՜ն ուրախ եմ ձեզի տեսնելուս, ադա՛մ (մարդ). 6 օր է պայթեցա բե՜... Ոչ ինձի կհասկանան, ոչ ալ ես իրենց. եթե ժամերնին չըլլար, հիչ չպիտի կարծեի, թե հայ են... Աղվոր օդա ունիս, աղաս։

— Կնի՛կ, հաց բեր,— կանչեց հայրս՝ դեպի ներքև կռանալով։

— Հա՞ց,— ասաց պոլսեցին,— դեռ չե՞ք ընթրած։

— Մենք ընթրել ենք,— պատասխանեցի,— ձեզ համար է։

— Ինձի՞ ... Ձէ, ախպար, անանկ ընթրիք մը ըրի, որ փաշան անգամ չի կրնար երազել... Ծո աս ի՞նչ երկիր է. յուղը ջրի պես, սերը մածունի պես, գինին աղվոր, անուշ... Ի՞նչ բնություն, ի՞նչ անտառներ, ջրեր, ձոր, պարտեզներ...

— Նստեցե՛ք,— հրամցրի նրան և հորս էլ հասկացրի, որ պոլսեցին ընթրել էր։

— Ուրեմն թող գինի և մազա բերե,— հրամայեց հայրս։

Նստեցինք մինդերների[1] վրա։ Սկսվեց մի սովորական խոսակցություն, գինու կուռիկը (հողե թաս) պտտեց, և երբ երկրորդ անգամ պոլսեցին պատարկում էր նրան, թաշկինակով ճակատը սրբեց ու ասաց.

— Խիստ տաք է, ռես Սարոյի այգին աղեկ էր. հոն էինք նստեր ընթրելու. կանաչ խոտ, սիրուն զովություն մը...

— Մենք էլ ունենք այդպես այգի,— ասացի ես։

— Հա՞, ապա ո՞ւր ենք նստեր հոս. հայդե նայի՛նք, երթանք այգին... Հոգ մի ըներ դուն, տղաս,— դարձավ նա հորս,— ամեն բան մենք կփոխագրենք, դե՛հ, ելեք երթանք...

Հայրս, որ մի տեսակ ներողամիտ ժպիտով գիտում էր զվարթ երիտասարդին, թույլ տվավ ելնելու։

— Լավ,— ասաց նա ելնելով,— գնանք։

Ու ոտքի ելանք. ես մինդերները վերցրի, Կարապետը՝ ճրագը, պոլսեցին շտապեց գինու պոզիկը վերցնել և իշանք դեպի այգին։ Եղբայրս ներս ու քույրերս քնից վեր թռած՝ հետաքրքրությամբ դիտում էին մեր արշավանքը։

Գնացինք ընկուզենու տակ, հոսող առվակի եզրին տարածեցինք

1 Փոքրիկ գոշակներ (ներքնակ)։

ներքնակները, և երբ բոլորս տեղավորվել էինք, պոլսեցին գինի լցրեց և գոչեց.

— Ըշտե տեսա՞ր մի. հոս մարդ կրնա ուտել ալ, խմել ալ, բռռալ ալ Շատոնց է, որ քեֆ մը չէի ըրեր... երգ մը պիտի երգեմ որ...

Եվ սկսեց մի զորեղ, հնչուն ձայնով կանչել։ Նախ մեր շունը, ապա դրացունը ոռնալ սկսեցին. մյուսներն էլ արձագանք տվին նրանց, և աղմուկն ընկավ գյուղը։

Դրացիները սկսեցին զարթնել, նախ մոտենալ այգուն, ապա ներս մտնել և ամենայն պարզությամբ, ժպիտը երեսներին՝ տեղ բռնել հորդ կողքին։ Սա ընդունում էր ամենքի ողջույնը, բացատրում, թե ինչպես զվարթ մարդ էր «քյուֆյուկչի» էֆենդին ու բոլորին էլ գինով հյուրասիրում։

Շուտով երևաց նաև ռես Սարոն։ Լուրը արագությամբ տարածվել էր գյուղում։ Կես ժամվա մեջ գյուղի կեսը հավաքվել էր մեր շուրջը։ Մթան մեջ ամեն կողմ շարժվում էին շապկանց ու կիսամերկ մանուկներ, կանանց ստվերներ՝ պատերի ու ծառերի ետևից։

Շուքի միջից մի առ մի երևան էին գալիս երիտասարդներ էլ, որոնք վարակվելով պոլսեցու զվարթությունից, սկսում էին խմել. հետո չոր փայտեր ժողովեցին, կիտեցին, կրակ տվին ու մի մեծ խարույկ կազմեցին ընկուզենու կողքին։

Սկսելով մասնավորապես, քեֆը ընդհանուր կերպարանք էր ստանում։ Պոլսեցին ամենքին զվարճացնում էր, ամենքի հետ խոսում, կատակում, գինի հրամցնում և վաղեմի ծանոթի պես՝ նրանց վիճակի մասին հարց տալիս։

Գյուղի մեջ տարածվել էր, որ մեր այգում քեֆ կար։

Խարույկը մեծանում էր, բազմությունը ավելանում։

Խոսում էին, վիճում, գոռգոռում. գյուղի շները հաչում էին, և գիշերապահները մի առ մի մտնում էին այգին պահ մի զվարճանալու։

— Հայդե նայի՛նք,— գոռում էր քյուֆյուկչին ավելի և ավելի ոգևորվելով,— քեֆ ըրեք, բարեկամներս, վաղը ձեր ընկուզենիները պիտի գնեմ. քար ալ ըլա մեջը՝ պիտի գնեմ... խմե՛ք... Կարապետ էֆենդի, կնանցը. ի՞նչ ես լուռումունջ նստեր, քե՛ֆ ըրե...

2

Ահա այդպես էր, որ սկսեցինք զվարճանալ ամառնավերջի մի շքեղ գիշեր՝ մեր պարտեզի ամենագեղեցիկ մի անկյունում։

Այդտեղ էր գրեթե ամբողջ գյուղը. ծերունիները մի կողմ հավաքված, կիսամթան մեջ, քահանան իրենց կողքին՝ խոսում էին, ծիծաղում։ Ամ-

պաքեզը երիտասարդներին էր. ամենքի մոտ կար պոզիկով (հողե ման) գինի, մազա... քիչ հետո գտնվեց նաև սրնգահարը, և ահա սկսվեց երգ ու պար։ Պոլսեցին ուրախությունից կորցրել էր իրեն։

Պարի համար վեր թռան տաս-տասնհինգ հոգի, ձեռք ձեռքի տվին, փողհարը մեջտեղ անցավ։ Սկսելով ծանր, հանդարտ ու շորոր՝ ըստ սովորականին, ժողովրդական կաքավը աստիճանաբար աշխուժանում էր, թեթևանում, ոստոստուն դառնում։ Պարողները ոգևորվում էին միմյանց ձեռքից բռնած՝ մեծ կիսաշրջանով ցատկոտում էին նրանք խարույկի շուրջը։

Քիչ-քիչ կայտառացան ու մեծացան ոստումները, դեմքերը լուսավորված խարույկի մթնշաղախ կարմիր լուսով, վառվռուն շղերը ուռած, քրտնաթոր, աչքերը շողշողուն ու շարժուն, նրանք ծռմռվում էին, ոստոստում կատաղի արագությամբ և խռպոտ ու ընդհատ ձայներով երգում...

Եվ այդ պարը երկարում էր, աճում ու մեծանում։ Կռանում էին գլուխներ, բարձրանում, մարմինները ճկվում, ոլորտվում ամեն ուղղությամբ, ոտները բարձրանում ու իջնում, և շղթան օձապտույտ չվանի պես ձգվում էր՝ սահում ճաթճթող խարույկի շուրջը...

Ո՛չ ես էի խոսում, ո՛չ Կարապետը։ Մեզ գրավել էին էքստազի հասած կատաղի պարն ու պարողների վայրենի շարժվածքները։ Պոլսեցին ապշած նայում էր. սկզբում փորձել էր մասնակցել, բայց երկու անգամ քարշ էր եկել գետնի վրա, իսկ հետո նրան դուրս էին շպրտել շղթայի միջից...

Եվ ահա այդ ժամանակն էր, որ հանկարծ մի գյուղացի, հուզված ու շնչասպառ ցատկեց շրջանի մեջ մտավ և սրան-նրան նայելով գոչեց.

— Ո՞ւր է ռեսը։

Փողհարը կանգ առավ, պարողները դադար առին, շրջանը խորտակվեց։

Եվ մինչ ամեն ոք իր քրտինքն էր սրբում, ռես Սարոն մոտեցավ եկող գյուղացուն.

— Ինչ կա, Կարո՛,—հարցրեց նա։

— Շուտ,— գոչեց գյուղացին,—գնանք,—հարկահանը գյուղ մտավ...

Այդ լուրը կայծակի ազդեցություն թողեց. մի րոպե ամեն ինչ քարացավ, հետո ամենքը վեր ցատկեցին։ Համփաները[1] իսկույն ցրվեցին, ռեսը երկու ոստյունով դուրս թռավ այգուց, և պարողները անհետացան դեպի մութ կողմերը։

— Տղերք,— կանչեց հորեղբայրս,—շուտ խարույկը մարեք, քանի հարկահանը չի իմացել...

---

[1] Գյուղական իշխանները։

Եվ օրինակ տալու համար, մոտեցավ ճրագին ու մի շնչով հանգցրեց։

Ամեն ոք հասկացավ, թե հորեղբայրս ի՞նչ էր ուզում ասել։ Մի բոպեի մեջ խարույկը հանգավ։ Հայրս և մի քանի գյուղացիներ եղածները նեքս տարան, լռություն տիրեց, և հինգ բոպեից հետո այգում ոչ ոք չմնաց։

Պոլսեցին սառել էր. ոչ պակաս զարմացած էր նաև Կարապետը։

— Աս ի՞նչ է, ծո՛,— գոռում էր քյուֆյուկչին,— աս ի՞նչ խայտառակություն է, ինչու ցրվեցան, ի՞նչ է եղեր... ըսեք, ճաթիմ պիտի հիմա...

Հայրս անհանդարտ՝ նայում էր շուրջը, և երբ ամեն ինչ վերջացել էր, ու լռությունը այնպես տիրել, որ կարծես գյուղն ամբողջ ննջում էր, հորեղբայրս ասաց.

— Վայ է, եթե ուզը պատմի նրան այս քեֆի մասին. էգուց մեկին տասը պիտի տուժենք։

— Բայց ինչո՞ւ,— հարցրեց Կարապետը,— ի՞նչ ունեք վախենալու։ Հարկահանը ի՞նչ իրավունք ունի ձեզ արգելել քեֆ անելու։

Հորեղբայրս դառնությամբ ժպտաց։

—Իրավունք չունի,— ասաց նա,— բայց էգուց երբ գործի սկսի, բոլորիս հոգին էլ կհանի...— «Քե՞ֆ էիք անում,— կասի,— ուրեմն ունեք՝ որ անում եք. դե՛հ, քանի որ ունեք, տվեք ուրեմն»... Եվ երևակայիր մնացածը ինքդ...

Հորեղբայրս իրավունք ուներ։ Դառն փորձերը սովորեցրել էին նրան այն, որ մենք իրավունք չունենք մի՛ բոպե անգամ մոռանալ մեր ցավերը, մեր դահիճները. իրավունք չունենք մի բոպե անգամ զվարճանալ, վախենալով, որ շատ ծանր ու թանկ չնստեր այդ մոռացությունը...

— Այո,— շարունակեց հորեղբայրս,— դրանց մոտ ծիծաղել անգամ ազատությամբ չես կարող. կկարծեն, թե հարուստ ես և ինչ որ ունես՝ ձեռքիցդ կառնեն։ Չես կարող մի մաքուր շապիկ, մի նոր կոշիկ հագնել... Ա՛հ, նոր կոշի՞կ... Անցյալ տարի չէ՞ր, որ Կալոյենց Առաքելը կալերի ժամանակ նոր կոշիկ էր առել ու չէր համարձակվում հագնել, որովհետև շահնան (հարկահանը) գյուղումն էր։ Ամբողջ տասն օր ոտաբոբիկ էր ման գալիս՝ մինչև շահնայի գնալը...

Գնանք, գնանք, մենք էլ ցրվենք, կարող են մեզ հավաքված տեսնել և դա էլ թանկ նստեցնել...

Եվ ցրվեցինք, թողնելով պլպլալու՝ քիչ առաջ բոցեր արձակող և այժմ հոգեվարքի մեջ ընկած խարույկի մնացորդը...

Ահա այդպես էր, որ զվարճացանք մենք ամառնավերջի մի շքեղ գիշեր, մեր պարտեզի ամենագեղեցիկ անկյունում...

1897

ԾՈՎԻ ՎՐԱ

1

Դեպի Աղթամար էինք գնում աշնանային մի զով գիշերով։ Գյուղից եկած, ծովափի ավազաների մեջ կանգ էի առել և սպասում էի քահանային, որի հետ խոսք էինք արել միասին ճանապարհորդելու։

Վերջապես էի դիտում Վանա ծովի վրա։ Ջուրը լերդ կանաչ էր կարել. կոհակները միմյանց հրելով հեռանում էին դեպի խորքերը և ծփփուրի գծեր կազմում. հեռվում երևում էին եզերքների գյուղերը, ծառուտները. մի այլ կողմում Աղթամար կղզու կեսն էր, հորիզոնի մի կողմի վրա՝ Կտուց անապատը, իսկ մյուսի՝ Առտեր կղզին, որ մի մեծ ձուկի նման՝ երբեմն կարծես ընկղմում էր ջրի մեջ և երբեմն դուրս ցցում իր ժայռոտ լերկ գանգը։

Մայր մտնող արեգակն այդ միջոցին աղոտ ճառագայթներով խաղում էր ջրերի հետ ու լայն, լուսավոր ուղի գծում մինչև ափը. նրա դեմքը նման էր հրաշեկ գնդակի, որ հետզհետե ընկղմվում էր փրփրալից սև ջրի մեջ և լուսավորում գլխի վրայի ամպերը, նրանց եզերքներին վարդագույն աննման ժապավեններ կազմում և դիմացի մի այլ ամպի էլ բոցավառ ու անշարժ խարույկի տեսք տալիս։

Նավավար Թորոսն այդ միջոցին նավակի քիթը ցցել էր ավազի մեջ և մի քանի գյուղացիների օգնությամբ նավակն էր մտցնում ոչխարները։

Մինչ այդ՝ արեգակը հետզհետե ընդղմվում էր, ամպերը մեղմացնում էին իրենց բոցը, լուսո շառավիղը աղոտանում էր, ծովը թանաքի գույն ստանում, կոհակները մեծանում էին, ֆոսֆորային կայծեր արձակում և միմյանց մղելով՝ գալիս շառաչյունով փռվում էին ոտներիս տակ։ Եվ Առտերը թաքնվում էր խավարի մեջ, Կտուցը անորոշ կերպարանք ստանում ու եզերային ծառերը և գյուղերը նմանում էին մռայլ ստվերների։

Մի ձայն սթափեցրեց ինձ։ Քահանան էր. ձեռին բռնել էր մեծ կապոց, ապա մի հողե ման։

— Գնանք, որդի,— ասաց նա,— նավ մտնենք։

Ու մտանք։ Պատրաստ էր։ Քահանան քղանցքը ծալելով ոլորեց, մեջքի վրա ցցեց, կապոցն ու գիեին ցած դրավ ոտների մոտ։ Հետո, երբ ես կաթնած կայմին՝ նայում էի սև ջրերին, դարձավ դեպի արևելք և կարդաց.

— Տեր, ուղղեա մեզ զգնացս մեր...

Եվ այդ խուլ աղոթքը, խառնվելով կոհակների շառաչյունին, նավակի ծփման ու Թորոսի՝ պարբերաբար նավակից շերեփով ջուր դուրս թափելուն, մի խոր տպավորություն էր սփռում շուրջը։

Բարձրում, գյուղի մեջ, տեղ-տեղ պլպլում էին ճրագներ, հեռում՝ անտառի ծայրերում, երևում էին նախրորդների և ածխագործների կրակները. իսկ անտառի ստորոտներն ընկղմվել էին խավարի մեջ։

Վերջապես շարժվեցինք։ Թորոսը դադարեց ջուր դուրս թափելուց, հրամայեց առագաստ պարզել և թռավ ափի վրա, որպեսզի նավակը ջուրը մղե։

Ծովի տարածության հորիզոնից սկսում էր երևալ լուսնի կեսը՝ արծաթազօծ կողերով հայելու նման, և լույսի մեջ ողողել դողդոջուն ջուրը։

— Սիրուն է, չէ՞, մեր ծովը,— ասաց քահանան,— Մարդ նայելուց չի կշտանում... Բայց շատ էլ կատաղի է անիծածը... Աստված անի, որ փոթորիկ չբարձրանա...

Հետո դարձավ նավավարին և գոչեց.

— Թորոս, փոթորիկ կունենա՞նք։

— Չէ՛, տե՛ր-հայր։

Մեջքը դեմ էր տվել նավակին։ Ասաց, ուժ տվավ, սահեցրեց դեպի ջուրը և ապա ցատկեց նրա մեջ ու դարձավ նավաստիներին։

— Առագա՛ստը...— աղաղակեց նա։

Ու նավակը շրջան գործեց, պատռեց ջուրը. առագաստը արագությամբ բարձրացած՝ ուռավ, մենք ծովեցինք մի կողմի վրա ու առաջ սլացանք։

— Ցա Նարեկա սուրբ ճգնարան,— ասաց Թորոսը, քոլոզը հանեց, խաչակնքեց, հետո նորից դրեց և, որպես թե խոսքը կիսատ էր թողել, դիմեց քահանային.

— Չէ՛, տե՛ր-հայր, աստծու ողորմությունով փոթորիկ չենք ունենա. բայց ալեկոծության խոսք չունեմ, քիչ-միչ...

Նավակը սլանում էր և հետքերի վրա պայծառ գիծ թողնում. երբեմն կողը այնքան ծռում էր, որ ձեռքս կոխում էի ջրերի մեջ և թույլ տալիս, որ մատներիս ծայրերից կաթկթեն շողշողուն շիթեր։

Կղզիներն անհետացել էին. խավար խորքի մեջ ափն էր, այսինքն, Ներբոլթ և Գրգուռ լեռների կույտը և հեռվում Սիփանը իր ձյունափայլ կատարով։ Փչում էր ծովային զով, գրեթե ցուրտ քամի։

Քահանան ցրտից սկսել էր դողալ, մեկմեկու վրա գինու բաժակ էր գատարկում ու մռմռում.

— Կարծես ցուրտ է, հը՞... չե՞ս ուզում, վարժապե՛տ։

Ու ինքն էր խմում։ Ես էլ խմեցի. մի բաժակ էլ Թորոսը կոնծեց, հետո բարձրացավ դեպի մեզ իջնող ցանցաձև հովանոցը և ծածկեց նրան մի կտավով։

— Խմեցեք...,— բացականչեց քահանան տաքացած,— կեր, արբ և ուրախ լեր... առ, առ սա փոխինդից... մի տաղ էլ ասա՝ լսենք. կարդացվող մարդ ես, ազգային տաղեր շա՛տ կգիտենաս...

Եվ ես, նայելով իմ հայրենի ծովին, հիշեցի հայ բանաստեղծի խոսքերը.

— Ձա՛յն տուր, ո՛վ ծովակ...

Ու երգեցի. ձայնս տարածվում էր ջրերի վրա դեպի հեռուները և կարծես դողդողում էր թարմ օդի բարձրերում։

Ծովի ալիքները մեծանում էին, նավակը սկսում էր մեծապես շարժվել։ Քիչ հետո քահանան պառկեց, իսկ ես մի տեսակ անշարժության մեջ, աչքս լուսնի շողքի տակ սրթսրթացող կապույտ ջրերի վրա հառած՝ խորասուզվեցի երազների մեջ...

Թորոսի ձայնը սթափեցրեց ինձ։

— Կմրսես, վարժապե՛տ,— ասում էր նա.— քնի՛ր. հիմա մեծ ալեկոծություն կսկսի։

— Քունս չի տանում, իսկ ալեկոծությունը սիրում եմ։

— Ուրեմն այստեղ ինձ մոտ արի, որ ալեկոծություն տեսնես...

Նստելու տեղ կա։ Բայց ծածկոցդ վերցրու, որ մեջը փաթաթվես։

Վերցրի ծածկոցս և Թորոսի կողքին տեղավորվեցի։

2

— Կատաղի ծով ունենք,— խոսեց Թորոսը,— անցյալ տարի հենց այս կողմերումն էր, որ մի Ավանցու նավակ ընկղմվեց և մոտ քառասուն հոգի խեղդեց։

— Քառասո՞ւն...

— Մեջն էլ մի քահանա կար ու երկու կանայք։ Աղթամար ուխտի էին գնում խեղճերը... Տե՛ս, վարժապե՛տ, քիչ դեպի աջ նայիր. այդ ալիքները տեսնո՞ւմ ես. մեծանալու-մեծանալու են և ծովը օրորեն... ը՛հը, եկան... չվախենաս...

Հեռվից, իջնելով ու ելնելով, թանձր կանաչագույն մի քանի խոշոր կոհակներ, հավաքվելով ուրիշ շատերի հետ, մեծացան ու հուզված, սլացան դեպի նավակը։ Մի ընդհանուր շարժումով ջրերը նավակի շորս կողմից ետ քաշվելով՝ փոսացան, ապա նորից դիզացան եկող կոհակների հետ, և երբ նավակը շյուղի պես նրանց կատարի վրա էր թռնում,

պայթյունով ճայթեցին նրա կողին ու ջրի մի լեղի անձրև տեղացին մեզ վրա։

— Այս առաջինն է,— ասաց Թորոսը և ղեկը դարձրեց։— Դեռ սա ի՞նչ է որ,— շարունակեց նա,— այնպե՞ս սոսկալի սարեր են կազմում, այնպե՞ս կատաղաբար, երկու ածդահաների նման, միմյանց վրա գահավիժում ու թավալում, որ, աստված մի՛ արասցե, եթե նավակը մեկ ընկնի, փշուր-փշուր կլինի... Բայց փոթորիկ չենք ունենա... Հրամանքդ առաջին անգա՞մն ես մեր ծովի վրա...

— Առաջին անգամն է։

— Շնորհքը կտեսնես մի քիչ... Անցյալ օրն էր, որ տակովն արավ հինգ նավակ՝ բոլորն էլ ցորեն և ոչխար բարձած։ Մի ամբողջ գյուղի տունը գրեթե ավերեց, ունեցած-չունեցածը ջուրը թափեց...

— Ծախելո՞ւ էին տանում։

— Այո՛, Վան էին գնում... Նավավարներից երկուսը ազատվել են, մյուսները խեղդվել։

— Ձե՞ր գյուղերից էր։

— Ոչ... Ալշավազից էին. լուրը երեկ բերին մեզ... Բայց, վարժապետ, չէ՞ որ ալշավազցոց ցավերն էլ մերինների նման են. մեր սիրտն էլ են դաղում նրանց դժբախտությունները... Անցի՛ր ձախ կողմս, որ էլի չթրջվես։

Անցա ձախ կողմը։ Նորից մի ալիք պայթեց նավակի կողի վրա և լվաց նրա ցոուկը։

— Այո՛,— շարունակեց Թորոսը,— ծովն անգամ զուլումանում է մեզ։ Սրանից տասն օր առաջ հարկահանի ցորենաբարձ նավակները ճանապարհ ընկան։ Մի զարմանալի՛ բան էր... Առաջին օրը ծովը փոթորկից տրաքում էր. բայց հանկարծ հանդարտեց, և անիրավությամբ հավաքված ցորենը տեղ հասավ անվնաս... Այդ դեմքը ծուռ մուրտառին տեսնո՞ւմ ես...

— Ո՞վ։

— Լուսինը... Այնպես լուսավորել սկսեց, որ կարծես թե ծաղրում էր մեզ։ Իմ նավակը բերնեբերան լցրել էին.. Ոստան իշանք. մի հատիկ խակ չկորսվեց. հարկահանի ոտքը ուրախությունից գետնին չէր դիպչում...

— Դիպվա՞ծ...— ասացի ես։

— Դիպվա՞ծ...— գոչեց Թորոսը բարկությամբ և աջ ձեռքի թիակը գեմ տվավ.— դիպվա՞ծ... Ինչո՞ւ այդ դիպվածը քոռանում է, երբ մեր արդար քրտինքն է մեջտեղ գալիս, երբ մեր ցորենն է գնում, մեր ոչխարները... Չէ, վարժապետ, մենք մի անիծված ազգ ենք...

— Այդպես մի խոսի, Թորոս, մենք ի՞նչ ենք արել, որ անիծված լինենք։

— Չգիտեմ. հավատա, որ չգիտեմ... Ապա ինչո՞ւ ամբողջ տարին ապրում ենք, սիրտ ենք մաշում, դողում ենք, երբ երկնքի վրա ամպ չկա, ուրախությունից գժվում, երբ անձրև է գալիս, ահագին կռիվներ ենք սարքում միմյանց մեջ՝ մի հասկ ցորենի համար, մեր բերնից կտրում ենք, մեր երեխայոց մերկ թողնում, արևի տակ ճենճերվում, խանձվում ենք, ձեռքներս կոշտանում... Քամում ենք, հավաքում, աշխատում ենք մի խիլ անգամ չկորցնել և հետո՞... հետո գալիս են մի այուրու գայլեր, խփում են մեր գլխին և մեծ մասը տանում, իսկ մյուսը, երբ ուզում ենք գործադրել— ծովն է կուլ տալիս... է՜հ...— արեց, հուզմամբ դարձրեց ղեկի բռնատեղին և նայեց լուսնին։

— Ձեզ ո՞վ է ասում տվեք՝ ինչ-որ ուզեն,— ասացի ես,— եթե մեծ մասը չտաք, այս փոքր մասի՝ ջրի մեջ կորսվելը, որ պատահմամբ է լինում և ո՛չ միշտ, ձեզ շատ չի վշտացնի։

— Չտա՛լ, չտա՛լ... Մի քանի տարի է, որ քեզ նմանները այդպես են գոռում... Չտա՛լ... Ինձնից ավելի համարձակ, ինձնից ավելի ընդդիմադրող չկա գյուղում... Եվ ինձնից ավելի վնասվողն էլ չկա։ Գյուղացիք անգամ ինձ անվարվեցող են կոչում, նախատում են... անունս «ծուռ» են դրել. հարկահավաքին էլ ասում են՝ «բանի տեղ մի դնի, Թորոսը հանաք է անում»... Եվ հարկահանն էլ ինձ «կատակով» ավելի է նեղացնում, ինձնից ավելի վերցնում, հետո նույն տեսակ «կատակով» նավակս լցնում և հրամայում, որ ձրի փոխադրեմ... Աստված է վկա, քանի՜-քանի՜ անգամ ուզեցի նավակը ընկղմել, ցորենն էլ ու շահնային էլ ջուրը թափել, ինձ էլ հետը, բայց... այս անիծած կրծքի տակ սիրտ կա, խիղճ կա...

Եվ երկու ուժգին հարված տվեց կրծքին, որից դուրս թռավ մի խոր հառաչ։

— Իմ ձեռքս չէ՞...— շարունակեց նա,— ա՛յ, որ ղեկը այսպես դարձնեմ, ալիքները դեմ կգան ու կփշրեն ամեն ինչ։ Ո՞վ կիմանա... Ես էլ լողալով կամ կազատվեի կամ ոչ... շատ էլ մեկ ազատվելու պակաս չունեի, կմեռնեի՝ այդ ավելի լավ էր... Բայց վերև աստված կա, որ դատում է մեզ, այստեղ խիղճ կա։ Ո՞ր մեկին ջրով անես, ո՞ր մեկի հավաքածը ջուրը թափես. ինչո՞ւ, դրանով կազատվե՞նք այդ անիրավներից... Այս ալիքները տեսնում ես. հավատացած եմ, որ եթե նավակիս միջի ոչխարները Մկրտիչ աղայինը՝ վաշխառուինը չլինեին և ինձ կամ մի գյուղացու պատկանեին, իսկույն նավակը շուռ կգար, կփշրվեր... Բայց անիրավ ապրանք է, և պիտի տեսնես՝ ողջ տեղ է հասնելու։ Մի պատիրոս չունե՞ս, վարժապետ...

Շինեցի ու տվի։ Վառեց, բուռն շնչով մի քանի անգամ ծխեց և դեմքը խոժոռ, վշտերով ակոսված, լուսնի տխուր փայլի տակ՝ դեպի հորիզոնն ուղղած, մնաց լուռ ու մտախոհ...

Ու նավակը սրանում էր, ճեղքում սև ջրերը և ծփում մեծ ալիքների վրա...

1897

ԱՐՑԱՆ ԲԾԵՐ

1

Խնուսի լեռների մեջ, մի բարձրավանդակ կանաչ տափարակի վրա, գիներբուկների արմատը գգվող վճիտ առվակի եզերքին հանգչելու իջանք։

Մթնում էր։ Գարնանային ցուրտ երեկո էր։

Վերարկուները գետնի վրա տարածեցինք, չոր մացառներից խարույկ կազմեցինք ու պայծառ, բայց անլուսին երկնքի տակ ընկողմանած՝ քիչ շունչ առանք։

Հովիտ էր, բարձրավանդակ փոքրիկ հովիտ, որ իր մի եզրով գահավանդ էր կազմում դեպի դաշտը, իսկ մյուս բերանը բաց էր անում դեպի ահռելի անդունդ, ուր ջրվեժ առ ջրվեժ ոստոստում-վիժում էր գարնանային հեղեղներից մեծացած մի պղտոր գետակ։

Դեմ առ դեմ լեռը սանդուղաձև ելնելով մարում էր մշուշի մեջ. նրա կրծքի վրա, դեպի դաշտը կռացած՝ սևին էին տալիս անտաշ մանր քարերից բաղկացած շենքերի մնացորդներ, որոնք այժմ անտեր՝ փուլ էին եկել, գլորվել դեպի ցած ու քարադեզեր կազմել։

Այդտեղ էր ահա, որ հանգչել էինք ուզում։

Երբ քիչ տեղավորվեցինք ու հաց կերանք, մեզնից մեկը, որ սրինգ էր ածում, նստեց ու սկսեց նվագել։ Թիկն տված, հայացքս փուլ եկած շենքերի ավերակներին, լսում էի մելամաղձոտ գիշերերգը, որ խոպոտ հեկեկանքներով՝ հայրենիքի աղետներն էր արտասվում, նրա թշվառությունը ողբում...

Իսկ լեռը, քանի գնում էր, ստվեր էր մեծացնում ու հովտի կեսը մթության մեջ առնում։ Երբեմն հեռվից լսվում էր բուի տխուր վայունը, ապա հանկարծ, դաշտի կողմից ականջիս էին հասնում հեռավոր անգենդային ոռնոցներ, որոնք քամնեցուցիչ շեշտերով օդն էին պատռում։

խարույկը մի կողմի վրա պլպլում էր, ճաթճթում էր ու հետզհետե իջնում ու աղոտանում. կչկչան առվակն էլ կարծես երբեմն լռում էր ու թաքնվում և երբեմն՝ շշուկով՝ դուրս նետվում-գալարվում դեպի հեռուն։ Իր հետքերի վրա մի տխուր մրմունջ տարածում...

Հանկարծ մեզ հետ վերցրած գամփռը սկսեց կատաղի կերպով հաչել և հարձակվել հովտի մութ կողմի վրա։

Սրինգը լռեց, ընկերս վեր թռավ և հրացան ի բռին՝ առաջ գնաց գամփռի ետևից, իսկ մենք հեռացանք խարույկի լույսից և մթան մեջ սպասեցինք։

Ճանապարհի վրայից լսվում էին ձայներ, ճիշտ կլիներ ասել՝ հառաչներ, լաց... Կարծես մանուկներ էին, որոնք ճչում էին, աղիողորմ կերպով ողբում։

— Ո՞վ է այն,— կանչեց ընկերս։

Եկողները կանգ առան, ու լռություն տիրեց։

Մանուկներին՝ թվում էր, որ սաստում էին լռելու. մինչ իսկ ձեռնելով փակել էին ճգնում նրանց աղաղակող բերանը։

— Գյուղացիներ են,— ասաց ուղեկիցներից մեկը,— կին ու տղա ունեն հետները։

— Իսկ եթե քրդեր են և գյուղերից թալան են տանո՞ւմ,— առարկեց մի ուրիշը։

— Լույսի՛ եկեք, ո՞վ է,— գոռաց մեր գլխավորը,— լույսի մեջ եկեք, ապա թե ոչ՝ կհրացանեմ։

Այն ժամանակ խմբից բաժանվեցին մի քանի հոգի և առաջացան դեպի լույսը։

Գյուղացիներ էին, հայ գյուղացիներ, մեջքերի վրա կապած տոպրակներ, կքված նրանց տակ։ Գունատ էին, փոշոտ, մանավանդ ցեխոտ. հազիվ կարողանում էին ոտքի վրա կանգնած մնալ։

— Ցամա՞ն, աղաներ,— ձայնեց իսկույն նրանցից մեկը,— տեսնում եմ, որ հայ եք, թողեք այս գիշեր ձեր կողքին ցած ընկնենք, հանգստանանք, կոտորվեցինք քաղցից, հոգնությունից... սաղ օրը քայլում ենք։

— Ո՞ւր եք գնում,— հարցրի ես,— և որտեղի՞ց եք գալիս։

— Ես գիտե՞մ,— ասաց ծերունին և լռեց. մյուսը խոսեց նրա փոխարեն։ Մի երիտասարդ էր խամրած աչքերով և թույլ կեցվածքով, ուժ չկար վրան։

— Մենք էլ չգիտենք,— ասաց նա.— ցածի գյուղերից ենք, գնում ենք այնտեղ, ուր մեզ չեն սպանի, չեն չարչարի։

Դաշտից էին, այն գյուղերից, որոնց երեկ էր, որ քրդերը այրել, կոտորել ու ավերակ էին դարձրել։ Խնուսի փշրված, արյունով կարմրած

գժբախտ գյուղերից էին. ո՞վ գիտե, գուցե միակ ողջ մնացածները, որոնք լեռներն էին ընկել հուսահատ ու հալածված...

— Էլ բան չթողին,— շարունակեց խոսողը,— ողջ դաշտը արյունի մեջ է. ամեն ինչ հիմնահատակ արին... Եվ դեռ այրում էին, կոտորում...

— Ա՜խ, երանի մենք էլ մեռնեինք...— մրմնջաց ծերունին տխուր ու խոր հառաչով։

Մթան մեջ մնացողները տեսնելով, որ իրենց առաջնորդներին վնաս չենք հասցնում, իրենք էլ մոտեցան ու մտան լույսի մեջ, և այդ ժամանակ աչքս ընկավ մի աղեխարշ տեսարանի վրա։

Ոտաբոբիկ ու կիսամերկ կանայք՝ ցեխաթաթախ ծնկներով ու շորերով, աղտոտ, մի-մի ծծկեր մեջքներին, մի-մի մերկ լակոտ էլ փեշերից կախ՝ գալիս էին ջրերի միջով։ Կարծես անկողնից էին հանել այդ բոլոր մերկ թշվառներին և քշել, ցեխն արել։ Ու մեջքի վրայի մանուկները զնգում էին, քարշ եկողներն այլևս արցունք չունեին, հեկեկում էին, խոպ ձայներ արձակում, և նրանց ոտները, կպած քարերի ու փշերի, արյունոտվել էին, հոշոտվել, մարմիններն էլ բծավորվել, ցեխից սևացել...

Ահա և տղամարդիկ, անզեն, անգլխարկ, կիսամերկ, ցեխոտ ու արյունոտ, խլել են, ինչ որ կարողացել են՝ մի վերմակ, մի կապոց, մի բուռ հաց կամ այլուր և մազապուրծ փախել կոտորածից։ Ձեն խոսում. ոչ ձայն է մնացել և ոչ էլ սիրտ։

Պահ մի մտածեցի հարցուփորձ անել, տեղեկանալ, թե ինչ դրության մեջ է դաշտը, թե որքան էին հարձակվողները, ինչ թողին անավեր, ո՞վ կենդանի մնաց... բայց ավելորդ բան. մի՞թե գուշակել դժվար էր։

— Ինչպե՞ս ազատվեցիք,— հարցրի ծերունուն, երբ բոլորն էլ նստել էին։

— Հրաշքով...— մրմնջաց նա։— Ճահիճն անցանք. մինչև կես մեջք ցեխի մեջ, մութն էր՝ չտեսան մեզ... Ավտոն մնաց. շատ էր խրվել, չկարողացավ ելնել... չգիտեմ ինչ եղավ...

— Իսկ գյո՞ղը...

— Վառվում է... Կրակը մեծանում, գնդակները սուրում էին, ճիչերը մեզ հասնում... Կրակի լույսով տեսնում էինք փախչողներ, ընկնողներ, հարվածողներ... Ու փախանք, սոսկումից ետ էլ չէինք նայում։

Տեղ տվինք նրանց մեր կողքին։ Ինչ որ ուտելու ունեինք, նրանց բաժին հանեցինք, ծածկոցներ ճարեցինք կանանց ու մանուկների համար, և երբ միմյանց վրա թափված քնեցին, բոլորս տխուր էինք, լուռ ու ճնշված. ամենքս դեպի խոր՝ խնուսի դաշտն էինք նայում, ուր մի անորոշ կարմիր լույս լուսավորում էր հեռավոր տարածությունը և ուր, ով գիտե, այդ պահուն որպիսի՜ հրդեհ կար, որքա՜ն դիակ, որքա՜ն արյուն...

Եվ երբեմն այդ տիրող լռության մեջ, արյունալից խորքերից անդընդային սրտապատառ աղաղակներ էին հասնում մեր ականջին, որոնք թրթռում էին օդի մեջ և որպես մշտատև, բայց անօգուտ բողոք՝ գնում էին մարելու երկնքի խորության մեջ...

2

Երկու օր հետո դաշտ իջանք, հալածվածներին դրինք մի ճանապարհի վրա և մենք գնացինք ուրիշ ճանապարհով։ Ստիպված էինք այդպես անել։

Հետո կտրեցինք երկիրը, անցանք ծխացող, ավեր գյուղերից. մեր քայլերի առաջ, մեր անցքերի վրա շատ տեսանք եղկելի խմբեր, որոնք սոսկումը կրծքերում փախչում էին ցանուցրիվ, խուսափում ընդհանուր սոսկումը կրծքերում փախչում էին ցանուցրիվ, խուսափում ընդհանուր սարսափից՝ կորցրած ինչքը, սիրելիները, կորցրած խելքն ու միտքը։

Մի ամբողջ ամիս ուրիշ ոչինչ չէինք տեսնում, մեր ջղերը սկսել էին միշտ նույն սոսկումներով վարժվել։ Ինձ վրա այնպես ցնցող ազդեցություն էին թողնում այդ տեսարանները, որ կորցրել էի հանգիստ, ախորժակ, քուն և խոսելու կարողություն ու գնում էի դիակների միջով, քայլում արյունի մոտով, փլատակների կողքով՝ որպես երազի մեջ...

Բայց ահա վերջապես սահմանագլուխը, որից հետո այլևս շունչ էի առնելու։ Ուրախ, որ ազատվել էի այն բոլոր տեսարաններից, մի տեսակ հաճույքով փաթաթվեցի վերարկուիս մեջ և վերջին գիշերը պատրաստվեցի անցկացնել այդ սպանդանոցային երկրի հողի վրա։

Հազիվ թե աչքերս փակել էի և թեթև կերպով ննջել, որ մի նոր ուժով պատկերացան մտքիս մեջ բոլոր տեսածներս՝ հավաքված, միմյանց կցված ու թափորի պես անցնելով առջևիցս...

Գիշերը մութն էր ու լուռ։ Ցածում միայն, լեռան ստորոտի մոտ գտնվող շամբի եղեգներն էին շշնջում թախծալից և մեկ-մեկ էլ մի ինչ-որ գիշերային թռչուն՝ պատռում էր օդը և նրա բարձունքներում մի սուր խազ նետելով սլանում-անցնում։ Շուրջս տարածված քնում էին ընկերներս սև կույտերի նման, իսկ գլխավորը գլուխը դրած մի քարի վրա, հրացանը գրկած և ծածկված գիշերային խոնավության դեմ՝ անձայն ննջում է։

Քնել չէի կարող այլևս, կոշմարը գրգռել էր ինձ, և ականջիս միջից չէր կտրվում ցնցող ողբերի հիշատակը։

Եվ ահա հանկարծ, այդ լռության և ամայության մեջ կարծեցի լսել մի ճիչ, որ նմանում էր մանկան լացի։ Ակամա դարձա։ Ձայնը ավելի պարզ լսվել սկսեց, սուր շեշտի բարձրացավ ու մեկեն լռեց։

Գլխավորն էլ երևի լսել էր, որովհետև ոստյունով վեր թռավ ու գոչեց։

— Ո՞վ էր այն։

— Դու է՞լ լսեցիր,— հարցրի ես։

— Լաց էին լինում, կարծես...— ասաց նա։

Ու նստեց։ Նրանց էլ երևի տանջում էին կոշմարներ։ Զայնն էլ լսվեց, երևի երկուսս էլ երազել էինք միայն, այդպես ժամանակ և այդպես ամայի տեղում ո՞վ կարող էր լինել։

— Կուզե՞ս ճանապարհ ընկնենք,— ասացի գլխավորին,— եթե գիշերով գնանք, վաղն առավոտ սահմանը կանցնենք։

— Ո՛չ,— ասաց նա,— տղերքը հոգնած են, թող քնեն։ Դո՞ւ ինչու չես քնում։

— Չեմ կարող. ինձ թվում է, թե շուրջս էլի կոտորում են, այրում։

Գլխավորը մռայլ՝ գլուխը քարի վրա դրավ և աչքերը փակեց։

Բայց հազիվ թե մի վայրկյան լուռ էինք, որ ցնցվեց, վեր թռավ ու ասաց.

— Ո՛չ, երազ չէ սա... Լաց են լինում այնտեղ՝ հեռու... լսում եմ ահա նորից։

Եվ ցույց տվավ բլրակի մյուս կողմը։

Ես չէի լսում։

— Ականջդ գետնին դիր։

Կռացա ու կպա գետնին։ Մի թույլ ճիչ, կարծես անդունդների խորքից գալով, խտղտացրեց ականջս։

— Այո՛,— ասացի,— լալիս են. մանկական ձայն է։

Ու երկուսս էլ ելանք։ Գլխավորը զարթնեցրեց ընկերներիցս մեկին, պատմեց եղածը, խնդրեց զգույշ քնել, և երկուսս միասին գնացինք դեպի ձայնը։ Երկար չփնտրեցինք. քանի մոտ էինք գնում, որոշ կերպով լսվում էր լացի ձայնը. հատած ու ժանգոտ մանկական ձայն, որ լուռ գիշերվա մեջ սարսուռ էր ազդում։

Բլուրը շրջելուն պես, առվակն ի վեր գնալով, հասանք մի կանաչ հարթության։

Մի քստմնեցուցիչ տեսարան փակեց մեր ճանապարհը։ Ջրի եզրին, արյան լճակների մեջ, խողխողված ընկել էին մի քանի դիակներ... Ապա քիչ հեռու՝ երկու կանայք, մեկը սպանված պառավ, մյուսը երիտասարդ՝ ուշագնաց և սոսկալի դրության մեջ, տանջած ու ձգած, և դրանց կողքին երկու մանուկներ, որոնցից 3—4 տարեկան աղջիկը ընկած մոր կրծքի վրա՝ հեկեկում էր, իսկ մյուսը, մի տասնամյա տղա, կանգնած սարսափահար դողում էր ու գժվածի պես գոռում, ճչում...

Կնոջն ուշքի բերինք և մանուկների հետ տարանք մեզ մոտ։ Բոլորը զարթնել էին, բոլորի կրծքից դուրս թռավ մի խոր ցավակցական ու սոսկումի բացականչություն։

Կրակի լույսով տեսա կնոջը։ Իր գունատության մեջ գեղեցիկ էր նա. բայց որքա՜ն վշտալից, որքա՜ն տանջված։ Հիշեցի իսկույն, որ տեսել էի թե՛ նրան և թե՛ մանուկներին։

Մի վայրկյան չմտաբերեցի, թե որտե՛ղ։ Ընկերներիցս մեկը ավելի շուտ հիշեց։

— Ա՜խ,— գոչեց նա,— Խնուսի լեռների մեջ հանդիպած թշվառներից են։

Նրանք էին. նույն երիտասարդ կինը և իր մանուկները։ Միայն դրանք էին մնացել այն մեծ խմբից, որոնք ճողոպրել էին Խնուսի գյուղերից։

— Ուրեմն մի ամիս է, որ թափառո՞ւմ եք,— հարցրի։

— Այո,— ասաց կինը,— ուզում էինք սահմանն անցնել, ազատ հողի վրա ելնել... հասել էինք, բայց երեկ մեզ վրա տվին մի խումբ ու կոտորեցին...

Հուզմունքից շարունակել չկարողացավ և արտասվեց։ Արտասուք չուներ. դեմքն էր ծոմակում սրտաճմլիկ կերպով և խռպոտ ձայներ հանում...

— Ի՞նչ պիտի անես այժմ,— հարցրի։

— Չգիտեմ... Ինչո՞ւ չթողիք մեռնեինք այնտեղ. այժմ ես էլ ի՞նչպես ապրեմ, ի՞նչ երեսով արև տեսնեմ...

Մանուկները կպել էին նրան ու հեկեկում էին։

Կռացավ ու ջղաձգությամբ սկսեց համբուրել աղջկան։

— Տարե՛ք մեզ, տարե՛ք ձգեք, ուր որ կուզեք,— շարունակեց նա,— ես կյանք չեմ ուզում, բայց սրանց համար կապրեմ, կգործեմ. տարե՛ք մեզ...

Հետո կծկվեց ու էլ չխոսեց։

Կրակը մարեցինք, ելանք ձի հեծանք. մեզնից մեկը գավակն առավ կնոջը, մյուսները՝ մանուկներին։ Ամբողջ գիշերը ճանապարհ գնացինք և լուսածագին սահմանն անցանք ու դրինք նրանց մի գյուղի մեջ։

Թշվառ կինը ջերմի մեջ էր. ստիպված էինք գյուղացոց խնամքին հանձնել նրանց և անցնել։

Ահա այդպես էր, որ երկրորդ անգամ հանդիպեցի այն խմբին, որից ողջ էին մնացել միայն մի լկված կին և երկու որբուկներ...

* * *

Անցան ամիսներ։ Կովկասը լցվում էր լացի երկրից դուրս հոսող գաղթականներով ու փախստականներով. ամեն մի քաղաքի դռների, եկեղեցիների առաջ երևում էին ցնցոտիներով խմբեր՝ կին, մարդ, որբեր, որոնք ձեռք էին պարզում, հաց խնդրում, պատսպարան հայցում։

Որ քաղաք որ մտնում էի՝ թշվառ հայրենակիցների էի հանդիպում։ Մարդիկ, որոնք իրենց երկրում տասնյակ ազքատներ էին կերակրում, այժմ նստած ձրի ճաշարանների նստարանների վրա, գլուխները կախ, որ չճանաչվեին, արտասուքը կուլ տալով ուտում էին մի կտոր հաց՝ անոթությունից չմեռնելու համար։

Որ եկեղեցու առջևից որ անցնում էի, դռների առաջ տեսնում էի ծանոթ դեմքեր, կանայք, մանուկներ՝ ողորմելի, գլուխները ծռած, աղաչավոր և մուրացկանության դիմելուն համար ամոթից ու ցավից կարմրած, զգետնած...

Ահա և բարեգործական ընկերության մի գրասենյակ։ Քանի՞-քանի՞ տասնյակ տղամարդ ու կին, մեծ մասամբ թշվառացած, ընկճված, շվարած ու մոլորված, կիտվել են փակված դռան առաջ, կուչ եկել պատի տակ և սպասում են ճաշ կամ մի քանի կոպեկ ստանալու համար... Եվ ահա դուրս է գալիս քարտուղարը. բոլոր ընկճվածները պատկառանոք ետ են քաշվում, աղերսագին՝ ուռած պարոնին նայում, աղաչում են, հաց խնդրում, իրենց խնդիրներին պատասխան հայցում և լսում են քարտուղարի կաշաղակային ճիչը.

— Գնացե՞ք, կորեք այստեղից, ի՞նչ եք զահլես տանում. գնացեք գործեցեք...

Այո՛, «ազգասերի» զահլեն էլ է գնացել այդ աղերսներից, թշվառություններից. նա այլևս կոպտությամբ վռնդում է ընկած եղբորը, որ ոչ մի ժամանակ ետ չէր դարձրել հայցողին՝ այն օրերում, երբ ունեցել է, երբ կարողացել է օգնել։

Շատ բան տեսա. ավելի խոսք և բառեր լսեցի իբր ցավակցություն նրանց դրության, քան գործ և օգնություն...

Եվ ահա մի օր, երբ անցնում էի մի մեծ դռան առջևից, լսեցի բակից մանկական երգի ձայն։ Ներսում ժողովվել էին ծառաներ, աղախիններ և անցորդներ, պատշգամբներից կռացել էին ժպտուն և զվարթագին սիրուն աղջիկներ ու պարոններ. զվարճանում էին մի սրտաճմլիկ տեսարանով։

Երկու մանուկ էին. մեկը հասակավոր տղա, մյուսը հինգ տարեկան աղջիկ։ Երկուսն էլ գրեթե ոտաբոբիկ, ցեխի մեջ և ցրտի դեմ մի ամառային շորով պատսպարված։ Տղան դողդողալով երգում է մի քրդական երգ, մի տխուր, մելամաղձիկ պար, իսկ աղջիկը կրկնում էր նույնը և ոստոստում, դառնում իր վրա։ Պարում էր. արտասուքը հոսում էր նրա աչքերից մրսած այտերն ի վար. ձեռքերը կծկել էր թևերի տակ, վեր ու վար էր անում ոտները, կանչում, ողբում ու պարում։

Մոտ գնացի. տղայի ձայնը զարթեցրեց իմ մեջ տխուր հիշողություններ։ Ճանաչել էի։

Խնուսի լեռների փախչող խմբից մնացած որբերն էին։ Բայց ո՞ւր էր նրանց մայրը. չէ՞ որ խոսք էր տվել ապրել և անտեր չթողնել իր զավակներին։

Հարցրի։ Մեռել էր, չգիտեին՝ ինչի՛ց. գիտեին, որ մեռել էր և իրենք ընկել էին սրա-նրա ձեռքը, քաղաքից քաղաք և այժմ ստիպված էին հաց ճարել։ Նրանց երգ էին սովորեցրել և ուղարկել մուրալու։

Եվ որբուկները ցատկոտում էին, երգում, պարում ու... արտասվում։

1897

ԿԸՇԼԱՆ[1]

1

...Երբ Ոստան հասա, դեպի Սպիտակ վանքն ելնող ճանապարհի վրա ծիրանիների ստորոտում հանգչող մի երիտասարդի հանդիպեցի։ Ռուսիացի էր։ Մեր ծանոթությունը շուտ կատարվեց։ Նա էլ էր գնում վանքը՝ Աղթամարի կաթողիկոսին այցելելու։ Վեհափառը մի քանի օրից ի վեր էր, որ Ոստանի այդ վանքն էր եկել՝ Արտոս լեռների մեջ ամառն անցկացնելու համար։

Լավ էր, որ ընկեր գտա. ապա թե ոչ՝ անտանելի էր դառնալու մենակ քայլելը այդ շոգին ու փոշոտ ճանապարհով։

Խոսակցելով, ծխելով, հաճախ հանգչելով, կարողացանք երեկոյան դեմ բավական բարձրանալ։ Բարեբախտաբար ամպերի խոշոր կտորներ անցնում էին երկնքի վրայով և անցողակի, բայց թեթևացնող ստվերներ սփռում մեզ վրա։

Նախիրը վանքն էր վերադառնում, երբ մենք մի փոքրիկ ձորակ էլ կտրեցինք և հասանք Շամիրամա առվին։

---

1 Թրքական զինվորների համար ամառային բնակարան։ Զինվորանոց։

Տեսարանը շքեղ էր. արևը մայր էր մտնում. ցածում՝ Ոստանի հովիտը, և հորիզոնի վրա՝ կապուտակ ծովը, առաջներս Արտոսի լեռնաշղթան՝ կանաչագեղ ու շողշողուն, և պուրակներ, որոնք ձգվում-հասնում էին մինչև բարձր գագաթները։ Ահա և վանքն իր փոքրիկ գմբեթավոր մատուռով և կողքին գտնվող հին, ընդարձակ միակ բնակարանով։ Ապա մի ընդարձակ ծառաստան-պարտեզ, որոնց ստվերների տակով հոսում էր սքանչելի վճիտ ջրերով Շամիրամա առուն։

Նախիրն այդ միջոցին հասնելով՝ իջնում էր վանքի առաջ։ Ամեն կողմից լսվում էին բառաչ, մկկոց. հովվական շները հաչում էին, նախրորդները ցուպերը բարձրացրած՝ աշխատում էին ոչխարներին դեպի գոմն անել, շոշրարները (կաթ կթողները) փայտյա կուշերով ղինված՝ վազվզում էին տավարի մեջ։ Վանքն էին վերադառնում նաև հնձվորներ, կալսողներ, հոտաղներ, որոնք բոլորն էլ շրջակա գյուղերի բնակիչներից էին և եկել էին զուբարայով (ձրի) բանելու վանքի համար։ Երեկոյան վանքն էր նրանց ընթրիք տալու։ Շներն իսկույն մեր հոտն առին և խմբովին հաչելով՝ վազեցին դեպի մեզ։ Մի նախրորդ առաջ եկավ, հալածեց գամփռներին և պատկառանոք տարավ մինչև մառանը։

— Կաթուղիկոսը որտե՞ղ է։

— Այգում նստել է... Ահա Ղազար հայր-սուրբը։

Մի երկար վարդապետ, որ ախոռից դուրս եկել՝ դեպի պարտեզն էր ուղղվում, որ նկատելով մեզ, կանգ առավ ու սպասեց։

Մոտ գնացինք։

— Աստված օգնական։

— Աստված պահապան, որդիք, եկել եք ուխտի՞։

— Այո, հայր-սուրբ, եկել ենք նաև վեհափառին այցելելու։

Վեհափառը այգումն է, առաջնորդեմ ձեզ։

Ու նա առաջ ընկավ։ Շատ հեռու չէր։ Լայն առվի եզերքում, մի ուռենու հովանու տակ փռել էին գորգ։ Նրա վրա էր, որ դերձակի պես բազմել էր Աղթամարի խաչատուր կաթուղիկոսը։ Մի միջահասակ, թխլիկ, վիզը կարճ ու կապուտաչյա երանելի։ Ոտները ծալած, առջևը մի ֆնջան սուրճ, աջ ձեռքին դեղին մեծ սաթերից շինած մեղեսիկ, նայում էր հեռուները։

Երբ նկատեց մեզ, ուղղվեց, շարժվեց ու ասաց.

— Համեցեք, էֆենդիներ։

Մոտեցանք աջն առինք, հետո նստեցինք գորգի եզերքին և կաթուղիկոսի հրամանով՝ Ղազար վարդապետը ետ գնաց, որ մեզ համար սուրճ պատվիրի։

— Բարի եկաք, ուխտներդ ընդունական...— այսպես սկսեց վեհափառը,— հրամանքնիդ ռուսիացի՞ եք։

— Ոչ, վեհափառ,— պատասխանեցի,— ես վանեցի եմ։

— Հա՞... որոնցմե՞ն ես։

Հորս անունը տվի. չէր ճանաչում, բայց լսել էր։

— Իսկ աս աղա՞ն,— հարցրեց նա ընկերոջս ակնարկելով։

— Պարսկաստանցի է, անունը Կարապետ։

Այնուհետև սկսեց մի երկար խոսակցություն այն մասին, թե ես ինչո՞վ եմ զբաղվում, ընկերս ինչո՞վ, թե ինչու ենք եկել այս կողմերը, կամ որ ճանապարհով եկել և այլն, և այլն։

Քիչ հետո երևեցավ մի գյուղացի՝ ձեռքին երեք ֆնջաններ և մի սրճաման։ Կոշիկները հանեց գորգից դուրս, պատկառանոք մոտեցավ վեհափառին, չոքեց, դրավ նրա առաջ ֆնջաններից մեկը և սուրճ լցրեց, հետո դարձավ ինձ ու ընկերոջս և նույնն արավ։ Ղազար վարդապետն էլ եկավ շուտով ու չոքեց վեհափառի կողքին, մի ոտք ետ։

Այդ բոլոր ժամանակում կաթողիկոսը միշտ մի տեսակ կասկածանքով և ուշադրությամբ էր զննում ընկերիս, իսկ ինձ վրա սակավ էր նայում, և երբ վարդապետը վերադարձավ, այն ժամանակ հանկարծ ասաց.

— Հրամանքնիդ ուրիշ ժամանակ այս կողմերում եղե՞լ եք։ Կարապետը շփոթվեց մի քիչ։

— Ոչ,— ասաց,— այս կողմերում չեմ եղել։

— Ես էլ չեմ եղել,— պատասխանեցի ես։

— Գիտե՞ս,— դարձավ ինձ կաթողիկոսը,— քիչ մնաց կարծեի, թե աս աղան մեր կողմերը թափառող բոշ-բողազ ռուսիացիներեն է։

— Այդ ի՞նչ ռուսիացիներ են, վեհափառ։

— Հըմ, հըմ...— արեց կաթուղիկոսը,— ի՞նչ ըսեմ, էֆենդիս, տարի մը է, որ խել մը բոշբողազներ ընկեր են մեր գյուղերը. քանի մը օր առաջ ատոնցմե երկուքը ձիերու վրա հեծած՝ դրսի տուն եկան... Ալլահ Իլլան[1], գեշ մարդիկ չէին երևնար, նվեր տվին վանքին, սակայն, այլանդակ խոսքեր կընեին. վտանգավոր խոսքեր... Կատղեցուցին զիս, համբերություն չթողին... Անանկ չէ մի, Ղազար վարդապետ,— դարձավ նա հայր-սուրբին,— միտդ չէ՞, թե գյուղացիներուն ինչեր էին սովրեցուցեր։

— Հրամանք ես, վեհափառ... չեմ կարծեր, որ ասոնք անոնցմե ըլլան։

— Աղեկ, իհարկե, ես ալ չեմ կարծեր... Ինչ որ է, վարդապետ, անոթի ենք, աս աղաներն ալ անոթի պիտ ըլլան, խաթունը բան մը պատրաստե՞ր է...

---

1 Աստծու սիրուն։

— Հրամանք ես, Վեհափառ, որտե՞ղ հրաման կընեք ճաշելու. հո՞, թե ներսը։

— Ներսը, ներսը, ես կսիրեմ աչքովս տեսնել թոնրեն ելնող կերակուրներուն պուտուկներուն ու անոնց հոտն առնուլ։

Այս խոսքերը ասելով նա ոտքի ելավ ու ծանրությամբ առաջ ընկավ։ Մի գյուղացի, որ հեռվում սպասում էր, մեր ելնելուց հետո մոտ գնաց և ժողովեց գորգն ու բարձը։

2

Այսպես ահա ծանոթացանք Աղթամարի կաթուղիկոսի հետ, որ երեվելով անցավ մառանի պատերին կպած բազմաթիվ խոնարհվող և իր աջին մոտեցող գյուղացիների միջով ու մեծ տանտունը մտավ։ Վանքի միակ սենյակը՝ այդ տանտունը մի ցած առաստաղով ահագին սենյակ էր, պատերը թոնիրներից արձակված ծուխից սաստիկ սևացած։ Միայն վերևի մասն էր, թոնիրների կողքին, որ լուսավորված էր երկու ձեթի ճրագներով, որոնք դրված էին միմյանցից երկու քայլ հեռավորությամբ կանգնեցրած ճրագակալների վրա։ Մութ մասը, որ մի ընդարձակ տարածություն էր կազմում և ուներ շատ խավար խորշեր, զբաղեցրած էր հազար մի տեսակ կարասիներով։

Այնտեղ տեսնվում էին յուղի, պանրի, դավորմայի, գինու և այլ կարասների շարքեր, այլուրի երկու մեծ դարան, դիզացած ցախ ու փուր, մինչև իսկ աթար։ Պատերից, օճորքից, ամեն կողմ կախված ու գրված կային շշեր, մաղեր, ավելներ... Մի խոսքով, ինչ ուներ-չուներ վանքը, կիտած էր այդտեղ։

Կաթուղիկոսը նստեց փռված մինդերի վրա. Ղազար վարդապետը չոքեց նրա ետևից՝ կողքում, իսկ մենք տեղավորվեցինք ավելի ցած։ Բել հեռու կիսամթան մեջ, պատի տակ, լուռումունջ եկան նստելու հետզհետե 10—12 գյուղացիներ, որոնք իրենց ակնարկը չէին հեռացնում կաթուղիկոսից և հետևում էին նրա յուրաքանչյուր շարժմանը։ Երբ նստեցինք, տնտեսուհին մոտեցավ և սփոց տարածեց։

— Հա, հա՞ց ենք ուտելու,— ասաց վեհափառը,— շատ աղեկ, անոթի եմ։ Ինչ ունիս, Խաթուն, լավ թան շինե՞ր ես։

Պառավ տնտեսուհին յազմայի վերին ծայրը մինչև աչքերն իջեցրեց, ցածից էլ բերանը ծածկեց և գլխով դրական պատասխան տվավ։

— Դե, աստված օրհնե քեզ, շուտ ըրե... է, աղաներ,— դարձավ մեզ,— ըսեք, նայինք, շատ տեղ պտտեցա՞ք...

Երրորդ անգամն էր, որ նույն հարցն էր տալիս։

— Այո, վեհափառ,— պատասխանեցի ես։

— Ս. Եղիշեի գերեզմանն էլ գնացի՞ք... Զարխափան ս. Նշան։

— Ոչ դեռևս։

— Հա՞... է, վաղը գնացեք, տեսեք մեյմը ս. Եղիշեի գերեզմանը ես նորոգել տվի. որ տեսնես՝ կհավնիս. անհավատ ես նե՝ չես հավնիր... Հե, հե, հե, գիտես, աղաս,— դարձավ նա ընկերոջս,— անունդ շնորհե՞ս... մոռցա։

— Կարապետ։

— Հա, Կարապետ աղա, գիտե՞ս, ես քեզի փոռտ կարծեցի. ինչ որ է. անոր հայրը կճանչընամ... հրամանքդ պարսկաստանցի՞ ես ըսիր, չէ՞...

Ու վեհափառը այդպես կցկտուր, մեկ հարցից մյուսը, մեկ մտքից մյուսը ցատկելով՝ մեզ չէր նայում, այլ տնտեսուհու արածներին էր հետևում, ձեռքերով ուղղում էր առջևը դրած հացը, դեն հրում սևացած կտորներն ու զննում, թե որքան սոխարած էին ածում թանի երեսի վրա։

— Այո՛, պարսկաստանցի եմ,— պատասխանեց ընկերս։

— Հրամանքդ ասոր ընկերն ես, չէ՞... Խաթուն, ձուկ չունի՞ս սա երեկո։

Խաթունը մի բան փսփսաց մոտը նստած գյուղացուն։

— Հոգևոր տեր,— բացատրեց վերջինս,— ձուկը փլավի համար է պահված, բայց եթե կհրամայես...

— Չէ՛, չէ՛, թող աս երեկո ձուկ չըլլա, թանը տուր... Ղազար վարդապետ, գինի ունի՞ս։

— Հրամանք ես, վեհափառ։

— Լավ... հըմ, հա, ինչ ըսի՞ր։

Ընկերոջս էր ուղղում հարցը և գդալը ձեռք առնում։

Տաք թանը, վրան կապույտ ծաղկի թերթերունքներով խառն սոխարած՝ մեջտեղ եկավ։

— Ես ոչինչ չասացի, վեհափառ։

— Հը՛մ... չըսի՞ր,— ու գդալը պարզեց,— ես ըսի կարծեմ... հա հրամանքդ ասոր դասընկե՞րն ես։

— Ո՛չ, վեհափառ, ես ուրիշ ուսումնարան եմ սովորել, Մոսկվա։

— Մոսկով. հոն ա՞լ հայոց դպրոց կա։

— Կար, այո, Լազարյան ճեմարանը։

— Հա, լսեր եմ... ապրիս, որդիս։ Դեհ, սկսենք... «Ճաշակեսցուք խաղաղությամբ, օրհնյալ է տեր ի պարգևս յուր, ամեն»... Համեցեք, մոտեցեք...

Հետո, երբ մի քանի դգալ խմել էր, շարունակեց.

— Հա, ըշտե կուզես նե՝ քեզ ալ տեղ մը վարժապետ ընենք, լմնա երթա... սակայն և մի դգալ էլ խմեց, նայե, չըլլա թե սա անհավատական մտքերեն լեցնես տղայներուն գլուխը... հը՛մ (մի դգալ ևս)... Սատանայի գոյություն ուրանաս... կրոնավորներուն պարսավես...

Հետո դգալը ձգեց և սկսեց բրդել թանի մեջ։

— Հրամանքդ ալ աղվոր ձայն ունի՞ս։

— Ոչ, ես ձայն չունիմ։

— Ջունի՞ս... ձայնավորությունն ալ չիյտես։

— Ոչ, վեհափառ, չգիտեմ։

Կաթուղիկոսը կանգ առավ, մի ակնթարթ զարմացած դիտեց Կարապետին, ապա դգալն առավ, մի խոշոր պատառ կլլեց ու գոչեց.

— Բոաֆ բե[1]... ապա ի՞նչ գիտես։ Նայինք... ճարտասանությո՞ն, աստվածաբանությո՞ն, տրամաբանությո՞ն։

— Ո՛չ,— ժպտաց Կարապետը։

Կաթուղիկոսը ապշած էր։ Դգալը օդի մեջ պահեց և դարձավ Ղազար վարդապետին։ Իսկ սա գլուխը միայն թափահարեց և լուռ՝ դադարեց ուտելուց։

— Ես,— շարունակեց Կարապետը,— գիտեմ պատմություն և բնական գիտություններ։

— Կեր, կեր, թանը պաղավ,— ասաց կաթուղիկոսը,— ատոնց բոլորը դազ բաներ են... ատոնք գիտություններ՞ են... Այ, աստվածաբանություն, բարոյախոսություն... Խաթուն, ուրիշ ի՞նչ ունիս, ձավրե փլա՞վ է եփածդ... հա՞, դեհ, բեր, օրհնվիս դու...

3

Մի քանի րոպե այնուհետև լուռ ճաշեցինք։ Հեռու կիսամթան մեջ, տինեի շուրջը բոլորած գյուղացիք ևս դադարել էին փսփսալուց, ուտում էին և անդադար մեզ դիտում։ Եթե կաթուղիկոսը պատահմամբ նրանց կողմն էր նայում, իսկույն ուղղվում էին աշակերտների պես, կծկվում և և ակնարկները խոնարհեցնում։

Մինչև մի քանի գավաթ չխմեց և մի լավ չկերավ, վեհափառը այլևս չխոսեց. մենք էլ լուռ էինք։

Ձավրե փլավից հետո գյուղացիներից մեկը շարժվեց, քոլոզը հանեց, ձեռքին բռնած հողե կուժիկը՝ մոտեցավ և ասաց կաթուղիկոսին.

— Հոգևոր տեր, օրհնիր... Մեզ էլ արձակիր գնանք այս գիշեր։

[1] Զարմանալի բան։

Կաթուղիկոսը նայեց գյուղացուն, խաչակնքեց կուժիկի վրա և ասաց.

— Այս երեկո դժվար թե գնաք, ռես Մլո, խոսելու շատ բան ունինք։

Ռեսը՝ մի ալեզարդ և պղնձագույն հուժկու ծերունի, բարձրացավ տեղից։

— Աչիդ ղուրբան, հոգևոր տեր,— գոչեց նա աղաչավոր ձայնով,— մեր տունուտեղ մնացել է անտեր-անտիրական. 5—6 օր է, ով գիտե, ինչե՞ր են պատահել գյուղում. արձակիր մեզ, այս գիշեր գնանք. լավ գիշեր է, բավական ճանապարհ կկտրենք։

Վեհափառը դեմքը կնճռեց։

— Է, ես ի՞նչ ընեմ,— ասաց նա քիչ նեղացած ձայնով,— տերության գործն է, նրա հրամանն է. մի թեթև գործ էլ չէ, որ շուտով պրծնենք, մոռացել է հարկավոր. մի քանի լիրայի բան խո չէ՞, հարյուրներ են պետք...

— Դու գիտես, հոգևոր տեր,— շարունակեց ռեսը ավելի աղաչավոր,— վճռիր ինչ որ խղճմտանքդ տա, ի՞նչ արած, զուլումը պիտի տանենք. ո՞ր մեկին բան ենք ասել, որ սրան ասենք... Հրամանքդ մի բան ասա, որոշիր և արձակիր մեզ՝ մեր տունուտեղ գնանք, մեր ցավերին նայենք...

— Գիտե՞ս ինչ, Մլո,— ասաց վերջապես կաթուղիկոսը ռեսին,— թե որ այդպես է, լավ, այս երեկո վերջացնենք ու գնացեք...

— Աստված կարգիդ հաստատ պահե...

— Բանը այն է,— շարունակեց կաթուղիկոսը,— որ այդ կշլանի համար 500 ոսկուց ավելի ծախս է գնալու. դեռ չեմ ասում գերան, քար, ձրի գործավորներ...

— Եսման, հոգևոր տեր,— բացականչեց ռեսը,— ասա, որ մեր ճժերու շապիկը հանենք տանք ու մենք էլ նրանց անոթի թողնելով՝ գանք կշլան շինենք... Եսման, էդ ինչ զուլում է. 500 լիրա, որ քամես 10 գյուղից լի դուրս գալ։

— Ի՞նչ արած,— խոսեց կաթուղիկոսը,— ապա թողնենք, որ զինվորները գյուղերը ցրվեն ու ամեն ինչ քարուքանդ անե՞ն, ձեր կնիկներին անպատվե՞ն, ձեր եկեղեցիներն ախո՞ռ դարձնեն... Չէ, ինչ որ էլ լինի, պիտի կշլան շինել...

Այդ միջոցին գյուղացիներից մեկը, որ մոտեցել էր ռես Մլոյին, խառնվեց խոսակցության...

— Վա՞նքը ինչ է տալիս իր կողմից,— հարցրեց նա վախվխոտ ձայնով։

Կաթուղիկոսը դգալը փլավի վրա դրեց, հետո կռացավ և խոսողին նայեց։

— Մեկ այս կողմը նայիր, այդ ո՞վ էր խոսողը,— գոչեց նա,— այդ դո՞ւ ես, ռես Ռկո... չե՞ս ամաչում. վանքը ի՞նչ ունի, որ ձեզ հավար տա։

Փոխանակ դուք վանքին տալու, նրանի՞ց եք բան ուզում... Չէ, ինչպես երևում է բոշ-բողազներ են մտել էլի ձեր մեջ... Կարգս վկա, որ այդ սրիկաներին ձեռք եմ տալու... էլ ոչ հավատ թողին և ոչ էլ խոնարհություն...

Գյուղացիները սարսափից կծկվեցին. բայց ռես Մլոն իսկույն մել մտավ։

— Մեղա աստծու, հոգևոր տեր,— ասաց նա,— մի նեղանար, ափիդ զուրբան։ Ռես Ռկոն ջահիլ է, համբերություն չգիտե... իհարկե մենք պիտի վանքին տանք և ոչ թե վանքը մեզ... Մեռնիմ վանքի զորությանը... բայց քո ոտքն ենք ընկել, 500 ոսկին մի բարձիր մեր գյուղի վրա. Կարճկանը 9 գյուղ ունի, Խիզանում էլ շատ գյուղեր կան. չէ որ կըշլանը նրանց էլ կազատի զինվորներ պատսպարելուց... ես քո ծառան եմ, մենք քո զավակներն ենք, հոգևոր տեր, այնպես արա, որ գոնե 10-ական ոսկիով ազատվինք...

— Ի՞նչ, տա՞սը... չէ, ռես, դա շատ քիչ է. մնացածը ես որի՞ց առնեմ։

— Ախ, հոգևոր տեր,— հառաչեց ռեսը,— որ տեսնես մեր հայը, մեր տառապանքը, այդ տասը ոսկին մեր սաղ գյուղի գինը կհամարես։ էլ ոչինչ չի մնացել, եղածը տանում են, նյութիս[1], թաշիր[2] քուրդի, պտղու, հասնող-հասնողի... որ մեկն ասեմ, աչիդ զուրբան. դու չէ՞ որ շատ լավ գիտես։ էլ բան չմնաց, մեր կնիկները մերկ են, մեր մանուկները ցուրտի դեմ ոչինչ չունին, մեր կերածը բանջար է մնացել, էն էլ եթե չխլեն, եթե գտնվի.տավարի մեջ էլ հալ չի մնացել. տավա՞ր որտեղից մնաց. լավերը տարան, վատերն էլ այս ձմեռ կկոտորվին, խոտ չունինք. ինչ որ ամբարում ենք, խլում են, վառում. գանգատում ենք՝ վանդվում... հոգևոր տեր, չէ՞ որ հրամանքդ էլ զզվեցիր մեր գանգատներից, մեր արտասուքից...

Ու ծերունին կռացրեց վշտերով ծանրացած գլուխը, և աչքերը լցվեցին։

Կաթուղիկոսը ուտում էր։ Հուզված՝ դադարել էի և դգալովս հայը ծեծում, իսկ Կարապետը գունատ՝ մեկ սրան էր նայում, մեկ նրան։

— Է, աղեկ, աղեկ, կարճ կապիր,— ասեց կաթուղիկոսը.— գյուղացի եք, որքան լավ դրություն ունենաք, էլի լաց եք լինում, գանգատում, չունինք՝ ասում, մերկ ենք՝ գոռում՝ որ ինչ է՝ չտաք... եղած զուլումներն էլ մեկը տասն եք շինում... այնպես չէ՞, վարդապետ։

— Հրամանք ես, վեհափառ,— ասաց հայը սուրբը,— անցյալ տարի էլ երբ ես էի պտղի ժողովողը, էլի այդպես ողբում էին, գանգատվում, բայց ով ավելի շատ էր լաց լինում, նա ավելի շատ էր ունենում... Ասում են, վեհափառ, ստում, որ չպահանջեն։

Եվ անշուշտ մտադիր էր այդպես շարունակել, եթե ընկերս չընդհատեր նրան։ Կնճռոտ, դաժան ու խիստ Կարապետը դարձավ վարդապետին ու ասաց.

— Դուք սաստիկ սխալվում եք, հայր սուրբ, մինչև իսկ... այո... մինչև իսկ ստում եք, որովհետև ինչ որ ես տեսա, դուք էլ գիտեք։ Գիտեք, որ հայ գյուղացին այլևս ոչինչ չունի այս երկրում, որ խլում են նրա ձեռք բերած ետին՝ խիլը, որ նրա ընտանիքը մերկ է, անոթի, և որ նա ինքը հալածված է, հափշտակության զոհ դարձած... գիտեք այդ և սակայն էլի ծանրություն եք բարձում նրա ջարդված ու կքված ուսերի վրա... Օհ, որպիսի սիրտ ունիք...

Հուզմունքից լռեց։ Կաթուղիկոսը ապշել էր։

Ղազար վարդապետը շփոթված՝ դգալը ցած դրեց։

— Ես աչքովս տեսա,— շարունակեց Կարապետը քիչ լռելուց հետո,— ահա մի քանի ամիս է, որ ման եմ գալիս այս թշվառների երկրում. աչքովս տեսա սոսկումներ. տեսա, որ այս աշխատող, ազնիվ և մաքուր ժողովուրդը, որին հարստահարում են ու հալածում՝ իր ապրելու ոչ իսկ կուլ է տալիս, իրավունք իսկ չունի լալու, հառաչելու... Ես տեսա, որ նա սոսկալի ճանկերի մեջ առնված՝ ծխում է, սպառվում, իր արյունը լվացվում, և որ չեն թողնում անհրաժեշտ նրա ոչ մի իրը, ոչ կինը, ոչ սրբությունը, ոչ կայքը... Դուք էլ եք տեսել այդ, գիտեք, շատ լավ գիտեք, բայց... ուրանում եք, ծածկում... Եվ դա է ամենից սարսափելին...

Ու ելավ։ Կաթուղիկոսը հուզմամբ խաչակնքեց, ընթրիքը վերջացրեց, ապա Ղազար վարդապետին մի բան փսփսաց։ Գյուղացիներից շատերը դուրս ելան, մենք էլ գնացինք դեպի բլուրը և այնտեղ լռելյայն նստեցինք մի ապառաժի վրա։

— Այո, ուրանում են, ծածկում են...— շարունակեց Կարապետը հուզմամբ,— և դա ամենասոսկալին է, որովհետև, եթե հաստատեն, իրենց գրպանն էլ ոչինչ չի մտնիլ..

Ապա կռացավ, նայեց լուսաբառն մշուշով լիքը հովտին և գոչեց.

— Որքան թշվառ ես դու, անբախտ ժողովուրդ, և որքան խոր են վերքերդ...

[1] Զինվորական տուրք։

[2] Արդյունաբերության տուրք։

* * *

Գիշերով հեռացանք վանքից. մեկնեցին նաև գյուղապետները։ Մի զինվորանոց շինելու համար յուրաքանչյուր գյուղի վրա 15-ական ոսկի նոր տուրք բարձած՝ գնում էին նրանք, և պետք էր տեսնել փոշոտ ճանապարհով, տխրությամբ ու լռելյայն հեռացող ծերունիների կքված մեջքերը, կնճռոտ վշտալից դեմքերը, որոնք երկնքից հույսը կտրած՝ դեպի գետին էին խոնարհվել... Նրանց ոտքերի հանած փոշին թանձր ամպերով բարձրանում էր ու լողում դեպի հեռավոր ծովը, իսկ իրանք գնում էին, գնում, տանելով դեպի իրենց գյուղը մի նոր զուլում, մի նոր տառապանք...

1897

ՈՂԽԱՐՆԵՐ

Մի քանի ժամ ևս, և կհասնեինք քաղաք։

Բայց ընկերս շատ հոգնել էր, գիշերն էլ թաց էր և ցուրտ։

Ստիպվեցինք կանգ առնել մի գյուղի կայարանում և գիշերել այնտեղ։ Մեզ տվին բարձրադիր օդա, հնոցի մեջ խարույկ վառեցին, հետո կերակուր մատուցին և խոստացան առավոտը կանուխ զարթեցնել։

Կերակրից հետո ընկերս իսկույն քնեց, իսկ ես պահ մի պատշգամբ ելա, կոթնեցի փայտե սյունին և սկսեցի շրջակայքը դիտել։

Առջևս տարածված կար մի ընդարձակ մշուշալից դաշտ, որ փռվում էր մինչև լեռները։ Մի կատար կոնաձև դուրս էր ցցում իր ձյունապատ գլուխը այդ լեռնակույտի միջից, իսկ լուսնկայի լույսի տակ կապտած ծառազարդ գյուղերը նրանց ստորոտում, կարծես լղճվել էին թացությունից։ Ավելի մոտ՝ մի քանի խրճիթներ թաց ու ճղփուն տանիքներով, միմյանց էին կպել մի բարձր շենքի շուրջը։

Պատշգամբիցս անմիջապես ցած՝ տարածվում էր մի ընդարձակ աղտոտ ու ցեխոտ բակ, իսկ նրա վերջին ծայրի գմբեթածածկ գավթից լսվում էին ուղտերի մելամաղձոտ ձայներ՝ խառն բոժոժների հնչյունների։ Երբեմն ականջիս էին հասնում ջորեպանների խուլ աղաղակներ ախոռների ներսերից... սրճատան բացուխուփ լինող դռնից ընդհատ կերպով լսվում էին գիշերային խոպոտ խոսակցություններ, ապա դաշտի կողմից հեռավոր ոռնոցներ գալիս էին միանալու դրանց, և այդ բոլորի միջից՝ որոճացող

ուղտերի վզից ճոճվող զանգակներն էին, որոնք իրենց անընդհատ ու պարբերական ղողանջյունով թմբիր էին ազդում...

Կարծեմ երկար այդպես կոթնած մնացել էի, երբ աչքս ընկավ մեծ ճանապարհի վրա, ուր մշուշի միջից մի առ մի դուրս գալով՝ երևում էին շարժուն ստվերներ և ծանրությամբ մոտենում կայարանին։ Հետիոտն ճանապարհորդներ էին։ Իջա մի ցած տանիքի վրա ավելի մոտիկից դիտելու համար։

Մի խումբ գյուղացիներ էին։ Կին, մանուկ, ծեր ու պառավ, գրեթե մերկ մարմինը փված խոնավության ու կծու ցրտին, ատամները կափկափելով ու ոտաբոբիկ՝ գնում էին ցեխի ու ջրակույտերի միջով։ Առջևից քայլում էին մի քանի մանուկներ. մեկը աղջիկ էր, հետո, երկու կին՝ մեկը պառավ, ապա, մի քանի հասակավոր աղջիկներ, ու երկու երեք ցուպավոր տղամարդիկ։

Սրճատան դուռը չբացվեց նրանց առաջ, ախոռների մեջ էլ չթողեցին։ Վախենում էին, որ բան չգողանան։

Ու մնացին նրանք փողոցի ցեխի մեջ կծկված, դողդոջուն։ Էլ առաջ գնալ չէին կարողանում, կանայք կկզեցին գետին՝ սրճատան պատի տակ, մանուկները նստեցին ցեխերի մեջ, իսկ մի ծերունի տեղնուտեղը կքվեց ճանապարհի վրա։

Ցած իջա և դիմեցի կայարանապետին, պահանջելով, որ նրանց տեղ տար գիշերելու։ Զարմացած ինձ նայեցին, չէին հասկանում, թե ինչպես կարելի էր հուզվել մի այդպիսի «սովորական» տեսարանի առաջ։

— Էֆենդիները դեռ նոր են մտնում այս երկիրը,— արդարացրեց ինձ մեզ ուղեկցող զափթիեն։— Բայց քաղաք որ մտնեն, էլ չեն զարմանալ։

— Դրանք գող էլ են լինում,— ավելացրեց մի ուրիշը,— ո՞վ տեղ կտա դրանց։

Թշվառները լսում էին, բայց ոչ մի բառ չարտասանեցին, տնքում էին միայն ու հառաչում, այլև նայում էին մեզ հուսահատ, նախատինքներից բթացած ու վիրավորվող ստրուկների համբերատարությամբ։

— Ո՞ր գյուղից եք,— հարցրեց նրանց կայարանապետը։

Մի գյուղի անուն տվին, չեմ հիշում։ Թուրքերից մեկը ձեռքը դեպի աջ պարզեց ու ասաց.

— Այն լեռների մեջն է։ Ամենքը ցրվում են...

— Դուք էլ եք գանգատի գնո՞ւմ,— հարցրեց մի զափթիե։

— Այո՛,— պատասխանեց ծերունին։

Եվ թուրքերը միմյանց նայելով ծիծաղեցին։

— Շատ կշահեք, այ,— հեգնեց հյուրընկալս։

— Այդ ի՞նչ գանգատ է,— հետաքրքրվեցի։

Նորից զարմանքով ինձ նայեցին. մի՞թե չգիտեի. մի՞թե այդքան տգետ էի այդ երկրի թշվառությունների վերաբերմամբ։

— Ի՞նչ պիտի լինի,— ծիծաղեց կայարանապետը։— Քամում են սրանց, ահա թե ինչ. էլ ոչինչ չեն թողնում. տուրքերի տակ խեղդում են, սպանում բոլորին... աստված է վկա, որ ոչ մի ինսափով մարդ չի կարող առանց զայրույթի տեսնել այդ բոլորը։

— Էլ ուտելու բան չմնաց,— ավելացրեց մի թշվառ կին,— որ կծկվել էր պատի տակ և աջ թևովը պարուրել էր իր մերկ ու ցեխաթաթախ զավակին։

— Շոր էլ չմնաց, տավարները տարան...

— Սպանում են, տանջում... բանտ տանում։

Մի բոպե ոչ ոք չխոսեց։

— Էհ,— արեց կայարանապետը,— խելք ունիք՝ քաղաք մի գնաք, Հյուսեյն աղայից գանգատել չէ կարելի. իսկ գանգատելով էլ տուրքերը չեք թեթևացնիլ... ձեզանից առաջ շատերը գնացին, ո՞ւր է, այլևս տեսե՞լ եք նրանց...

Թշվառները դողդոջուն, ավելի սարսափահար այդ ճշմարիտ խոսքերից, հուսահատ հայացքով մեզ էին նայում։

— Բայց այս ցրտում խո կսառեն դրանք,— գոչեցի ես,— չէ՞ որ կմեռնեն, եթե դուրսը մնան։

Ու երբ սպասում էի, որ կայարանապետը մի ճար աներ, լսեցի, որ մեկը ասում էր ետևիցս.

— Ավելի լավ իրենց համար, որ ապրում են, հա՞մ են առնում կյանքից։

Չիմացա ով էր ասողը. թո՞ւրք էր, քո՞ւրդ, թե՞ հայ։ Ով որ էր, մի մարդ էր այդ խոսողը։

— Մի տեղ տուր վերջապես,— ասացի բարկությամբ,— ես վկճարեմ դրա համար։

Գտան տեղ։ Փայտանոցն էր, մի կողմը դատարկ։ Այնտեղ լցրին նրանց, ու կայրանապետը գլուխը կասկածանքով շարժելով հեռացավ։ Լսեցի, որ ասում էր ծառաներին.

— Լավ հսկեցեք, դրանք անշուշտ մի բան կգողանան...

* * *

— Վեր կացեք, աղա, մեկնելու ժամանակ է, ձիերը պատրաստ են։

Ելանք, հագնվեցինք և կես ժամից հետո ձի էինք նստում։ Աղոթքանը բացվել էր։

Կայարանապետը մոտեցավ մեզ. վճարեցի եղած ծախսը և սենյակի համար։

— Տասը ղրուշ էլ ավելի պիտի տաք,— ասաց նա։

— Ինչո՞ւ։

— Այն աղքատները, որոնց դուք պատճառ եղաք ներս առնելու, փայտանոցում մոռացված մի հին կարպետ են առել և անհետացել...

Վճարեցի ուզածը։

— Ես գիտեի, ախր,— ավելացրեց նա,— մրսում են և ծածկոց չունեին։ Հետո բարևեց և, երբ շարժվում էինք, գոչեց.

— Եթե ճանապարհին նրանց հանդիպեք, ես ասել եմ զափթիանեին, թող ձեռներիցը խլեն կարպետը ու մի լավ էլ ծեծեն...

— Բայց չէ՞ որ նրանք շատվոր են, կընդդիմադրեն։

— Ընդդիմադրե՞լ... այդ ոչխարնե՞րը...

Այդ միջոցին էր, որ կայարանի մի ծառան մոտ վազեց ու կանչեց իր տիրոջը։

— Օսման աղա,— գոչում էր նա,— կարպետը գտնվեց։

— Գտնվե՞ց։

— Այո... մի քիչ տեղ տարել են և երևի վախեցել են ու թողել են պատի տակ...

Կայարանապետը նայեց ցույց տված կողմը, տեսավ կարպետը ու մի մեծ քրքիջ արձակեց։

— Ոչխարնե՞րը...— բացականչեց նա։

Մտրակեցինք ձիերնիս։ Այդ բացականչությունը ու քրքիջն էր լսածս վերջին ձայնը։

ՄԵՐԿ ԴԵՐՎԻՇԸ

Ինչպես շները, այնպես և մուրացիկները Թեհրանում, ունեին իրենց քաղաքամասը, որից այն կողմն անցնելու և մուրալու իրավունք չունեն միաժամանակ։ Այդ բաժանումը մի քանի ամսից, ըստ երևույթին, փոփոխության է ենթարկվում։ Մի քաղաքամասի մուրացիկը, որ ամիսներից ի վեր անդադար անցորդներին ձանձրացնում էր, հանկարծ մի օր էլ՝ չկար, և մի քանի օրից հետո պատահմամբ հանդիպում էի նրան բոլորովին ուրիշ թաղում։

Բայց ինչ-որ շատ երկար էր նստում այնտեղ այն մերկ դերվիշը, որին միշտ տեսնում էի Լալազարի փողոցի ծայրին, ձիաքարշի վերջանալու կետի մոտ պպզած։

Նստել է պատի տակ, ավստրիական դեսպանատան կողքին՝ եթե փողոցը քիչ լոր է։ Եթե շատ մեխ է լինում, բարձրանում է Լալազարի այգու պատից դուրս ցցված մի պատվանդանի վրա և նրա երկու ոտնաչափ լայնությունում կուչ է գալիս՝ մնում։

Փաթաթված է մի միակ վերարկվի մեջ։ Ուրիշ հագուստ չունի։ Առանց չափազանցության՝ այդ վերարկուն բաղկացած է հարյուր տեսակ ամեն ձևի, ամեն գույնի և ամեն մեծության կարկատաններից, որոնք միմյանց են կցած հաստ թելերով։ Դերվիշական վերարկու է և իրենք դերվիշներն են շինում։ «Հզարմիյխ» են կոչում նրան։

Երբեմն, երբ տեղավորվելու համար բաց է անում վերարկուն, երևում են նրա բոլորովին մերկ անդամները սևացած ու կապտած՝ ցրտից ու կեղտից։

Գլխին ունի թասաձև սևացած գլխարկ, որի տակից դեպի նեղ ճակատն ու քունքերն են իջնում ալեխառն ու միմյանց կպած մազեր։

Դեմքը փոքր է ու կարճ, աչքերը խոր և երազող. կարծես նայում է, բայց չի տեսնում։ Խիստ դժգույն է, ձեռքերն ու ոտները նիհարացել, ոսկոր են կտրել, մումիայի նման եղել. իսկ մորուքն ու բեղերը միմյանց խառնվել՝ անհետացրել են շրթունքներն իրենց մեջ։

Միշտ պպզած է. տեղիցը չի շարժվում։ Եվ որովհետև ցուրտ է, ունի ծնկների վրա, երկու ձեռքով բռնած, հոգե մի փոքրիկ կրակարան, որի մեջ, մոտակա հացթուխից առած մի բուռ կրակը, նա աշխատում է միշտ անշեջ պահել՝ տաքություն ունենալու համար։

Երբ մի օր էլ անցնում էի կողքից, կանգ առա քիչ և ուզեցի տեսնել, թե ինչ էր անում այդ այլանդակ դերվիշը։

Չէր աղոթում. ոչ էլ երգում էր։ Անցորդներ շատ կային, բայց ողորմություն իսկ չէր հայցում։ Զզված ու խամրած հայացքով դիտում էր և չէր տեսնում։ Եվ անցորդները հաճախ նրան էին նետում մի-մի սև փող։ Դրամն ընկնում էր կողքին կամ գոգը։ Չէր շարժվում. թողնում էր, որ հավաքվի։

Երբ մոտեցա, զգաց հայացքս, ծանրությամբ գլուխը բարձրացրեց։ Հազիվ նշմարվող հեգնականի նման մի ժպիտ սահեց դեմքի վրա, աչքերի անկյուններում։

— Դու դերվի՞շ ես,— հարցրի։

Գլխով բացասական նշան արավ և վերարկուն լայն բաց արավ. լիովին մերկ էր։ Կրակարանն աշխատեց դնել ոտների արանքում, կկզել էր։ Հաջողվեց վերջապես, տեղավորվեց, ծածկեց ներսում կրակարանը քղանցքներով և կիսախուփ աչքերը նորից ինձ վրա սևեռեց։

— Աֆիոն ես ծխում կարծեմ,— հարցրի ես։

Գլխով այս անգամ դրական նշան արավ։ Եվ զննում էր ինձ. ոչինչ չէր խնդրում։

Մի քանի րոպե լուռ նայելուց հետո հանկարծ ասաց խուլ, անդրնդային ձայնով.

— Ձեր երկրումն էլ աֆիոն ծխո՞ւմ են։

— Ո՛չ... դա թույն է. մեզանում մարդիկ չեն սիրում իրենք իրենց թունավորել։

Ժպտաց և ասաց.

— Ուրեմն ձեր երկրում մարդիկ ցավեր չունի՞ն։

— Ինչո՞ւ չէ։ Բայց մի՞թե հարկավոր է աֆիոն ծխել, երբ մարդ ցավեր ունի։

— Դու սկի ծխե՞լ ես աֆիոն։

— Օ՛, ո՛չ...

— Ուրեմն չես կարող հասկանալ։ Բայց գուցե լսել ես, որ ծխողը փոխադրվում է երազի մի երջանիկ աշխարհ, ուր ցնդում են նրա բոլոր վշտերը, ուր նա ազատ է թշվառությունից, տանջանքից... Այդ չգիտե՞ս դու...

— Այդպիսո՞վ ուրեմն դուք ձեզ մխիթարում եք։

— Ոչ թե մխիթարում ենք, այլ աշխատում ենք մոռանալ... Մոռանա՛լ... Քի՞չ բան կա մոռանալու...

Այդ միջոցին մի աղմուկ բարձրացավ փողոցում։ Հեռվից նախ երևացին դեպի մեզ արշավող վեց պարսիկ ձիավորներ՝ երկու կարգ շարված. նրանց ետևից սլանում էր չորս ձի լծած մի բաց կառք, որի մեջ փքված բազմել էր մի պարսիկ ազնվական, հագած թիրմայի թանկագին շալից շքեղ մուշտակ։

Մի խումբ աղքատներ ցնցոտիներով, կանայք կիսամերկ, մանուկներ՝ ցեխաթաթախ, սրթսրթալով, ատամները կափ-կափելով, վազում էին կառքի երկու կողմից՝ ձեռքերը պարզած, աղաչավոր ձայներով.

— Աղա՛ ջան, մի դրամ...

— Տե՛ր իշխան, մի սև փող...

Ժողովուրդը ճանապարհ էր տվել. կառքը սրանում էր. ցնցոտիներով տասնավոր մուրացիկները ճղփացնելով ցեխն ու ջուրը, վազում էին, և ազնվականը փքված՝ դիտում էր անհոգությամբ այդ բոլորը։

Մերկ դերվիշն ինձ նայեց, հետո ազնվականին և ասաց.

— Հարկ չէ՞ մոռանալ այդ... կարելի՞ է առանց աֆիոնի...

Մի քիչ լռեց. հետո հանկարծ աչքերը փայլեցին։

— Մեր նահանգապետն է,— շարունակեց նա,— երկիրը հարյուր հազարով գնել է, որ երկու հարյուր հազար շահի... և ահա թե ո՞րպես է շահում... Հարկավոր չէ՞ ծխել։ Ինձ երբեմն թվում է, որ այս բոլորը երազ է և որ երբ աֆիոն եմ ծխում, այն ժամանակ միայն մտնում եմ իրական կյանքի մեջ, այն ժամանակ միայն զարթնում եմ քնից... Օ՛խ, ծխի՛ր աֆիոն, տե՛ր, հ պիտի տեսնես, թե որպե՞ս կմոռանաս այդ բոլորը, այդ ցավերն ու անիրավությունը... Փողոցի մեջ, պատերի տակ, ցեխի անկողնի վրա է, որ պառկում ենք մենք, իսկ մեզնով հարստացողը թիրմայի շալի մուշտակով է զբոսնում...

Հետո մի դանդաղ ակնարկ էլ ձգեց քիչ-քիչ ետ մնացող մուրացիկների վրա, սրացող կառքին և երբ կծկվում էր վերարկուով, ասաց.

— Կյանքը, երջանկությունը միմիայն քնելու մեջն է. իսկ այս բոլորն երազ է, վատ կոշմար... Անցի՛ր, տե՛ր, մի՛ խանգարի քնելու...

Ու ամփոփված, գլուխը խոնարհած՝ անշարժացավ։

Երբ վերադառնում էի, դերվիշը միշտ նույն տեղն էր, մի՛շտ անշարժ, գլուխը կրծքի վրա, ինքնամոռացության մեջ...

1897

ՄԵՌՆՈՂՆԵՐԸ ԲԱՐԵՎՈՒՄ ԵՆ ՁԵԶ

1

Ապահովության մեջ ապրող բարեկամ։

...Չի անցնի մի քանի օր, և այստեղ էլ, ինչպես մեր սիրուն երկրի ամեն մի անկյուն, կողողվի մեր արյունով։ Մեր դիակները սփռոց կլինեն փողոցներին, մեր շքեղ հայրենիքի երկինքը կսևանա ագռավների բազմությունից, և օդը կլցվի նրանց կռկռոցով...

Ո՞ր կողմը դառնաս՝ ավերակ ես տեսնելու, ո՞ր տունը մտնես՝ բռնաբարված ու ձգված աղջիկ, գետնատարած մայրեր, գլուխները սյուների վրա ջախջախված մանուկներ ես տեսնելու և գերեզմանն ե՞ր, գերեզմանն ե՞ր...

Ես էլ, բոլոր ազգականներդ, ծանոթներդ,— մինչև ետինը՝ մեռնելու ենք սահմանված և քեզ բարև ունենք, պանդուխտ եղբայր, որ գուցե գես շատ ապրես, շուտով գաս մեր գերեզմաններին այցելելու և նրանց վրա կանգնած՝ հայրենիքիդ ողբը երգես։

Հույս չունենք ապրելու, ո՛չ։ Քաղաքի մեջ անցած-դարձածն իսկ ապացուցում է, որ բոլորիս կոտորելու են։

Ողբա՞ն սառնությամբ եմ գրում այս բոլորը, և դու արդյոք սառնությամբ չէ՞, որ այս կրկնված, երեքնած նկարագրություններից էլի՛ մեկը պիտի կարդաս։

Չորս օր առաջ սկսվեց։ Ե՞րբ պիտի պայթի՝ չգիտեմ։ Այսո՞ր, մի ժամի՞ց։ Գուցե հենց այս րոպեիս։

Մի քանի օր է արդեն, որ մոտակա քաղաքից հասած կոտորածների լուրերը գրգռել են բոլորի ջղերը և լարել։ Մի թեթև աղմուկ բավական է՝ ամենքին զարհուրեցնելու համար։

Պիտի տեսնեիր սոսկումը, երբ շուկայի մեջ լուր տարածվեց, թե վաճառական Վահանին մի թուրք՝ դաշույնի հինգ հարվածով փռել էր գետին։

Շուկայի մի ծայրից դեպի մյուսը կարծես մի ուրագան սահեց։ Աղմո՛ւկ, շփո՛թ, փախչողնե՛ր...

Որոտումով փակվել էին խանութների տախտակյա փողկերը։ Շատերը, խելքը կորցրածի պես, թողնում էին ամեն ինչ—խանութ, գլխարկ, կոշիկ՝ և վազո՛ւմ էին-դեպի տուն։

Պահ մի ևս, և շուկան դատարկ էր, ամայի, բաց, իսկ փողոցներում՝ վազող-վազողի։

Եվ լուրերը հետզհետե դառնում էին մեծացող, երբեմն՝ այլանդակ։ Որպես թե սպանել էին ոչ միայն Վահանին, այլև շատ անցորդ հայերի, որպես թե թուրքերը, խումբ առ խումբ, փողոցների ծայրերում կանգնած, դաշունում էին կամ գնդակահար անում բոլորին։

Հավաքվել ենք եկեղեցու բակը։ Ամենաապահով տեղն է։ Ահա լրցվում է մատուռը, խուց և դպրոցի սենյակները։ Կին, տղա, ծեր՝ ճչում են, լալիս, ողբում։ Որն իր ամուսինն է փնտրում, մեկը՝ իր որդին, մյուսն իր եղբայրը որոնում։

Մի նշանած աղջիկ էլ ընկել է սենյակից սենյակ, բակից բակ ու մի կողմ թողած ամոթխածությունը, խելակորույս՝ իր սիրելին է որոնում։

— Վահա՞ն, Վահա՞ն,— ձայնում է նա սրտաճմլիկ, աղիողորմ։

Սիրտս սեղմվում է։ Ի՞նչ Վահան է այդ։

Մեկը, որ սոսկումից կծկվել էր մի տեղ, կանչում է.

— Ի՞նչ ես ողբում, աղջիկ, Վահանին սպանեցին։

— Սպանեցի՞ն...

Անվան զուգադիպություն էր թերևս. բայց մի սոսկալի ճիչ դուրս թռավ աղջկա կրծքից, և նա փռվեց գետին։

Սակայն ո՞վ էր ուշք դարձնողը։ Միևնույնը չէ՞ր։ Ավելի լավ էր նախօրոք մեռնել, քան հետո ընկնել թուրք զինվորների ձեռքը...

Մի ուրիշ տեղ կուշ են եկել ահա կին ու մանուկներ, միմյանց են կպել ու լալիս են։

Ինչպիսի՜ լաց...

Եվ պառավներ, որոնք կուրծք են ծեծում, աղոթում...

Լուր է պտտում, որ կոտորածն սկսվել է։ Երբեմն ականջիս են հասնում խուլ, բայց հաճախ կրկնվող հրացանաձգության ձայներ։

Չգիտեմ ե՞րբ էր—այլևս ժամանակը գոյություն չունի մեզ համար—եկեղեցի մտավ մի երիտասարդ։ Նա էր, որ պատմեց, թե պահակ զինվորները սպանել են Վահանին։ Սպանող թուրքին տարել են պալատ և այնտեղ հայտնել, թե սպանված մահմեդականին խլել են ապաստամբ գյավուրների ձեռքից։ Մահմեդականները այդ ժամանակ ամեն կողմից սկսել են գոռալ.

— Մա՜հ գյավուրներին...

Եվ շուկայի վրա էին հարձակվել։ Մենք, որ գիշերն ամբողջ անցկացրինք եկեղեցու մեջ—մոտ երեք-չորս հարյուր հոգի, անոթի, անծածկոց, վախից կիսամեռ, գրեթե անզեն—առավոտյան միայն իմացանք, որ շուկան կատարելապես թալանել էին։

Գրեթե ոչ ոք չաղաղակեց։ Մեռելային գունատություն պատեց բոլորին։ Կթոտեցին ոտքեր և շատերն սկսեցին ծնկները ծեծելով լալ։

Լսվում էին հառաչներ միայն։ Տեսնվում էին կույտ առ կույտ, փոթորկից ջարդված հոտի պես միմյանց կոթնած, գետնի վրա փռված, անկյուններում կծկված, աննպատակ թափառող, անմիտ հայացքով նայող ծերեր, մանուկներ, կանայք։

2

Կեսօրն անցել է։

Մեզնից շատերին հաջողվեց տուն գնալ, պաշար ու ծածկոց բերել։

Քաղաքում տիրում է մի մեռելային ծանր, ճնշող լռություն։ Անցուդարձ գրեթե չկա։ Շատերը դեռ մնում են իրենց տների մառաններում թաքնված, մութ խորշերում պահված։

Մի քանիսը հույս են տածում, որ վտանգն անցել է, որ փոթորիկը վերջացել է։

Բայց խորին լռությունը ավելի սարսափ է ազդում։

Այդ լռությունը փշրող փոթորիկի նախընթացն էր։

Այդպես է լինում մի րոպե, երբ հետևում է կործանիչ հեղեղը, ավերիչ ուրագանը։ Այդպես է լինում այն րոպեին, որից հետո ամպերը որոտընդոստ գոռում են, և կայծակը հրային գծերով պատառում է օդը, ոսկեգույն սվիններ ցրում եթերին մեջ...

Այդպես է լինում այն րոպեին, որից հետո ճրագը բոցափայլում է ու հանգում, մեռնողն աղաղակում է և հավիտյան ննջում...

Եվ արդարև, մի խուլ դղրդոց կոհակաձև ցնցեց օդն ու խուժեց դեպի մեզ։ Մի աղմուկ, որ դուրս գալով հաղարավոր ոռնացողների կոկորդից, անցնում էր փողոցներ, դողացնում ամեն ինչ, շարժում ծառեր, ցնցում գետինը... Մի հարատև գայլային ոռնոց՝ միշտ մեծացող, հետզհետե մոտեցող։

Լսվում էին նաև թմբուկների ձայներ։ Կարծես քաղաքից դուրս բանակած գնչուները իրենց թմբուկներով պար էին սարքել հրապարակներում։

Եվ դրան հետևում էին փշրվող, ջարդվող դռների ձայներ, կացինների թնդյուն, տների մեջ մորթվողների սուր, աղեխարշ ու կծվությամբ օդը բեղդող ճիչեր, թալանողների հաղթական, խռպոտ կանչեր...

Գալի՜ս էին։

Մի րոպե ոչ ոք մեզանից չկարողացավ մի բան արտասանել։ Դադարեց ամեն հառաչ, ամենչ ողբ։

Ոտքի թռան բոլորը՝ զսպանակավոր գործիքի պես ոստնելով, լարվեցին ջղեր, ակնապիշ՝ քարացան հայացքներ...

Հետո, ա՜հ, հետո... Մի՜ խառնաշփոթ, մի՜ ժխոր...

— Տղե՜րք, գալի՜ս են,— լսվեց հանկարծ մի երիտասարդի ուժգին ձայն,— մի՞թե թողնելու ենք, որ ոչխարի պես մորթեն մեզ։

— Մեռնենք քաջերի նման,— ձայնեց մի ուրիշը։

— Զե՜նք, զե՜նք...

— Դուրս, հարձակվենք...

Էլ ոչինչ չէր որոշվում։

Առաջին ձայն տվողը բակ դուրս եկավ. րոպեապես բոլորս կիսվեցինք նրա շուրջը, մեր զենքերը զննեցինք, հետո խմբերի բաժանվեցինք և դուրս թռանք բակից։

Ամեն կողմից հասնում էին նոր փախստականներ և բարեբախտաբար՝ զինված։

— Մինչև վերջին շունչը, տղերք...— գոչեց գլխավորը։

— Անձնատուր չլինենք,— ասաց մի ուրիշը.— միևնույնն է, մեզ ողջ չեն թողնի ո՛չ մի հանգամանքում։

Ահա և խուժանի, հարձակվող գայլերի ծայրը։

Ի՜նչ խուժան։

Առջևից ու մեջտեղից երևում էին զինվորներ, բայց սենկանոն կանգնած, քուրդ ու թուրք ամբոխը զինված էր ամեն տեսակ զենքով։

Աղաղակում էին՝ որքան ձայն ունեին, և կանայք, թմբուկներ ձեռքերին, պար էին բռնել, ոստոստում ու գրգռում իրենց վայրենի ամուսիններին...

Զարհուրելի էր. երբեք այդպիսի կատաղի, գազանային ամբոխ չեմ կարող երևակայել։

Քայլում էին միշտ ոռնալով, հանդիպածին տապալում, մորթում։ Եթե տուն էր—դուռը ջարդում կացնի հարվածներով, ներս էին խուժում, մի րոպեի մեջ տունը մերկացնում, քանդում, ավերակ դարձնում ու անցնում...

Կարծես մորեխներ լինեին, որ մի անգամ իջնելով՝ ամբողջ արտեր են ոչնչացնում։

Սակայն մեր գնդակները կանգնեցրին նրանց։

Բոլորս միասին կրակ տեղացինք նրանց վրա։

Զինվորները փորձեցին խմբվել, պատասխանել մեզ, բայց խառնվեցին։ Կատաղի խուժանի հաղթական ոռնոցը փոխվեց ճիչերի, թմբուկները ընկան, կանայք ետ փախան, հրեցին, հրմշտկեցին ու մի խառնիճաղանջ, զզվելի խառնուրդով ցրվեցին։

Այո՜, բարեկամ, ցրեցինք տասը հազարից ավելի մի խուժանի, որ մեր արյունն էր ուզում, մեր ինչքը, մեր պատիվը։ Ցրեցինք մեր չնչին զենքերով։

Ա՜հ, եթե ավելին ունենայինք...

Քա՜ջ ընկերներս... Պետք էր տեսնել, թե ինչպես սիրտ առած՝ մտան տների մեջ, լուսամուտներից կրակ ու ամեն ինչ սկսեցին տեղալ գայլերի վրա, ջարդել ու փշրել, հալածել ու ցրել... Ես էլ էի կրակում, անգադար հրացանում. և ոչ մեկը չէր վրիպում, ոչ մեկը։

Բայց ի՞նչ կարող ենք անել մեր այս խղճալի զենքերով, գնդակների ու վառոդի չնչին պաշարով, եթե ոչ՝ միայն ավելացնել արյունարբուների թատաղությունը։

Եվ չի անցնի մի օր, գուցե մի քանի ժամ, ու կգան նրանք՝ զինված պետության տված զենքերով, կգա զինվորական ուժ՝ թնդանոթներով, ու մեզ կսպանեն, մեզնից մինչև ետինը կմորթեն...

Չգիտեմ այլևս, թե քանի ժամ կյանք ունեմ...

3

Դեռ ապրում եմ։

Ապրե՞լ ես դու այսպես, բարեկամ, կանգնած՝ ծխացող, արյունաշաղախ ավերակների կույտի, հառաչող, վերքերի մեջ տառապող-տապալվող ազգականներիդ, ծնողներիդ, բարեկամներիդ դիակների, փլող տների, սարսափից ապշած, վախից՝ քրքիջ արձակող կանանց, իրենց կորցրած՝ երեխայի պես լացող, հեկեկող տղամարդերի մեջտեղ...

Ապրե՞լ ես դու երբեք այսպես՝ կանգնած մի քանի խումբ գունաթափ, բայց անհողդողդ երիտասարդների հետ, ոգի ի բռին, գիտակից ու պատրաստ մեռնելու, զոհելու իրենց կյանքը...

Եվ սուլում են ահա գլխիս չորս կողմից թշնամիների արձակած գնդակները, ականջս խլացնում են շրջապատիս շփոթն ու լացը, թշնամու ոռնոցն ու հայհոյանքը։

Առաջին ժամին կորցրել էի ինձ։ Հրացանս պարպվում էր անօգուտ կամ՝ առանց նպատակի. նայում էի՝ առանց տեսնելու, լսում էի՝ առանց ականջ դնելու։

Ոչինչ չէի հասկանում։ Տեսնում էի, որ շրջապատում ընկնում էին ծանոթներս ու բարեկամներս և գալարվում, տանջվում։ Դիմացից նույնպես։

Մի վայրկյան, ձայների դղրդման և տիրող կարճատև լռության մեջ ականջիս հասան վիրավորվածների հառաչներ... ապա՝ հեռավոր, անթիվ ամբոխի ոռնոցները և գետի տխուր, միատեսակ խշշոցը...

Առաջին ժամից հետո, սակայն, մի տեսակ սթափման մեջ գտա ինձ։ Եվ ականջ դրի։

— Տղե՛րք, քա՛ջ եղեք...— հասկացա մեր գլխավորի որոտացող ձայնը,— կրակեցե՛ք, ողջ-ողջ անձնատուր չլինենք։

Եվ պայթում են հրացանները, կրակ ժայթքում։ Տաք ծուխը ծածկում է մի րոպե ամեն ինչ, հետո ցրվում և հետզհետե նորից երևցնում մոտեցող զինվորների սվինների շարքը...

Զինվորներ են, այո՛, շարքով կանգնած, լցնում են հրացանները, միասին բարձրացնում... Թնդում է ապա մի ահեղ ձայն, և մեր գոնների ու լուսամուտների վրա ցնցումներ են տեղի ունենում, փշրվածքներ, ահագին ճեղքվածքներ. լսվում են ճիչեր, աղաղակ...

Որքան տևեց այդ—չգիտեմ...

Հանկարծ եկող զինվորների շարքը կանգ է առնում, իր ետևից լսվում են էլի ոռնոցներ, երևան է գալիս թուրք ամբոխը, կատաղի, դուրս եկած թալանած տներից, քարշ է տալիս իր հետ ուտելիք, հագնելիք, գորգ, վերմակ... աղջիկներ, ծերունիներ, մայրեր...

Ահա, մշուշի պես աչքիս առջև են գալիս ուշաթափ, մազերը ցրված՝ մատաղահաս աղջիկ ու կանայք՝ վայրագ քրդերի բազուկների մեջ, ծերունիների ալեզարդ գլուխներ, որոնք խեղդված գազան թուրքերի թևերով՝ քարշ են տալիս իրենց մարմինը փողոցի փոշու մեջ, և մանուկներ, որոնք ճչում են, իրենց թաթիկները պարզում.

— Մայրի՜կ, մայրի՜կ...

Էլ ոչինչ չեմ տեսնում։

Հրացանաձգությունը դադարել է, ընդհանուր քարացում է տիրել. թշնամին հառաջանում է դեպի մեզ։

Մեր ծնողները, մեր կանայք ու մանուկները նրանց առջևից քշվում են և մեր՝ ինքնապաշտպանության համար արձակվող հրացանների առաջը բերվում։

Ա՜հ, վատերը... Ստիպում են մեզ մեր ձեռքով սպանել մեր քույրերին, մեր մայրերին ու զավակներին։

Զենքերնիս ցած են իջնում, բազուկնիս թուլանում։

Բայց ահա գլխավորը, որ հանկարծ ցցում է իր երկար, խրոխտ հասակը և գունաթափ՝ ձայնում.

— Տղերք, այդ ի՞նչ է, վարանո՞ւմ եք. չէ՞ որ եթե կենդանի մնան դրանք, միևնույն է, զոհ են գնալու այդ գազանների կրքերին և սրերին... Հառա՜ջ, կրակեցեք, թող մեռնեն գոնե պատվավոր մահով...

Ու բարձրացրեց հրացանը, նշան առավ, կրակեց...

Մի ծեր կին էր, որ գնդակն առավ, բարձրացրեց ձեռքերը, նայեց զայրկոդին և մեռավ...

Մայրն էր...

Գազանները սարսափահար՝ կանգ առան. բնազդմամբ իմացան, որ որդին մորը սպանեց։

Այդ հսկայական սպանության առաջ՝ ապշեցին նրանք. վախեցան, սկսեցին ետ քաշվել...

Բայց երկար չտևեց այդ։

Անշուշտ շատ չէին կարող լինել այդպիսի անսիրտներ,— մտածում էին նրանք։

Եվ սխալվում էին։

Բոլորս բարձրացրինք հրացանները։ Ծերունի կինը, ընկած փոշու մեջ, մեր դրոշն էր դարձել...

— Կրա՜կ...— որոտաց գլխավորը խռպոտ ձայնով,— մայրս էր, որ սպանեցի... կրա՜կ, թող մեռնեն բոլորն էլ..

Ու գունաթափ էր որպես մահ։

Ահա այդ բոպեին էր, որ աչքս հանկարծ ընկավ մի քուրդի բազուկների վրա քարշ եկող կնոջ դեմքին։

Կինս էր։

Բարձրացրել էի հրացանս, ետ չքաշեցի. աչքերս միայն փակեցի և... կրակեցի...

Ու երբ բացի, կինս ընկած էր, և քուրդը թավալում էր նրա կողքին։

Շատ հեռու չէին. ինքնամոռացության մի բոպեի մեջ դուրս նետվեցի, երկու ոստյունով հասա, խլեցի կնոջս դիակը, բարձրացրի և ետ եկա։

Ոչ ոք չդիպավ ինձ։

Մեռել էր. գնդակս ծակել էր գլուխը, և աչքերը սոսկումով ինձ էին նայում։

Ցած դրի պառավ մորս կողքին.

— Հարսդ է, մայրիկ... ես սպանեցի...

Ու միացա խմբին։

Հրացանում ենք. շուտով սրերի կդիմենք...

Ո՞վ մեզնից արդյոք կենդանի պիտի մնա...

Մնաք բարև, ապահովության մեջ ապրող բարեկամներ, մեռնողները բարևում են ձեզ...

1899

ՁՈՂՈ—ՔԱՐ

Իջել էինք սայլից, թողնելով որ հևիհև գար նա միանալու մեզ։ Մագլցել էինք վերջին քարաժայռը և այժմ նրա մյուս կողմն անցած՝ նստել էինք անմոռուկների մի շքեղ մարգի վրա և դիտում հեռանկարը, որ փռվում էր մեր ոտքերի տակ։

Ամառնամուտի այդ սքանչելի պահուն, գիշերային առատ ցողի տակ նվիրացող անտառը բացվում էր ներքևում, ազատվելով հետզհետե ցրվող մշուշից։

Սեպաձև, հսկա ապառաժներով անտառոտ լեռները, մազերը գլխների վրա դիզացած վիթխարիների նման, գագաթնին ամպերի մեջ, կողերն ի վար հոսանուտ ժայռեր թավալագլոր, այս-այն կողմ անհատական խորխորատներ, մթին անդունդներ ու կանաչ հագած ծործորներ՝ հաջորդում էին իրար։

Մշուշն իջել էր մինչև հովիտների խորքը և այժմ դանդաղ, արևը ծագելու հետ, իր ընդարձակ ծավալով ոլորտվում էր ծայրերից, բրդի խոշոր քուլայի նման օրորվում էր ծառերի ծայրերին և վարանելով կարծես՝ մաքրում էր բռնած տարածությունը, սահելով լեռներն ի վեր։

Լուռ և անշարժ մնացել էինք։ Ոչ իսկ կարողանում էինք հաղորդել իրար մեր սքանչացումը։

Ահա ուրեմն, թե որպիսի՞ բնության մեջ էինք գնում ապրելու.— այդ ներքևի շքեղ հովիտներում, անտառոտ բլուրների կողերին...

Ու բացվում էր հորիզոնը մեր աչքի առաջ մանիշակագույն և փոշելից։ Հեռուներն սկսում էին շեշտվել շրջակա գյուղերը, գալարուն, կապույտ՝ օձերի պես դեպի վեր սողոսկող ծխի անոսր սյունակները երևվան էին գալիս բլուրների ստորոտներում։ Բայց դեռ խորին, անշշուկ լռությունն էր թագավորողը։ Կարծես ոչինչ դեռ չէր զարթնել, ո՛չ մի թռչուն, ո՛չ մի բույս։ Անլսելի էին նույնիսկ հեղեղատների և ջրվեժների կարկաչները։

Այդ խորին լռության մեջ էր ահա, որ հանկարծ մի սուր, երերուն զողանջ թրթռաց, ելևէջներով բախվեց ժայռերին, թնդաց, ապա մեղմացավ և իջավ հալվելու անտառի գրկում։

— Քարկող գյուղի զանգն է,— ասաց ընկերս։

Ներքև, թերակղզու նմանող ահավոր ժայռերի մի տափարակ պատվանդանի վրա գտնվող գյուղի զանգն էր։

Մի րոպեի մեջ կարծես ամեն ինչ զարթնեց։ Թռչունների ճլվլոց, հեռավոր աղաղակներ, նույնիսկ շների հաչոց, ապա՝ բույս ու թուփ փայլեցին մեր շուրջը, ժայռ ու մարգ պսպղացին զվարթագին՝ նոր ծագող նարնջագույն արևաշողքի տակ։

Եվ զանգը խորքերում՝ հնչում էր անընդհատ։ Քա՛նի արագ, ա՛յնքան կենդանությունն ավելանում էր ամեն կողմ, ա՛յնքան թռչունները շատացնում էին երգերը և ա՛յնքան ջրվեժների ձայնը լսելի, ազատված մշուշի քողից, ելնում էր ձորերն ի վեր և գալիս էր հասնելու մեզ։

Որքա՛ն գեղատիպ էր այդ միջոցին դաշտի հեռանկարը։ Այնտեղ, ընդարձակ տարածության մեջ, տեղ-տեղ ցցված էին կանաչ, կարմիր տանիքներով գյուղեր, մեջտեղ՝ արևի պոլքի տակ գալարվող ջրեր էին հոսում, իսկ առավոտյան ցողի ականակիտ կաթիլները շողշողում էին մեն-մի ծաղկի—մանուշակի, անմոռուկների և զանգակիկների շուրթերին։

Եվ հեռուն, շա՛տ հեռուն, սպիտակ շերտերով շարժվում էին հոտերը, սևին էին տալիս նախիրներ. թացությունն էլ այդ ամենը շնչում էր՝ տալով հողին, ժայռին թարմ, գորշ գույն՝ լվացած լինելով թփի և բույսի փոշին։

— Այնտեղ է ահա՛ գյուղը,— մատը պարզեց դեպի հեռավոր հորիզոնը՝ ընկերս։

Եվ մեր հայացքներն ուղղվեցին դեպի մշուշալից բլրակները։

Մի քանի ժամ ևս ու պիտի գնայինք այդ կանաչ, երանավետ վայրերում հանգչելու, թողած քաղաքի սեղմ օդը, ժխորն ու աղմուկը։

Մինչ այդ մեր սայլը, բազմաշարշար այդ փայտե արկղը, ցնցվելով, ճռճռալով, ամեն քայլին փշուր-փշուր լինելու սպառնալով՝ գալիս հասնում էր մեզ։

Ձառիվերը վերջացել էր. պիտի իջնեինք այնուհետև. քիչ հետո անտառն էլ ցանցառանում էր, և դաշտի բաց հորիզոնն իր կանաչ տարածությամբ՝ մի նո՛ր հրճվանք էր պատճառում։

Մի քանի ոստյուններից հետո սայլը կանգ առավ և նստեցինք։ Իջնում էինք արագ, իրավ է, սակայն դեռ էլի քսան րոպե անհնար եղավ բա՛ռ իսկ արտասանել։ Կառչում էինք սայլի կողերին, սրտերնիս դող էր ելնում, երբ անտանելի արկղը ծռվում էր դեպի անդունդը՝ սոսկալի ցնցումներ գործելով քարակույտերի վրա։ Ականջ խլացնող նրա դղրդյունը գրավել էր մեր ամբողջ լսողությունը։

— Քի՛չ տեղ է,— հաջողեց ասել մեզ ընկերս, որ տեղացի մի երիտասարդ էր և քաղաքում բնակվող.— երբ այդ Ձուշ-քարն անցնենք, այնուհետև հարթ է։

Ձուշ-քար կոչվածը մի ժայռոտ և անտառապատ լեռ էր, որ ցցվում էր կնճռոտ ձորակի ծայրին։ Տեսնում էինք նրա կրծքի վրա ապառաժները ճեղքած և դեպի անդունդը խոնարհված կաղնիների տակ, մթին, խոշոր քարայրներ, դեպի որոնց հասնելը մեզ թվում էր ուղղակի անհնարին։

Երբ քիչ ավելի հարթ տեղ էինք հասել, հարցրի նրանց մասին։

— Այնտեղ մեղվի փեթակներ էին պահում գյուղացիք. երևի առաջ փարախներ են եղել և կամ, ո՞վ գիտե, ինչ։ Սակայն այդ այրերը նշանավոր են նրանով, որ այնտեղ են սպանված եղել Հասար գյուղացի չորս հայտնի եղբայրները... Անշուշտ, լսած պիտի լինեիք նրանց մասին։

— Ո՛չ,— ասացի ես,— ի՞նչ եղբայրներ են դրանք։

Ընկերս գլխով համբերության հրավիրեց, մինչև որ մեր աղիքները հանգիստ գտնեին քարերի վրա ոստնող սայլից։ Եվ երբ վերջին վայրենի տանձենուց հետո հարթ տեղ ընկանք, այնտեղ, մինչ ձիերին շունչ էին առնել տալիս, պատմեց մեզ Ձուշ-քարի մասին։

— Հասարցի չորս եղբայրներ էին, իրենց գյուղի ամենակարիճ-

ները։ Տունուտեղ էլ ունեին. ամենքից մեծը, որ հիսնամյա հոկա մարդ էր, մեր լեռների հարազատ ծնունդը—ամուսնացած էր. միայն մի մանուկ ուներ, տասնամյա տղա. մյուսները ամուրի էին, ամուրի էլ մեռան... Դուք, իրա՞վ, չե՞ք էլ լսել Դուզանի Հաբեթ աղայի մասին։

— Դուզա՞ն. դա այն գյուղը չէ՞, ուր գնում ենք մենք ապրելու։

— Ոչ միայն այն է, այլև Հաբեթ աղայի որդու հետ է, որ ընկերացել եք՝ նրա հողերը մշակելու համար։

— Հետաքրքիր է. պատմեցե՛ք, մենք ոչինչ չենք լսել։

— Հաբեթ աղան,— սկսեց ընկերս,— բազմահարուստ մի աղա էր իր շրջանում. հարուստ և լիրբ... փողի ուժը փորձել էր և լրբացել... Փողը, մանավանդ այսպիսի խուլ տեղերում, տեր և իշխան է ամեն բանի... Ունե՞ս փող—ունես ամեն ինչ. կարող ես գոռալ, կանչել, հայհոյել, ծեծել... անհոգ կաց, ամենքը կատու կդառնան առաջդ. քա՞նի ամուր զարնես, ա՛յնքան ավելի կքծնեն. քա՞նի պինդ գոռաս, ա՛յնքան ավելի լեզուները դուրս կհանեն... փո՞ղ ունես. դա հանաք բան չէ.. Եվ Հաբեթ աղան փող ուներ, շա՛տ փող... Այսպես կամ այնպես՝ դիզել էր նա բավական, տոկոսով էր տալիս—ի նկատի ունեցեք. հարյուրին ամենապակասը 20, հաճախ 40, և դեռ ընծաներն ավելի, ձրի աշխատեցնելը, որևէ բան կես գնով պարտատերից կորզելը, գյուղի մեջ ամենալավ պատառների տեր դառնալը... Ու դիզում էր այդպես։ Կենտրոն էր գտել իրեն և կամաց-կամաց շրջան էր գծում իր չորս կողմը, ձեռքը հասնելու չափ ոտների առաջն էր քարշ տալիս հասնողներին... Նախ, ի՞ր գյուղացոց էր ստրուկ շինել, մուրհակներով, գրավներով շղթայել. հետո շրջանը մեծացրել էր ա՛յնքան, որ հասել էր մինչև այս կողմերը, մինչև Հասար և դեռ է՛լ հեռուն... Գյուղացի չկար, որ պարտք չունենար նրան... Տոկոսնե՛րը հենց—մի տարվա տոկոսը—ինձ ու իմ ընտանիքիս կապահովեր ընդմիշտ... Միայն կանխիկ փող ա՛յնքան թողեց, որ կհավատա՞ս, նրա մեռնելուց հետո որդին քաղաքում ցորենի նման, բռով դեսուդեն ցրելով՝ հազիվ 3—4 տարում հասավ իր շորերը ծախելու օրին...

Ու այսպես, ընկերս սկսել էր պատմել՝ ինքնահատուկ դառն, կծու հեգնությամբ լի, սրախոսություններով և պատկերացումներով։

— Լա՜վ մարդ է եղել...— ծիծաղեց փեսաս։

— Ազդեցիկ մարդ էր,— շարունակեց ընկերս,— ա՛յնքան ազդեցիկ, որ ահա 18 տարի է նրա մեռնելը, բայց ե՛ս իսկ չեմ հանդգնե այս պատմությունը ճշտորեն պատմելու մեր գյուղում... աստվա՜ծ ազատի. եղբայրնե՛ր, եղբոր որդինե՛ր... Այնքան էլ շատ են ո՞ր... տո՛նս կքանդեն... Գյուղ մտնենք՝ ձեզ ցույց կտամ եկեղեցու կողքին նրա գերեզմանը։ ամենաշքեղն է. վանդակապատ, վանդակներն էլ կանաչ յուղաներկ...

— Գյուղացի՞ք են շինել։

— Որդին... գյուղացիք միայն թույլ տվին, կարծեմ միջնորդեցին էլ առաջնորդին, որ եկեղեցու դռան մոտ թաղվի... «Լուսահոգին իշխա՛ն մարդ էր»,— մինչև հիմա էլ ձեզ կասի մեր գյուղի «խոլերան»։

— «Խոլերա՞ն»... դա ո՞վ է։

— Կծանոթանաք,— ծիծաղեց ընկերս.— երբ ամառվա շոգին, խանութների առաջ մուշտակով նստած տեսնեք մի մեծ փափախով, դրժգույն, կարծես խոլերա ծերունի—դա «խոլերան» է...

— Հետո՞,— միջամտեց փեսաս.— վաշխառուի պատմությունդ շարունակիր։

— Սը՛ս... զգույշ,— խրատեց ընկերս՝ կռանալով դեպի մեզ,— սայլապանը մեր գյուղացի է. իմացեք, ձեր ո՛չ մի ածականը չի մոռանա գոյականին կպցնելու... Եվ դա կանի ա՛յն ժամանակ, երբ որևէ բանով վիրավորեք նրան. օրինակ՝ կովին չթողնեք, որ ձեր բանջարներն ուտի և կամ այծերին քշեք, եթե նրանք խմբովին այցելեն ձեր տնկած ծառերին...

— Պատմությունդ չմոռանաս...

— Ո՛չ,— ժպտաց ընկերս,— 18 տարի է, որ չեմ մոռացել։ Ես դեռ երեխա էի այն ժամանակ. բայց, երևի, իմ թոռն էլ, եթե ձեր թոռներին հանդիպի, նույն ճշտությամբ կպատմի նրանց՝ Հաբեթ աղայի և չորս եղբայրների մասին... Նմանը չտեսնված դեպք էր այդ... Ահա՛, նայե՛ք, այժմ պարզ երևում է այդ կաղնիների խումբը քարայրների վերևում... այդ մացառները... Այնտեղ էր, որ երկար ժամանակ ապաստան գտան չորս եղբայրները, այնտեղ էին նետել իրենց խեղճերը վերջին արյունոտ ոստիկաններին... Ես ոստնում եմ մեր արկղի պես... Վերադառնանք ուրեմն Հաբեթ աղային... Եվ այսպես, նա իր գրպանի և բռան մեջ էր հուպ տվել մի ամբողջ գավառ։ Իր յուղը, պանիրը, բուրդն ու հնձվորները—տոկոսի տոկոսներն էին. իսկ տոկոսի տոկոսի՛ տոկոսները— «այսօր բաղա՞ փորելու եկ, Արշա՛կ... էգուց եզներդ ղրկիր գութանի, Մարկո՛ս... Եկող շաբաթ պատս պիտի շինես, ուստա՛ Ղազար...» և կամ «էս ո՞ւր ես, ա՛յ հարամզադա Թորոս, բաս թողնելու ես, որ էս ծեր հալովս ե՞ս գնամ ցորեն հնձեմ, բերեմ կալը»... Հասկանո՞ւմ եք... Սրանք բուն տոկոսները չէին դեռ. բուն տոկոսները սկսում էին ձմեռնամուտին...— «Ղազա՛ր, մուրհակիդ օրը հասել է... Ադա Մարկո՛ս, փողս չե՞ս տալու... Տո Արշա՛կ, թե փող չունես տոկոսը տալու, էլ ո՞ւր ես հարոցիդ խոտը

տունդ տանում»... Եվ ժողովում էր, և ճզմում սարդից ավելի անգութ, վամպիրից ավելի՛ խիստ...

Օրերից մեկ օր էլ... բայց սպասեք, կարծես մեր «զուիին» (սայլին էր ակնարկում) ուզում է էլի պար գալ...

Հիրավի, զառիվայրից դեպի մի հեղեղատ էինք սլանում արագությամբ։ Ջանացինք շունչներս բռնել, աղիքներիս ձգել և սայլի կողքերին լաուչել, որպեսզի քարերի ցնցումներից չշպրտվեինք դուրս։

Երեք-չորս րոպե տևեց. բայց որպիսի՛ րոպեներ... Անցանք սակայն. ազատ շունչ առանք ու վազում էինք կիսախարխուլ երկու-երեք խրճիթների առջևից, ուր դիմավորեցին մեզ 5—6 կատաղի գամփռներ։

— Փարախնե՞ր են...

— Օրերից մեկ օր էլ...— շարունակեց ընկերս.— պատմում եմ, լսեցե՛ք... Այդպիսի փարախներ շատ կտեսնեք... Հաբեթ աղան լուր է ուղարկում Հասար, Սողոմոնին թե՝ «Դե շո՛ւտ, երկու օր կա մուրհակիդ լրանալուն, փողն ու տոկոսը բեր, թե չէ էսա՝ գալիս եմ տավարդ առաջս անեմ, քշեմ ու ծախեմ»...

Բանն այն է, որ խեղճ Սողոմոնն ու իր եղբայրները վաղուց պարտք ունեին աղային։ Մի տարի տավարների հիվանդությունը կոտորել էր գոմեշներին, եզներն էլ սովածությունից ընկել-սատկել էին, տուրք պիտի տային, ի՞նչ անեին. մի քանի, կարծեմ հենց երկու հարյուր ռուբլի՝ տոկոսով առել էին... 40 տոկոսով. պարտքն էլ, գիտես խո, ձնագնդի նման գլորվել էր, գլորվել, սա՛ր էր դարձել և դեռ էլի գլորվում, Զոլոքարի չափ էր լինում...

— Երևի երկու հարյուրը՝ չորս էր դարձել,— դիտեց փեսաս։

— Առանց տոկոսների... Դե՛հ, խեղճ Սողոմոն և եղբայրներ, չորս հարյուրը մի անգամով ինչպե՞ս տային. այդ տարին էլ, հակառակի պես անձրևային էր. կալերը ծլել էին, գետնախնձորը փչացել... Անիծվի այս երկիրը, ամե՛ն տարի խո այդպես է... Հաբեթ աղան, ո՞վ գիտե ինչու— երևի Սողոմոնը շատ խոնարհ ողջույններով չէր հանդիպել նրան—թշնամացել էր, այժմ իր բոլոր առնելիքն էր ուզում... Մի կողմից էլ երևի տեսնում էր, որ պարտքն աճում է, իսկ վճարող աղբյուրը՝ ցամաքում. մտածում էր՝ քանի շուտ էր, եղածը սաղացներ... Պահանջում էր, կարո՞ղ ես գոռալ, վիճել—ձեռք ես քաշել—պիտի վճարես... Սողոմոնս է, շատ դեսուդեն է անում, լուր է ուղարկում, աղաչում, բայց տեսնում է, որ աղաս անդրդվելի է, մի օր էլ շարուխները հագնում, ոտքով Դուզան է գալիս, որ ինչ է՝ անձամբ աղաչի, պաղատի, գուցե մուրհակը կարողանա նորոգել տալ...— Մի 20—30 մանեթ էլ, ոնց որ լինի, ճարում է, որ տոկոսները վճարի, գուցե խղճան և ժամանակ տան...

Գալիս հասնում է գյուղ, Հաբեթ աղան նստել Սերովբենց դուքանում, գլխին է հավաքել գեղացոց ու ղալմաղալի մեջ է, տոկոսներն է հավաքում, նեղսրտվել է, գոռգոռում է, հայհոյում...

— Բարև, աստծու բարին...

— Հա՞, եկա՞ր... եկ տեսնենք, գոնե դո՛ւ պարտքդ բեր, թե չէ էս անիծածները ինձ սոված են թողնելու այս ձմեռ...

— Աղա, ես...

— Հը՞, ի՞նչ կա... քե՞զ հետ էլ կովենք... Տո, էս ի՞նչ անամոթ, լիրբ խալխ եք... փող եք ստացել՝ դե բե՛րեք տվեք, էլի՛... էլ ո՞ւր եք նեղացնում, էս կիրակի օրով հայհոյանքներ հանում բերնիցս... Չի՛ լինի, չէ՛, ամբողջը պիտի տաս, հե՛րիք է համբերածս..

Սողոմոնի լեզուն ասես կապվել է... Անձայն հանում է 30 մանեթը դնում աղայի առաջ և աղաչում թե՝ էս է եղածը, աղա՛, որ քամես մեզ. ավելին չունենք... մուրհակը նորոգիր, գուցե գարնան...

— Ո՞նց թե գարնան... Տո իծի՛ մորուք, ես քո խաղա՞լիքն եմ, յա թե չէ՝ փողը դաշտի՞ցն եմ գտել... բաս իմ տղերքը հաց չե՞ն ուզիլ, դու գարնան կարո՞ղ ես չորս-հինգ հարյուր մանեթ մի անգամով տալ...

Էլ ի՞նչ է լինում, ինչ չի լինում—մի թունդ կռիվ ու հայհոյանք հեռանում է դրան... խո գիտե՞ք, մեր գյուղացիք ինչ որ չգիտենան, կիրակի օրով կռվելն ու միմյանց հայհոյելը շա՛տ լավ գիտեն. մեկ էլ որ, մի թեթև պատճառ՝ և ահա միմյանց է՛լ հայր, է՛լ պապերի գերեզման... Մանրամասն չի՛ հասել մեզ, թե ի՞նչպես է լինում, որ Հաբեթ աղան մի թունդ, լկտի հայհոյանք է բաց թողնում բերնից, ետևից էլ մի մեծ ապտակ հասցնում Սողոմոնին... Մեկ էլ ի՞նչ տեսնեն... Սողոմոնս է, մոռանում է աղա, պարտք, անճարություն, արյունը գլխին է խփում, տանում է բերում և այնպիսի՛ հարված հասցնում աղային, որ սա ետ-ետ է գնում ու խանութի գետինը չափելու պառկում...

Մի՛ խառնաշփոթ, մի՛ աղաղակ... Ո՞նց, Հաբեթ աղան ծե՞ծ ուտի, խանութի փոշի՞ն ավելի...

Բայց դե՛հ, թափվում են գյուղացիք, մեջ են ընկնում, աղային բարձրացնում, շորերի փոշին թափ տալիս, ճգնում են հաշտեցնել, Սողոմոնին են համոզում, աղային՝ ներել աղաչում... բայց ո՛չ կտրիճ և սրտի խորքից վիրավորված լեռնցին է ուզում աղաչելով հաշտվել և ոչ էլ լիրբ ու երես առած բռնավորը՝ զիջել և ներել։

— Գնա՛,— կանչում է նա կատաղած,— գնա՛, ես մարդ չեմ լինի, դու և բոլոր ցեղդ այս ձմեռ չկոտորվեք քաղցածությունից, շա՛ն որդիներ, ավազակնե՛ր...

Ու կատարում է սպառնալիքը։ Ճշմարիտ է, կերած ծեծը ոչինչ,

բայց մեկ մտածե՞ք... Հաբեթ աղան, գավառի գլխին կակալ կոտրողը, ամենքի վրա անպատիժ գոռացողը, ամենքին վախուղող ազդողը... և հանկարծ՝ ծեծվա՞ծ մի ինչ-որ լեռնցուց, փռված գետի՞ն, ոտքի տա՞կ, այն էլ ողջ գյուղի առաջ... Վաղը չէ՞ որ լուրը կտարածվեր, ամբողջ նահանգի խոսելիքը կդառնար... Ո՛չ, պետք է ցույց տալ, և լա՛վ ցույց տալ, որ անպատիժ կերպով չէր կարելի նույնիսկ բարձրաձայն խոսել նրա նման «իշխանի», նրա նման գավառի մեծի, աղայի հետ...

Այդ ձմեռ Սողոմոնն ու ընտանիքը, բոլոր եղբայրները, հիրավի, մնում են համարյա՛ անոթի։ Աղան ամեն կերպ աշխատում է և փողի ուժով հաջողվում է հասցնել նրանց այդ դրության։ Խլում է տավարը, խոտը, կալի արդյունքը... Սողոմոնի կինը կրած տանջանքներից մեռնում է, թողնելով որբ տասնամյա մանուկին...

Գարունը երբ բացվում է, այլևս չկան ո՛չ ե՛զ, ո՛չ գոմեշ, ո՛չ սերմացու, ո՛չ փող... Չորս եղբայրները դառնում են օրվա հացի կարոտ մարդիկ...

Եվ մի խորունկ զայրույթ, վառվող կատաղություն բռնկում է մի ժամանակ մեծ, առատ տան զավակների սրտի մեջ։ Ավելացրեք դրանց վրա Հաբեթ աղայի ծաղրը, շարախնդաց ակնարկները, ամեն տեղ, ամեն բանում նրանց վնասելը...

Ո՛չ, տանել չէր կարելի այլևս։ Հարկավոր էր քանդված օջախի վրեժն առնել, գավառն ամբողջ ազատել կլանող հրեշի ձեռքից, վիշապի ակռաները խլել...

Այս և ուրիշ այդ տեսակ մտքեր ներշնչում են եղբայրներին՝ թողնելու ամեն ինչ և ընկնելու լեռները։ Մի գիշեր էլ, զինված՝ իջնում են Գուզան, գտնում գյուղի գիշերապահներից մեկին, ստիպում, որ նա մի պատրվակով բաց անել տար Հաբեթ աղայի տան դուռը, ներս են նետվում և բռնում աղայի կոկորդից։ Մեկը գտնում է բոլոր մուրհակները, գիշում, վառում է, իսկ Սողոմոնը վար է բերում տանտիրոջ արծաթապատ հրացանը, կամենալով զրկել նրան պաշտպանվելու միջոցից։ Սպառնում է սպանելու, եթե նա ցույց չէր տա փողերի տեղը։ Այդպիսով մտածում է իրենց քանդած տունը վերանորոգող գումար ձեռք բերելուց հետո՝ թողնել հեռանալ։

Հաբեթ աղային և ո՛չ իսկ ճչալ է հաջողվում. կինն ու որդիները սարսափահար՝ կծկվում են անկյունում. օգնություն կանչել անհնար է. գիշերապահի վրա՛ իսկ հսկում է եղբայրներից մեկը։

— Ուրեմն մտադիր չե՞ն եղել սպանել աղային,— հարցնում եմ ես՝ ընդհատելով։

— Ո՛չ, արյուն թափել ո՛չ ոք չի կամենում. Սողոմոնը մինչև իր

կյանքի վերջը երդվում էր, որ նա չէր կամեցել Հաբեթ աղայի մի մազիկ իսկ շարժել տեղից, այլ միմիայն դիզած մուրհակները ոչնչացնել և մի քանի հարյուր ռուբլի ձեռք բերել—գնալ ուրիշ երկրում տեղավորվելու համար... Բայց փող քիչ են գտնում. հազիվ երկու հարյուր. աղան, ըստ երևույթին, զգույշ մարդ է եղել... Ինչ որ էլ լիներ, գլխավոր խընդիրը կատարված էր, ամբողջ գավառի շղթաները՝ մուրհակները ոչնչացած էին... Եղբայրները գոհ, պատրաստվում են հեռանալու։ Սողոմոնը կամենում է հետը վերցնել նաև աղայի լի հրացանը, վախենալով, որ հետևիցը չխփեն իրենց... Խելոք էր մտածում. Հաբեթ աղային ճանաչողը պիտի իրավունք տար Սողոմոնի կասկածներին...

Բայց, գրված էր, մուրհակներից հետո նրանց տերը ապրել չէր կարող... Հիմարությո՞ւն է գալիս Հաբեթ աղայի վրա այդ միջոցին, թե՞ հիրավի, նա կամենում է եղել եղբայրներին ետևից զարնել—փաստն այն է, որ նա անմիջապես բռնում է հրացանի փողից և չի թողնում, որ տանեն։

— Ինչ որ տարար, վնաս չունի,— գոչում է նա,— բայց հրացանս թող, պապենական հիշատակ է...

— Թո՛ղ տուր, շո՛ւն,— ճգնում է նրա ձեռքիցը քաշել Սողոմոնը,— թողնեմ՝ որ ետևիցս զարնե՞ս մեզնից մեկին...

— Ո՛չ, երդվում եմ...

— Երդվո՞ւմ... քեզ նման շո՞ւնը... թո՛ղ տուր...

Եվ պինդ, գետնի երեսին քարշ գալով կառչում է աղան իր հրացանի փողից...

Մինչ այդ, աղայի կինը սթափվում է, դուրս է սպրդում և ճիչ ու աղմուկ բարձրացնում։ Լսվում են աղմուկներ, շների հաչոց։ Պե՛տք էր փախչել, բայց աղան ձյութի պես կպել է հրացանից. ո՛չ աքացիները, ո՛չ գլխին տված բռունցքները, ոչինչ չեն հաջողում պոկել նրան... Եղբայրները հասկանում են, որ զզվելի վաշխառուն դիտմամբ է սարքում այս տեսարանը, մինչև օգնության հասնեն, բռնեն նրանց, և կամ, եթե հրացանը թողնեին, գնդակահար աներ ետևից մեկնումեկին...

— Շո՛ւտ, եղբայր,— ձայնում է Սողոմոնին կրտսերը,— գալիս են, վե՛րջ տուր՝ գնանք, գյուղը ոտքի է ելնում...

— Ի՞նչ անեմ, թողնե՞մ հրացանը...

— Տո ի՞նչ ես շվարել,— գոչում է Ղուկասը, բլթակը քաշիր և մեկ շահին ետ տուր...

Փամփուշտին էր ակնարկում. չէ՞ որ հատը 5 կոպեկ արժի։ Ուզում էր ասել թե՝ գնդակահարիր...

Եվ իրավ, ուրիշ ճար չկար... Սողոմոնը քաշում է բլթակը... Լսս-

վում է մի խուլ թնդյուն, հետո բարձրանում են ճիչեր, աղմուկ, և չորս եղբայրները հազիվ կարողանում են իրենց դուրս նետել գյուղից, մրոնել անտառները և ազատվել հետապնդումից...

Այլևս նրանք «ղաչաղ»-ներ են... Ղաչաղներ՝ ազատ, բայց տխուր, որ մարդ են սպանել և այժմ հալածական, անտուն, մի մանուկ էլ հետերնին՝ առտանդական, ո՛չ մի տեղ հանգիստ չեն գտնում... Սողոմոնի երեսից ժպիտն անհետացել էր... Իրավ է, գյուղացիք օգնում էին նրանց, եղբայրներից գյուղ իջնողին տալիս էին պաշար, ոչխար, հագուստ, սակայն մյուս կողմից հալածանքը ստիպում էր միշտ շարժուն, միշտ թաքնված, քարայրների, խիտ անտառների մեջ ապաստանել, ո՛չ ազգականի կարողանալ երևալ, ո՛չ ժամերգություն լսել, հայրենի գյուղը մտնել...

Այսպես նրանք փախստական՝ ապրում են ամբողջ ամառը։ Քանիցս ձիավորների զինված խմբեր, նրանց ետևից ընկած՝ որոնում-գտնում են, բայց միշտ փախստականներին հաջողվում է ազատվել, մինչև մի օր էլ, այդ դժբախտ Ջրո-ջրո-քարի լեռը եղած ժամանակ, մատնությունն շնորհիվ, թե՞ պատահմամբ, պաշարվում են հանկարծ, անհույս՝ այս անգամ էլ ազատվելու...

Ու կռվում են, որքան հնարավոր է չորս հոգուն, մի մանուկ էլ հետերնին՝ հարյուրի դիմաց...

Եղբայրներից կրտսերը զարնվում է մի թփի տակ և մեռնում տեղնուտեղ. երկրորդը վիրավոր՝ ժայռերից գլորվում է ձորը և փշրվում քարերի վրա, երրորդին գտնում են ոտքը կոտրած՝ մի քարայրի մոտ, և նա էլ բանտումն է մեռնում, իսկ Սողոմոնն արյունաքամ, մի քանի գնդակ մարմնի մեջ, տասնամյա որդուն գրկած՝ նետում է իրեն, ահա, նայեցե՛ք, այն միջին մեծ «քարայրը»...

Սայլն այդ միջոցին կանգ առավ. ձիերից մեկի սանձը կտրվել էր. կառապանը իջավ, բայց երևի նա էլ էր լսում պատմողին, որովհետև ներքևում կանգ առավ և փոկը ձեռքին՝ սպասեց։

— Եվ այնտեղ,— շարունակեց ընկերս հուզված,— թշվառ ծերունին, թեև չի՛ գտնվում, բայց երկու օր պաշարված, արյունաքամ, անխնամ և անոթի, որդին սեղմած կրծքի վրա, մեռնում է... անիծելով լեռն ու ձորը, կյանքն ու նրա դառնությունները, աղայի ամբողջ սերունդն ու հայրենի հողը... անիծելով բոլոր նրանց, որոնք սրտի փոխարեն քա՛ր են կրում կրծքերի մեջ...

Երկու օրից հետո պաշարողները քյալ առ քյալ խուզարկելով՝ հասնում են քարայրին և սառած կանգ են առնում արյունալի տեսարանի

առաջ... Ծերունի հայրը արյունաստապալ մեռած, իսկ մանուկը անոթությունից և հուզմունքներից նվաղած՝ նրա կրծքի վրա...

Աստիճանավորը հրամայում է ձեռք չտալ դիակին, ետ քաշվել։ Լուռ՝ գրկում է մանուկին և հեռանում արյունոտ լեռներից...

* * *

Պատմեց ընկերս և լռեց։

Դուզանը երևում էր դաշտի ծայրում, իր կարմիր տանիքներով, գետեզրի ծառաստաններով։ Մեր կառքը, ընկած հարթ հողի վրա, գլորվում էր արագությամբ։

— Եվ ի՞նչ եղավ պատանին,— հարցրեց փեսաս։

— Ուսումի տվին նրան... Այժմ, տեսնողներն ասում են, որ հեռու մի քաղաքում «լավ մարդ» է դարձել նա... Իսկ թե այդ «լավ» մարդը երբևիցե պիտի գա՞ արդյոք գո՛նե իր թշվառ հոր արյունոտ գերեզմանին մի համբույր տալու... Չգիտեմ...

Ոչ ոք չխոսեց այլևս։ Կառապանը նստեց, սանձերը ժողովեց ու մտրակեց ձիերին...

1904

ԿՈՒՅՐԸ

1

Չնայելով որ Ճոթեղենի երկու խանութ միայն կար գյուղական հրապարակում, բայց Կիրակոսենց Գալոյինն անհամեմատ ավելի լավն էր։

Նախ, որ Սարոյենց Թորոսի խանութի նման «չհուդի բազար» չէր. այսինքն, ամեն ինչ միմյանց կողքի և իրար վրա լցրած՝ մի նեղ ու ցածրիկ ծակ.— մաստակը չթի կողքին, պապիրոսը տպակու մոտ և ձեթի տակառի առաջ. նեֆտի ու մազութի ամաններն էլ, նեբս մտնելուն պես, քթիդ տակը։

Ո՛չ, Գալոյի տղան ծառայել էր քաղաքում, մարդ էր տեսել, խանութ կառավարել գիտեր։ Ճոթեղենը կարգով, մաքուր դասված խանութի մի մասում, առանձին, ապակեպատ դռնով բաժանմունքի մեջ. իսկ այս մյուսը ծառայում էր միմիայն մանրուքի՝ ապակեղեն, երկաթեղեն, ուտելիք, ծխելիք. մազութը, ձեթն ու նեֆտն էլ ծածկված գռան ետևը։

Բացի դրանից, խանութի առջև գտնվող հովանոցաձև պատշգամբն ավելի լայն էր, գետինը ավազ փռած, սյուները հարթ գունավորված, իսկ դռան կողքին Գալոյի տղան խնամքով շինել էր մի երկար նստարան՝ վրան խոտով ու կտավով օթոց կապած։

Այդտեղ էր, որ գյուղի մեջ մի պտույտից հետո վարժապետը հրավիրեց մեզ նստելու։

Իսկապես, տեսարանն էլ այդտեղից վատ չէր։ Ճիշտ մեր դիմացը ցցվում էր շաբարի գլխին նմանող Ծաղկասարը՝ ամենաբարձր այդ բլուրը լեռնադաշտի մեջ, որի կրծքից դեպի վտակն էր խոնարհվել գյուղը՝ իր տների կղմինդրյա տանիքներով և գլխին, իբր աննման ծոպավոր զարդ, ուներ կարմիր, դեղին և կապույտ շերտերից խառն մի ստվեր, որ վայելչորեն նոսրանալով ծայրերից, գույնզգույն երիզներ էին դնում պուրակի կողերին, հասնում-գգվում էր ամենաբարձր կետին կոթնած ժայռերը և երկնքի պարզ-կապույտ խորքի վրա նկարում գեղատեսիլ գունազանություն։

Ծաղկավետ զառիվայրի վրա էր կանգնած գյուղը։ Պարտեզների շարքը հասնում էր մինչև դաշտը կտրող վտակին. այնուհետև, ոչ ավելի քան երեք վերստ լայնություն ունեցող արտերի ծայրից ցցվում էին անտառոտ լեռների կույտերը։

Եվ ծաղի՜կ, ծաղի՜կ. բյուրավոր, անհաշիվ, անուշահոտ ու կենսապարար։ Առավոտյան թարմ օդի մեջ բուրում էին նրանք արբեցնելու չափ...

Այնտեղ, ուր նստել էինք, գրեթե գյուղի կենտրոնն էր, ցեխոտ ու աղտոտ մի փոքրիկ տարածություն, բացված երեք գլխավոր փողոցների միացման կետի վրա։ Հի՞նգ, թե վեց էին խանութները. երևում էին— գերձակ, կոշկակար, այլև մի պայտար, որ կքված մի անկյունում, պայտեր էր շինում։

Գյուղացիներ այդ պահուն շատ չկային կանգ առած՝ հրապարակի վրա. եղածներն էլ ցանուցրիվ կանգնել խոսում էին այս-այն խանութի առաջ, մինչ սայլեր ճռճռալով, կովեր բառաչելով՝ ծանրորեն անցնում էին մեր առջևից։

— Ինչպե՞ս է, հավանո՞ւմ եք մեր գյուղը։

Առաջնորդել էր մեզ, ցույց էր տվել գեղեցիկ շրջակայքը, գյուղական սիրուն եկեղեցին, հրավիրել էր ճաշակելու սառնորակ ու անուշահամ աղբյուրների ջրերը և այժմ ուզում էր մեր տպավորությունն իմանալ։

— Օ՜, այո՜, դրախտ է այստեղ,— գոչեց ոգևորությամբ ծերունի ընկերս,— երևի այստեղ ապրողը չի՜ մեռնի։

Սյունին կոթնած և մեզ ականջ դնող Գալոյի որդին և վարժապետը ծիծաղեցին։

— Չի՜ մեռնիլ,— ասաց վերջինս,— ինչպե՞ս չէ, դուք խո տեսա՞ք մեր գերեզմանատունը։

— Այո, բայց շատ գերեզմաններ չկային...

— Նորն է. հինը լցվել է արդեն... Հիվանդություններ շա՜տ կան գյուղում, միամի՜տ եղեք, այստեղ էլ մարդիկ մեռնում են... գուցե ավելի շատ, քան քաղաքում։

— Ինչպե՞ս, հիվանդությունն ե՞ր այսպիսի շքեղ բնության մեջ...

Վարժապետը ժպտաց, հետո պահ մի մելամաղձոտ մնաց և ծերունի ընկերոջս դառնալով, ասաց.

— Ինչպես երևում է, դուք վաղուց է, որ քաղաքից դուրս չեք եկել... Այս բոլորը նոր և չափազանց սուր հակադիր է քաղաքի սեղմ օդին, փոշուն ու ժխորին... Այո՜, բայց մե՞նք... չէ՞ որ մենք ծնվել ենք սրա՜ մեջ, սովոր ենք տեսնելու այս ամենը։

— Բնական է,— դիտեցի ես։

— Այո, բայց...— շարունակեց նա,— բայց այս բոլորն արդեն ձանձրացրել, վաղո՜ւց ձանձրացրել է մեզ, եթե կուզեք՝ նույնիսկ անտանելի դարձել... Ձեզ նման եկվորները միայն, երբ սքանչացումն են արտահայտում, մի քանի րոպեով հաջողվում են հրապույրի նշույլներ զարթնեցնել մեր մեջ՝ դեպի հայրենիքի հողն ու անտառը... Անշա՜րժ, անկյանք գեղեցկություն, միշտ միևնույն բանը՝ միևնույն տեղում, ամեն րոպե... Եվ վերջապես ի՞նչ կա զմայլելու... Ճշմարիտ է, վարդ ու ծաղիկով լի է երկիրը, բայց չէ՞ որ փշեր կան, որքա՜ն փշեր... Ո՜չ, մարդկանց կողմից՝ իրա կարգին— դա անհաշիվ է, ահավոր. սակայն հենց բնությունն ինքն էլ փշեր է արտադրում. արյունոտող, հոշոտող փշեր...

— Դուք հոռետես եք. երևի մշտապես անփոփոխ, այլև միակերպ կյանքը զզվեցրել է ձեզ...

— Այո՜... մշտապե՜ս միակերպ... Սկսում է մարդ նույնիսկ ատելություն զգալ դեպի այդ ամենը... Մեր պարտեզն օրինակ. մտնել չեմ կարող. ծնված օրից նա ամեն օր աչքիս առջևն է իր սիրտ խառնող միաձևությամբ... Գոնե հնար լիներ փոփոխելու, ուրիշ ձև տալու նրան...

— Բարեզարդեցեք, նոր ծառեր տնկեք, մշակեք... ի՞նչն է խանգարում ձեզ։

Վարժապետը գլուխը երերցրեց, հետո դառն ժպիտով ձեռքը պարզեց դեպի դաշտ ու լեռ և ասաց.

— Ի՞նչ եք տեսնում այդտեղ... Անտա՜ռ, եղևնիների պուրակ, հետո՝ ծաղիկ, ոչ թե մի քանի, այլ մի քանի հարյուր տեսակ, բուրմունքով

օդը լի. թռչունների ճռվողյուն, վտակների կարկաչ... Այնպես չէ՞, որ այդ բոլորը բանաստեղծական է, դրախտային... Ա՜հ, բայց, մնացեք էլի մի քանի օր և կտեսնեք, թե ի՞նչն է խանգարում մեզ բարեզարդելու մեր սիրտ խառնող միաձև բնությունը... Հանկարծ մեկ էլ տեսար մթնեց ամեն կողմ, հալված կապարի նման ամպերը եկան ծածկելու արև, երկնակամար, ապա մի խոնավ, զզվելի անձրև, այդ անիծյալ հյուսիսից գալով, տեղա՜ց ու տեղաց... Ո՜չ թե մի ժամ կամ գոնե մի օր... Ո՜չ, այլ երբեմն մի ամբողջ շաբաթ՝ օր ու գիշեր, նույնիսկ երկու շաբաթ... Մշո՜ւշ, խոնա՜վ, ցե՜խ, ճահիճ՝ շուրջդ, տանդ առաջ, նույնիսկ տանդ մեջ... Եվ ամեն հրապույր կորսվում է, ամեն զվարթ դեմք մթագնում, ծաղիկներն էլ, կարծես, անհետանում են ճղփացող թացության մեջ, մարդիկ ջղային են դառնում, ատում բնությունը, ատում իրար... և խմում են, խմո՜ւմ... Ի՞նչ արած, պետք է վերջապես մի բան անել մոռանալու համար, որովհետև դա մեկ, երկու անգամ չէ, այլ ամբողջ տարին, ամեն տարի...

Ու լռեց՝ ծնոտը ձեռնափայտի կոթին կոթնեցնելով։

— Իզուր ես այդքան տխուր գույներ փռում մեր լեռնադաշտի վրա, վարժապետ,— խոսեց Գալոյի որդին սառը, անտարբեր շեշտով,— լավ օրեր էլ ունենք... ամեն տարի խո այսպես չէ՞...

— Մի՜շտ,— շեշտեց վարժապետը,— մեր աշրդ Մարտիրոսն իրավունք ունի, երբ երգել է թե՝ «Տարին 40 օր արևի երես չի տեսնում մեր երկիրը»...

Ինքը, իհարկե, չի տեսնի, որովհետև կույր է,— ժպտաց Գալոյի որդին,— բայց դե՜հ, որ 40 օր չլինի, այս բոլորը—պտուղ, ցորեն, գարի... ինչպե՞ս կաճի... Դուք դրան մի՜ լսեք,— դարձավ նա մեզ,— այսօր, ինչպես երևում է, քեֆը տեղը չի։

Այս բոլորը մի այնպիսի տարօրինակ հեգնախառն ձևով ասաց նա, որ նոր միայն սկսեցի ուշադրությամբ զննել այդ երիտասարդին։ Անհասկանալի էր՝ ծաղրո՞ւմ էր, թե, հիրավի, դեմ խոսում վարժապետին։

Կոթնել էր սյունին և կեցվածքի ու ժպիտների մեջ մի ինչ-որ, գյուղի համար՝ անսովոր, բան ուներ։

Գյուղացու նման էլ չէր։ Հագել էր մաքուր և լավ. նույնիսկ օսլայած շապիկ, թեև առանց վզկապի։

Չնայելով, որ ակնարկը վարժապետին էր՝ աչքերի անկյուններում հազիվ նշմարվող հեգնական ժպիտի ծալքերով, սակայն հաճախ դառնում էր դեպի այս-այն կողմ հավաքվող կամ այս-այն կողմից անցնող գյուղացիների, և սուր, հետախուզող, նրանց շարժումների միտքն

ըմբռնել կամեցողի ուշադրությամբ՝ հետևում էր հրապարակի վրա եղածներին։

Ուզեցի խոսեցնել նրան՝ ըմբռնելու համար այդ տիպերը։

— Լավ խանութ ունեք,— ասացի,— իսկ առևտո՞ւրը ինչպես։

— Ի՜հ,— արեց նա արհամարհությամբ,— եթե այս գյուղացոց նայեինք, մեր օրը օր չէր լինի։

Ու խուսափեց ինձ նայելուց։

— Պարոն Արշակը,— նկատեց վարժապետը,— առևտուր ունի շատ գյուղերի հետ. գալիս են ճոթ են տանում և փոխարենը իր ժամանակին յուղ, պանիր, ցորեն... Բացի դրանից, հայրը կարողության տեր է. ունի հողեր, զանազան եկամուտներ...

«Եկամուտ» բառը նա շեշտեց։ Զգացի, բայց ձայն չհանեցի. իսկ Արշակն ուսերը թոթվեց և առանց առարկություն անելու՝ ակնարկը դարձրեց մի կողմը։

Մինչ այդ ծերունի ընկերս, որ անշարժ նստել և մանավանդ տխուր խոսքեր լսել երբեք չէր սիրում, ելավ, մոտ գնաց գյուղացիներին և նրանց հետ խոսակցության բռնվեց։

Ահա այդ միջոցին էր, որ մի ձիավոր, դուրս գալով եկեղեցու կողքի փողոցից, կանգ առավ հրապարակի վրա։

Նրա երևույթն անմիջապես շարժում առաջացրեց ամեն կողմ։

— Վա՜յ, Ալեքսեյն է...— ձայնեց իսկույն Արշակը և մի քանի քայլ դուրս գնաց դեպի ձիավորը։

Վարժապետն էլ ելավ ու դիմավորեց։

Եկողն անտառապահն էր՝ հրացանն ուսին և փամփշտակալը կրծքի վրա։

2

Ցուրաքանչյուր պաշտոնյա, լինի նույնիսկ անտառի հասարակ պահապան—և եթե կուզեք՝ այս վերջին տեսակի ստորին պաշտոնյաները մանավանդ—կարևոր անձնավորություն է գյուղում։ Պիտի գյուղացի լինել և կամ գյուղում ապրելով թափանցել գյուղացոց ներքին կյանքի մեջ, ըմբռնելու, թե ի՞նչ մեծ նշանակություն ունի մի այդպիսի պաշտոնյայի տխուր կամ ուրախ տրամադրությունը՝ գյուղացոց կյանքի համար։

Եվ գյուղացիք ամեն ջանք ի գործ են դնում մի՜շտ ուրախ տրամադրության մեջ պահելու նրանց։

Այդ էր պատճառն ահա, որ հրապարակի վրա կանգնած գյուղացիների մեջ իսկույն մի շարժումն ընկավ։ Դիմացի Սարոյենց Թորոսի խա-

նութից կաղնիկաղ դուրս նետվեց նախ մի կլորիկ-հաստլիկ մարդ և վազեց դեպի ձիավորը։ Այս կողմից էլ Գրիշոյենց Մկրտիչը ժպիտը դեմքին՝ ցցվեց իր խանութի շեմքին, իսկ վարժապետը ժպտուն, ձեռքը պարզած գնաց մինչև ձիավորի ասպանդակի առաջ։

Ձիուց իջնելուն պես անտառապահը շրջապատվեց. Սարոյենց Ջավադը լայն ծիծաղով պարզեց նրան իր ձեռքը և հնչեղ ձայնով կանչեց ռուսերեն.

— Ա՛յ բարև քեզ, Ալեքսե՛յ, ի՞նչպես եղավ, որ մեզ էլ հիշեցիր...

Մտերմական և սիրալիր դեմքեր ստացան ամենքը, օգնեցին իջնելու, մեկն անմիջապես ձին տարավ կապելու, և բոլորն ուղղվեցին դեպի Գրիշոյենց Մկրտչի խանութը։

— Է՛հ, գործ կա,— ասաց պահապանը,— պրատակոլ (արձանագրություն) պիտի գրեմ։

— Ա՛յ, ա՛յ,— ծիծաղեց վարժապետը,— ի՞նչ է եղել, փա՞յտ են գողացել էլի...

— Տո, թո՛ղ է՛, մե՛կ,— ձայնեց Ջավադը,— հլա մեկ գնանք մեզ մոտ զակուսկի[1] անենք... Հը՞, Ալեքսե՛յ, գնա՛նք. նոր արաղ ունեմ։

— Միևնույն է,— ժպտաց պահապանը,— Մկրտիչն էլ կունենա։

— Ունեմ, իհարկե,— կանչեց Մկրտիչը,— նոր գինի էլ ստացել եմ։

Հետո բոլորն էլ, վարժապետն ու անտառապահն ամենից առաջ՝ մտան խանութ, մինչ կաղլիկը պահ մի հեռացավ՝ խանութն իր եղբոր որդուն պահ տալու։

— Ադա՛,— ասաց նա իր խանութի առաջ կանգնող գյուղացոց,— Բախշիենց Մուրադի համար եկած կլինի. վազեք ասեք գերանները պարտկի, մինչև մենք սրա գլուխը քիչ տաքացնենք...

Մնացի մենակ՝ նստած խանութի առաջ և զարմացած դիտում էի այդ ամենը։ Բայց երկար չմնացի այդպես, որովհետև քիչ հետո վարժապետը դուրս թռավ խանութից, եկավ դեպի ինձ և ասաց.

— Համեցե՛ք դուք էլ, մի քիչ կխոսենք այնտեղ. եկողը մեր անտառապահն է։

Խանութի ետևում մի փոքրիկ սենյակ կար, ուր իսկույն բոլորս էլ տեղ բռնեցինք մեծ, աղտոտ սեղանի առաջ։ Վարժապետը մոտ գնաց Մկրտչին ու մի բան ասաց նրան, և ահա քիչ հետո սեղանի վրա երևաց նախ օղի, հաց ու պանիր, հետո խոշոր շշերով գինի։

Ինձ ծանոթացրին անտառապահի հետ։

— Գյուղի փայտ տվողն է,— կամացուկ բացատրեց վարժապետը։

[1] Նախաճաշ։

Եթե նրան չշոյեին, ով գիտե, ամբողջ ձմեռը կարող էր առանց փայտի թողնել գյուղացոց։ Այսինքն, իհարկե, տոմսակ ունեցողներին նշանակած չափով թույլ կտար կտրելու, բայց ախր բոլորը խո տոմսակ չունեի՞ն, և վերջապես որտեղի՞ց գյուղացին կարողանար վճարելով ունենալ տախտակացու, գերան... ծախելու փայտ... Ապրե՛լ էր հարկավոր, ուստի և պետք էր շոյել, ուտեցնել-խմեցնել, երբեմն էլ ափը շոշափել, խաղեցնել...

Թեև գյուղացիների հետ անտառապահը համարձակ, գրեթե իշխանաբար էր վարվում, բայց ինձ հետ նա համեստաբար սկսեց։ Ատամների միջով մի քանի ռուսերեն բառեր դուրս թողեց և ձեռքը տարով օղի բաժակին։

Օս էր. արտասանությունը և սոսկալի ռուսերենն էլ այդ ցույց տվավ։

— Գիտե՞ք,— դարձավ ինձ այդ ժամանակ վարժապետը՝ նախապես պահանջելով լռություն սենյակի մեջ եղողներից,— մեր Ալեքսեյը, պարո՛ն Երվանդ, մի շա՛տ լավ, ընկեր տղա է. թող ձեզ ծանոթացնեմ նրա հետ... վաղո՛ւց նա մեր անտառների գլխավոր պահապանն է (объездчик), բայց դեռ ո՛չ մի վատություն չենք տեսել և հույս ունենք, որ այս անգամ էլ չենք տեսնի նրանից...

Պահապանը ժպտաց և գլուխը ցնցեց։ Թեև հայերեն էր խոսում վարժապետը, բայց նա հասկանում էր շատ լավ։

— Ո՛չ, ներեցեք...,— շարունակեց վարժապետը,— ինչո՞ւ ես ծիծաղում, Ալեքսեյ, սո՞ւտ եմ ասում... մինչև օրս դեռ ոչ ոքի ո՛չ կացինն ես խլել, ոչ ցեպը (շղթան) և ոչ էլ մի էնպես վնաս տվող պրատակոլ (արձանագրություն) կազմել... Դուք ասե՛ք, ա՛ խալխը, քի՞չ լավություն եք տեսել այս մարդուց... ո՞ր մեկդ իր ուզածի չափ փայտ չի ունեցել, ո՞ր մեկիդ մերժել է՝ է՛լ գերան, է՛լ խվորուստ[1]... Այդպե՛ս է, պարո՛ն Երվանդ, ես չեմ ստում, Ալեքսեյը մեր բարեկամն է, խմենք առաջ մեկ նրա կենացը...

Ասաց և ձեռքի մեծ բաժակով օղին մի ումպով դատարկեց, ու երբ նստում էր՝ ավելացրեց ժպտալով.

— Անտառի մեջ, պարո՛ն, այն եղևնիների կողքին մի սքանչելի տեղ խրճիթ ունի՛, որ քեֆդ գա... Մի օր կգնանք քեֆի, մի լավ գառը կտանենք... Այնպես չէ՞, Ալեքսեյ։

— Համեցեք,— ասաց պահապանը և նույն կերպով պարպեց մեծ բաժակով օղին։

Սոսկացի, երբ տեսա, թե ինչպիսի՞ դյուրությամբ ամենքը դատարկ-

[1] Երկար ճյուղեր, որոնցից գյուղերում ցանկապատեր են շինում հաճախ։

կեցին թելի բաժակների մեջ կեսից ավելի տեղ բռնող օղին։ Այն էլ ի՞նչ օղի։ Երբ բերանս առա մի կում—կարծեցի թե կրակ էր, սպիրտ էր ամբողջովին։

Բանից դուրս եկավ, որ ցորենի օղի էր այդ, գյուղացուց պատրաստածը։ «Գիժ հացի» օղի։ Լեռնադաշտը բուսցնում էր ցորենի հետ խառն, ցորենանման ինչ-որ կանաչ հատիկ։ Նեղ տարին այդ հացից ուտում էին անգամ։ Մի գյուղացի պատմեց ինձ, որ այդպիսի հացը «գժվեցնում է»։ Բայց իսկապես՝ նա արբեցնում էր ավելի վատ, քան ոգելից ըմպելիները։ Ահա այդ իսկ հացից շինած օղին էր, որ ուժգին այնքան առատությամբ խմում էին գյուղացիները։

Գյուղում գինետուն չկար, ո՛չ։ Առաջ եղել էր, բայց ինչպես վարժապետը բացատրեց, որովհետև շատ անկարգությունների, կռիվ և աղմուկի պատճառ էր դառնում, իր և քահանայի միջնորդությամբ ու ջանքերով՝ փակվեց։

— Իբր թե շա՞տ լավ արիք,— մեջ մտավ մի գյուղացի,— հիմի պակա՞ս ենք խմում, պակա՞ս ամեն կիրակի կռվում, ծեծկվում, միմյանց հայհոյում։

Հիրավի, ավելի վատ էր եղել։ Ամենքն էլ խոստովանեցին։ Առաջ գոնե մաքրած և թույլ օղի էին խմում. իսկ ա՞յժմ... բայց գինետան փակելն իր երկար պատմությունն ուներ։

— Մի՛ հարցնի, թե ինչու է փակվել կամ ինչպես, պարո՛ն,— հորդորեց ինձ մի գյուղացի,— փակելն իր աստառն ուներ. օիննե՞ր եղավ որ...

Վարժապետը, որ լսում էր, ոստնեց տեղից։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ ամեն բան չես պատմում-— գոչեց նա,— ինչո՞ւ եք թողնում, որ այս մարդիկ սխալ հասկանան... Ա՛յ, թողեք ես պատմեմ ճիշտը, ուսումնական մարդիկ են՝ թող դատեն...

Եվ վերարկուն ու գլխարկը միշտ հագին, խմած երկու խոշոր բաժակ օղիից գլուխը տաքացած՝ ոտքի ելավ մի ձեռքին հաց ու պանիր, մյուսում օղի և թեթևակի կակազելով ասաց.

— Ա՛խ խալխը, դո՛ւք էլ լսեցեք...

Սենյակի մեջ դարձյալ տիրեց լռություն. կարծում էին, թե վարժապետը մի նոր կենաց է առաջարկելու։

— Ըստեղ,— խոսեց նա,— էլի կրկնում են, թե մեր միկիտանի (գինետուն) փակվելը աստառ ունի, որ օիններ եղան... էս քանի՞ մեկ, ա՛խպեր. դուք ու ձեր աստվածը, դուք չէի՞ք որ, ձեզնից շատերը չէի՞ն, որ գիշերով եկան ինձ մոտ, խնդրեցին, ստիպեցին, պրիստավին խրնդիրը գրել տվին, թե միկիտանը կռիվ ա քցում, ղալմաղալ... Հը՞, սո՞ւտ եմ ասում...

— Չէ՛, ճիշտ ա, ինչի՞ սուտ,— ասաց մի գյուղացի,— դե էնա՞, տեսաք, որ Սարոյենց ձեռքն էր մնալու միկիտանը, ձեր ցեղը մեջ ընկավ, խնդիր գրեցիք, դու էլ ուսումնարանը մեջտեղ քցեցիր...

— Հլա՛ տե՛ս. հլա՛ տես...,— բարկությունից կարմրեց և ընդհատեց նրան վարժապետը,— ըտենց մի խոսալ, ա՛ Կարապետ... ինչի՞, ես վարժապե՞տ եմ, թե՞ միկիտանչի... Իմ ինչի՞ս էր պետքը միկիտանը, ա՛յ ինձի՞ ինչ...

Փոքրիկ սենյակը հետզհետե լցվում էր գյուղացիներով։ Մեծ մասը երիտասարդ, նոր սերունդ էր և բոլորն էլ, առանց բացառության, «կարտուզներով», այլև հագուստը փոքրիշատե եվրոպական հագուստի նմանեցնելու հավակնությամբ։ Ով տեղ էր գտնում՝ նստում էր, ով չէ՝ կռթնում էր պատին կամ պպզում մի անկյունում։ Մի ինչ-որ կարճահասակ ծերունի էլ, որ իր սպիտակ մեծ մորուքովը շատ նման էր հնամյա նահապետի, զվարթ ծիծաղը դեմքին ներս խցկվեց, որոնեց տեղ, հետո մագլցեց լուսամուտի քիվի վրա և խոշոր փափախը ծռած, երկար փայտը ծնոտին դեմ տված՝ սկսեց լսել։

Ցնայելով, որ լսում էի վարժապետի խոսքերը, բայց և զննում էի ներս մտնողներին։ Այլազան էր ամբոխը։ Կային նույնիսկ շեկեր. կարմիր, հրաշեկ կարմիր մազերով երիտասարդն էլ իր գլուխը դուրս էր ցցել երկարահասակ ու խոշոր քթով Գրիշոյենց Մկրտչի ետևից և ինձ էր նայում։

Եվ այդ բոլորը տգեղ էր, խիստ տգեղ. դեմքերը գրեթե թոռմած ու դեղնած, շոր, վաղաժամ կնճիռներով լի, մեծ, այլանդակ քթեր, կոպիտ և հանդուգն գծեր։ Ավելացրեք դրա վրա և այն, որ շատ-շատերի հայացքներն արտահայտում էին քծնախառն աներեսություն։ Միմյանց ակնարկներ անել, աչքով-ունքով շարժմունքներ, անասելի հայհոյանքները, իբր շատ սովորական բառեր, շպրտել միմյանց, խոսքերը «համեմել» լկտի համեմատություններով, այլև ճգնել անպատճառ, թեկուզ տափակ, սրախոսություններ անելու...

Հին սերնդի մեջ, սակայն, նկատեցի քիչուշատ համակրելի դեմքեր։ Եվ երբ ծերունի ընկերս էլ ներս մտնելով՝ բերավ իր հետ գյուղացիների նոր մի խումբ—երևան եկան 5—6 ծերունիներ՝ հին հագուստով, բոլորն էլ խոշոր փափախներ գլխներին։ Ահա օրինակ, այդ վաթսունամյա անձը, որ մոտեցավ, ձեռքը պարզեց ինձ և դեմքի վրա անկեղծ ուրախության ժպիտ՝ բարի դալուստ մաղթեց։ Համակրելի էր նաև այն

Այս ծերունին, որ իր խոշոր թաթերի մեջ սեղմեց պարզած ձեռքս ու ասաց.

— Բարի լինի գալուստդ, պարո՛ն։

— Շնորհակալություն։

— Մենք շատ ուրախացանք, երբ լսեցինք, որ ձեզ պես կրթված մարդիկ ուզում են մեր գյուղում ապրել։ Եթե ոչինչ էլ չանեք, ձեր այստեղ լինելն էլ մեզ օգուտ է. ասած է՝ որ հոտավետ մի հատ խնձորը թեկուզ դնես կոշտ քարերի մեջ, հոտիցը նրանց էլ կկպչի...

Պահ մի վարժապետը ստիպվեց ընդհատել իր խոսքը, ներս մտնողների բարևների վերջին սպասելով։ Բայց երբ տեսավ, որ նոր եկողները խոսակցության նո՛ր նյութ մեջտեղ բերին, ձեռքի օդին մի ումպով և զայրացած կուլ տվավ, հացը բերանն առավ, մի բան մռմռաց քթի տակին, նստեց և բաժակը դարձյալ լցրեց։

Այնքան անկեղծ ձևով ինձ հետ խոսող ծերունուն պատասխանել չհաջողվեց ինձ, որովհետև դարձյալ մի նոր խումբ ներս լցվեց։

— Պա՛, պա՛... էս ինչքա՛ն լցվել եք ըստեղ...— լսվեց դռան միջից մի խոշոր ձայն, և երևան եկավ Սարոյենց Թորոսի կաղլիկ ու հաստլիկ եղբայրը, համարձակ ճղեց բազմությունը, ձեռքն ինձ պարզեց ու ասաց.

— Խնդրեմ ծանոթանանք... Սարոյան Ջավադ։

Եվ հպարտությամբ վիզը ցցեց ու գյուղացիներին նայեց։ Կարծես ուզում էր ասել թե՝ «հը՞, ո՞նց է, կարծում եք չգիտե՞մ քաղաքացոց ձևերը»։

— Լավ ձայն ունի,— քմծիծաղով դիտեց վարժապետը։

— Ինչի՞ չէ,— ասաց կոկոզավիզ կաղլիկը,— երգեր էլ գիտենք...

Ու ճգնեց նստել։ Տեղ չկար, բայց սրա՛ն հրեց, նրա՛ն հրմշտեց և ճիշտ դիմացս, անտառապահի կողքին, խցկվեց-տեղավորվեց։

Դեր, լայն դեմքով և հանդուգն հայացքով մի երիտասարդ էր այդ, որ միշտ բարձրաձայն, գրեթե գոռալով էր խոսում, ճգնում էր ցույց տալ, որ քաղաքում շատ է ապրել, քաղաքացիների դեմքը նրան անսովոր չէ, որ ինքը կոպիտ և անտաշ գյուղացիներից շատ է բարձր, անփորձ ու վախկոտ չէ, այլ, որ ոչ ոքից վախ չունենալով, կարող է միշտ բարձր էլ խոսել։

Հագել էր մեզ նման, մեջքի և վարտիքի վրա այլազան կարկատաններով, ինչ-որ տափակ և աղտոտ «կարտուզ» կոխած մինչև ականջները, մորուքը խնամքով ածիլած, ընչացքի ծայրերը գոռոզաբար դեպի վեր ոլորած... Որի՞ց վախ ուներ. օրե՞նք չգիտեր, ի՞նչ է, մարդ չէ՞ր տեսել, քաղաքացոց հետ չէ՞ր նստել-կանգնել։ Եվ այդ՝ նա շեշտում էր միշտ. և որպեսզի գյուղացի անտաշները չմոռանային երբեք, կրկնում

էր գոռալով ու ձեռքին կարճ փայտը ուժգնորեն իջեցնում սեղանի վրա...

Բայց, մտնելուն պես, սկսեց անտառապահի հետ խոսել։

— Նո՛ւ, մոյե պոչտենիե[1], Ալեքսի։ Խմենք, քե՛ֆ ունենք... Ճշմարիտ է, հերթը եղբորս է քեֆը սկսելու և հարբելու, բայց դեհ, ո՞նց կլինի, որ դու մեզ մոտ գաս, և ես մի լավ չհարբեմ... Նալեյ, տո՛, պոլնի նալեյ[2]... Ադա՛, սարսաղ,— դարձավ նա խանութպանին,— ո՞ւր ես թողել էս անտաշները ներս լցվեն... Քաշվե՛ք, քաշվե՛ք. ի՞նչ կա, մարդ չե՞ք տեսել... գե՛ղացի եք է՞է՞... հենց որ մի քաղաքացի եք տեսնում... տո՛, քաղաքումը շաբաթներով ապրեք, մարդ տեսեք, որ ըդենց բեզ զապրոսա[3] ներս լցկվեք... յա թե չէ՝ ադա՛, վեր կացեք մեր տունը գնանք, ստեղ սկի վոզդուխ[4] էլ չկա...

— Դե լա՛վ, ձե... ձենդ կտրիր քիչ... կտրի՛ր...— կակազեց վարժապետը՝ կիսովին ելնելով և դատարկեց օդին,— թող ուրիշներն էլ խոսան...

Ու բոլորովին ելավ։ Գինետան հարցը վիրավորել էր իրեն։ Ուզեց նորի՛ց նույն նյութին դառնալ։

— Մոյե պոչտենիե՛... ինչո՞ւ չէ,— ճչաց Ջավադը,— բայց ո՞ւր ես էդպես շուտ կակղել, վարժապետ. ա՛յ, թող մեկն էլ մենք կոնծենք... ըսենց... էս բուքիլկան[5] լցրու, տո՛... ի՛մ հաշվին. Ալեքսեյը ողջ կենա... էսօր էլ միս չեն մորթել, որ մի խորոված էլ անենք...

— Էն էի ասում,— ուշք չդարձրեց նրան և սկսեց վարժապետը,— չէ՛, ա՛ խալխը... սպասեցե՛ք... Կարապետն ասում էր, որ միկիտանը կո... կողպել ենք, որովհետև...

— Դե լավ, նու աստավ[6]...— ընդհատեց նրան անտառապահը,— լավ եք արել կողպել եք. ի՞նչ է, էս պակա՞ս միկիտան ա...

— Չէ՛, չէ՛, Ալեքսե՛յ, պաստոյ[7]...— գոչեց վարժապետը և թևով մեծ շարժում գործեց,— ինչո՞ւ... թո... թող պարզվի, շա՛տ են խո... խոսում։

— Աղա,— կանչեց այն կողմից Հայր Աբրահամին նմանող ծերունին կանացի սուր ձայնով,— էս ինչ ջհուդի ժամ շինեցիք ըստեղ, ձեր տունը շինվի... կացեք, մեկ մեր ղոնաղները խոսեն, քաղաքից են եկել, թազա խաբարներ կիմանան...

---

1 Հարգանքներս։
2 Լեցուր, լիքը լեցուր։
3 Առանց հարցնելու։
4 Օգ։
5 Շիշ։
6 Թող։
7 Սպասիր— բոլորը ռուսերեն բառեր են՝ աղավաղված։

— Հա՞... նո՛ւ...— զիջավ վարժապետը, որ արդեն հարբել էր,— լավ, թող պարոնները խոսան... Հը՛մ, ինչո՞ւ չէ, թաղա խա... խաբարնե՛ր... Համեցե՛ք...

Ու ձեռքի բաժակը զարնելով անտառապահի բաժակին, երկուսն էլ միմյանց ժպտալով խմեցին։

Առհասարակ անտառապահը քիչ էր խոսում։ Ըստ երևույթին՝ քաշվում էր մեզնից։ Շուտով սակայն Ջավադը դարձավ դեպի նա և սկսեց ցած ձայնով մի բան պատմել. վարժապետն ընկերիս հետ խոսակցության բռնվեց և այսպես, խոսակցությունն ընդհանուրից մասնավորի դարձավ։

— Դե՛հ, պատմիր տեսնենք, պարո՛ն,— դարձավ ինձ ծերունի երեցփոխը,— պատմիր նոր բաներ... ականջ մի՛ անիլ շատ էդ մեր ջահելների ափեղ-ցիփեղ խոսքերին. մի քիչ շատ են քաղաքի երեսը տեսել...

3

Այդպես էր, որ սկսվեց մեր ծանոթությունը գյուղացոց հետ, գինետան մեջ, օղիի և գինու շիշերի առաջ։ Պաշտոնապես միայն Սարոյենց Ջավադն իր, որ ձեռքը պարզելով, քաղաքացու նման, իր անունն ու ազգանունն էր տվել։ Մյուսները բոլորն էլ խոսակցության բռնվեցին, և ահա ամենքի հետ էլ ծանոթացանք։

Սկզբում ո՛չ ոքի անունը չգիտեի։ Եվ ի՞նչ հարկ իմանալ։ Կնճռոտ, շոր դեմքեր էին, որ միմյանցից սակավ էին զանազանվում։ Ամենքն էլ մեզ նայելիս՝ նախ մեր շորերն էին զննում, ապա, խորին ուշադրությամբ լսում մեզ, դիտում մեր դեմքի գծերը, կարծես կամենալով իմանալ, թե ի՞նչ տեսակ մարդիկ էինք մենք։ Իսկ երբ բավական լուռ քննել էին, կամաց-կամաց, խորամանկ, պտուտավոր հարցուփորձերով տեղեկանում էին, թե ո՞րտեղացիներ էինք, քաղաքում ի՞նչ գործերի տեր, այնտեղ սեփական տնե՞ր ունեինք, թե՞ վարձվորներ էինք, ամուսնացա՞ծ, ընտանիքի տե՞ր... և թե ի՞նչ նպատակով էինք գյուղ գալ ուզում— ամառանո՞ց, քեֆի՞ համար, թե՞ որևէ գործի ձեռնարկելու, շահ սպասելու... Եվ եթե գործի ձեռնարկելու՝ ի՞նչ էինք մտադիր անելու. օրինակ, մեղունե՞ր ունենալ, կաղա՞մբ ցանել, ծա՞ռ տնկել... բայց դրանք խո բոլորն էլ գիտեն... իսկ նո՞ր. նոր բա՞ն... ուրիշ ոչի՞նչ առայժմ։ Բայց չէ՞ որ այդ բոլորը ոչ մի եկամուտ չէր բերի, մարդ դրանով մի՞թե կարող էր փող աշխատել... Մտադիր չէինք հարստանալ, փող շահե՞լ... Ջարմանք... Ուրեմն ինչո՞ւ էինք եկել։ Գյուղի կյանքն ուսումնասիրելո՞ւ, գյուղացոց օգտակար լինելո՞ւ... ճի՞շտ էինք ասում, թե՞ ծիծաղում էինք

իրենց վրա... Երևի քեֆի համար էինք եկել... Իսկ եթե ծառեր էինք տնկում, ուրեմն ի՞նչ հողի վրա։ Ընկերությա՞մբ... Ինչո՞ւ չէ. որքա՞ն պիտի տնկեինք։ Հինգ-վեց հարյո՞ւր, իսկ հետո ծառերը հողատիրո՞ջը կմնար... Ո՞վ ասես, որ իր հողը, պարտեզը չտար...

Եվ այսպես, զգուշավոր, մանվածապատ հարցուփորձով իմացան ինչ։ Իսկ մեր տված միամիտ, պարզ և անկեղծ ճշտությամբ պատասխանների ժամանակ՝ դուք պիտի տեսնեիք, թե դյուղացոց մեջ ինչպիսի մնջկատակություն էր տեղի ունենում։ Ակնարկներ միմյանց, ժպիտներ, այլև միամիտների իրենց ճանկերի մեջ ձգողների սարդային արտահայտություններ։

Ու ինչ որ, մեր մտադրությունները գիտենալուց առաջ, վատ էին ասել օդի, հողի մասին, վարպետորեն սկսեցին ետ առնել. այժմ գովում էին սև, բարեբեր հողը, սքանչելի օդը, երկրի բեղմնավորությունը...

Երկար չտևեց մասնավոր խոսակցությունը։ Միմյանց սեղմելով՝ մեր գլխի վրա շրջան կազմող հետաքրքիրները մի առ մի ցրվեցին։ Դիտցել էին՝ ինչ որ պետք էր. մնում էր այժմ տեսնել, թե որպիսի ձևերով կարելի էր ոստայնն ընկած ճանճերից օգտվել։ Պարզ է, երևի մտածում էին նրանք, անշուշտ, քաղաքից ձանձրացած՝ փող ունեն և եկել են ինչ-որ երազներ իրականացնելու... գուցեև, ո՞վ գիտե, նոր ձեռնարկություններ պիտի անեն և առայժմ ծածկում են... Համենայն դեպս իրենց պետք էր զգույշ, աչալուրջ մնալ և որսը ձեռքից չփախցնել... Այն մեկը—ծերունին, միամիտ մարդ էր երևում. նրան խաղացնելն ու խաբելը դժվար չէր. իսկ այս մյուսը դեռ լուռ էր, քիչ էր խոսում, բայց շար մարդ էր նկատվում...

Եվ այս բոլորը ես ոչ միայն մի առ մի կարդում էի նրանց դեմքերի վրա, հասկանում էի վարմունքներից, այլև մեկ-մեկ էլ ականջիս էին հասնում հատուկտոր դատողություններ, նկատողություններ, որոնց դժվար չէր կցել իրար և որոշ եզրակացության հասնել։

Ծերունի ընկերոջս անունը իսկույն «պապաշա» դրին։ Անողը Ջավադն էր։ Համարձակորեն շատ շուտով մտերմացավ նրա հետ. միասին խմեցին, իրար ծիծաղելի պատմություններ արին։

Ու խմում էին։ Հարբել էին շատերը. իսկ մի ինչ-որ գլուխը կախ և քիթը միշտ կարմիր պարոն էլ,— պարոն ասացի, որովհետև ճգնում էր նա այդպես ցույց տալ իրեն—անընդհատ գինի էր խմում, շշեր դատարկում։

Երեցփոխը միայն նստած մնաց ինձ մոտ. մյուսները հեռացան և խմբեր կազմեցին։

— Այդպե՛ս...— արեց ծերունին, մի վայրկյան լուռ խորհելուց հետո,— ուզում եք դո՛ւք էլ մեզ նման՝ մեր հողը մշակել... եթե իմանամ, որ քեֆի համար է, ամառը հենց անցկացնելու—խոսք չունեմ. բայց, եթե ուզում եք շահվել... Սահակենց Մանուկը ձեզ, օրինակ, չի՞ խոսել մեր հողի, մեր մարդկանց կամ օդի մասին...

— Խոսել է,— ասացի ես,— մարդիկ վատ չեն երևում, հողն էլ լավ է թվում, իսկ օդը, ասում են, որ անձրևային է։

— Անձրևայինն իրա կարգին. բայց ասե՞լ է, որ մեր հողը առանց լա՛վ, շա՛տ լավ աղբելու՝ բան չի բուսցնի, որ անձրևը, կարճատև ամառը...

Բայց Ջավադը, որ երևի աննկատելի լսում էր մեզ, ականջը մեր կողմն էր, հանկարծ ընդհատեց ծերունուն և գոչեց.

— Ինչի՞ ես էդպես խոսում, ա՛մի. ինչի՞, մեր հողի ի՞նչն ա... պակա՞ս բան ա բուսցնում, որ բեջարես[1]... բաս էսքան ծաղիկները, անտառը, ջուրը... ճիշտ չե՞մ ասում, պապաշա՛։

Ընկերս ծիծաղեց և ասաց.

— Դե իհարկե. մենք էլ խո տեսնում ենք... Եվ վերջապես ի՞նչ կա, աղբ քի՞չ ունեք. ամբողջ գյուղը—ինքը մի՞թե հենց աղբի մեջ չի նստած...

Շատերը ծիծաղեցին՝ սրախոսություն համարելով։ Ջավադն ամենից բարձր քրքջաց, մինչ մի գյուղացի մոտեցավ ծերունի խրատչին և ասաց.

— Ամի՛, քաղաքացոց սիրտն ի՞նչի ես կոտրում... իրենք խո մեզանից լավ գիտեն, թող տեսնեն, էլի՛։

— Բան չեմ ասում, ի՞նչ եմ ասում,— շփոթվեց ծերունին,— յանի ասում էի, որ առաջուց իմանան...

— Էդ քո ի՞նչ բանն ա...— կանչեց նրա վրա Ջավադը,— քո հողը լավը չի, իմը շա՛տ լավն ա, ի՛մը կտամ։

— Հա՛, բա՞ս. մեկը քո հողն ա լավ, մեկն էլ իմը։

— Դե՛, դե՛, անսաս[2] տեղդ նստի՛,— ձայնեց Ջավադը բարկությամբ,— մեր հողին վատ ասելը բերնիդ չի ընկել.. լավն էն ա, ամի՛, որ դու չխոսաս... իմ պապաշան,— դարձավ նա ընկերիս,— քեզնից էլ ու մեզնից էլ լավ գիտի... Աղբ էլ որ ուզենա, այ, մեր տան առաջը մի սարի չափ կա հինը. է՛նքան տամ, որ սաղ դաշտը ծածկի... Հը՞, սրա՞ն ի՞նչ կասես, պապաշա՛...

---

[1] Որ մշակես։
[2] Անձայն։

Երեցփոխը լռեց, նայեց իրեն ուղղված զայրագին ակնարկներին, գլուխը ցնցեց, հետո կամացուկ ելավ և դուրս գնաց։

Թեև լսում էի և կիսովին դեմքս անտառապահին էի դարձրել, բայց լավ նկատեցի, թե ինչե՞ր կատարվեցին այնուհետև լռությամբ։

Ներունուն գյուղացիները մոմոռցով ճանապարհ բացին. Ջավադը մի թունդ հայհոյանք շպրտեց նրա ետևից կիսաձայն, հետո մի քանի երիտասարդներ դուրս գնացին նրա ետևից, դուռը խնամքով փակեցին, և լսեցի, թե ինչպես գոռգոռում էին խանութի մեջ։

Ելա և ուզեցի դուրս գնալ. սենյակի օդը ծանրացել էր, և արբածների տեսքը զզվելի էր դառնում։ Բացի դրանից, հետաքրքիր էր, թե ի՞նչ էին ասում այնտեղ ծերունի երեցփոխին։ Բայց Ջավադը երևի բրմբռնեց մտադրությունս, որովհետև մեկեն պարզեց դեպի ինձ մի բաժակ գինի ձեռքին և գոչեց.

— Ո՞ւր ես գնում, պարո՛ն, հլա մեկ էս բաժակով խմիր պապաշային կենացը... Չե՞ս խմում, չհավանեցի՞ր մեր գինուն... Դե՛, ինչ անենք, մեր սարերում խաղող չի բուսնում... Հլա մեկ սպասի՛ր, քեզ ասելիքներ ունեմ...

— Ասա՛,— կանգ առա ես։

— Դու էդ ախմախի խոսքերին մի՛ լսի. դու ջահել մարդ ես, գիտես, որ մարդ երբ ծերանում ա, խելքը քիչ պակասում ա... համ էլ դա մի քիչ, ընենց, էլի՛...

Առանց ուշք դարձնելու խոսքերին, դիմեցի դեպի դուռը։ Ճշմարիտ է, այնտեղ կանգնածները ճանապարհ տվին, բայց չանցին խոսակցության բռնել. մեկն էլ ինձնից առաջ դուրս նետվեց, և երբ խանութ ելա, այնտեղ կատարյալ լռություն էր տիրում, երեցփոխն էլ հանցանք գործածի ժպիտ դեմքին՝ ինձ նայեց։

Զգացի, որ ավելորդ էր որևէ բառ արտասանել և դուրս գնացի խանութից, անցա հրապարակն ու սկսեցի դեպի եկեղեցին ելնել մենակ։

Կամաց էի քայլում։ Բացի այն, որ տեսածներից ու լսածներից առաջացած անախորժ տպավորության տակ՝ խորհում էի, այլև զննում էի շուրջս։

Եկեղեցուց վեր, խճուղին ելնելու կետում, դիմացս դուրս եկավ մի ինչ-որ կույր և նիհար ծերունի, որ շոշափելով ճանապարհը, զգուշությամբ քայլեր դնելով՝ դեպի գյուղն էր իջնում։

Երբ ոտնաձայնս լսեց, պահ մի կանգ առավ։

— Բարև, ծերունի՛,— ասացի ես։

Երեսիս նայեց իր բիբերից զուրկ աչքերով, ձեռքի գավազանը դեպի իրեն քաշեց և ասաց.

— Աստծու բարին... դու ո՞վ ես... Հա՛, լլինի՞ դու ես այն քաղաքից եկած մարդը։

— Ես եմ. իսկ դու աշըղ Մարտիրոսը խո չե՞ս։

— Է, ի՞նչ աշըղ, քեզ մատաղ, երգ ասող ենք... ասած ունեմ—«դու Մարտիրոսն էլ իրան աշըղ է կարծում, երգ է հորինում, ձայնին լսեցեք»...

— Դա խո Ջիվանիի խոսքերն են, բարեկա՛մ։

— Այո՛, նա «խելքի աշեցեք» է ասել, ես էլ «ձայնին լսեցեք»... Ո՞ւր ես գնում էսպես հրամանքդ։

— Ոչինչ, ման եմ գալիս. իսկ դու այդ կույր տեղովդ որտեղի՞ց ես գալիս։

— Էս վերևումը մի արտ ունենք, էնտեղ էի։ Ասի, տեսնեմ ի՞նչպես ա բուսել։

— Տեսա՞ր,— ժպտացի ես։

— Կռացա ձեռք տվի. է՛հ, փառք Իրեն, մի թզաչափ բարձրացել ա... ամա գիժ ցորեն շատ ա լինելու։

— Ի՞նչպես իմացար։

— Իմացվում ա. գիժի տերևը փայլուն, ընենց փափուկ ա ըլում... Ըստեղ կանգնելը լավ չի, պարո՛ն, թե կուզես՝ իշնենք ժամի մոտ. ընտեղ գերեզմանաքարեր կան, նստենք քիչ խոսանք. յա թե չէ՝ համեցեք մեր տուն գնանք, միասին ճաշենք... Ես ուզում էի մեկ քեզ հետ խոսալ...

— Չէ՛, տուն գնալը թող մնա, բայց իշնենք եկեղեցու մոտ։

Կույրը փայտը պարզեց և սկսեց քայլել։

— Թո՛ղ թեզ բռնեմ և տանեմ քեզ,— մոտեցա նրան։

— Հա... շնորհակալ եմ. բռնի՛ր...

Եվ երբ թևիցը բռնել քայլում էինք, ձեռքովը բռնեց մի ձեռքս ու ասաց.

— Թո՛ղ մեկ հլա ձեռքդ շոշափեմ... ես մարդու ճանաչում եմ իրա ձեռքիցը... տեսնե՞մ... Հա՛, երևում ա, որ պիսեր[1] ես եղել...

— Ինչպե՞ս իմացար։

— Իմացա է՛լի... Ա՛յ, աջ ձեռքիդ միջամատը, գրիչը խո նրանով ես բռնում, ծայրի վրա կաշին կոշտացել ա... ամա չար բնությա՛ն տեր մարդ էլ ես երևում... ընենց էլի՛, հեշտ բարկացող...

— Դա՞ ինչպես իմացար...

— Ինչի՞... ես խո միշտ կույր չե՞մ եղել... է՛հ, ասված բալքի պատժեց ինձ, ո՞վ ա իմանում. առաջ ե՛ս էլ աչքեր ունեի, սևը սպիտակից չոկում էի, գրում էի, կարդում... Ա՛յ, նրանից իմացա, որ գրելիս գրիչը պինդ, շատ պինդ ես հուպ տալիս, ընտուր էլ կաշին քար ա կտրել...

— Հետո՞, հուպ տալը մի՞թե, միայն չար մարդը կարող է։

— Չէ՛, բայց ընենց, թունդ ես գրելու ժամանակը, էլի՛... Հը՞, ասված սիրես, դու քաղաքումն ի՞նչ գործի էիր։

— Վարժապետի նման բան։

— Հա՛, լավ, բաս, ամառս եկել ես մեր գյուղը անցկացնես, էլի՛... Չհասա՞նք հալա... Հա՛, համա հրես ժամի կողքի մեծ քարը... Ա՛յ, գնանք դենը, էն մյուս կողքին...

— Հաբեթ աղայի գերեզմանի մո՞տ...

— Հա՛, նրանից քիչ հեռու... Գիտե՞ս, էդ Հաբեթ աղան իմ ախպերն էր... ողորմի հոգուն...

Հիշեցի Սահակյանի պատմածը և լուռ մնացի։ Ապա, երբ տեղավորել էի ծերունուն ապառաժի մի կտորի վրա, որ երևի իբր գերեզմանաքար նետված էր այդտեղ, ինքս էլ նստեցի կողքին։

— Թե ծխում ես՝ ծխի՛ր,— ասաց կույրը,— ես բոնոթի[1] եմ քաշում։

Ասաց, երկար մուշտակի քղանցքը ետ տվեց ու արխալուղի գրպանից հանեց քթախոտի փոքրիկ տուփը, մի քանի արծաթե կտորներով պատած, գոտիի միջի կարմիր թաշկինակովը նախ քիթը մաքրեց, հետո փոշին լցրեց քթածակերի մեջ, աչքերը սևեռեց հեռուն ու ասաց.

— Հե՛յ գիտի հա՛յ, աշխարհ... Որ աչքերս սաղ լիներ, ես կթողայի՞ մենակ ման գաս գեղումը, գեղի շների հետ կռիվ տաս... յա թե չէ՝ ըստե՞ղ կնստեինք և ոչ թե էն մեր սիրուն ձորագլուխներումը, չուչռանջրի, հով ծառերի տակ, էն լավ-լավ ծաղիկների մեջ... Ա՛խ, ա՛խ, պարոն վարժապետ, շա՛տ, շա՛տ կարոտել եմ մեր սարերին, մեր անտառին ու ձորերին. մե՛կ էլ տեսնեի, մի կո՛ւշտ, աչքով վայելեի ու հետո մեռնեի...

4

Պահ մի երկուսս էլ լուռ մնացինք։ Ծերունու անձկությունը հուզեց ինձ։ Նայեցի դեմքին։ Բիբերից զուրկ աչքերը լցվել էին արցունքով և դեմքը կնճռոտվել։

Մատներով հուպ տված քթախոտի կեսը նա դարձյալ ներս կոխեց քթածակերի մեջ, լցված արցունքը որբեց թաշկինակով, հետո, երբի

---

1 Գրագիր։

1 Քթախոտ։

ավելի սովորությունից, քան ցրտից, ծածկեց մուշտակի քղանցքով ծունկները և ասաց.

— Ես միշտ խո այսպես չէի... Ե՞ս էլ մի ժամանակ ղոչաղ տղամարդ՝ չափչփում էի մեր անտառները. գործը վախենում էր ինձնից... իսկ այժմ, ի՞նչ եմ ես... մի ուրվական, որ պտտում եմ գյուղում և սրտիս նեղությունից, բարկությունից՝ երգեր երգում.

Է՜հ, կո՜ւյր երգիչ, տխուր սովեր անցյալի,
Դու մեզ երբե՞ք զվարթ երգեր չես տալի.
Օրը խավար քե՞զ համար, արևն անփայլ քե՞զ համար
Շա՜տ ապրեցիր—այս աշխարհ թող, հալվի...

— Քո՞ գրածն է,— հարցրի ես։

— Ի՜մ... Այսպես շատերն ունեմ. ասում եմ՝ գրում են... Է՜հ, ի՞նչ անեմ, տգետ մարդ եմ, երգերս էլ տգետ, անտաշ՝ ինձ նման... Էհ, քիչմիչ կարդացել եմ, լույս դառնա Սարգիս վարդապետի հոգին, նա՛ է ինձ դաս տվել։

— Վաղո՞ւց է, որ կույր ես։

— Տասը տարուց ավելի... Ջիուց ընկա, հետո երկար հիվանդ պառկեցի և երբ ոտքի ելա—կույր էի... էհ, փառք Իրեն, Նրա կամքը հալբաթ այդպես էր... Դե՜հ, բայց, հերիք է իմ մասին, մի քիչ էլ դո՛ւ ասա. Եկել եք գյուղը, լսել եմ, ուզում եք ըստեղ ապրել... Վարժապետը պատմեց... Գիտե՞ս, եղբորս որդին է։

— Այդ ի՞նչ շատ ազգականներ ունես։

— Գյուղի կեսից ավելին... Յոթը եղբայր ենք։ Գալոն էլ իմ եղբայրն է, անիծվի նա։

— Այն հարուստ խանութատե՞րը։

— Այո՛... Էդ ջաղացի առուն խո գիտե՞ս, դուքաններիցը ցած, ընտեղից դենը համարյա Կիրակոսենց ցեղն է, դեսը՝ Սարոյենց ցեղը։

— Այդ Ջավադի ցե՞ղը։

— Հա՛. ծանոթացա՞ր... խմող, լիրբ տղա է, քաղաքի միկիտանների զավակ... Ասենք, մեծ եղբայրն էլ մի բան չի. այ, նրանց հերն էր լավ մարդ. աղքատասեր, բարի... Էդ ինչի՞ց ա, վարժապետ, դու կգիտենաս, որ լավ հոր տղան էլ է փիս դուրս գալիս...

— Ժառանգության օրենքը դեռ լավ չի ուսումնասիրված. ո՞վ գիտե. շրջանը, գոյության կռվի միջավայրը...

— Հը՛մ,— արեց ծերունին, որ արձանացած լսում էր ինձ,— չեզանաս, վարժապե՛տ, բայց ասածներդ գլխումս չմտան. մեկ էլ ասե՞ս...

Նոր ուշքի եկա, որ հիրավի, ծերունին ոչինչ չպիտի հասկացած լիներ ասածներիցս։ Ծիծաղս եկավ։

— Ոչինչ, ոչինչ...— ասացի,— ներիր, որ մի քիչ խրթին խոսեցի... ուզում էի ասել, թե մարդս ո՞նց կրթվի, ինչ մարդկանց հետ որ նստի-կանգնի, նրանց բնությունն էլ կստանա։

— Էդ մեկը ճիշտ ասացիր... Ջավադը մեր ապականված գյուղաքաղաքումն է մեծացել, մեծ եղբայրն էլ այնքան խման-հարբանների հետ ունեցածը ծախսեց, որ ըտենց խարաբ էլավ, գնաց... Հմի էլ, հրե՜ն, բյոխվի օգնական ա. աչքովդ պիտի տեսնես, թե ոնց ա պլոկում գյուղացոց, ոնց ա գազանի պես փետը քաշում սրա-նրա վրա...

— Իսկ ձե՞ր ցեղը։

— Մեր մեջ էլ կան փսերը, ես խո մեր ցեղը չեմ գովում... Ա՛յ, մեկը հենց էդ Գալոն... Եղբայրս ա, բայց շնից փիսն ա... Էսա տաստարուց ավելի, մեզ հետ խռով ա, թե ի՞նչ,— նրան չենք օգուտ տալիս... Ախր ո՞նց տամ. մի անգամ հիմարացա՝ փող պարտք արի, հինգ տարի քերթեց կաշիս... Բայց էլի մեր ցեղի մեջ մարդիկ կան. Սարոյենց ցեղը...

— Հա՛,— միջահատեցի ես,— լսել եմ. գյուղն երկու ցեղի է բաժանված և երկուսն էլ իրար վնասում են... Լավ չէ այդ, հայկական այդ աղտոտ հատկությունը զզվեցրեց։ Ախր ի՞նչ ունեք իրար հետ, մի՞թե չեք կարող հաշտ, գոնե առանց իրար վնասելու ապրել։

— Հը՛մ...— արեց նորից ծերունին,— երևում ա, որ նրանք արդեն իրանց կողմն են քաշել քեզ... բայց, տե՛ս, վարժապե՛տ, կփորձես՝ կտեսնաս նրանց հետ գործ որ բռնես՝ կփոշմանես... թե՛ նրանց հողը հող չի, թե մարդիկը՝ մարդիկ չեն։

— Լավ, լավ, թող բամբասանքը... հավատացած կացիր, որ մեզ խաբել կամեցողը կզղջա։ Ես լավի հետ լավ եմ, վատի հետ կրկնապատիկ վատ։

— Ապրե՛ս, կարգն էլ հե՛նց էդ ա... բայց, քեզ համար եմ ասում, լավ կլինի, որ առվի է՛ն ղրաղի հողերն էլ մեկ տեսնես։

—Այդ թո՛ղ. ինձ այն ասա, թե ինչո՞ւ ձեր գյուղացիք այդքան խմում են և բոլորն էլ կարծես խոսքը մեկ են արել, որ մեզ միշտ խաբված պահեն... Մենք խո իրենց վնաս տալու չենք եկել... Քիչ առաջ, դուքանում երեցփոխն ուզեց գյուղի մասին մի քիչ ճիշտ բաներ ասի մեզ, քիչ մնաց կտրտեին խեղճին։

Ծերունին գլուխը կախ մնաց մի րոպե, հետո նորից ինձ նայեց իր անբիծ աչքերով, բռնեց ձեռքս, սեղմեց ու ասաց.

— Ա՛խ, քեզ մատաղ, պարոն եղբայր, ինչո՞ւ ես իզուր եկել՝ լցա-

ված գլուխդ ավետարանի տակ դնում... Մեր ջահիլների հետ, ասաված ազատի, գործդ լավ բռնիր հա՞... էլ առաջվան սերունդը չի՛ մնացել, ո՛չ... դալբություն[1], սո՛ւտ, ինչ ասես՝ քաղաքիցը լցվել ա մեր կողմը... Ա՛խ, երկաթուղին, այդ անիծված մաշի՛նը բերեց բոլորը... Մեր ջահիլները քաղաք շա՛տ տեսան, շա՛տ... Լսիր քեզ ինչ կասեմ... Ես կույր եմ, չէ՛. լավ, որ ծարավ չինեմ և ուզենամ բուն աղբյուրը գտնել, թե ցույց տվող չլինի՝ կգտնե՞մ... Ո՛չ, ստիպված՝ պիտի կեղտոտ ջրիցը խմեմ... չեմ էլ տեսնում ախր, որ նա կեղտոտ ա... Խմում եմ, խմում՝ մինչև ծարավս կտրի... Դե՛, խմածս էլ ամենից շատ՝ կեղտ կլինի, որովհետև կեղտը միշտ ջրի երեսին ա կանգնում, միշտ ավելի շուտ ա մարդուս բերնին մոտենում... Ըտենց էլ մեր հիմիկվան սերունդը. հենց որ քաղաք են ընկնում, ճանապարհը, աղբյուրի ճանապարհը ցույց տվող չկա—նրանք էլ ծարա՞վ, ինչ կեղտոտ ջուր ասե՛ս խմում են... Ա՛յ, հենց վրանները որ նայես, կհասկանաս։ Խո տե՞սել ես ինչպես են հագնվում. իրանց հայրերը հլա փափախով, արխալուղով են, իրանք մեկ էլ տեսար բինջակ, կարտուզ, ճռճռան կոշիկ, ձեռքին փե՛տ, մատանի՛... Ըտենց էլ ամեն բանը. ինչ որ հայրերն են տալիս՝ չեն վերցնում. ծարավ են՝ քաղաքի կեղտոտ ջրերիցն են խմում. էն անիծված տեղումը մեկ մարդ էլա չկա, որ մեր տղերանցը բռնի, տանի բուն աղբյուրի մաքուր ջրին...

— Այդ ձե՛ր, հայրերիդ պարտքն է, ինչո՞ւ չեք կրթում, նրանց լավ կողմը ուղղում։

— Հը՛մ... ուղղե՞լ, սովորեցնե՞լ... Տո՛ հիմիկվան աշխարհն այլ է, այլ. հիմիկվան որդիքը ոչ իրանց հորն են մարդաստեղ դնում, ոչ էլ թողնում, որ նրանք մի խոսք ասեն։ Հրե՛ն, երեկ երեկո չէ՞ր, որ լսում էի, թե ինչպես եղբորս որդին իր հոր վրա գոռում էր թե՝ «ի՞նչ ես հաչում քյաֆթառ շան պես, դարաչի կտրել գլխիս»...

Ի՞նչ առարկեի, չէ՞ որ ինքս էլ հաճախ տեսել էի, թե ինչպես որդին գոռում է հոր վրա, և հայրը խեղճ ու կրակ՝ արտասուքի էր դիմում, իրեն մխիթարելու համար։

— Բա՞ս...— շարունակեց ծերունին,— էդպես են, է՛դպես... բայց ա՛յ, բան չեմ ասիլ, եթե որդիս արժանիք, ինձնից ավելի կատարելություն ունենա և ինձ հրամայի սուս կենալ... Ուրախ էլ կլինեմ։ Գլուխս նրա ոտի տակին կդնեմ. բայց մեկ իմանամ է՞, որ նա ինձնից լավն ա, խելո՞ք, կատարյա՞լ... Աշխարհս էլ հենց առաջ չի երթալ, թե որդին՝ հոր վրա կատարյալ չլի... Ըտենց չի՞։

— Այդպես է։

---

1 Խաբեբայություն։

— Շա՛տ ապրե՛ս... Ես մի՛շտ մտածել եմ, որ կատարյալ ուսումը մարդուս լավացնում ա, համա կիսատը՝ լրբացնում։

— Ճիշտ է։

— Ա՛յ, մի երգ էլ ունեմ ասած դրա վրա.

Լավ կարդալը, որդյակ սիրուն,
Կլինի տանդ մեծ սյուն,
Կտա քեզ համեստություն։
Կիսատ կարդալը, որդյա՛կ անպետք.
Չի՛ թողնիլ ո՛չ մի լավ հետք,
Կդարձնի քեզ լիրբ, անտուն...

— Լավ չե՞մ ասել... Հետո ավելացնում եմ թե՝

Ավելի լավ է մնալ տգետ,
Քան ուսանիլ կիսատ, անպետք։

— Դու երևի շատ այդպիսի գրվածքներ կունենաս։

— Ունեմ։ Բոլորը գրել եմ տվել մի տետրակում... Հիմի ճաշի ժամանակ ա. թե արժան կհամարես, վեր կաց գնանք մեր տուն, համ կճաշենք, համ էլ կասեմ քեզ բոլորը։

Ու ոտքի ելավ։ Լռությամբ թևը բռնեցի, և սկսեցինք իջնել դեպի հրապարակը, որից հետո էլ ջրաղացի առուն։

Կույրի խոսակցությունը հաճույք էր պատճառում ինձ։ Երևում էր, որ մարդն աշխարհ էր տեսել, այլև իր 10 տարվա կուրության ընթացքում, ինքնամփոփ խորհրդածություններով, հասել էր այն ամենին, ինչ որ ժողովրդի իմաստությունն է արտադրում։

Ճանապարհին նա քիչ խոսեց։ Հրապարակից անցնելիս, նկատեցի, թե ինչպես գյուղացիք հետաքրքրությամբ մեզ էին դիտում՝ ակնարկներ անում միմյանց և ժպտում։

Երբ անցնում էինք Գալոյի խանութի առջևից, որդին, որ նստել էր նստարանի վրա, հեգնող ժպիտով մեզ նայեց։

— Ընկերս դեռ այնտե՞ղ է,— հարց տվի նրան՝ գինետանը ակնարկելով։

— Ո՛չ,— ասաց նա,— նոր դուրս եկան խմբովին և վարժապետի մոտ այդ կողմը գնացին։

Կույրը, քիչ անցնելուց հետո, թեքվեց դեպի ինձ և ցած ձայնով ասաց.

— Հիմի մինչև երեկո կլակեն, հետո կսկսեն կռիվ, դալմաղալ... ափսո՛ս ընկերդ։

— Կուղարկենք, կկանչենք նրան։

— Հա՛, թող գա. ի՞նչ նրանց ընկերն է։ Մենք էլ օղի, գինի ունենք ճաշին, բայց դեհ, քանի ես ողջ եմ, իմ տունը հարբեցողի երես չի տեսնի...

Հարբեցողը ոնց որ մի խոզ աղտոտ,
Ցեխի մեջ թաթախում է ձեռք ու ոտք.
Դնչովը լկստում ա ցեխը,
Գլխի տեղակ՝ գլուխն ա դառնում տրեխը։

— Այդ է՞լ քոնն է։

— Իմն է. ես ուրիշի գրածները չեմ ասում։ Լսիր մնացածը... Առուն հասա՞նք... Դե լավ, ջաղացի տակն ա կարմունջը, բայց նեղ ա, գու անցիր. հիմիկանց դենը ես մենակ էլ կարամ գնալ. սովոր եմ... Դու լսիր մնացածը.

Թե ուզենա մի խոսք ասել,
Կասես իշի ձեն ես լսել.
Վայ թե քեֆին ես կպել...
Բերնի ցեխը վրադ շուռ կտա։

— Այդ տողը չեղավ, բարեկամ,— ժպտացի ես։

— Հա, գիտեմ...— Արտիցը գալիս ուրիշն էի մտածում գտնել, բայց գու ռաստ եկար... Վնաս չունի, գիշերս պառկելիս կգտնեմ... Հիմի լսիր վերջին կտորն էլ.

Հարբեցողը ո՛չ տուն ունի, ո՛չ ընտանիք.
Որտեղ գինի— ընտեղ նրան հարսանիք։
Մարտիրոսը ճիշտ է, գինի խմել էլ գիտե,
Բայց չի՛ կորցնում մարդկային իսկ արժանիք...

Հազիվ անցել էինք առվից և պտույտ էինք գործում ինչ-որ քարակույտերի առջևից, որ ո՛չ շատ հեռու լսվող մի աղմուկ՝ կանգ առնել տվավ կույրին։

— Բո՛...— կանչեց նա վախեցած,— կռիվ ա. կասես մեր տան կողմերումն ըլի, մեր տղերանց ձենն ա...

— Ձեր տունն այդքան մո՞տ է։

— Հա՛. էս երևցողը եղբորս՝ Հաբեթինն ա, հետո մերը... Հլա մեկ շուտ-շուտ գնանք։

Մտատանջ ու վախեցած ծերունին թեև խփվում էր պատերին, գայթում էր հաճախ, բայց շտապով առաջ քայլեց։

Քիչ հետո կանգ էինք առնում մի երկհարկ շինության առաջ, որի մոտից դեպի վտակն էր փռվում ընդարձակ, ծառազարդ և սիրուն պարտեզների մի շարք։ Հիրավի, ծերունին իրավունք ուներ, առվի այս կողմերի հողերը շատ ավելի լավ ու բեղմնավոր էին երևում։

Այդպես էլ էր։ Սարոյենց ցեղի բռնած կողմը, հրապարակից սկսած դեպի վեր՝ տարօրինակ կերպով տները զուրկ էին պարտեզներից, մինչ այս կողմը լիքն էր ծառաստաններով ու ջրերով։

Բայց երկար չկարողացա շուրջս զննելով զբաղվել, որովհետև կույրի տան առաջ տեղի էր ունենում մի այլանդակ տեսարան։

Խանութի հետևում խմող-արբեցողների խումբն էր ամբողջովին այնտեղ և դեռ մի նոր դեմք էլ ավելի։ 10—15 հոգի, բոլորն էլ արբած, երեքուն, աղմկալից ձայնով խոսող, միմյանց չհասկացող—ժողովվել էին ինչ-որ գերանների կույտի առաջ և աղմկում, կանչվռտում էին։

Անտառապահը, վարժապետը, նոր դեմքը, որ, ինչպես տեղեկացա, Ջավադի եղբայր տանուտերն էր, խառնվել էին իրար։ Անտառապահի դեմը կտրել էր վարժապետը և ճգնում էր համոզել նրան, իսկ Ջավադի եղբայրը կանչում էր.

— Ինչի՞, ախպե՛ր, փետ են գողացել, թող պրատակոլ շինվի... ո՞ւր եք ողջ գյուղը ձեր կրակովը էրում...

— Աստավ, Ալեքսե՛յ, նո՞ւ...— համոզում էր ուսուցիչը։

— Ինչո՞ւ գողացած,— գոռում էր մի երիտասարդ, որ կույրի որդին էր,— էս փետերը ես առե՛լ եմ, առե՛լ...

— Աստված գլխիդ քա՛ր գցի, Թորո՛ս,— ձայնում էր մի պառավ էլ հեռվից,— տո՛ւդ գլխիդ ընկնի, բաս մինակ մե՞զ տեսաք...

Մյուս գյուղացիք շրջապատել էին, իսկ Ջավադը, չարամիտ քրքիջը բերնին, ընկերիս մի կողմն էր քաշել և ինչ-որ բան էր բացատրում տաքությամբ։

Շրջակա տանիքներից, փողոցի անկյուններից, Գալոյի պատշգամբի լուսամուտից՝ դուրս էին ցցվել գլուխներ. կին, մանուկ, տղամարդ՝ կիտվել էին ամեն կողմ։

Եվ ամբողջ այդ աղմկող խումբն այնքան հարբած էր, որ իրար վրա էր ընկնում, առանց միմյանց լսելու գոռգոռում, վիճում։

— Սա՞ ինչ ա, տո՛...— առաջ քայլեց կույրը բարձրաձայն կանչելով,— Հակո՛բ, ա՛յ տղա, Արա՛մ, դա՞ ինչ ա, ի՞նչ ա եղել...

Ամուսնուն տեսնելով, ճչացող պառավը մոտ վազեց, բռնեց թևից ու ասաց.

— Ի՞նչ պիտի լինի, տնա՛շենի մարդ. հրե՛ն, Սարոյենք մատնել են, պահապանն էլ եկել՝ պրատակոլ ա գրում...

— Ո՞նց թե պրատակոլ, ինչի՞...

— Փետերի համար... էն նոր բերած տախտակացուների... ասում ա՝ գողացել եք, ծածուկ բերել, յա 10 մանեթ կտաք, յա թե չէ՝ փետերն էլ տանում եմ ու ձեզ էլ դատաստանի քաշ տալիս...

— Բո՛... բա ըտենց բա՞ն կըլի,— արեց կույրը,— ինչի, մենակ մե՞ըը տեսավ... Ես էդ օձ Թորոսի հորը... տո մեկ դենը կացեք տենա՞մ... Ո՞ւր ա աբեշչիկը, վարժապե՞տն ուր ա...

Ասաց, հրեց իր դեմը կեցողներին ու քայլեց դեպի գերանների կողմը, որի տեղը նա լավ գիտեր և գուշակում էր, թե նրա շուրջը պիտի կենտրոնացած լինեին աղմկողները։

— Հա՛, հրես եկավ Մարտիրոսը ինքը,— նկատեց տանուտիրոջ օգնականը,— հլա մեկ արի, Մարտիրո՛ս, էս ո՛ւր ա քո տղեն մեշի՛ցը ծառեր գողացել բերել։

— Ադա, ի՞նչ ես հաչում,— ճչաց նրա վրա կույրը,— ո՞նց թե գողացել... մեկ գնանք քո տունը, տեսնենք դո՞ւ ես մեշեն (անտառը) գարտակել-բերել, թե՞ մենք... ո՞ւր ա աբեշչիկը...

— Ըստեղ եմ,— հառաջացավ դեպի նա երերվելով անտառապահը,— դու... էս փետը պրատակոլ, տասը մանեթ...

— Ո՞նց, տասը մանե՞թ... տո՛ ես քեզ նման հարբանին տասը սիլա (ապտակ) կտամ, որ քիչ խմես... ինչի՞, բիլե՞թ չունեմ, փետ բերելու ինձ իրավունք չկա՞...

— Ունես... էս փետը... գողացած ա. ե՛ս... ես կտրել էի Սարոյենց համա... ը՛ըմ... յանի ինձ համար...

— Տո ի՞նչ ես դուս տալի. լավ տեսե՞լ ես փետը, թե էս խլեզ քյոխվին ես ականջ դնում. յա թե չէ փո՞ղդ ա պակասել ու մարդ չգտա՞ր գեղումը...

— Ադա քոռ, քո՛ռ...— մեջ ընկավ տանուտերի օգնականը, մի լիրբ ծիծաղ դեմքին,— դու որ չես տեսնում գերանները, մենք չե՞նք տեսնում... էլ ո՞ւր ես ուշունցի (հայհոյանք) տանում բանը... էն ա ասա, որ գողացել-բերել եք, հանիր մի ոսկի կոխիր ձեռքը, փետն էլ յա տուր տանենք՝ պրծնի գնա էլի՞... ո՛ւր ես կրակը մեծացնում...

— Տո չոռ ու ցավ կտամ, կտա՞մ... որ տանեք...

Վարժապետը, որի աչքերը փոքրացել էին, բայց ճգնում էր զսպել իրեն և տեղնուտեղը կանգնած՝ օրորվում էր, շրթունքները պրկում, ձեռքի փայտն ամուր կոխում գետնին, ճակատը կնճռում և աշխատում էր խիստ կերպարանք ստանալ—փորձեց միջամտել։

Եվ երբ կույրը, տանուտերի օգնականն ու անտառապահը՝ գրեթե երես-երեսի մոտեցրած, ոտների վրա լարված, երեք աքաղաղների պես

ճչում էին, նա ձեռքը 3—4 անգամ թափահարեց, գահավիժմամբ առաջ նետվեց, երկու թևերով լայն շարժում գործելով ետ մղեց շրջապատողներին, մտավ աքաղաղների մեջտեղ, ուժգին հրումով հեռացրեց նրանց միմյանցից ու գոչեց.

— Յավա՛շ... յավաշ ասում եմ է՛է՛.. յավաշ ե՛ս էլ ասեմ... Դո՛ւ, Ալեքսեյ, պաշո՛ղ (կորիր)... հեռու գնա... Ըտենց... Դու էլ, քյոխվա, ուխտ քեզ քաշիր ու յալլա՛, դենը... Ըտենց... Հիմի դո՛ւ, ամի՛, ինձ լսիր...

— Ինչի՞ «յալլա, դենը»,— ձայնեց՝ ոտների վրա ցցվելով, քյոխվան,— յանի ուզում եք, որ ցեպա[1] կախե՞մ... յա... յա թե չէ... Ադա, ո՞ւր ա գզիրը... Շան որդի Սահակ, էդ ո՞ւր ես կորել...

— Տո սուս է՛է՛... սուս մեկ,— կանչեց նրա վրա վարժապետն ու ոտները լայն-լայն դնելով՝ ճգնեց հավասարակշռություն ստանալ՝ չօրորվելու համար։ Հետո կուրծքը ցցեց, գլխարկը պինդ կոխեց գլխին, դեմքը կնճռեց ու ասաց.

— Ո՞ւր ա Ջավադը... Հա՛, ըստե՞ղ ես... Լավ, ա՛յ ամի, խո տեսնո՞ւմ ես էդ շան որդի կաղին... խո տեսնո՞ւմ ես... Լավ նայիր... չե՞ս տեսնում. ի՞նչ ա, աչք չունե՞ս... Թյո՛ւ ես դրա... էս ամենը դրա բանն ա... էս խեղճ աբեշչիկը սկի էլ չէր իմանում, որ ձեր Արամը փետ ա բերել, գեղն էր եկել, որ Բախշիենց Մուրադի գողացած փետերը բռնի։ Դե՛, Ջավադի բարեկամն ա ախր, խո գիտե՞ս... Հը՛մ, ինչ ա, որ նրանը մոռանա, սրան շուտ տվավ դե՛սը... Ամա, բայց որ...

— Հա՞...— միջահատեց նրան կատաղությամբ կույրը,— ո՞ւր ա էդ շան որդին, էդ, էդ...

Ու փայտը բարձրացրեց։

— Փիե՛, փիե՛...— կանչեց հեռվից Ջավադը վախեցած,— տո, էդպես շա՞ռ կլինի... չե՞ս ամաչում, վա՛րժապետ...

Հետո մեկեն, վախը փոխելով հանդգնության, կամ ավելի ճիշտ ասած, վախն ավելի սաստկանալուց, մի քայլ առաջ նետվեց ու ահավոր ճիչով կանչեց.

— Տեսնո՞ւմ եք էս շան ցեղը... էս շան... այ ես ձեր... այ ես ձեր...

Ու միմյանց հետևից, կարճ փայտը ցցած, կաղ ոտքի վրա լարված, կոկորդը պատռելու չափ ճչալով՝ սկսեց նա այնպիսի հայհոյանքներ, այնպիսի լկտի բառեր, որ լսողները խառնվեցին իրար, վարժապետը երկու ձեռքերով ականջները փակեց, անտառապահը ապշած՝ ետ քաշվեց, իսկ ընկերս բերանբաց մնաց։

---

[1] Գյուղապետական նշանը, շղթան։

Շարունակելով կաղլիկը ամենի վրա իշխող աղաղակներն ու հայհոյանքները, վախից գունատ, սոսկումով լի աչքերը, նա կամաց-կամաց ետ քաշվեց, ապա թքեց և սկսեց հեռանալ դեպի առուն։ Այնտեղ, փոխանակ կամուրջից անցնելու, երկար կոշիկներով մտավ ուղղակի ջրի մեջ, այնտեղից էլ դարձավ, էլի ճչաց մի բոպե, առվի մյուս կողմն էլ մի վայրկյան մեզ նայելով հայհոյեց և անհետացավ...

Մի բոպե ամենքը լուռ էին, հետո հանկարծ մեկը քրքջաց, ապա ծիծաղ երևաց բոլոր դեմքերի վրա, իսկ կույրը, փայտը ցած թողնելով ասաց.

— Ը՜մ, ես քո վախկոտ հոգուդ...

Այնուհետև մեկեն աղմուկն իջավ, մարդիկ սկսեցին ցրվել, մնացողները հանդարտ, համոզիչ կերպով շրջապատեցին անտառապահին, և չէր անցել հինգ բոպե, որ տանուտերի օգնականն անհետացել էր, իսկ վարժապետն անտառապահի թևը մտած, կույրի առաջնորդությամբ, հետևներիցը մենք էլ, մտանք մի ընդարձակ սենյակ, ուր շուտով սփոց փռվեց, և երևաց շիշերով օղին և գինին...

— Ըտենց, հա՜...— ձայնեց վարժապետը,— ա՜յ, հիմի լավ էլավ... Տո, ի՜նչ գողացած փայտ, ի՜նչ տանուտեր... ողջ գեղը, բոլոր գեղերը գողանում են... Դու գինի՜ ասա, գինի՜... խմենք, Ալեքսեյ, կը չորտու[1] պրատակոլ-մրատակոլ... ինչի՞, դու չե՞ս իմանում, որ մեկը հենց ինքը տանուտերը ողջ անտառը թալանում ա ու տարեկան ինչքան տախտակ ա ծախում... նա , վազմի՜, պե՛յ (ա՜ռ խմի)... Քո կենացը, Մարտիրոս ամի...

Եվ երբ սկսել էինք ուտել, կույրը, որ լուռ և գունատ, պատառներ էր շինում, երկար չխոսելուց հետո՝ մեկեն ինձ դարձավ և խուլ ձայնով ասաց.

— Մարդիկ կան, պարո՜ն եղբայր, որ ծնվելու օրիցը հենց՝ իրանց տեղումը չեն ծնում, ուրիշ տեղի վայել են, բայց բախտը նրանց ցեխի մեջ ա բերել-քցել... Մարդիկ էլ կան, որ ծնած օրիցը շան կաթ ծծածի պես շուն են ըլում, բայց բախտը նրանց մարդկանց մեջ ա բերումքցում... Ո՞ւր ես եկել մեր գեղը, ափսոս չե՞ս... Ա՜ռ, ա՜ռ մի-մի բաժակ էլ մենք խմենք, բալքի թե մի քիչ անասունի նման մենք էլ կարողանանք մտածել, թե չէ՝ մարդու պես ապրելը մեր բանը չի... ու տեղը չի... Ըտենց չի՞, վարժապե՛տ...

[1] Սատանային թող գնա, թող գրողը տանի։

— Թո՜ղ, թո՜ղ, ամի՜.— խմեց վարժապետը տխուր, խիստ տխուր դեմքով,— խմե՜նք, խմենք, որ մոռանանք. թե չէ՝ մարդու պես չի՜ ապրվում, չէ՜...

1904

ՔՅՈՒԽՎԱ

1

Սարսափելի էր տեսնել տանուտեր Թորոսի բարկությունն այդ երեկո։

Ջուխի ծայրերը գոտկի մեջ, կարտուզը պինդ կոխած գլխին, աչքերն արյունով լի, ձեռքին մի խոշոր մտրակ շառաչեցնելով, գզիրին էլ՝ այն խեղճ ու կրակ Սահակին, ետևը ձգած, հայհոյելով ու գոռգոռալով էր, որ հայտնվեց գյուղի հրապարակի վրա։

Եվ ձա՜յնը, ձա՜յնը... Նման պատռած մեծ թմբուկի ձայնի, խրոպոտ, խմած օղիից դեմքն էլ կապտած, քունքերն ուռած գոռում էր, կանչում. իսկ բառերը միմյանց գլխի վրայից, իրար կոխոտելով ու անկապ՝ դուրս էին նետվում բերնից։

Օ՜հ, ինչպիսի՜ բառեր...

Գյուղում պիտի լինել կիրակի օրերը այն էլ այդ լեռնային գյուղերում, լսելու համար, թե որպիսի՜ հայհոյանքներ ու լպիրշ բառեր կարող են գոյություն ունենալ հայերեն լեզվի մեջ։

Հայր, մայր, գերեզման, պապեր, հավատք... ոչի՜նչ, ոչինչ չէ խնայվում։ Ու բանաստեղծական պատկերացումնե՜ր, ինքնատիպ կազմությամբ հայհոյանքնե՜ր, որ մարդ ապշած է մնում գյուղական մտքի այդքա՜ն բեղուն ստեղծագործության, այնքա՜ն հնարագի՜տ, աղտեղի նրբասացության առաջ։

Անշուշտ, Թորոսը հարբած էր և լա՜վ հարբած։ Հերթը իրենն էր երեվի այդ օրը և ո՞վ գիտե, ո՞րտեղ էր «լակել»։ Սակայն իզուր խո չէր, որ կատաղել էր, մտրակն էր շառաչեցնում և կամ պատռած ձայնով գյուղը ոտքի հանում, այն թշվառ գզիրին էլ ետևիցը քարշ էր տալիս-բերում։

Հրապարակի վրա էին գյուղացիները. եթե ո՞չ բոլորը, գրեթե մեծ մասը։ Երեկոյան ժամերգությունից հետո կիրակի էր և անելու ոչինչ չկար, հավաքվել էին խոսելու, զվարճանալու, է՜հ, եթե հասարակության գործ էլ պատահեր՝ գոռգոռալու, վիճելու։

Կիրակոսենց Գալոյի «մատաղանիթ» առաջ և մոտը դրված նստարանի վրա այդ երեկո քավական մարդիկ կային։ Նախ «Խոզերան»։ Ցամքած, երկտակ եղած դժգույն մի ծերունի, որ չնայելով տարքին, մաշտակը վրան էր, ահագին փափախը մինչև ականջների արմատը խրած, տակից կապած սև թաշկինակի ծայրերն էլ նապաստակի ականջների նման դուրս հանած։

Կային նաև կարմրամազ Սմբատը՝ ձեռքերը միշտ գրպանում, Գալոն, որ ամեն խոսելիս գոռում էր ինչպես կաչաղակ, որդին՝ Արշակը, բստ սովորության լուռ, արհամարհոտ, կանգնած խանութի շեմքին։ Այդտեղ էր և մշտապես ալյուրոտ Զաքեն, մրսողի դեմքով երեցփոխ Մուշեղը, երկարավիզ հյուսն Գևոն, ծոծրակն ածիլած պայտար Խեչոն, մինչև իսկ զուռնաչի և որմնադիր վարպետ Համբոն։

Գրիշոյենց Մկրտչի խանութի առաջ, ճշմարիտ է, ոչ ոք չէր երևում, բայց թե՛ ներսում և թե՛ ետևի սենյակում խմբեր կային օղու շիշերի առաջ։

Սարոյենց խանութի մոտ բազմություն ավելի էր։ Բացի այն, որ ամբողջ ծածկոցի տակ նստոտել կամ խումբ առ խումբ կիտված կային գյուղացիներ, այլև նստարանի վրա «տամա» էին խաղում վարժապետն ու ծերունի մանրավաճառ հրեա Սիմոնը՝ անքաջանելի ապիտակ շոխան (կարծեմ, պիտի որ կտավից լիներ) հագին և այլտեղակ, երկարավուն մեծ ակնոցն աչքին։

Խաղացողների մոտ էր երիտասարդությունը։ «Տաման» զբաղմունք էր. հրեան լա՛վ խաղացող էր, երեկվանից ի վեր գյուղումն էր, և ողջ օրը գյուղի տղայք միմյանց էին հաջորդում խաղի նստարանի վրա։

Ու դիտող, միմյանց սեղմած այծմ, սրտատրոփ տեսնում էին, որ վարժապետն էլ հաղթվում էր վարպետ հրեայից։

Այստեղ էր նաև, չմոռանանք, գլուխը միշտ կախ ձգած կարմրաքիթ «պլարոնը», վերարկուն, քաղաքացու նման ուսերին, կարմիր առլասե արխալուղով, ոսկեջրած արծաթապատ գոտի, մինչև իսկ, այո՛, ոսկյա մեծ մատանի, այն էլ փիրուզով... Քաղաքացի էր գրեթե մարդը. ի՞նչ անենք, որ այդտեղից էր աղջիկ առել, Սարոյենց փեսան էր, նրանց խանութի կիսատերը և կամ առանց կարմիր քթի երբեք տեսնել չէր կարելի նրան։

Իսկ ի՞նչ էր անում Զավադը՝ հատուկ ու կաղլիկ այդ ճչացողը՝ մեջքի վրա մեծ կարկատանով։

Թշվա՞ռ կաղլիկ։ Սկի քեֆը տեղը չէր այդ օր։ Ծերբայրն առավոտյա-

ից ի վեր կորսվել էր՝ խանութն իր վրա թողնելով. ողջ օրն էլ «բոր, անտաշ» գյուղացիների հետ ճղճղացել-աղմկել էր՝ մի քանի արշին չիթ ծախելու համար. և ի դժբախտություն ամենի, հարբելու, խմելու ո՛չ մի առիթ չէր ներկայացել։

Մարդը գինի էր խմում, իսկ այդ շաբաթ, թարսի նման, ո՛չ մի կաթիլ գինի չկար ո՛չ իրենց տանը, ո՛չ էլ խանութներում։ Զոռ պիտք էր տալ «գիժ» օղին։

Ու նստել էր նա «տամա» խաղացողների կողքին, մեջքը դեմ տվել պատին, կարճ փայտը ոտների մեջ, երազուն, հազիվ խառնվում էր խոսակցությունների։ Ուշքն էլ—կատաղեցնողը հենց դա՛ էր—դեպի գետեզրն էր, որտեղից նրա ականջին էին հասնում զուռնի և երգերի զվարթ ձայներ...

Իսկ եղանակը, որքա՞ն լավ էր այդ օրերը. գետինը չոր, երկինքը պա՞րզ, այգիները պճնված կանաչով, ծաղիկներով, դաշտերը ժպտուն... ամեն ինչ քեֆի հարմար. մարդու երգելը, պարելն ու վազվզելն էր գալիս։

Բանն այն էր, որ շաբաթից ի վեր, օգտվելով լավ եղանակներից, հայտնվել էին ցածի գյուղերից 5—6 երիտասարդներ, այն անիծյալ կիրակոսենց ազգականները, ու ամե՛ն երեկո, նույնիսկ ցերեկը, զուռնաչի Համոյի աշակերտ Ղազարին հետներն առած, մարդ չի իմանում՝ որտեղից բոլ գինի գտած, նախ մի լավ կոնծում էին գետեզրի կանաչների մեջ, հետո զուռնան առաջներն արած, թափորով, երգերով անցնում էին փողոցներից և մինչև կեսգիշեր թնդացնում գյուղը։

Եվ ահա ա՛յդ իսկ «շան որդիները», առանց Զավադի, առանց նրա մասնակցության, այդ օրը շա՛տ ավելի աղմկարար էին դարձել այնտեղ՝ Սուքիասենց այգիների տակը, գետեզրին նստած։ Կույր Մարտիրոսենց Ակրամի զիլ ու քաղցր ձայնն էլ խո՛... կատաղությունից տրաքեցնում էր կաղլիկին։

— Էդ ո՞րտեղ են քեֆ անում դրանք,— հարցրել էր նա գյուղացիներին։

— Գետի ղրաղումը, Սուքիասենց բաղի տակը...

Հը՛մ, տա՛. բաս համբերելու բա՞ն էր։ Ինքն այնտեղ նստած, իսկ ուրիշները Սուքիասենց սիրուն հարսի առաջ բայաթիներ կլկլացնեն, և Զավադն իր ձայնը լսեցնելու առիթ չգտնի «հրեղեն» Մարանին։

Չկարծեք, թե Զավադը կին չուներ։ Ի՞նչու ոչ։ Մինչև իսկ երեք որդի, կինն էլ դաշտի գյուղերի մի լավ օջախից։ Բայց, դե՛հ, Սուքիասենց հարսին ո՞վ տեսներ, որ ջանը կրակ չընկներ. այն էլ Զավադի պես

քաղաքին սովոր, սիրուն «մաթուշկաների» հետ նստած-կանգնած, ճաշակը «զարգացրած» մարդը...

Սուքիասենց հարսն էլ, մեղա՜ աստծու, մի քանի անգամ արտը գնալիս ժպտել էր Ջավադին, խոսքերին պատասխանել. մինչև իսկ, ղուշ՜ Ջավադ, աչքով անելուն ժպիտովը քաշալերել։

Սակայն այդ օր բանը թարսվել էր։ «Շան տղերքը» առանց իրեն՝ քեֆը չաղացրել էին հենց ճի՜շտ սիրուն Մարանի տան պարտեզի տակը, և Ջավադի փոխարեն Արամն էր ձենը գլուխը քցել։

Սատանեն ասում էր մեկ վե՜ր կաց, գնա նրանց մոտ, բոլորին դենը տուր, զուռնեն քոքիր, ձենդ զլիր ու ողջ գյուղի հարսներին էլ տներից դուրս թափիր...

Հենց ա՜յդ մտածության մեջ՝ դողն ընկել էր ջանը. մի բոպե ևս և գուցե ոտքի ելներ, որ հանկարծ եղբայրը՝ տանուտերի օգնական Թորոսը, կատաղած ու գոռգոռալով՝ հրապարակ էր նետվել գզիրի հետ։

Արդյոք ի՞նչ էր եղել, ի՞նչ կար։ Հարբելո՞ւց էր, թե՞ մեկը քյոխվի քեֆին կպել էր։

Ամենը թողին իրենց զբաղմունքը։ Խմբակները լուծվեցին, խոլերան ուղղվեց և ոտքի ելավ, Գալոն առաջ գնաց, հրեան այլանդակ ակնոցների վերևովը դարձավ նայեց, վարժապետը, կարմիր քարերը բռան մեջ՝ առաջ քայլեց, իսկ Ջավադը երկու ոստյունով դեպի եղբայրը վազեց։

— Էդ ի՞նչ ա ըլել, քյոխվա,— ճչաց Գալոն,— ի՞նչ ես գազազել։

— Տո ե՛ս նրանց հոր... տո ե՛ս նրանց պապերի օխտը ջինը... բա ըտենց բա՞ն եք տեսել, խալխը...

— Ի՞նչ կա,— մոտեցավ Գալոն չարամիտ ժպիտով,— ո՞վ ա նեղացրել քյոխվին, ա Սահակ...

Հետզհետե շրջապատեցին քյոխվին, որ քայլեց դեպի Գալոյի պատշգամբը և այնտեղ նստեց նստարանի վրա։

— Աղա՜ բաս...— շարունակեց նա մտրակը գետնին խփելով,— բաս ես քյոխվա չե՞մ... տո բաս դո՞ւք չեք ընտրել ինձ, բաս քյոխվության ցեպը (շղթան) հրես ջբո՞ւմս չի... Ա՜յ ես նրանց...

— Հլա մեկ ասա՜, Թորո՜ս,— հորդորեց Գալոն,— ըտենց ինչի՞ ես բարկացել... ի՞նչ ա ըլել... Տո չհա՜ննամը, թե մի բան էլ պակասություն ես տեսել, ի՞նչ ես իզուր քեզ կտրատում...

Գյուղացիք խմբվեցին խանութի առաջ, և շրջանը սեղմվեց։ Ջավադը դարձյալ ճարպիկ գտնվելով, հաջողվեց նստարանի ծայրը բռնել՝ թողնելով ոտքի վրա թե՛ Խոլերային և թե մյուս ծերունիներին, իսկ

վարժապետը, կարմիր քարերը դեռ բռան մեջ կանգնած մնաց Գալոյի կողքին, շարունակ հայհոյող քյոխվի առաջ։

— Դե ասա տեսնենք, Թորո՜ս,— ճչաց Գալոն, էդ ի՞նչ ա ըլել, ո՞ր կրակ ես դարձել...

Ծաղր, հեգնություն, ամեն ինչ կար նրա ձայնի մեջ, աչքերն էլ թարթում էր ու ակնարկներ անում սրան-նրան, բայց քյոխվեն և ոչ իսկ ուշադրություն դարձրեց։

— Տո՛ ի՞նչ անեմ,— ճչաց նա,— ասելու բա՞ն ա, որ ասեմ... ըսենց բան սկի իմ օրումը չէի տեսել ու լսել... Տո բաս էլ ինչացո՞ւ քյոխվա եմ, որ իմ գզիրին քացով խփեն, փափախին բամբաշեն, հլա մի ստաքան էլ կարմիր գինով դունչն ու մռութը լվանան... Հը՞, ա՜ խալխը, տեսնվա՞ծ բան ա սա...

— Հա՜, հա՜,— արեց գզիրը խեղճ-խեղճ,— շա՜տ ասի, թե մի անեք, լավ չի... գի՜նին էլա, ասի, տվեք ես խմեմ, ամա չէլավ.. Ա՜յ, ըսե՜նց սա՜ղ փափախս լվացին, շորերս գինոտեցին...

— Փիե՜...— կանչեց Ջավադը,— բա գինին էլ կթափե՞ն... շան տղերքը ջրի տե՞ղ են դրել...

— Ադա էդ ինչե՜ր եք ասում է՜է՜...— գոռաց քյոխվեն,— ի՞նչ գինի, ի՞նչ փստան... խոսքը գինի՞ն ա, թե՞ իմ հրամանը ոտնատակ տալը, գզիրիս թակելը...

Ապա հանկարծ դարձավ դեպի գզիրը և ձայնեց.

— Տո շա՜ն տղա, դու գզիր չե՞ս, հասարակությունը քեզ իշխանություն չի՞ տվել... ո՞ւր ես բաս էդ երկար չոմբաղը ձեռքիդ ման ածում, չէի՞ կարալ նրանց կողքերը մի լավ ջարդի...

— Դե էլավ ոչ, քյոխվա, ի՞նչ անեմ... Շատ էին, համ էլ հա՜բրած...

— Տո հրես ես խմա՞ծ չեմ.. կուզե՞ս, էս ղամչին ընենց մեկ վրա բերեմ փափախիդ...

Վարժապետը, որ լուռ լսում էր, համբերությունից դուրս գալով, բռան քարերը դեն շպրտեց ու ջղայնությամբ ասաց.

— Ի՞նչ ես ծմծմում, Թորո՜ս, քեզ բան են հարցնում, ասա, ինչի՞ ես ձենդ գլուխդ քցել։

Քյոխվեն զգաց բարկությամբ ասված և հրամայական շեշտ կրող այդ խոսքերը և խեթ-խեթ ուսուցչին նայեց։

— Հը՜մ...— արեց նա,— ինչ ա ըլել... ինչի՞, բա դու խուլ խո չե՜ս. չես տեսնում, որ էդ սալախանները (սրիկաները) էս ա մեկ շաբաթ՝ սաղ

օրը, գիշերը, զուռնան առաջները քցած, գինին ջրի պես խմելով, տաղ ասելով՝ հոգիներս հանեցին...

— Յանի գա քե՞զ ինչ,— ավելի բարկացավ վարժապետը,— կա՞ս, դո՛ւ էլ արա, ո՞վ ա ձեռքդ բռնել... է՞դ էր, դրա՞ համար էիր փրփրել... Տեսնո՞ւմ եք, ա խա՛լխը, հիմիկանց դենն առանց քյոխվի իրավունքի քեֆ անելն արգելված ա... վե՛ր, վեր կաց, գնա քնի... շա՛շ...

Ասաց, արհամարհաբար թևերը շարժեց, ճղեց բազմությունը և գնաց գարձյալ իր «տաման» շարունակելու։

2

Մուրն սկսում էր կոխել այդ միջոցին։ Երեք խառնուքներում էլ ճրագները վառել էին, իսկ բազմությունն ավելանում էր հրապարակի վրա։ Երևում էին օտար գյուղացիներ էլ, որոնք հյուր էին այդտեղ։

Ավելի շատ, բնականաբար, Գալոյի «մագազինի» առաջն էին գալիս կիտվում։ Որովհետև, չնայելով, որ վարժապետի կտրուկ վարմունքն ու խիստ շեշտերով ծաղրը՝ հանկարծակիի էր բերել քյոխվին, սակայն նա բուռն կատաղությունից մի բոպե կարկամած մնալուց հետո մեկ՛ն ասնեց, նախ մի քայլ արավ դեպի վարժապետի կողմը, ապա դարձավ, իրանը ետ ծռեց, ոտների վրա լարվեց, բռունցքով մի հարված տվավ կարտուզին և ճչաց.

— Ո՞նց թե «շաշ»... ո՞նց թե «գնա քնի»... բա ես մարդ չեմ, թե պրատակոլ[1]... ցեպս, ցեպս ո՞րդի ա...

— Հա՛-հա՛-հա՛...— քրքջաց Գալոն,— ա՛յ թե ղեցին քեզ հա՛, քյոխվա... Արի, արի նստիր... Տո դու ո՞ւր ես նեղանում, որ ջահելները քեֆի են ու քեզ չեն կանչել...

— Ախր էդ չի է՞է՞, Գալո՛ ամի,— համարձակվեց միջամտել գզիրը, — էդ չի՛... Ո՞վ ա նրանց բան ասում...

— Ջենդ կտրի, լպստա՛ծ... քո ինչ բանն ա.— կանչեց քյոխվին,— թող հլա մի տեսնանք էն ո՞ր հարամզադեն էր ինձ «շաշ» ասողը... վարժապետ ես, ի՞նչ զահրումար ես, հլա մեկ գեսն արի...

— Դե՛ ձե՛նդ, ձե՛նդ...— կանչեց կանացի ձայնով, օյունի մոտ կանգնած մի կարճահասակ ծերունի,— տեղդ վեր ընկի, քու բերնին չի ընկել տերության վարժապետին...

— Էդ ո՞վ ա, էդ ո՞ր...

— Ես եմ... վարժապետի հեքն ա... տեսնում ես էս չոմբաղը... քան

[1] Տեղեկագիր։

ռանա՝ ասա... բաս որ դու շաշ չըլես, քու ի՞նչ բանն ա, թե մեր ջահելները, մեր ղոնաղները քեֆ են անում զուռնա ածում, յա գինի խմում...

— Փի՛ե, փի՛ե...— ոտքի ելավ Ջավադը,— սակայն կիրակոսենց ինքը ուզում եք վրա՞ տալ մեզ։

— Ա՛ խալխը,— ձայնը բարձրացրեց վերջապես գզիրը,— մեկ թուղթ ե՞ս պատմեմ է՞է՞... ախր քեֆի բան չի... գիշերվան ղարաուլի համար ա՛, ղարաուլի՛...

— Ո՞նց... ղարաուլի՞... ի՞նչի... ի՞նչ կա...

Ամեն կողմից հարցեր տեղացին, ամենքը խառնվեցին իրար։ Ջավադը վեճի բռնվեց Կիրակոսենց ցեղից Հաբետ աղի տղայի հետ և այն էլ թունդ վեճի, որովհետև երկուսն էլ կոկորդ պատռելու չափ գոռում էին. խոլերան փափախը երերցնելով՝ ճգնում էր խոսք հասկացնել խանը-վող և շրջանը քանդող գյուղացիներին, այլուրոտ Ջաքեն, մարդ չէր հասկանում, թե ինչո՞ւ էր աղաղակում՝ կարմրամազ Սմբատի ականջն ի վեր. երկարավիզ Գևոն էլ, վիզն ածիլած պայտար խեչոյի դեմքի մոտ բարձած՝ համառ կերպով ճչում էր ինչ-որ անհասկանալի բառեր...

Մի խոսքով, մի այնպիսի խառնուրդ աղաղակների, ձայնի զանազան ելևէջների, որ շներն անգամ սկսեցին հաչել ամեն կողմից։ Վարժապետն ու հրեան միայն տեղդրվելի, թեև դադարել էին խաղալուց, բայց նստած մնացին. այլև Արշակը, որ իր ո՛չ կանգնած դիրքը փոխեց, ո՛չ էլ դեմքի անտարբեր հայացքը։

Եվ այդ տևեց երկար։ Միմյանց չհասկանալը կարծես պայման էր դրված, իսկ աղաղակելը՝ միակ խոսակցության և վեճի ձև։ Սակայն քիչ-քիչ ճչացողների թիվը նվազեց, և նրանց միջից դարձյալ դուրս նետվեց քյոխվի ձայնը, որ գոռում էր.

— Տո խեղդելո՞ւ եք... բաս ղարաուլ չըլի՞, բաս գեղն առանց ղարաուլի՞ մնա...

— Ինչի՞,— նրա դեմը կտրեց մեկը,— բա ուրիշի չտեսա՞ր, որ երկու անգամ իրար վրա ներան ես ղրկում...

— Հա՛ տո...— գանչեց մի երկրորդը,— հարուստներին թողնում ա ու աղքատների ջա՛նին ընկնում...

— Դե ո՞նց անենք, քյոխվին ի՞նչ անի,— պաշտպանեց քյոխվին Գևոն՝ չարախնդաց,— ոչ ոք չի գնում... համ էլ ի՞նչի զուռնա ածի Ղազարը...

— Գոի գնա, բա՞ս,— պնդում էր Ջաքեն,— հերթն իրա՞ն ա ընկել. էլ ինչացո՞ւ ա քյոխվին... հրամա՛յում ա, պիտի կատարես...

— Ըստեղ մտիկ տու, ըստե՛ղ, քյոխվա,— նետվեց դեպի թորոսը պայտար խեչոն և երկար վզով գլուխը քիչ մնաց կոխեր տանուտերի

բաց բերանը,— յանի քի՞չ ա պատահել, որ հենց ընտենց չեն գնացել... յա թե չէ՝ գնացել էլ են, մթնելու պես փախել են ու տները մտել, հը՞...

— Դրո՛ւստ ա ասում Խեչոն,— վրա բերեց Սմբատը,— էլ դրա համար ո՞ւր եք էսքան ղալմաղալ քցել... ուրիշը դրեք ու՝ պրծավ գնաց...

— Ո՞նց կըլի,— գոռաց այն կողմից Ջավադը,— հերթը նրանն ա, նա էլ պիտի գնա... կարա՞ զուռնեն քյոքի ու գեղի հարսներին դուրս թափի... շա՛ն տղերքը... սալախանանե՛ր... կատաղե՛լ են, գինին չրի պես են վեր ածում...

Այդ միջոցին գզիրը, որ մի կողմ քաշվել՝ երկար փայտը ձեռքին, սրան-նրան էր հորդորում հանդարտելու հեռվից, հանկարծ ոստնեց դեպի մի երիտասարդ, բռնեց նրա թևից ու ձայնեց.

— Հրե՛ս ա, քյոխվա, բռնել եմ մեկին... հենց սա՛ էր, որ հյուրաթ էր անում, թե Ղազարին չեն թողալ, թե հերթը նրանը չի... հենց սա՛ ա...

— Հա՞...— թռավ դեպի նա քյոխվեն,— էս շան տղան... Հլա մեկ դենը կացեք, տեսնենք էդ ո՞վ ա, որ քյոխվի հրամանին դեմ ա կանգնում... Դու ո՞վ ես, ա՛ շան տղա...

Երիտասարդն օտարական էր։ Ապշած այդ հարձակումից, մի բոպե շվարած՝ լուռ մնաց, հետո ասաց գրգռված զայրույթով.

— Ի՞նչ ես ռեխդ ցրիվ տալիս. չի՞ ըլիլ, որ քիչ քաղաքավարի խոսաս... Հա՛, հենց ես էի ասողը...

— Ինչի՞, ստ՛ շա՛ն թուլա... Դու ո՞վ ես, ի՞նչ մարդ ես ըստեղ. տենա՞մ մեկ պասպորտդ...

— Քարկոծցի եմ. հետո՞...

— Տո բա դուք մեր գեղն եք եկել, որ լոթություն անեք... ստ բա ես մեռա՞ծ եմ ըստեղ, որ թողամ սաղ շաբաթ զուռնեն առաջներդ քցեք...

— Ասելիքդ ասա՛...— միջահատեց խստությամբ երիտասարդը։

— Ջոռ ու ցա՛վ ասեմ, ի՛նչի տղա...— ձայնը բարձրացրեց քյոխվեն,— դու ի՞նչ ես, ի՞նչ հորս ցավն ես, որ համարձակվում ես գզիրիս երեսին գինի շպրտել, փափախին դմփացնել...

— Չէ՛, քյոխվա,— միջամտեց գզիրը,— սա չէր թափողը... սա հենց ընենց, խոսքո՛վ...

— Դու սո՛ւս, հարամզադա՛,— մտրակը բարձրացրեց նրա վրա քյոխվեն,— երբ քյոխվեդ խոսում ա, դու ձենդ կտրի... Հը՞, աղա՛,— դարձավ նա երիտասարդին,— ասա տեսնա՞նք, դու ո՞ւմ շունն ես, որ սաղ շաբաթ ղալմաղալը քցել ես գեղը, հլա քյոխվի հրամանին էլ դեմ ես գնում...

— Քյոխվա,— կանչեց այն կողմից մի երկարահասակ ծերունի,— ա՛յ տղա, ըտենց բիաբուռ խոսքերո՞վ կխոսան ղոնաղի հետ... ի՞նչի քաղաքավարի, մարդավարի չես խոսում, ո՛ղի...

Քյոխվեն բարկացավ, բուռն շարժմամբ դարձավ դեպի ձայնի կողմը և կանչեց զայրագին.

— Տո ձե՞զ ինչ, դուք ի՞նչ գործ ունեք իմ դատաստանի մեջը... Ղոնա՞ղս որն ա... Ղոնաղը եկել ա, որ մարդավա՞րի պահի իրան, թե՞ զուռնան առաջը քցած, գինու բութիլկեն խոտած՝ գեղի քուչեքովը պտտուտա ու մեր ջահելներին էլ գժվացնի, իմ հրամաններին դեմ դնի, գզիրին թակի... Հը՞, ա՛ շան թուլա, խոսա տեսնա՞նք, դու ինչա՞ցու ես որ...

— Քյոխվա,— մեջ մտավ Գալոն,— յանի հերթը դրո՞ւստ Ղազարինն ա, թե չէ հենց ընենց, ուզում ես ջահիլների քեֆը խափանես՝ ընտուր նրանց զուռնաչուն խլում ես... արի՛ դրուստ ասա, դու քո ասածը...

Գալոն հարուստ, հետևապես ազդեցիկ մարդ էր։ Թորոսը շատ էլ ուզում էր մի լավ հայհոյի նրան, ուզում էր մի լավ «շշպռել» նրա հանգին լուսաբանող այդ կաշաղակային ծերունուն, բայց մտածելով հետևանքի մասին, կուտակվող կատաղությունը զսպեց և ասաց բարկությամբ.

— Տո բաս էլ ինչա՞ցու քյոխվա եք դրել ինձ, որ իմ ձեռքումս չըլի զորաուլ նշանակելը։

— Դրո՛ւստ ա, քո ձեռքումն ա,— առարկեց Գալոն ժպիտը դեմքին,— բայց հերթը Ղազարի՞նն ա, է։ Արի դրուստը խոսա, ախպե՛ր... Ասենք բարկացել ես, որ էս ա մի շաբաթ քեֆ են անում ու սկի քնզ մարդատեղ էլ ա չեն դնում—կանչեն մի ստաքան գինի խմացնեն... Իհարկե, դա լավ չի, ամոթ ա նրանց համար, բայց դե՛, ջահի՛լ են, բախշի՛ր...

— Ինչե՞ր եք ասում, ինչե՞ր...— աղաղակեց քյոխվեն, կեղծ վիրավորված ցույց տալով իրեն,— ես նրանց գինո՞ւն եմ հասրաթ. գինի որ ուզենամ, չեմ կարալ ձի հեծացնել ու Վլադիմիրովկից բերել տալ... Ասում եմ՝ հերթը հենց նրանն ա որ կա, նրա՛նն ա...

— Էդ բա ինչի՞ հենց ուժդ աղքատներին ա պատում,— մեջ մտավ երիտասարդ հյուրը,— Ղազարն ասում էր, որ հերթն իրանը չի ու ձեր, հենց Սարոյենց Մուրադինն ա...

Քյոխվեն այլևս զսպել չկարողացավ իրան և ամբողջ զայրույթը դուրս թափեց հյուրի վրա, մանավանդ որ երևան էր հանվում իր կողմնապահությունը։

Մի քայլ առաջ նետվեց և առանց այլևայլության մտրակը շառաչեցնելով՝ ուժգնությամբ իջեցրեց երիտասարդի մեջքին։

— Շա՛ն տղա, քե՞զ ա մնացել խոսա՛լը... ըհը՛ քեզ...

Իսկույն դրան հետևեցին աղաղակներ, հյուրը նետվեց դեպի քյոխվին՝ բռունցքները բարձրացրած, մարդիկ խառնվեցին իրար, ու մի քանի բոպե ճիչ, աղմուկ, շարժում, հայհոյանք խլացրին ամեն այլ ձայն։

Այս անգամ վարժապետն ու հրեան վազեցին դեպի խառնուրդը, մինչև իսկ Արշակը թողեց խանութի շեմքը և մտավ կռվողների մեջ։

Երիտասարդ քարկոզին սաստիկ կատաղած՝ ճգնում էր իրեն բռնողներին և հորդորողներին դեն հրել և հասնել քյոխվին։ Իսկ սա, մեկե՛ն կարծես սթափված՝ ետ էր քաշվել և թույլ էր տալիս, որ եղբայրն ու այլ գյուղացիք նախ խլեին ձեռքից մտրակը, ապա հորդորանքով ու համոզելով տանեին մինչև իրենց խանութը, որովհետև Կիրակոսենց ցեղի մարդիկ վրդովված՝ ձայները բարձրացնում էին։

Քարկոզցին կույր Մարտիրոսի ազգականներից էր. հետևապես բոլոր ներկա եղող Կիրակոսյանները պաշտպանության ելան։ Վարժապետի հայրը իր կանացի ձայնով սկսեց ճչալ, Գալոն կաչաղակային աղմուկը մեծացրեց, Հաբեթ աղայի որդին ջանաց կտրել Ջավադի դեմը, իսկ սա, թշվառ կաղլիկը, լրջորեն վախեցած՝ գոռում էր ու հայհոյում անխտիր, առանց հասցեի...

Մինչ այդ, խոլերան դուրս սպրդեց և տուն գնաց. ալյուրոտ Ջաքեն, կարմրամազ Սմբատը և զուռնաչի Համոն միմյանց դեմ եկած՝ բարձրաձայն գոռում էին, որ քյոխվան անիրավ էր, որ նա իրավունք չուներ խփելու, իսկ մի երկարահասակ ծերունի՝ Ոսկանենց Հարությունը, իր խրոխտ ձայնով կանչում էր, թե այդպես էլ պետք էր և թե չպետք էր թողնել, որ զանազան «լոթի-փոթիներ» գային գյուղի մեջ աղմուկ հանելու, հնազանդությունը վերացնելու օրինակը տալու...

Վարժապետն էլ խոսում էր, բայց նրա ձայնը չէր լսվում ժխորի և աղմուկի մեջ։ Հրեան լուռ էր, ըստ երևույթին սովո՞ր այդպիսի տեսարանների։

Արբած տանուտերին հաջողել էին վերջապես իր խանութի առաջը հասցնել, ուր նա, նստարանի վրա ընկած, դեռ կոտրվել չէր կամենում, ջարունակում էր հայհոյել, պնդել, որ քիչ էր տված ծեծը և որ դեռ մտադիր էր բոլորին էլ իր «ղամչու համը ցույց տալ»...

— Շան թուլանե՛ր....— ասում էր նա,— մագամ անտե՞ր ա էս գեղը, որ գո՛ւբ գաք ու լոթության տաք ձեզ... մագամ ես մեռե՞լ եմ... ֆշի լակոտնե՛ր, ըտե՞նց հա... հմի գնացեք ու տեսնանք ո՞նց եք քեֆ անում...

Քարկոզցի ծեծ ուտողին իսկույն շրջապատեցին և գրեթե զուռով, քաշքաշ հանեցին հրապարակից, համոզելով լիներ կամ աղաչանքով՝ անցկացրին առվից և հասցրին ու ներս ձգեցին կույր Մարտիրոսի տունը։

Այնտեղ էր նա հյուր։ Սաստիկ զայրացած, չկարողանալով կատաղությունը թափել մեկի վրա, անզոր՝ իրեն համոզողների և դեմը փակողների հորդորներից, խոպոտության հասած ձայնով աղաղակում էր անընդհատ...

— Աստված սիրողը բաց թողնի ինձ... թողեք գնամ ես նրա ջանդակը փոեմ մեկ... ինձ ծեծե՞լ... տո թոզե՛ք է, ես կտրաքեմ հիմի... բա դուք աստված չունե՞ք, բա ինձ սպանե՞լ եք ուզում... թողեք ասում եմ է՛է՛...

Ու ամեն ճիգ, ամեն ուժ գործ էր դնում իրեն բռնողներից ազատվելու և ետ դառնալու դեպի հրապարակը։ Կռանում, քար էր վերցնում, սպառնում էր շան պես սատկացնել քյոխվին, աղաչում էր բաց թողնել... մինչև իսկ կատաղությունից արտասվել սկսեց... բայց նրան հորդորող գյուղացիք շա՜տ լավ զգալով, թե ինչ պիտի լիներ հետևանքը, եթե արգելք չլիներ, ավելի ուժով հրեցին, հրմշտկեցին նրան, ներս ձգեցին և դռները փակեցին։

Լուրը հասել էր գետեզրում եղած նրա ընկերներին, և այժմ թե՛ զուռնաչին և թե՛ քեֆ անողները հուզված ու զայրացած մի առ մի հառնում էին ու ներս լցվում։

— Սարգիս, քեզ մատաղ...— գրեթե գրկել՝ հանդարտեցնում էր երիտասարդին կույրի կինը.— ղա՛ղեդ առնեմ, հանդարտի՛ր, հլա մեկ նստի, թո՛ղ... փո՛րձանք կհանես...

— Տո թողեք է՛է՛...— կանչում էր անդադար Սարգիսը,— ի՞նչի, նա ո՞ւմ շունն ա, որ ինձ խփի... թողեք գնամ փորը թափեմ. բա ես քարկոզի ըլեմ, Շուշանենց կարապետի տղան ու գամ Դուզան ծե՞ծ ուտեմ Սարոյենց շան ձեռքիցը...

— Սարգի՛ս, ա՛ Սարգիս...— կանչեց իր թախտի վրայից կույր Մարտիրոսը, որին շտապել էին պատմել եղածը,— հլա մեկ դե՛ն արի... ադա, մեկ ձեններդ կտրեք տենամ է՛է՛... մեկ գիսը բերեք դրան... Ա՛յ ոզա, դու չէ՞ որ խելոք տղա էիր, ես ի՞նչ ա ըլել քեզ... հլա մեկ ըտեղ արի՝ կողքիս նստի...

Բայց ո՞վ էր լսողը։ Սարգիսը քանի գնում կատաղում էր. անձնասիրությունը խորապես վիրավորված էր. ոչի՞նչ չէր լռեցնում նրան. գոռալուց ձայնը կտրվում էր, իրեն բռնողների ձեռքից ազատվելու ջանքը

Հուսահատ կովի հասցրած դեն էր շպրտում տանտիկնոջ, հարսին, աղջկան...

— Պտի սպանե՛մ, ո՞ւր ա դամես... ես քարկոծի ըլեմ ու մեկ քոսոտ Թորոսից ծե՞ծ ուտեմ...

— Սարգի՛ս,— ճգնում էր հանդարտեցնել նրան տանտիրոջ աղջիկը, բռնած երիտասարդի ձեռքը,— Սարգի՛ս, քեզ մատաղ... բաս դու սկի մեզ չե՞ս սիրում... հանդարտի՛ր։

Ճշմարիտ է, այդ սիրալիր աղաչանքներն ազդում էին երիտասարդին, բայց ծեծ կերա՞ծ, խայտառակվա՞ծ և այն էլ անպատասխան թողա՞ծ...

— Տո գոնե մի հատ էլ ե՛ս խփեի, նա՛մարդներ...— կանչում էր նա,— բա ես պատի՞վ չունեմ... Ասա՛, Մարգարի՛տ, որ ասում ես թե հանդարտեմ, բա դու կմարսե՞ս, որ Սարգսին դամչիով ծեծեն շան նման ու նա սուս կենա...

— Ա՛յ տղա Սարգի՛ս...— ձայնում էր կույրը,— փիե՛... տո էդ ի՞նչ էլավ քեզ, խո չգժվեցի՞ր... դեսը բերեք դրան... տո գինի բերեք... ո՞ւր ա զուռնան, Ղազարին կանչեք ստեղ... աղջի, Մարգարի՛տ, գնա Արամին ձեն տուր ըստեղ...

— Ըստեղ են, հայրի՛կ, Ղազարն էլ ա ըստեղ...

— Ա՛յ տղա, մի զուռնեն ածեք շուտ է՛է՛... փի՛ե, ի՞նչ եք թողնում խեղճ տղան ինքն իրան սպանի...

Նախագավթից, ուր կատարվում էր այդ ճնշող տեսարանը, վերջապես հաջողվեց ներս բերել երիտասարդին և կույրի նստած մեծ թախտի ծայրին նստեցնել։ Եվ այդ հաջողվեց Մարգարիտին, որ վճռականորեն, իր ուժեղ բազուկներով գրկեց երիտասարդին, քաշեց ներս և երբ նստեցրել էր, ձեռքն իր ձեռքի մեջն առավ ու չթողեց, որ շարժվեր։

Առյուծը մեղմանում էր, թեև կուրծքն ելնում-իջնում էր, կոկորդից խռպոտ մռնչյուններ էր արձակում և երբեմն ճգնում էր ձեռքը նույնիսկ Մարգարիտի ձեռքից ազատել և գնալ ջախջախելու «քոսոտ շանը»։

— Ա՛յ տղա,— խոսեց մեղմությամբ կույրը,— բա ըտենց բա՞ն կըլի. դու խո երեխա չե՞ս, ի՞նչ ես զժվել ու կատաղել.. տո ջհա՞ննամը թե մի հարբած շուն կծել ա քեզ... դու նրա հախիցը գալն ի՞նձ թող. ես էգուց մեկ քյոխվա շինեմ նրան, որ էլ չմոռանա... Զուռնան ի՞նչի չեք փչում, տղե՛րք... Գինի բերեք, ո՞ւր եք քեֆներդ խարաբ անում... հե՛ռն անիծեմ քյաչալ Թորոսի, մի ընե՛նց քեֆը զլեցեք, որ սաղ Սարոյենց թաղը ժաժ գա... Աղջի Մարգարիտ, ո՞ւրտեղ ես...

— Ըստի եմ, հայրի՛կ...

— Դե՛ ասա սեղանը քցեն, պանիր-բան բերեք ու ստե՛ղ հիմի քեֆը սկսենք։

— Չէ՛, ամի՛,— խոսեց երիտասարդը հևալով,— չէ՛, ես մինչև նրան մի լավ չջարդեմ՝ չեմ հանգստանա... Հերս ի՞նչ կասի, թե լսեց, որ Սարոյենց Թորոսը, էն քնծոոտ Թորոսն ինձ դամչիով ծեծեց, ու ես սկի մեկ մա՛տովս էլա չկպա նրան...

— Տո սուս է՛ մեկ,— ասաց կույրը,— հորդ ես բանի էությունը կպատմեմ... ախր ո՞նց կըլեր, քյոխվա ա մարդը, մեկ էլ տեսար պրիստավ-զադ... Հլա մեկ կաց լուսանա ու տեսնանք թե ինչի՞ ա խփել, ի՞նչ իրավունքով... Դու քու քեֆդ տես, ես էս ա մեկ կերթամ դուքանները ու կիմանամ, թե էն շունն էլ ընդի էլավ՝ հախիցը կգամ... Այ տղա, Արամ, Ղազարն ո՞ւր ա, ինչի՞ չեք զուռնան փչում... փչե՛ք, որդի, փչեք ու քեֆներդ շարունակեք...

Ղազարը՝ զուռնաչին, որ պատի տակ գունատ՝ կանգնած մնացել էր զուռնան ձեռքին, գլուխը թափահարեց ու ասաց.

— Չէ՛, ղարսուլի են կանչել, պլտի գնամ, թե չէ քյոխվեն հոգիս կհանի թակելով... առանց էն էլ հլա տեսնանք քանի՞ դամչի եմ ուտելու։

— Ո՞նց...— ոստնեց տեղիցը Սարգիսը,— ես շա՛ն ծիծ կերած ըլեմ, թե քեզ թողամ գնաս... բա հերթը քո՞նն ա, տո՛, բա աշկարա չի՞, որ նա մեր քեֆը խառնելու համա՛ր ա քեզ ղարաուլ կանչում...

— Սարգի՛ս,— սեղմեց ձեռքը և ստիպեց նստելու Մարգարիտը,— հանդարտվի՛ր, հերիք ա...

— Փիե՞...— ձայնեց կույրը,— էդ ո՞նց բան ա, հլա կացե՛ք... մեկ դե՛սն արի, Ղազա՛ր, ինչի՞, հերթը քո՞նը չի...

— Չէ՛, ամի՛, ես անցած շաբթու գնացի. հերթն էսօր Սարոյենց Մուրադինն ա, Սուրենինն ու Փիլոսինը... էլ չե՛մ իմանում, թե ինչի՞ ա քյոխվեն ինձ նշանակել... կարելի ա Մուրադը գեղումը չի... ըտենց մեկ բան կըլի... գզիրին ղրկեց, թե հալբա՛թ պիտի գաս... քյոխվա ա, ի՞նչ ասեի, ես ուզում ի գնալ, ամա տղերքը չթողին...

— Ադա էդ ի՞նչ եք ասում,— ճչաց կույրը,— վա՛յ ես նրանց հոր... ըտենց էլ անիրավությո՞ւն կըլի... անպտճառ նախանձում ա ու կամենում ա ձեր քեֆը խարաբ անի... Գնաս, ու համ էլ զուռնեդ քյոքի՛ր շուտ, մեկ լա՛վ քեֆ արեք, ես դրանց անիրավ հոգին... ինչի՞, ալան-թալա՞ն ա, մենակ քյասիբների՞ն ա տեսել... զուռնեդ քյոքի՛ր, ջուղաբը ես կտամ...

Ղազարը պահ մի շվարած մնաց, հետո վճռականորեն գլուխը ցնցեց, զուռնեն բերնին տարավ ու ասաց.

— Ջհաննա՛մը, ինչ ուզում ա, թող ըլի...

ժպտաց, և հիրավի զուտնեն այնպե՛ս զլեց, որ իսկույն տունը դղրդաց, ամեն դեմքի վրա ժպիտ երևաց, և ձայնը մինչև հրապարակ հասավ։

Իսկույն գինին էլ եկավ մեջտեղ, աշխուժությունը տիրեց ամենքին, հարսները սեղան շինեցին, Կիրակոսենց չահելները մի առ մի ներս լցվեցին, և քիչ հետո խումբն ամբողջ վերակազմված՝ սկսեց մի աշխույժ պար սենյակում, մինչ դրսումը, տանիքների, քարակույտերի և գերանների վրա հավաքվում էին մոտակա բոլոր տներից կանայք և մանուկներ՝ հանդիսատես լինելու զվարճության։

Հինգ րոպեից հետո, չգիտեմ որի նախաձեռնությամբ, մի սեղան դուրս բերվեց դռան առաջ, ապա մի լապտեր վառվեց քաղաքացիների պատշգամբում, և հուսկ ուրեմն, հանդիսատեսները մոտեցան մի մեծ շրջան կազմելու, որի կենտրոնը մտան միմյանց ձեռքերից բռնած երիտասարդները և սկսեցին շուրջապար։

Լապտերի լույսն աղոտ լուսավորում էր այդ բոլորը։ Պարողները տատոստում էին, գյուղի աղջիկները մուտ էին գալիս, հետո, քաղաքացիք էլ աթոռներ իջեցնելով՝ նստան, ավելացավ և մի թմբկահար, բազմությունը շատացավ, գյուղի հրապարակը սկսեց այստեղ դատարկվել և դիշերվա խոր լռության մեջ երաժշտության ու զվարթ կանչերի ձայնը սփռվում էր գյուղի մինչև ամենավերջին ծայրը։

Իսկ Ջավադը, որ մնացել էր խանութի առաջ, ավելի կատաղած՝ կարտուզը պինդ կոփեց գլխին ու մռմռաց.

— Շա՛ն տղերքը... Մարանի տան կողքին են սարքել հիմի քեֆը...

Եվ հիրավի, Սուքիասենց տունը հեռու չէր. թարսի պես էլ հենց ինքը «հրեղեն» Մարանը, կտուրից կտուր անցնելով՝ մի քանի հարսների հետ եկել էր միանալու հանդիսատեսներին և քիչ հետո էլ՝ պարողներին...

4

Վարժապետը և ո՛չ խսկ շարժում գործեց, երբ քյոխվային հրելով, հրմշտելով՝ ստիպեցին նստել երա բռնած նստարանի վրա, ճիշտ կողքին։

Ո՛չ ժիայն չխոսեց, այլև ճգնեց սառը կերպարանք ստանալու և պապիրոսը բերանին՝ մեջքը դեմ տվավ պատին ու անշարժ մնաց։ Զգաց, որ քյոխվեն ի՛ր հետն էր սկսելու այժմ, բայց ղսպեց իրեն և սպասեց տեսնելու, թե ի՞նչ կլիներ։

Գալոյի խանութի առջևից գյուղացիք անցան քյոխվի առաջը շրջան կազմելու։ Հրեան անհետացել էր. Ջավադը բռնեց նրա տեղը, և վարժապետը, արձանի նման անշարժ, գտնվեց երկու եղբայրների մեջտեղը։

Քյոխվան նախ մի քանի բոպե շարունակեց էլի՛ մտրակվողի և դյուղը եկած «սալտխանաների» հասցեին աղտոտ հայհոյանքներ ուղղել, հետո հեռզհեհե ձայնն իջեցրեց, լսելով հորդորները՝ հանդարտվեց և նոր միայն նկատեց, որ նստել էր վարժապետի կողքին։

Գարձավ և մի բոպե նրան նայեց լուռ։ Վարժապետը սառնադեմ, անշարժ, ծուխի մի սյունակ միայն դուրս թողեց բերնից դեպի նա։ Քյոխվեն կատաղեց, շուռ եկավ և գրգռված ձայնով ասաց.

— Հիմի գանք քեզ, վարժապե՛տ... էդ յանի ինչի՞ դու մեջ ընկար, ինձ էլ ուշունչդ կապեցիր. էլ «շա՛շ», էլ «գնա քնի»... Հը՞, ես քեզ ի՞նչ կա արել...

— Ոչինչ,— ասաց ուսուցիչը և ծուխի մի ուրիշ քուլա էլ արձակեց դեպի նա։

— Փիե՛...— բացականչեց քյոխվան,— ծուխի ճանապա՞րհ չկա, որ երեսիս ես շպրտում...

— Երեսդ որ չմոտեցնես՝ նա դենը կերթա։

— Հազրը դու գլուխդ շուռ տա՛ս...

— Ըսենց էլ լավ ա. թե ուզում ես ծուխը դրա քեզ չգա՝ քիչ դենը նստի։

— Թարսվել ես, խաչը... քեֆդ տեղը չի...

— Зато քո քեֆը լա՛վ տեղն ա։

— Չի՛ խմել էսօր, ընդո՛ւր ըտենց ա վարժապետը,— նկատեց ծաղրանքն Ջավադը։

— Ես ամեն վախտ լակել չգիտեմ,— չանաց զսպել իրան վարժապետը և շարունակեց անընդհատ ծուխ ժայթքել բերնիցը,— ըլի՛ կխմեմ, չլինի՝ գեղը ոտքի չե՛մ հանի, թե ի՞նչ ա՝ խմելու գադ չունեմ...

— Ընչի՞,— տաքացավ քյոխվեն,— ես խմելո՞ւ համար էր, որ բարկացել էի։

— Հա՛, խմելու համար։ Քեզ չէին կանչել՝ ընդուր էլ ղալմաղալը բցել էիր, հլա դամչի էլ շարժեցիր... Տենանք էգուց ի՞նչ պատասխան կտաս ժեծվողին։

Քյոխվեն բորբոքվեց։

— Տո շա՛տ լավ եմ արել,— բացականչեց նա,— հլա էն քիչ էր. հրես գնալու եմ դիփուտանց կաշին պլոկեմ դամչովս, գեղիցը դուրս բշեմ... Քո բերանին չի՛ ընկել ինձ չթողալը...

— Կթողամ, ինչի՞ չէ... Գնա՛, որ մի լա՛վ դնքոնեն քեզ ընտեղ ա նամքու բցեն։

— Ի՞նձ, ի՞նձ դնքսեն... տենանք էն ո՞ր շունը կհամարձակվի... հրես գնում եմ. ո՞ւր ա դամչիս...

Ու ոտքի ելավ։

— Դե լավ, Թորո՛ս,— համոզեց նրան մի գյուղացի,— դու էլ, վարժապետ, ո՞ւր ես թազադան գլում դրան։

— Փիե՛,— շարունակեց քյոխվան, ըստո՛ւր մտիկ տվեք է՛է՛... ասում ա՝ կդմփեն... Տո էն ո՞ր շունն ա, որ ջուռռաթ կանի... Դո՛ւ, քո չի՞նսը...

— Ջնսիս հանգիստ թող,— ասաց վարժապետը,— ձեռքերդ կվառվեն...

— Ձեռքերս վառողը տե՛ս,— գոռաց տանուտերը, դեն կացեք տենա՞նք, ա՛ խալխը... սա՞ ինչ ա ուզում ինձնից... Դու հլա մեկ տես քե՛զ ոնց եմ քաշ տալիս պրիստավի մոտ, որ ինձ ուշունց տվիր...

— Ադա՛,— կանչեց վարժապետը ծիծաղով,— բերնիցդ մինչև ականջնելրդ քանի՞ գյազ ա... բաս դու քո ուշունցները սկի չլսեցի՞ր...

— Ես քյոխվա եմ, դո՞ւ ինչ ես...

Այստեղ այլևս չկարողացավ զսպել իրեն վարժապետը, շարժվեց, մեկե՛ն պապիրոսը նետեց, ոստնեց նստարանից ցած, դարձավ, գլուխը մոտեցրեց քյոխվին ու գոչեց նրա երեսն ի՛ վեր.

— Ա՛ շան տղա, յանի շա՞տ ես խոսալու, յանի հլա շա՞տ ես գեղի գլխին օյիններ սարքելու...

Հետո, չթողնելով քյոխվին խոսելու, դարձավ գյուղացիներին և աղաղակեց.

— Ըստեղ մտիկ տվեք, ա՛ խալխը. էս շաշը կարծում ա՝ թե ինքը որ քյոխվա էլավ՝ իրավունք ունի բերանը ցրիվ տալու, ում ասես՝ դամչի ուտացնելու. մենք էլ է՛ն ա, պտի մեջքներս դեմ տանք անսա՛ս, բերաններս փակենք, հլա մեկ ձեռն էլ պաչենք... Ո՞նց չէ... Տո ախմա՛խ, որ էգուց էդ քարկոզցին գնա պրիստավին դանգատվի՝ թե դու անիրավ տեղը ծեծել ես իրան ու ես էլ վկա դառնամ, ի՞նչ ջուղաբ կտաս. կասես քյոխվա ես, ընդո՞ւր ծեծեցիր... Հլա կաց մեկ... Համ էլ դու ընչացո՞ւ ես, քյոխվին եղած տեղը դու ո՞վ ես, որ կրակում ես գեղը... Ա՛ խալխը, ինչի՞ չենք էս շան տղի ձեռիցը ցիպը առնում ու իսկական քյոխվի ձեռքը տալիս, որ սա ըսենց լրբանա՞, մարդ թակի՞...

Այնքա՛ն արագ, այնքա՛ն միմյանց վրա և հետզհետե ձայնը բարձրացնելով այս բոլորն ասաց վարժապետը, որ քյոխվեն կատաղությունից գոռում. չա՛տ էլ ուզում էր պատասխանել, բայց միմիայն կակազեց, խոպոռ մռնչյուններ արձակեց և միջոց չգտավ առարկելու։

Վարժապետն էլ խո՛... Գիտեր որ, ինչպես պետական պաշտոնյա (պետական դպրոցի ուսուցիչ էր ախր), քյոխվեն իր վրա ձեռքը բարձրացնել չէր կարող։ Այդ էր պատճառը հենց, որ նա ավելի քայլում էր դեպի ետ-ետ գնացող տանուտերը և խոսքերով կարկտահարում նրան։

Գալոն, որդին, մյուս գյուղացիք դարձյա՛լ խռնվեցին. Ջավադը շտապեց քաշվել դեպի խանութի դուռը։

— Տո՛... փիե՛... տո՛...— կմկմում էր քյոխվեն,— տո հլա կաց մեկ է՛է՛... ո՞նց թե քյոխվա չեմ... ո՞նց թե՝ ես ո՞վ եմ... ո՞նց թե՝ շան տղա... ցեպս առնեն ձեռքիցս...

— Հա՛ հենց,— ավելի բարձր գոռաց վարժապետը,— դու պամոշնիկ ես, դու քյոխվա չե՛ս. քյոխվեն հրեն Կարապետն ա. նա չի ետ կացել, դու ժամանակավո՛ր ես... Մենք քեզ էլ չե՛նք ուզում, հերի՛ք ա, ցեպը ետ տուր ու ռա՛դ ելի գլխներիցս...

— Ո՞նց, ո՞նց, տո... դու ո՞վ ես, պրի՞ստավ ես... փիե՛... ադա Սհա՛կ, Ջավա՛դ, մեկ ձիս թամբեք գնամ պրիստավին՝ տենանք սա ո՞նց ա ինձ պաշտոնիցս դուրս քցում, յա ո՞վ ա, որ ինձ ուշունցակոխ ա անում ըսենց...

— Ղորթ,— կանչեց Ջավադը դռան մոտից,— դու ինչացո՛ւ ես, վարժապե՛տ, որ մեջտեղ ես ընկել։

— Ձե՛նդ, հարա՛մզադա...— կանչեց նրա վրա վարժապետը՝ ավելի և ավելի բարձրացնելով ձայնը,— ո՞նց եք՝ էս սհաթիս մի թուղթ գրեմ պրիստավին, որ քյոխվեն սաղ օրը հարբում ա ու դամչին առած՝ սրան-նրան ծեծում, դալմաղալը քցում, էլ ղոնա՛ղ ասես, էլ վարժապետ ասես...

Քյոխվեն, հիրավի, սկսեց վախ զգալ այդ սպառնալիքից։ Նա լավ գիտեր, որ վարժապետը գրել կարող էր, և որ պրիստավն, առհասարակ գիտեր, որ վարժապետը գրել կարող էր, և որ պրիստավն, բաբարեկամ լինելով ուսուցչի հետ, կարող էր հավատալ, քննություն բանալ, իրեն պատասխանատվության տակ ձգել...

Սակայն դարձյա՛լ զայրույթը շատանում էր, զգալով, որ հարկավոր էր հաղթել, ճզմել գյուղի այդ ըմբոստին և չթողնել, որ գործը մեծանա։

— Վարժապե՛տ,— մեջ մտավ մի ծերունի,— դե հերի՛ք ա, ձեռք քաշի... զսլա՛թ արավ, էլ ինչի՞ ես կատաղեցնում, քեզ խո չիփե՞ց մարդը...

— Կարա՞ որ... Նա ի՞նչ իրավունք ունի ծեծելու անմեղ մարդկանց, հարբի ու գեղը ոտքի հանի, սրան-նրան ուշունց տա...

— Փիե՛...— կատաղությունից իրեն կորատում էր քյոխվեն,— տո տրաքեցի է՛է՛... տո ձիս տվեք է՛է՛... բա ես էս բեղերս կթրատո տրաքեցի է՛է՛...

չեմ, վարժապետ, թե հենց հմի չգնամ պրիստավի մոտ ու դազախ, բասավուլ չդրկեմ հետևիցդ...

Ասաց, բազմությունը ճզեց ու երբ մի քանի քայլ գնացել էր, դարձավ ու շարունակեց.

— Ըսենց բա՞ն եք տեսել... Ասում ա՝ քյոխվա չես, ինձ «ախմախ» ա ասում... վկա՛ ըլեք, ա՛ խալխը... ի՞նչ ա, ինձ ուտե՞լ եք ուզում սաղ ջնսով, բա ըստեղ իշխանո՞ւթյուն չկա... Ձիս բե՛ր. Ջավա՛դ, Սահա՛կ, շա՛ն տղերք...

— Քյոխվա՛, քյոխվա՛...— հորդորում էին մի քանի գյուղացիք,— հերիք ա՛...

— Ջէ՛, է՛ս սհաթիս գնում եմ... Ես դրանց ցույց կտամ քյոխվին անպատվելը, քյոխվի կարգադրությունների մեջ խառնվելը...

Ու մեծ քայլերով, սպառնալից, գնաց դեպի վեր։ Վարժապետը թողեց նրան գոռգոռալու, իսկ ինքը դարձավ գյուղացոց։ Սկսվեց ժխորային աղմուկ, վեճ։ Հարց ծագեց, թե որքա՞ն իրավունք ուներ տանուտերի օգնականը հրապարակորեն մտրակելու անմեղներին։ Ուսուցիչը պնդում էր, որ նա շատ էր երես առել, որ նրան հարկավոր էր պաշտոնից դուրս ձգել , հաշիվները պահանջել, և որ այդ հաշվիները, ինքը ստույգ տեղից գիտեր, մաքուր չէին։ Նրա ցեղակիցները՝ Կիրակոսենք միացան նրան. Մարոյենց կողմի մարդիկ հակառակության ելան...

Սուր կերպարանք ստացած վիճաբանությունը, որ տարվում էր ժխորային աղաղակներով, մեծացավ, գրավեց ամենքին, սակայն վերջի-վերջո կազմվեց մեծամասնություն և վճռվեց, որ հարկավոր է իսկական տանուտերին խնդրել պաշտոնը ստանձնելու և Թորոսին «ուղ անելու»։

Եվ երբ մթնել էր, խանութները սկսում էին կողպել, վարժապետին հաջողվել էր շատ կուսակիցներ շահել, որոնք որոշեցին մյուս օրն ևեթ Կարապետին ստիպել կամ հանձն առնելու քյոխվությունը, և կամ գնալ նոր քյոխվի ընտրություն պահանջելու իշխանությունից։

Այս բոլորից հետո երիտասարդները վարժապետի հետ գնացին կույր Մարտիրոսի բակը, ուր դեռ զուռնան փչվում էր, և շրջապատը երկոտո գարձած՝ մեծացել էր։

Մյուս օրը, հիրավի, մի եսաուլ մտավ գյուղը, հրաման բերավ պրիստավից գյուղաքաղաք ուղարկելու վարժապետին և կարմրամազ Սմբատին։ Պարզ էր. Թորոսն անշուշտ գիշերով գնացել էր վարժապետին իբր խռովարար, մինչև իսկ իբր ֆիդան[1] ամբաստանելու։

[1] Հեղափոխական, անձնազոհ։

Համենայն դեպս, կարմրամազ Սմբատը շատ վախեցավ։ Ոչ ոք չկարողացավ ենթադրություն անել, թե նա՞ ինչ գործ ուներ այդ խընդրում և թե նրա՞ն ինչու պրիստավը կանչել էր։

Մյուս օրն առավոտյան մի կառք լծեցին, Գալոյի որդի Արշակն էլ, որ ապրանք ուներ առնելու, ելավ իբր կառավար, և երեքն էլ գյուղաքաղաք գնացին։

Գյուղացիք այդ ամբողջ օրը մինչև երեկո հուզված էին և տենդային անհամբերությամբ սպասում էին գնացողների վերադարձին։

Երեկոյան դեմ հանկարծ գյուղի վերևից լսվեցին երգերի և զվարթ կանչերի ձայներ, հետո մի կառք դղրդյունով իջավ և հրապարակ մտավ։

Ի՞նչ մուտք։ Բոլորը հարբել էին։ Բոլորն եմ ասում, որովհետև գյուղաքաղաքում որքան դուզանցիներ կային, նախ մի գինետուն մտել, լավ կոնծել էին, լցվել կառքը, ճանապարհին կանչվրտել և այժմ ահա ահագին աղմուկներով գյուղ էին մտնում։

Պետք էր ենթադրել, որ հաղթական էր նրանց մուտքը։ Հիրավի, ամենից առաջ վար ցատկողներն էին Սմբատն ու վարժապետը։ Սա այնքա՛ն լավ կոնծել էր, որ հազիվ կարողացավ հավասարակշռությունը պահպանելով՝ հասնել Գալոյի խանութի առաջ և ընկնել նստարանի վրա։

— Կը չորտու...— գոչում էր նա,— պրծա՛վ... Թորոսի բանը պրծավ... պա՛շոլ վոն, մերզավեց...[1] պրիստավն ասաց, հլա քիչ մնաց, որ մի լա՛վ դնքսեր...

Սպասող գյուղացիք խռնվեցին շուրջը։

— Հը՛մ...— դեմքը կնճռեց Ջավադը։

— Հը՞...— հարցրին վարժապետին գյուղացիք,— պատմի՛ր, ո՞նց էլավ... ինչի՞ էր կանչել...

— Ֆիդա՞ն... ո՞նց, տո՛...— թոթովեց վարժապետը,— մեզ ֆիդան էր ասել... ըտե՞նց հա... Թորոսը պրծա՛վ. պրիստավը նրան «պաշո՛լ վոն» արեց...

— Հլա, մեկ պատմիր,— ստիպեց նրան Գալոն։

— Քյոխվությունից քցեց...— շարունակեց վարժապետը,— հրամայեց ցեպը տիրոջը տալ, Կարապետին... ըտենց հա՛...

— Տո դրո՞ւստ...— կանչեցին գյուղացիք,— բաս քյոխվությունից ընկա՞վ Թորոսը... ա՛յ արել ա հա՛...

— Ընկա՛վ, ընկա՛վ,— ժպտաց վարժապետը։— Գինին դես բերե՛ք, տղերք... Պրիստավը՝ թե «Դո՛ւ, վարժապետ, խռովություն ես քցում»...

[1] Կորիր դուրս, անպիտան։

«Ո՛չ, ձերդ ազնվություն, ասում եմ, սո՛ւտ ա, Թորոսն էր հարբել ու հասնողին ծեծում էր»... Քյոխվեն թե՝ «Սո՛ւտ ա, ես հարբած չէի»։

«Ձերդ ազնվություն,— ասում եմ,— հրես հենց հիմի էլ հարբած ա եկել ձեզ մոտ»... Պրիստավը աչքերը ոլորեց, մոտ գնաց քյոխվին, արաղի հոտը որ չառա՜վ... «Պա՜շոլ վոն, մե՛rզավեց» արավ ու հրամայեց, որ ցեպը Կարապետին տա... Դուրս եկանք, Խլոյի դուքանումը մի լավ քեֆ էլ արինք ու... տո գինին դեսը բերեք է՛է՛...

1904

ՍՏԱՐՇԻՆԱ[1]

1

Ընդոստ վեր թռա։

Ա՜խ, այդ կաչաղակ տանտերս։ Դարձյա՛լ նա էր։ Ամեն առավոտ այդպես զարթնեցնում էր ինձ, հանգի՛ստ չէր տալիս։ Ճչում էր թոքերի ամբողջ ուժով, գոռում էր ծառայի, գոռում հարսի, գոռում նո՛ւյնիսկ անցորդների վրա։

Անշուշտ, ժամը հինգն էր։

— Ադա Մուկո՛ւչ, թաղե՛մ գլուխդ, էդ ո՞ւր ես բաղչի դուռը բաց թողել. էծերը պատրուսնին կերան է՛է՛... փի՛ե, տո դո՛ւս քշի, հարամ կերած... էդ ո՞ւր ես առտեհան՝ բողկերը դուս տալի, Վարդան. գնա՛ կորի տուն, հլա մեկ չայդ խմի... Հա՛բսի, Սաթենի՛կ, եկեք էս լակոտին տարեք է՛է՛...

Եվ այսպես, աչքիցը ո՛չ ոքի չէր վրիպեցնում։ Մե՛կ իր թոռան, որ մտել էր անշուշտ պարտեզ և բողկ էր խժռում. մե՛կ իր ծառային, մե՛կ հարսին. նո՛ւյնիսկ բակի շների վրա էլ ճչում էր, հավերի վրա զայրանում։

Հազա՛ր ասա դու. սովորություն էր. առանց դրան չէր կարող։ Ո՛չ առանց գոռգոռալու, ո՛չ էլ առանց առավոտ շուտով իր բաժին երեք «բյումկա» արաղը կոնծելու։

Անկողիս մեջ շուռումուռ գալով՝ ստիպված էի լսել այդ բոլորը և դիմանալ։

Արդյոք ի՞նչպիսի եղանակ էր դրսում։ Նո՞ւյնը՝ մի շաբաթից ի վեր

[1] Երջանկական գյուղապետ, շահապ։

անընդհատ մաղող անձրև, թացություն, մշո՞ւշ... երկինքն էլ կապա՜ր, ճղո՞ղ...

— Վա՛յ ես քո հաց տվողին, Մուկո՛ւչ, կանգնել ես էշի պես, որ ի՞նչ... կորի ձիանոնքը տար ջրի... էն խոտն էլ շուռումուռ տուր, բալքի աչքը չորացնի...

Արև՞, իրա՞վ էր այդ։

Երկու բոպեի մեջ վեր թռա, լուսամուտների փեղկերը բացի, հետո հագնվեցի և դուրս նետվեցի սենյակից։

Դժվա՛ր էր պատահում պայծառ արևով ողողված օր, անամպ երկինք տեսնել Դուզանում։ Բայց հազիվ պատշգամբ ելա, որ սքանչացման աղաղակ դուրս թռավ բերնիցս։

Արև էր. զվարթ, ժպտուն արև, որ ջերմ ճառագայթներով ողողել էր ամեն ինչ։

Պարտեզ, դաշտ ու անտառ փողփողում էին. ո՛չ մի ամպի կտոր. մշուշն իսկ, որ անբաժան ճնշում էր միշտ դիմացի մայրի անտառը, այժմ գլորվում, մագլցում էր դեպի կատարներն ու այնտեղից հալվում-անհետանում։

Որքա՜ն շքեղ էր։ Դիմացս՝ պարտեզների շարքը, ապա՝ գետակն ու դեպի վեր պարզվող ծաղկալից դաշտը, ուր յուրաքանչյուր բույս ցոլաթաթախ սարսռում էր, ուր սիզավետ մարդերը պսպղում էին հաճույքով, և նրանց մեջ կայտում էին այծեր, արածում՝ կովէր ու ոչխարներ։

Հեռո՜ւն, մշուշի տակից պարզվում, երևան էին գալիս դալարագեղ լեռներն ու անտառը. երկնքի պարզ խորքի վրա շեշտվում էին ծառախմբերով պատած գագաթներ...

Իսկ թռչուննե՜րը... Որքան բա՜րձր, որքան գեղգե՜ղ երգում էին ամեն կողմից, ոստոստում բարդիների կատարներին, խմբային խաղեր սարքում, համերգներ կազմում և ճիչ ու դայլայլով սավառնում դեպի կանաչ բլուրները...

Մեղուներն էլ դուրս նետված փեթակներից, զվարթ բզզոցով կույտ առ կույտ սլանում էին ամեն ուղղությամբ։ Գլխավոր բերքի այդ օրերին նրանք ամբողջ մի շաբաթ ստիպված էին փակված մնալ և ահա այժմ աճապարում էին խորիսխները լցնել։ Այլևս ծաղկեփոշի չէին բերում, այլ միմիայն մեղր՝ այն բազմազան ծաղիկներից, որոնք ամեն կողմից պուխ էին դուրս պարզել՝ ժպտալու արևին, հրճվելու նրա տված ջերմությունով։

Գյուղն ամբողջ կենդանացել էր. նա մեռած, գերեզմանի էր նման անձրևալից օրերում։ Հողը արագ չորանում էր այժմ, շոգի արձակում

ճռնչող սայլերը գաշտն էին ելնում. երևում էին ձիավորներ... Սագերի երամներն էլ, օրորուն, վզերնին ցցած՝ շարժվում էին դեպի գետափը։

— Բարի լույս, բարի լո՛ւյս,— կանչեց զվարթությամբ տանտերս,— ա՛յ լավ արև... Հիմիկանց դենը էլ գրախտը կըլի ըստեղ...

— Այո՛։

— Ըսե՛նց ա մեր տեղը, անիծվի՛ նա... գժոխք ա անձրև օրերին, գրախտ՝ երբ արև ա անում... Դու էլ չե՞ս գնա սար, մերոնք հրես կերթան։

— Ո՛չ, պետք է փեթակները նայել, մաքրել...

— Հա՛, թացությունը հալա չթողեց... կըլի որ կաթած էլ ունենա...

Մտա պարտեզ։ Որքան շուտ ցեխ էր կտրում հողը, այնքան էլ արագ ցամաքում էր։ Ծառայիս հետ երկար զբաղվեցինք փեթակներով. հետո, կեսօրվա մոտ, մտածեցի հանգչել քիչ ճոճի (գամակ) մեջ, որ կապված էր երկու ծառերի ստվերի տակ։

Երկար, սակայն, մենակ չմնացի։ Նախ, աջ կողմիս դրացու կինը, որ իրենց պարտեզի մեջ ինչ-որ բանով էր զբաղված, գիմեց ինձ «աղաախպեր» տիտղոսով և ամանը պարզած պատի վրայով, ջուր խնդրեց կողքիս գտնվող աղբյուրից։ Հետո երկու մեծ թռչուններ գլխիս վրայի ծառի ճյուղերի մեջ մի լավ զզզեցին իրար և տերևների անձրև հոսեցրին. հուսկ ուրեմն, նկատեցի, թե ինչպես պարտեզի գոնից մի առ մի ներս մտան և դեպի իմ կողմը դիմեցին մի խումբ գյուղացիներ։

Ամենից առաջ քայլողը նիհար ու երկարահասակ անձ էր։ «Ջերքեզկա», երկար կոշիկ, կլոր-կարճլիկ փափախ, ձեռքին էլ մտրակ։ Ցմռռանամ սուրն ու արծաթապատ գոտին։

Ցավագար աչքերը ճպճպուն, շուրթերը պրկած, քիթը ցցած՝ զննում էր նա պարտեզը և մեկ-մեկ էլ, ճիշտ պարսիկ մեծավորի նման, առանց դառնալու, երևի իր նկատողություններն էր, որ հազորդում էր հետևողներին։

Այդ մարդու հետ թեև դեռ գործ չէի ունեցել, բայց ծանոթ էի։ Ճարջանական 5—6 գյուղերի շահապն էր։ «Ստարշինա», «գոլովա». այդպես էին տիտղոսում նրան գյուղացիք։

Անմիջապես ետեից քայլողը՝ գրագիրն էր։ Ագռավ էր հիշեցնում այդ երկար ու կոր, գլուխը միշտ կախ, գունդ քիթը կապույտ ու ստրկական շարժումներով երիտասարդը։ Մի քանի անգամ հանդիպել էի նրան. հազիվ մի քանի բառ էի լսել բերնից, սակայն միշտ օգու հոտը զգացել։

Ինչպես ամե՛ն «ուշիմ» գրագիր, ճարտար քերթող էր Սրապիոնը։ Ձեռքն ընկնողը էժան չէր պրծնի։ Պրատակոլներ (արձանագրություն) կազմողն էր։ Նայելով թե ո՞վ և ի՞նչքան կկոխեր ձեռքը, նրա համեմատ և արձանագրության մեջ այս և այն եզրակացությունը կգոյացներ։ «Ստարշինան» կարդալ-գրել չգիտեր։ Իր անունը, այն հրաշալի հնգատառ Դիգոլ անունը, ստորագրել սովորել էր, բայց ա՛յդ իսկ ճզմզելու համար թըշվառը ստիպված էր առնվազն տասն անգամ աչքերը ճպճպացնել, գոնե երեք անգամ քիթը վեր քաշել և երեք անգամ էլ գրիչը կոտրելու ուժգնությամբ՝ թանաքամանի մեջ թաթախել։

Եվ ի՞նչ հարկ, խնդրե՛մ, որ ծանրակշիռ պաշտոնյան ավելի գրել գիտենար։ Ձեռնտու էլ չէր։ Կնիքը գրպանում. հանել, կոխել, միշտ միերկու մանեթ այդ նեղության համար ստանալը շա՛տ ավելի նպաստավոր էր։

Ահա այդ զույգն էր, որ գալիս էր դեպի ինձ՝ բալկան հանդիսավոր, պաշտոնական քայլերով, եռանից տեղական քյոխվան, մուրը ցցած գլիր Սահակը, այլև ուստա Համոն, կարմրամազ Սմբատը, երեցփոխը, եղբարան...

Հասկացա այդ խմբային այցելության պատճառը։ Պարտեզիս մեջ կար մի աղբյուր։ Նրա ջրի կեսը, անցնելով մեր հողի վրա կենտրոնացող կար մի աղբյուր։ Նրա ջրի կեսը, անցնելով մեր հողի վրա կենտրոնացող ոռոգերկրյա ավազանից, խողովակներով գնում էր գյուղի ներքին թաղերի աղբյուրին ևս։ Մի ամսից ի վեր ավազանը փչացել էր, ջուրը դուրս էր գալիս, և շուրջը ճահիճ գոյացնում, իսկ դրանով ներքին թաղի աղբյուրի ջուրը լիովին կտրվում։

Հայտնել էի գյուղացոց։ Նրանք առաջարկել էին, որ ավազանը շինել տամ իմ ծախսով. մերժել էի և առարկել, որ դա իրենց պարտքն էր։

Գանգատվել էին։ Այժմ երևի ստարշինայով, քյոխվայով և գրագրով միասին եկել էին, որ արձանագրություն կազմեն։

— Բարի լո՛ւյս, պ. Երվա՛նդ,— կանչեց հեռվից ստարշինան,— հը, էդ ի՞նչ ա, չըլի՞ երեխությունդ միտդ ա ընկել, որ ճոճի մեջ ես պառկել...

Եվ մոտեցած՝ նստեց գետնի մեջ հաստատված նստարանին, մըտրակը դրեց սեղանի վրա, նայեց շուրջն ու ասաց.

— Չէ՛, լա՛վ ես շինել... Բաս տնկած ծառե՞րդ ուր են... է՞դ են յաշլիկներդ...[1] Քիչ ա, ես մեր բաղումը 200 հատ տնկեմ...

Ելա և նստեցի դիմացը։

— Աղբյուրն էլ սա՞ ա,— շարունակեց նա լուրջ,— բա ընչի՞ ըսենց ցեխ ա ջուրը։

— Ավազանը փչացել է, տակից ջուրը դուրս է գալիս և ահա այդ-

[1] Դագանի սիստեմով փեթակներ։

քան հողը ճահիճ է շինել... Ստիպված պիտի լինեմ բոլորովին քանդել, առվակ գոյացնել, եթե գյուղացիք չշինեն։

— Հա՛, իհարկե, հողը խարաբ ա անում... Դե շինել տուր էլի՛, գեղացիք էլ շնորհակալ կըլեն։

— Գյուղացիք պիտի շինեն և ո՛չ թե ես։

Գյուղացիներից ոչ մեկը դեռ չէր խոսում։ Ուստա Համոն քյոխվի հետ մոտեցել աղբյուրին՝ կկզել էին ու զննում։

— Ասենք, դու մի քիչ դրուստ ես, գեղացիք էլ պիտի շինեն. ամա չէ՞ որ սա քե՛զ էլ վնաս ա տալիս...

— Համ էլ,— մեջ մտավ Խոլերան,— թե մենակ գեղացիք շինեն, էն ա էլ քեզ ջուր չեն տալ ըստիանց։

— Որ կռանտը (ծորակ) ըստեղից փակվի,— ձայնեց ուստան աղբյուրի մոտից,— ցածի աղբյուրին կերթա էս ջուրը։

— Սխալվում ես, ո՛ւստա,— մոտ գնացի ես,— փորձիր փակիր և կտեսնես, որ չի գնա. ա՛յ, նայի՛ր, ավազանի տակից է ջուր դուրս գնում և ծծվում հողի մեջ։

— Հա՛,— արեց քյոխվեն,— ըտենց կըլի... Պիտի հովուզը[1] շինվի... էլի մեկ 50—60 մանեթ ծախս ունի։

— Բա՛ս,— գոչեց ուստան,— ծախս կուզի. ցեմե՛նտ, ուստի հախ, քյարփիչ... կուզեք, ինչի՞ չէ, շինեմ...

Ասաց, ավազանը ծածկող քարը դեն շպրտեց, և բոլորը կռացան նայելու, բացի ստարշինայից և գրագրից։

Առհասարակ Սրապիոնը լուռ, բավական հեռու կանգնած, ձեռքին էր սեղմել աղտոտ թղթի մի կտոր և անընդհատ մատիտի ծայրն էր թքոտում։

Սակայն, երբ ամենքը կռացել էին աղբյուրի վրա, իսկ ստարշինան քիթը ցցած՝ ծառերի բարձունքներին էր նայում, դրագիրը մի քայլ ետ գնաց ու մատովն ինձ նշան արավ իրեն մոտենալու։

Զարմացա՝ նկատելով նրա հանդուգն ժպիտը և այդ ձևով ինձ կանչելը։ Զզվանքս էր շարժում առհասարակ այդ ագռավը. բայց, մի բոպե զայրանալուց հետո, հետաքրքրություն հաղթեց, ելա ու մոտ գնացի։

Տեսնենք ի՞նչ ուներ ասելու այդպես խորհրդավոր կերպով։

Ջանաց սիրալի ժպիտ ստանալ, ոտք վերցրեց դեպի փեթակների կողմն ու ասաց կիսաձայն.

— Հլա մեկ խնդրեմ գնանք էն կողմը... ձեզ ասելիք ունեմ... փեթակներն էլ մեկ ցույց տվեք ինձ։

[1] Ավազանը։

Գնացի։ Լուռ քայլեցինք մինչև առաջին ծառը։ Այնտեղ նա կանգ առավ, դարձավ ու ասաց.

— Խո տեսնո՞ւմ եք, պարո՛ն, պրատակոլ են կազմել տալիս... գեղացիք են, անկի՛րթ... գանգատվել են, թե դուք նրանց աղբյուրի ջուրը կտրում եք... Հլա կա՛ց մեկ ամենը ասեմ... Հա՛, գյուղացոց դատաստանն էլ, գիտեք, նրանց կողմը կվճռի... է՛ս սուդ[1], է՛ս պրիսավ... գլխացավ՛նք, ջուրը կտրել անկարելի ա... հովուզը չեն շինիլ, կռանտը կկապեն ու է՛լի ջուրը տակից հողդ կփչացնի...

— Այն ժամանակ ես կքանդեմ ավազանը, աղբյուրը. ես թույլ չե՛մ տալիս աղբյուրը հողովս անցկացնել, ավազանը հողիս մեջ շինել...

— Անկարելի ա... աթադան-բաբադան շինածը չի քանդվի ու ըտենց հողիդ մեծ մասը կդառնա բալոտ[2]...

— Կստիպեմ դատաստանով, որ շինեն ավազանը...

— Ամիսներ, տարիներ կքաշի... գանգա՛տ, էլի պրատակո՛լ, պրիսա՛վ... Դո՛ւք գիտեք. բայց որ ինձ լսեք, ես ձեզ մի լավ, կտրուկ բան կառաջարկեմ, որ մի անգամով ամեն բան վերջանա, աղբյուրն էլ շինվի, ձե՛զ էլ ջուր գա, նրա՛նց էլ, հողն էլ չփչանա...

— Առաջարկեք տեսնենք։

— Ա՛յ, ասեմ... Մի քիչ դենը գնանք... էս ի՞նչ լավ բռնել են էս ծառերը... խնձո՞րի են... փա՛հ-փա՛հ, ինչ էլ լավերն են... Հա՛, էն էի ասում... խո լսեցի՞ք շինելու համար է՛ն քիչը հիսուն մանեթ կնստի... որ լավ վճռեն, ծախսի կեսը ձեր վզին կդնեն... Հը՞... ո՛չ, ըտենց էլ կանեն. ես լավ գիտեմ մեր դատավորներին... թե չէ, կռանտը կփակեն, հովուզը չեն շինիլ ու բալոտ կդառնա ողջ հողդ։

Բարկացած մի շարժում գործեցի։

— Հա՛, հենց ըտենց կըլի, ես լավ գիտեմ. գեղամիջումն էլ խոսել են ու ըտենց են վճռել... յա 25 մանեթ պիտի ծախս քաշես, յա թե չէ հողդ ըսենց ջուր կկտրի, կռանտդ էլ կփակեն...

— Վերջացրե՛ք. հետո՞...

— Հետո էլ էն, որ օրենքներից դուրս կա մի ուրիշ ավելի մեծ օրենք. խո գիտե՞ք... էն ո՞ր բանն ա, որ ադամամութի մեջ դնես՝ լուս կտա... ըստեղ ամեն բան ստարշինի ու իմ ձեռին ա... ոնց ուզենանք՝ ընենց շուռ կտանք... Հլա դուք էդ «լուս տվող» զադի ծերը ցույց տվեք ու կտեսնեք... ընենց անենք, որ ամեն բան էսօր ևեթ դրստվի... թանկ էլ չի նստի քեզ... մի կարմիր ա ու մի կապույտ...

[1] Դատարան։

[2] Ճահիճ, ռուսերեն բառ է։

Մի վայրկյան ապշեցի այդքան հանդգնորեն արված կաշառքի առաջարկի վրա։ Հետո զզվանոք նայեցի ագռավին, մեջքս դարձրի և լուռ գնացի դեպի նախկին տեղս, առանց իսկ ետ նայելու նորից։

Անշուշտ, գրագիրը սառած-մնացած պիտի լիներ և կամ ուսերը թոթափած ու մի լավ հայհոյանք արձակած իմ հասցեին։

Համենայն դեպս ուղի՛ղ դեպի ստարշինան գնացի և անվրդով. նրանցի ճոճի մեջ։

Ստարշինան նայեց ինձ, աչքերը կկոցեց, ապա դարձավ եկող գրագրին և կանչեց.

— Հը՞, Սրապիո՛ն, պարոնի ծառերը տեսա՞ր, շա՞տ են...

— Չէ՛, ստարշինա՛, պարոնը սկի չուզաց էլ ծառերը ցույց տալ... վախենում ա, որ աչք դիպչի...

Ստարշինան դարձյալ նայեց ինձ։ Ժպտում էի։ Կատարելապես ըմբռնել էի թե նրա տված հարցի և թե՛ գրագրի պատասխանի իմաստը։

— Շատ խոստացա՞ք,— ուզում էր հարցրած լինել պաշտոնյան։

— Զուզեց ոչինչ տալ, մերժեց,— հասկացրել էր գրագիրը։

2

Եվ այնուհետև որոշված էր ստարշինայի բոնելիք դիրքն ու վերաբերմունքը։

Անմիջապես առաջ նա դեմքը կնճռեց, արագ շարժումով գլխի փոփոխք հեռուից զարնելով՝ իջեցրեց դեպի ճակատը, ապա կուրծքը ցցեց և երրորդ շարժումով նստեց նստարանի վրա ու ոտները պարզեց դեպի ինձ։

Մտնում էր ստարշինական դերի մեջ։ Սկսվում էր կոմեդիան։ Հաստիվ ծիծաղս զսպած՝ ոգեսում էի եղածին։

Երբ այդ բոլորն արել էր Գիգուլը, մտրակի կոթը ուսագլխից ետ պարզելով՝ կանչեց մոտ գրագրին, հազաց և խիստ ձայնով ասաց.

— Դե հիմի գրի՛, պի՛սեր...[1] Ձեր հրամանոց անունը, պարոն երվանդ։

— Սմբատ,— ասացի ծաղրերով։

— Մ՞նց Սմբատ. ձեր անունը խո Երվանդ ա...

— Բաս որ գիտեք, էլ ո՞ւր եք հարցնում։

— Հանաքները թողեք,— ասաց նա հոխորտաձայն,— սակի վոլոստնոյ ստարշինան[2] ա խոսում։

1 Գրագիր։

2 Շրջանական տանուտեր, շահագ։

Ասացի անունս և ազգանունս։

— Հմի հրամանոցդ պաշպո՞րտը... Ամսիս 5-իցն ուսիլենիխրեն[1] ա ռեզդը...[2] ընտենց չի՞, պիսե՞ր...

— Հրամանք ես, ստարշինա՛,— շտապեց ասել գրագիրը,— անցյալ ամսի 5-իցն ուսիլենեայա ախրանա ա գուբերնին[3] ողջ... առանց պաշպորտի մարդ չպիտի երեք օրից ավելի մնա... չունեցողին էտապով կերկեն ուեզդնի նաչալնիկի[4] մոտ...

— Որ ասո՛ւմ եմ... նեղություն կրի պաշպորտդ ցույց տալ...

— Բայց չէ՞ որ,— ասացի,— երրորդ ամիսն է այստեղ եմ. ինչո՞ւ մինչև այժմ չէիք հետաքրքրվել։

— Մենք մեր բանը լավ գիտենք, պարո՛ն,— պատասխանեց հպարտությամբ ստարշինան,— պարտավոր էլ չենք ամեն հարցմունքի տալիս ստարշինան,— պարտավոր էլ չենք ամեն հարցմունքի ցուցաբ տալ... Մերն էն ա, երբ ուզենանք՝ հրամայենք ու պիտի կատարվի...

— Համ էլ էդ քյո՛խվի պարտքն էր,— մեջ մտավ գրագիրը։

Գյուղացիք այժմ թողել էին աղբյուրը և լրջադեմ, զգալով, որ «պաշտոնական գործողություններ» էին սկսում, մոտեցել ու շրջապատել էին մեզ։

— Հա բա՞ս...— արեց ստարշինան՝ քյոխվին դառնալով,— քեզ պրեդսեդատելիեն[5] եկել ա խո, էլ ո՞ւր ես առանց պաշտպորտի մարդ թողնում գյուղումը... դու մագամ գիտե՞ս ոչ, որ հմի ուսնի-խրեն ա...

— Ուսիլենեայա ախրանա...— ուղղեց գրագիրը։

Գզիրը մի բան մոթմոթաց քթի տակից, հետո, կամենալով պատժել իր այդ հանդգնությունը՝ իսկույն քերանը ծածկեց երկար ցուպով։ Քյոխվեն շփոթվեց, ժպտաց ու ասաց.

— Դե էս մարդը խո փախստական չի՞, տնով-տեղով ըստեղ ա...

— Միևնույն ա,— արեց խստությամբ ստարշինան,— ուսիլենիխրենը ֆիդանների համար էլ ա... Մենք չե՛նք ուզում, որ մեր վոլոստի մեջ ըտենց մարգիկ ըլին...

Ապա գարձավ ինձ ու կրկնեց...

— Հրամանքդ նեղություն կրիր պաշտպորտդ...

1 Աղճատած усиленная охрана— զորեղացրած դրություն։

2 Գավառ։

3 Նահանգ։

4 Ոստիկան և գինվորական ֆինչպես բանտարկյալներ։

5 Գավառապետ։

6 Հրաման։

— Լավ,— ասացի ես,— տանն է. եթե կուզեք՝ գնանք քիչ նախաճաշ անենք, և ցույց կտամ։

— Զակուսկի[1]...— փայլեց ստարշինի դեմքը,— հա տո՛, անիծվի՛ մեր էս պաշտոնն էլ. էնքան գործ կա, որ մարդ մոռանում ա, թե քաղցած ա... ընչի չէ՛, գնանք... թե գինի կունենաս ո՞ւ...

— Ունեմ։

— Բաս լավ... Ասում ես պաշտպորտ էլ ունես էլի... Հը՞...

— Կա։

— Էդ լավ... Որ ըտենց ա, պարո՛ն, շուտ գանգատդ ասա, թող գրի պիսերն ու գնանք փորներս պնդացնենք քիչ։

— Ես գանգատ չունեմ... եթե գյուղացիք մինչև 15 օր ես չեն շինի ավազանը, այն ժամանակ աղբյուրը կքանդեմ, ջուրն էլ առվակ կշինեմ-կերթա։

— Հլա կա՛ց մեկ,— ճչաց Խոլերան,— էդ ո՞նց թե կքանդես, բաս մեզ առանց ջուրի՞ կթողաս։

— Եթե մաքուր ջուր եք ուզում, ավազանը շինեք։

— Կացե՛ք հլա...— մեջ մտավ ստարշինան։ Հետո ոտքի ելավ, ինձ դարձավ ու ավելացրեց...

— Էս սպորը զակուսկու վրա լավ կդրստվի... գնա՛նք, տղե՛րք... ի՞նչ ա, բոլորի՞ն ես ղոնաղ անում, պ. Երվանդ։

— Ինչո՞ւ չէ. համեցեք բոլորդ էլ։

— Ջոմարդ մարդ ա, ես ու իմ աստոծը,— ասաց ստարշինան քայլելիս՝ գյուղացոց։— Հը՞, ի՞նչ ա, խամ քաղաքացի՞ եք գտել, որ վրա եք տալիս... Սա մեզանից լավ ա հասկանում զակոնը... Զակոնով պիտի վարվե՞նք թե ոչ... Թողե՛ք, ճաշի վրա կվերջացնենք... Մարդը պաշպորտ, ունի, ֆիդա՛ն չի, քաղաքավարի ինսան ա... Գնա՛նք, պ. Երվանդ, դու քեֆդ քյոթ պահի, մենք չենք թողալ, որ գեղացի՛ք գլխիդ նստեն...

Քայլեցինք դեպի դուռը։ Անմիջապես, զակուսկի անունից կակղացած ստարշինան թողեց ինձ առաջ անցնելու, հետո, մինչև պարտեզից դուրս գնալը՝ գովեց ծառերը, գյուղացոց դարձած՝ շեշտեց, որ նրանք շնորհակալ պիտի լինեն ինձ պես մարդ իրենց մեջ գտնվելու համար, որ ես ջոմարդ մարդ եմ երևում և, որ, վերջապես գիտեմ ապատիվս պատվավորաց և հարգս հարգավորաց» տալը...

Այս բոլոր միտումնավոր ակնարկներով լի գովեստները նա անում էր հանդիսավոր, աչքերը անընդհատ կկոցելով. իսկ գրագիրը, որ թուղթը գրպանն էր կոխել, այժմ գլուխը կախ՝ գալիս էր նրա հետևից։

---

1 Նախաճաշ։

Գնացքը փակում էր գզիր Սահակը՝ իրենից կրկնակի մեծությամբ յուպը միշտ ուսին դրած։

Երբ տուն էինք մտնում, տանտերս, որ լուսամուտից նայում էր, կանչեց.

— Բա՛հ-բա՛հ, էդ ի՞նչ խաբար ա. էդքան մարդիկը ո՞րդիանց որոացիր, պարոն Երվանդ... Սաղ ուեզդի մեծանոնքը թոփ ես արել-բերում։

— Եկել եմ պրատակոլ կազմելու։

— Դու քո աստվա՞ծը... ի՞նչի, տո՛, էն ո՞ր շան որդին ա գանգատել քեզնից։

— Գյուղացիք։

— Ա՛յ կասես... Համա չըլի՞ էն անտեր աղբյուրի համար... Հլա կացեք գամ տեսնամ էդ ո՞նց բան ա...

— Համեցե՛ք, —հրավիրեցի ես,— համ էլ ասեք ձեր գինուցը միերկու շիշ ուղարկեն մեզ։

— Երկո՞ւ,— ծիծաղեց ստարշինան,— ուղտերին ուզում ես գդալո՞վ չրի։

— Տո ջաննե՛րդ սաղ ըլի...— կանչեց տանտերս մոտենալով մեզ,— հրեն կարասը ընդի՞ չի... պարոն Երվանդին վախեցնել չես կարաղիդ էլ գինու մեջ կխեղդի։

— Տո, ուր ա բաս մեկ օր էլ մեզ չխեղդեց,— ասաց քյոխվեն ծիծաղելով։

— Դո՞ւ ինչացու ես, դո՛ւ,— ծաղրեց նրան տանտերս,— ընչի՞, մուֆթա գինի ա՞ գտել պարոնը... Դե՛հ, հլա մեկ համեցեք օթախը...

Ասաց և առանց սպասելու, որ ես կարգադրություն անեմ տանս մեջ, մտավ սրահս առաջ և հետո ինձ ներս թողեց։

Կանչեցի ծառային։ Սեղան դրին, բերին ինչ որ կար, և քիչ հետո բաժակները լցվեցին։

Ահա հենց ա՛յդ ժամանակ էր, որ մեկե՛ն աղբյուրը անցավ երկրորդ պլանի վրա, որովհետև մի նոր խնդիր եկավ զբաղեցնելու ստարշինային։

Մեզ ծառայում էր սեղանի վրա մեր Սիսակ անունով ծառան, որ միևնույն ժամանակ և վարպետ այգեգործ էր, ճարպիկ մշակող։

Մշտապես խոռվկանի դեմքով այդ երիտասարդը շրթունքները կախ, հավիտենապես դժգոհի շարժվածքներով գնում-գալիս էր առանց ուշադրություն դրավելու իր վրա։

Սակայն, երբ մի անգամ, երևի կամենալով իր խոնարհությունն

սրտահայտել՝ գինի լցրեց ստարշինայի բաժակում, Գիգոլը հանկարծ զարձավ, աչքերը ճպճպացնելով նայեց նրան ու գոչեց.

— Փխ՜... էս Սիսակը չի՞... ձեզ մո՞տ ա ծառայում։

— Հրամանք ես, ստա՜րշինա, ե՛ս եմ... Դե էլ ի՞նչ անեմ, ո՞վ ինձ հաց կտա կպահի. Գրիգորն էլ որ ընենց զուլում արավ ինձ...

— Կաց հլա... Քեզ հետ գործ ունեմ... Ադա Սրապիո՞ն, սրա անունն էն թղթումը չկա՞ր...

— Կար, ստարշինա՜։

— Բաս լա՜վ...

Ապա փափախն իջեցրեց ճակատին, խիստ կերպարանք ստացավ, պարզեց ձեռքը դեպի Սիսակն ու ասաց.

— Պաշպորտդ... հմի պլենի-խրեն ա։

— Ուսիլենայա-ախրանա, ա՛յ ստարշինա,— ուղղեց նորից գրագիրը։

— Դու ձենդ քե՛զ քաշի հմի,— բարկացավ այս անգամ պաշտանյան,— լեզուն իմն ա՝ պլանի-խրեն եմ ասում... Ճո՛ւտ, Սիսա՛կ, պաշպորտդ բի տենա՞նք...

— Յա՛...— գոնատ ետ քաշվեց ծառաս,— ի՞նչ պաշպորտ...

3

Ալեքսանդրապոլի գյուղերից բերված որբ տղա էր Սիսակը։ Միայն մի եղբայր ուներ, որ անտառապահի օգնական էր։ Մանկությունից մեծացած Դուզանում, տեղացիի նման էր դարձել։ Խնամել էին նրան տանտերը, չրաբացի քարերով առևտուր անող Մելիքը և մի քիչ է՛լ ուրիշները։

Այժմ, մոտ 25 տարեկան, մտադիր էր ամուսնանալ և տնփենա լինել Դուզանում. ասում էին, որ մինչև իսկ նշանվել էր, բայց մի քանի ամսից ի վեր, թնչ-ինչ գծտություններ նրա և աներոջը մեջ՝ Սիսակին թողել էր շվարած, դոնե դուռ ընկած։ Գովել էին ինձ որպես լավ այգեպան. վարձել էի նրան, պարտեզիս մի անկյունում հենց ինքը մի խրճիթ էր կառուցել ցցերով և նրա մեջն էր տարրում։

Իսկ թե նոր ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ հանկարծ նրանից անձնատուր էին ուզում (ինչ որ չէին ուզել 26 տարուց ի վեր), դա պարզացրեց թե՛ ինձ և թե՛ խրեն՝ Սիսակին։

Ըստ երևույթին մյուս գյուղացիք բոլորն էլ պիտեին պատմաղը։ Ոմանք ժպտում էին, մյուսներն անտարբեր՝ ապրատում էին լինելիքին։

— Պաշպո՞րտ...— կրկնեց նորից Սիսակը գլխակոխելով,— ի՞նչի, դա ես չա՞գ եմ... Դու ինձ չե՞ս ճանաչում, ստարշինա՜։

— Գուս մի՛ տալ, ա՛յ շաշ...— կանչեց նրա վրա պաշտոնյան,— ես, հլա դու մեկ մատ լակոտ էիր, որ գյուղումը ականջներդ քոքել եմ... Ամա հմի սլին-խրեն ա, ասացի, ու առանց պաշպորտի չի՛ ըլի...

— Յա՛... ո՞նց թե խրեն ա... բա ինձի՞ ինչ...— կանչեց վրդովված Սիսակը,— բա դու չե՞ս իմանում, որ ես պաշպորտ սկի չեմ էլ ունեցել։

— Էդ ա է՛է՛... Դու հլա ըստեղի վրան գրված չես, բա ո՞ւր ես ըստեղ վեր ընկել առանց բիլեթի, հը՞... փալաս-մալասդ հավաքի դե, ու գնա յա բիլեթ հանի, յա թե չէ՝ է՛լ էս գեղի ղրաղովը անց չկենաս... Ա մեր հրամա՛ն ա...

Հարկ համարեցի միջամտել։ Թշվառ Սիսակը երերոն՝ կարկամել էր ու քիչ էր մնում լաց լիներ զայրույթից։

— Լսեցե՛ք, պարո՛ն Գիգոլ,— ասացի,— էլի գուք տարօրինակ բաներ եք անում. այս մարդը վագուց այստեղ է. հասայակության անդամ է, ինչո՞ւ եք վոնգել ուզում։

— Ըտե՛նց ա զակոնը,— ասաց գրագիրը,— առանց պաշպորտ չի կարելի. պաշպորտ չունի՝ թող գնա իր տեղիցը հանի։

— Համ էլ էդ սիլնի-խրեն ա, ի՞նչ զահրումար ա,— ավելացրեց ստարշինան,— փի՛ս բան ա ըլել, որ մեջտեղ ընկավ. ասում են՝ առանց պաշպորտի մարդու բռնելն ու քշելը մեկ ա ըլում...

— Կա՛ց հլա, գոլովա՛,— իոսեց տանտերս,— չի՞ ըլի, որ մի կերպ անենք էս խեղճ տղի համար... մնա ըստեղ ու գիր գրի, որ ղրեն։

— Չէ՛, չէ՛, ո՞նց կըլի... թող գնա գնղիցը. մեկ էլ տեսար պրիստավն իմացավ... Լսեցի՞ր, Սիսա՛կ, էգուցվանից էլ առանց բիլեթի ես գեղումը, իմ վոլոստուզը[1] սկի չերևաս, թե չէ էտապով քեզ քշել կտամ։

— Խմի՛ր, առ,— բաժակը նրան պարզեց տանտերս,— լա՛վ ա, մի՛ բռիկանալ, հասկացանք... Կերթա էլի՞, ի՞նչ կա. կերթա պաշպորտ Կանի ու էլի կգա... յանի դրանով խո Սիսակից չազատվեցի՞ն...

Ու աչքով արեց Սիսակին, որ սենյակից հեռանար։ Դեռ մուքն էր ինձ համար. տանտիրոջս ակնարկություններից երևում էր, որ մի ինչ-որ ինտրիգ կա խնդրում...

— Իմ գործերը կմնան,— խոսեցի ես,— քյալամի բուկը տալու[2] ժամանակն է... Եթե մի քանի օր ժամանակ տաք, ես ինքս կգրեմ և կաշխատեմ, որ անձնագիրը ուղարկեն։

— Չէ՛, ո՞նց կլինի... Հը՛, Սրապիո՞ն, ըտենց չի՞, չի՞ ըլիլ... էն գանդումար պրեդսեդատելը ո՞նց ա ասում, դո՛ւ ես կարդացել։

---

1 Համայնք։

2 Հոգ լցնել բույսի տակը. окучивать.

— Ասում ա,— խոսեց ծանրակշիռ՝ գրագիրը,— առանց պասպորտի չի՛ կարելի. ո՛ր գեղումն էլ որ էլավ՝ քյոխվին պոդսուդ[1] կտան, կչատժեն...

— Փիե՛...— ոստնեց քյոխվեն,— թող գնա ռա՛դ ըլի գլխիցս է՛ֆ, ինչի՞, ես գի՞ժ եմ, որ նրա պատիժը քաշեմ... Ադա՛, Սիսա՛կ, ոսկորներդ խարդ ու խաչ կանեմ, թե էդուց առավոտ քեզ ըստեղ տեսել եմ...

— Տո գնա՛ է, Սիսա՛կ... գնա՛, որդի, գործի՛դ գնա ու թող տեսնենք ընչի՞ են կատղել մեր մեծանոնքը... Գնա՛, որդի՛, մեր խանումին էլ ասա, թե իշխան ձկնիցը կա, մի քիչ մազացու ղրկի... էս գինիներն էլ պրծան։

Սիսակը լուռ՝ շշերը հավաքեց ու գլուխը երերցնելով դուրս գնաց։

Ոչ ոք չխոսեց մի բոպե։ Ստարշինան կռացել էր շաքարով շինած սալաթի վրա, մյուս գյուղացիները սենյակս էին զննում, իսկ ուստա Համոն փառակազմ գրքերին պլշած իր կապույտ աչքերը, ակներև կերպով զարմանում էր, թե արդյո՞ք ես համբերություն էի ունեցել ծայրեծայր կարդալու այն հաստափոր հատորները։

— Հը՛մ...— արեց վերջապես ստարշինան,— էս սալաթը լա՛վ բան ա ըլել... Կասես սկի գինի խմած չլեմ... Թրի՛ պես կտրեց...

— Յանի դու սրանք ողջ կարդացե՞լ ես...— չկարողացավ իրեն զսպել ուստա Համոն և դարձավ դեպի ինձ։

— Չէ հա՛...— արեց Խոլերան,— մարդ հարյուր տարի ապրի, էսքանը կարող չի կարդալ...

— Բալքի Աստվածաշունչնի են,— դիտեց երեցփոխը։

— Զակոնի գրքեր կըլեն,— պնդեց գրագիրը։

— Բառարաններ են,— ժպտացի ես,— ինչ խոսք ուզենամ՝ միշտ կգտնեմ... Ա՛յ, կուզե՞ք հենց գտնեմ էդ ուսիլենայա-սխրանա բառը և ասեմ, թե ոնց են նրա օրենքները։

— Հլա՛...— գոչեց տանտերս,— դո՛ւ քո աստվածը, մեկ նայի տես թե ստարշինան իրավունք ունի՞ Սիսակին գեղիցը քշել։

— Տո ի՞նչ իրավունք,— ձայնեց ստարշինան,— իրա՞վունքը որն ա, զակոնն ըտենց ա՝ պրծավ գնաց. էլ ըստեղ իրավունքի բան չկա։

— Դե զակոնն էլ իրավունքն ա է՛լի,— ասաց երեցփոխը։

— Չէ հա՛...— ծիծաղեց քյոխվեն,— տո մարդ էլ իրավունքիցը կգալա՞ շան պես. ամա արի տես, որ զակոնի անունը չե՞ն տալիս, գազը ջանդ ա ընկնում. կասես խոլեր բռնած ըլի քեզ։

[1] Դատի տակ։

— Դե հա՛լբաթ,— ավելացրեց Խոլերան,— զակոնն ո՛ւրիշ ա, իրավունքն՝ ուրիշ...

— Յանի ա՛յ Գիգոլ,— ասաց տանտերս,— արի ու դրուստն ասա... էդ պլին-խրե՞նն ա քեզ ստիպում, թե՞ նրանից ավելի... ընենց էլի՛... Հը՞, դո՛ւ ըլես էն ս. Գևորգը...

— Ուրիշ ի՞նչ պիտի ըլի...— ասաց խստությամբ ստարշինան,— ասի՞ քեզ, որ զակոնն ըտենց ա հմի... իզուր խո չի՞, որ ինձ ստարշինա են արել, վոլոստնի ստարշինա[1]... ես պիտի զակոնը պահեմ...

—Չէ՛, չէ՛, դու էն ապա, յանի՛ ըստի խո Գրիգորի, էն չոլախ քաֆթաի մատը խառը չի՞... Հը՞... ընենց, ուզում ա Սիսակին ռադ անի, թաղի մատը խառը չի՞... Հը՞... ընենց, ուզում ա Սիսակին ռադ անի, նրա աշխատանքն ուրանա, իր խոստմունքը մոռանա... կըլի որ ուրիշ փեսացու էլ գտած ըլի...

Ստարշինան մի ումպով դատարկեց բաժակը, երևի վայրկենական շփոթությունը ծածկելու համար. հետո աչքերը ճպճպացրեց ու ասաց.

— Չէ՛, Գրիգորը ըստի գործ չունի... ինձի՞ ինչ, որ աղջիկը էլ Սիսակին չի ուզում տա... աղջիկն իմը խո չի՞...

— Այո, բայց մի ամբողջ տարի, որ Սիսակին բանեցրել է խաբելով՝ թե աղջիկը նրան կտա, տնփեսա կշինի...

— Է՛հ դու էլ, պ. Երվանդ,— ասաց քյոխվեն,— ի՞նչ ես Սիսակին ականջ դնում։

— Լավ ա՛, հերիք ա...— վեր կացավ սեղանից ստարշինան և ինձ դարձավ.

— Շնորհակա՛լ ենք, ախպեր... Ա՛յ ադա, դուք էս ի՞նչ տեսակ մարդիկ եք. եկանք, որ աղբյուրի գործը դրստենք ու չթողեցիք էլ... մարդու հացը կերանք...

— Ոչի՞նչ,— միջամտեց քյոխվեն,— պարոնը մե՛րն ա, յո՛լա կտանենք։

— Չէ՛, էդ իմ գործն ա,— ասաց ստարշինան,— ես ու պ. Երվանդը հմի քիչ բաղը կերթանք. ծառերը, յաշչիկները կտեսնանք ու ընտեղ էլ բանը կվերջացնենք... Հը՞, պարոն, ըտենց չի՞...

Լավ,— ասացի ես ժպտալով։

— Դե՛, խա՛լխը, դուք գեղամեջ գնացեք. ես էլ վերջացնեմ ու մեկ կես սհաթից կգամ... Ադա Սրապիո՛ն, դու էլ գնա Մաթոյին ասա, որ շան որդին դուքանների առաջը գա իմ հրամանին, թե չէ կերթամ ղամ-

[1] Շրջանական տանուտեր։

չիովս գլուխը կշարդեմ... Գնա՛նք, պ. Երվա՛նդ, գնանք մեկ ծառերդ տեսնենք. ասում են՝ լավն են...

Բոլորս դուրս ելանք, իսկ ստարշինան հուսալից, որ գրագրի շարածը ինքը կհաջողեցներ, ինձ հետ պարտեզ իջավ։

4

Վիճակված էր. այդ օրը ստարշինան կաշառք չպիտի ուտեր։ Որովհետև հագիվ մտել էինք պարտեզ, որ Սիսակը վազելով եկավ հայտնելու, թե քաղաքից երկու հյուր էին եկել ինձ մոտ։

Երկու ծանոթներ, որոնք, օգտվելով մի քանի օրվա տոներից, եկել էին գյուղ՝ ջղերը հանգստացնելու, գուցե և իմ նոր կյանքը տեսնելու։

Ստարշինան ստիպվեց գործը մի ուրիշ օրվա թողնել և հեռանալ։

Հյուրերս իջան և երբ հանգստացել էին, երեկույան դեմ պարտեզ տարա նրանց։ Մեղվի փեթակներ մոտից երբե՛ք չէին տեսել։ Սիսակի հետ միասին բացինք մեկը, ցույց տվի ամեն ինչ։

Հետո, երբ պարտեզի ներքևում կանգ առած, մայրի անտառն էինք դիտում, և ծառան մի քանի քայլ հեռու սպասում էր, հանկարծ նա մոտ եկավ, կպավ թևիս ու ասաց երկչոտ.

— Աղա-ախպե՛ր...

— Ի՞նչ կա, Սիսա՛կ։

— Մեկ գետի ղրաղը դուրս գնա՛նք...

— Ինչո՞ւ, ի՞նչ կա։

— Ընենց... Մեկ բան պիտի ցույց տամ ձեզ։

Այնքա՛ն աղաչանք էր գրված այդ խղճուկ դեմքի վրա, որ բոլորս էլ հետևեցինք նրան և գետափն ելանք։

Այդտեղ նա մեզ տարավ դեպի աջ, և երբ հասել էինք գետակի մեջ հոսող առվակին, ցույց տվավ նրա մյուս կողմը գտնվող մի այգի և ասաց հուզված, լացի ձայնով.

— Դուք ու ձեր աստվա՛ծը, աղա-ախպերնե՛ր, մեկ գնացեք մտեք էդ բաղը, մեկ լավ մտիկ արեք, թե ինչքան աշխատանք էր պետք, էն էլ մի հոգու՝ մինակ մարդու աշխատանք, որ չոլից ըտենց բաղ շինվեր։

— Ո՞ւմ պարտեզն է այդ,— հարցրեց հյուրերիցս մեկը։

— Գնացեք՝ թե խիղճ ունեք,— շարունակեց Սիսակը ավելի ու ավելի հուզված,— առաջ մեկ տեսեք ու երբ գաք՝ ամե՛նը կպատմեմ։

Ես հասկացել էի։ Իրավ է, երբեք առիթ չէի ունեցել տեսնելու այդին, բայց լսել էի, որ այդտեղ էր նրա աներոջ այն հողը, որ շնորհիվ Սիսակի հսկայական և անդուլ ջանքերի, ճահիճից փոխվել էր պարտեզի։

— Բայց չէ՞ որ կարող են մեզ ներս չթողնել,— առարկեցի ես նրան։

— Կթողան... հրե՛ն, տերն էլ մեջն ա... Մեկ գնացեք հենց էդ պառավիցը հարցրեք, թե ո՞վ ա էդ ծառերը տնկել, մեշիցը շալակով ցախ բերել ու չափառը քաշել, բաղի դովրը փոսը փորել... հարցրեք, թե ի՞նչ էր առաջ էդ բաղատեղը, ո՞վ ա չորացրել, ո՞վ ա պատրուսնին արել, էդ կարտոֆելը, էդ մարգերը... Հարցրեք, թե ո՞վ ա, որ գիշեր-ցերեկ, ողջ մեկ տարի փորել ա, չորացրել, տնկել, մաքրել ու հենց որ չոլիցը բաղ ա դարձրել, վզակոթին տվել են ու շան պես դուս քցել... հմի էլ ուզում են ըտենց, նամարդի պես քշել գեղիցը ու աշխատանքը վայելել...

Հուզմունքը շատանում էր, սկսել էր լալ գրեթե. ձայնը դողում էր շրթունքների հետ։

— Գնացե՛ք,— շարունակեց նա,— ես ըստեղ կուչ կգամ էս քարերի մեջ... ձեր դատաստանին կթողամ. թե կասեք՝ «Սիսա՛կ, ձենդ կտրի, իրավունքը քոնը չի», գլուխս դեմ կտամ, որ խփեն... Սկի աջալա[1] չանեք, աղա՝-ախպերներ, մեկ լավ տեսեք, մեկ լավ հարցրե՛ք...

Հյուրերս զարմացած էին և ինձ էին նայում հարցական դեմքով։ Ակնարկեցի սպասելու, հետո, երբ հիրավի, Սիսակը կկզեց քարերի մեջ ու նստեց, հրավիրեցի նրանց հետևելու ինձ։

Սաստիկ խղճում էի հարստահարված երիտասարդին, և, քանի որ իր դատը նա մեզ էր հանձնում, մտածեցի չմերժել։ Բացի դրանից, իմ մեջ ևս կուտակվում էր զայրույթ ա՛յն մարդու դեմ, որ մի ամբողջ տարի խաբելով, տնփեսա շինելու հույսեր տալով՝ շահագործել էր որբին և այժմ, երբ ճահիճը մի շքեղ, արդյունաշահ պարտեզ էր դարձել, այժմ վռնդում էր նրան, և մինչև իսկ կաշառքի ուժով դրդում ստարշինային՝ գյո՛ղից էլ քշելու։

— Գնա՛նք,— ասացի հյուրերիս,— հետաքրքիր բան է։

Եվ առվակը շանցած, բավական մանրամասն պատմեցի նրանց եղելությունը։

— Տո գնանք է՛ մեկ,— գոչեց Գևորգը (հյուրերիցս մեկը),— գնանք այդ անպիտան ծերուկի մորուքը թափ տանք քիչ։

— Արժեր դրան մի լավ դնքսել,— ավելացրեց Հակոբը (մյուս հյուրս).— չէի կարող երևակայել ա՛յդ աստիճանի հարստահարություն գյուղում։

— Սա դեռ մեկ երևո՛ւյթ է. գյուղում տեղի ունեցող հարստահարությունն այնպիսի մեծ չափերով է լինում, որ գյուղացին ցանցի մեջ բռնված՝ ծծվում է ու չորանում...

---

1 Ջղտապեք։

Ոստնեցինք առվի վրայից և մոտեցանք պարտեզին։ Հիրավի, լեռնադաշտի ո՛չ մի գյուղում չէի տեսել այդքա՛ն խնամքով և ճաշակով շինված պարտեզ։ Զարմացած կանգ առանք մեծ, բաց դարպասի առաջ։

— Օհո՛,— գոչեց Հակոբը,— սա ի՞նչ սիրուն պարտեզ է, կարծես մասնագետի ձեռքի գործ լինի։

Վանդակաձև մեծ դռան կողքից ձգվում էր ավազածածկ մի լայն ծառուղի դեպի ներս։ Պարտեզն ամբողջ նախ շրջապատված էր փշաթել խիտ ցանկորմով, իսկ հետո՝ առած ուռիների շրջանակի մեջ։ Ապա անասունների մուտքը լիովին արգելելու համար՝ պարփակված էր լայն խրամով։ Յուրաքանչյուր թիզ հողը ներսում մշակված էր ու մաքրված։ Անտառից բերած վայրի խնձորենիների կոճղերի վրա պատվաստած ընտիր ճյուղերն այժմ լավ բռնել էին և ծաղկել. մի կողմը—կեռասենիք, սալորենիք, մի ուրիշ գծով՝ արքայամորու բազմաթիվ թփեր, վարդենիներ. ավելի ցած՝ լոբիի ցցերը զինվորների պես կանոնավոր շարքերով՝ կանաչ էին կապել, իսկ նրա առջևում, գետնախնձորի մաքուր ու լավ ակոսներ, ցույց էին տալիս ամենալավ տեսակի տունկեր։

Ինչե՞ր ասես չկար. ընդեղեն, կաղամբ... Ու այդ բոլորը շատ կանոնավոր տեղավորված մաքուր մարգերով. ո՛չ մի փուչ կամ քար։

Գինձի մարգի մեջ կուչ եկած քաղհանք էր անում Գրիգորը։ Կուզ ու կարճ մի ծերունի, որ մեր ձայնը լսելով՝ դարձավ նայեց, հետո ոտքի ելավ քաղհանը ձեռքին։

— Բարև՛, ծերունի՛։

— Աստծու բարին... էս ո՞նց էլավ, պ. Երվանդ, որ եկաք բաղս տեսնելու... Համեցե՛ք։

— Դրացի ենք գրեթե,— ասացի ես,— չգիտեի, որ այսքան մոտիկ, այսպիսի գեղեցիկ պարտեզ կա. իմ պարտեզը սրա մոտ անապատ է...

— Ըտենց ա,— ժպտաց ծերունին,— ուրիշի ձեռքով արած բանը բա ի՞նչ պիտի ըլի. մարդ իրա՛, իրա՛ ձեռքով պիտի շինի, իրա՛ քրտինքը պիտի թափի հողի վրեն...

— Բայց մի՞թե այս բոլորը քո՛ իսկ ձեռքով, քո՛ քրտինքով ես շինել ու մշակել. հը՞, ծերունի,— հարցրեց տաքությամբ Հակոբը։

— Հա՛...— արեց ծերունին բավական համարձակությամբ,— բաս ուրիշ էլ ո՞վ ունեմ։

— Ղո՛չաղն ես եղել,— դիտեց Գևորգը ծաղրով,— լա՛վ էլ այգեպան։

— Կանես՝ կսովորես... Ճշմարի՛տ ա, էս բոլորը, ասած կլինի պարոնը, իմ ձեռքովս չեմ տնկել, շինել, ամա ե՛ս էլ շատ քրտինք եմ թափել ըստեղ։

— Այսինքն ի՞նչ,— գոչեց Հակոբը,— գուցե այս ծառե՞րն ես դու պատվաստել։

— Չէ՛։

— Կամ այս պա՞տը դու քաշել... չլինի՞ խրամը քո փորածն է...

— Մարգերը դո՞ւ ես կազմել, գետնախնձորը դո՞ւ մշակել...— ավելացրեց Գևորգը։

— Կամ այս մորիների թփերը դո՞ւ բերել անտառից...

— Գուցե այդ ուռինե՞րը դու տնկել, այդ ծառուղինե՞րը...

— Չէ՛, աղանե՛ր,— հաջողվեց ասել ծերունին խոսքերի այդ կարկուտի տակից,— չէ, էդո՛նք իմ շինածները չի... իմ մշակն ա, իմ նոքյա՛րն ա շինել։

— Ի՞նչ նոքյար,— զարմացավ Գևորգն ինձ դառնալով,— ուրեմն վարձատրե՞լ է։

— Սպասի՛ր, ծերո՛ւնի,— միջամտեցի ես,— խոսքդ Սիսակի համա՞ր է.. լա՛վ, թող նոքյարդ եղած լինի. իսկ որքա՞ն վարձ ես տվել նրան. տվե՞լ ես, օրինակ, այնքան, որքան ես տալիս եմ. ինչո՞ւ ուրեմն ամսական 10 ռ. առնելով ինձնից, նույն ջանքով չի մշակում պարտեզս։

— Ո՞նց,— գոչեց ծերունին,— տարեկան 120 մանե՞թ ես տալիս... փիե՛... Հա՞ցն էլ, տո՞ւնն էլ...

— Այո... կոշիկ, մի ձեռք էլ հագուստ։

— Ասում էին՝ չէի հավատում... բա էդ ո՞նց ա, որ քո բաղը սրանից լավ չի շինել... Ի՞նչ ղալբն[1] ա ըլել, տո՛...

— Լսի՛ր, ծերո՛ւնի,— միջամտեց Հակոբը,— դու էն ասա, թե դու ինչքա՞ն վարձ ես տվել նրան, դո՛ւ...

Ծերունին շփոթվեց, փորձեց ժպտալ, խոսքը կտուրը ձգել, բայց Հակոբն ամուր էր բռնել նրան, իսկ ես ու Գևորգը ծիծաղում էինք...

— Փիե՛...— արեց վերջապես ծերունին,— քո ի՞նչ բանն ա էդ, ախպե՛ր, դու նրա վեքի՞լն ես... ես գիտենք ու նա... էդ մե՛ր գործն ա...

Ու Հակոբը սկսեց «թափահարել» նրան մի ֆիլիպիկանով, ուր խառն կային և ծա՛ղր, և կծու հարձակում, և՛ բարոյախոսություն։ Օ՛րինակ.

— ...Քանի՞ տարեկան ես, ծերունի... վաթսո՞ւն... Տե՛ս, էլ սև մազ չկա գլխիդ. մեջքդ էլ կամուրջի նման ծռվել է. մեկ էլ տեսար՝ մի օր ընկար ու ոտքերդ պարզեցիր... հը՞, ի՞նչ է, կարծում ես էն աշխարհում

---

1 Կեղծ մարդ, խաբեբա։

քեզ հարցնող չի՞ լինելու թե՝ «ա Գրիգո՛ր, ա՛յ ծերուկ, ինչի՞ Սիսակին խաբեցիր, ողջ տարին բանացրիր, ճահիճդ այգի՛ շինել տվիր, աղչկադ խոստացա՛ր. նա էլ կարծեց, թե՝ իր աշխատանքի պտուղն ի՛նքն է վայելելու, ողջ ջահելության ուժը դրեց հողիդ վրա, բայց դու վոնդեցիր նրան ու աշխատանքը խպշտեցիր»... Հը՞, ի՞նչ է, չի՞ գտնվի մեկ սատանա, որ էդ մորուքիցդ մի բռնի, էն կպրե կարասը կոխի ու հանի, յա քեզ քարեքար խփի, երկնքից գետին շպրտի...

— Փիե՛, փիե՛...— անում էր ետ-ետ քաշվելով ծերունին, տո եկել եք ինձ խեղդելո՞ւ... տո՛ դուք պրի՞ստավ եք, ստարշինա՞ եք...

— Հը, չէ՛, դու այն ասա՛,— մոտենում էր նրան Հակոբը սպառնալից,— կարծում ես էն թարս ոտներով, պոզերով ու պոչերով սատանաները քեզ բա՞ց կթողեն. յա թե չէ, հենց էս կյանքում, դու չե՞ս մտածում, որ եթե Թիֆլիզում ձեռքս ընկնես, քեզ ծեծելով թան կշինեմ, էդ մազերդ կսևացնեմ մուրով... Ցա թե չէ, Սիսակն է, կատաղեց ու մի օր էլ բռնեց քեզ հենց այստեղ խեղդեց, էս բաղն էլ քարուքանդ արեց, տրորեց ու ինքն էլ կորավ, գնա՞ց...

— Տո ձեռք քաշի է՛... մեղա՛ աստծո... տո՛ ես ի՞նչ եմ ասում... հլա թող գնա պաշպորտ բերի...

— Պաշպո՞րտ... քայլեց դեպի նա Հակոբը,— տո դու անաստվա՞ծ ես, մլթո՞նի ես. քսան տարի գյուղում մեծացած մարդուց պաշպո՞րտ կուզեն... տո՛ դու չե՞ս կարդացել Ավետարանում, որ կաշառք տվողին դժոխքում քսան անգամ հալած արճիճի մեջ են թաթախելու, հարյուր չորս չամչա[1] կրակ են լցնելու բերանը, ամեն օր երեք անգամ ձեռքերը գաղելու են, կաշառք տվող ձեռքն էլ շների առաջ են քցելու... տո բաս դու Ավետարանի՞ն էլ չես հավատում...

Մենք, ես ու Գևորգը ծիծաղից չգիտեինք ինչ անել՝ տեսնելով ծերունու լրջորեն վախենալն ու ետ-ետ քաշվելը, իսկ Հակոբի՝ ծաղրով լի սպառնալիքները։

— Հա՛մ էլ որ,— վերջացրեց սուր խազով Հակոբն իր խոսքերի կարկուտը,— էս է, ես քաղաք գնալիս՝ գուբերնատորին ասելու եմ, որ քեզ բռնեն, հոգիդ հանեն... ի՞նչ է, դու ի՞նչ ես կարծում ինձ. կարծում ես, որ քի՞չ փող ունեմ կաշառելու բոլորին ու քեզ քշել տալու գյուղից... Բայց ամենից առաջ ես քեզ մի լավ կծեծեմ էգուց. հենց ըստեղ կգամ բոթակ կտամ, թե աղչիկդ չես տվել Սիսակին...

Կատարյալ մոլիերական բռնի ամուսնության կերպարանք էր ստանում հարցը։ Ծերունին կարկամել էր. վերցրեց գետնից բահը, մի ոստյուն գործելով դուրս թռավ ծառուղուց և ծածկվեց ծառերի ետևը։

Իսկ մենք մի մեծ քրքիջ բարձրացրինք և այդպես էր, որ դուրս գնացինք պարտեզից։

Այդ ամենն անշուշտ բավական զվարճալի կլիներ, զվարճացրած իմ հյուրերին, եթե միայն քարերի մեջ սպասելիս չլիներ թշվառ Սիսակը, որ գուցե հույս ուներ մեր միջամտության վրա, գուցե կարծում էր, որ երեք «աղա» քաղաքացիները պիտի կարողանային ջարդել ծերունու համառությունը, պիտի հաջողվեին վերականգնելու իր իրավունքները և վերջ տալու տանջանքներին...

Այդ մտածությունը երևի բոլորիս իսկույն համակեց առվից անցնելուն պես, որոհետև անմիջապես լրջացանք և լուռ քայլեցինք դեպի գետակը։

— Շնծե՛րը...— բացականչեց Հակոբը,— աստված է վկա, որ վաղը գնալու եմ նրան դնքսեմ. թող ինչ ուզում է լինի։

Ոչ մեկս չխոսեցինք։ Քարերի վրա կուչ եկած՝ անշարժ նստել էր Սիսակը՝ դեմքը ձեռքերի մեջ։ Չլսեց մեր մոտենալը, գետի խոխոջը չէր թողնում։

Ի՞նչ ասել այժմ նրան, ի՞նչպես մխիթարել։

— Սիսա՛կ...

Դարձավ ու ոտքի ելավ։

Հուզմունքը ծածկել անհնար եղավ։ Լացել էր. լաց էր լինում, և դունատ դեմքը թրջված էր աղի արցունքով։

Հիրավի... ո՞րբ, վոնդվա՞ծ, հարստահարվա՞ծ և անտուն. ունցյալում հույսերով լի՞, երիտասարդության ամբողջ ուժը դրած մի հողի վրա, որը իրենն էր կարծել և ահա այժմ կողոպտվա՞ծ ու նետվա՞ծ...

Գուցե և ա՛ղջկան սիրում էր նա, երազներո՞վ ու հույզերով լի ապրել էր տարիներ ամբողջ և այժմ հանկարծ ամեն ինչ խարխլված, ամեն ինչ կորցրած՝ արտասուքն էր միայն մնացել մխիթարիչ...

— Սիսա՛կ,— գոչեցի հուզված,— ամո՛թ է...

— Ինչո՞ւ ամոթ, աղա-ախպեր, ինչի՞,— ասաց արտասվալից,— էլ ի՞նչ ունեմ, էլ ո՞րտեղ գնամ, ո՞ր քարին գլուխս դնեմ... Գիտեմ, դո՛ւք էլ չկարացիք բան անել... փող ունի՝ զորբա ա, տալիս ա, իրավունքի ձենը խլացնում... աստված էլ խո շա՛տ հեռու ա... բա էլ ի՞նչ անեմ, որ լաց չըլեմ...

— Կա՛ց, տո՛,— ձեռքդ դրեց նրա ուսին Գևորգը նույնպես հուզված,— կա՛ց, ի՞նչ ես կնկա պես լալիս. տղամարդ ես, մի բան մտածի՛ր...

[1] Շերեփ։

— Յա թե չէ գնա բռնի խեղդի...— կանչեց կատաղությամբ Հակոբը։

— Թե ի՞նչ...— գլուխը շարժեց Սիսակը,— դրանով աղջիկը կտա՞ն, հողս կտա՞ն... Չէ՛, աղա-ախպերներ, ես կորած մարդ եմ, ես սկի մարդ էլ չեմ... ոչ ոք չունեմ, ամենքը զուլում են անում ինձ, ամենքը նրա՛ կողմն են, հարուստ մարդ ա, իրանց գեղացին ա... Ստարշինա՛ն էլ, քյո՛խվան էլ, պրիստա՛վն էլ... Աղջի՛կն էլ. աղջիկը հոր կողմն ա... առանց հոր իրավունքի՝ երեսիս նայել չի ուզում... Ախր ես ո՞վ եմ, տո՞ւն ունեմ, ծնո՞ղք, ազգակա՞ն ունեմ, թե՞ փող, որ սրան-նրան խընդրեմ, որին ուզեմ՝ քշել տամ, պատժել տամ... Իմը լացն ա. ամա հմի լացի վրա՛ էլ են ծիծաղում...

Ասաց, նստեց դարձյալ քարերի վրա և ձեռքերով գլուխը ծածկեց։

Մթնշաղի, վերահաս գիշերվա մեջ, երկա՞ր նրա սև կույտը հեռվից երևում էր խոխոջող գետափին՝ անշարժ ու հուզիչ...

1905

ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

1

Այդ առավոտ շո՛ւտ էի զարթնել։

Արևը նոր էր ծագել. սահուն և կտոր-կտոր ամպերը հաճախ ստվերում էին նրա ճառագայթները. շրջակա անտառոտ լեռներն ամբողջովին դեռ պատած էր թանձր մշուշով. աշնանային խոնավ, անձրևոտ այդ օրերը ցեխ էին շինել, թացության մեջ ծածկել շրջակայքը...

Երբ դուրս ելա, դռան առաջ տանտերս հանդիպեց։ Սայլի վրա երկու շութ բարձել, որդու հետ մոտակա արտն էր ուզում գնալ՝աշնանացան անելու։

Առաջարկեց ընկերանալ։ Սայլը ելա, սերմացուի տոպրակը նստարան շինեցի և մի այլ երիտասարդի հետ, որ գալիս էր օգնելու, գյուղից դուրս գնացինք։

Մոտ էր արտը. թաց էր, բայց շատ ցեխ չէր. հարմար էր չթելու և ցանելու։ Հարմար էլ չլիներ՝ ժամանակն էր։

Եվ երբ հասել էինք, իսկույն գործի ձեռնարկեցին։

Լծեցին արտի կիսից. տանտերս ցած գլորեց ցորենի տոպրակը, մի մեծ սպիտակ գոգնոց կապեց ուսից, խնդրեց իմ օգնությունը և մի փթաչափ սերմ հավաքելուց հետո ոտքի ելավ։

Բայց, նախքան սկսելը, ծանրացավ մի ոտքի վրա, դեմքը դեպի արևելք դարձրեց, խաչակնքեց ու աղոթեց.

— Ո՛վ Մարիամ աստվածածին, դո՛ւ բարեխոս լինես Միածնիդ... մեկին հազար անես...

Ասաց, բուռը լիքը սերմ հանեց գոգնոցից ու շպրտեց դեպի հողը։

Մինչ այդ՝ եզներն էլ քայլեցին։ Արտի երկու ափերից գործիքների ծայրերը մղվեցին փուխր հողի մեջ։

— Հո՛, հո՛...

— Բո՛դոլ, Բո՛դոլ...

Եվ գորշ հողը պատռվելով՝ դիզվում էր ակոսների ֆողերին։

Նստել էի թմբաձև մի հողակույտի վրա ու նայում։

Սկսել էր փչել թարմ, գրեթե ցուրտ քամին։ Արևը հաճախ ծածկվում էր վազող ամպերի մութ կտորներով։ Առջևս՝ ցածում փռված էր գյուղը՝ իր կարմիր-կղմինդրյա տանիքներով, սիրուն ծառաստանների մեջ թաքնված. ապա, ավելի հեռուն՝ դաշտը, դեղին և սև քառակուսիներով ակոսված մինչև լեռների ծայրերը, երբեմն միայն բծավորվում էր կանաչ փոքրիկ տարածություններով։ Հորիզոնում, հնձված և նուրբ մշուշով խառն հեռանկարը ծածկվել էր մոտակա թաց հողերից ելնող գոլորշիների քողաձև վարագույրով...

Այնքա՛ն անոսր էր օդը, այնքա՛ն մաքուր, որ գյուղից պարզ հասնում էին մեզ սագերի, շների և մանուկների խառն ձայներ. աքաղաղն էլ իր ժանգոտ կանչովն էր պատռում օդը։

Կողքում, քիչ ցած, գետնախնձոր էին հանում։ Կին, մանուկ կռացած, փորում էին, կողքին փոքրիկ կրակ էին կազմել՝ թարմ գետնախնձոր խորովելու, և ծուխը թանձրացել էր նրանց շուրջը։ Ավելի ցած՝ բլուրների վրա էլ վարում էին. այնտեղից լսվում էր «հորովելի» մելամաղձիկ ձայնը։

Եվ սերմնացանը կաղնիկաղ, պարբերաբար, բռով ցորեն էր սփռում արտի վրա. լսվում էր նրա ընկնելու ձայնը՝ անձրևի նման։

— Ծա՛նր, ծա՛նր քշի չլիս...— կանչում էր չթվորներից մեկը։

— Հե՛յ ես քո տիրոջը...— նեղանում էր մյուսը եզների վրա։

2

Քայլում էր ու ցանում։ Բայց և խոսում էր նա։ Ինչ՝ մի քանի բառ, չթվորներին՝ նկատողություն... Այդ բոլորը նա անում էր առանց կանգ առնելու, միապաղաղ ձայնով։

— Ոտդ ո՞ւր ես հուպ տալիս։

— Գնում չեն...

Ու անցնում էր, մուշտուկով պապիրոսը բերանին։ Անցնում էր մոտովս. ցորենը շշշշալով ընկնում էր ոտներիս առաջ։

— Փե՜շքեշ...— ասում էր ինձ։

— Հազարով լինի,— բարեմաղթեցի ես։

— Ալյոշկա՛, արի՛...— գոչում էր չթվորը,— Ալյոշկա՛, ա՛րի, ա՛րգյալ, Ալյոշկա՛... Տո ինչի՞ ես սատկում, ա՛րգյալ արի է՜է՜...

— Ի՞նչ բան է «արգյալը»,— հարցնում եմ։

— Անվարել հող,— բացատրում է սերմնացանը։

Իսկ երբ քիչ հեռանում են, տանտիրոջ որդին, կարծես մի կիսատ թողած խոսակցություն վերանորոգելով, ճնշում է ոտքը չութի կոթի վրա և ասում հորը.

— Մելիքին ե՞րբ ենք փող տալու, որ ասում ես 3 մանեթ էլ կա... Քարը որ տարար, փողն առա՞ր...

Հայրը քիչ լռում է, մի երկու բուռ ես նետում, հետո, հեռացած, նույն միապաղաղ ձայնով պատասխանում.

— Քեզա՜նից բեխաբար... բաս 3 մանեթը դա, իսկ մյուս երե՞քը։

Միմյանցից հեռանում էին ավելի, ուստի և ձայները քիչ բարձրացնում, որ լսելի դառնան։

— Բաս որ մի օր եզնիքը տարանք քարհա՞նք.. — առարկում է որդին։

Ու լռում են։ Հայրը ոչինչ չի պատասխանում։

— Հո՛, հո՛,— դարձյալ լսվում է մյուս չթվորի ձայնը,— Բոգո՛ն հո՛, հո՛... Ա՛յ տղա, կասես ականջները կալած ըլի. երեսուն հետ Բոգոլ եմ ասում, մի հետ ականջ չի անում...

— Դե՛նը գնա, դե՛նը...— ձայնում է մյուսը։

Քիչ հետո սերմնացանը հասնում էր արտի ծայրին։ Մտածեցի, որ մի կողմը վերջացրել էր և պիտի կեսիցը դառնար ետ։ Բայց նա նորից սերմ լցրեց և նորից նույն կեսի վրա սկսեց։

— Երկու անգա՞մ ես ցանում նույն տեղը,— հարցրի ես։

— Որ խիտ լինի, հավասար,— ասաց նա։

Ապա, երբ հասել էր ինձ, նետեց պապիրոսը և ավելացրեց.

— Առանց էն էլ մի բան չի դուրս գալիս... խո տեսա՞ր գարնանացանը։

— Տեսա։

— Մեծ մասը գիժ ցորեն է, մնացածն էլ անձրևներից կալի մեջ ծլել է։

— Այո։ Ավելի լավ չի՞ լինի, եթե երբե՛ք ցորեն չցանեք. ամեն տարի այդպես է։

— Ապա ի՞նչ անենք։

— Ձեր հողերը ցորենի հող չէ. անձրևները, հողը վա՜տ...

— Հա՛. լավ խոտի, վարսակի հող է։

— Եվ կաղամբի, գետնախնձորի։

— Ճիշտ է։

— Դուք էլ ուրեմն միայն վարսակ, կաղամբ ու գետնախնձոր ցանեք։

Երեսիս նայեց ժպտուն ու ցանելով անցավ։ Երբ քիչ հեռացել էր, առանց դառնալու՝ ասաց.

— Լավ ես ասում. բաս դա՞րման։

— Դա՞րման. ուրեմն միայն դրա համա՞ր ցանել։

— Ապա ի՞նչպես,— ասաց նա։

Չթվորներից մեկը, որ մոտեցել էր և չութը շուռ տված՝ երկաթի ցեխն էր մաքրում, միջամտեց.

— Որ դարման չլինի,— ասաց նա,— տավարը խոտով չի ապրի։

Այլևս ոչ ոք չխոսեց։

Արևին այդ միջոցին հաջողվել էր քիչ ցանուցրիվ տալ մշուշը։ Այժմ էլ վարվող հողիցն էր գոլորշի ելնում և գետնի երեսը քարշ գալով գնում։ Գյուղից լսվում էին ավելի և ավելի ձայներ. երևում են սայլավորներ, տավարներ։ Մի ինչ-որ, գոմեշներ լծած սայլ էլ, լեռներից էր իջնում։

— Ունանենց քոչն է,— դիտեց տանտիրոջս որդին,— սարից են իջնում։

— Պիտի գան, բա՞ս,— ասաց երկրորդ չթվորը հանդեպից անցնելով,— անձրևները օ՞ր են տալիս որ։

— Ադա ո՞ւր եք կանգնել, քշեք է՜,— ձայնեց հեռվից սերմնացանը,— ես էս ա պրծնում եմ մեկ կողմը։

Ու կաղնիկաղ մոտենում էր։ Գոգնոցի սերմը պրծել էր, բայց, նախքան նորից լցնելը, նստեց ինձ մոտ՝ քիչ հանգստանալու, մի պապիրոս շինեց, վառեց ու ասաց.

— Է՜հ, հի՛մար բան է, մարդ ափսոսում էլ է այսքան աշխատանքը։

— Ինչո՞ւ,— մխիթարեցի ես,— ասում են, որ աշնանացանը գիժ ցորեն չի տալիս։

— Ճշմարիտ է. բայց տված ցորենն էլ մի բան չի... է՜հ, ապրուստ խո չի մերը, դժոխք է, դժո՛խք... Ցանում ես, տանջվում և՝ ոչի՛նչ։ Տո՜թ, մկնե՛ր... գետնախնձորն էլ, հրե՛ն, կեսից ավելին փչացել է։

— Հա՛, այս տարի ամեն ինչ վատ է եղել... բայց ամենքը քեզ պես չեն գանգատվում... Ա՛յ, Մաթոսը, օրինակ. երեկ ասում էր որ՝ «փառք ըլի աստծուն, ի՞նչ կա, ամեն տարվա պես տարի է, է՛լի»...

— Կասի բաս, ինչո՞ւ չասի,— ժպտաց դառնությամբ սերմնացանը,— նրա շա՞տ մեկ վեջն ա, որ արտը ոչինչ չտա։ Ուրիշների հոգին թող դուրս գա. նրա՞ն ինչ. ինքն ու տղեն խո սովորել են ուրիշների տունը քանդելով հարստանալ...

— Հա՛, ասում են վաշխառու է, տոկոսով...

— Հըմ, տոկո՞սը որն ա... տոկոսն էլի բան ա. ուղղակի խաբեությունով... Անցյալ օրերը չէ՞ր, որ բողազիցս բռնեց ու 20 մանեթի տեղ 10 սայլ խոտը խլեց ձեռքիցս... է՛հ, ուժն էլ նրա կողմն է, իրավունքն էլ...

— Էդ նրանից է,— ասացի ես,— որ դուք ձեր իրավունքները պաշտպանել չգիտեք. ոչխա՛ր եք, ոչխա՛ր... խուզում են ձեզ լավ...

— Չեն խուզում, ո՛ւտում են գայլերի պես... Աշխարհումս մարդիկ երկու են լինում՝ գայլ ու ոչխար. դե՛հ, իհարկե գայլը ոչխարին կուտի։

— Դուք էլ ոչխար մի՛ լինիք. մարդուս իրա՛ն ձեռքն է այդ...

— Հա՛...— արեց նա մտախո՛հ,— իրա՛վ է, մարդուս իրա՛ն ձեռքն է՝ ինչ անասունի ասես՝ նմանվելը... մարդ կա, որ օձ է, մարդ՝ որ խոզ, մարդ էլ կա՝ ոչխար է...

— Ոչխարը ուրեմն որ ուզենա, գա՞յլ էլ կդառնա։

— Կդառնա, ինչո՞ւ չէ։

Հետո ոտքի ելավ ու քայլեց դեպի ցորենի տոպրակը։ Հետը գնացի. ուզում էի տուն վերադառնալ։

Եվ երբ չոքել՝ լցնում էր, ասաց.

— Սպասի՛ր, քեզ մի բան պատմեմ, պարո՛ն... Ուզում ես գնա՞լ

— Չէ, պատմի՛ր։

— Մեկ պապիրոս էլ ծխի՛ր, մինչև ես պատմեմ .. Հա՛, էն էի ասում... Մեր գյուղումը, սրանից տարիներ առաջ, մի խեղճ մարդ կար, Հարութ էր անունը։ Մեզ պես ցանում էր, հնձում, գիժ ցորեն ուտում— հիվանդանում. և քա՛նի ընտանիքը մի կողմից ավելանում էր, այնքա՛ն նրա արդյունքը պակասում էր, անձրևը կալը փչացնում, հիվանդությունը և խոտի պակասությունը տավարը ոչնչացնում... քիչ էր մնում ամեն բան թողնի ու գլուխն առնի կորչի... Մի օր էլ, երբ այսպես, դառն մտածություններով լի, եկել էր աշնանացանի, հազա՛ր անգամ օրն ու հողը, անձրևն ու իր ցանքն անիծելով՝ կռացել սերմացվի տոպրակի վրա՝ ցորեն էր լցնում գոգնոցը, ի՞նչ տեսնի լավ է... հանկարծ տեսավ, որ տոպրակիցը մի սատանա դուրս թռավ ու առաջը նստեց...

Ի՞նչ ասել կուզի, որ Հարութը խիստ վախեցավ, գոգնոցի միջինը վեր ածեց և ուզեց փախչել։

— Ո՞ւր ես փախչում, տո՛,— ասաց նրան սատանան,— ես խո քեզ չե՞մ ուտելու. կա՛ց հալա...

Հարութս էր. դողը ջանն ընկած՝ կանգնեց։

— Մո՛տ արի, ախմա՛խ,— ձենեց սատանան,— ինձ խո ճանաչեցի՛ր։

— Հրամանք ես։

— Ես խղճացի քեզ, նրա համար էլ եկա։ Շատ էլ լավ չի օրդ, հը՞... Ցանում ես՝ գիժ է ստացվում, ծնում ես՝ մյուս կողմից ապրուստդ է քչանում... Կուզե՞ս, արի քեզ հարստացնեմ։

— Բաս չե՞մ ուզի։

— Դե լավ, որ ըտենց ա, առաջ մեկ էդ սերմացու ցորենի վրա ոտքդ դիր ու մի լա՛վ տրորիր...

— Ո՞նց, բա մեղքը չի՞...

— Հիմա՛ր... բա դու մեղք չե՞ս... Տրորի՛ր, ասում եմ։

Հարութի սիրտը խփում էր, բայց դե, սիրտ արավ ու [illegible]։ Տրորելուն պես ոտքը ծռվեց ու կաղ դարձավ։

— Վա՛յ, վա՛յ,— կանչեց նա,— ոտքս ծռվեց։

— Ոչի՛նչ,— ծիծաղեց սատանան,— կաղ ոտքը չի խանգարի հարուստ լինելու... ըտենց, դե հիմի մոտ արի ու սերմացուիդ տոպրակի մեջն էլ մի լավ թքի՛ր...

— Բո՛ւ... չէ՛, էդ կարող չեմ... ընտանիքս կերակրող տո՞պրակը...

— Տո թքիր է՛, քեզ ասում եմ. ողջ ընտանիքդ է՞նպես հարստացնեմ, որ սաղ գյուղը ոտներդ լզի...

Հարութը կռացավ ու թքեց։ Բայց հենց որ թուքը ցորենին կպավ, մի ցորեն թռավ մտավ աչքը և ու իսկույն քոռացրեց։

— Վա՛յ, վա՛յ,— կանչեց նա,— աչքիս մեկը քոռացավ։

— Ո՛չինչ,— քրքջաց սատանան,— էն մեկ աչքովն էլ կտեսնես ոսկիները... Դե՛հ, հիմի մնաց մեկ բան էլ անելու, պիտի ապականես հողը...

— Չէ՛, ես էդ բանը չե՛մ անի... Հողը բաս կապականե՞ն, կպդծե՞ն...

— Տո արա՛, ախմախի ճուտ, էլ հողի հետ ի՞նչ գործ ունես. էնքան ոսկի տամ քեզ, որ մեռնելիս էլ նրա մեջ թաղվես։

Դե՛, Հարութն էր, ապականեց։ Բայց հազիվ արել էր, մարմնի վրա իսկույն այնպիսի վերքեր գոյացան, որ թե ինքը չազատվեց նրանից և թե ցեղից ցեղ նրա սերունդն օր չտեսավ այդ վերքերից...

— Ոչինչ,— ասաց սատանան,— լավ-լավ շորեր կհագնես, վերքերդ չեն երևա...

Ասաց, իր չանգերով կնքեց Հարութի սիրտն ու ճակատը և խրատեց։

— Դե հիմի՛,— ասաց նա,— գնա տուն. դրացուդ՝ Գալոյենց տան պատերի մեջ ոսկի կա, ջանդիր տունն ու ոսկի՛ն առ... Բայց տես, մինչև որ սաղ տունը ջարուքանդ չանես, ոսկին չես գտնելու... Եթե Գալոյենց ոսկին քեզ չհերիքի, մյուս դրացիներիդ, սաղ քո թաղի, գեղի և աշխարհի տները ոսկիներով լիքն է, քանդիր ու վերցրու...

Հետո մի լավ, կուշտ ծիծաղեց ու անհետացավ։

Հարութն էլ գնաց։ Մյուս օրն ևեթ Գալոյենց տունը քանդեց, հետո դրացիների և մինչև այժմ էլ ինչ տուն տեսնի՝ կքանդի, որ ոսկի դիպի...

Պատմեց սերմնացանը և ոտքի ելավ՝ գոգնոցը ցորենով լի։

— Հետո՞,— հարցրի ես,— ինչո՞ւ այդ բոլորը պատմեցիր։

Երեսիս նայեց ժպտալով ու ասաց.

— Հարութը ոչխար էր, գայլ դարձավ, է՛լի...

— Իմ ասածն այդ չէր։

— Գիտեմ... բայց ինձ լսիր։ Ասենք՝ ես ուզում եմ ճանապարհ գնալ. փուշ է՝ ջարդում եմ, քար է՝ դեն եմ շպրտում, բաս որ սարը գա, ո՞նց անեմ. կարա՞մ քանդել...

— Ոչ մենակ, բայց միասին և համառ աշխատանքով կարող ես նրա տակը փորել...

— Միասի՛ն... համա՞ռ...

Երեսիս նայեց դարձյալ, մի վայրկյան լուռ մտածեց, հետո բուռը կոխեց, հանեց սերմը և ցանելով հեռացավ...

Լուռ՝ ես էլ հեռացա։

Մշուշն իջնում էր դարձյալ, արևը թաքնվել էր և ցուրտ քամին սաստրկանում։ Ջթվորները ճնշում էին գործիքների կոթերը և ակոսելով անցնում։

— Բոդո՛լ, Բոդո՛լ, ա՛րգյալ արի...

— Հա՛յ ես քու տիրոջ...

Վերևում լսվում էին կռունկների ձայներ։ Մի զույգ էր այն, որ կռկռալով սավառնում էր դեպի անտառոտ լեռները։

1904

ՀՈՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԸ

1

Անտառ մտնելուն պես երկինքը պարզվեց։

Ամպերը չցրվեցին, ոչ։ Կապարի նման ծանրությունը միայն փարատվեց բարձրում, փոթորիկ գուշակող մռայլ կերպարանքից ազատվեց երկնակամարը։

Գետից հետո, վայրի խնձորենիների, տանձենու և կաղնիների մի խառնուրդ՝ եզերում էր անտառի կուրծքը մխրճվող շավիղին։

Այնքա՜ն գրավիչ էր ցածում փռվող հեռանկարը, որ մի քանի բոպե կանգ առանք բարձրության վրա և զննելու մնացինք հորիզոնի կանաչ կապած դաշտը։

Մեզ հետ կային մի քանի գյուղացիներ։ Մելիքն էր՝ իր ճակատի տակի հայացքով և յափունջու մեջ պարուրված. հետո՝ մեր տանտիրոջ որդին՝ Գրիշոն, այլև այն երկարահասակ ու նիհար Թևոսը, որին գյուղում «ուզուն ախմախ» (երկարահասակ տխմար) էին կոչում։

Թևոսն այդ օրն իր ամբողջ եռանդն էր ցույց տալիս մեզ օգնելու և առաջնորդելու մեջ։ Հիմար ժպիտը դեմքին, ինքնակոչ կերպով առաջնորդության դերը ստանձնած՝ քայլում էր առջևից, գետի հունը ցույց տալիս. շալակեց ինձ ու ջրից անցկացրեց, երեխաներին ամբողջ ժամանակ գրկած տարավ, իսկ երբ գետն էինք անցնում, ավելի գործունյա՝ զոռում էր աջ ու ահյակ.

— Ադա՛, ո՞ւր ես կանգնել, քո՛ Գրիշո, չե՞ս կարում երեխաներին դեսը բերի... Կա՛ց, պ. Երվանդ, կոշիկդ մի՛ հանի... ա՛յ, արի մեջքիս վրա ընկի՝ տանեմ քեզ... Կացե՛ք, կացե՛ք, խանումներ, հրեն զոմշի սել ա գալիս. վրեն կնստացնեմ ու ջուրը անց կկենաք...

Ու երբ անտառն էինք մտնում այդ բոլորից հետո, կանգ առավ մի խնձորի ծառի տակ, ձեռքը տարածելով մեծ շրջան գծեց օդում ու ասաց ինձ.

— Հրես այ, սա ա Մելիքի զավթած հողը...

— Ադա, ո՛ւզուն ախմախ,— կանչեց նրա վրա Մելիքը բարկացած,— զա՛վթածս որն ա... էն ա իմ հողն ա, էլի՛. իրեք տարի ա, համ լութով վարում եմ, ակոսները քցում մեջը, հողը շուռ տալիս, համ դիպի էդ վերի (վայրի) խնձորտեքանց վրեն պատրուսնի եմ արել, համ էլ ա՛յ, էն ձորումն ընենց կաղնքի եմ կտրել—ցած քցել, որ ամեն մեկը 10—15 մանեթի տախտակ կհանի... Հողն իմն ա, որ կա. հասկա-

նո՞ւմ եք... Ինչուք հմի, էն ա շտրափ ա (տուգանք) որ տալիս եմ. Հրես մի քանի օրից հետո էլ կհաստատվի ինձ վրա կպրծնի...

Այդ բոլորն ասաց Մելիքը ձեռքի լայն շարժումներով, յափունջին ետ քաշած ու իր հողի մեջտեղը կանգ առած։

Ապա, երբ պրծել էր, մոտ եկավ ինձ, յափունջին հանեց, ծալեց, ուսի վրա նետեց ու ավելացրեց.

— Գնանք, պ. Երվանդ, տես թե ո՞նց հող ա... քեֆդ կգա... Կուզես տամ քեզ, մեջը ծառ քցի, վարի, ցանի... Մենակ 290 հատ խնձորի կա մեջը, ընե՞նց կաղնքի ցույց տամ, որ բերանդ բաց մնա... Դիփ կրտրատելու եմ, որ ջառմաները տամ... Բա ո՞նց, ինձ ջառմայով կվախացնե՞ն.. .ընչի պտի ջբիցս տամ. էն ա, կտամ մի երկու կաղնքի վեր կքցեմ, կքշտեմ, կծախեմ ու ջառման էլ կհանեմ, մեկ բան էլ ավել...

— Իսկ եթե վրա հասնեն ու կտրատած ծառերը տեսնե՞ն...

— Ո՞վ, աբեշչիկը[1]... Տո հրեն է՞. մեկել օրն ըստեղ մենք խորոված էինք ուտում ու գինի խմում, կողքներիս էլ մեկ կաղնի ծառ խփում էին ցած քցում... յանի աբեշչիկը որ կա, իմ նոքյա՞րը չի, քի՞չ ա ինձանից խեր տեսնում... հա՛մ կաշառք, հա՛մ քեֆ...

— Բայց եթե ինքը՝ անտառապա՞հը տեսնի։

— Լեսնիչի՞ն...[2] նա սկի գալի՞ս ա որ էս կողմը... Տեսնա էլ, ի՞նչ կանի... ես ի՞նչ գիտեմ ով ա կտրել. աբեշչիկը չի տեհել, չի իմանում... գողացել են...

Պարզ էր այժմ։ Մելիքը կատարելապես իր կողմն էր քաշել անտառի պահապանին և այս ու այն ձևով՝ հաջողվել էր պետական անտառի եզերող հողերից մոտ 4 դեսյատին գրավել։ Նախ, չուքով ակոս էր գծել նրա շուրջը, հետո՝ ցախով կարճ շրջափակ դրել, հետզհետե, հեռավոր, խուլ կողմերից սկսած՝ ծառերն էր կտրտել, խնձորենիները պատվաստել... Մի խոսքով՝ հողին տիրացել էր ու դատաստանական վճիռներից խուսափել էր տուգանքներով , ավելի շատ՝ կաշառքներով...

Մնում էր մի բան։ Դատի պիտի կանչեին, քննություն բանային։ Եվ ի՞նչ պիտի երևան գար։ Որ Մելիքը 3 տարի ամբողջ այդ հողը մշակել էր, ծառերը կտրտել, նոր ծառեր տնկել, հողին գործնականապես տիրացել։ Մի լավ տուգանք—և հողը պիտի մնար Մելիքին... անշո՞ւշտ, կաշառքների ուժով։

Մենակ խո Մելիքը չէ՞ր։ Ամբողջ Դուզանը այդպես էր ընդարձակում իր հողերը։ Ճար չկար։ Գյուղը մեծանում էր, բազմամարդ դառնում, իսկ 50 տարի առաջ տրված հողից ավելի չէին ուզում տալ նրան։

Մնում էր գողանալ։ Եվ գյուղացիք արդեն մոտ 60 դեսյատին հող խլած, այժմ մտնում էին անտառի կուրծքը, գրավում էին բացվածքները։

— Դա գողություն է,— բարոյախոսեցի ես։

Մելիքը ժպտաց, հրավիրեց մեզ նստել մի ծառի ընկած կոճղի վրա, հրամայեց Գրիշոյին, որ խանումների նստելու համար յափունջին գետին փռի, հետո պահ մի պապիրոս շինեց ու ասաց.

— Ըստի մտիկ տու՝ ինչ կասեմ, պ. Երվանդ... Դու գիտնական, կարդացող մարդ ես... Դու քո աստվածը՝ դրուստն ասա. էդ երկինքը, յա էդ արեգակը (որ չի էլ ըրևում հմի), յա էդ օդն ու ջուրը, հենց էդ փշերն էլ հետը՝որի՞նն ա...

— Ամենքինը։

— Շատ ապրես... դուրս ա գալիս, որ օդն ու արևը ոչ ոքինը չի... համ էլ՝ ամենքինն ա... աստծունն ա, աստված էլ ամենքի համար ա, նրա տվածն էլ ամենքի համար... ըտենց չի՞։

— Այդպես է։

— Աստված էլ տվել ա մարդկանց, որ վայելեն... Բաս որ հանկարծ դու վեր կենաս ու զոռով էդ ամենը խլես ինձնից, ասես, որ քոնն ա, դիփ էլ զափթես, որդոց-որդի սկի մեկին չթողաս որ մոտ գա... էն վախտը ես ի՞նչ պիտի անեմ...

— Այդ ի՞նչպես կարելի է. ո՛չ արևը կարելի է զափթել և ո՛չ էլ օդը։

— Ինչի՞ չի կարելի,— ծիծաղեց Մելիքը,— ա՛յ, ըսենց չորս պատ կքաշեմ, յա փոս կփորեմ, քեզ մեջը կդնեմ... ու ո՛չ արև կտենաս, ոչ էլ օդ կծծես... էլա՞վ...

— Եղավ, ճիշտ ես ասում... Հետո՞...

— Հետո էլ ի՞նչ... յանի որ զորթանց քեզ ըտենց անեմ, դու ի՞նչ կանես։

— Բայց դա անիրավություն կլինի. օդից ու արևից չի կարելի զրկել ոչ ոքի...

— Կարելի ա... Զոռի բան չի՞... գլխիդ խփելն ու փոսի մեջ գցելը մեկ կլինի... հա՛ դու լաց ըլի, յա գանգատ արա... զոռն իմն ա՝ ինչ ուզեմ կանեմ։ Ամա ասելիքս էն ա որ, թե էդ փոսում եղած վախտդ, բան ա, մեկ ծակ բաց արիր, որ օդ ու արև ստանաս մի քիչ, դու կըլես գո՞ղ...

— Խելոք չես խոսում, Մելի՛ք։

— Շատ էլ խելոք եմ խոսում... Դու ջուղա՛ք տու, ընչի՞դ ա... Հլա մեկ ջուղաք տու... Հը՞, որ ծածուկ, իմ քնած վախտը, յա մեկ

---

[1] Անտառի պահապան։

[2] Անտառապահ։

ընենց ֆանդով բանտիդ պատը ծակես, օդ ու արև զափթես, որ չմեռնես— դու կըլես գո՞ղ...

— Ո՛չ իհարկե. ամեն մարդու իրավունքն է ապրելը, հետևապես իրավունք՝ օդից ու արևից վայելելը։

Մելիքը, չնայելով որ ես ակնարկս դեմքին ուղղած՝ սպասում էի, ոչինչ չասաց. միայն մի քմծիծաղ տվավ և սկսեց պապիրոս ծխել։

Հետո, երբ մի բոպե լռություն էր տիրում, դարձավ կողքին ցցված Թևոսին ու ասաց.

— Ադա, Թևո՛ս, քա՞նի ջան օղլուշաղ ունես։

— Հինգ, Մելիք, հինգ ջան։

— Քանի՞ օրավար հող ունես։

— Սկի՛, քանի՞. երկու օրավար, մեկ էլ մի պստիկ, բռանս չափ բաղ, մեջը մի երկու բալի ծառ։

— Քա՞նի կոտ ցորեն ես կալսում։

— Գի՞ժ ցորեն։

— Հա՛, հենց գիժը...

— Տարին գիտա... շա՛տ քիչ...

— Բա ո՞նց ես ապրում, օղլուշաղդ կերակրում։

— Լոբի ենք ուտում, խոտ, բանջար... գիժ հացն էլ՝ էն ա մեզ սպանում ա... թե բանելու գործ էլավ, մի կերպ յոլա ենք գնում, քաղցա՛ծ, սովա՛ծ...

— Հիմա՛ր ես, ընդուր...— վերջացրեց խստությամբ Մելիքը և դարձավ ինձ նայեց։

Ահա այդ իսկ միջոցին էր, որ ցածից լսվեց անիվների դղրդյուն, և մի երկար կառք, մեջը լիք պաշտոնյաներ, ռուս կանայք, երեխաներ՝ եկավ ու սլանալով անցավ մեր կողքից։ Կանանց ու երեխաների քրքիջը, տղամարդկանց ուրախ ծիծաղներն ու երգերը սփռվեցին կառքի անցած ճանապարհի վրա և անլսելի դարձան միմիայն 5—10 բոպե հետո, երբ այդ բոլորը ծածկվեց-անհետացավ եղևնիների ետևում։

Մելիքը, որ կառքը տեսնելուն պես վեր էր թռել և գլխարկը հանել—գլխաբաց մնաց մինչև անհետանալը։ Հետո դարձավ ինձ, ծածկեց գլուխը, նստեց ու ասաց.

— Լեսնիչին էր... Քեֆի են եկել... Լավ ա, որ երեկ խաբար էին տվել. մեկ ոչխար ղրկել էի աբեշչիկին...

2

Չգիտեմ ինչո՞ւ, Թևոսն այնուհետև նկատելի կերպով փոխվեց։

Ո՛չ միայն դադարեցրեց եռանդը՝ մեզ օգնելու, այլև սկսեց քիչ խոսել, բոլորովին չժպտալ։ Սրախոսելու կամ կատակելու փորձերն իսկ մոռացավ։

Գլուխը կախ, կապույտ աչքերը երազուն՝ եթե չէր լսում մեզ, գնում էր այս-այն ծառը զննելու, այս-այն եղևնու տակ կծկվել-նստելու։

Գրիշոյի հետ մորթեցին գառը, քերթեցին, խորոված շինեցին։ Իսկ երբ կերել էր իր բաժինը, մի ումպով դատարկել մեծ բաժակով գինին, երբ ամենքս ուրախ խոսակցություն էինք սկսել, հանկարծ նկատեցի, որ Թևոսն անհետացել էր։

Ջորն իջանք, լեռնադաշտի բացվածքում թեյի նստեցինք, բայց Թևոսը երևան չեկավ։

— Էս ո՞ւր կորավ ուզուն-ախմախը,— նկատեց նաև Գրիշոն։

Երեկոյան դեմ հանկարծ ծառերի միջից երևաց «ուզուն-ախմախի» դեմքը։

Լուռ մոտ եկավ, օգնեց հավաքվելու, գրկեց երեխաներից մեկին և այդպես անխոս՝ հետևեց մեզ մինչև գյուղը։

Պահ մի մտքովս անցավ, թե գուցե մեկն ու մեկն իր կծու վարմունքով վիրավորել էր նրա ինքնասիրությունը։

Բայց կարծես մտածում էր։ Ո՛չ խոսակցության էր խառնվում, ո՛չ էլ մոտ գալիս։

Ասենք, Մելիքը սկի ո՛չ ոքի ժամանակ չէր տալիս խոսելու։

Պատմել էր սկսել նախ գյուղի մասին։ Գետից անց՝ ձեռնարկեց այս ու այն գյուղացուն բամբասել։ Ծաղրեց տանուտերին (քյոխվա), հայհոյեց ստարշինային (գյուղապետ)։

Իսկ երբ Քանդված-ժամի մոտով իջնում էինք, պրիստավի անիրավություններից այնքա՛ն դեպքեր պատմեց, որ մինչև տեր Սարգսի այգին հասնելներս՝ չէր պրծնում։

— Ախր դու չե՛ս իմանում ինչ անիծածն ա է՞է՞...— վերջացրեց նա կամուրջի մոտ։— Գեղերը ողջ՝ ձեռին եսիր ա շինել։ Աչ խփում ա, ձախ՝ խփում... վա՛յ ա, թե օրենքի անուն ես տվել։ Ո՞նց, օրե՞նք... Ա՛ռ քեզ օրենք... Մեկ, երկու, տո՛ւր՝ որ կտաս... Ղա՛մշին էլ ա մաշվել... Հրեն ստարշինան ընդրանից ա սարվել, որ ում հասնում ա՝ ղամշով քյա՛ւլին ա տալիս...

— Ցանի Մելի՛ք,— միջամտեց հանկարծ Գրիշոն,— էդ ընչի՞ ես ասում։ Էն ա որ դու էլ ստարշինա ըլեիր. դո՛ւ էլ կծեծեիր, էլի... Քի՞չ

ես ղամշիդ մաշել քյոխվա վախտդ... Մոռացած կլես դու, ամա դե ես չեմ մոռացել, որ քամակիցս վազելեն՝ չուր ժամի դուռը, անասնոց կապտացրիր ջանս... Ջուր հմի հրեն հլա ջանումս ա մրմուռը։

— Կա՛ց հլա,— կանգ առավ Մելիքը,— ո՞նց թե մոռացել եմ։ Սկի էլ չեմ մոռացել։ Բա թողեի, որ Խեչոյենց բաժնիցը կես արշին հողը խլեի՞ր... բա ըտենց գողությունը ղամշու արժանի՞ չէր։

— Դե տե՛ս, տե՛ս...— տաքացավ Գրիշոն ու նույնպես կանգ առավ,— հազիր որ ասես թե Խեչոյիցը ոսկու էիր կերել ու նրա թարաֆն էին բռնո՞մ... էն կես արշինը որ կա, մերն ա ըլել, Խեչոն էր մեզնից զափթել... Հրեն ա՛յ, ընչու հմի համ սեմիշկա[1] եմ տնկոտել ընտեղ, համ էլ լոբու ակոսնին տարել վրեն...

— Ադա է՛յ,— կանչեց նրա վրա Մելիքը և գլուխը դեմ տվավ,— յանի որ արիր, արածդ պակա՞ս գողություն դառավ... Ախմախ քյոխվա ես գտել, ընդուր էլ արել ես, թե ե՞ս կըլեի քյոխվեն...

— Քյոխվա իր է՛լի, ի՞նչ արիր...— ճչաց Գրիշոն,— ղամշուդ էլ զոռ տվիր, ո՛ւշունց էլ տվիր... է՛լ հետ խո հողը մերը մնա՞ց։

Ա՛յնքան նման էին այդ բոպեին իրար դեմ կռվի ելած և միմյանց վրա նետվելու պատրաստ աքաղաղների, որ մերոնք բոլորն էլ չկարողացան ծիծաղները զսպել։ Մելիքը՝ յափունջին ուսերին, գլուխը դեմ տված ու բարկացկոտ աչքերով. Գրիշոն՝ բոլորովին մոտ, պայուսակը ոտքերի տակ, ցցված, երկար վիզը առաջ տարած...

Ինձ թվում էր, որ եթե կռիվ սկսեին, ամենից առաջ գլուխներո՛վն էին միմյանց զարնելու։

Սակայն այդպես չեղավ։ Ձայները ամենասուր խաղերի հասցնելուց հետո հանկարծ Մելիքը ցնցեց յափունջին և ասաց.

— Գնա՛, գնա՛, շա՛շ... գնա փառք տու, որ ե՛ս չեմ քյոխվեն...

Ու ետ քաշվեց։

— Որ ըլեիր՝ շատ բան կանեիր ա՛յ...— ճչաց Գրիշոն։ Ու պայուսակն ուսին առավ։

Սկսել էինք կամուրջն անցնել. երեք գերաններից կազմած այդ մաշե կամուրջը։ Մելիքն ու Գրիշոն միմյանց ետևից ոտ կոխեցին նրա վրա։ Մելիքն ըստ երևույթին կամենում էր անշո՛ւշտ վերջին խոսքն ի՛ր վրա պահել. տաքացած էր։

Այդ էր պատճառը, որ կամուրջի մեջտեղում կանգ առավ նորից, դարձավ ետևից եկող Գրիշոյին և ձայնեց.

[1] Արևածաղիկ։

— Գող եք է՞, գո՞ղ... Տո դուք որ մարդ ըլեիք, քո հերը որ մարդ ըլեր, Մուկուչի արտիցը էն ա հինգ-վեց արշին կվարեի՞ք...

— Ըստի՛, ըստի հլա...— բարկացավ Գրիշոն,— ադա, Մուկուչի ադվա՞կատն ես դու, թե՞ քյոխվա... Ցա թե չէ՝ էդ հինգ-վեց արշինը որ վարել ենք, մեր հողի հետը խառնել, վրեն պակա՞ս ենք աշխատանք դրել... Հը՞... դո՞ւ էիր քարերը մեկ-մեկ հավաքել, աղբել, զվել, հողը շուռ տվել, գութանել, չթել... Հը՞... ասա՛ է՞...

— Տո ընչի՞ եք հավաքում, աղբում, յա վարում ուրիշի հողը։ Ձեզ ի՞նչ, թե էն մարդն իրա հողի կշտին հինգ-վեց արշին տեղ թողնում ա անվար ու ավարա... իրա՞նը չի, ինչ կուզի կանի, էլի՞...

— Բա դու ինչի՞ կազյոնների[1] հողը զավթել, չուքով ակոսնի ես տվել, մի երկո՛ւ խնձորբքի պատրուսել՝ ու հմի ասում ես թե էդ հողը քոնն ա, վրեն քրտինք ես թափել... Տերության հողը չի՞, քի՞զ ինչ թե նա՛ իրա հողը անվար, ավարա ա թողնում։ Իրա՞նը չի, ինչ կուզի՝ կանի էլի՞...

Լավ էր բռնել օձիքից։ Կամուրջի մյուս կողմը կանգնած սպասում էինք, թե Մելիքն ի՞նչ կպատասխաներ։

— Որ ասում եմ շա՞շ ես...— գոռաց նա,— քեզ ասո՛ւմ եմ հողը նրա՛նն ա, ով վարում ա, ցանում, ով վրեն քրտինք ա թափում... հասկացա՞ր...

Բայց երևի զգալով, որ ինքն իրեն հակասում էր, Մելիքը լռեց մեկ՛ն, ձեռքը թափ տվավ ու անցավ կամուրջը։

Թևոսը, որ կանգնել՝ ուշադրությամբ հետևում էր վեճին, երբ Մելիքը մոտեցավ իրեն, խզեց լռությունը և խուլ ձայնով ասաց.

— Յանի էդ ո՞նց, Մելի՛ք... Ում հողն ուզում ա ըլի, թե ցանես, վարես, յա թամզես, ակոսնի տաս... մի խոսքով քրտինք թափես վրեն՝ էն ա դառավ քո՞ւնը...

— Ո՞նց թե ումը ուզում ա ըլի...— շփոթվեց Մելիքը։

Ապա, գլուխը ցնցեց ու վճռականորեն ասաց.

— Հա՛ հենց... Հողը որ կա, աշխատավորինն ա, նրա վրեն քրտինք թափո՛ղինը... Ասենք ես ավելորդ հող ունեմ ու ո՛չ վարում եմ, ոչ բանեցնում, ա՛յ, ոնց որ կազյոնների էնքան հողերը, յա թե չէ՝ խանաղենց 400 դեսյատինը. տո՛, գեղացին ըստի մեռնում ա սովից, հող չունի, որ ապրի, մի կտոր հողի համար իրար գլուխ ա ճղում, իրար հորը գյոռիցը հանում... ընդի տենում ես կազյոնների հողերը խոտանոց են շինել, հլա խոտն էլ ա չեն հնձում, թե ի՞նչ ա լեսնիչին իրա օղլուշաղովը գա՝ քեֆ

[1] Գետական։

անի վրեն... Ցա թե չէ՝ խանաղովը... ըտե՛նց ա. հողը պիտի աշխատավորի՛նը ըլի, գյուղացո՛ւնը, վարող-ցա՛նողինը...

— Բա լա՛վ,— ընդհատեց ոգևորված Մելիքին Թևոսը,— որ բան ա, դու ըլիր խանաղովը, ես էլ գայի ու քու ավարա հողիցդ վարեի, վրեն քրտինքը թափեի. դու չէի՞ր գա գլխիս խփի ու ցանածս էլ ձեռքիցս խլի...

— Կարամ՝ պտի չթողամ, որ վարես-ցանես... Որ վարեցիր, ցանեցիր, շատ-շատ՝ պտի գամ փայս ուզեմ. էդ չի՞... Բա ո՞նց, հողն ընդի մնա ավարա, դու քաղցած, գնաս աշխատես, հլա գան ձեռքիցդ էլ առնե՞ն...

— Բա հո՞ղը,— համառեց Թևոսը,— ընդունց դենը յանի հողը ի՞մը կըլի, իմ սեփականո՞ւթյունը...

Երևի Մելիքը, բոլոր ասելիքներն արտահայտելիս, անշուշտ միտքն իր գրաված պետական հողի կողմն էր։ Թևոսի հարցերը համարում էր ա՛յդ հողին վերաբերյալ։ Մի վայրկյան լուռ մնաց, հետո մի քայլ արավ և վճռականորեն ասաց.

— Հա՛, ի՛մը կըլի... ըտե՛նց ա. ա՛յ, ոնց որ էն մեշի հողը հմի իմն ա...

— Թե թողան,— ասաց Գրիշոն չարախնդաց,— հլա կաց մեկ աբեշիկը, յա լենինչին փոխվի՞։

— Ո՞վ,— զայրացավ Մելիքը,— պլա՛ն եմ շինել տվել, պլա՛ն... Հրեն էգուց-մեկել օրը կհաստատեն ու պրծավ գնաց։

— Թե հաստատեն։

— Ջանները չի՞ դուրս գա...

Մյուս օրը գյուղական հրապարակ գնալով, Թևոսին չտեսա յուր սովորական տեղում։ Խեչոյենց խանութի դռան մոտ էր կանգնում միշտ։

— Էս ո՞ւր է Թևոսը,— հարցրեցի Խեչոյին։

— Ով է իմանում. հալբաթ բա՛նի ա։

Երկրորդ օրն էլ չերևաց Թևոսը։ Իսկ երբ կիրակին եկավ, հատկապես ուշադրությունս գրավեց ուզուն-ախմախի կատարյալ և արտասովոր բացակայությունը։

Գյուղացիների ուշադրությունն էլ հրավիրեց այդ։ Կիրակի և տոն օրերի զվարճության առարկաներից մեկն էր Թևոսը։ Ձեռք էին առնում ու զվարճանում։

— Էս ո՞ւր ա մեր ուզուն-ախմախը, տո՛...— կանչեց Խոլերան՝ զարմացած,— հիվանդ խո չի՞։

— Չէ՛,— ասաց ալյուրոտ Զաքարը,— ես տեսա. էս ա իրեք-չորս

օր ա բահը ուսին, մեշի կողմն ա գնում. երեկ էլ սելն էր լծել՝ գնում. հարցրի, ասավ խվարոսա[1] ա բերելու։

— Փի՛ե...— արեց երեցփոխը,— կիրակի օրո՞վ .. բալքի Շորագյալ[2] ա գնացել...

Այստեղ խոսակցությունը փոխվեց, և Թևոսը մոռացվեց։ Գործերի տաք ժամանակներն էին. աշնանացանը մոտենում էր, ամեն ոք իր ցավն ուներ։

Իսկ Թևոսը ո՛չ այդ օրը և ոչ էլ հետևյալ շաբաթ ամբողջ՝ գյուղում չերևաց։

Ոմանք ասում էին, թե անտառում փայտ է կտրում. շատերը՝ թե Շորագյալ գնացած կլինի կամ ցորեն և կամ պտուղներ բերելու, որ ծախի՝ մի բան աշխատի։

Մեկն էլ պատմեց ինձ, որ հենց ե՛րեկ գյուղն էր եկել Թևոսը, լուծը լծել եզներին ու գնացել էր դեպի անտառը։

Իսկ թե ինչո՞ւ—ոչ ոք չգիտեր։ Ոչ ոք էլ չէր հետաքրքրվում։ Աշնանացան էր. ո՞վ իմանա. գուցե Թևոսն իր հողը վարելու էր գնացել։

3

Հոփարցի կոչվող փոքրիկ գյուղի մոտ, Դուզանի հողերին կից չորսհինգ օրավարի չափ քարոտ մի տարածություն կար, որ ցանցառ թփիկներով միանում էր անտառին։

Արքունի սեփականություն էր այդ, սակայն գյուղացիք, որ մի առանձին հաճույք են զգում այդպիսի հողերից որևէ կերպ օգտվել, արժան իսկ չէին համարում այդ կտորին ձեռք տալ, որովհետև ծայրից ծայր քարերի մի հոսանք ծածկել էր նրան։ Տավարներն անգամ չէին մտնում այնտեղ։ Փուշ, տատասկ՝ որքան կուզեք։

Մի քանի օրից ի վեր, սակայն, հոփարցիներն ապշելով նկատում էին, որ մի ինչ-որ գյուղացի, սայլը լծած, անտառից ելնելով, գալիս կանգ էր առնում այդ հողի ծայրին, եզները բաց թողնում, իսկ ինքը, հողի վերին ծայրից սկսած, ձեռնարկում էր մի առ մի ժողովել քարերը, դեզ առ դեզ կիտել, փուշ ու տատասկ էլ պոկել ու եզերքներին շարել։

Սոսկալի, «անմիտ» աշխատանք էր սկսել «խենթ» գյուղացին։

---

1 Երկար ճյուղեր՝ ցանկապատ շինելու։

2 Շիրակ։

— Ադա՛, խո չի՞ գժվել էդ ուզուն-ախմախը,— ասում էին հեռվից անցնողները միմյանց,— էն ո՞ւր ա քարերը կիտում ըտենց։

Մտքերովն անգամ չէր անցնում, որ Թևոսը մտածում էր հողը մշակելի դարձնել, հերկել ու վարել։ Շատերն ենթադրում էին, թե անշուշտ ուզուն-ախմախը պետք ուներ քարի կամ փշերի։

Մի քանիսները սակայն կռահեցին ու ծիծաղում էին։ Նախ որ, պետական հող էր, երկրորդ՝ երբե՛ք չհերկած, խոպան, անբերրի։ Եվ հետո, մի՞թե հիրավի, Թևոսն ընդունակ պիտի լիներ հողը շուռ տալ գութանով, աղբել, ա՛յդքան փուշ ու տատասկը արմատախիլ անել, ճիլ գարձած շերտերը քրքրել և որևէ բանի գործածել։

Ու այլևս անուշադիր՝ անցնում էին։

Ճիշտն այն էր, որ Թևոսը վճռել էր մշակել այդ հողը։ Հո՛ղ էր հարկավոր նրան։ Գիտեր, որ համառ աշխատանքով կարող էր ամեն հողից օգտվել։ Եվ վերջապես ամեն տարի էլ խո չպե՞տք էր մուրացկանի նման, գիժ հացով թունավորել իրեն, ընտանիքին. սրա-նրա դուռն ընկնել, ձմեռը՝ սովել, գարնան՝ չնչին գնով այս-այն հարստահարողի մշակը դառնալ...

Ո՛չ, հարկ էր աշխատել, հող ունենալ։ Ի՞նչ է, Մելիքի չա՞փ էլ չկար։ Նրա նման հարուստ չէր, որ հաջողվեր անտառի կուրծքից կորզել, աբեշչիկին կաշառել, խլած հողի ծառերովը տուգանքները վճարել, պետության դեմ դատի ելնել...

Բայց ահա, գտել էր մի հող, որ լիովին անպետք, խոպան, ոչ իսկ հարոցի համար գործածելի, ո՛չ ոքի ուշադրությանը չէր արժանացել։

Համոզված էր, որ տերությունն անգամ չէր փորձի արգելք լինելու։ Ինչի՞ն է պետք. ո՛չ անտառ կար վրան, ո՛չ խոտ կարելի էր հնձել, ինքն էլ քարո՛տ, հավիտյանս-հավիտենից խոպան մնացած։

Եվ, վերջապես, մի՞թե իր քրտինքն ու աշխատանքը բավական չէր՝ հողին տեր դառնալու համար։ Հող, որ իբր անպետք՝ դեն էր ձգված և որը, իր աշխատանքով, նա պիտի դարձնի պետքական, արժեք ունեցող և հողի աշխատավորին կերակրող։

Այդպիսի մտածումներով էր, որ Թևոսը ձեռնարկել էր գործի։

Ծրագիրն այսպես էր. մաքրել հողը քարերից, դիպել կույտ-կույտ, ապլով դուրս տանել և ապագա պարսպի համար հավաքել. փշերն ու տատասկներն արմատախիլ՝ ցախի տեղ բանացնել, պարսպի վրա դնել՝ տավարների դեմն առնելու համար. հետո՝ գութանով շուռ տալ հողը ծայրից ծայր, կտրտել-հաշմել հողի միջի արմատները. ապա թողնել, որ ձյունը գար վրան, մի լավ փխրեր, իսկ գարնանը՝ գետնախնձոր տնկել։

Գետնախնձոր, այո՛։ Ահա միակ միջոց՝ հողը փափկացնելու։ Եվ երբ

անպետք տարածությունը այդ բոլորից հետո դառնար վարելահող՝ պետք էր աղբել նախ, ապա մեկ ցանել վարսակ, մյուս տարին՝ գարի և հուսկ ուրեմն, մի քանի տարուց հետո Թևոսը հույս ուներ տեր դառնալ ցորենի համար բավականաչափ լավ, մեծ և իր ընտանիքը կերակրող արտի։

Այդ ծրագիրը գտնում էր իրագործելի, մտածելով, որ ո՛չ տերությունը պիտի որևէ արգելք լիներ, և ո՛չ էլ ինքը պիտի աշխատանք խնայեր։

...Երբ լսեցի, թե ուզուն-ախմախը, հիրավի, ձեռնարկել է այդ անսովոր աշխատության, սաստիկ հետաքրքրվեցի տեսնել հողը, տեսնել հողի աշխատավորին— և պիտի ասել՝ հսկա աշխատավորին, որովհետև գիտեի, թե որպիսի՞ տաժանելի, տոկուն և մեծ աշխատանք էր հարկավոր՝ ցորեն ունենալու համար մի այդպիսի խոպան տարածությունից։

Աշունը գրեթե սկսել էր Դուզանում. ամպամած օրեր, անձրև մաղող շաբաթներ, խոնավ, մշուշոտ, ցեխ և ճնշող եղանակներ։

Այնուամենայնիվ հաջողվեց ինձ հասնել Թևոսի հողին։

Ուզուն-ախմախն արդեն կեսից ավելին մաքրել էր քարերից ու տատասկներից և ձեռնարկել՝ այժմ այդ կեսի հողը շուռ տալ գութանով։

— Բարև՛, Թևո՛ս։

— Այ աստծու բարին, պ. Երվանդ։

— Ա՛յ տղա,— կանչեցի նրան,— ինչո՞ւ չթողիր գարնանը հերկելու. հողը գոնե քիչ կկակղեր։

— Վնաս չունի, պ. Երվանդ,— գոչեց Թևոսը՝ ստանց մաճը ձեռքից թողնելու,— անձրևները կակղացրել են. գարնանն էլ կհերկեմ, կթամզեմ, հլա կփոցխեմ էլ ու կարտոֆիլ կցանեմ... աստծով լավ կըլի. փիս հող չի. կասես մեշի հող ըլի։

Ու շարունակեց հերկել։ Որդուն նստեցրել էր մի լծի վրա. վարձել էր չորս զույգ գոմեշներ, և գութանի տակ հողը արագությամբ շուռ գալով՝ խոր ակոսներ էր կազմում։

Հիրավի, անտառային հող էր երևում տակի շերտերում։ Ըստ երևույթին շատ առաջ այստեղ անտառ եղած պիտի լիներ։ Թևոսը չէր սխալվել և եթե շարունակեր այդպիսի անդուլ գործունեությունը, մյուս տարվա վերջերին իսկ կարող էր մի աշնանացան փորձել նրա վրա։

Մնում էր տեսնել այժմ, թե տերությունը՝ անտառապահն ու պահապանը ի՞նչպես կվերաբերվեին Թևոսի «հափշտակությանը»։

— Թևո՛ս,— ասացի ես,— բաս ի՞նչ կանես, եթե գան ու հողը ձեռքիցդ խլեն։

— Ո՞նց,— ասաց նա և մաճը ձեռքիցը բաց թողեց,— յանի ինչ պիտի խլեն. պակա՛ս աշխատանք եմ դնում վրեն... չոլ էր, քարո՛ս, փշո՛տ, դեն քցած հող... քրտինքովս կակղացրել եմ, էս ձեռներովս քարերը մեկ-մեկ հավաքել, փշերը դուրս տվել... բա ընչի՞, մագամ թալա՞ն ա էս աշխարհքը, որ գան ու աշխատանքս խլեն ձեռքիցս...

— Տերության հող է, քեզ խոտ իրավունք չե՞ն տվել մշակելու. մեկ էլ տեսար եկան, վզակոթիդ խփեցին ու...

— Ո՞վ, աբեշչի՞կը...— կանչեց Թևոսը,— չի՛ կարալ... էդքան զակոնը գիտենք...

Ապա ժպտաց, սրբեց քրտինքն ու եկավ մոտս։ Նստել էի քարակույտերից մեկի վրա։

— Չի՛ կարալ,— ավելացրեց նա անվստահորեն,— շատ-շա՛տ՝ գանգատ կտա, պրատակոլ կշինի, կկանչեն՝ հրե՛ն այ, էն կեսը ցույց կտամ... իրա՛նք էլ կտենան, որ անպետք, դեն քցած հող էր, կծիծաղեն աբեշչիկի վրա ու... բան չեն ասի։

Գլուխս երերցրի։ Միամի՛տ Թևոս։ Ըստ երևույթին երբե՛ք գործ չէր ունեցել այն անհամար չինովնիկների հետ, որոնք ծիծաղել գիտեն միմիայն իրենց զոհերի ճիչերի վրա, որոնք ո՛չ մի առիթ չեն փախցնում թևոսներին անգամ տանջելու, ճզմելու...

4

Ապահո՛վ էի, որ Թևոսի արածը գաղտնիք մնալ չէր կարող։ Անշուշտ, անտառի թե՛ պահապանը և թե օգնական հսկողները լսած պիտի լինեին։ Մի օր գյուղում, իմ ներկայությամբ իսկ, երբ Նիկոլը հարցրեց աբեշչիկին, թե գիտե՞ր նա արդյոք «ուզուն-ախմախի» արածը—պահակը ժպտաց ու ասաց.—գի՛տեմ։ Թող ա՛նի, ի՞նչ կա։ Տերությունը ուրախ կելի, որ իրա հողերը ըտենց մաքրեն ու պետքական դարձնեն։

Գյուղացիք միմյանց նայեցին, հասկացան ու քրքջացին։

Բայց, երևի, այդքան էլ անխիղճ չէր աբեշչիկի օգնական Ավագը, որ մի օր հրացանն ուսին՝ տնկվեց հանկարծ Թևոսի առաջ ու գոչեց.

— Ադա, էդ ի՞նչ բանի ես, ա՛յ ուզուն-ախմախ։

Թևոսը մաճի վրա ընկած, գոմեշները քշողների «հորովելին» էր ձայնակցում։ Թեև տեսավ Ավագին, բայց չլսեց ասածը։

— Բո, քեզ հետ չե՞մ... էդ ինչ բանի ես է՛է՛...

— Հո՛, հո՛...— կանգնեցրեց գութանը Թևոսը և դարձավ դեպի նու

— Ի՞նչ կա, Ավա՛գ, խե՛ր ըլի։

— Ադա՛,— ձայնեց օգնականը,— բա դու խոտ չե՞ս գժվել։ Էդ ո՞ւր ես կազյոնի հողը վարում, կասես քոնը ըլի։

— Յանի՛ ո՞նց...— ժպտաց շփոթված Թևոսը,— էս խոտ անպետք, դեն քցած հող ա։

— Ո՞նց թե դեն քցած,— ձայնն ավելի բարձրացրեց Ավագը,— տո քե՞զ ինչ, տերությանը չի՞, կուզի անպետք կթողա, կուզի՝ կվարի։

— Դե ես էլ վարում եմ է՛լի...

— Փիե՛...— բացականչեց Ավագը զարմացած,— էն խա՛չը, որ գժվել ես, ա՛դա։ Ընչի՞, բա չե՞ս իմանում, որ կազյոնի հողը թողալ չեն, որ վարես։

— Հլա կա՛ց, Ավագ,— ասաց Թևոսը, թողեց մաճը և պահապանի օգնականին մի կողմը կանչեց,— դու քո աստվածը, յանի էս հողը քարոտ, փշոտ, անպետք ու ավարա հող չէ՞ր։

— Հա՛, դրուստ ա, հետո՞։

— Հետո էլ էն՝ որ ես թամզել եմ, հողը շուռ եմ տալիս, գարնանն էլ կաղբեմ...

— Յա՛...— արեց Ավագը,— տո ո՞նց թե...

— Կա՛ց, կաց,— ընդհատեց Թևոսը,— դեն քցած հող էր. հարոցի անպետք, ծառ՝ սկի՛ չկա վրեն. տերությանը ո՛չ մի խեր չկար սրանից։ Դե՛, ես էլ ա՛նհոգ, քաղցա՛ծ... Ես վարում եմ, քրտինք թափում վրեն, որ բալքի մի քիչ հաց հանեմ... Բա դուք ինսաֆ չունե՞ք, օղլուշաղի տեր չե՞ք... Թե մե՛շիցը, Մելիքի պես գափթե, ի՝ վզիս տվեք առեք. ամա դե, ըհը ա՛յ, խոտ տեսնո՞ւմ ես, էս ձեռքե՛րովս եմ տակոիքը մեկ-մեկ հանել, քարերը իստակել, ճլոտ հողը քրքրել...

Տո փիե՛...— գոչեց տաքացած Ավագը,— ո՞վ քեզ կանչեց, որ անես. ո՞ւր էիր հողի վրեն քրտինք թափում։

— Արի ու չորթն ասա, Ավա՛գ, հողը ո՞ւմն ա։

— Տերությանը։

— Էտ ա, որ չես իմացել է՛... Հողը որ կա՝ աշխատավորինն ա, վրեն քրտինք թափողինը։ Հրեն ա՛յ, տերությունը աշխարքի չափ հող ունի անպետք՝ վեր քցած, ամա դե ես սկի՛ հող չունեմ. համ էլ ուզածս ի՞նչ ա որ, մեկ ըսենց քարոտ, անպետք կտոր...

Ավագը, իրավ է, հուզվեց, տեսնելով, թե որպիսի՛ հսկայական աշխատանք էր գործ դնում միամիտ «ուզուն-ախմախը»՝ մի կտոր հող ձեռք բերելու համար, սակայն գրեթե համոզված էր, որ «կազյոնի հողը»— լինե՛ր իսկ ամբողջ աշխարհը միասին վերցրած—կազյոնի էր, հետևապես՝ անմատչելի։

— Գժվել ես, է՛ն խաչը,— ասաց նա քիչ մեղմ ձայնով,— քանի շո՛ւտ ա, Թևոս, գոմեշները քաշի ու գնա տեղդ. իզուր կշարշարվես, հե-

տո գլխիդ կտան ու էդ թափած քրտինքդ էլ վրա կերթա... Հրեն ա՛յ, աբեշչիկն ուզում ա էգուց պրատակոլ սարքի վրեդ...

Ասաց ու գլուխը երերցնելով գնաց։

Թևոսը ժպտաց։ Մելիքի վրա էլ տարենը մի քանի անգամ պրատակոլ էին սարքում, բայց ամեն անգամ այդ «թունդ» գրվածքները մնում էին առանց հետևանքի, և Մելիքը շարունակում էր ձեռքին պահել, ծառերն ուզածին չափ կտրտել։

«Պրատակոլ սարքելը», անշուշտ, աբեշչիկի, լեսնիչու պաշտոնն էր, պիտի անեին։ Ո՞վ չի իմանում, թե քանի՞-քանի՞ դեզ թղթեր են գրվում ու դարսվում պաշտոնատներում։ Բայց ո՞վ է նրանց բանի տեղ դնողը։ Գրվեց ու պրծավ. շատ-շատ՝ մի քիչ տուգանք, մի երկու հայհոյանք, մի քանի մանեթ է՛լ կաշառք—և ամեն ինչ կանցներ։

Մյուս կողմից՝ չէ՞ որ նրան հաջողվել էր արդեն այնքա՛ն քրտինք թափել հողի վրա, այնքա՛ն աշխատանք։ Ուրեմն բնական էլ էր, որ հողի տերն ինքն էր։ Ուրիշ ի՞նչ կերպ. չէ՞ որ հողը աշխատավորինն է և միմիայն աշխատավորինը։ Պապենական այդպես էր լսել, Մե՛լիքն էլ հաստատեց այդ, ու ամեն գյուղացի էլ նույնը կպնդեր։

Ու երբ Ավագը գնաց, Թևոսը միայն մի քանի րոպե մնաց խոհուն ու տխուր։ Հետո թոթվեց իրեն, մաճը ձեռքն առավ և վերսկսեց «հորովելը»...

Այնուհետև մի ամբողջ շաբաթ Թևոսն այլևս ոչ Ավագի երեսը տեսավ, ո՛չ էլ աբեշչիկի։ Ենթադրում էր, որ ազատվել էր։

— Վախա՛ցրին,— մտածեց նա,— էնքան էլ խո քարասիրտ չեն. հալբաթ լեսնիչուն ասել են, եկել-տեսել, որ վարածս հողը անպետք, դեն քցած, վատ էր ու ասել են. «Թող մնա Թևոսին, մեղք ա, օղլուշաղի տեր, հողը քիչ... Համ էլ մարդը գետի չափ, ախր, քրտինք ա թափել վրեն... թող վայելի, խե՛ղճ ա»...

Եվ ձեռնարկել էր հողի մյուս մասն էլ մաքրելու, թեև արդեն ցուրտը սկսել էր, և ձմեռը վրա էր հասնում։ Մտածում էր գոնե փշերից ու ստասկներից ազատել հողը այդ տարի, իսկ գարնանը մի անգամ ևս շուտ կտար փխրացած հողը, գետնախնձոր կցաներ, ապա կաղբեր, է՛լի կվարեր... մի խոսքով, մի լավ արտ կշիներ։

Բավական օրեր անցան դրանից հետո։ Թևոսին այլևս չէի տեսնում։ Պատրաստվում էի գյուղից հեռանալ և մոռացել էի նրան։

Գնալուցս երկու օր առաջ, մի երեկո, երբ տուն էի մտնում, պատշգամբի մոտ կծկված տեսա մի փոքրիկ աղջիկ, որ երևի ներս էր մտնել ուզում, բայց չէր վստահանում։

— Ի՞նչ կա, ախչի,— հարցրի ես,— ո՞ւմն ես ուզում։

— Քու խանումին. հի՛վանդ կա։

— Ո՞վ է հիվանդը։

— Հերս... դողա՛ցնում ա։

— Հերդ ո՞վ է։

— Թևոսը։

Հիվա՞նդ։ Ի՞նչ էր եղել արդյոք այդ երկաթե մարդուն, որ մի ամսի՛ց ի վեր, տաժանելի աշխատքով՝ ուզում էր հողի տեր դառնալ։

Կինս՝ մանկաբարձուհի, գիտե նաև օգնել թեթև հիվանդներին. գիտե գոնե քիչ ամոքել նրանց ցավերը։

Դեղատուն էլ ունեինք։ Շտապով, անհրաժեշտ դեղեր վերցրինք և հետևեցինք փոքրիկ աղջկան։

Երբե՛ք չեմ մոռանա այն հուզիչ պատկերը, որին ներկա գտնվեցի փոքրիկ, ցած, խոնավ և մութ խրճիթի մեջ։

Անկողնի վրա մեկնվել էր գունատ և նիհարած Թևոսը՝ խամրած աչքերով։ Կինը արտասվալի՝ կծկվել-նստել էր կողքին. երեխաները վերահաս ցրտից, մերկությունից և վշտից քար կտրած՝ մեղ էին նայում անկյուններից։

Ու երբ խնամում էինք թշվառին, պատմե՛ց մեզ նա իր մարտիրոսության ահավոր պատմությունը։

Խլել էին ձեռքից հողը։ Թողել էին, որ մաքրեր, հերկեր, թողել, որ անպետք հողը իր քրտինքով փափկեցներ, համառ կամքով՝ բերրիության հասցներ և ապա հանկարծ մի օր վճիռը տվել, անտառի պահապանները ուղարկել, ծեծել էին նրան, հողիցը դուրս շպրտել և թողել, որ լարդված, ընկճված՝ նստեր արտի կողքին ու լար. և լա՛ր կսկծալից, աղիողորմ ու հուսահատ...

Ի՞նչ կարող էինք անել այժմ վշտից և հուսաբեկությունից անկողին ընկած թշվառին, եթե՝ ոչ՝ միմիայն վշտանալ նրա հետ, հուզվել և զայրանալ թե՛ Թևոսի միամտության և թե՛ այս աշխարհի խիստ անիրավ, չափազա՛նց անարդար անհավասարության և ընկերական զզվելի՞ օրենքների վրա...

Հողի աշխատավորը կարծել էր, թե քրտինքն ու աշխատությունը նո՛ւնքան արժեք ունեին հողի տեր դառնալու համար, որքան բռնի ուժը կամ լրբությունը։ Սակայն նրան շա՛տ ազդու կերպով հասկացրել էին, որ դեռ չեն եկել այդ օրերը և որ հողի տերը նա է, ով ուժ ունի, ունի զարնո՛ղ ձեռք, կաշառելու, ջնջելու վարպետություն, ունի մանավանդ բռունցք, կոպի՛տ, վայրենի՛, գազանային բռունցք...

1905

ԶՈՐԱԳԼԽԻՆ

1

Գյուղաքաղաքի մեջ խճուղին, ինչպես միշտ, այդ օր էլ քարուքանդ էր ու ցեխոտ։ Սակայն, երբ մտնում էր նա դաշտերի կուրծքը, որպես սպիտակ լայն ժապավեն, ձգվում էր մինչև հորիզոնը և այնտեղից ոլորապտույտ մագլցում՝ հասնելու համար լեռնաշղթայի ամենաբարձր գագաթին։

Խոխոջուն վտակի կողքին բանակած պահակագունդը երաժշտությամբ էր զբաղված. շեփորների անախորժ ու խառնիխուռն ձայնը՝ միացած սրնգի սուր ելևէջներին, ստիպեց մեզ արագացնելու սայլի գնացքը։ Իսկ երբ անցել էինք ավելի հեռու, Գևորգը կպավ սայլապանի թևին ու ասաց.

— Հանդա՛ռ քշիր...

Հրճվում էին հյուրերս մեր առջև պարզվող շքեղ տեսարանով։ Չէինք խոսում, այլ լի թոքերով շնչում էինք թարմ օդը և անհամար ծաղիկներից բուրմունքը։

Աջ կողմից արտերն իրենց ծայրերով հասնում էին մինչև լեռների ստորոտը, ձախ կողմից՝ գնում էին նրանք ոստնելու Քարկողի անդնդախոր ձորի վրայով և գոգաձև շարունակում կանաչ սփռել մինչև հեռավոր լերկ ու ձյունագագաթ շղթաները։

Երփներանգ, անհամար ծաղիկներ բծավորում էին հարթավայրը. կապույտ զանգակիկների խոնարհած գլուխներ շերտեր էին գծում, մանր-դեղին փնջավոր ծաղիկներ խառնված մարգի կանաչին՝ կապույտ ստվեր տարածում, իսկ հեռուն՝ կարմրին էին տալիս խիտ պսակներով վիշապուկները, պսպղում արյան մեծ բծերի նման։

Դաշտն ամբողջ ծփում-օրորվում էր մեղմ քամու տակ՝ նազելի և գողտրիկ։ Կարծես կանաչ կոհակներ լինեին, որ պարբերաբար ելնում-իջնում էին՝ մե՛կ տերևների փայլուն, մե՛կ անփայլ երեսներն ի ցույց հանելով։

Անցնում էինք այդ բոլորի միջով. սայլապանը գլխարկը ծռել՝ երդ էր մռմռում քթի տակից։ Հակոբը շնչում էր, շառաչյունո՛վ շնչում, Գևորգը գլխարկը հանել՝ ժպտում էր բնությանը, ժպտում զեփյուռին...

Արև չկար. երեսն ամպերով ծածկված, ձյունոտ լեռներից սահող հեզիկ քամուն էր թողել լեռնադաշտը։ Արտերի դուրայի շշուկը, թռչունների հեռավոր ճռվողյունը, ջրերի մե՛կ-մե՛կ լսվող կարկաչը միմյանց ձայնառու, միմյանց լրացնելով՝ ներդաշնակվում էին այնքա՛ն հաճոյա-

ից, որքան և սիրուն էր շրջապատող լեռն ու դաշտը, ձորն ու բլուրները։

Բայց հազիվ գորշ խորքի վրա սկսել էր գծվել հայկական մի հին ամրոցի տխուր ավերակների կույտը, հազիվ ամեն աղմուկից հեռու՝ միայն բնության ձայնն էր մեր ականջին հասնում, որ հանկարծ մեր ետևից լսվեց նախ խուլ, ապա բարձր շառաչ, որ գնալով մեծանում էր ու գալիս-մոտենում։

Սայլ էր, ահագին դղրդոցով թավալող մի մեծ սայլ (դրոդ), որ չորս կատաղի ձիերով սրարշավ գալիս էր՝ ավազի, խճի և քարերի շատրվան ցայտեցնելով շուրջը։

Լցված էր նա բերնեբերան՝ գյուղացիներով, որոնք կոկորդ պատռելու չափ գոռում էին, աղմկում, ձեռքեր ու ոտներ ցնցում օդի մեջ, ելնում-նստում էին, միմյանց վրա ընկնում...

— Ի՞նչ է այն,— գոչեց Հակոբը զարմացած։

— Մեր գյուղացիք են,— բացատրեց սայլապանը, որ կանգնել ետ էր նայում,— բաս է՛ն ա, պրծած կըլեն, որ ըտենց ուրախությունով են տուն գնում։

— Դուզանցի՞ք են։

— Հրամանք ես. ծաղկասարեցոց հետ սպոր[1] կար... կգիտենաք. է՛սօր էր բազբորը...[2] լավ կոնծել են. բաս հա՛ղթած կըլեն...

Մինչ այդ, մոտեցող սայլի մեջ սկսել էի նկատել հիրավի մեր գյուղից ծանոթ դեմքեր։ Նախ երկարավիզ Գևոյին տեսա, հետո Գրիշոյենց Մուկուչին. ապա Խոլերայի դեմքը երևան եկավ, կամաց-կամաց՝ նորընտիր քյոխվեն, երեցփոխը։ Հաբեթ աղայի որդին՝ «կչկչան Նիկոլն» էլ կար մինչև իսկ։

Սայլը վարում էր կաղլիկ Ջավադը, որ անխնա մտրակում էր ձիերին, ոտները ցցում, գոռում էր և քիչ էր մնում գետին գլորեր կողքին նստած ալյուրոտ Զաքեին։

Ձիերը սրընթաց, կատաղի վազքով ցնցում էին մեծ, խարխուլ, արկղի նմանող սայլը, որ ոստնում էր, այս-այն կողմ թեքվում և քարի մանր խիճերով, սլաքների նման, շամփրում աջ ու ձախ։

Նկատեցին մեզ և ճանաչեցին երևի։ Կարմրամազ Սմբատը, բանից երևաց, որ մեջն էր, կառքի խորքում կուչ եկած և վիզը փորը ձգած։ Ահա և վիզն ածիլած պայտար Խեչոն. նստել էր սայլի կողի վրա և ձեռքով ինչ-որ շարժումներ էր գծում օդի մեջ։

---

1 Վեճ։

2 Դատավարություն։

Գոռում էին, բայց կառքի դղրդոցը չէր թողնում մի բառ իսկ հասկանալու։

— Հա՜յ-հա՜յ...— լսվում էր միայն։

— Գժվե՞լ են, տո՛,— գոչեց Հակոբը,— ադա՛, մեր ղութին քիչ դենը տար, թե չէ շուռ կտան։

— Հա՜յ-հա՜յ, եկանք հա՜...

Ու Ջավադը, երբ մոտենում էին, բոլորովին ետ պառկելով՝ քաշեց սանձերը, ճգնեց կառքը կանգնեցնել։

— Էդ ո՞ւր բարին...— լսվեց Խեչոյի ձայնը։

— Տպոռ՜ւ... ա՜յ ես ձեր... տպռու տո է՜է՜... փիե՜, էս շան ապրանքները կտա՞ղել են... տպռ՜ւռ՜ւ...

Կանգնեցրին կառքը ճիշտ մերինի կողքին։

— Բարո՜վ, բարո՜վ...— ձայնեցին ամեն կողմից զվարթությամբ,— համեցեք մե՛զ հետ... նստեք մեզ հետ...

Արբած էին գրեթե բոլորը, բացի Խոլերայից և Երեցփոխից։ Ու լա՜վ հարբած։

— Տեսնո՞ւմ եք,— հրճվեց Գևորգը,— կոնծել են սմենքը։

— Էդ ի՞նչ խաբար է խմբով,— հարցրի ես,— ի՞նչ կա, որ բազմությամբ, այսպես գործի օր գյուղաքաղաք էիք եկել։

— Գործ ունեինք, գո՜րծ... ռազրո՜ռ, միռավոյ պասրեդնի՜կ[1]...— լսվեցին խառնիխուռն ձայներ։

Ամենքն էին խոսում։ Եվ խոսքերի հետ խառն՝ ծիծաղներ, աղաղակներ։

— Նստե՛ք, եկեք մե՛զ հետ նստեք...

— Ադա՛ դե տեղ ո՞ւրդիան ա, որ կանչում եք...

— Տո իրանք հրեն պակա՞ս սայլ ունեն, գիժ խո չե՞ն, որ ըստեղ գան...

— Ընչի՞, թող մե՛զ հետ նստեն...

Բայց մենք տեղներիցս չշարժվեցինք։

— Ձեզ հետ կգանք, դուք քշեք...

— Հը՛, ըտենց լավ ա, պարոննե՛ր,— խորհուրդ տվավ երեցփոխը,— հրեն ձորագլխին ցած կիջնենք, ընտեղ կխոսանք...

— Քշի՛ր տո, Ջավադ,— ճչաց Խոլերան։

Ու երբ կաղլիկը մտրակում էր, աչքս ընկավ սայլի խորքին։ Զարմացած նկատեցի մի ինչ-որ սև երկար բան, որ անշարժ փռված էր այնտեղ. քիչ էր մնում գյուղացիք իրենց ոտները նրան կոթնեցնեին։

— Դա՞ ինչ է,— հարց տվի և գլխով ակնարկեցի։

— Սո՛ւդիան ա, սուդիա՜ն[1]...— ոռնաց Խեչոն։

Կառքը շարժվել էր տեղից։

— Դա ի՞նչ է եղել,— հաջողվեց ինձ հարցնել նշաններով, երբ սայլը դղրդյունով սլանում էր։

Այս անգամ Ջավադն էր, որ քրքիջը բերնին, իր զիլ ձայնով հասկացրեց ինձ.

— Հա՜րբած ա, հարբա՜ծ։

Ու անցան։ Գինու շոգիների ազդեցության տակ՝ Ջավադն ավելի կատաղորեն մտրակեց ձիերին. ահագին ցնցումներով և խճային շաղրվանի մեջ՝ կառքը սլացավ առաջ։

Ստիպված էինք բավական հեռու բռնել մեզ այդ սանձարձակ արշավանքից։ Ետ մնացած՝ ամեն րոպե սպասում էինք, թե ահա սայլի միջից դուրս պիտի ոստնեին ջախջախվելու՝ վիզն ածիլած Խեչոն և կկլան Նիկոլը, որոնք թե՛ միմյանց և թե՛ կողերին էին կառչել։

Բայց Ջավադը վարպետ քշող է. չնայելով իր իսկ ցնցումներին, սուր աղաղակներին, նրան հաջողվեց գնալ մինչև ձորաբերանը, ուր նա դուրս ելավ խճուղուց, կատարելապես մեջքի վրա պառկելու չափ ետ կռացած քաշեց սանձերը. ճչաց, կանչեց և, մի կիսաշրջան գործել տալուց հետո, ձիերին կանգնեցրեց ձորի ամենամոտ ափի կանաչ հարթության վրա։

Մինչև մեր հասնելը, բոլորը դուրս էին եկել սայլից, նստել նրա կողքին, գինու մի փոքրիկ տիկ, օղու մի մեծ շիշ դրել կողքերին, հացն ու պանիրը պարզել՝ սկսել էին քեֆը։

Սուդիային թողել էին սայլի մեջ՝ երեսի վրա փռված ու խուկալով։

Հրավիրեցին մեզ։ Հետաքրքիր էր իմանալ, թե ի՞նչ անելու էին գնացել իրենց քյոխվայի, քեհյաների և սուդիայի հետ, թե ինչո՞ւ այդքան լավ տրամադրված՝ այդտեղ էլ նստում էին քեֆը շարունակելու։

2

Ասենք, ձորաբերանի այդ հարթության վրա անհնար էր չնստել, նո՛ւյնիսկ եթե խմելու և քեֆի համար չլիներ։

Լեռնադաշտի ամենասքանչելի մի անկյունն էր՝ իր վայրենի տեսարանների հեռանկարով։

---

[1] Հաշտարար դատավորի փոխանորդ գյուղաքաղաքում. վարում է դատական գործերը։

[1] Գյուղական դատավոր, որ լինում է ընտրությամբ։

Ամեն գյուղաքաղաք գնալիս անշուշտ իջնում էի այդտեղ և ժամերով կանգ առնում հսկա ձորի կատարին, լիզված ապառաժների, հոսանուտ ժայռերի բարձրության այդ կետին՝ դիտելու համար ոտքերիս տակ բացվող կրքոտ պատկերը։

Դեպի անդունդը պարզվող ապառաժի տակից, ուղիղ ոտքերիդ առաջ՝ իջնում են կնճռոտ ու դաժան լեռների շարքեր, որոնք կոթնած միապաղաղ ժայռերի, գոգավոր կողերով գնո՞ւմ են ու գնում դեպի խորքը, սեղմելու համար փրփուրը բերնին արշավող գետակի կողերը։ Յուրաքանչյուր ճեղք, յուրաքանչյուր կնճիռ, անդունդի եզրից սկսած՝ խռիվ մազերի նման դուրս է ցցում իր խորշերից բազմատեսակ ծաղիկներ ու թփեր։ Նուրբ, աննման փափկությամբ, գիշերության մեջ ուռճացած բույսերը գեզ առ դեզ կախվել են կամար կապած ժայռերից դեպի վար. դեղնագույն ծաղիկների փնջերը ոլորտուն, բաղեղաձև գրկախառնված սպիտակ վարդենիների՝ սահում-շրջանակավորում են լպրծուն ապառաժները։ Ավելի՛ վար, ստվերի մեջ գտնվող ճախնուտը գրավված է մեծահասակ շուշաններով. հոսանուտ խճի երեսին փետրային նրբությամբ և թավշային փայլով՝ կանաչ սավան են կապել սպիտակ բծերով զարդարուն մանրիկ ծաղիկներ։ Եվ հուսկ ուրեմն, այնտեղ՝ վարը, շա՛տ խոր, ջրի հետ անմիջապես խաղացող ափերի երկարությամբ, որպես լայն երիզ՝ միապաղաղ հավասարությամբ մանրէական մամուռներ թափոր են կազմել՝ բաշը թոթվելով արշավող գետակի երկու կողերին...

Եվ դիմացը, գետափից վեր, միմյանց վրա գլորված ապառաժների թիկն տվել՝ վիթխարի զանգվածով ցցվում է լեզվակաձև, միածույլ, խորշոմալից լեռը, որ գլուխ պտտեցնող գահավանդներ է կազմում երեք կողմերից և գագաթին ունի հնամյա մամռոտ ավերակների մի տխուր կույտ...

Այդտեղ էր, որ դուզանցիք նստեցին քեֆի։

Մեղմ եղանակը, մի քանի քայլ հեռվից դեպի անդունդն իջնող ջրվեժի կարկաչը, դալար կանաչությունն ու բավական քանակությամբ խմած գինին տրամադրել էր Ջավադին երգելու։

Լա՛վ ձայն ուներ անպիտանը. զորեղ, կրծքային հուժկու տենոր, որ թնդացնում էր շրջակայքը։

Վայրենի բնության նման նրա ձայնն էլ վայրենի, անմշակ թեև, բայց ուներ քաղցր շեշտ և հաջող ճկունություն։

Ու երգում էր նա կանգնած՝ գեմքը Ռորակին.

Նպատակիս հասնեմ միայն,
Թող դիս հանեն կախաքան...

— Գինի լցրեք տո՛...— ձայնեց նա՝ երբ վերջացրել էր և կարմրած՝ մեր կողմը դարձել,— զոնաղների համար գի՛նի լցրեք...

— Ա՛յ ձայնդ անսպառ, ա՛յ դու շատ ապրես, շա՛ն տղա,— ասվեց նրան Խոլերան,— լավ ձեն ունես, ես ու իմ աստվածը, ամա փո՛ւչ ոպա ես, փո՛ւչ...

— Լա՛վ, ամի՛, ձենդ կտրի, թե աստվածդ կսիրես. ի՞նչ վախտն ա Ջավադին գովալը...

— Սուդիային ինչո՞ւ այնտեղ թողիք,— հարցրեց Գևորգը։

— Բա ի՞նչ անեինք,— ծիծաղեց երեցփոխը,— տնաշենն էնքան կոնծել ա, որ թոփ էլ տրաքացնես ականջի մոտը՝ չի զարթնի...

— Թոփից չի՛ զարթնի,— սրախոսեց Խեչոն,— ամա, որ մեկ բյուրակա արաղ մոտեցնես քթին՝ վեր կթռնի...

— Դորթ, տո՛ տղե՛րք,— մեջ մտավ քյոխվեն,— սա սկի՛ լավ բան չի, որ անում ենք մենք։ Եկեք սուդին հանենք սեղիցը, գլուխը մեկ ցածի սառը ջրով լվանք... թե չէ՝ ախր էս հալովը մենք ո՞նց գեղը տանենք նրան. բա ամո՞թ չի, հը՞...

— Տո ընչի՞ս ամոթն ա,— քրքջաց կարմրամաղ Սմբատը,— յանի առաջին անգա՞մն ա...

— Չէ՛, քյոխվեն դրո՛ւստ ա ասում, տղե՛րք,— խոսեց Խոլերան,— մեր սուդիեն ա, ամո՛թ ա... Հանե՛ք, մի քիչ երես-մերեսը լվացեք, բալթի ուշքի գա։

— Հա՛, դրուստ ա,— ավելացրին մի քանիսը և ոտքի ելան,— թող տանենք ցած՝ քիչ ջրի տակին լվանանք գլուխը։

— Ադա, տեղներդ վե՛ր ընկեք է՛է...— ճչաց Նիկոլը,— ընչի՞, գինի չա արաղ շա՞տ ունենք, որ նա էլ օյաղվի[1] ու գա մեր կողքին նստի։

Սակայն ոտքի ելնող գյուղացիք լսեցին նրան։ Մոտ գնացին սայլին, երկու հոգի ելան, սուդիային քաշքշելով իջեցրին, ալյուրոտ Ջաքարը բռնեց խոտերի վրա դրավ և երեսը դարձրեց։

— Տաքե՛ք, տարե՛ք, ջրի մոտ տարեք,— կանչեց Խոլերան,— ա՛ Մուկուչ, բա էդքան խամե՞լ կելի, որ դու ես խմում... հլա վոլոստնի սոդիա[2] էլ ես...

— Սո՛ւդիա, սո՛ւդիա...— ցնցեց դատավորին Ջաքարը, ջանաց ուշքի բերել և կիսաձին բարձրացնելով, գլուխն իր ծնկներին կոթնեցրեց։

— Հը՞ը՞մ...— լսվեց դատավորի բերնից։

— Ուշքի՛ եկ, քո՛ տունը շինվի, հերիք չի՞ քնես...

---

[1] Ուշքի գա։
[2] Գյուղերի մի որոշ շրջանի դատավոր։

— Ադա՞ ուր եք կանգնել, վեր կալեք ցած տարեք է՛է՛...

— Հը՛ըմ... ղզ՛ զ՛զ՛... փս՛ս՛ս՛,— անում է սուդիանն։

Մի գյուղացի վճռական կերպով պպզեց նրա առաջ, շալակեց, բարձրացավ և ընդհանուր ծիծաղների մեջ՝ սկսեց ձորն իջեցնել արբածին։

— Մուղայիթ[1] կացեք տո՛...— ձայնեց Նիկոլը,— սուդին քոլ չտաք ձորը, թե չէ էլ կաշի քերթող չենք ունենալ...

Գևորգն ու Հակոբը զարմացած՝ Նիկոլին նայեցին։

— Հա բա՛ս...— ժպտաց սա,— գեղացին սկի կարա՞ յոլա գնալ առանց կաշի քերթողի... մորթված ոչխարին էլ վարպետ կաշի քերթող պտի՞, յա չէ...

— Ե՛ս էլ գնամ,— ոտքի ելավ Խեչոն այդ միջոցին,— բալքի արյուն առնելու բան ըլի... Քյո՛խվա, էդ դանակդ մի դեսը քցի...

Եվ այսպես էր ահա, որ երեք-չորս գյուղացիներ, դանակը ձեռքին բռնած Խեչոյի հետ սուդիային ձորն իջեցրին և շուտով մեր աչքերից անհետացան։

Քիչ ժամանակ էլ նրանց ծիծաղների և աղմուկների ձայնը հասնում էր մեր ականջին՝ խորքից, հետո ամեն ինչ լռեց։

— Ամա՞ ջրի կկապեն սուդյի գլուխը հա՞...— արեց Ջավադը։

— Տեսնո՞ւմ եք,— դարձավ մեզ երեցփոխը,— է՛ս էլ մեր սուդի՛ան...

— Ղո՛րթ ա,— խոսեց Խոլերան,— խմող ա, ամա լավ սուդիա ա... խելո՛ք, վարվո՛ղ...

Ու սկսեցին խմել այնուհետև։ Սպասում էի, որ Նիկոլը որևէ բան ասեր, բայց նա լուռ՝ օղի էր լցնում և չէր նայում մեզ։

— Խելո՛ք...— արեց երեցփոխը,— դրուստ ա. որ խելոք չըլի, ոսկոռների ծերերը ո՞նց կարա պահի...

— Ի՞նչ ոսկոռներ,— հարցրի ես։

— Ընենց, էլի՛...— մռմռաց Ջավադը,— ոսկոռներ...

— Լավ դե՛,— կանչեց Սմբատը,— էդ գինուցը դես տվեք պարոնների համար... էն ո՞վ ա, որ ոսկոռը չի սիրում... թե խելոք ա՝ ջոնդերը[2] կծածկի, որ մի՛շտ էլ ունենա... Ադա Ջավա՛դ, ձենդ էլի մեկ գլուխդ քցի, բալքի թե քեֆը նորից չաղանա...

Ջավադը հիրավի «ձենը գլուխը քցեց», և երբ քիչ հետո ձորն իջնող գյուղացիներից երեքն էլ եկան մեզ միանալու, բաժակները երբեք դատարկ չէին մնում։

---

[1] Զգույշ կացեք, հոգ տարեք։

[2] Ծայրերը։

Կեսօրը բավական անցել էր. գյուղացոց տրամադրությունը հետզհետե լավանում էր. մոռանում էին սուդիային, իսկ խմած օղին ու գինին ա՛յն աստիճան ազդել էր, որ երգում էին, կանչում, գոռգոռալով վիճում։

Խոսակցությունը դառնում էր ինչ-որ հողաբաժինների վրա, որոնց մասին նրանք վեճի մեջ էին ծաղկասարեցոց հետ և որի համար էլ խմբովին գյուղաքաղաք էին գնացել։

Բանից դուրս էր գալիս, որ դուզանցիք վաղուց ի վեր մտածում էին անտառների վերևում ընկած ընդարձակ արոտատեղիները ազատել ծաղկասարեցոց ոտնձգություններից. անդադար, ամեն տարի կռիվ էին տալիս նրանց հետ, ծեծում էին, ծեծ էին ուտում, աղմկում և վերջ ի վերջո, այս տարի վեճը դատաստանի էին ձգել։

— Շա՛ն որդիներ...— կանչում էր Խոլերան,— էս ա 30 տարի, քանի միտս ա, էդ չիմանլրդը[1] մե՛րն ա ըլել, մե՛ր տավարն ա ընտեղ արածել. հմի կանգնել էին, թե բա՝ «մե՛րն ա, դուք գո՛ղ եք, ավազակնե՛ր եք»...

—Տո գո՛ղն էլ իրանք են ու ավազակներն էլ,— հչաց քյոխվեն,— բա ինչի՞, ես մեռե՞լ եմ, որ ծաղկասարցիք մեր չիմանլրդը խլեն ու հլա մեր չոբաններին էլ ծեծեն... Ա՛յ, ըտենց կանեմ հա՛... Տեսա՞ք, ա՛ խալխը, խո տեսաք, թե ո՞նց պրիստավի մոտ նրանց բերանը փակեցի...

— Ադա՛,— ձայնեց Ջաքարը,— բա էն մածուն ուտող Վարդոն էն ի՞նչ էր ասում... Ո՞նց թե յանի մեր պլանը[2] սո՛ւտ ա, հետո ա շինած, թե լեսնիչի[3] օգնականը կաշառք ա կերել...

— Տո կարա՞ն, թող իրա՛նք էլ ուտացնեն... Ընչի՞, կաշառք յանի փի՞ս բան ա... Հրե՛ն, հմի թող գան ու տենանք ո՞նց են զավթում հողերը...

— Տո լավ ենք արել, լա՛վ...— գոռաց Ջավադը,— հոգիներն էլ հանել ենք. հլա մեկ տես՝ ես ո՞նց եմ մի քեֆ սարքելու լեսնիչի օգնականի համար....

Շատ հետաքրքրվում էին հյուրերս՝ իմանալու այդ բոլոր քաոսի միջից ճշմարտությունը։

Շատ էլ մաքուր չէր երևում գործը։ Ըստ երևույթին մեր գյուղացիք լավ միջոցների չէին դիմել, թեև այժմ ցնծում էին իրենց տարած հաղթանակով։

---

[1] Արոտատեղի։

[2] Հատակագիծ, մակարդակ։

[3] Անտառապահ։

— Ինչպե՞ս է գործը,— հարցրի ես,— պատմեցե՛ք, պարոններն էլ իմանան։

— Թող ես պատմեմ,— բռնեց թևիցս Խոլերան։

— Թող քյո՛խվան պատմի,— մեջ մտավ Սմբատը։

Քյոխվան նախ մի բաժակ գինի կոնծեց, բեղերը սրբեց, մի մեծ բրդուճ հաց ու պանիր կոխելով բերանը՝ թշերն ուռեցրեց և ուտելով՝ ասաց.

— Հըմ... հա՛, պա՛տմեմ, ընչի՞ չէ... հա՞մ հա՞մ...

— Տո մեկ բերանինդ կուլ տուր հլա է՛,— ծիծաղեց նրա վրա Ջավադը,— խո աջալա[1] չի՞... էն ա ես ասեմ, էլի...

— Չէ՛... ես...

Արեց քյոխվեն, մարմնի մեծ ցնցումով կուլ տվավ բերնի եղածը և ասաց.

— Ըսե՞նց... Հմի պատմեմ... Հա՛, ի՞նչ էի ասում... Ամա՛ գրուստ, հլա սկի բան էլ չեմ ասել... Տո՛, կասես հարբել եմ, հը՞... խմածս ինչ էր որ. հարբելն ընենց կըլի ա՛յ, ոնց որ սուդիեն ա... Հա՛, տղաներիս ասեմ որ, էդ շան տղերքը՝ ծաղկասարեցիք, մեր կողքին չեմանլը ունեն. միքամ թե[2] քի՛չ ա գալիս։ կամաց-կամաց վրա են տալիս մինչի Կա՛թնաղբյուրը. մեկ էլ էն տենանք, որ մեր չոբաններին ծեծում են թե՝ մինչի Կաթնաղբյուրը իրա՛նցն ա, ի՞նչ իրավունքով մեր տավարները գենն ենք արածացնում...

— Ադա՛, դրուստ որ հարբած ես,— միջահատեց Խոլերան,— բա ըսե՞նց կպատմեն... ի՞նչի բաս չես ասում, թե 30 տարի ա էդ 17 գեսյատինը մե՛զ ա տված, հլա մեկ վախտ էլ մեր Ֆոշն[3] Էր ընդի...

— Դա կասեմ էլի՞... Հա՛, ըսենց ա, ղորթ ա. մեր քոչն ընդի ա ըլել 30 տարի առաջ...

— Տո չէ՛, չէ՛,— գայրացավ Խոլերան,— երկու տարի առաջ չէ՞ր, որ քոչն ընդի էր... տո մո՞ռացել ես, քո տունն էլ ընդի չէ՞ր... բա ըսե՞նց ես վկայություն տալու...

— Հա՛, տո՛, ղորթ որ մոռացել էի... թամամ երկու տարի առաջ... ողորմած հոգի մերս էլ հլա սաղ էր, էն տարին բո՞լ լոռ[4] շինեց ու կերանք ձմեռը... Հա՛, բա՞ս, թամամ հինգ տարի առաջ... Հի՞նգ թե երկու, ա՛մի...

---

1 Շտապողական։

2 Իբր թե։

3 Ամառը լեռ գնացող գյուղացիք։

4 Մոթալի նման մի պանիր, որ շինում են թանից։

— Ը՛մ, ես քո հարբած գլխիդ,— արեց ուժգնությամբ Խոլերան,— լավ ա, ձենդ կտրի մեկ, թե աստվածդ սիրես... ընե՞նց կոնծել ա, որ մի՞ան էլ չի, թե քոչը ե՞րբ էր Կաթնաղբյուրի մոտ...

— Դե լա՛վ, ա՛մի,— արեց Ջավադը շարախնդաց,— քյոխվա ա, գործ շատ ունի, ո՞ր մեկը միտը պահի... Դե ձեր քյոխվեն էլ էս ա գործ շատ ունի, ո՞ր մեկը միտը պահի... Դե ձեր քյոխվեն էլ էս ա էլի. ախպորս չհավանեցիք, հմի սրա՛ լազաթն առեք... Ոնց է՞ր, քյոխվա՛,— դարձավ նա հեգնությամբ քյոխվին,— ոնց է՞ր... Հինգ տարի՞ առաջ, ողորմած հոգի մերդ բո՞լ լոռ շինեց... Ա՛յ, գտար հա՛, մալա-դեց[1], քյոխվա... Ա՛ռ, առ մեկ է՛ս էլ կոնծի, բալքի հինգ տարին է՛ս հետ տասը շինես...

— Փո՛ւչ, փո՛ւչ...— կանչեց նրա վրա քյոխվեն,— ըստեղ էլ խո գեղը չի՞, մեկ էլ տեսար պլեսը[2] եկավ հա՛ա՛...

— Լա՛վ ա, լա՛վ...— քրքջաց Ջավադը,— հրեն պլեսդ Մարտոյի միկիտանումը[3] վեր ընկած. դու գի՛նիդ խմիր, ա՛ռ...

3

Մինչ այդ՝ խճուղու վրա անցուդարձն ավելանում էր։ Անշուշտ ժամը 4-ը պիտի լիներ, որովհետև միմյանց ետևից, դղրդոցով անցան գյուղաքաղաքից երկաթուղու կայարանը գնացող ամենօրյա «պաղվոդեերը[4] անցորդներով լեցուն։

Նրանցից հետո երևացին ու անցան օրորուն՝ մեր ետևում գտնվող «խախոլեերի»[5] Ալեքսանդրովկա գյուղի խոտաբաթ սայլերը, գյուղաքաղաքից զանազան գյուղեր վերադարձող ձիավորներ՝ բեռներով, եզան սայլեր՝ ճռճռալով, այլև հետևակներ։ Իսկ դեպի մեր կողմը, խճուղուց իջնելով, երևացին երկու նո՛ր գյուղացիներ։

— Փի՛ե...— բացականչեց Ջավադը, նկատելով նրանց,— հլա՛ մտիկ տվեք մեկ... Տո է՛ն ծաղկասարցի Վա՞րդոն չի՝ մեր Հարությանց Ոսկանի հետը...

— Ի՞նչ Վարդո, տո՛,— ասաց Նիկոլը,— հասարացի Մաթեն ա։

— Չէ հա՛, խմածդ գլխիդ ա խփել... Վա՛րդոն ա որ կա. էն էլ, հրե՛ն, Ոսկանն ա իր մեծ փափախովը։

---

1 Ռուսերեն բառ՝ «կեցցե»։

2 Մտրակ։

3 Գինետուն։

4 Մեծ սայլ ձիերով լծած։

5 Մալոռուսներ, որոնցից Կովկասում մի քանի գաղութներ կան։

— Վա՛րդոն ա,— հաստատեց Սմբատը,— էն էլ Ոսկանն ա որ գա... է՛ս ո՞նց ա ըլել, որ իրար հետ են...

— Այդ ի՞նչ Վարդո է,— միջամտեցի ես,— այն, որ ասել է, թե ձեր պլանը կեղծ է, և դուք լեսնիչի օգնականին կաշա՞ռք եք կերցրել։

— Հա՛, հենց էն ա,— ասաց Զաքարը,— մածուն ուտող Վարդոն...

— Թող գա մեկ է՛...— ոտքի ելավ քյոխվեն,— միրավոյ պաստեղ-ենիկի առաջը չուզեցի նրան մեկ լավ ուշունց տամ... ըստեղ էլ խո պրի-ցուտվենի[1] տեղի չի՞...

— Ադա՛, ամո՛թ ա,— մեջ մտավ երեցփոխը,— տե՛ղդ նստի, ո՛րդի, զոնաղը որ թշնա՛միդ էլ ըլի, պտի պատվես՝ երբ սուփրիդ վրա ա գալիս։

— Տո ի՞նչ պատվել, ի՞նչ զադ,— բարկացավ Զաքարը,— նա ո՞ւմ շունն ա, որ ասի թե մեր պլանը սուտ ա...

— Յա թե չէ՝ մենք լեսնիչին կաշառք ենք տվել...— ավելացրեց Նիկոլը,— որ ուսում առած, կարդացվոր ըլի, մեր գլխին նստի՞...

— Ադա՛, կարդա՞ցվորս որն ա,— ճչաց Զավադը,— քի՞չ ենք կարդացվորներ տեհել... յա թե չէ հենց մենք, պակա՞ս կարդալ-գրել գիտենք...

— Տո փո՛ւչ,— կանչեց երեցփոխը նեղացած,— քո դուշմանն ա, քեզ հետ հմի նա դա՛վի[2] ունի, դու ավե՛լի պտի նրա հետ քաղաքավար ըլես... Լսողը ի՞նչ կասի. տասը հոգով նամարդի պես վրա եք տալիս...

— Ղո՛րթ ա ասում ամին,— պնդեց Գրիշոյենց Մուկուչը,— մի՛ անպատվեք զոնաղին...

— Նստի՛, քյոխվա՛,— ձայնեց երկարավիզ Գևոն,— նստի՛, ամոթ ա. թող գալիս ա՝ գա. թե ինքը ձեն չի տա՝ դու էլ բան մի՛ ասի...

Քյոխվան, որ ելել և մի քայլ առաջ էր գնացել, չկարողանալով զսպել իրեն, թեև չսկսեց հայհոյել, սակայն կանչեց հեռվից.

— Էս յանի ո՞նց էլավ, Վարդո՛, որ սուտ պլան ունեցողների սուփրի վրեն ես գալիս...

Ու երկու ոտքի վրա լարված. աքաղաղի նման կռվի հրավերը կարծես նետած, ձեռքերը մեջքին կանթեց և սպասեց, որ եկողները մոտենային։

Վարդոն անշուշտ լսեց, հասկացավ գրգռիչ հրավերը, բայց լուռ՝ շարունակեց մոտենալ և երկու քայլ հեռու կանգ առավ։

Ոսկանը մոտ եկավ, քայլելիս կանչելով հեռվից։

— Փո՛ւհ ձեզ ի՞նչ ասեմ... Ադա՛, բաս ընդեղ հե՞րիք չէր ձեզ, որ ըստեղ էլ սուփրա եք սարքել։

---

[1] Պետական պաշտոնատուն, աղավաղված պրիսուտստվեննիյ բառից։
[2] Վեճ։

— Այ համեցե՛ք, Ոսկան ամի,— ձայնեց նրան Զավադը,— կիսատ թո պտի չթողայինք քեֆը։

— Բարև ձեզ,— արեց Վարդոն՝ մի քայլ ևս մոտեցած։

— Աստծու բարին,— պատասխանեցին նրան մի քանիսները։

— Համեցի՛ր, Վարդո,— դարձավ նրան երեցփոխը,— համեցիր կողքիս եկ, մեկ ստաքան գինի՛ անուշ արա...

— Չէ՛, շնորհակալ եմ,— ասաց Վարդոն՝ տեղից չշարժվելով և կարմրած,— Ոսկանի հետ էինք... Ասաց մեկ գնանք... թե դու մնալու ես, ես մենակ գնամ, Ո՛սկան.

— Ո՞ւր ես շտապում, ա՛յ տղա,— կանչեց Ոսկանը,— կաց մեկ ստաքան գինի խմենք ու միասին պաղվոդով քեզ էլ կտանենք։

— Մթնով կմնամ...

Մյուս գյուղացիների սառը վերաբերմունքը, Զավադի լիրբ ծիծաղն ու ակնարկները սրան-նրան՝ բարկացրին ինձ։ Ճանաչում էի Վարդոյին. իսկույն մոտ գնացի, բարևեցի և սկսեցի հետը խոսել։

— Ծանոթացե՛ք,— ներկայացրի նրան հյուրերիս։

— Ադա՛,— կանչեց այդ միջոցին Ոսկանը իր խրոխտ ձայնով,— ղո՛րթ որ դուզանցի եք հա՛... Կեսօրից առաջ գործներդ պրծել, հրես իրիկուն ա դառնում, հլա գե՛ղն էլ չեք հասել։

— Յանի դի՛փ մե՞կ չի,— արեց Զաքարը,— օրը կորսվա՛ծ ա...

— Բաս սուդիեն ո՞ւր ա, տո՛։

— Հարբած էր, քարափի տակը տա՛րան, որ հով տեղում մի լավ քնի...— ծաղրեց Զավադը,— համ էլ մի քիչ շա՛տ պինդ էր խոմփացնում...

— Փո՛ւ ես ձեր...— ծիծաղեց Ոսկանը,— սկի տեհա ոչ, որ էդ շան տղեն օյաղ հալով գեղ մտնի...

Վարդոն, կիսովին ականջը մեզ, աշխատում էր լսել նաև դուզանցիներին։ Կցկտուր պատասխաններ էր տալիս, զգալի կերպով նեղվում էր։

Հյուրերիցս՝ Հակոբը թողել էր քեֆ անողներին և անդունդի ծայրից կուացած հիացմունքով նայում էր դեպի խորքը, իսկ Գևորգը զննում էր նոր դեմքերը, մանավանդ Վարդոյին։

Ջննելու էլ դեմք էր այդ։ Միջահասակ հիսնամյա գյուղացի, թեև նո՛ւյն կոշտ դիմագծերը, արևակեզ դեմք ուներ, բայց բավական զանազանվում էր մյուսներից։

Հագել էր քաղաքացու նման. ամեն ինչ հնամաշ էր նրա վրա. սկսած գլխի «կարտուզից», որ գունազուրկ էր և տրորված—մինչև կարկատաններով լի եվրոպական կոշիկները։

Անընդհատ ծխում էր, մուշտուկով պապիրոսը միշտ երկու դեղնած մատների մեջ, ծուխը միշտ հաստ բեղերի կարմրած ծայրերին, ձեռքն էլ տարօրինակ կերպով դողդողալիս։

Կարծես քնից նոր էր վեր կացել. մի տեսակ ուռած կոպերով ու խամրած հայացքով աչքեր ուներ։ Ուրիշ կերպ չէի տեսել նրան։ Ժպտալիս տխուր ծալքեր էին կազմվում աչքերի անկյուններում և այտերի մազոտ ցցվածքներն ավե՛լի շեշտվում։

Թվում էր, որ սաստիկ խմող պետք է լիներ, եթե ո՛չ արդեն ալկոհոլիկ։ Նշանները պարզ էին. ձայնը խռպոտ, ձեռքերը դողդոջուն, դեղնության նշմարներ, մրսկանության երևույթ և կաշվի մի տեսակ հատկանշական յուղոտ փայլ։

Ակնարկը մեզնից՝ դուզանցոց, նրանցից դեպի մեզ, անընդհատ ծխում էր, շատ կարճ, ակամա պատասխաններ տալիս և փոքրիկ, անցողակի ժպիտներ կազմում դեմքի վրա։

— Դո՞ւք էլ սրանց հետ եք,— հարցրեց նա մեզ՝ քիչ հետո։

— Ո՛չ, մենք ճանապարհին պատահեցինք և եկել ենք ձորն իջնելու։

— Այո՞...— աչքերը փայլեցին,— իսկ ինչո՞ւ չեք իջնում. չէ՞ որ հետո ուշ կմնաք։

— Իհարկե,— ասեց Գևորգը,— գնանք իջնենք. ի՞նչ ենք այս մարդկանցը կպել. Հակոբն էլ ահա անհամբերությունից կարծես ուզում է իրան ձորը շպրտել։

— Գնա՛նք,— ասաց Վարդոն,— ե՛ս էլ կգամ ձեզ հետ։

— Համեցե՛ք, և եթե կուզեք՝ մեր կառքով ձեզ մինչև Ծաղկասար էլ կտանենք... այնպես չէ՞,— դարձա ես Գևորգին։

— Լա՛վ,— ասաց Գևորգը,— երեք հոգի ենք, թող չորս լիննք։

— Շնորհակալ եմ...— ասեց Վարդոն,— գնա՛նք ուրեմն։

Շարժվեցինք տեղներից։

— Է՞դ ուր բարով, պ. Երվա՛նդ,— ձայնեց Խոլերան։

— Ձորը։

— Հա՛... գնացե՛ք, ընչի՞ չէ...

— Դու էլ ես գնո՞ւմ, Վարդո՛,— հարցրեց Ասկանը։

— Այո՛,— պատասխանեցի ես նրա փոխարեն,— մենք միասին իջնենք, հետո մեր կառքով նրան իրա գյուղը կտանենք...

— Հը՛մ... լա՛վ...

— Ինչ որ ա...— ասեց քյոխվան, որ նստել էր,— երթաք բարով... ամա լա՛վ պրծար, Վարդո՛... գնա՛, գնա՛, քեզ հետ ուրիշ վախտ կտեսնվենք։

Վարդոն նայեց նրան, մեղավորի նման ժպտաց ու հետևեց մեզ։ Իսկ Ջավադը մի մեծ քրքիջ արձակեց և ձայնեց.

— Կարդացվորները գնացի՞ն...

Առանց պատասխան տալու՝ քայլեցինք դեպի ձորաբերանը և ձայն տվինք Հակոբին։

Ու երբ ուզում էինք իջնել, լսեցի դարձյալ կաղլիկի ձայնը, որ կանչում էր մեզ.

— Ընտեղ մտիկ տվե՛ք, պ. Երվա՛նդ, թե սուդյին ուստ գաք, ասեք թող գա, էս ա գնալու ենք...

Դարձա և նայեցի նրան բարկությամբ, բայց զսպեցի ինձ, և չորոս էլ նեղ արահետով իջանք դեպի ձորը։

Դուզանցիք անհետացան այլևս մեր աչքերից։

4

Քանի իջնում էինք, գետի կարկաչն ավելի՛ հնչուն, ժայռերն ավելի բարձուն, կանաչն ավելի առատ ու թարմ և արահետն ավելի դժվարանցանելի էր դառնում։ Դիմացի կնճռոտ, կարծես արհեստական կերպով կերտված լեռը ճնշող, հսկա մեծություն էր տանում՝ կռացած անդունդի վրա։

Մշտապես ստվերալից անկյուններում, ժայռերի ճեղքերից անընդհատ կաթկթող ջրերի տակ, մազերի նման փռված ու կախված՝ աճել էին գիշերությունով ուռճացող բույսերի թփեր. խոշոր ապառաժներ լցված ջրերից՝ սահել-հասնել էին ուզում գետակին և աջ ու ձախ, անվերջ ու հահավոր խորությամբ՝ ձգվում էին գալիս պտտեցնող անդունդներ...

Շա՛տ չնչին, շա՛տ փոքրիկ էինք երևում մենք բնության այդ վայրենի հսկայության առաջ։ Մե՛ն-մի քարն այդտեղ մեծ էր մեզնից, ամեն մի թուփը ավելի խոշոր։

Եվ այդ բոլորը՝ խիճ, քար, ապառաժ ու թուփ միահամուռ ձգտում էին իջնել-հոսելու դեպի խորքը, ներքևում արշավող փրփրալից գետակին, որ գալարվում էր քարոտ անկողնի վրա, ոստումներ գործում...

Գուցե տասներորդ անգամը լիներ իջնելս այդտեղ, բայց ինչպես միշտ, այս անգամ էլ փոփոխություններ էի նկատում շուրջը։ Բուսականությունը ավելի՛ առատ էր դարձել և ճոխացել. վայրի շուշանները ծաղկել էին իրենց լայն ու լեզվանման տերևների մեջ. վարդենին սպիտակ վարդերով պճնվել, դեղին ծաղիկների փնջերը երկարացել՝ դեպի մեզ

էին կռանում, երիցուկները անհամար քանակությամբ, խոշոր և պարարտ՝ գրավել էին խորշեր ու ծերպեր, իսկ երեք-չորս նոր ջրվեժներ ոստյուններով գահավիժում էին ժայռերն ի վար, պայթում քարերի վրա, ջրի փոշի ցանում ամեն ուղղությամբ։

— Բայց սա հրաշալի՜ք է...— ձայնում էր Հակոբը։

— Վայրենի՜, կրքոտ և արբեցուցիչ է՝ ինչպես գնչուհի,— ավելացնում էր Գևորգը։

Իսկ Վարդոն գլխարկը ձեռքին, գլուխը կախ և քիչ կթոտելով՝ իջնում էր լռությամբ։

Արահետը ոլորապտույտ էր՝ երբեմն ժայռերի միջով, նեղ, հազիվ մի ոտնաչափ, իսկ հաճախ այնքա՜ն մոտ քերում էր անդունդի ափը, որ ստիպված էինք կառչել քարերի և թփերի։ Ոստնում էինք ջրերից, մագլցում կամ սահում և երբ քրտնաթոր՝ հասել էինք հոսանուտ խիճերի դաշտին, կանգ առանք գետից հիսուն քայլ վեր՝ համեմատաբար տափարակ մի տեղ ու նստեցինք հանգչելու։

Վարդոն մի՜շտ լուռ՝ նստարան շինեց մի մեծ քար, Հակոբը ցցվեց սուր ապառաժի գլխին, Գևորգը փռվեց խիճերի վրա, իսկ ես մնացի կանգնած։

— Դուք չհոգնեցի՞ք,— ասացի գյուղացուն դառնալով։

— Ո՜չ,— խոսեց նա,— իջնելը չի հոգնեցնում... բարձրանալը հոգիս է հանում...

— Այդպես է, փիլիսոփայեց Հակոբը,— իջնելը մի՜շտ հեշտ է. բարձրանա՜լն է դժվար...

— Հը՜մ...— արեց Վարդոն և ծխախոտի տուփը հանեց,— իջնելը, այո, հեշտ է, բայց մեկ էլ տեսար տեղնուտեղը մնացիր... և այն մնա՜լն է որ կմնաս...

Ու սկսեց պապիրոս շինել՝ կռացած տուփի վրա։

— Ձեզ համար գուցե,— առարկեց Գևորգը,— շատ էլ առողջ մարդ չեք երևում, թեև գյուղացի եք։

— Հիվանդ չեմ,— խոսեց Վարդոն,— շո՜ւնչս չի բավականանում։

— Եվ ձեռքերդ ու գուցե ոտքերդ էլ դողում են։

— Ոտքերս քիչ, իսկ ձեռքերս՝ միշտ... խմելուց է։

— Կասկածում էի... ուրեմն խմո՜ղ եք դուք։

— Այո՜—արավ Վարդոն պապիրոսը վառելով,— օղի շա՜տ եմ խմում։

— Լա՜վ չէ,— բարոյախոսեց Հակոբը։

— Գիտեմ,— ժպտաց գյուղացին, բայց ճա՜րն ինչ... խմում եմ։

— Ինչո՜ւ ուրեմն մերժեցիք, երբ վերևում գյուղացիք առաջարկեցին ձեզ օղի,— հարցրի ես։

— Զկամեցա։ Նրանց հետ խմելը չարժե... Միշտ մենակ եմ խմում. ո՜չ ոքի հետ...

— Եվ շա՜տ։

— Շա՜տ... Ուրիշների հետ, եթե պատահի, զոռեն՝ միայն մի բյուրակա... Գյուղացոց հետ՝ երբեք. ընկեր չեն. օղիդ են միայն խմում և հարբելուդ վրա ծիծաղում... Առհասարակ վա՜տ են. եթե շահ չունենան քեզնից—կամ կծաղրեն կամ կվնասեն... Մի բաժակ օղիի համար քրծնում են...

Կցկտուր, խռպո՜տ ձայնով խոսում էր նա՝ պապիրոսը երբեմն բերնին, երբեմն մատների մեջ։ Չէր նայում մեզ, այլ միշտ դիմացի գետին և լեռներին։

— Ձեր անունը Վարդո՞ է,— դարձավ նրան հանկարծ Գևորգը, որ սկսել էր ավելի հետաքրքրվել։

— Ո՜չ, Վարդան է... «մածուն ուտող» Վարդան։

— Մածուն ուտո՞ղ,— ծիծաղեց Հակոբը,— և ինչո՞ւ այդ տիտղոսը. երևի մածուն շա՜տ եք սիրում։

— Այո. միս սակա՜վ եմ ուտում։

— Դուք երևի ուսում առած էլ եք,— ժպտաց Գևորգը,— գյուղացիք ձեզ «կարդացվոր» կոչեցին։

— Ծաղրում էին... բայց ուսել եմ մի ժամանակ... Ներսիսյան դպրոցումն եմ եղել... Գյուղացիք չե՜ն սիրում ուսածների։

— Այդ վա՜տ է, որ ուսածներին սկսել են ծաղրել,— նկատեցի ես,— երևի շատ եք խմում և ձեր պատիվը իջեցնում...

— Ո՜չ, այդ չէ,— ասաց Վարդոն,— ուրիշների մոտ ես չե՜մ հարբում... տանս միայն. խմում եմ և չեմ դուրս գալիս... խմում եմ ու կարդում, քնում... Այդ չէ։ Ծաղրում են, որովհետև իրենց գործերը տեսնում եմ և... ավելի հասկանում եմ իրանց ախտերը... Տանե՛լ չեն կարող, որ իրենց գյուղացին ավելի ղարգացած լինի և մաքուր, որ իրանցից շա՜տ ավելի աղքատ, գրեթե անկուտի Վարդանը համարձակվում է ավելի բան հասկանալ ու դատել, որ նա էլ մյուսների նման չի՜ քծնում, քյոխվի վրա գոռում է և մասնակից չէ գծուծ գործերի...

— Այդպե՜ս է,— ասաց Գևորգը,— քանի մարդ տգետ է, այնքան հաճույք է զգում իրենից հասկացողին ծաղրելու առիթ գտնել։

— Այո՜... Քյոխվան բարկանում է, որ չի կարող ինձ էլ մտրակել, ծեծել... և դիմում է ծաղրի. գզիրը ծաղրում է... որովհետև ինձ հեռու

եմ պահում նրանց կեղտոտ արարքներից և կամ ճշմարտությունն եմ ասում... Պրի՜ստավն էլ. երբ տեսնում է, որ առանց օրենքի ինձ հետ վարվել չի կարող, ծաղրի է դիմում, ճգնում է ստորացնել ինձ, գյուղացոց առաջ պստիկացնել...

— Եվ իհարկե, ատում են ձեզ ամենքը։

— Ատում են... Ծաղրով, նույնիսկ տնտեսապես ճգնում են «տրոբել» ինձ... Եվ երբ խմում եմ—նրանց քեֆն է գալիս. սիրում են տեսնել «ուսումնականին» անասունի հալում, թուլացա՜ծ, հարբա՜ծ... Կուզենային գտնել ինձ փողոցի ցեխո՜ւմ տապլտկելիս...

— Էլ ինչո՞ւ եք մեղադրում գյուղացոց,— առարկեց Հակոբը,— քանի որ ինքներդ եք ձեզ անասնացնում և ծաղրելի դարձնում... Հիրավի՜, ուսում առած հարբեցողից զզվելի բան չի կարող լինել։

Վարդոն ժպտալով նրան նայեց մի րոպե, թանձր ծուխով պատեց բեղերն ու ասաց.

— Ջե՜մ մեղադրում... Բայց ասեմ ձեզ, որ նույն արբեցողն էի նաև չորս տարի առաջ, երբ մեր վեց գյուղերի ստարշինան էի, տերության պաշտոնյա... մտրակը ձեռքիս, շղթան վզիս և միշտ հարբած, այն էլ փողոցներում, հրապարակում, դատ տեսնելիս... ու չէին ծաղրում. քծնում էին, գտնում, որ «ուսումնական հարբեցողը» սկի՜ էլ ծաղրելու չէր, այլ շա՜տ պատկառելի, հարգանքի արժանի... Մի շուն ունեի՝ մինչև իսկ նրան էլ գգվում էին, հարգում... Ստրկական հատկության արդյունք է. սերնդից սերունդ մտրակի տակ ծնած՝ պիտի քծնեն զորեղի առաջ, պիտի շողոքորթեն, լզեն... Դուք տեսե՞լ եք սարդի ոստայն...

— Շա՜տ...

— Ոստայնը սարքած, թաքնված մի անկյունում՝ սպասում է. անմեղ ճանճը բռնվում է հանկարծ, շա՜տ գեսուդե՜ն խփվում, ճգնո՜ւմ է ազատվել... գուցե և գոռում է, օգնության կանչում... Եվ եթե բան է, մի ուրիշ ազատ ճանճ լսի նրան և մտածի օգնության գալ՝ բռնվում է ինքն էլ, և նրա բախտը ոչնչո՜վ չի զանազանվում առաջինից... մի քիչ ավելի ուշ է ուտվում, ծծվում...

— Այո՜,— խոսեց Գևորգը,— գյուղն է այդ... ցանցը և գյուղի ըմբոստը։

— Գյուղն է,— պնդեց Վարդոն,— ո՜չ միայն գյուղը, այլ ամբողջ երկիրը... Ցանց է, ոստա՜ն... և սարդերը տոգա՜ծ, սարդերը գիշատի՜չ, ո՜չ մի անկյուն ազատ չէ... Ի՞նչ կարող է անել թեկուզ «ուսած, հասկացող» ճանճը... Ավելի շուտ կբռնվի, ավելի շուտ կոչնչանա, և նրա կարած շնչին թելը նորից կնորոգի, և ճանճերը կբռնվե՜ն, կծծվե՜ն...

— Հասկանալի է,— ասաց Հակոբը։

— Իսկ ուր ոստայն կա,— շարունակեց Վարդոն,— այնտեղ կա միմիայն ուտվո՜ղ ճանճ... ծնվելուն պես գիտե նա, որ ցանց կա... Մնում է մի հնարք. լինել քծնող, խորամանկ, խաբեբա և գծուծ՝ սպրդել կարողանալու թելերից և գոնե քիչ ավելի ուշ ուտվելու համար... Անցյալ օրը մի գիրք էր ընկել ձեռքս, կարդում էի... Շա՜տ լավ գիրք էր։ Թիֆլիս էի գնացել՝ մի ծանոթս տվավ... Կարդում էի ու մտածում, որ շա՜տ լավ կլիներ, եթե դարվինիզմով բացատրվեր մեր գյուղացու ներկա հատկությունները...

— «Դարվինիզմ» գի՞րքն եք կարդացել։

— Այո՜... լա՜վ, պա՜րզ գրած գիրք է... և ճիշտ։ Ինքս դիտել եմ շատ բան... Որոշ միջատներ իրենց միջավայրի գույնն են ունենում, որովհետև այդ գույն ունեցողնե՜րը միայն կարողանում են ազատվել սարդից... Ներեցեք, առհասարակ ուտողներից—ուզեցի ասել...— և առաջացնել իրենց նման սերունդ...

— Որոշ միջատներ էլ,— ավելացրեց Գևորգը,— տերևների մեջ ապրելով, ստանում են տերևների նմանություն այնքա՜ն, որ զանազանել չի կարելի...

— Այո՜...— շարունակեց Վարդոն,— ապրում են և բազմանում միայն նրանք, որոնք նմանվում են իրենց շրջապատող տերևներին. այդպիսի ընտրականություն մի քանի սերունդներից հետո առաջացնում է տերևաձև միջատների մի տեսակ, և այդ նոր տեսակի միջատը կզարմանա, եթե պատմես իրեն, որ տերևների ձևից ավելի լա՜վ ձև կա...

— Մեր երկրի գյուղացինե՞րն էլ նույն օրենքին են ենթարկվել ուրեմն ձեր կարծիքով,— հարցրեց Հակոբը։

— Նո՜ւյն... Ըմբոստները թշվառ են, ապերջանիկ... Նրանք այլանդակություններ են շո՜ւտ են ուտվում... Ավելի ուշ ուտվելը դառնում է խգեալ... Մտածե՜լ էի այդ բոլորի մասին, բայց բացատրել չէի կարողանում, գիրքը հասկացրեց։

— Բայց,— ասացի ես,— պատռեցե՜ք ցանցը...

— Պատռե՞նք...— ժպտաց Վարդոն,— ինչո՞ւ չէ... Բայց նախ հարկավոր է, որ ամե՜նքը զգան, թե ցանցը նեղիչ է և թե նրանից դո՜ւրս էլ կա կյանք ու ավելի՜ լավ կյանք... Հետո, շատ էլ հեշտ չէ պատռելը, առաջին զգացողին սարդն խսկո՜ւյն կլանում է... Մի ճանճը ոչինչ անել չի կարող. մի ըմբոստը, եթե չփշրվի էլ, ինձ նման՝ օգիի կդիմի կամ ծաղրելի կդառնա... պետք է ամենքը... իսկ այդ «ամենքը» ոչնչով գյուրին չէ...

Ասաց, ուժգին կերպով փչեց մուշտուկի մեջ, պապիրոսի մնացորդը դուրս շպրտեց ու ոտքի ելավ։

— Գնա՞նք...

— Գնա՞նք...

5

Շատերը, եթե մտաբերեն, գուցե հիշեն իրենց պատահած այսպիսի մի երևույթ։

Վիճում ես մեկի հետ. դիմացինդ պարզում է քեզ իր հայացքը որոշ խնդրի մասին և հաջողվում է համոզելու չափ փաստեր տալ։ Զգում ես, որ ճիշտ են ասածները, այնուամենայնիվ դեռ կասկածի մեջ ես, որովհետև իրական կյանքում նրա պատմած փաստերն անձամբ, քո աչքերովը չես տեսել։

Եվ ահա, չի անցնում մի քանի օր, երբեմն իսկ մի քանի ժամ, որ գլխովածով, ներկայությամբ հենց քեզ հետ վիճող պարոնի՝ ականատես ես լինում նրա ասածը հաստատող ապացույցին։

Այդպես օտարոտի մի պատահար էր ահա, որ հաստատելու համար Վարդոյի խոսքերը, դեմառդեմ տեղի ունեցավ ձորագլխում, երբ այնտեղ վերադարձանք։

Պետք է որ ժամը 6-ը լիներ, եթե ոչ ավելի ուշ, երբ ձորիցն ելանք ու մտածեցինք գյուղ գնալ։

Դուզանցիները չկային. գնացել էին։ Հարթության վրա մնացել էր միայն մեր սայլը։ Սայլապանը պարզված նրա մեջ քնել էր՝ գլուխը դրած մի երկար փայտի վրա։

Զարթնեցրի նրան։

— Վե՛ր կաց, գնում ենք։

Ելավ, աչքերը տրորեց ու իջավ սայլից։

— Հա, եկա՞ք,— ասեց նա,— բա ընչի՞ էսքան ուշացաք... հրես կմթնի։

— Ոչինչ, լուսնկա գիշերներ են, սանձերը կարգի դիր ու նստենք։

— Ղորթ ա,— առարկեց նա՝ մոտենալով ձիերին, ամա դե շա՜տ ուշ մնացինք է՛... Ողջ օրը կորավ. ասի քիչ շուտ ետ դառնանք, բալքի թե մի երկու սել խոտ էլ ա տուն տանեմ։

— Վնաս չունի,— խոսեց Վարդոն,— ուրիշ սել էլ ունես. ախպերդ հմի նրանով տարած կլինի։

— Դո՞ւ էլ ես գալու Դուզան,— ասաց սայլապանը՝ խեթ-խեթ նրան նայելով։

— Չէ,— ասացի ես,— առաջ մեկ Ծաղկասար կիջնենք, հետո Դուզան կբարձրանանք։

— Էդ ո՞նց կըլի,— փոկերից մեկը ձեռքին՝ ինձ նայեց սայլապանը,— էդ խո չլի՛ս մթանը կմնանք... Չէ՛, էդ մեկը սկի չի ըլիլ. ես Ծաղկասար չեմ գնալ։

— Տո, պրծիր է՛,— ձայնեցի ես,— մի բան էլ ավելի կտանք, հը՛... Մի մանե՞թ չի հախդ, Ծաղկասար գնա ու երկու մանեթ ստացիր։

— Ո՞նց թե մի մանեթ...— գոչեց նա,— ընչի՞, բաս մի մանե՞թ ել տալու։

— Ի՞նչ է,— զարմացա ես,— մեր Սիսակ ծառան քեզ հետ չի՞ խոսել այդ մասին. չէ՞ որ սովորաբար հենց մի մանեթ է և ո՛չ ավելի։

— Ղորթ ա, խոսել ա...— կմկմաց գյուղացին,— ամա դե մի մա՜նեթ...

— Չէիր ուզում՝ թող չլծեիր... պրծի՛ր, պրծի՛ր, խոսելու ժամանակ չկա...

Գյուղացին պահ մի լուռ, առանց մեզ նայելու սանձերը կարգի դրավ, հետո հանկարծ դուրս եկավ ձիերի միջից, անցավ սայլի մյուս կողմը, վճռականորեն ինձ նայեց ու ասաց.

— Չէ՛, պարո՛ն Երվանդ, էդ ըլելու բան չի, ես Ծաղկասար գնացողը չեմ՝ էս մեկ, համ էլ երեք մանեթից պակաս չեմ առնի՝ էս քեզ վրա երկու...

Ես և հյուրերս միմյանց նայեցինք զարմացած.

— Ա՛յ տղա, դու խո չե՞ս գժվել, յա հարբած խո չե՞ս,— զայրացավ Հակոբը,— հենց մեզ մո՛տ էր, որ Սիսակը եկավ ու ասաց, թե մի մանեթով է խոսել հետդ...

— Ղո՛րթ ա... բան չե՞մ ասում, մի մանեթ խոսեց... ամա դե ես էլ ասի, որ երեք կառնեմ...

— Է՛, որ ասիր, ինչո՞ւ եկար կամ ինչո՞ւ գնի մասին մեզ հետ նախ չվերջացրիր ու հետո բերեիր. հը՞...

— Դե ո՞նց անեմ ես... ասի աղա մարդիկ են...

— Հիմար մի՛ լինի,— միջամտեցի ես,— միշտ գնացել եկել եմ, երբեմն 4—5 հոգով, մինչև մութը մնացել ենք ու միշտ էլ միայն մի ռուբլի եմ տվել... Որոշված գինն էլ դա՛ է...

— Այդպես է,— հաստատեց Վարդոն,— տաքսան[1] մի մանեթ ա։

— Ի՞նչն ա մեկ մանեթ,— բացականչեց գյուղացին՝ զայրացած

[1] Որոշված գինը։

գեպի նա դառնալով,— յանի ձեր ծաղկասարեցին կտաներ հա՞... թե ընենց՝ փչում ես...

Ապա համառ ու խիստ ինձ նայեց ու ասաց.

— Երեք մանեթից պակաս չի ըլի, պ. Երվանդ, թե Ծաղկասար կ գնալու ըլեք՝ չորս մանեթ... կուզեք կտանեմ, չեք ուզի, հրե՛ն ձեր ձեյերը[1]. սելիցը վեր դրեք՝ ես գնամ...

Այլևս համբերել անհնար էր. չափազա՛նց հանգուգն էր դառնում գյուղացին։ Անմիջապես կորզեցի վար դրի մեր պայուսակն ու գորգը և ասացի.

— Լավ. դե հիմի գնա՛, մինչև գյուղը չորս վերստ է մնացել. ինչպես լինի կգանք, բայց դու այլևս կո՛պեկ չես ստանա ինձնից։

Սայլապանը ելավ սայլի վրա, խարազանը ձեռքն առավ, սանձերը ժողովեց ու մի տեսակ համարձակ ժպիտ դեմքին՝ կանչեց.

— Կստանամ... արխեին[2] կաց...

— Գնա տեսնենք ինչպե՞ս կստանաս... Դատի դիմիր, եթե կուզես

— Ինչի՞ դատաստան,— ասաց նա,— իմ դատաստանը հրես ա՛յ իմ պլետն[3] ա...

— Ինչպե՞ս...

— Ընե՛նց... իմ դատաստանը ես իմ ձեռքովս կտեսնամ... հրես ա՛յ, պլետս սաղ կենա։

Արյունը գլխիս խփեց. վայրկենական զարմանքից հետո, չգիտեմ ինչպե՞ս եղավ, ոստնեցի դեպի նա, բռնեցի ցույց տված «պլետի» ծայրից, քաշ տվի, խլեցի և նրանով ուժգնությամբ սկսեցի հարվածներ տալ գլխին։

Սոսկման ու զարմանքի մի ճիչ դուրս թռավ գյուղացու բերանից. ճգնեց սանձերը ժողովել, բայց չփոթվեց. և որովհետև ես շարունակում էի հարվածել՝ ցած թռավ սայլից։

Կարծեցի պիտի պաշտպանություն դիմեր, սայլի մեջ դրած ցուպ վերցներ, վրաս հարձակվեր...

Այնուամենայնիվ ետ չքաշվեցի։

Այստեղ սակայն Գևորգը, որ ապշած կեցել էր, վարակվեց ինձանից. անմիջապես կորզեց ձեռքիցս խարազանը, ընկավ գյուղացու վրա և տո՛ւր թե կտաս...

---

1 Իրեղենները։

2 Միամիտ։

3 Խարազան։

— Շա՛ն որդի,— սկսեց նա հարվածների հետ,— դու համարձակվում ես պլետով սպառնալ, հա՞... սպասիր մեկ քեզ սատկացնեմ...

— Յա՛, յա՛...— սկսեց ետ-ետ քաշվել գյուղացին,— յա՛ սպանելո՞ւ եք ինձ...

— Պիտի սպանեմ... ահա՛ քեզ... ահա՛ էլի՛...

Եվ ո՛չ իսկ մտածեց մի րոպե ձեռքը ցուպին տանել գյուղացին, այլ մեկն մեջքը դարձրեց ու ճչալով սկսեց փախչել դեպի խճուղին, Գևորգը նրա ետևից՝ խարազանը ճոճելով օդի մեջ...

Ոչ միայն փախչում էր սայլապանը, այլև կանչում էր.

— Փիե՛... տո սպանելո՞ւ եք... ախր ես ի՞նչ արի է՛... տո ես ղալաթ արի, որ մի բան ասի...

Գևորգը հասել էր ետևից, հայհոյում էր ու զարնում։

— Վա՛յ, վա՛յ...— սկսեց աղաչել գյուղացին։

Կանգ էր առել ու կծկվելով, գալարվելով ուտում էր հարվածները, առանց ձեռք իսկ շարժելու զարնողի դեմ։

— Վա՛յ, վա՛յ...— գոռում էր նա,— ե՛ս մեղա աստծո, աղա՛... ախպե՛ր, ինչ կուզեք տվեք... տանե՛մ..., տանեմ, էլ ո՞ւր ես խփում... կա՛ց հալա...

— Դո՛ւ անպի՛տան, դո՛ւ սողուն...— կանչում էր Գևորգը զարնելով,— է՛ս րոպեիս մեր պայուսակը մեջը դիր ու մեզ գյուղ տար, թե չէ...

— Տը տանեմ, տանեմ էլի՛... յա՛...

Հետո հանկարծ վարմունքը փոխեց, կծկվեց, աղաչավոր, ստրկական ժպիտ կազմեց դեմքի վրա ու ասաց.

— Դե որ ուզում ես սպանել, ըհա՛, խփի՛ր... դո՛ւ քո ինսա՛ֆը...

Այստեղ մենք միջամտեցինք։ Գևորգն էլ իջեցրեց խարազանը։

— Թող, Գևո՛րգ,— ասացի ես,— թո՛ղ, շա՛տ զզվելի է։

— Եվ ինչպե՞ս զզվելի...— կանչեց նա խարազանը հեռու նետելով,— քիչ է մնում խեղդեմ, սատկացնեմ այս սողունին... փոխանակ՝ ճանկերով լինի, ատամներով լինի՝ ինձ բզկտելու, դողում է այս բարակ, թելի նմանող քոսոտ խարազանի առաջ. փա՛խչում է, կծկվում, աղերսում, քիչ է մնում ոտներս լգի... Ո՛ւ ես քու կերած հացին ու ծածկած փափախին... Մո՛տ արի, շան որդի, լաչա՛կ ծածկեմ գլխիդ, լաչա՛կ...

— Ընչի՞, ա՛ղա,— կանչեց գյուղացին հեռվից,— մոտ չեմ գա, էլի՛ կծեծես...

— Արի ասում եմ է՛... արի՛ սայլը բարձրացի, թե չէ ոգչ մարմինդ կչարգեմ...

Գյուղացին մի քայլ առաջ եկավ քծնող ժպիտը դեմքին, կանգ առավ խոնարհ և ասաց.

— Յանի ի՞նչ էի արել, աղա, որ էդքան ծեծեցիր։

— Հալա էլի կծեծեմ, սողո՛ւն,— կանչեց նրա վրա Գևորգը։— Տո, դու մարդ ես, ջիգար ունե՞ս... տո դու սկի ամոթ յա սիրտ չունե՞ս... Էր անիծած, համ պլետ ես ցույց տալիս, համ էլ էդքան վախկոտ ես...

— Դե բա ի՞նչ անեմ, աղա, ես կարո՞ղ եմ ձեզ պես աղաների հախիցը գալ... Կերթաք ստարշինի, պրիստավի ու... էլ ողջ տարին ջանմա քաշելուց չեմ պրծնի...

Հետո մոտ գնաց սայլին, արագությամբ մեր իրեղենները դարսեց տեղը, խոնարհաբար հրավիրեց մեզ նստելու և երբ սանձերն էր ժողովում քշելու համար, քծնող ժպիտը դեմքին ինձ դարձավ ու ասաց.

— Դե աղա, էն որ ծեծեցիք էլ, երկու մանեթը կտաք, չէ՞... թե Ծաղկասար կուզեք՝ իրեքը...

— Լա՛վ, լա՛վ, քշի՛ր...

— Քշիր ու ձենդ կտրի՛ր, շա՛ն տղա,— բարկացավ Գևորգը,— հիմա ավելի փիս կծեծեմ, թե խոսել ես։

— Յա,— ասեց գյուղացին,— դե քշում եմ էլի, էլ ինչի՞ ես ուշունց տալիս, յա թե չէ՝ ծեծել ուզում։

— Քեզ նման սողունի ոսկորներն էլ որ փշրես դեռ քիչ է։

Գյուղացին Վարդոյին նայեց զարմացած ու հարցական. կարծես կամենում էր հարցնել նրան, թե՝ «ի՞նչու է բարկանում այլևս այդ քաղաքացին»։

Վարդոն, որ մինչև այդ լուռ, իսկ կառք նստելուց հետո գլուխը քաշ՝ պապիրոս շինել-վառում էր, նայեց Գևորգին ու ասաց.

— Չի հասկանա ձեզ, պարո՛ն, իզուր եք փորձում ստրկային զգացմունքները զզվելի հանդիսացնել իր առաջ... Քանի բարկանում եք՝ նա ա՛յնքան ավելի չի հասկանում ձեզ...

— Իսկ բնա՞զդ, ինքնապաշտպանության կամ անձնասիրության բնա՞զդ անգամ չունի,— գոչեց Հակոբը,— չէ՞ որ ամեն անասուն ունի դրանից։

Եվ մինչ կառքը սլանում էր ու խճուղին ելնում, Վարդոն առանց ժպտալու, ծուխը բեղերի մեջ՝ պատասխանեց.

— Այո՛, ունի... Բայց ինքնապաշտպանության բնազդները տեսակ-տեսակ են լինում։ Փախչել, կծկվել, թաքնվել՝ հարվածից խուսափելու համար, աղաչել, լալ... Դրանք էլ ինքնապաշտպանության բնազդներ են։ Ստրկական ինքնապաշտպանության բնազդնե՛րն են մեր մեջ զարգանում միայն. իսկ անձնասիրությունը անհա՛յտ գաղափար է այս կողմերում... Ամեն ինչ միաբանած՝ ժողովրդին կրթում են այդպես...

— Անասունը գոնե կծում է,— մռմռաց Գևորգը,— ինչքան էլ ուժեղի պատահի, նախ կծում է, հետո մեռնում... Մեղուն իր մահվան գնով պաշտպանում է իր հասարակությանը...

— Ճի՛շտ է,— շարունակեց Վարդոն,— մե՛նք էլ կծել գիտենք... մեզնից թույլերին, մեկմեկո՛ւ կծել... Մարդը կարծում էր, թե հոխորտալով կհաջողվի կողոպտել ձեզ. այժմ քծնում է, որովհետև զգաց, որ այդ ձևն ավելի նպաստավոր է... Ու հաջողվեց. հավաստի եմ, որ կտաք նրան ուզածին չափ. ծեծեցիք և դա ճնշում է այժմ ձեզ. խղճահարությունից՝ ուզածը պիտի տաք...

— Իսկ որ ծե՞ծ կերավ...

— Ոչի՛նչ, սովոր է մեր մեջքը,— ժպտաց դառնությամբ Վարդոն,— կոշտեր են գոյացել մեր մեջքերի վրա այնպես, ինչպես ոտքերի մատներին՝ նեղ կոշիկների մեջ ճնշված... Որպեսզի ծեծը բարկություն գրգռի, նախ հարկավոր է, որ կաշին նուրբ, զգայուն լինի և կոշտերից ազատ։ Իսկ կոշտերից ազատվելու համար...

— Ազատվելու համա՞ր...

— Միայն մի հնարք կա... լայն կոշիկներ հագնել, նեղ կոշիկն ընդմիշտ դեն շպրտել... Այո՛, լա՛յն, շա՛տ լայն...

1905

ԽԱՂ

1

Գյուղի այդ ծայրում, վերջին տներից և ծառաստաններից հետո, խճուղու եզրից սկսած, գոգաձև բարձրանում է մի ծործոր[1], որ օրվա մեծ մասը գրեթե ստվերի մեջ է՝ թե՛ ետևի և թե՛ երկու կողերի բլուրների շնորհիվ։

Ստվեր ձգող այդ շրթունքների առապարներից ցած, ամբողջ տարածությունը բռնել է մի ծաղկալից մարգագետին, որ մշտապես օրորվում է փչող սյուքից և գնալով ավելի դալարագեղ դառնում վտակների ափերին։

1 Տուգանք։

1 Ձորակ։

Բծավորված սպիտակ վարդենիների և հեռվից խոշոր, մենավորիկ ծայրերի նմանող մամուխի թուփերով հասնում է նա մինչև փրփրոտ գետակը, ոստնում վրայից և մխրճվելու գնում հորիզոնի վրա ճապաղված անտառի կուրծքը։

Այդ տեսակ ծործորներով է շերտավորած գյուղի ամբողջ թիկունքը՝ Սարշենից սկսած մինչև գյուղաքաղաք։

Ամենալավ արոտատեղիներ լինելով, լեռնալանջի այդ կողերի վրա միշտ կարելի է տեսնել արածող ցանուցրիվ նախիրներ, այլ խոտերի մեջ վազվզող կամ միացած ու թիկն տված խոսակցելիս՝ գյուղացի մանուկներ, որոնք տավարը հսկելու են գալիս և ստվերալից կողերի վրա հավաքվում։

Հուլիսի այդ օրերին Դուզանի լեռնադաշտի նման ծաղկալից անկյուն դժվար է երևակայել։

Հարյուրավոր գույնզգույն շերտեր բծավորում են անծայր հարթավայրը։ Այստեղ՝ պուտն է մի ամբողջ տարածություն արյան պես ներկել, այնտեղ՝ նուրբ ու քնքուշ սպիտակ խնձորածաղիկն արշալույսի կարմրորակ լույսո՛վ կարծես ողողել բլուրների կուրծքը, քիչ հեռու ինչոր ծաղիկների խումբ, լուրջ գույնով երկնքի մի կտոր հանգչեցրել արտի վրա, նրա մոտ, մանուշակագույն քմահաճ ոլորտուն երիզներ գծել խիարուկը, գաղջ փոսիկներին ու կանաչ ակոսների նմանող խորություններին թավշյա օձի՛ք են կազմել բուդածաղիկները, և գաճաճ վիշապուկների միջից գլուխ դուրս պարզել՝ ցնցվում են դեղնորակ, խոշոր ծաղիկներով շուշաները, այլև թասաձև և խոշոր պսակներով բոխածաղիկները...

Սիրո՛ւմ էի ամեն առավոտ լուսածագին գնալ այդ կողմերը, մտնել նախ Սարշեն, որ միայն մի վերստ հեռու էր մեր գյուղից, հետո զրոսանքի քայլերով վերադառնում էի և հաճախ, լեռնալանջի կողերից մեկի վրա ընկողմանած կամ նրանց փոսուությամբ դալարների մեջ մեկնված՝ մնում էի՛ երազկոտ ժամեր անցկացնելու, ակնարկս դիմացի ցցուն գագաթներին և լույս մանուշակագույն մշուշի մեջ թաղված անտառներին։

Այդ օրը սակայն, մի արևալից և լավ օր, շատ հեռու չգնացի։ Խճուղուց վեր ելա, մինչև ծնկներս խոտերի մեջ՝ առաջ քայլեցի և մտածեցի դիմացս երևցող առաջին թփիկի տակ նստել։

Մամուխի մացառ էր այդ, բավական խոշոր, տարածված և ծաղկած։ Շրջապատում խոտերը կոխոտված, ջարդված էին. աջ կողմում նույնիսկ լպրծուն էր դարձել դեպի կշկշացող, երկու թզաչափ վտակն իջնող զառիվայրը։

Թփին չհասած, նկատեցի սագերի երամներ, որոնք օրորուն, սպիտակ ամպերի շարժուն քուլաների նման սահում էին խոտերի մեջ։

Հետո աչքիս խփեցին մի քանի սև, թավոտ գլուխներ և բանից դուրս եկավ, որ տավարածների մի փոքրիկ խումբ, ինձնից առաջ գրավել էր թե՛ թուփը և թե՛ նրա շրջապատը։

Կարմիր ու դեղին հագուստներով, փոքրիկ աղջիկներ էլ երևացին. միմյանց մոտ շարքին կանգնած՝ երկար ճիպոտներ ձեռքերին։

Մոտենալով, համրեցի. յոթ—ութ տղա էին, չորս—հինգ աղջիկ։ Ըստ երևույթին, ամբողջ լեռնալանջի վրա գտնվողներն էին, որ տավարներին թողել հասնելու մինչև բլուրների ծայրերը, իրենք միմյանց ձայն էին տվել և մամուխի թփի մոտ սագարած աղջիկների շուրջը ժողովվել։

Այդպես էլ էր. աղջիկներն ինձ տեսնելիս՝ կանգնել էին, իսկ տղաներից մեկը երեսի վրա փռվել, մյուսը՝ կկզած, մի քանիսն էլ մամխի եզր կանգնած՝ դիտում էին գնալս։ Երկուսն էլ քարակույտեր կազմել, աթոռ էին դարձրել ու վրան հեծել։

— Բարև, տղա՛յք,— կանչեցի հեռվից։

Մեկը, որ ամենից առաջ էր նստել, դարձավ մյուսներին ու ձայնեց.

— Պ. Երվանդն ա էլել, տո՛... ես էլ ասի, թե էս քաղքցին ո՞վ ա, որ գալիս ա դեսը...

— Եկել ես մա՞ն գալու,— հարցրեց քարակույտի վրա նստողներից մեկը։

— Համեցե՛ք,— արեց մի երբորդը,— ըսենց լավ տեղ սկի չես գտնիլ..

— Իսկ դո՞ւք ինչու եք հավաքվել այստեղ,— հարցրի ես՝ մոտ գալով։

— Հրեն ա՛...— արեց մեկը և ձեռքի փայտը դեպի վեր պարզեց,— էն տավարները մերն ա... արածացնում ենք։

— Հազրը ասես սինձ ենք ուտում,— ծիծաղեց պառկողը և առաջը կիտված խոտերի փնջերից պոկեց ու սկսեց ծամել։

Մոտեցել էի բոլորովին։ Ամենքը ժպտուն ինձ նայեցին և «տեղ տվին»։

Ծիծաղելի տեսք ունեին բոլորն էլ։ Հագել էին պատառոտուն, տասը տեղից կարկատաններով լեցուն, ամեն կողմից ծվեններ կախված արխալուղ. վարտիքի փոխարեն՝ ինչ-որ աղտոտ կարճ կտավ՝ մինչև ծունկները, ոտերնին՝ տղմոտ[1], բորիկ. գլխին կարտուզ[2] էր կամ փափախ,

[1] Կեղտոտ։
[2] Հովարով գլխարկ։

սակայն որպիսի՜ կարտուզ և ի՜նչ օրի ընկած փափախ. յուղոտ, ճմբրակբված, ճաթրտած ու կոտրտած, կեսն ընկած, մյուս կեսը ցնցոտի դարձած կարտուզ, բուրդը գզգզված, կեսիցը կարծես տապարած և աղտի մեջ թաթախած փափախ, որոնք, ով գիտե, ինչ աղբանոցից էին գտել-հանել...

Ջնայելով հագուստներին, ձեռք-երեսի, ոտների և բաց կուրծքերի աղտին, ամենքն է՛լ ժպտուն ու զվարթ՝ իսկույն զանազան դիրքեր բռնեցին շուրջս։

Մեկը կկզեց և մռութը դրավ ծնկներին, երկրորդը փռվեց երեսի վրա՝ դեմքը դեպի ինձ, երրորդը մամխի թփի մեջ մտավ և սմքվեց այնտեղ, չորրորդը կողի վրա ընկողմանեց... ու ամենքն էլ շարունակեցին ծամել ու ծամծմոտել սինձը, որոնցից փունջ-փունջ ունեին ձեռքներին կամ թևերի տակ կոխած։

Ատամները սևացել բույսից, շրթունքները սպիտակել, դեմքերն արևակեզ, մազերնին թափթփած, առատ ու թավ, աչքերնին պսպղուն, անդիկի պես շարժուն չարաճճիները, երբ ես էլ նստել էի, միմյանց նայեցին, քթթեցին, լուռ ծիծաղեցին, հետո թփի մեջ կծկվածը կանչեց հանկարծ.

— Ադա՜, բա ամո՞թ չի. ընչի՞ պ. Երվանդին էլ սինձ չեք թավազանում... Համեցե՛ք, սի՛նձ կեր...

— Համեցե՛ք...— արին ամենքը և առջևս նետեցին մի-մի փունջ։

— Էս որտեղի՞ց եք քաղել, շա՞տ կա այս կողմերում։

— Շա՜տ...— արեց քարակույտի վրա նստողը,— հրեն ողջը սինձ չի՞... ամա ծաղկել ա հմի... գլխի կողմիցը որ ուտես, հլա դալա՛ր ա...

— Էս աղջիկնե՞րն ինչ գործ ունեն ըստեղ,— հարցրի ես նստելով,— սրա՞նք էլ են տավար արածացնում։

— Չէ,— խոսեց նորից նույն մանուկը,— սրանք դազեր[2] են բերել... դե՛, մենք էլ ասինք՝ գանք քիչ հետները խոսանք... ըսենց չի՞, ա՛ խալխը...

Ու այնպես ծաղրածու կերպարանք ստացավ և աչքը քթթեց, որ բոլորն էլ ծիծաղեցին։

— Հա՛մ էլ,— վրա տվավ նա՝ հեգնական ակնարկներ անելով սրան-Նրան,— մեր նշանածնին են սրանք... Ա՛յ, էն Թադուշն իմ նշանածն ա...

---

1 Մատուցել։
2 Սագեր։

— Վո՛ւյ, սատկես դու, հա՜... չանչեց[1] դեպի նա աղջիկներից մեկը,— սուտ ընչի՞ ես ասում...

Այնքա՜ն տարօրինակ մանուկ էր խոսող տղան, որ առանձնապես գնեցի նրան, մինչ խոսում էր և ծամածռություններ ունում։

Գրեթե կիսամերկ էր. կարմիր կտավե հին ու կտրտված շապիկ, նո՛ւյնքան կտրտված ու մինչև ծնկները հասնող վարտիքի հետ։ Գլխին մի կարտուզ ուներ, որ կասես շան բերանը տված ու ծամած լիներ. ծուռ կոխել մինչև ականջները, սնձից սևացած ատամները բաց, դեմքն արևից կիզված ու թեփոտած, մազերն էլ շեկ։

Խոսելիս մեկ ինձ էր դառնում, մե՛կ էլ ծաղրածու կերպով սրանն-նրան ակնարկներ անում և քրքիջների առիթ տվող ծամածռություններ կազմում այլանդակ դեմքի վրա։

— Անունդ ի՞նչ է,— հարցրի՝ միջահատելով նրան։

— Տելո ա։

— Դա ի՞նչ տեսակ անուն է որ...

— Տելամաք ա,— մեջ մտավ երեսի վրա փռվածը,— մենք Տելո ենք ասում։

— Ադա, ո՞ւր ես մեջ ընկնում, լպստա՛ծ,— կանչեց նրա վրա Տելոն,— քե՞զ ա խոսացնում, թե՞ ինձ... ընչի՞, ես գիդա՞մ ոչ, որ տերտերը ինձ Տելամաք ա կնքել։

— Տելամա՞ք,— ասացի ես,— ո՞րտեղից է գտել հայրդ այդ անունը։

— Հե՞րս ընչի,— լայն ծիծաղեց Տելոն և ատամները ցցեց,— տե՛րտերն ա գտել. մեկ դաֆթար ունի, ընդի կարդում ա ու երեխեքանցը անուն դնում... Ա՛յ, էս գորտի անունը (ցույց տվավ առջևս փռվածին) Արտաշես ա դրել, մենք Արտո ենք կանչում։

— Նրա անունն էլ Ասքանազ ա,— մեջ մտավ մի երրորդ մանուկ և թփի մեջ սմքվածին ցույց տվավ,— ամա մենք Քանազ ենք ասում։

— Ադա, էլի՞ մեջ մտաք,— ճչաց նրա վրա Տելոն,— տո սա ձե՞զ ա խոստացնում, յա՞ ինձ... Ուզում ես վեր կենամ ու ջնջխե՞մ... ի՞նչ բեհայա[2] խալխ եք, տո՜... Հա (դարձավ նա դեպի ինձ), ա՛յ, է՛ն մեկելի անունը Արտազ ա դրել, մենք Տազի ենք կանչում... Ադա, Տազի՛, ըռեխդ ցույց տու մեկ, ո՞ւր ես տավարի պես գլուխդ խոտերի միջին խրել։

---

1 Ձեռքը տափակ՝ դեպի ուրիշը ցցել իրր նախատինք։
2 Անամոթ։

Մինչ այդ, աղջիկները նստեցին և իրար կպած ու լուռ՝ ինձ էին զննում, միմյանց հետ երբեմն էլ փսփսում, ամաչելով ծիծաղում։

Չորս էին, թե հինգ. տասից-տասներկու տարեկան կլինեին. սև, աղտոտ, ոտաբոբիկ և տգեղ։ Մեկն էր միայն քիչ սիրուն, կապույտ, գգվող աչքերով և անմեղ մանկական ժպիտ միշտ դեմքին։ Նա էլ այնքա՜ն սինձ էր ծամել, որ ամբողջ բերանը սևացել էր, ինքն էլ ձեռք ու ոտքով ցեխաթաթախ ու մրոտ դարձել։

Պարզ և հնամաշ կտավե շրջազգեստներ ունեին. գլուխներն ինչ-որ չթի նմանող թաշկինակի մեջ էր փաթաթած, սակայն բոլորի մազերը փչո՞ւց թե ցեխից՝ բրդի նման կոշտացել, միմյանց էին կպել։ Ամենքի ձեռքը մի-մի ճիպոտ կար, թևերի տակն էլ ուտելու բանջարեղեն՝ սինձ, շուշան, թրթնջուկ կամ բեղ։

Տազին, որին Տելոն այնքան կոշտությամբ հրավիրել էր մոտն ինձ ցույց տալու, կամաց բարձրացրեց գլուխը, նայեց մեր կողմը, հետո փոթկացրեց և նորից մտավ խոտերի մեջ։

— Սա խո մեր Բաղրամի որդի՞ն է,— ճանաչեցի Նրան։

— Հա՛, քյուրդ-Բաղրամի տղան ա,— ասաց Տելոն ծաղրալից շեշտով,— հենց հոր պես էլ ընենց ճչում ա, որ կասես աքլար ըլի.. կու-կու-կու-ռիկո՜ւ՜ու... Ի՞նչ ա ըլել, ա՛յ Տազի... Սկի՛, յա կանչում ա թի՝ եկեք, սնձի տեղ եմ գտել, յա թե չէ՝ մի հատ շուշան ա քաղել. ա՛յ ոլ-փուշ ըլես դու, Տազի՛, հլա մեկ խոսա...

— Ադա, դե հերիք ա է՛է՛...— ճչաց Տազին գլուխը բարձրացնելով,— դո՞ւ ինչ ես, դո՛ւ... խոզի պես՝ խրմ-խրմ-խրմ... թե ի՞նչ ա քի՛թն ա վեր քաշում ստարշինի պես... փո՛ւհ...

— Չասի՞, չասի՞, ա՛ խալխը,— բարձր ու հնչեղ քրքջաց Տելոն,— տեսա՞ք, տեսա՞ք ոնց հոր նման աքլարի պես ճչում ա...

Ապա վիզը ցցեց դեպի զայրացած Տազին, ձեռքի սինձը ցած թողեց, թևերը թափահարեց, ազդրերին խփեց ու աքաղաղի ձայնով ճչաց։

—Կու-կու-լի-կո՜ւ ո՜ւ...

Բոլորը քրքջացին. հիրավի շատ ծիծաղելի էր այդ միջոցին Տելոի դեմքը, որ երկարացել, ծաղրաշարժ գծեր էր կազմել։

— Խլնքո՛տ, խլնքո՛տ...— աղաղակեց դեպի նա Տազին։

— Փո՛ւ...— արեց Արտոն,— բա ամո՞թ չի, տո ի՞նչ եք փիս շների պես իրար գզգզում։

— Ֆո՞ւ ինչ ես, դո՛ւ,— դարձավ դեպի նա Տելոն,— ոզնի՛, քոլի՛ ոզնի...

— Ոզնի էլ ես, հլա խոզ էլ հետը...

Մտածեցի միջամտել, սակայն Քանազը դարձավ դեպի աղջիկներն ու կանչեց.

— Ադա Թագո՛ւշ, ախչի բա չե՞ք տեսնում, ղազերը ձորն են թափվում է՛է՛...

Աղջիկները ցնցվեցին, ոտքի թռան ու փայտերը բարձրացրած՝ վազեցին դեպի սագերը, որոնք կչկչալով ու խմբովին, գլուխները ցցած՝ դիմում էին ձորակը։

— Ա՛ ղազը, էդ ո՞ւր եք գնում,— ճչում էր մի աղջիկ,— տո ձե՞զ չեմ ասում... ա՛ ղազը, ղա՛զը...

— Ծարավ են հալբաթ,— դիտեց Տելոն։

Եվ բոլոր մանուկները դարձան դեպի վազող աղջիկներն ու լուռ՝ հետևում էին նրանց հետապնդումներին։

Մի քանի րոպե սարալանջի վրա միայն սագերի կչկչոցն ու թևերի թափահարումներ լսվեցին, հետո՝ աղջիկների կանչեր, որոնք իջնում էին դեպի ձորը՝ փախչող թռչունների հետ...

2

Այդ միջոցին էր, որ խճուղու վրա երևաց փոշու մի թեթև պտույտ, մղված Սարշենի կողմի քամուց։ Հետո, միմյանց ետևից հայտնվեցին չորս—հինգ արագավազ ձիավորներ։

Առաջին արշավողն աջ ձեռքով փայտը ծնկների վրա ցցած, չերքեզկայով երկարահասակ անձ էր։ Ծանոթ դեմք էր թվում, բայց հեռու լինելով՝ ճանաչել չկարողացա։ Կողքից քայլում էր սև չերքեզկա հագած, կիսափափախով մի նիհար ձիավոր, որ մտչակն էր շարժում անընդհատ և խոսակցում առաջինի հետ։ Նրանց ետևից գնում էր կուզ, կարտուզով ու լիքը դեմքով անձ, իսկ ամենից հետո էլ երկու ուրիշները, որոնցից մեկը շրջանական ոստիկան զինվոր էր երևում՝ հրացանը մեջքին, նշանազգեստով և երկար սուրը կողքից։

— Հլա՛, հլա՛...— կանչեց Տելոն,— բնդի՛ մտիկ տվեք, տղե՛ր, ստարշինան[1], սուդիա Մուկուչը, էն մեկն էլ պիսերն ա... հլա ստրաժնիկն[2] էլ հետները... էն ո՞ւր են գնում ըտենց քշելեն։

— Ստրաժնիկի հե՞տինն ով ա, տո...— ասաց Քանազը չոքած,— կասես քչքչան Նիկոլն ըլի։

---

[1] Շրջանական գյուղապետ։

[2] Պահակ զինվոր։

— Նա ա, որ կա,— պնդեց Արտոն ու թփի միջից գլուխը դուրս պարզեց,— այ տղա, տեսաս էդ ի՞նչ ա ըլել։

— Ի՞նչ պիտի ըլի,— ձայնեց պառկած մանուկներից մեկը,— գնում են գեղը վառեն...

— Էրեկ իրիկուն Մելիքենց տան առաջ քյոխվեն, գզիրը, Մելիքն ու Ռաքելը կռվշտորում էին... բալքի ընդի են գնում։

— Չէ՛,— արեց Տելոն,— ընդի չի ըլի. էն կռիվը ջաղացի քարի վրա էր. համ էլ բարբշեցին՝ պրծան։

— Բալքի քչքչան Նիկոլն ա տանում դրանց... էն օրը քաղքցին ու Նիկոլը քիչ մնաց իրար ծեծեին,— խոսեց Տազին,— ես տեսա. քաղքցու կնիկը ջուր էր շուռ տվել Նիկոլի օջախի մեջն ու կրակը հանգցրել. Նիկոլի ճղճղան կնիկն էլ մե՛կ ուշունց էր տալիս, մե՛կ ուշունց... քաղքցին էլ՝ ասա՛ որ կասես. շիլ Գայուշին ցեխը կոխեց ու հանեց...

Տազի պատմածն իմ ծերունի ընկերոջ կռիվն էր, որ տեղի էր ունեցել երկու օր առաջ, մեծ չափեր էր ընդունել և քչքչան Նիկոլի գնչուական ճիչերն ամբողջ օրը զվարճացրել էր գյուղին։

— Կըլի որ էդ ըլի,— նկատեց Արտոն,— քչքչան Նիկոլը կռվի ա հենց բանդ. կնի՛կն էլ, ո՛ւյ, ո՛ւյ, ո՛ւյ... մե՛կ դարաչին ա, մե՛կ ուշունցի հասրաթ[1]... Որ աչքը, էն շիլ աչքը չի՞ ծռում ու բերանը փրփրոտացնում, կասես ջադու ըլի։

— Դուք սկի՛ բան չեք հասկանում, տո,— ձայնեց Տելոն,— ըհը, կտենաք. էդ աստծու պատիժները գեղն են գնում ուրիշ բանի համար։ Տեսաս էլի ի՞նչ զուլում են մտածել գեղը կրակ տալու... Յասաո՞ղը[2] ուր են տանում բաս... Հլա պիսերը, սուդիան... փո՛ւ ես քու կաշի կտրած տրեխ երեսիդ ինչ ասեմ, սուդիա Մուկուչը, էս դիփ քո՛ բաները կըլի... Կտենա՛ք. նա՛ ա, որ օձի պես ըստի-ընդի բան ա սարքում, որ ինչ ա՝ ոսկոր հանի միջիցը... Տղերք, հլա մեկ իմ տավարին աչքն ածեք՝ ես գնամ գեղը, տեսնամ ի՞նչ կա...

— Տո մի՛ գնա, մի՛...— արեց Տազին,— հերդ մեկ ընե՛նց գլխիդ կտա, որ կարտուզն էսհետ մինչև բերանդ կմտնի...

Տելոն, որ պատրաստվում էր գյուղն իջնելու, կանգ առավ և սկսեց ծոծրակը քորել։ Ըստ երևույթին, Զազիի խոսքերի դառն ճշմարտությունը կասեցրեց նրան։

Քանազը ժպտալով նրան նայեց ու հանկարծ ձայնեց.

— Յանի էլ ո՞ւր ես գնում, չե՞ս իմանում թե ալան-թալանը ոնց ա ըլում. ինքդ յանի քի՞չ ես քյոխվա ըլել.

1 Կարոտ։

2 Ոստիկանական ստորին պաշտոնյա

— Հա՛, տո՛,— արեց Արտոն,— եկեք խաղանք էլի...

Մանուկները զվարթ ծիծաղով միմյանց նայեցին։ Պառկողները ելան նստեցին, Արտոն մամուխի թփից դուրս եկավ և մինչ աղջիկները սագերին ետ դարձրած՝ մոտենում էին, սարալանջի վրա սկսեց կազմվել մանկական մի հետաքրքիր խաղ։

Անմիջապես Տելոն մոռացավ գյուղը, ուղղվեց ու կանչեց.

— Ես՝ ստարշինա...

— Ընչի՞, տո՛,— գոչեց Քանազը,— հենց ամեն վախտ դո՞ւ ես ստարշինա ըլելու... Չե՛նք ուզում, դու փիս ես ծեծում... ընենց չի՞, տղերք...

— Հա՛. էսհետ թող ե՛ս ըլեմ ստարշինա,— ասաց Տազին։

— Ադա, դե ձեններդ կտրեք, է՛է՛...— ճչաց Տելոն,— ես ձեր քյոխվան չե՞մ ըլել մինչի օրս, հը՞...

— Հա՛, հետո՞։

— Հետո էլ էն, որ էսօր էլ քյոխվությունից ստարշինա եմ ըլում... կուզենամ, հլա պրիստավ էլ կըլեմ. իմ ձեռքին չի՞։

— Փիե՛...— արեց Արտոն,— ստարշինան յանի քի՞չ ա ծեծում, որ համի էլ ուզում ես պրիստավ կտրես գլխներիս... չէ, ախպեր, որ ընենց ա՝ ես չեմ խաղում։

— Ա՜ խալխը,— ձայնեց հանկարծ Տելոն ու սպառնալից՝ ոստնեցկանգնեց, խլեց գետնի վրայից իր ճիպոտը, կարտուզը պինդ կոխեց գլխին ու սրան-նրան նայեց,— ինձ պրիսավ չե՞ք ուզում, ա խալխը..

Միանգամայն սարսափելի էր փոքրիկ բռնավորն իր դուրս ցցած կրծքով, կպտաղի հայացքով ու բերնի երկու շարք սևացած, գազանային ակռաներով։

Երևի բոլորն էլ վախեցան։ Աղջիկները, որ մոտեցել էին, միմյանց կպան։

— Վո՛ւյ...— արեց մեկը,— կասես գել ըլի։

— Տո գել եմ ու արջ էլ,— գոռաց Տելոն,— բա ընչացո՞ւ քյոխվա եմ, ստարշինա, յա պրիստավ... Ձեր հե՛րը կանիծեմ, թե ինձ նաչալնիկ[1] չեք արել... ընենց օյին դնեմ գլխներիդ, ո՞ր... կթողա՞մ սկի որ խաղաք..

Քանազն ու Տազին ինձ նայեցին՝ կարծես օգնություն խնդրելով։

— Դա ինչ է, Տելո,— միջամտեցի ես,— դու բռնավոր խո չե՞ս։ Թող ընտրեն, էլի՛. թե քեզ ընտրեցին՝ կուզես թագավոր եղիր։

— Ընչի՞ թագավոր,— ճչաց Տելոն,— ես ամեն վախտ են ա քյոխ-

1 Գլխ

վա յա ստարշինա եմ ըլել, ծեծոտել եմ, ո՛ւշունց տվել, ոսկոր կերել, սրան պատժել, նրան հուպ տվել... ուզում ես, որ հմի մեկ ուրի՞շն ինձ ըտենց անի... Չէ՛, թե պրիստավ ա՝ ես եմ, թե նաչալնիկ՝ էլի ես եմ... ուրիշի թողալ չեմ... ա՛ըյուն կհանեմ..,

— Հանդարտվիր,— հորդորեցի ես,— արի՛, արի նստիր կողքիս, գուցե էլի քե՛զ ընտրեն։

— Չե՛ն ընտրի. շա՜տ եմ ես դաղել դրանց... Ա՛յ, տեսնո՞ւմ ես, էդ աքլար Տազին, էդ քյուրդի տղա Տազին, համ էլ էդ գորտ Քանաղը... իրա՛նք են ուզում համ քյոխվա, համ ստարշինա...

Տեսա, որ խաղը պիտի խանգարվեր, դարձյալ միջամտեցի, հորդորեցի և վերջ ի վերջո համոզեցի, որ վերջին անգամն էլ Տելոն ստարշի՛նա դառնար, Քանաղը՝ քյոխվա, իսկ Տազին՝ գզիր։

Սակայն հազիվ համոզել էի ամենքին և Տելոն հաղթական՝ ատամներն էր ցցում դեպի աղջիկները, որ սրանք ապստամբվեցին։

— Մենք չե՛նք խաղում,— ասաց Թագուշը,— մենք կգնանք։

— Ընչի՞, ա՛յ ախչի,— ասաց Տելոն, որ մեծանամ, յանի քո ստարշինան ես չե՞մ ըլելու... Ամա, ջհաննա՛մի գյոռը, որ չես խաղում... պաշոլ[1], գնա՛։

— Ո՛ւ, հողե՛մ գլուխդ, գի՛ժ Տելո,— չանչեց դեպի նա մի աղջիկ,— գել ես, գե՛լ...

— Գել եմ, բա՛ս...— ծիծաղեց տղան,— ստարշինան որ կա, պտի գել ըլի... չե՞ս հավանում ինձ, հրեն ա՛յ շոսեն. պաշո՛լ դու էլ...

— Կա՛ց,— բռնեցի ես նրա թևից,— ուշունց մի տա աղջիկներին... Եկե՛ք, աղջիկնե՛ր, մոտս նստեք, ես չեմ թողնի, որ ձեզ նեղացնի։

Աղջիկներն անշո՛ւշտ շատ էին ուզում խաղին մասնակցել, կամ գոնե՝ ներկա լինել։ Իսկույն եկան մոտս և ուրախ՝ պաշտպանությանս տակ մտան։

— Ընչի՞,— դարձավ ինձ Տելոն քիչ վախեցած, որ իր իշխանությունը սահմանափակվում էր,— մագամ[2] դու նաչալնիկ ե՞ս...

— Ո՛չ,— կատակեցի ես,— նաչալնիկից էլ մեծ, գուբերնատոր[3]...

— Փիե՛...— ասաց Քանաղը.— յանի նաչալնիկից է՞լ մեծը կա։

— Կա. գուբերնատորը։

— Ընդրանից մե՞ծը։

1. Կորիր։
2. Միթե։
3. Նահանգապետ։

— Լավ, թողեք այդ,— ասացի ես,— ձեր խաղն սկսեք։ Ես միայն կնայեմ, ոչինչ չեմ լինի։

— Հա՛, էդ լավ ա,— ասեց Տելոն միամտված,— բաս որ ըտենց ա, ըստի մեծը խո ե՞ս եմ...

Հետո մեկեն դարձավ դեպի Տազին ու կանչեց.

— Ադա Տազի՛, մեր հրամանն ա, որ էս սհաթիս վեր կենաս ու վազես սարի էն կողի վրիցը ձեն տաս, հրեն ա՛յ, չիմանլրդմը[1] նստած Սրապին ու մեկել տղերանցը... Թող շատ ըլեն, որ խաղը լազաթ տա... ըտենց չի՞, պ. Երվա՛նդ։

— Դե էսքանս էլ հերիք ենք,— առարկեց Տազին,— էլ ո՞ւր ես տաղ գեղը գլխիդ թափում։

Տելոն ամբողջ մարմնով շուռ եկավ դեպի նա, սլքերը ոլորեց ու ֆայտոն այնպե՛ս սպառնալից բարձրացրեց, որ Տազին վախից ետ ոստնեց։

— Ա՛ շան տղա,— գոռաց նրա վրա Տելոն,— դու ընչացո՞ւ ես, որ հրամաններիս ջուղաբ տաս[2], դու գզի՞ր ես, թե՞ պրիստավ... ուզո՞ւմ ես, էս սհաթիս կաշիդ քերթեմ... ըստի քեզ գզիր են դրել, որ ստարշինի դեմը դողաս, հալվես...

— Ո՛ւյ... արջն ա, խա՛չը, մեշի[3] արջը...— մռմռաց աղջիկներից մեկը՝ կծկվելով ու կպնելով ընկերուհուն։

— Էն ո՞վ ա, որ ստարշինին արջ ա ասում,— որոտաց Տելոն,— կշնչեմ...

— Այդ չեղավ, Տելո,— դարձյալ մեջ մտա ես,— շատ վատ սկսեցիր. որ այդքան գոռաս, էլ ձեն չի մնա վրադ... Համ էլ աղջիկներին հանգիստ թող։

Տելոն նայեց ինձ, ժպտաց, հետո նորից գայլային դեմք ստանալով՝ քայլեց դեպի Տազին ու կանչեց.

— Հլա կանգնե՞լ ես...

— Ո՛ւ, ո՛ւ, ես քու...— ասեց Տազին ու գնաց դեպի բլուրը։

— Որ շատ ըլենք, ղորթ ա, լավ կըլի,— ասաց Քանաղը,— թող ես էլ գնամ կանչեմ...

Ապա ելավ մի քարակույտի վրա, դեմքը դարձրեց դեպի մյուս աղբալանջին ու սկսեց ձայնել խուլ, կարծես փորից դուրս եկող ձայնով։

1. Մարգագետին։
2. Առարկել։
3. Անտառ։

— Է՜ Է՜յ... Է՜յ Սրապիոն. Սրա՜պիոն, Սրապիոն, Է՜Է՜Է՜յ... Գրիգո՜ր, ա՜յ Գրիգոր, Է՜յ, Գրիգո՜ո՜ո՜ր...

Լեռնային կոչի այդ ձևը, որ լավ յուրացրել էր Քանազը, մոտից թեև հնչեղ չէր, բայց այնքան հաջող ելևէջներ ուներ, որ դնալով աճում էր, ալիքների մղման նման զորեղ ցնցումներ գոյացնում, թրթռում էր օդի մեջ ու միմյանց բախելով՝ մեծանում էր հեռուներում։

Անշո՜ւշտ լսեցին այնտեղ. մանավանդ որ Տազին էլ մագլցել էր ամենաբարձր կետի վրա և ելևէջների ուրիշ տեսակ կոչ էր իջեցնում դեպի՛ սարալանջը։ Այդ կոչը ևս իր ինքնատիպ ձևն ուներ։ Սկսում էր խորին բամբով, խազերը հատ-հատ՝ մղում էին միմյանց, գոգաձև մասում բախվում և զորեղ ալիքներով հասնում նպատակակետին։

Մինչ այդ, Տելոն թողել էր գահը, գլխարկի տակից ինչ-որ խոշոր դանակ էր հանել և նրանով մամուխի թփից կտրում էր բավական խոշոր ճյուղ։

Ձեռքերի ուժն էր ավելի կտրողը։ Ոլորեց ու կեղևը պոկ տալով՝ հաջողվեց ունենալ դալար ճիպոտ։ Մաքրեց փշերից, կոշտերից, մի քանի անգամ նրանով օդը ծեծեց ու ասաց.

— Լա՜վ ա...

— Ի՞նչ պիտի անես,— հարցրի ես։

— Ղամշի[1] ա։ Ստարշինան առանց ղամչու՝ ո՜նց որ էշն առանց փալանի...

— Է՜յ,— կանչեց մանուկներից մեկը,— տե՛ս, որ պինդ ես խփել, կգնքսենք քեզ, հա՜՜... էլ հերիք ա. ընենց վրա ես տալի, կասես զորթանց հենց ստարշինա ըլես։

Տելոն բարկացած նրա կողմը դարձավ։

— Ադա սա՜տկած Կարո,— ձայնեց նա,— որ չխոսաս, չի՞ ըլիլ. չես ուզում խաղալ՝ հիմիկանց պաշող... հրեն էնքան տղերք գան, որ սկի ղայեղ էլ չեմ անի ղամչուս ծերը քեզ կպցնի...

Ստվերն սկսում էր կարճանալ. ամենքս քիչ ավելի վեր քաշվեցինք ու տեղավորվեցինք խոտերի մեջ։

Մանուկները կանգնել՝ սպասում էին մյուսներին։ Տազին ու Քանազը վերադառնում էին։

[1] Մարակ։

3

Բոկոտն ու կիսամերկ, աղտոտ, այրված, սնդիկի պես շարժուն և աշխույժ՝ միմյանց ետևից, գրեթե գլորվելով էր, որ հինգ—տասը բոպեից հետո, ամեն կողմից, ժողովվեցին մեր նստած տեղը։

Անպատճառ մի-մի ճիպոտ ձեռքներին, շատերը ֆեղ[1] ծամելիս, մի քանիսն էլ մաստակ՝ փովեցին խոտերի վրա։ Տելոն նրանց մեջտեղում կանգնած՝ սպասում էր, որ սարալանջերից դեպի մեզ վազողներն էլ հասնեին։

— Դե՜հա, դե՜հա...— անում էր նա,— ադա վազնք է՜է՜...

Ու գալիս էին։ Քիչ հետո, համրեցի մինչև քսան մանուկ՝ զանազան հասակի՝ տասից մինչև տասնհինգ տարեկան։

Ամենքը նախ զարմացած՝ ինձ էին նայում, հետո իրար մոտենում փսփսալով։ Անշուշտ իմ ներկայությունը տարօրինակ էր իրենց. ի՞նչ կար, ինչո՞ւ էի եկել և ե՞ս էի արդյոք ձայն տվողը։

Տելոն կցկտուր ու բարձր հայտնում էր եկողներին, որ «պ. Երվանդը հենց ընենց, եկել ա տենա, թե մենք ո՞նց ենք տավարը պահում». կամ՝ «Ադա՜, դե ի՜նչ կա, եկել ա՜ եկել, խո մեզ չի՞ ուտելու». և կամ՝ «Դե լավ ա, ղոնաղ ա եկել, մենք էլ մեկ օր նրա բաղը կերթանք, մեղ սեմիշկա[2], յա քյալամի կոթ կուտացնի... ընենց չի՞, պ. Երվանդ»։

Ու այսպես, ամենքին ժողովում էր շուրջը, բացատրում, որ խաղ կազմեն։

Քիչ հետո, երբ բավական վիճել ու գոռգոռացել էին, խաղն սկսեցին։

Տելոն ու Քանազը եկան մոտս նստեցին, մանուկները ցանուցրիվ եկան, նստոտեցին, կանգնած մնացին, ու Տա՜զին, որ գզիրն էր, փայտը ձեռքին ման էր գալիս ամենքի մեջ։

— Ադա է՜յ, քո՜ւրդ Տազի,— ձայնեց մեկը,— ինձ չբռնես, թե չէ, ասված ա վկա, գեղամիջում կբռնեմ, ընե՜նց մեկ կտամ, որ սաղ օրը վնգստաս...

— Փիե՜...— արեց Տազին,— էդ յանի խա՞ղ էլավ... Որին ասին՝ բռնելու եմ։

— Որ բռնես ու գզիր հալովդ լավ ծեծ ուտես, ո՞նց քեֆիդ կգա,— ծիծաղեց մեկը։

— Գզիր ա,— նկատեց մի ուրիշը,— գլխին էլ կբանփաչեն, ձեռքն էլ կկոտրեն... Պիտի դիմա՜նա...

[1] Բուսատեսակ։
[2] Արևածաղկի սերմ։

— Չէ՛, ախպե՛ր,— արեց Տաղին,— թե թափվելու եք ծեծեք, էն ա՛, լիքաղամ։

— Ադա բա՛նիդ կաց, բանի՛դ...— կանչեց նրան Տելոն,— մագամ ստարշինան մեռե՞լ ա, որ գզրին ծեծեն...

Հետո աչք ածեց բոլորին, շտկեց իրեն, նայեց ինձ և երբ գտավ, որ ամեն ինչ տեղին էր, ճչաց.

— Մի քիչ ղրաղ քաշվեք, ա՛յ ադա... Ով ուզում ա գանգատավոր ըլի՝ թող մեյդան գա։

Արևը հետզհետե բարձրանում էր բլրի ետևից, ստվերը քաշվում-կարճանում։ Տեղներիցս սակայն չշարժվեցինք։ Հովանոց ունեի. բացի, թիկն տվի խոտերի վրա, գլխիս կողմից արևի ճառագայթների դեմն առա և այնուհետև լուռ՝ միմիայն հանդիսատես մնացի մանուկների խաղին։

Երեք-չորս հոգի մինչ այդ, միմյանց մոտ եկած, ըստ երևույթին պատրաստում էին գանգատի նյութը. իսկ Տելոն և Քանազը պաշտոնական դիրք ստացել՝ նայում էին հպարտ, մտնում իրենց դերի մեջ։ Նույնիսկ, կատարյալ լինելու համար, մանուկը սկսեց իսկական ստարշինայի ձևերն ստանալ՝ կկոցել աչքերը, քիթը վեր քաշել, ձեռքի ճիպոտով, իբր մտրակ, ոտը ծեծել։

— Բո՛ւ, ա՛յ տղա,— գոչեց հանկարծ Տելոն, պահ մի տեղից դուրս գալով,— բա պիսե՞ր[1]... ըտենց էլ բա՞ն եք տեհել, մոռացել ենք պիսերը։

— Էս մեկ անգամն էլ թող պիսեր չըլի,— նկատեց Քանազը։

— Ո՞նց... չէ՛, ստարշինան առանց պիսերի, ոնց որ ավազակը՝ առանց թվանքի... Ա՛յ, Պետի՛ն թող ըլի պիսերը...

— Հա՛, հա՛, Պետին թող ըլի...— ձայնեցին ամենքը ծիծաղելով և դարձան եկվոր մանուկներից մեկին, որի վրա մինչ այդ՝ ուշադրություն չէին դարձրել։

Տասնամյա, գուցե քիչ ավելի տարիքով, մի ճուտիկ էր այդ, որ շատ հիշեցնում էր շարժուն միմիկա[2] ունեցող լուրջ կոմիկի։ Կարծես ահա բերնից մի սրախոսություն պիտի դուրս թռներ, ինքը՝ ասողը չպիտի ծիծաղեր և լսողները պիտի թուլանային։

Հագածից մինչև կեցվածքը ծիծաղաշարժ էր։ Մի կարճ, կտրված արխալուղ, վրայից՝ խոշոր ծակերով երկար, մինչև գետին հասնող լայն չուխա (անշուշտ հոր դեն ձգածն էր), գլխին ահագին զզզզված, հոտ ու աղտոտ փափախ, որ նա ցցել էր ծոծրակի վրա և հաջողվում էր պահել այնտեղ։ Կոշիկ չուներ. մի ինչ-որ կասկածելի գույնով շորի կտոր, վարի կողմից ատամնաձև ցնցոտիացած՝ վարտիքի տեղ էր ծառայում նրան։

Արտակենտրոնը դեմքն էր. այնքան խորամանկ հայացք կար աչքերի մեջ, որ երբ նրան հայտնեցին, թե պիսեր էր դառնալու, մոռացավ մանուկ լինելը։ Հոգին ամբողջ գծված էր ակնարկի ու բերանի շուրջը։

Երբ ամենքի ուշադրությունն իր կողմը դարձավ, նախ շրթունքները երկարացան, հետո դեմքը, և կանացի զիլ ձայնով կանչեց.

— Հլա՛... քաշալ Տելոն ստարշինա, գիժ Պետին էլ պիսե՞ր... էդ խո հոգի՛ չենք թողալ. սաղ գեղը կվառենք...

— Ղո՛րթ, տո,— ասաց մեկը,— էս երկուսը որ իրար եկան՝ մեզ կդաղեն...

Բայց «գիժ Պետին» ընդունել էր առաջարկը. թևի տակ կոխած ցուպը հանեց ուսին դրավ, գնաց դեպի Տելոն ու ասաց.

— Ղա՛բուլ, ես՝ պի՛սեր. ի՞նչ ես տալու ամսական։

— Երկու սիլլա[1] հարյուր ղամչի[2], տասը քացի... էլա՞վ։

— Էլավ...

Ու նստեց, փայտը կողքին դրեց, մի լայն տերև կտրեց խոտերից, քաղեց, երկար փայտի կտորն էլ գրիչ շինեց և որպես թե գրում էր, կանչեց.

— Հաղը՛ր, գոլովա[3]... Ո՞վ ա գանգատավորը։

Երեք մանուկներ, որոնք քիչ առաջ միմյանց հետ խորհրդակցում էին, առաջ եկան, ժպտացին, ծիծաղեցին և վերջիվերջո նրանցից մեկն ասաց.

— Ո՛ղջ կենա գոլովա աղան, եկել ենք խնդիրք ասենք...

Տելոն ավելի ծանրակշիռ դեմք ընդունեց, ուռեց, փքվեց, նրանց նայեց խստությամբ, աչքերը կկոցեց ու ասաց.

— Հը՞, ի՞նչ կա... ո՞ւր ա խնդիրքներդ, տե՛նանք...

— Խնդիրք չենք գրել. տերտերը հարբած էր, տիրացուն էլ այբբ տեսնելիս՝ ոնց որ գիժ հաց կերած...

Գիժ Պետին, որ փայտի-գրչի ծայրն էր թքոտում անընդհատ, նման

---

1 Գրագիր։

2 Դիմախաղ։

1 Ապտակ։

2 Մարակի հարված։

3 Գլխավոր, ստարշինային այդպես էլ են կոչում հաճախ։

իսկական պիսերին, մեջ մտավ, ձեռքը պարզեց դեպի նրանց ու խորամանկ ժպիտով ասաց.

— Դես տվեք խնդիրք գրելու փողը՝ առանց խնդիրքի էլ յոլա տանենք... ըտենց զակո՛ն կա։

— Ըտենց զակո՞ն կա...— քիթը վեր քաշեց Տելոն,— բաս հանեք մեկ-երկու մանեթ տվեք ու ասեք խնդիրքներդ։

Գանգատավորները, որ սկզբից գիտեին, թե ստարշինայի մոտ առանց փողի գնալ չէր կարելի, մի բուռը տերևներ էին ժողովել ձեռքերում. երկու հատը հանեցին և պիսերի պարզած ափը դրին։

— Երկուսը քի՛չ ա,— ասաց Պետին,— վոլոստնի[1] պիսեր եմ ես, ձեր հարբան տերտերը յա քոռ տիրացուն չեմ... երկուսն էլ տվեք...

— Վա՛, չորս մանե՞թ,— կանչեց գանգատավորներից մեկը,— էդ խո ջլիս թա՛լան ա...

— Ջենդ...— կանչեց նրա վրա ստարշինան,— զակոնի դեմ ջուռաք չանես[2] խոսալ... Զակոնը որ կա (քիթը վեր քաշեց), զակոն ա... (աչքը կկոցեց) ու էլ հետ, որ զակոնը զակոն ա (քիթը վեր քաշեց), պիտի պահենք ու կատարենք... իմացա՞ք, ա՛ շան տղերք... կդա՛ղեմ, թե չեք իմացել...

— Իմացանք, ո՞նց չիմացանք, գոլովա... Զակոնը որ կա՝ զակոն ա...

— Զակոնն էլ՝ է՛լ հետ զակոն ա...

— Հրա՛մանք ես...

— Սրանց խնդիրքը գրի՛ր, պիսե՛ր։

— Էս սհաթիս... Որի՞ն ա ձեր գանգատը։

— Ջորս հոգուց։

— Փիե՛...— արեց Քանազը,— ի՞նչ խաբար ա, տո՛...

— Դու ըստեղ հլա ձեն չունես, քյոխվա՛,— ասաց նրան Տելոն,— հլա գործը քեզ չի հասել։

— Ի՞նչն ա շատ,— նեղացավ պիսերը,— պտի է՛լ շատ հոգի ըլեր, որ դալամս եղա՛լեն գրեր... Ասենք, որի՞ց եք գանգատավոր։

— Շուն-ուտողենց Սաքոյից... Գորտ-ծեծողենց խոզ Կարապետից...

Ընդհանուր ծիծաղը բարձրաձայն քրքիջի փոխվեց։

— Կա՛ց, կաց...— ընդհատեց պիսերը, որ փայտն արագությամբ ծայրը միշտ թքոտելով՝ շարժում էր ծնկան դրած լայն տերևի վրա։

— Էն մեկալոնքը չասե՞նք,— հարցրեց գանգատավորը։

---

1 Շրջանային։

2 Չհամարձակվես։

— Ո՞նց չէ... Կարաս՝ հլա մեկ-երկուսն էլ ավելի ասա... Ամա կամաց ասա, որ գրեմ... խոզ Կարապետը... Դե հիմի ասա, հետո՞...

Սկսում էր զվարճալի դառնալ։ Այնքա՛ն ճիշտ էին պատկերացնում իրականությունը, այնքան նման շարժվածքներ, ձայն ու միմիկա էին ընդունել փոքրիկ դերասանները, որ քրքիջներին վերջ չկար։

Գանգատավորները ծոծրակնին էին քորում, գլխարկները մե՛կ թևի տակ, մե՛կ գագաթի վրա դնում, մե՛կ վախեցած ձևացնում իրենց, երբեմն ապուշի դեմք ընդունում և ապշության դիմակի տակ՝ կողմնակի աչք թարթում, խորամանկ ժպիտներ ցույց տալիս հանդիսականներին...

— Գրի՛,— արեց մեկը,— գանգատավոր ենք Աման-լպստողանց քոռ Արշակիցը, Տրեխի-կաշի գոմեշանց Արամիցը, Արաղի-բոչկենց Ստեփանիցը...

— Էդ խո հինգն էլավ...— նկատեց հանդիսականներից մեկը։

— Քու ի՞նչ բանն ա,— բարկացավ նրա վրա ստարշինան,— կուզի՝ թող տասը ըլի։

Իսկ պիսերը մի խեթ հայացքով շանթահարեց խոսող մանուկին և ասաց գանգատավորին.

— Էլի՞ կա... Դե հերի՛ք ա, միտս չի մնալ։

— Յանի մտքումդ ո՞ւր ես պահում,— խոսեց կծու հեգնությամբ գանգատավորներից մեկը,— էն ա գրել ես էլի՞...

— Կըլի որ կարանդաշը[1] կոտրվել ա՝ չի գրում,— ծաղրեց մի ուրիշը։

— Ձեր հո՞ն ողորմի,— ասաց պիսերը,— հրես կարդամ՝ տես ո՞նց ա գրում... Շուն-ուտողանց Սաքոն... էս վրա մեկը... Ստարշինա, մեկ մատդ ծալի՞... ծալեցի՞ր... Հը՞, ո՞նց ա... կարանդաշս կո՞տրած ա... Արաղ-կոնծողանց Ստեփանը... է՛ս վրա երկուսը...

— Հա՛, հա՛, հա՛...— քրքջացին ամեն կողմից,— կարանդաշդ կոտրած ա, Պե՛տի... ըտենց մարդ չկա...

— Բաս որ ասո՞ւմ ի,— արեց գանգատավորը ծաղրալից և խոնարհ,— կարանդաշը որ մի քիչ թքոտեիր՝ ըտենց չէր ըլիլ։ Արաղի-բոչկենց Ստեփանն ա. հա՛մ էլ, էդ վրա հի՛նգն ա, երկուսը չի...

— Կա՛ց, կա՛ց,— շփոթվելուց բարկացավ պիսերը,— ո՞նց թե... թող մեկ տեսնե՞մ... Ահա հա՛, տո՛... մթնել ա՛, աչքս չի տեսնում. վրա երկուսը՝ Գորտ-ծեծողանց խոզ Կարապետն ա... էլա՞վ...

— Էլավ։

— Ստարշինա, բաս մեկ մատդ էլ ծալի... Հմի, աղիս ասեմ, վրա երեքը՝ Աման-լպստողանց քոռ Արշակը... Մատդ ծալո՞ւմ ես, գոլովա։

---

1 Մատիտ։

Վրա չորսը՝ Տրեխի-կաշի գոմեշանց Արամը. էս մեր ոչ-փուչ Արամն ա... վրա հինգն էլ Արաղի-բոշկենց Տեփանը... Ո՞նց ա, կարանդաշս կո՞տրած ա...

Ու փքված ծիծաղեց։

— Է՛դ ա, կարանդաշը լավ ա գրել։

— Գանգատներդ քանի՞ մանեթի ա,— հարցրեց ստարշինան։

— Մանեթի բան չի, գոլովա...

— Փիե՛,— արեց ստարշինան,— էդ ի՞նչ գանգատ ա, որ փող չկա մեջը... Մենք ըտենց գանգատ չենք ընդունում. ընենց չի՞, պի՛սեր, առանց փողի զակոնը չի բանի...

— Ըտենց ա,— դիտեց պիսերը,— ամա կաց տեսնենք, կըլի որ մանեթի ճոնտը[1] երևա...

— Հլա ասեք տենանք,— աչքը կկոցեց ստարշինան։

Գանգատավորներից մեկն ավելի մոտ եկավ, գլխարկը թևի տակն առավ, պահ մի ծոծրակը քորեց, հիմարի պես ժպտալով նայեց սրանները, հետո խղճալի դեմք ընդունեց հանկարծ ու աղիողորմ ձայնով սկսեց.

— Երեկ իրիկուն չոլումը մեր տավարն էինք արածացնում, մե՛կ էլ տեսանք էդ շան տղերքը հարբած՝ Քարկողից են գալիս... «Բարիկուն»—«Աստծու բարին»... «Ա՛ շան տղե՛րք, էս ո՞ւր եք տավարը վեր թողել մեր ճարոցները»[2]... «Փիե՛, ինչի պիտի սա ձեր հարոցը ըլի, սա Կուլտվո՛ղանց հարոցն ա»...—«Ա՛ շան տղերք, դուք չե՞ք իմանում, որ Կուլտվող աղեն մեզ ղոռոտչի[3] ա դրել...»։ Ու տո՛ւր որ կտաս, փետները քաշեցի՛ն, մեզ մի լավ դնքսեցին... Իրանք էլ ծիծաղում էին... էլ կնի՛կ, է՛լ հոր գյոռը... մի լավ ջարդ ու խուշ արին ու ծիծաղելեն գնացին... Բա աստված վեր կառնի՞, որ էդ հարբան շները մեզ ծեծեն...

— Կա՛ց, կաց, տո՛...— աչքը բարկությունից կկոցեց ստարշինան,— ո՞ւր էիք բաս ձեր տավարը Կուլտվող աղի հարոցները վեր թողել, ադա՛...

— Դե ի՞նչ անեինք, տավարը քաղցա՞ծ, խոտ չկար... համ է՛լ ախր նրանց ի՞նչ բանն էր... սո՛ւտ էին ասում, թե ղոռուղչի են... հարբել էին, լակել Քարկողումը. Մեղրոտ Գիգոլի հետ շան նման լակել...

Բարձրացավ ընդհանուր քրքիջ։ Մեղրոտ Գիգոլ ասելով՝ գանգատավորը ստարշինային էր ակնարկում։ Ամենքը կռահեցին։

---

1 Ծայրը։

2 Խոտանոց, դաշտ, որ խոտ են ամեցնում և կամ հատուկ պահպանում են, ձմեռվա խոտի պաշար հավաքելու համար։

3 Դաշտերի պահապան։

— Ո՞ւմ, ում հե՞տ...— դեմքը կնճռեց ստարշինան։

— Մեղրոտ Գիգոլ շան տղու հետը...

— Ադա, էդ ո՞վ ա, որ ես չեմ ճանաչում...— ճչաց ստարշինան,— դու գիտե՞ս, պիսե՛ր...

— Ո՞նց չէ, գոլովա՛, էդ մի շունն ա, որ սկի օյաղ[1] չի ըլում. ողջ օրը հա՛րբած, խոզի նման թավալ-թավա՛լ. ընենց հարբում ա, որ կնի՛կն ա շորերը հանում ու մի չուլի տակ քցում, որ մրափի...

— Փիե՛...— արեց ստարշինան,— էդ ի՞նչ խոզն ա, տո՛... Ամա դե՛, էդ թող մնա հլա... Հա՛ (դարձավ նա դեպի գանգատավորը) բաս ասում ես էն շան տղերքը...

— Մեզ լա՛վ զխկեցին, ուշունց տվին...

— Էդ հե՛չ... ծեծել են՝ թող ծեծեն, հմի քա՞նի մանեթի ջառմա եք ուզում, որ կապենք։

— Ջա՞սի,— ծիծաղեց պիսերը,— հրեդ ա՛յ, մանեթների ճոնտը երևաց...

— Հա՛ շատ...— խոսեց գանգատավորը, —ընե՛նց զխկեցին, որ հա՛ր յուրն էլ քիչ ա...

— Ամեն մե՞կիցը...

— Թող ըտենց ըլի, մեզնից ի՞նչ ա գնում որ...

— Գրի՛, պի՛սեր... հինգ հարյուր մանեթ...

— Բա իրանց չե՞ք բռնոտել տալու։

— Ո՞նց չէ... մի լա՛վ էլ կդնքսենք... Ամա խո գիտե՞ք զակոնը... Գոտի դուք էլ հիսուն մանեթ տաք։

— Ո՞նց, տո՛... մե՞նք ընչի պիտի տանք։

— Զակոնն ընենց ա, հինգ հարյուր մանեթի ծախսը հիսուն մանեթ ա... էդ փողին ո՞նց են ասում, պիսեր։

— Ո՛սկոր...— արեց պիսերը, միշտ գրելով իբր թե,— ոսկոր են ասում, գոլովա՛...

— Տո չէ, չէ՛, էդ հայերենն ա, բաց զա՞կոնը ոնց ա՛ ասում. ո՞նց պիսեր ես, որ միտդ չի։

— Բու...— ձայնեց Պետին,— ընչի՞ միտս չի. օխտը հազար զակոնի գրքերը հրեն փորումս, բա է՞դ էլ չիմանամ... զակոնը էդ ոսկորին ասում ա «արուն»...

— Էդ խո հայերեն ա,— նկատեց Քանազը,— յանի թե արուն. որ կտրեն՝ արուն ա գալիս...

— Ա՛յ թե գիտես, հա՛...— ծիծաղեց պիսերը,— էն որ կտրում են,

---

1 Ջհարբած։

էն ա՞ռուն ա, ես՝ արո՛ւն ա... ա՛ռունն ուրիշ ա, արո՛ւնն ուրի՛շ... Ձեր խելքի բանը չի զակոնի խոսքերն իմանալը...

— Ինչ որ ա...— միջամտեց ստարշինան,— հիսուն մանեթ պտի տաք... տաս մանեթ էլ մյո՛ճրի[1] փող, մի-երկու մանեթ էլ փրավլենու[2] ծախսը... տվեք տենա՛նք...

Գանգատավորները սարսափահարների դեմքեր ընդունեցին և միմյանց նայեցին։

— Փիե՞...— ձայնեց մեկը,— համ ծեծը ուտենք...

— Նրանք էլ ծեծ կուտեն,— վրա տվավ Տելոն։

— Համ էլ փո՞ղ տանք...

— Նրանք էլ կտան։

— Մե՞զ կտան։

— Ո՞նց չէ,— ծիծաղեց պիսերը,— ջառման որ կա՝ խազնինն[3] ա, ձեզ նրանից մի կոպեկ էլա չի հասնի։

— Բաս մեր հիսուն մա՞նեթը...

— Է՛ն էլ խազնին կերթա... թե գնաց...

— Բա ըտենց բա՞ն եք տեհել, ա՛ խալիբը...— ճչաց գանգատավորներից մեկը,— չե՛նք ուզում, էլ գանգատավոր չենք...

— Ոնց թե չեք ուզում,— գոռաց Տելոն,— տո զակոնին ձե՞ռք եք առել. զակոնի ձեռքը որ ընկաք, էլ ազա՞տում ունեք. պիսերը որ գրեց՝ պրծա՛վ... էլ հմի ուզեք-չուզեք՝ դուք էլ եք զակոնի ճանկն ընկել, նրանք էլ... փողը պիտի տաք... իմացա՞ք...

— Տո իմացա՛նք, իմացա՛նք... ամա դե չե՛նք ուզում էդ զակոնը...

— Ձե՛նդ, հարամզա՛դա, ո՞նց ես ջուրաթ անում... հանեք շուտ հիսուն մանեթն ու ռա՛դ ըլեք... հանաք-մասխարութեն ա... Պիսե՛ր...

Սոսկալի էր այդ միջոցին «օրենքի հսկողը». աչքերը ոլորում էր, քիթն ավելի շուտ-շուտ վեր քաշում, ձեռքի ճիպոտով ոտն ուժգնությամբ ծեծում։

— Հրամայի՛ր, ստարշինա՛...

— Պրեդպիսանի[4] գրի քյոխվին, որ առաջ է՛ս շան տղերանցիցը բռնի հարյուր մանեթ առնի, հետո էլ է՛ն հարբածներին բռնոտի, ձեռքն ու ոտքը կապի ու մեր հրամանոց դիվանխանեն ղրկի...

Ամենքը լուռ էին. գանգատավորները կծկված՝ մի կողմ էին քաշվել, իսկ Քանազն ուրախ ժպիտը դեմքին՝ շարժվեց տեղիցն ու սրանների նայեց։ Հերթն իրեն էր գալիս այժմ։ Տազին իսկ առաջ եկավ. բեմ դուրս գալու ժամանակն էր։

Պետին իր փայտի ծայրով մի քանի բան խաղխզեց տերևի վրա ու տվավ Քանազին։

Սա դեմքը կնճռեց իսկույն, գլխարկը ետևից առաջ բերավ, ուշադրությամբ նայեց տերևին, մի «հը՛մ» արձակեց, ոտքի ելավ, շուխի ծայրերը ժողովեց ու խիստ դեմքով կանչեց.

— Է՛յ, գզի՛ր...

— Հրամայի՛ր, քյոխվա։

Ճի՛շտ Դուզանի գզիրի նման՝ երկար փայտ ձեռքին, կծկված, ամենատխմար դեմք ընդունելով և ժպտուն՝ առաջ եկավ։

— Էս սհաթիս,— կանչեց նրա վրա Քանազը,— գհղամեջ կերթաս, մեկ-մեկ ձեն կտաս էդ հարբաններին, որ էս նմուտիս[1] մեր հրամանոց դեմը դուրս գան... Գանգատավորներ, ադա, հարյուր մանեթը մինչև էգուց կբերեք՝ կբերեք, չեք բերի՝ էլ տավար չեմ թողալ գոմերումդ... Գնա՛, գզի՛ր...

— Հինգ հոգուն էլ կանչե՞մ, քյոխվա՛։

— Հինգին էլ։

— Բա որ ինձ դնքսե՞ցին։

— Թող հլա մեկ դնքսե՞ն... ընե՛նց ջառմա անեմ, որ սաղ տարին քաղցած զկոտան։

— Բա իմ ջի՞բը ինչ կմտնի։

— Գնա՛, շա՛ն տղա, կարաս, ջիբդ լցրու. թե քոթակ էլ տան՝ գզիրս ես, պիտի զակոնի հրամանը կատարես։

— Բա որ չգա՞ն, քյոխվա...

— Տո ես էլ հենց էն եմ ուզում որ չգան է՛է՛...

Տազին ծոծրակը քորեց քիչ ու մտավ մանուկների մեջ։ Իրարանցումն ընկավ։ Խաղը կենդանանում էր։

4

Ասպարեզը դեռ գզիրինն էր։ Նրա խղճից ու ճարպկությունից էր կախված գործունեության ձևը։ Պիտի ասել, որ Տազին պատվական, «ամենալավ տեսակի» գզիր հանդիսացավ. ոչի՛նչ չինայեց, ո՛չ ոքի չինայեց։

1 Կնիքի։
2 Վարչություն։
3 Պետական գանձարան։
4 Հրաման։

1 Բոպի։

Համարձակ գնաց ամենավերջին մանուկներին, կանգնեց նրանց առաջ ու գոչեց.

— Ադա՛, էյ, Աման-լպստողանց քոռ Արշակ, քյոխվեն քեզ կանչում ա, վեր կաց... Դո՛ւ էլ, տրեխի կաշի Արամ. քեզ էլ ա ուզում, Արաղի-Բոչկենց Տեփան...

— Վա՛յ,— ձայն տվավ առաջինը,— հենց մե՞զ տեսար, ա՛ շան տղա...

— Ուշունց մի՛ տալ զակոնի հրամանը կատարողին,— ճչաց ներշնչաբար Տազին,— վե՛ր կաց գնանք։

— Չի՞ ըլի, Տազի,— ասաց երկրորդը,— չի՞ ըլի, որ գնաս ասես, թե գեղումը չեն, չգտար...

— Ո՞նց կըլի, ադա, քյոխվեն կաշիս կպլոկի։

— Տո գնա ասա քաղաք են գնացել, է՛լի...

— Չի՛ ըլի, չէ՛, վեր կացեք... Դո՛ւ էլ, Շուն-ուտուղանց Սաքո... Դո՛ւ էլ, Գորտ-ծեծող Կարապետ։

Հինգ մանուկների մի առ մի մատնանիշ արավ, և նրանք, ըստ երևույթին, ընդունեցին խաղը։ Ամենքը ծիծաղում էին։

— Ես չեմ ուզում, կո՛րի գնա,— ասաց մեկը։

— Յանի էդ խա՞ղ էլավ,— ասաց Տազին՝ դերից դուրս գալով։

— Տո ես չեմ Սաքոն, հրեն այ, նրա անունն ա Սաքո։

— Ադա՛, յանի ես քո՞ռ եմ. հենց դո՛ւ ես, որ կաս Շունուտողանց Սաքոն... վեր կացեք ասում եմ է՛է՛, թե չէ, էն աստվածը, կերթամ կասեմ, թե չեն գալիս...

— Փիե՛,— արեց մեկը,— գալիս ենք, գալիս, հը՛... ա՛յ ես քու քյուրդ Տազի ասողին հա՛...

— Ադա՛, եկեք առաջ սրան մի լավ դնքսենք,— առաջարկեց մեկը։

— Ի՞նձ,— ետ քաշվեց գզիրը բավական վախեցած,— զակոնի հրամանը կատարո՞ղին։

— Տո զա՛կոնս որն ա, յանի չե՞նք իմանում, որ հոգիներս հանելու եք... ինչի՞ ա կանչում քյոխվեն։

— Ծեծել եք Սրապին, Մուկուչին, Գաբոյին...

— Սուտ են ասում, մենք սկի նրանց երեսը չենք տեսել։

— Էդ իմ բանը չի,— արեց Տազին,— ստարշինան թուղթ ա գրել, որ քյոխվեն ձեր ձեռքն ու ոտը կապի՝ ղրկի դիվանխանեն, Քարկող։

Եվ մինչ բացատրում էր, հանցավոր համարվողներից մեկը ոտի ելավ, մի կողմ քաշեց գզիրին ու ժպտալով ասաց.

— Չի՞ ըլի, Տազի, որ մի-մի բան տանք քեզ ու ռադ ըլես գլխներիցը... ըհ՛ը, մի մանեթն ինձնից։

— Փիե՛, ո՞նց կըլի,— ասաց գզիրը խորամանկությամբ,— բա գիամ ի՞նչ ասեմ քյոխվին... համ էլ, ա՞րժի մի մանեթի համար...

— Տո ըհը՛, երկուսը տամ։

— Չէ՛, Կարա՛պետ, ինձ փորձանքի մեջ մի քցիլ։

— Տո ասա հիվա՛նդ ա, մեռնում ա, յա թե չէ Կարապետը հրեն շոլումը... մի բան գտի է՛լի... ե՛րեք մանեթ կտամ։

— Չէ՛, չէ՛,— արեց գզիրը քիչ կակղացած, սակայն գլուխն երերցնելով,— որ գեղումը չըլեիր, յա Սարշեն, Հասար գնայիր... երեք մանեթն ի՞նչ զատ ա, որ իզուր քյոխվի ուշունցներն ուտեմ...

— Ադա՛, ի՞նչ գելն ես... բա ուզածդ ի՞նչ ա, որ պոկ գաս յախիցս։

— Դե ես ի՞նչ եմ ասում, Կարապետ, վեր կաց գնանք ու սկի՛ մի կոպեկ էլ մի տա... Հինգ մանեթն էլ հլա քիչ ա էն ուշունցների համար, որ պիտի լսեմ... Մեկ էլ տեհար զամչին հենց վրա բերեց ո՞ր...

— Փո՛ւ ես քու... տո բաս հինգ մա՞նեթ ա ուզածդ։

— Չէ, մեղա՛ աստծու, ես սկի կա՛պեկ չեմ ուզում, որ գաս գնանք հազրը հինգ մանեթը ջիբումդ կմնա։

— Տո գի՛տում եմ, գիտում, քյուրդի լակոտ... ըհը հինգ մանեթը, յախես[1] բաց թող...

Գզիրը երեսը շուռ տվավ ու ձեռքը պարզեց։ Կարապետը նրա բռան մեջ իբր փող՝ մի տերև կոխեց։ Տազին ծուռ հայացքով ստուգեց, որ ափի մեջ եղածը հինգանոց էր, գրպանը կոխեց, ծոծրակը քորեց ու ասաց.

— Յանի Կարապետ, գնամ քյոխվին ի՞նչ ասեմ հմի։

— Տո ինչ կուզես՝ ասա... Ես գյուղում չեմ, գնացել եմ Հասար՝ բանելու, ամիսներով չեմ գալու... Գնացել եմ Լալի գեղը եղ ու պանրի...

— Լա՛վ ա, ըտհենց կասեմ։ Ամա տես, իմ տրեխացուն դո՛ւ պիտի տաս հա՛... Հրեն ա՛յ, դռանդ առաջ մի ջուխտ կաշին իմն ա։

— Փո՛ւ ես քու.. ըհը, էն էլ քեզ առ...

— Այ սաղ ըլես... Գնամ, գնամ ասեմ գյուղումը չես։

Ասաց Տազին, երեսը շուռ տվավ գնալու, սակայն իսկույն դարձավ և ժպիտը դեմքին՝ ավելացրեց.

— Բա Կա՛ռապետ, էն տարին դու խոստացար երկու կոտ ցորեն... էն էլ չե՞ս տա. կալը խո պրծել ես։

— Տո ե՞րբ էի խոստացել, ա՛յ քյուրդ... Թալանելո՞ւ ես ինձ։

— Ինչի՞, մագամ ես դա՞լաղ եմ... Կուզես մի՛ տա... ամա որ քյոխվեն ինձ դամչիեց ու էլ հետ ետ ղրկեց, էն վախտը ո՞նց անեմ...

[1] Օձիքս։

— Վա՛յ ես քու... ադա բաս էլ ո՞ւր առար մանեթները, տրխացու կաշին։

— Կուզես ետ տամ, ախպե՛ր... քեզ խո լավություն չի ըլում անելը. երկու կոտ ցորնի համար հորս էլ գյոռիցը կհանես։

— Ա՛ հարամզադա, ցորենը չոլի՞ցն եմ գտել. բա դու խի՞ղճ չունես, որ էլի բան ես ուզում...

— Ինչի՞ ուզեմ, չեմ ուզում։ Քյոխվեն ինձ ղրկել ա, որ քեզ կանչեմ՝ անում եմ. չես ուզում գալ՝ գնամ ասեմ թե չի գալիս, համ էլ ինձ ուշունց ա տալիս։

— Տո ա՛ռ, արի, արի ցորենը տար, արի թալանի, պրծի՛ր, տունս սաղ դարդկի... ձեր քոքը կտրվի, քո՛նն էլ, քյոխվինն էլ, ստարշինինն էլ...

— Փի՛ե, փիե... էդ խո ընե՛նց ուշունցներ տվիր, որ թազա ծնած գառներիցդ մեկն էլ որ տաս՝ էլի դո՛ւ պարտք կմնաս... Ամա՛, հանաքը դենը, Կարո՛, էն օրը գառներդ տեսա... լավն են հա... քի՛ֆս եկավ. ի՞նչ կըլի որ մեկը բախշես աղջկանս, հետը խաղա։

— Տո կորի է՛. կորի, քանի կողքերդ չեմ ջարդոտել. քիչ ա մնում կնիկս էլ քաշ տաս, տանես։

— Կնիկ ի՞նչ եմ անում, մեկը շա՞տ եմ կարում պահի... Ուզածս մի գառ ա, ի՞նչ մաթահ զատ ա[1], որ ըտենց կատաղում ես... Հրես, ս. Գևորգի օրն ա գալիս, կտանենք մատաղ կանենք... Ես էլ քյոխվին կասեմ, ընենց կանեմ, որ աչքին էլ երևա՛ս՝ մոռացած ըլի... Դու էդ գառը տուր, մի քիչ էլ, շատ չեմ ուզում, երկու բլուլ[2] խոտ էլ հարոցիցը, որ ուտացնեմ գառան, չաղանա ու լավ մատաղացու ըլի... Հը՞, սրան ի՞նչ կասես, Կա՛ռապետ... աստված գիտի, ընե՛նց անեմ, որ քյոխվեն հետդ ճատի-կանգնի ու մոռանա, թե քեզ սուդ են կանչել, յա թե դու հարբել ու մարդ ես ծեծել։

Հանկարծ Կարապետը խեղկատակ դեմքով դեմքը ծռմռկեց, գլխարկը ուժգնությամբ գետին խփեց, ու վտանգի մեջ եղած մարդու նման՝ սկսեց գոռալ...

— Հասե՛ք, ա՛ խալխը, աստված սիրողը հասնի, գզիրն ինձ թալանե՛ց, տունս դարդկե՛ց...

— Հա՛, հա՛, հա՛...— քրքջաց Տազին,— ամա՛ հանաքչի ես ըլել հա՛, Կարո՛... Տո էլ ո՞ւր ես գոռգոռում, սաղ գեղը գլխիդ հավքում։ Ֆանի ի՞նչ ա ըլել, քեզ թալանեցի՞. տարածս մե՞ծ բան ա՝ հինգ մանեթ,

1 Ի՞նչ մի գանձ է։

2 Կազմված գուցե «բլուր» բառից. նշանակում է դեզ։

մի ջուխտ տրխացու, երկու կոտ ցորեն, մի գառը, երկու բլուլ խոտ... հը՞... հլա ռազի[1] չես, որ սյունից կախած էն չուխեդ էլ չեմ ուզում... իմը քրքրվել ա... բա որ քյոխվից, ստարշինից, պիսերից, պրիստավից ու նաչալնիկից աղատվելո՞ւ ես.. էդ քի՞չ բան ա... ի՞նչ ա, յանի չուխիդ մի փափախ էլ չե՞ս տա, որ գլխիս ծածկեմ...

Ու այնքա՛ն բնական էր Տազին այդ միջոցին, այնպե՛ս լավ իրեն վիրավորված էր ձևացնում և դիմացինին հանդիմանական շեշտով ճըն-շում, որ ամենքն անխտիր երկար ծիծաղեցին։

— Ադա՛,— կանչեց մանուկներից մեկը,— ըսենց ղորթ գզիր սկի՛ տեսել չէի, մեր Սահակին կծալի ու ջիբը կդնի։

— Կասես ջլի՛ս Քարկոդի գզիրն ըլի, տո՛,— նկատեց մի ուրիշը,— տեսել եմ. էդ նա՛ ա, որ ըտենց՝ համ եղ ա քսում գլխին, համ էլ մատները մեկ-մեկ պոկոտում...

Պահ մի խաղը դադարեց՝ տեղի տալով Տազին ուղղված ընդհանուր հիացմունքին։

Սակայն, դեռ ամեն ինչ չէր վերջացել։ Իրա՛վ է, Տազին մյուս հանցավոր համարվածներին թողեց առայժմ, բայց նա այդ բացատրեց, երբ հեռանում էր։

— Հլա կաց էս մեկի համար քյոխվին իմաց տամ, հետո կգամ մնացածներին։

Ասաց ու քայլեց դեպի քյոխվեն։ Ճանապարհին նա տրեխների կաշին (երևակայական՝ անշուշտ) պահեց խոտերի մեջ, ցորենի տոպրակը տարավ իրենց տուն (այդ բոլորը ձևացրեց նա), փողը թաշկինակի ծայրին պինդ կապեց ու գլխարկի տակը դրեց, հետո մտախոհ՝ մոտ գնաց քյոխվին ու լո՛ւռ կանգնեց նրա առաջ։

Քանաքը պաշտոնական կերպարանք ստացավ անմիջապես և հարցրեց.

— Հը՞, գզի՛ր, բերի՞ր։

Տազին նախ հիմարի պես ատամները ցույց տվավ քիչ, հետո դրժդոհ դեմք ստանալով՝ ասաց.

— Չբերի, քյո՛խվա... Առաջ Գորտ-ծեծողանց Կարապետի տունը գնացի... Շորագյալից[2] տասը մեշոկ[3] լավ ցորեն էր բերել՝ դարսում էր, կնիկն էլ ոչխարի պանիր էր աղում... Տան առաջը սաղ բռնել էին գառներով...

1 Համաձայն։

2 Շիրակ գավառ։

3 Պարկ։

— Ադա, քեզ բան եմ հարցնում,— բարկացավ Քյոխվեն,— ընչի՞ չեկավ։

— Բա ես ո՞նց անեմ, քյոխվա՛,— դեմքը երկարացրեց [illegible],— ցորենը բուռս առի, ընենց լավ ցորեն ա ո՞ր... մարդը գործ ունի... հլա թաղա չուխա էլ ա առել քաղաքիցը...

Քանազը մեկեն փոխեց պաշտոնական խիստ կերպարանքը, շուրջը նայեց, ապա կռացավ դեպի Տազին ու ավելի ցած ձայնով հարցրեց.

— Ադա, ղո՞րթ ես ասում... յանի տե՞սար՝ Շորագյա՞լու ցորենն էր...

— Էն աստվածը... ընչի՞, քո՞ռ եմ... համ էլ տա՞սը մեշոկ, լիքը տոզա՞լեն...

— Փի՞ հ... հլա գնանք տեսնանք մեկ...

— Վա՛յ, չէ, քյոխվա, չգնաս. գազազած ա։

Եվ կռանալով դեպի նա, խորամանկ ժպիտով ավելացրեց.

— Ինձ երկու մանեթ տվավ... ուզում ա մի կերպ պրծնի, գործի տեր ա խեղճը, ի՞նչ անի։

— Ադա, էդ ի՛նչ ես ասում... էդ ո՞ղդիան ա գտել էդքան փողը... բաս գնա, սարքի տենա՞նք։ Այ, քսան մանեթից պակաս չլի հա՞... հինգ կոտ էլ ցորեն... որ մի կես փութ էլ պանիր առնես՝ մի-երկու կտորը քեզ։

— Էդ շա՞տ ա, քյոխվա։ Չի՛ տալ. մեկ էլ տեսար ասավ թե՝ «կերթամ դիվանխանա»... ու գնաց, հետո՞, ձե՞ռքդ ինչ կընկնի... Հլա ստարշինան էլ ա պոկելու։

— Տո ի՞նձ ինչ. ես իմը կառնեմ, ստարշինան ուզում ա, թող կաշին ոլոկի։

— Բա պրիստա՞վը, սուդե՞բը, պի՞սերը...

— Ադա, նրանց ցավը մե՞զ են տվել... ինչ ուզում են թող անեն. քանի հլա չեն սկսել, թող լավ պատառները հազր մեզ հասնի՞... էդ ա, քսան մանեթ, հինգ կոտ ցորեն ու կես փութ պանիր. կաբաս՝ մի հատ էլ գառը պոկ տու՝ տանենք մեշեն, քեֆ անենք։

— Դժա՞ր թե ըլի, քյոխվա,— ծոծրակը քորեց Տազին,— արի տաս մանեթի ու երկու կոտի կապենք... հլամ մեկալոնք էլ կան, նրանցից էլ մեկ էդքան կառնենք՝ ու մի լավ, եղալի գործ կդառնա։

Քյոխվեն ժպտուն՝ քիչ մտածելուց հետո, ասաց.

— Ադա, քյուրդ Տազի, յանի դրո՞ստ, հենց երկու մանե՞թ առիր...

— Աստվա՛ծ, երկինք...

— Ցորե՞ն, պանի՞ր...

— Մեղա՛ աստծո... որ ուզեմ էլ՝ կտա՞։

Քանազը ոտքի ելավ։

— Հլա գնանք մեկ ինքս տենամ ի՞նչ կանեմ,— ասաց նա։

— Վա՛յ, չէ՛, քյոխվա,— դեմը փակեց Տազին,— որ գնացել ես՝ կպատաղի. մեկ էլ էն տեհար՝ թարսվեց ու դուզ-դբա ստարշինան գնաց. էն վախտն էլ զադ չի ընկնի ձեռքդ. դիփ ստարշինան կուտի։

— Ադա, ղորթ ես ասում... Բաս դու գնա, տենանք ո՞նց կսարքես... ինչքան կարաս՝ պլոկի հա՞...

. . . . . .

Եվ ո՞վ գիտե, հետո ի՞նչ պիտի լիներ, քյոխվեն, ստարշինան և այդպես փոքրից մինչև մեծը ինչպե՞ս պիտի թալանեին, մերկացնեին գյուղացիներին, եթե մի միջադեպ վրա չգար և քարուքանդ աներ խաղը, ոչնչացներ ամեն ինչ։

Հանկարծ լեռնալանջի մյուս մասից մի խռպոտ, մի այլանդակ ազազակ ռումբի նման եկավ ընկնելու մանուկների մեջ։

— Ա՛ շան տղերք, ա բենայանե՛ր, ա՛յ ես ձեր...

Դարձանք սարսափահար։ Մի ինչ-որ մարդ, ահագին փայտը ճոճելով, կարտուզը պինդ կոխած գլխին, չուխի ծայրերը գոտկի մեջ՝ կատաղաբար վազում էր դեպի մեր կողմը և հայհոյո՛ւմ, հայհոյո՛ւմ...

Մանուկներն ահարեկ ոստնեցին, վայրկենապես ամենքը լեղապատառ՝ նետվեցին ամեն ուղղությամբ, իսկ Տազին սոսկումով ճչաց.

— Ադա քյոխվեն ա, տավարնին հարոցներն են մտել, վազե՛ք։

Հիրավի, երբ վեր նայեցի, ի՞նչ տեսնեմ... Տավարները բլուրներից, կարծես խոսք մեկ արած, խմբովին իջել-մտել էին գյուղացոց խոտանոցներն ու ախորժակով հնձում էին պարարտ խոտերը։

Քյոխվան, որ երևի գյուղից անցնելիս տեսել էր այդ, կատաղած, փրփրած, ցուպը սպառնալից երերցնելով՝ վազում էր ջարդելու փոքրիկ նախրապաններին, որոնք գունդուգլոր՝ սլանում-փախչում էին ամեն ուղղությամբ։

Սրա-նրա ետևից ջանաց հասնել ահարկու իշխանը, փայտը գլխի վրա պտտեցնելով քանիցս նետեց այս ու այն փախչողի ետևից, հայհոյեց խոզային ճիչերով... սակայն ոչ ոքի հասնել չկարողացավ։

Քիչ հետո մնացինք ես ու աղջիկները։

Սրանք էլ ոտքի էին ելել։ Նայեցին ինձ, ծիծաղեցին և ճիպոտները վերցրած՝ գնացին դեպի սագերը։

Եվ երբ իջել խճուղու վրա՝ դեպի ետ էի նայում, տեսա դեռևս խուսափող ոտներ, կատաղությունից փայտը այս-այն կողմ նետող քյոխվին, որ փորձում էր գոնե մեկին ծեծած լինել. բարձրանում էր բլուրներն ի վեր, իջնում ծործորները... Նրա առջևից, գնդակների նման արագ

գլորվում, անհետանում էին մանուկները, իսկ սագերը սարսափահար ճիչերով ու թևերի թափահարումներով՝ սահում էին դեպի վտակը։

Սարալանջերն ամայացան. քյոխվի չոր, այլանդակ ստվերն էր միայն, որ երբեմն երևում էր այս-այն կողմ՝ նման հոտի մեջ ավեր սփռող կատաղած գայլի...

1905

ԾՈՎԱՓԻՆ

1

Որոշեցի Գելենջիք գնալ այդ ամառ։ Բժիշկները ծովային բաղնիք էին պատվիրել, այլև ծովային օդ և ափի ավազուտների վրա փռվելու անգործություն։ Քայքայված ջղերս այդ կերպով միմիայն կարելի էր հանգստացնել։

Լավ էր, գոնե երեք ամիս կարող էի ազատ մնալ այն ճնշիչ միջավայրից, ուր ամեն ինչ գնալով՝ գարշելի կեղծիքներից և նվաստացնող համակերպություններից էր հյուսվում. ուր չէի՛ն բավականանում միայն լուռ մնալովս, այլ պահանջում էին գործակցություն՝ նոր սերունդին մղելու համար դեպի գծած և ստրկամիտ բթություն, այլև ամեն լավ բանից, նույնիսկ գիտությունի՛ց խորշելու ապականությունը։

Ուսուցիչ էի.— ահա բացատրող բառը։ Ուսուցիչ՝ 1905 թվից մի քանի տարի հետո, այն ետադարձ մռայլ ժամանակներում, երբ պայծառ ու ոգևորիչ օրերին հաջորդում էին թանձրացող խավարն ու լռությունը՝ ընդունակ մեղկացնելու ամենքին, ջլատելու ամեն կյանք...

Երբ գնացք նստեցի, սկսեցի զգալի կերպով հանգստանալ։ Ջանացի մոռանալ դպրոցը, վատասերվող աշակերտությանը և մանավանդ՝ իմ ընկերներին—ուսուցիչներին, զզվելի այդ խմբին, որ, կարծես, ընտրած ու կազմած լիներ հատկապես ետադարձ շարժման ասպետներից, մռայլ օրերի գարշ որջերից ծնած մարդագայլերից։

Ու մի անգա՛մ ևս սարսուռով մտաբերեցի ամեն ինչ։ Հիշեցի բարձրաձայն, հանդուգն կերպով «կրթող» բթամտությունները, ընկերներիս քծնող դիրքը «իշխանության» առաջ, նրանց «ուղղիչ» ստրկական դասերը աշակերտներին...

Պատկերացավ ապա թշվառ, գալարվող, ապականիչ բռունցքի տակ մանրացող նոր սերունդը, որ հետզհետե կորցնում էր ամենայն անվեհերություն, ոտքերի տակի կայանն էր դուրս սահում և գնում էր նա գլորվելու դեպի աննպատակության անդունդը։

Վերանորոգվեցին մտքումս թե ի՛մ կրած տանջանքները այդ սոսկումների մեջ և թե՛ այն մի քանի ընկերակիցներիս ու դեռ չփչացած աշակերտների դրությունը, որոնք ամեն ճիգ ի գործ էին դնում ազատ մնալու մշուշից, ազատ՝ սմքեցնող խավարից...

Բայց, այլևս բավական էր, չէ՛ի ուզում այդ ամենը. այժմ պետք էր մտովի՛ն ևս հեռանալ, գնալ այնտեղ՝ այն հեռավոր անծանոթ ափերը, մաքուր օդի մեջ ապրել փոքր-ինչ, պայծառ արևի տակ շնչել և կյանք վարել առանց կեղծիքների, առանց սրտմաշուկ ձևականությունների։

Ա՜հ, այո՛, լավ էր, շա՜տ լավ։ Սիրո՛ւմ էի ծովը։ Վաղուց էր, որ չէի տեսել։ Անտառից ու բաց դաշտերից ավելի՝ ծովն էի սիրում։

Հրճվանքով սկսեցի մտածել, որ պիտի ամբողջ ժամերով նստեի ջրի անհուն այն կապուտակ տարածության առաջ, ակնարկս հորիզոնին, ականջս մշտակա, օրորող շշուկին և հոգիս լի խաղաղ անէությունով, թեթևացնող զգացումներով։

Երրորդ օրն առավոտյան տեղ հասա։ Սիրուն էր Գելենջիքի տեսքը։ Սև ծովի խորշերից մեկի շուրթին էր պառկած՝ մացառուտ պուրակների և ցանցառ ծառատունկերի խառնուրդի մեջ։

Ծոցը նման էր խոշոր ափսեի. ավելի ճիշտ՝ ասիական սափրիչների կոնքին։ Գյուղը բռնել է նրա վերին մասը։ Մի քանի երկար, կանոնավոր, բայց փոշոտ փողոցներ էին. ճերմակ ու պարտիզալից տները, ցանուցրիվ ամեն ուղղությամբ, տաքանում էին պայծառ, ջերմ արևի տակ։

Մի կողքը սահմանավորված էր թավոտ լեռների շղթայով, իսկ հյուսիսային մասը հրվանդանաձև պարզված դեպի ծովը, ետևի կողմից գահավանդներ էր կազմում նրա բաց տարածության վրա։

Հեռվում երևում էին խիտ անտառներ. մոտի եղաջները մեծ մասամբ փոշոտ ու փլոտ պուրակներ էին՝ տոթագին և անստվեր խորքերով։

Արևալից, ծիծաղախիտ այդ վայրը շատ դուր եկավ ինձ, մանավանդ, երբ շոգենավից նավամատույց իջա և պահ մի կանգ առա դիտելու հրվանդանի տարածուն եզերքները։

Խաղաղ էին ծոցի ջրերը՝ միապաղաղ հայելու հարթությունով. տեղ-տեղ միայն հազիվ նշմարելի կնճիռներ էին գոյանում, այլև աթեթ գգվող ճառագայթների տակ ոստոստում էին բյուրավոր սպիտակ կայծեր։

Ափերի մոտ ջրերի պարբերական շարժումը խլրտոցով լվանում էր

ավազը։ Այդ իսկ շփումն էր, որ այնքան հանկուցիչ և ախորժալուր հնչեց ականջիս։

Քաշում էր ինձ այդ ամենը. քաշում էին մանավանդ այն հեռավոր անկյունները, ուր ժայռերի կույտերը հովանի էին սփռում ծովափին, և ուր կարելի էր պարզել ծովի առաջ, ջրի երթուղարձի ողողումները ոտքերիս մոտ ունենալ և շառաչումների ամանակի տակ երազել անվե՛րջ...

2

Սենյակ շո՛ւտ գտա։ Ընդհանուր լողարաններից հեռու, անմիջապես ծովափին, կային լավ ամարաստաններ։ Ծաղկավետ պարտեզներով շրջապատված մի տան մեջ տվին ինձ բնակարան և խոստացան ամեն հարմարություն։ Թանկ չէր. վերնահարկ էր, ծովը դիմացս, անտառոտ լեռները դեպի աջ, լողարանի հատկացրած փայտյա խղի՛կ ծոցի մեջ և, որն առավելն էր, խաղաղ ու լուռ տեղ լինելով, կարելի էր անշշուկ հանգստանալ, գիշերները անվրդով քնել։

Երբ տեղավորվել էի, հագուստս փոխել ու լվացվել, իջա ծովափ և գնացի դեպի հեռուները։

Բնակությունները վերջանում էին մի քանի հարյուր քայլ դեպի ձախ։ Այնուհետև կանաչագեղ մարգերն էին և վերջապես փոքրիկ փարոսը, որի աշտարակն ու տնակը կառուցված էին հրվանդանի վերջին ծայրին։

Հասնելով դաշտը, գնացի ծովափին մոտ ու ժայռերի միջով իջա դեպի եզերքը։ Միապաղաղ շերտավորումներով բնական քարաթմբեր էին այդտեղ։ Ժամանակի ընթացքում կտորներ էին կորզվել նրանցից և գլորվելով դեպի ջուրը՝ խութեր գոյացրել։ Նման լերկ գանգերի, ժայռերից մի քանիսն ունեին իրենց շուրջը ծովային ճապաղ բույսեր, որոնք ծփում էին ջրերի հետ և անընդհատ երերումներով՝ նուրբ փրփուր մղում դեպի ավազները։

Այդտեղ նստեցի ես մի խոշոր սալի վրա և մտադրեցի ոչի՛նչ չմտածել, ոչի՛նչ չհոգալ, ոչի՛նչ չզգալ ու, եթե ջրի պարբերական շառաչը նինջ ազդեր՝ քնել ծովի օդը թոքերիս մեջ լիաբերան, դեմքս պայծառ երկնքին և վերևում ճախրող թռչունների ճուվողյունների տակ։

Ննջե՛լ... Ահ, այո՛, եթե կարողանա՛յի մի անգամ գոնե քնել կուշտ, անհագորեն. եթե մի միակ օր հաջողվեր ինձ լիովին անէանա՛լ քնի մեջ, չվրդովվել հրեշային անրջանքներով, մղձավանջների զոհ չդառնալ, քնել առանց որևէ երազի, առանց ջղային տքնումների...

Թիկն տված մի ժայռի, խոհերս ցանուցրիվ և ոստոստուն, ակնարկ ծփացող ջրի զանգվածին, լիովին անշարժ, և անփութության նվիրած

մարմնով ամեն բոպե պատրաստվում էի քնելու, երբ հանկարծ մի խշշրատոց լսեցի գլխիս վերևում, և մեղմությամբ վրաս իջնող թմրությունը անհետացավ վայրկենապես։

Սաստիկ զայրացած ու ջղայնացած շտկվեցի՝ տեսնելու համար, թե ի՛նչն էր այն գարշելի պատճառը, որ մի անգամ ևս վրդովում էր հանգիստս և, ինչպես միշտ, քնելու մոտ եղած ետին բոպեին գալիս էր ոչնչության մեջ նետելու ինձ։

Մի աղջիկ էր այն։ Մոխրագույն պարզ շրջազգեստ և բաց վարդագույն բաճկոն հագած մի կին, որ ձեռքին հաստ գիրք ուներ, իսկ գլխի վրա ծածանում էր երկու ծայրերը բաց թողած մետաքսյա նուրբ շալը։

Իջնում էր արահետով։ Արահետ, որ հեռվից էր պարզվում դեպի այդ կողմը։

Ուղղվելուն պես՝ երկուսիս ակնարկները հանդիպեցին միմյանց։

Աղջիկը կանգ առավ վարանած։ Չէր կարծում պատահել այդտեղ մեկին։ Երևի կարդալու էր գալիս. իր մենավոր անկյունն էր, որ պատահմամբ բռնել էի ես։

Սիրուն աղջիկ էր։ Շեկ, կապուտաչյա և ոսկեգույն մազերի գողտրիկ սանրվածքով։ Կամ ռուս պիտի լիներ և կամ ավելի շուտով՝ գերմանուհի։ Չնայելով սիրունությանը, դեմքի վրա կար ինչ-որ տխուր, մռայլ ստվեր։ Ժպիտի ո՛չ մի նշույլ, ոչ էլ ծիծաղկոտության բնորոշ խորշոմներ։ Ընդհակառակն, ճակատի տակ, հոնքերի միջոցը ակոսված էր երկու ուղղահայաց խոր գծերով, որոնք դեմքին տալիս էին խորհողի և ղնեղի կերպարանք։

Շատ մոտ չէր, և այդքանը հազիվ կարողացա տեսնել մի ակնարկով. մանավանդ որ աղջիկը երբ տեսավ ինձ, պահ մի վարանած կանգ առավ, հետո դարձավ և հանդարտ ու վես քայլերով, ստանց ետ նայելու՝ գնաց։

Գնաց, հասավ վեր, քայլեց նույն ծանր շարժումներով ավելի հեռու, և քիչ հետո շրջազգեստի վերջին ծայրն էլ ջնջվեց բարձրության վրայից։

Քունս փախել էր այլևս։ Ճշմարիտ է, բուռն զայրույթս և քնել չկարողանալու սովորական ջղայնությունս շա՛տ ավելի մեղմացել էին, որովհետև, որքան չլիներ՝ պատճառը մի օրիորդ էր, մի սիրուն կին, սակայն այլևս չկարողացա վայելել dolce far niente[1], որին այնքան անձկությամբ ձգտել էի։

---

1 Կյանքի հոգսերից մեկուսանալու (բառացի՝ ոչինչ չանելու) հաճույքը (իտալ.)։

Փորձեցի փոքր-ինչ էլ մնալ անշարժ, աչքերս փակել, նորից ծովի շշուկին ականջ դնել, նրանով օրորվել, մոռացության մեջ ընկղմվել... բայց անկարելի եղավ։ Աչքերս ակամա բաց արի և դեպի վեր, տարօրինակ աղջկա անհետացած բարձրությանը ուղղեցի։ Միտքս էլ այն կողմն էր գնում։ Ու պատկերացնում էի երևույթը։

Հիրավի, ի՞նչ էր այն, ո՞վ էր։ Ինչո՞ւ արդյոք այնքան տարորեն թվաց ինձ նրա երևույթը. հանկարծականությո՞ւնն էր պատճառը, թե՞ արդարև, աղջկա դեմքի ու շարժվածքների վրա կա՛ր նորանշան բան։

Վայելուչ ու շքեղ հասակով, վեհ քայլվածքով կին էր, ամեն ինչ համաչափ՝ դեմքի վրա, հագուստը անպաճույճ, բայց գրեթե օդային, թևերը բաց, ճերմակ ու գիրգ... Դե՛մքն էր, աչքերն ու ճակատն էին տպավորիչ. տմույն ճակատ՝ երկու խոր ակոսների վրա հենած կարծես, իսկ կապույտ աչքերը ծովի նման անծայրածիր և խո՜ր...

Արդյոք մոտակա ամառանոցի բնակի՞չ էր, թե՞ գուցե մի ջլախտավոր ինձ նման, որ մենություն ու հանգստություն էր որոնում ժայռերի խոռոչների տակ...

Ջնայե՞լ արդյոք, թե որտեղ գնաց։

Իջա ժայռից ավազների վրա, մինչև իսկ մի քայլ արի վեր ելնելու համար։ Բայց այդտեղ կանգ առա և ամոթ զգացի։ Ուրեմն ահա, հետապնդելու էի գնում մի անծանոթ կնոջ. ճիշտ ինչպես սովորական կնախնդիր. նրանցից, որոնք ո՛չ մի շրջազգեստ բաց չեն թողնում առանց հետապնդման։

Ո՛չ, փոքր ի շատե լուրջ մարդը այդպես չէր անի։ Պետք էր սպասել։ Ամառանոցը մեծ չէր, հանդիպել միշտ կարելի էր նրան ծովափնյա զբոսավայրերում, լողարանների առաջ, փողոցների մեջ և կամ մանավանդ նավամատույցի վրա, ուր խռնվում են ամառանոց եկողները՝ ամեն շոգենավ գալու ժամանակ։

Ջբարձրացա։ Մինչև իսկ մտածեցի այնպես անել, որ չհանդիպի նրան գոնե մինչև մի քանի ժամ։

Այդ էր պատճառը, որ երբ կամեցա տեղս փոխել, ուղղակի վեր չբարձրացա այդ կողմից, այլ ջանացի եզերքներով անցնել շատ հեռու։

Սեղմված ժայռերին, քսքրտվելով կավոտ շերտերին, ոստնելով ի ուժնիխուժ, գնացի հեռու և առաջին դեմ ելած արահետից ելա՝ վեր հասնելու համար։

Հաշվովս՝ փարոսին մոտ պիտի լինեի։ Պահապանի շավիղը կարծեցի. բավական դժվար, տեղ-տեղ մագլցելով ելնելու շավիղ, որ շորերս ազատոտեց, ճակատս քրտինքով ծածկեց։

Վերջապես, հասա վերջին ապառաժին, պտույտ գործեցի նրա շուրջը և մի վայրկյան նստեցի հանգստանալու։

Բայց հազիվ ոտքս դրել տափարակի վրա, ուղղվում էի և շունչ առնում, որ դեմառդեմ եկա դարձյալ նույն աղջկան և շփոթված կանգ առա։

— Ա՛,— թեթև շարժում գործեց աղջիկը։

— Ներեցեք...— կմկմացի ես։

Երկուսս էլ նայեցինք միմյանց ու անցանք։

Ակնարկս խոնարհեցրել էի աղջկա հայացքի առաջ և զգացել, որ զայրույթից գունատվում էի։

Ջայրանում էի այդպիսի հիմար զուգադիպության վրա։ Հիմա ի՞նչ պիտի մտածեր աղջիկը. չէ՞ որ կարող էր կարծել, թե հետապնդում են իրեն և այն էլ ոչ թե համարձակ, այլ գաղտագողի կերպով։

Վատ զգացմունքով լցված շտապեցի հեռանալ այդտեղից և գնալ դեպի տուն։ Ո՛չ, այլևս հրվանդանի այդ կողմերում չարժեր մենավոր անկյուն ունենալու մասին մտածել։ Հարկավոր էր մյուս ափը անցնել, դեպի բաց ծովը։ Գոնե չէի հանդիպի միառժամանակ այդ աղջկան։ Փողոցում կամ մի տեղ էլ եթե հանդիպեի, վճռում էի խուսափել նրանից, վրան չնայել, ապացուցել, որ ամենևի՛ն էլ չէի հետապնդում, չէի հետաքրքրվում նրանով, և որ եղածը հիմար զուգադիպության խաղեր էին միայն...

Բայց ո՞ր աստիճան գունա՞տ էր այդ աղջիկը մոտից։ Գունա՞տ։ Ո՛չ, ավելի շուտով դեղնագույն էր, ինչպես նորահաս ծիրան՝ կարմիր շերտերի ցայտումներով այտերի վրա։ Աչքերը, ապա այն խոր, երազուն աչքե՞րը, որոնք կարծես անդրաշխարհային բաներ էին որոնում տարածության մեջ և որոնք այլանդակորեն հակասում էին իրենց շրջանակավորող տխուր, օ՜հ, խի՜ստ տխուր կնճիռներին...

Ո՛չ, այդպես չէր, լավ չէի տեսել դեռ. այն դեմքերից չէր, որ մի հայացքով կարելի լիներ ըմբռնել, բայց այն դեմքերից էր, որոնց կամենում ես դարձյալ հանդիպել, դարձյալ տեսնել, զննել, հասկանալ... և սակայն միշտ դեռ չե՛ս հասկանում, կատարելապես չես զննել...

3

Երբ տուն հասա, կեսօրվա մոտ էր։ Տանտիկինը պարտեզում մի ծառի հովանու տակ թիկնաթոռի մեջ ընկղմված՝ կարդում էր։ Սուրճի պատրաստություն կար առջևի մեծ սեղանի վրա։

Տեսնելով ինձ, մոտ հրավիրեց, աթոռ հրամցրեց և սուրճ առաջարկեց։

— Ճաշը ուշ կլինի,— ասաց նա,— եթե անոթի եք, կերեք նաև կարագ և պանիր։

Կերա իհարկե։ Խոսեցնել սկսեց։ Հարցրեց ամեն ինչ։ Շատ ցավեց՝ լսելով հիվանդությանս մասին։ Խոստացավ ամեն հնարք գործ դնել, որ խաղաղ կյանք ունենայի և գիշերները անվրդով քնելու հարմարություն։

— Ձեզ վերևում դրացի չունեք,— ավելացրեց սուրճ լցնելով,— ներքևի՛ց միայն կարող եք աղմուկ ունենալ, այն էլ երբե՛ք գիշերները։ Սենյակներից մեկը որդիս է զբաղեցրել, մյուսը իմն է ու աղջկանս, երրորդը տվել ենք երկու ուսանողների։ Դրանք ամենքն էլ, աղջիկս թեև ո՛չ այնքան, զվարթ երիտասարդներ են. սիրում են երգել, պարել, կանչել, շատ աղմկել և... անհամության չափ էլ սիրաբանել գրացի աղջիկների հետ... ջահելություն է. անխուսափելի պահանջներ են դրանք... Դուք մի՞թե չեք սիրում այդ ամենը։

— Որո՞նք,— հարցրի ես ժպիտով...— սիրաբանե՞լն ու աղմկե՞լը։

— Երկուսն է՛լ. երգե՛լ էլ, պարել էլ։

— Ո՛չ մեկն էլ դժբախտաբար չգիտեմ։ Կուզեի սովորել. գուցե հենց կազդուրվելու ամենալավ միջոցները լինեն դրանք։

— Շատ կարելի է. ջղերը հանգստացնելու ամենալավ միջոցն է՝ լինել անհոգ, վարժվել անհոգության։

Եվ այնուհետև ես սկսեցի հետաքրքրվել, թե ո՞վ էր այդ սոսկալի կերպով նիհար, կմախքի նմանվող տիկինը, որ կարծես Լովկասցի լիներ և ո՛չ ռուս։

Երևաց, որ Նովոռոսիյսկ բնակվող, իսկական մայոռուս էր, բավական մեծ կարողության տեր. ժառանգել էր ամուսնուց։ Ամեն տարի այդտեղ էին գալիս։ Իրենցն էր տունը։ Որդին շուտով պիտի իրավաբանական ուսումը ավարտեր, իսկ աղջիկը սեպտեմբերին մտնելու էր բժշկականության բարձրագույն դպրոցը՝ Պետերբուրգ։ Ունեին կալվածներ, որոնց կառավարում էր ինքը՝ տիկինը։

Ուսանողները Մոսկվայից էին. մեկը իսկական ռուս էր, մյուսը՝ էստոնացի։ Մի՞թե էստոնացու երբեք չէի հանդիպել։ Հետաքրքիր մարդիկ են. շատ հայրենասեր—նեղ հայրենասեր մինչև իսկ. բայց լուրջ և երազող մարդիկ։ Լուրջ և երազող, այո՛։ Դժվար է այդ երկու հատկությունները միացած տեսնել, բայց այդ էստոնացին այդպես էր։

Այդ բոլորը տանտիկինս պատմեց շնչաթգել ընդմիջումներով. տակը էր խեղճը։ Հետո, երբ վերջացրեց իր մասին, սկսեց ինձ հարցուփորձել։

— Իսկ դուք,— հարցրեց նա,— ինչպե՞ս եք գտնում Գելենջիքը, դո՞ւր է գալիս ձեզ... Ասացիք, որ ուսուցիչ եք... Ներեցե՛ք, ինչպե՞ս է ձեր անունը... Երվա՞նդ... Հենց այդպե՞ս՝ պարոն Երվանդ. մի՞թե ձեզնում միայն անունն են տալիս... Այո, պարոն Երվանդ, հասկանալի է ինձ շատ լավ, թե ինչո՞ւ դուք ջղային հիվանդություն եք ստացել... Օ՜հ. ուսուցիչ լինել այսպես օրերո՜ւմ... մեկ օր չէի կամենա...

Ու դարձյալ ինքը սկսեց խոսել։ Պատմեց, թե իր մի ծանոթը, վաղուցվա մի ծանոթ, որ ջահել ժամանակ նրա ձեռքն էր խնդրել, բայց ծնողներից մերժվել էր, այդ մարդը ուսուցիչ էր Թիֆլիսի մի գիմնազիայում։ Սոսկալի բան էր լինել ուսուցիչ գիմնազիայում, այո, այն էլ տեղացի տղաներով լի գիմնազիա։

— Ուսուցիչ եմ հենց այդպիսի մի գիմնազիայում,— ասացի ես դեմքս կնճռելով,— ծանոթ եմ եղածների հետ։

Տանտիկինս ավելի ուրախացավ կարծես և սկսեց պատմել տեղացի աշակերտների մասին։— Հարբա՜ծ գալ դասի, խորոված շինել դասարանում, օղի՛ խմել... Օ՜հ, ո՛չ դաս սովորել էր մնացել այլևս, ո՛չ պատկառանք, ո՛չ վախ և ո՛չ էլ իշխանության առաջ «դողալ»... Սրիկանե՛ր, ուղղակի սրիկաներ էին դարձել նրանք. մտրակել էր հարկավոր, բանտեցնել... բայց ինչ արած, ժամանակները այդպես էին. ջղային տարիներ էին, տակնուվրայության, անիշխանության շրջան էր...

Զգացի, որ արյունը գլխիս էր խփում, որ ջղային դրության մեջ էի ընկնում դարձյալ, որովհետև նորից հիշեցնում էին ինձ այն ամենը, ինչից ես փախել էի այնքան հրճվանքով և ինչի մասին այդտեղ լսելն անգամ չէի ցանկանա։

Բայց Աննա Վասիլևնան—այդպես էր տանտիկնոջս անունը—մտադիր էր դեռ շատ բան ասել. ցաված տեղ ուներ, շատ բաներ էր տեսել աչքովը, շատ նեղություններ էր քաշել «անիշխանական» դրությունից, նյութական վնասներ էր կրել...

Բարեբախտություն էր ինձ համար, որ այդ միջոցին պարտեզի դռնից ներս խուժող քրքիջն ու աղմուկը եկան վերջ դնելու տանտիկնոջս ողբերին։

— Ահա՛, ահա. ահա վերջապես մեր շարաճճիները,— ընդհատեց իր գանգատները Աննա Վասիլևնան և նայեց այն կողմը,— կծանոթացնեմ, և պիտի տեսնեք, որ ձեզ ևս պիտի վարակեն իրենց զվարթությունով։

Դռնից պարտեզ մտնողները երեք օրիորդներ էին և երկու պարոն։ Պակասում էր մի պարոն, ավելացել էին երկու օրիորդներ։

Աղմկալից մուտքը շարունակություն չունեցավ սակայն։

Դեպի մեզ պարզվող ծառուղու սկզբում դադարեցին ծիծաղները։ Օրիորդները, որ առջևից վազում էին, կանգ առան քրտինքները սրբելու. երկու պարոնները ծղոտե գլխարկները հանեցին և ժպտուն՝ նրանցով հովհարել սկսեցին թե՛ իրենց և թե՛ աղջիկների կարմրած դեմքերը։

Եվ այդպես լուռ՝ քիչ հետո գնացին դեպի սուրճի սեղանը։ Ուսուցիչը ոտքի ելավ։ Աննա Վասիլևնան ծանոթացրեց ամենքիս։ Օրիորդներից մեծը—սևահեր մի աղջիկ, տանտիկնոջն էր. մյուս երկուսը՝ մանկահասակ և թխլիկ շեկեր, դրացի ամառանոցից էին։

Պարոններն ուսանողներն էին։ Էստոնացին և ռուսը։ Տանտիկնոջ որդին չկար հետները։

— Իսկ ո՞ւր է Սերյոժան,— հարցրեց մայրը։

— Թողինք ծովափի վրա,— խոսեց շեկերից մեկը,— Ադելաիդա Իվանովնան տանը չէր. ասացին, որ գնացել է ծովափ. մենք Սերյոժային հրամայեցինք, որ մինչև Ադդային չգտնի, իրավունք չունենա մեր աչքին երևալ։

Ու ծիծաղեցին՝ աչքերը քթթելով։

— Օ՛խ իմ խելոք աղջիկներ,— գլուխն օրորեց տանտիկինը,— կարծել եք պատժել Սերյոժային, բայց հե՛նց իր ուզած գործին եք դրել։

— Է՛հ, մայրիկ,— ասաց աղջիկը,— ո՞վ չգիտե այդ. Սերյոժան չի էլ ծածկում. մանավանդ այստեղ։

— Միա՞յն այստեղ,— խոսեց մայրը.— դուք՝ հիմիկվան ջահելներդ նույնն եք ամեն տեղ, ամեն ժամանակ. այլևս ոչ մի պատկառանք, ոչ մի շրջահայացություն...

Հետո, երբ օրիորդները ուսանողների՝ ներսից բերած աթոռների և իրենք՝ ուսանողներն էլ գետնի վրա տեղ էին բռնել, Աննա Վասիլևնան գարձավ ինձ և ավելացրեց.

— Կնախնդրությունը այժմ ամենանորելուկ բանն է. եթե չգիտեք, դուք էլ իմացեք այդ, պարոն ուսուցիչ... ջահելների պչրանքն ու պարծանքն է այն. ամոթ է կնախնդիր չլինել, ասպետություն չգիտենալ, չունենալ մի քանի հատ «համակրություն»-ներ, որոնց բարձրաձայն նվիրում են այնպիսի սիրալիր խոսքեր, որ եթե մենք լսեինք մեր ժամանակներում, ամոթից գետինը կմտնեինք, այո՛... Չէ, չափազանց ազատամիտ է մեր այժմյան ոսկի երիտասարդությունը...

Եվ ելավ մեկնելու։ Երբ աթոռը հեռու էր դրել ու պատրաստվում էր գնալու, ցույց տալով ինձ, ասաց.

— Խնդրեմ պատվել ու սիրել մեր նոր հյուրին, պարոններ. կովկասցի հայ է, ուսուցիչ... Ճաշը, տղայք, ժամը ճիշտ 2-ին. հետո ով ցանկա՝ պտույտ դեպի Կանաչ հրվանդանը՝ Մարթայի կառքով։

— Այն տգեղ կին կառապանը,— ասաց ռուս ուսանողը։

— Որ անգլիացու է նման իր՝ տղամարդու հագուստով և ժոկեյի գլխարկով,— ավելացրեց էստոնացին։

— Այո՛,— ասաց տանտիկինը, հետո ողջունեց և հեռացավ։

Նրա գնալուց հետո պահ մի խոսակցությունը դարձավ կին-կառապանի վրա։ Ապա տանտիկնոջ աղջիկը, որ ուշադրությամբ զննում էր ինձ, հարցրեց իմ որտեղացի լինելը, հիվանդությանս մասին տեղեկացավ և այլն։

Այնուհետև պահ մի ամենքն էլ հետաքրքրվեցին Կովկասի այն հեռավոր մասով։ Էստոնացին ուզեց իմանալ հայերի մեջ տիրող ոգու մասին. թե արդյոք ետադարձ շարժումը զո՞րեղ հետևանքներ էր արտահայտում, իշխանությունները ավելի՞ խիստ էին, իսկ սպանություններ, թալաններ ու հափշտակությունները... Ճշմարի՞տ էր, օրինակ, որ Թիֆլիսի մեջն անգամ օր չէր անցնի առանց մի քանի հափշտակությունների կամ սպանությունների։

— Ասում են, որ մարդ մորթելը կամ հավ մորթելը միևնույնն է Կովկասում,— ասաց շեկ օրիորդներից մեկը,— օ՛հ, ի՛նչ սոսկալի կյանք է ձեր կյանքը։

Ռուս ուսանողը ավելի խո՛րը մտավ և տեղեկություն ուզեց ունենալ ինտելիգենցիայի մասին։ Արդյոք իմ հայրենիքո՞ւմ էլ մարդիկ, մանավանդ մտավորականները, հուսաբեկված ու հոգով տկարացած՝ կամ ընչինություններով բավականանալու չափ ընկել են և կամ ոտի տակի հողը կորցրած՝ իրենց քայլերը դեպի ճահիճներն են ուղղում և տիրմը իբր կայան ընդունելու վարժվում... Արդյոք այնտե՞ղ էլ, ինչպես երկրի ամեն կողմերը, դպրոցները, ապագա սերունդը կաղապարող այդ հիմնարկությունները, սկսում են խավարի և իմաստակության իշխանությունը վերականգնել. ուսուցիչներն էլ ժամանակի ետադիմությանը հլու հպատակ, իսկույն հարմարվելով՝ որպես կամակատար դռնապանը իր աղային, դարձել են զարհուրելի արարածներ, «ավելի թունդ կաթոլիկներ, քան նույն ինքը պապը»...

Օրիորդները թեև խմում էին այդ խոսակցության ընթացքում, բայց և երբեմն դեպի իրար ականջը կռացած՝ որևէ խոսք էին ասում և լուռ ծիծաղում։ Տանտիրոջ աղջիկը, կանգնած սեղանի մոտ, լրջությամբ ականջ էր դնում՝ հեգնող ժպիտը դեմքին։ Բայց երբ ուսանողը իր խոսքերով հիացած ու ինքն իրեն մտրակելով սկսեց ավելի հեռու արշա-

վել—դպրոցներից է՛լ հեռու, օրիորդը նայեց և ասաց նրան ձանձրացողի շեշտով.

— Դադա՛ր առեք, Վալերիան Գրիգորևիչ, դադա՛ր առեք, ի սեր աստծո։ Մի՛ մոռանաք, որ 1905 թվականը մնաց չորս տարով ետ, որ ձեզ լսողները, ավա՛ղ, այդ ամենը շատ լավ գիտեն արդեն և զզվել են, մեծապե՛ս զզվել ամեն հիշատակությունից՝ ախտի, գծուծությունների, խավարի և խուլիգանությունների մասին... Մեկ ձեր շուրջը նայե՛ք... ծաղի՛կ, արև՛, ծո՛վ. արտույտները ահա վերևում ճախրում են և երգում, անտառում հանկուցիչ ստվերներն են մեզ կանչում, մեր չորս կողմը լի է դալ։այլներով, ձեզ մոտ նստել է խաղ, ծիծաղ, երգ և միմիայն սեր, միա՛յն սեր որոնող երիտասարդություն, և դուք հնադարյան մղձավանջնե՞ր եք պատկերացնում մեր առաջ... Թողե՛ք, թողե՛ք այդ ամենը. ետ մի՛ նայեք, այլ միշտ առաջ։ Մի՛ տխրեք, այլ ծիծաղեք միայն. ապա թե ոչ՝ աշխա՛րհը կծիծաղի ձեզ վրա։ Ապրենք, մի՛միայն ապրենք ու կյանքը վայելենք. ուրիշ ոչի՛նչ, ո՛չինչ...

Ու ջղայնորեն ծիծաղեց. ծիծաղ, որ ծաղրի էր նման, քան խնդության և ուրախության։

Զգացի այդ, զգացի նաև աղջկա ձայնի դառն շեշտը և առանձնապես սկսեցի զննել նրան։

— Օ՛հ, այո՛,— հաստատեց իր ընկերուհու ասածը շեկ օրիորդներից մեկը,— կյանքը շա՛տ կարճ է՝ տխրելու համար։ Չարժե տխրել, հոգալ, մտածել... Ապրենք, խնդանք, երգենք ու վազվզենք. ա՛յդ է լավը...

Ռուս ուսանողը, որ իր ոգևորության ճեպընթացությունից ետ մղված՝ հանկարծակիի էր եկել, քիչ շվարած սրան-նրան նայեց խղճալի դեմքով, հետո ժպտաց, ձեռքը թափահարեց և գոչեց.

— Եվ իսկապե՛ս... Գրողի՛ն թող երթա այդ ամենը. խաղանք, պարենք ու սիրենք... Կեցցե՛ կյանքը...

— Ահա այդպես,— քրքջաց տանտիկնոջ աղջիկը,— դա ավելի է սազում ձեզ ամենքիդ, այժմյան երիտասարդության... Թողե՛ք ոխակությունը. այժմյան վարդերը (և նա ցույց տվավ երկու օրիորդներին) նոր ձևի դալ։այլներ ու երգեր են ուզում... ուրախ, կենսաբո՛ւյր մոտիվներ և ո՛չ թե ողբեր ու վայնասուններ...

— Ա՛յ թե սոխակ... նման է, ինչպե՛ս չէ,— ծիծաղեց օրիորդներից մեկը,— ավելի հնդկահավի էր նման Վալերիան Գրիգորևիչը, երբ խոսում էր... Գրողի՛ն թող երթան ճառախոս հնդկահավերը...

Եվ սկսեցին կատակներ. տափակ, երբեմն էլ համով սրախոսությունները ծայր առան. քրքիջ, կանչ, ուրախ աղաղակ՝ գնալով աճեցին։ Հետո, երբ նախաճաշը վերջացրել էին, օրիորդներից մեկը վազեց դեպի պարտեզի խորքը, ռուս ուսանողը հետապնդեց նրան. էստոնացին էլ երկրորդի հետ իջան դեպի հափրուկների ածուն, և ես ու տանտիկնոջս աղջիկը դիպվածաբար այդպես մնացինք մենակ, նստած սեղանի առաջ։

Լիզա էին կոչել աղջկան. չէի մոռացել այդ։ Բայց միայն «օրիորդ Լիզա» ասելը քաղաքավարի չէր լինի ռուսների տեսակետով. հոր անունը պետք էր իմանալ։

Ահա ա՛յդ միտքս եկավ առաջին րոպեին, երբ մենակ մնացինք։ Հետո շփոթություն եկավ վրաս. սովոր չէի՛ այդպիսի դիպվածական ու հանկարծական միայնության՝ սիրուն օրիորդների հետ. մանավանդ որ Լիզան չէր խոսում, ի՛մ էլ խոսելիքս չէր գալիս. ուղղակի՛ բերանս չէր բացվում, թեև դարձյալ մտածեցի հարցնել նրա հոր անունը։ Հարցնե՞լ արդյոք. այդպե՞ս սկսել խոսակցությունը։ Գռեհի՛կ բան. ո՛չ միայն գռեհիկ, այլև տափակ, անհամ։ Նստել էի այդքան ժամանակ և շնորհք կլունեի մի բան խոսելու...

Զարմանալի՛ գրավիչ աղջիկ էր, այո՛. նոր էի միայն նկատում և նո՛ր, ավելի մանրամասնորեն զննում։ Գրավիչ և հմայող նույնիսկ։ Թեև մարմնով նիհար էր երևում, դեմքն ու ձեռքերը գիրգ էին, ճերմակ. խնամքով սանրված մազերի, ճոխ մազերի. սևահեր էր, խոշոր, տրոփալից և քաշող աչքերով։ Հոնքերը խիտ. գրեթե արմատներով միմյանց էին կպչում։ Մրահոն էր. մի գեղեցկուհի, որ ավելի կնո՛ջ էր նման, քան օրիորդի. թե՛ մարմինն էր զարգացած և թե՛ կուրծքը. ապա շրթունքնե՛րը.— ուղղակի զարմանալի էին այդ րոպեին. բոլո՛ր, որպես նոր բացվող վարդ, այլև լիքը, դողդոջուն՝ կարծես համբույրներ էին պահանջում...

Այլևս մոռացած, որ պետք էր խոսել, որ անհաճ բան էր լուռ մնալը— ամբողջովին կլանված մնացի իմ զննողությանով. կլանված ու այնքան հմայված, որ հուզմունքից ու ցանկությունից սկսեցի դողալ։

Բայց այդ բոլորը մի րոպե տևեց։ Ուժ տվի ինձ, ամփոփեցի ինքզինքս, վայրկենական ինքնամոռացությունից հաջողվից ազատվել և շտապեցի խզել լռությունը։

— Ներեցեք, օրիորդ,— խոսեցի քիչ դողդոջ ձայնով,— կարելի՞ է իմանալ ձեր հոր անունը։

Լիզան ցնցվեց և ինձ նայեց հարցական զարմանքով։ Չըմբռնեց հարցմունքիս պատճառը։

— Հարցնում եմ,— շարունակեցի ես՝ արդեն ինքս ինձ գտած և ավելի հանդարտ ձայնով,— որովհետև չգիտեմ ինչպես կոչել ձեզ. մեզ մոտ անունն են տալիս։

Լիզան վերստացավ իր հայացքը և գրավիչ մի ժպիտ դեմքին՝ ասաց.

— Միևնույնն է. կոչեք այնպես, ինչպես ձեզ մոտ ընդունված է։ Սակայն հորս անունը Նիկոլայ է։

— Այդպես ավելի լավ է։ Ներեցեք, Ելիզավետա Նիկոլաևնա, բայց ինձ թվում է, որ դո՛ւք էլ պիտի վազեիք այդ մյուս օրիորդի նման և կամ ՀաղիԿների մոտ իջնեիք՝ այս երկրորդի պես։

— Այդպե՞ս... ինչո՞ւ անպատճառ։

— Որովհետև ինքներդ խրատում եք ուրիշի, ուրեմն և ամենից առաջ դո՛ւք պիտի գործադրեք. մինչ դուք, ահա, մնացել եք մենակ և նստած այստեղ։

— Է՛հ, ի՞նչ արած,— չարաճճի ժպիտով ինձ նայեց Լիզան,— միշտ չի՛ հաջողվում զույգ կազմելը. ես «կենտ» եմ այստեղ։ Բայց եթե ախորժակ ունեք վազելու համար իմ զույգը դառնալու...

— Օ՛հ, ո՛չ վազելու համար առայժմ... բայց ուրախությամբ ձեզ ասպետություն կանեմ, եթե արդեն չունեք ուրիշը։

— Երևում է, որ Կովկասից եք գալիս,— ծիծաղեց աղջիկը,— մեզ մոտ բազմասպետությունը պարծենալու նորույթն է. որքան շատ ասպետ, այնքան մեծ պարծանք։

Ու դարձյա՛լ քրքջաց իր այն ծիծաղով, որ ծաղրի էր նման, և դառնության շեշտ էլ կար մեջը։

— Բայց,— ավելացրեց նա,— նորությունների սիրահար չե՛մ ես. չե՛մ էլ սիրում, որ իմ ասպետը շատ տիրուհի ունենա... գոնե ինձ հայտնի։

— Խանդոտ եք։

— Այո՛, խանդոտ։ Ձե՞ք տեսնում հոնքերիս [illegible]ը,— ծիծաղեց Լիզան.— ինձ ասել են, որ խանդոտները ա՛յդպես հոնքեր են ունենում։

— Եվ որովհետև ձեր հոնքերը այդպես է,— կատակեցի ես,— ուրեմն և դուք պարտք եք համարում խանդոտ լինել։

Ծիծաղեց՝ գգվող ակնարկը վրաս, ոտքի ելավ և ասաց.

— Կատակում եք. այդ լավ է. կարծեցի թե մռայլ ու տխուր մարդ եք. ճի՛շտ ուսուցիչ՝ անշնորհք և անճաշակ... բայց ո՛չ... երբ ասպետի պետք ունենամ...

— Ամե՛ն րոպե,— ասացի ես։

— Ո՛չ այժմ,— ժպտաց նա։ Հետո հավաքեց բաժակները, գլխով նշան արավ, որ պիտի տուն տանի ու վերադառնա և հեռացավ վայելուչ քայլվածքով։

Բայց զարմանալի բան. հե՛նց որ մի քանի քայլ գնացել էր, չգիտեմ ինչո՞ւ, մտապատկերների որպիսի՛ անըմբռնելի հաջորդումների շնորհիվ, թվաց, թե նա տանտիրուհուս աղջիկը չէր, այլ առավոտվան, ծովափում տեսածս օրիորդը։

Զգայախաբության ենթակա չե՛մ եղել ես, բայց այդ րոպեին, երբ նայում էի հեռացող Լիզայի ետևից, մի ամբողջ վայրկյան կատարելապես այն աղջիկը երևաց ինձ. նույն գորշ շրջազգեստն ու բաց վարդագույն բաճկոնը։ Նույն վեսքայլվածքը և ուղղաձիգ բռնվածքը։

Համոզվածի պես էի նույնիսկ, որ եթե դառնար դեպի իմ կողմը, անշուշտ պիտի վրաս հառեր իր խորունկ, կապույտ աչքերը, սառեցնող, ակնարկ խոնարհեցնող հայացքը։

Ու անախորժ զգացմունքով համակված, զգայախաբության պատրանքից ազատվելու դիտումով ուժ տվի ինձ և ակնարկս դարձրի դեպի հափրուկի ածուն։ Էստոնացին և շեկ աղջիկը այժմ ավելի կռացած դեպի միմյանց, նստել էին թումբի վրա և քշփշում։ Ռուս ուսանողն էլ երկրորդ օրիորդի հետ հասել էին պարտեզի հեռավոր կողմերը, ուր թփուտներն էին և ունեին անցողակի համբույրներ քաղելու հարմար խորշեր։

Գիտեի՛ն այդ երիտասարդները վայելել կյանքը լիաբուռն, ամեն քայլում։ Գիտեի՛ն առնել բնությունից՝ ինչ կարելի էր՝ ծաղկի բուրմունքը, օդի անուշությունը, արևի ժպիտը, այլև ապրելու այն մե՛ծ, վսե՛մ հրճվանքը, որ սիրո համբույրների տակ է փթթում, բացվում և գիտե արհամարհոտ վեսությամբ քայլել փշերի վրայով, եթե նո՛ւյնիսկ արյունոտվի...

Օգտվում էին վայրկյանով։ Հիրավի՛ զվարճանում էին ու ծիծաղում աշխարհի վրա, ապա թե ոչ՝ աշխարհը կծիծաղեր նրանց վրա...

Ելա նստածս տեղից, շուրջս նայեցի և ափսոսացի, որ չէի կարողացել գրավել Լիզային ու մոտս պահել, մի երրորդ զույգ էլ ե՛ս կազմել առանց ժամանակ-րոպեն կորցնելու, գնա՛լ դեպի ծովախորշերի ափերին գտնվող ժայռերի հովանիները, պարտեզների խորքերում կռացած խնձորենիների մթության մեջ և կամ թփուտների թաքստոցների ետևում՝ քաղե՛լ կյանքից հնար եղածին չափ շատ և շուտ ամե՛ն հաճույք, ունենալ կարելի եղածին չափ ավելի՛ քաղցր րոպեներ և կենսապարար մոռացումներ...

Այդ իսկ միջոցին էր—զույգերին աչքիս առջևը տեսնելու նախանձի և նրանց նման անելու տենչանքի աճման րոպեին, որ պարտեզի դուռն կողմից լսվեց տղամարդու մի հնչեղ ձայն, ծառուղու ծայրին նախ երևան եկավ մի ուսանող և նրա կողքին հայտնվեց վարդագույն բաճկոնով մի աղջիկ...

Նա՛ էր։ Երրորդ անգամը լինելով՝ նա՛ էր, ծովափում տեսած աղջիկն

իսկ, որ դարձյա՛լ դիպվածով դեպի ինձ էր գալիս, իր վեց քայլերով, ծովանման ակնարկը կարծես անհունության մեջ մոլորուն։

Ադդան էր։

4

Բնազդաբար ոտքի ելա և մնացի կարկամած։ Ակնթարթորե՛ն սթափված, մոռացա զույգերն ու իմ խանդը, մոռացա նույնիսկ տենչանքս՝ վայելելու կյանքը, զույգերի նման օգտվելու երիտասարդությունից և ծիծաղելու աշխարհի վրա...

Այս ամենը ցրվեցին այնպե՛ս, ինչպես առաջին անգամ Ադդայի երևույթը ցրել էր ծովափում վրաս իջնող երջանիկ թմրությունն ու անէությունը ունենալու հաճույքը։

Մոտենում էին։ Ինձ դեռ չէին տեսել։ Ուսանողը բարձրաձայն պատմում էր ինչ-որ մարդու մասին. լսում էի, բայց ոչինչ չէի հասկանում։ Ադդան, գիրքը միշտ թևի տակ՝ քայլում էր ուղղաձիգ շարժումով. դեմքի վրա գոյացել էր անորոշ մի ժպիտ։ Երբեմն էլ ինձ անլսելի ձայնով մի-մի բառ էր արտասանում. շրթունքներն էին շարժվում մի վայրկյան։

Քանի մոտ էին գալիս, ա՛յնքան ավելի լավ էր հաջողվում վերջապես զննել այդ տարօրինակ աղջկան։ Առաջին շփոթությունս ու կարկամությունս անցած՝ նստեցի և սկսեցի նայել։

Այնքան մոմեղեն ու անշարժ չէր երևում այլևս նրա կերպարանքն այժմ, ոչ էլ մեռելատիպ։ Խոշոր, կապույտ աչքերին հովանավորում էին բավական թավ հոնքեր, հետո մի սովորական ճակատ էր, որը երկու կողմից հավաքված վարագույրների էր նման, սանրվածքը իջել՝ գնում ծածկում էր գրեթե ամբողջ ականջները։

Սակայն այդքան գողտրիկ, այդքան գրավիչ դեմքի և ուշադրության արժանի վայելուչ շարժվածքների վրա, նույնիսկ սիրուն ժպիտի մեջ՝ սավառնում էր ինչ-որ տխո՛ւր, հուսաբե՛կ ու սրտմաշուկ սավեր, ինչպայման կերպով գերակշռում էր բոլոր մյուս տպավորություններին։ Մարդ չէ՛ր կարող չհամակվել այդ թախիծով, այդ գրեթե անհույս արտահայտությունով, որ ընդունակ էր ամեն ծիծաղ սառեցնել շրթունքների վրա։

Բայց կողքից գնացող երիտասարդը կամ այդ չէր նկատում և կամ, սովոր նրան, մինչև իսկ մի տեսակ նորօրինակ հրապույր էր համարում սիրուն կնոջ վրա. այնպե՛ս, ինչպես սուգի հագուստը՝ գեղեցիկ ու վայելչակազմ այրիի համար։

Եվ ուսանողը լիաբերան քրքիջների հետ կատակներ էր ցրում ամեն ողղությամբ, պատմում էր, կոտրտվում, սիրալիրություններ շռայլում...

Նրա ձայնն ու խնդումը իրենց հեշտօրոր երազանքներից դուրս կորզեցին պարտեզի մեջ ցրված խմբերին։ Թփուտներից դուրս եկավ առաջին զույգը և երկրորդն էլ հափրուկի ածուից ելնելով՝ տնկվեցին եկողների առաջ։

— Ահա և Ադդան,— ձայնեց հեռվից օրիորդներից մեկը և սկսեց վազել։ Ռուս ուսանողն էլ ետևից։

— Այդ ո՞րտեղից գտաք նրան,— ձայնեց մյուս շեկը։

Եվ ամենքն էլ հավաքվեցին ածուների կողքին։ Ես մնացի բավական հեռու, սուրճի սեղանի մոտ։

Ըստ երևույթին Ադդան նկատել էր ինձ, որովհետև իմ կո՛ղմը նայեց կարճատեսի շոշափող հայացքով և մի բան հարցրեց աղջիկներից մեկին։

Այն ժամանակ էստոնացին եկավ դեպի ինձ և ասաց.

— Գնանք մեզ հետ, պարո՛ն. ծանոթացնեմ ձեզ մի ուսանողուհուց, որ շատ ինքնուրույն տիպ է։

Ու երբ գնում էինք դեպի խումբը, ավելացրեց.

— Բժշկականության ուսանողուհի է։ Շա՛տ լավ աղջիկ է, բայց օ՛հ, շատ հոռատես և հիասթափված. ամեն բանի մեջ միայն վատն է տեսնում... արևի վրա անգամ սև բծեր է որոնում, այո՛...

Մոտեցել էինք։ Ինձ ներկայացրին։ Մեր ակնարկները հանդիպեցին, և Ադդան նոր նկատեց (կամ նկատել ձևացրեց), որ իր տեսած մարդն էի ես։

Հոնքերը թեթևակի պռստեց, բայց իսկույն հետո վերստացավ իր ժպտուն ակնարկը և ասաց.

— Երրորդ անգամն է, որ հանդիպում ենք այսօր, պարո՛ն։

— Ահա՛ թե ինչ,— ձայնեց օրիորդներից մեկը,— այդ որտե՞ղ։

— Ծովափին։

— Փոքրիկ տեղ է,— միջամտեց էստոնացին, չե՛մ զարմանա, եթե մի ամսից հետո ամենքն այստեղ իրար այնքան հանդիպեն, որ սկսեն միմյանց։

— Երևի երկրորդ հանդիպումին ենթադրեցիք, որ հետապնդում էի ձեզ,— ասացի ես Ադդային։

— Մի բոպե՝ այո՛,— ասաց նա,— բայց հետո դուք, թե գուցե ընդհակառակն ինձնից խուսափելու համար էր, որ նորից դեմառդեմ եկանք... փարոսի մոտ եղած ժայռի վրա կանգ առա և նայում էի ձեզ ետևից. մի անգամ իսկ ետ չնայեցիք։

Խոսում էր թեև դուրեկան ձայնով, բայց միապաղաղ, առանց այն աշխույժ ելևէջների, որ կյանք է ներշնչում ամեն խոսակցության։ Ժպիտը պաշտոնական էր, քաղաքավարական, իսկ խոսելու ձևը՝ սառը, չոր։

Բայց Սերյոժան նորի՛ց սկսեց և զվարթությամբ ասաց՝ դառնալով օրիորդներին.

— Ահա հենց այդ ժայռի վրա էր, որ տեսա ես Ադելաիդա Իվանովնային... Ասենք դժվա՛ր էլ չէր իմանալ, թե որտեղ է նա. առաջի՛ն, որ օրիորդը սիրում է միշտ ջրի եզերքներին նստել ու երազել, երկրորդ, որ ձկնորսը անգամ գիտե օրիորդին, երրորդ՝ ասպետական իմ բնազդը...

— Լավ, այլևս հերիք է,— ընդհատեց նրան քույրը, որ այդ միջոցին վրա էր հասնում։

Երբ Լիզային տեսավ Ադդան, ետ քաշվեց, ավելի՛ սառը կերպարանք ստացավ և թեթև, գլխով բարևեց։ Նույնը՝ Լիզան։ Ձեռք չտվին իրար, ոչ էլ ժպտացին։

Իսկույն նկատեցի, որ առհասարակ այդ երկու աղջիկները բարեկամ չէին միմյանց. ինչ-որ խուլ ատելություն էր տածում յուրաքանչյուրը դեպի մյուսը, բայց երկուսն էլ ճգնում էին ծածկել օտարներից։ Ասենք, նրանք բնավորությունով էլ միմյանց հակառակ էին։ Որքան Լիզան քաշող, հմայող ու գրեթե խելքից հանող ժպիտ, քաղցրախոսություն և բավական վայելուչ ձևեր ուներ աչքերի անդիմադրելի հրապույրի հետ, նույնքան, ընդհակառակն, Ադդան վանող, սառը շարժումներ ուներ և սարսռեցնող հայացք։

Տանտիկնոջս որդին սակայն, ըստ երևույթին, շատ էր պտույտ գալիս Ադդայի շուրջը։ Կամ, հիրավի, գրավված էր նրա խորհրդավոր գեղեցկությունով և կամ գոնե ժամանցի համար այդ ամառանոցում, իրեն սիրուհի էր ընտրել ինքնատիպ աղջկան ու նրանով շքամոլություն էր անում, պարծենում էր։

— Ո՛չ, ո՛չ,— բողոքեց Սերյոժան, երբ քույրը դադարեցրեց նրան,— ո՛չ, ես դեռ չորրորդն էլ ունեմ ասելու... պնդո՛ւմ եմ, որ լսեք ինձ, բողոքում եմ...

— Դե՛ լավ, գրողը քեզ հետ, բարբառի՛ր ուրեմն,— ասաց ռուս ուսանողը,— ով գիտե ի՞նչ խոզություն պիտի ասես։

— Եվ կամ նոր տեսակի մի շողոմարարություն,— ավելացրեց էստոնացին։

— Բայց, պարոննե՛ր, օրիորդնե՛ր,— ձեռքերը բարձրացրեց Սերյոժան, իբր թե պաշտպանվելով հարվածներից,— ի՞նչ արի ես ձեզ, որ

բարկացրել եք ինձ... Միթե ես հայտարարեցի՞, օրինակ, հենց ձեր մասին, էդվարդ Գուստավովիչ և օրիորդ Սուսաննա Պավլովնա, որ մեր խեղճ ածուի թումբերն եք տրորել և ծաղիկները ջարդելով սիրաբանել, չմտածելով, թե մայրիկը ինչպե՞ս պիտի բարկանա...

— Ա՛յ դու խո՛զ...— կանչեց էստոնացին։

— Շնորհակալություն... Իսկ ձեր մասին մի՞թե ոչիշներ կպցրի, Վասիլի՛ և օրիորդ Զինաիդա Պավլովնա, թե թփուտների տակ մորի որոնելու էիք գնացել, և թե այնտեղից չփչփոցների ձայներ էին լսվում...

— Անպիտա՛ն, անպիտա՛ն,— վազեց դեպի նա Զինաիդան կարմրելով,— ստո՛ւմ եք, ո՛չ մի չփչփոցի ձայն չեք լսել դուք...

— Դե՛հ, այլևս հերիք է, պարոննե՛ր,— նորից միջամտեց Լիզան և կանգնեց եղբոր ու Զինաիդայի միջև,— բավական է այս ամենը. դանե՛նք զբաղման, ժամանցի ուրիշ նյութ...

Ապա դարձավ դեպի Ադդան և պաշտոնական դեմք ստացած, ավելացրեց.

— Եղբայրս և այս պարոնները խնդրեցին ձեզ, Ադելաիդա Իվանովնա, որ մեզ հետ ճաշեք այսօր և պտույտի գնանք Կանաչ հրվանդանի վրա։

— Քանի որ եկել եմ,— ժպտաց Ադդան ավելի զգալի կերպով,— ուրեմն համաձայն եմ. Սերյոժան հայտնեց ինձ այդ։

Նկատելի կերպով Լիզան հոնքերը կիտեց և եղբորը նայեց։ Ինձ թվում էր, թե նա նեղացավ, որ Ադդան պարզապես «Սերյոժա» մտերմական ձևով էր կոչել երիտասարդին։

— Կուզե՞ք, պարոններ,— առաջարկեց Լիզան իսկույն ինքն իրեն զսպելով,— կուզե՞ք գնանք իմ լուսամուտի առաջ, այն մեծ վարդենու մոտ։ Այժմ հովն ընկել է այնտեղ. ձեզ աթոռներ կտամ դուրսը նստելու. իսկ ես ներսում կնվագեմ։

— Գնանք,— ասաց ռուս ուսանողը, —ես միշտ ախորժով է որ լսում եմ ձեզ, կարող եք հավատացած լինել։

— Իսկ ես,— խոսեց էստոնացին,— ուղղակի սիրահարվում եմ ձեզ վրա, երբ նվագում եք։

— Իսկ դո՞ւք, օրիորդներ,— ասաց հմայիչ ծիծաղով Լիզան՝ դարձած դեպի օրիորդները,— դուք էլ երևի սիրահարվում եք ինձ վրա, երբ այս պարոնները հմայվում են...

Ապա քրքջաց և առաջ ընկավ։ Կատակներն ու ծաղրաբանությունները նորից սկսեցին. հետո, որովհետև ծառուղին շատ լայն չէր, կազմվեցին ինքնըստինքյան զույգեր, և ես գտնվեցի ամենից վերջը, Ադդայի հետ։

Ո՛չ ես խոսեցի և ո՛չ նա։ Իրար կողքի ընթացանք, առանց միմյանց նայելու։ Սերյոժան էր երբեմն, որ իր կողքի ընկերուհուն թողած, գառնում էր դեպի Ադգան և սրախոսություններ անում։

Ադդան լուռ էր՝ մշտական ժպիտը դեմքին. աչքերը այլևս չէի՛ն նայում ոչ ոքի. ուղղված հեռուները, թվում էր, թե ինչ-որ ստվերներ էին որոնում տարածության մեջ։

5

Երկար չտևեց Գելենջիքի հետ ծանոթանալս։ Տարը օր բավական եղավ տեսնելու ամեն բան։ Հարավային ափը ինձ ավելի դուր եկավ։ Ուներ սիրուն պարտեզներ ու ամառանոցներ, ավելի ստվերամած էր՝ շնորհիվ թիկունքը պատնեշող լեռների, իսկ լողարանները այդտեղ ավելի շքեղ՝ հարմարեցրած էին շրջապատում հանգչող հարուստ և ազնվական դասակարգի ճաշակներին։

Գյուղում շուկա էլ կար. նույնիսկ մի քանի խոշոր մագազիններ։ Փողոցների մեջ բավական աշխույժ անցուդարձ էր երևում։ Տեղացիները, մեծ մասամբ հույներ, վարում էին կես տաճկական կյանք։ Լցվում էին երեկոները սրճարանների առաջ, տաճկական սուրճ էին խմում, ներգիլե ծխում, ֆես ունեին գլխներին և մայթերի վրա, սեղանների շուրջը բոլորած՝ դոմինո էին խաղում։

Մի երևույթ առանձնապե՛ս ուշադրություն գրավեց, և այնուհետև, ստուգելով էլ իրավացի գտա—այն էր, որ Գելենջիքում, իհարկե ո՛չ տեղացիների մեջ, այլ եկվորների—շատ հազիվ կարելի էր հանդիպել սիրունատես կնոջ։ Գեղեցկուհի՝ բոլորովին։ Տգեղությունը շեշտվում էր նաև նրանով, որ արևի մեջ շրջակայելով և ծովի ջրից առնված՝ ամեն դեմք շուտով սևանում էր, կորցնում փափկությունը. հետո ամեն կին հագնում էր չթե պարզ պարեգոտ և առանց գլխարկի, միայն մի բարակ թաշկինակ գլխին կամ մի հովանոց, նույնիսկ մուճակներով, անցուդարձ էր անում և երևում ամեն տեղ։

Մարդ հաճախ տրամադիր էր ենթադրելու, թե Գելենջիքը հատկապես տգեղ ու անշնորհք, մանավանդ նիհար կանանց ժողովատեղի էր։

Երբ իմ այդ դիտողությունը մի անգամ հայտնեցի օրիորդ Լիզային, ժպտաց խորհրդավոր կերպով և ասաց.

— Այստեղ չե՛նք եկել մեզ հավանեցնելու. եկել ենք բուժվելու և կազդուրվելու. ոչ ոք հոգ չի անում հագվել-սգվելը...

— Ներկելն ու քսմսվելը...— ավելացրեց մայրը, որ լսում էր մեզ։

Սակայն Լիզան ոչ քսվում էր, ոչ ներկվում։ Բայց երբ մոր խոսքի վրա ես նրա երեսին նայեցի. աչքերը ճիսախուփ՝ պաշտելի մի ժպիտ ուղղեց ինձ և ասաց.

— Օ՛, ո՛չ, պարոն, ես միայն փոշի եմ գործածում, այն էլ երբ ցրտած եմ։

— Աղջի՞կս,— միջամտեց մայրը,— ո՛չ, չի քսվում. կարող եմ այդ վկայել. իսկ Զինաիդան և Սուսաննան՝ դրանք ուրիշ բան...

— Մա՛յրիկ...— լռեցրեց նրան աղջիկը՝ հանդիմանախառն ծիծաղով։

Օրիորդ Լիզայի հետ բավակա՛ն հաճախ հանդիպում էի ես մենակ պարտեզում և կամ ծովափին։ Զբոսնում էինք, խոսակցում։ Սկսում էր անդիմադրելի կերպով գրավել ինձ այս աղջիկը։ Ամեն անգամ, երբ մոտս էր լինում, աչքերս չէի կարողանում բաժանել նրա բոսորագույն շրթունքներից, գողտրիկ դեմքից և, մանավանդ, թովիչ, կիսափակ աչքերից։ Ցանկությունը երբեմն գժվեցնում էր ինձ. հուզմունքից ու գրգռումից դողում էր ձայնս. շորանում էին շրթունքներս։

Հասկանում էր Լիզան այդ ամենը և հետզհետե աշխատում էր ավելի ու ավելի թովել ինձ, իր ճիրանների մեջն առնել։ Խորագետ, խե՛լոք աղջիկ էր ու փորձված։ Իմ հուզումն ու գրգռումը ո՛չ իսկ վրդովում էր նրան։ Ըստ երևույթին ինձ նման շատերի քթիցը արդեն բռնած՝ իր ոտքերի տակ էր բերել նա, տրորել ու նետել։ Սովո՛ր էր պաշտամունքի. սովոր, որ կենտրոն դառնար ամե՛ն ուշադրության, ամե՛ն հիացմունքի։

Բայց ինձնից դեռ քաշվում էր կարծես։ Օրինակ հենց, չէր համարձակվում այնպես կատակներ անել, ինչպես անում էր էստոնացու և ռուս ուսանողի հետ.— հովհարով երեսներին էր խփում, հովանոցով խթում էր մեջքները, ճաշի վրա հացի միջուկից շինած գնդակներով ռմբակոծում էր և կամ հրամայում, որ քնկած թաշկինակը վերցնեն, գնան ներսից շալը բերեն, վազեն մի բաժակ ջրի և այլն։

Ինձնից կամ պատկառում էր և կամ նրանց հետ վաղվա ծանոթ, վաղուց էլ նրանց ճանաչել ու տրորել էր ոտքերի առաջ։

Այսպես կամ այնպես, Լիզան օրեցօր թովում էր ինձ և ամբողջ կրքերն իմ մեջ վերականգնում։

Սիրահարվել նրան՝ թվում էր, թե չէի կարող։ Երբ հայացքը վրաս էր և շրթունքները դողդոջ դեպի ինձ, երբ թավշի նման գգվող ժպիտով շրջափակում էր հոգիս—քիչ էր մնում կորզեի նրան, տանեի ծովափի խորշերից մեկը՝ ծծելու համար նրա շրթունքներից այն մրրկող տրիփը, որ անուշահոտ ու ոգելից գինու նման արբեցնում էր ուղեղս... Բայց երբ չէի տեսնում նրա դեմքը, երբ նիհար մարմինն էր միայն երևում աչ-

քերիս, ինչ-որ խուլ, սրտիս խորքերո՛ւմ թաքնված անորոշ հակակրանք դուրս էր պոռթկում՝ գերակշռելու համար բոլոր մյուս զգացմունքներին։

Վա՜ղ, վա՜ղ բաներ էի մտածում նրա մասին. թվում էր, թե փչացած կին է, հղփացած, շրթունքները վաղո՜ւց վարժ կրքոտ հպումների, մարմինը մաշված՝ վայելումների մեջ...

Շարժվածքները, գրավելու ձևերն ու ժպիտները նույնիսկ՝ մեկ-մեկ զզվանքի նման վայրկյան էին առաջացնում իմ մեջ։ Կիսաշխարհային կնոջ էր նման. քաղքենի և ազնվական այն կանանցից, որոնք իրենց ճիգն ու ջանքը գործադրում են մի՜միայն տրիփ ու տենչանք գրգռելու համար տղամարդկանց մեջ...

Ու երբեմն մռայլ, ո՛չ միայն դադարում էի հաճոյակատար դառնալուց Լիզայի համար, այլև կոպիտ էի լինում և խիստ։

Չէր զարմանում այդպես ժամանակ։ Երևի համոզված էր, որ ներքնապես պայքարում եմ ես նրա հմայքի ազդեցության դեմ և անհաջող լինելուս համար անձնասիրությունս վիրավորված՝ տխրում եմ ու կոպտանում։

Այդ իսկ պատճառով հանգի՜ստ էլ չէր թողնում ինձ։ Միշտ հետաքրքրվում էր, թե որտե՞ղ էի գնում, որտեղի՞ց գալիս, ո՞ւմ հետ էր խոսածս և ո՞վ էր, օրինակ, այն կինը, որի կողքին նստած էի գտնվել պատահմամբ ընդհանուր լողարանի առաջը գտնվող նստարանների վրա։

Առաջ հարցնում էր— «կարելի՞ է իմանալ». հետո— «հետաքրքիր է իմանալ» և վերջապես մի օր էլ ուղղակի կտրեց առաջս, երբ սենյակս էի գնում և հարցրեց.

— Ահա թե ինչ, պարո՛ն, դուք արդեն սկսել եք ուրի՞շ տիրուհիների որոնել... Այն ո՞վ էր, որի հետ ծովափի գերանների վրա բազմել էիք ու լուռ երազո՛ւմ...

— Բայց, օրիորդ,— կմկմացի ես,— այդ խեղճ կինը գերանի մի ծայրին էր, իսկ ես՝ այս մյուս. իսկ ես ի՞նչ գիտեմ ով էր։

— Ստո՛ւմ եք, պարո՛ն,— ասաց կես կատակի շեշտով,— ուրի՛շ տիրուհի եք գտել... Մոռացել եք, որ դուք միմիայն ի՛մ ասպետն եք... և որ ես խանդոտ եմ...

Ասաց. կոկետությամբ ժպտաց, մատը վրաս թափ տվավ ու հեռացավ։

Մնացի կանգնած և կատարելապես հմայված։

Շո՛ւտ սթափվեցի սակայն, անփորձ մի երիտասարդ անշուշտ խելահեղ կլիներ այդ թովիչ վարմունքից։ Հասկացա, որ աղջիկը մի՜միայն ընկճել էր ուզում ինձ. ընկճելու հաճույք ունենալ։ Եվ եթե գտներ, որ մինչև ականջներս իր գերին եմ, արհամարհաբար պիտի ծաղրեր ու ոտ-

քով դեն շպրտեր իբր այլևս դատարկ, անպետք անոթ, իբր շա՛տ ընչին բան և մի այլ կողմ պիտի գնար՝ որոնելու նորանոր հաղթանակներ...

Այդպե՛ս էի համարում ես Լիզային և զգույշ էի միշտ, խելքս չկորցնելու չափ ժամանակին ինքս ինձ զսպող։

Ինչ վերաբերում է Ադդային, պիտի ասեմ, որ տասնհինգ-քսան օրվա ընթացքում հազիվ երկու-երեք անգամ հանդիպեցի նրան։

Կանաչ հրվանդանը պտույտի գնալու օրվանից հետո նա այլևս չեկավ մեր ամառանոցը։ Լիզան այնքա՛ն սառը, մայրն էլ այնպե՛ս անուշադիր վարվեցին հետը այն օրը, որ ըստ երևույթին այլևս միամիտ չգտնվեց ընդունելու Սերյոժայի հրավերները։

Հանդիպածս ժամանակ առիթը չէի փախցնում մի երկու խոսք փոխանակելու հետը։ Թեև սառն էր, բայց չէր խուսափում։ Մի անգամ էլ մինչև իսկ թույլ տվավ ինձ ընկերանալ իրեն մինչև Ֆոտիադիի մագազինը, գնեց այնտեղից մի քանի բան և հետո եկավ զբոսնելու հարավային ափի զբոսարանում։

Մոտ մի ժամ տևող այդ ընկերակցության ժամանակ նա խոսեցրեց ինձ, հարցրեց իմ մասին շատ բան, առողջությանս մասին տեղեկացավ և այլն։ Այդօր ձայնը ավելի դուրեկան էր, վարմունքը ընկերական և պարզ։ Շատ լավ էի զգում ինձ նրա հետ. ձայնը ջերմացնում էր սիրտս, և կապույտ աչքերի քիչ ավելի կենդանի հայացքը հոգուս մեջ էր ներածում ինչ-որ մաքրող զգացմունք, որ մոռացնել էր տալիս, թե Ադդան կին էր, շա՛տ սիրուն մի կին և թե ես տղամարդ էի։

Թվում էր, թե կողքից քայլողը սրտիս շատ մոտ, սիրելի մի անձնավորություն էր, միաժամանակ և դյուրաբեկ մի անաբատություն, որի մասին ամենաչնչին վատ մտածությունն անգամ սրբապղծություն կլիներ և գարշանք։

Եվ այնուհետև ամեն անգամ, երբ առաջս էր գալիս Ադդայի դեմքն ու քայլվածքը, մտաբերում էի Մոսկվա տեսածս մի Հայտնի հայ նկարչի Հռիփսիմե կույսը՝ շեկ մազերով ու կապուտաչյա, որ սպիտակ պատմուճանով, ձեռքին ճերմակ շուշան, անդրաշխարհային խանդավառության երազով տոգորված հայացքը վերամբարձ՝ քայլում է կարծես դեպի մի աներևույթ նպատակ, ուշք չդարձնելով շրջապատող աշխարհին և ոտի տակի տատասկ ու փուշին...

... Այդպես էր ահա, որ այդ ամառ գտնվեցի ես երկու միմյանց հակասող, եթե արտառոց չի՛ լինի ասել, նաև միմյանց լրացնող, զգացմունքների շրջանում։

Մի կողմից այդ կիրք հուրացնող կինն էր, որ իր գրգռիչ ժպիտներով հրավիրում էր, քաշում, որպեսզի տեսներ գետնաքարշ գալարում-

ներս և քրքջար անկմանս վրա, իսկ մյուս կողմից՝ կենսատու քաղցր և անարատ մի զգացմունք, որ չէր զարթնեցնում ո՛չ մի անասնային ցանկություն, այլ ընդհակառակը, ազնվացնում էր խոհերս և ուռեցնում սիրտս՝ սիրելու, սիրային երազանքով հրճվելու փափագներով։

Լիզային ես որոնո՛ւմ էի, բայց իսկույն հետո Ադդային էի ուզում հանդիպել, նրա հայացքի տակ ապրել։

Եվ գնում էի ծովափ, փնտրում ամեն կողմ, որ տեսնեմ նրան մի ժայռի վրա անշարժ, ակնարկը ծովի խորքերին ուղղած՝ ինչպես սովոր էր նստել ու ժամերով մնալ։

Բայց միայն երկու անգամ տեսա այդպես ու չհամարձակվեցի մոտ գնալ։ Ջիմացավ իսկ, որ տեսնում էի նրան։ Լիզայի նման չէ՛ր քաշում նա ինձ իր ոտքերի մոտ... Հեռու նստած, մի փոսի մեջ պառկած՝ ակնարկս չէի բաժանում նրանից, մինչև որ նա ելնում էր ու կամաց-կամաց գնալով, անհետանում ծառերի ետևում։

Ամեն օր գնում էի նույն տեսարանը վայելելու մտածությամբ, բայց Ադդան այլևս չերևաց։ Ըստ երևույթին չէր գալիս այս կողմերը, գտել էր մի այլ ծովախորշ՝ թաքնվելու համար միայնության մեջ։

Ու զգվեցրին ինձ այնուհետև այդ ափերը. ե՛ս էլ մտածեցի հեռանալ դեպի ուրիշ կողմեր։ Գահավանդի կողմը, դեպի բաց ծովը դեռ չէի եղել։ Վճռեցի գնալ այնտեղ, հնար եղածին չափ հեռու լինել ամեն բնակությունից։

Հարցնելով գտա ճանապարհը. շուզեցի զարտուղի և մոլորեցնող շավիղներ բռնել։ Անցա մի քանի մարգագետիններ և ինձ գտա մի պուրակի, գրեթե անտառի սկիզբը։

Հաճույալից էր այդտեղ. կային և կանաչագեղ, ծաղկալից բացատներ, հովանավորող բարձր ծառեր, առատ բուսականություն՝ աչք կրտրածի չափ տարածությունով և բազմատեսակ անուշաբույր ծաղիկներ։

Ծաղկեփունջ անգամ կազմել սկսեցի. շուրջս լի էր կապույտ համասփյուռ, երիցուկ և շահոքրամ. արտերի միջից ցցվում էին նունուֆարն ու դաշտային եղնացուկը, իսկ բացատների դալարների մեջ՝ դեղին շերտեր էին կազմել մահդանակն ու մանրիկ, վայրենի տուզտը։

Այդ բազմահրապույր տարածությունը սուր հակապատկերն էր մեր ամառանոցի ետևից փռվող փշոտ անտառին։ Եվ զարմանալին այն էր, որ ոչ ոք չկար այստեղ. ո՛չ մարգերի վրա, ո՛չ անտառի մեջ և ոչ էլ արտերում։

Միայնակ էի կատարելապես. գնում էի հանդարտ քայլերով, ճըշմարիտ վայելքով լիաբերան ծծում էի օդը, ախորժով ականջ դնում թռչունների դայլայլին և նույնիսկ ծղրիդների ճռնչող ձայներին։

Մինչև ծնկներս երբեմն՝ խոտերի ու ծաղիկների մեջ, գնացի ես այդպես՝ կտրելով արտերը, մխրճվելով խիտ ծառաստանների մեջ, մինչև որ շավիղը հանեց ինձ բլուրների առաջ, ուր մեկ՛ն բուսականությունը կանգ առավ և սկսեց գաջային ճերմակ ու շոր գետին՝ մանրիկ թփիկներով ու կարճ ծառերով պատած։

Մի քանի քայլ. մի երկու թուփ էլ անցա, ետ տվի թզուկ ծառերի ճյուղերը և հանկարծ ոտերիս տակ՝ խորքում երևաց բաց ծովը՝ իր անսահման տարածությունով։

Գտնվում էի ահավոր բարձրության վրա, պատի նման ուղղաձիգ գահավանդների գլխին։

6

Անմիջապես ոտքերիս տակ՝ խորքում, մինչև անհուն հորիզոնը տարածվելով օրորվում էր լեղիագույն վիթխարի մի գանգված, որ դեպի ափերն էր ծփացնում շառաչող փրփուրների և ոստնող ճերմակ բաշերի շարքեր։ Անդուլ համերգը բերնին, վետ-վետ կոհակների կայտառ ոստումները միմյանց վրա հանած, անհոգ ծալքերի ու շերտավորումների պըչբանքները քմահաճորեն գունավորած՝ ընկողմանել էր նա որպես վատակաբեկ մի հսկա, որ ահավոր պատերազմից հոգնած՝ հանգչում է հեքսոտ շնչառությունով, խոշոր կրծքի մեծ ելևէջներով։

Ու մնացի տեղն ու տեղը գամված, կծկված մի թփի տակ, հմայված վեր ելնող միալար մռնչյունից, շլացած միօրինակ փողփողուն ծփումներից։

Գահավանդը նույնպես վետ-վետ, կարծես ահագին ճերմակ կոհակներ կազմելով. գոգաձև գնում էր դեպի ձախ ու սլտուլտների մեջ անհետանում։ Ո՛չ մի բավիղ դեպի ծովը. ճերմակ, գաջային ուղղորդաձև կողեր էին՝ գլուխ պտտեցնող բարձրությամբ, գիսախոիվ կատարներով։ Աչի՛ց միայն ափը հետզհետե իջնում էր պուրակների խառնուրդով և գնում հասնելու ջրի մեջ մխրճված լեզվակին։

Արևը չէր այրում այլևս, որովհետև ամպոտում էր երկինքը հետզհետե. ծովի կողմից փչում էր զովացնող մեղմ քամի. նստելու տեղս շա՛տ հարմար, ընկողմանեցի մանրիկ խոտերի վրա, թփի ստորոտում, և գոհ եղա, որ կարող էի երկա՛ր դիտելու մնալ մի ա՛յդքան շքեղ տեսարան։

Ո՛չ մի ձայն շրջապատում. ծովի մռնչյունը բացարձակորեն խլացնում էր ամեն ուրիշ աղմուկ։ Տաս-տասնհինգ րոպեից հետո տեսողությունս էլ կենտրոնացավ միմիայն ջրերի վրա, և նրանց վեհափառ ծավալը նսեմացրեց ուրիշ որևէ առարկայի տեսքը։

Ծովն էի միայն տեսնում, ծովի՛ն միայն լսում. ուշադրությունս էլ նա էր գրավում ամբողջովին և մտածություններս ոստոստում էին նրա ծածանումների վրա, նրա ելևէջների կատարներին ու խորշերին, նրա ծալքերի և կնճիռների անվերջ փոփոխումների ետևից։

Ահա՜ այնտեղ, ելնում են ու իջնում անհամար թմբիկներ, սողոսկում են արծաթյա փուլեր... մյուս կողմում լերթ կապտագույն կույտերը միմյանց են բախում նախ, հետո կուտակված սահում են, ժողովում են այս-այն կողմից հապճեպով եկող յուրաքանչյուր շարժում, իրար են միացնում, իրար հրմշտկում ու բերանները բաց, սև պատ են կազմում ճերմակ քիվերով, շարժուն պատնեշների նման գալիս են սպառնալից... բայց ափերի մոտ փլում են մեղմ ժպիտով, ցրվում, ծիծաղում ավազուտների վրա, ճերմակում, կապտում և ջինջ ու պայծառ կաթիլներով կամ սուզվում են, կամ ետ քաշվում...

Եվ եզերքների ծփուն ջրերը օրորում են ծովային կարմրավուն բույսեր, որոնց մոտ ամեն ուղղությամբ տարածվող շեկ մազանման խոտերը երերում են՝ որպես կույսի ցրված գիսակներ...

Ու հայացքս դարձյալ դեպի ետ-հորիզոնն էր ոստնում, ուր երկինքը արդեն մթագնում էր և որտեղից դարձյա՛լ զինվում էին նոր արշավանքներ դեպի ափը, ջրերը միմյանց էին գնում արտորալով, իրար առաջ մղում, զանազան կողմերից վերահաս ընկերներին ձեռք էին տալիս, որպեսզի նորի՛ց գնան, անվե՛րջ գնան իրենց շրջանակները փշրելու, կաշկանդող շղթաները ցնցել-ջարդելու...

Եվ այդպես, հայացքս հորիզոնից ափերին և ափերից դեպի տարածություն—անզգալիորեն, չեմ հիշում պատկերների որպիսի՜ զուգորդության շնորհիվ, միտքս գնաց դեպի Ադդան։

Երևի պատճառն այն էր, որ մեկե՛ն հիշեցի, թե Ադդան այդ կողմերը կարող էր լինել, գուցե ինձ նման կծկված մի ծառի տակ, մի թփի մոտ՝ ծովը դիտելիս։

Դրա համար էր, որ մի րոպե ելա, շուրջս ակնարկ նետեցի և ջանացի նշմարել, թե չէ՞ր երևում աչդյոք վարդագույն բաճկոն որևէ ծառի տակ։

Հետո նորից նստեցի և շարունակեցի մտածել այդ աղջկա մասին։ Պատկերացրի դեմքը, ակնարկը, հիշեցի մի քանի օր առաջվա մեր երկար խոսակցությունը և վերջապես մի առ մի ամփոփեցի ա՛յն ամենը, ինչ որ գիտեի և լսել էի նրա վերաբերությամբ։

Պատմել էին նրա անցյալից՝ մի քիչ ամենքը։ Լիզային ևս չէի հավատում շատ. ի՛նքն էլ չէր պատմում. չէ՞ր սիրում խոսել Ադդայի մասին, ոչ էլ լսել։ Լիզայի մայրն էր գլխավոր աղբյուրը. նա էր պատմել շատ բան։ Ուսանողներից լրացրել էի պակասածը։

Մալոռուս էր Ադդան. այն երազող և համառ կամքի տեր, ոգևորվող աղջիկներից, որ իրե՛նք են սիրում բանալ իրենց կյանքի ուղին, սիրում են անկախությունը, սովորելն ու երաժշտությունը և երբ սիրում են մեկին, սերը հասցնում են պաշտումի և անձնազոհության։ Այդպիսի տիպարները գիտեն նաև նվիրվել գաղափարական գործերի, ետ չկասել, պատվարներից չեն վախենում և կարող են ժպիտը դեմքին տանջվել ու մեռնել իսկ։

Հարուստ էին Ադդայի ծնողները, ապրում էր միայն մայրը. մեռել էին հայրը և մի եղբայրը, վերջինս հանկարծ... անհետացել էր, 4—5 տարի էր չկար, կամ փախել էր արտասահման և կամ Մոսկվայի հայտնի ապստամբության օրերին զարնված էր ու թաղված ընդհանուր, եղբայրական գուբերում։

Չնայելով հարստությանը, Ադդան լավ սովորել էր, քննություն տվել, համալսարան մտել ու հայտնի էր որպես շատ ընդունակ, եռանդուն պարապող։ Պարզ կյանք վարել, շատ պարզ հագնվելը նրա պըշրանքն էր, այնպես որ մայրը միշտ գանգատվում էր, թե իր աղջիկը հպարտ էր, չէր ուզում ընդունել ավելորդ փող, չէր ուզում վայելել հոր հարստությունը։

Լիզայի մոր, այլև ուսանողների պատմածներին նայելով, այդ տարի հունվարին հանկարծ Ադդան սաստիկ հիվանդացել էր Պետերբուրգում, և քեռին ստիպված էր եղել ընկերանալ մորը ու գնալ մայրաքաղաք։ Հետո աղջկան բերել էին հայրենիք և այժմ էլ Գելենջիք էին իջեցրել, որ կազդուրվի և բուժվի։

Ո՛չ ոք չգիտեր հիվանդության պատճառները. մելամաղձոտ ու տխուր էր դարձել այն աղջիկը, որ մի քանի տարի առաջ իր զվարթությունով ու հրապույրով կյանք էր սփռում շուրջը, որ ծիծաղը միշտ շրթունքներին, լուրջ խնդիրների մեջ պատկառելի էր, որպես մի գիտնական, որ սիրում էր խոսել, ոգևորել ու ցնցել ամենքին...

Իսկ այժմ դժվարությամբ էր նա մի երկու բառ արտասանում, հազիվ էր ծիծաղում և երբե՛ք չէր սիրում որևէ շրջանի մեջ վիճել, ճառել կամ նույնիսկ վեճն ու ճառը լսել։

Եվ մանավանդ, ամեն ինչ մի քանի տարի առաջ վարդագույն տեսնող աղջիկը, այժմ դարձել էր սաստի՛կ հոռետես և ո՛չ մի լավ բանի չէր հավատում։

Թե ինչո՞ւ էր նա այդպես դարձել՝ գաղտնիք էր։ Գաղտնիք, որ ամենքը կարծում էին, թե գիտեն, բայց ցույց տալով հանդերձ, որ կա՛

գաղտնիք—մերժում էին պատմել ինձ։ «Չա՛ր ժեռ», «թո՛ղեք», «օ՛հ, ա՛յն չեմ կարող պատմել», «խա՛չ գրեք վրան»,— ահա իմ հետաքրքրության պատասխանները։

Հիրավի, ի՞նչ կար, ինչո՞ւ էր այդ աղջիկը հուսաբեկ, ջարդված, աչքերի կայանը կորցրած և կյանքից այլևս ոչինչ չսպասող։ Արդյոք անհույս սե՞ր, խաբվա՞ծ, արդյոք անպատվել էին և թողե՞լ, թե ինքը սիրել էր մեկին և հանկարծ տեսել, որ իր սիրածը մի գարշելի արարած էր... ո՞վ գիտե, գուցե անհասանելի մի սեր էր այն, որ հուսահատեցրել էր։

Բայց մի՞թե խելքը գլխին մի աղջիկ, որ ունի իդեալներ ու նպատակներ, որ զարգացած է և գիտությունից ճաշակել է—կարող է այդպե՞ս ջախջախված զգալ իրեն, որովհետև կամ իր սիրածն է իրեն խաբել, կամ իրեն «անպատվել» են ու «թողել» և կամ գուցե «սիրում է մեկին ու չի սիրվում»...

Ո՞չ, Ադդան ա՛յդքան արդեն ողորմելի չէր և ոչ էլ կրքի (թող լինի՝ սրտի) գերի։ Կային ուրիշ գաղտնիքներ՝ նրա հուսահատությանը պատճառ դարձած։ Գաղտնիքներ, որոնք հայտնի չէին և ո՛չ մեկին. ոչ ոքի։

Չէ՞ որ երբեմն մարդու սրտի խորքերումը գոյանում են այնպիսի դա՛ռն, սրտմաշուկ ջլատումներ, որ մարդ բերանով արտահայտե՛լ անգամ չի ուզում, որովհետև բուժելու հույս չկա, որովհետև միևնույնն է, արտահայտելով ոչինչ չի՞ փոխվի...

Եվ կամ, գուցե դրանք այնպիսի՛ գաղտնիքներ էին, որոնց հայտնելու համար նա չէ՞ր գտել դեռ մի մտերիմ սիրտ, անմիջապե՞ս ըմբռնող և լռելյայն վշտակցող մի հոգի, ոք ցավակցական զուտհիկ քառեք չասեր ու պստիկացներ տանջանքի խորությունը, այլ որ անձայն համակրությունով թափանցեր անհուսության ահավորությունը...

Այդպե՛ս խորասուզվել էի ես Ադդայի հոգեկան ներքին աշխարհը, երբ մ ի բոպեի սթափման մեջ նկատեցի, որ այլևս արև չկար, երկինքը ծածկվել էր միաձույլ ամպերով, և սևաթույր խավարը կարծես իջնում էր ճզմելու, կլանելու կապուտակ ծովին։

Ջրերը հուզվել էին ակսել և հուսահատական թափով պատրաստվում էին կուրծքը դեմ տալ ծանրության. ուռում էին, կնճռում մեծ ճակատը, խոշոր եղեխները բաց աչած մռնչալու էին ելնում ու հաջող բոպեի սպասում, որ նետվեն իջնող հրեշի դեմ։

Պահ մի անլսելի դարձավ ափերի շուրջը. արձանացման մի շունչ իջավ կարծես ու սառեցրեց ամեն շարժում. օդի մեջ զգացվող առկախ աղոտը վաքանման մի վայրկյան ունեցավ, հետո հանկա՛րծ ու զանգ-

վածը համր երերումով սկսեց իջնել, և ջրերը ոստնեցին կատաղի շարժումներով։

Այնուհետև մեկե՛ն պայթեց ամեն ինչ. սև կույտերը թավալեցին վիթխարի տատանումներով, որոտն ու մռնչյունը դղրդացրին շրջակայքը, երախներից դուրս ժայթքող փրփրադեզ ցայտումները խառնվեցին իրար։

Համայնատարած աճեցուն կովի դաշտ էր դառնում խորությունը, ուր շղթայազերծ ջրերը խոյացումի մեծ թափով ողողե՛լ էին հանդգնում նույնիսկ բարձր ապառաժների կատարները։

Ցնցվում էր ամեն ինչ. ափերը կծկվում էին կարծես. սարսռում էին նո՛ւյնիսկ թուփ և խոտ. ծաղիկները սմքել էին, մռայլ ստվերը ծանրանում էր դաշտ ու անտառի վրա...

Շունչս բռնած, սոսկումով լի հիացման մեջ քարացած՝ ելել ծառի բունն էի գրկել և դեպի անդունդը կուացած՝ դիտում էի տեղի ունեցող այն մեծափառ պատերազմը, որ շարժուն, կենդանի տարրի կռիվն էր՝ մռայլ ու խավար կաշկանդումի դեմ...

Չգիտեմ որքա՛ն տևեց այդ. ժամե՞ր, թե՞ րոպեներ, միայն հանկարծ թվաց ինձ, թե խավարը հաղթահարվել էր, լուծվում էր ու ծալվում ինքն իր վրա, որ նա ամոթալից ետ էր քաշվում, և հորիզոնի լայնության մեջ տեղի էին ունենում պատռվածքներ։ Սև ամպեր էին գոյանում վերևում, խարխլվել էր միաձույլ մղձավանջը, իրար մղելով՝ միմյանց վրա էին նետվում խավարի կույտերը և գլորվում էին խուսափելու համար։

Հետո, այդ խուճապի մեջ լույսի մի լայն շառավիղ ճեղքում էր թուխ զանգվածը և շեշտակի կտրելով տարածությունը՝ իջնում էր պրոպրդացնելու ծովի մի ընդարձակ դաշտ։

Ու ջրերը այնտեղ սկսում էին հեք առնել, հաղթությունը տարած՝ ժպիտներ կազմել դեմքի վրա, օրորվել՝ հանգչելու համար ահավոր պատերազմից հետո։

Անսովոր չէ՞ր այդ ամենը։ Եղանակն էր փոխվում, փոթորիկը եկել էր, փշրվել ու փախուստ տվել։ Այժմ նո՛ւյնիսկ ամպերը բացվում էին, գորշ գույն ստանում, իսկ նրանց եզերքները արծաթազօծվում էին լույսի աննման երիզներով։

Ահա այդ իսկ բոպեին էր, որ զգայախաբության մի երկրորդ պատրանք գրավում էր ինձ։

Շեղակի իջնող լույսի լայն շառավիղի մեջ, վերևից դեպի ջրերը՝ պառկերանում էր աչքերիս առաջ մի տարօրինակ կիսաստվեր։

Չկարողացա որոշել օդզբում, թե ի՞նչ էր այն. արդյոք լույսի և

ստվերի հակապատկե՞ր էր, թե ամպերից սլացող անձրևային գծերի մի փունջ։ Սակայն ահա լույսը պարզվում էր հետզհետե, և ապշությամբ տեսնում էի, որ ծփումներն իբր պատվանդան ունենալով՝ ջրերի վրա հայտնվում էր մի վայելչակազմ կնոջ ստվեր...

Այո՛, կին էր այն. հրաշալի մարմնով մի կույս, որ շքեղ և ալեծուփ գիսակները փռած թիկունքին, բաց թևերը գլխի ետևը տարել, դրել էր ծոծրակին և աննման դեմքը լույսի ցնցուղներին պարզած՝ օրորվում էր կոհակների վրա։

Մերկ չէր ամբողջովին։ Բաց էին միայն վիզն ու թևերը. Ստինքներից մինչև ոտքերը պարուրված էր նա ջրափրփուրի նուրբ շերտով, որ ճերմակ պատմուճանի նման ոլորտվում էր մարմնի շուրջը և երկար քղանցքը մարող փոթերով տանում էր տարածելու ջրերի երեսին...

Արձանացած մնացել էի։ Չէի զորում շարժում գործել։ Աչքերս լայն բաց արած՝ հետևում էի երևույթին, որ ալիքների ծփումների հետ մոտենում էր ափին, գալի՛ս էր իմ կողմը։

Տեսնում էի ակնարկը՝ լուսաշող դեմքի վրա. ակնարկ, որ ահավոր թախիծով լի, սևաթույր ամպերի աշտարակաձև կուտակման վրայից երկինքն էր կարծես որոնում՝ դեպի նրան նետելու իր բոցակեզ վարանումներն ու մրրկող բողոքները։

Բայց որտեղ էի տեսել ես նմա՛ն մի երևույթ. հար և նման մի պատկեր... Ինչո՞ւ այդ պատրանքը ծանո՛թ էր թվում ինձ, ծանոթ և ո՛չ զգայախաբական։

Ու երբ միտքս պրպտում էի, հանկարծ օրորվող կինը ծփման մի շարժումի մեջ դեմքը իմ կողմը դարձրեց, և ես ճանաչեցի նրան։

Ադդան էր...

Այդ իսկ վայրկյանին երևույթը անհետացավ, հալվեց լույսի մեջ, խորասուզվեց կարծես ջրի տակ, և նրա տեղը մնաց հոսանուտ ծալքերի մի մեծ տարածություն, որ երերում էր դողդողար։

Եվ երբ սթափված շուրջս էի նայում, զգացի, որ սիրտս սեղմվում էր, անհասկանալի մի տխրություն համակում անձս։

Մի քայլ ետ գնացի ու խոտերի վրա նստեցի։

7

Որ դեռ հիվանդ էի և ջլախտային դրությունից չէի բուժվել—դա փաստ էր։ Զգայախաբության դեպքը՝ ապացույց։ Տեսիլքը, սակայն, մտացածին չէր։ Համոզված էի, որ տեսել էի նման պատկեր, կամ կարդացել էի, կամ գուցե պատմել էին։ Չէի հիշում՝ որտե՞ղ, ե՞րբ։

Իսկ թե ինչո՞ւ տեսիլքի առարկան Ադդան էր՝ այդ էլ երևի այն պատճառով, որ մի վայրկյան առաջ միտքս ամբողջովին նրանով էր զբաղված։

Այսպես կամ այնպես, ոտքի ելա և պատրաստվեցի տուն վերադառնալ։ Լիովին սթափվել էի։ Մի ետին ակնարկ էլ ձգեցի ծովին, ուր ջրերը հանդարտել էին, հորիզոնի ամպերի կույտերը անորսացել, և երեքի շողքերը պսպղացնում էին կապուտակ տարածությունը։

Դեպի այդտեղ գալու ժամանակ բռնել էի ես մի շավիղ, որ անցնում էր արտերի միջով. մինչդեռ, ինչպես հետո իմացա, ուրիշ ավելի մեծ մի արահետ, մտնելով անտառը՝ հանում էր ավելի լավ տեղի, գահավանդի ամենաբարձր կետին, ուր, փլումների շնորհիվ, մնացել էին դեպի անդունդը կռացած մի քանի խոշոր կաղնիներ։

Սովորաբար մարդիկ այդ ծառերի բուներն էին ընտրում որպես դիտանոց և նրանց հովանու տակ էին գալիս նստելու։ Ավելի անվախները մինչև իսկ ելնում էին նրանցից մեկի բունի ծայրին, որ հորիզոնաձև պարզվում էր դեպի անդունդը. նստում էին՝ ոտները դեպի խորխորատը կախած, ճյուղերից ամուր գրկած և եթե գլխի պտույտ չէին ունենում, վայելում էին անդունդի խորքը աներկյուղ կերպով զննելու քաջությունը։ Քաջություն՝ գոնե իմ տեսակետով, որովհետև ես երբե՛ք չեմ կարողացել բարձրություններից դեպի ցած նայել՝ առանց գլխի կոբբստաբեր պտույտների։

Ահա հենց այդ առկախ ծառի բունի վրա էր, որ դառնալուս միջոցին աչքս հանկարծ ընկավ և այնտեղ նստած տեսա մի կին։

Բավական հեռու էր, դեմքը պարզ չէր որոշվում։ Երևում էին սև շրջազգեստը՝ կախված անդունդի գլխին, այլև գորշ կոշկավոր երկու ոտներ. իսկ ծառաբնից ելնող ճյուղերի մեջ նշմարվում էր երկնագույն բաճկոնակով և գլխաբաց, երիտասարդ մի դեմք։

Անմիջապես մտքիս մեջ ծագեց, որ Ադդան պիտի լիներ։ Իսկույն հետո սակայն, ի նկատի ունենալով կնոջ հագուստը, մտածեցի, որ նա չէր, այլ մի ուրիշը։ Իսկ եթե Լիզան էր։ Այո՛, տեսել էի նրան այդպես շորերով. կարծեմ տեսել էի։ Եվ հետո կարծես սևահեր էր։ Ինչո՞ւ ոչ։ Գուցե գիտեր, որ ես այս կողմերն էի եկել։ Եվ կամ, ինքն էլ, անկախ կերպով, դիպվածաբար, եկել էր բաց ծովի տեսքով զվարճանալու։

Զննելը անօգուտ էր. չէր ճանաչվում։ Եթե Լիզան էր... ավելի՛ լավ։ Այդ աղջիկը կարո՛ղ էր իսկակա՛ն հաճույք ազդել ինձ բնության այդ հրաշալի անկյունում։ Անտարբեր լինել նրա կողքին—չպիտի կարողանայի. և ի՞նչ գիտեմ, գուցե նրա տրամադրությունն էլ իմինիս պատասխանն էր. գուցե նա՛ էլ ցանկանում էր ինձ. միթե իզո՞ւր էին այնքա

հաճոյանալու ձևերն ու ձգտումները... Օ՜հ, նրա համբո՛ւյրն ունենալ, խելահե՛ղ լինել նրա կրքոտ շրթունքների հպումներից...

Քայլերս իրենք-իրենց շուռ եկան էչ-Էպի այն կողմը, և ես հուզմամբ, գրեթե դողալով ցանկությունից, արագ գնացի դեպի ծառերը։

Ջանացի հանկարծակիի բերել։ Խուլ կերպով զգում էի, որ պիտի փախչեր և կամ, պիտի նստած մնար այն սոսկալի ծառաբնի վրա ու պահանջեր, որ հեռանայի։ Այդպե՛ս էր շարաճճին, քանի ցս փորձել էի, և մատո՛վ իսկ իրեն դիպչելը արգելել էր լրջությամբ։

Ծառերի ստորոտներով, թփուտների տակից սահեցի և երբ ինձ թվում էր, որ մոտեցել էի, հանկարծ երևան եկա։

Գտնվում էի տասը քայլ հեռու. զարմացած կանգ առա՝ ճանաչելով Ադդային։

Հագուստը, մազերը, դեմքն իսկ փոխված էին։ Նա՛ էր։ Ոտները դեպի անդունդ, թևով գրկած և գլուխը մի մեծ ճյուղի կոթնեցրած, հայացքը անբաժան՝ իր աչքերին նմանող անծայր ծովից, լիովին անշարժ, որպես արձանացած դիցուհի,— ո՛չ իսկ իմացավ ներկայությունս։

Միայն բոլորովին երբ մոտ գնացի, գլուխը իմ կողմը դարձրեց, ելավ, ժպտաց ինձ ու ասաց.

— Կշտացա՞ք նայելով։ Տեսնում էի ձեզ... Ետ կացեք, որ իջնեմ։

Հետո համարձակ դուրս սողոսկեց և ելավ հաստատուն գետնի վրա։

— Կուզե՞ք միասին վերադառնանք տուն։

Բարևեցի։ Եվ տեսիլքը հիշելով՝ նայեցի մազերին ու հասակին։ Դեմքն ու թևերը նման էին. նույնիսկ վիզը, որ բավական բաց էր։ Մազերը միայն սարքված էին այդօր ուրիշ տեսակ։ Գնդել էր ծոծրակի վրա։

Գունատ էր, ժպիտը տխուր, ձեռքը սառը և չոր, քայլվածքը դանդաղ։ Ավելի՛ հիվանդ էր երևում, այլև հոգնած։

Մտանք անտառ, հետո բացատը հասած՝ նստեցինք իրար կողքի մի կոճղի վրա և երբ բավական լուռ էինք, հարցրեց.

— Առաջի՞ն անգամ էր այսօր... բաց ծովի առաջ։

— Այո՛։ Դուք երևի հաճախ եք գալիս։ Ձեզ այլևս չեմ հանդիպում այն կողմերը։

— Ամե՛ն օր այստեղ եմ։

— Սիրո՛ւմ եք ծովը։

— Ծո՞վը...— ասաց նա,— ի՞նչպես ասել ձեզ։ Գուցե և չե՛մ սիրում. նույնիսկ երբեմն ատո՛ւմ եմ... բայց սովոր եմ... Մի տեսակ ապշության մեջ է ձգում ինձ այդ լեղի տարածությունը։ Կարծես հիպնոսացնում է, թովում... Այսպես է։ Անընդհատ և ժամանակավոր ծփումներ, նույն տեսակ՝ շառաչ... Ուրիշներին քնեցնում է։ Անքուն մարդիկ գիտեմ, որոնք լավ քնել են ծովի կողքին։ Ինձ—ո՛չ, նա անէացնում է, նյութականությունից ազատում. անմարմին է դարձնում... Ձեզ հասկանալի՞ է այդ։

— Հասկանալի է։

— Ավելի լավ։ Հետո, երբեմն էլ ոգևորում է. այդ՝ ծովը։ Տարածությունը, մեծությունն ու գունագեղությունն է ոգևորողը. ինչ վերաբերում է նրա զայրանալուն ու մռնչալուն, այժմ այլևս դառն ծիծաղ է առաջացնում իմ մեջ։— Միևնույնն է, մտածում եմ ես, քիչ հետո դա՛ձյալ պիտի գալարվես, կծկվես և քեզ շրջանակավորող ժայռերի ոտները լզես...

— Այո՛, բայց շատ լզելով՝ ժայռերին տապալում է ծովը։

— Շա՛տ... մինչև ե՞րբ սակայն... Օ՜հ, համբերություն չկա, ո՛չ համբերություն և ո՛չ էլ այդպես օձանման հաղթության գծուծությունն... Ուզում եմ ասել, որ ամեն ոք չի՛ կարող օձի նման սողոսկել ժայռերի ոտների մոտ, լզել նրան անընդհատ և այդպիսի ստորաքարշության միջոցով տանել հաղթանակը... Ա՜հ, կուզեի որ ըմբռնեիք այն, ինչ որ դրժվարանում եմ ավելի նուրբ կերպով բացատրելու... Դուք հասկանո՞ւմ եք արդյոք... Ժայռերը դաժան ու անողոք, և ոչ իսկ մի թիզ լայնացնել են ուզում ջրերի վանդակը. քրքջալիր՝ պաշարել են նրանք ծովին և ստիպում են, որ նա լզե իրենց տղմոտ ոտները... Ու ծովը լզում է. մռնչում է, բայց լզում է. իսկ լզելը իբր կռվի զենք համարել, չնայելով որ նա հիրավի ժայռեր է տապալում ու մաշում—լզելով ոչնչացնելը իբր հաղթություն հռչակել, պանծա՞լ նրանով... ո՛չ, այդ ես գտնում եմ չափազա՛նց գարշելի... Եվ գերադասում եմ բոլորովի՛ն չկռվել։

— Ապա ինչպե՞ս...

— Ոչինչ. լուռ, առանց տրտնջալու, առանց դեմքն իսկ կնճռելու՝ վերարկուով ծածկել գլուխը և մեռնել...

— Վերարկուով ծածկե՞լ գլուխը։

— Այո՛... Ծածկել գլուխը՝ չտեսնելու համար որևէ չարախնդաց դեմք...

— Ցավակցո՛ղ դեմք՝ ասացեք։

— Նույնի՛սկ այդ... ինչո՞ւ ցավակցություն, ի՞նչ բուժումն դրանից. կարո՞ղ է մեռնողին շունչ տալ այդ... Ո՛չ. երբ պիտի մեռնել՝ ուրեմն առա՛նց ցավակցությունների. մեռնել կտրո՛ւկ, առանց հիշելու, որ կարող էր ապրել, կուզենա՛ր ապրել...

— Արտառոց բաներ եք ասում։ Բայց խորապե՛ս դառնացած, նույն-

իսկ տանջանքներից խելահեղ եղած մարդ եք երևում... խելահե՛ղ եղած, այո՛...

Հետո, երբ պահ մի լռել էիր վճռական կերպով նայեցի նրան և ավելացրի.

— Ասացե՛ք ինձ ձեր վշտերը... Ձե՞ք ասի։

Ցնցվեց, դարձավ ուժգնությամբ դեպի ինձ, լուռ զննեց ակնարկս մի բոպե, հետո ոտքի ելավ և ասաց.

— Գնա՛նք։

Ապա երկա՛ր այլևս չխոսեց։ Ընթանում էր կողքիս։, առանց շուրջը նայելու, ակնարկը սևեռած դիմացը երևցող լեռների ստվերագծերին։ Կամ մտածում էր խորունկ վրդովումներով և կամ սաստիկ հուզվել վերաբացված վերքերովը, որի պատճառը ես եղա. խոսելու ուժ չէր գտնում։

Այդ լռությունը նեղում էր ինձ։ Ուզում էի խոսեր, բա՛ց աներ սիրտը իմ առաջ։ Շա՛տ բան ունեի ասելու նրան. հազիվ դիպվածը ներկայացել էր առանձին և երկար խոսելու. առիթը կար, եթե միայն պատասխաներ ինձ։ Պետք էր վերջապես սիրտ տալ, կյանքի՛ բերել այդ հուսաբեկ աղջկան, կյանքի վայե՛լքը ներշնչել, հասկացնել ու համոզել, որ հուսահատությունը փոքրոգություն է՝ ինչ որ էլ պատահած լիներ իր կյանքում, ի՛նչ տանջանք ու վիշտ էլ որ կրած լիներ...

Հիրավի, մի՞թե չէր կարելի անել այդ. փրկել մի դժբախտ, բայց լա՛վ մարդու, որ ընկղմում էր աննպատակության սոսկալի դատարկի մեջ, խավար էր զգում շուրջը և զարհուրում էր ապրելուց։ Ձէ՞ր կարելի միթե նորից զարթնեցնել նրա մեջ նո՛ր ձգտումներ, ոգևորող նո՛ր նպատակներ, և կամ, գոնե կյանքի հաճույքները լիաբուռն վայելելու, էլի՛ և անվերջ սպառվելո՛ւ չափ վայելելու մարմաջը։

Համոզված էի, զգում էի, որ աղջիկը մեռնե՛լ էր վճռել, զզվել էր կյանքից, գուցե և նրա բոլո՛ր հաճույքներից, մանավանդ՝ հոգնել էր տանջվելուց, մարտնչելուց. հույս չուներ ապագայից, ոտքի կայա՛ն չուներ, բարոյական նեցուկի հասկացողությունը կորցրած՝ ոչ կովան էր մնացել նրա համար և ոչ կառչելու շյուղ։ Ջարդվել էր ժայռերի դեմ, ջարդվե՛լ էր նրա մեջ ամեն բան՝ հավատք դեպի գաղափարը, սերը դեպի մարդիկ և կամ որևէ հույս՝ դեպի արշալույսը...

Այդպես էր երևում ինձ Ադդան. մի քանի խոսք, և պատկերանում էր նրա տանջված հոգին, հանգստանալ-անէանալու ձգտող սիրտը։

Ո՞չ, պետք էր փրկե՛լ նրան. կորզել ու հեռացնել անդունդի եզրից, ամուր հողի վրա կանգնեցնել, հույսեր ներշնչել, հավատքը վերականգնել և այդպիսով միջոց տալ սիրո վայելքները տենչալու, ապրելու...

Այդ իսկ մտածությամբ, որոշեցի իջեցնել նրա հոռետես տրամադրության վրա իմ սառը փիլիսոփայությունների կռանը, ներշնչել նրան ա՛յն միտքը, որ չպետք էր չափազանց ոգևորվել—հուսահատ հիասթափումի չհասնելու համար, չպետք էր շատ երազել՝ զարթնումի դառն իրականությունից չտանջվելու համար... ներշնչել, որ այդպիսի մահը փոքրոգություն է, և որ միմիայն թուլամորթ հոգինե՛րն են, որոնք առատացնում են արտասուքը և փութացնում մահը՝ անզգայանալու, կռվից խուսափելու համար...

Համենայն դեպս՝ Ադդան երևի վճռել էր խոսել, սիրտը բանալ մեկին։ Գուցե հենց նրա համար, որ ունենար իր անէացման փիլիսոփայությանը համամիտ մարդ։ Համամտությո՛ւն էր պետք նրան՝ երևի ջնջելու համար այն ետին վարանումը, որ ըստ երևույթին դեռ կասեցնել էր տալիս վճռական քայլը։

Երբ հասել էինք խիտ ծառերով եզերված մի ծառուղու, կոթնեց նա խոշոր մի տանձենու և ասաց խուլ ձայնով.

— Կանգնեցե՛ք. ես ձեզ կպատմեմ իմ մտածությունները։

— Եվ ձեր վշտե՞րը։

— Նստենք մի տեղ։

Ընտրեցինք կանաչ մի թումբ։ Նա նստեց բարձր, իսկ ես քիչ հեռու ակոսի մեջ։

Ու սկսեց պատմել։ Կցկտուր, ցանուցրիվ, երբեմն դողդոջուն, մարող ձայնով, երբեմն սառն ու դառն ժպիտով, մեկ-մեկ՝ խանդալից շեշտով...

Պատմեց կարճ, կտրուկ և խիստ բառերով, առանց ոչինչ ծածկելու։ Ձաղկո՛ւմ էր կարծես ինքն իրեն և ախորժ էր զգում այդ գանահարությունից։

Ոչինչ չհարցրի, ո՛չ մի բառով չընդհատեցի։

Պատմությունը, իրավ է, սրտառուչ էր, սոսկալի, բայց ո՛չ տարօրինակ։ Միջավայրը և ժամանակը ջնջում էին ամեն արտասովորություն՝ եղածի մեջ։

Ուսանողուհի՝ կարողացել էր վերջապես ազատ վայելել այն մեծ, անձնազոհ սերը, որ ուներ նա դեպի իր մանկության ընկեր երիտասարդը։ Անունը պետք չէր տալ։ Ուժեղ բնավորության տեր, աշխույժ և խելոք մի տղա էր դա, որին Ադդան պաշտում էր որպես աստծո և հավատում էր։ Նրա հետ միասին էր, որ մտել էր գաղափարական գործունեության մեջ, տեսել էր գյուղացու զրկանքը, բանվորի հարստահարվելը, կանանց պոռնկությունը և մանուկների տգիտությունը... Տեսե՛լ էր և

նվիրվել այդ թշվառներին սփոփելու, այլև գիտակցության ու բողոքի տանելու գործին...

Ի՞նչ հարկ երկարել։ Պարզ էր։ Եկել էին փայլուն, կրակե՛ օրեր, հրդեհը ծայր առած բոցեր էր տարտղնում ամեն ուղղությամբ։ Ջահը ձեռքին և քրտնաթոր՝ վազել էին նրանք՝ կրակը տանելու քաղաքից քաղաք... Եվ ընկել էին նման շա՜տ շատերի... Երիտասարդին դեմ էին տվել մի լապտերի սյունի և գնդակահար՝ փռել սալահատակի վրա, իսկ իրեն՝ Ադդային, բանտից բանտ, որջից որջ լլկել էին ու տանջել խոնավ գետնի, մութ խորշերի մեջ անոթի, ենթակա կոպիտ վարմունքների։ Հետո մի գինարբու մարդ, որ իշխանություն ուներ գաղափարները հալածելու, ուժով բռնաբարել էր նրան... ձեռքերը կապել տվել ու բռնաբարել...

Հիվանդացել էր, տարել էին հիվանդանոց, կանչել մորը։ Հետո, կամենալով անշուշտ գինարբու մեծի վարմունքը ծածկել մի կերպ, Ադդային ազատել էին, ծնողներին հանձնել և հրամայել, որ իսկույն հեռացնեն գեպի հարավ։ Ու տարել էին գեպի հարավ, բայց ո՛չ գեպի հայրենիք։ Բռնաբարությունը ունեցել էր հետևանք։ Ծնել էր զավակ։ Ո՛չ, տեսնել չէ՛ր ուզում նրան։ Չգիտեր ի՞նչ եղածը և ո՞րտեղ եղածը։ Երեխի մայրը թողել էր անբախտին մի հեռու տեղ։

Այդ չէր ամենը, սակայն։ Հայրենիք գալով, Ադդան երևան էր հանել և մի ուրիշ սոսկում, մի ուրիշ գարշանք։

Երիտասարդը, որին նա պաշտել էր և որի մեռնելուց հետո ապրել չէր կամեցել—այդ իդեալիստը, ո՛չ միայն հարաբերություն էր ունեցել Լիզայի հետ, այլև Ադդայի հետ եղած ժամանակ, պահպանելիս էր եղել սիրային ջերմ նամակագրություն այդ զարհուրելի աղջկա հետ։ Զարհուրելի, որովհետև երիտասարդը նրա չորրո՞րդ, թե՞ հինգերորդ սիրականն է եղել... միաժամանա՜կ...

Օ՜հ, բազմայրո՜ւթյուն, շա՜տ ամուսին ունենալ... Ինչո՞ւ ոչ, երբ տղամարդը կարող է լինել բազմակին, ունենալ միաժամանակ երկու, երեք կին, երեք սիրուհի, այլև հանդիպա՜ծ կինը...

Այդպես էր։ Իր կուռքը գրում էր տոփոտ, էրոտիկական այնպիսի՜ նամակներ Լիզային և ստանում է եղել այնպե՜ս կրքոտ, այնքան պաղշոտ և երբեմն էլ խենեշ արտահայտություններով լի երեսներ, որ նա, Ադդան, երբ սկսել է կարդալ նրանց—զգացել էր իրեն որպես ենթակա՝ անօրինակ մի մղձավանջի... Եվ այդ նամակները գրվել են ու ստացվել այն ժամանակ, երբ ինքը—Ադդան, երջանիկ զգալով իր սիրեկանի գրկում, համոզված է եղել, թե դեռ քի՛չ է սիրում իր կուռքին, իր աստված և թե հարկավոր էր մեռնել նրա համար, ապացուցելու, որ արժանի չէ՛ր նրան, որ զոհվե՛լ էր ուզում նրան...

Ա՜հ, միամի՜տ հիմարություններ և մարդկային անհասա՜կ կեղծություն, որ մի անգամով փշրել է նրա մեջ և՛ հավատը, և՛ սեր, որ մի հարվածով խստացրել է նրա կրած տանջանքները, շեշտել է նրանց այրվածքները։ Որովհետև, երբ մարդ կորցնում է իր ետին ապավենը՝ անցյալից մնացած երջանկության հիշատակը, երբ մարդ ապացույցն ունի, որ այդ հիշատակն անգամ գարշելի է և նողկալի, այն ժամանակ անէությանն է ցանկալին, որովհետև կրած բոլո՛ր տանջանքները վերաճորագած են իրենց մորթող, իրենց խարանող այրվածքները...

Սիրել այդպե՜ս ու խաբված լինել վատաբա՜ր, կորցնել դեպի կյանքը ունեցած հաճույքները, գարշանք ու ստորացումն զգալ անընդհատ իր մարմնի վրա և այն հրեշավոր հպումների հիշողության տակ երազների՜ մեջ անգամ ցնցվել... Օ՜հ, չափազա՜նց շատ են դրանք՝ մի քանի կյանք իսկ չնչելու համար...

Կար և մի ուրիշ բան. դա այն հուսախաբ հիասթափությունն էր, որ լցացնում էր պակասը, ջնջում էր նրա մեջ՝ կյանքից որևէ հույս ունենալու ետին հաճույքը։

Այստեղ Ադդան լռեց և ոտքի ելավ։

— Ո՞րն է այդ,— հարցրեցի ես,— հիասթափություն ինչի՞ց։

Նայեց ինձ, կարծես տարօրինակ գտնելով, որ չհասկացա։ Հետո նման արավ քայլելու և ասաց.

— Հիասթափություն միջավայրից... Անդրադարձե՛ք մեկ մեր շրջապատի վրա... Լուռ է՝ ինչպես անապատ, անշարժ՝ որպես ճահիճ. ո՛չ միայն անշարժ, այլ հետզհետե գարշահոտ և լի գեռուններով։ Երեկվա մեր սավառնող բազեները այսօր ճախնաուտների մեջ են իրենց փորը կրծոտացնելու իջել... Մեծանում է անապատը մի՛ կողմից, ճահիճը՝ մյուս։ Ամե՛ն մեծություն փշրվել է և թխլիկ քաղքենիներ գոյացել. նույնիսկ մտավորականության մեջ կազմվել է մի գարշելի՛ բուրժուականություն, որ իր ճանկերի մեջ լցպորում է ամեն միտք, ամեն թռիչք... Ամեն ոք քայլում է մենակ. կամ ինքն իր մեջ ամփոփված՝ որպես ջրակույտերի կողքին մի ոտքի վրա կանգնած երկարապտուց արագիլ, և կամ, բողոքի ամե՛ն մտադրություն բանադրանքի տված, լիբերալիզմի բազմաներկ դրոշն է բռնահարում ու նրանով բարոյախոսում...

— Դուք խի՞ստ եք։

— Բայց ճշմարիտ եմ... Ձգի՛ մեծ շնչով առլեցուն այն շքե՛ղ երիտասարդությունը, որ պատմության մեջ գիտե՛ նոր էջեր բանալ. չկա՞ն

փորձառու հասակավորների այն երկաթե լուրջ ցնցումները, որոնք հասարակական կյա՛նքը գիտեն մաքրել ամեն աղտեղությունից և ոչխարային մտավախությունից... Չկա ո՛չ մեկը. այժմ ամեն ոք ճգնում է ապացուցել, որ ինքը եղել է և կա բարեհույս ավելի՝ քան ամեն բարեհուսություն. ամեն ոք կերդվի ձեզ, որ խոնավ չէ՛ օդը, խավար չէ՛ շրջապատը, մռայլ չէ՛ երկինքը... Կգտնեք նույնիսկ հայհոյողներ լույսին, գովաձայնողներ՝ ամեն գարշանքի...

— Մի՞թե այդ բոլորը ձեզ հետաքրքրում է,— ասացի ես։ Հետզգալով, որ կարող եմ վիրավորած լինել այդ հարցումով, ավելացրի.— Ներեցեք, սակայն ինձ թվում է, որ ձեր սեփական տանջանքները շա՛տ ավելի մեծ են։

— Այո՛... սակայն ահա իմ մտածությունը։ Մարմինս ու սիրտս զզվեցնում են ինձ. փորձեցի ստուգել, թե արդյոք չէ՞ր կարելի գնալ մեռնելու հանուն մի լավ գաղափարի. գնալ գլխովին նվիրվելու մի լավ, լուսարար, փրկարար գործի, մոռանալ անձս, տանջանքներս, համառությամբ և անձանձիր զոհողություններով նետվել հոսանքը բերող աշխատություններին... Ա՛յդ էր մնում միայն ոգևորող, այդ էր մնում իբր նպատակ. ուսումս շարունակել չէի՛ ուզում և սիրտ չկար... Ինչո՞ւ, ավելորդ չէ՞ր... Ի՞նչ փույթ իմ լլկված անձը այլևս... Որոշեցի վերանորոգել հարաբերությունս հին, գաղափարակից գործիչների, ընկերներիս հետ... Ճանաչո՞ւմ եք դուք Սերյոժային։

— Լիզայի եղբո՞րը։

— Այո։ Հին, աշխույժ գործիչներից է։

— Չի երևում այդ։

— Անշուշտ... Այդպես չէր այն օրերում։ Այժմ նա, մայրաքաղաքում եղած ժամանակ, ոռճիկ է ստանում զանազան մթին տեղերից... Մայրը շատ դրամ չունի։ Տղան սիրում է թղթախաղ և կանայք։ Մի քանի սիրուհիներ ունի։

— Այդ դուք հաստա՞տ գիտեք։

— Գրել է ինձ իմ ընկերուհիներից մեկը և զգուշացրել։ Հայտնի է ամենքին այնտեղ... Բայց կան և ուրիշներն էլ այդ «հին հերոսներից»։ Ով չի՛ կարողանում այդպես հեշտությամբ ծիծաղել մեր քթին—նա ընտրում է ուրիշ տեսակ անկումն։ Նրանցից մեկը, օրինակ, գինետների սեղանների տակն է որոնում իր կորցրած գաղափարները. երկրորդը ամուսնացել է, գործարանատեր դարձել և տրամագծորեն գործում է այն մտքերի հակառակ, որոնց համար նա կոկորդն էր պատռում և պատնեշներ էր կառուցում... բայց ի՞նչ հարկ երկարել։ Ինձ ծաղրեցին, երբ ես դիմեցի մի քանիսին՝ հայտնելով ցանկություններս։ Ես չէի՞ գժվել. պետք էր զգույշ լինել այդպիսի նամակներ անգամ գրելուց։ Է՛հ, խելքս ո՞րտեղ էր, չէի՞ տեսնում միթե, որ մարդիկ ապրել են ուզում, բոպեներից օգտվել, կյանքը լիաբուռն վայելել և այլևս «հիմարություններ» չանել... վայելի՛ր դու էլ կյանքը, սիրի՛ր, ապրի՛ր, կոխի՛ր ամեն բարոյականություն. ի՞նչ բարոյականություն, հիմար խո չէի՞, կինը եղել է հանձնվելու և տղամարդը՝ առնելու համար. ահա կյանքի ամբողջ միտքը, էությունը. դրանից դուրս՝ ոչինչ։ Վայելք սիրո, միմիայն վայելք՝ իր ամենաբուռն տեսակներով... առա՛նց քաշվելու նույնի՛ւկ պարծենալո՛վ, պարծրագո՛ղ...

Եվ Ադդան լռեց։ Հասել էինք անտառի վերջին. այժմ մարգագետիններն էին սկսում։ Ճանապարհնիս անցնում էր նրանց միջով։

Սկսեցի խոսել ե՛ս։ Ջանացի Ադդային մխիթարել, հույսե՛ր տալ, հորդորել՝ որ մոռանա անցյալը, թողնի՛ երազները, հաշտվի այն մրտքերի հետ, թե կյանքի մեջ և՛ ճահիճներ կան, և՛ ջինջ աղբյուրներ, և՛ անապատ կա, բայց և անուշաբույր ծաղկալից բարձրություններ։ Ճգնեցի ապացուցել նաև, թե ամենքը խաբեբա չեն ու տուփամոլ՝ ամեն ազնվություն ծաղրելու չափ։

Մի խոսքով ամեն ջանք ու պերճախոսություն գործ դրի ապացուցելու, որ խավարը մշտատև չի՛ կարող լինել և որ արշալույսը վաղ թե ուշ՝ անշուշտ պիտի ծագեր։ Իսկ ինչ վերաբերում է այդ «հերոսներին», նրանք ա՛յժմ էր, որ իրենց սեփական գույնն էին ցույց տալիս. եղել են նրանք կե՛ղծ։ Ուրախ պիտի լինել, որ ետադարձ շարժումները դիմակազերծ են անում այդպիսիների՝ նոր փորձանքներից ազատ պահելու համար ապագա գործունեությունը... Չպե՛տք էր երբեք հույսը կորել։ Չէ՞ որ կային բարձրություններ. մարդիկ կարող են ցրվել, մանրանալ, բայց գաղափարը խո չի՞ մեռնում... եթե կան բարձրություններ, ուրեմն և նրանցից ելնող ջրերը անշո՛ւշտ պիտի հոսանք կազմեն... Հոսանքը նոր ուժեր կծնեցնի. ահա այդ հոսանքին և այդ նոր ուժերի՛ն պետք է սպասել ակնդետ...

Լսում էր ինձ Ադդան, առանց առարկելու, առանց նայելու։ Վերջացնելուցս հետո՛ էլ ոչինչ չխոսեց, բայց նկատեցի, որ դեմքի ո՛չ մի գիծը չխաղաց։

Չէր հավատում. չէի կարողացել համոզել։ Անշուշտ, նոր չէին և ոչ էլ ազդու՝ իմ մխիթարությունները. ես ինքս գտա նրանց բավակա՛ն ծամծմած մտքեր, որոնք միալար կրկնված՝ այժմ այլևս ձանձրացնում են և երբե՛ք համոզում։

Հասել էինք իրենց տան առաջ։ Սեղմեցի պարզած ձեռքը։

— Ջտեսնվե՞նք այլևս,— հարցրի։

— Ինո՞ւ ոչ,— ասաց նա։— Շնորհակալ եմ, որ ցանկացաք հույս ներշնչել ինձ։

Բաժանվեցինք։ Երբ մի քայլ էինք արել, հանկարծ ծովի վրայի տեսիլքը մթաց եկավ։ Չգիտեմ ինչո՞ւ՝ մեքենաբար կանգ առա։ Կարծես մի բան էի ուզում հարցնել Ադդայից։

Նա էլ տեսավ կամ զգաց կանգ առնելս։ Սպասեց դռան մոտ և հարցրեց.

— Ուրիշ ասելիքնե՞ր ունեք։

— Ասելիքնե՞ր... Ո՛չ... բայց այո՛... Ասացե՛ք, խնդրեմ, դուք չե՞ք պատմել ինձ և կամ չգիտե՞ք արդյոք մի այդպիսի պատկեր. ծով, ծովի վրա մի կին՝ հերարձակ, ձեռքերը գլխի ետեը դրած...

— Ինչպե՞ս չէ,— ընդհատեց նա,— բայց ո՛չ թե ծովի վրա, այլ ծովի ափին... Ստինքներից մինչև ոտները մի ճերմակ երկար պատմուճան, դեմքը՝ բարձր, կուսական ամպերին, որտեղից հյնում է լույսի մի լայն շառավիղ... Ե՛ս էլ երկար նայեցի նրան... Կգտնեք դուք Լիզայի սենյակի պատին, ճիշտ այն լուսամուտի դիմաց, ուր մի օր նստեցինք՝ օրիորդի նվագը լսելու համար...

— Ահա՛, իրա՛վ որ... Շնորհակալ եմ... Բայց մի՞թե այդ կինը նման է ձեզ...

Նայեց ինձ ժպտուն և ասաց.

— Ի՞նձ... Չգիտեմ, ճշմարիտ... Գուցե՛... Սուզեցեք մի անգամ ևս...

Հետո գլխով բարևեց, նորից ժպտաց ու գնաց։

8

Այնուհետև դարձյա՛լ երկար ժամանակ չհանդիպեցի ես Ադդային։ Ծովափին կամ լողարանների առաջ նա չէր երևում։ Ո՛չ իսկ գահավանդների վրա, թեև այնտեղ գնացածս ժամանակ քանի՞ցս ես պրպտեցի յուրաքանչյուր մատչելի բարձրություն, յուրաքանչյուր ծառախումբ։ Վարպետությամբ հարցրի Սերյոժային, նույնիսկ Լիզային։ Ադդան Գելենջիք էր. երբեմն երևում էր այս-այն տեղ, բայց ընդհանրապես տնից սկսել էր սակա՛վ դուրս ելնել։

Մի քանի անգամ մտածեցի գնալ տեսության, բայց համարձակություն չունեցա. չկա՛ր ափթ. հրավեր չէի ստացել։

Ինչ վերաբերում է Լիզային, կամաց-կամաց մեր նախկին կատաղած մտերմությունն էլ սառեց։ Այլևս քի՛չ էր ուշադրություն դարձնում ինձ վրա։ Պատճառ կար։ Դրացի ամառանոցն էր եկել մի սիրունատես և հարուստ երիտասարդ։ Երևի Լիզան նրա գլուխը դարձրել էր։ Մարդը գրեթե ամեն օր զբոսանքների էր հրավիրում ամբողջ ընտանիքին, մեկ-մեկ է՛լ երգու ուսանողներին։ Մի օր կառքով էին գնում Ջանխոտ, մյուս օր՝ շոգենավով, երրորդ օրը նավակներով պտույտի էին ելնում և այդպես անվերջ։ Ն

գեմին, երբ արշալույսը գունավորում էր ծովի հորիզոնը և լեռների գագաթները։

Ծովի բացը, հեռուն, հետզհետե շառագույն ու մշուշոտ, ջրերը գողտրիկ նազանքներով և ծփանքներով համընթաց գալիս էին հալվելու ծովի մեջ, հետո նորից, վեր-վեր ծավալումներով աջ ու ձախ էին սփռվում և գնում էին նետվելու դեպի ափերը։

Եվ մեր նավակը երերուն այդ ծալքերի մեջ ընկած, մեծածուփ շարժումներով ետ ու առաջ էր սահում՝ ղեկավարված ծերունու ձեռքով։

Սկզբներում ո՛չ մի անգամ բաց չէի թողնում, իսկ հետո շաբաթը գոնե մի օր անշուշտ, շուտ զարթնելով, հասնում էի՝ ձկնորսներին ընկերանալու նրանց նավակի մեջ, ուր սակայն անգործ ու անշարժ նստած՝ միմիայն հորիզոնն էի դիտում և կամ ծերունու շարժումներին հետևում։

Այդպիսի մի թարմ առավոտ էր ահա, որ երբ ծոցի մեջ կանգնեցրած վերջին ցցիցն սկսելով՝ ժողովում էին ուռկանի շուրթերը, հանկարծ որդին թողեց գործը, ուղղվեց մակույկի մեջ, մի ինչ-որ բառ աղաղակեց, և հայր ու որդի մեկե՛ն թողած ամեն ինչ, անշարժեցրին նավակն ու ակնարկները սևեռեցին դեպի ծովը։

Ե՛ս էլ նայեցի։ Բավական հեռուն, ջրի երեսին ծփում էր ինչ-որ խոշոր սև բան։ Կարծես կոճղ լիներ և կամ նման առարկա։

Մոտենում էր համր ու մեծ շարժումներով։ Ձկնորսների երկարատև սևեռուն հայացքը սկսեց վրդովել ինձ։

— Ի՞նչ է այն...— հարցրի վախեցած։

— Խեղդված մարդ է,— ասաց որդին։

Խեղդված մա՞րդ... Այդ ջրերի տատանումների վրա օրորվող առարկան ուրեմն մի մա՞րդ էր, մի թշվառ, որ գուցե լողանալիս խեղդվել էր, կամ ո՛վ գիտե ուրիշ ինչպիսի արկածի զոհ էր եղել...

Սոսկումը կրծքումս, ջղային դողի ձևերն ընկած նորից, թոթովեցի։

— Մա՞րդ... բայց ո՞վ է, ճանաչո՞ւմ եք։

— Չի՛ ճանաչվում,— ասաց որդին,— բայց կարծես մեզնից մեկը լինի. ձկնորս...

— Ուրիշ ո՞վ կլինի,— խոսեց դառնությամբ հայրը,— մեր բոլորիս վերջը այդ չէ՞։

Դառնությամբ ասված այդ խոսքը բոլորովին չհանգստացրեց ինձ։ Ակնարկս լարված՝ ճգնում էի որոշել առարկայի գծերը։ Ինչ-որ ուռուցիկ բան էր երևում ջրի վրա, բայց դեմք չկար դեռևս։

Անձկությամբ սպասեցինք։ Լույսը սկսել էր լավ բացվել, մշուշը ցրվում էր։ Հանկարծ որդին հորը դարձավ ու ասաց տաճկերեն.

Նայի՛ր, հա՛յր, կարծես կին լինի։

— Կի՞ն...— ճչացի ես ջղայնորեն և սարսափով,— ասացիք կի՞ն։

— Այո՛,— հաստատեց ծերունին,— կին է, երիտասարդ կին։

Նույնիսկ երիտասա՞րդ... Արդեն լավ տեսնում էին այդ ձկնորսները, իսկ իմ աչքերը մթագնում էին։

Եվ, սոսկալի՜ բան՝ կայծակի նման կիզիչ ու արագ՝ մի այնպիսի ցնցում անցավ մարմնովս, որ սրտիս բաբախումը մի վայրկյան կանգ առավ կարծես։ Խեղդիչ անձկություն, աննկարագրելի ճմլումն կսկծեցրեց հոգիս...

Արդյոք հիմա՞ր էի, ո՞վ ներշնչեց ինձ այդ միտքը, ինչո՞ւ, ո՞րտեղից...

— Մո՛տ գնանք, մո՛տ գնանք,— կանչեցի ես ահավոր ձայնով ու խելահեղ,— մղե՛ք այն կողմը նավակը, ազատե՛նք թշվառին. գուցե դեռ շնչում է՝ կենդանի է...

Ծերունին ինձ նայեց զգայուն դրությունս հասկացողի արգահատանքով, գլուխը ցնցեց և ասաց տխուր.

— Ավա՜ղ, ուշ է արդեն. երեկ գիշերվանից սկսած՝ ջրի մեջն է. նայի՛ր...

* * *

...Ու պառկած էր նա, այդ դժբա՜խտ կինը, ընկա՜ծ մեջքի վրա, կապույտ քողի նմանող ջրի նուրբ շերտի տակ. մազերը ծովային կանաչավուն ճապաղ խոտերի խառնուրդի հետ փռվել էին գլխի շուրջը և դեմքը գունատ ու արձանացած, կապույտ աչքերը գրեթե սնբիբ՝ ուղղված անորոշ անհունությա՛ն, թողել էր այլևս ամեն վիշտ և հիշողություն, հավիտենապես ազատվե՛լ իր մեծ տանջանքների հոգեմաշ անդրադարձումներից, ու չէ՛ր կամեցել գոնեհիկ կերպով ապրել՝ վայելելու համար անասնային, բուսական այն կյանքը, որի զոհն էր եղել ինքը...

Ադդան էր։ Կյանքը խճճել էր նրան իր ոստայնի մեջ, ծծե՛լ էր կենսական բոլոր նյութերը և այժմ դուրս էր նետում անողոք պաղարյունությամբ։

Կյանքը, միջավայրն ու ժամանակը...

1909

ՄԻ ՊԱՏԿԵՐ

1

Բասենի բարձրավանդակ բլուրների վրա դեռ գարնանային եղանակ էր, չնայելով որ հունիսյան շոգերն սկսել էին դաշտի մեջ։

Դեռ հեռավոր գագաթների և ստվերամած խորշերի հատակում սպիտակին էին տալիս ձյունի շերտեր, բաց տեղերում, գորշ թացության մեջ դալար կանաչությունը թավշանման քնքշությամբ գորգ էր կազմում՝ բծավորված և կտոր-կտոր եղած բազմաթիվ վճիտ առվակներով ու ջրակույտերով։ Մանիշակագույն ծաղիկներ՝ զանգակաձև լալուն, շեփորաձև կանաչն ու փոքրիկ, գոզտրիկ գիներբուկը խմբերով պտակ էին կազմել վտակների շուրջը։ Այս-այն կողմ գարնանային դեղին ծաղիկները գլուխ էին դուրս պարզում քարոտ վայրերի և փոքրիկ խորշերի միջից։ Հեռու, բավական բարձրացած ցորենի և գարու կանաչ արտերի մեջ բարձրագլուխ՝ կապույտ շերտեր էին դնում խիաբուկները, և կապույտ շուշանը ճախնուտ կողմերում բացվել, իր մեծ նուրբ թերթերը ցնցում էր մեղմիկ զեփյուռի տակ։

Ալեձև կանաչ բլրակներ՝ հետզհետե բարձր, գույնզգույն ծաղիկներով ու փողփողուն ջրերով շերտավորված, սարահարթեր՝ միմյանցից գեղածիծաղ, միմյանցից կենսապարար, շրջապատում էին այն մենավոր անկյունը, ուր գարնան սկզբից ի վեր իջել, բանակել-իջել էր հայ բոշաների մի ցեղ, գորշ վրանների տակ, մեղմիկ ցած սահող ջրվեժի կողքին, փոքրիկ, բայց շքեղ հարթության վրա։

Գյուղերը հեռու չէին. մի քանի բլուրներ, և ահա տարածվում էր Հասան-Ղալայի դաշտը՝ կտրված մեծ, պղտոր Երասխով. ամեն կողմ գյուղեր, հեռվում՝ հնացած խարխուլ քաղաքն ու իր ապառաժուտ կոպերով բերդը, դեպի ձախ՝ ոլորապտույտ՝ Տեռ-Պոյնուի կիրճը, դեպի ոչ՝ Բասենի շքեղ դաշտը. ապա, հորիզոնը մշուշի մեջ՝ լեռներ ու լեռներ, բարձր, դաժան շղթաներ..

Բոշաների բանակած տեղը թե՛ գեղեցիկ էր և թե՛ ապահով։ Մի քանի քայլից հետո մի արահետ, քսան բոպեի վազքով, կհասնի Հերթև, ձիով երկու ժամ՝ դեպի բերդաքաղաք։ Բոշա կինն ուրեմն կարող էր առավոտ շուտով ելնել մտնել դաշտը, հինգ-վեց գյուղ թափառել և երեկոյան—վերջալույսին վրանները վերադառնալ։

Ցերեկները վրանների առաջ քիչ բազմություն կար և քիչ էր կենդանությունը։ Ահագին գամփռները քնում էին արևի տակ. էշերը, եթե դաշտ չէին իջել, արածում էին բոշա մանուկների հսկողության տակ. մանուկները խոտերի մեջ, մեջքի վրա տարածված, երազում էին բաց երկնքի տակ կամ քնում, իսկ տղամարդիկ, վրանների հովանու ներքև, մաղ էին գործում կամ փսիաթ։ Մի քանի կանայք, դեռ ջահել հարսները, վրանի առաջ օջախ շինած, փշերից ու գյուղերից բերված փայտերից կրակ կազմել՝ կամ կերակուր էին եփում, կամ լվացք անում և կամ, խումբ առ խումբ, քիչ հեռու, ծաղիկների և ջրվեժի կողքին, գուլպաները ձեռքերին գործում էին և խոսակցում։

Գիշերն էր, որ սկսում էր մի եռուն, զվարթ կյանք վրանների առաջ։ Ամենքը տուն մտած վերջալույսին՝ տեղավորում էին իրենց բերածը, ապա ճաշում, հետո, աթոռակալի՝ իրենց ցեղապետի վրանի առաջ մի մեծ խարույկ վառում, և երբ մութն իջնում էր բլուրների վրա, երբ լուսինը կաթնագույն լույսով ողողում էր այդ սքանչելի բարձրությունը, պլպլացող խարույկի շուրջն էին կիտվում բոշաները, գալիս էր հովվական տիկը կամ ջութակը, և օրվա անցքերի մասին խոսելուց հետո, գիշերային լռության մեջ, շների ընդհատ ոռնոցների, մանուկների զվարթ ճիչերի մեջ սկսում էր երաժշտությունը. բոշայական տխուր, մելամաղձոտ նվագը, որ արձագանք սփռելով՝ թրթռում էր ու իջնում ծործորների մեջ, կամ երերուն ու մեղմիկ գնում մեռնելու դեպի բարձրությունները։

Նվագում էր տիկը միաձայն, մի տխուր խազի երկար տևողության միջից, մեղմաձայն արտահայտելով երգի թախծոտ ելևէջները, որոնք ելնում էին, ելնում ոլորուն ու ճնշող, ապա հանդարտ ու գեղգեղ՝ իջնում, կորսվում էին միաձայն խազի գրկում...

Եվ տխուր խազը մի վայրկյան հանդարտ օրորվելով, նորից բաժանում էր իրենից երգի ելևէջը և նորից նետում նրան դեպի տարածությունը։

Այդպես ժամանակ շներն իսկ դադարում էին հաչելուց և խարույկի սփռած լույսի հեռավոր աղոտության մեջ, գլուխները թաթերի վրա առած, անշարժ, ուշադիր, աչքերը երաժշտի վրա, դեմքերը կծկած՝ լսում էին։ Մանուկները՝ ծնկները բարձր, գլուխները ծնկների վրա, կուչ եկած կամ թավալած խոտի մեջ, ականջները հորիզոնին, աշխատում էին ոչ մի խազ չկորցնել մելամաղձոտ երաժշտությունից։

Ամեն բոշա սիրում է երաժշտությունը. այնքան է սիրում, որքան իր ազատությունը, որքան իր բաց երկինքը։ Ամեն բոշա մանուկ բանաստեղծ է, սիրահար՝ երգի, սիրահար՝ լուսնկա պայծառ երկնքի, պպզուն կապույտ երկնակամարի, դալար-ջրաշատ բարձրությունների և մելամաղձոտ, երազել տվող երաժշտության։

Եվ ահա նստել են բոշա տղամարդիկ շիբուխները ձեռքերին, վառվող խարույկի լույսի մեջ ու գլուխները կախ՝ լսում. բոշա կանայք

անչափ գուլպա գործելով կամ բուրդ մանելով խումբ առ խումբ տեղ են բռնել քիչ հեռու, և նվագողի դեմքն է միայն, որ ուռած թշերով և մեծ տիկը բերնին դեմ տված, ոգևորված ու կարմրատակած, աչքերը դեպի բարձր՝ լուսավորվում է կատարելապես։

Հետո հանկարծ, միաձայն խազի մի բոպեի տևողությունից հետո, նվագողը շարժվում է և սկսում մի պարերգ. մի կաքավող, թռչկոտուն, զվարթ պարերգ, որ շարժում է ձգում մանուկների մեջ, շարժում է շնչին իսկ։ Կանայք միմյանց երեսի են նայում, տղամարդիկ կանանց աչքերով պարի հրավիրում, մանուկները՝ սողալով ավելի մոտ գալիս. հետո մեկեն մի երիտասարդ ցատկում է մեջտեղ, ձեռքերը տարածում, մարմինը կոտրատում, նազանքներով սահում գետնի վրա և իր վրա պտույտներ գործելով՝ շրջաններ է գծում խարույկի շուրջը։

Ու բոշաները սկսում են մեղմիկ ծափահարել. մի քանիսը բթամատով և երրորդ մատով շրփացնում են, ուրիշները խուլ ձայնով շվշըվացնում, իսկ ցեղապետը սիրալիր ժպտում է և գոչում.

— Դե՛հ, աղջիկնե՛ր, ձե՛զ տեսնեմ...

Բայց կանայք դեռ չեն շարժվում, դեռ նազ են անում, միմյանց առաջ մղում, միմյանց հրավիրում։

Ու մեկեն մի հարս, մի համարձակ կին ոտքի է ելնում ու առաջ ելնում։ Երիտասարդը ետ է քաշվում ու նստում։ Այժմ կինն է պարողը։

Սրանում է կինը ձեռքերը շրփացնելով, մեջքն ու իրանը կոտրտելով։ Երբեմն այնպես կռանում է և շնորհալի՝ դեպի գետին հասնում, որ կարծես մտադիր է պառկել. այդպես կռացած՝ նա սրանում է և հանկարծ զսպանակի պես վեր նետվում և նորից մեկ այս, մեկ այն կողմ ծռվելով, ձեռքերն օրորելով, կոները պտտեցնելով՝ ժպիտը դեմքին՝ սահում է, կարծես ոտքը գետնին չի կպչում...

Նրան քիչ հետո դեմ առ դեմ է գալիս մի ուրիշ կին, և ահա սկսում է զույգ պարը։ Երկու հանդիպակացները միևնույն շարժումներով խաչաձև նախ կտրում են իրար, միշտ խաչեր կազմում, կանոնավոր խաչեր՝ կենտրոնը խարույկը, և ոչ մեկի շարժումը մյուսից չի զանազանվում. ծռվում են միասին, նույն նազանքներն անում, նույն ամանակով մատերը շրփացնում և նույն բոպեին խաչաձև գծերի ծայրերը հասած՝ միաժամանակ դառնում, դեպի կենտրոն են սրանում ու կենտրոնից դեպի խաչի թևերը սահում...

Այդ բոլորը կատարվում է այնքա՛ն արագ, այնքա՛ն ճշտությամբ, որ սքանչելի մի տեսարան է պատկերանում՝ միաժամանակ միմյանց մեջք դարձնող կամ դեպի կենտրոնը եկող և ապա լայնության թևի երկու ճյուղերը գնացող զույգից։

Տասնհինգ բոպեաչափ երկու կանայք պարելուց հետո երկարության թևի ծայրերից դեպի կենտրոնն են գալիս, միմյանց կպցնում գլուխները, և պարն այդպիսով վերջանում է։

Այնուհետև երաժշտությունը լռում է, և սկսում է մի խոսակցություն։ Ամեն ոք պատմում է իր տեսածն ու լսածը, դաշտից, գյուղերից բերած համբավները։ Մանուկները հեռվում խաղում են, և աթոռակալը մյուս կողմում՝ դատում է և խորհուրդներ տալիս. բոլորը պատկառանքով լսում են ծերունուն՝ այդ փորձված բոշային, որ գիտե բոլորի ցավերը, բոլորի ուրախությունները։

Հետո նվագողը նորից տիկը ձեռքն է առնում, և ահա կանանց ու տղամարդկանց խումբը սկսում է երգել նախ մեղմ, ապա ուժգին, և սարահարթը լցվում է մի անուշ երաժշտությամբ. մանուկներն իսկ ընկերանում են, խարույկը պլպլում է, բոցեր արձակում, ճարճատում, ջողում...

Ահա այսպես էր կյանք վարում Բասենի այն թափառական հայ բոշաների մի խումբը, որոնց մեջ էր նաև Մարգոն։

Այդ խումբը Փոքր Ասիայից, Պոյապատի կողմերից էր եկել, փախչելով հալածանքներից, թափառելով մտել էր Էրզրումի նահանգը և ձմեռը քաղաքներում, իսկ այս ամառ, գարնանից ի վեր եկել էր Բասենի դաշտը՝ մտադրելով մինչև ձյունների իջնելը մնալ այնտեղ։

Մարգոյին ամենքը ճանաչում էին և ամենքը հարգում այդտեղ։ Նա իր օջախը, իր վրանը չուներ. հյուր էր ազգակիցներից մեկի մոտ, բայց իր աշխատանքովն էր ապրում։ Ո՛չ ոք նրա պես ճարպիկ, շատ հավաքող և մեծ պաշար բերող չկար ամբողջ վրաններում։ Ո՛չ ոք նրա պես երկիրներ տեսած, ամեն անկյուն, ամեն ճանապարհ ճանաչող չէր, և՛ ոչ ոք սակայն՝ նրա պես մռայլ ու տխուր, լռիկ ու մտախոհ չէր ամբողջ ցեղի մեջ։

Բոլորը գիտեին Մարգոյի պատմությունը։ Գիտեին, թե նա վաղուց թափառում էր՝ պղծված օջախի պատիվը վերականգնելու համար[1]։

Իր ծերունի հայրը չէր կարողացել սպասել. մի տարուց հետո մեռել էր։ Մարգոն ստիպված էր եղել միաժամանակ ընդհատել հետախուզությունը, գալ՝ որդիներին առնել և տանել Էրզրում, իր քրոջ մոտ։

Այդ օրից Պոյապատի բոշաներն այլևս չէին տեսել նրան, բայց գիտեին, որ կենդանի է և վրեժխնդրության ոգու պես քայլում է պաշտոնյաների մեջ՝ որոնելով իրեն անպատվողին ամեն տեղ։

Եվ ահա հանկարծ, երբ ընդհանուր ավերածություններից ստիպ-

1 Տես «Սանթո» պատմվածքը։

ված, բոշաների այդ ցեղը էրզրում էր գաղթել և մի ամառ լեռներում վրաններ էր խփել, մի գիշեր հայանվել էր Մարգոն մռայլ և տխուր։ Ոչ ոք նրան բան չէր հարցրել, ամենքը նրան ընդունել էին մի առանձին խոնարհ հարգանքով և թողել, որ նա իր ուզածն աներ։

Ու Մարգոն այժմ ահա, երբ երեկոյան այդ լուսնկային պարում էին իր ցեղակից հարսները, նստած էր կանանց մեջ լուռ և խոնարհ, գլուխը ծնկան և աչքերը կրակին։

Եվ անցնում էր նա իր հին հիշողություններին։ Հիշում էր, թե ինչպես ինքն էլ մի ժամանակ պարում էր զվարթությամբ այդ պարը, և ոչ ոք չէր կարողանում նրա նման հիացում ազդել. հիշում էր, որ տղամարդկանց խելքերը գնում էին, երբ նա կարմրած ու բոցափայլ աչքերով, իր վայելուչ, երկար ու ճկուն հասակը ոլորտելով, սեթևեթ և գրգռիչ շարժումներով սահում էր գետնի վրայով, նազանքներով աչքերը ոլորում, դյութիչ ժպիտով շուրջը կախարդում և ապա հպարտ՝ իր սիրված հիացումով, գնում էր նստելու կանանց մեջ՝ տղամարդկանց աչքը միշտ իր վրա։ Հիշում էր, թե ինչպես բոլորը նախանձում էին Արթենին, որ այդպես քաջ, գեղեցիկ և համեստ կին ունի...

Իսկ ա՞յժմ. ի՞նչ էր նա։ Գեղեցկությունից միայն աչքերն էին մնացել, որ այլևս չէին բոցավառվում, այլ լի էին մռայլ ու տխրություն սփռող խոհերով. հասակը նույնն էր, բայց այլևս ո՛չ գողտրիկ, ո՛չ այնքան վայելուչ, և դեմքի վրա, կիզացած, ալրված կաշին խորշոմել էր, կնճիռներ կազմել, այտերը փոս ընկել, շրթունքները դառն արտահայտություն ստացել և սիրտը՝ մի ժամանակ այնքան զվարճություն, այնքան հրապույր սփռող սիրտը, այժմ ճնշված, դառնությամբ լի էր և վիրալից...

Օ՜հ, նա կկենդանանար նորից, կվերստանար իր գեղեցկությունը, իր հրապույրը. հասակը անշուշտ կուղղվեր, դեմքը կփափկանար, աչքերը կբոցավառվեին նորից, եթե միայն գտներ իրեն այդ դրության մեջ ձգողին և վաղուցվանից պատրաստած սուր դաշույնը մխեր նրա կուրծքը, տեսներ նրա արյունի հոսելը, տեսներ նրա տանջվելը իր ոտքերի տակ և այդ բոլորով սրբեր իր հոր օջախը, իր զավակների անվան վրա ծանրացող անպատվությունը։ Ոչ ոք, իհարկե, նրան անպատիվ, արատավորված չէր համարում. ամենքը գիտեին, որ նա բռնության զոհ էր։

Բայց ի՞նքը—ինքը՝ ոչ։ Ինքն իրեն անպատված էր զգում և անպատվողի արյունը միայն կարող էր սրբել արատը, մաքրել, նոքից կյանք տալ զոհին...

...Եվ երբ սկսեցին երգել, Մարգոն հիշեց, որ ինքն էլ երգում էր այդ, մասնակցում նրան, որ ինքն էլ իր քաղցրիկ ձայնով հրապուրում

էր բոլորին, և վաղուց, շատ վաղուց էր, որ մի խազ չէր հանել կոկորդից. մոռացել էր իսկ երգի խոսքերը... Ու դառնացած՝ սկսեց լսել։

Քիչ հետո խմբական երգը կանգ առավ։ Այժմ մի տղամարդ, ձայնը բարձրացրեց և սկսեց մի հնամյա երգ.

Թեև մութն իջավ, երկինքը պատեց,
Թեև սառ ելավ, երկիր պաղեցրեց,
Բայց մթան միջից լոմ աղջիկն ելավ
Ու սառի միջից՝ ջերմություն սփռեց...
Լոմ աղջի՛կ սիրուն, աչքերդ լույս տվին,
Լոմ աղջի՛կ սիրուն, սիրտդ ջերմ սփռեց...

Դրան որպես պատասխան, կանանց խմբից լսվեց մի սիրուն ձայն, որ երգում էր.

Թեև մութն ընկավ, երկինքը պատեց,
Թեև տառ ելավ, երկիր պաղեցրեց,
Բայց մթան միջից ե՛ս քեզ լույս կբտամ,
Եթե դու լինես իմ տանը հսկան։
Եվ սառի միջից ես քեզ սիրտ կբտամ,
Եթե դու լինես առյուծի նման։
Լոմ տղա կարի՛ն, աչքերս քեզ կբտամ,
Լոմ տղա կարի՛ն, սիրտս քեզ կբտամ...

Այս ընդդիմախոսական երգը պարբերաբար շարունակվեց, և ամեն անգամ երգում են տարբեր կանայք։ Եղանակը գողտրիկ ու կայտառ, բայց միատեսակ էր և նմանում էր վիճաբանության։ Մանուկները թողնում են ամեն բան և մոտենում. աթոռակալը ժպիտն երեսին դիտում է վեճը, տղամարդիկ տաքանալով՝ միմյանց են քաջալերում և կանայք միմյանց հորդորում՝ ավելի սուր պատասխաններ շարադրելու։

Եվ հովվական տիկն իր միաձայն խազով ձայն է բռնում երգելիս, իսկ ընդմիջումներին՝ մի թեթև նախերգանք հնչեցնում։ Ըստ երևույթին երգը մի հին, վաղածանոթ երգ էր. բայց վարպետությունը նրանում էր կայանում, որ երգողը պարտավոր էր նույն հանգերով և նույն եղանակի տակ ինքնուրույն, նոր բան արտադրել։ Որքան սրամիտ էին առաջարկները կամ պատասխանները, այնքան գովասանք և հրճվանք էին ստանում։

Ահա շարժվեց մեկը, ձայնը բարձրացրեց և հանպատրաստից սկսեց.

Թեև մութն ընկավ, երկինքը պատեց,
Թեև սառն ելավ, երկիրը պաղեց,
Բայց խիստ խավարում համբույրը լոմ աղջկա
Շրթունքիս դիպած՝ խոշոր լույս կտա.

Եվ սառած երկիր՝ լոմ աղչկա սիրով,
Նորից շունչ կառնի, կանաչ կդառնա։
Լոմ աղչի՛կ սիրուն, համբույրդ հույս կտա.
Լոմ աղչի՛կ սիրուն, սերդ կյանք կտա...

— Էհե՛, էհե՛, վատ չէր...— գոչեց աթոռակալը,— ապա՞ տեսնե՞նք, կանանց կողմից ի՞նչ պատասխան կգա։

Եվ մինչ տիկը նախերգանքն է անում, կանայք իրար մեջ փսփսացին, հետո մեկը ժողովեց իրեն, ձայնը բարձրացրեց և պատասխանեց.

Է՛յ մթան միջից կանչող լոմ լախուզ[1],
Էյ սառի միջից աղաչող մանուս[2],
Լոմ աղչիկն երբե՛ք քեզ համբույր չի տա,
Լոմ աղչկա սիրտը քեզի չի՛ դառնա,
Եթե քո ձեռքը երկաթ չփշրի,
Եթե քո սրտից սառը չհալվի։
Լոմ տղա քնած, լոմ աղչիկն երբե՛ք
Ոչխար չի դառնա, որ գա ու քեզ հետ՝
Միշտ խոտ արածա...

— Բա՛, բա՛, բա՛...— կանչեց աթոռակալը,— կերա՞ր, Գիյո՛ր, այս էլ քեզ պատասխան. մարսեցի՞ր...

Ու բոշաները բոլորն էլ զվարթ ծիծաղ արձակեցին։ Բայց հովվական տիկը շարունակում էր. կանայք սկսեցին տղամարդկանց ծաղրելով գրգռել. սրանք էլ ամաչած, դրդում էին իրենց միջի երիտասարդներին ամոթով չմնալ։

— Տո ի՞նչ եք մնջել, մարդի՛կ,— կանչեց մի ծերունի,— ո՞ւր է լեզուներդ.. վա՛յ ես ձեզ ինչ ասեմ հա՛յ...

— Կնկա խոսքի տակը մնա՞լ... ծո՛, չխոսե՞ք...

Ե՛ս մթան միջից կանչող լոմ լախուզ,
Ես սառի միջից աղաչող մանուս,
Ձեռքս երկաթ փշրի՝ քեզ կոշիկ չինի,
Սիրտս աշխարհ դյութի, ոտքիդ տակ բերի...
Լոմ աղչիկ սիրուն, ասա՛, ի՞նչ կուզես,
Որ ինձ համբույրիդ արժանի տեսնես...

Կանայք իրար անցան. այժմ ամենքն էին ուզում պատասխանել. ամենքը բորբոքվեցին։

1 Բոշա տղամարդ։
2 Մարդ։

Բայց հանկարծ Մարգոն, որ լուռ լսում էր, շարժվեց, բուռն շարժմամբ դեն հրեց կանանց, և ի զարմանս բոլորի, խռպոտ ու խուլ ձայնով երգեց.

Է՛յ դու մթան մեջ կուլ եկած լախուզ,
Սառույցների մեջ չորացած մանուս
Ելի՛ր, մեյդա՛ն եկ, աղչիկս քեզ կտամ,
Աշխարհում մուրամ՝ բերեմ քեզ պահեմ,
Թե դաշույն ձեռքիդ օջախս սրբես,
Եթե թշնամուս ոտիս տակ բերես...

Ասաց և հրաբորբոք աչքերով ոտքի ելավ։

Բոլորն ապշել էին. տիկը լռեց և մի բոպեի խոր, անշշուկ լռության մեջ լսվեց նորից Մարգոյի խրոխտ, դողդոջուն ձայնը, որ այս անգամ առանց երգելու՝ գոչում էր.

— Տեսնե՛նք, ո՞վ է այն կտրիճ տղամարդը, որ աղջկանս ու օջախս արատը մաքրելու համար ցուպը ձեռք կառնի և կգա ետևիցս...

...Ու ճարճատում էր խարույկը, լուռ էին բոշաները։ Եվ բնության անորոշ, գիշերային տխուր շշուկն էր, որ սահելով լեռների կողից՝ գալիս խառնվում էր ջրվեժի մեղմիկ շառաչներին։ Լուսնկա տարածությունը մշուշի քողով աղոտացել էր շրջակայքում և խարույկի արնագույն կիսալույսի մեջ տեսնվում էին արևակեզ, կնճռալից, բայց հրաբորբոք դեմքեր...

1897—1909

ՍԱՆԹՈ[1]

(Հայ բոշաների կյանքից)

«Զուրեն Ֆոե-հեը կուշարե...»[2]
Հայ բոշայական առած։

1

Ի՞նչ փոշի...

Շարժուն, հետզհետե թանձրացող մշուշի պես բարձրանում է ահա գետնի զանազան կողմերից, պտույտներ գործելով ու թավալելով սյու-

1 Բոշաների լեզվով նշանակում է «օջախ»։
2 «Սրին ապավինիր, նա կպահպանե»։

նակներ կազմում, միմյանց վրա նետվում և ապա ցրվելով՝ տարածվում է ճանապարհի վրա ու ամեն ինչ ծածկում յուր մեջ։ Իսկ տո՞թը, մոծակները ու մժղուկնե՞րը, ճանճերն ու բզեզնե՞րը,— որոնք միմյանց խառնված կիտվում են ծառերի տակ և, հենց որ փոշին լուծվում է, խուժում են դեպի ճանապարհորդները...

Այդ ժամանակ էր ահա, որ հայ բոշաների մի խումբ արագությամբ քայլում էր դեպի Պոյապատ ավանը, մտած փոշու և մժղուկների մեջ։

Խումբը բաղկացած էր նախ երեք էշերից, որոնք գլխիկոր, երկայնամիտ ականջները միայն շարժելով մոծակների դեմ, կրում էին իրենց վրա հասակավոր կանայք՝ գավակներին մի-մի կիսամերկ երեխա, իսկ կողքերից, պայուսակի աչքերի մեջ՝ երկուական մանուկներ, որոնք իրանց մազոտ ու փոշոտ գլուխները շարժում էին՝ քաշ ընկած մազերի տակից։

Էշերի ետևից խմբովին գնում էին ուրիշ երկու մանկահասակ կանայք և չորս տղամարդ։ Բոլորն էլ բեռնավորված տոպրակներով, մաղերով ու զինված մեծ ցուպերով. բոլորն էլ փոշոտ, հոգնած և արևակեզ։

Լուռ էին. երբեմն միայն մեկը մի խոսք էր նետում մյուսին կամ մի ուրիշը քաջալերում էր էշերին՝ առանց զարնելու, փաղաքշական ձայնով. երբեմն էլ մանուկներից մեկն ու մեկը գլուխը հանկարծ դուրս էր ցցում պայուսակից և գոչում.

— Պանի՞... (ջուր)։

— Համբերիր,— խփում էր նրա գլխին էշի վրա նստած տատը կամ մայրը,— ջուր չկա դեռ։

Շրջակայքում ծառերը կորել էին փոշու տակ. ջրի ոչ մի նշույլ չէր երևում։ Եվ փոշին պահ մի սկսում էր թանձրանալ այնքան, որ շարժվել անհնար էր լինում։

— Կանգ առնենք, Սրգո,— ձայնեց էշերից մեկի վրա նստած պառավը,— էլ գնալ չի կարելի։

— Ջուր չկա, դեդ (մայր),— խոսեց ետևից գնացող տղամարդերից երկարահասակը, որտե՞ղ կանգ առնենք։

— Այ, այն հեռավոր ծառերի տակ,— մեջ մտավ մի երկրորդ կին։

— Քշեք, քշեք,— ասաց մի տղամարդ,— քիչ հետո ձորն ենք հասնելու, այնտեղ ծառ էլ կա, ջուր էլ։

Եվ իրավ, երբ փոշին իջավ, հեռվում երևաց լեռնոտ ձորաբերանը։ Փոշին այժմ ետ էր գնում. անցել էին նրա սահմանը. քամին ուղղությունը փոխեց. կանայք թոթափվեցին ու մի թեթև զով քամի պարզեց բոլորի փոքրացած աչքերը։

Այն ժամանակ վերջին խոսող տղամարդը ցուպը դրեց վզի վրա, ձեռքերով բռնեց նրան ու սկսեց երգել։ Նրան միացավ մի ուրիշը, ապա մի կին, և քիչ-քիչ ամբողջ խումբը։ Կանանցից մեկը սուր ձայնով մի քանի մինոր խաղեր հանեց կոկորդից և կին ու տղամարդ միաձայն՝ հնչեցրին մի նորանշան, տխուր ու ցծու եղանակ, որ սկսում էր կիսաձայնից, վերջանում կիսաձայնով և որ՝ նման դեպի օդը նետված զսպանակի՝ վժժում էր նախ սուր, հետո հաստ, ապա մեղմանում էր, մարում և կարծես դոփյունով ընկնում-վերջանում։

— Լեվա՞լ-Լեվա՞լ... (աստվա՞ծ-աստվա՞ծ)։

Կանչում էր սկսող կինը, հետո, մի ակնթարթ խորին լռությունից հետո, կին, տղա, տղամարդ—շարունակում էին.

Այս սարերը, այս ձորերը մերն են,
Բռնողները ուրիշներն են,
Լեվա՞լ, Լեվա՞լ։
Այս դաշտերը, այս հողերը մերն են,
Հնձողները ուրիշներն են...
Ցնուշ քամին, լեռան ծաղիկ մերն են.
Շնչողները ուրիշներն են,
Լեվա՞լ, Լեվա՞լ...

Իսկ երբ փոշին բոլորովին իջել էր, ձորաբերանը լավ երևում էր, և հույսով լցված խումբը շտապեցնում էր քայլերը՝ զով տեղերում հանգչելու համար—էշի վրա կուչ եկած պառավներից մեկը գլուխը բարձրացրեց և դողդոջուն ու զայրալից ձայնով երգը վերջացրեց.

Փլե՞ք, սարեր, լեցվե՞ք ձորեր,
Ողողվե՞ք դուք, դաշտե՞ր, հողեր,
Լոմ աղջիկներ, դուք մի՞ ծնեք,
Որ չմարեն ուրիշներ,
Լեվա՞լ, Լեվա՞լ...

Ու այդ խորունկ գանգատը հնչեց դաշտի մեջ, գնաց դեպի ձորը և անհետացավ նրա խորքերում։

Խոր լռություն հաջորդեց երգին. արևը քիչ ծռվում էր. թափառական ճանապարհորդները փոշեթաթախ, լռելյայն ու հոգնած, մտան ձորակի մեջ, անցան ուռիների և այլ ծառերի տակից և կանգ առին մի լայն առվակի մոտ։

— Այստեղ լավ է,— ընտրեց խմբի գլխավորը մի մեծ ուռենու ստորոտ,— ջուր կա, կանաչ խոտ էլ կա... իջե՛ք։

Կանայք ցած իջան. լակոտները սահեցին վար, մանուկներին հանեցին պայուսակներից, էշերին մերկացրին, ջրով զովացրին և բաց թողին արածելու. իրանք էլ մի քանի րոպե մաքրվելուց հետո փռվեցին խոտերի վրա հանգչելու։

Կանանցից ամենաջահելը, մի վայրենի և աշխույժ գեղեցկությամբ հարս, սկսեց խռիվ ժողովել, տղամարդերից մեկը հեռացավ չոր ճյուղեր գտնելու, իսկ խմբի գլխավորը, մի քանի րոպե հանգչելուց հետո, մահակը ուսին՝ մի պտույտ գործեց իրանց իջած տեղը ուսումնասիրելու համար։

Մեծ ճանապարհը ծառից հարյուր քայլ հեռավորությամբ անցնում էր, քերելով ժայռերի ստորոտը. փոշի չկար ձորակում. երբեմն միայն բերաններից և բարձունքներից ներս էին մտնում փոշու տկարած սյունակներ և տարածվում սարերի կատարների վրա, բայց շոգը այնքան էր, որ թռչուններն իսկ դադարել՝ հանգչում էին տերևների տակ. ոչ մի ճանապարհորդ չէր երևում։

— Զորը երկար պիտի լինի,— ասաց Սերգոն հեռվից,— դու կգիտենաս, ուստա Հարություն, երկա՞ր է։

— Բավական երկար է, կես ժամվա ճանապարհ։

— Իսկ այդ շավի՞ղը,— հարցրեց նորից գլխավորը,— սա՞ որտեղ է տանում։

— Դեպի գյուղերը. լավ գյուղեր կան այդ կողմերում։.

— Չգնա՞նք այդ կողմերը։

— Չգիտեմ։

— Ես նայեմ մեկ. գուցե նշաններ լինեին,— ասաց գլխավորը և գնաց դեպի մի մեծ շավիղ, որ ճանապարհից զատվելով՝ անցնում էր առվակից ու դեպի աջ՝ ձորն ի վեր գնում։

Բոշաները—թե կին, թե տղա—կեսը երեսի վրա փռված, մյուսները պպզած, կանգնած՝ նայում էին գլխավորի ետևից։

Սերգոն մի ոստյունով անցավ առուն և սկսեց խիստ ուշադրությամբ զննել շավիղի սկզբում եղած ծառերի բները, պտտվելով նրանց շուրջը։

Ոչ ոք չէր խոսում, ամենքը սպասում էին։ Երկու րոպե հետախուզությունից հետո Սերգոն կանգ առավ մի կետի առաջ, լավ քննեց և մատը դրավ մի քանի այլանդակ նշանների վրա, որոնք գծված էին

սուր գործիքներով։ Այդպիսի և այլ գծեր շատ կային, բայց բոլորը ավերված, միայն երկուսն էին ողջ և այսպիսի ձևեր ունեին.

— Փակված է ճանապարհը...— գոչեց գլխավորը գլուխը դարձնելով,— այս կողմով գնալն անօգուտ է և գուցե վտանգավոր[1]։

Հետո արագությամբ ետ դարձավ խմբի մեջ։

— Գիտե՞ք ինչ,— շարունակեց նա,— շատ նոր անցել են երկու խմբեր՝ գալով գյուղերից, որտեղ կամ վատ են ընդունել նրանց և կամ նեղացրել են։ Երկու նշանները թարմ են դեռ. մեկը հայտնում է, որ փակ է այդ կողմերը, ուրեմն և ավելորդ է գնալ. իսկ մյուսը...

— Աֆսոս,— միջահատեց մի պառավ,— մեր մաղերը մնացին։

— Ի՞նչ արած,— խոսեց մյուսը,— գոհ լինենք ինչ որ ծախեցինք. մնացածները քաղաք կտանենք։

Բայց գլխավորը չէր խոսում և գրեթե չէր լսում նրանց, այլ մտախոհ նայում էր ձորի երկու ծայրերին։

— Ի՞նչ կա, Սերգո,— նկատեց կանանցից մեկը,— ի՞նչ է եղել։

— Ոչինչ...— ասաց Սերգոն,— մի երկրորդ նշան էլ կար, որ չհասկացա։

— Ի՞նչ նշան,— մեջ մտավ Հարությունը,— ես բոլոր նշանների միտքը գիտեմ։

— Դժվար,— ժպտաց Սերգոն,— սա երկդիմի բան է. չգիտեմ նշա՞նն է նոր գծված, թե՞ եղածը ջնջված է։

Պառավներից մեկը ոտքի ելավ։

— Գնանք ցույց տուր ինձ,— ասաց նա,— ես բոլորը ճանաչում եմ։

— Ահա,— ասաց Սերգոն և կկզեց գետնի վրա,— ես գծեմ, դուք տեսեք։

Բոլորը գլուխները միմյանց մոտեցրին և կռացան։ Սերգոն ետ տվավ խոտերը, հողը հավասարեցրեց և վրան գծեց երկրորդ նշանը—մի հաստ ուղղահայաց գիծ, որ վրայից ուներ նրան կտրող բարակ, ծուռ և անհանգիստ գծեր։

Ոչ ոք պահ մի չխոսեց։ Սերգոն այդ գծելուց հետո նայեց Հարությունին և պառավին։

— Ջնջված նշան է,— ասաց Հարությունը,— ուղղահայաց գիծը ուրիշ խումբ է գծել, որ ուզել է ասել, թե ճանապարհը բաց է. իսկ երկ-

[1] Այդպիսի նշաններ ունեին թե՛ հայ բոշաները և թե՛ եվրոպական ցիգաները։ Մի խումբ, անցած տեղում, նայելով, թե ինչպիսի ընդունելություն է գտնում, դեպի նրան տանող ճանապարհի սկզբում մի քարի կամ ծառի վրա թողնում է նշաններ՝ հետագա խմբին ազդարարելու համար։

բորդ խումբը չնչել է նրան, հասկացնելու համար, որ այդ նշանը սխալ է։

— Իսկ դու ի՞նչ կասես, դեդ,— դարձավ գլխավորը պառավին։

Սա մի քիչ մտածեց, հետո գլուխը բարձրացրեց ու ելավ ոտքի։

— Ամենից առաջ,— ասաց նա,— ինձ պետք է նշանը յուր տեղում տեսնել։

— Ցուր տեղո՞ւմ,— ասաց Սերգոն,— ի՞նչ պետք է, իմ գծածը ճիշտ նման է։

— Լավ, բայց դու ասա, թե ո՞ր գիծն է թարմը, ուղղահայա՞ցը, թե՞ կարողները։

— Ինչպե՞ս, թա՞րմը։

— Այո, չէ՞ որ կեղևի վրա է գծված, ո՞ր գծերն են ավելի սևացել, ո՞րը սպիտակ մնացել։

— Իրավ է...— մոմոաց գլխավորը,— այս բոպեիս ասեմ...

Եվ վազնիվազ գնաց դեպի նշանը, կռացավ նայեց, հետո դարձավ ու ասաց.

— Ուղղահայաց գիծը նույնքան թարմ է, որքան և նրան կտրող գծերը. բոլորն էլ մեկ ձեռքով և մի ժամանակ են գծված։

— Կասկածում էի.— ասաց պառավը Հարությունին դառնալով,— տեսա՞ր... այդ գիծը չնչված չէ. դա մի նշան է և մի վատ նշան է, և մի վատ նշան... դա զուլումի նշան է. լոմերին* սկսել են զուլում անել... Լեվալը մեզ օգնական։

Այդ միջոցին ձորի ծայրում. դեպի Մինոպ իջնող ուղղությամբ երևացին մի քանի ձիավորներ։ Վեց զինվորականներ էին՝ երկուսը մեծ պաշտոնյաներ, որոնք ֆեսերի վրա ունեին սպիտակ ծածկոցներ՝ արևից պաշտպանվելու համար։ Նրանց ետևից գալիս էին չորս ձիավոր զափթիեներ, ոտից գլուխ զինված, ծխում էին և խոսակցում՝ բավական ետ մնացած, իսկ պաշտոնյաները լուռ էին և կիսափակ աչքերով շուրջն էին դիտում.

Բոշաները մի քիչ նրանց նայեցին. պառավներից մեկը կամենալով օգտվել հանգամանքից, ըստ տովորականի վազեց դեպի ճանապարհը և սպասեց եկողներին, որ մի բան խնդրե։

— Ջինգենեներ են, Արիֆ էֆենդի,— ասում էր հասակավոր պաշտոնյան երիտասարդին,— նայեցեք։

— Այո, բեյ, Ստամբոլում շատ եմ տեսել։

— Ձեր տեսածներից չեն տրանը,— ժպտաց բեյը,— սրանք հայ բոշաներ են, քրիստոնյաներ։

* Հայ բոշաները իրանք իրանց անվանում են լոմ։

— Քրիստոնյա...— ծիծաղեց Արիֆը,— մի՞թե կարծում էիր, որ գնչուները կրոն ունին... ո՞ւֆ, ինչ տգեղն է այս պառավը։

Մոտեցել էին պառավին, որ ձեռքը պարզել. աղերսավոր ձայնով գոչում էր.

— Մի բան տվեք, էֆենդիներ, աստված ձեզ օրհնե. մի բան տվեք խեղճերիս։

— Այո, տգեղ է,— պնդեց բեյը,— բայց մեջները շատ գեղեցիկներ էլ կան. մանավանդ կրակոտ, աշխույժ... կրակ են անիծածները, իսկական կրակ...

— Դու գուշակել գիտե՞ս, պառավ,— հարցրեց Արիֆը և ձիու սանձը քաշելով կռացավ դեպի կինը։

— Գիտեմ, էֆենդի, լավ գիտեմ։

— Ստում է, Արիֆ էֆենդի,— ասաց բեյը,— սրանք լավ չգիտեն, սրանք չինգենեներ չեն։

— Բա՜հ...— արեց պոլսեցի աստիճանավորը,— բոլորն էլ չինգենեներ են... իսկ այն ի՞նչ կանայք են ցածում, պառավ, հարսնե՞րդ են, թե աղջիկներդ։

— Քույրերս են... էֆենդի, քույրերս. մի բան տվեք խեղճերիս։

— Լավ, տամ, բայց գուշակիր ինձ համար։

Հետո, երբ մի անգամ էլ նայում էր ծառի տակ կիտված բոշաներին, նկատեց երիտասարդ գնչուհուն, որ կանգնած դիտում էր իրան։ Հեռվից այնքան գրավիչ թվաց բոշա կինը, որ երիտասարդի մեջ մի բուռն ցանկություն ծնավ մոտից տեսնելու նրան։

— Գիտե՞ս ինչ,— ասաց նա պառավին,— այստեղ շոգ է և արև... գնանք այնտեղ ձեզ մոտ, և երբ գուշակես ինձ համար, քեզ մի մեջիդիե կտամ։

— Մեզ մո՞տ...— շփոթվեց պառավը,— մեզ մոտ .. այնտեղ տեղ չկա. այնտեղ էլ շոգ է... մենք գուշակել չգիտենք։

Ու պառավին տիրեց սաստիկ անհանգստություն։ Նա դարձավ, մտքով անիծեց մուրալ ցանկանալու վայրկյանը. մի չարագուշակ նախազգացում ճնշեց սիրտը։

— Բեյ էֆենդի,— ասում էր այդ ժամանակ պոլսեցին յուր ընկերոջը,— մի քիչ շհանգստանա՞նք այդ ծառերի տակ։

Զափթիեները մոտեցել էին։

— Իջեք այդ ծառերի տակ,— հրամայեց նրանց բեյը և ցած թռավ ձիուց։

Մինչ այդ, պառավը նկատելով, որ թուրքերին իջնել արգելելու հնար չկար, վազեց ետ դարձավ ու հեռվում գտնեց յուրայիններին.

— Շուտ, հավաքվեցեք գնանք... ահա զուլումները...

Բոշաները բնազդմամբ վեր թռան, վազեցին դեպի էշերը, մոտ բերին, ուզեցին բառնալ, բայց ուշ էր. պաշտոնյաները ձիերը տված զափթիեներին, երկար սրեր աջ ձեռքով բռնած, առաջ էին գալիս։

— Հը՛,— ծիծաղեց պոլսեցի աստիճանավորը,— այդ ի՞նչ է, վախեցա՞ք. ինչո՞ւ, մենք քո՞ւրդ ենք. խո ձեզ չե՞նք ուտելու։ Նստեք, նստեք, հանգիստ եղեք, մենք էլ ձեզ մոտ քիչ կնստենք, քիչ կխոսենք՝ կերթանք...

Եվ այդ ասելով նա՝ ժպիտը երեսին մի առ մի մոտ էր գնում բոլորին ու զննում։ Երբ հասավ մատաղահաս կնոջը, երկար կանգ առավ նրա առաջ։ Գնչուհու ցանկալի, կրակոտ գեղեցկությունը լիովին գրավեց նրան։ Նայեց մյուսներին էլ, բայց եկավ նորից կանգ առավ գնչուհու մոտ։

— Սա որի՞ աղջիկն է,— ասաց։

— Իմ կինն է,— առաջ եկավ ուստա Հարությունը։

— Քո կի՞նը...— գոչեց արհամարհությամբ աստիճանավորը, հետո սիրալիր ժպիտը երեսին դարձավ գնչուհուն և հարցրեց.

— Դու էլ գուշակել գիտե՞ս, սիրուն գնչուհի։

— Ո՛չ,— ասաց գնչուհին խստությամբ և դեմքը դարձրեց։

— Ինչո՞ւ ես բարկանում, որ գուշակես ինձ համար, քեզ մի ոսկի կտամ... ապա, արի այստեղ, մեզ մոտ։

Եվ քայլեց բեյի ընտրած տեղը, որ քիչ հեռու էր բոշաներից։

Գնչուհին չշարժվեց, նայեց ամուսնուն, մյուսներին ու գլխավորին, որոնք բոլորն էլ գունաթափ՝ գուշակում էին, թե ինչ էր լինելու։

— Հը՞,— լսեցի՞ր էֆենդու հրամանը,— ձայնեց բեյը, հասկանալով ընկերի մտադրությունը,— շուտ մոտ արի, չինգենե, արի մեզ համար գուշակիր։

— Ես գուշակել չգիտեմ։

— Գիտես կամ ոչ,— գոռաց բեյը բարկությամբ,— ես Վեզիրքյոփրուի կայմակամն եմ և չեմ սիրում, որ իմ հրամաններս չկատարվին, իսկ սա սուլթանի ազգականներից է... դեհ, արի մոտ, տեսնենք։

Զափթիեները, որոնք ձիերը կապել էին մի ծառի, ժպիտը դեմքներին՝ հեռվից դիտում էին իրենց գլխավորների արածները և հասկացել նրանց մտադրությունը։

Երիտասարդ գնչուհին վախեցած՝ նորից նայեց յուր ամուսնուն, որ կծկվել էր մի կողմ և գլուխը խոնարհեցրել, նայեց գլխավորին, որ այլայլված ու շվարած՝ դողում էր։ Հետո, երբ տեսավ, որ ոչ մի պաշտպանություն չէր լինելու նրանցից, դարձավ թուրքերին և ասաց.

— Գամ ի՞նչ անեմ։

Բայց կայմակամը կռացել էր դեպի Արիֆը և ուրախ, որ կարող է սուլթանի ազգականի հետ մտերմական մի խնդիր ունենալ, ասաց.

— Հը՞, աչքդ բռնե՞ց դրան։

— Այո, 5 ոսկի կտայի, եթե...

— Օ՜... շատ է. դուք այդ 5 ոսկին տվեք ինձ, ես կսարքեմ... այժմ ոչ, հետո կտաք... ես կհիշեցնեմ ձեզ։

Հետո դարձավ դեպի գնչուհին և ձայնեց.

— Հը՞, այդ ի՞նչ է, դեռ չե՞ս եկել... եկ գուշակիր տեսնեմ։

— Գնա գուշակիր,— հրեց մի պառավ,— գնա, գուցե դրանով ազատվես։

Երիտասարդ կինը քիչ էլ վարանեց, մի արհամարհոտ հայացք ձգեց ամուսնու, գլխավորի վրա, ապա վճռական կերպով դեպի աստիճանավորները առաջացավ և ասաց.

— Որի՞ համար գուշակեմ։

— Առաջ ինձ համար,— ասաց կայմակամը։

— Ձեռքդ տո՛ւր։

Բեյը պարզեց նրան յուր ձեռքը։ Գնչուհին մատների ծայրով բռնեց, դարձրեց, ուշադրությամբ ափի գծերը զննեց, հետո արհամարհությամբ բարձրացրեց հայացքը և ասաց.

— Դու կմեռնես հանգիստ՝ անկողնիդ մեջ, բայց ոչ թե զինվորի մահով։

— Հա՛, հա՛, հա՛,— ծիծաղեց բեյը,— շնորհակալ եմ. զինվորի մահվան շատ էլ նախանձող չեմ... հետո՞։

— Հետո ոչինչ նոր բան... ավելի կբարձրանաս, միայն կբաթրանաս շնորհիվ նրա, որ շատ արյուն կթափես և շատ դիակներ կշինես։

Ու սոսկումով բաց թողեց ձեռքը։

— Ախյո՞ւն,— գունատվեց բեյը,— ի՞նչ արյուն, պատերազմի՞ պիտի գնամ։

— Ոչ,— թոթվեց գլուխը գնչուհին,— ոչ... չգիտեմ. անշուշտ անմեղ արյուն կթափես...

— Այժմ ինձ համար գուշակիր, սիրուն կին,— ժպտաց Արիֆը և պարզեց ձեռքը։

— Եթե ես սիրուն եմ,— պատասխանեց գնչուհին,— այդ քո գործը չէ... դու կին չունի՞ս։

— Ունիմ։

— Եթե կինդ էլ տղամարդի տեսներ և նրան ասեր այդպիսի խոսքեր, ի՞նչ կանեիր նրան։

— Այ, այ,— մեջ մտավ կայմակամը ծիծաղելով,— վաթպետ գընչուհի, ուզում ես էֆենդուն կաթմբացնե՞լ խոսքերովդ. բայց մոռանում ես, որ մենք— մահմեդականներս, մոթթում ենք անհավատարիմ կնոջ և արդարացնում բազմաթիվ կին առնող տղամարդին։

Գնչուհին ոչինչ չասաց. բռնեց Արիֆի պարզած ձեռքը, խորին ուշադրությամբ կռացավ նրա վրա ու երկար, լուռ զննեց ափի գծերը։

Ոչ ոք չէր խոսում. զափթիեները հեռու կանգնած, հետաքրքրությամբ վզերը պարզել, աշխատում էին լսել. իսկ բոշաները դիտում էին տեսարանը անհանգստությամբ։

Վերջապես գնչուհին բարձրացրեց գլուխը և ասաց.

— Մենք գուշակել շատ չենք սիրում. բայց իմ հայրս հայտնի գուշակող է և ինձ տվել է յուր արհեստից... Ահա ասում եմ քեզ, որ շատ չի անցնիլ, և դու կապանվիս մի կնոջ ձեռքով. զգույշ կաց...

Արիֆը ժպտաց. զափթիեները միմյանց նայեցին։

— Որքան որ մեծ օջախից լինիս,— շարունակեց գնչուհին,— այնուամենայնիվ չես ազատվիլ այդ կնոջ ձեռքից. զգույշ կաց...

Հետո ուժգնությամբ թողեց ձեռքն ու հեռացավ դեպի բոշաները։

Երկու թուրք աստիճանավորները պահ մի լուռ մնացին։

— Գնանք այստեղից, էֆենդի,— խոսեց կայմակամը,— այդ կինը մեր գիտցածներից չէ, տխուր բաներ է ասում։

— Մի՞թե հավատացիք ասածներին, բեյ,— ծիծաղեց ստամբոլցին—չտեսա՞ք, որ գուշակեց միտքս և յուր արած գուշակություններով ուզեց ինձ վախեցնել... տեսնենք. շատ կցանկանայի սպանվել դրա ձեռքով... ինչ որ լինի, քսան ոսկի էլ ծախսեմ, այդ կինը պետք է ձեռք ձգեմ։

— Բայց դուք չգիտեք, էֆենդի,— ասաց բեյը քիչ վախեցած,— այդ կանայք կատաղի են լինում և մեծ բարոյականության տեր. զգույշ կացեք. եթե նույնիսկ հանձնվի, յուր գրկի մեջ կխեղդի ձեզ...

— Հա՛, հա՛...— ծիծաղեց էֆենդին,— դրա միջոցն էլ կա, այ, կտեսնեք։

Ասաց և ձեռքով մոտ կանչեց զափթիեներին։

Բոշաներն այդ միջոցին նկատելով աստիճանավորների շարժումները, խորհրդի ժողովվեցան։

— Ես չեմ անպատվի օջախս,— գոչեց գնչուհին,— եկողին կսպանեմ փայտով։

— Իսկ հետո՞,— ասաց ամուսինը,— չէ՞ որ նրանք տրեր ունին, հրացան ունին։

— Թող սպանեն ինձ, կմեռնեմ... վախկոտը դու ես, որ չես համարձակվում կնոջդ պաշտպանելու համար մի քայլ անել։

— Դու խենթ ես, Մարգո,— մեջ մտավ գլխավորը,— նրանք, եթե տեսան մեր ընդդիմությունը, հրացանի տակ կառնեն ու բոլորիս մեկմեկ կսպանեն...

Արևն սկսում էր խոնարհվել. մի գեղեցիկ զովություն էր տարածված ձորակի մեջ, երբ չորս զափթիեները սրերը հանեցին ու մոտեցան բոշաներին։ Նրանցից մեկը հեռվից հրամայեց բոլորին ցրվել, բացի գընչուհուց։ Սա էլ ուզեց խուսափել, բայց պաշարեցին և մոտեցան։

Եվ ահա այնուհետև էր, որ Սինոպից քիչ ցած, մեծ ճանապարհի կողքին, տեղի ունեցավ մի քստմնելի տեսարան։ Չորս զափթիեներ հարձակվեցին կնոջ վրա։ Գնչուհին հափշտակեց մահակը և նրանով մոտ 10—15 րոպե քաջությամբ այնպես պաշտպանվեց, որ մի զափթիեի թևը փշրեց։ Բայց երկար չտևեց այդ. պոլսեցին էլ մնչտեղ ընկավ և քիչ հետո ետևից հասնելով՝ կաշկանդեցին գնչուհու ձեռքերը ու այդպես քարշ տվին մի հեռավոր ծառի ստորոտ։

Հեռվից, ծառերի տակ կանգնած բոշաները նայում էին կատաղի աչքերով. մանուկները ճչում էին, իսկ գեղեցիկ գչուհին այնպես էր գոռում, որ ձորն էր թնդում։

Քիչ հետո նորից լսվեց պոլսեցու և կնոջ մեջ կռվի աղաղակ, ապա մի ճիչ և այլևս ամեն ինչ հանդարտեց։ Խոր լռությունը խզվում էր միայն վիրավոր զափթիեի հեծեծանքով և հեռվից եկող բոշա մանուկների լացով։

Այդպես մի կես ժամ սոսկալի հանդարտությունից հետո երևաց ստամբոլցի պաշտոնյան՝ անկարգ ու գունաթափ, ձի նստեց և զինվորականները աբշավանոթ մեկնելով՝ անհետացան ձորաբերանից դուրս...

Այն ժամանակ բոշաները նորից հավաքվեցին, վազեցին դեպի թբշվառ Մարգոն, գտան նրան ուշաթափ և կիսամեռ վիճակի մեջ։ Բարձրացրին, լվացին, ուշքի բերին, դրին էշերքց մեկի վրա ու տխուր, լալով, նկուն, քայլեցին դեպի հարավ, պառավ դեղի զայրալից ու ճչացող տղրի տակ, որ հնչում էր.

Փլե՞ք, սարեր, լցվե՞ք, ձորեր.
Լամ աղջիկներ, դուք մի ծնեք,
Որ չվայելեն ուրիշներ.
Ախ, լեվա՞լ, լեվա՞լ...

3

Վեզիր-քյոփրու ավանից մինչև Գասթեմունի քաղաքը գտնվող գյուղերի և գլխավորապես Պոյապատ (Բայվատ) գյուղաքաղաքումն է, որ տասնյակ հազարներով հայ բոշաներ կենտրոն են ընտրել. ամառը թափառում են երկրի ամեն կողմերը, մտնում ամեն քաղաք, ամեն գյուղ, ծախում իրենց ձմեռվա պատրաստած կամ տանը նստող ամուսինների շինած մաղերը, մազեղեն այլ գործվածքները և քթոցներ, սալաներ, խոզանակներ և այլն, հետո, մինչև ձմեռվա սկսվելը, նորից հավաքվում, լցվում են խրճիթները, բերելով ցորեն, ալյուր, դրամ և ամեն տեսակ պաշարեղեն, բերելով նոր անդամներ—ծծկեր մանուկներ, որոնց նրանք այնքան հեշտությամբ ծնում են ճանապարհին, իսկույն մեջքին կապում և թափառականությունը շարունակում։

Գլխավորապես կանայք են լինում առևտուր անողները. սկզբից բաժանում են իրենց մեջ գյուղերն ու քաղաքները, մահակը ձեռքերին, ամեն դռան առաջ, ծախում են, ուզում, մուրում, գուշակում, աներեսությամբ զվվեցնում, բարոյական մաքրությամբ հիացմունք ազդում և տղամարդից ավելի սրտոտությամբ ցրվում, հալածում են նրանց, որոնք կհամարձակվեն վատ մտադրությամբ մոտենալ իրենց։

Եվ երբ ձմեռ դարձավ, Պոյապատ են մտնում ամեն կողմից գլխիկոր, բարձված էշեր, արևակեզ գնչուհիներ, փոշոտ տղամարդիկ ու սկսում են ձմեռային աշխույժ, կրակոտ մի կյանք. պատրաստում են առևտրի պաշար՝ գարնան համար. մաքոքների չրխկոցներ է, որ լսվում է խրճիթների միջից. հետո զվարճանում են, նվագում, հարսանիք անում, շատ օղի խմում և գյուղաքաղաքին մեծ կենդանություն տալիս։

Բայց այդ ձմեռ, երբ բոշաների առաջին խումբը, ժամանակից առաջ ներս մտնելով, Մարգոյին ավան բերեց, վերադարձողները ոչ միայն առատ պաշար չէին բերում, այլև պակաս էին վերադառնում։ Լսվում էր ամեն տնից լացուկոծ, երևում էին տխուր դեմքեր, մարդիկ հուզմամբ կիտվում էին այս-այն տան մեջ, այս-այն փողոցի անկյունում և լսում մեկի պատմությունը, որ դողդոջուն ձայնով բոշայերեն՝ պատմում էր իրենց մի ընկերի սպանվելը. մյուսին, որ նկարագրում էր իրենց խմբի կրած հալածանքը. և ջղերն այնքան լարվել էին, որ ամեն անգամ մեծ իրարանցում էր տիրում բոշաների մեջ, եթե նրանց թաղերում զինվորներ էին երևում կամ որևէ թուրք պաշտոնյա։

Ծանր տարիներ էին սկսվել բոլոր քրիստոնյաների համար. մի տեսակ հալածանք էր սկսվել գյուղերում թափառող բոշաների խմբերի դեմ, և քրդերի ու չերքեզների ասպատակները անպատիժ կերպով սպանում էին, կողոպտում ու հալածում բոշաներին։ Մի քանի պաշտոնյաներ, ինչպես պատմում էին, ստիպել էին բոշաների մի խմբի՝ երկու ամբողջ օր քարշ տալ իրենց ետևից բերվող կողոպտած իրեղենները, հետո ծեծել էին նրանց, կողոպտել և ծիծաղելով ճանապարհ դրել։ Մի ուրիշ տեղ էլ չերքեզները հարձակվել էին մի խմբի վրա, եղածը կողոպտել, էշերին սպանել,— և դա ամեն մի բոշայի արտասուքն էր հոսեցնում—հետո կանանց էլ ծեծել էին՝ ասելով, որ ինչո՞ւ են տգեղ... ու անցել։

Սակայն ամենից սոսկալին առայժմ ուստա Հարությունի կնոջ՝ Մարգոյի դեպքն էր, որ դեռ շարունակում էր հուզել մտքեր։ Աթոռակալի ջանքերը կայմակամի մոտ՝ ծիծաղ էին շարժել. մի՞թե կարելի էր գանգատ տալ մի կայմակամի և մանավանդ սուլթանի ազգականի վրա։

Ամեն բոշա, սակայն, ատամ էր կրճտեցնում թուրքերի դեմ և ամեն անգամ, երբ ուստա Հարությունի դռան առջևով էին անցնում, պարտք էին համարում մի հայհոյանք արձակել «պսու»-ների (թուրքերի) հասցեին։

Ուստա Հարությունը յուր կնոջ հետ պատահած դժբախտությունից հետո Պոյապատ էր հաստատվել։ Թշվառ Մարգո։ Նրան կիսամեռ բերել ձգել էին ավանը։ Ամբողջ աշունը հիվանդ, քիչ էր մնացել մեռներ. միշտ աղաղակում էր, հայհոյում, անիծում, մեռնել էր ուզում. բայց երբ քիչ հանդարտում էր, կպչում էր ամուսնու օձիքից և աղաչում, որ Ստամբոլ գնային, ուր նա մտադիր էր գտնել իրեն անպատվողին և վրեժ առնել։ Այժմ Մարգոն միայն վրեժ էր մտածում, միայն նրա համար ապրում։

— Խելառ,— ասում էր նրան ամուսինը և միշտ ուսերը թոթվելով դուրս գնում։

Մարդ չէր իմանում, թե ուստա Հարությունը այժմ ինչո՞վ էր զբաղվում. չէ՞ որ այլևս ոչ մաղ էր գործում և ոչ էլ կաշի մաքրում, այլ անդադար շուկայում ման էր գալիս, պաշտոնյաների շուրջը պտտում, կայմակամի տան պատերի տակ քարշ գալիս, հետո հանկարծ մի քանի օր էլ չէր երևում։ Երբ Պոյապատ էր հաստատվել, աթոռակալը նրան տեղ էր տվել, բայց, ի զարմանս բոլորի, մի քանի ամիս հետո Հարությունը փող էր երևան բերել և մի տուն գնել։ Սկզբում բոշաները նրա հետ լավ էին, նրա թշվառ կնոջը խղճում էին, բայց հետո Հարությունի ընթացքը սկսեց բոլորին կասկած ազդել, և ամեն անգամ, երբ նա թուրքերի հետ էր, խեթ-խեթ էին նայում, մի անգամ էլ, մի քանի հոգի լրտեսելով, լսեցին, թե նա ինչպես յուր ազգի վրա ծիծաղող թուրքերի համամիտ էր լինում, լոմերի սովորությունները ծիծաղելի կերպով

պատմելով նրանց, զվարճացնում էր և հանդուրժում, որ մահմեդականները լրբենի կերպով խոսում են լոմ կանանց մասին։

Այդ լուրը իսկույն տարածվեց բոշաների մեջ, և Հարությունը բոլորովին ատելի դարձավ, բայց որովհետև խղճում էին հիվանդ ու թշվառ կնոջը, ուստի դեռ Հարությունին ոչինչ չէին ասում։

Աթոռակալ Մովսեսը, որ շատոնց ընտրված էր իբրև ներկայացուցիչ և պետ Պոյապատի բոշաների, աչքի առաջ ունենալով Մարգոյի վիճակը, խստիվ պատվիրեց բոլորին, որ Հարությունին չհալածեն։ Ինքն էլ յուր կողմից խիստ սիրալիր էր վարվում դժբախտ կնոջ հետ։

Ձմեռվա սկզբներում Մարգոն քիչ կազդուրվեց, ոտքի ելավ և փողոց էր դուրս գալիս։ Որքան փոխվել էր, թարշամել, նիհարցել։ Հուսահատությունն ու ներքին կատաղությունը մաշում էին նրան։ Դուրս էր գալիս փողոց, նստում արեգդեմ՝ շեմքի վրա, յուր երեխաները կողքին և լուռ ու մտախոհ՝ նայում էր հեռուները։ Անցնող բոշաները տեսնում էին նրան այդպես, հուզվում, բուռները սեղմում և գլուխին շարժում։ Բռնաբարության կենդանի զոհ էր Մարգոն լոմ հասարակության մեջ, որ կարծես վրեժ էր կանչում. վրեժ՝ անպատված օջախի։

Բայց զուլումը այդ միջոցին այնքան մեծանում էր, հետզհետե զոհերն այնքան շատանում էին, որ Մարգոն մոռացվում էր։ Այժմ դիակներ էին բերվում, բռնաբարված աղջիկներ հրապարակ ձգվում. շրջակայքից ահավոր լուրեր էին հասնում, և գյուղերից լոմերը խուժում էին ավանը՝ ապաստան գտնելու համար չերքեզների հարձակումների դեմ։

Այդպիսի մի օր էր, որ աթոռակալ Մովսեսը, փողոցից անցնելիս, տեսավ Մարգոյին ու կանգ առավ նրա մոտ, նստեց նրա կողքին։

— Աստված առողջություն տա, Մարգո,— ասաց նա,— հերիք չե՞ղավ տխրելը, մխիթարվիր. այժմ զուլումը մեծ է, դու ի՞նչ անես, մեղավոր խո չե՞ս եղել, որ այդքան տանջվում ես ու քեզ մաշում։

— Չէ, Մովսես աղա,— պատասխանեց Մարգոն,— ես չեմ մխիթարվիլ, մինչև վրեժս չառնեմ։

Ու գնչուհու աչքերը փայլեցին բարկությունից, և այտերը կարմրեցին։

— Մխամիտ աղջիկս,— ժպտաց տխրությամբ աթոռակալը,— միշտ նույնն ես ասում, բայց ումից վրեժ կառնես, չէ՞ որ նրանք քեզանից զորեղ են, խիստ զորեղ... Նայի՛ր մեկ, ամեն օր մի զուլումի լուր է հասնում. կայմակամն էլ ներս չի թողնում ինձ, հայերին հարյուրներով է մորթոտում... էլ լոմերի համար անհնար է ման գալ. ճանապարհների վրա մարդկանց հավի պես մորթում են... քանի՞-քանի հայ ու լոմ կին բռնաբարեցին, խայտառակեցին, հարցնող-փնտրողն ո՞վ է, որի՞ց ես վրեժ առնելու։

— Ես՝ ինձ անպատվողից վրեժ կառնեմ,— ասաց Մարգոն։

— Է՜հ-է՜հ,— գլուխը թափահարեց աթոռակալը,— խելոք չես խոսում, Մարգո, քեզ անպատվողը այժմ ո՞վ գիտե Ստամբոլում ինչ քեֆեր է անում պալատի մեջ, մեծ-մեծ փաշաների հետ...

Մարգոն ոչինչ չպատասխանեց, խոնարհեց գլուխը և մնաց այնպես։

Աթոռակալը ոտքի ելավ։

— Ինչ որ է,— ասաց նա,— մխիթարվիր, Մարգո, ափսոս ես. դու էլ ափսոս ես, երեխաներդ էլ մեղք են։

Եվ երբ կամենում էր հեռանալ, Մարգոն հանկարծ գլուխը բարձրացրեց և ասաց.

— Գետին մտնի Արթենը... այնքան ասում եմ, որ Ստամբոլ գնանք, ինձ չի լսում։

— Ի՞նչ,— զարմացած կանգ առավ աթոռակալը,— Ստամբո՞ւլ գնաք, ինչո՞ւ, կնիկ։

— Որ վրեժ առնեմ...— ասաց համառությամբ և վճռականորեն Մարգոն։

Աթոռակալը ոչինչ չկարողացավ ասել. երբեք չէր կարծում, թե գնչուհին այդքան հեռու կտաներ վրեժխնդրության ծարավը։

— Գետինն անցնի Արթենը,— շարունակեց Մարգոն,— փոխանակ ինքն էլ վրեժխնդրություն ցանկալու, ծիծաղում է ինձ վրա. ասում է, թե «ինչ եղավ, եղավ, մոռացիր...»։ Կարելի՞ է մոռանալ. հոգուս հետ էլ չի դուրս գա այդ անպատվությունը. օջախս մուռտառվեց, գետինն անցնի Արթենը, լոմ խո չի, պսու է, պսու...

— Հա, ի՞նչ ծածկեմ քեզնից, Մարգո,— ասաց աթոռակալը տխրությամբ,— մարդդ վերջերս ինչ-որ շատ է ծռվել, լոմությունը մոռացել է, պսուի նման է եղել. լոմ լինելուց անգամ կարծես ամաչում է. պսու մեծերի մոտ է քարշ գալիս, ու մարդ զզվում է, երբ տեսնում է այդ. չի էլ հասկացվում, թե ինչպե՞ս է կայմակամի մոտ մտել. դու չգիտե՞ս, Մարգո...

Մարգոն առաջին վայրկյանին շփոթվեց, հետո դեմքը մի կողմ դարձրեց ու ասաց.

— Չգիտեմ, Արթենը ճարպիկ մարդ է։

— Ասա քծնող է, ոտք լիզող, սիրելի դառնալու համար ամեն բան հանձն առնող,— գոչեց աթոռակալը խստությամբ,— Արթենն ո՞վ է, որ ճարպկություն ունենա և կամ կայմակամը լոմի ե՞րբ կսիրե, եթե նրանից շահ չունենա. մանավանդ այդ շուն քյաթիբը... Այդտեղից մի ինչ-որ վատ հոտ է գալիս, Մարգո... մարդդ լոմերի համար կասկածե-

լի է եղել, ասեմ քեզ համարձակ. լոմերը բարկացած են. խուլ գանգատ կա նրա ընթացքի դեմ...

— Հարությունը գիտե այդ։

— Գիտե՞ և ի՞նչ է ասում։

— Արհամարհում է, ծիծաղում...

Աթոռակալը դեմքը կնճռեց մտախոհ։

— Ա՜,— ասաց նա,— մի լոմ շատ մեծ քաջություն ու թիկունք պիտի ունենա, որ անպատիժ կերպով կարողանա ազգակիցներին արհամարհել... Այստեղ մի բան կա. երևի կայմակամը նրան թիկունք է տվել, երևի Հարությունդ լոմերին մատնում է...

— Վարպետ...— գոչեց Մարգոն գունատ և զայրացած։

— Մի նեղանալ, Մարգո, աստված գիտե, որ Արթենը քո մի եղունգը չարժե, բայց ինքդ տեսնում ես, թե ինչ դիրք է բռնել նա դեպի յուր ազգակիցները...

— Նա իմ ամուսինն է,— ասաց Մարգոն։

— Գիտեմ, գիտեմ... է՜հ, եթե այդպես չլիներ... Ինչ որ է, մնաս բարև, մի քիչ խրատիր Հարությունին. թող պսուների ձեռքին գործիք չդառնա, թե չէ իրա համար վատ կլինի...

Ասաց աթոռակալը և ծանր քայլերով հեռացավ։

Մարգոն պահ մի նայեց նրա ետևից, հետո երկար, տխուր ու խորհուն՝ գլուխը խոնարհած մնաց և, երբ ծովի կողմից եկող ցուրտը սաստկանում էր, ելավ ու տուն մտավ։

Փոքրիկ օջախը վառվում էր, և նրա առաջ մանուկները թավալելով գետնի վրա՝ խաղում էին և զվարթագին ճիչեր արձակում։ Մարգոն նստավ յուր գործիքի վրա և սկսեց գործել։ Այդ միջոցին էլ Արթենը ներս մտավ։

Կարճահասակ, արևակեզ, գրեթե սև դեմքով ու խարշոմուտ ճակատով անձ էր ուստա Հարությունը։ Փայլուն, շարժուն ու անհանգիստ աչքերը անընդհատ թափառում էին, վայրկենապես արտահայտությունը փոխում և ամեն բան կասկածանոք զննում։ Հագել էր լայն շալվար, կարճ բաճկոն, մեջքին՝ շալ և գլխին՝ յազմաներով ֆես։ Վրան առել էր մի պարսկական հնամաշ աբա, որի մեջ նա խնամքով փաթաթվում էր, երբ դուրս էր գնում։

Երբ ներս մտավ, զննող հայացքով դիտեց կնոջը։ Մարգոն և ոչ իսկ դարձավ։

— Անոթի իմ,— ասաց Արթենը գնալով դեպի յուր մաղերի անկյունը,— բան չկա՞ ուտելու։

— Հաց, պանիր կա,— ասաց Մարգոն։

— Կերակուր չե՞ս եփել։

— Չկա։

— Է՜հ,— մրթմրթաց Արթենը,— դու միշտ քո հիմար մտքերի հետևս, կերակուր եփել ի՞նչ հարկավոր է։

Եվ նստեց մաղերի կողքին, մոռանալով, որ անոթի էր։ Հետո նորից ելավ, նորից մի քանի քայլ արավ սենյակում ու հանկարծ կանգ առնելով կնոջ կողքին՝ հարցրեց.

— Էլի ի՞նչ ասելու էր եկել աթոռակալը... որ բոլոր լոմերը գանգատվո՞ւմ են ինձնից, որ ինձ պսո՞ւ են համարում։

— Հախդ է,— ասաց Մարգոն,— քեզ ո՞վ է ասում պսուների ոտքը լիզես ու լոմերի համար վատություն անես։

— Տեսնենք, ի՞նչ վատություն եմ արել «բոշա»-ներին. որի՞ն բանտդրի, որի՞ն կողոպտել տվի... թքել եմ ես քո աթոռակալի էլ ու լոմերիդ էլ վրան... թող մի քիչ էլ սպասի այդ ծեր շունը և կտեսնի, թե ո՞վ է Արթենը։ Անցյալ օրն էլ մի թուրքի ասել է, որ ես կեղտոտ մարդ եմ, որ իբր թե իմ մեջ ազնվություն չկա։

— Որ դու մարդ չես, այդ ես էլ եմ ասում,— ասաց Մարգոն վրճռականորեն,— դու ի՞նչ մարդ ես... կինդ խլեցին, աչքիդ առջևը անպատվեցին, և դու ոչ միայն ոչինչ չարիր, այլ հորդորում ես, որ մոռացվի... ի՞նչ մարդ ես դու...

— Էլի՞ այդ խոսքերը, այ կնիկ... քանի անգամ ասեմ քեզ, որ նրանք զինված էին, շատվոր էին...

— Թող մեռնեիք, դու էլ, Սերգոն էլ...

— Է՜հ, հին դարմանը էլի քամուն տվինք. ինչ որ էր՝ եղավ անցավ. էլ ի՞նչ անենք հիմա, ելնենք վզներս կտրենք... Քիչ մսից բանից չկա՞ ուտելու։

— Պահարանումը կա... Ելնենք ի՞նչ անենք։ Այ թե ինչ. կելնենք ամեն ինչ կժողովենք և Ստամբոլ կերթանք...

— Լավ, լավ,— հեգնեց Արթենը,— հարյուր անգամ լսեցինք այդ. այժմ էլ ուրիշ տեղ գնանք։

— Որ մարդ չես,— գոչեց արհամարհությամբ Մարգոն,— ուրեմն էլ մի մեղադրիլ աթոռակալին կամ լոմերին, որ ատում են քեզ, պսու են կոչում... Մինչև անգամ անցյալ օրը, երբ գնում էիր, լսեցի, թե ինչպես մեկը գոռաց ետևիդ—«սոլավ պսու» (շուն թուրք)։

Հարությունը ձեռքից բաց թողեց հացն ու միսը, ուժգնությամբ դարձավ և մոտեցավ կնոջը, բարկությամբ ասաց.

— Ես էլ լսեցի, բայց չիմացա ո՞վ էր. դու տեսա՞ր, ասա, ո՞վ էր։

— Հը,— ժպտաց Մարգոն՝ նայելով ամուսնուն հեգնությամբ,— ասեմ, որ խեղճին պսուների ձե՞ռքը տաս... չեմ ասիլ։

— Չե՞ս ասիլ...— ասաց Արթենը և վազեց դեպի մահակը,— չե՞ս ասիլ։

— Ապա մեկ դպիր փայտին,— սպառնաց Մարգոն,— դպիր մեկ և տես գլուխդ ինչպես կշարդեմ այս սանդերքով... մի՛ վախենալ, ո՛չ մի լոմ ինձ չի հայհոյիլ դրա համար. ամենքն էլ աֆֆերիմ կասեն...

— Բոլորդ էլ սոլավներ եք,— բացականչեց Արթենը իրեն կորցրած,— բոլորդ էլ, դու էլ, աթոռակալն էլ ու բոլոր այդ շները... ես ձեզ բոլորիդ էլ ցույց կտամ, թե Արթենն ով է։

— Արթենը պսու է, պսու,— ասաց Մարգոն,— բլրած (ուրացող) է—ահա թե ով է Արթենը։

Հանկարծ մանուկներից մեկը, որ ելել կանգնել էր և դիտում էր այդ տեսարանը, ասաց.

— Դեդ, բաբը սոլավ պսո՞ւ է (մայրի՛կ, հայրիկը շո՞ւն թուրք է)։

— Ջայնդ, լակոտ,— գոռաց նրա վրա հայրը։

— Իհարկե պսու է,— գոչեց Մարգոն,— որ պսու չլինի, յուր կինը նրանց թողնելուց հետո այժմ էլ նրանց ո՞տը կլիգի, յուր աղգականներին նրա՞նց կմատնի...

Արթենը կատաղությունից կապտել էր։ Մի ոստյունով գնաց դեպի անկյունը և մահակը ձեռքն առավ, բայց, երբ տեսավ Մարգոյի բարձրացրած ծանր սանդերքը, մի ստոր, լկտի հայհոյանք արձակեց և գնաց դեպի դուռը։

— Լավ, կնիկ,— ասաց նա այնտեղից,— քեզ ցույց կտամ հետո. քեզ էլ ու բոլոր էշ պրածողներին էլ...

— Գնա, գնա,— ձայնեց նրա ետևից Մարգոն,— էշը քեզնից շատ լավ է. գնա չիմանաս նրա զոզուցը...

Եվ երբ Արթենը դուրս էր գնացել, ցած դրեց սանդերքը, հուզված կկզեց պատի տակ, գիրկն առավ մանուկներին ու սկսեց դառնությամբ հեկեկալ՝ լցված վշտով, բարկությամբ և ամոթով։

Այդպես ամուսին ունենա՞լ։

4.

— Ծառայիդ հրաման տվեք, բեյ էֆենդի, և ես բացատրեմ, թե ինչու բոշաները սև են լինում և միշտ թափառում են։

— Ուրիշ պատճա՞ռ կա միթե,— ծիծաղեց մի պաշտոնյա,— ինձ թվում է, որ սև են, որովհետև շատ են թափառում։

— Ոչ, էֆենդի, ուրիշ պատճառ էլ կա. նրանք բնականից սևացել են. հրաման տվեք. պատմեմ։

— Պատմիր, Արթեն, պատմիր, քիչ ծիծաղենք...

Այս խոսակցությունը տեղի էր ունենում կայմակամի շքեղ սեղանատան մեջ, ճաշի սեղանի վրա, որի շուրջը բազմել էին 6—7 թուրք պաշտոնյաներ։ Կայմակամը, մի հաստափոր, կարմիր թշերով, զվարճասեր և հանգստություն սիրող անձ, բազմել էր վերի գլուխը։ Նրա կողքին քյաթիբն էր, Պոյապատի շատ ազդեցիկ կառավարչական քարտուղարը. հետո մի քանի հյուրեր Գասթեմունից եկած։ Դռան մոտ, մի զափթիեի և ծառայի շարքում, ձեռքերը սրտի վրա դրված՝ երևում էր կարճահասակ բոշա Արթենը, որ խիստ խոնարհ դիրք բռնած, աչքերը սպասողական և ուշադրական արտահայտությամբ լարած՝ նայում էր կայմակամին և հենց որ նրա ակնարկը ստանում էր, իսկույն կծկվում էր, քծնող գծեր կազմում դեմքի վրա։

Խոսակցությունը սկսել էր Ստամբոլից, հասել էր Սինոպ. Գասթեմունի։ Մի պաշտոնյա գանգատել էր իրենց պաշտոնից, ժողովրդից. մի ուրիշը դիտել էր տվել, որ շատ դժվար է գործ ունենալ բոշաների պես թափառական, աներես ու գող ժողովրդի հետ, և երրորդն էլ սկսել էր պատմել բոշաների մասին լսած տարօրինակությունները և ծիծաղեցնել։ Կայմակամն էլ գիտեր այդ մասին և մի քանի ծիծաղելի անեկդոտներ էլ ինքն էր պատմել։

Կուշտ ծիծաղել էին այն սովորության վրա, որ բոշան յուր ավանակին ավելի է սիրում, քան զավակին։ Սուրեյա էֆենդին (ձախ կողմի հյուրը) պատմել էր, որ տեսել է, ինչպես մի բոշա սիրուն կին լվանալիս է եղել էշի մռութը և համբուրել...

— Ջենեբեթլեր...— գոչել էր կայմակամը։

— Նրանք էլ գյավուր են,— ասել էր քյաթիբը,— իսկ գյավուրները ոչ մի «հարամ» չգիտեն։

Դրանից հետո էր, որ մի պաշտոնյա հարց էր դրել, թե ինչո՞ւ այդ ժողովուրդը այդքան սիրում էր թափառել և միշտ արևակեզ էր ու սև։

— Սև լինելը հասկանալի է,— ասել էր Սուրեյա էֆենդին,— թափառելուց է. արևն ու քամին են արել։

Եվ այդ ժամանակ Արթենը, որ առիթ էր փնտրում յուր վրա ուշադրություն հրավիրելու, համարձակվել էր մի քայլ առաջ գնալ և խնդրել, որ իրեն թույլ տան բացատրելու այդ կետը։

— Ո՞վ է դա,— հարցրեց Սուրեյան՝ ակնոցները ցցելով քթի վրա։

— Մեր Արթենն է,— ժպտաց կայմակամը. թեև բոշա է, բայց լավ մարդ է։

— Հըմ,— արեց մի հյուր,— ի՞նչ է նշանակում «թեև բոշա է, բայց լավ մարդ է». եթե բոշա է, ուրեմն բոշա է։

— Ներողություն,— առարկեց քյաթիբը,— բոշաները նախ և առաջ գյավուր են, հետո՝ գող, աներես և սաստիկ հպարտ։

— Իսկ սա՞։

— Արթե՞նը... ինչ որ ուզես՝ կանի. խոնարհ է ոչխարի պես. մոտ օրերս մահմեդական էլ կդարձնենք նրան. աներես չէ և կարծեմ գող էլ չէ... ճիշտ չե՞մ ասում, Արթեն։

— Բոլորովին ճիշտ, էֆենտի,— խոնարհվեց Արթենը։

— Դե՛հ լավ,— ասաց կայմակամը,— պատմիր այժմ պատմություն, ծիծաղելի՞ է։

— Բավական ծիծաղելի, բեյ էֆենդի։

— Լավ... սուրճ բերեք. մեկ կողմից խմենք, մյուս կողմից կլսենք, այնպես չէ՞, Սուրեյա էֆենդի։

— Այո, բեյ. հետաքրքիր է պատմությունը։

— Սկսիր, Արթեն,— հրամայեց կայմակամը,— և լավ պատմիր, հա՛...

Արթենը խոնարհվեց, ձեռքերը կրծքի վրա դրավ ու սկսեց.

— Սրանից շատ տարիներ առաջ...

— Հեքիա՞թ ես պատմում,— գոչեց քյաթիբը։

— Ոչ, էֆենդի, պատմում եմ, թե ինչո՞ւ բոշաների երեսները սևացան, իրենք թափառական եղան և ինչո՞ւ նրանք այնքան սիրում են էշին։

— Ի՞նչ ես ասում, էշի մասի՞ն էլ պատմություն կա։

— Այո, էֆենդիմ։

— Լավ, լավ, շարունակիր տեսնենք,— ձայնեց կայմակամը, տեղավորվելով թիկնաթոռի մեջ։

— Սրանից շատ տարիներ առաջ,— սկսեց Արթենը,— բոշաները քրիստոնյա նստակյաց ժողովրդի մի մասն էին։ Այն ժամանակ կար մի սուրբ եպիսկոպոս, որի հռչակի վրա նախանձեցին նրա 12 թշնամիները, Սափիոս քահանան և Կիլիսկինտոս սարկավագը...

— Ի՞նչ, ի՞նչ,— միջամտեց կայմակամը,— ինչպես ասացի՞ր... Կիլիս...

— Կիլիսկինտոս։

— Հա՛, հա՛, հա՛... քրքջացին բոլորը։

— Այս գյավուրները ինչ խայտառակ անուններ էլ ունին,— գոչեց քյաթիբը,— Կիլիս... Պինտոս... թյո՛ւ, ջեներե՛թ...

— Շարունակիր,— գոռաց կայմակամը ծիծաղի միջից,— հետո՞։

— Հետո,— շարունակեց Արթենը,— այդ թշնամիները, քահանան և յուր սարկավագը...

— Կիլիս-Կիլի՞սը...

— Այո, Կիլիսկինտոսը... խորհուրդ արին եպիսկոպոսին խայտառակել։ Մի վատ կնոջ կաշառեցին. բերին նրա մահճակալի տակ թաքցրին, իսկ մյուս առավոտ բազմությամբ մտան եպիսկոպոսի սենյակը և դուրս հանեցին կինը...

— Վա՛հ... այ թե գյավուրներ,— ծիծաղեց կայմակամը։ Հետո, որպես թե կամենալով բացատրություն տալ մյուսներին, ասաց—գիտե՞ք, էֆենդիներ, գյավուրների խալիֆները (վարդապետ և եպիսկոպոս) օրենքով կին ունենալ չեն կարող, բայց առանց օրենքի մեզ նման են, քանիսը որ կամենան...

— Գիտեմ,— ասաց Սուրեյա էֆենդին,— Փաթրիկ էֆենդին (պատրիարքը) էլ կին չունի։

— Շարունակիր,— հրամայեց կայմակամը Արթենին,— հետո՞։

— Հետո, բեյ էֆենդի,— երբ եպիսկոպոսը ապշել էր այդ բանից, ստոծո շնորհիվ հասկացավ, որ դավադրությունը կազմել էին քահանան և մյուսները, ուստի իսկույն անիծեց նրանց ու ասաց. «Գնացեք, հանգիստ չնստեք, և երեսներդ սևանա»[1]։ Կնոջ բերանը ծռվեց, որթնոտեց. 12 մարդկանց երեսների կեսը սևացավ. նրանք քաղաքից դուրս փախան և անտառի մեջ ապրեցին՝ կողով և այլն շինելով։ Իրանք ամոթից մարդկանց մեջ չէին կարողանում մտնել, իրենց կնիկներին էին ուղարկում առևտուր անելու։ Այդ օրվանից է, որ նրանց ցեղը, որ բոշաներ են, թափառում են, սև են, տղամարդիկ տանն են նստում, մաղ գործում, կողով հյուսում, իսկ կնիկները տնից տուն ընկած՝ առևտուր անում։

— Հա՛, հա՛,— արեց կայմակամը ոչ շատ սրտով,— ճիշտ պատմություն է երևում։ Իսկ ինչո՞ւ էշին ամեն կենդանուց ավելի են սիրում և գգվում։

— Որովհետև, բեյ էֆենդի, երբ անիծվածները անտառ էին մտնում, բոլոր անասուններն իսկ խուսափում էին նրանցից. միայն էշն էր, որ յուր հիմարության շնորհիվ անեծքից բան չէր հասկանում և գնաց

---

[1] Այս զրույցը պատմված կա «Հայմամավուրք»-ի մեջ (գլուխ տրե ամսի, ժԵ) ավելի ընդարձակ և քիչ զանազանությամբ ու այսպիսի եզրակացությամբ. «Նշանն որ եղև ի դեմս չարախոսացն. յազգե նոցա ոչ ջնջեցավ այլ է մինչև ցայսօր)։ Բոշաներն էլ իրանց ծագման մասին այդ զրույցն են պատմում։ «Հայմամավուրք»-ի մեջ քահանայի անունը՝ Սաբինոս է և սարկավագինը՝ Կրեսկինդոս։

նրանց հետ։ Այդ օրվանից էշը նրանց ամենասիրելի կենդանին դարձավ։

— Շատ իրավ է,— խոսեց Սուրեյա էֆենդին,— ես ինքս տեսել եմ, թե որքան են նրանք սիրում էշին, որքան խնամում են նրան. ուրիշ անասուն չեն պահում, բացի էշից։

— Եթե հրաման կտաք,— շարունակեց Արթենը,— այդ մասին էլ մի ծիծաղելի պատմություն անեմ։

— Ապա՞, նայե՞նք,— գոչեց կայմակամը։

— Մի օր,— սկսեց Արթենը,— լսեն, այսինքն որձ էշը, հիվանդանում է։ Մենք՝ բոշաներս, շատ հավատացող, բարեպաշտ մարդիկ ենք։ Մտածում են՝ ինչպե՞ս լավացնել և վճռում են քահանա կանչել, որ ավետարան կարդա գլխին։

— Հա, հա-հա,— ...ծիծաղեցին ամենքը, էշի վրա «ինչիլ» կարդալ...

— Այո,— շարունակեց Արթենը,— վճռեցին, բայց ի՞նչ անեին, որ քահանան չիմանար, թե էշի վրա է կարդում. մտածեցին մի մեծ շորով այնպես ծածկել անասունին, որ քահանան նրան հիվանդ մարդ կարծեր։ Այդպես էլ եղավ։ Քահանան գալիս է, հանդիսավորապես ավետարանը բաց անում և սկսում... Մի քիչ տեղ բանը լավ է գնում, մեկ էլ հանկարծ, չգիտեմ ինչի՞ց, երևի տերտերի ձայնը դուր է գալիս անասունին, էշը գլուխը թափ է տալիս, երկար ականջները դուրս է հանում և զո՜ռ՜...

Կայմակամը ու հյուրերը սկսեցին սաստիկ խնդալ։ Արթենը ուրախ էր, որ կարողացավ հաճելի դառնալ։

— Աֆֆերիմ, Արթեն,— գոչեց կայմակամը,— աֆֆերիմ պատմությանդ համար... երևակայում եմ, թե «քեշիշը» ինչ դեմք պիտի ստանար, երբ տեսավ էշի երկար ականջներն ու լսեց սիրուն ձայնը... հա՜, հա՜, հա՜...

— Իսկ ասա տեսնենք,— հարցրեց մի քիչ հետո Սուրեյա էֆենդին,— ճի՞շտ է, որ երբ աղջկան ամուսնացնում են, հարսանիքից հետո փեսան մտնում է թոնիրը, հարսը պատում է թոնրի շուրջը, խոստանում, որ կմուրա, կբերե և ամուսնուն կկերակրե. այն ժամանակ միայն, ասում են, ամուսինը դուրս է գալիս թոնրից*։

* Այս թեմն խոսվում է հայերի մեջ, բայց երկար ստուգելով՝ գտա, որ ոչ մի նշանակություն չունի. նշանակությունն այն է, որ հարսանիքից հետո, հարսին ու փեսային մտցնում են օջախին և երդվեցնում հավատարիմ մնալ նրան և մաքուր պահել նրա պատիվը։ Այս սովորությունը շատ տեղ հայերի մեջ էլ կա, ինչպես նաև թուրքերի։

— Վա՜հ,— գոչեց կայմակամը,— փեսան թոնի՞ր է մտնում. ա՞յդ ինչ մասխարություն է։

— Ոչ, բեյ էֆենդի,— ասաց Արթենը,— դա սուտ է. ճիշտն այն է, որ եղած պսակից հետո զույգին մոտեցնում են տան օջախին և երդվել տալիս, որ իրենց կյանքն անգամ չխնայեն՝ նրա պատիվը անաղարտ պահելու համար։

— Այ, դա լավ բան է.— ասաց քյաթիբը,— ես չէի կարծում, որ այդ գյավուրներն այդքան լավ բան ունենան...

— Դե՜հ, աֆֆերիմ, Արթեն,— գոչեց կայմակամը,— այժմ բավական է ծիծաղենք. հերիք է պատմածներդ։

— Տեսնո՞ւմ եք, բեյ,— իսկույն մեջ մտավ քյաթիբը,— Արթենը շատ սրամիտն է և լավ էլ ծառա է. դուք ինքներդ գիտեք, որ նա յուր անձը չի խնայիլ տերության և ձեզ համար։

— Գիտեմ, գիտեմ,— ժպտաց կայմակամը,— Արթենը լավ հպատակ է, և մեր շահերին լավ ծառայող...

— Ծառա ենք, բեյ էֆենդի,— խոնարհեց Արթենը,— ես միշտ պատրաստ եմ ձեր հրամաններին։

— Ինձ թվում է, բեյ,— շարունակեց քյաթիբը,— որ սրանից էլ լավ մյուդիր չէ կարող լինել բոշաների համար. սովորությունները գիտե, մեզ հավատարիմ է...

— Ի՞նչ,— ասաց կայմակամը,— բոշաները նոր մյուդի՞ր են ուզում, եղածից երևի զզվել են։

— Այսինքն,— ասաց քյաթիբը,— այդ բրաֆտառը մի շատ էլ լավ մարդ չէ. հպարտ է, համառ և թուրքիներին շահերին ավելի պաշտպան։ Բացի դրանից, Արթենն էլ ասում է, որ բոշաները դժգոհ են նրանից. այնպես չէ՞, Արթեն։

— Այո, էֆենդի, բոշաները դժգոհ են նրանից. Մուսթաֆա մյուդիրը խային (ապերախտ) մարդ է, տերության շահերը չի մտածում...

— Լավ, լավ,— հորանջեց կայմակամը,— դրա մասին վաղը, իսկ այժմ հարկավոր է հյուրերիս զվարճացնել... է՜, Օսման,— դարձավ նա ծառային,— չալղիները (երաժիշտները) եկե՞լ են։

— Այո, բեյ, դրսումը սպասում են։

—Կանչի՛ր, կանչի՛ր, սա օղիից էլ բեր։

Եվ երբ ծառան դուրս էր վազում, կայմակամը մի բան փոփսաց քյաթիբի ականջին, ապա կռացավ դեպի Սուրեյա էֆենդին։ Սա ժպտաց ու հավանության նշան արավ, իսկ քյաթիբը ուրախ երես ու մոտ գնաց Արթենին։

— Տես, Արթեն,— ձայնեց կայմակամը,— չահելները լինեն և մանավանդ սիրունները...

Արթենը քիչ գունատվեց, բայց զսպեց իրեն և խոնարհվեց։ Քյաթիբը բռնեց նրա թևից, և երկուսը միասին դուրս գնացին։

— Հյուսնի էֆենդի,— կանչեց նրա ետևից կայմակամը,— անպատճառ բոշաներ լինեն. նրանք ավելի կրակոտ են... զափթիեներ շատ վերցրեք, որ անցյալ անգամվա պես չթողնեք ձայն հանեն։

— Էվեթ, էֆենդըմ (այո, էֆենդի),— ասաց դրսից քյաթիբը,— Արթենը տեղը ցույց տվավ, մնացածը հեշտ է...

Հետո լսվեց, թե ինչպես թուրքը քաջալերում էր բոշային՝ ասելով.

— Գնանք, օղլում, մյուդիր եմ դարձնելու քեզ...

5

Եվ Հարությունը «մյուդիր»—աթոռակալ դարձավ։ Բոշան փաշա եղավ։

Դժվար չէր այդ կայմակամի համար։ Այնպիսի օրեր էին, որ ոչ մի բոշա ընդդիմադրելով բան չշահեց։ Ո՞վ էր նրանց գանգատը լսող։ Եկողի վիզը տաքացնում էին և չէին թողնում, որ մի բառ իսկ արտասանի։

Մի գեղեցիկ օր աթոռակալ Մովսեսին կանչեցին «Սարայ», կայմակամի դեմն անգամ չհանեցին։ Քյաթիբ էֆենդին ընդունեց նրան, խստությամբ չափեց ոտից մինչև գլուխ և ասաց.

— Ազգդ գանգատվում է քեզանից, ծերունի. մեզ ուղարկել են 500 ստորագրությամբ մի հանրագիր, որի մեջ ասված է, որ դու անիրավ ես, կաշառակեր ես...

— Ե՞ս, էֆենդի...

— Զա՛յնդ, չինգենե, մի համարձակվիր խոսքս ընդհատելու, որ դու խիստ ես և... կարծեմ գող...

— Տեր աստված,— բացականչեց ծերունին այլայլված։

— Գնա այժմ,— շարունակեց քյաթիբը,— այլևս մյուդիր չես. կայմակամ էֆենդին քեզ հանում է այդ պաշտոնից և շնորհակալ եղիր, որ խնայելով հասակիդ, քեզ դատի չի ենթարկում... գնա և սուլթանի կյանքի համար աղոթող եղիր...

Ծերունին գունատ, գրեթե կիսամեռ՝ դուրս ելավ։ Նրան չվիրավորեց այնքան յուր պաշտոնից զրկվելը, որքան այն, որ եղել են յուր ազգականների մեջ 500 վատեր, որոնք այդքա՛ն անխիղճ ամբաստանություններ են բարդել նրա վրա։

Երբ տուն հասավ՝ հիվանդ էր. անկողին մտավ։ Որդիները շրջապատեցին ծերունուն, և պետք էր տեսնել նրանց բարկությունը, երբ իմացան, որ ոչ միայն իրենց հորը անպատիվ կերպով պաշտոնից զրկել էին, այլև 500 բոշաներ ամբաստանել էին նրան անիրավությամբ՝ կաշառակերության և գողության մեջ։

Երեք որդի ուներ ծերունի աթոռակալը։ Երեքն էլ իսկույն դուրս թռան, թաղե թաղ, տնե տուն ընկան և ինչ որ էլ լիներ, ուզեցին իմանալ, թե ովքեր էին այդ անամոթ անբաստանագիրը ստորագրողները։

Իզուր փնտրեցին. մի հատ էլ չգտան։ Եվ ինչպե՞ս գտնեին, չէ՞ որ ոչ մի բոշա գրել-կարդալ չգիտեր։ Ամենքը, բացի դրանից, երդվում էին, որ իրենց կողմից այդպիսի ստորագրություն դնելու ոչ մի համաձայնություն չեն տվել, առաջարկություն իսկ չեն ստացել։ Եվ երբ լսում էին եղածը, սաստիկ զայրանում էին և հուզվում։

Երեկոյան դեմ Պոյապատի բոլոր բոշաների մեծերը հավաքվեցին աթոռակալի տան դռան առջև և խնդրեցին տեսնել ծերունուն։

Անցնող բոշան, տեսնելով իշխաններին, կանգ էր առնում, և այդպիսով մի մեծ բազմություն գոյացավ աթոռակալի տան առաջ։ Արթենին էլ երբ պատմեցին եղածը, զարմանք կեղծեց, ցավ հայտնեց և գնաց բազմության հետ ծերունու տան առաջ։

Աթոռակալը, կոթնած յուր մեծ որդուն, դուրս եկավ և նստեց. ժողովուրդը շրջան կազմեց և լուռ՝ սպասում էր լսել նրա բացատրությունը։

— Ասա մեզ, վարպետ,— խոսեց «ահլ»-ներից (ծեր) մեկը,— այս ինչե՞ր լսեցինք քո մասին, ճի՞շտ են բոլորը։

— Ճիշտ է, որդիք,— խոսեց ծերունին,— ահա քսան տարի է լորս անգամ մյուդիր եմ եղել ձեզ, բայց երբեք այսքան վիրավորանք չեմ կրել։ Ինձ հեռացնում են իմ պաշտոնից. կայմակամի հրամանն է դա...

— Բայց ոչ մեր ցանկությունը,— միջահատեցին մի քանիսը։

— Մենք միայն իրավունք ունեինք հեռացնել մեր աթոռակալը կամ պահել,— գոչեցին ետևում կանգնածներից շատերը։

— Կայմակամը անիրավությամբ է վարվում,— ասաց մեկը։

— Մենք կգանգատենք փաշային...

— Ինձ թողեք խոսեմ դեռ, որդիք,— ասաց ծերունին,— թողեք բոլորը ասեմ։

Բոլորը լռեցին։

— Օրենք... իրավունք...— ասաց ծերունին,— այդպիսի բառեր արտասանեցիք։ Դրանք այժմ ո՞վ գիտե ո՞ր փոշելից անկյունում ննջում

են. հեռու, շատ հեռու, գուցե հենց միմիայն այնտեղ, վերևում կան, ուր նստած կա ինքը օրենքն ու իրավունքը... բայց այստե՞ղ։ Օրե՞նք է, որ մեզ կոտորում են, հարստահարում, թալանում, մեր աղջիկները խլում։ Օրե՞նք է, որ առանց աթոռակալի՝ տուրքերը կրկնապատկում են, տնետուն մտնում, քարշ տալիս ինչ որ ունինք. ամեն անցնող պաշտոնյա համարձակ ոտ է ներս կոխում օջախների մեջ, պղծում նրանց, թքում մեզ վրա. ծաղրում մեր սրբությունները, խլում մեր ունեցածը... Իրավո՞ւնք էր, օրինակ, որ անցյալ օրը, գիշերով խլեցին տարան կայմակամի և յուր հյուրերի համար երկու աղջիկ և մի հարս, տանջեցին գազանաբար և մյուս առավոտ բերին ձգեցին այս դռան առաջ.. օրե՞նք է այս բոլորը... էհ, չխոսենք օրենքի մասին... Փաստն այն է, որ ինձ իմ պաշտոնից հենց դրա համար հանեցին։ Ես արգելք էի նրանց ազատ գործունեության. ես բողոքում էի, գանգատվում էի, ընդդիմադրում. մի խոսքով, նրանց անհանգիստ էի անում... Բայց ինչ որ է, ես այլևս մյուգիր չեմ. երկար վարեցի այս պաշտոնը, թող քիչ էլ ուրիշները վարեն. ընտրեցեք մեկին, որ նորից մտածի ձեր մասին, ձեր ցավերին ցավակից լինի, ձեզ թիկունք լինի ու ձեզ համար պետք եղած ժամանակ զոհվի... Ասում եմ, ինձ այնքան ցավ չի տալիս իմ պաշտոնաթողությունը, որքան այն, որ ձեզանից 500 հոգու մի ստորագրություն է գնացել, որով ես ամբաստանված եմ իբրև անիրավ, կաշառակեր, գող... էհ, անսիրտներ, ծերունի գլխիս անգամ չխնայեցիք...

Որի՞ն անիրավություն արի, որի՞ց կաշառք կերա, որի՞ց բան գողացա—թող ելնե ասի այստեղ. և եթե մի բանով զրկել եմ նրան, թող ամբողջ ունեցածս առնե, թող գա թքի երեսիս, մրե, մազերս ցեխոտե...

— Վարպետ,— ասաց ծերուններից մեկը հուզված,— մի հավատալ այդ ստորագրության, մենք ստուգել տվինք. սուտ է. ո՞ր բոշան գրել գիտե. դա քյաթիբի հնարած պատրվակն է, որ քեզ հանի պաշտոնից և ո՞վ գիտե յուր ո՞ր ուզածին քո տեղը նշանակի։

— Բայց չէ՞ որ էլի մեզ են դիմելու նոր մյուդիր ընտրել տալու համար,— խոսեց մեկը,— էլի մենք պիտի ընտրենք. ընտրենք նորից Մովսես աղային... ո՞վ է դեմ ասածիս...

— Համաձայն ենք...— գոչեցին ամեն կողմից։

— Շնորհակալ եմ, որդիք,— ասաց ծերունին,— բայց ես չեմ ընդունում, հերիք է, ծերացել եմ. այլևս լռությամբ չեմ ՁԱՐՈՂ գիմանալ, եղած անիրավությունները տեսնել և չկարողանալ ոչինչ անել ձեզ համար. ընտրեցեք մի երիտասարդի...

— Ոչ ոքի չենք ուզում...— ձայնեցին ամեն կողմից։

Եվ բոշաները սկսեցին ամեն կողմից այնպես բարձրաձայն վիճել,

որ բազմությունը հետզհետե ատվարանում էր։ Աթոռակալը տեսավ, որ կարող էր ժողովը վատ հետևանք ունենալ, եկավ կանգնեց, խնդրեց լռել և ասաց.

— Ցրվեցեք, որդիք, տներդ գնացեք, մինչև տեսնենք ինչ կլինի, այստեղ ժողովվելը լավ չէ, կարող է մի փորձանք հառաջացնել։

Եվ երբ տուն էր ուզում մտնել, մի բան հիշեց, կանգ առավ, դարձավ և հարցրեց.

— Ո՞ւր է ուստա Արթենը, այստե՞ղ էր։

— Այստեղ էր,— ասաց մեկը,— բայց մի քիչ առաջ անհետացավ։

— Է, պրծավ...— ժպտաց դառնությամբ ծերունին,— քիչ հետո կայմակամը, քյաթիբը ամեն ինչ կիմանան. այն պտուն հիմա այնտեղ է և պատմում է...

Եվ իրավ, Արթենը, որ սկզբից եկել և ուշադրությամբ լսում էր ամեն ինչ, երբ տեսավ ժողովրդի տրամադրությունը վերընտրելու Մովսեսին՝ վազնիվազ գնաց քյաթիբի մոտ և պատմեց բոլորը։

Քյաթիբը այլայլվեց բարկությունից. բռունցքով գլխի ֆեսը խփեց ու ճակատի վրա բերեց, հետո վեր թռավ տեղից ու ոռնաց.

— Ի՞նչ, այդ «չինգենները» համարձակվում են ժողովնե՞ր կազմել, ապստամբե՞լ... ես Հյուսնի չլինեմ, եթե վաղն ևեթ այդ քյավթային բանտ չնստեցնեմ։

Արթենը յոթերորդ երկնքում էր. ուրախ վերադարձավ տուն։

Բոշաների թաղերում գեռ հուզումը շարունակվում էր։ Խումբ առ խումբ երիտասարդները հավաքվել էին փողոցների մեջտեղ. կանայք դռների առաջ վիճում էին օրվա դեպքերի վրա, և երբ Արթենը անցնում էր, բոլորը մեկեն լռում էին, կատաղի ակնարկներ նետում դեպի նա և ետևից մռմռում.

— Սոլավ պսու...

Ամենքը կարծես զգում էին, որ Արթենի գործն է եղածը և կամ նրա մատը խառն է դրանում։

Մի փողոցից էլ երբ անցնում էր, լսեց, որ մի կին ասում էր յուր ամուսնուն.

— Այդ շանը տեսնո՞ւմ ես. բոլորը դրա գործն է. ի՞նչ տղամարդ եք, որ չեք կարողանում սատկացնել դրան...

Արթենը դողաց և սաստիկ վախեցած՝ շտապեց փախչել։ Ճանաչում էր յուր ազգի վրեժխնդրական ոգին, որ թեև ուշ է զարթնում, բայց երբ զարթնում է, սաստիկ սոսկալի է լինում. գրգռում է կնոջը նույնիսկ՝ դավաճան ամուսնու, որդուն՝ մատնիչ հոր դեմ...

Փախավ տուն մտավ։ Մարգոն դռան առաջն էր, և մի քանի դրացի

կանանց հետ խոսում էին։ Երբ Արթենը ներս մտավ, կանայք ելան, միմյանց երեսի նայեցին ու կամեցան հեռանալ։

— Ո՞ւր եք գնում, աղջի,— ասաց Մարգոն,— խոսում ենք, մարդս ի՞նչ է խանգարում։

— Չէ, Մարգո,— դժվարացավ մեկը,— գնանք, ուշ է։

— Ո՞ւշ, ի՞նչ եք ասում, դեռ արևը նոր է մայր մտնում. կացեք քիչ էլ խոսենք։

Հետո հանկարծ նկատեց կանանց կասկածավոր հայացքները, որ ուղղվում էին դեպի տան դուռը։ Գունատվեց։

— Ի՞նչ,— գոչեց նա դողդոջուն,— վախենում եք, որ...

— Գիտե՞ս ինչ, Մարգո,— ասաց ցած ձայնով մի կին,— կասկածում ենք, որ մարդդ բոլոր մեր մեջ եղածներն ու խոսացածները իմաց է տալիս պսուներին...

Ասում են, որ անցյալ օրվա Մարտոյի հարսի տեղն էլ նա է ցույց տվել զափթիեներին...

Հազիվ թե այդ ասել էր, որ Մարգոն ցատկեց դեպի նա բուռները սեղմած և գոչեց.

— Ինչ ասացի՞ր, սևավոր, համարձակվում ես մարդուս հայհոյե՞լ...

— Յամա՜ն,— աղաչեց մյուս կինը,— ձայն մի հանիլ, ի սեր աստծո, մարդդ որ լսի, մեր տունը կքանդվի. ասում են այժմ կանանց բանտ էլ են շինել...

— Բայց դուք հիմար եք, աղջի,— ծիծաղեց ակամա ծիծաղով Մարգոն,— իմ մարդս այդքան չէ ընկել. ոչ... այ, սպասեցեք, ես այս բոպեիս կկանչեմ իրան. այստեղ և կտեսնեք, որ ձեր կասկածները լիովին սուտ են։

Կանայք շարժվեցին հեռանալու։

— Չգնաք,— սպառնաց Մարգոն խիստ բարկությամբ,— ի՞նչ, ամբաստանել դիտե՞ք. սպասեցեք, որ բոլորիդ երեսին թքեմ... ի՞նչ, իմ մարդս թուրքերի՞ն տանի մեր կանանց, մատնիչ լինի...

Եվ սաստիկ հուզված՝ դարձավ դեպի դուռն ու անբնական խռպոտ ձայնով կանչեց ամուսնուն։

Մի վայրկյան խոր, սոսկալի լռություն տիրեց, հետո դռան միջից երևաց Արթենի մեռելային դեմքը։

— Ի՞նչ է եղել, կնիկ,— ասաց նա նեղացած,— ինչո՞ւ ինձ հանգիստ չես թողնում։

Դրացի կանայք սարսափահար լինելիքից՝ ետ էին քաշվել։ Մարգոն մի ոստյունով թռավ դեպի ամուսինը, ուժգնությամբ բռնեց նրա թևից և բուռն շարժմամբ թրև տալով նրան դեպի դուրս, ասաց.

— Խոսիր, մարդ, արդարացիր. գիտե՞ս ինչեր են ասում սրանք,

բոլոր լոմերը, ամբողջ աշխարհը... Ասում են, որ դու պսուների լրտես ես, որ դու այդ բոլորից հետո, անցյալ երեկո էլ Մարտոյի հարսին քարշ ես տվել պսուների համար... Խոսիր, արդարացիր, թքիր դրանց երեսին...

Արթենը շփոթվեց, կարկամեց և պահ մի ոչինչ չկարողացավ ասել։

— Ես... ես...— թոթովեց նա։ Հետո հանկարծ, գահավիժմամբ ու ծայրահեղ բարկությամբ, գրեթե կատաղաբար ասաց.

— Սուտ են այդ բոլորը, և դուք բոլորդ ջարի եք (վատ կանայք), որ ստում եք։

— Ջարի դու ես, սոլավ,— գոռաց նրա վրա մի կին և առաջ եկավ,— դեռ հայհոյո՞ւմ ես, բլրած (ուրացող), չէ՞ որ Մարտոյի հարսը տեսել է քեզ՝ իրան քարշ տվող զափթիեների հետ և դեռ երեսիդ էլ թքել է... Ա՛յ, գնացեք իրան հարցրեք...

Մարգոն երերաց, արյունալից աչքերով և վագրի արագությամբ ցատկեց դեպի ամուսինը, բռնեց նրա երկու ուսագլխից, նայեց աչքերի մեջ մի վայրկյան, հետո մի բոպե շվարած՝ շուրջը նայեց.

— Լեվա՜լ, լեվա՜լ,— մռմռաց կատաղությամբ։ Եվ երբ կանայք սարսափած հեռանում էին, նա էլ գրեթե վազելով հեռացավ և կտրեց փողոցը։

Բոլոր անցորդները ապշած կանգ առան, նկատելով այդ ոտաբոբիկ, ցեխի միջից արշավող, արյունալից աչքերով և հերարձակ կնոջը, որ վազում էր առանց ոչ ոքի նայելու, վազում էր և գոչում...

— Սոլա՜վ, սոլա՜վ... պսու սոլավ...

Այդպես վազնիվազ, հևալով, Մարգոն անցավ մի քանի փողոց և ներս մտավ Մարտոյի հիվանդ ընկած հարսի տունը։ Միայն երկու վայրկյան մնաց այնտեղ, 5—6 բառ հարցրեց, հետո, նույն արագությամբ ետ դարձավ, անցավ փողոցներից և հասավ տուն։

Երբ ներս էր մտնում, կատաղությամբ խլեց նախագավթում դրված կացինը և ոստնեց դեպի սենյակը։

Բայց սենյակի հատակի վրա միայն երկու մանուկներն էին, որոնք խաղում էին և ծիծաղում։ Արթենը չկար։

Մի բոպե մնաց անշարժ՝ շվարած։ Հետո ամբողջ թափը կոտրվեց, կացինը ձեռքից ընկավ և նա, թևերը կախ, գլխիկոր, կարծես ջարգված՝ նստեց գետնի վրա ու գլուխը ձեռքերի մեջ առավ։

Բայց երկար չտևեց այդ։ Բոշա կինը շատ լալ չգիտե. մի բոպե է տևում նրա թուլությունը. նա վճռական է, հանդուգն և դիմացկուն։

Մարգոն վեր թռավ, իսկույն ծրարեց մի կապոց, հետո երկու դար-

մոցած մանուկների ձեռքերը բռնեց և, չնայած մթան, փողոց դուրս եկավ։

Դրացիներից շատերը հեռու կանգնած՝ հետաքրքրությամբ ու կարեկցությամբ նայում էին և երբ տեսան Մարգոյի ելքը՝ ցավալից ձայներ հանեցին։

— Ահ, գնում է, հեռանում է...

— Շատ լավ է անում... անիծյալ օջախ է այդ տունը... շան օջախ եղավ...

— Կեցցե՛ Մարգոն...

— Ո՞ւր է գնում, արդյոք։

Ինքն էլ չգիտեր, Մարգոն, թե ուր է գնում։ Վճռել էր հեռանալ այդ տնից, յուր մատնիչ, ստորացած ամուսնուց. գնալ-թափառել այրի կնոջ պես, աշխարհին հոչակել, որ յուր «լախուգը» (ամուսին) մեռել էր պսուի պես, որ ամուսին չէ ունեցել և որ չէ ուզում ոչ ոքի երեսը տեսնել, այո, ոչ ոքի...

Դահ մի կանգ առավ փողոցի մեջտեղ, այս-այն կողմ նայեց, ուշադրություն չդարձրեց փոքրիկի լացին, բարկությամբ ցնցեց նրան, ապա ուղղվեց դեպի աջ։

Այդ միջոցին փողոցի մի կողմից երևաց բոշաների հայ քահանան*, որ գնում էր մի մեռնողի հաղորդելու։ Տեսնելով փողոցի միջից քայլող Մարգոյին և նրան դիտողներին, հարցրեց, թե ի՞նչ էր եղել։

— Ադթենի կինն է, տեր հայր,— ասացին նրան,— մարդը պսու է դարձել, և ինքը հեռանում է։

Քահանան գլուխը երերցրեց և կամենում էր հեռանալ, բայց մի բոշա կին խնդրեց նրան, որ մոտ գնար և համոզեր թշվառ կնոջը՝ գիշերով դուրս չգալ ավանից։

Քահանան քիչ վարանեց, բայց հետո գնաց։

— Մարգո,— ձայնեց նա։

Գնչուհին դարձավ։

— Մարգո, ո՞ւր ես գնում այսպես գիշերով, մեղք ես, դարձիր տուն։

— Տո՞ւն...— ասաց Մարգոն,— էլ տուն չունիմ, օջախս պղծվեց, մոխիրս ապականվեց... էլ տուն չունիմ...

* Բոշաների միջից երբեք քահանա կամ եկեղեցու պաշտոնյա չեն ընտրվում, ըստ «Հայամավուրք»-ի անեծքի, նրանք համարվում են «անիծյալ ցեղ»։ Նրանց քահանան հայ է, և բոլոր ծեսերը կատարվում են հայոց եկեղեցում, իսկ թափառելու միջոցին առանց ծեսի է լինում ամեն ինչ։

— Իսկ մա՞րդդ։

— Մարդ չունիմ... մարդս սոլավ էր, շպրտեցի... մարդ չունիմ, անտեր եմ, անտեր...

Բոշաները մոտեցել էին։

— Մի գնալ գիշերով, Մարգո,— մեջ ընկավ մի կին,— երեխայքը մեղք են և հետո, գիտես, դաշտում շատ էլ ապահով չէ...

Մարգոն ոչինչ չասաց, գլխով միայն բացասական նշան արավ և առանց ետ նայելու հեռացավ։ Հուզիչ էր տեսարանը. բոլորը կանգնել նայում էին նրա ետևից. մի քանիսները զայրացած՝ անեծք ու հայհոյանք էին թափում Ադթենի հասցեին։

Եվ Մարգոն հեռացավ այդպես՝ քարշ տալով յուր հետ երկու կիսամերկ որբերին։

Ելավ նա ավանից, առանց ետ նայելու կտրեց դաշտը և կեսգիշերից շատ անց, գրեթե հոգնած ու ջարդված, ցեխաթաթախ, մտավ Ջիլե գյուղը և ընկավ հոր դռան առաջ.

Մերունի հայրն էր դուռը բացողը։ Ճրագը ձեռքին մոտեցավ նրանց։

— Բարի երեկո, բաբ... (հայր)։

— Մարգո՞...— գոչեց ծերունին։

— Այդ ես եմ, բաբ... բայց չեմ եկել մնալու, այլ քեզ պահ եմ տալու իմ երկու որդիներին... մարդս պսու դարձավ, յուր ազգակիցներին մատնեց, նրանց աղջիկներին ու հարսներին քարշ տվեց պսուների համար, շան պես քծնում է նրանց ոտների տակ... թողի նրան, բաբ, լավ չարի՞...

— Լավ արիր, աղջիկս, եկ օրհնեմ քեզ։

— Սպասիր, հայր, ես տուն—այս օրհնած օջախը չեմ մտնիլ. ես անպատվված կին եմ. օջախդ արատավորեցին և մինչև չսրբեմ նրա բիծը, չեմ ներս մտնելու այնտեղ... ես գնում եմ. կամ կմեռնեմ և կամ օջախդ կմաքրեմ... լավ չե՞մ անում, բաբ...

— Լավ ես անում, աղջիկս, գնա, աստված քեզ հետ։

Հետո ծերունին դողդոջուն բազուկներով գրկեց աղջկան, համբուրեց, արտասվալից աչքերով բռնեց երկու որբուկի ձեռքը և ներս մտավ։

Մարգոն մի րոպե նայեց նրանց ետևից՝ աչքերը լի արտասուքով. մի քայլ արավ վազելու դեպի զավակները, պարզեց ձեռքերը, բայց հանկարծ կանգ առավ, կնճռոտեց ճակատը, բուռերով սրբեց աչքերը, թոթափեց իրան և ամուր ու անհողդողդ քայլերով հեռացավ, մտնելով գիշերային մթության մեջ...

6

Դրանից հետո Արթենին «մյուդիր» չինեցին, և սկսվեցին բոշաների համար սոսկալի օրեր։ Մի թեթև ընդդիմադրություն՝ Արթենի կողմից ներկայացվում էր որպես ըմբոստություն իշխանության դեմ, և ընդդիմադրող բոշան կամ կորսվում էր, կամ փտում բանտերի մեջ։

Արթենը շատ սիրելի էր դարձել, նախ կայմակամին, հետո բոլոր պաշտոնյաներին։ Ասում էին մինչև իսկ, որ մահմեդականացել էր, միշտ մզկիթ էր գնում։ Այն ճիշտ էր, որ կնոջ անհետանալուց հետո մի թուրք կին էր բերել և պահում էր. մոլլան հաճախ էր մտնում նրա տունը, թուրք պաշտոնյաները և մանավանդ քյաթիբը ուղղակի իրանց տունն էին շինել Արթենի խրճիթը. ամեն ուրբաթ օր գալիս էին և աղմկալից քեֆեր սարքում, քեֆեր, որոնք միշտ վերջանում էին խայտառակություններով։

Բոշաները դիմացան միայն մի քանի ամիս. բայց երբ եկավ գարունը, և բոշայական կրակոտ, շարժուն և անհամբեր կանայք պատրաստվեցին դուրս ելնելու, ոչ մի կին չկամեցավ տեղից շարժվել, քանի Արթենը մյուդիր կմնար Պոյապատում։ Ասենք Արթենը ուրախացավ, բայց յուր եկամուտը մտածելով, մոռացավ, որ անշարժությունը նեղսրտացնել սկսեց բոլորին։

Կանայք, այդ անսովոր դրությունից նեղվելով, սկսեցին գրգռել ամուսիններին՝ եղած դրության դեմ։ Էլի կույտ-կույտ ժողովներ, այս անգամ գիշերով և գաղտնի։

Կանայք էին գրեթե այդ ժողովներ կազմակերպողները, գրգռողները։ Հավաքվում էին մեկի մոտ, կանչում էին ամուսիններին, նախատում նրանց և ստիպում, որ խորհեն այդ դրությունից ազատվելու համար։

Երկար խորհելու պետք չեղավ։ Խնդիրը պարզ էր։ Վճռվեց միաձայն, որ բոլորի պատճառը ուստա Արթենն էր, ուստի և նրան հարկավոր էր տապալել։

Եվ մյուս օր առավոտյան էր ահա, Պոյապատի բոշաները առաջներն ունենալով իրանց կանանց, դուրս խուժեցին թաղերից և հավաքվեցին կայմակամի դռան առաջ։

Մեծ հուզում տիրեց ավանում, մոտ 2—3000 հոգի վիճելով, խոսելով հասան կայմակամի պատշգամբի տակ և պահանջում էին խոսել բեյի հետ։ Զինվորների մի փոքրիկ խումբ, քյաթիբի պահանջով, մոտ եկավ ամբոխը ցրվելու, բայց ոչինչ չկարողացավ անել։

Քյաթիբը բարկությունից կորցրել էր իրեն. դեռ կայմակամին չէին իմաց տվել. քնել էր նա։

— Մեզ կտոր-կտոր կանեն, քյաթիբ էֆենդի,— արդարանում էր զինվորների գլխավորը,— բացի դրանից ինչպե՞ս հարձակվեմ ես կանանց վրա, ի՞նչ կասեն ինձ։

— Վախկոտ եք, յուզբաշի, վախկոտ եք,— ոռնում էր քյաթիբը։

— Իսկ դուք բոշա կանանց կատաղությանը հանդիպե՞լ եք,— ուրդարանում էր աստիճանավորը,— ո՞չ, ուրեմն չեմ ցանկանում, որ հանդիպեք... վագրեր են, գիտե՞ք, մի-մի վագրեր... և հետո, չէ՞ որ կանայք են. ե՞րբ է տեսնված, որ կանանց վրա զենքով հարձակվեն...

— Բայց կայմակամի հրամանն է այդ...

— Թող կայմակամը ինքը հրամայե... Մարդիկ հանդարտությամբ եկել ուզում են բեյի հետ խոսել. ինչո՞ւ չեք թողնում. դեմ չեն գնում. զենք չունին. նրանց պահանջը միայն այն է, որ իրենց կեղտոտ մյուդիրին պաշտոնից հանեք...

— Դուք ինչո՞ւ եք խառնվում այդպիսի գործերի մեջ...

— Աստված ոչ անի. ես ե՞րբ եմ խառնվում... միայն այսքան կասեմ ձեզ, որ ես զինվորներիս չեմ հրամայիլ հարձակում գործելու. հրամայեցեք ինքներդ, հրամայեցեք և հետևանքի համար էլ պատասխանատու եղեք։

Կայմակամն այդ միջոցին զարթնեց աղմուկից և սաստիկ վախեցավ, երբ իմացավ, որ 2—3000 բոշաներ, այն էլ կեսը կանայք, հավաքվել են դռան առաջ և ուզում են իրեն տեսնել։

— Ի՞նչ են ուզում ինձնից, ո՞ւր է քյաթիբը. շուտ քյաթիբին կանչեցեք։

— Ուղարկվեց կանչելու, բեյ,— ասաց ծառան,— բոշաներն էլ եկել են խնդրելու, որ իրենց մյուդիրին, այդ Արթենին հանեք պաշտոնից...

— Ա՞յդ է բոլորը. դուրս ձգեցեք ուրեմն այդ շանը, բանտարկեք, կախեք դրան...

Բայց քյաթիբը վրա հասավ և կայմակամի հրամանների դեմն առավ։

— Բեյ էֆենդի,— մոտեցավ նա,— եթե այդ գյավուրների ասածը անեք այսօր, վաղն էլ ուրիշ բան կուզեն։ Ինձ իմաց տվին, որ եկել են հաշիվ պահանջելու, թե ով է իրանց աղջիկներն ու հարսները հափշտակել տվողը, իմացել են, որ դուք եք և...

Կայմակամը գունատվեց և վախից կարկամեց։

— Զինվա՞ծ են, քյաթիբ,— հարցրեց նա քիչ հետո,— զինվա՞ծ են, շա՞տ են։

— Ոչ, բեյ, վախենալու ոչինչ չկա. բայց հարկավոր է մի կերպ

այժմ ցրվել նրանց, իսկ հետո դժվար չէ գրգռողներին մեկ-մեկ բռնել և այդ բոլորը խեղդել, ոչնչացնել։

Այդ միջոցին լսվեց խառնիճաղանջ աղաղակ։ Գնչուհիներն էին, որ դրսում գոռում, կայմակամին էին պահանջում տեսնել։

— Ձեզ տեսնել են ուզում, բեյ, ներս վազեց մի պաշտոնյա, շտապեցեք, առաջանում են և սպառնական դիրք ստանում։

Եվ իրավ, դրսում անհամբերությունից բոշաները սկսեցին նախ քրթմնջալ, հետո բարձրաձայն բողոքել և հուսկ ուրեմն սպառնալ։ Ետևից հրում էին և առաջանալու հրավիրում։ Երևան եկան մահակներ, բռունցքներ...

Կայմակամը լուսամուտի վարագույրի ետևից դուրս նայեց և երբ այդ բոլորը տեսավ, ծնկները կթոտեցին։

— Ի՞նչ անել, քյաթիբ,— հարցրեց նա վախից թոթովելով։

— Պետք է երեալ նրանց, բեյ,— խորհուրդ տվավ քյաթիբը,— երևալ և հանդարտեցնել, խոստանալ նրանց ուզածը կատարել, ցրվելու հորդորել...

— Իսկ եթե հարվածե՞ն, եթե հարձակվե՞ն...

— Չեն անիլ, բեյ, չեն համարձակվիլ... Շուտ դուրս գնացեք։

Աղաղակը նորից կրկնվեց և այս անգամ այնպես ուժգին ու սպառնալից, որ գողդեցրեց ամբողջ շենքը։

Կայմակամը մեռելի պես գունատված պատշգամբն ելավ։ Բոշաները երբ տեսան նրան, մի ոռնոց բարձրացրին։ Ամեն ոք խոսում էր, խառն, անհասկանալի. ձեռքերը երկինք էին բարձրացնում, տեսնվում էին մազալից գլուխներ, արևակեզ դեմքեր, բաց բերաններ...

— Խոսեք, բեյ, խոսեք շուտ,— քաջալերեց քյաթիբը դռան միջից։

Եվ կայմակամը մի քանի անգամ բերան բաց արավ, հետո վախից դողացող ձայնով ասաց.

— Հանդարտեցեք, որդիք... ի՞նչ եք ուզում, ինչո՞ւ եք աղմուկ հանում... Ահա ես եմ, ձեր կայմակամը. չէ՞ որ միշտ բարի եմ եղել դեպի ձեզ, սիրելիներս... չէ՞ որ ես ձեզ համարել եմ հանդարտ, լավ ժողովուրդ. ես ինքս էլ անձամբ երբեք ձեզ չեմ նեղացրել. եթե ձեզ զուլում է եղել, մեղավորն էլ ես չեմ, հավատացեք, իմ պաշտոնյաներն են...

— Ձենք ուզում մյուդիրին...— ոռնաց ամբոխը,— ի բաց քյաթիբը...

— Անիրավություն են անում...

Ձայներն ու խոսքերը նորից այնքան խառնվեցին միմյանց, որ կայմակամը ոչինչ չհասկացավ։

— Լավ, լավ,— ասաց նա, նորից ձեռքը բարձրացնելով.— ես գիտեմ ձեր ուզածը... բոլորը, բոլորը կկատարեմ, իսկ առայժմ, քույրերս,

ցրվեցեք և խրատեցեք ձեր ամուսիններին՝ խելոք մնալ... Ես միշտ բարի, բարի եմ եղել դեպի ձեզ. էլի կլինեմ. ինչ որ կամենում եք, կկատարվի, իմ կայմակամական խոսքս թող վկա լինի...

— Կեցցե մեր կայմակամը,— գոռացին շատերը ամբոխից։

Կայմակամը սիրտ առավ, ճակատի քրտինքը սրբեց և դառնալով դեպի դուռը՝ նայեց պահված քյաթիբին։

— Կարծեմ լավ խոսեցի. չէ՞, քյաթիբ։

— Այո՛.. բայց դեռ չեն գնում... հորդորեցեք, բեյ, հորդորեցեք, որ ցրվին։

— Հը՞, այո, դեռ չեն գնում,— նորից վախեցած՝ ամբոխին նայեց կայմակամը,— և ինչ-որ փսփսում են... քյաթիբ. հանկարծ մի գնդակ չուզարկե՞ն ինձ...

Ու ետ քաշվեց դեպի դուռը։

— Ո՞ւր եք գնում,— գոչեց քյաթիբը,— ի սեր աստծո, տեղներիցդ մի շարժվեք, խոսեցեք, ժամանակ շահեք, մինչև հանդարտեն... հորդորեցեք...

Բայց բոշաները սկսում էին հանդարտել. կայմակամի խոստումը մեղմացրեց նրանց, և այժմ խորհուրդ էին անում ցրվելու։

— Հա,— խոսեց կայմակամը նորից առաջանալով,— քույրիկներս, ասեք տեսնենք, ի՞նչ է ձեր ուզածը...

— Այդ չէ, այդ մի հարցնեք,— թելադրեց դռան միջից քյաթիբը խրոպոտ ձայնով։

— Այսինքն,— շփոթվեց կայմակամը,— այսօր լավ կանեք դեռ ցրվեք, հետո մի քանի մարդ կուղարկեք ինձ մոտ և ձեր ուզածը կհայտնեք... այդպես լավ է. այո, դեհ երթաք բարով, քույրերս, ցրվեցեք և թողեք, որ գնամ առավոտյան աղոթքս անեմ...

Այն ժամանակ կանանցից զատվեց մի երկարահասակ, ջահել և սիրուն դեմքով կին ու առաջ եկավ։ Նրան հետևեցին երկու ուրիշ մատաղահաս կանայք էլ և այդպես՝ երեքը միասին, ետևից ունենալով մի տղամարդ՝ կանգ առին ճիշտ պատշգամբի տակ։

— Բեյ էֆենդի,— խոսեց երկարահասակ գնչուհին,— մեր ուզածը շատ բան չէ։ Մեր կամքի հակառակ պաշտոնանկ արիք մեր մյուդիրին և փոխարենը դրիք մի անպիտանի, մի շան, որի անիրավություններն այնքան շատ են, որ այլն դառան՝ երկնքին հասան.. Մեզ տանջում է, մեր տունը քանդում, մեր կանանց, աղջիկներին անպատվում... էլ կյանք չունինք մենք... բողոքում ենք և խնդրում, որ դուրս ձգեք այդ մյուդիրին և իրավունք տաք, որ ուրիշին ընտրենք և որին որ մենք ընտրենք—հաստատեք իսկույն։

Կայմակամը ապշեց. չէր սպասում այդքան էժանով պրծնել։

— Ի՞նչ,— գոչեց նա ուրախությամբ,— միայն ա՞յդ է ձեր ուզածը. ուրախությամբ, քույրերս, ամենայն ուրախությամբ... Ձեր մյուդիրն պաշտոնանկ է այս րոպեիս... դեհ, ցրվեցեք և գնացեք ընտրեք մեկին, որ վավերացնեմ, դեհ, խելոք զավակներս, ցրվեցեք...

— Մենք արդեն ընտրել ենք մեր նոր մյուդիրին, բեյ,— կանչեց գնչուհին,— Սարոյենց Խեչոյին կուզենք...

— Այո, այո,— ձայնեց ամբոխը։

Բայց հանկարծ, երբ մի ակնթարթ լռություն էր տիրում, ետևի կողմից մի ձայն բարձրացավ, որ ասում էր.

— Ոչ, ոչ, Կարապետին, Մարկոսենց Կարապետին կուզենք։

— Այո, այո,— արձագանք տվին մի քանի տասնյակ ձայներ,— Կարապետին կուզենք։

Գնչուհիներն ու առաջ կանգնած բոշաները ապշած՝ դարձան և զարմացան, թե որտեղի՞ց է գոյացել այդ կուսակցությունը, որ կամենում էր Կարապետի պես մի թույլ, գրեթե հիվանդ անձի մյուդիր ընտրել։

— Ի՞նչ եք ասում, ծո,— ոռնաց մի բոշա այդ նոր կուսակցության,— խևցա՞ք...

— Խևը դուք եք,— ձայնեց ետևից մեկը,— մենք Կարապետին կուզենք։

— Ա՜յ չոռ ու ցավ ուզեք, ախմախներ...

— Չոռ ու ցավը դուք ուզեք...

Եվ կռիվ ու վեճ սկսեց. մի խառն, զզվելի աղմուկ լցվեց հրապարակը։ Բոշաները սկսեցին խմբերի բաժանվել, վիճել, մինչև անգամ իրարու ծեծել և հուսկ ուրեմն բոլորովին ցրվել։

Կայմակամն էլ էր ապշել և պատշգամբի վրա կանգնած դիտում էր այդ տեսարանը։ Քյաթիբը ըմբռնեց բանը ինչում լինելը և ուրախությունից սկսեց ձեռքերը շփել ու դուրս եկավ թաքստոցից։

— Այժմ վտանգն անցավ բոլորովին,— ասաց նա.— այդ գյավուրները մեր ձեռքն են։

— Մյուդիրը ո՞վ է սակայն,— հարցրեց կայմակամը,— որի՞ն ընտրեցին։

— Ոչ ոքի, Արթենը նույն պաշտոնի մեջ կմնա, իսկ դրանց ուժը այժմ մեր ձեռքումն է...

Կայմակամը հոգնած՝ ներս քաշվեց, և երբ քյաթիբը մենակ մնաց. կանչեց զափթիեների սպային պատշգամբը. ձեռքով ցույց տվավ հեռացող բոշաներին և ասաց.

— Դու տե՞սար, թե ովքեր էին խոսող կանանց գլխավորները. երեք կին, մի տղամարդ։

— Այո, էֆենդի։

— Գիշեր չեղած, կուզեմ, որ կանայք իմ հարեմը մտնեն ձեռքներն ու ոտները կապած. իսկ տղամարդիկ՝ բանտ։

Սպան հավաքեց մի քանի զափթիեներ և գնաց բոշաների ետևից։

Բոշաները վիճելով, կռվելով՝ հասան իրանց թաղերը։ Այնտեղ միայն գլխի ընկան, որ այդ երկպառակությունը Արթենի պատրաստածն էր. իսկ երբ մի քանի ժամ հետո լուր տարածվեց, որ երեք կանանց տարել են, հուզումը ավելի սաստկացավ բոշաների թաղերում։

Այս անգամ ժողովները վճռեցին Արթենին սպանել և նրա տունը տակնուվրա անել. բայց Արթենը զգույշ էր, կեսօր չեղած, մի խումբ զինվորներ բերեց և բանակել տվավ յուր դռան առաջ. ինքն էլ միշտ երկու զինված զափթիեների հետ էր ման գալիս։

Բոշաներն սկսեցին հուսահատվել։

Գործերն ահա այդպիսի դրության մեջ էին, երբ Երեկոյան բոշաների թաղը մտավ մի սևադեմ, ցեխաթաթավ կին և բախեց աթոռակալ Մովսեսի դուռը։

Մեծ որդին բաց արավ։

— Որի՞ն ես ուզում, կին։

— Աթոռակալ Մովսեսին։

— Հայրս է և հիվանդ... մտիր. դու ո՞վ ես։

— Ճանապարհ տուր մտնեմ և կտեսնես։

Ու կինը համարձակ ներս մտավ, անցավ սենյակը և երբ ճրագի մոտ էր հասել, ասաց.

— Ճանաչեցի՞ք։

— Մարգո...— ձայնեցին բոլորը։

Զարմանքն ընդհանուր էր։ Ամիսներից ի վեր կորսված, մեռած համարվածը այժմ հայտնվում էր և կանգնած էր յուրայինների մեջ. այժմ ոչ առաջվա պես թարմ ու գեղեցիկ, այլ հոգնած, պառաված, կնճիռներով լի և սևացած, թախծալից դեմքով։

7

Որքան էլ որ զինվորներ էին պահպանում տունը, այնուամենայնիվ, Արթենը խիստ անհանգիստ էր՝ թե՛ դրսում և թե՛ մանավանդ ներսում—գիշերը։ Մի փոքրիկ ձայն նրան կարծել էր տալիս, թե տանիքի

վրա մարդ կա, թե պատն են ծակում և կամ թե խմբովին հարձակվել են լուսամուտների կողմից։

Գրեթե չէր քնում, առավոտ շուտով ելնում էր և պահապան զինվորների մոտ գնում։ Բարկանում էր մանավանդ, երբ տեսնում էր, որ յուր թուրք կինը կամ զինվորները հանգիստ քնած էին։

Մի քանի դառն, անքուն օրեր անցնելուց հետո, քիչ հանգստացել էր, բայց զգուշավոր լինելով, հսկողությունն ավելի շատացրեց, առատ նվերներ տվավ զինվորներին և պատվեր տվավ ոչ ոքի յուր մոտ չթողնել։

Բայց մի երեկո, երբ փողոց ելնելով, տեսավ, որ երկու զինվորներ փակել էին մի կնոջ դիմաց, չէին թողնում առաջանալու. իսկ նա գոռում էր.

— Բաց թողեք, ես մյուդիրի կինն եմ։

Այդ ձայնը և խոսքերը սարսափեցրեցին Արթենին։ Մարգոն էր. կորսված և մեռած կարծված Մարգոն։

Մարգոն տեսավ նրան։

— Մարգո, այդ դո՞ւ ես,— կանչեց Արթենը։

— Ես եմ, Արթեն. ասա, որ թողնեն։

Արթենը հրամայեց զինվորներին կնոջը յուր մոտ թողնել, և Մարգոն մոտեցավ ամուսնուն։

— Բարև, Արթեն,— ասաց նա ծիծաղելով,— տունդ այնքան անապահով է, որ պսուներով ես պահպանում...

Ու այր և կին դրանից հետո լռելյայն քայլեցին մինչև տուն։

— Լսել եմ,— շարունակեց Մարգոն,— որ մի պսու կին ես ներս բերել, ու անպատվեցիր հորս օջախը և իմ օջախը։ Պետք է մաքրել այդ. այո, երկուսն էլ պետք է մաքրել... ներս մտիր։

— Ինչպե՞ս, Մարգո,— զարմացավ Արթենը,— ուզում ես մտնե՞լ։

— Այո... բայց առաջ դու մտիր և այդ պսու կնոջը դուրս շպրտիր... առաջ գնա. շո՛ւտ։

Եվ այնպես հրամայական ու սպառնալից էր ձայնը, որ Արթենը ակամայից հնազանդվեց, տուն մտավ և կնոջը հոր տուն ուղարկեց։

Մարգոն արհամարհանքով ու զզվանքով նայեց շեմքից դուրս եկող թուրք կնոջը, հետո հաղթական՝ ներս մտավ և մոտեցավ թոներին։

Այնտեղ արդեն խիստ կրակ էր վառված, և բոցը բարձրանում էր մինչև բերանը։

— Պղծված է,— ասաց Արթենին դառնալով,— ես պիտի մաքրեմ։

Հետո հանկարծ անկյունը գրեց մահակը, մոտ գնաց ամուսնուն, բռնեց նրա ուսերից, թոթվեց և ասաց.

— Այժմ ճիշտ ասա ինձ, Արթեն, էլ թաքցնել մի մտածիլ և ոչ էլ ստել, ասա, պսո՞ւ ես դարձել։

— Սխալ է այդ, Մարգո,— ասաց Արթենը։

— Ապա ինչո՞ւ ես մյուդիր եղել հակառակ լոմերի ցանկության. ինչո՞ւ է թուրք կինը մեր օջախի մեջ, ինչո՞ւ բոլոր լոմերը կատաղել են քո դեմ։

— Թշնամություն է բոլորը. դու գիտես, որ ես թշնամիներ շատ ունիմ... Դրանք թող, Մարգո, ուրախ եմ, որ եկել ես. ասա, որտե՞ղ էիր մինչև այժմ։

Մարգոն չպատասխանեց, թողեց ամուսնուն, պտտեց սենյակի շուրջը, ոտքով դեսուդեն շպրտեց հանդիպած կարասիքը, հետո նոր բերած իրեղենները զննեց արհամարհությամբ և ասաց.

— Ուրեմն այստե՞ղ է, հա՞, այս օջախի շո՞ւրջը՝ որ պսուները բերում են լոմ կանանց անպատվելու. այստե՞ղ, ուր դուք բոլորդ լիրբ քեֆեր եք անում և լոմերին նեղացնելու հնարքներ մտածում... Վայ քեզ, Արթեն, երկու օջախ է քո դեմ վրեժ գոռում. վայ քեզ...

Հետո դարձավ թոների շուրջը և մոտեցավ ամուսնուն.

— Հա՛,— ասաց նա,— ուզում էիր իմանալ, թե որտե՞ղ էի մինչև այժմ... լավ, կասեմ։

— Ասա։

— Ստամբոլ էի... Չե՞ս հավատում, զարմանո՞ւմ ես, ի՞նչ կա զարմանալու։ Ստամբոլ էի. փնտրեցի այդ Արիֆ կոչվող պսուին, բայց չգտա, նրան ուղարկել են Երզնկա... Եկել եմ որդիներիս տեսնեմ և ապա գնամ Երզնկա... Դու գիտես, որ ուխտել եմ նրա արյունը թափել և հորս անպատված օջախը սրբել... Այո, անպատված օջախը արյունով միայն կարելի է մաքրել. այդպես է մտածում լոմը, այդպես մտածում եմ և ես... Դու ի՞նչ կասես դրան։

— Այդպես է...— կմկմաց Արթենը անհանգստությամբ,— բայց ինչ-որ հիմար բաներ ես խոսում... Ես գործ ունիմ, ուզում եմ դուրս գնալ. ասա, մտադի՞ր ես մնալ, թե ոչ...

— Ասացի, որ գնալու եմ. բայց այսօր դեռ հյուր եմ քեզ։

— Եթե այդպես է, ինչո՞ւ եկար. կարոտացե՞լ էիր ինձ. չէ՞ որ դու ինձ երբեք չես սիրել։

— Ճիշտ է այդ, դու սիրելու մարդ չես եղել երբեք։ Դու պսու ես. եղբայրներիդ մատնող... Ես գյուղերումն էի, լսեցի, որ լոմերը քեզ չեն ուզում, որ քեզ դեմ են. որ դու համառում ես մնալու մյուդիրության մեջ և ուզ ես բանեցնում եղբայրներիդ դեմ... Մտածեցի, որ Արթենը յուր կնոջ աղաչանքը կլսե և խելքի կգա...

— Շատ իզուր ես եկել,— ծիծաղեց Արթենը հեգնորեն,— ե՞ս մյուդիրությունս թողնեմ. այսքան թանկ գնով ձեռք բերված պաշտոնը թողնել...

— Այո, այդքան ցածություններով ձեռք բերած պաշտոնդ... լսիր, Արթեն, մի՞թե իսկապես չզվեցիր արածներիցդ, մի՞թե չձանձրացար այդ ստոր, լիզող դիրքիցդ... Թող, եկ գնանք ինձ հետ... ես քեզ կնեքեմ, կմուրամ, կթափառեմ՝ քեզ կպահեմ, քեզ կսիրեմ. որդիներդ մոտներս կառնենք, կերթանք հեռու մի տեղ ապրելու, և այնտեղ արածներդ կքավես... լսիր, Արթեն. ես դեռ չեմ պառավել բոլորովին. դեռ իմ մեջ կյանք կա, թուրք կնոջից ավելի կյանք. այդ բոլորը քեզ կնվիրեմ, քեզ համար կգործեմ, միայն քեզ համար կմտածեմ. գնանք, Արթեն, գնանք, զավակներդ առնենք և ձեռք-ձեռքի տված հեռանանք այս երկրից հեռու, սարեր ու ծովեր հեռու...

Եվ Մարգոն, այդ ասելով, հուզված մոտ էր գնացել ամուսնուն և մի ձեռքով գրկել էր վիզը։

Արթենը դեմքը կնճռեց, լսեց մինչև վերջ, հետո ցնցվեց, ազատվեց կնոջ գրկից և գոչեց.

— Գնա բանիդ, տխմար, եկել ես ինձ խաբելո՞ւ. իմ փառավոր կյանքը թողնեմ և գնամ բոշայի կյա՞նք վարեմ... Գնա, գնա որտեղից եկել ես, ես լոմ չեմ այլևս...

— Լոմ չե՞ս,— գոչեց Մարգոն—լոմ չե՞ս. ուրեմն պսո՞ւ եղար բոլորովին և արածներիդ վրա էլ չես զղջում...

Հետո մի ակնթարթ կծկված, կատաղի աչքերով նայեց ամուսնուն, և երբ սա վախեցած ուզում էր ետ քաշվել, վագրի պես ոստնեց նրա վրա, փռեց գետնին, չոքեց կրծքին և հագուստի տակից հանկարծ դաշույնը խրեց կուրծքը...

Լսվեց մի խռխռոց, մի աղաղակ։ Արթենը բուռն ճիգով ուզեց շարժվել, բայց գնչուհին, որ կատաղի էր դարձել, մի մեծ ճիգով հրեց նրան և նետեց թոնրի բոցերի մեջ։ Հետո վեր թռավ և դուրս սլացավ տնից...

Զինվորները ապշած նայեցին այդ հերարձակ, արյունոտ, ու փոշոտ կնոջը, որ գոռալով անցավ նրանց առջևից և վազնիվազ անհետացավ։

— Մյուդիրի կինն է, երևի մի լավ ծեծ է կերել ամուսնուց...— ծիծաղեցին նրանք։

Բայց քիչ հետո քթին հասնող կծու հոտը ստիպեց նրանց տուն մտնել և տեսնել թոնրի բոցերի մեջ այրվող մյուդիրի մարմինը...

Իսկ Մարգոն վազում էր, վազում փողոցներով առանց կանգ առնելու և գոռում էր անընդհատ ու խռպոտ.

— Մաքրվեց, մաքրվեց...

Կեսգիշերին նորից բախվեց Զիլե ավանի բոշա Թորոսի տան դուռը։ Ներսունին ճրագը ձեռին՝ դուրս եկավ։ Դռան վրա կանգնած էր Մարգոն։

— Այդ դո՞ւ ես, Մարգո։

— Ես եմ, հայր. իմ օջախը, որդիներիս օջախը մաքրվեց. պսուն գարձած, իր եղբայրներին դավող ու մատնող ամուսնուս սպանեցի... լավ չարի՞, բաբ...

Ներսունին ցնցվեց և հուզված ձայնով ասաց.

— Աստված թող ներե քեզ, աղջիկս... լավ արիր...

Ու նստեց։

— Սպասիր, հայր, ես դեռ ներս չեմ մտնի. քո օջախը պղծողը դեռ կենդանի է. ես գնում եմ դեպի նա, լավ չե՞մ անում, բաբ...

Ներսունին գլուխը բարձրացրեց և ասաց.

— Լավ ես անում, աղջիկս, աստված քեզ հետ, գնա...

Հետո ելավ, գրկեց աղջկան, համբուրեց ու հարցրեց.

— Ջե՞ս ուզում որդիներիդ տեսնել։

— Դեռ ոչ, բաբ,— ցնցեց գլուխը Մարգոն,— երբ այս տան օջախի պատիվը վերականգնեմ, այն ժամանակ կգամ, կմտնեմ այստեղ և որդիներիս մոտ կմեռնեմ հանգիստ։

— Քեզ կսպասեմ, որ օրհնեմ,— ասաց հայրը և ձեռքերը դրավ աղջկա գլխին։

Այն ժամանակ գնչուհին չոքեց պահ մի, համբուրեց հոր ոտները— կալավ, առավ հոր ցուպը, մի անգամ էլ ներսում վառվող ճրագի լույսով տան օջախին, նրա կողքին քնող որդիներին նայեց և արագությամբ մտնելով մթության մեջ՝ անհետացավ...

* * *

Այդ դյուցազներգությունը մի առանձին հիացումով է, որ պատմվում է լոմերի մեջ։ Մարգոն երգում է, դրվատվում. իսկ թե ի՞նչ եղավ նա—ավանդությունը ոչինչ չէր ասում։

Նման շատ այլ հերոսների, Մարգոյի վերջն էլ ծածկված էր մի առասպել պատկառելի, բարձր խորհրդավորության մեջ։

— Նա չէ մեռել,— կասի քեզ երգիչը։

— Նա անմահ է,— կպնդե ժողովուրդը։

ԽԱԹ—ՍԱԲԱ

1

Զանզաղ գյուղից մի քանի ժամ հեռավորությամբ, Զիվինի լեռների մեջ, գտնվում է մի հրաշալի սարահարթ, որին կտրելով գալարվում է Զանզաղի վտակը, ցատկոտում լերկ ժայռերի վրայից, սողում է ապառաժների բացվածքների միջից, փրփուրովը ծածկում լեռնադաշտը պատող գիներբուվների շերտը և գնում գահավիժում Զանզաղի հովիտը, ուր նա ոռոգում է պտրարտ, ծաղկալից դաշտեր։

Այնտեղ-բարձրում սարահարթը մի ծայրով միանում է բլրակների, որոնք ծածկված են երփներանգ ծաղիկներով և որոնք թիկն են տվել ավելի բարձր, լերկ ժայռերով, հարուստ և խոր ծործորներով ակոսված լեռների։ Նրանց ետևից, Զիվինի լեռնաշղթան, տեղ-տեղ դուրս է պարզում իր ձյունապատ բարձր կատարները։

Սարահարթի մյուս ծայրը գալիս հանգում է դեպի ձորակը և այդտեղ կազմում մի ահեղ գահավանդ, որտեղից տեսնվում է դեպի ցած նետվող վտակի փրփուրը, իսկ հեռու, ցածում, արծաթափայլ օձապտույտ գետակներ, որոնք միմյանց կտրում սահում են կույտ-կույտ վրանների և բլրակների միջով։

Սարահարթը մեծ չէ, բայց բնությունը իր բոլոր գեղեցկություններով զարդարել է նրան։

Այդտեղ կարելի է տեսնել ապառաժների վայրենի շեղջեր, միմյանց վրա կարծես կոթնեցրած հսկայական ժայռեր... մի կողմում ամբի պես փռված են զանազան բարձրությամբ բլրակներ, որոնք ալեձև գնում են դեպի խորը, բարձրանում դեպի լեռները, հետո նորից դեպի մի կողմ ծռվում և հետզհետե մանրանալով՝ հավասարվում դաշտի հետ։

Մի այլ կողմում երկու ջրվեժներ են, որոնք միացած՝ գոյացնում են ցատկոտող ու շառաչող մի առվակ ու ոռոգելու գնում ծաղկալից դաշտեր։

Սարահարթը կոչվում է «Զիվինի տյուզ» հարթավայր։

Շատ քիչ անգամ շրջակա գյուղի կանայք համարձակվում էին, սակայն, մտնել այդ սիրուն լեռնադաշտը՝ առատորեն բուսնող բանջարը ժողովելու։ Հովիվն իսկ դժվարությամբ էր համաձայնում նախիրն այն կողմը քաշել։

Զիվինի հարթավայրը բնակութենե բավական հեռու էր և շատ մատչելի ավազակ քյուրտերին։

Զնայելով դրան, ամառնամուտի մի գեղեցիկ երեկո գաշտից կարելի է տեսնել սարահարթում բարձրացող ծխի սյունակներ և փայլփլող լույսեր։

Այդ օր, հեռու տեղից գալով, մի թափառիկ խումբ իջևանել էր սարահարթի վրա, կանգնեցրել քսանի չափ վրան և ավելի քան հիսուն զանազան տավարներ բաց թողել արածելու բլրակների կանաչներին։

Վրանները կառուցված էին միմյանց մոտ։ Նրանց առջևը, խոտերի մեջ թավալում էին աղտոտ կիսամերկ մանուկներ։ Մի այլ կողմում սև և տգեղադեմ կանայք կրակ վառել՝ կերակուր էին պատրաստում, իսկ նորածագ լուսնի աղոտ լույսի տակ, վտակի եզերքին թիկն տվել, մեջքի վրա մեկնվել և կամ նստոտել էին 10—15 զանազան հասակի տղամարդիկ։

Ամենքն էլ հագնված էին շատ աղքատ, գրեթե ցնցոտիներով։ Դեմքերը սև, ոտերը գրեթե բոբիկ։ Ոչ մեկը առանց կարկատանի վերարկու, կանոնավոր կոշիկ կամ գլխարկ չուներ։ Մազերնին էլ խռիվ՝ տեղացած գլխների վրա, մորուքները թանձր ու կոշտ և խանձված մազի նման։ Նույնիսկ կանայք հեռվում՝ բոբիկ էին, անլվա, երկար մազերով և կիսամերկ։

Բոշաների մի խումբ էր այդ, որ Թորթումից ելած, ճանապարհորդության տասներորդ գիշերը անցկացնելու էր եկել Զիվինի հարթավայրի վրա ու մի քանի օր էլ հանգիստ առնելու այնտեղ։

Ամբի բոլոր տղամարդիկ չկային այդ օր։ Կեսի չափ ետ էին մնացել զանազան կողմերում և կամ պահպանության ելել շրջակայքերում։

Այն լանջը, ուր հավաքվել էին տղամարդիկ, նայում էր դեպի դաշտ։ Վտակը գալիս շոշափում էր նրա կողն ու լուսնի տակ փայլփլում՝ ոստնում էր դեպի խորքերը։

Մի քանի քայլ հեռու, մի տղամարդ, հերթապահ հսկողը, հենվել էր հրացանին և լուռ՝ լսում։ Ոտների մոտ, թաթերի վրա մռութը դրել, ականջները սրած ու պլշած, աչքերով շուրջը դիտող—նստել էր մի ահագին գամփռ։

Մյուս տղամարդիկ էլ ականջ էին դնում հաղթանդամ ու կոշտ գծագրությամբ հասակավոր պատմողին։

Ու պատմիչը ոգևորված, ցուպովը օդն էր բախում, ջուրը ճղփացնում և երբեմն էլ դեպի օդը թոցնում արմատախիլ արած խոտերի փունջը։

Մի զով քամի շարժում էր խոտերի և ծաղիկների ծայրերը, օրորում էր պատմողի թանձր մազերն ու գնում էր սփռվում դեպի լեռները։

2

Բոշան պատմում էր։

— Հեռու, Արաբների երկրում,—ասում էր նա—այնտեղ, ուր արևի մեջ հավկիթն իսկույն եփվում է, ուր մի ընդարձակ ավազի անապատ բռնել է երկրի կեսը, ուր մարդիկ արևից սևացել են և ուր բուսնում է արմավն ու ձիթենին—այնտեղ կա մի քաղաք, որից շատ մոտ է անապատը։

Այդ քաղաքում ապրում էր Շեյխ Սատոն, որին ամենքը ճանաչում էին։ Նրա պալատը ոսկու մեջ փայլփլում էր, հյուրիներն ավելի շատ և ավելի գեղեցիկ էին նրա հարեմում, քան իրեն՝ արքայի մոտ. նրա պալատը բռնում էր քաղաքի կեսը, պարտեզների նմանը ոչ մի պարտեզ չկար, և Շեյխը վայելում էր այս աշխարհում այն բոլորը, ինչ խոստացել է մարգարեն միայն մյուս աշխարհում։

Փող ուներ Շեյխը։ Եվ նրա զորությամբ կարողանում էր անել ցանկացածը, վայելել հաճույքներ, որոնցից աստված զրկել էր մեզ և շատ շատերին։

Օրվա ամեն ժամերին լսվում էին Շեյխի շքեղ պալատի աշտարակներից նվագի ձայներ։ Երգում էին ամենից լավ երգիչները. նրա դռան էր մոտենում ամենից առաջ դերվիշը, նրա մոտ գնում իրենց գիտցածը ցույց տալու բանաստեղծներն ու նվագողները։

Շեյխին էին պատկանում նաև անապատի զավակների գեղեցիկները, բոլոր մոլլաների և սեյիդների օրհնությունները և երջանիկ կողմերի լավ արտադրությունները։

Ու վայելում էր Շեյխը անհոգ և զվարթ ամեն ինչ. չգիտեր անգամ, թե իր ծառաները ինչպես քերթում էին խեղճ մարդկանց, կողոպտում նրանց, ծանր հարկերի տակ ճնշում և բերում լցնում գանձարանը։

Թող աշխարհ քանդվեր—միայն թե Շեյխի գանձարանից ոսկին չպակսեր, հարեմից՝ կինը, մառանից՝ գինին, այլև ճաշը զվարճալի դարձնող երաժիշտները...

Շեյխի եկամուտների աղբյուրը քաղաքից քիչ հեռու գտնվող հինգվեց գյուղերն էին։

Այդ գյուղերը լիքն էին բազմաթիվ մերկ, կեղտոտ և գժերի պես գյուղացիներով, որոնք օրը մինչև երեկո՝ աշխատում էին։ Նրանց արտերը տալիս էին առատ ցորեն. գետը ողողում էր հողերը ու արմտիքը մեկին 100 էր բերում, սակայն գյուղացիք ուտում էին միայն բանջարեղեն։

Շեյխի մարդիկը խլում էին արմտիքը նրանց ձեռքից և թողնում էին կերակրվելու միայն խոտով։

Լսում եք, լոմեր, երջանիկ այդ երկրում կային գյուղեր, ուր մարդիկ միմիայն խոտ էին ուտում...

Եվ լցվում էր Շեյխի գանձարանը ոսկիով, հարեմը՝ գեղեցիկներով։ Եվ հնչում էր երաժշտությունը պալատի սրահների մեջ ու հոսում էր գինին, զվարճանում Շեյխը իր շքեղության մեջ։

Բայց բավական է Շեյխի մասին։ Լոմը այդպես շեյխեր շատ է տեսել։ Նա ինքն էլ խոտ է կերել և իր քրտինքը տվել է աղաների։ Նա ինքն էլ ծնել է գեղեցիկներ ու հանձնել շեյխերի։ Նրան այդ ամենը զարմացնել չի՛ կարող...

Եվ նստած էր մի օր Շեյխը իր պալատի աշտարակներից մեկում, ծխում էր նարգիլեն, իր սիրելի կանանցից մեկի նվագածությունը լսում ու զմայլման մեջ նայում էր հեռու անապատին...

Իսկ անապատում այդօր, ծառախմբի տակ, իջևանել էր մի խումբ։

Կտրել էր խումբը ամբողջ երկիրը, իր անդամներից թողել էր բավական մեռած ավազների վրա, կոտորվել էր ծարավից, ջարդվել՝ բեդուիններից և վերջապես եկել մի կերպ հասել էր Բեն-էլ-Մաար օազիսն ու հանգչում, շունչ էր առնում նրա արմավենիների տակ։

Բայց այլևս չէր մնացել ոչ ոքի մոտ մի բուռ ալյուր, մի հատիկ ցորեն կամ մի կտոր հաց։

Պետք էր հաց գտնել։ Սոված էին ամենքը։

Եվ հրամայեց խմբապետը խմբի երգեցող կանանց՝ քաղաք իջնել, դռների առաջ հնչեցնել գնչուական երգեր, բաց կուրծքով պարել տաք երկրի մյուսուլմանների պագշոտ աչքերի առջև և անել ամեն ինչ, միայն հաց բերել խմբին, որին անոթի մահ էր սպառնում։

Եվ ահա օազիսից ելան չորս կանայք—Նազին, Գյուլին, Բահարն ու Օդիշուն։ Հագնվեցին, ուռին իրենց փոքրիկ, բոժոժավոր թմբուկները, մատերեն անցկացրին ծնծղաները և մտան քաղաք։

Նազին ու Գյուլին երգում էին, Օդիշուն պարում, իսկ Բահարը թմբկահարում էր և հավաքում բնակիչների տված հացն ու փողը։

Անտառի եղնիկը, սուլթանի կաքավողը, շեյխի պարողները չունեին ոտքերի այն սլացող ոստումները, մարմնի այն հրապուրիչ նազանքը, աչքերի այն հալեցնող պչրանքը և ձեռքերի այնքան գողտրիկ ծածանումներն, ինչ Օդիշուն ուներ։

Երբ պարում էր, սավառնող հրեշտակի էր նման։ Երբ ժպտում էր, մարում էր ամեն ինչ և երբ խոսում էր, անապատի տապից հետո հանդիպած ջուրը չուներ նրա ձայնի հմայքը...

Գեղեցիկ էր լուսինը իր ամբողջ փայլով, երբ լողում էր երկնակամարի վրա։ Հիանալի են աստղերը, պայծառ շլացուցիչ է արևը, բայց

Օդիշուի աչքերը, դեմքն ու քնքուշ իրանը, վայելուչ հասակն ու գողտրիկ բերանը ավելի հիանալի էին, ավելի պայծառ, ավելի այրող և ավելի հմայող...

Երգեցին, պարեցին և հավաքեցին ամբողջ օրը։

Երեկոյան դեմ կանգ առին նրանք Շեյխ Սատոյի պալատի առաջ։

-- Օդիշու,— խոսեց Նազին,— այս տան տերը մեծահարուստ մարդ է երևում։ Գործադրիր բոլոր ճարպկությունդ և արհեստդ։ Այնտեղ մեզանք հացի են սպասում։

Եվ երգեցին։

Օդիշուն մատերին անցկացրեց ծնծղաները. Բահարը ցնցեց թմբուկը։

Լռեց այնուհետև Շեյխի կնոջ թասը։ Շեյխն ինքը շարժվեց, գլուխը լուսամուտից դուրս հանեց և երկար ականջ դրեց։

Լսում էին ամենքը, ամբողջ թաղը։ Օդիշուն կարմրել էր նոր բացված շքեղ վարդի պես։ Կոտրտվում էր նա դյութիչ նազանքներով, սահում գետնի վրա, սավառնում՝ թևերը գալարելով, և Նազին ու Գյուլին երգում էին մեծ ոգևորությամբ։

Նրանք երգում էին լոմերի սիրած երգը.—

Անցի՛ր, գարուն, անցի՛ր, լուսին.
Օգուտ չունիք խեղճ լոմին։
Լուսին լինի և կամ մթին,
Լոմը ե՞րբ է կյանք տեսել։
Անցի՛ր, գարուն, անցի՛ր, լուսին.
Դաշտը՝ իր տուն, լեռը՝ իր բուն,
Տանջվում է լոմն օրնիբուն.
Փոքրիկ կարպետն է իր անկողին,
Մի կուց էլ ջուր չնչին բաժին...
Անցի՛ր, գարուն, ծածկվի՛ր, լուսին,
Ինչ օգուտ դուք խեղճ լոմին...

Շեյխը մի ոսկի նետեց իր աշտարակից և բարեհաճեց հարցնել զարող գնչուհու անունը։

Հետո երկու ծառա մոտեցան նրանց և հայտնեցին, թե «մեծանուն Շեյխը» կամենում էր, որ գնչուները պալատ մտնեին և ավելի մոտ ցույց տային իրենց վարպետությունը։

Օդիշուն, Նազին ու Գյուլին խնդրեցին Բահարին, որ հավաքածները տաներ օազիսում սպասող խմբին, իսկ իրենք, ավելի մեծ վարձատրության հույսով՝ մտան պալատ։

Մյուս օրը միայն օազիս վերադարձան Նազին ու Գյուլին։

Օդիշուն չկար։

Շեյխը իր հարեմն էր դրել անապատի գեղեցիկ դնչուհուն։

Բոշաների խումբը հուզվեց, երդվեց չհեռանալ օազիսից։ Օդիշուի հայրը գտավ մի ատրճանակ, հագուստի մեջ թաքցրեց մի թունավոր դաշույն և քաղաք գնաց։

Անցան օրեր։ Ոչ Օդիշուի մասին լուրեր եկան և ոչ՝ էլ նրա հոր։

Վերջապես մի գիշեր օազիս հասան երկուսն էլ։ Օդիշուն հղի և տանջված, իսկ հայրը՝ արյունոտ։

Շեյխը սպանված էր։

Մյուսուլմանները շուտով գտան սպանողին. բռնեցին Օդիշուի հորը և կախեցին քաղաքի դռան մոտ։

Բոշաների խումբը ժողովեց ունեցածը, նորից կտրեց անապատը և գնաց մի նոր կայան որոնելու։

Եվ երբ հասել էին Իրանի երկիրը, Օդիշուն ծնեց մի արու զավակ, որի անունը դրեց Հասան։

3

Այդ միջոցին Սպահանում ապրում էր մի արաբ իշխան։ Էլ-Մուին էր նրա անունը։ Նրան պատվում ու սիրում էին ամենքը։ Վաթսուն տարեկան էր նա, երեք կին ուներ, բայց ոչ մի որդի։ Եղածները մեռել էին։

Ուներ ահագին հարստություն, շատ կալված, հողեր ու պարտեզներ, բայց ապրում էր մենակ և տխուր։

Եվ երբ բոշաները հոգնած, տանջված ու կես եղած՝ Սպահանում կանգ առան հանգստանալու, մի օր Էլ-Մուինը պատահմամբ տեսավ Օդիշուի փոքրիկ զավակ Հասանին, գրավվեց նրանով և նրա մոր հետ առավ իր մոտ։

Իսկ բոշաների խմբին նա հրամայեց պատսպարել, կերակրեց, վարձատրեց և թողեց, որ գնան։

Օդիշուն մնաց Էլ-Մուինի մոտ և արաբ իշխանից հայրական սեր միայն տեսավ։ Հասանին էլ Էլ-Մուինը մեծացրեց իր թոռան պես։

Մեծացավ Հասանը, ուսավ, կարդաց ամբողջ Ղուրանը. տեղեկացավ իմաստունների գիտությանը, կռիվների մեջ էլ մտավ ու թագավորից բարձր աստիճաններ ստացավ։

Եվ երբ Օդիշուն էլ մեռավ, Հասանը ոչ միայն իրան պարսիկ էր կարծում, այլև մտքիցը չէր անցկացնում, թե ինքը լոմ է և լոմի զավակ։

Այդ տարին շատ վատ տարի եղավ Իրանի լոմերի համար։ Ամենքը նրանց նեղացնում էին, անպատիժ հալածում և նույնիսկ սպանում։

Պատճառը այն էր, որ լոմերից մեկը սիրել էր մի մեծավոր պարսիկի աղջկա, փախցրել էր նրան, իհարկե, աղջկա համաձայնությունով, և ահա այնուհետև ամեն իրանցի իրավունք էր համարում վրեժ հանել ամեն հանդիպած լոմից։

Լոմերը երկար դիմացան, բայց, վերջապես, երբ տեսան, որ հալածանքն ավելի սաստկանում է, ժողովվեցին, մի քանի մեծ խմբեր կազմեցին և վճռեցին գաղթել օսմանցոց երկիրը։

Գաղթելուց առաջ, սակայն, ուղարկեցին նրանք իրենց ծերերից երկուսին՝ Հասանի մոտ։

Հասանը չուզեց ընդունել նրանց. բայց իմաստուն Էլ-Մուինը հորդորեց երիտասարդին՝ լսել բոշա ծերունիներին։

Երկու իշխան-բոշաները սենյակ մտան և շոքեցին դռան մոտ։ Վերի կողմը նստել էր ալևոր Էլ-Մուինը և նրանից քիչ ցած՝ Հասանը, որ զարմացած նայում էր հյուրերին և սպասում։

Բոշաները փոքր-ինչ լռեցին։ Հետո նրանցից մեկը շփեց մորուքը և խուլ ձայնով ասաց երիտասարդին.

— Լոմ-Հասան, քո ցեղիդ ծերունիները քեզ մոտ են եկել ամբողջ ցեղիդ կողմից։ Ուզո՞ւմ ես ականջ դնել նրանց։

Հասանը ոչինչ չէր հասկանում։

— Ես Լոմ-Հասան չեմ կոչվում,— ասաց նա,— այլ Հասան Էլ-Մուին։ Ինչի՞ մասին եք խոսում դուք ինձ։

— Մենք,— խոսեց երկրորդ ծերունին,— բոշաների, այսինքն՝ լոմերի երկու ամենածեր իշխաններն ենք և եկել ենք լոմ Օդիշուի որդի լոմ Հասանի մոտ։ Արդյոք Հասանը հիրավի չգիտե, որ նա լոմի զավակ է... լոմերն Իրանում այլևս օր չունեն, նրանց հանգիստ չեն թողնում։ Այլևս հաց չկա նրանց այս երկրում։ Պիտի գաղթեն նրանք. այդպես է ցեղի միահամուռ վճիռը... Մեզ ցեղը ուղարկել է լոմ Հասանի մոտ ասելու, որ նա թող գա և առաջնորդե նրանց։ Հասանը երիտասարդ է, քաջ կռվող, գիտուն և իմաստուն։ Լոմերը ցանկանում են, որ Հասանը օգնի իր ցեղին իր գիտցածներով և, դառնալով նրանց գլխավորը, սովորեցնի մնալ ազատ և երջանիկ... Լոմ-Կադիրը ասաց՝ ինչ որ պատվիրել էր նրան իր ժողովուրդը։

Ու Լոմ-Կադիրը լռեց։

Հասանը խոսել չկարողացավ։ Մեկ բոշաներին էր նայում և մեկ գունատ պապին։

Վերջապես Էլ-Մուինը շարժվեց և խոսեց այսպես.

— Լսիր, իմ Հասան, թե ինչ կասե քո պապը՝ Էլ-Մուինը։ Ոչ մի անգամ նրա բերանը չէ ստել, և, փառք ալլահին, նրա գլուխը գիտե դեռ լավ մտածել։ Թող իմանա Հասանը, որ Էլ-Մուինը իր կյանքը նվիրել է նրան, ինչպես և ունեցածը։ Բայց նա չի կարող ծածկել և չասել քեզ ճշմարտությունը։ Իրավունք ունին այս ծերունիները։ Քո մայրը՝ Օդիշուն, բոշայի աղջիկ էր, և դու բոշա ես, իմ որդեգիր թոռը... Այս ծերունիները քո ցեղիդ իշխաններն են։

Հասանը ամեն ինչ երբ հասկացավ, գլուխը կախեց և սկսեց երկար մտածել։

Ամենքը լուռ էին։ Ամենքն էլ մտածում էին։

Եվ ահա հանկարծ իմաստությունը խոսեց Հասանի մեջ։

Նա ոտքի ելավ, մոտեցավ ծերունիներին և ասաց.

— Իմ ազգը ինձ պետք ունի երևի։ Գնանք, ծերունիներ, ես պատրաստ եմ։

Ապա մոտ գնաց ծերունի Էլ-Մուինին և համբուրեց նրա ձեռքը։

Էլ-Մուինը հուզմամբ գրկեց երիտասարդին, օրհնեց և ասաց.

— Գնա, որդյակ, Էլ-Մուինը հանուն աստուծո օրհնում է քեզ, իր իմաստուն որդուն, և բաց է անում իր գանձը նրա առջև...

Այնուհետև լոմ-Հասանը եկավ իր ցեղակիցների մոտ, և երկու օրից հետո բոշաները նրա առաջնորդությամբ անցնում էին օսմանցոց երկիրը...

Ու հրամայեց Հասանը, որ այնուհետև իրեն լոմ-Հասան միայն կոչեն։

Լոմ-Հասանը իմաստուն էր բոլոր իմաստունների չափ, քաջ էր, որպես Ռուստեմզալը. ազնիվ, բարի և անվախ։

Օսմանցու հողի մեջ բոշաները հանդիպեցին իրենց ցեղակիցներին։ Լոմ-Հասանը բարեկամացավ մի զորեղ ցեղապետի և ամուսնացավ նրա Սաբա աղջկա հետ։

Սաբան նույնքան քաջ էր, որքան իր ամուսինը. նույնքան անվախ ու համարձակ, կրակոտ և վառվռուն։

Սաբան իր ամուսնու նեցուկն էր, նրա ընկերն ու օգնականը...

Լոմ Հասանը սիրեց նրան, տվավ նրան իր իմաստությունը և ուզեց, որ իր մահվանից հետո նա լիներ ցեղապետը։

Ու Սաբային ցեղը սկսեց Խաթ-Սաբա (տիկին Սաբա) կոչել, լոմ-Հասանից հետո»...

...Այստեղ հանկարծ պատմիչը կանգ առավ, որովհետև խոտերը բուռն կերպով խշխշացին, գամփռը ոստնեց, և լսվեց մի խռպոտ, ահեղ ձայն, որ ասում էր.

— Այդ ո՞վ է նորից, որ մարդուս անունը իր բերանն է առել...

4

Բոշաները բոլորը վեր թռան. պատմությունը կիսատ մնաց, իսկ խոտերի միջից ելնելով՝ նրանց առաջ հայտնվեց մի երկարահասակ խոշոր կին, ձեռքին ահագին ցուպ, մեջքին կապած գոտու մեջ էլ ատրճանակներ ու դաշույն։

Պառավ, բայց խիստ առույգ կազմվածքով և միականի կին էր այն։ Գեղեցիկ եղել էր և այժմ տգեղ չէր, միայն շատ արևակեզ, խորշոմոտ ճակատով և կոշտացած գծագրությունով։

Միակ մեծ աչքը այնպես փայլում էր, որ նայողին դող էր ազդում։ Երկար հասակը քիչ ծռվել էր։ Ձայնը խռպոտ էր և առնական. սոթոտած բազուկները ջլապինդ, ձեռքերը կոշտ ու սեղմ, լայն կուրծքը խոշոր, թիկունքը ջղուտ և ամրապինդ։

Մի քայլ առաջ եկավ նա, զննեց բոշաներին, մեծ ցուպը ուսի վրա դրավ, ոտովը դեն շպրտեց քծնող գամփռին և ասաց.

— Երևի Մուրատն էր նորից։ Սիրում է նա հին վերքերը փորփրել, հին առյուծների պատկերները կենդանացնել։ Լավ է այդ, շատ լավ է, բայց ամեն ինչ իր ժամանակն ունի։

Ասաց, նայեց պահ մի դեպի վրանները և քիչ լռելուց հետո շարունակեց.

— Դաշտից եմ գալիս։ Նոր լուր եմ բերում։

— Զգուշացիր այս կողմերում, Խաթ-Սաբա, խոսեց մի ծերունի. Զիվինի շուրջը լիքն է ավազակ քյուրդերով։

— Թող խրատդ, ծերունի,— նեղացավ պառավը և նստեց մի քարի վրա.— Խաթ-Սաբային ոչ ոք չի դիպչել։ Ցնցոտի են նրա հագուստները, գրպան չունին, իսկ ինքն էլ չափազանց ծեր է և տգեղ։

— Ի՞նչ լուրեր են բերածներդ,— հարցրեց մեկը։

Խաթ-Սաբայի դեմքը մթագնեց։ Անհանգստությամբ շուրջը նայեց և խուլ ձայնով ասաց.

— Դաշտը լիքն է զինվորներով։ Զանգաղի մեջ վրան խփել նստել են հարկահաններ։ Հասան-Ղալայի բեգը փողի պետք ունի և ավարի է ուղարկել մի մեծ խումբ գիշատիչների... Օհ, հավաքում են նրանք հարկ և պիտի տեսնել, թե ինչպես սուգն ու շիվանը բռնել է ամեն տեղ։ Գյուղացիները գյուղը թողել՝ սարերն են փախչում... Զինվորները ձեռքն ընկածը յուրացնում են կամ ավերում... Զանգաղցի երեք իշխաններին բռնել, գյուղից 7—800 ոսկի դրամ են պահանջում...

— Յոթ-ութ հարյուր...— գոչեցին ամենքը սոսկումով։

— Այո՛։ Ողջ Բասենը ծախու հանես այժմ, դրա կեսը տվող չի լինի... Մերոնցից էլ Սերգոյին բռնել են ու տարել։

— Ահ...— լսվեց ամեն բերնից։

— Ի՞նչ են ուզում մեզնից,— կանչեց մի ծերունի՝ մռայլ դեմքով. բոշան ի՞նչ ունի, որ ի՞նչ տա։ Ոչ հող ունի նա, ոչ տուն և ոչ կայք...

Խաթ-Սաբան ցուպը ոտքերի մեջ առավ, պահ մի սրա-նրա երեսին նայեց, շոյեց իր կողքը բռնող գամփռին և դառն ժպիտը դեմքին՝ ասաց.

— Երևի մեր ցնցոտիներն էլ մի բան արժեն... Գուցե մեր տավարներին են աչք դրել... Հող չունինք, բայց ուտելու մի կտոր հաց կա... Սերգոյին բռնել են, ոտներն ու ձեռները կապել, մի խրճիթ են գտել ու զանազանցոց հետ փակել այնտեղ... Մենք հեռանալ այստեղից չենք կարող, մինչև Սերգոյին չազատենք... Մեր մնացող ընկերներն էլ չեն երևում։ Վախենում եմ, որ նրանց էլ դաշտում բռնած լինեն։ Ես դաշտից եմ գալիս։ Որոնեցի և չգտա... Ըստ երևույթին, լոմերը ստիպված պիտի լինեն իրավի լոմ-Հասանի կռիվները պատմել միմյանց ու նման կռիվների պատրաստվել... Խաթ-Սաբան մտադիր չէ որևէ տավար կամ նույնիսկ ցնցոտի տալ բեգին... Լոմ-Հասանը սովորեցրել է լոմերին, որ հողը աստծունն է, նրա արդյունքը՝ արդյունաբերողին միայն. աշխատողի արդյունքը նրա ձեռքից խլելու ոչ ոք իրավունք չունի... Այս օրենքը աստվածային է... և եթե լոմը այժմ թափառական է, պատճառն այն է, որ նրան ստիպում են լինել այդպես։ Լոմ-Հասանը սովորեցրել է մեզ երազել հող, հող ունենալ, վարել, ցանել ու հնձել և ոչ թե մուրալ... Լոմը դեռ ոչ տեղ ունի և ոչ հող։ Վա՜յ մեզ, վա՜յ։ Բայց և վա՜յ նրան, ով լոմի աշխատանքը կխլի։ Խաթ-Սաբան դեռ չի մեռել...

— Մենք միակ չենք թողնի քեզ, Խաթ,— ասացին մի քանիսը։

— Գիտեմ, տղերք. ո՞ր լոմը այնքան ստոր կլինի, որ մեջքը իր ընկերոջ մեջքին չտա և չօգնի նրան թշնամու դեմ...

Հետո ոտքի ելավ, ցուպը ուսին գրեց ու ավելացրեց.

— Իսկ առայժմ, տղերք, դաշտից մեր վառած կրակները երևում են. արդեն գիտեն, որ այստեղ մարդիկ կան։ Բեգի հարկահանները մարդ են փնտրում, որ տուրք առնեն... Անշուշտ կգան այստեղ էլ... Թող ուրեմն մի քանի հոգի առնեն մեր տավարներն ու լեռների խորքը տանեն... Առանց տավարի եթե մնացինք, գուցե կարողանանք առանց կռվի, խաղաղ կերպով համոզել այդ գայլերին, որ մեզնից առնելու ոչինչ չկա...

Մի քանիսները կասկածանքով թափահարեցին իրենց գլուխները։

— Իհարկե,— ասաց մի ծերունի.— թող տավարները հեռացնեն. դա խելոք բան է։

— Այո,— կրկնեց Խաթ-Սաբան.— մի լավ հեռավոր ձոր գտեք և քաշեք այնտեղ։ Երեք-չորս հոգի հերիք է տավարների հետ։ Մեկը թող գնա ու գա, որ տեղը իմանա և մեզնից լուրեր տանի։

Ասաց, ոտքի ելավ, հանկարծ նայեց ամենքին և կանչեց անձկությամբ։

— Ո՞ւր է Հասանս. նա՞ էլ դաշտումն է...

— Ոչ,— ասաց պատմիչը.— դաշտի կողմում պահպանություն է անում։

— Հրացան ունի՞ հետը։

— Ունի։

Պառավը լայն շունչ առավ։ Դաշտ մնացողների վիճակը գիտեր, պահ մի վախեցել էր, որ իր մոտը մնացած միակ և սիրելի որդին էլ բռնվել էր։

Միայն այդ, կրտսեր տղան էր, որ մնացել էր մոր մոտ։ Անդրանիկը մեռել էր և թողել էր աղջիկ-զավակ սիրուն Օդիշուին, իսկ պառավի միջնակը՝ Մարտոսը, վաղուց հեռացել էր մոտից, հաստատվել էր Երզրումում, ամուսնացել էր այնտեղ ու քարհատությամբ էր զբաղվում։

Խաթ-Սաբային, իր փառավոր ամուսնու մահվանից հետո, մնացել էր Հասան որդին, որ անզավակ էր և Օդիշու թոռը, որ անհայր էր։

Լոմ-Հասանը վաղուց էր, որ սպանվել էր մի փառավոր կռվի մեջ՝ քյուրդերի դեմ։ Ցեղակիցների մեջ հրաշքներ էր պատմվում նրա մահվան մասին անգամ։ Նա, մինչ մեռնելը, շատ քյուրդի դիակներ էր փռել շուրջը։

Ինքը Խաթ-Սաբան ոչինչ չէր պատմում ամուսնու մահվան մասին։ Մինչև իսկ այնպես էր խոսում, որ կարծես կենդանի էր նա։

Այդ էր պատճառը, որ շատ բոշաներ հավատում էին, թե Լոմ-Հասանը կենդանի է ու պիտի հանկարծ հայտնվի իր ցեղի ամենավատ բոպեին՝ նրան օգնելու համար։

Խաթ-Սաբան էր ժառանգել իր ամուսնու ցեղապետական իրավունքները։

Լոմ-Հասանի կամքն էր այդ, որ սիրով հաստատել էր ցեղի վճիռն ու ցանկությունը ևս։ Սաբան ընտրվել էր ցեղապետուհի։ Եվ բոշաները հպարտանում էին իրենց քաջ, անվախ ու լավ ցեղապետուհիով։

Խաթ-Սաբան թեև խիստ էր, պահանջող, բայց էր ցեղի պահպանության, նրա յուրաքանչյուր անդամի կյանքի համար պատրաստ էր մինչև վերջին շունչը կռվելու։ Վտանգավոր բոպեներին նա ամեն տեղ էր, ամենքին հասնում էր, ամենքին սիրտ տալիս ու օգնում։

Ու սիրում էին Խաթ-Սաբային ամենքը. սիրում և պատկառում նրանից։

Ոչ ոք չիմացավ, թե ինչպես էր կորել նրա մի աչքը։ Մի օր պառավը ցուպը ուսին՝ անհետացել էր, և երկու օր ոչ մի լուր չէր եղել նրանից։ Երկու օրից հետո վերադարձել էր նա՝ ձախ աչքը կապած մի շորով։

Մի ամսից հետո շորը բացվել էր, և նրա տակ երևան եկել կույր աչք՝ մի սև փոս...

Երբ հարցրել էին, պառավը սպառնալից նայել էր հարցնողին և գոռացել.

— Ձեզ ի՞նչ։ Միայն Լոմ-Հասանը կարող էր Սաբայից հաշիվ պահանջել, և Լոմ-Հասանը այժմ չկա...

Ու ամենքը ստիպվել էին լռել։

5

Երզրումի Ղավազի դուռ կոչվող թաղում, Հայոց Մայր եկեղեցուց քիչ ցած, գտնվում են մի շարք տներ, որոնցից միայն մեկն էր երկհարկանի՝ սրանից տարիներ առաջ։

Երկհարկ այդ տունն իսկ այլանդակ բան էր։

Առաջին հարկի արտաքին պատերի վրա գունդ-գունդ ծեփված կային աթարի կտորներ. իսկ երկրորդ հարկի ոչ լուսամուտը փեղկ ուներ և ոչ էլ փողոցի վրա նայող դուռը։

Երևում էր, որ տերը կիսատ էր թողել։ Ունեցել էր միայն քար։ Փայտյա մասը պակասում էր լիովին։

Բնակություն կար, հետևապես, միայն ներքին հարկի մի միակ ընդարձակ սենյակում։

Միանգամայն ամեն ինչ էր այդ սենյակը.— մառան, թոնրատուն, ննջարան, ճաշարան և փայտանոց։ Մինչև իսկ մի անկյունը ախոռ էր դարձրած և այնտեղից մեկ-մեկ հնչում էր էշի զիլ զռոցը։

Սենյակի մեջտեղ թոնիրն էր. քիչ հեռու՝ բարձր թախտ, ապա՝ ալյուրի մեծ դարանը, ավելի հեռու՝ կարասիներ, դիզած ցախ, միմյանց վրա կիտած լավաշ հաց։

Գետնի վրա՝ մերկ մանուկներ, ջրաման, ավել։ Բոլորը խառնվել էին միմյանց։

Թոնիրը վառում էր կարմիր շալե գոգնոց կապած մի կին, որ գոգնոցովը հովհարում էր դեպի թոնիրը, ապա անցուդարձ անում կահ-կարասիքի միջով, ձեռքերով ծխալից աչքերի արցունքը սրբում, կիցերով

մանուկների ճիչերը լռեցնել մտածում ու բոշաներն հարուստ հայհոյանքներով արտահայտում էր ջղայնությունը։

Մինչ այդ, թախտի վրա մեկնված տղամարդը սկի էլ չէր շարժվում։

Ջիբուխը բերնին, փստացնում էր ու երազում։ Իսկ երբ մանուկները ճիչերը մեծացրին—նա էլ բուռն հայհոյանքների դիմաց և հրամայեց կնոջը՝ աղմուկը պակասեցնել։

— Ի՞նչ անեմ,— կանչեց կինը,— էս անիծած թոնիրն էլ չի վառվում. գոնե քիչ փուշ բերեիր սարերից։

— Ժամանակ չկա, կին.— խոսեց տղամարդը,— և շուտ արա, մի բան տուր ուտելու. և պիտի այսօր շատ քար կտրել. Գեորգ աղան պիտի գա և գնի։

Հետո, երբ տեսավ, որ թոնրի ծուխը սաստկանում էր, ջիբուխը բերնին իջավ և քայլեց դեպի դուռը։

— Դռանը կնստեմ,— ասաց նա կնոջը,— երբ կերակուրը կլինի, կանչիր։ Շուտ արա։

Ու դուրս եկավ, մտադրելով նստել իր շինած տան առջև դրված մեծ քարի վրա։

Ելավ, նորից կանգ առավ՝ տունը դիտեց և պատրաստվեց նստելու, երբ հանկարծ սառած ու ապշած նայեց դեպի քարակույտը, որ հեռու չէր տան դռնից։

Այնտեղ, մեջքը քարերին տված, նստել-կծկվել էր մի պառավ կին, ոտքերի մեջ առած երկար ցուպ, կողքին մի մեծ գամփռ։

Խոշոր մարմնով,բայց ցնցոտի հագած կինը աչքերը փակել՝ կարծես ննջում էր։ Փոշոտ էր, գունատ և հոգնած։

Երբ լսեց ոտնաձայն, ցնցվեց, մի միակ աչքը բաց արավ ու նայեց։

Երկուսի ակնարկները հանդիպեցին միմյանց։ Տղամարդը սոսկումով ետ քաշվեց, իսկ պառավը ոտքի ելավ։

— Խաթ-Սաբա...— գոչեց տղամարդը։

Խաթ-Սաբան մի քայլ արավ դեպի նա և ասաց.

— Երևի «մայր» բառը մոռացել ես... Ա՞յս է տունդ։

Ու քայլեց դեպի դուռը։

Տանտերը ջանաց աննկատելի կերպով նրա դեմը կտրել ու ասաց.

—Այստե՞ղ... ոչ, այստեղ մի մտնիլ...

— Այդպե՞ս,— կանգնեց Խաթ-Սաբան,— ո՞րտեղ ուրեմն կընդունես մորդ, որ հոգնել է և մի բաժակ ջուր խմելու պետք ունի։ Այնուհետև կատի քեզ նա իր ասելիքը, որի համար կտրել է երկու օրվա ճանապարհ և եկել է այստեղ։

Որդին շփոթվել էր։ Չգիտեր ինչ անել։

Այդ միջոցին տան դռան վրա երևացած կինը տեսավ, որ ամուսինը խոսում էր մի պառավի հետ, նայեց քիչ ու գոչեց.

— Կարող ես ներս գալ, Մարտոս. թոնիրը կպավ և կերակուրը տաքացել է։

— Ահ,— դարձավ Խաթ-Սաբան իր որդուն.— դու ինձ խաբում ես ուրեմն. սա է տունդ... Առաջ անցիր և մի վախենա, մայրդ երկար չի մնա քեզ մոտ. կտեսնի հարսին և թոռներին՝ եթե կան, մի բաժակ ջուր կխմի... և ահա բոլորը։

Այդ ասելով՝ նա ուղղակի ներս մտավ, գամփռին մոտ կանչեց, նստեց թոնրի եզերքում փռված փսիաթի վրա, ցուպը ծնկերին առավ ու տանտիկնոջ դառնալով՝ ասաց.

— Հարս, թե թան ունիս՝ քիչ թան տուր. թե չունիս՝ ջուր մի ամանով։

Մանուկները, որոնք Խաթ-Սաբայի խոսելու ժամանակ գիտում էին նրան, հանկարծ ձեռքերը իրար խփեցին և մոտենալով՝ կանչեցին.

— Վա՜յ, բոշա է եղել։

— Մեկ աչք ունի,— ծիծաղեց երկրորդը։

Մարտոսը երկու ուժգին հարվածներով՝ հրեց նրանց հեռու և լռեցրեց։

Սակայն Խաթ-Սաբան լսել էր և մի կատաղի ակնարկ ձգեց որդու վրա։

— Որդինե՞րդ են։

Ապա ժպտաց ու ավելացրեց.

— Սովորցրու նրանց, որ իրենք էլ բոշա են և որ մի աչք ունենալը ամոթ չէ բոլորովին։

— Իրա՞վ,— հարցրեց այդ միջոցին տանտիկինը, որ պառավին էր մոտենում և պարզում նրան պղնձե թասով թանը. իրա՞վ, դու բոշա՞ ես։

— Խաթ-Սաբան առավ թասը, զննեց հարսին ու հարցրեց խստությամբ.

— Իսկ դո՞ւ, մարդդ ու որդիներդ, բոշաներ չե՞ք։

— Մենք բոշա չենք,— պատասխանեց հարսը.— շատ էլ իմ ծնողներս բոշաներ են եղել, բայց ես բոշա չեմ։

Հետո ձեռքը պարզեց թասը ետ առնելու և ավելացրեց.

— Թասը ետ տուր. չդնես տոպրակիդ մեջ։

— Կնիկ...— կանչեց նրա վրա Մարտոսը։

Խաթ-Սաբան նախ ապշած՝ նայեց հարսին։ Պահ մի չհասկացավ

վիրավորանքը։ Հետո զայրույթից կարմրեց և բուռն ուժով թասը նետեց հեռուն ու ինքն էլ ոտքի ելավ։

Այնքան սաստիկ էր նրա բարկությունը և շարժումները, որ գամփռը սկսեց մռմռալ, իսկ հարսը վախեցած մի ճիչ արձակեց ու ետ քաշվեց։

— Մարդ,— ասաց նա ամունուն,— ինչո՞ւ ներս թողիր սրան. հիմա տղաներիս մեկը կտանի կամ մի բան կգողանա։

— Կնիկ...— որոտաց Մարտոսը սոսկումով,— կարիր ձայնդ։

— Ոչ, ինչո՞ւ,— ասաց Խաթ-Սաբան, որ արդեն զսպել էր իրեն և ցուպին կոթնած՝ դառն ժպիտ դեմքին ու գունատ՝ նայում էր հարսին.— Ոչ, թող որ բոլորը ասի... Ասա, սիրուն հարսս, էլ ի՞նչ կարող ես ասել բոշաների մասին։

— Դուրս գնա,— ճչաց հեռվից հարսը,— մարդուս խելքին ասա, որ քեզ ներս թողեց։

— Այդ ոչինչ, հարս,— ժպտաց Խաթ-Սաբան.— եթե մեղքս միայն այն է, որ բոշա եմ, ուրեմն բոլորս էլ մեղավոր ենք, որովհետև, ինչքան կամենաս չլինել, բայց դու էլ բոշա ես, այս մարդդ էլ, որդիներդ էլ։ Ուրեմն, եթե ես տղա փախցնող ու գող եմ, դուք էլ նույնն եք...

Հետո, լիովին հանդարտված՝ նստեց դարձյալ և դարձավ որդուն.

— Բայց,— ասաց նա չափելով նրան ոտքից մինչև գլուխը,— ասա տեսնենք, տղաս, գուցե դու էլ չես կամենում բոշա լինել, հը՞... դո՞ւ էլ այնպես ատում ես ցեղակիցներիդ, ինչպես կինդ ու որդիներդ...

— Ե՞ս...— թոթովեց Մարտոսը,— ինձ համար բոլորն էլ մեկ են. բոլորն էլ մարդիկ են...

Խաթ-Սաբան հեգնությամբ նայեց որդուն, ծիծաղեց նրա շփոթության վրա, հետո մեկեն դարձավ հարսին և ժպտուն՝ ասաց.

— Իրավ, հարս, մոռացա քեզ ասելու, որ ամուսինդ իմ որդին է, իմ հարազատ որդին. դու իմ հարսն ես և որդիներդ էլ՝ թոռներս... Ամենքդ էլ բոշաներ ու շատ մաքուր բոշաներ...

Իբր պատասխան դրան, թոռներից մեկը, որ պահվել էր մոր ետևը, հանկարծ գլուխը դուրս հանեց նրա թևի տակից, միջահատեց տատի խոսքը և գոռաց.

— Շո՛ւն բոշա...

Խաթ-Սաբան ցնցվեց և կծկվեց։ Կարծես մի մեծ քար էր գլխին ընկնողը։

Շշմելու վայրկյանը սոսկալի էր։ Հետո, երբ ընդհանուր քարացումն էր, ծանր, կքված՝ ոտքի ելավ նա, կնճռալից ու թախծոտ՝ առավ ցուպը, մոտ գնաց որդուն ու ասաց խստությամբ.

— Այդ դու ես դրանց սովորեցրել այդպես, չէ՞... դու և կինդ...

— Փողոցից, փողոցից...— կմկմաց որդին։

— Հայրիկ,— գոչեց այն կողմից երկրորդ որդին,— ես էլ ասե՞մ «շուն բոշա»...

Խաթ-Սաբան ավելի կքվեց կարծես ու դեպի մանուկը գնացող որդու թևը բռնեց։

— Ոչ, մի խփիր. ի՞նչ օգուտ ունի,— ասաց նա.— ոչինչ. ամենքը հայհոյում են մեզ, այժմ թող և մեր զավակները կրկնեն այդ հայհոյանքները...

Ապա շունչ առավ քիչ և ավելացրեց հանդարտ։

— Լսիր, որ ասեմ թե ինչու եկա... Մեր ցեղից, քո ազգականներից, կառավարությունը իզուր տեղ բռնել է տասը մարդ և բանտ դրել։ Հասան-Ղալայի բեգն է տնօրինողը։ Ասացին, որ դու մտերիմ ես նրան։ Չգիտեմ ինչպե՞ս, ինչո՞ւ, բայց մտերիմ ես մի այդպիսի գազանի... Ասա, չե՞ս կարող ազատել մերոնց... Քեզ խոսք եմ տալիս, որ այնուհետև այլևս երբեք չես լսի իմ կամ մերոնց մասին։ Մենք ռուսի հողը կգնանք... Արա, եթե կարող ես...

Մարտոսը պահ մի չպատասխանեց ու մտածեց։ Խաթ-Սաբան անձկությամբ նայում էր նրան և սպասում։

— Բարեկամ եմ բեգի հետ,— ասաց վերջապես որդին, բայց չեմ կարող... փող պետք է գործի մեջ մտցնել. ուրիշ կերպ անկարելի է... չի անի։

— Ուրիշ կերպ չի՞ լինի... Ասացին, որ կարող ես դու. բեգը քեզ շատ բանով է պարտական... եկամուտի աղբյուրներ ես տալիս նրան...

— Սո՛ւտ է... ես ոչինչ չեմ կարող և փող էլ չունիմ։

Խաթ-Սաբան գլուխը կրծքին խոնարհեցրեց պահ մի ու մնաց լուռ։ Քիչ հետո նա նայեց խստությամբ որդուն և ասաց բարկությամբ.

— Զգում էի, որ պիտի մերժեիր... Մնաս բարև ուրեմն. կա և մի ուրիշ միջոց, և դա գուցե ամենալավն է. լոմերը կդիմեն այդ միջոցին... բայց, սկսած քո մորից մինչև ետին լոմը անիծում է քեզ՝ լինի նա ազատ թե գերի։ Վախեցիր այդ անեծքից, որովհետև մորդ անեծքն էլ կա նրանց հետ խառն...

Ասաց, գլուխը խոնարհեցրեց և արագ քայլերով դուրս գնաց։

Գամփռը նայեց Մարտոսին, ատամները ցույց տվեց, մռմռաց և հետևեց տիրուհուն։

Ու Խաթ-Սաբան գնաց առանց ետ նայելու և անհետացավ փողոցների մեջ...

6

Դաշտում ետ մնացող բոշաներին հարկահանների խուզարկու զինվորները գտնել էին և բանտարկել Զանգեզուր։ Պատճառը հայտնի չէր։ Հրամայված էր բանտարկել թափառիկ և կասկածելի անձերի և նրանց բանտարկել էին։

Մյուս կողմում լեռներից դաշտ իջնել փորձող բոշաներին նույնպես բանում էին։

Բոշաները ստիպված էին բանջարներով կերակրվել, կրակ չվառել և գողիգող, ամեն րոպե սպասել փորձանքի։

Հեռանալ չէին ուզում. ընկերներին պետք էր նախ ազատել։

Եվ երբ եղած պաշարը մեկտեղ բերին ու հասարակաց դարձրին, ծերունիները մի գիշեր ժողով կազմեցին և Խաթ-Սաբայի վրանը մտան։

Խորհուրդը վերջացավ նրանով, որ Խաթ-Սաբան ցույը ձեռքն առավ, գամփռին սուլեց և ամենակարճ ճանապարհով գնաց Երզրում։

Գիտեր, որ մեծ որդին մտերիմ էր Հասան-Ղալայի բեգին։ Մտածեց յուրայիններին մի կերպ ազատել։

Խորհուրդը վճռել էր յուրայիններին բանտից մի կերպ հանել և իսկույն, մի գիշերվա մեջ՝ անցնել ռուսաց հողը։

Ուրիշ հնարք չկա։

Եվ երբ Խաթ-Սաբան որդուն խնդրելու անօգուտ փորձի համար Երզրում էր գնացել—Զիվինի մեջ լցված զինվորներից մի խումբ, պատահմամբ Զիվինի-տյուզը ելնելով՝ բոշաների տեղը երևան հանեց։

Խումբը շրջապատեց բոշաներին և իրենցից մեկին ուղարկեց դաշտ, Զանգեզուրում նստած բեգին իմացնելու, որ տուրքի նոր աղբյուրներ էին գտնված։

Մյուս առավոտյան Հասան-Ղալայի բեգը քսան զինված ձիավորներով Զիվինի հարթավայրը եկավ և իջավ ամենալավ վրանի տակ։

Բոշաները դողդողալով սպասում էին։ Կանայք չէին երևում, իսկ մանուկները խումբ առ խումբ թաքնված խոտերի մեջ և թփերի ետևը, պտտում էին լինելիքը։

Բեգը հրամայեց, որ ցեղի ծերունիները իր մոտ գան։

— Ո՞վ է ձեր ցեղապետը,— հարցրեց նա։

— Այստեղ չէ,— խոսեց մեկը.— նա Երզրում է գնացել։

— Ի՞նչ է անունը։

— Խաթ-Սաբա։

Բեգը նախ զարմացավ, հետո մի մեծ քրքիջ արձակեց։ Գրագիրն ու հետը եկած հարկահավաքն էլ պարտք համարեցին ծիծաղել։

— Այդ ի՞նչ այլանդակ անուն է,— գոչեց բեգը։

— Զարմանալի անուն,— վրա տվավ գրագիրը։

— Անասունի անուն է,— ավելացրեց հարկահավաքը. դրանց ցեղապետը կամ մի շուն կլինի և կամ էշ... Սրանք հայ-բոշաներ են։

Ու բոշաները կանգնած խմբովին՝ խոնարհաբար լսում էին այդ ամենը։

— Ապա՞...— ծիծաղեց բեգը և ճաշակեց կարագը, որ մի զափթին, մտրակի հարվածների շնորհիվ, գտել էր մի վրանից.— ապա՞, ասեք տեսնենք, ձեր ցեղապետը ի՞նչ տեսակ ջանավար է։

— Կին է,— ասաց ծերունին։

— Կի՞ն,— գոչեց բեգը կարմացած։

— Կի՞ն, առանց բեղերի՞, շրջազգեստով կի՞ն,— խոսեց գրագիրը և բերանը բաց մնաց։

— Հետաքրքիր է,— գիտեց հարկահավաքը։

Ու լռեցին, որովհետև բեգն էլ լռել՝ կարագ էր ուտում ու մի կողմից զննում բոշաներին։

Զինվորներն այդ միջոցին ձիերիցը իջել, ոտները կապել ու արածելու էին թողել վրանների առաջ։ Իրենք վրանից վրան մտնում և ուտելու բան էին որոնում։

Եվ երբ չգտան, ստիպված եղան իրենց պայուսակից հանել հաց ու պանիր և անոթի բոշաների առաջ նստել-ուտել։

Այդ միջոցին բեգը ամբողջովին զբաղված էր կարագով։ Ուտում էր և ասում.

— Համով կարագ է... Սրանց տավարները երևի շատ լավ կաթ՝ են ունենում։

— Ծաղիկ է կերածնին, էֆենդիմ,— նկատեց հարկահավաքը։

— Երևի բավական տավար կունենան,— մեջ մտավ գրագիրը... Նախ կովեր ու ոչխարներ։ Սա ոչխարի կարագ է։ Հետո՝ կունենան ձի, էշ կամ ջորի, վրաններ ունին և անշուշտ իրենք չեն այգքան բեռը տեղից-տեղ փոխադրողը...

Բեգը, կարծես զմայլմամբ, նայում էր իր գրագրին։

— Աֆֆերիմ, սիրելիս.— գոչեց նա.— հետո՞, հետո՞։

— Հետո, էֆենդիմ, կունենան նաև եզներ. ես այնտեղ, ցածում 2—3 այլ տեսա։

— Ապա՞, ի՞նչ կասեք սրան, բոշաներ.— դարձավ բեգը կանգնած ծերունիներին.— ավելի լավ է ճիշտը խոստովանեցեք, թե չէ՝ գրագիրս մեկ-մեկ կհաշվի ձեր բոլոր ունեցածը։

— Ճշմարիտ է, էֆենդի,— ասաց մի բոշա,— ունենք մոտ 20 ոչ-

խար, 5—6 կով, 6—7 ձի, հետո՝ էշեր, եղներ... բայց մեր ամբողջ նախիրը երեկ քշեցին տարան քյուրդերը...

Բեգի աչքերը փայլեցին։ Նա հարկահավաքին դարձավ ու ասաց.

— Սա քեզ վերաբերյալ բան չէ կարծեմ. կառավարության հաշվի մեջ չեն մտնում բոշաները...

Հետո գրագրին նայեց ու ժպտաց.— Իսկ դու, սիրելիս, սա մեր անձնական հաշվի հարցը դարձավ...— Գրիր այդ ամենը... Ուրեմն, 20 ոչխար, 6 կով...

— Բայց բեգ,— գոչեց բոշաներից մեկը.— այժմ ոչինչ չունինք. բոլորը տարան...

— Աստծու բանն է այդ...— խոսեց բեգը.— բայց ունեցել եք մինչև երեկ և նրանք կառավարության հողի վրա են արածել, ձեզ կերակրել են... Հաշվիր, գրագիր, 8 եզ...

— Ութ հատ չէին, բեգ,— ասաց նորից մի ծերունի բոշա,— և հետո, երկրագործության անասուններից հարկ չեն վերցնում...

— Դու լուռ կաց, քավթառ, և սպասիր որ քեզ խոսեցնեն... Մենք հիմար չենք և գիտենք, որ բոշաները չեն զբաղվում երկրագործությունով... Գրեցի՞ր, գրագիր...

— Լավ,— սկսեց քիչ-քիչ ոգևորվել բեգը և դարձավ բոշաներին.— ասացեք ճիշտը, անպիտաններ, քանի՞ անձ կա վրաններում, կին, երեխա և տղամարդ... ճիշտը ասեք, եթե չեք ուզում, որ զինվորներիս ձեր վրանների վրա բաց թողնեմ...

— Տասնութ տղամարդ ենք, բեգ,— պատասխանեց ծերունին. բայց 30-ից ավելի էին. մեզնից տասը հոգու ձեր հրամանով բռնել են դաշտում, իսկ երկուսին քյուրդերը սպանեցին։

— Ուրեմն 35 տղամարդ. իսկ կանա՞յք։

— Մոտ 20։

— Սուտ է, անիծյալ. 35 տղամարդ ունեցող խումբը 40-ից ավելի կանայք կունենա...

Ասաց և ոտքի ելավ։ Դեմքի վրա խաղում էր ինչ-որ չար ժպիտ։ Բեգը, երևի, նոր բան էր մտածել։

— Ահմեդ էֆենդի,— դարձավ նա գրագրին.— մենք հրամայում ենք ձեզ՝ առնել ձեզ հետ 5—6 զինվոր և այս ծայրից սկսած՝ մտնել բոլոր վրաններն ու ցուցակագրել բոլոր անձերին, կանանց, աղջիկներին... իսկ առայժմ,— դարձավ նա բոշաներին,— կորեք աչքիցս, և ամեն մարդ թող իր ընտանիքի մոտ գնա...

Բոշաները վրանի առջևից հեռացան։ Բեգը հրամայեց կանչել զինվորների հիսնապետին և մանրամասն պատվերներ տվավ նրան։

Հիսնապետը ծիծաղը դեմքին դուրս ելավ վրանից, և քիչ հետո զինվորները հրացան ի բուն՝ շղթայի նման շրջապատեցին վրաններն ու սկսեցին կամաց-կամաց շղթան սեղմել։

Եվ ահա ամեն ինչ խառնվեց միմյանց։ Այլևս հիսնապետը չկարողացավ իր ճիշերովը կարգուկանոն պահպանել։ Թալանի տենչը զինվորներին մղեց դեպի վրանները։

Ու սկսեցին տակն ու վրա անել նրանք ինչ որ գտան։ Ուղղակի մերկացնում էին տղամարդկանց, կանանց հագուստների մեջ էին սպրդեցնում իրենց կեղտոտ ձեռքերը և գարշելի ժպիտով ժպտում նրանց արձակած ճիշերի վրա...

Հարկատուն էլ իր գործն էր տեսնում։ Արձանագրում էր, որ հետո կեսը պահանջի գոնե։

Բոշաները սոսկումը կրծքերում փախչում էին այս-այն կողմ, զինվորների հրացանների կոթերից մղված, նորից ետ դալիս, մանուկների վայնասունը կանանց ճիշերի հետ՝ սարահարթ էր բռնել, իսկ բեգը կանգնել վրանի առաջ՝ ծիծաղում էր։

Գրագիրը ոչ միայն արձանագրում էր անձերին, այլև հրամայում էր դատարկել վրանները։

Սկսեցին դեզեր կազմել կաթսաներ, կապերտներ, բարձեր... Զինվորները կոպտաբար բռնում էին աղջիկներին, պոկոտում նրանց վրայից որևէ զարդ, որևէ լավ շոր, կոշիկ, թաշկինակ...

Մի զզվելի խառնուրդ, մի սոսկալի ու վայրենի խառնուրդ էր այն։

Մինչ այդ, գրագիրը, որ ուշադրությամբ զննում էր ամեն կնոջ դեմք, հանկարծ մոտ կանչեց երկու զինվորի, ցույց տվավ վրաններից մեկից դուրս ելնող մի աղջկա և ասաց.

— Բռնեք դրան և բեգի վրանը տարեք...

Ու զինվորները վազեցին դեպի աղջիկը։

Բայց երևի նրանք բոշա կնոջ ինչ լինելը չգիտեին դեռ։ Ենթադրում էին, որ հեշտ էր բռնել աղջկան։

Հանկարծ աղջիկը գլխի վրա պտտեցրեց ձեռքի ցուպը, ապա իջեցրեց երկու անգամ, և զինվորները օգնության աղաղակը բերաններին՝ փովեցին գետնին։

Այդ անակնկալը այնպես հանկարծակի բերավ ամենքին, որ մի րոպե կանգ առին թալանն ու հետապնդումները։ Բոլոր զինվորները սառած մնացին, գրագիրը գունատվեց և բնազդաբար ետ-ետ քաշվեց։

Մինչ այդ, աղջիկը, որ մի գեղեցիկ մատղաշ արարած էր, ժողովեց փեշերը, գունդ արավ մեջքի շուրջը, թևերը սոթտեց և գոչեց վրանների առաջ կիտված բոշաներին.

— Էյ, լոմեր, կոտորվեք դուք ու անիծվեք ձեր ամբողջ սերունդով, որ ոչխարների նման թույլ եք տալիս մորթեն ձեզ այս անիրավները... Իմ պապ Լոմ-Հասանը վկա, եթե տատս այստեղ լիներ, առաջ ձեր գլուխները կչարդեր, այդ խոնարհ գլուխները...

Խոսում էր նա բոշայերեն։ Ո՛չ գրագիրը, ո՛չ բեգը և ո՛չ զինվորներն էին հասկանում, բայց ամենքն էլ լուռ ու հմայված էին կարծես աղջկա բոցափայլ աչքերից։

Բեգը ուղղակի բերանը բաց՝ հիացած մնացել էր։ Եվ երբ հիսնապետը շարժում գործեց առաջ գնալու, բռնեց նրա թևն ու ասաց.

— Ոչ, սպասիր, թող ոչ ոք չդիպչի դրան։ Դա իմն է. սարի այդ մարալը իմ որսն է և ուզում եմ դեռ որ խոսի...

— Կտրիր ձայնդ, լիրբ քաֆտառ,— դարձավ նրան աղջիկը միջոց բոշայերեն.— եթե մերոնք մարդ լիներին, դու այժմ մեր կոխած տեղը պիտի համբուրեիր։

Բեգը մոտենում էր։

— Ո՞վ ես դու, սիրուն աղջիկ,— ասաց նա քաղցրությամբ. մի բարկանա, քեզ ոչ ոք վնաս չի հասցնի։

— Մեր ցեղապետի թոռն է,— ասաց նրան ավելի մոտ կանգնած մի բոշա.— նա թուրքերեն չգիտե։

— Ասա նրան, բոշա, որ, եթե համաձայնվի ինձ մոտ գալ, ես նրան թագուհու պես կպահեմ...

Եվ երբ բոշան թարգմանել էր այդ, աղջիկը մի քայլ մոտեցավ դեպի բեգը և հանկարծ թքեց դեպի նա։

Բեգը ցնցվեց ու ձեռքով արավ հիսնապետին։

Զինվորները մոտ գնացին։ Աղջիկը բարձրացրեց ցուպն ու ետ-ետ քաշվեց...

Սկսեց հետապնդում։ Աղջիկը մեջքը դարձրեց ու սկսեց փախչել։ զինվորները ետևից ընկան։

Ու բոշաները, որոնք ականատես էին այդ ամենին, խմբված սկսեցին հուզմամբ խոսել միմյանց հետ։

Հանկարծ սարահարթի վերի կողմից լսվեց մի երկար աղաղակ և ժայռի մոտ հայտնվեց մի երկար հասակ։

Ամենքը դեպի այն կողմը դարձան։

— Խաթ-Սաբան...— գոռացին բոշաները։

Կանայք անմիջապես կորզեցին իրենց ցուպերը, տղամարդիկ վարկենապես զինվեցին ինչով որ կարողացան...

Եվ վերջալույսի այդ պահին, սարահարթի վրա իջնող մթության մեջ, հրացաններով զինված, բայց իսկապես իրենց կյանքի համար զոհ-

զացող զինվորների դեմ, կարծես կախարդությամբ, Երևան եկավ մի տարօրինակ կռվող խումբ։

Խումբի առջևը նախ կանգնած էր մի երկարահասակ միակնյա պառավ կին, կողքին հրաշալի գեղեցկությունով աղջիկ։

Երկուսի ձեռքին էլ սպառնալից ճոճում էին երկար, ամուր ցուպեր։

Նրանց ետևում շարված էին կատաղի դեմքերով, էգ առյուծներու նման պատրաստ ոստնելու՝ 30—40 կանայք, նույնպես զինված մեծ, խոշոր, յուրաքանչյուր հարվածը մահաբեր դարձնող մահակներով։

Եվ վերջապես, որպես վերջապահներ երևում էին տղամարդիկ՝ որոնց ձեռքին փայլում էր և բահ, և լծակ և նույնիսկ տապարներ։

Ու երբ մութը կոխում էր լեռներից, սև մշուշն իջնում էր սարահարթի կողերից ու ծածկում շրջակայքը, լսվեց Խաթ-Սաբայի խոպոտ ձայնը, որ ասում էր յուրայիններին.

— Միևնույնն է, լոմեր. այլևս ոչ մի տեղից օգնության հույս չկա։ Թող մեկը գնա մեր տավարները պահողների մոտ և պատվիրի անցկացնելու նախիրը. դեպի ռուսի հողը... Իսկ մենք, ժողովենք մեր վերջին ճիգը, թողենք այս հողի վրա մեր վրանները և աղատենք մեզ անպատվությունից, խայտառակությունից... Ով սիրում է իր պատիվը, թող մեզ նել գիտենա...

* * *

...Սրանից տարիներ առաջ մի ճանապարհորդ, որ շրջում էր սահմանագլխի կողմերում, մի գիշեր հյուրընկալվեց մի բլրակի գլխին գտնվող հայ բոշաների վրաններում։

Որովհետև ամառ էր և ցածում խոտը պակասել էր տավարներին, հայ բոշաները ելել էին գյուղից և 30-ի չափ վրաններ թողել սարի գագաթին։

Ու այնտեղ ճանապարհորդին կերցրին, հետո, երբ մթնեց, հրավիրեցին գյուղապետի վրանի առաջ, ուր սովորություն ունեին բոշաները ամեն երեկո հավաքվել, նվագել, պատմություն ու հեքիաթ պատմել և զվարճանալ։

Այնտեղ շրջան էին կազմել արդեն ամենքը և լսել էին պատրաստվում պատմիչին։

Փչում էր մի զով քամի։ Երկինքը պարզ էր, և լուսինը պայծառ լուսավորում էր։ Հեռվում, տավարների պահապանները շվշվացնում էին երբեմն, և շները մեկ-մեկ հաչոցներով խանգարում էին լեռնային շքեղ լռությունը։

Պատմիչը հազաց, ծխեց վերջին անգամ չիբուխն ու սկսել կամեցավ, բայց գյուղապետը ասաց.

— Մելիք, ի՞նչ ես պատմելու այսօր։

— «Փիր»-ի պատմությունը։

— Հա՞... լավ էլ կանես։ Մարդ որքան լսում է. չի կշտանում։

Ու բոշան պատմում էր։

«— Այնտեղ, մեր ետևի լեռներից հեռու, Զիվինի լեռնաշղթայի վերջին գագաթի լանջին, կա մի վայրենի վարդենու մեծ թուփ, որ տարին մի անգամ տալիս է բազմաթիվ սպիտակ անուշահոտ վարդեր, բայց ճյուղերը ավելի թանկագին և ավելի լավ վարդերով են զարդարված...

Յուրաքանչյուր լոմ թփի մոտով անցնելիս՝ պահ մի նստում է նրա հովանու տակ, ապա, կտրում է իր հագուստից, իր սրտից ու զգացմունքներից մի կտոր, կապում թփի ճյուղերին, աղոթում է և հեռանում։

«Փիր»-ի գերեզմանն է այդ. լոմերի սուրբի շիրիմը։

Այնտեղ է, որ թաղվել է մի կին, մի քաջ կին։ Եվ յուրաքանչյուր լոմ, երբ պատահում է նրա վրա դիզած քարակույտին և կամ հեռվից տեսնում է գերեզմանի վրա բուսած թուփը—անշուշտ հիշում է լոմերի քաջ ցեղապետուհուն, անմահ Խաթ-Սաբային։

...Հեռու, Իրանի հողից էր եկել Լոմ-Հասանը։ Եկել ու իր կյանքը մթացրել էր քաջ Խաթ-Սաբային։ Ու երբ մեռել էր, կնոջն էր հանձնել լոմերի կառավարությունը։

Եվ Խաթ-Սաբան քսան անգամ ազատել էր իր ցեղը կորստից, քսան անգամ աշխատել էր հանել նրանց թափառականությունից ու քսան անգամ առյուծի նման՝ պաշտպանել էր իր կորյուններին...

Ու ճակատագիրը հանգիստ չթողեց լոմերին ոչ մի տարի և ոչ մի օր։

Խաթ-Սաբան կորցրեց որդիներին, կորցրեց ամեն ինչ, բայց չկամեցավ թողնել ոչնչացնելու իր ցեղին, չկամեցավ արատավորելու թույլ տալ լոմերի նամուսը։

...Մի վերջին անգամ նա գլուխ անցավ մի բուռ քաջերի, կռվելով աշխատեց հեռանալ դժբախտ երկրից, լեռների այն կողմից և անցնել ու անցկացնել յուրայիններին այս կողմը։

Զորքը, կողոպտող ու վատ բեգը ընկան նրա ետևից։

Խաթ-Սաբան կռվելով բարձրացավ լեռները։

Եվ երբ Զիվինի գլուխը, վերջին գագաթին էր հասել, ճանապարհին թողել էր նա իր խումբից շատերին, սակայն և ջնջել էր հետապնդող զորքի մեծ մասին։

Ու խումբը գիշերել էր Զիվինի գլխին։

Խաթ-Սաբան տխուր էր, տխուր. զգում էր, որ դուշմն այլևս չպիտի տեսնի։ Գիշերը երազ էր տեսել. որ Լոմ-Հասանը կանչում էր նրան։

Եվ զգաց, որ մեռնելու էր։ Կանչեց թոռանը, բռնեց նրա ձեռքը, օրհնեց ու ասաց.

— Հող ունենանք, որդիներս...

Կանչեց լոմերին, խրատեց նրանց ու ասաց.

— Հող ունեցեք, զավակներս. ձեր փրկության միակ միջոցը հողն է...

Գիշերը հանկարծ զորքերը պաշարեցին հոգնած ու անոթի լոմերի խմբին։

Խաթ-Սաբան առավ իր ցուպը և մի վերջին անգամն ևս իր շուրջը դիակներ փռեց։

Ու երբ զորքը փախչում էր. լոմերը անցնում էին ուսմանը, Խաթ-Սաբան վերք ստացած կրծքից մեռնում էր։

Կես-գիշերին Խաթ-Սաբան նորից մոտ կանչեց բոլոր լոմերին, բարձրացավ, օրհնեց ու ասաց կրկին.

— Հող ունեցեք...

Եվ մեռավ։

Լոմերը թաղեցին նրան այդտեղ ու վարդենու մի թուփ տնկեցին նրա քարակույտի մոտ։

Ապա իրենց հագուստներից կտրեցին, կապեցին լոմերը վարդենու թփին, լացին հերոսուհու վրա և գնացին...

Անցան տարիներ։ Խաթ-Սաբայի յուրաքանչյուր քաջությունը մի-մի հեքիաթ է լոմերի համար։

Կպատմի ձեզ նրանցից իմ որդին էլ, կպատմի և թոռը. կպատմի յուրաքանչյուր լոմ։

Նրա գովեստը կերգեմ ես ձեզ, կերգի լոմ մանուկը, կերգեն և քարերը։

Իսկ այժմ կերգի նրան Մարգոն, կլսեն լոմերը և կպարծենան։

Կլսեմ և ես, ձեր ծերունի պատմիչը. կլսեմ և կուրախանամ...»։

...Ու երբ պատմիչը լռեց, Մարգոն, որ մի լավ ձայն ուներ, կոկորդը մաքրեց։

Փչում էր զով քամին, փայլում էր լուսինը, հովիվը պլպլացնում էր իր չիբուխի կրակը, հեռվում՝ խոխոջում էր գետակը։

Եվ երգում էր Մարգոն, երգում քաղցրաձայն.

Զիվինի թուփ, ղուրան վարդիդ,
Ո՞վ կհասնի քո փառքիդ...

Ապա դեմքը դարձնում էր դեպի Զիվինի հեռավոր գագաթներն ու ավելացնում ոգևորությամբ.

Զիվինի թուփ, ղուրբան վարդիդ,
Ղուրբան Փիրին ծածկող հողիդ...

ԸՄԲՈՍՏ ԵՐԳԵՐ

Ո՞վ է այնտեղ—այդ զորեղ ոգին, որ մերկ ու միայնակ, մրրկում է լեռների գագաթների վրա։ Գլխով մշուշն է հալածում, քրքիջով բուերի ձայներ խլացնում և բարձրաբերձ՝ ճահճոտ անտառների գիշերության մեջ կառուցած արվեստականության դեմ՝ ջրեր է հայուցանում։

Ո՞վ է այնտեղ—այդ նոր հսկան, որ մերկ է անամոթության չափ և անդիմակ՝ ցինիկի հանդգնությամբ։

Որ անկաշկանդ՝ անտառի շարժումը պրկող բաղեղներից, ոչ մի գարշապարի առաջ չի խոնարհեցնում իր թռիչքն ու իմաստությունը։

Միայնակ ու մերկ է նա, որպես ազատ իմաստությունն իր խոհերով։ Հանգչում է բարձրությունների մեջ և քրքջում ճահիճների խորքում սնվող կանաչ աղտոտությունների վրա։

Նրա զբոսանքն է՝ ծաղր կարկտել փշերի գլխին, հեգնություն տեղալ վայելչության աստծո վրա և իմաստության խանդով մերկացնել ամե՛ն հագնվածի։

Նրա խոսքերը լծակի պես դարձնում են դարևոր ժայռեր և տակի խոնավ գիշերությունը արևին պարզում։ Նրա իմաստությունը անգութ է և խիստ, որպես անխնա ավերիչ դարևոր հնությունների։

Նվիրականության հոտը նրան չի՛ բորբոսեցնում. ավանդականության օձը նրա ոտների տակն է, և հնամյա բարոյական վիշապը սողունի պես գալարվում է նրա առաջ։

Սավառնում է նա տիեզերքի տարածության մեջ անսահման առաջ. նրա շրթունքներից հոսող ջերմությունը հալեցնում է անշարժ ժայռեր։

Փոքր է նա, որպես հեռվից երևցող աստղ. կիզիչ է՝ որպես էլեկտրական հոսանք։ Նրա խոհերը շանթի նման իջնում են դաշտերի վրա, մոխիր դարձնում ճահիճներ, ընթացք տալիս ծովերի։

Ոլորապտույտ մրրիկի պես շարժում է նա անապատի ավազը. նոր բլուրներ ու բարձրություններ կազմում, նոր հասկացողություններով

ջարգո՛ւմ է հների գլուխը և նո՛ր կշիռներ դնում հրապարակների վրա։

Լեռների անոսր բարձունքների, երկնքին ձգտող ըմբոստ ոգու երգե՛րը լսեցեք...

* * *

...Երբ թափառում էի անտառի մեջ, ոտներս ճահիճների տիղմից ծանրացել էին և հոգիս գարշ օդից բթացել—ըմբոստ ոգին, միայնության ու դառնությունների խոհերից ծնած, թափանցեց սրտիս մեջ, խլե՛ց ուղեղս պրկող պատուտակները, և ես գնացի նրա ետևից։

Եվ մարդիկ ասացին. «Խենթացա՛վ»...

Խելոք էի ես ճահիճի մեջ, երբ նախիրային և քառակուսի էր ուղեղս և տիղմով կաղապարած։ Խելո՛ք էի ոչխարի պես, հնազանդ՝ որպես գով և համեստ՝ որպես գրաստ։

Բեռնաբարձ սայլ էին դարձրել ուղեղս և ծանրացրել պարտավորությունների ժանգոտ շղթաներով։

Ըմբոստ ոգին՝ բարձրությունների մերկ հսկան, խլեց ինձ և «խենթացրեց» խոհերս։

Եվ ես աշակերտ եղա ըմբոստ ոգուն։

— Խոսի՛ր, վարպետ։ Ծարավի՛ եմ վճիտ և բնական ջրերի, որ դեռ ո՛չ մի ավազանի մեջ չի սեղմած ու պղտորած և խողովակներում չի կաղապարած։

Խոսի՛ր, ըմբոստ ոգի։

Ու ոգին տարավ ինձ բարձր՝ ամեն ճահիճից, ամեն անտառից, և երբ տարտղնած նախիրն էի դիտում, նստեցրեց մի բարձր կատարի վրա և խոսեց այսպես.

— Ե՛ս եմ ձեզ հետ խոսողը— լեռների վրա սավառնող, ամպերի բարձրությանը և գիտակցության կրակը գողանալու ձգտող՝ ըմբոստ ոգին։

Եվ ձե՛զ հետ եմ խոսում, գծո՛ւծ որսորդներ, որ վար իջեցրիք ժայռի կատարի վրա եկած արծվին իր ձագերով և նրանցից խրտվիլակներ շինեցիք ձեր աղտոտ պալատների զարդարանքի համար։

Ձե՛զ հետ եմ խոսում, փոքրագույն մասի վրա ցեխ շպրտող որսորդներ, որ արծվային խոհերը գողանալով՝ ձեր խոհանոցը իջեցրիք և նրանով միայն ձեր ստամոքսը պարարող կրակն եք արծարծում։

Ձե՛զ հետ եմ խոսում, գույների՝ սիրահարներ, որ ժողովրդյան մեծ ձգտումները ներկի փոխեցիք և շպարած ձեր աղտոտ դեմքերը, իջեցրիք ձգտումների նժարն ու հաստատեցիք ձեր կազմած ճահիճների տիղմի մեջ։

Դուք կարողացաք, այո՛, արծվին վար տանել, նաև իր ձագերին. բայց այստեղ՝ բարձրում, ըմբոստ ոգին թաքցրել է մի ձագն ևս, որ մեծացած՝ փորձե՛ պիտի ձեր ուղեղը, կրծե ձեր աչքերը և խարանե ձեր դեմքը։

Դուք կարողացաք, այո՛, ժողովրդյան խոհերի նժարը գծուծ դարձնելով՝ տիզմի մե հաստատել իրեն՝ ժողովրդին՝ նախիրի փոխել. բայց ըմբոստ ոգին պահել է նրա խոհերից կռած երկժանին, որ շիկացնելով՝ մղե պիտի ձեր բորբոսնած սիրտը և ձեր շահամոլ ձեռքերը գամե ձեր խաբեբա լեզվին։

Դուք կարողացաք, այո՛, վսեմ թռիչքները խաբեությամբ ձեր խոհանոցը իջեցնել և ցայտած կայծերով ձեր կերակուրը միայն պատրաստել. բայց ըմբոստ ոգին խնամել է այդ կայծերից մեկը, որ բոցավառված, մրկե պիտի ձեր բոլոր խոհանոցները և շների կերակուրը դարձնե ձեր ճարպացած ստամոքսը։

Բերո՛ւմ եմ ահա արծվի ձագը, որ մեծացել է արդեն՝ տառապողների արցունքն ուտելով։

Բերո՛ւմ եմ վսեմ խոհերից կռած երկժանին, որ շիկացել է արդեն նահատակների տանջանքներով։

Բերո՛ւմ եմ նաև ազատ մնացող ա՛յն կայծը, որ բոցավառվել է արդեն՝ ձեր խաբեության ու գծուծության պատճառած վշտերով։

Գալի՛ս է նա՝ արծվի ձագը, շիկացած երկժանին, ազատ մնացող կայծը՝ մղված ըմբոստ ոգուց։

Ճանապա՛րհ նրան։ Անցնելու է նա ձե՛զ վրա կոխելով, ձեր խոհանոցները փլեցնելով, ձեր կաղապարած բարոյականությունը ոտնակոխ անելով և ձեզ անխնա՛ ոչնչացնելով։

* * *

Իսկ այժմ, ուզում եմ և քե՛զ ապտակել, արածո՛ղ նախիր։ Մի հսկա, կրակ հանող ապտակով ուզում եմ խարան դնել քո՝ գետնին քսվող դեմքի վրա։

Ուզում եմ, որ այդ ապտակը ջարդի՛ կամ փոխի՛ քո ստորաքարշ դեմքը, որ այլևս կարմրել չգիտե, արածո՛ղ նախիր։

Ուզում եմ շանթ լինել և քո սիրտը բովել, այդ ցեխի կույտ դարձած սիրտը, որ միայն ազատություն է մղում դեպի քո երակները, արածո՛ղ նախիր։

Եվ այդ բոլորը անելուց հետո՝ ուզում եմ լալ և արտասվել քո անկման վրա, արածո՛ղ նախիր։

Ավերա՛կ ես եղել, ճահի՛ճ ես դարձել։ Ավերակիդ և գարշիդ մեջ լողում ես սողունի նման և հանգիստ զգում քեզ։

Իմ ապտակը թող կարմրեցնի՛ քեզ, գա՛ղջ մթնոլորտով սնանվող նախիր։ Իմ ապտակը թող կարմրեցնի՛ քեզ, անամոթության սովոր գունատ դեղնություն։

Որպեսզի արոտ ունենաս՝ ստրկության մեջ հանգչում ես, որպես փափուկ անկողնի վրա, արածո՛ղ նախիր։ Քո խոհերը նույնքան գարշելի են, որպես ոտներիդ կայան՝ հողը։ Զգտումներդ նույնքան բարձր են, որքան ջրի տակ իջնող աղտոտ տիղմը։

Եվ դու գոհ ես, արածո՛ղ նախիր։ Գոհ՝ քո մղումներով, գոհ՝ քո երկար աղիքով և գոհ՝ քո չորս ոտներով։

Դու գլուխդ երբե՛ք չես բարձրացնում։ Ու ինչ որ բարձրում. գըլխիդ վրա պիտի որոնել, ցած ես բերում ու ցեխոտ սմբակներիդ հարմարեցնում։ Ճահճիդ մեջ ես տեսնում աստղերդ, տիզմիդ մեջ՝ քո տարածությունը։

Պարտականություններ ես սահմանել քեզ՝ շրջապատող եղեգների ձայներից, եղջյուրներդ միմյանց դեմ ես դարձրել, միմյանցով արնոտել։

Ուզում եմ քեզ ապտակել, արածո՛ղ նախիր. խարան դնել քո ստորաքարշ դեմքի վրա։

Ահա՛ իմ շանթերը. թող խրվեն նոքա սրտիդ մեջ և թող ըմբոստ ոգին շարժե քո ճահիճը, խանձե քո արոտը և ոչինչ չթողնե քեզ՝ քո անցյալ սնունդից։

* * *

Բարձրացրու դեմքդ, արածո՛ղ նախիր, և երբեք ինքդ քեզ մի ասի՝ «ես պարտավոր եմ», այլ միմիայն՝ «ես ուզում եմ»։

Պարտականությունը մի ախոռ է, ուր էշեր են կապում կամ արածող և մորթելու սահմանած նախիր կուտակում։ Ո՛չ առյուծը կարող է ապրել այդ ախոռում և ո՛չ արծիվը։

Ցանկացիր անապատ, բայց երբեք այդ ախոռը։

Պարտականությունը այն գերեզմանն է, ուր հոտում է ազատություն, սեր և այլ բարձր հատկություններ... Ըմբոստո՞ւմ ես դու, արածո՛ղ նախիր, թե՞ գուցե ճահճային հասկացողությամբ պիտի մեկնես իմ ապտակը։

Պարտականությունը մի ջրաղաց է, խոնարհա՛ծ գլուխ, ուր փոշի են դառնում ձեռներեցության և անկախության ոգին... Ըմբոստո՞ւմ ես դու, տափակա՛ծ ուղեղ։

Պարտականությունը այն ստորացուցիչ նշավակի թեն է, որ առաքինություն է կոչվել և որին գամում ու նշավակում են ինչ որ մեծ է, ինչ որ վսեմ է։

Իմ ապտակը աքցան թող լինի և կորզի քեզ նշավակության անիվի վրայից։ Իմ ապտակը թող մերկացնի այն խեղկատակ դիմակը, որով քո հովիվները ծածկել են Մեդուզայի զզվելի գլուխը։

Ահա՛ իմ ապտակը։

* * *

Ահա՛ իմ հսկա ապտակը, իմ աքցանը, իմ ջնջոցը...

Ի՞նչն է, որ կոչվել է առաքինություն։

— «Եղիր խոնարհ, համեստ, բարի, համբերող։ Եղիր սիրալիր, երկայնամիտ՝ և դու առաքինի ես»— Այդպես են խրատում քեզ. և ո՛չ ոք չի եղել, որ ապտակելով քեզ՝ այդ բառերի բուն գործադրությունը պարզե քո առաջ։

Իսկ ես ասում եմ. «Կտրեցեք այդ առաքինության հրեշավոր գլուխը, շատ հաստացել է նա. կտրեցեք ոտները—շատ երկարացել է ու ծռմռվել... Կտրեցեք անխնա։

Եղեք հպարտ, հանդուգն, եղեք նույնիսկ չար, բարկացող, խիստ և կովարար...»։

Ըմբռնո՞ւմ ես դու, արածո՛ղ նախիր, թե՞ ճահճային հասկացությամբ պիտի մեկնես ապտակս։

* * *

— «Եղիր համեստ»,— ասում են քեզ։ Եվ համեստությունը խոնարհություն ես հասկացել ու ստրուկ դարձել։ Քեզ ոչինչ վստահել չի՛ կարելի, ստրուկ-խոնարհ։ Եվ դու գլուխդ քարշ, արածում ես միայն և աստղերդ ճահճի մեջ երազում։

— «Եղիր խոնարհ»,— ասում են քեզ։ Եվ խոնարհությունը անճարակություն ես հասկացել. և եղել ես անշնորհ, անճարակ և ապուշ։ Քեզ խղճացել են միայն, թշվառական անմիտ։ Եվ դու գլուխդ քարշ, կրել ես ամեն նախատինք, ամենի իշու բեռ և յուրաքանչյուր քայլդ վարանել ես դնելու։

— «Եղիր բարի»,— ասում են քեզ։ Եվ մեջքիդ բարձել են ամեն աղտոտություն, սրտիդ դրոշմել ամեն գծուծություն։ Տվել ես ամեն ունեցածդ և ինքդ մնացել ձեռնունայն. այժմ մուրում ես։

— «Եղիր համբերող»,— ասում են քեզ։ Եվ համբերատարությունը

հասցրել ես համակերպության։ Բարձել են սրտիդ, ուղեղիդ վրա ճզմող, փոշիացնող առաքինություններ։ Եղել ես արյունոտ մտրակ քո իսկ մեջքի վրա. մտրակում ես թմրեցնելու չափ քո իսկ մկանունքը, փոխում քեզ տձև ցեխի, և ամեն անցորդ իր սմբակներով ոտնակոխ է անում քեզ։

— «Եղիր երկայնամիտ»,— ասում են քեզ։ Եվ քո միտքը այնքա՜ն երկարացրել ես, որ թույլ սողունի նման՝ հողի և փոշու մեջ է ծածկվում. երկար մտքովդ կաշկանդել ես սիրտդ և գոհ ես անշարժությունովդ։

Եկել եմ ահա։ Կրակոչ պիտի մրկեմ-կարճացնեմ երկայնամտությունդ, խոհերովս տրորեմ խոնարհած ճակատդ, թքեմ պիտի կորացած սրտիդ վրա, ըմբոստ ոգովս դարբնեմ-ուղղեմ համբերատար ու ծռված ողնաշարդ, արածո՛ղ նախիր։

Եթե ընդունակ չես ազատվել քեզ ճզմող առաքինություններից, եթե չես կարող կտրել ականջներդ, փորել արտասուքի աղբյուրներդ—ոչնչացիր իմ կրակով, և մոխրիդ միջից կծնի այն նոր սերունդը, որ կարող պիտի լինի ծաղրել ամեն կաղապարային առաքինություն։

* * *

Սիրում եմ ես կռիվը։ Սիրում եմ կովարարին, սիրում երկար և ամուր եղջյուրները դեմ տվող խոյին, ծվատող, պատառոտող հովազին, նույնի՛սկ ճանկռտող, ճչացող կապիկին, բայց երբեք լուռումունջ արածող ոչխարին։

Սիրում եմ նրան, ով անգոհ է, անվարվեցող, ով ըմբոստ է և հոխորտ, ով խայթող է և բռունցքն երկաթի։

Սիրում եմ ես նրան, ով հոսանքի դեմ է լողում, հոսանքն ի վեր գնում՝ ջարդվելով ալիքների դեմ։

Եվ այդ պատճառով՝ սիրում եմ կնճռոտ դեմքեր, սիրում խայթիչ լեզուն, սիրում ճիրաններ և լարված նետեր։

Եվ այդ պատճառով՝ թքում եմ ձեր երանավետ դեմքին, ձեր խաղաղ բարքի, հեզ բնավորության և համակերպող բարության վրա։

Եվ այդ պատճառով՝ գարշում եմ, երբ լալիս ես՝ փոխանակ կատաղելու, կծկվում ես՝ փոխանակ լարվելու, ծալվում ես՝ փոխանակ ծալելու, և միշտ, զզվացնելու չափ միշտ հառաչում՝ փոխանակ փրփրալու...

Ցույց եմ տալիս քեզ ահա՛ այդ գետակը, որ փորում է ամեն բան և ճանապարհ կորզում, որ փրփուրներով մաշում է կոշտ ժայռեր, ուտում է նրանց կուրծքը, պայթում նրանց գլխի վրա, ոտնատակ տալիս մացառ ու քար և չի՛ կամենում լճանալ-հոտել, իջնել-արտասվել։

Ցույց եմ տալիս նույնպես ահա՛ այն քծնող շանը, որ անոթի չմնալու համար՝ շարժում է պոչը, տիրոջ նշանի վրա՝ ազատ ընկերին խածնում, կաղկանձում է ամեն կիցի տակ, մեջքի վրա պառկած՝ դողում է ամեն սպառնալիքի առաջ և գնում սատկելու ամենից մոռացված՝ որջի մութ անկյունում։

* * *

Եղի՛ր լուրված նետ, արածո՛ղ նախիր. արտասուքդ թույն շինիր, սիրտդ նետ և սլացիր ամեն ուղղությամբ։

Եղի՛ր խոյ, արածո՛ղ նախիր. եղջյուրներդ սրիր ոտներովդ, կընճռիր դեմքդ. կնճռիր, բայց մի հուսահատվիր։

Այդպե՛ս միայն կարող ես խցել արտասուքիդ աղբյուրը, բռունցք շինել մուրացող ձեռքդ, սրել տափակ ատամներդ։

Այդպե՛ս միայն կարող ես ճահիճդ լեռ դարձնել, աստղերդ իր տեղը հանել և չորս ոտքդ՝ երկուսի փոխել։

Այդպե՛ս միայն կարող ես կարճացնել ականջներդ, կտրել առաքինության հաստացած գլուխը և փակել պարտականության ախոռի դուռը...

* * *

Երգեց ըմբոստ ոգին իր այդ երգերը, դարձավ ապա դեպի ինձ և ասաց այսպես.

— Այս երգերը չեն ճահճային հասկացողությունների կամ ժողովրդյան ձգտումների նժարն իջեցնող՝ գծուծ որսորդների համար։

Եթե վատ հնչեցին նրանք քո ականջին—վար իջիր ուրեմն դարձյալ դեպի արոտը—ահա՛ նախիրը և ահա՛ որսորդների աղտոտ խոհանոցները։ Իջիր, մտիր ուրեմն այդ փոքրագույն մասի վրա ցեխ շպրտող որսորդների շարքը։

Ըմբոստ ոգին կանգ չի առնում և ոչ էլ կլռի. նա երբեք չի կասում։ Վաղ թե ուշ այդ բոլորին նա կամուրջ կդարձնի իր խոհերի համար և նրա վրայից ձեռք կտա այն փոքրագույն մասին, որ հառաջընթացն է լինելու բարձունքների և մաքուր օդի ձգտող սերնդյան։

Եթե խորթ հնչեցին երգերը քո ականջին, խլացիր ուրեմն կաղապարային առաքինությունների փքուն աղաղակներով, մտի՛ր պարտականությունների ախոռը և համբուրիր մտրակի կոթը։

Ըմբոստ ոգին կանգ չի առնում և ոչ էլ լռում. նա երբեք չի վարանում։ Վաղ թե ուշ՝ կլայնացնի նա բոլոր նեղ դռները և նրա միջով կանցկացնի իր պատրաստ սերնդյան հսկա որդիները...

* * *

Ժողովրդական նախապաշարմունքներին և ամբոխային անարգ բնազդներին ծառայող դուք տխմար հովիվներ, ես եմ դարձյալ խոսողը ձեզ հետ,— լեռների վրա սավառնող, ամպերի բարձրության և գիտակցության կրակը գողանալու ձգտող—ըմբոստ ոգին։

Ես ձեզ հետ եմ խոսում, գծուծ նախրորդներ, որ «ժողովրդյան շահերին ծառայողների» բարեպաշտ ժպիտներ հագած՝ խուսափում եք մերկ ճշմարտությունից, որպես բուն՝ շլացնող լույսից։

Կուրացրին ձեզ իմ նետած ճառագայթները։ Ժայթքածս կրակը մրրկեց ու այրեց բոլոր ձեր կշիռները, որոնց մեջ աղտոտվում էին մարդկային ոգու ըմբոստացումները։

Ասո՛ւմ եմ ձեզ ահա. «Նա՛ է միայն ծառայում ճշմարտության, ով ատելի է ամբոխին»։

Ասում եմ ձեզ ահա. «Նա է միայն ճշմարիտ առաքինին, ով անխնա կտրտում է ձեր կաղապարային առաքինությունների դլուխը և խլում ձեր կոշտ ձեռքերից՝ ժողովրդյան խոհերի կշիռը, ջարդում բոլոր ձեր փտած տախտակները»։

Եվ ահա այդ պատճառով, բերում եմ ձեզ դարձյալ արծվի ձագը, շիկացած երկժանին, ազատ մնացող կայծը, որ անցնեն նրանք սուրալով, կոխոտեն ձեր բորբոսնած բարոյականությունը, ձաղկեն ձեր քարոզած պարտականությունները։

Եվ ահա այդ պատճառով, գալիս եմ դարձյալ խարանելու ձեր ճակատը և խլացնելու ձեր սողունային պաղատանքները։

* * *

Ծամածռեցիք ասածներս. «ժողովրդի մեծ բարկություններ» կոչելով ձեզ՝ գլխիվայր հնչեցրիք երգերս ամեն կողմ. հասկացաք ասածներս, բայց չկամեցաք հասկացնել ամբոխին և ծաղրի տվիք ըմբոստ ոգու սեգ կոչերը։

Բայց ոգին, որին ծաղրեցիք, խոհերը արյունով ներկեց, տանջանքի ու վշտի խանդով տոգորեց և այժմ ահա ժայթքում է նրանց, կրակ դնում ձեր ծամածռող դեմքերի վրա և արյունոտելու գալիս ձեր աղոթք մրմնջող շրթունքները։

Երբ միտքը վճռում է անցնել պատվարներ—նա չի՛ խորհում վախենալու որևէ սահմանապահ պաշտոնյայից։

Անցնում է նա ամեն պատվար, անցնում համարձակ։ Մտքի ազատությունը հաշտ չի՛ ապրում պատվարի և ստամոքսի հետ։

Երբ միտքը առյուծ դառնալ է երազում—նա չի՛ մտածում, թե ի՞նչ կկարծեն ոչխար լսողները։ Ազատ ու լայն բացվող թևերը հաշտ չեն ապրում խոհանոցային շրջափակների հետ։ Չի՛ կարելի շորս գծից հեռու քայլ դնել, եթե գլուխը ստամոքսի մեջ է ապավեն որոնում։

Հանել է պետք խոհերը աղտոտ ճահիճներից և հնչեցրել է հարկավոր նրանց այնքան բարձր, որ լեռը թեև փլչի վրադ, բայց ըմբոստ ոգիդ քեզ ավելի վեր հանի, քան ամեն լեռ։

Եվ քեզ, արածո՛ղ նախիր, դարձյալ ապտակելու եմ եկել ես։ Իմ ապտակը թող խանձե կեղտի տաք կապած դեմքդ և ուղղե կորացած ողնասյունդ։

Այդպես եմ խոսում ես քեզ հետ, արածող-ստրուկ նախիր։

Եթե դու ինձ չես ըմբռնում, գնա դարձյալ անարգ բնազդներիդ ծառայող հովիվներիդ մոտ, և թող նոքա ծամածռեն խոսքերս՝ քեզ գայլերի ոհմակ դարձնելով ըմբոստ ոգու դեմ։

Գնա՛, եթե տաք է «պարտականություններիդ» ախոռը քեզ համար և եթե քաղցր են քո ուղեղին՝ խոնարհական առաքինություններիդ շարքը։

Ծաղրեցի «երկայնամտությունդ և խոնարհությունդ», թքեցի «առաքինություններիդ» վրա, «համեստությանդ ու բարությանդ» գլխին քարեր գլորեցի, և դու զայրացար ու հովիվներիդ ինձ վրա արձակեցիր։ Ուզում եմ այժմ ավելի զայրացնել քեզ, ծուված ողնաշար։ Ուզում եմ մի առ մի կտրել բոլոր «բարեմասնություններիդ» հաստ գլուխները և նրանց պատվանդանի վրա կանգնեցնել քո նոր աշխարհը։

Պիտի կարողանա՞ս արդյոք շնչել այս նոր ազատ օդի մեջ։ Այդ միայն կարող է ուղղել կորացած վիշտդ։ Եթե մաքուր և ազատ օդը ապանում է քեզ, մեռիր ուրեմն, գարշ զեռունների կույտ, որովհետև առաքինություններդ—ահա դարեր են անցնում—միմիայն ստրուկ սերընդով լցրին դրախտ երկիրդ։

Հայրենիքդ պղծեցիր ծառայական գծուծ հատկություններով, մեծ ապագայի լույսերը ծաղրի առարկա դարձրիր, շքեղ գաղափարները փոշեցրիր տափակած ուղեղիդ կնիքով և այժմ ահա լզում ես զարնող ձեռքերը և մուրում այն, ինչ պիտի կորզեիր։

Իմ ապտակը թող կռան լինի, փշրե մուրացող ձեռքդ և պայթեցնե արտասվող աչքդ։

Իմ ապտակը թող բոց լինի և վառե հովիվներիդ խոնարհություն քարոզող անարգ լեզուները։

Այսպե՛ս եմ խոսում ես քեզ հետ, արածող նախիր։

Գա՞յլ եմ ես, գայլայի՞ն են երգերս։

Ո՞րն է քեզ փրկողը—գլուխդ կռանի տա՞կ, թե՞ կռանը ձեռքիդ մեջ։

Ո՞րն է քեզ բարձրացնողը—գայլային վարդապետությունը, թե՞ վարդապետներիդ գայլությունը և ոչխարային պարտավորությունների մասին քեզ ավանդած թմրեցնող խրատները։

Ճչա՛, կատաղի՛ր նույնիսկ այս երգերիս դեմ, բայց սովորիր գոնե ճչալն ու կատաղելը։

Այդպե՛ս դու կարող ես շորս ոտքդ երկուսի փոխել, «առաքինություններիդ» հաստ գլուխները ջախջախել և ծուված ողնասյունդ ուղղելկանգնեցնել։

Այդպե՛ս դու կարող ես սրբել բորբոսեցնող արժեքներիդ բոլոր հին տախտակները և նրանց վրա նորերը գրած՝ ամպերի հասնել։

Այդպե՛ս դու կարող ես մտրակի ծայրն ուրիշին և կոթը ձեռքդ առնել, նրանով ջախջախել հովիվներիդ խոնարհ քարոզները, քարոզվող խոնարհությունները։

Սիրո՛ւմ եմ ես աղմկողների, սիրո՛ւմ չարերի և կովարարների, բայց երբեք՝ վզերին օղ կրող ստրուկների և ձեռքի ափը միշտ պարզած մուրացիկների։

Սիրո՛ւմ եմ զգացմունքների ներշնչմամբ ամեն բան խեղդող հոխորտ առյուծների, բայց երբեք՝ պարտավորությունների համար զգացմունքները խեղդող անարգ զեռունների։

Եվ այդ պատճառով գարշում եմ, երբ ճնշում ես սիրտդ, մտքերդ կաշկանդում, ուղեղդ շրջանակավորում։

Եվ այդ պատճառով՝ ատո՛ւմ եմ քեզ, երբ ամբոխային կարծիքների տակ թևերդ ես ծալում-գոցում և սիրտդ, արյան տեղ՝ երկյուղի ջրով միայն լցնում։

Եղի՛ր համարձակ, արածո՛ղ նախիր, խլիր, բայց մի՛ մուրա, գոռա, բայց մի՛ աղերսի, զարկ, բայց մի՛ խոնարհվի և ջարդիր, փոշի դարձուր կապեր, պատվարներ, սահման ու շղթա։

Այդպե՛ս դու կարող ես լեռները մագլցել, ազատ օդով թոքերդ մեծացնել և զգացմունքներիդ շնչով ամեն կապ փշրել։

Այդպե՛ս դու կարող ես մարդ լինել, կարծիքների բեռան ծանրությունը մի շնչով փոշիացնել և փտեցնող առաքինություններդ ծաղրով ու քրքիջներով ցրել-ոչնչացնել։

* * *

Ըմբոստ ոգին ահա դարձյալ խոսեց այն, ինչ որ հովիվներդ «գալլային վարդապետություն» անունով կնքեցին։ Բայց նա՛ խոսեց ճշմարտությունը։ Եվ վայ քեզ, արածո՛ղ նախիր, եթե նրա արձակած ճառագայթների լույսը կուրացնում է աչքերդ։

Ըմբոստ ոգին չի՛ լռում։ Վաղ թե ուշ՝ նրա խոսքերը կամուրջ պիտի լինեն, պատվանդան՝ որի վրա պիտի կանգնի ապագա ազատ հայրենիքդ և վսեմացած մարդկության առաջին հիմնաքարը։

1900—1909

ԺԱՅՈ

Դրամա չորս գործողությամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԱՀԱԿ ԱՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ— *ժամանակով հարուստ, այժմ աղքատացած կալվածատեր։ Ծեր և նիհար։ Հագնում է միշտ հնամաշ սյուրտուկ. տխուր, մելամաղձոտ։ 60 տարեկան։*

ՀՈՌՈՄՍԻՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ— *Նրա կինը. պարզ հագուստ. Թիֆլիսեցու գլխով. մաշված կին, 50 տարեկան*

ԱԼԵՔՍԱՆԴՐ— *Նրանց որդին. նորավարտ իրավաբան. պարզ հագուստ. 25—28 տարեկան*

ՄԱՐԳԱՐԻՏ— *Նրա քույրը. գյուղական պարզ աղջիկ. 20 տարեկան*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— *Գյուղաքաղաքի հաշտարար դատավոր. գեր, առույգ և զվարճախոս. 45 տարեկան*

ԳՐԻԳՈՐ ԱՂԱ ՎԱՐԱԿՅԱՆ— *Գյուղաքաղաքի ամենահարուստ կալվածատեր. վաշխառու։ Հագնում է արխալուղ՝ սև մետաքսյա և վրան պիշակ. կարտուզ. ոսկյա գոտի, 55 տարեկան*

ՏԻԿԻՆ ՎԱՐԱԿՅԱՆ— *Նրա կինը. շլյապայով. ցոլուն հագուստ, վարդեր. կոտրատվող կին. 40 տարեկան*

ԹԵՐԵԶԱ— *Նրանց աղջիկը, կրթված Թիֆլիս՝ պանսիոնի մեջ. հագնում է պարզ. բայց թանկ հագուստ. 20 տարեկան*

ԱՐՇԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ— *Գյուղաքաղաքի տանուտեր. կթված երիտասարդ. 30 տարեկան*

ԲԱՂԴԱՍԱՐ ԱՄԻ— *Գյուղացի. 60 տ., մտամոլոր, խեղճ. մեծ փափախ, արխալուղ, չուխա, ձեռքին գավազան*

ՋԱՔԱՐ— *30 տարեկան. գյուղացի. նույն հագուստ. կարտուզով*

ԴԱՎԻԹ— *25 տարեկան. գյուղացի. նույն հագուստը*

ՄԱՐԳԱՐ— *50 տարեկան. գյուղացի. Բաղդասարի հագուստը*

ՄԱՐԿՈՍ— *50 տարեկան. գյուղացի. նույն հագուստը*

ՍԵՐՈԲ— *25 տարեկան. Ջաքարի նման հագնված*

ՀԱՅՐԱՊԵՏ— *30 տարեկան. նույն հագուստը*
ՔԱՋԱԼ ՄԱՐՏԻՐՈՍ— *Գյուղական արլակատ. քաշալ. 30 տարեկան*
ԿԻՐԱԿՈՍ— *Մանուկյանների ծառան. գյուղացի*
ՍԵՐԳՈ— *Վարակյանների ծառան, գյուղացի*
ՄԻ ԵՍԱՈՒԼ— *Պաշտոնական հագուստով*
Մի քանի եսաուլներ՝ անխոս

Անցքը կատարվում է մեր օրերում, Կովկասի գավառական գյուղաքաղաքներից մեկում։

Բեմի աջ ու ձախը՝ հանդիսականների կողմից։

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՎԱԾ

Սահակ աղա Մանուկյանի տանը։ Հնամաշ, ծանր կահավորություն։ Մեծ սրահ, որի մեջտեղի ապակեպատ դուռը բաց է դեպի մի փոքրիկ պատշգամբ։ Տեսնվում են ծառեր, հեռվում՝ լեռներ։ Ձախ կողմից երկու լուսամուտ։ Աջ կողմից մի դռան՝ դրսի մուտքն է. խորքի աջ անկյունից երկրորդ դուռը՝ տանում է հերթին սենյակները։

1) Տիկին Մանուկյան, հետո՝ Սահակ աղա

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Վարագույրը բացվելիս տնային հագուստով կանգնած է պատշգամբի վրա, կուացել է դեպի ցած և խոսում է աղախնի հետ)։ *Հինչ ա՞... (Լուռ)։ Բա ինչի՞, չե՞մ ասել քեզ, որ սահաթը հինգին պատրաստ ըլի... (Լուռ)։ Հի՞նչ... Դե, քիչ քյոմուրը շատ գցիր, էլի՛... Այ քոռանա՛ս դու, հա՛... Դե, փչի՛, փչի՛... Հի՞նչ... (Լուռ)։ Բա՛, աղջի՛, ես քեզ չասի՞ երեկ...*

ՍԱՀԱԿ.— (Ներսի դռնից դուրս է գալիս, սյուրտուկի մի թեր հագած է, մյուսը հագնում է)։ *Էլի՞ սկսեցիր գոռգոռոցը... (Գնում է դեպի նա)։*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Չի նկատում նրան. միշտ աղախնի հետ)։ *Հի՞նչ... Դե մի քիչ բարձր խոսա, էլի՛... Շաքարը քի՞չ ա... Քու ի՞նչ բանն ա դա...*

ՍԱՀԱԿ.— (Ավելի մոտենում է)։ *Աղջի՛... Քիչ կամաց խոսե՛ս. Չե՞ս թողնելու, որ տղան քնի...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Շարունակում է նույնը)։ *Հի՞նչ... Ը՞ռ... ղ՞ըդ... Սո՞ւդիան...*

ՍԱՀԱԿ.— (Թևն է բռնում)։ *Բո՛, աղջի՛... Բա քե՞զ հետ չեմ...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Շտապ՝ դառնում է)։ *Սո՛ւդիա ա գալիս։*

ՍԱՀԱԿ.— *Դե ի՞նչ անենք, որ գալիս է... Ի՞նչ ես գոռգոռում։*

ՏԻԿ .ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Բա որ ես հագնված չե՞մ... էս ի՞նչ ա իմ հալը։*

ՍԱՀԱԿ.— *Լավ դե՛... Գնա հագնվիր... Մեկ էլ, որ ցած խոսաս ու թողնես Սաշային քնի՝ լավ կանես։*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Գնալով)։ *Լա՛վ, լա՛վ. էդ խոսքերը դու սուդյին ասա, որ առանց գոռգոռալու չի խոսում։* (Գնում է)։

ՍԱՀԱԿ.— (Հագել է. վրան-գլուխն է շտկում. պատշգամբից նայում է մեկ, հետո գնում է դեպի մուտքի դուռը)։

2) Նույն, Մատվեյ Եգորիչ, հետո՝ տիկ. Մանուկյան

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Ամառվա հագուստ, կոկարդով գլխարկ։ Ներս է մտնում ծանր և դռան միջից)։ *Դե՛հ աչքներդ լույս, Սահա՛կ... Ուզեցի ավելի շուտ գալ, բայց ասացի՝ քնած կլինի...* (Զեռք է տալիս)։ *Ո՞նց է մեր Ալեքսանդրը... բա ո՞ւր է...* (Գլխարկը հանում է, քրտինքը սրբում)։ *Է՛... տղեդ էլ եկավ... Յո՛ւրիստ, հը՞... Հա՛յ-գի-դի-հա՛, յո՛ւրիստ... Խո ավարտե՞լ է...*

ՍԱՀԱԿ.— (Ժպտուն)։ *Համեցե՛ք... Շնորհակալ եմ... Իհարկե ավարտել է. դեռ էլի՞ չավարտեր...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Դիպլոմով, հը՞... Ա՛յ կուռեռս, հա՛...* (Լուրջ)։ *Է՛հ, փա՛ռք աստուծո...* (Նստում է)... *Լա՛վ ժամանակին հասավ. է՛լ նեղություն չես քաշի... բա ո՞ւր է, մեկ գար տեսնեի՛նք էդ յուրիստին. ախր պաշտոնակից դարձանք հիմա...*

ՍԱՀԱԿ.— *Քնել է. հոգնած էր։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Ծիծաղով)։ *Ո՛չ հավատամ սուտ-Քրիստոսի... էն է Թիֆլիս մտած, օգնական գրվելիս լավ հանգստացած կլինի, է՛լի։*

ՍԱՀԱԿ.— *Չէ՛, Մատվե՛յ Եգորիչ, Թիֆլիս դեռ չի մտել. հետո՛ է գնալու... Ասում է, որ փափագում էր առաջ ծնողներին գրկել, հայրենիքը տեսնել, նրա լեռնե՛րը... Չորս տարի էր, ախր, որ մեզ չէր տեսել...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Բաս ասա, որ էլի ֆանտազյոր է մնացել, էլի՞... Տո՛, «հայրենի լեռնե՞րս» որն է... Չե՞ս լսել, որ ասում են, թե՝ «Հիմա՛ր զհայրենիս խնդրին, իսկ իմաստունք՝ հանգիստ յուրյանց»...* (Լուռ)։ *Հոռոմսի՞մը բաս ուր է. գար մեկ նրա՛ն էլ աչքալուսանք աննինք... խեղճը շա՛տ ուրախացած կլինի...*

ՍԱՀԱԿ.— (Նստում է)։ *Դե իհարկե... Հագնվում է, կգա... Մարգարիտա Օսիպովնան չի՞ գալու։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Կգա, եղբա՛յր, նա՛ էլ կգա... Կանանց բանը չգիտե՞ս... Մինչև հագնվեն, մինչև... Շատ ասաց, որ սպասեմ իրեն, բայց չհամբերեցի. ուզում էի մեկ ձեր ուրախությունը տեսնեմ... Բաս ասում ես ավարտել է, էլի՞... Առաջ, իհարկե, պամոշնիկ կգրվի մի քանի տարի. հետո, մեկ էլ տեսար, պորտֆելը թևի տակ, մի չաղ գործ պորտֆելի մեջ, մեզ նմանների առաջ կկանգնի ո՞ւ... Հարուրանոցները կգա՞ն ու կգան...* (Ծիծաղ)։ *Հը՞, ղո՞րդ չեմ ասում... Ի՞նչպես է մտադիր—Թիֆլի՞ս, թե՞ Բաքու։*

ՍԱՀԱԿ.— *Չգիտեմ... Ասում է, որ ամառս հանգստանալ է ուզում. հետո... գյուղական գործերով է ուզում զբաղված լինել, գյո՛ղումը մնալ...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Զարմացած)։ *Ինչպե՞ս... Խո քամիներ չկա՞ն գըլխումը... Տո՛, գյուղումն էլ եղալի գո՞րծ կլինի... Լավ չե՛ս լսած լինի... Ա՛յ, թող մեկ զարթնի, տես ո՞նց ես նրան հնարքը ցույց տամ... Մենք փորձված ենք... Ըհը՞, էս ա Հոռոմսիմն էլ եկավ...* (Ելնում է դիմավորելու)։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Մտնում է հագնված. ժպտուն)։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Գնում է դեպի նա)։ *Է՛հ, աչքդ լույս, Հոռոմսի՛մ. հրեն Սաշա՛ն էլ եկավ... Էլ քո քեֆին քեֆ չի հասնի...* (Զեռքն է բռնվում)։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Աչքդ լուսով մնա... Հա՛, բա՞ս... էսքան տարի աչքս ջուր կտրեց սպասելով։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Հիմի խո՛ ամեն ցավ կմոռանաս... Հանաք բան չիմանաս, հա՛... Հարուրանոցներն էնպե՛ս գան, որ ի՛նքդ էլ զարմանաս... Չզարթնե՞ց...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Զարթնեց. հիմի կգա...* (Ամուսնուն)։ *Սամավարը չբերի՞ն... Ասում ես՝ մի գոռա. բա չգոռա՞մ... Մեկ սհաթ ա՝ ասել եմ գցիր...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Շո՛ւտ է դեռ, ի՞նչ է եղել որ. սկի զանգերն էլ չեն խփել... Առաջի եկողն էլ խո ես եմ, հը՞...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Շնորհակալ ենք... բա Մարգարի՞տն ինչի չեկավ. չի՞ էլ գալու։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Ինչպե՞ս չէ. բա չե՞ս թողնի, որ մեկ զարդարվի...*

3) Նույնք և Կիրակոս (ծառան)

ԿԻՐԱԿՈՍ.— (Ներս է բերում ինքնաեռը, դռան մոտ)։ *Խանո՛ւմ, ըստե՞ղ դնեմ, թե՞ ներսը։*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Ը՛ը, հողե՛մ գլխներդ. լավ ա, որ բերիր... Ըստե՛ղ դիր. Մարգոյին էլ ասա՝ թող գա չայը շինի։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Նոր եկած եղբոր գլխովը պտտելիս կլինի ա՛յ...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Հա... Զահլեն տանում ա. կասես չաչանակ ըլի. խոսում ա, հա՛ խոսում։*

ՍԱՀԱԿ.— *Թող խոսա. խեղճը սկի մի շնորհքով չահելի երես տեսնո՞ւմ է որ...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Բա ինչի՞, մենք պառավե՞լ ենք...* (Միծաղ): *Ապա՛, մեկ Սաշադ գա՝ տեսնենք ե՞ս եմ չահել, թե՞ նա։ Ո՞վ գիտի, Մոսկովի օդը ոնց դեղեացրած ըլի նրան։*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Ցավելով): *Հա... բայց դե առո՛ղջ ա երևում... Ասում ա, թե մեր գեղի օդն ու ջուրը կչաղացնի իրան մեկ ամսվա մեջ։*

ԿԻՐԱԿՈՍ.— (Որ սեղանը լուսամուտի մոտ էր ֆաշել և իհինեաեռն էր դնում): *Գրիգոր աղան ա գալիս...*

ՍԱՀԱԿ.— (Վեր է կենում): *Ի՞նչ...* (Զարմացած է):

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Բո՞... Գրիգոր աղա՞ն...*

ԿԻՐԱԿՈՍ.— (Միշտ նույն տեղից): *Խանումի ու բարիշնի հետ...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Վազելով դեպի լուսամուտը): *Ղո՞րդ...* (Մառային): *Էլ ո՞ր ես կանգնել... Վազիր ստաքանները բեր... Ամա, կա՛ց, ե՞ս կգնամ... Արի՛ ինձ հետ...* (Շտապ՝ դուրս է գնում):

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Սահակին): *Էս լա՛վ նշան է, Սահա՛կ, Գրիգոր աղան էլ է գալիս աչքալուսանքի. էն էլ կնոջ ու աղջկա հետ... Կարծեմ շատ էլ մեկ չէր գալիս ձեր տուն։*

ՍԱՀԱԿ.— *Սկի՛ չէր եկել այդպես... ընտանիքով...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Տեսնո՞ւմ ես՝ ինչ է նշանակում յուրիստ որդի ունենալ...*

4) Նույնք, Ալեքսանդր, Մարգարիտ, հետո՝ Գրիգոր աղա, տիկ. Վարակյան և Թերեզա

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Զվարթ և ժպտուն՝ մտնում է Մարգարիտի հետ. դռան սատից): *Մատվեյ Եգորիչին իմ մե՛ծ բարևներս...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Գնում է դեպի նա): *Բո՛, էդ դո՞ւ ես, ա՛յ տղա...* (Համբուրվում են): *Ա՛յ թե մեծացել ես, հա՛...* (Ձեռքերը դնում է ուսերին): *Յուրիստ, հը՞... Դիպլոմո՞վ, հարուրանոցնե՞ր... Ա՛յ, սիրում եմ, երբ մարդիկ գիտեն լավ կարիերա ընտրել... Դե՛հ, ապա՛ մեկ արի այս կողմը...* (Մարգարիտին): *Բարև, Մա՛րգո, ո՞նց ես... Ամա էլ ի՞նչ խոսք... Տեսնում եմ, տեսնում, որ ուրախ ես...* (Ալեքսանդրին): *Ապա մեկ այս կողմն արի, եղբա՛յր, պատմի՛ր մեկ Մոսկվայից մեր* alma mater-*ից...*

ՍԱՀԱԿ.— (Որ մուտքի դուռն էր բացել, խոսում է դեպի դուրս): *Համեցե՛ք, համեցե՛ք, Գրիգո՛ր աղա... Էս ո՞ր խաչիցը... Համեցե՛ք, տիկի՛ն...*

ԳՐԻԳՈՐ.— (Դրսում, բայց լավ լսելի): *Դե՛հ, ասացինը Սաշան եկել է, աչքալուսանքի գնանք... Աղջիկս էլ ուզեց...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Քրոջը): *Թերեզան է, չէ՞...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Նո՛ւ, եղբա՛յր, այժմ մի շիկ աղջիկ կտեսնես, որ... էն քո տեսած Թերեզան չէ. մե՛կ գեղեցկուհի է դարձել...*

ՍԱՀԱԿ.— (Դեպի դուրս, ապա ներս գալով): *Շնորհակա՛լ ենք, համեցեք...* (Ներս են մտնում՝ Գրիգոր աղան, կինը՝ ցալուն հագուստով, Թերեզան՝ պարզ, ծղոտե գլխարկ, ձեռնոցներ):

ՄԱՐԳԱՐԻՏ.— (Վազում է դեպի Թերեզան, համբուրվում են): *Բարև... Ախ ի՞նչ լավ արիր, որ եկար... Ա՛յ, Սաշան...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Լուռ մոտենում է և բարևում):

ԳՐԻԳՈՐ.— *Բարև ձեզ... Այ. դու բարի՛ ես եկել, Ալեքսա՛ն բեկ... Մեր աչքի-գլխի վրան եկել...* (Թոթվում է ձեռքը):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ընդունում է բարևը, ապա մոտենում է Թերեզային):

ԹԵՐԵԶԱ.— (Ալեքսանին, ժպտուն և համարձակ): *Բարև եք եկել...* (Պարզում է ձեռքը): *Ինձ ճանաչեցի՞ք...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Ինչպե՞ս չէ, օրիո՛րդ... Բայց մի բոպե ապշել էի, թե որքա՛ն փոխված եմ գտնում ձեզ...* (Լուռ խոսակցում են):

ԳՐԻԳՈՐ.— (Սահակին): *Աչքդ լույս, Սահա՛կ բեկ... Էս է տղեդ էլ եկավ ավարտած, դիպլոմո՛վ... Բաս Հոռոմսի՞մն ուր է։*

ՍԱՀԱԿ.— *Կգա. դուք համեցեք-նստեք։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— (Լուռ թոթվում է Սահակի ձեռքը, լուռ աչքալուսանքներ ու բարեմաղթություններ՝ խոնարհություններով):

ԳՐԻԳՈՐ.— (Մոտենում է Մատվեյ Եգորիչին): *Դուք արդեն այստե՞ղ եք, Մատվե՛յ Եգորիչ... Այսօր երկրորդ անգամն ենք պատահում միմյանց։* (Խոսակցում են միասին):

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ— *Ի՞նչ արած, եղբայր, մենք դեռ էլի շա՛տ կպատահենք...* (Խոսակցում են միասին):

ԹԵՐԵԶԱ.— (Ալեքսանին): *Չորս տարի է... Երևի արդեն պառավել եմ, չէ՞...*

ՄԱՐԳՈ.— *Դե, լա՛վ, լա՛վ. քեզանից սիրունն ու ջահելը ո՞վ կա մեր գյուղումը։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Քույրս իրավացի է... Գեղեցկացել եք շատ։*

ԹԵՐԵԶԱ.— (Ժպտուն): *Շնորհակալ եմ կոմպլիմենտի համար... Բայց երևվի մոռացել եք, որ 5—6 տարի առաջ ինձ տգեղ էլ եք կոչել, անճոռնի էլ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Բողոքող): *Եթե արել եմ՝ հանցավոր եմ...* (Շարունակում են լուռ խոսակցել):

ՍԱՀԱԿ.— (Տիկին Վարակյանին): *Ինչպե՞ս չէ, իհարկե կսկսի։* (Շարունակում են լուռ խոսակցությունը):

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Գրիգորին): *Նո՛ւ, եղբա՛յր... Դա արդեն օրենքի գործ է... Եթե թուղթ ունե՞ս... Կանոնավոր մուրհա՛կ...* (Շարունակում են լուռ խոսակցություն):

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— (Սահակին): *Բա Հոռոմսի՞մն ինչու չի երևում... Չլինի՞ ներսում պատրաստություն է տեսնում... Ի՜հ, նա էլ.. Մենք խո չե՞նք եկել ուտել-խմելու։*

ՍԱՀԱԿ.— *Ա՛յդ ինչ խոսք է... Այս րոպեիս ասեմ գա...* (Գնում է դեպի դուռը):

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Դիմում է Սահակին): *Գիտե՞ս ինչ, Սահա՛կ... է՛ լավ տանձերիցը... Մի-մի բյումկա արաղ... Ընենց մեկ...*

ՍԱՀԱԿ.— *Իսկույն, անպատճառ... Մի քանի հատ էլ խիար...*

ԳՐԻԳՈՐ.— *Մատվեյ Եգորիչի ճաշակը խո գիտե՞ս։*

ՍԱՀԱԿ.— (Ժպտալով նշան է անում և դուրս գնում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Որ Թերեզայի, Գրոջ ու տիկին Վարակյանի հետ մոտեցել են պատշգամբի բաց դռանը): *Այնքա՜ն կարոտել էի մեր հայրենի լեռներին, դաշտերին ու ջրերին...* (Ցույց է տալիս) *Նայեցե՛ք մեկ... Ի՞նչ կա ավելի շքեղ ու գեղեցիկ, քան մեր այս անտառը, այդ լեռն ու ապառաժները, այդ կարկաչուն գե՛տը...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Նստած տեղից՝ ծաղրով): *Էլի՛ ինչ... Երևում է, որ Մոսկվայի շրջակայքը գնալու միջոց չես ունեցել... Տո՛, ես Պետրովսկի-Ռազումովսկի լիճը հենց սաղ հայրենիքիդ հե՛տ չեմ փոխիլ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Նրան): *Դուք սխալվո՛ւմ եք, Մատվեյ Եգորիչ... Ի՞նչ կա այնտեղ, որ համեմատվի մեր երկրի այս բարձր ու շքեղ լեռներին, այս զվարթ, արևի տակ փայլփլող, վազուն ջրերին, այդ կանաչ-ժպտուն մարգագետիններին... Ա՛յ, նայեցե՛ք, օրիո՛րդ։ Նայեցեք հեռվի այդ սիրո՛ւն արտերին, հանդվորների այդ խմբին...*

ԹԵՐԵԶԱ.— *Դուք բանաստեղծ եք եղել, Ալեքսա՛նդր Սահակի՛չ... Երևվի գրո՛ւմ եք, մինչև իսկ...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Նո՛ւ... Պրիսյաժնի՛— և բանաստեղծ... Լա՛վ, Սաշա՛, թե աստված կսիրես... Ձզվեցրե՛լ են մեզ այդ քո դաշտերը, լեռները, մշակներն ու հանդը...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Երբե՛ք... Երբեք ես չեմ զզվի... Ուրախությամբ կերթամ այդ լեռներն ի վեր մագլցելու. այդ արոտի, այդ նախիրների մոտ. և հետո՝ տեսնելու մեր Թշվա՛ռ ու ճնշված գյուղացիների աշխատանքը։*

ԳՐԻԳՈՐ.— *Հը՛մ... Լա՛վ Թշվառներ ես գտել։ Մե՛կ հուպ տան քեզ, որ իմանաս, թե ճնշողն ո՞վ է։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Ասենք՝ Սաշան ճիշտ է ասում— խե՛ղճ են մեր գյուղացիք. բայց էլի... Այս գյուղաքաղաքը ամենից հարուստն է. բա՛ղ, գինի՛... և հետո՝ գավառի կենտրո՛ն, միրավոյ սուդիա՛...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Թերեզային): *Ձեզ մի՞թե չեն գրավում այս երկրի շքեղ անկյուններն ու այդ ծաղկավետ լեռները։ Երևի դուք էլ զզվել եք արդեն։*

ԹԵՐԵԶԱ.— *Դե իհարկե։ Թեև մենք ձմեռը մեծ մասամբ Թիֆլիս ենք մնում, բայց երբ գալիս ենք գյուղ, միշտ միևնո՛ւյն տեսարանները, միևնույն դեմքերն ու մարդիկ... Եվ հետո, եթե գիտենաք, թե որքա՛ն կոպիտ, կեղտոտ են մեր գյուղացիք։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Դուք մոռանում եք, օրիորդ, որ նրանք ամբողջ օրը գործում են. իրենց հանգամանքները չե՛ն ներում մեզ պես հագնվել, լա՛վ ապրել։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Նո՛ւ, ֆանտազյո՛ր կասեմ... Տո՛, մեկ հլա ինքդ էլ քննիր և տես, թե այդպե՞ս է։ Հազարների տեր գիտեմ, որ է՛լի ախոռի պես տան մեջ է ապրում, կեղտոտ հագնվում...*

5) Նույնք, Տիկ. Մանուկյան, Սահակ և Կիրակոս

(Սրանք ներս են մտնում, Սահակը՝ օղի, վարունգ և տանձ ձեռին, տիկ. Մանուկյանը՝ մուրաբաներ, Կիրակոսը՝ մատուցարան բաժակներով և այլն):

ԳՐԻԳՈՐ.— (Ելնում է և դիմավորում տանտիկնոջ): *Ա՛յ բարի տեսանք, տիկի՛ն, աչքներդ լո՛ւյս, որդիդ էլ եկավ վերջապես..*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Շփոթված, մուրաբաները դնում է սեղանի վրա, ձեռ է տալիս, ճամբուրվում են տիկ. Վարակյանի և Թերեզայի հետ): *Շնորհակալ եմ... Բարով ձե՛զ էլ աչքալուսանք անենք...* (Թերեզային): *Դո՛ւ էլ մի լավ բախտի արժանանաս...* (Բոլորին): *Համեցե՛ք, համեցե՛ք, թեյը այս րոպեին...* (Մարգարին): *Աղջի, հլա չայը չե՞ս շինել...* (Ծառային): *Գնա սուխարին էլ բեր...* (Հյուրերին): *Համեցեք նստեք...* (Տղամարդկանց): *Մի-մի արաղ...* (Ամուսնուն): *Բաս հաց ու պանի՞ր ուր ա...* (Վազում է դեպի դուռը): *Կի՛րակոս, հաց ու պանիրն էլ բեր հետդ...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Ա՛յ լավ տանտիկին... Սկի 10 րոպե չքաշեց— համ մուրաբա, համ խիար, արա՛ղ...* (Տիկին Մանուկյանին): *Տղիդ տեսնելուցը թևեր ես առել-թռչում ես, հա՛, Հոռոմսի՛մ։*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Դե բա ի՞նչ անեմ, ա՛ ձեզ մատաղ... Մեկ միանգամ տղա ունեմ, նրա գալո՞ւն էլ չուրախանամ... բա ո՞ւր ա ձեր տիկինը, Մատվե՛յ...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Դե ես ի՞նչ անեմ... Հալբաթ ուր որ է՝ կգա...*

ԿԻՐԱԿՈՍ.— (Վերադառնում է՝ բերելով մյուս բաները):

ՍԱՀԱԿ.— (Լցնում է օղի, կինը թեյ է պատրաստում: Գրիգորը ժպիտը դեմքին՝ դիտում է Ալեքսանին և Թերեզային, որոնք Մարգարիտի ընկերակցությամբ՝ խոսում են և ծիծաղում):

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Վերցնում է օղու բաժակը և հեռվից՝ Ալեքսանին): *Թե աստվածդ կսիրես, Սա՛շա, շա՛տ ժամանակ ունես դեռ՝ ջահել աղջիկների հետ սիլիբիլի անելու. առաջ մեկ պառավների՛ս պատվիր, մեկ նրա՛նց հետ խոսիր... Թերեզան չի փախչի, մի՛ վախենա... Երկուսդ էլ կրթված մարդիկ եք, իհարկե, շա՛տ կհանդիպեք դեռ, կխոսեք... Հալբա՛թ, Թերեզան գյուղի մեջ ո՞ւմ պիտի գտնի, որ հետը զրուցի. դու էլ գյուղի խլնքոտ աղջիկների հետ խո գլուխ չե՞ս դնի... Բայց առաջ մեկ դե՛սն արի... Այ, էս ոյումկան վերցրու...* (Տալիս է): *Մոսկվա սովորա՛ծ կլինես կոնծելը... Ապա՛, քեզ հետ մեկ խմենք, շնորհավորե՛նք... Կոլեգ ենք, ախր... Ես քո՛ ճանկը կընկնեմ, դու՝ ի՛մը... միմյանց լա՛վ կգգգենք...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Լուռ ու ժպտուն՝ վերցնում է բաժակը):

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Ա՛յ, ըտե՛նց... Դե՛հ, շնորհավո՛ր լինի... բարով լավ գործ ունենաս, չաղ պրակտիկա. սուդիաների դեմ լա՛վ խոսես, հարուրանոցներով ջիբդ տոզացնես, հորդ ու մորդ երախտիքը հատուցանես, նրանց էլ, այս ծերության օրերում միջո՛ց տաս հանգիստ ապրելու... Մի լավ, հարուստ, հազարներով աղջիկ էլ ճանկես՝ ու...* мое почтение[1]...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Շնորհակա՛լ եմ... բայց երևի ձեր ասածներից միայն մե՛կը կլինի. այն է՝ ծնողաց հանգիստ ապրելու մասին հոգալ։ Իսկ չաղ պրակտիկա, հարյուրանոցնե՛ր, հազարներով աղջի՛կ... Ո՛չ, չեմ կարծում, որ ընդունակ լինեմ ա՛յդ աստիճան փչանալու...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Որ ուզում էր խմել, իջեցնում է բաժակը և զարմացել է): *Ո՞նց... Փչանալո՞ւ... Բա էլ ո՞ւր ես պրիսյաժնի[2] դարձել, իրավաբանություն սովորել, օրենքների գրքերի վրա մաշվել... Փաստաբանը որ կա՝ երեք երազ է ունենում.— չաղ պրակտիկա,*

---

[1] *Թուսերեն ոճ. «Հարգանքներս»։*

[2] *Փաստաբան, երդվյալ հավատարմատար։*

հազարներով օժիտ ունեցող աղջիկ և շքեղ նիստուկաց... Հա՛մ էլ, ուզես-չուզես, պիտի լինի այդ... Քեզ պես խոսողներ շա՛տ ենք տեսել... Որ հարուրանոցները գան—հազարների կձգտես, հազարները գան...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Խելոք բաներ չեք խոսում, Մատվե՛յ Եգորիչ։ Ինչո՞ւ փաստաբանը պիտի ստեղծված լինի դրա համար։ Նա, ընդհակառակն, եղել է, որ պաշտպանի անմեղների, թիկունք դառնա հարստահարվածների...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Տա՛-տա՛տա՛... Լսե՛լ ենք, լսե՛լ... Քո կենացը. հլա մեկ խմի՛ր...* (Խմում է. մյուսներն էլ):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Գուցե և լսել եք, հուսախաբվել... Բայց եթե մի սուդիա[1] անպիտան է կամ կաշառակեր—դա չի՛ նշանակում, որ բոլոր սուդիաներն էլ անպատճառ պիտի կաշառակեր լինեն ու անպիտան...*

ԳՐԻԳՈՐ— *Ա՛յ թե բռնեցիր...* (Ծիծաղում է): *Հիմի եկեք թամաշա անենք, թե երկու յուրիստները ո՞նց են իրար յախիցը քաշ տալիս...* (Սահակին): *Չէ՛, Սաշան զոռբա է եղել...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Տաքանում է): Постой, постой[2]... *Մե՛նք էլ ենք փաստաբանություն արել, ճառ խոսել...* (Ալեքսանին): *Չէ՛, մեկ դու է՛ն ասա, Սա՛շա. բաս որ չաղ պրակտիկան գա— կմերժե՞ս... Որ հազարներով աղջիկ սիրես— չե՞ս ամուսնանա, կամ փողը չե՞ս վերցնի... Հը՞...* (Հաղթական): *Ասա՛, է՛... Ե՞տ կտաս, կասես՝ չե՞մ ուզում...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Հանդարտ): *Ես անիրավության կողմը չե՛մ լինի, զրկողին չե՛մ պաշտպանի—թեկուզ հազարներ տան։ Եվ աղջիկն էլ չե՛մ առնի, որովհետև նա հարուստ օժիտ ունի...*

ԹԵՐԵԶԱ.— *Բրա՛վո... Մատվեյ Եգորիչը հաղթվում է։*

ԳՐԻԳՈՐ.— *Այդպե՛ս, հա՛... Ապա՞, Սա՛շա, մեկ լա՛վ դրան...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Постой, *ասում եմ, է՛է՛... Սահա՛կ, էդ ոյումկաները մեկ լցրո՛ւ. բողազս չորացավ...* (Կարմրած՝ Ալեքսանին): *Ո՞նց թե հազարներ տան՝ անիրավի կողմը չես բռնի... Տո՛, որ ասենք, մի մարդասպան գա քեզ մոտ, որ դու էլ հաստատ գիտենաս, թե նա անիրավ է... Մի քանի հազար խոստանա, որ իրեն արդարացնես, պաշտպանես դատարանում—չե՞ս անի, կմերժե՞ս... Էլ ինչացո՞ւ պրիսյաժնի ես, հը՞... կմերժե՞ս։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—*Կմերժեմ։*

---

[1] *Դատավոր։*

[2] *Նշանակում է «կաց, կաց»։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Բո՜լ... Բա դու քո թշնամին ե՞ս... Ե՞րբ է տեսնված, որ փաստաբանը փող շահի իրավացի կողմից. լավ վարձատրություն տալիս են միշտ անիրավները։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ. *Սաստի՛կ սխալվում եք... Անիրավների ձեռքով մեղադրվածներն ավելի շատ են, քան անիրավները, ավազակները... զրկվածներին պաշտպանե՛լն էլ փող է բերում։ Բայց— որը գլխավո՛րն է—հոգեկան մեծ բավականություն է զգում մարդ, երբ հաջողվում է կորզել ավազակի, հարստահարողի ձեռքից մի անմեղ զոհ, մի ազնիվ աշխատավորի... Ա՛յ, երբ ինձ գործի մեջ տեսնեք հենց այստեղ, գուցե և ձե՛ր դատարանում...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Վախեցած): *Ի՞նչ... չլինի՞ մեր գյուղումն ես ուզում փորձել դալլաքությունը...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Այո՛. ես վճռել եմ այստե՛ղ իսկ մնալ և գործել... Այսպիսի խուլ անկյուններում ավելի շատ են անիրավություններ ու հարստահարություններ. որոնց դեմ կռվել է պետք... Եվ ես, որ սովորե՛լ եմ և զինվել այդպիսի կռվի համար—պարտականություն եմ զգում նախ և առաջ ծառայել ի՛մ հայրենիքին, ի՛մ թշվառ եղբայրներին...*

ԳՐԻԳՈՐ.— (Կենոռոտ): *Ահա՛ թե ի՞նչ... Նոր բանե՛ր ենք լսում...*

ԹԵՐԵԶԱ.— (Ալեքսանին): *Դուք կատակ չե՞ք անում, ուզում եք գյո՞ղը մնալ.. Ձմե՞ռն էլ... և ո՞չ թե Թիֆլիս։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.—*Կատակ չեմ անում։ Թիֆլիսում շա՛տ կան փաստաբաններ. իսկ գյուղերում ո՛չ ոք չկա. և զանազան խաբեբա աբլակատներ, հաճա՛խ միացած վաշխառուների հետ, քամում են գյուղացոց, քանդում նրանց, թշվառացնում... Վճռել եմ իմ գիտությունով օգնել հայրենակիցներիս, հասկացնել օրենքն ու նրանից օգտվելու միջոցները... Ա՛յդ եմ երազել ես, երբ ուսանում էի, այդպե՛ս երազով էլ եկել եմ ու պիտի մնամ գյուղում գործելու։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Ֆի՜հ... գյուղի փաստաբա՜ն... Մարդ երեք-չորս տարի Մոսկվա սովորի, դիպլոմ ունենա ծոցը—և գյո՜ղ...*

ԳՐԻԳՈՐ.— (Հեգնորեն)։ *Եվ դեռ ուզում է գյուղի պրակտիկայով ի՞նքն էլ ապրել, ծնողների՞ն էլ օգնել... Կտեսնե՞նք...* (Ալեքսանին): *Դեռ դու աղ բերելո՛ւ ես գնում, որդի՛...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Ես դրամի հարստության պետք չունեմ. մի կտոր հաց ունենք մեր այգուց—և դա մեզ բավական է... Այնպես չէ՞, հա՛յր, այնպես չէ՞, մայր...* (Գնում է դեպի Թերեզան):

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Ասենք, իհարկե, աստծով՝ քաղցած չենք մնա... բայց դի քաղաքումը փող կաշխատեիր, մեր...*

ՍԱՀԱԿ.— (Արագ՝ միջահատում է): *Լա՛վ, լա՛վ... Թո՛ղ, Սաշա, թո՛ղ այդ բոլորը։ Ի՞նչ ես շտապում... Քիչ հանգստացիր, ամառս մնա՛, կազդուրվի՛ր... Դեռ օր շա՛տ կա։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Նո՛ւ, իհարկե, իհարկե, եղբա՛յր։ Խո այս վերջին անգամը չէ՞, որ տեսնվում ենք։ Էլի՛ կհանդիպենք, էլի՛ կխոսենք... Ինքդ էլ մեկ աչքովդ կտեսնես, մեր գործերի ու մարդկանց հետ կծանոթանաս...* (Վերցնում է տանտիկնոջ առաջարկած թեյը և նստում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Լուռ ժպտում է, հետո Թերեզայի և Մարգոյի հետ անցնում է դեպի լուսամուտը):

ԳՐԻԳՈՐ.— (Թեյ խմելով): *Գյո՜ւղ, գյո՜ւղ... Որ չե՞ն ասում. Ի՞նչ կա գյուղումը....* (Սահակին): *Եվ ո՞վ է դրա գլխի մեջ լցրել, թե գյուղում հարստահարում են, գյուղում օրենքը հասկացող չկա... Բաս Մատվեյ Եգորիչը օրե՞նք չգիտե. բաս մենք, որ կյանքներս դատարաններումն ենք անցկացրել... Հենց ամե՛ն մի գյուղացի... Օրե՞նք չգիտեն... Ապա՞, թե կարող ես, խաբի՛ր մեկ մի գյուղացու...*

ՍԱՀԱԿ.— *Դե իհարկե...* (Քիչ կամաց): *Ջահել է... Նո՛ր է ավարտել։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.—*Հա՛, իհարկե. դեռ քամիներ կան... Գրքեր, լրագիրներ է կարդացել... Հա՛յ-հարա՛յ, գյուղերումը թալանո՛ւմ են, հարստահարո՛ւմ, փաստաբա՛ն չկա, սուդիեն կաշառակե՛ր է. չգիտեմ՝ օրենքը չե՛ն գործադրում, վաշխառունե՛ր կան... Թո՛ղ մեկ գան հենց մեր արխիվը քննեն, թե մի հատ վեքսիլ գտնեն՝ 40 տոկոսով գրա՛ծ... Բաս ես օրե՞նք չգիտեմ, թո՞ւյլ կտամ...*

6) Նույնի և Արշակ (գյուղական տանուտերը)

ԱՐՇԱԿ.— (Երևում է դռան մեջ): *Բարև ձեզ...*

ՍԱՀԱԿ.—(Ելնում է, գնում դեպի նա): *Ա՛յ, համեցեք, տանուտե՛ր... աչքներիս-գլուխներիս վրա։*

ԱՐՇԱԿ.— (Սեղմում է նրա ձեռքը և լուռ շնորհավորում).

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Ուռա՛, տանուտե՛րն էլ եկավ...*

ԱՐՇԱԿ.— (Մոտեցող Ալեքսանին): *Բարի եք եկել, պ. Ալեքսա՛նդր։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Սաշա՛, մեր տանուտերն է, հա՛. էդպես ջահել... Դե՛հ, էլ ի՞նչ արած. աշխարհս հիմի ջահելներինն է... Ուսում առա՛ծ է, հաա՛... Ներսիսյանո՛ւմն է սովորել. մի քիչ էլ փիլիսոփա է...* (Ծիծաղ):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Իրա՞վ, այժմ դո՞ւք եք մեր տանուտերը։ Շատ ուրախ եմ։ Մենք անցյալում քի՛չ ենք հանդիպել, բայց այսուհետև հույս ունեմ, որ հաճախ տեսնվենք։*

ԱՐՇԱԿ.— *Ուրախ կլինեմ։* (Դառնում է մոտեցող տանտիկնոջ, և, ձեռքը սեղմելով, լուռ շնորհավորում)։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Փոխադարձ լուռ շնորհակալություններ)։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Օդու բաժակներով մոտենում է)։ *Ապա՞, տանուտե՛ր, առ մեկ այս. շնորհավորիր, աչքալուսանք արա...*

ԱՐՇԱԿ.— (Ժպտուն)։ *Շնորհակալ եմ. հացս նո՛ր կերա։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Ոչի՛նչ, սա կմարսեցնի։*

ԱՐՇԱԿ. *Չէ՛, շնորհակալ եմ...* (Ալեքսանին)։ *Երևի երկար չեք մնա մեզ մոտ։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Ընդհակառակն, երկար կմնամ։*

ԱՐՇԱԿ.— *Ամա՛ռն, իհարկե. քաղաքում շա՛տ շոգ է լինում. մեզ մոտ լավ է։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Այո՛. բայց ես ձմեռն էլ կմնամ։ Դեռ շա՛տ կձանձրացնեմ բոլորիդ, մանավանդ ձեզ։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Լսո՞ւմ ես, տանուտե՛ր. Սաշան ուզում է մեր գյուղումն սկսել իր պրակտիկան... Ասում է՝ գյուղում թալանում են, պետք է օրենք հասկացնող... էլ բան ու գործ չունենք, էլի՛...*

ԱՐՇԱԿ.— (Զարմացած և հեռաբերված)։ *Իրա՞վ... Մեր գյուղո՞ւմն եք ուզում գործել...* (Ուրախ)։ *Հիանալի՛ բան կլինի։ Ամ գիտենաք, թե որքա՛ն պետք ունենք մի փաստաբանի, որ հասկանար, օգներ տանջվողներին։* (Խոսելով գնում է դեպի պաշտամբը)։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Գրիգորին)։ *Պրծա՛նք... Գտա՛վ իրեն պես ֆանտազյորը... Հմի երազնե՛ր կտեսնեն, պլաննե՛ր կսարքեն, որ էլ ասել չի լինի...*

ԳՐԻԳՈՐ.— (Մռայլ)։ *Հիմարությո՛ւն... Մի ամիս չի քաշի, կփախչի գյուղից։ Ախր գյո՞ւղն ինչ, փաստաբա՞նն ինչ...* (Կռանում է դեպի նա և ավելի ցած)։ *Մեկ էլ, գիտե՞ք, որ բա՛ն է, էդ գյուղացիները գործեր տան դրան, էլ դժվա՛ր կլինի ձեզ շուտ-շուտ վճռել ու կարճ կապել։ Էնքա՛ն կխոսի, կձգձգի, էնքա՛ն օրենքների հոդվածներ...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Կենոռոտ)։ *Չէ՛, տեսնում եմ, որ գլխիս խաթարելա է լինելու սա... Հազր մեզ-մեզ գործերը վերջացնում էինք։*

ԳՐԻԳՈՐ.— *Իհարկե...* (Ավելի է կռանում և փսփսոցով խոսում)։

ԹԵՐԵԶԱ.— (Մարգոյին)։ *Լա՛վ, գնանք տեսնե՞նք... Սաշային էլ ասենք...* (Հեռվից՝ Ալեքսանին)։ *Ալեքսա՛նդր Սահակիչ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Պատշգամբից բիչ ներս գալով)։ *Ինձ հե՞տ եք, օրիո՛րդ։*

ԹԵՐԵԶԱ.— *Ուզում ենք պարտեզ իջնել... Գնա՛նք, մեզ հետ պ. տանուտե՛րն էլ թող գա. այնտե՛ղ կխոսակցենք։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Ինչո՞ւ չէ...* (Արշակին)։ *Կգա՞ք մեզ հետ, պ. Արշակ։*

ԱՐՇԱԿ.— *Ուրախությամբ. միայն մի քանի բոպեով. հետո ես այնտեղից կգնամ... քիչ գործեր ունեմ։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Նրա հետ ներս է գալիս)։ *Գնա՞նք ուրեմն... Մինչև իսկ մեր խոսակցությունը կարող ենք թողնել ուրիշ օրվան։ Ես կգամ ձեզ մոտ գուցե վա՛ղն իսկ։ Դեռ շատ տեղեկություններ կուզեի ունենալ։*

ԱՐՇԱԿ.— (Խոնարհվելով)։ *Որքան ուզե՛ք՝ պատրաստ եմ. միայն թե դուք մեզ մոտ մնացեք...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Անշո՛ւշտ...* (Թերեզային)։ *Գնա՛նք, օրիո՛րդ։*

ԹԵՐԵԶԱ.— (Հորը)։ *Հայրի՛կ, մենք պարտեզ ենք իջնում... Եթե դուք ուզում եք գնալ՝ ինձ մի՛ սպասեք, ես հետո կգամ...* (Ալեքսան, Թերեզա, Մարգո և Արշակ՝ գնում են)։

ԳՐԻԳՈՐ.— *Հա՞... Գնացե՛ք...* (Մնացողներին)։ *Թող գնան, ջահել են, թող քիչ շանա խփեն...*

(Դրսից լսվում են հեռավոր եկեղեցու զանգակների ձայներ)։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Ըհը՛, զանգերը խփեցին...* (Խաչակնքում են ամենքը)։

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— (Ոտքի է ելնում)։ *Գնա՞նք, Գրիգո՛ր. Թերեզան երևվի դեռ շա՛տ կմնա այստեղ։*

ԳՐԻԳՈՐ.— (Ելնում է)։ *Հա՞... Լա՛վ, գնանք։* (Սահակին)։ *Դե՛հ, մեզ մոտ կգաք դուք էլ, իհարկե։ Բարեկամություն անենք։ Սաշային ես շա՛տ սիրեցի... Դե իհարկե, էն որ ասում է, թե գյուղումը կմնա—շատ էլ հավատալու բա՛ն չի. դուք մի՛ տխրեք. գրքեր կարդացած կլինի, բանե՛ր լսած... Նրանց քամի՛ն է։ Էդ նոր ավարտածները բոլո՛ր սկզբում բոթբոթացնում են այդպես... Թող մի քիչ դեռ մնա, զզվի ամեն բանից...* (Տանում է Սահակին մի կողմ և ստե-տամ խոսում հետը)։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Տիկ. Վարակյանին)։ *Ինչո՞ւ եք շտապում, մնացեք, երեկոյան մի լավ քեֆ կանենք...* (Մատվեյ Եգորիչին) *Տիկինդ էլ խո չեկավ...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Հա՛... Տեսնես էլի ինչ է պատահել...* (Ելնում է)։ *Մեկ գնամ տեսնեմ ինչո՞ւ չեկավ։*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Վո՞ւյ, չէ՛, չէ՛, նստիր, ո՞ւր ես գնում... Ծառային կդրկենք։*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— *Չէ՛, ես կերթամ... Համ էլ մի քիչ ման գամ, շոգ է*

այստեղ... Հետո է՛լի կգամ. միասին կգանք... (Վերցնում է գրիչ-խարկը): Թող Սաշան էլ մի քիչ մասլահաթ անի Թերեզի հետ... Ջահել են... (Գրիգորին՝ նշանակալից ակնարկով): Որ ճրագով փնտրեիր, է՛, այսպես փեսացու...

ԳՐԻԳՈՐ.— (Ծիծաղելով և իբրև թե նեղացած): Ի՞նչ եք հրամայում... Թողնե՛նք այդ խոսքերը...

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— Ի՛հ, Մատվե՛յ Եգորիչ, գյուղի աբլակա՛տ...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Գյուղի աբլակա՞տս որն է... Մարդը պրիսյաժնի է, հասկանո՞ւմ ես։ Հազար աբլակատի մի ձեռքով հուպ կտա, ջեբը կդնի... (Սահակին): Դե՞հ, ցտեսություն. կգանք... Բաս մեկ լավ քեֆ ենք անում այս երեկո, հա՞, Հոռոմսի՛մ։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— Անպատճառ։ Ասել եմ, որ մի չաղ գառ մորթեն։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Ա՛յ, շատ ապրես... Մե՛կ քեֆ անենք, որ սա՛ղ գեղը հավաքվի գլխներիս... (Գնում է ծիծաղելով):

7) Մնացածները, վերջում՝ Կիրակոս: (Քիչ լուռ է բեմի վրա: Գրիգորն ու կիները՝ կանգնած: Տիկին Մանուկյանը սեղանն է ժողովում, Սահակը՝ օդին):

ԳՐԻԳՈՐ.— Էդպե՛ս... Տղա՛դ էլ եկավ... Հիմի էլ խո չե՞ս գանգատվի, որ դժվարության մեջ ես, Սահա՛կ բեկ։ Աստուծով լավ փող կաշխատի, պարտքդ էլ կտաս... (Մոտեցող Սահակին քիչ մի կողմ է տանում): Բայց գիտե՞ս, աշխատիր գլխիցը հանել գյուղում մնալու հիմար միտքը... Ախր գյուղը ի՞նչ եկամուտ կտա նրան։ Որ սաղ տարին աշխատի, սկի մի քանի հարյո՛ւր էլ չի ունենա։ Հետո՞, դրանով պարտքիցդ կպրծնե՞ս...

ՍԱՀԱԿ.— Իհարկե... Տեսնենք... խենթություն է ասածը...

ԳՐԻԳՈՐ.— (Ձայնը ավելի է բարձրացնում): Իհարկե՝ խենթություն է... Ի՞նչ գործ պիտի ունենա գյուղումը։ Մեկը հենց ես, մի՞թե պետք ունեմ փաստաբանի... Սկի՛ էլ չէ։ Ողջ կենա Քաչալ Մարտիրոսը։ Համ էժան, համ էլ օրենքը իմացող... Չէ՛, հիմարություն թող լինի. թող գնա Թիֆլիս. փող չունի՝ տամ. մի լավ կանտոր բաց անի... Ես խոսք եմ տալիս, որ մենակ հենց ինքս տարեկան նրան 2—3 հազարի գործ տամ... Այնքա՛ն կապեր ունեմ. բոլորին էլ կծանոթացնեմ. տղայիս պե՛ս նայեմ... Հը՞, սրա՞ն ինչ կասես, Հոռոմսի՛մ։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— Իհարկե, քե՛զ մատաղ, Գրիգո՛ր աղա... Դե՛հ, էլա

նո՛ր ա եկել, ջահե՛լ ա... Ես գիտեմ, կերթա Թիֆլիս... Քաղաքի սովորը՝ գեղից շուտ կզզվի։ Թող էլա մեկ ամառ հանգստանա։

ԳՐԻԳՈՐ.— Թող հանգստանա, քե՛ֆ անի։ Իմ տո՛ւնս էլ առաջը բաց, իմ բաղերն էլ... Շուտ-շուտ ղրկեք մեզ մոտ. Թերեզան էլ հաղր մի կրթված մարդու երես կտեսնի...

ՍԱՀԱԿ.— (Աղաչավոր): Մնացեք մեզ մոտ... ընթրեի՛նք...

ԳՐԻԳՈՐ.— Չէ, գործե՛ր կան... Մարդի՛կ են գալու մոտս... Հա՛... (Էլի մի կողմ է տանում Սահակին): Մուրհակիդ ժամանակը մի-երկու ամիս է մնում, գիտե՞ս... Դե լավ, հոգս մի՛ անի, ես քեզ նեղություն տվողը չեմ... Ջես կարող՝ ջա՛նդ սաղ ըլի... Էլա կուզես՝ պատռեմ-գցեմ։ Սաշա՛յին զուրբան անեմ, նա էլ .. Մի քանի հազարը ի՞նչ բան է, որ քեֆդ կոտրեմ... Ոչի՛նչ, թող մնա. երբ կարողանաս, Սաշան աշխատի...

ՍԱՀԱԿ.— (Ուրախ թոթվելով): Շնորհակալ եմ... Թաղացնենք բաս մուրհակը։

ԳՐԻԳՈՐ.— Չէ՛, ի՞նչ հարկավոր է... քեզնից ուզո՛ղը չկա։ Երբ Սաշան աշխատի՝ կամաց-կամաց կտաք։

ՍԱՀԱԿ.— Ո՛ղջ մնաս... Թեթևացրիր ինձ. թե չէ՝ ի՞նչ պիտի անեի։ Մի մե՛ծ բեռից ազատեցիր ինձ...

ԳՐԻԳՈՐ.— Քեֆդ քյո՛ք պահիր... Հա՛, Սաշային էգուց մեր տո՛ւն բերդուք էլ եկեք մեզ մոտ ճաշենք, մի քիչ խոսենք... բարեկամանա՛նք... (Մոտենում է տիկիններին): Դեհ, գնա՛նք, Սաթենի՛կ... (Ձեռք է տալիս տանտիկնոջը): Մնա՛ք բարև...

(Իրար ձեռք են թոթվում. հայկական ձևերով բարևներ. ճանապարհ են դնում հյուրերին. դռան միջից՝ բարևներ):

ՍԱՀԱԿ.—(Ներս է գալիս, ձեռքերն ուրախ շփում է, հետո՝ դեպի սեղանը գնացող կնոջը): Լսեցի՞ր, ա՛յ կնիկ... Սկի՛ չէի հավատա։ Գիտե՞ս, մուրհակն ուզում էր պատռի, պարտքս ոչնչացնի։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Ապշած): Բո՛ւյ... Հրա՞շք ես պատմում։

ՍԱՀԱԿ.— Բա՛ս... Ասում է՝ թող Սաշային զուրբան լինի... Ասում է՝ չե՛մ ուզում, թող մնա, երբ Սաշան աշխատի... (Խորհրդավոր)։ Չէ՛, ինչպես տեսնում եմ, Սաշան կպավ աչքին։

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Սեղանին է մոտենում և սկսում հավաքել): Հա՛, ի՞նչ լավ կլիներ։ Թե՛ պարտքիցը կազատվեինք, մեր տունն ու բաղը կպրծացնեինք, թե՛ փող էլ կտար վրան... (Դառնում է դեպի ներքին դուռը և ձայնում): Կիրակո՛ս... (Ամուսնուն): Հը՞, ճիշտ չե՞մ ասում։

ԿԻՐԱԿՈՍ.— (Լուռ՝ մտնում է):

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Նրան): *Հավաքի՛ր... Գառը մորթեցի՞ր։*

ԿԻՐԱԿՈՍ.— *Հրամանք ես. քերթում են։*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Լավ, գնանք պատրաստություն տեսնենք... Սամավարը վերցրու...* (Ինքն էլ բաժակներն է վերցնում): *Հետո կգաս մնացածներն էլ կբերես...* (Գնալիս՝ ամուսնուն): *Հը՞, քեֆդ լավացավ, չէ՞... Ինչ ուզում են՝ ասեն. Գրիգոր աղան լա՛վ մարդ է։* (Դռան միջից): *Սաշան էլ, ինչպես տեսնում եմ, Թերեզի...*

ՍԱՀԱԿ.— (Միջանատում է): *Լա՛վ, լա՛վ, հերի՛ք է։ Ի՞նչ ես էլի ամենքին ասում։ Ձենդ փորդ քաշի՝ տեսնենք ի՞նչ կանենք։* (Տիկին Մանուկյանը գնում է):

ՍԱՀԱԿ.— (Զեռքերը շփելով՝ մի քանի քայլ է անում. հետո գնում դեպի պատշգամբ: Փողոցից լսվում են հեռավոր երգի և երաժշտական գործիքի խուլ ձայներ: Սահակը մի բան է հիշում, շտապով գնալ է ուզում, բայց դրսից լսվում են քրիչների ձայներ: Կանգ է առնում):

8) Նույն, Թերեզա, Ալեքսանդր և Մարգո (ծիծաղելով ու քրիչներով ներս են խուժում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Կիսովին դեպի դուրս): *Այդ չեղա՛վ, օրիո՛րդ. դուք խոսք տվիք ասելու...* (Ներս է գալիս):

ԹԵՐԵԶԱ.— (Ներս է մտնում, կոկետությամբ): *Չե՛մ ասի... Դա ի՛մ գաղտնիքն է։*

ՄԱՐԳՈ.— *Թող չասի. ե՛ս կասեմ։ Քե՛զ համար էր, Սա՛շա, քե՛զ համար։*

ԹԵՐԵԶԱ.— (Բողոքելով): *Չհավատաք, սո՛ւտ է, դիտմա՛մբ է ասում, որ ինձ կարմրացնի...* (Մարգարիտին, իբր թե բարկացած): *Ջա՛ր, չա՛ր...* (Կարմրում է, հետո հարձակվում Մարգոյի վրա, բայց պինդ գրկում է և համբուրում):

ՍԱՀԱԿ.— (Լռչացած): *Վա՛, վա՛... Ի՞նչ է եղել, ինչո՞ւ եք կռվում...* (Երբ տեսնում է վերջը՝ ծիծաղելով): *Հա՛, համբուրվո՞ւմ եք... դա ուրիշ բան։*

ՄԱՐԳՈ.— (Պոկ է գալիս Թերեզայի գրկից և հորը): *Գիտե՞ս, հայրի՛կ...*

ԹԵՐԵԶԱ.— (Արգելում է): *Չասես, Մարգո՛, չասես, ամոթ է։*

ՄԱՐԳՈ.— *Ինչո՞ւ է ամոթ, կասեմ։*

ԹԵՐԵԶԱ.— *Չասե՛ս, չասե՛ս...*

ՄԱՐԳՈ.— (Վազում է հոր մոտ): *Կասեմ... գիտե՞ս, հայրիկ, էն որ մի խոտ կա, երեք թերթ ունի... Թերեզան քաղեց...* (Թերեզային՝ որ

ուզում է արգելել): *Թո՛ղ, Թերե՛զա... Հա՛... Քաղեց, ամեն մի տերևի մի-մի տղամարդի անուն հիշեց մտքումը... Իհարկե, Սաշայինն էլ կար. հետո ասաց.— «Սիրո՞ւմ է ինձ»... և քաղեց։ Խոստացել էր եղածը ասելու, բայց չասաց։*

ՍԱՀԱԿ.— (Ծպտալով): *Բաս որ չի ասել, ուրեմն Սաշա՛ն կլինի։*

ԹԵՐԵԶԱ.— *Ո՛չ, ո՛չ, նա՛ չէ, նա՛ չէ... ուրի՛շն է։*

ՍԱՀԱԿ.— (Շոյելով հրան): *Դե լավ, ի՞նչ կա ամաչելու։ Ինչի՞, որ Սաշան լինի՝ չե՞ս ուզի... Ի՞նչ է, չե՞ս հավանում։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Հայրի՛կ, թո՛ղ...*

(Երաժշտության ձայնը ավելի է մոտենում):

ՍԱՀԱԿ.— (Լռչանում է): *Դե՛, հանա՛ք եմ անում...*

ԹԵՐԵԶԱ.— *Ինչ հանաքչի՞ն եք, Սահա՛կ Պետրովիչ...* (Մոտենում է լուսամուտին): *Սա՞ ինչ մուզիկա է։* (Նայում է): *Նայեցե՛ք, Ալեքսա՛նդր Սահակիչ, կույր աշուղներ են։*

(Ամենքը մոտենում են լուսամուտներին: Թերեզան ու Ալեքսանդրը՝ մեկի առաջ, Սահակն ու իր աղջիկը՝ մյուսի):

ՍԱՀԱԿ.— *Քոռ եղիկն է... Կուզես՝ ասեմ այս երեկո մեզ մոտ գա, Սա՛շա. լավ-լավ երգեր գիտի ասել։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Հայերե՞ն։*

ՍԱՀԱԿ.— *Այո՛. նոր-նոր խաղեր. լա՛վ էլ ձայն ունի. ամբողջ գիշեր կերգի, հյուրերին կզվարճացնի։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Դառնալով հորը): *Ի՞նչ է, հյուրե՞ր կլինեն այս երեկո։*

ՍԱՀԱԿ.— *Մի ողջ գառն ենք մորթել. Մատվեյը կլինի, ուրիշներն էլ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Իսկ Գրիգոր աղան ու տիկի՞նը։*

ՍԱՀԱԿ.— *Նրանք չուզեցին... Գրիգոր աղան ասաց, որ գործեր ունի։*

ԹԵՐԵԶԱ.— *Ուրեմն ե՛ս էլ գնամ։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Ինչո՞ւ, դուք մեզ մոտ մնացեք։*

ՄԱՐԳՈ.— *Այո՛, մնա՛ Թերե՛զ. հետո ծառան քեզ կտանի։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Ինչդո՞ւ, ես ի՞նքս կտանեմ... Ուրեմն մնո՞ւմ եք...*

ԹԵՐԵԶԱ.—(Ծպտալով հրան): *Է՛լ ի՞նչ արած, որ այդպես եք ուզո՞ւմ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Շնորհակալ եմ...* (Հորը): *Հա՛յր, իմաց տուր երգչին, թող մեզ մոտ լինի այս երեկո։* (Թերեզային). *Դուք է՞լ սիրում եք այդ երգերը։ Ես շա՛տ եմ սիրում և շա՛տ էլ կարոտել եմ... Նրանց մեջ խոր զգացմո՛ւնք կա...*

ԹԵՐԵԶԱ.— *Ե՛ս էլ սիրում եմ. մի քանիսնե՛րն էլ ինքս երգում եմ... Բայց լսենք՝ տեսնենք ի՞նչ է երգում ...*

(Երգը մոտենում է: Երգում են Հ. Հովհաննիսյանի «Արագն եկավ լպիվին տալով» երգը: Բոլորը լուռ՝ լսում են: Ալեքսանդրը համար-

յա սիրալիր՝ կպել է Թերեզային, և սա ետ չի քաշվում: Սահակը մեկ-մեկ նայում է և ժպտում: Մարգոն էլ նայում է, հետո բոթում հորը, որ նայի և լուռ ծիծաղում է:
Երգը շարունակվում է երաժշտության հետ, և վարագույրը կամաց-կամաց իջնում է):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ

Մանուկյանների այգին. ամառվա վերջերն է: Բեմի աջ կողմից մի քանի աստիճաններ և մի դուռ՝ տանում է դեպի հերսը: Դռան երկու կողմին՝ ծառեր: Սանդուղքի մյուս կողմից՝ ծաղկանոց, դեպի խորքը: Բեմի առաջ՝ նստարան. Փիչ հեռու, ձախ, մի սեղան, որի վրա կա ուտելիք, բաժակ: Սեղանի մոտ՝ աթոռներ: Խորքում մի կարճ ցանկապատ՝ մեջտեղը մեծ դարբաս: Ցանկապատի մյուս կողմը փողոցն է: Հորիզոնում երևում են անտառ ու լեռների սավերազծեր: Կեսօր է:

1) Բաղդասար-ամի, Զաքար, Մարգար, Սերոբ, հետո՝ Կիրակոս

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Հրում է այգու դուռը և զգույշ՝ ներս մտնում: Ետևից երևում են մյուսները: Զորս կողմն են նայում ամենքը, հետո ներս են գալիս): *Ըստեղ չի... Նե՞րս գնանք...*

ԶԱՔԱՐ.— (Առաջ է գալիս): *Ինչի՞ չէ. խնդիրք ունենք. փո՛ղ ենք տալու...* (Համարձակ գնում է դեպի տան դուռը):

ՄԱՐԳԱՐ.— *Կա՛ց, տո՛, Կիրակոսի՛ն ձեն տու... էշ խո չե՞նք, որ բիրդան ներս ընկնենք:*

ՍԵՐՈԲ.— (Քայլում է դեպի տան դուռը): *Կացեք ես ձեն տամ...*

ԿԻՐԱԿՈՍ.— (Տան դռնից երևում է սրճամանը ձեռքին: Երբ տեսնում է գյուղացոց՝ խստությամբ): *Հը՞, ի՞նչ ա. ի՞նչ եք ուզում:*

ԶԱՔԱՐ.— *Աղին մեկ ձեն տա՞ս, քե՛զ մատաղ:*

ԿԻՐԱԿՈՍ.— *Ո՞ր աղին:*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Ալեքսան բեկին... Գործ ունենք:*

ԿԻՐԱԿՈՍ.— *Հրե՛ն ինքը կգա հիմի.. . Սուդո՞մը գործ ունիք:*

ՄԱՐԳԱՐ.— *Հա՛, իմը սո՛ւդի գործ ա:*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Ես էլ եկա, հա՛նց որ... Ասում են, յանի, Ալեքսան բեկը... հանց որ... զակո՛ն ա գտել՝ ասում են... որ բա՛ն ա, վեքսիլով պարտքը կարանք չտանք:*

ԿԻՐԱԿՈՍ.— (Ցած է դնում սրճամանը և ծիծաղում): *Ո՞նց... Բա որ ըտենց ըլեր, առաջ հազար էդ զակոնովը ի՛մ վեքսի՛լը կոչնչացներ... Լա՛վ են էշացրել քեզ, ամի՛...*

ԶԱՔԱՐ.— *Դե ամին մեղավոր չի... Քյաշալ Մարտիրո՛սն ա ասել... Հալբաթ ծիծաղած կըլի:*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Բա ինչպե՞ս անենք, քե՛զ մատաղ... Բա թողամ հանց որ... բա՞ղս էլ խլի... էս տարի խո բերքիս կե՛սն էլ կտանի:*

ԿԻՐԱԿՈՍ.— *Ո՞վ, Գրիգոր աղա՞ն...* (Մոտենում է խորհրդավոր): *Թե խելք ունես, ամի՛, անսա՛ս տեղդ գնա. Գրիգոր աղան ուզում ա Ալեքսան բեկին իրան փեսա շինի... իմացա՞ր...*

ԲՈԼՈՐԸ.— *Բո՛... Ղո՞րթ...*

ԶԱՔԱՐ.— *Լսել եմ: Սրանց ասում էի՝ չէին հավատում... Տեսա՞ր, Բաղդասա՞ր ամի. դե հմի բա՛ղդ էլ գնաց, դու էլ հետը:*

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Գլուխն է երերցնում): *Բա ասում էին՝ Ալեքսան բեկը ուսում առա՛ծ մարդ ա, գեղացու ցավը գիտի՛, արդարության կողմը կբռնի...*

ՄԱՐԳԱՐ.— *Դե արդարությունն էլ է՛ն ա, որ մարդ իր աներոջը դատաստանի չի՛ քաշի, է՛լի... Բա չե՞ս իմանում, որ երկու տեսակ արդարություն կա:*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Էդ խո աբլակատ Մարտիրոսը դառավ... Փող չունեցողի համար, ասում ա, ուրի՛շ արդարություն, հարուստի համար՝ ուրիշ:* (Գլուխն է երերցնում): *Բա ինձ ասել են, թե օրենքը ամենքի համար մե՛կ ա...*

ԿԻՐԱԿՈՍ.— *Մեկ լինելը՝ մեկ ա, ամա արի տես, որ ինձ ու քեզ համար օրենքով շարժվողները մեկ չեն... Ամա դո՛ւ գիտես. կուզես՝ սպասիր. հմի աղեն կգա:*

ՍԵՐՈԲ.— *Ե՛ս էլ խնդիրք ունեմ...*

ԿԻՐԱԿՈՍ.— *Քոնը իմանում եմ...* (Գնում է դեպի դուռը): *Մի քիչ ըտեղ կացեք, էն ա՝ կգա...*

2) Նույնք և Ալեքսանդր

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ամառվա հագուստով, գլուխը բաց, մտնում է տան դռնից): *Հա՛... Գյուղացի՞ք են...* (Մոտենում է): *Բարև ձեզ: Երևի ինձ հետ գործ ունեք:*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Հրամա՛նք ես, Ալեքսան բեկ... Սո՛ւդի գործ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Լա՛վ... Համեցեք նստեք...* (Կիրակոսին): *Ո՞ւր ես գնում. ինձ համար կոֆե բերի՞ր:*

ԿԻՐԱԿՈՍ.— Է՛ն ա բերել ե՛մ... Մարգարիտը կգա՝ կլցնի (Դնում է):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Նստում է նստարանի վրա): Համեցե՛ք, նստե՛ք։

ՋԱՔԱՐ.— Վնա՛ս չունի, աղա՛. սենց էլ լավ ա։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Չէ՛, ինչո՞ւ... Ա՛յ, էն աթոռները առեք... Եվ կամ մեկդ հենց այստեղ, կողքիս նստեք... Ի՞նչ է, քաշվո՞ւմ եք... Ձեր գյուղացին չե՞մ, թե՞ ես յադ եմ ձեզ համար։

ՍԵՐԱԲ.— Ինչի՞ յադ, քեզ զուրբան. մեր Սահակ բեկի տղան չե՞ս. մեր քուչեքումը, մեր տներումը քի՞չ ես խաղացել...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Հա՞... Ավելի՛ լավ... Մենք բոլո՛ր էլ մի երկրի զավակներ ենք և եղբայրներ։ Ի՞նչ անենք, որ ես Մոսկով եմ գնացել... Խո էլ ըստեղացի՞ եմ, գյուղացի և ձեր ընկերը... Նստի՛ր, Բաղդասա՛ր ամի, դու խո յադ չե՞ս. հորս հասակի մարդ ես... Ա՛յ, այստեղ, կողքիս նստիր... Դո՞ւ էլ գործ ունես սուդումը...

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Նստում է կողքին և սկսում է ճամարձակություն ստանալ): Դե ի՞նչ անենք, Ալեքսան բեկ, քեզ մատաղ... Դինջ թողնո՞ւմ են, որ... Ես սուդումը գործ չունեմ, չէ... Իմը ուրիշ բան ա...

(Մյուս գյուղացիք, մեկը աթոռի, մյուսներն ոտքերի գետնի վրա նստատում են):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Բաղդասարին): Վնաս չունի, առաջ դու ասա... Ի՞նչ է, չլինի՞ առնելիք ունես սրանից-նրանից և ուզում ես հավաքել. որ հոգեբաժին չինես... (Ծիծաղ: Մյուս գյուղացիք էլ ծիծաղում են: Առհասարակ ամենքը սկսում են բացվել հեռզհետե):

ՋԱՔԱՐ.— Ա՛ քեզ մատաղ, Ալեքսա՛ն բեկ, ի՞նչ լավ արիր, որ եկար... էն անիրավ Քյաշալ Մարտիրոսից մեզ կազատես... Դաղո՞ւմ է, դաղո՞ւմ... Զակոնը, դե՛, իրա ձեռքումը, հասկացողն էլ՝ ինքը... Դե՛, մենք էլ միամի՞տ, անգի՞տ... Պոկո՞ւմ ա ու պոկում, ու դեռ մեզ էլ անիրա՛վ դուրս բերում... Աստված քեզ օրհնի, որ եկար. որ իմանա՞ս, տաղ գեղը քեզ օրհնում ա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Լա՛վ, լավ. շնորհակա՛լ եմ... Ես էլ ձեր գյուղացին եմ, չէ՞. իմ պարտքն է ձեզ օգնել, ձեր ցավերի մասին աշխատել, լծողնել, որ ձեզ խաբեն... Հա՛մ էլ, օրենքը որ կա—ամենքի՛ համար է։ Բանն այն է, որ էդ օրենքները ձեզ ծանոթ չեն... Ի՞նչ որ է. զոլա՛զ կացեք. քանի ես կամ—ոչ ոք չի կարող առանց օրենքի բան բռնել ձեր դեմ։

ԲՈԼՈՐԸ.— Ա՛յ, աստված քեզ օրհնի... Ա՛յ դու ողջ կենաս... Աստված երկար կյանք տա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Շնորհակա՛լ եմ... (Բաղդասարին): Դե՛, ամի՛, ասա տեսնե՛նք. գործդ ի՞նչ է. առնելիք ունես, չէ՞...

ԲԱՂԴԱՍԱՐ.— Չէ՛-հա, քե՛զ մատաղ, որ ասե՛ս՝ պատանքի փող էլ չունեմ... Հլա պարտքն էլ վզիս... Լսել եմ յանի որ... Հրամանքդ զակոն ես գտել... Հանց որ... վեքսիլով պարտք ըլեմ մեկին... մեկ ընենց մարդու, է՛լի... Որ յանի էդ վեքսիլով 100 մանեթ առած ըլեմ ու 150 գրած ըլի... որ էս երկու տարի էլ բաղիցս տամ, ցորենիցը տամ, եղիցը տամ... ու է՛լ հետ 200 մանեթ պարտք ըլեմ... Լսել եմ յանի որ... էդ զակոնովը, հրամանքդ էնպես կանես, որ կազատես ինձ էդ աստծու պատժիցը...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ժպտուն): Սպասի՛ր... Ուրեմն դու պարտք ես առել միայն 100 ռուբլի՞...

ԲԱՂԴԱՍԱՐ.— Հա՛, քեզ մատաղ. աստված էլ գիտի (գյուղացոց ցույց տալով). սրա՛նք էլ գիտեն... Մեկ տարի բաղս բերք չտվավ, տո՛ւրք պիտի տայի...

ՋԱՔԱՐ.— Ա՛յ Բաղդասար ամի, յանի զո՞ւր չես խոսում. էդ խո ըլելու բա՛ն չի. առել ես՝ պիտի տաս...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Իհարկե, իհարկե, առել ես՝ պիտի տաս... Բայց դու ասում էիր, թե 200 մանեթ է դարձել պարտքդ. հա՞։

ԲԱՂԴԱՍԱՐ.— Տոկոս եմ տվել, տոկո՛ս... 100 մանեթը երբ առա, չէր տալիս՝ մինչև 150-ի տակ ձեռք չքաշեցի... բաղից-բանից էլ՝ հարյուրից ավելի տված կըլեմ... Էս տարի վեքսիլը թազացրեց—չկարացի տալ—150-ը 200 շինեց... (Գյուղացոց): Ըսենց չի՞, ա՛խալխը. դուք ու ձեր աստված. սո՞ւտ եմ ասում...

ԲՈԼՈՐԸ.— Ղորթ ա, ըսե՛նց ա...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Գլուխն է երերցնում): Հը՛մ... վեքսիլի մեջ խո չի՞ գրած, որ հարյուրը տոկոսն է։

ՋԱՔԱՐ.— Բա գրա՞ծ կըլի. գիժ խո չի՞։ Ինչի՞, մենք չե՞նք իմանում, որ զակոնով էդքան տոկոս չի ըլի... ամա որ նեղն ա լծո՛ւմ. դու էլ որ պե՛տք ես ունենում...

ԲԱՂԴԱՍԱՐ.— Հա՛, քե՛զ մատաղ, նե՛ղն ա լծում... Ասում ա՝ է՛ս ա, կուզես-տամ... Որ վեքսիլն էլ չես ուզում թազացնի—գալիս բողազիդ ա չոքում, ուզում ա սուդը տա, տունդ ու տեղդ խլի...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Սպասիր... Դու ասացիր, որ 150 ռուբլու էր առաջին վեքսիլդ, երբ թազացրիր... Իսկ հինը հետ տվա՞վ քեզ, երբ երկրորդը առավ։

ԲԱՂԴԱՍԱՐ.— Չէ... ընչի՞ որ... Կըլի որ ճղած ըլեմ... հա՛ ամա. մի՛տս ա, ի՛նքը հենց ինձ մոտ ճղեց ու գցեց...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Դառն ժպիտով): Խամություն ես արել, ամի՛... Բայց տեսնե՛նք, առաջ մեկ ասա, որի՞ն ես պարտ...

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Շփոթված և լուռ ֆիշ, մյուսներին է նայում): *Սկի... չե՛ս ճանաչի...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ոռ նկատում է գյուղացոց շինարարները). *Հը՞, էդ ո՞վ է, որ դժվարանում եք անվանելու. Պիտի ասեք, որ գործ սկսե՞մ, թե՞ չէ...* (Հանկարծ մի բան հիշելով, ոտքի է ելնում, ուշադրությամբ նայում է գյուղացոց, դեմքը մռայլվում է. խիստ): *Չլինի՞ էլի...*

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Ոտքի է ելնում, վախեցած): *Մի նեղանա՛, քե՛զ մատաղ... Ես հիմարացա... Որ իմացա, մտածեցի, թե ուսում առա՛ծ մարդ ես, կըլի՛ որ արդարության կողմը պահես...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ավելի խիստ): *Ուրեմն նա՛ է՝ Գրիգոր աղան...*

ԲՈՂՈՐԸ.— (Ոռ կանգնած են, լուռ՝ գլուխները խոնարհեցնում են: Քիչ լուռ):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Շատ լա՛վ ես մտածել, Բաղդասա՛ր ամի, որ եկել ես ինձ մոտ... Այդ գործը թեև դժվար է, թղթե՛ր չունես, փաստ չկա, բայց ես վերցնում եմ ինձ վրա... Գյուղացիք վկա կկանգնե՞ն։*

ՋԱՔԱՐ.— *Ով ասես... Ո՛ղջ գեղը վկա։*

ՍԵՐՈԲ.— *Բոլորս վկա ենք... Դաղեց մեզ ախր էդ մարդը. ամենիս տունն էլ քանդեց։*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Օրհնվե՛ս դուն, Ալեքսա՛ն բեկ, թե էդ մարդին մեկ ընե՛նց, է՛լի, ոլորես, սուդի տակ գցես—սաղ գեղը կազատես, մեր փրկիչ կդառնաս...*

3) Նույնի և Մարգարիտ

ՄԱՐԳՈ.— (Վազելով ներս է գալիս): *Ուշացա, չէ՞, Սա՛շա...* (Տեսնելով գյուղացոց՝ կանգ է առնում): *Սրա՞նք ինչ են ուզում։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Գործ ունեն ինձ հետ... Կոֆեն շինիր ու գնա՛։*

ՄԱՐԳՈ.— *Իսկ Թերե՞զը... Շլյապան էր հանում, որ այստեղ գա։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Թերե՞զը... Շո՛ւտ, ներս գնա և մի կերպ պահիր՝ մինչև սրանք գնան... Շուտ կվերջացնեմ... Այստեղ մի՛ գաք. գնա՛...*

ՄԱՐԳՈ.— (Զարմացած նայում է նրան, հետո կամաց-կամաց՝ ներս գնում):

ԳՅՈՒՂԱՑԻՔ.— (Թերեզի անունը լսելիս՝ իրար են նայում, հետո փսփրսալ սկսում):

ՋԱՔԱՐ.— (Մարգոյի գնալուց հետո): *Քե՛զ մատաղ, Ալեքսա՛ն բեկ։ Չնեղանաս։ Դե՛, մենք է՛լ գիտենք, որ Գրիգոր աղային դժվա՛ր ա կպչելը... Էլի ինչքան չըլի՝ զոռբա ա, փող շա՛տ ունի։*

ՄԱՐԳԱՐ.— *Համ էլ մեր նեղ օրերին էլի նա ա հասնում...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Բարկացած): *Լռեցե՛ք, այդ ինչե՞ր եք ասում։ Ինչպե՞ս թե զոռբա է, փող շատ ունի... Թող ունենա։ Արդարությունը՝ ուժ, հարստություն չի՛ ճանաչում. նա մե՛կ է ամենքի համար։ Ասացի՛ ձեզ. երկու ամսից ավելի է՝ այստեղ եմ, և օր չեղավ, որ նրա անիրավությունների մասին նոր բաներ չպատմեն ինձ...* (Բաղդասարին): *Գործդ ես կվերցնեմ, ամի՛։ Ո՛չ մի կոպեկ էլ չեմ առնի քեզնից... Ժամանա՛կն է գյուղն ազատելու այդ հրեշի ձեռքից...* (Զաքարին): *Իսկ դո՞ւ ինչ գործ ունես, քո՞նն էլ պարտքի, տալիքի գործ է։*

ՋԱՔԱՐ.— *Բաղս խլում են, Ալեքսա՛ն բեկ. գործը հին սուդումը. որդիքքս կկոտորվեն քաղցածությունից։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Ո՞վ է, դարձյա՞լ Գրիգոր աղան։*

ՋԱՔԱՐ.— *Չէ՛, քե՛զ մատաղ, Ավետիսանց Գաբրելն ա...*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Սո՛ւտ ա, ա՛խալխը, սո՛ւտ ա... Ես ձեզ ասել եմ ու կասեմ, որ Գաբրելը սկի կո՛պեկ չունի, ո՞րտեղից քեզ 500 մանեթ տվավ... է՛լի Գրիգոր աղան ա... Ա՛յ կտեսնեք. բաղիդ վրա աչք ա տնկել ու Գաբրելի՛ն ա մեջ գցել...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Մարգարին և Սերոբին): *Իսկ դո՞ւք ինչ գործ ունեք...* (Հիշելով): *Հա՛... ձեր խնդիրը պատրաստել եմ... Ուզածս թղթերը բերի՞ք։*

ՄԱՐԳԱՐ.— (Հանում է ծոցից թղթեր և տալիս է): *Հրե՛ս, բերել ենք...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Առնում է): *Լա՛վ... Երբ գործը կնշանակվի, ձե՛զ էլ իմաց կտամ... Ապահո՛վ եղեք. իրավունքը ձե՛ր կողմն է։*

ՍԵՐՈԲ.— *Այ, աստվա՛ծ քեզ օրհնի... Բաս մենք կպրծնենք, է՛լի...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Անպա՛տճառ։*

ՋԱՔԱՐ.— *Բաս ի՞մ գործը ոնց անենք, Ալեքսա՛ն բեկ։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Քո՛ գործն էլ ես կվերցնեմ։ Իհարկե, դու էլ վկաներ կունենաս... Մի քանի օրից է՛լի եկեք. ես մեկ տանուտերի հետ կխոսեմ, հետո ձեզ կանչել կտամ։*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Բաս գնա՛նք, ա՛խալխ։ Աստված մեր Ալեքսան բեկին մեզ համար սա՛ղ պահի։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Մի՛շտ եկեք ինձ մոտ առանց քաշվելու՝ երբ գործ ունենաք։ Մեկ էլ՝ այսուհետև առանց ինձ հարցնելու սկի՛ ձեռք չքաշեք վեքսիլի կամ ուրիշ թղթի... էդ քյաչալից էլ զգույշ կացեք. ասում են, որ Գրիգոր աղայի մարդն է...* (Բաղդասարին): *Ա՛մի...* (Զաքարին): *Դո՛ւք էլ. էս երեկո եկեք ինձ մոտ՝ խնդիրներդ գրեմ և մտածենք, թե ի՞նչ պիտի անենք... Մեկ 5—10 վկաների անունները էլ*

բերեք... Գրիգոր աղան չլինի՝ ո՛վ ուզում է լինի—եթե անիրավ է, ձեռքիցս չի՛ պրծնի. միայն թե՝ վկաներ...

ԲՅԼՈՐԸ.— Ամենքս, ո՛ղջ գյուղը...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Շատ լավ ուրեմն... Զգաստացեք, ա՛յ... իմացե՛ք, որ արջին թե բռնեցինք, էն ա բռնել ենք։ Թե ձեռքից բաց թողնենք, վայն եկել ու ձեզ տարել է հետո։

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Ուրախ)։ Բաց չենք թողնի՝ աստծով... Աստվա՛ծ քեզ օրհնի... Թե բաղս ու տունս աղատեցիր՝ ընտանիքով օրհնող կլինենք։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Նրա ուսը ծեծելով)։ Լա՛վ, լա՛վ, ա՛մի։ Օրհնի՛ր դու, որ հաջո՛ղ տանենք գործը։ Թե չէ՝ շատ էլ հեշտ չի այդ արջին թալակ գցելը... (Սպառնալից)։ Բայց որ գցեցինք, է՛է՛...

ԲԱՂԴԱՍԱՐ.— Այ դու շա՛տ ապրես... էն սուրբ խա՛չը քեզ օգնական... (Բարեմաղթություններով և ուրախ խոսակցելով՝ բոլոր գյուղացիք դուրս են գնում)։

4) Ալեքսանդր (մենակ), հետո՝ Սաղակ

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Մի բոպե լուռ և խոհուն՝ նայում է գյուղացիների ետևից, հետո կամաց-կամաց գնում և սուրճ է լցնում)։

ՍԱՂԱԿ.— (Տան դռնից հանդարտ ներս է գալիս. պահ մի գնում է հետևից ուղղուն, ապա ասեղդուղից իջնում է)։ Մենա՞կ ես, Սա՛շա։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Դառնում է դեպի նա)։ Մենակ եմ... Բա՞ն ունես ասելու։

ՍԱՂԱԿ.— Մարգոն ասում էր, որ գյուղացիներ կան, և դու նրանց արգելեցիր գալ քեզ խանգարելու։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Գնացին... Եկել էին գանգատի... վաշխառուների մասի՞ն էր դարձյալ... (Խիստ)։ Դարձյա՛լ նա է, հա՛յր, մի՛շտ այդ մարդը...

ՍԱՂԱԿ.— Ա՛ս՛ս... Թերեզան ներսումն է... Գրիգոր աղայի մասի՞ն է խոսքդ, չէ՞... Տեսա, Բաղդասար ամի՛ն կար եկողների մեջ... (Տխուր)։ Թշվա՛ռ ծերունի...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Ուրեմն դո՞ւ էլ գիտես, թե նա ինչ է արել ծերունուն։ Եվ ինձ չէի՛ր ասում... Ո՛չ, հա՛յր, վճռել եմ ձեռքումս եղած բոլոր փաստերի հիման վրա՝ կռվի՛ ելնել նրա դեմ, գյուղը միանգամո՛վ ազատել, վերջ տալ նրա արածներին...

ՍԱՂԱԿ.— Կամա՛ց խոսիր, ո՛ղի... Նստի՛ր, նստի՛ր մեկ այստեղ։ (Նստում է)։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Այսպե՛ս էլ լավ է։ Սաստիկ վրդովված եմ... Հարյուր ռուբլի տալ, երկու տարի մեծ տոկոսնե՛ր առնել, հետո էլ երկու հարյուր ռուբլու պահա՛նջ դնել, ծերունու և նրա ընտանիքի ապավենն այգի՛ն խլելու ելնել... Ինչի՞ նման է սա։ Մե՛կ չէ, երկո՛ւ չէ... Ամբողջ մի ամիս է, ինչ հարստահարության պատմություն եմ լսում—միայն և մի՛շտ այդ մարդն է երևում մեջտեղ, իր սարդային արյունո՛տ ճիրաններով։ Ո՛չ ոքի չի խնայել, ո՛չ ոքի...

ՍԱՂԱԿ.— (Լուռ և գլուխը խոնարհած)։ Այո՛...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ավելի բորբոքված)։ Մեզ բարեկամություն է ցույց տալիս, զգո՛ւմ է, որ պիտի բացվե՛ր ինձ համար նրա աղտոտ դեմքը, գյուղացի՛ք պիտի դիմեին... Եվ կամենում է իր խոստումներով հորդորել ինձ՝ հեռանալու գյուղից, արգե՛լք չլինելու իր խայտառակություններին... Բայց օ՜, նա ինձ լա՛վ կտեսնի և լա՛վ կդգա... Չպիտի հեռանամ ես. պիտի մնամ և նրան քշե՛լ տամ այս կողմերից...

ՍԱՂԱԿ.— Սա՛շա, ի սեր աստծո, ինչե՛ր ես ասում. մտածի՛ր մեկ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Միշտ բորբոքված)։ Մտածելու պե՛տք չկա։ Երդվե՛լ եմ ես արդարության կողմը լինել։ Ես դրա՛ համար եմ ուսել... Ինքդ էլ տեսնում ես. թշվառների դառն քրտինքո՛վ է հարստանում այդ մարդը. ճզմո՛ւմ է ամենքին. կրակ դրել՝ գյո՛ւղն է վառում... էլ ո՞ր օրվա համար ուսում առա. ինչո՞ւ բերնիցդ զրկեցիր և փող ուղարկեցիր ինձ. որ արդարությունը պաշտպանելու համար զինվեմ ու զինավարժվեմ...

ՍԱՂԱԿ.— (Միջաճատում է)։ Սպասի՛ր, Սա՛շա, մի տաքանա... Ախր որ ամեն բան չգիտե՛ս... Գուցե սո՛ւտ են ասում, թշնամությո՛ւն անում... (Տխուր և ինքը իր համոզմանը դեմ)։ Ա՛խ, գուցե՛, գուցե... Բայց ի՞նչ ասեմ... Հոգուս ինչո՞ւ մեղք բառնամ... Ճի՛շտ են, ճի՛շտ՝ բոլորը...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Ահա՛, տեսա՞ր... Դո՛ւ էլ ճշտում ես ուրեմն։ Ես չեմ հասկանում դրանից հետո, թե ինչո՞ւ երկու շաբաթից ի վեր դու արգելում ես ինձ նրա դիմակը պատռելու, նրան դատարան քարշ տալու, ճզմելու և ոչնչացնելու...

ՍԱՂԱԿ.— (Հուսահատ)։ Սպասի՛ր... (Հուզված ելնում է, տրորում ճակատը։ Հետո ճանկարձ շուրջն է նայում, վարանում է և ճուսկ, ուրեմն վճռականորեն մոտենում է ուղղուն, բռնում նրա թևից և՝ խոպոտ շշուկով)։ Լսի՛ր, Սա՛շա... Ո՛չ, այլևս չե՛մ կարող ծածկել... Լսիր, ի՛նչ կասեմ... Ե՛տ կաց այդ գործից, հանգիստ թող Գրիգոր աղային... (Ավելի ճուզված)։ Եվ կամ, որն ավելի՛ լավ է, գնա՛ քաղաք. թո՛ղ գյուղը, թո՛ղ. խնդրում եմ քեզ, աղաչո՛ւմ եմ՝ թո՛ղ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Նստ է քաշվում զարմացած): *Ինչպե՞ս, թողնե՞մ գյուղը... Գնա՞մ... Ջանձրացրի՞ ձեզ արդեն. ինձ վռնդո՞ւմ ես...*

ՍԱՀԱԿ.— (Նեղացած): *Ախ, չէ՛, արդի՛ս, չէ՛, աստված գիտի՛, որ չէ...՝ Ի՞նձ էլ, մե՛զ էլ հետդ տար։ Գնա գործերդ կարգի դիր՝ մե՛նք էլ գանք... Հերի՛ք է այստեղ... Է՛լ չեմ կարող...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Բայց ինչո՞ւ, ի՞նչ է եղել... Ինչո՞ւ ես թաքցնում որդուցը, ի՞նչ կա...* (Բռնում է հոր թևից և քիչ լուռ՝ սպասում, հետո՝ խիստ)։ *Խոսի՛ր, հա՛յր, ուզո՛ւմ եմ իմանալ, վերջապես...*(Քիչ լուռ, հետո՝ ծիծաղելով): *Կամ գուցե վախենում ես... որ հաղթվե՞մ, նա արդա՞ր դուրս գա և ինձ անպատվի՞...* (Քրքիջ): *Ինչ վախկո՞տն ես եղել, հա՛յր...* (Քաջ): *Մի՛ վախենա, ի՛մ կողմն է արդարությունը՝ թեկուզև հաղթվեմ ես, լռեցնե՛ն ինձ... Բայց ես կխոսեմ ամեն կերպ, կգոռա՛մ... Եվ վերջապես՝ խամ չեմ ես, գիտեմ օրենքները, փաստե՛ր ունեմ...*

ՍԱՀԱԿ.— (Ավելի հուզված)։ *Չէ՛, չէ՛... ա՛յդ չէ...* (Նստում է և գլուխը ձեռքերի մեջ առնում: Մի վայրկյան լռություն է):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Հա՛յր...*

ՍԱՀԱԿ.— (Գլուխը բարձրացնում է և պղտոր հայացքով նայում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ծանրակշիռ): *Խոսի՛ր, հա՛յր... Ի՞նչն է քեզ ստիպում պաշտպանել նրան... Չլինի՞ դու էլ, գյուղացոց նման, մտածում ես, թե... Խոսի՛ր, վերջապես, հա՛յր...* (Մոտենում է և կողքին նստում): *Ուրեմն այդ չէ քո պաշտպանության պատճառը, չէ՞...*

ՍԱՀԱԿ.— (Վճռականորեն): *Ո՛չ, ա՛յդ չէ... Եվ ո՞րտեղից հանեցիր, որ ես նրան պաշտպանում եմ... Աստվա՛ծ էլ գիտե, մարդի՛կ էլ գիտեն, որ նրա ո՛չ մի գործի մեջ չկա՛ արդարություն, որ այդ հարստությունը դիզված է՝ խեղճերին կողոպտելով... Ես չե՛մ պաշտպանում, ո՛չ. բայց ես ի՛նքս, մենք, դո՛ւ, մայրդ և քույրդ... բոլո՛ր էլ նրա ձեռքի մեջ ենք...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Վեր է թռչում տեղից): *Ինչպե՞ս... Մե՞նք, նրա ձեռքի մե՞ջ...* (Հանկարծ հասկանում է): *Ուրեմն դո՛ւ... դու պա՞րտք ունես նրան... Պարտքե՞ր ունես դու... և այն էլ՝ նրա՞ն...* (Հուզմամբ): *Ո՞րքան է. և ինչո՞ւ...* (Ավելի հուզված և հուսահատ): *Նրա ձեռքի մե՞ջ... ե՞ս, բոլո՞ր...* (Հորը): *Իսկ դու փող չունե՞ս, չունե՞ս նրան տալու... Եվ շա՞տ է այդ պարտքը...*

ՍԱՀԱԿ.— *Հինգ հազար։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Սոսկումով)։ *Հի՞նգ հազար... Բայց ինչո՞ւ, ի՞նչը ստիպեց քեզ պարտք անելու... Եվ ինչո՞ւ ինձ չէիր գրում այդ ամենը...*

(Հուսահատ): *Ախ, հա՛յր, հա՛յր, այս ի՞նչ դրության մեջ ես ձգում դու ինձ...*

ՍԱՀԱԿ.— (Մեղմ, հանդիմանական): *Սա՛շա։* (Ոտքի է ելնում): *Լսի՛ր ինձ։* (Մոտենում է): *Իսկ դու ինչո՞վ ուսար։ Պակասե՞ց երբեք քո փողը այս չորս տարվա ընթացքում։ Երբեք դու մերժումն ստացա՞ր, երբ փող ուզեցիր... Իսկ այդ գումարների մեծ տոկոսնե՛րը, տոկոսների տոկոսնե՛րը...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ընկճված՝ գլուխը խոնարհեցնում է): *Իրավո՛ւնք ունես, հա՛յր... Ների՛ր ինձ. ես չէի մտածել. կարծում էի՝ փո՛ղ ունես, եկամո՛ւտ ունես այդուց...*

ՍԱՀԱԿ.— *Այդին հենց առաջի՛ն տարվանից գրավ է նրա մոտ. արդյունքի կե՛սը գրեթե՝ տոկոսի է գնում... Տունն էլ անցյա՛լ տարի գրավ առավ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ. (Լիովին ընկճված): *Ամեն ինչ կորսվա՛ծ է այլևս...*
(Կոքնում է ծառին հուսահատ: Երկուսն էլ լուռ են):

5) Նույնի և Գրիգոր աղա

ԳՐԻԳՈՐ.— (Այգու փողոցի դուռը մեղմությամբ բաց է անում, ներս մտնում և ետևից վրա քաշում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Որ տեսնում է նրան, ցնցվում, ուշքի գալիս, զսպում է իրեն և սառը՝ մնում է անշարժ):

ՍԱՀԱԿ.— (Նույնպես նկատում է նրան: Ժողովում է իրեն և մնում է տեղում անշարժ):

ԳՐԻԳՈՐ.— (Մի վայրկյան փոխնիփոխ զննում է երկուսին էլ, հետո կեղծ ժպիտ դեմքին, սիրալիր): *Բարև ձեզ... խանգարեցի՞... Ասի աղջիկս այստեղ է... Այս կողմերիցն էի անց կենում...* (Մոտենում է): *Հը՞... Ի՞նչ է եղել. տխո՛ւր եք... Չլինի՞ կռվել եք։* (Սահակին): *Երևի մի քիչ խի՛ստ ես խոսել հետը, հը՞... Ջահելի հետ խոսելը դեռ չես սովորել...* (Ալեքսանին): *Մի՛ նեղանա, ո՛րդի, հա՛յր է. միշտ որդոց լա՛վն են ուզում հայրերը... Համ էլ Սահակ բեկը խելոք մարդ է...* (Նստում է): *Նրա՛ն դու լսիր, զուր բաներ չի՛ ասի...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Շարժվում է տեղից և չոր): *Սխալվում եք, մենք չե՛նք կռվել։*

ՍԱՀԱԿ.— (Տխուր ժպտում է): *Է՛հ, ինչո՞ւ պիտի կռվեինք. խոսո՛ւմ էինք էնպես... Հրամանոցդ չէի՛նք սպասում...*

ԳՐԻԳՈՐ.— *Հա՛, տեսնո՛ւմ եմ... Ասի՝ մեկ մտնեմ, Սաշի քեֆը հարցնեմ...*

Բաս ո՞ւր է, մեր աղջիկը ձեզ մո՞տ էր եկել. ախր... Ախպե՛ր, էլ Թերեզին պահել չի լինում։ Չգիտեմ, ինչ-որ շատ է սիրել ձեր... Մարգարիտին։ Գիշեր-ցերեկ նրա վրա՛ է խոսում։ «Տեղիցը վեր է կենում թե չէ՝ «Գնա՛մ Մարգարիտի մոտ»։ Յա թե չէ՝ «Սե՛րգո, գնա Մարգարիտին ասա՝ ինձ մոտ գա»... Որ բան է, ըստեղ ընկավ, է՛լ տուն վերադառնալ չկա...

6) Նույնի և Թերեզա

ԹԵՐԵԶԱ.— (Տան դուռը բաց է անում, կիսովին երևում և շուրջն է նայում, առանց գլխարկի)։ *Գնացե՞լ են գյուղացիք...* (Ներս է գալիս սանդուղքների գլխից)։ *Ֆո՛ւհ, Ալեքսա՛նդր Սահակիչ, ինչ վա՞տ մարդ եք եղել, ճշմարիտ... Մի ժամ է, որ մեզ ներսը փակել եք...* (Մոտենում է և ձեռք է պարզում Ալեքսանին)։ *Բա՛րև ձեզ...* (Հորը)։ *Դու է՞լ այստեղ ես, հայրի՛կ։*

ԳՐԻԳՈՐ.— *Բո՛ւ, ա՛յ աղջի, մեկ ժամ է այստեղ ես և նո՞ր ես տեսնում Սաշային... Չլինի՞ դու էլ նոր ես գալիս։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Ներսն էին. ես այստեղ զբաղված էի։*

ԹԵՐԵԶԱ.— (Հորը)։ *Երևակայի՛ր, հայրի՛կ, մի ժամ է, որ այս անտանելի՛ մարդը մեզ ներսում փակել է և արգելել պարտեզ իջնելու— թե ի՞նչ է՝ մի քանի գյուղացիների հետ գործ ունի։*

ԳՐԻԳՈՐ.— *Ը՛մ, դա՞... Փաստաբան մարդ է, աղջի՛կս. իհարկե, չպիտի՞ խանգարել... Երևի գյուղացիները գործե՞ր ունեին հանձնելու...* (Ժպտալով)։ *Ե՛ս էլ տեսա նրանց ճանապարհին՝ այստեղից գնալիս...* (Ալեքսանին)։ *Բայց գիտե՞ս ինչ կասեմ քեզ, Ալեքսա՛ն բեկ.* (Խրատական)։ *Ինձանից քեզ խրատ չի՛ հասնի, բայց, դեհ, որքան չլինի, փորձված, հորդ հասակի մարդ եմ... Գյուղացիներին, որդի՛ս, շա՛տ էլ վստահել չի՛ կարելի... Նախ որ՝ սկի ուղիղ բան նրանցից լսել չես կարող. էս՝ մեկ... Վրա երկրորդ՝ որ նրանք ամեն բան մեծացնում են...* (Ոտքի է ելնում)։ *Լուն՝ ո՛ւղտ են շինում։* (Սահակին)։ *Հը՞, Սահա՛կ բեկ... Սաշան ջահել է, դո՛ւ ասա. դու լա՛վ կճանաչես գյուղացոց. ասածս ճիշտ չէ՞։*

ՍԱՀԱԿ.— (Խուսափողական)։ *Ի՞նչպես ասեմ... Ասենք՝ իհարկե...*

ԳՐԻԳՈՐ.— (Խոսելով՝ ճեռքերեռ մոտենում է Սահակին)։ *Մեկ էլ որ... Ա՛յ դու էդ լա՛վ կգիտենաս... Էդ գյուղացիք զահլա՛ էն տանում։ Կխոսան, կխոսան՝ բան չե՛ս հասկանա... Վա՛յ է՝ թե ուրիշի կովը մի քիչ խոտ կրծեց իրենց այգու ծայրիցը։ Իսկո՛ւյն գանգա՛տ, դալմաղա՛լ...* (Ժպտուն)։ *Հիմի էլ խո՞... փաստաբա՛ն կա գյուղումը,*

Ալեքսան բեկը գյուղացիների պաշտպանն է... (Նուրբ ծաղր)։ *Էնպես է անում, որ մարդ կարո՞ղ է իր պարտքը չտալ—թեկուզ մուրհա՛կ տված լինի, փող էլ առած... Ես ի՞նչ գիտեմ... Ուր լսես նրանց— կասես, թե Ալեքսան բեկը հրաշքնե՛ր գործելիս լինի...* (Ալեքսանին)։ *Չէ՛, որդի՛, դու մե՛զ լսիր—շատ երես մի՛ տալ դրանց. թե չէ՝ ժամանակդ էլ կխլեն ու ոչինչ էլ օգուտ չես ստանա...* (Սահակին)։ *Հը՞, լավ չե՞մ ասում, Սահա՛կ բեկ..*

ՍԱՀԱԿ.— (Մեղմ)։ *Դե, իհարկե, ձեր ասածն էլ ճիշտ է... Բանը շա՛տ են մեծացնում, չնչին բանը բան շինում։*

ԳՐԻԳՈՐ.— *Դու դրան է՛դ հասկացրու, է՛դ... Որ էդպես, ամենքի առաջ դուռը բաց անի, ամենքին ականջ տա— ողջ օրը պիտի չնչին գործերո՛վ զբաղվի...* (Մտնում է Սահակի քեռը և խոսելով սկսում է ճեռու տանել)։

ԹԵՐԵԶԱ.— *Դե՛հ, այժմ հույս ունեմ, որ ազատ եք այլևս... Կարո՞ղ եմ մնալ այստեղ։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Ազատ եմ... Դուք գուցե սո՞ւրճ կկամենայիք...* (Գնում է դեպի սեղանը)։

ԹԵՐԵԶԱ.— *Ո՛չ, թողեք. ես արդեն խմել եմ։*

(Այդ միջոցին Սահակն ու Գրիգորը մտել են պարտեզի խորքը և այլևս չեն երևում։

Բեմի վրա քիչ լուռ է։ Ալեքսանը կոթնել է մի ծառի, մոայլ է, ակնարկը գետնին։ Թերեզան, նստարանի վրա, երկար նայում է նրան)։

ԹԵՐԵԶԱ.— *Խոսեցե՛ք... Բայց երևի դուք մտքով դեռևս գյուղացիների հետ եք...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Նայում է նրան և քիչ մոտենում)։ *Դուք նեղանո՞ւմ եք... Այդ մարդիկ իրենց ցավե՛րն էին եկել պատմելու ինձ... Եվ որպիսի՞ ցավեր... Մի՞թե ձեզ չեն հետաքրքրում երբեք նրանց վշտերը։*

ԹԵՐԵԶԱ.— (Թեթևամտությամբ)։ *Է՛հ, Ալեքսանդր Սահակիչ, ինձ թվում է, որ դուք երբեմն ամեն ինչ շա՛տ եք մեծացնում և սրտի մոտիկ վերցնում...* (Ժպտալով)։ *Հայրս դրան ասում է «գրքերի քամիներ»... Չեմ գտնում, օրինակ, որ գյուղացիք, հիրավի, այնպիսի մեծ ցավեր ունենան, որ պետք լիներ ձեր ամբողջ ուշադրությանը և ոգևորությանը...* (Նկատելով Ալեքսանի դժգոհ շարժումը)։ *Դուք նեղանո՞ւմ եք ասածներիցս...* (Քիչ լուռ)։ *Լա՛վ ուրեմն. այո՛, գուցե ես սխա՛լ եմ... Ո՞վ գիտե... Բացատրեցեք գոնե... Ես գրեթե ոչի՛նչ կամ սխալ գիտեմ այդ բոլորի մասին...* (Լուռ)։ *Ինձ միշտ կրկնել են, որ գյուղացիք լուն ո՛ւղտ են շինում, լալկա՛ն են՝ թեկուզ հարուստ էլ լի-*

նեն... կեղծո՛ւմ են. դիտմա՛մբ աղքատ ձևանում, գանգատվում են և դժգոհություն հայտնում անտեղի կերպով... Զգիտեմ, ճշմարիտ, թե որքա՛ն իրավացի են այդպես ասողները...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Ձեզ խաբե՛լ են, օրիորդ... Եվ այդ նրա համար են խաբել, որովհետև տեսել են, որ լա՛վ սիրտ ունեք, կարող եք հուզվել անիրավությունից... գուցե մինչև իսկ բողոքել, սղմուկ հանել... Դուք էլ անձամբ չեք կարողացել և կամ չե՛ք ջանացել իմանալու... (Քիչ լուռ): Բայց, եթե կուզեք, ես, իբր նմուշ, մի քանի խոսքով նրանց ցավերից մի ամենածանրը պատկերացնեմ ձեր առաջ...

ԹԵՐԵԶԱ.— Խնդրեմ. շնորհակալ կլինեմ... Հիրավի, այժմ մտածում եմ, որ ես չափազա՛նց տգետ եմ մնացել և շուրջս կատարված իրողությունների խորքը թափանցելու չե՛մ ճգնել... Եվ դուք այնքա՛ն լավ եք խոսում, որ... ինձ հաճո՛ւյք է ձեզ լսել... Դե՛հ, խոսեցեք... (Թեթևամտաբար՝ ծիծաղելով): Երևի սոսկալի բաներ եք պատմելու, չէ՞... (Կոկետաբար): Ա՜խ, դուք ֆանտազյոր...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Դեմքը կնճռելով): Ֆանտազյո՞ր... Այդպե՞ս եք համարում դուք ինձ։

ԹԵՐԵԶԱ.— (Ծիծաղելով): Այն հաստափոր Մատվեյ Եգորի՛չն է ձեր մասին այդպես խոսում։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Իսկ դո՞ւք...

ԹԵՐԵԶԱ.— (Լրջանում է): Ե՞ս... ես միայն գտնում եմ որ դուք... այո՛, չափազա՛նց լուրջ եք և զգայուն... այնպե՛ս, է՛լի... շա՛տ խորն եք մտածում... մի՞թե այդ լավ է... (Լուռ): Ա՛յ, հենց այս րոպեիս էլ այնպե՛ս տխուր դեմք ունեք, որ կարծես մի ծա՛նր բան է պատահել... (Տխուր): Ու ինձ էլ չեք ուզում մասնակից անել ձեր ցավերին... Ե՛վ դեռ ասում եք, որ բարեկամ լինենք...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Ճշմարիտ է... Այո՛, այս րոպեիս սրտիցս արյուն է հոսում...

ԹԵՐԵԶԱ.— (Վախեցած և բոլորովին լրջացած՝ գնում է դեպի նա): Ուրեմն իրա՞վ է, մի դժբախտությո՞ւն է պատահել ձեզ հետ... Ասացեք, ասացե՛ք ինձ ձեր վիշտը...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Տխուր, գլուխն է ցնցում): Ո՛չ... Դա ձեզ գուցե չհետաքրքրի... մասնավո՛ր բան է...

ԹԵՐԵԶԱ.— Թո՛ղ լինի, պատմեցեք ի՛նձ ևս, ի՛նձ էլ տխրեցրեք, ե՛ս էլ եմ ուզում տխրել ձեզ հետ, ուրախանալ ձե՛զ հետ... (Հուզված իր ասածներից՝ դարձնում է գլուխը):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Բռնում է նրա ձեռքը): Թերե՛զ... Ախ, որքան լա՞վն եք դուք... մի՛միայն դուք...

ԹԵՐԵԶԱ.— (Սեղմում է ձեռքը): Ավելի՛ լավացրեք ինձ... խոսեցե՛ք, ամբո՛ղջ սրտովս լսում եմ ձեզ։ (Ձեռքը մեղմությամբ հանում է և քիչ ետ քաշվում):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Սթափվում է, զսպում իրեն. քիչ՝ լուռ է): Խոստացա ձեզ մի նմուշ պատմել գյուղացու անհուն վշտերից, մի նմուշ՝ նրա կրած տանջանքներից. լա՛վ ուրեմն, լսեցեք... (Լուռ): Ձեզ հավատացրել են, օրինակ, որ նրանք աղքատ չեն ու ավելի՛ հարուստ են, քան դուք... և ես... որ նրանք անընդհատ գանգատվում են, սովորություն են դարձրել լալկանությունը... Բայց, ո՛չ, օրիորդ, սո՛ւտ, սո՛ւտ են այդ բոլորը։ Եթե անձամբ մտնեք նրանց խրճիթները, տեսնեք նրանց կերածը, զգա՛ք նրանց կրած նեղությունները... Երբ տեսնեք, օրինակ, թե ինչպե՞ս վաշխառուն խլո՛ւմ է նրանց բոլո՛ր ունեցածը իր պարտք տված մի չնչին, բայց տոկոսներով խոշորացած գումարի փոխարե՞ն... Մի խոսքով, եթե տեսնեք նրանց այլևայլ անհաշի՛վ տանջանքները—կզարմանաք, թե մարդիկ ինչպե՞ս կարող են այդքա՛ն տանջվել և քաջություն ունենալ ապրելու... (Քիչ լուռ): Կուզեի՞ք արդյոք իմանալ, նույնպես իբր նմուշ, թե ի՞նչ էին եկել ինձ պատմելու այդ գյուղացիները...

ԹԵՐԵԶԱ.— Ասացեք...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Հուզված, բայց վճռական): Նրանցից մեկը, օրինակ, Բաղդասար ամին...

ԹԵՐԵԶԱ.— Ճանաչում եմ այդ ծերունուն։ Հաճա՛խ է նա մեր տուն գալիս. յուղ, մածուն, հա՛վ է ընծա բերում միշտ... Շա՛տ բարի գյուղացի է...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Մռայլ): Ահա այդ լավ ծերունին, որ ընծաներ է բերում ձեզ, իր տանը, իր երեխաներին ուտեցնելու հա՛ց չունի... Այգին շուտով ձեռքից կխլեն, կո՛վն էլ... որովհետև ինչ որ բերք է ունենում, ցորեն հնձում, մի մասը, մի մեծ մասը տալիս է ուրիշի...

ԹԵՐԵԶԱ.— Սպասեցեք... Ես ձեզ չե՛մ հասկանում... Իսկ ինչո՞ւ է տալիս. հարկի փոխարե՞ն, կամ գուցե պարտքե՞ր ունի...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Այո՛, պարտք ունի... (Լուռ): Մեկից, մի ժամանակ, երբ նեղ օրումն է եղել, պարտք է վերցրել 100 ռուբլի, իսկ ստորագրություն է տվել 150 ռուբլու...

ԹԵՐԵԶԱ.— Բայց ինչո՞ւ. եթե 100 ռուբլի է վերցրել, ինչո՞ւ է 150 ռուբլու ստորագրություն տվել։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Այլապես՝ պարտք տվողը չէ՞ր համաձայնում տալ. իսկ ծերունին պետք ուներ։*

ԹԵՐԵԶԱ.— *Բայց դա խո անիրավությո՞ւն է, անգթությո՞ւն... Մի՞թե այդպիսի մարդիկ կան մեր գյուղում։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ավելի հուզված)։ *Դեռ լսեցեք...* (Քիչ լուռ)։ *Երկու տարի անդադար, այդ խեղճ ծերունին իր պարտքատիրոջն է տարել, տոկոսի փոխարեն, այգուց, ցորենից, յուղից... իսկ, վերջ ի վերջո, ստիպվել է մի նոր ստորագրությունով՝ 150-ը դարձնել 200... եթե չաներ, կխլեին նրա տունուտեղը, ամեն ինչը...*

ԹԵՐԵԶԱ.— (Սաստիկ վրդովված՝ ոտքի է ելնում)։ *Բայց դուք սոսկալի՞ բաներ եք պատմում... Երբ մտածո՞ւմ եմ... խե՞ղճ Բաղդասար ամի... Անշո՞ւշտ հայրս չգիտե այդ բոլորը. պիտի հայտնել. ապահո՞վ եմ, որ կօգնի թշվառին...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Բայց դեռ ավելի սոսկալի՞ն պատմեմ ձեզ...* (Լուռ, խիստ մռայլ)։ *Դուք, անշո՞ւշտ, դեռ չեք մոռացել Սրբաշեն գյուղի փորձանքը... Մի գիշերվա մեջ ամբողջ գյուղը գրեթե մոխի՞ր դարձավ հրդեհից. տավա՞ր, մա՞րդ... Հիշո՞ւմ եք։*

ԹԵՐԵԶԱ.— *Այո՞... ի՞նչ եք ուզում ասել։ Այդ ժամանակ ես Թիֆլիս էի, բայց լսեցի, սարսափելի՞ բան էր։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Այո՞... Դեպքից շատ ժամանակ չի անցել... Ես Թիֆլիսից նո՞ր էի գալիս և պատահմամբ ընկերացա այնտեղ գնացող մի քանի պարոնների հետ, որոնք Թիֆլիսում կազմված օգնություն հասցնող հանձնաժողովից էին ուղարկվել։ Դեպքից իսկո՞ւյն հետո արդեն՝ հաց, հագուստ և ուրիշ օգնություններ էին հասցրել թշվառ և բացօթյա մնացած վիրավորներին և անոթիներին...*

ԹԵՐԵԶԱ.— (Ուղիղ նրա երեսին նայելով)։ *Այո՞... Հա՛յրս էլ, հիշում եմ, երկու հարյուր ռուբլի նվիրեց...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Սառը)։ *Գուցե... Այդ պարոնների հետ մենք, մթնանում էր, երբ Սրբաշեն հասանք։ Գյուղացիք նստել էին իրենց խրճիթների մոխիրների վրա, փլատակների առաջ... Կանայք արտասվում էին վիրավորների և մեռածների վրա... Ո՞ղբ, արտասո՞ւք... Սոսկալի՞ տեսարան էր... Իսկ եթե տեսնեիք վառվածնե՞րը, եթե լսեիք նրանց աղաղակն ու ճի՞չը...* (Քիչ լուռ)։ *Հետս եղած բժիշկը իսկույն ցա՞ծ թռավ իր օգնականի հետ, իսկ ես, հուզված մոտեցա մի պատի տակ կիտված գյուղացիների և խոսեցի, մխիթարեցի... Ահա՞, այդտեղ էր, որ մի սոսկալի՞ բան լսեցի... Գուցե սա ձեզ անհավատալի թվա, սակայն ստուգեցի, իրողություն էր...* (Քիչ լուռ)։ *Գյուղացիք պարտք ունեին մի վաշխառուի. վաշխառուն արդեն հրամա՞ն ուներ առնելու գյուղացիներից իր պարտքը՝ որևէ կերպով... ու եկել խլել էր նրանցից... Թիֆլիսից իբր նպա՞ստ, անոթիներին և մերկերին իբր օգնություն ուղարկված ցորենը, ալյուրը... գրեթե ամե՞ն ինչը...*

ԹԵՐԵԶԱ.— (Սաստիկ վրդովված)։ *Դուք... դուք հրեշային բաներ՞ եք պատմում... Եվ այդ վաշխառուն ա՞յն է, նո՞ւյնը...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Նա՛ է... Մի ամբողջ գավառ ճանկերի մեջ առած, չի խնայում նրանց թշվառությունն իսկ... Երաշտի, անբերրիության տարի է գալիս, պա՛րտք են վերցնում... վաշխառո՞ւն է երևան գալիս...*

ԹԵՐԵԶԱ.— *Սարսափելի՞ է... Շա՞տ, շա՞տ ահռելի...* (Մի ոտքե լուռ, հետո հանկարծ մոտենում է Ալեքսանդրին)։ *Եվ դուք դրանց դե՞մ է, որ կռվել եք ուզում, դրա՞ համար է, որ մտածում եք գյուղում մնալ... Ասացե՞ք. դուք նրանց կոչնչացնեք, չէ՞...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Լուրջ և հաստատուն)։ *Այո՞, դրա՛ համար է... Ես նրանց կջնջեմ աջ ու ահյակ. կջնջեմ անխնա. գյուղում մնալով՝ չեմ թողնի ես, որ այսուհետև այդպիսի ավազակները կողոպտե՞ն գյուղացիներին...*

ԹԵՐԵԶԱ.— (Մի ոտքե հիացած նրան նայելուց հետո պարզում է իր ձեռքը)։ *Դուք հերո՞ս եք, ահա՛ թե ինչ... Ես հիմա՞ էի, որ աշխատում էի հանե՞լ ձեր գլխից՝ գյուղում մնալու միտքը... Հայրս, ձեր օգտի համար, պատվիրել էր ինձ անպատճառ համոզել, որ գյուղում չմնաք... բայց ես ձեզ կատարելապե՞ս հասկանում եմ այժմ...* (Ուզում է ձեռքը ետ քաշել)։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Չի թողնում ձեռքը)։ *Ո՛չ, ո՛չ, թողե՞ք ինձ ձեր ձեռքը... Օ՜հ, որքա՞ն, որքա՞ն լավն եք դուք, Թերեզ, և ես ձեզ որքա՞ն սիրում եմ...*

ԹԵՐԵԶԱ.— (Հուզված, երերուն)։ *Ե՛վ ես... ես... թո՛ղ ձեռքս, Սաշա՛, մեր հայրերը գալիս են... Ձեզ ես հասկանում եմ... թողե՞ք...*

7) Նույնք, Գրիգոր և Սահակ

ԳՐԻԳՈՐ.— (Հեռվից սկսելով)։ *Բա՞ս... որ ասում եմ...* (Երևում է)։ *Կխաբեն խեղճ տղին, կխաբեն...* (Ալեքսանդրն ու Թերեզային, որոնք միմյանցից հեռացել են)։ *Այստե՞ղ եք դուք դեռ։*

ՍԱՀԱԿ.— *Մարդո՞ն ուր է։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Ներսումն է...*

ԳՐԻԳՈՐ.— *Երևի ճաշի պատրաստություն է տեսնում...* (Սահակին)։ *Դե՛հ, Սահակ բեկ, մե՛նք էլ ներս գնանք ու մեր էն գործը կարգաց-*

բենք... Թող դրանք ըստեղ խոսան, ջահել են... Մեկ էլ՝ որ դրանց լեզուն մենք չե՛նք հասկանա... Գնա՛նք։

ՍԱՀԱԿ.— *Համեցեք...* (Առաջ է ընկնում և տան դուռը բաց անում):

ԳՐԻԳՈՐ.— (Քայլելով այն կողմը և աստիճանների վրայից): *Երբ գնալու լինես, Թերե՛զ, ինձ իմաց տուր։*

ԹԵՐԵԶԱ.— *Լա՛վ, հայրի՛կ, մենք այս րոպեիս ներս կգանք...*

ԳՐԻԳՈՐ.— (Կանգ առնելով): *Ես խո չասի էդ... Ինչքան քեֆներդ կուզի—չա՛նա խփեք... Ձերը խո է՛դ է— խո՛սա, հա խո՛սա... էս թա՛տրոն է, էս բա՛լ է... Ես ի՞նչ գիտեմ...* (Միծաղում է): *Դրուստ չե՞մ ասում, Ալեքսան բեկ...* (Սահակին): *Դե՛հ, գնա՛նք, Սահա՛կ բեկ...* (Ժպտում է և Սահակի ետևից ներս մտնում).

8) Թերեզա և Ալեքսանդր

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Սպասում է, որ դուռը փակվի, հետո վազում է դեպի Թերեզը ու ձեռքերը բռնում): *Խոսի՛ր, Թերե՛զ... Ասա, մի՞թե դու ինձ չես սիրում, մի՞թե ես սխալվել եմ։*

ԹԵՐԵԶԱ.— (Քնքշությամբ կպչում է նրան): *Կամա՛ց խոսիր, Սա՛շա... Դու լավ տեսնում ես...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Գրկում է և գգվում): *Ի՜մ հրեշտակ...* (Հանկարծ թողնում է նրան գրկից և դեմքը կնճռած՝ ֆիչ հեռանում): *Բայց սպասեցեք... Ես դեռ ամեն ինչ չեմ ասել... Եվ դա՝ իմ կողմից վա՛տ բան է...*

ԹԵՐԵԶԱ.— (Զարմացած և վախեցած): *Ի՞նչ եղավ քեզ... Ա՛հ, գուցե դու ուրիշի...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Արագ միջահատում է): *Ո՛չ, ո՛չ, ա՛յդ չէ՜* (Քիչ լուռ): *Լսեցե՛ք, օրիո՛րդ... Դուք իմացա՛ք իմ վճիռը... Ես պիտի մնամ գյուղում, լինեմ գյուղացիների պաշտպան, վարե՛մ նրանց արդար դատը... Ինձ հե՞տ եք դուք...*

ԹԵՐԵԶԱ.— *Միայն ա՞յդ...* (Ապահովված և ժպտուն՝ մոտենում է): *Ես ինքս ուրախությամբ կօգնեմ քեզ այդ ավազակներին կախելու... Եվ ամենից առաջ՝ այդ խե՛ղճ ծերունու դահճին... Դու կարող ես, չէ՞, կարո՞ղ ես...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Հո՛ւյս ունեմ...* (Ավելի լուրջ): *Մի խոսք ևս...* (Դժվարությամբ): *Ի՞նչ կասեիր, օրինակ, եթե այդ վաշխառուն... հա՛յրս լիներ...*

ԹԵՐԵԶԱ.— (Սարսափած ետ է քաշվում): *Հա՞յրդ... Դու կատակո՛ւմ ես, Սա՛շա... Սահակ աղա՞ն, այդ բարի ծերունի՞ն...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Այո՛... օրինակ հենց... հայրս... Մարդու արտաքինը խաբուսիկ է։ Գուցե հայրս մի կեղծավոր է, մի ավազակ, որ գիտե մեզ նմանների մոտ իրեն բարի ձևացնել...*

ԹԵՐԵԶԱ.— (Միջահատելով): *Բայց լսի՛ր, ի սեր աստծո, այդ ինչե՞ր ես ասում... Դու հայհո՛յում ես, այդպես բան չի՛ կարող լինել, ո՛չ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Իսկ եթե այդպե՛ս է, եթե փաստե՛ր կան...* (Փորձիչ): *Եթե նույնիսկ գյուղացինե՛րը պնդեն ու հաստատեն... Եվ եթե դու լինեիր ազնի՛վ մարդ, սիրեիր ինձ, նույնիսկ շա՛տ սիրեիր—ի՞նչ կանեիր, կխնայեի՞ր հորս, չէի՞ր ջարդի նրան, չէի՞ր ազատի գյուղացիներին նրա ճիրաններից...* (Մոտենում է հետզհետե): *Խոսի՛ր, Թերե՛զ. քո խոսքերի՛ց, ասելիքի՛ց է կախված իմ երջանկությունը...*

ԹԵՐԵԶԱ.— (Լուռ, դժգույն՝ նստում է, շատ մեղմ): *Չգիտեմ... Անհավատալի բանե՛ր եք ասում... Չի՛ կարող լինել... Սխալվո՛ւմ եք անշուշտ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Իսկ եթե չեմ սխալվում, եթե զորեղ փաստե՛ր ունեմ...*

ԹԵՐԵԶԱ.— *Դուք ինձ տանջո՛ւմ եք... Փորձո՛ւմ եք դուք ինձ...* (Քիչ լռությունից հետո՝ հանկարծ ոտքի է ելնում, խիստ զննող՝ նայում է Ալեքսանին, ապա՝ շեշտելով և ծանր): *Ի՞նչ եք ուզում ասել...* (Դողդոջուն): *Պարզ, ուղղակի խոսեցեք... Ձեր հայրը չէ՛ այդ վաշխառուն... Դուք ա՛յդ չէիք ասելու...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Թերե՛զ, դուք ինձ չե՛ք պատասխանում։*

ԹԵՐԵԶԱ.— *Պատասխա՛ն... Ահա՛... եթե ճշմարիտ են ձեր ասածները... ավազակը ավազակ է, թեկուզ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Թեկուզ նա ձե՛ր հայրն իսկ լիներ...*

ԹԵՐԵԶԱ.— (Ցնցվում է և գունատ՝ կոթնում ծառին): *Ա՛հ... զգում էի, զգում էի...* (Գլուխը ձեռքերի մեջ առնում, հանկարծ հեկեկում է և ընկնում նստարանի վրա):

9) Նույնի և Մարգարիտ

ՄԱՐԳՈ.— (Ներս է վազում): *Թերե՛զ, հա՛յրդ գնում է...* (Տեսնելով Թերեզայի դրությունը՝ սառած մնում է): *Վա՛յ, Թերե՛զ...* (Վազում է դեպի նա):

ԹԵՐԵԶԱ.— (Թույլ՝ ելնում է): *Ոչինչ չկա... Այնպե՛ս... Գնա՛նք...* (Ալեքսանին): *Կատարեցե՛ք այնպես, ինչպես զգում եք... Սակայն հասկանո՞ւմ եք. նա իմ հայրն է... և այդպիսի դեպքում.... մեր մեջ չի կարող լինել ոչինչ...* (Գնում է դեպի տան դուռը. այնտեղ մի վայրկ-

յան շվարած կանգնում, հետո մեկեն գլուխը դեմ է տալիս դռան)։ *Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Վազում է դեպի նա)։ *Թերե՛զ, ների՛ր ինձ...*

ԹԵՐԵԶԱ.— (Հեռացնում է նրան)։ *Ո՛չ... Վաղ թե ուշ՝ պիտի իմանայի... Օ՛, ես այժմ սկսում եմ շա՜տ բան հասկանալ... Հորս ստիպումնե՛րը... Ամե՛ն, ամե՛ն ինչ... Բայց սիրեցի... Որքա՜ն, որքա՜ն ամոթալի բան... Ո՛չ, հեռո՛ւ կացեք...* (Ետ է քաշվում)։ *Թողե՛ք ինձ, մոռացե՛ք և... և եթե կարող եք՝ ներեցե՛ք ինձ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Թերե՛զ, մի բոպե, մի բա՛ն մտածենք...*

ԹԵՐԵԶԱ.— *Ոչի՛նչ... Դուք ասացիք, որ փաստե՛ր ունեք, գյուղացիք բոլո՛ր... Իսկ դուք, դո՞ւք ինչ ունեք նրա դեմ. չէ՞ որ նա ձեզ սիրո՛ւմ է...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Նա մեր պարտատե՛րն էլ է, իմ խե՛ղճ Թերեզ... և մեր այս տո՛ւնը, այգին... Բոլո՛ր գրավ է հորդ մոտ...*

ՄԱՐԴՈ.— *Սա՜շա...*

ԹԵՐԵԶԱ.— (Ավելի գունատ)։ *Այդպե՞ս... Եվ դո՞ւք, և ձեր հա՞յրը... Այժմ ավելի հասկանում եմ հորս վարմունքը... Աստվա՜ծ իմ, որպիսի՜ ստորություն...*

10) Նույնք, Գրիգոր և Սահակ

(Դուռը բացվում է, և դռան վրա երևում են՝ նախ Գրիգորը, ետևից՝ Սահակը)։

ԹԵՐԵԶԱ.— (Ոտ տեսնում է հորը, ուղղվում է և երերուն)։ *Հա՛յր... Սաշան իմ ձե՛ռքն է խնդրում քեզանից...*

ԳՐԻԳՈՐ.— (Ուրախ)։ *Իրավ... Վա՛հ, այդպես հանկա՞րծ...*

ԹԵՐԵԶԱ.— *Եվ ես մերժեցի՛...*

ԳՐԻԳՈՐ.— (Դեմքը կնճռելով)։ *Մերժեցի՞ր... Բայց ինչո՞ւ... Չէ՞ որ դու ինքդ ասացիր, թե սիրում ես նրան և թե իմ ցանկությունը կկատարես...*

ԹԵՐԵԶԱ.— (Բարկությամբ)։ *Ծածկի՛ր, ծածկի՛ր այդ բոլոր կեղտը... Մերժեցի, որովհետև, չե՛մ ուզում քեզ ազատելու գործիքը դառնալ. իրը վարձ՝ քեզ փրկելու... Ես սիրո՛ւմ եմ Սաշային. բայց եթե մեռնե՛ի իսկ սիրուց, և եթե իմանայի, թե դու ի՞նչ բանի գործիք ես դարձրել ինձ...* (Հեկեկալով ընկնում է Մարգարիտի գիրկը, որ ներս ներս է տանում)։

(Մի բոպե ամենքը լուռ՝ նայում են միմյանց)։

ԳՐԻԳՈՐ.— (Բարկությամբ)։ *Այդպե՞ս ուրեմն, պարո՛ն. դու վճռել ես ինձ*

հետ կռվի՞ բռնվել... Փորձի՛ր... (Զարամիտ ծիծաղով՝ հանում է ծոցից մի մուրհակ)։ *Տե՛ս... Ո՛չ ուշ քան մի ամիս—և այս տունը ի՛մն է...* (Սիծաղ)։ *Չգիտեիր այս, հա՞...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Գիտեի։ Գիտեի նաև, որ դուք մի գծուծ վաշխառու եք և ամբողջ գավառի հարստահարողը... Արե՛ք. վաղն իսկ արեք...*

ՍԱՀԱԿ.— *Ալեքսա՛ն... Սաշա՛... Ի սե՛ր աստծո...* (Գրիգորին)։ *Գրիգո՛ր աղա...*

ԳՐԻԳՈՐ.— (Կատաղի)։ *Է՛լ սուս, է՛լ հերիք է... Այս լածիրա՛կը շատ է առաջ գնում... Պրիսյածնի՛, իմ դե՛մ կռվել... Տեսնե՞նք՝ ի՞նչ կանես հորդ ու մորդ, ի՞նչ կուտեցնես... Գյո՛ղը մնա, գյուղացիների՛ն պաշտպանի՛ր... Պրիսյածնի՛...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Բարկությամբ)։ *Դուք անմիջական հրաման ունե՞ք արդեն՝ այս տանը տեր դառնալու...*

ԳՐԻԳՈՐ.— (Ավելի կատաղած)։ *Անմիջական հրամա՞ն... Տո՛, ո՞ւմ հետն ես խոսում, դժվա՞ր է քեզ դուրս գցել տալ, օրե՞նք չգիտենք, ի՞նչ է...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Լա՛վ, ուրեմն, քանի այդ հրամանը չունեք, այս տան տերը դեռ ես եմ...* (Այգու դուռն է ցույց տալիս)։ *Համեցե՛ք...*

ԳՐԻԳՈՐ.— (Կատաղի)։ *Այդպե՞ս, ինձ դուրս էլ ես անում... Լա՛վ, ես քեզ ցո՛ւյց կտամ, թե ո՞վ է Գրիգոր աղան, որ հազար քեզ պես փաստաբանների է մատների վրա խաղացրել...* (Քայլում է դեպի այգու դուռը և այնտեղից՝ Սահակին)։ *Մինչև մեկ ամիս կա՛մ 5000 ռուբլին իր տոկոսներով և կա՛մ կտեսնենք...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Իսկ առայժմ—համեցե՛ք...* (Քայլում է դեպի նա)։ *Ափսո՛ս, որ Թերեզան ձեր աղջիկն է...*

ԳՐԻԳՈՐ.— *Բայց ո՛չ քեզ նման լածիրակի պատառը...* (Քրքիջ)։ *Հա՜-հա՜-հա՜... Բաս ուզում էիր կո՞ւլ տալ, է՞լի, աղջկաս՝ հորդ պարտքն էլ վրան... Չէ՛, բարեկա՛մ, Գրիգոր աղան այդքա՛ն էլ էշ չէ... Լածիրա՛կ...* (Սպառնալից դուրս է գնում)։

11) Ալեքսանդր և Սահակ

ՍԱՀԱԿ.— (Քիչ լռությունից հետո՝ հուսահատ)։ *Սա՛շա, մեր տո՛ւնը քանդեցիր...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Խիստ)։ *Նա այլևս մերը չէ՛, հա՛յր...*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ

Գրիգոր աղա Վարակյանի տանը մի հյուրասենյակ՝ հարուստ և նախ կանոնավորությամբ: Փոքրիկ զուգարան, երկար վարագույրները լուսամուտներին: Առավոտյան ժամը 10-ի մոտերն է. բաց լուսամուտից արևի հառագայթները ներս են ընկել: Աջ կողմից մի դուռ՝ տանում է դեպի Թերեզայի ննջարանը: Խորքում՝ մուտքն է: Թերեզան մի օրորվող աթոռի մեջ նստած՝ գիրք է կարդում: Բեմի վրա մի քանի ոչոք լռություն է: Դրսից լսվում են խառնիխուռն ձայներ:

1) Թերեզա, տիկին Վարակյան (մայրը)

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— (Տնային հագուստով և փոշոտ՝ մտնում է և ձեռքերն իրար քսելով թափ է տալիս ալյուրոտ ձեռքը): *Վերջացավ...* (Աղջկան): *Բաս մենա՞կ ես կարդում, ա՛ղջի...* (Նստում է մի բազկաթոռի մեջ): *Շա՞տ ես անցկացել։*

ԹԵՐԵԶԱ.— (Տխուր և մռայլ): *Չէի կարդում... Դեռ չվերջացրի՞ն...*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Ի՞նչը. ցորեն դատարկե՞լը... Չէ՛, մի՛շտ բերում են... բայց դե՛հ, տեղը արել եմ. ծառաները կհսկեն։*

ԹԵՐԵԶԱ.— (Քիչ լուռ): *Ասա, մայրի՛կ. հայրս գնե՞լ է այդքան ցորենը։ Ի՞նչ պետք է մեզ այդքանը։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Ի՛հ, ա՛ղջի... Դե ես ի՞նչ գիտեմ։ Հա՛լբաթ ծախելու համար է։*

ԹԵՐԵԶԱ.— *Գուցե իր պարտքով տված փողերի տոկոսներն են, չէ՞։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Ի՞նչ մեր բանն է այդ. ինչ ուզում է լինի... Հորդ գործերի մեջ ես ո՛չ խառնվել եմ, ո՛չ էլ ուզում եմ խառնվել... Դե՛հ, կարդա տեսնե՛նք... Որտե՞ղ մնացինք։*

ԹԵՐԵԶԱ.— (Գրքի վրա է նայում և մտազբաղ): *«Տղան հասնում է վիշապի տան առաջ»...* (Հանկարծ մորը): *Ասա՛ խնդրեմ, մա՛յրիկ. յուղ, մածուն, ձու... այդ բոլորը որ այնքան բերում եմ մեզ—դրա՞նք էլ տոկոսներ են։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Զա՛հլես տարար... Մե՞զ ինչ. կուզեն՝ թող տոկոսներ լինեն... Հա՛լբաթ, փող որ պարտք է տվել—խո ձրի չի՞ տվել... Առևտուրը ա՛յդպես է լինում... Կա՛րդա. հետաքրքիր է, թե վիշապը ի՞նչպես ընդունեց տղային։*

ԹԵՐԵԶԱ.— *Ի՞նչպես պիտի ընդուներ... Անշուշտ կտոր-կտոր արած կլիներ։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— (Ժպտուն): *Հենց է՛դ ա, է՛է՛... Հեքիաթների մեջ մի՛շտ ամենապստիկ տղան սպանում է վիշապին։ Ես շա՛տ եմ սիրում այդպես հեքիաթները։*

ԹԵՐԵԶԱ.— *Մա հեքիա՛թ չէ. այլաբանական զրույց է։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Կուզի՝ յալլիբան էլ լինի մեջը. սի՛րում եմ... Դե՛հ, կա՛րդա...*

ԹԵՐԵԶԱ.— (Քիչ լուռ և մտախոհ մնալուց հետո՝ կարդում է): *«Եվ երրորդ որդին, կտրիճ Միլլեթը, եկավ կանգնեց երկաթե դռան մոտ, վիշապի պալատի առաջ»...* (Ընդհատում է, մեկնե դառնում է մորը): *Կուզեի իմանալ, սրբաշենցիք էլ կա՞ն դրանց մեջ։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Բա սրբաշենցիք ի՞նչ գործ ունեն ըտեղ։*

ԹԵՐԵԶԱ.— *Չէ... Ցորեն բերողների՛...*

2) Նույնք և Սերգո (ծառան)

ՍԵՐԳՈ.— (Փոշոտ՝ երևում է դռան մեջ): *Խա՛նում...*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Ի՞նչ կա... Թոզոտ ո՞ւր ես զալը մտնում։*

ՍԵՐԳՈ.— *Բա աղեն ո՞րտեղ ա. գեղացիք սպասում են ախր։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Էլ ինչի՞ են սպասում. թող գնան է՛լի...*

ՍԵՐԳՈ.— *Չե՛ն գնում. ասում են՝ աղի հետ գործ ունենք։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Իրա օթա՞խում չի։*

ՍԵՐԳՈ.— *Չէ, մտի՛կ տվի... Խաչատո՛ւրն ա ընտեղ։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Դե ուր որ ա՝ կգա... Թող սպասե՛ն... Անց կենալիս Հերիքնազին ասա մսի քյափը քաշի՝ էս ա գա՛լիս եմ...* (Ծառան գնում է):

ԹԵՐԵԶԱ.— *Ինչո՞ւ են սպասում գյուղացիք, մայրի՛կ։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Ի՛հ... աղջի... մեկ հալալ չե՞ս թողնում հեքիաթը լսեմ... Դե ես ի՞նչ գիտեմ. հալբաթ գործ ունեն։*

ԹԵՐԵԶԱ.— *Այո՛... Երևի վեքսիլները նորոգելու...* (Ելնում է և գնում դեպի լուսամուտը. այնտեղից): *Մայրի՛կ. Բաղդասար ամին շա՞տ խեղճ է։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Ասում են՝ շա՛տ խեղճ է... ինչո՞ւ ես հարցնում... վեց-յոթ ջան ընտանի՛ք ունի։*

ԹԵՐԵԶԱ.— *Եվ շա՛տ էլ պարտք... բաս ո՞րտեղից է այդքան ընծա բերում մեզ...* (Քիչ լուռ): *Տոկոսների տե՞ղ է... Դու չգիտե՞ս, մա՛յրիկ, թե նա ո՛րքան է պարտ հորս։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Հո՞րդ...* (Զարմացած): *Բա նա ինչի՞ պիտի հորդ պարտք ունենա։*

ԹԵՐԵԶԱ.— *Ո՛ւմի... 100 ռուբլի է պարտքը, բայց 200 պիտի տա... Հարյուրը՝ մի տարվա տոկոս... Մեկին-մեկ... Մածունը, գառը—դրանք էլ ավելի...*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— (Շփոթված): *Ես էդ չէի իմանում...* (Ակամա ճեղացած): *Դե տե՛ղն ա նրան. ինչի՞ ա պարտք անում. Թող յորդանի գյորա՛ ոտները պարզի...* (Ելնում է և բայլում դեպի դուռը):

ԹԵՐԵԶԱ.— *Չլսեցի՛նք, թե վիշապը ինչպես ընդունեց տղային։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Դե կարդո՞ւմ ես, որ... Գնամ տեսնեմ կուխնումը ի՞նչ են անում. Մատվեյ Եգորիչը էսօր ճաշին մե՛զ մոտ է գալու։*

ԹԵՐԵԶԱ.— *Դատավո՞րը... Իսկ հա՞յրս երբ կերթա նրա մոտ։*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— (Զարմացած՝ կանգ է առնում): *Ընչի՞ որ... երբ կանչի։*

ԹԵՐԵԶԱ.— *Երևի շուտո՛վ...* (Մտախոհ՝ նայում է դուրս լուսամուտից):

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— (Քիչ նայում է նրան, ետտո գլուխն է շարժում և դուրս գնում):

Դրսում խառն աղմուկը մեծանում է. լսվում է Գրիգոր աղայի բարձր ձայնը: Հետո աղմուկը հանկարծ դադարում է, և Գրիգոր աղան է խոսողը՝ դրսից:

ԳՐԻԳՈՐ.— (Դրսից): *Լա՛վ, կտեսնե՛նք... Մի քիչ սպասե՛ք...*

ԹԵՐԵԶԱ.— (Ցնցվում է, դառնում և գնում է ննջարանը):

3) Գրիգոր, Ֆաշալ Մարտիրոս

ԳՐԻԳՈՐ.— (Մտնում է խորքի դռնից, նայում է շուրջը): *Էս ո՞ւր են մերոնք...* (Գնում է դեպի ննջարանի դուռը և Ֆիշ բաց է անում): *Դու այստե՞ղ ես, Թերե՛զ... Հա՛, կարդո՞ւմ ես։ Լա՛վ, քեզ անհանգիստ չենք անի։* (Փակում է դուռը և Մարտիրոսին): *Դեհ, տեսնե՞նք... Նստի՛ր... Ասածներս արի՞ր...*

ՄԱՐՏԻՐՈՍ.— *Բա չէի՞ անի։ Կանչեցի ամենքին։ Կգան։ Էնպե՛ս ուրախ էին որ...*

ԳՐԻԳՈՐ.— (Զար ժպիտով): *Հիմար լինելուցն է... Նստի՛ր։ Ապա՞, ցույց տուր վեքսիլները... Շա՞տ է։*

ՄԱՐՏԻՐՈՍ.— *Հինգ հարյուր մանեթի... Հենց որ փողերը տաս՝ ձեռք կքաշեն։*

ԳՐԻԳՈՐ.— *Իսկ գրա՞ծն ինչքան է։*

ՄԱՐՏԻՐՈՍ.— *Ճիշտ 703 մանեթ... Բոլորը մեկ տարով կամ վեց ամսով...* (Հանում է ծոցից մի կապոց և վերցնում է մեկ-մեկ մուրճակները): *Ա՛յ, էս մեկը Կարմիր-քարերից Սարուխանինը։ 150 կտանք՝ մեկ տարով... Տոկոսն էլ վրան խփած—217 մանեթի։*

ԳՐԻԳՈՐ.— *Էլ ինչի՞ յոթը...* (Ժպտալով): *Ամա հասկանում եմ... Սատանա՞ն ես եղել, հա՞...*

ՄԱՐՏԻՐՈՍ.— *Քո ղուլլուղումը՝ ո՞վ չի ըլի... Ըսենց պակաս թվե՛րն են լավ։* (Շարունակում է): *Էս մեկը քիչ զո՛ռն էր։ Մեր գեղացի տ։ Շատ գրել չեղավ. կարդա՛լ էր ուզում տա... 200 ուզեց, ու մեկ սահաթ չանա խփելուց հետո՝ հազիվ թողաց, որ 250 գրեմ։*

ԳՐԻԳՈՐ.— (Բարկացած): *25 տոկո՞ս... Ինչի՞, փողը չո՞լումն եմ գտել, թե՞ նրա հորն եմ պարտական... Էդ ո՞ր շան որդին էր։*

ՄԱՐՏԻՐՈՍ.— *Սարիկենց Սմբատը։*

ԳՐԻԳՈՐ.— (Ոստնում է տեղից): *Ինչ ես ասո՛ւմ...* (Ուրախ): *Գրավբա՞ն. խո գրե՞լ ես։*

ՄԱՐՏԻՐՈՍ.— (Ժպտուն): *Չէ՛, էլ ի՞նչ գրավ... Վեց ամսով...*

ԳՐԻԳՈՐ.— (Ընդհատում է զայրացած): *Ադա, քյա՛չալ, քեզ չե՞մ ասել, որ մեր գեղացոց հետ գործ բռնելիս՝ առաջ ինձ հետ խոսես... Է՛շն ես եղել, է՛շը... Բա դու չե՞ս իմանում, որ նրանց տունը մեր տանը կպած ա...*

ՄԱՐՏԻՐՈՍ.— *Գիտեմ, ո՞նց չիմանամ... Ամա դե որ չեղա՛վ...*

ԳՐԻԳՈՐ.— *Պա՛տռի դեն քցի։ Չե՛մ տալիս. ո՛չ մի կոպեկ... Թե իր տունը գրավ կդնի՞...*

ՄԱՐՏԻՐՈՍ.— (Խորամանկ): *Բա որ գրավ դնի. ինձ ի՞նչ խեր կա դրանից։*

ԳՐԻԳՈՐ.— *Հա՛յ շունն ես, հա՞... Դե՛, քեզ ես պակա՞ս եմ գոհացրել... Հիսուն մանեթ կտամ, թե Սարիկենց Սմբատը մեկ ճանկս ընկնի։*

ՄԱՐՏԻՐՈՍ.— (Ոտքի է ելնում): *Բաս տուր...* (Մի ձեռքով մուրճակն է ցույց տալիս և մյուս ձեռքը պարզում): *Հրես, ա՛յ. ձեռք քաշած, տունն էլ գրավ դրած. փողն էլ ես տվի, որ դու ինձ տաս...*

ԳՐԻԳՈՐ.— (Ուրախ): *Հարամզադեն ես եղել, հա՞... Ամա հա՛լալ ըլի քեզ—տամ...* (Հանում է և տալիս): *Տո՛ւր վեքսիլը... Տես թե եկող տարի ո՞նց եմ մեր բաղը լենացնում էդ կողմից...*

4) Նույնք, Սերգո, Թերեզա

ՍԵՐԳՈ.— (Երևում է դռան մեջ): *Աղա՛, գեղացիք...*

ԳՐԻԳՈՐ.— (Հախուռն): *Ի՞նչ... Թող սպասե՛ն։*

ՄԱՐՏԻՐՈՍ.— *Աղա՛, լա՛վ չի, մի սպասեցնի. կեսօր կդառնա. մարդիկ խեղճ են, գործեր ունեն։*

ԳՐԻԳՈՐ.— *Բաս լավ. գնա օթախս տար՝ գալիս եմ։*

ՍԵՐԳՈ.— *Ընտեղ ախր խաչատո՛ւրն ա խաչքարեցոց հետ հաշիվ տեսնում։*

ԳՐԻԳՈՐ.— *Հտե՞նց...* (Քիչ լուռ): *Բաս կաց...* (Գնում է դեպի Թերեզի

ենչարանը, դուռը բիչ բաց է անում և աղչկան): *Թերե՛զ... (Քիչ լուռ): Որ դուրս գնաս՝ պարտեզում կարդաս, լավ չի՞ լինի... Հիմի այստեղ գյուղացիներ կլցվեն. նրանց գոռգոռոցը քեզ կխանգարի։*

ԹԵՐԵԶԱ.— (Ներսից): *Լավ... Գնամ...*

ԳՐԻԳՈՐ.— (Աչքով է անում ծառային և ինքը սպասում):

ԹԵՐԵԶԱ.— (Քիչ հետո դուրս է գալիս և անցնում. չի պատասխանում Մարտիրոսի խոնարհ բարևին: Մյուս դռան մոտ հասնելիս՝ դառնում է հորը): *Հա՛յր, այդ եկող գյուղացիների մեջ սրբաշենցիք էլ կա՞ն...*

ԳՐԻԳՈՐ.— (Զարմացած): *Ի՞նչ... Սրբաշե՛նցիք... Չէ, ինչի՞ որ...*

ԹԵՐԵԶԱ.— *Ոչի՛նչ...* (Գնում է):

ԳՐԻԳՈՐ.— (Նրա գնալուց հետո կնճռված ու մտախոհ դառնում է Մարտիրոսին): *Դու բան հասկացա՞ր...*

ՄԱՐՏԻՐՈՍ.— (Ուսերն է թոթվում): *Բարիշնեն հիվա՛նդ ա երևում...*

ԳՐԻԳՈՐ.— (Ծառային): *Ասա թող գան հիմի... խանումին էլ ասա՝ թող մեկ գնա Թերեզի մոտ...* (Խիստ): *Շա՛ն օրը կգցեմ ձեզ, թե բարիշնի քեֆին կպել եք... Գնա՛...* (Ծառայի գնալուց հետո): *Հիվա՛նդ ա երևում...* (Կնճռոտ և կատաղի): *Է՛ն-է՛ն-է՛ն... աբլակատի՛ն...* (Սթափվում է և Մարտիրոսին): *Պրծի՛ր. էլի՞ կա։*

ՄԱՐՏԻՐՈՍ.— (Խոնարհ): *Մեկը մնաց... Շա՛տ չի. 150—մեկ տարով տված՝ 236 մանեթ... Սպիտակ-շենից։*

ԳՐԻԳՈՐ.— *Լա՛վ, թող ձեռք քաշեն, երեկոյան բեր ու փողերն ստացիր... Դե՛հ, հիմի դու գնա։ Բաղդասար ամին, բանը թե գան՝ խոսիր հետները, մինչև ես ըստեղ պրծնեմ։*

ՄԱՐՏԻՐՈՍ.— (Գնում է դեսի դուրը):

ԳՐԻԳՈՐ.— *Ամա բաղչեն չմտնեք... Ղալմաղա՛լ էլ չհանեք։*

ՄԱՐՏԻՐՈՍ.— *Չէ. քուչումը կսպասենք, մինչև մյուսները գնան։* (Գնում է):

5) Գրիգոր, Մարկոս, Գալուստ և Հայրապետ (գյուղացիներ)

ԳՐԻԳՈՐ.— (Մենակ. դեմքը կնճռած և մռայլ): *Ամեն բան ասած կլինի... Սրբաշե՛ն... հը՛մ... Չլինի՞ դա էլ է պատմել...* (Սպառնալից): *Սպասի՛ր, ես քեզ էնպես թոցնեմ որ...*

ԳՅՈՒՂԱՑԻՔ.— (Երևում են դռան մեջ, ներս են գալիս և կողքին խոնարհ կանգնում):

ԳՐԻԳՈՐ.— (Նրանց): *Նե՛րս եկեք... Հը՞, ուզում եք թաղացնի՞...* (Նեղացած): *Չէ՛, էլ չե՛մ կարող... Փողերս բերեք ու պրծնի-գնա... Գործերս հավա՛քում եմ-գնում ըստեղից, հավիտյա՛ն գնում... էն ա ձեզ նոր ատվա՛կատ ա եկել. նրա՛ն գնացեք, թող նա՛ պարտք տա ձեզ... Քանի նա կա—էլ ես ի՞նչացու եմ... Ես ձեզ կողո՛պտում եմ—զրկում. ես փիս մարդ եմ... Հրե՛ն, լավ մարդը եկել ա. առանց տոկո՛սի թող տա... Չէ՛, էլ չի՛ կարելի, փո՛ղերս տվեք... Գործերս հավաքում եմ։*

ԳԱԼՈՒՍՏ.— *Դե էլ ինչո՞ւ ես նեղանում, աղա, մենք սկի ե՞րբ ենք տեսել նրա երեսը... Կամ նա ի՞նչ փող ունի, որ մեզ պարտք տա... Մենք քեզ չե՛նք թողալ.. դու մեզ մի՛շտ լավություն ես արել... էս անգա՛մ էլ արա, քեզ ղուրբան... Չունենք, բան չմնաց. քյասադ տարի էր... Զմեռս կկոտորվեն՝ թե եղածն էլ ծախենք ու պարտքներս տանք։*

ԳՐԻԳՈՐ.— *Դե բա ես ո՞նց անեմ. խո պարտավո՞ր չեմ ձեզ... Թե լա՞վություն էր—է՛ս էլ հերիք էր։ Հայ-քրիստոնի պես՝ էս երկու տարի փողս ձեզ մոտ՝ աբարո՛տ չի անում... Խո ես խազնատար չեմ, յա միլիոնատեր... Չի՛մ կարա, չէ. փո՛ղս պիտի տաք...* (Խիստ՝ նրատում է):

ՀԱՅՐԱՊԵՏ.— *Մեզ վրա իզո՛ւր ես նեղանում, աղա՛... Չունենք, ո՞ր տեղից տանք. խո վերջին ունեցածներս էլ չե՞ս ծախելու։ Մի քիչ մա՛ջալ տուր, տոկոսը վրա՛ն եկ՝ մինչև եկող ամառ...*

ԳՐԻԳՈՐ.— (Բարկությամբ): *Փիե՛... էդ ի՞նչ տեսակ ես խոսում. տո՛. կասես ե՛ս ըլեմ քեզ պարտական... Բա դու խիղճ չունե՞ս... Ես ի՞նչ ասեմ՝ որ ունեցածս էլ ձեզ մոտ քնացնեմ... Հալա գնացել եք էն... էն լա՛ծիրակին էլ գանգատվել, թե ես ձեզ կողո՛պտում եմ, զրկում եմ...*

ԳԱԼՈՒՍՏ.— *Բո՛ւյ, մեղա՛ աստծու... Ո՞վ ա ըտենց բան արել... Աստվա՛ծ, ե՛րկինք... Ընչի՞, բա մենք երախտիք չե՞նք իմանում...*

ՄԱՐԿՈՍ.— *Ա՛յ Գրիգոր աղա, յանի որ ուշք չդարձնես էդ երեխին— չի՞ ըլի... Թող իրա համար հա՛ խոսա, ասի. քեզ ի՞նչ կարա անի որ...*

ԳՐԻԳՈՐ.— (Ոտքի է ելնում, հպարտ): *Բո՛, իհա՛րկե... Ծա ո՞ւմ շունն ա որ... Ամա ես ձե՛զ համար եմ ասում. ձե՛զ եմ խղճում... որ ըտենց մարդկանց ձեր մեջը թողաք է՛է՛— էլ ինձ պես մարդիկ ձեզ չե՞ն օգնի... Ընչի՞, գժվե՞լ են, որ հա՛մ օգնեն, հա՛մ էլ խոսք լսեն...*

ԳԱԼՈՒՍՏ.— *Դե ի՞նչ անենք, ա՛ քեզ մատաղ. դուրս խո չենք անելու գեղիցը։*

ԳՐԻԳՈՐ.— *Դո՛ւրս կանենք, բա՛ս... Ընչի՞, որ հասարակությունը կամենա, չի՞ կարող թուղթ շինի, նաչալնիկին, գուբերնա՛տորին... Թե էս մարդը մեր հասարակության մեջ չե՛նք ուզում... Հը՞, Մարկո՛ս, սա լավ չի՞...*

ՄԱՐԿՈՍ.— *Բա ի՞նչ անենք։ Ախր մի պատճառ պիտի ըլի՞, թե՞ չէ... էն մարդը որի՞ն ա վնաս տվել... Ցա թե չէ...*

ՀԱՅՐԱՊԵՏ.— (Ընդհատում է): *Մեր քյոխվան էլ ասում են, հետը բարեկա՛մ ա, միշտ ընտե՛ղ ա, միա՛սին են։*

ԳՐԻԳՈՐ.— (Մարկոսին): *Պատճա՞ռ՝ ասում ես... Տո սրանից լավ պատճա՞ռ—որ պատվա՛կան մարդկանց անո՛ւնն ա կոտրում, զրպա՛ր-տում ա... Յա թե չէ՝ խռովություն ա գցում գեղումը...*

ԳԱԼՈՒՍՏ.— *Ո՞նց կըլի, աղա՛։ Բա ընչի՞, քննություն չե՞ն անի... հենց ընենց մեր ասա՞ծին կլսեն։ Չե՞ն ասի, թե սուդումը գանգատ տվեք ու քննենք... Յա թե չէ՝ որ թուղթ էլ հենց չինենք—ողջ հասարակությունը ձեռք կքաշի՞, քյոխվան կթո՞ղա. չե՞ն հարցնի, թե մարդը ի՞նչ ա արել. որ ուզում եք գեղիցը դուրս քշի...*

ՄԱՐԿՈՍ.— *Չէ՛, աղա՛, էտ ըլելու բան չի՛... չե՛նք կարա... բան չի՛ դուրս գա։*

ԳՐԻԳՈՐ.— (Քիչ նրանց է գնում, հետո հանկարծ ժպտում է և ավելի կակուղ): *Ա՛յ թե միամիտ խալխ եք ըլել, հա՛... Հավատացիք, է՛լի՛, որ իմ շա՛տ վեջն ա, թե նա գե՞ղումն ա, յա չէ... (Խռոխտ): Տո՛, ըստի մտիկ տվեք մեկ, է՛... (Գլխարկը վեր է քաշում և ձեռքը ճակատին խփում): Ա՛յ, ճակատս բա՛ց ա, ո՛չ ոքից վախ չունեմ։ Ո՛չ գողություն եմ անում, ո՛չ ավազակություն... Ընչի՞ց պիտի վախենամ.... Հա՛նաք արի, հա՛նաք... Ա՛մա միամիտ խալխ եք... (Բրոնազբոսիկ երիջ, հետո լրջանում է): Հա՛, դե վնա՛ս չունի. էն որ էդքան խնդրում եք, է՛լի ձեզ լավություն կանեմ. հայ-քրիստոնյա ենք, քանի ձեռքներիցս լավություն գա՝ պիտի անենք... Գնացեք քյաչալին թաղա վեքսիլներ գրել տվեք... Աչքի՛ս վրա. թող փողերըս մե՛կ տարի էլ ձեր մոտը պառկի. կորած տեղ չի։*

ԳԱԼՈՒՍՏ.— *Աստված քեզ անպակաս անի։ Աստծով... եկող տարի...*

ԳՐԻԳՈՐ.— *Աստծո՛վ, աստծո՛վ... Քյաչալը ցա՛ծումն ա. վեքսիլնե՛ր էլ կա մոտը (Գալուստին): Քոնը ի՞նչքան ա, Գալո՛ւստ... Հա՛, 125 մանեթ ա, չէ՞... Գրել կտաս 200. Դու էս տարի, գիտե՞ս, բոլորովի՛ն մոռացել ես մեզ։ Ո՛չ բազիցդ ես մեզ պտուղ, յա գինի... ոչ զատկին մի գառը... Բա մեր փողը հենց ընե՞նց, մո՞ւֆտա պառկի մոտդ... 200 գրել կտաս։*

ԳԱԼՈՒՍՏ.— *Վա՛յ, աղա՛, էդ ի՞նչ կրակի մեջ ես գցում ինձ... Բա ես կա՞բամ էդքան տոկոս տալ... Բա ինձ քնտանիք չո՞ւնեմ... Մարկոսի՞ց էլ ավելի տոկոս։*

ԳՐԻԳՈՐ.— (Բարկությամբ): *Էդ գու ո՞րտեղից իմացար, թե Մարկոսից պակաս տոկոս եմ առնելու... Համ էլ՝ Մարկոսը մա՛րդ ա, դո՞ւ ինչ ես։ Նոր տարուն, ծնունդին՝ էլ խոզի ճուտը, է՛լ կարագ, գառը... Ո՛չ մի բանիցը չի մոռանում. մարդը գի՛տի լավություն, երա՛խտիք... (Մարկոսին): Քոնը 75 մանեթ ա—գրել կտաս 125... 25 մանեթ պակաս... էլ մի՛ ասի, թե մենք երախտիքը բանի՛ տեղ չենք դնում...*

ՀԱՅՐԱՊԵՏ.— (Դրգռված): *Ի՛մը ի՞նչքան գրել տամ, աղա՛...*

ԳՐԻԳՈՐ.— (Դառնալով դեպի նա, զսպված բարկությամբ): *Հը՞մ, քո՞նը. 200 չի՞, գրել կտաս 300. է՛դ ա, կուզես՝ գրել տուր, չես ուզի՝ փողս բեր... ի՞նչ ա, քեֆիդ չեկա՞վ... Բա կարծում ես մոռա՞ցել եմ... Միտդ չի՞, կանչեցի արտս հնձես—չեկար. այգիս փորես՝ փախար... Քեզնից հլա մինչի օրս մի խի՛լ էլա չեմ տեսել...*

ՀԱՅՐԱՊԵՏ.— (Բարկությունից դողալով): *Բաս էտ ա, է՛լի... Հա՛մ էնքան տոկոս տամ, հա՛մ էլ մուֆտա գամ բա՞նեմ քեզ համար...*

ԳՐԻԳՈՐ.— (Կատաղի): *Մո՞ւֆտա... Տո բա ես քո հո՞րն եմ պարտական, յա՞ քեզ. տո. բաս քեզ տված փողը իմ կնգա, աղջկա բերնիցը կըտրա՞ծ չի, քրտինքովս աշխատա՞ծը չի... Հը, հա՛րամզադա, ասա տեսնե՞նք... Ո՞նց ես էգուց ևեթ սուդը տամ վեքսիլդ, տուն ու տեղդ վեր գրեմ, տավարդ ծախեմ. քեզ չոլերը գցեմ... Ա՛յ ես ձեզ մարդ ասողին, հա՛... Է՞դ ա իմ լավությունը... Գնա՛ կորի, գնա փողս բեր՝ ու ռադ ըլի աչքիցս... Ձեզպեսները պիտի քաղցած սատկեն, որ խելքի գան... հարա՛մզադա...*

6) Նույնք և Թերեզա

ԹԵՐԵԶԱ.— (Որ դռնից անշշուկ ներս էր մտել, գունատ՝ կոքնում է դռան և ականջ է դնում):

ԳՐԻԳՈՐ.— (Չի նկատում նրան, երեսը Հայրապետին է և շարունակում է, հետզհետե ավելի զայրացած): *Հա՛յդե, էլ ո՞ւր ես ցցվել ըստեղ... Գնա փողս բեր. որտեղան կուզես՝ 200 մանեթս իր տոկոսովը գտի ու բեր... Թե էսօր չես բերել, աստվա՛ծ է վկա, փալասդ տակիցդ քաշել կտամ...*

ՀԱՅՐԱՊԵՏ.— (Խեղճացած և մեղմ): *Աղա՛, դե ես ի՞նչ ասի որ... Ախր առածս ըսկի հարիր մանեթ չի ըլի, մեկ տարվա մեջ երկու հարյուր դարձրիր. հիմի էլ վրես բարկանում ես, թե ինչ ա մուֆտա չեմ եկել ու բանել քեզ համար. յա թե չէ գառը, գինի ընծա չեմ բերել... ու 300 ես շինում... (Լացի ձայնով): Բա ես մե՞ղք չեմ, ուզում ես, որ երեխեքս կոտո՞րվեն, հիվա՛նդ, սովա՛ծ...*

ԳՐԻԳՈՐ.— (Կատաղի): *Տո ի՞նձ ինչ, ա՛խմախ, որ թեկուզ ամենքդ էլ սատկեք... բա որ ընենց ա, էլ ո՞ւր ես գոռգոռում, ո՞ւր ես մեծ-մեծ խոսում։ Չէ՛, գնա՛, գնա՛ փողս բեր ու ռա՛դ ըլի... Չունես—*

էգուց եթե տակիդ դոշակն էլ քաշել կտամ... հարամզադա... (Շարժում գործելու ժամանակ հանկարծ նկատում է Թերեզային և լռում):

ՀԱՅՐԱՊԵՏ.— *Աղա...*

ԳԱԼՈՒՍՏ.— (Որ նույնպես նկատում է Թերեզային, բոթում է Հայրապետին): *Սո՛ւս, տո՛...*

ՏՐԻԳՈՐ.— (Ճիգ է գործում, քաղցր ժպիտ ստանում և գնում դեպի աղջիկը): *Հը՞, օթա՞խդ ես ուզում գնալ... Բա էդ ընչի՞ ես գույնդ գցել... Հիվա՞նդ ես...* (Գյուղացոց՝ խիստ դեմքով և բուռն շարժմամբ): *Կո՛րեք...*

ԳՅՈՒՂԱՑԻՔ.— (Կծկված՝ անցնում են Թերեզայի մոտով):

ԹԵՐԵԶԱ.— (Լուռ՝ ճանապարհ է տալիս և կծկուն դիմագծերով, լաց լինելու պես՝ նայում է նրանց ետևից և հուզված՝ կոթնում դռան):

ՏՐԻԳՈՐ.— (Ուզում է բռնել նրան): *Բո՛ւ... ա՛ղջի, էդ ի՞նչ էլավ. քեզ, է՛է՛... Ո՞ւր է մայրդ...* (Կանչում է դռնից): *Ա՛յ կնիկ, Սաթե՛նիկ...*

ԹԵՐԵԶԱ.— (Որ երերուն թուլացել էր, ճիգ է գործում, ուղղվում է): *Ոչի՛նչ, գլուխս պտտեց... Թո՛ղ ինձ, ես սենյակս կերթամ...* (Քայլում է դեպի սենյակը, բայց կես ճանապարհին կանգ է առնում և հանկարծ դառնում դեպի հայրը): *Հա՛յր... ուրեմն... իրա՞վ է այդ բոլորը...*

ԳՐԻԳՈՐ.— *Ի՞նչը, աղջի՛կս...* (Խիստ): *Դու մեզ լսո՞ւմ էիր... Ի՞նչ ես խառնվում իմ առևտրական գործերի մեջ... Սա առևտո՛ւր է, դիմացինդ՝ կոպիտ, անտաշ գյուղացինե՛ր... Նստի՛ր, նստիր՝ գնամ մորդ կանչեմ...* (Ուզում է գնալ):

ԹԵՐԵԶԱ.— (Ուժ տալով իրեն): *Ո՛չ... մնա՛, հա՛յր... խոսե՛լ եմ ուզում քեզ հետ... Այդ դուռն էլ փակիր...* (Նստում է):

ԳՐԻԳՈՐ.— (Ուսերը բոթվելով՝ դուռն է փակում, լուրջ կերպար է ստանում և մոտենում է: Մի ոտպե երկուսն էլ լուռ են: Թերեզը գլուխը խոնարհած, իսկ հայրը ուշադրությամբ զննում է նրան):

ԳՐԻԳՈՐ.— *Ապա՞, ի՞նչ է ասելիքդ... Գործ ունեմ, ասա՛...* (Կատարելապես զսպել է իրեն, խիստ դեմք է ընդունում և նստում): *Խոսի՛ր... Թե հիվանդ ես, քաղաք գնա մորդ հետ... Այդ ասե՛լ եմ քեզ, դու չե՛ս ուզում: Կո՛ւզես՝ հենց ա՛յսօր գնա. երևի կարոտել ես քաղաքին...*

ԹԵՐԵԶԱ.— (Զարմացած և լուռ՝ նայում է նրան):

ԳՐԻԳՈՐ.— *Դե ասա տեսնե՞նք... Թե ցավ ունես և քաղաք չե՛ս ուզում գնալ՝ այստեղի բժիշկը կանչենք... Բայց* (Ժպտալով): *Չլինի՝ փող է ուզածդ, հը՞... Գիտես, որ չեմ խնայում ոչինչ... Ի՞նչքան ես ուզում—տամ:* (Ձեռքը ծոցն է տանում):

ԹԵՐԵԶԱ.— (Ցնցվելով ոտքի է ելնում, դեմառդեմ մի ոտպե նայում է նորը, հետո խիստ): *Հա՛յր, դու ինձ մի՛շտ երեխայի տեղ ես դնում... Ամեն բանի վե՛րջը կա, հա՛յր...*

ԳՐԻԳՈՐ.— *Ուրեմն ի՞նչ է ուզածդ, ի՞նչ է ասելիքդ... Չլինի՛ էլի այն անպիտանի մասին է... Սիրո՞ւմ ես նրան—ինչո՞ւ մերժեցիր...* (Հեղնորեն): *Զուզեցիր իբր վա՞րձ դառնալ իմ փրկության... փրկությո՞ւն... ինչի՞ց, օրիո՞րդ, ումնի՞ց... Նրանի՞ց, այդ լակոտի՞ց... ավելի շուտ մտածիր նրա՛ն փրկել իմ ձեռքից. հասկանո՞ւմ ես. նրան, որի թոզը երկինք կբարձրանա շուտով...* (Լռչանում է): *Թո՛ղ երեխայություններդ, Թերեզ. կարդացածդ ռոմանների միջից վերցրած խոսքե՛րն էլ թող... Սիրո՞ւմ ես նրան—դնա՛, ես խո չե՞մ արգելում: Ընդհակառակն... Տես ես որքա՞ն բարի եմ և ներողամիտ: Նախատե՞ց ինձ, ավազա՞կ կոչեց—բայց եթե դու կամենաս նրա կինը լինել—ամենը կմոռանամ և հոժարությունս կտամ... էլ բան ուզո՞ւմ ես: Սրանից ավելի՞ն...*

ԹԵՐԵԶԱ.— (Քիչ լռությունից հետո՝ վճռական): *Հա՛յր, ես ուզում եմ, որ դու զղջաս և չշարունակես այլևս այդ կեղտոտ արհեստը, այդ... գյուղացիներին կեղեքելդ...* (Խիստ): *Ամաչո՛ւմ եմ, որ քո աղջիկն եմ, հա՛յր...*

ԳՐԻԳՈՐ.— (Ոստնում է տեղից և բարկությամբ): *Ահա՛ թե ինչ... ամաչում ես, որ իմ աղջի՞կն ես... Այդպե՞ս ես խոսում դու հո՛րդ, հորդ հետ, որ քեզ համար ոչինչ չի խնայել... Ա՞յդ է քեզ ուսման տալուս հետևանքը... Այդպե՞ս ուրեմն... Լա՛վ, դու այսուհետև՛ կտեսնես. կտեսնես, թե ի՞նչ է նշանակում հորդ դեմ զինվել, նրա գործերի մեջը խառնվել...*

ԹԵՐԵԶԱ.— *Հա՛յր...*

ԳՐԻԳՈՐ.— (Խիստ բարկացած): *Լռի՛ր: Անզգամություն չեմ ուզում... Ահա՛ ուսմանդ, քեզ ազատ մեծացնելու, երես տալուս հետևանքը...* (Քայլում է դեպի դուռը): *Չհամարձակվե՛ս հորդ հետ այդպես անզգա՛մ...* (Դուրս է գնում և դուռը շրխկոցով փակում ետևից):

7) Թերեզա, տիկին Վարակյան

ԹԵՐԵԶԱ.— (Դեմքը ձեռքերի մեջ՝ մնում է, հետո, հուսահատ ցնցումներով հեկեկում է բազկաթոռի մեջ: Այդ տևում է մի ոտպե. բեմի վրա լռություն է):

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— (Ներս է վազում վախեցած): *Թերե՛զ, քե՛զ զուրբան, էդ ի՞նչ ա եղել քեզ... Հերդ ղրկեց, թե հիվանդ ես...* (Գրկում է նրան): *Ասա՛, ո՞րտեղդ ա ցավում... Բժի՛շկ կանչենք...*

ԹԵՐԵԶԱ.— (Բարձր հեկեկալով՝ ընկնում է մոր գիրկը): *Ա՛խ, մա՛յր, մա՛յր, որքա՛ն թշվառ եմ ես...*

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— *Բո՛ւյ... ա՛յ աղջի, ի՞նչի, ի՞նչ էլավ քեզ... Գնա՛նք, գնանք պառկիր...* (Տանում է ննջարանը, որի բաց դռնից լսվում է Թերեզայի հեկեկալու ձայնը):

ՏԻԿ. ՎԱՐԱԿՅԱՆ.— (Ննջարանից): *Բո՛ւյ, ա՛ղջի, դե հերիք ա, է՛է՛... Պա՛ռկի, պա՛ռկի... էս ջուրն էլ մեկ խմի՛... Ըտե՛նց...* (Դուրս է գալիս ննջարանից, դուռը փակում, ականջ է դնում, հետո գլուխը երերցնելով և զգույշ քայլերով՝ խորքի դռնից դուրս է գնում):

Բեմի վրա մի ոռպե լուռ է:

8) Գրիգոր, Մարտիրոս, Բաղդասար, Մարգար և Զաքար

ԳՐԻԳՈՐ.— (Ներս է մտնում: Ետևից՝ Բաղդասար, Զաքար, Մարգար և Քաչալ Մարտիրոս): *Էդպես, հա՞, Բաղդասար ամի...* (Նստում է): *Ադա՛, բաս էդքան էլ նամըքյո՞ռ կըլեն... Ինձ վրա գա՞նգատ եք ուզում անի, ինձ սո՞ւդն եք ուզում քաշ տա. էս ծեր հալո՞վս... Հա՛յ-գիտի աշխարհ, հա՛յ. տե՛ս, թե ինչ օրերի ենք հասել։ Սրանց ես լա՛վություն անեմ, փող տամ, խեղճությունից ազատեմ, որդկերանցը սովածությունից քաշեմ-հանեմ...* (Մարգարին): *Ադա՛, բաս դու մոռացա՞ր, որ ոտներս ընկել՝ աղաչում էիր... Թյո՛ւ ձեր նամուսին, հա՛...* (Զաքարին): *Բաս դո՞ւ, բեհայա՛, դո՞ւ չէիր, որ հլա կնգանդ էլ ուղարկել էիր, լա՛ց, արտասո՛ւք... Հմի ինձնից, գանգատ եք անում, է՛լի, ինձ սուդն եք քաշում, հա՞... Տո՛, բաս ուզում եք փողս ո՞ւտի, ո՞ւրանա... Բա ըտենց բա՞ն եք լսել, հը՞...*

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Շփոթված): *Յանի որ... հանց որ... տո՛կոսը...*

ԶԱՔԱՐ.— *Էլ ինչի՞ ես նեղանում, ա՛զա. էն ա սուդը կվճռի, է՛լի, թե մենք քեզ էնքա՞ն ենք պարտական, ինչքան գրած ա վեքսիլումը...*

ԳՐԻԳՈՐ.— *Փիե՛... Տո բաս դո՞ւ չես ձեռք քաշել տակին... Հրես, ա՛յ...* (Հանում է վեքսիլների ծրարը և միջից մեկը դուրս բերում՝ խոսելով միաժամանակ): *Թուր ու թվա՞նքով վախացրի, բուկիցդ հո՞ւպ տվի... Չէիր ուզում, ո՞ւր էիր ձեռք քաշում։ Հը՞, ըտե՞նց չի, Մարտիրո՛ս...*

ՄԱՐՏԻՐՈՍ.— *Դե հմի աղա՛, սխալվել են, զալաթ են արել, բաշխի... Խեղճ մարդիկ են, փող չունեն, որ տան...*

ԳՐԻԳՈՐ.— *Տո՛, որ փող չունեն տան, էլ ո՞ւր են գանգատի գնում։ Ընչի՞ մեկ չեկան ինձ մոտ, խնդրեին. «Գրիգոր աղա՛,— ասեին,— զո՛ւրբան, չունենք, չե՛նք կարող պարտքներս տալ. խղճա մեզ»... Ես էլ խո մա՛րդ եմ, կնիկ-զա՛վակ ունեմ, խո ջանավոր չե՞մ.. Հա՛լբաթ մի բան կանեի. յա թե, ո՞վ ա իմանում... քրիստոնյա չե՞մ, սիրտ չունե՞մ... Քաղցր լեզուն, աղաչանքը՝ ի՞նչ քար սիրտ ասես՝ որ չշարժի... Հը՞, Բաղդասար ամի, սրա՞ն ինչ կասես, սո՞ւտ եմ ասում... Ես անզգա՞մ մարդ եմ, քեզ քի՞չ լավություն եմ արել...*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Հանց ո՞ր... ի՛հարկե, աստված կյանք տա... Ամա գե ասում են՝ թազա զա՛կոն... Յանի որ մենք էլ, դե՛, ուտելու հաց չունենք, սո՞ված...*

ԳՐԻԳՈՐ.— *Տո ընչի՞ ինձ մոտ չեկար առաջ։ Մեկ գայիր, ըտոնք դեմ ասեիր... Թե քեզ հետ կռվեի, ուշունց տայի, յա մերժեի—է՛լի գնայիր էն լակոտի մոտ... Հը՞, հենց հմի, որ էդ ասում ես, յանի ես շա՞տ գիտեի, որ հալդ փի՛ս ա, չես կարողանում պարտքդ տա...* (Լուռ՝ նայում է գյուղացոց և մյուս կողմից հանում է ձեռքի ծրարից երեք մուրհակներ: Գյուղացիք թեև գլխիկոր են, երբ չի նայում, սրտատրոփ հետևում են թղթերի շարժմանը): *Տո՛, հա՛յվաններ, ե՞ս եմ էլի ձեր հին բարեկամը, թե՞ էն թազա եկած լակոտը... էլ ո՞ւր եք հայ-հարա՛յ—նրան վազել... Ըստի մտիկ տվե՛ք... Ես որ ուզենամ չար լինել է՛, որ վեքսիլներդ տանեմ սուդը, ոնեցած չունեցածներդ գրել տամ—էն լակո՞տը ձեզ կազատի...* (Քրքիջ): *Ախմախնե՛ր... Ամա տեսե՛ք, ես է՛ն մարդը չեմ...* (Հանկարծ Բաղդասարին): *Հլա մեկ մոտ արի, ամի՛... Մոյկ տո՛ւ... էս չի՞ վեքսիլը։*

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Մոտենում է և նայում): *Հա՛, է՛դ ա...*

ԳՐԻԳՈՐ.— *Բաս, դո՛ւ, Մարգա՛ր, էս էլ քոնը չի՞։*

ՄԱՐԳԱՐ.— *Ադա՛, բաս գործը սուդն էիր տվել ախր...*

ԳՐԻԳՈՐ.— (Քրքիջով): *Տո ե՞ս չեմ գործը սուդ տվել... Հլա չե՞ք հասկացել, որ սո՛դիան էլ է ձեռքումս, նաչա՛լնիկն էլ, դուք էլ...* (Լուրջ): *Գործդ ե՛ա եմ վերցրել...* (Զաքարին): *Էս էլ քոնը, Զաքար...* (Նույց է տալիս):

ԶԱՔԱՐ.— (Ուզում է մոտ գալ և վերցնել):

ԳՐԻԳՈՐ.— *Կա՛մաց... Հլա կա՛ց... Ո՞նց ես սուդը տամ ու բաղդ ձեռքիցդ թոցնեմ, հը՞... Ալեքսան բեկը կարա՞ ազատել քեզ...* (Բոլորին): *Խո հմի երեքդ էլ ձեռքո՞ւմս եք։ Թպրտացե՛ք՝ ինչքան կուզեք, ամա ա՛, սրանց դեմ խոսալ չի ըլի, չէ. ձե՛ռք եք քաշել—պտի տաք։*

ՔԱՋԱԼ ՄԱՐՏԻՐՈՍ.— *Դե թրծի, աղա՛, մի՛ տանջի, խե՛ղճ են, էլ հո՛գի չմնաց վրանները։*

ԳՐԻԳՈՐ.— *Լա՛վ. է՛դ էլ ա իմ ձեռքին...* (Գյուղացոց): *Ա՛յ, երեքիդ վեքսիլներն էլ... Տեսնո՞ւմ եք... Նայեցե՛ք* (Պատռում է): *Ըսենց... էլ տալիք չունեք ինձ... Ադա՞տ հմի... Դե գնացե՛ք, ըստունց դենը ինձ ո՛ւշունց տվեք, սո՛ւդ քաշ տվեք...*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Ա՛յ, աստված քեզ օր ու արև... Ա՛յ դու ողջ... Վա՛յ ես քու հոգուն... Յանի որ...* (Լռում է հուզված):

ՄԱՐԳԱՐ.— (Վրա է վազում և ուզում է Գրիգորի ձեռքը համբուրել): *Բա ես շո՞ւն եմ, մարդ չե՞մ.. քո ա՛մագդ...*

ԳՐԻԳՈՐ.— (Ձեռքը ետ է քաշում): *Լա՛վ, լա՛վ, պե՛տքը չի...*

ՋԱՔԱՐ.— *Յանի էդ ի՞մ վեքսիլն էր...* (Վերցնում է գետնից պատռածը և գննում): *Պրծա՞, ա՛ խալխը... դրո՞ւստ...* (Ընկնում է Գրիգորի ոտները): *Բախշի՛ աղա, որ ոտովդ էլ գլուխս տրորես...*

ԳՐԻԳՈՐ.— (Ոտքով հրում է նրան): *Վե՛ր, վե՛ր ռա՛դ ըլի. գնա ժա՛մումը երկրպագություն տուր...*

ՄԱՐՏԻՐՈՍ.— (Այդ միջոցին հանել է ծոցից մի թուղթ, մի կողմի սեղանի վրա է դրել, գրիչ բաթախել): *Դե՛, ամի՛, Մա՛րգար ու Զաքար, հմի դեսն եկեք... էս թղթին ձեռք քաշեք...*

ՋԱՔԱՐ.— (Վախեցած): *Ձե՞ռք քաշենք...*

ՄԱՐԳԱՐ.— *Էդ ի՞նչ թուղթ ա, որ...*

ՄԱՐՏԻՐՈՍ.— *Պտի ձեռք քաշեք, որ էլ աղիցը պահանջ չունենք, որ շնորհա՛կալ եք, որ աղեն ձեզ լա՛վություն ա արել...*

ՄԱՐԳԱՐ.— *Յանի էդ հարկավո՞ր ա... Որ ձեռք չքաշենք՝ չի՞ ըլի...*

ԳՐԻԳՈՐ.— (Սառը): *Թո՛ղ, Մա՛րտիրոս, իրա՛նց կամքն ա. կուզեն՝ ձեռք կքաշեն, չեն ուզի՝ թող գնան, աստված իրանց հետ... Ամա՝ թե շնորհակա՛լ են, թե իմանում են իմ արած լավությունը...*

ՄԱՐՏԻՐՈՍ.— *Հա՛լբաթ... Բա ըտենց բա՞ն կըլի։ էլ ի՞նչ են ուզում։ Հա՛մ պարտքներիցը պրծնեն, հա՛մ էլ օրհնող չըլե՞ն, ոտքերդ էլ չպա՞չեն...* (Բաղդասարին): *Ե՛կ, ե՛կ, ամի՛, ձեռք դիր ըստեղ, որ ո՞վ ա իմանում—բալքի ըստեղ-ընտեղ խոսաք աղի վրեն...*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Յանի որ... ի՞նչ կա, ձեռք դնեմ...* (Մոտենում է և նայում է թղթին, հետո՝ հանկարծ): *Դո՛ւ քո աստվածը, քյաչա՛լ, սա խո թազա վեքսիլ չի՞...*

ՄԱՐՏԻՐՈՍ.— (Ծիծաղում է): *Տո քո՞ռ ես, վեքսիլը հասարակ թղթից ջոկել չե՞ս կարում... Հրե՛ն, Զաքարը կարդալ գիտի, թող կարդա՝ հետո՛ ձեռք քաշեք...* (Թուղթը տալիս է Զաքարին): *Կարդա՛, Զաքա՛ր։*

ՋԱՔԱՐ.— (Լուռ կարդում է, հետո դնում սեղանի վրա): *Վեքսիլ չի, շնորհակալության թուղթ ա։*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Բաս որ ըտենց ա, մյոհրս դնեմ...* (Հանում է զոլանից կնիք, ճկույթով թանաք քսում, թղթի վրա շունչ փչում և կրնքում է):

ՄԱՐԳԱՐ.— *Տուր և՛ս էլ ձեռք քաշեմ... Աստված աղին կյանք տա, ընչի՞ չեմ քաշի։*

ՋԱՔԱՐ.— (Լուռ առնում է գրիչը և ստորագրում):

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Հուզված՝ Գրիգորին): *Յանի որ... աղա՛... բա ինչպե՞ս դուրս գանք էս քո լավությունիցը։*

ԳՐԻԳՈՐ.— (Ելնում է): *Սկի—հինչ... Գնացեք մեկ-մեկ արաղ էլ անուշ արեք, որ աստված ձեզ հետ... Ձեր տվածովը ո՛չ ես կհարստանամ, ո՛չ էլ չտվածովը՝ կաղքատանամ... Քեֆս ուզեց՝ արի։*

ՋԱՔԱՐ.— *Դե գնանք, ա՛ խալխը... Ըսենց լավություն սկի՛ մարդ չէր արել մեզ...*

ԳՐԻԳՈՐ.— (Կեղծ համեստությամբ): *Քրիստոնյա ենք... Ավետարանն ա՝ ասում, թե՝ «Թող մեզ զպարտիս մեր»...* (Մարտիրոսին): *Դրանց մեկ լավ պա՛տվիր, Մարտիրոս։*

ԳՅՈՒՂԱՑԻՔ.— (Բարեմաղթություններով՝ խառնիխուռն և խոնարհ ողջույններով դուրս են գնում):

ՄԱՐՏԻՐՈՍ.— (Ամենից վերջն է ելնում, դուռը կիսափակ՝ դառնում է և ատամները բաց՝ լուռ ծիծաղում է Գրիգորին):

ԳՐԻԳՈՐ.— (Քրքջում է): *Հա՛-հա՛-հա՛... ա՛յ թե ախմախներ... Ըտե՛նց ձեր հոգին կհանեն հա՛... Վնաս չունի, հալրա՛թ էլի մեկ ձեռք կընկնեք դուք...* (Երբ Մարտիրոսը բոլորովին գնում է, սպառնալից և բուռը սեղմած): *Դև հմի, պարո՛ն Ալեքսան, մնացինք էս ու դու...*

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ

Ալեքսանդրի սենյակը, բավական մեծ: Աջ կողմում, լուսամուտի առաջ՝ գրասեղան՝ թղթերով և գրքերով: Բազկաթոռներ, մի փոքրիկ գրադարան: Ձախ կողմից մի դուռ տանում է դեպի սրահը: Խորքում՝ պարտեզից, մուտքի դուռն է: Ժամը ցերեկվա 11-ն է:

1) Ալեքսանդր (մենակ)

(Գրում է քիչ, հետո գրիչը ցած դնում և մտախոհ է ու երազուն): *Ո՜ւրիշ բան է, երբ կռվի ես գնում՝ հայրենիքի ազատության համար կռվի ելնող ոգևորված զինվորի պես՝ զվարթ և ուրախ, գրեթե պարելով... և ուրիշ՝ երբ սիրտդ սեղմված, ճակատդ կնճիռներո՛վ ակոսած, տխուր քայլում ես դեպի կռիվ՝ կախաղանի գնացող հանցավորի նման...* (Ելնում է և ճեմում, հետո նստում է բազկաթոռի մեջ): *Վայրենին, լինի՛ նույնիսկ լավ ավարի հույսով, գնում է նիզակը ճոճեցնելով, ուրա՛խ աղաղակներով... Իսկ ե՞ս... ե՛ս նույնպես գնում եմ կռվի, հանուն արդարության ոտնատա՛կ եմ տալիս ամե՛ն արգելք... սակայն ես նիզակս ամենա՛յն զգուշությամբ եմ շարժում, որ սրտի՛ս չզարնեմ...* (Քիչ լուռ): *Փոքրոգություն է այս, զգո՛ւմ եմ. նման է սա պարտավորության արդյունքի, բայց ո՛չ երբեք բուռն համոզման և մե՛ծ զգացմունքի...* (Քայլում է): *Կուզեի մտա՛ծ չլինել այս կռվի մեջ... և կա՛մ՝ ճանաչա՛ծ լինեի...* (Ընկճված՝ մոտենում է լուսամուտին և նայում նրան):

2) Նույն և Կիրակոս (ծառան)

ԿԻՐԱԿՈՍ.— (Բերում է մի բաժակ սուրճ): *Մատվեյ Եգորի՛չն ա եկել...*
(Բաժակը դնում է սեղանի վրա): *Աղի հետ զալումը խոսում են...*
ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Լավ... Տանուտերին գնացի՛ր։*
ԿԻՐԱԿՈՍ.— *Շատո՛նց... Հմի կգա։* (Գնում է):

3) Ալեքսանդր (մենակ)

(Քիչ լուռ): *Հասարակության համար գործողը չպիտի կապվի ոչ ոքի հետ, ո՛չ... Իրավո՛ւնք ուներ Թերեզան... Խայտառակված վաշխառուի աղջի՛կ—և խայտառակողի կինը...* (Նայում է լուսամուտից լուռ): *Որքա՛ն էլ ձանձրալի է այս գյուղը... Մի՛շտ միևնույն դեմքեր... Ո՛չ մի շրջան, ո՛չ մի կո՛ւլտուրական կյա՛նք... Մարդ ակամա ենթարկվում է տիրող դանդաղ ոգուն... Ախորժա՛կ էլ չի մնում պարապելու...* (Վերադառնում է դեպի գրասեղանը): *Եվ, սակայն, որքա՛ն վշտեր ու ցավեր, որքա՛ն անարդարություններ...*

4) Նույն և Արշակ

ԱՐՇԱԿ.— (Շտապով ներս է գալիս սրահի կողմից, մի կապոց թուղթ ձեռքին): *Ներեցե՛ք, սպասեցնել տվի ձեզ... Ահա՛ ձեր ուզած թղթերը։* (Ձեռք է տալիս և կապոցը հանձնում):
ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Ոչի՛նչ... Շնորհակալ եմ... Այստե՞ղ են բոլորը։*
ԱՐՇԱԿ.— *Բոլորը...* (Նստում է): *Տխուր եք երևում։*
ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Մատվեյ Եգորիչը տեսա՞վ ձեզ... սրահում։*
ԱՐՇԱԿ.— *Այո՛, ասացի, որ քիչ գործեր ունենք առանձին... Գիտե՞ք, ամբողջ գյուղը գրեթե ոտքի վրա է։ Բոլորը հետաքրքրվում են, թե ի՞նչ կլինի վերջը։ Երեք-չորս հոգի բռնել ճանապարհին՝ խընդրում էին, որ տեղեկություններ տամ։ Իհարկե, ասացի, որ դուք դեռ բողոքը չեք ներկայացրել։ Բոլո՛րը, սակայն, սպասում են դատի սկսելուն... Որ գիտենաք, թե քանիսների՞ն է թշվառացրել այդ մարդը, քանիսնե՞ր շունչ կառնեն նրա ընկնելովը...*
ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Իսկ ի՞մ, ի՛մ դրությունը... Գիտե՞ն նրանք այդ։ Գիտե՞ն, որ հրեշը ընկնելով՝ կփշրի ամենից առաջ ի՛մ սիրտը, ի՛մ ծնողների ու ի՛մ կյանքը...*
ԱՐՇԱԿ.— (Լուռ): *Լսեցեք ինչ կասեմ ձեզ պ. Ալեքսա՛ն... Երբ սրանից մի քանի ամիս առաջ գյուղ եկաք և առաջին օրն իսկ այնքա՛ն ոգևորությամբ խոսում էիք ձեր անելիքների մասին, ես ուրախացա, որ մեր զարգացածներից մե՛կը, վերջապես, մտածեց իր գործունեությունը լիովի՛ն նվիրել գյուղացուն, բավականանա՛լ չոր հացով, միայն թե գործել այնտեղ, ուր թանձր խավարը լույսի շառավիղի՛ն է կարոտ՝ ինչպես թոռոմող բույսը՝ անձրևին... Ես ուրախացա, երբ դուք վճռեցիք այդ նշանավոր վաշխառուին ոչնչացնելու համար կռվի ելնել... Ձեր այդ քայլը արդար և մեծ գործի համար՝ ոգևորեց ի՛նձ ևս... Իսկ այժմ, ա՛յն բոպեին, երբ կտրական մեծ հարվածը պիտի իջեցնեք, զարմանալի է ձեր վհատությունը... Այդպես չե՞ն ընկճվում նրանք, որ կռվի են ելնում հանուն արդարության. այդպես չե՞ն ողբում...*
ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Հե՛շտ է ասել այդ բոլորը, շա՛տ հեշտ է... Ինչո՞ւ կեղծել սակայն, երբ սրտիդ խորքում այդպե՛ս չէ. երբ զգում ես, որ*

այդ կովի մեջ ի՞նքդ էլ կորցնելու ես շա՞տ բան... գուցեև ամե՛ն բան...

ԱՐՇԱԿ.— (Քիչ լռությունից հետո): Տեսնում եմ իսկապես, որ բավա-կա՛ն ծանր է այդ առաջին քայլը... Դժբախտաբար, առաջին քայլը մի՛շտ ծանր է լինում... Բայց ենթադրել, որ դուք ե՛տ կկանգնե՞ք, որ կենքը ցա՞ծ կդնեք... որովհետև ձեր անձնական վնասնե՞րը...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Վեր է կենում՝ խիստ): Ո՛չ... ետ կանգնել չե՛մ ուզում... (Ցույց է տալիս մի մեծ թուղթ): Ահա բողոքը...

ԱՐՇԱԿ.— Հաշտարար դատավորին, անշուշտ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Ինչո՞ւ այդպես... Ո՛չ։ Ես ձեր բերած թղթերին էի սպասում։ Գրիգոր աղան արհեստով վաշխառու է, նրանով հարստացած և բազմաթիվ թշվառություններ գոյացրած... Շրջանային դատարա՛նն է նրա տեղը...

5) Նույնը և Մատվեյ Եգորիչ, Սահակ

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Մտնում է Սահակի հետ: Ալեքսանին՝ դռան մոտից): Ա՜յ տղա, հերի՞ք, է՛է՛... Մի ժամ է սրահում սպասում եմ, որ դուրս գաս... Տանուտերն էլ, խո՞. երևի է՛լի փիլիսոփայական հառեր է կարդում գլխիդ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ձեռք է տալիս): Ո՛չ, գործերո՛վ էինք զբաղված։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Գիտե՛մ, գիտեմ. Սահակ բեկն ասում էր, որ գանգատ ես պատրաստում... постой, եղբայր... մի քիչ լուրջ խոսենք քեզ հետ... (Նստում է): Ա՜յ, տանուտերն էլ հազը այստեղ է, հա՛յրդ էլ... Ասա՛ խնդրեմ, ախր ինչո՞ւ ես ուզում չցաված գլուխդ ավետարանի տակ դնել, հը՞... Ախր քո ի՞նչ գործն է վնասվում... Դե՛, մեկ կոլեգների պես խոսենք... Եղբա՛յր, հազը մեզ համար հա՛նգիստ նստել էինք... Գրիգոր աղան էլ ո՛չ այնքան անիրավ է, որքան դու ես ենթադրում...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ընդհատում է ենթացած): Չի՞ կարելի արդյոք, Մատվեյ Եգորիչ, որ թողնե՛նք այդ խոսակցությունը։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Ինչո՞ւ, ինչո՞ւ, եղբա՛յր։ Քի՞չ աղուհաց ենք կերել հորդ հետ, որ նրա փորձանքի օրերում անտարբեր մնում ես... էս է տասը տարի՝ միմյանց ջան ենք ասել, ջա՛ն լսել... Հիմի դու ուզում ես, որ ես չխառնվե՞մ... Էդպես չի՞, Սահակ, դու դա՞բուլ կանես, որ ես ձենս կտրեմ։

ՍԱՀԱԿ.— Ի՞նչ ես ասում, Մատվե՛յ. բաս դու որ չխոսես, էլ ո՞վ պիտի խոսի. օրենք հասկացո՞ղ, փորձված բարեկա՛մ...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Տո՛-տո՛, եղբա՛յր, մենք խո փորձվա՞ծ ենք օրենքի

մեջ... (Ալեքսանին): Լավ, հիմի արի հենց օրե՛նքիցը խոսենք... Դու որ գանգատ տաս, ասենք՝ փաստեր էլ գտնես, սուդը քննի—դրանով խո հորդ պարտքը չի՞ բախշվի. խո գյուղացիները չե՞ն ազատվի տալիքներիցը, հը՞... Ասե՛նք կարողացար հաստատել, որ մեզ տոկոսներ է վերցրել. հետո՞, խո՞ հետևանքն ա՛յն կլինի, որ գործը կընկնի էս սուդիցը՝ է՛ն սուդ, ապելա՛ցիա, սենա՛տ... Ի՞նչ է, չլինի՞ կարծում ես, թե Գրիգոր աղան, էն ա, սուդի վճռովը գոհ կլինի, հա՞... Իսկ մյուս կողմից՝ հայրդ խո՞ մի քանի օրից հետո կա՛մ պիտի ցնծա, կա՛մ բաղիցն ու տնիցը ձեռք պիտի քաշեք... Հը՞, եղբա՛յր, թե սխալ եմ ասում, ասա՛։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Ինձ միայն զարմացնում է այն, թե ինչպե՞ս դուք, որ հորս բարեկամն եք կոչում ձեզ, թույլ եք տալիս, որ 3500 ռուբլու փոխարեն՝ 5000 վճարվի և կամ տունն ու այգին խլվի։

ՍԱՀԱԿ.— Սա՛շա, լսիր ինձ, ախր, է՛է՛... քեզ խո ասացի մի քանի անգամ։ էն մարդը ձեռք է քաշում տոկոսիցը, բոլորովի՛ն... Հլա մեկ 500 մանեթն էլ պարտքի գլխիցն է բաշխում...

ԱՐՇԱԿ.— Հազա՛ր էլ, ե՛րկու հազար էլ կբաշխի... Որ ոչինչ էլ չտաս—մուրհակդ ետ կտա, միայն թե որդիդ նրան դատարան չքաշի, չխայտառակի։

ՍԱՀԱԿ.— Հա՛, հենց այդ է։ Ախր, նա՛ էլ խեղճ է, չէ՞։ Թեև արդար եմ,—ասում է,— խիղճս մաքուր է, բայց չե՛մ ուզում, որ ինձ դատարան քաշ տան. ամոթ է էս ծեր հալովս՝ ասում է...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Ի՛հարկե, բա՞ս... Հե՞շտ բան է՝ իբր հանցա՛վոր նստել այնտեղ... Վաշխառո՛ւ... այն ծեր, պատկառելի մարդը, կընգա-աղջկա, այնքա՞ն մեծ գործերի տեր մարդը... Թեկուզ ա՛րդար էլ դուրս գա, բայց է՛լի... (Ալեքսանին): Լսի՞ր, Սա՛շա, ա՛րի քաղցր տեղը կապենք ու վերջացնենք-գնա... է՞նպես, է՛լի... Տեսնենք պահա՞նջդ ինչ է... Քանի դեռ գործը սուդ չի ընկել՝ մե՛ր մեջ, է՞նպես...

ԱՐՇԱԿ.— (Ալեքսանին): Առաջարկում են արդարությունը ծախել։ Սակարկում են...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Նրան): Զարմանալի՛ մարդ ես դու էլ, Արշա՛կ... Ի՞նչ սակարկության բան կա այստեղ. հաշտո՛ւթյան գործ է. ես առաջարկում եմ հաշտվել, մի կերպ գործը կարգադրել մե՛ր մեջ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Իսկ դուք պաշտոն ունե՞ք նրա կողմից՝ այդ անելու։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Էդ ո՛չինչ... Դու քո՛ պայմանները ասա, տեսնենք. հետո իմ պարտքը լինի գնալ նրան համոզել... Էլ ինչացո՞ւ հաշտարար դատավոր եմ... Քեզ համար միևնույնը չէ, եղբա՛յր—այստեղ

գործը վերջացնել կամ դատարանում, վերծալի առաջ. գործը չէ՞ որ ի՛նձ մոտ է գալու։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ծպտուն): Այդ դեռ հարց է... Կան գործեր, որ հաշտարար ատյանին չեն ենթարկվում և ամենից առաջ՝ քննիչի մոտ են գնում։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Զարմացած և վախեցած ոտի է ելնում): Ինչպե՞ս... Դու... դու ուզում ես... Քննի՞չ... Ա՜յ թե ինչ... Постой, եղբա՛յր, ինչի՞ պետք է քննիչ, մարդասպանությո՞ւն է, քրեական գո՞րծ է, ի՞նչ է...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Գրիգոր աղան արհեստով վաշխառու է և հարստացել է գյուղացոց կողոպտելով ու կեղեքելով... Գործը, ըստ օրինի, կերթա նախ քննիչի մոտ, հետո՝ շրջանային դատարանը...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Բարկությունից կարմրելով): Вот тебе раз!... Սյո՞ւրպրիզ... Ուզում ես ուրեմն մարդուն Սի՞բիր քշել տաս. կորցնե՞ս... Եվ փաստեր ունե՞ս, փաստե՞ր. թե՞ է՛նպես, զուլամա ասում ես... Խոսք չկա, սյո՞ւրպրիզ... Ակրուժնոյ սո՛ւդ...

ԱՐՇԱԿ.— Փաստեր շա՛տ կան։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Նրան՝ բարկությամբ): Երևի դո՛ւ ես տվել, չէ՞... Հը՛մ... լա՛վ է, լա՛վ է... Գյուղացոց էլ երևի արդեն պատրաստել ես... Նո՛ւ, եղբայր, այդ ձեզնից չէի սպասում. ծեր մա՛րդ. ընտանիքի տե՛ր, ակրուժնո՛յ, Սիբի՛ր...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Այժմ Սիբիր չկա այդպիսիների համար արեստանտսկայա բոտա...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Ճչալով)։ Տո խո չե՞ս գժվել... Էն ծեր մարդո՞ւն, Թերեզի հո՞րը... Ֆո՛ւ, черт побери!։ (Բարկությամբ ճեմում է):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Քիչ հանդարտեցե՛ք, Մատվե՛յ Եգորիչ. ինչո՞ւ եք տաքանում, երբ ինքներդ էլ գիտեք, որ այդ մարդու հարստությունը վաշխառությունով է դիզված...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Առևտո՛ւր է անում մարդը, խոսք ունե՞ս... Ուրեմն քո կարծիքով՝ պետք է բոլո՛ր վաճառականներին էլ արեստանտսկի բո՞տ ուղարկել... Հե՛նց մեկը Մակարով Գալուստը, ձեր ազգականը... Տո՛, անցյալ օրը, իմ աչքիս առաջ, մանեթանոց շալը՝ երեք մանեթով կապե՛ց մի թարաքամի գլխին, ետևից էլ մի լա՛վ ուշունց տվավ... Արեստանտսկի բո՞տ ուրեմն, հա՞... (Քիչ հանդարտ՝ մոտենում է): Չէ՛, եղբայր, այդպես խո չի՞ կարելի. . Դու կասես՝ թող թարաքաման խելքը գլխին պահեր ու չխաբվեր. ես էլ կասեմ՝ թող գյուղացիք խելքները գլխին պահեին ու այնքան տոկոսով մուրհակ չստորագրեին...

ԱՐՇԱԿ.— Ուրեմն Սահակ բե՞կն էլ...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Հա՛, իհարկե, թող չանե՛ր... Արել է— ո՞վ է մեղավորը... Նրան խո սրով ու հրացանով չսպառնացի՞ն, որ ստորագրեց... Առևտո՛ւր է սա. ապրանքս ա՛յսքանով եմ տալիս. կուզե՞ս— առ, չես ուզի—բարո՛վ եկար. դե որ առել ես՝ վճարի՛ր... (Քիչ լուռ): Եվ կամ, եղբա՛յր, մարդը վատո՞ւթյուն է արել քեզ, որ փո՛ղ է տվել ուսմանդ համար... Գոնե ա՛յն մտածելով՝ դու պիտի խնայես նրան... Նստի՛ր մեկ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Այսպես էլ լավ է... Միայն դուք մի՛շտ մոռանում եք, որ օրենքով որոշ տոկոսից ավելի առնողը...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Ընդհատում է): Կա՛ց մեկ... Առաջ այդ արեստանտսկի բոտ, ակրուժնոյ սուդ-բան գլխիցդ հանի՛ր... Ամո՛թ է. հորդ հասակի մարդ է, ընտանիքի տե՛ր... Հետո, ինչի՞ց գիտես, որ այն մարդը, ասենք հենց, չի՛ զղջում իր արածներ վրա, հը՞... օրինակ հենց. այդքանը բավական չէ՞, որ հորդ տալիքի համար ո՛չ տոկոսն է առնում, ո՛չ էլ գրավը...

ԱՐՇԱԿ.— Ո՛չ էլ երևի տվածը ետ կուզենա։

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Ну да!։ Հենց ա՛յդպես... Ավելի՛ լավ. էդ խո ցույց է տալիս, որ խղճո՛վ մարդ է, տեսնո՛ւմ է հորդ դրությունը, ցա՛վում է, բա՛խշում է պարտքը... Էլ ուրիշ ի՞նչ է ուզածդ, եղբա՛յր...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Իսկ գյուղացիներին, նրանց դեմ արածնե՞րը...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Տո քե՞զ ինչ. նրանք ի՞նչ են տվել քեզ, որ քո ցավդ թողել՝ նրա՛նց ցավն ես քաշում. որ քո բարերարիդ... (Նկատելով Ալեքսանի զայրացկոտ շարժումը): Постой, իհարկե, բարերարիդ, քանի որ ետ չի ուզում տված փողը... Նրան թողել՝ գյուղացոց ծրոտի-պոտի խոսքերի՛ն ես լսում... Ի՞նչ է, մե՞ծ գոնորար են տալիս քեզ։ Տո, կուզե՞ս, Գրիգոր աղին համոզեմ, որ նրանց ո՛ղջի տվածի կրկնապատիկը հենց էգուց ևեթ ղրկի քեզ, հը՞; սրա՞ն ինչ կասես...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Բարկացած): Դուք նրա կողմից ուղարկվել եք այդ առաջա՞րկն էլ անելու ինձ...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— Հա՛, հենց. հետո՞, ասելի՞ք ինչ է...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Իսկ ձե՞զ... ձե՞զ որքան է խոստացել նա այդ միջնորդության, այդ ցա՛ծ առևտրի համար...

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Գունատ և սոսկումով ետ է քաշվում): Ի՞նչ... Սաշա՛, և դու այդ մտածո՞ւմ ես... Թյո՛ւ... (Մեկե՛ն գլխարկը դնում է գլխին): Պլեվա՛տ այսուհետև. ավելի լավ է՝ չցաված գլուխս ավետարանի տակ չդնեմ... Ի՞նչ... կաշա՞ռք... Նո՛ւ, մնաք բարև...

(Գնում է դեպի դուռը, այնտեղ կանգնում է և դառնում)։ *Բայց տե՛ս, էլի՛ եմ ասում, Սա՛շա, խնայի՛ր գոնե ծնողներիդ և... հետո Թերեզային... Ինչո՞վ է մեղավոր խեղճը, որ ամբողջ օրը լաց լինի, ողբա...* (Ուզում է գնալ)։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Հուզված՝ վազում է դեպի նա)։ *Թերեզա՛ն... Դուք նրան տեսա՞ք... Ասացե՛ք...*

ՄԱՏՎԵՅ ԵԳՈՐԻՉ.— (Կանգ է առնում)։ *Երե՛կ տեսա։ Խե՛ղճ աղջիկ... Այնքա՛ն լաց է լինում, այնպե՛ս նիհարել է... Անխի՛ղճ պիտի լինել նրան այդպես տանջելու համար... Բայց, այլե՛ս ես գործ չունեմ, եղբա՛յր... մնա՛ք բարև...* (Գնում է)։

ՍԱՀԱԿ.— (Ալեքսանին՝ մեղմ, հանդիմանական)։ *Արածդ ինչի՞ եմանեց, Սա՛շա. Մատվեյ Եգորիչին էլ նեղացրիր... Լսեցի՞ր Թերեզայի հալը... Ախր մարդը խո քեզ վատություն չի՛ անում, քեզ խո չի՞ նեղացնում...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Խիստ հուզված)։ *Լռի՛ր, հա՛յր... Թա՛նկ է նստում ինձ իմ ուսումը, իմ սովորածները...*

6) Նույնի և Թերեզա

ԹԵՐԵԶԱ.— (Ոռ սրահի դուռը բաց է արել մեղմությամբ. առաջ է գալիս. նիհար է և գունատ)։ *Թույլ կտա՞ք ինձ...* (Ընկնում է դռան կողքի աթոռի վրա)։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Վազում է դեպի նա)։ *Թերե՛զ...*

ԱՐՇԱԿ.— (Միաժամանակ)։ *Ը՛մ... տարօրինա՛կ է այս։*

ՍԱՀԱԿ.— (Միաժամանակ)։ *Վա՛հ...*

ԹԵՐԵԶԱ.— *Ոչի՛նչ. հոգնած եմ միայն... Վազե՛ցի... Քեզ հետ առանձին խոսել եմ ուզում, Սա՛շա...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Հորը)։ *Հա՛յր...* (Արշակին)։ *Մի քանի րոպե... Սպասեցեք ինձ սրահում։*

ԱՐՇԱԿ.— *Ես կգնամ. հետո կգամ։*

ԹԵՐԵԶԱ.— *Ո՛չ, ինչո՞ւ... երկար չի լինի...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Արշակին)։ *Խնդրեմ... սպասեցեք ինձ հորս հետ... Կկանչեմ ես ձեզ...* (Կիսովին գրեթե գրկել է Թերեզային)։

ԱՐՇԱԿ.— (Մի նշանակալից ակնարկ է ձգում Ալեքսանի վրա, և Սահակի հետ դուրս են գնում)։

7) Ալեքսանդր և Թերեզա

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Թերե՛զ...*

ԹԵՐԵԶԱ.— *Խնդրեմ, մի բաժակ ջուր տուր ինձ այնտեղից։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Լցնում է և տալիս. սաստիկ հուզված է)։ *Հանգստացիր, ի սեր աստծո...*

ԹԵՐԵԶԱ.— (Խմում է, հետո փիշ շունչ առնում, ելնում է տեղից և գնում դեպի գրասեղանը)։ *Խոսենք քիչ, Սա՛շա... Երկա՛ր ժամանակ է, որ չենք տեսնվել...* (Նստում է)։ *Նստիր ինձ մոտ...* (Քիչ լուռ)։ *Ինչո՞ւ ես այդպես նայում։* (Տխուր ժպիտով)։ *Փոխված ես գտնում ինձ, չէ՞։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Շա՛տ ես նիհարել... Հիվա՛նդ էիր գուցե...*

ԹԵՐԵԶԱ.— *Ո՛չ... Բայց այս վերջին օրերս գրեթե չեմ ապրել... Մո՛տ նրստիր... Բայց գուցե արդեն սառել ես. այլևս քո Թերեզը չե՛մ գուցե...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Հուզված բռնում է ձեռքը)։ *Թերե՛զ... Եվ դու այդ կարողանո՞ւմ ես ասել։ Մի՞թե ես ապրել եմ՝ այն օրվանից հետո. մի՞թե ես մի րոպե երջանիկ եմ զգացել ինձ...* (Թիկնաթոռին է կոքնում)։ *Առաջին օրերը կարծում էի, թե պիտի խենթանամ... մտքերը շփոթվում էին գլխումս։ Մի ընդհանուր թուլություն զրկում էր ինձ գործելու, պարապելու ամե՛ն փափագից. թվում էր, թե ուղեղս ճմլում են... Հետո վարժվեցի։ Երևի մարդ կարող է թշվառության, մեծ տանջանքների՛ էլ վարժվել ա՛յնքան, որ այլևս անզգա դառնա...*

ԹԵՐԵԶԱ.— *Ճի՛շտ ինձ նման... Բայց ես դեռ չե՛մ վարժվել։ Երևի թույլ բնավորության տեր եմ. երևի իմ մեջ զգացմունքները կլանում են ամբողջ էությունս... Հաճա՛խ դատապարտեցի ինքնիրենս, անվանեցի ինձ թուլամորթ, փոքրոգի... Սակայն, չե՛մ կարողանում... Ջափազա՛նց սիրում եմ քեզ...* (Կռանում է դեպի նա)։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Գգվում է նրան)։ *Ի՞մ Թերեզ...*

ԹԵՐԵԶԱ.— (Մեղմությամբ ետ է մղում նրան)։ *Ինձ թվում է, թե այդ նրանի՛ց է, որ արգելքնե՛ր են ծնում մեր երջանկության դեմ... Սակայն այլևս չե՛մ կարող, հնա՛րք չեղավ զսպելու, ոչնչացնելու... Եվ ահա եկել եմ ասելու քեզ, Սա՛շա, որ այս երկար տևել չի կարող. որ... որ առանց քեզ այլևս ո՛ւժ չկա ապրելու...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Գգվում է)։ *Ի՞մ հրեշտակ, ների՛ր ինձ խնդրեմ... Ա՛խ, ես ինքս էլ չգիտեմ ինչ ասել քեզ...*

ԹԵՐԵԶԱ.— (Ընդունում է գգվանքը)։ *Ներելու ո՛չինչ չկա... Դու ինձ սիրում ես. այդ ես եթե չե՛մ տեսնում, գոնե զգում եմ, համոզված եմ... Գիտեմ, թե որքա՞ն ահավոր տանջանք է քեզ համար՝ քայլեր անել ո՛չ դեպի ինձ, այլ դեպի ետ, հեռու ինձանից... Բայց առանց*

քեզ չե՛մ կարող... Ո՛ւժ չկա... (Թուլացած՝ գլուխը դնում է նրա կրծքին: Քիչ հետո հանկարծ, բուռն կերպով գրկում է Սաշային և գրեթե շոշում նրա առաջ): *Սա՛շա, հոգի՛ս... Իմ էությունն ամբողջ, իմ հոգին, իմ սիրտը լիովին՝ ոտքերիդ առաջն է. կոխի՛ր, կոխի՛ր նրանց, միայն թե մի՛ հեռանա ինձնից... չե՛մ կարող...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Հուզված կռանում է դեպի նա): *Թերե՛զ, վե՛ր կաց... Բայց ես չե՛մ հեռանում. ես կուզեի մի՛շտ, մի՛շտ քեզ մոտ, երբե՛ք քեզնից հեռու...*

ԹԵՐԵԶԱ.— (Տանջվելով): *Ո՛չ, ո՛չ այդպես... Դու գնու՞մ ես, այդ ես զգո՛ւմ եմ... Գնում ես ավելի, մի՛շտ ավելի հեռու. օրե՛ցօր հեռանում ես... Եվ գուցե այսօր, գուցե վաղն իսկ՝ երկրի՛ն դուռն արդեն, սպառնագին, կանգնի երկուսիս միջև... Եվ այն ժամանակ... այն ժամանակ ուժ չե՛մ ունենա այլևս ապրելու...* (Հեկեկում է):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ջանալով բարձրացնել նրան): *Հանգստացիր, Թերեզ, ի՛ սեր աստծո. այդ ինչե՛ր ես ասում... Քո ձեռքը չէ՞ անցնելն՝ այդ պատվարը կոխելով...*

ԹԵՐԵԶԱ.— (Ցնցվելով ելնում է, բիչ հետո կանգնում և խիստ): *Այդ պատվարը՝ մեր ընտանեկան պատի՛վն է, հորս մարմինը, հասկանո՞ւմ ես...* (Վնռական): *Ո՛չ, դա իմ ձեռքը չէ, այլ քո, միմիայն քո...* (Քիչ լուռ): *Լսի՛ր, Սա՛շա...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Նստում է տխուր և ընկճված): *Խոսի՛ր...*

ԹԵՐԵԶԱ.— (Մոտենում է և ձեռքը դնում ուսին): *Դու արդեն սկսե՞լ ես այդ գործը:*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Մեղմ): *Դեռ ոչ. բայց...* (Ցույց է տալիս սեղանի վրա): *Ահա՛ թուղթը, որով պիտի սկսի...*

ԹԵՐԵԶԱ.— (Վազելով դեպի սեղանը): *Ա՛հ...* (Վերցնում է թուղթը): *Դեռ ուշ չէ՞ ուրեմն... Պատռե՛նք այս թուղթը, Սա՛շա, ես քեզ խնդրում եմ, աղաչում եմ ուղղակի...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Գնում է դեպի նա և արգելում): *Ի՞նչ ես անում... Թո՛ղ, մի՛ պատռի...* (Առնում է թուղթը և մի կողմ դնում):

ԹԵՐԵԶԱ.— *Սա՛շա... Եթե դու ինձ սիրում ես, եթե չես ուզում իմ մահը— թո՛ղ, պատռի՛ր... Թո՛ղ ուրիշին՝ մտնելու նրա դեմ դատի. դու մի՛ անի... Թող իմ սիրա՛ծը չկոխոտի հորս կյանքը, մեր ընտանեկան պատիվը...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Թերե՛զ... դու ուզում ես ստորությա՞ն, վատության՞ մղել ինձ...*

ԹԵՐԵԶԱ.— *Բայց ո՛չ, Սա՛շա, ինչո՞ւ...* (Ժպտուն, սիրալիր համոզողական): *Ուրիշ փաստաբան չկա՞... Ես խո չե՞մ դրդում քեզ՝ պաշտպանել հորս... Ո՛չ... միայն թող դո՛ւ չլինես նրան տրորողը: Եթե՛ ինձ սիրում ես... եթե՛ ուզում ես, որ ես քոնը լինեմ...* (Գգվանքներով և փայփայելով՝ փարվում է Ալեքսանդրին): *Սա՛շա...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Դու գիտե՞ս ինչ ես առաջարկում ինձ, Թերե՛զ... Կռվի մեջ, թշնամու առաջ զենքը նետող և փախչողի վա՛տ, ստո՛ր դերն ես առաջարկում կատարելու... Եվ այսուհետև, չէ՞ որ ես ինքս հենց առաջի՛նը կթքեմ ինձ վրա... Դո՛ւ էլ, դո՛ւ էլ, եթե լավ մտածես— չպի՛տի կարողանաս սիրել այդպես ընկա՛ծ մարդու...* (Վճռակամորեն, բայց մեղմությամբ ելնում է նրա գրկից): *Ո՛չ, Թերե՛զ... Ես քեզ սիրում եմ, գիտե՛ ասված, որ առանց քեզ ինձ համար երջանկություն չի լինի կյանքումս... բայց ուրիշների թշվառության գնով ես չե՛մ ուզում իմ կյանքը քաղցրացնել...* (Քիչ լուռ): *Բայց չէ՞ որ ասում էիր, թե հայրդ քեզ շա՛տ է սիրում, ոչինչ չի մերժի... Թո՛ղ ուրեմն բերի բոլոր մուրհակները, որոնց ես կթվեմ մի առ մի, բերի իմ առաջ պատռի, թուղթ տա, որ ոչինչ պահանջ չունի գյուղացիներից և կամ... թողնի նրանց իսկական պարտքը՝ օրենքի որոշած տոկոսով... Թող և՛տ տա խլածները...*

ԹԵՐԵԶ.— (Նստում է հուսահատ և բեղդիատում է նրան՝ գլուխը ցնցելով): *Անկարելի՛ն ես ուզում... Չի՛ անի... Անհնար է... Թշվառության ճիչերը չե՛ն շարժում նրան... Ա՛խ, եթե իմ հայրը չլիներ նա...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Բարկությամբ): *Թո՛ղ ուրեմն այդպիսի հորը, գնա՛նք իմ ետևից... Ի՞նչ է նշանակում հայր, երբ դու նրան անարժա՛ն, վա՛տ ես համարում... Այդ ի՞նչ պարտականության սարկություն է...*

ԹԵՐԵԶԱ.— (Սոսկումով): *Սա՛շա, մտածի՛ր մեկ ասածիդ վրա... Որդին իր հորը ոչնչացնողի հե՛տ... Հայ աղջի՞կ՝ գնալ իր հոր ծերունի գլուխը տրորողի ետևից...* (Ելնում է): *Ո՛չ, դա արդեն չափազա՛նց կլինի... Մնում է ինձ մեռնել, քանի որ դու էլ, ասելով, որ ինձ սիրում ես, չես կամենում զոհել անձնասիրությունդ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Թույլ, հուզմունքից հոգնած): *Թերե՛զ, խնդրում եմ մի ստիպի ինձ վա՛տ, ստոր դառնալու...*

ԹԵՐԵԶԱ.— (Մոտենում է զգվանքով): *Բայց ինչ՞ու վատ, ի՞նչ եմ ես բիզնից խնդրում... Գյո՞ւղ ես ուզում մնալ, գործել գյուղում, գնանք, թողնենք ամեն ինչ, հեռանանք մի ուրիշ գյուղ, և այնտեղ ցույց տուր, որ կռվել գիտես... Բայց այստե՛ղ, հորս...* (Քիչ լուռ): *Սա՛շա...* (Թողնում է և հուսահատ ետ քաշվում): *Ուրեմն դու մերժում ես, դու այդ չես կամենում...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Թերե՛զ...*

ԹԵՐԵԶԱ.— (Հուսահատ և ջղային): *Դու ինձ չե՞ս սիրում, ո՛չ, դու իմ մահն ես ուզում... Թող լինի...* (Սկսում է հեկեկալ):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Վախեցած հետևում է): *Ի՞նչ ես ուզում ասել... դու վախեցնում ես ինձ... խոսի՛ր...*

ԹԵՐԵԶԱ.— (Նույն և ավելի ջղային ճիչերով): *Այո՛, ես կմեռնեմ... Այլևս ուժ չմնաց իմ մեջ, ո՛չ... ես ուղղակի կսպանեմ ինձ, չեմ կարող, չեմ կարող...* (Ջղային դրություն, հեկեկում է շատ բարձր և ընկնում աթոռի վրա):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Սաստիկ վախեցած և շփոթված, վազում է դեպի ջուր, հետո թողնում, բռունցքով բաց անում սրահի դուռը և ձայնում): *Հա՛յր, մա՛յր, շո՛ւտ...*

8) Նույնք, Սահակ, տիկ. Մանուկյան, Մարգարիտ, Արշակ
(Բոլորը վախեցած ներս են թափվում)

ՍԱՀԱԿ.— (Տեսնելով Թերեզին): *Սա՛շա... Սրա՞ն էլ... Ուրեմն քեզ համար նվիրական ոչի՛նչ չի մնացել...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Քե՛զ մատաղ, Թերե՛զ, էդ ի՞նչ եղավ քեզ... հանգըստացի՛ր...* (Բարձրացնում է նրան):

ՄԱՐԳՈ.— (Միաժամանակ): *Թերե՛զ...* (Գրկում է նրան): *Օ՛, ինչ վա՛տն ես, Սա՛շա...*

ԹԵՐԵԶԱ.— (Կանանց): *Թողե՛ք ինձ, ես չե՛մ ուզում։ Կմեռնե՛մ ես. կմեռնեմ, որ ազատվեմ...*

ՍԱՀԱԿ.— *Տե՛ր աստված... Ի՞նչ ես խոսում մեռնելու մասին... Հանգըստացիր, խո չե՞ս գժվել... Ի՞նչ եղավ, ախր, է՛է՛...* (Շփոթված՝ չգիտե ինչ անել և գնում է ջուր ածում):

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Ի՜հ, աղջի դու էլ... հիմար-հիմար մի՛ դուս տա՝ թե աստվածդ կսիրես... Վե՛ր կաց...* (Ամուսնուց ջուր է առնում և խմեցնում): *Էս ջուրը մեկ խմի՛։ Ըտե՛նց... Դե հիմի վեր կա՛ց մեկ...*

ԹԵՐԵԶԱ.— (Խմում է, շփում ճակատը, ելնում է և քայլում դեպի Ալեքսանդրը): *Սա՛շա...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Սառը և ցիչ խիստ): *Ի՞նչ ես ուզում այլևս։*

ԹԵՐԵԶԱ.— *Դու մերժում ես ուրեմն, մա՞հս ես ցանկանում... Շա՛տ լավ։ Ահա ծնողներիդ մոտ ասում եմ... Թող տանուտե՛րն էլ լսի ինձ... Եթե դու հորս կդիպչես՝ իմ մահը կպատրաստես... Վիշապը կընկնի, ճշմարիտ է, բայց ես... Վշտից... օդի պակասությունից։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Հիմար բաներ ես ասում, Թերե՛զ։*

ԹԵՐԵԶԱ.— *Պնդո՛ւմ եմ, այդպես կլինի... Չե՛ս ուզում թողնել, որ ուրիշը կոխի հորս թշվառ գլուխը և մեր ընտանեկան պատիվը... դո՛ւ ես ուզում, դու՝ որին ես սիրում եմ...*

ՍԱՀԱԿ.— *Իմ ասածն էլ դա չի՞... Մարդը մեզ գոհացնում է, աղջիկը քեզ սիրում է— իսկ դու նրան, այդ ծերունուն, որ գրեթե իր փոքո՛վն է ուսումի տված լինում քեզ, ուզում ես քաշել ակրուժնոյ սո՛ւդ, արեստանտսկի բո՛տ ղրկել...*

ԹԵՐԵԶԱ.— (Ցնցվում է սոսկումից): *Ա՞յդ է պատիժը... պատիժը՝ վաշխառուների համար... Արեստանտսկի բո՛տ... Հո՛րս...* (Լուռ են ամենքը): *Այդպե՞ս... Իմ ծերունի հայրը. իր սպիտակ մազերո՛վ, արեստանտի հագուստո՛վ...* (Թուլացած նստում է): *Սա՛շա... Ախ որքա՛ն կուզեի այս բոպեիս վերջանար, չզգայի, չլսեի՛...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Սա՛շա, բաս դու քա՛ր ես, բա կթողա՛ն, որ խեղճ աղջիկը տա՛նջվի... Էդպես էլ հանաքնե՞ր կանեն...* (Գգվելով Թերեզային): *Չէ՛, Թերե՛զ, հանա՛ք են անում... Մարդ սկի իր սիրած աղջկա հորը ըտենց բա՞ն կանի... Հանդարտիր, ծիծաղում են վրեդ... Ի՞նչ սուդ, ի՞նչ բան... Գրիգոր աղեն, խո՛ աստված գիտի— ոչ ոք նրա արած լավությունը մեզ չի արել... Ասել է, թե էլ կո՛պեկ չի առնի, տո՛ւնն էլ մեզ կթողնի, բա՛ղն էլ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Լռի՛ր, մա՛յր, այդ ողորմությունը մենք չե՛նք ընդունել...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Ինչի՞ ողորմություն, ա՛յ բալամ... Դե մա՛րդ ա, քար խո չի՞... Հալբաթ տեսնո՛ւմ ա մեր հալը...*

ՍԱՀԱԿ.— (Կնոջը): *Ի՞նչ ես ախմախ-ախմախ դուրս տալիս, ա՛յ կնիկ...* (Մի կողմը): *Ֆո՛ւհ, ասած է, է՛, կնգա բերանը լո՛բի թրջել չի լինի...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Հորը): *Ուրե՛մն ճի՞շտ է, հայր. նա իրա՞վ խոստանում է մուրհակդ ոչնչացնել։ Ոչինչ չի պահանջում պարտքիցդ, այո՞...* (Դառնությամբ): *Ուզում է անպատճա՛ռ ցույց տալ, որ իր փոքով ուսում առածն է ոչնչացնելու ելել իրեն... Ուզում է պարտավորեցնե՛լ ինձ, ազնի՛վ ցույց տալ իրեն՝ ուրիշների առաջ...*

ՍԱՀԱԿ.— (Շփոթված): *Թո՛ղ, Սա՛շա... հետո՛...*

ԹԵՐԵԶԱ.— (Որ բոլորովին ուշքի է եկել, ելնում է քույլ): *Այժմ թողեք ինձ... Ես ասացի... ուզում է ինձ սպանել... և գուցե, ա՛յդ ավելի լավ է... մնա՛ք բարև...* (Քայլում է դեպի դուռը):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Տանջվելով և ցիչ լռությունից հետո): *Թերե՛զ, մի բոպե... Ուրեմն ա՞յդ է քո վերջին խոսքը. դու չե՞ս կամենում ազնիվ մարդու կինը լինել... քեզ հարկավոր է ուրեմն գծո՞ւծ, ստո՞ր տեսնել ինձ...*

ԹԵՐԵԶԱ.— (Ուզում է վերադառնալ, խոսել):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Զի թողնում ու վրա է տալիս): *Ո՛չ... գնացե՛ք այժմ... Այդ հարվածն էլ թող ավելանա...* (Արշակին): *Պարո՛ն Արշակ, ի՞նչ է լինում այն կովողի դրությունը, երբ նրա գլխին կարկուտի պես հարվածներ են իջնում, երբ ծեծում են նրան ամեն կողմից...*

ԱՐՇԱԿ.— *Այդ ես չգիտեմ, բայց գիտեմ այն , որ սուր շինելու երկաթը որքան լավ և արագ են ծեծում, նա այնքան ավելի կուռ է դառնում, կտրո՛ղ և դիմացկուն...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Մտախոհ): *Այդ ճիշտ է...*

ԱՐՇԱԿ.— (Շարունակում է): *Իսկ եթե երկաթը վա՛տն է, նա փշրա՛նք առ փշրանք կոտրտվում է և երկաթն այլևս անպետք է դառնում սուր կռելու համար...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ուղղվելով): *Ձեր ձե՛ռքը...* (Սեղմում է, հետո Թերեզին՝ ճպարտ): *Գնացե՛ք այժմ... Ես ձեզ սիրում եմ, բայց չեմ կամենում ստորանալ՝ սիրվելու համար... Սերը մուրալ ես չե՛մ ուզում, այլ վերցնել, եթե տալիս են... Ինձ հետ եկողը պիտի ուրանա և մայր, և՛ ընտանեկան շինծու պատիվ, և հա՛յր... մանավանդ երբ այդ հայրը մի ամբողջ հասարակության դահիճն է...*

ԹԵՐԵԶԱ.— (Հեկեկալով, ձեռքերի մեջ առած երեսը՝ գրեթե փախչում է դուրս: Մի վայրկյան խոր լռություն է բեմի վրա):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Մեկե՛ն թոլանալով՝ նստում է): *Վերջացա՛վ...*

ՍԱՀԱԿ.— (Նրան): *Բա Սա՛շա, էդպե՞ս կանեն... Մե՛զ, ասենք, չես խղճում. էդ խեղճ աղջկա՞ն ինչու ես սպանում. բա դու գո՞ւթ չունես. գյուղացոց ցավերը խաթաբալա՞ դարձան մեր գլխին... խո մենակ դու չե՞ս, ուրիշ մա՞րդ չկար...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Թո՛ղ, հա՛յր... Դուք քաղցած չեք մնա, ո՛չ էլ անտուն...* (Ավելի մեղմ): *Վա՛ղն ևեթ պետք է դուրս գալ այս տնից...* (Հորը՝ խիստ և կտրուկ): *Հա՛յր, եթե այդ մուրհակը դու ե՛տ վերցնես, եթե այդ ողորմությունը դու ընդունես...* (Ոտքի է ելնում): *Իմացի՛ր, դու... այլևս իմ հա՛յրը չես... Ես չե՛մ ուզում, որ մի ավադա՛կ վճարած լինի իմ ուսման ծախքը...*

ՍԱՀԱԿ.—(Հուսահատ, գլուխը կախ՝ ետ է քաշվում):

9) Նույնք և Կիրակոս, հետո՝ Բաղդասար, Զաքար, Սերոբ և Մարգար

ԿԻՐԱԿՈՍ.— (Երևում է դռան վրա): *Բաղդասար ամին-բա՛նը եկել են... Հրեն գալումը...*

ՍԱՀԱԿ.— (Բարկությամբ): *Ի՞նչ... դո՛ւրս արա, շո՛ւտ...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— *Բա ես հո՛ղիմ գլո՛ւխդ, ինչի՞ նե՛րս թողիր...* (Գնում է դեպի դուռը):

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Նրան): *Մա՛յր... Սպասի՛ր, ե՛ս եմ խնդրել, որ գան։* (Ծառային): *Կանչի՛ր բոլորին։*

ԿԻՐԱԿՈՍ.— (Դառնում է դեպի դուրս և կանչում): *Նե՛րս եկեք, աղեն կանչում ա...* (Գնում է):

(Մտնում են գյուղացիք և լուռ՝ կանգնում դռան մոտ):

ԱՐՇԱԿ.— (Նրանց): *Առա՛ջ եկեք, ինչո՞ւ եք դռան մոտ մնացել։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Գյուղացոց): *Ա՛յսպես եկեք... Բարև, Բաղդասար ամի...* (Մյուսներին): *Բա՛րև ձեզ։*

ՍԱՀԱԿ.— (Արշակին՝ մի կողմ): *Յանի, տանուտե՛ր, էս ի՞նչ ա քո արածը. Գրիգոր աղի հետ ոխ ունես՝ Սաշայի՞ն ինչի ես մեջ գցում...*

ԱՐՇԱԿ.— (Սառը): *Սխալվում ես, Սահակ բեկ, ես ոչ մի ոխ չունեմ Գրիգոր աղայի դեմ։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ոտ լսել էր այդ խոսակցությունը): *Հա՛յր, բավակա՛ն է, վերջապես, թողե՛ք ինձ մարդ մնալ և ո՛չ անասուն... Թողե՛ք մեզ մենակ...*

ՏԻԿ. ՄԱՆՈՒԿՅԱՆ.— (Ամուսնուն և աղջկան): *Գնա՛նք, գնա՛նք, գնա՛նք...* (Անցնելիս՝ գյուղացոց): *Հը՛մ, հողե՛մ ես ձեր գլուխը, հա՛...* (Գնում են):

10) Ալեքսան, Արշակ և գյուղացիներ

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Բա՛խշի, Ալեքսան բեկ. կըլի, որ անժամանակ... Բայց դե որ կանչել էիր՝ եկանք...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Լավ եք արել, որ եկել եք... Ձեզ կանչեցի, որ Գրիգոր աղայի դեմ գրած գանգատին ձեռք քաշեք, քանի որ դուք էլ գանգատ ունեք նրանից. նա ձե՛զ էլ է կեղեքել։*

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Շփոթված և ցիչ լուռ): *Յանի որ... հանց որ... Դե էլ մեր ձեռք քաշելը ի՞նչ պետք ա... Գիր էլ խո չգիտե՞նք...*

ԱՐՇԱԿ.— *Ես ձեր փոխարեն կստորագրեմ, դուք մյոհր կոխեք...*

ԶԱՔԱՐ.— *Ես խո էլ գործ չո՛ւնեմ նրա հետ... Իմ բանը պրծավ սուդումը...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Այո՛, բայց նա քեզ նեղացրե՞լ է, դու խո կվկայե՞ս...*

ԶԱՔԱՐ.— *Վկան խո ձեռք չի քաշի... Մեկ էլ որ, դե ես էլ ի՞նչ վկա...* (Շփոթված՝ լռում է):

ՄԱՐԳԱՐ.— *Դե, քյոխվա՛, մեր ձեռքը ինչա՞ցու ա... Մենք խո գանգատ չո՛ւնենք նրանից...*

ԲԱՂԴԱՍԱՐ.— Ե՛ս է... Գրիգոր աղան, շնորհակա՛լ ենք, մեզ գոհացրեց...

ԱՐՇԱԿ.— (Դեմքը կնճռած)։ Ի՞նչպես թե գոհացրեց։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Ի՞նչ են ասում դրանք... չե՛մ հասկանում։

ԲԱՂԴԱՍԱՐ.— Ցանի որ, Ալեքսան բեկ... Ճշմարի՛տ ա, եկանք քեզ գանգատի... տա՛լիք ունեինք... դե տվինք— պրծավ գնաց։ Վեքսիլն էլ պատռեց. էս աչքերիս առա՛ջ պատռեց...

ՍԵՐՈԲ.— (Առաջ է գալիս)։ Քյոխվա՛, թողեք ես դրուստ ասեմ ձեզ... Սրանց իզուր եք կանչել տվել... էն օր Քյաչալ Մարտիրոսը եկավ, սրանց տարավ աղի մոտ... Ինչ արին-չարին, հալբաթ մի քիչ էլ խմացրին... Տենանք՝ եկան, թե աղեն մեզ գոհացրեց, վեքսիլներս ճղեց... Ճշմարտությունը սա ա։ Պարտքները բաժանել ա, որ էլ գա՛նգատ չանեն... (Գյուղացոց)։ Դե ըսենց դյուզ-բադյուզ ասեք, է՛լի. էլ ի՞նչ եք դեսուդեն շուռ տալիս...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Հուզված)։ Ահա՛ թե ինչ... Ուրեմն մնում եմ միայն ե՞ս գանգատավոր. ուրեմն ձեզ կաշառե՞լ է. դուրս է գալիս, որ ես... Ո՛չ, այս արդեն չափազա՛նց ավազակություն է... (Արշակին)։ Դուք հասկանո՞ւմ եք, հասկանո՞ւմ եք այս խաղը։

ԱՐՇԱԿ.— (Տխուր)։ Սպասում էի... Հիմար չէ՛ այդ մարդը։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Ո՛չ, ո՛չ, այդ չէ... մնում եմ ե՛ս միայն գանգատավոր... Եվ ահա նա ինչ կասի ինձ քննիչի առաջ. «Ի՞նչ գանգատ ունեք,— կասի,— ապերա՛խտ երիտասարդ, չէ՞ որ իմ փողո՛վս եմ ձեզ ուսում տվել... Ձեր հայրը, կասի,— ո՛չ մի կոպեկ պարտ չունի ինձ, ո՛չ մուրհակ ունի, ո՛չ գրավ... Այդ փողը,— կավելացնի նա,— ես ընծայել եմ նրան... Դիտմա՛մբ էի մուրհակ վերցրել, չե՛մ կամեցել ամաչեցնել նրան, չեմ կամեցել բարեգործությունս ցույց տալ... Մուրհակը առել եմ՝ միայն հորդ անձնասիրությունը չվիրավորելու համար... Թողել եմ, որ հավատա, թե ի՛նքն է քեզ ուսում տվել... ոչ մի՛ պարտք, ոչ մի՛ գրավ... քեզ ուսման ե՛ս եմ տվել, ե՛ս, ապերա՛խտ»... Օ՜ խայտառակություն... (Դեմքը ծածկում է ամոթից)։

ԱՐՇԱԿ.— (Գյուղացոց)։ Թյո՛ւ, ի՞նչ մուրտառ խալխ եք եղել, տո՛... Մի-երկու կոպեկով ձեր հոգին կծախեք... Ամո՛թ, ամո՛թ սպիտակ մորուքիդ, Բաղդասա՛ր ամի, ամաչի՛ր տարիքիցդ, ա՛յ Մարգար... (Ալեքսանին)։ Հանգստացեք, իզուր եք հուսահատվում. դեռ ամեն բան կորսված չէ։

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Գի՛տեմ, գիտեմ... բայց այս վերջին հարվա՛ծը... Սա ավելի՛ խիստ է, պատի՛վս է արատավորում... (Մեկե՛ն գյուղացոց

դառնալով և սպառնալից)։ Ա՛, դուք կարծում եք, որ եթե չգանգատվեք՝ կազատվե՞ք ձեռքիցս։ Դուք գիտե՞ք, թե կաշառք ուտելով սուտ վկայությունը, հանցանք ծածկելը՝ ուր կտանի ձեզ... Ես ձեզ բոլորի՛դ քշել կտամ... Դո՞ւք չե՛ք գանգատվում, հա՞... Մի բաժակ օղին, ձեր մուրհակների պատռելը կազատի՞ ձեզ... Հիմարնե՛ր եք դուք, հիմարնե՛ր... Նա ձեր բերանը փակեց, որ այսուհետև ձեր կաշին ավելի՛ լավ քերթի... Ի՞նչ է, այլևս փողի պետք չե՞ք ունենալու. այլևս ձեր այգին, ձեր հողը միշտ բերրի՞ կլինի... Եվ ահա նա դա՛րձյալ կքերթի ձեզ, խմցրած մի բաժակ օղու, պատռած մուրհակների փոխարեն՝ տասնապատիկ կհանի ձեզնից... Հիմարնե՛ր...

ՄԱՐԳԱՐ.— Դե էլ ի՞նչ ես նեղանում, Ալեքսան բեկ. Գրիգոր աղեն խոքե՞զ էլ վատություն չի արել... իր բերնո՛վն ասեց, որ հորդ պարտքը բա՛խշել ա, որ իր փողո՛վն ա քեզ ուսում տվել, որ իր աղջի՛կը քեզ կտար, թե դու ըսենց...

ԱՐՇԱԿ.— Ձայնդ կտրի՛ր, ախմա՛խ մորուք... Հիմի Գրիգոր աղի ասածներին հավատում ես, հա՞... Բայց մոռացե՞լ ես, որ անե՛ծք, էլ ո՛ւշունց չէիր թողնում, որ չասեիր նրան... Տո՛, անցյալ տարի չէ՞ր, որ կթան կովդ ծախեց-տարավ... Թյո՛ւ...

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Դառնում է դեպի դուռը)։ Գնա՛նք, ա՛ խալխը, մենք էլ ըստեղ գործ չունենք... (Ալեքսանին)։ Էլ մնդ խոսելիք չունե՞ս, Ալեքսա՛ն բեկ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Մոտենում է նրան)։ Այո՛, ասելի՛ք ունեմ... Լսի՛ր ինձ, ա՛մի, և լա՛վ լսիր... Ես քեզ կխնայեմ, պատժել չե՛մ տա, ծե՛ր մարդ ես... Բայց քեզ վկա եմ կանչել տալու. ձեռքդ ավետարանի ու խաչի վրա պիտի դնես և ճշմարիտը ասես... Տեսնենք, կարո՞ղ ես այնտեղ էլ չխոսել։

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Վախեցած)։ Բա ինչի՞... յանի որ... երդո՞ւմ ինչի պիտի տամ... Չե՛մ տա. երդում չե՛մ տա...

ԱՐՇԱԿ.— Քեզ կստիպեն...

ԲԱՂԴԱՍԱՐ.— Փիե՛...

ՄՅՈՒՍ ԳՅՈՒՂԱՑԻՔ.— (Միաժամանակ)։ Ջոռո՞վ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— Վկա որ կանչվեք, ես կպահանջեմ, որ ձեզ երդվեցնեն...

ԳՅՈՒՂԱՑԻՔ.— (Շփոթված միմյանց երեսին են նայում)։

ՋԱՔԱՐ.— Ա՛ քեզ մատաղ, Ալե՛քսան բեկ, մենք ի՞նչ փիսություն ենք արել քեզ, որ սնմեղ տեղը մեզ խա՞թի մեջ ես գցում... Բա մենք կարա՞նք երդում տանք՝ ու սուտը ասենք, բա աստված մեզ չի՞ էրիլ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Աստվա՜ծ էլ կէրի, հետո, որ դուրս եկավ՝ սուտ երդվիլ եք, վա՛յ ձեզ. սիբիրա՛կան կդառնաք... Դե՛, գնացե՛ք այժմ. ձեզ բոլորիդ վկա եմ գրում...*

ՄԱՐԳԱՐ.— *Ալեքսան բեկ, մե՛ղք ենք, մի՛ անի։*

ԱՐՇԱԿ.— (Մոտենում է նրանց): *Դուք ի՞նչ մարդիկ եք, որ ձեզ մեղքանան. դուք ախմախնե՛ր եք... Մարդը ըստեղ իրան զրկո՛ւմ ա, իր կյա՛նքն ա փշրում, որ ձեզ լավություն անի...*

ԲԱՂԴԱՍԱՐ.— *Դե թող չա՛նի էդ լավությունը. չե՛նք ուզում...*

ԱՐՇԱԿ.— *Թյո՛ւ ես ձեր* (Հրելով գյուղացոց): *Գնացե՛ք, գնացե՛ք, հե՛տո ինքներդ կտեսնեք, թե ի՞նչ ախմախներ եք եղել...*

ՍԵՐՈԲ.— (Առաջ է գալիս): *Ինձ վկա՛ գրի, Ալեքսա՜ն բեկ. ես չե՛մ ծախի հոգիս. ես հասկանում եմ, որ դու մեր լավն ես ուզում, որ ուզում ես գեղը Գրիգոր աղի ձեռքիցը ազատել...* (Գյուղացոց): *Ադա, բաս ծտի խե՞լք էլ չունեք... Ասե՛նք հիմի Գրիգոր աղեն ձեր պարտքը բախշեց... Կբախշի, բա ի՞նչ կանի. վախն ընկել ա ջանը. սուդից վախենում ա. ընենց ա անում, որ անիրավությունների ճոնդերը ծածկի... Բա հիմի արավ, ինքն էլ պրծավ, է՛լի գեղումը մնաց... տո՛, էլ պարտք չե՞նք անելու, էլ մեր բաղը չի՞ խարաբ ըլի, յա քյասադ տարի չի՞ գա... Յա թե՝ Գրիգոր աղեն է՞շ կըլի, որ այսուհետև գործը փիս բռնի... Հը՞, ա՛ խալխը, դրուստ չե՞մ ասում...* (Ավելի մոտենալով և համոզողական): *Տո՛, ասենք թե ածդահան եկել ա՝ գեղիցը մա՛րդ ա ուզում, որ գեղը կուլ չտա... Սա մի հեքիա՛թ ա... Որ էսօր տվիր՝ կշտացավ, ա՛, բաս էլ չի՞ քաղցածանալու. էլ ետ չի՞ գալու ուզի, ու ըտենց սաղ գեղը ուտի՞... Դե՛, Գրիգոր աղան ածդահա ա, է՛լի... Էսօր վախլությունից ձենը կտրեց, եղ քսեց մեր գլխին, լավա՛մարդ դարձավ... տո՛, բաս հենց ըտենց չե՞ն խաբում մեզ... Բա չե՞ք տեսել՝ տղերքը ո՞նց են խաղում... փիսո՛, փիսո՛... ու բամփաչեն գլխովը տալի՛ս...* (Արշակին): *Հը՞, քյոխվա՛, փի՞ս եմ ասում, ըտե՞նց չի...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Որ զարմացած և հիացմունքով լսել էր): *Ա՛յ քեզ ճարտարախոս...*

ԱՐՇԱԿ.— (Սերոբին): *Այ դու շա՛տ ապրես, Սերո՛բ, մարդ մարդ ես եղել... Ըտենց ա, բա ը՞տենց չի։*

ՍԵՐՈԲ.— (Գյուղացոց): *Մեկ էլ որ, ա՛ խալխը, կուզեք ձեռք քաշեք, կուզեք՝ չէ—մեկ վկա են կանչելու, երդո՛ւմ են տալու... Բա ինչի՞, մենք մլթո՞նի ենք, հայ քրիստոնյա չե՞նք, որ համ երդում տանք, համ էլ սուտ խոսանք... Տո՛, յանի որ սուտ էլ խոսանք, սլեսչին հիմա՞ր ա, չի՞ կարա մեզ խոսացնելուց՝ մեր սուտը բռնի... էն*

վախտն էլ խո սիբիրակա՞ն կըլենք... Չէ՛, ախպո՛ր... (Ալեքսանին): *Գրի՛ր, Ալեքսա՜ն բեկ... Ես չե՛մ կարա ձեռքս ավետարանի վրա դնեմ ու սուտ խոսեմ...*

ԲԱՂԴԱՍԱՐ.— (Մեղմ): *Թե երդում տալ տվին— յանի որ... ես էլ չեմ կարա սուտ խոսալ...*

ՋԱՔԱՐ.— *Ալե՛քսան բեկ, չի՞ ըլի, որ ինձ ազատես... Խե՛ղճ մարդ եմ, մի՛ գցիլ ինձ խաթի մեջ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ծիծաղելով): *Տո՛, որ դրուստը խոսես՝ խաթի մե՞ջ կընկնես...* (Գյուղացոց): *Բաս է՞դ էր ձեր արջի որս գնալը... էլ ի՞նչ էիք մեծ-մեծ բրդում... Դո՛ւ, Բաղդասա՛ր ամի, ասում էիր, թե կխփե՛նք արջը, հա՛յ կքերթենք... Գնացե՛ք, գնացե՛ք. ձեզ բոլորիդ վկա կգրեմ. Ջուզեցի՛նք ձեր բողոքը, թող ե՛ս ապերախտ լինեմ, թող ամեն ծանրություն ինձ վրա միայն ընկնի...*

11) Նույնի և եսաուլներ

(Հանկարծ դուռը բացվում է, սենյակն են մտնում, նախ մի եսաուլ՝ ձեռքին մեծ ծրար. ետևից երևում են երկու-երեք ուրիշ եսաուլներ, հետո՝ Սահակի, տիկ. Մանուկյանի, Մարգոյի և Կիրակոսի վախեցած դեմքերը):

ՄԻ ԵՍԱՈՒԼ.— (Քայլում է դեպի Արշակը և պարզում է նրան ծրարը): *Նաչալնիկի՛ց հրաման... Շտապողական է...*

ԱՐՇԱԿ.— (Զարմացած և վախեցած՝ վերցնում է ծրարը և բաց է անում. միաժամանակ): *Հրամա՞ն... Շտապողակա՞ն...* (Սկսում է կարդալ: Ամենքը սրտատրոփ և վախեցած դեմքերով՝ հետևում են կարդալուն):

ԱՐՇԱԿ.— (Կարդալիս ցնցվում է, գունաթափվում: Երբ վերջացնում է, ձեռքերը թուլանում են և իջնում: Ալեքսանին): *Հրամանը ձե՛զ է վերաբերում... Նահանգապետը հրամայել է անմիջապես ձերբակալել ձեզ, հանձնել եսաուլների ձեռքը և քաղաք ուղարկել...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— (Ապշած): *Ի՞նձ... ձերբակալե՞լ...*

ԱՐՇԱԿ.— *Ամբաստանված եք իբր հեղափոխական...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Իբր... իբր ի՞նչ... հեղափոխակա՞ն։*

ԱՐՇԱԿ.— *Նա՛ է. այն հրեշը... այդպիսի գենքո՞վ է կռվում այժմ...*

ԱԼԵՔՍԱՆԴՐ.— *Այդպե՞ս...* (Մի ոռպե լուռ մնում է, հետո հանկարծ վրնռակաճռեն բարձրացնում է գլուխը, դառն կերով ծպտում, մոտենում է սեղանին, շղայնությամբ մի բանի տող բան է գրում բլոքի տակ, շորացնում և պարզում է Արշակին): *Ով այնուամենայնիվ,*

պարո՛ն տանուտեր, ահա բողոքը... Ընթացք տվեք գործին... (Ապա դառնում է դեպի եսաուլը, բայլում դեպի նրանց և վեհորեն): *Պատրա՛ստ եմ...*

(Շրջապատվա՛ծ գնում է դեպի դուռը: Ամենքը սոսկումով նանապարհ են տալիս: Պատկեր):

ՎԵՐՋ

1904

---

1 *Այն տեղերը, ուր գրված են երեք կետեր (...), դերակատարը պետք է փոքրիկ քիչոցներ (պաուզա) տա։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՋՐՈՒՅՑՆԵՐ

Մարդագայլ 21
Զգայնաշապ 41
Մեծ փականք 43
Լուր-դա-լուր 46
Այիշա 51
Երկու թռչուն 55
Առյուծի մահը 60
Անհագը 64
Ինչո՞ւմն էր ուժը 95
Կլոր աստվածներ 98
Ըմբոստի մահը 103
Արձանը 106
Կորսված արդարություն 112
Առվակը 115
Վիշապ 118
Ստամոքսի համար 125
Անտառը շարժվում է... 127
Չարթնել է առյուծը 133
Զոհակ 141
Սով 150
Հելոզ աքաղաղներ 153
Պայտարի հոգին 160

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Ենիշերի 166
Շահնա 183

«Մշակ-ազա» 195
Գրիր, արյունով գրիր... 199
Անապատի մեջ 211
Ճգնավոր Եղո 221
Արդար դատաստան 246
Երկրի ձայնը 264
Աննա 273
Չի՜ստի 289
Քար չարդողներ 293
Գիշերային ժամերգություն 299
Արտը 308
Չվարճացանք... 310
Ծովի վրա 315
Արյան բծեր 320
Կըշլան 327
Ոչխարներ 336
Մերկ դերվիշը 339
Մեռնողները բարևում են ձեզ 342
Ջուր-քար 349
Կույրը 359
Քյոխվա 385
Ստարշինա 404
Սերմնացանը 424
Հողի աշխատավորը 431
Ջորագլխին 446
Խաղ 469
Ծովափին 496
Մի պատկեր 538
Սանթո 545
Խաթ-Սաբա 586
Ըմբոստ երգեր 610

ԺԱՅՌ. (Դրամա չորս գործողությամբ) 621

«ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ»

Վրթանես Փափազյան
ԵՐԿԵՐ
(Զրույցներ, պատմվածքներ, դրամա)

Вртанес Папазян
СОЧИНЕНИЯ
(Беседы, рассказы, драма)
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1987

Խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերստուգող սրբագրիչ՝ Հ. Ն. Զորյան

ИБ 5898
Հանձնված է շարվածքի 25. 05. 1987 թ.։ Ստորագրված է տպագրության 14. 09. 1987 թ.։
Ֆորմատ՝ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովոր.»։ Տպագրություն՝ բարձր, 40,4 պայմ. տպ. մամ., 38,1 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 51000։
(1 թողարկում 1—38000)։ Պատվեր՝ 1611։ Գին՝ 3 ռ. 50 կոպ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван—9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան փող. 65։
Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли, Арм. ССР Ереван-10, ул. Алавердяна, 65.